ԳՐԻԳՈՐ ՍՏԱՔԱՅԵԼՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

9(47.925)
Մ-78

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

Գ. Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

4461

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2007

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Մ 780

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Ռուսերենից թարգմանեց՝
ՀԱՄՈ ՀԱՐՑԱՆ

Միքայելյան Գ. Գ.,
Մ 780 Կիլիկիայի Հայկական պետության պատմություն: – Եր., Երևանի պետ. համալս. հրատ., 2007, 552 էջ:

Գիրքն ընդգրկում է հայ ժողովրդի անցած պատմական ուշադրավ հանգրվաններից մեկի՝ Կիլիկիայի Հայկական պետության երեքհարյուրամյա գոյության (1080–1375 թթ.) ժամանակաշրջանը: Հանգամանորեն քննարկվում է նրա ծագման, ծաղկման և անկման ընթացքը, լուսաբանվում քաղաքական, տնտեսական ու մշակութային առնչությունները, ներքին ու արտաքին հակամարտությունների բնույթը, ընդգծվում նրա դերն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմական զարգացման գործընթացում: Այն լույս է տեսել ռուսերեն 1952 թվականին և բնականաբար մասամբ կրում է ժամանակի գաղափարախոսության դրոշմը:

Նախատեսվում է ինչպես մասնագետների, այնպես էլ ուսանողության և ընթերցող լայն զանգվածների համար:

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-5-8084-0895

© ԵՊՀ-ի հրատարակչություն, 2007 թ.
© Թարգմանչի համար, 2007 թ.

ՀԱՅՈՑ ԿԻԼԻԿԻԱՑԻ ՊԱՏՄԱԳԻՐԸ

(Գրիգոր Գաբրիելի Միքայելյան)

Հումանիտար գիտությունների բնագավառում հազվադեպ է, երբ հեղինակը միայն մեկ գրքով տեղ գրավի գիտության պատմության մեջ, դասվի նշանավորների կարգը: Հայ պատմագիտության մեջ այդ հեղինակներից է Գրիգոր Միքայելյանը՝ իր «Կիլիկիայի Հայկական պետության պատմություն» ռուսերեն մենագրությամբ (Երևան, 1952, 536 էջ): Լույս տեսնելուց անմիջապես հետո գիրքը դարձավ ամենավնտրված ու ընթերցված գրքերից մեկը:

Թեև ուշացումով, այն այժմ ներկայացվում է նաև հայերեն թարգմանությամբ, որն ապացույց է գրքի նկատմամբ չթուլացող հետաքրքրության ու դրա գիտական անուրանալի արժանիքների:

Գ. Գ. Միքայելյանը ծնվել է 1893 թ. հունիսի 24-ին Դոնի Ռոստովում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ժողովրդական դպրոցում, այնուհետև սովորել է ռուսական գիմնազիայում: 1920–1921 թթ. ուսանել է Դոնի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում, միաժամանակ աշխատել մարզային արխիվային վարչության Հայկական թանգարանում: Այստեղ ծանոթացել է Մ. Սարյանի հետ, որի խորհրդով էլ տեղափոխվել է Հայաստան: 1921 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը և վայլուն ավարտել 1925 թ.: Սովորելուն զուգընթաց աշխատել է համալսարանի գրադարանում: Ավարտելուց հետո պաշտոնավարել է Հայաստանի Գիտության և արվեստի ինստիտուտում, ՀԽՍՀ պետական կենտրոնական արխիվում: 1927 թվականից մինչև կյանքի վերջին օրը զբաղվել է մանկավարժությամբ. դասավանդել է Երևանի կոոպերատիվ-տնտեսագիտական և մանկավարժական տեխնիկումներում, համալսարանի բանֆակում, Ռուսական մանկավարժական ինստիտուտում, Հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, Հեռակա մանկավարժական ինստիտուտում: 1938–1953 թթ. եղել է Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտի ընդ-

հանուր պատմության ամբիոնի վարիչ: Համատեղությամբ աշխատել է նաև ՀՀ ԳԱ ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող (1944–1951): Կարևոր մասնակցություն է ունեցել «Հայ ժողովրդի պատմություն» դպրոցական ձեռնարկի ստեղծման աշխատանքներին (Երևան, 1951, 2-րդ հրատ., Երևան, 1956 թ., հայերեն և ռուսերեն):

1943 թ. պաշտպանել է «Կիլիկյան Հայաստանի մասնակցությունը XIII դ. միջազգային առևտրին» թեկնածուական, իսկ 1949 թվականին՝ «Կիլիկիայի Հայկական թագավորությունը» դոկտորական ատենախոսությունները: 1949 թ. նրան չնորհվել է պրոֆեսորի կոչում: Ապրել է հասարակական ակտիվ կյանքով. ընտրվել է առաջին գումարման Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր, արժանացել կառավարական պարգևների՝ մեդալների և պատվոգրերի:

Գրիգոր Միքայելյանը մահացել է 1953 թ. հոկտեմբերի 28-ին Երևանում:

Կիլիկիայի Հայկական թագավորության հիմնահարցը ուսումնասիրելուն Գ. Միքայելյանին մղել է նշանավոր պատմաբան Հ. Հ. Մանանդյանը: 1939 թ. նա ձեռնամուխ է եղել թեմայի մշակմանը և արդեն 1942 թ. տպագրության պատրաստել «Հայկական Կիլիկիա» գիրքը (4 մամուլ, անտիպ), որը հետագայում հիմք է դարձել մեզ հետաքրքրող մենագրության հանդես գալուն: Տեղը չէ և անհրաժեշտություն էլ չկա անդրադառնալու գրքի արժանիքներին. դա արդեն արվել է վաղուց և բազմիցս: Բավական է միայն նշել, որ խորհրդային համբավավոր «Պատմության հարցեր» ամսագիրն այն գնահատել է որպես «լուրջ ներդրում բովանդակ պատմագիտության մեջ» («Вопросы истории», 1954, № 8, էջ 115): Գնահատական, որի հետ, անկախ այլևայլ նկատառումներից, չի կարելի չհամաձայնվել:

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կիլիկիայի հայկական պետության աշխարհագրական դիրքը: Երկրի և պետության անվանումը: Տարածքը և սահմանները: Երկրի ռելիեֆը և լեռնանցքները: Կլիման, բուսական ու կենդանական աշխարհը: Գետերը: Բնակչությունը: Քաղաքների, ամրոցների և նավահանգիստների տնտեսական, քաղաքական ու ռազմավարատեղիական նշանակությունը:

Հնագույն ժամանակներից Կիլիկիայի պատմությունը կապված է Առաջավոր Ասիայի պատմության, այդ թվում՝ Մեծ Հայքի, ինչպես և Եգիպտոսի, Հունաստանի ու Հռոմի պատմության հետ: Կիլիկիայի մասին վաղ տեղեկություններ կան հին աշխարհի պատմական աղբյուրներում (սեպագրեր, պապիրուսներ, հին հունական պատմագիրների երկեր՝ Հերոդոտոս և ուրիշներ): «Կիլակու» ձևով այդ երկրի անունը առաջին անգամ հանդիպում է 834 թ. Կիլիկիան նվաճած Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի արձանագրության մեջ:

Միջնադարի լատին պատմիչները Փոքր Հայաստան, երբեմն էլ պարզապես Հայաստան (Arménia minor, Arménia, Ermenie)[1] են անվանում այն պետությունը, որը հայերի կողմից XI դարում հիմնադրվել էր Կիլիկիայում, Փոքր Հայքի կողքին: Ժամանակակից հետազոտողների մեծ մասը, մանավանդ Արևմտյան Եվրոպայում, հետևում է նրանց օրինակին:

Կիլիկիայի հայկական պետության դարաշրջանի հայկական աղբյուրներում Կիլիկիան անվանվում է «աշխարհ» կամ «տուն», «Աշխարհ Կիլիկիո» կամ «Աշխարհ հայոց»: Արաբների օրինակով, որոնք Կիլիկիան անվանում էին «Սիսի երկիր», XII դարի հայ մատենագիրներից մեկը՝ կաթողիկոս Գրիգոր Տղան (1173–1193), Կիլիկիան ան-

[1] *Տե՛ս Recueil des historiens des croisades, Documents arméniens, t. I, p. 272, t. II, p. 500, 971:*

վանում է Սիսվան՝ հայկական պետության մայրաքաղաք Սիսի անունով[1]:

Ալիշանը Կիլիկիայի պատմությանն ու աշխարհագրությանը նվիրված իր աշխատություններ նույնպես անվանել է Սիսվան (Սիսի աշխարհ)[2]: XIX–XX դարերի հայ մի քանի հեղինակներ, որոնց թվում և Ալիշանը, հայկական պետության գոյության դարաշրջանի (XI–XIV դդ.) Կիլիկիան անվանում են «Հայկական Կիլիկիա»:

Ակադեմիկոս Հ. Օրբելին իր աշխատություններում օգտագործում է «Կիլիկյան Հայաստան»[3] տերմինը: Այս տերմինը ավելի պարզորոշ է և ճշգրիտ: Սա վերաբերում է այն խառնաչփոթը, որ նկատվում է մի քանի հեղինակների մոտ, այդ թվում և՝ պատմաբանների: Որոշ հետազոտողներ հայկական պետության դարաշրջանի (XI–XIV դդ.) Կիլիկիան, այսինքն Կիլիկյան Հայաստանը չփոթում են դրանից դեպի հյուսիս տեղաշրված Փոքր Հայքի հետ՝ ենթադրելով, թե Փոքր Հայքը գոյություն է ունեցել Միջերկրական ծովի ափերին՝ Հուստինիանոսի ժամանակներից սկսած:

Բայց չի կարելի չփոթել Փոքր Հայքը, որը գոյություն է ունեցել հին ժամանակներից[4] (Ուշ Հռոմեական դարաշրջանում այն բաժանված էր երկու պրովինցիաների՝ Առաջին Հայք և Երկրորդ Հայք, որոնք Հուստինիանոսի ռեֆորմներից հետո ստացել էին Երկրորդ Հայք և Երրորդ Հայք անվանումները) Միջերկրական ծովի ափին 1080 թ. առաջացած Փոքր Հայաստանի, այսինքն՝ Կիլիկյան Հայաստանի հետ:

Ռուս տարեգիրները ճանաչել են Փոքր Հայքը և լավ տարբերել են Մեծ Հայքից ու Կիլիկիայից: Ռուսական «Повесть временных лет» տարեգրությունը (ըստ 1377 թ. Լավրենտևյան տարեգրության) ճշգրիտ պատկերացում է տալիս հայկական երեք երկրների մասին:

[1] Տե՛ս **Ղ. Ալիշան,** Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 1:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս Памятники эпохи Руставели, Ленинград, 1938, с. 271:

[4] Փոքր Հայքի պատմությունն սկիզբ է առնում մ. թ. ա. I հազարամյակի սկզբներից: Տարածվում էր Եփրատից մինչև Անտիտավրոս, իսկ հետագայում ընդարձակվեց ի հաշիվ Մեծ Հայքի: Հայկական պետականություններ Փոքր Հայքում չատ վաղ է կազմավորվել, բայց «Փոքր Հայք» տերմինը սկսել է կիրառվել մ. թ. ա. III դ. սկզբից: Համաձայն մ. թ. ա. 65 թվականի դաշնագրի, որ կնքվեց Տիգրան II-ի և Պոմպեոսի միջև, Փոքր Հայքի արևելյան մասը միացվեց Մեծ Հայքին, իսկ արևմտյանը՝ Կապադովկիային, որը միջին դարերում լատինացի որոշ տարեգիրների կողմից անվանվում էր Փոքր Հայաստան (Փոքր Հայք), և այդ անվանումը նրանք տարածեցին նաև Կիլիկիայի վրա:

Նշված տարեգրության հենց սկզբում հիշատակվում է «Կիլիկիա», այնուհետև՝ «Арменьа Малая и Великая»[1]:

Այս աշխատության մեջ «Կիլիկյան Հայաստան» տերմինի տակ հասկացվում է Կիլիկիայի հայկական պետության տարածքը, մի պետություն, որը գոյություն է ունեցել 1080–1375 թթ., և բուն այդ պետությունը: Միևնույն ժամանակ Կիլիկիայի հայկական պետությունը մենք չարունակում ենք անվանել նաև «Կիլիկիայի հայկական թագավորություն» տերմինով, որն արդեն հաստատապես մտել է հայ պատմագրության մեջ:

Կիլիկիայի հայկական պետության տարածքը կազմվել է բուն Կիլիկիայից և հարևան մարզերից: Կիլիկիայի սահմանները որոշվում են հետևյալ կերպ. արևմուտքից սահմանակից էր Պամփիլիային, Իսավրիային և Պիսիդիային, հյուսիսից՝ Լիկաոնիային ու Կապադովկիային, արևելքից՝ Կատաոնիային ու Կոմագենեին, իսկ հարավ-արևելքից՝ Սիրիային: Կիլիկիայի աշխարհագրական կոորդինատները կազմում էին՝ հյուսիսային լայնության 36°–38° և արևելյան երկայնության 33°–38°:

Բուն Կիլիկիայի սահմանները փոփոխվում էին: Հին ժամանակներում Կիլիկիան շատ ավելի ընդարձակ է եղել, հասել է մինչև Հալիս գետի միջին հոսանքները, որտեղ այն մարզը, որի կենտրոնը Մաժակ քաղաքն է եղել (Մազակա, այժմ՝ Կեսարիա), անվանվել է Կիլիկիա (ավելի հին «Կիլակու»-ից), որից և այս անվանումը տարածվել է ուշ Կիլիկիայի ամբողջ տարածքի վրա: Արևելքում Կիլիկիան տարածվում էր մինչև Եփրատ: Հերոդոտոսի վկայությամբ «Կիլիկիայի սահմանը նավարկելի գետն է, անունը՝ Եփրատ»[2]: Նրա բառերով ասած՝ «Կիլիկեցիների կողքին ապրում են հայերը, որոնք նույնպես առատ հոտեր ունեն»[3]: Այսպիսով, հնագույն ժամանակներում ուշ շրջանի Կապադովկիայի մի մասը, ինչպես և Կատաոնիան ու Կոմագենեն մտնում էին Կիլիկիայի սահմանների մեջ, որն այն ժամանակ ուներ ընդարձակ տարածք և արևելքից անմիջականորեն սահմանակից էր Մեծ Հայքին:

Մ. թ. ա. մոտ 85 թ. Դաշտային Կիլիկիան Ասորիքի, Փյունիկիայի ու Կոմագենեի հետ նվաճվել է հայոց արքա Տիգրան II-ի կողմից, իսկ Տիգրանակերտի մոտ (մ. թ. ա. 69 թ.) Լուկուլլոսի դեմ մղած պատերազմում նրա պարտությունից հետո Կիլիկիան ընկել է Հռոմի իշխանության տակ:

[1] Повесть временных лет, ч. I, текст и перевод, подготовка текста Д. С. Лихачева, перевод Д. С. Лихачева и Б. А. Романова, М.-Л., 1950, с. 9.

[2] **Հերոդոտոս,** Պատմություն, Եր., 1986, էջ 307:

[3] Նույն տեղում, էջ 305:

Այսպիսով, Կիլիկիան ժամանակին եղել է ոչ միայն ընդարձակ և հայաստանին սահմանակից ու կարճ ժամանակով մտել է Տիգրան II-ի հայկական պետության սահմանների մեջ, այլև Հայաստանի և բուն Կիլիկիայի միջև գտնվել են հայարնակ մարզեր (Փոքր Հայք, Կապադովկիա, Կոմագենե և այլն):

Թեև Փոքր Հայքը քաղաքականապես արդեն մի քանի դար կտրված էր Մեծ Հայքից և մ. թ. 387 թ. Հայաստանը, Պարսկաստանի ու Հռոմի միջև բաժանելիս, նրա արևմտյան մարզերի հետ անցել էր Հռոմեական և ապա Բյուզանդական կայսրության սահմանների մեջ, այնուամենայնիվ հայ բնակչությունը այդ երկրում նշանակալի մեծամասնություն էր կազմում:

536 թվին Հուստինիանոսի վարչական բարենորոգման արդյունքը եղավ այն, որ Փոքր Հայքի տարածքը միաձուլվեց Մեծ Հայքի՝ Բյուզանդիային անցած մասի հետ: Այդ բարենորոգման համաձայն ամբողջ տարածքը բաժանված էր չորս մասի. Առաջին Հայք (կենտրոնը՝ Թեոդոսուպոլիս), Երկրորդ Հայք (կենտրոնը՝ Սեբաստիա), Երրորդ Հայք (կենտրոնը՝ Մելիտինե) և Չորրորդ Հայք (կենտրոնը՝ Մարտիրոպոլիս):

Նման վարչական բաժանումն այն մարզերի, որոնք գտնվում էին Մեծ Հայքից արևմուտք, այսինքն տեղավորված էին Մեծ Հայքի և Կիլիկիայի միջև, վկայում է, որ հայ բնակչությունը չարունակում էր այնտեղ վճռական դեր խաղալ: Համաձայն Հայագետ Ադոնցի հետազոտության երկու մարզերում էլ բնակչության մեջուկը կազմված էր հայերից, որոնք մեր թվարկության V հարյուրամյակի կեսերին դեռևս խոսում էին մայրենի լեզվով[1]:

Բյուզանդական կառավարությունը խրախուսում էր հայերի գաղթը բուն Հայաստանից դեպի անդրևփրատյան մարզերը: Դրա հետևանքով հայ բնակչության թիվը Եփրատից արևմուտք ընկած երկրներում հաջորդ ժամանակաշրջանում էլ ավելի մեծացավ: Դա չարունակվեց նաև արաբական տիրապետության դարաշրջանում (VII–IX դդ.), երբ հայերի արտագաղթ տեղի ունեցավ Մեծ Հայքից և նախրատամերձ մարզից (Մելիտինե) դեպի Կիլիկիա:

Այսպիսով, հին ժամանակներից ընդհուպ մինչև XI դարը, այսինքն մինչև հայերի առավել զանգվածային գաղթը Հայաստանից դեպի Կիլիկիա, Բյուզանդիայի կողմից Վանի, Անիի ու Կարսի զավթման և սելջուկների կողմից Առաջավոր Ասիա, Կիլիկիա և սրան սահմանակից երկրները (Կապադովկիա, Կոմագենե) ներխուժելը, անշեղորեն

[1] Տե՛ս **Адонц Н.**, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, стр. 202:

աճում էր հայ բնակչության թիվը, որը նշանակալի դարձավ XI դարի վերջին: Կիլիկիայում և դրան կից մարզերում հայ բնակչության աճի այդ երկարատև պրոցեսը նշանակալիորեն նպաստեց Կիլիկիայի հայկական պետության ծագման հաջողությանը, որն իր ծաղկման շրջանում (XIII դ.) ընդգրկում էր ոչ միայն բուն Կիլիկիան, այլև Փոքր Ասիայի, Սիրիայի ու Միջագետքի մի չարք մարզեր:

Հայկական պետությունը Կիլիկիայում ծագեց մոտ 1080 թվականին: Ռուբեն իշխանը և նրա որդի Կոստանդինը տիրում էին միայն Տավրոսի լեռնային շրջաններին: Կոստանդինի որդի Լևոն I-ին (1129–1137) հաջողվեց նվաճել Դաշտային Կիլիկիան, բայց չուտով Բյուզանդիան գրավեց ամբողջ երկիրը: Նրա որդի Թորոս II-ը (1145–1169) Բյուզանդիայից նորից ետ նվաճեց Կիլիկիայի մեծ մասը: Այն ժամանակ Կիլիկիա այցելած Բենիամին Տուդելացին Կիլիկիան անվանում է «Թորոսի երկիր»[1]: XII դարի 90-ական թվականներին Լևոն II-ը նվաճեց Պամփիլիայի, Կապադովկիայի, Կատաոնիայի և Հյուսիսային Սիրիայի սահմանամերձ շրջանները[2]: Նրա իշխանության տակ անցան Լարանդա, Հերակլեա, Տիանա, Դարբսակ և այլ քաղաքներ, որտեղ բավականաչափ թվով հայեր էին ապրում: Օգտվելով մոնղոլների աջակցությունից՝ Հեթում II-ը XIII դարի 50-ական թվականներին տիրեց Սիրիայի և Կատաոնիայի մի քանի շրջանների: Կիլիկիայի հայկական թագավորության ծովային սահմանը տարածվում էր Ալեքսանդրետի կամ, ինչպես այն ժամանակ անվանում էին, Հայկական ծոցից մինչև Պամփիլիայի ծոցը: Ալիշանը նշում է, թե այն սկսվում էր Ալեքսանդրետի մոտից և հասնում մինչև Աղալիա (Ատտալիա)[3]: Եվ իրոք, Մակրիզին և Աբուլֆեդան վկայում են, որ Ալեքսանդրետը Կիլիկյան Հայաստանի առաջին քաղաքն էր՝ Սիրիայի սահմանից հաշված: Սակայն պատմական ոչ մի վկայություն չկա, թե Ադալիան՝ Փոքր Ասիայի այդ կարևոր նավահանգիստը, պատկանելիս է եղել Կիլիկիայի հայկական պետությանը: Այնուամենայնիվ ստույգ է այն, որ Պամփիլիայի ափի Կալոնորոս (Ալայա) նավահանգիստը մինչև Ալա ադ դինի կողմից դրա գրավումը (1229 թ.) պատկանում էր Կիլիկիայի հայկական պետությանը:

Նշենք նաև այն փաստը, որ սկսած XII դարի վերջից՝ Տավրոսի և Ամանոսի լեռների բոլոր լեռնանցքները պատկանել են Կիլիկիայի հայկական պետությանը:

[1] Տե՛ս Три еврейских путешественника XI–XII вв., пер. Марголина, с. 34:

[2] Տեառն Միքայելի Ասորւոց Պատրիարքի Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 503:

[3] **Ալիշան**, Սիսուան, էջ 2:

XIII դարի վերջից Կիլիկիայից դուրս նվաճված չրջանները աստիճանաբար անջատվում են Կիլիկյան Հայաստանից: 1337 թվին մամլուքները գրավում են Դաչտային Կիլիկիայի մի մասը՝ մինչև Պիռամոս գետը, իսկ 1360 թվին՝ մնացած մասը:

Միջերկրածովյան առափնյայում՝ Փոքր Ասիայի հարավարևելյան անկյունում գտնվող Կիլիկյան Հայաստանը աշխարհի երեք մասերի՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի սահմանագծում էր: Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի հետ Կիլիկիային կապում էր Միջերկրական ծովը: Գտնվելով Փոքր Ասիայում՝ Կիլիկյան Հայաստանը կապված էր Ասիայի երկրների, Էգեյան և Սև ծովերի մերձափնյա չրջանների, Ղրիմի և արևելյան Եվրոպայի հետ: Բացի այդ նա Մեծ Հայքը, ինչպես և Սիրիան ու Միջագետքը կապում էր Իրանի ու Պարսից ծոցի հետ: Սիրիայի միջոցով Կիլիկյան Հայաստանը կապ ուներ նաև Եգիպտոսի ու Հարևչստանի հետ:

Շնորհիվ նման բարենպաստ աչխարհագրական դիրքի Կիլիկյան Հայաստանը, չնայած իր տարածքի փոքր չափսերին, նչանակալի դեր էր խաղում Առաջավոր Ասիայի քաղաքական, տնտեսական և մչակութային կյանքում: Մեծ էր նաև Կիլիկիայի ռազմաստրատեգիական նչանակութիյունը հին ժամանակներում և միջնադարում: Հիչենք թեկուզ ասորեստանյան թագավորների, Ալեքսանդր Մակեդոնացու և Հռոմեական զորավարների նվաճողական արչավանքները, խաչակիրների, սելջուկների ու մոնղոլների արչավանքները:

Կիլիկիան աչխարհագրական առումով բաղկացած է մի քանի մասերից. Ժեռուտ Կիլիկիա (Տրաեեյա) սարահարթը՝ երկրի արևմուտքում, Կիլիկյան Տավրոսը, որը ձգվում է արևմուտքից արևելք, Անտիտավրոսի հարավային լեռնաճյուղերը, Ամանոսի լեռները և Կիլիկյան հարթավայրը, որի վերին մասը հանդիսանում է անցում դեպի Տավրոս: Վերջինից դեպի հարավ սփռվում է ընդարձակ ողողակային ցածրավայրը[1]:

Չնայած ռելիեֆի այդպիսի բազմազանութիյանը՝ Կիլիկիան անտիկ դարաչրջանից հիմնականում բաժանվում է Լեռնային (Tracheia) և Դաչտայինի (Pedias): Կիլիկիայի հյուսիսով և արևմուտքով անցնում է Կիլիկյան Տավրոսը, որի առանձին գագաթներ հասնում են 3500 մ բարձրութիյան: Տավրոսն ասես սահմանազատում է Կիլիկիան Կապադովկիայից ու փոքրասիական մյուս մարզերից և հանդիսանում է երկրի բնական պաչտպանութիյունը հյուսիսից և արևմուտքից: Անտիտավրոսի լեռնաճյուղերը Կիլիկյան Հայաստանը պաչտպանում էին հյուսիս-արևելքից: Հարավ-արևելքում Ամանոսի լեռնաչղթան Կիլիկիան բաժանում է Սիրիայից՝ դառնալով այդ երկրների սահմանը:

Հարևան երկրներից մուտքը դեպի Կիլիկիա ցամաքով հնարավոր էր միայն մի քանի կապաններով, որոնք պաչտպանված էին ամրոցներով: Հակառակորդի գերակչիռ ուժերին, իհարկե, հաջողվում էր ներխուժել Կիլիկիա, բայց երբեմն պատահում էր, որ հայերը լեռնանցքները փակում էին ներթափանցած թչնամու հետևից և նրան դնում դժվարին կացութիյան մեջ, ինչպես վկայում են XIII դարի աղբյուրները:

Կապադովկիայից դեպի Կիլիկիա, դեպի երկրի կենտրոնը տանող Տավրոսի ամենահարմար լեռնանցքը կրում էր «Դրունք Կիլիկիո» կամ Գուգլակ (այժմ՝ Կյուլեկ-Բողազ) անվանումը: Սա գլխավոր, ամենավկ կարևոր լեռնանցքն էր: Աքեմենյանների ժամանակ այստեղով էր անցնում այսպես կոչված «արքայական ճանապարհը»՝ Սուզայից դեպի Սարդես[1]: Այս լեռնանցքը նկարագրել է Քսենոփոնը իր «Անաբազիսում»՝ Կյուրոս Կրտսերի արչավանքի մասին պատմելիս: Այստեղով է իր արչավանքը կատարել Ալեքսանդր Մակեդոնացին: Հռոմեական ղարաչրջանում Դրունք Կիլիկիո լեռնանցքը այն տեղն էր, ուր գալիս միանում էին Փոքր Ասիայի հռոմեական ճանապարհները: Այս լեռնանցքով են անցել խաչակիրների ջոկատները՝ Բալդուինի ու Տանկրեդի առաջնորդութիյամբ:

XIII–XIV դարերում Գուգլակով անցնում էր առևտրական կարևոր ճանապարհը, որը կտրում էր Կիլիկիան, Փոքր Ասիան, Հայաստանը և դուրս գալիս Սև ծովի ու Պարսից ծոցի նավահանգիստները: Այս կապանով սելջուկները XII–XIII դարերում ներխուժում էին Կիլիկիա, իսկ հայերը՝ Իկոնիա: Ինչպես հին ժամանակներում, այնպես էլ միջին դարերում Տավրոսի բոլոր լեռնանցքներից առավել չատ օգտագործվում էր Կիլիկյան դարպասը, որի միջով Տարսոնից ուղիղ ճանապարհ էր գալիս անցնում դեպի Կոստանդնուպոլիս: Ճանապարհը Կիլիկյան դարպասով անցնում էր ու մտնում Սարոս գետի (այժմ՝ Սեյհան չայ) վտակներից մեկի հովիտը: Լեռնանցքի մոտ կար ուժեղ ամրացված մի կետ՝ Պոտանդոն: Դրանից հարավ-արևմուտք Գուգլակ ամրոցն էր, որի անունով էլ կոչվում է այս լեռնանցքը: Այժմ Գուգլակով է անցնում Բաղդադի երկաթուղին:

Երկրորդ՝ Տավրոսի լեռնաչղթայով Իսավրիայից (մեծ մասամբ՝ Իկոնիայի սուլթանութիյան միջով) դեպի Կիլիկիա տանող արևմտյան լեռնանցքը գտնվում է Կալիկադնոս գետի վերին հոսանքների մոտ:

[1] Տե՛ս проф. **П. М. Жуковский,** Земледельческая Турция, М.-Л., 1933, էջ 11:

[1] **Հերոդոտոս,** Պատմութիյուն, 1986, էջ 307:

Այս կապանի ճանապարհի վրա էին Մուղ (Կլավդիոպոլիս) և Երմոնեկ (Գերմանիկոպոլիս) քաղաքները: Այստեղով են դեպի Կիլիկիա արշավել բյուզանդական կայսրեր Հովհան և Մանուիլ Կոմնենոսները: Այս լեռնանցքով է Սելևկիա հասել Ֆրիդրիխ Շիկամորուսը և դեպի Կիլիկիա էին ասպատակում Իկոնիայի սելջուկները: Կիպրոսի ու Ջենովայի վաճառականները երբեմն սրանից էին օգտվում՝ դեպի Իկոնիա առևտրական ճանապարհորդություններ կատարելիս: Այս կողմից թշնամու ներխուժման դեմ գլխավոր պատվարը Սելևկիան էր:

Երրորդ՝ Տավրոսի լեռնաշղթայի արևելյան կապանը ծառայում էր որպես Կապադովկիայից Պիռամոսի (Ջահանի) հովիտը մտնելու ուղի: Սա նշանակություն ուներ ոչ միայն արևելյան Կապադովկիայի, այլև Միջագետքի հետ հարաբերություններ պահպանելու համար: Այս անցքով Կիլիկիա և Սիրիա էին թափանցում չատ նվաճողներ: Այս լեռնանցքի ռազմաստրատեգիական նշանակությունը մեծ է եղել հռոմեական դարաշրջանում, ինչը երևում է այն ժամանակվա ուղղությունների նկարագրությունից: Ռազմական ճանապարհների համակարգում, որոնք ակոսում էին Հռոմեական կայսրության այս մասը, կար մի ճանապարհ, որը Կապադովկիայի երկու գլխավոր քաղաքները՝ Կեսարիան ու Սեբաստիան, կապում էր հարավում գտնվող Կատաոնիայի (Լիկանդոսի բանակաթեմ՝ Բյուզանդական կայսրության ժամանակներում), Արաբիսուս, Կոմանա, Կուկուսիա (Հայերեն՝ Կոկիսոն) քաղաքների հետ: Սա մտնում էր վերին Պիռամոսի հովիտը և հասնում մինչև Մարաշ, որտեղից իջնում էր ընդարձակ ու պտղավետ հովիտը, որը գտնվում էր Կիդնոսի ու Պիռամոսի միջև և որտեղ բարգավաճում էին Տարսոնը, Ադանան, Անարզաբան ու Մոպսուեստիան: Անտոնիոսի երթուղին կտրել անցել է Արևելյան Տավրոսը այն տեղամասում, որտեղ տեղավորված էին Կոկուսուսի, Լարանդայի, Վադիմոմի, Սիսի (Փլավիաս), Անարզաբայի ռազմական պահակակետերը: Տավրոսի արևելյան լեռնանցքներով իրենց անցումները կատարեցին Առաջին խաչակրաց արշավանքի խաչակիրները, որոնք դուրս եկան Մարաշ, իսկ այդտեղից մոտեցան Անտիոքին: Այստեղով էր անցնում առևտրական ուղին և այստեղ էր մաքսատունը՝ Կապանի ամրոցում, որը պաշտպանում էր Կիլիկիայի մուտքը և որի անունով էր կոչվում նաև այս լեռնանցքը Կիլիկիայի հայկական պետության դարաշրջանում:

Կիլիկիայի և Սիրիայի սահմանագծով ձգվում է Ամանոսի լեռնաշղթան, որի բարձրությունը հասնում է 1800–2000 մետրի: Ունի երեք գլխավոր լեռնանցքներ. Ամանոսի, որն արաբներն անվանում էին

Դերբենդ էլ-Մաուի՝ Ամանոսի լեռնաշղթայի արևելքում, Դեմիր-Կափու՝ Ալեքսանդրետի ծոցի հյուսիս-արևմուտքում և Ասորա-Կիլիկյան լեռնանցքը կամ Պորտելլան, հայերեն՝ Դուռն, որը տվյալ դեպքում նշանակում է «դարպաս», կամ Դուռն Ասորվոց՝ Ալեքսանդրետից 30 կմ հեռու: Այս լեռնանցքով է իր զորքը տարել Ալեքսանդր Մակեդոնացին, որն Իսոսի մոտ ջախջախել էր պարսից արքա Դարեհ III-ի զորքը: Այստեղով էին անցնում խաչակիրները և այլ նվաճողներ:

Բազմաթիվ աղբյուրներից հայտնի է, որ Պորտելլան չատ կարևոր լեռնանցք է եղել Կիլիկիայի հայկական պետության համար: Այստեղով էր անցնում Ասորիքից, Միջագետքից ու Եգիպտոսից եկող առևտրական ճանապարհը, որն այնուհետև կտրելով Փոքր Ասիան՝ հասնում էր Էգեյան ու Սև ծովերի ափերը:

Ամանոսի լեռնաշղթայի լեռնանցքներն ունեին նաև ռազմավարական նշանակություն: Այս լեռնանցքներից ոչ հեռու գտնվում էին Սարվանդիքարի, ձկների, Գաստիմի ամրակետերը, որոնց տիրելու համար պայքար էր գնում Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի իշխանապետության միջև[1]: Ամանոսի լեռնանցքներից հյուսիս՝ Սիրիայի ու Միջագետքի սահմանի մոտ և այդ երկրների ու արևելյան Կապադովկիայի միացման տեղում կային Կիլիկիայի հայկական պետության հետևյալ ուժեղ ամրացված բերդերը՝ Համուս, Թիլ-Համդուն, Սիմանկլա, Բերդուս, Կանչի, Ֆոնուզ և Հարուն[2]:

Երկրի արևելքում՝ հյուսիսից հարավ, Զեյթունից մինչև Մարաշ, Կապադովկիայի ու Կիլիկիայի սահմանագծից մինչև Կիլիկիայի ու Սիրիայի սահմանագիծը ձգվում է մի լեռնաշղթա՝ Անտիտավրոսի հարավային ճյուղերի չարունակությունը, որը պաշտպանում է Պիռամոսի հովիտը:

Տավրոսի լեռները, Անտիտավրոսի և Ամանոսի լեռնաշղթայի ճյուղերը հովհարաձև դասավորված են Կիլիկիայի սահմանի վրա: Ինչպես այդ լեռները, այնպես էլ սակավաթիվ լեռնանցքների մոտ տեղավորված ամուր բերդերը երկիրը պաշտպանում էին երեք կողմից՝ արևմուտքից, հյուսիսից ու արևելքից, և դժվարացնում էին թշնամու ոչ միայն ներխուժումը, այլև նահանջը: Երեք կողմից չրջապատված լինելով լեռնաշղթաներով՝ Կիլիկիան հարավից ողողվում էր Միջերկրական ծովով: Կիլիկյան Հայաստանը մոտ 500 կմ երկարությամբ ծովափ ուներ:

[1] **Մաթեոս Սպարապետի** Պատմութիւն, Մ., 1856, էջ 93:

[2] Documents arméniens, t. I, p. XXXI.

Ժեռուտ Կիլիկիայի քարաչատ առափնյան, որտեղ Տավրոսն իջնում է դեպի ծովը, ընդհանրապես քիչ է հարմար նավագնացության համար: Դաշտային Կիլիկիայի առավել գալարուն ու թևք ափին ուներ մի քանի նավահանգիստներ, որոնք նշանակալի դեր են խաղացել երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում և եղել են միջազգային առևտրի խոշոր նավահանգիստներ:

Կիլիկիայի լեռնային ու դաշտային մասերի կլիման կտրուկ կերպով տարբերվում է: Լեռնային Կիլիկիայում թեև ամառը չոգ է, ձմեռը, սակայն, ցուրտ է լինում, և գարունն սկսվում է ապրիլին միայն: Դաշտային Կիլիկիայում, ինչպես Միջերկրականի շատ երկրներում, ձմեռը մեղմ է, անձյուն, համարյա առանց սառնամանիքների: Գարունն այստեղ փետրվարին է սկսվում, ամառը շատ չոգ է լինում, սովորաբար չոր քամիներ են փչում Սիրիայից և Աֆրիկայից, իսկ երբեմն էլ ղով քամիներ՝ Փոքր Ասիայի լեռնային չրջաններից: Կիլիկիայի ծովափի տարեկան միջին ջերմաստիճանը երեք աստիճանով բարձր է, քան Էգեյան ծովի ափին: Բնորոշ է բացառապես տաք աչունը[1]: Լեռնային Կիլիկիայի կլիման առողջարար է: Դաշտային Կիլիկիան, ընդհակառակը, աչքի է ընկնում անառողջ կլիմայով. այստեղ կան ճահճուտներ, որոնք մալարիայի բույն են:

Դաշտային Կիլիկիան չնորհիվ լեռնային գետերով լավ ոռոգման, որոնք իրենց տիղմն են բերում-լցնում դաշտերը, և տաք կլիմայի, աշխարհի ամենաբերքառատ երկրներից մեկն է: Իր բերրիությամբ հռչակված է եղել մանավանդ հին ժամանակներում: Բնական պայմաններով Կիլիկյան հարթավայրը որոշ նմանություն ունի Նեղոսի դելտայի և Կոլխիդայի հետ: XII դարի ճանապարհորդ Բենիամին Տուդելացին, որն այցելել է Կիլիկիա, այդ մասին գրել է. «Այնտեղից (Կիպրոսից) երկու օրվա ճամփա է մինչև Կոռիկոս՝ սկիզբը Եղեմյան երկրի, որ Հայաստան է կոչվում»[2]: Կիլիկյան հարթավայրում աճում էին և այժմ էլ աճում են հարավային ու մերձարևադարձային բույսեր՝ ցիտրուսներ, սալոր, խաղողի վազ, պիստակենի, չաքարեղեգն ու բամբակ: Կիլիկիայում ցանում էին և ցանում են ցորեն, գարի, տարեկան, կորեկ և այլ կուլտուրաներ: Կիլիկյան Հայաստանի լեռնային մարգերը հռչակված էին ձիթենիների, մայրիների ու կաղնիների անտառներով:

Կիլիկյան Հայաստանի կենդանական աշխարհը բազմազան է եղել: Կիլիկիայի անտառներում բազմանում էին հովազներ, հովազաոյծներ, արջեր, գայլեր, չնագայլեր, կարմիր աղվեսներ, այծքաղներ, վայրի ոչխարներ, այծեր և այլ կենդանիներ: Հարթավայրի ճահիճների չամբուտներում թաքնվում էին վարազներ և ջրային թռչուններ[1]: Երկրում առատ են եղել որսի կենդանիները: «Կենդանիների ու թըռչունների որսով,— գրում է Մարկո Պոլոն Կիլիկիայի մասին,— շատ են զվարճանում»[2]:

Կիլիկիայի մեծ գետերն են Պիռամոսը (Ջահան), Սարոսը (Սիհուն), Կյուղնոսը (Թարսուս-չայ) և Կալիկադնոսը (այժմ՝ Սելեֆկե-սու): Սրանք բոլորը սկիզբ են առնում Տավրոսի և Անտիտավրոսի լեռներից, թափով ճեղքում անցնում են նեղ կիրճերով, արագորեն սլանում լեռնահովիտներով, այնուհետև դանդաղ հոսում են Կիլիկիայի բարեբեր հարթավայրերով՝ այստեղ սփռելով իրենց բերած տիղմը, և թափվում են Միջերկրական ծովը: Առաջին երկու գետերը վերին հոսանքում ընդունում են շատ վտակներ: Ստորին հոսանքում Կիլիկիայի հայկական թագավորության դարաշրջանում առաջին երեք գետերը դեռևս նավարկելի են եղել:

Պիռամոսի ակունքները գտնվում են Մարաշի մոտ, իսկ դրա աջ վտակի ակունքը՝ Այրիստանի մոտ: Այս գետի հոսանքն ի վար դասավորված են եղել Անազարբան և Մամեստիան, իսկ աջ վտակներից մեկի վրա Սիս քաղաքը՝ պետության մայրաքաղաքը: Պիռամոսն ուներ նաև ռազմավարական նշանակություն. այն մասամբ պաշտպանում էր արևելյան սահմանը Սիրիայի կողմից:

Կիլիկիայի երկրորդ նշանակալի գետը՝ Սարոսը, սկիզբ է առնում Կապադովկիայից, Անտիտավրոսի լեռներից՝ Հալիս գետի ակունքներից ոչ հեռու: Այս գետի ստորին հոսանքի ափին է Ադանա քաղաքը, որը եղել է Կիլիկյան Հայաստանի առևտրաարդյունաբերական կարևոր կենտրոններից մեկը: Այս գետի երկարությունը 450 կմ է:

Կյուղնոսի երեք ճյուղերը սնվում են Տավրոսի լեռնաշղթայի ջրերով: Այս գետի ափին է Տարսոնը՝ Կիլիկյան Հայաստանի երբեմնի ծաղկուն քաղաքը, որը նշանակալի դեր էր խաղում այդ պետության տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում:

Կալիկադնոսը իր վերին հոսանքով պատկանում է Իսավրիային: Մեր թվարկությունից երեք դար առաջ Սելևկոս Նիկատորը այս գետի ափին հիմնեց մի քաղաք, որը հիմնադրի անունով կոչվեց Սելևկիա: Կալիկադնոս կամ Սելեֆ գետը պաշտպանում էր Կիլիկյան Հայաստանի արևմտյան սահմանը Իսավրիայի կողմից թշնամու ներխուժումից:

[1] **П. М. Жуковский,** *Земледельческая Турция, М.-Л., 1933, с. 20.*

[2] *Три еврейских путешественника XI—XII вв., с. 34.*

[1] Տե՛ս **Ալիշան,** *Սիսուան, էջ 9:*

[2] **Марко Поло,** *Путешествие, Ленинград, 1941, с. 17.*

Բացի այդ, Կիլիկիայում կան բազմաթիվ մանր գետեր, որոնք նույնպես թափվում են Միջերկրական ծովը: Դրանցից առավել նշանակալիցը Լամոսն է (Սարոսի և Կյուդնոսի միջև): Այս գետի գետաբերանում է եղել Լամոս նավահանգիստը:

Կիլիկիայի գետերը, մանավանդ Պիռամոսն ու Սարոսը, մեծ նշանակություն ունեին երկրի տնտեսության մեջ: Հենց Պիռամոսի ու Սարոսի ստորին հոսանքների միջև է գտնվում Կիլիկյան հարթավայրը, որտեղ տեղավորված էին Կիլիկյան Հայաստանի խոշոր արդյունաբերական քաղաքները:

Սարոս ու Պիռամոս գետերը արաբական դարաշրջանից հայտնի են եղել Սևհան և Ջևհան անուններով: Դրանք այդպես էին անվանվում համանմանությամբ, կամ իրրև նմանակում Միջին Ասիայի առավել հայտնի գետերի՝ Օքսուսի ու Յաքսարտի, որոնք արաբ աշխարհագետներն անվանում էին Սևհան ու Ջևհան:

Կիլիկյան Հայաստանի բնակչությունը կազմված էր հայերից, ասորիներից, հույներից: Այնտեղ ապրում էին նաև ոչ մեծ թվով հրեաներ, արաբներ ու սկյութներ: Խոշոր քաղաքներում XIII դարից բնակվում էին իտալացի արհեստավորներ ու վաճառականներ: Մի քանի սահմանամերձ ամրոցներ կային տաճարականների, հովհաննականների ուխտի և տևտոնական ուխտի ասպետների ձեռքին[1]:

Ինչպես վկայում են աղբյուրները, Դաշտային ու Լեռնային Կիլիկիայի հայերի թիվը գյուղական վայրերում և քաղաքներում մեծացել է չնորհիվ բնական աճի և նրանց նոր բնակեցմամբ՝ XI դ. վերջին և XII դ. սկզբին Միջագետքի ու Փոքր Ասիայի հայ իշխանների տիրապետությունների անկումից հետո, նաև Մեծ Հայքի[2] վրա մոնղոլների ամայացուցիչ արշավանքի ժամանակ: Հայերն ապրում էին ինչպես գյուղական վայրերում, այնպես էլ քաղաքներում: Քաղաքաբնակ հայերը հմուտ արհեստավորներ էին. պատրաստում էին գորգեր, գործվածքներ, մետաղե և այլ իրեր, իսկ գյուղացի հայերը հաջողությամբ զբաղվում էին հողագործությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Հայ վաճառականներն առևտուր էին անում ոչ միայն երկրի ներսում, այլև Կիլիկիայի սահմաններից շատ ավելի հեռու տեղերում: Ավատատերերի դասակարգը համարյա բացառապես հայերից էր բաղկացած:

Կիլիկյան Հայաստանի էթնիկական կազմի մասին 1212 թվականին այնտեղ այցելած Վիլբրանդտ Օլդնբուրգցին գրում է. «Բնակեցված

[1] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, Venése, 1863, էջ 74:

[2] Տե՛ս **Կիրակոսի Գանձակեցւոյ** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 179:

է (Հայաստանը) փրանկներով, հույներով, ասորիներով, թուրքերով և ուրիշներով, բայց գերիշխում են հայերը»[1]: Թուրք ասելով հեղինակը հասկանում է մուսուլման բնակչությունը ընդհանրապես: Հայերը գերիշխում էին ոչ միայն քաղաքականապես. նրանք քանակական առումով նույնպես առաջին տեղն էին զբաղեցնում: Հույները, ինչպես և ասորիները, որոնք արդեն արաբացած էին, զբաղվում էին հողագործությամբ, այգեգործությամբ, արհեստով ու առևտրով: Հրեաների, արաբների և իտալացիների թիվը մեծ չի եղել: Նրանք ապրում էին քաղաքներում: Հրեաներն զբաղվում էին առևտրով ու դրամափոխությամբ, արաբները՝ բրդե և մետաքսե կտորների արտադրությամբ, իտալացիները մահուդ էին գործում, դարբնոցներ ունեին, պանդոկներ էին պահում, առևտրով զբաղվում:

XIII դարում՝ իր սահմաններից դուրս Կիլիկիայի հայկական պետության առավելագույն ընդարձակման ժամանակաշրջանում, նրա տարածքը հավասարվել էր 40000 քառ կմ-ի, իսկ բնակչությունը, հավանաբար, հասել էր 1000000-ի: Այս ենթադրությունը հիմնված է հետևյալ փաստերի ու նկատառումների վրա: Հռոմեական դարաշրջանում՝ մեր թվականության II դարում, Կիլիկիա պրովինցիան, Իսավրիան ու Լիկաոնիան ներառնելուց հետո, զբաղեցնում էր մոտ 35000 քառ կմ 900000 բնակչությամբ[2]: XX դարի սկզբին, վիճակագրական տվյալների համաձայն, Ադանայի, Կոզանի, Ջևրել-Բերկետի, Մարաշի և Գաղիայնտեղի սանջակների բնակչությունը, այսինքն մի քիչ ավելի մեծ տարածքի, քան Կիլիկիայի հայկական պետությունն է եղել, բաղկացած էր մոտ 850000 մարդուց, որոնցից ավելի քան 400000-ը հայեր էին[3]: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Կիլիկյան Հայաստանը իր չափերով մի քիչ ավելի մեծ է եղել Կիլիկիայից՝ Հռոմի պրովինցիայից, և ավելի փոքր՝ վերոհիշյալ սանջակների տարածքից: Սակայն Կիլիկիայի հայկական պետության քաղաքներն ու գյուղերը, ինչպես վկայում են Աբուլֆեդան, Կիրակոս Գանձակեցին և ուրիշ շատ հեղինակներ, մարդաշատ են եղել, մինչդեռ թուրքական տիրապետության տակ դրանցից շատերն ամայացել են կամ ավերակ դարձել:

Կիլիկյան Հայաստանը բաժանված էր մոտ 30 շրջանների, որոնց կենտրոնները քաղաքներն էին, ամրոցները, բերդերն ու խոշոր նավահանգիստները:

[1] **Laurent,** Perigrinatores medii avi quatuor, Lipsiae, 1864, p. 177.

[2] Տե՛ս **А. Рановичъ,** Восточные провинции Римской империи в I–III вв., М.-Л., 1949, с. 97, 101:

[3] Տե՛ս **David-Beg,** La guestion de Cilicie, Paris, 1921:

4461

Կիլիկիայի հայկական պետության խոշոր քաղաքներն էին Սիսը, Տարսոնը, Ադանան, Մամեստիան (Մոպսուեստիան), Անաղարբան: Գլխավոր նավահանգիստները՝ Այասը և Կոռիկոսը: Կիլիկիայի լեռնային շրջաններում կային հարյուրից ավելի բերդեր ու ամրոցներ, որոնցից շատերը սերտորեն կապված են եղել Կիլիկիայի հայկական պետության ծագման, բարգավաճման ու պաշտպանության հետ: Ամրոցներից կարևորագույններն էին Վահկան, Լամբրոնը, Գուգլակը, Կապանը և այլն:

Սիսը՝ Կիլիկիայի հայկական պետության մայրաքաղաքը, XII դարի 70-ական թվերից մինչև այդ պետության անկումը՝ 1375 թիվը, եղել է երկրի անմատչելի ամրոցներից մեկը: Սիսը տեղավորված էր լեռնային վայրում՝ Պիռամոսի աջակողմյան վտակներից մեկի վրա: Քաղաքամայրը լավ ամրացված էր և ուներ միջնաբերդ՝ բարձունքի վրա: Կիլիկյան Հայաստանի թշնամիներին երկու դարի ընթացքում չի հաջողվել գրավել Սսի միջնաբերդը: Պետության մայրաքաղաքը զարդարում էին գեղեցիկ շենքեր: Սիսը 1292–1441 ԹԹ. եղել է նաև ամենայն հայոց կաթողիկոսների նստավայրը, իսկ այնուհետև մինչև 1921 թիվը՝ Կիլիկիայի կաթողիկոսների աթոռանիստը:

Կիլիկիայի հնագույն Տարսոն քաղաքը եղել է հելլենիզմի կենտրոններից մեկը: Դեռևս անտիկ դարաշրջանում նշանակալի դեր է խաղացել միջազգային առևտրի բնագավառում: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Տարսոնը ռազմավարական շատ կարևոր նշանակություն է ունեցել որպես սահմանապահ ամրոց, քանզի այդ քաղաքից էր (Կիլիկյան դարպասով) ճանապարհն անցնում դեպի Փոքր Ասիայի բյուզանդական տիրույթները: VII–IX դարերում արաբական խալիֆներն այստեղ պահում էին հետևակային և հեծելազորային մեծ բանակ՝ Բյուզանդիա ներխուժելու համար, իսկ X դարում՝ բյուզանդական հարձակումը ետ մղելու համար: Իբն Հաուկալի խոսքերով ասած՝ «Տարսոնի և հունաց երկրի (Բյուզանդիա) միջև խոյանում է Ջևրել էլ-Լուկամի (Տավրոս) բարձր լեռնաշղթան, որը կանգնած է որպես արգելապատնեշ իսլամի և քրիստոնեության միջև»[1]: Այս նույն հեղինակն ասում է, որ Տարսոնը շրջապատված էր քարե կրկնակի պարսպով և ուներ բազմամարդ կայազոր: Ըստ Յակուտի նկարագրության Տարսոնի կրկնակի պարիսպներն ունեին վեց դարպաս և գոտևորվում էին խոր խրամով[2]:

[1] **Le Strange,** *The lands of the Eastern caliphate, Cambr., 1905, p. 132.*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

Պայքարը արաբների ու բյուզանդացիների միջև Տարսոնի համար բռնկվեց նոր ուժով X դարի երկրորդ կեսին: Մուսուլմաններից ետ նվաճված Տարսոնը բյուզանդական զորքերի մեկնակետը դարձավ ոչ միայն դեպի Սիրիա ու Եփրատ արշավելու համար, այլև երբեմն էլ՝ դեպի Վրաստան ու Հայաստան, ինչպես վարվեց, օրինակ, Վասիլ II կայսրը 1000 թվին՝ Դավիթ կուրապաղատի մահից հետո: Ռուբինյանների օրոք Տարսոնը դարձավ արհեստագործական արդյունաբերության և արտաքին առևտրի գլխավոր կենտրոններից մեկը: Այն գտնվում էր Կապադովկիայից Սիրիա տանող առևտրական ճանապարհի վրա: Այստեղ մաքսատուն կար: Տարսոնում ըստ ավանդության թագադրվում էին Կիլիկյան Հայաստանի թագավորները:

Սարոս գետի ափին գտնվող Ադանան ու Պիռամոսի ափի Մամեստիան նույնպես խոշոր քաղաքներ էին՝ քարավանային ճանապարհներով կապված Միջերկրական ծովի հետ: Այս քաղաքները Այաս, Կոռիկոս և այլ քաղաքների հետ մեծ դեր էին խաղում երկրի տնտեսության մեջ:

Կիլիկյան Հայաստանի քաղաքների նշանակությունը մեծացավ XIII դարից՝ որպես հետևանք գյուղատնտեսության վերելքի, արհեստագործական արդյունաբերության զարգացման՝ կապված ոչ միայն ներքին, այլև արտաքին չուկայի հետ, ինչպես և՝ տարանցիկ առևտրի ծավալի ընդլայնման հետ: Կիլիկյան Հայաստանի խոշոր քաղաքները գտնվում էին թագավորի անմիջական իշխանության ներքո:

Կիլիկյան Հայաստանի ամրությունների մեծ մասը սահմանամերձ լեռնային շրջաններում էր: Կիլիկյան ամրոցներից շատերը կառուցվել են անտիկ դարաշրջանում, երբ դրանցից մի քանիսը եղել են ծովահենների հենակետեր: Բյուզանդական տիրապետության դարաշրջանում առավել կարևոր ամրոցները նորոգվել են, քանի որ Լեռնային Կիլիկիան սահմանային պատվար էր արաբների՝ Բյուզանդիա ներխուժման դեմ:

Կիլիկիայի լեռնային շրջանների ամրոցները պաշտպանում էին լեռնանցքները կամ լեռնահովիտները, որոնցով հոսում էին կիլիկյան գետերը: Հայ թագավորներն ու իշխանները մշտապես հոգում էին կիլիկյան բերդերի ամրացման մասին:

Պիռամոսի վերին հոսանքներում՝ Ջեյհուն լեռնային գավառում էին գտնվում Կանչի ու Ֆոնուզ բերդերը, որոնք հաճախակի հարձակման էին ենթարկվում սելջուկների կողմից: Դրանցից դեպի հարավ-արևմուտք Կապան ամրոցն էր, որը պաշտպանում էր Տավրոսի նույնանուն լեռնանցքը: Այս նույն գետի հովտում՝ Կիլիկիայի հայ-

կական պետության արևելյան սահմանի վրա էին ստրատեգիական տեսակետից չատ կարևոր ամրություններ Բերդուսը և Մարաշը: Վերջինս նաև առևտրաարդյունաբերական քաղաք էր: Մարաշից արևելք, Եփրատի ուղղությամբ, Կիլիկիայի, Միջագետքի և Սիրիայի սահմանագծում կային հայաբնակ չատ ու չատ գյուղեր, քաղաքներ (Քեսուն, Դլուկ, Այնթափ և այլն), իսկ այս գետի աջ ափին կանգնած էր ուժեղ ամրացված Հռոմկլա բերդը՝ Կիլիկիայի հայկական պետության դարաշրջանի հայոց կաթողիկոսների աթոռանիստը:

Երկրի արևելքում, այնտեղ, ուր իրար են մոտենում Տավրոսի և Ամանոսի լեռնաճյուղերը, Սիրիայի սահմանի մոտ կային զորեղ ամրոցներ Հարունը, Համուսը, Սարվանդիքարը և Թիլ-Համդունը: Ամանոսի լեռնանցքներում՝ Կիլիկիա-սիրիական սահմանից հարավ, կային Դարպսակ, Պաղրաս, Կաստոն ամրացված բնակավայրերը:

Պիռամոսի ափին, բարձունքի վրա էր Անազարբա ամրացված քաղաքը՝ Կիլիկիայի հայկական իշխանության մայրաքաղաքը XII դարում: Կալիկադնոս գետի վերին հոսանքներում՝ Իկոնիայի սուլթանության սահմանի մոտ, կառուցված էին Լավզադ, Գերմանիկոպոլիս և Մուզ ամրոցները: Ստրատեգիական մեծ նշանակություն ուներ Կալիկադնոսի բարձրաբերձ ափին կառուցված Սկևկիան:

Իսավրիայում ու Կապադովկիայում գտնվող Լարանդան ու Հերակլեան (Լարանդայից հյուսիս) XIII դարի սկզբին կռվախնձոր էին դարձել հայերի ու սելջուկների միջև:

Մշտապես հայերի ձեռքին էր Մունդաս ամրոցը, որը Հերակլեայի հարավում էր: Կյուդնոսի վերին հոսանքների մոտ, որն այստեղ բաժանվում է երեք ճյուղի, երեք նշանակալից բերդեր կային՝ Լամբրոն, Պապևռոն և Գուգլակ: Լամբրոնը նույնանուն մարզի կենտրոնն էր և Օշինյանների (Հեթումյանների) իշխանական տան ամրոցը: Հենվելով Լամբրոնի անմատչելիության, ինչպես և Բյուզանդիայի հետ կնքված դաշինքի վրա՝ Հեթումյանները մեկ դարից ավելի պայքարում էին Կիլիկիայի հայկական պետության գլուխ կանգնած Ռուբինյանների դեմ: Պապևռոնը Օշինյաններին ազգակից մի իշխանական տան տոհմական ամրոցն էր, իսկ Գուգլակը՝ ուժեղ ամրոց, որ պաշտպանում էր նույնանուն կապանի մուտքը:

Սարոս գետի վերին հոսանքներում, լեռնային մի գեղեցիկ վայրում էր Հարգա քաղաքը, այժմ՝ Հաճընն: Մի քիչ ներքևում, այս նույն գետի ափին, որի կիրճը ներկայացնում էր բարձրլեռնային Բարձրբերդ գավառը, խոյանում էր Վահկա բերդը՝ Ռուբինյանների հենակետը և առաջին քաղաքական կենտրոնը: Այս բերդից դեպի արևմուտք, նույնպես Տավրոսի լեռներում է գտնվում Բարձրբերդ ամրոցը:

Կիլիկյան Հայաստանում կային մի չարք նավահանգիստներ, որոնցից մի քանիսը խոշոր նշանակություն ունեին միջազգային առևտրում: XIV դարի սկզբի իտալացի հեղինակ Մարին Սանուտոն իր «Խաչակիրների գաղտնի գիրքը» աշխատության մեջ մանրամասն թվարկում է և նկարագրում Կիլիկյան Հայաստանի նավահանգիստները: Նա բերում է 25 նավահանգիստների անուններ, որոշում է դրանց դիրքը միմյանց նկատմամբ, մատնանշում նավերի լողարկման հարմարություններն ու անհարմարությունները մի նավահանգստից մյուսն անցնելիս՝ առավել մանրամասն կանգ առնելով ստրատեգիական և առևտրական նշանակություն ունեցող նավահանգիստների վրա: Այժմ այդ նավահանգիստները, ոչ մեծ բացառությամբ, դադարել են գոյություն ունենալուց կամ ավերակ են, բայց դրանց գոյությունը հաստատվում է նրանով, որ նշանակված են այն ժամանակվա քարտեզների վրա:

Կիլիկիայի հայկական թագավորության գլխավոր նավահանգիստը նրա ծաղկման շրջանում եղել է Այասը (Լայացցո): Այասը գտնվում էր Ալեքսանդրետի (Հայկական) ծոցի ափին, որը խոր մտրճվում է մայր ցամաքի մեջ և շրջապատված է լեռներով: Այասի նավահանգստից քարավանային ուղիներ էին գնում, որոնք Փոքր Ասիայի և Հայաստանի միջով հասնում էին մինչև Սև ծովի ափերը, մինչև Իրան և Պարսից ծոց՝ Կիլիկիան կապելով Սիրիայի, Միջագետքի և այլ երկրների հետ: Այդ նավահանգստային քաղաքը ամրացված էր ցամաքից, իսկ ծովից պաշտպանում էր բերդը, որը ափից ոչ հեռու գտնվող կղզու վրա էր[1]: Այասում էր գտնվում պետության՝ իր նկամուտներով առաջին տեղը բռնող մաքսատունը: Այասը եղել է Եգիպտոսի սուլթանության զորքերի հարձակման օրյակտ XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի առաջին կեսին:

Այասը, ըստ Սանուտոյի, երրորդ նավահանգիստն էր՝ Սիրիայի սահմանից սկսած: Գտնվելով Այասից 15 կմ հեռու և նույնքան էլ Պիռամոսի գետաբերանից, Պայլորումը (Պայաս) ստրատեգիական նշանակություն ուներ որպես ռազմանավերի կայանատեղի՝ Եգիպտոսի սուլթանության դեմ կռվող խաչակիրների համար[2]: XIII դարի խաչակրաց արշավանքի ծրագրերից մեկում Պայասի մասին, ի միջի այլոց, ասված է. «... Աշխարհի լավագույն նավահանգիստներից մեկն է, ուր ժամանում են զանազան երկրների նավեր»[3]:

[1] Տե՛ս **M. Sanuto,** *Liber secretorum fidelium crucis, Hanoviae, 1611, p. 88:*

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] *Archives de l' Orient latin, Paris, 1884, h. II, p. 349.*

Կիլիկյան Հայաստանի նավահանգիստներից մեկը, որն այն ժամանակ մատչելի է եղել ծովային նավերի համար, Մամեստիա քաղաքն էր՝ Պիռամոս գետի ափին, որը նավարկելի էր մինչև այդ կետը:

Ծովային առևտրի համար իր նշանակությամբ կարևոր նավահանգիստ էր Կյուդնոս (այժմ՝ Տարսուս-չայ) գետի ափին գտնվող Տարսոն քաղաքը: XIII–XIV դարերում սա մատչելի էր ծովից ոչ մեծ նավերի ընդունման համար:

Սպառազինական և առևտրական նշանակությամբ Կիլիկյան Հայաստանի երկրորդ նավահանգիստը Կոռիկոսն էր, որն այս երկրի բոլոր նավահանգիստներից ամենամոտն էր Կիպրոսին, Տարսոնից 70 կմ ու Սելևկիայից 20 կմ հեռու: Կոռիկոսի մոտերքում կար մի կղզի՝ ծովային ամրոցով: Ծովափնյա Կոռիկոս քաղաքը լավ ամրացված էր պարիսպներով և աշտարակներով: Սրա մասին, որպես Կիլիկիայի հայկական պետության նավահանգստի, հիշատակում է Բենիամին Տուդելացին՝ XIII դարի կեսերին այցելելով այստեղ[2]: XIII դարի վերջին Կոռիկոսը պատկանում էր Հեթումյանների դինաստիայի ազգականներից մեկին՝ Հեթում պատմիչին, որ ամրացրել է քաղաքը և ծովային ամրոց կառուցել նավահանգստի մոտ գտնվող նույնանուն կղզում: XIII դարում Կոռիկոսի միջոցով նշանակալի առևտուր էր կատարվում Եվրոպայի հետ: 1337 թ., Այասի անկումից հետո, Կոռիկոսը դարձավ առավել կարևոր նավահանգիստ՝ և՛ առևտրական, և՛ ռազմավարական առումներով:

Սելևկիա քաղաքը (ըստ Սանուտոյի՝ Սալևֆիո), որը գտնվում է Կալիկադնոսի ափին, գետաբերանից 20 կմ վերև, ծովային փոքր նավեր էր ընդունում:

Սելևկիայից մինչև նավահանգիստն ընկած առափնյա շերտը, որը Սանուտոն անվանում է Կանդելորուս (ըստ հայկական աղբյուրների՝ Կալոնորոս — հունական ծագմամբ անուն), եղել է սենիոր Ադամի ավատը: Սելջուկյան սուլթան Քեյ-Կուբադ Ալա ադ դինը Կալոնորոսը խլեց նրա ժառանգորդներից[3], որից հետո նավահանգիստն ստացավ նոր անվանում՝ Ալայա: Այսպիսով, Հեթում I-ի կառավարման օրոք Կիլիկյան Հայաստանի առափնյա գիծը կրճատվեց և տարածվում էր Ալեքսանդրետի ծոցից մինչև Սելևկիան ներառյալ:

Կիլիկիայի հայկական պետության աշխարհագրական դիրքը Միջերկրական ծովի ափին, օգտակար հանածոները (երկաթ, արծաթ, պղինձ, ծծումբ, աղ, սոդա և այլն), բերրի հողերը և երկրի բնական հարստությունները բավականին նպաստում էին Կիլիկիայի տնտեսական զարգացմանը, միջազգային առևտրում նրա մասնակցությանը: Արտաքին ու տարանցիկ առևտուրը քիչ ազդեցություն չի ունեցել պետության արտաքին քաղաքականության վրա, քանի որ թագավորական գանձատունը մեծ եկամուտներ էր ստանում մաքսից և այլ տուրքերից:

Երկրի աշխարհագրական պայմանները, զուգակցված Կիլիկիայի հայկական պետության համար XII դարում ստեղծված բարենպաստ հանգամանքների հետ (խաչակիրների, արաբների ու սելջուկների մրցակցությունը), նպաստում էին պետության տնտեսական ու քաղաքական զարգացմանը:

Այն հանգամանքը, որ Կիլիկյան Հայաստանը գտնվում էր ռազմաստրատեգիական ճանապարհների խաչմերուկում, որոնք երկիրը կտրում-անցնում էին մի քանի ուղղություններով, որոնցով շարժվում էին նվաճողները Արևմուտքից Արևելք և հակառակը, պայմանավորեց այդ պետության մասնակցությունը XI–XIV դարերի միջազգային կարևորագույն իրադարձություններին:

XIII դարի երկրորդ կեսից Կիլիկյան Հայաստանի բնակչության կյանքը և ունեցվածքը թշնամիների ներխուժումների պատճառով հաճախ էին վտանգի ենթարկվում: Մամլուքների և Իկոնիայի թուրքմենների ներխուժումները Կիլիկյան Հայաստան XIV դարում, որոնք ուղեկցվում էին բնակիչների կոտորածով ու գերեվարությամբ, կողոպուտով ու ավերածությամբ, քայքայեցին երկրի տնտեսությունը և արագացրին Կիլիկիայի հայկական թագավորության անկումը XIV դարի երկրորդ կեսին:

[1] Տե՛ս **M. Sanuto,** *Liber secretorum... p. 89:*

[2] Տե՛ս *Три еврейских путешественника XI—XII вв., стр. 34:*

[3] **Սմբատայ Սպարապետի** *Պատմութիւն, Մոսկվա, 1856, էջ 109:*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿԻԼԻԿԻԱՆ ՄԻՆՉԵՎ ՆՐԱ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Կիլիկիան խեթական տիրապետության ղարաշրջանից մինչև Տիգրան II-ի պայքարը Հռոմի դեմ: Դաշտային Կիլիկիան Տիգրան II-ի պետության կազմում: Կիլիկիան Հռոմեական պրովինցիա: Կիլիկիան բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում (V–VII դդ.): Դաշտային Կիլիկիայի նվաճումը արաբների կողմից: Բյուզանդիայի ու Բաղդադի խալիֆայության պայքարը Կիլիկիայի համար: Դաշտային Կիլիկիայի և Հյուսիսային Սիրիայի ետ նվաճումը Նիկոփոր II Փոկասի կողմից և Հովհաննես Ձմշկիկի արշավանքները: Կիլիկիան Վարդ Սկլերոսի և Վարդ Փոկասի ապստամբությունների ժամանակ: Հայերի արտագաղթը Բյուզանդիա VIII–IX դարերում և նրանց բնակեցումը խալիֆաթին սահմանակից մարզերում: Հայ բնակչության աճը Կիլիկիայում և սահմանակից երկրներում X դարում: Հայերի դերն ու մասնակցությունը արաբների դեմ Բյուզանդիայի մղած պատերազմներում:

Կիլիկիայի պատմությունը սկիզբ է առնում խոր հնադարից և սերտորեն կապված է Հին Արևելքի երկրների պատմության հետ: Սակայն Կիլիկիայի հին ժամանակների ներքին պատմությունը համարյա անհայտ է, ոչ միայն գրավոր աղբյուրների, այլև նյութական մշակույթի հուշարձանների անբավարարության պատճառով, քանի որ յայն իմաստով հնագիտական պեղումներ այս երկրում չեն կատարվել: Միայն Կիլիկիայի միջազգային հարաբերություններն են չնչին չափով լուսաբանվում խեթական, եգիպտական, ասորեստանյան և հունական աղբյուրներում: Դա բացատրվում է գլխավորապես նրանով, որ Կիլիկիան պայքարի առարկա է եղել խեթական, եգիպտական, ասորեստանյան և այլ նվաճողների համար:

Եգիպտոսի փարավոնների զորքերը Նոր թագավորության շրջանում հասել են մինչև Եփրատ և Կիլիկիայի սահմանը: Խեթերի դեմ Հյուսիսային Ասորիքի համար մղած տևական ու համառ պայքարի

ժամանակ փարավոնները մոտենում էին Կիլիկիայի սահմաններին: Եգիպտոսի XIX դինաստիայի փարավոնների (Սեթի I, Ռամզես II) և խեթական նվաճողների (Մուվատալ, Խաթթուշիլ II) պատերազմները հաճախակի դարձան մ. թ. ա. XIV դարի սկզբին և հատկապես Օրոնտես գետի ափին գտնվող Քադեշի բերդին տիրելու համար: Եգիպտոսի դեմ պայքարելու համար, որը ձգտում էր հաստատապես տիրել Հյուսիսային Ասորիքին, խեթական տերությունը միավորել էր 12 ժողովուրդների: Այս ռազմական միության մեջ էր մտնում նաև Կիլիկիայի Կոդիի թագավորությունը: Մի շարք պատերազմներից հետո Հյուսիսային Ասորիքը և, հետևաբար, Կիլիկիան մնացին խեթերի քաղաքական ազդեցության տակ: XIII դարի սկզբին եգիպտոսի փարավոն Ռամզես II-ը և խեթական թագավոր Խաթթուշիլ II-ը հաշտության պայմանագիր կնքեցին ու պարտավորվեցին ոչ միայն խաղաղություն պահպանել միմյանց միջև, այլև օգնել իրար՝ կողմերից մեկի վրա արտաքին թշնամու հարձակման դեպքում և փոխադարձաբար հանձնել սահմանն անցած փախստականներին[1]: Սուղ տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ Կիլիկիան որպես կախյալ երկիր, մյուս երկրների նման, մտնում էր խեթական տերության մեջ, բայց կառավարվում էր տեղացի թագավորների կողմից:

«Իլիականում» հիշատակվում են կիլիկեցիները, որոնք տրոյական պատերազմի ժամանակ Փոքր Ասիայի մյուս ժողովուրդների հետ միասին մարտնչում էին հույների դեմ: Այդ կիլիկեցիների մասին Ստրաբոնն իր «Աշխարհագրության» մեջ գրում է. «Քանի որ տրոյական կիլիկեցիները, որոնց մասին հիշատակում է Հոմերոսը, չատ հեռու են Տավրոսի այն կողմում բնակվող կիլիկեցիներից, ապա որոշ գրողներ տրոյական կիլիկեցիներին համարում են վերջիններիս նախահայրերը և այստեղ մատնանշում են մի քանի նույնանուն տեղեր, ինչպիսիք Պամփիլիայի Թևբեն և Լիրնեսն են»[2]:

Անտարակույս կիլիկեցիների մասնակցությունը փոքրասիական ժողովուրդների պայքարին ընդդեմ հույների պայմանավորված է եղել նրանով, որ հույն «հերոսների» կողոպտչական արշավանքները սպառնում էին նաև նրանց: Դեռևս «հերոսական» դարաշրջանից հույն գաղութարարները հայտնվում են կիլիկիայում: Հույները բնակություն են հաստատում կիլիկիայի քաղաքներում կամ այստեղ հիմնում էին նոր քաղաքներ: Էպիկական լեգենդը Տարսոնի հիմնադիրն է համարում Տրիպտղոմեոսին, իսկ Մոպսուեստիան հիմնադրել է իբրև

[1] Տե՛ս **Б. А. Тураев,** *История Древнего Востока, Ленинград, 1936, т. I, с. 306:*

[2] *География Страбона, пер. Мищенко, М., 1879, с. 691.*

թե Մոպսը: Կիլիկիայի բնակչության հունական տարրը և հունական ազդեցությունն այդ երկրում ժամանակի ընթացքում այնքան ուժեղացան, որ նույնիսկ պարսկական տիրապետության դարաշրջանում Կիլիկիայի որոշ քաղաքներ և առաջին հերթին Տարսոնը դրամ էին հատում հունական լեգենդի պատկերով[1]:

IX դարում Ասորեստանի երկրորդ բարձրացման ժամանակաշրջանում Ասուրնասիրապալը (884–859) արշավանք գործեց արևմտյան ուղղությամբ և հասնելով Միջերկրական ծովին՝ Նահր էլ Քելբևում հրամայեց կանգնեցնել հաղթության հուշարձան՝ Միջերկրական ծովի արևելյան ափի նվաճված քաղաքների թվարկմամբ, որից երևում է, որ Դամասկոսը հարավում և Կիլիկիան հյուսիսում նրա կողմից նվաճված չեն եղել: Բայց նրա հաջորդը՝ Սալմանասար III-ը (859–825), հասել է Կիլիկիա (Տարսոն), որտեղ ստացել է արծաթ, ոսկի, ինչպես և՝ խոշոր ու մանր եղջերավոր անասուններ (XXVI տարվա արշավանքը): Դևպի Ամանոսի լեռները՝ մայրու չինափայտ ձեռք բերելու նպատակով կատարվող արշավանքները մշտական են եղել[2]: Նա նաև մի քանի արշավանք է գործել Դամասկոսի Բենհադադ թագավորի դեմ: Վերջինիս, ուրիշների հետ միասին, օգնության է եկել Կիլիկիայի թագավորը: Հետևապես, այս անգամ էլ Կիլիկիան հարևանների հետ դաշինքի մեջ մտած՝ դուրս է եկել ասորեստանցի նվաճողի դեմ, ինչպես անցած անգամ՝ ընդդեմ եգիպտացի և հույն նվաճողների: Սալմանասարի բոլոր արշավանքները Դամասկոսի դեմ ավարտվել են անհաջողությամբ, բայց նա 834 թ. արշավել է դևպի Կիլիկիա և դրա արքա Կիտեին զրկել է գահից հօգուտ նրա եղբայր Կիրեի[3]: Սակայն IX դարում ասորեստանյան տիրապետությունը կամ քաղաքական ազդեցությունը Կիլիկիայում չի հաստատվել: Ասորեստանի հետագա ուժեղացումը կասեցվել է Թիկունքից հայտնված վտանգավոր հակառակորդի՝ Վանի թագավորության կողմից[4]: Այս պետությունների չահերը բախվում էին Հյուսիսային Ասորիքում: Բայց Ասորեստանը, ըստ երևույթին, VIII դարում էլ էր ձգտում Կիլիկիան պահել իր տիրապետության կամ ազդեցության տակ: Բերոսոսի մոտ պահպանվել է մի ավանդություն, թե Սեննեքերիմը (705–

[1] Տե՛ս **А. Ранович,** *Восточные провинции Римской империи в I—III вв., М.-Л., 1949, с. 95:*

[2] Տե՛ս **Б. Пиотровский,** *История и культура Урарту, Е., 1944, с. 61:*

[3] Տե՛ս **Б. А. Тураев,** *История Древнего Востока, т. II, 1936, с. 31:*

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 32:

681) Կիլիկիայում պատերազմել է այստեղ ներխուժած հոնիացի հույների դեմ[1], որոնք առաջին հազարամյակի սկզբին արդեն սկսել էին բնակություն հաստատել այս երկրում:

VII դարում կիլիկեցիները մասնակցում էին Ասորիքի ու Փյունիկիայի քաղաքների պայքարին ընդդեմ ասորեստանյան նվաճողների: Ասսարհադոնի (681–668) դեմ դուրս են եկել Սիդոի Աբդմիլկոտ թագավորը և Կիլիկիայի Սանդուարրի թագավորը, բայց նրանք պարտվել են ու գլխատվել[2]: VII դարի երկրորդ կեսին Կիլիկիան ենթարկվում էր Ասորեստանին: Ասորեստանի կործանումից (VII դ. վերջ) հետո քաղաքականապես վերածնվեց նաև Կիլիկիայի թագավորությունը: Իր ստրատեգիական դիրքի չնորհիվ, այսինքն գտնվելով Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մարզերի, Միջագետքի և Ասորեստանի միջև, Կիլիկիան չէր կարող մի կողմ մնալ միջազգային բախումներից: Պարսից արքա Կյուրոսի նվաճողական արշավանքների ժամանակ Կիլիկիան ներգրավվեց Պարսկաստանի ու Լիդիայի պատերազմի մեջ: Նվաճելով Հայաստանը, Կապադովկիան և այլ երկրներ՝ Կյուրոսը կարողացավ ձեռնարկել հարուստ Լիդիայի նվաճման ծրագրի իրականացումը: Ստրատեգիապես առավել հարմար ճանապարհը դեպի Լիդիա անցում էր Կիլիկիայի միջով և այս երկրի լեռնանցքներով: Այդ ուղին միաժամանակ Բաբելոն–Լիդիա առևտրական մայրուղու մի հատվածն էր: Ենթադրում են, որ դևպի Լիդիա իր արշավանքի նախօրյակին Կյուրոսը որպես դաշնակցի իր կողմն է գրավել Կիլիկիայի թագավոր Սիեննեսիոսին[3]:

Մտնելով պարսկական միապետության կազմը՝ Կիլիկիան պահպանեց որոշ անկախություն: Կառավարման գլուխ էին կանգնում տեղացիները: Կիլիկիան Պարսկաստանին հարկ էր վճարում և մասնակցում էր Դարեհի և Քսերքսեսի արշավանքներին դևպի Հունաստան: 484 թվականին, օրինակ, Կիլիկիան տրամադրել է 100 նավ և մի մեծ զորաջոկատ:

Հերոդոտոսը հետևյալ տեղեկությունն է տալիս այն հարկերի մասին, որ գանձում էին պարսիկները Կիլիկիայից: «Կիլիկեցիները,– ասում է նա,– տալիս էին երեք հարյուր վաթսուն սպիտակ ձի՝ յուրաքանչյուր օրվա համար մեկ ձի և հինգ հարյուր արծաթ տաղանդ, որից հարյուր քառասունը ծախսվում էր Կիլիկյան երկիրը պահպանող հեծելազորի վրա, իսկ երեք հարյուր վաթսունը հասնում էր

[1] Տե՛ս **В. В. Струев,** *История Древнего Востока, Л., 1946, с. 331:*

[2] Տե՛ս **Б. А. Тураев,** *История Древнего Востока, т, 1936, с. 51:*

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 112:

Դարևհին»[1]: Դրամական հարկերի այսքան մեծ վճարումը ցույց է տալիս, որ Կիլիկիան տնտեսական առումով բավականին զարգացած երկիր էր: Դրան նպաստում էր այն հանգամանքը ևս, որ Կիլիկիայի միջով էր անցնում «թագավորական ճանապարհը», որն ուներ ոչ միայն ռազմավարչական, այլև առևտրական նշանակություն: Ճանապարհի մասին Հերոդոտոսը գրում է. «Կիլիկիայի միջով ճանապարհը ձգվում է երեք կայան՝ տասնհինգ և կես փարասախ»[2]: Կիլիկիայի ծովափնյա քաղաքները, Փյունիկիայի և Լիդիայի քաղաքների նման, առևտրական կապեր են ունեցել միջերկրածովյան երկրների հետ, օրինակ՝ Եգիպտոսի և Հունաստանի: Պարսկական միապետության համար բիչ կարևորություն չուներ նաև Կիլիկիայի ռազմաստրատեգիական դերը. դրա նավահանգիստներից զինվորներով ու պարենամթերքով լի նավերը արշավանքի էին դուրս գալիս դեպի Հունաստան: Կիլիկիայի նավահանգիստները նաև բազա էին Միջերկրական ծովի արևելյան ափերի մոտ գործող պարսկական նավատորմի համար:

Ալեքսանդր Մակեդոնացու բանակը, հետապնդելով Դարեհ III-ի զորքերին, անցավ կիլիկյան կապաններով. և եթե Պարսկաստանը ներքին ճգնաժամ ապրելիս չլիներ և ունենար ավելի մարտունակ բանակ, հույների հարձակումը կարող էր ամենից լավ կասեցնել հենց այստեղ՝ Կիլիկիայում: Իսոսի մոտ (333 թ.) Ալեքսանդր Մակեդոնացու տարած հաղթանակը նրան հնարավորություն տվեց չարունակել արշավանքը դեպի Ասորիք, Պաղեստին ու Եգիպտոս:

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո Կիլիկիան բաժին ընկավ Սելևկոսին և Ասորիքի հետ միասին դարձավ Սելևկյանների պետության հիմքը, թեև III դարի կեսերին կարճ ժամանակով գտնվում էր Պտղոմեոսյանների իշխանության ներքո: Հին քաղաքների (Տարսոն, Մոպսուեստիա) կողքին հիմնադրվեցին մի շարք նորերը. Ալեքսանդրիան՝ Իսոսի ծոցի ափին, Սելևկիան՝ Կալիկադնոս գետի ափին, Պտղոմեան և այլն:

Հելլենիզմի դարաշրջանում միջազգային առևտրի զարգացումը, որի մեջ ներգրավվել էին զանազան երկրներ՝ Չինաստանից ու Հնդկաստանից մինչև Հունաստան, նպաստել է քաղաքների աճին և հունական տարրի ուժեղացմանը Կիլիկիայում: Բայց չպետք է չափազանցնել այս փաստի նշանակությունը, քանի որ Կիլիկիայի քաղաքներում հույների բնակեցումը տեղի է ունեցել Ալեքսանդր Մա-

[1] **Հերոդոտոս,** Պատմություն, 1986, գ. III, էջ 196:

[2] Նույն տեղում, էջ 307:

կեդոնացու արշավանքից չատ ավելի առաջ: Տարսոնն, օրինակ, հրեչակված էր որպես խոշոր քաղաք դեռևս Սողոմոնի ժամանակ:

Մյուս կողմից, չի կարելի աչքաթող անել այն, որ կիլիկյան քաղաքները, ինչպես վկայում են դրանց ավերակներն ու պեղումները, գեղեցիկ չէնքերով զարդարվել են հելլենիստական դարաշրջանում, դեռևս հռոմեացիների կողմից Կիլիկիան նվաճելուց առաջ: Այնուամենայնիվ, չնայած քաղաքային կյանքի ու մշակույթի, առևտրի և արհեստագործական արդյունաբերության զարգացմանը, ինչը կապված էր արտաքին չուկայի հետ, քաղաքների ստորին խավերը և տեղի գյուղական բնակչությունը չէին օգտվում քաղաքային բարիքներից:

Պերգամոնի թագավորության նվաճումից և Ասիա պրովինցիայի ստեղծումից մոտ երեսուն տարի անց Հռոմը կիլիկեցի ծովահենների դեմ պայքարելու պատրվակով գրավեց Լևռնային Կիլիկիան (մ. թ. ա. 102), ինչը ուժեղացրեց նրա ստրատեգիական դիրքերը Փոքր Ասիայում և նպաստեց հռոմեացիների հետագա նվաճումներին Արևելքում:

Մ. թ. ա. 92 թ. Սուլլան, որպես պրետոր, ի կառավարումն ստացավ այս նոր պրովինցիան և այստեղից հարձակվեց Հայոց թագավոր Տիգրան II-ի վրա, որը Կապադովկիայից արտաքսել էր դրա տիրակալին՝ Հռոմի դրածո Արիոբարզանին, որին Սուլլան նորից վերականգնեց իր գահին:

Հուստինոսն ունի արժեքավոր մի վկայություն այն մասին, որ Ասորիքի բնակչությունը, որը Դաշտային Կիլիկիայի հետ գտնվում էր Սելևկյանների իշխանության տակ, իշխանության համար այդ դինաստիայի անդամների գժտություններից ու պայքարից հոգած՝ որոշեց փնտրել նոր կառավարիչներ երկրի սահմաններից դուրս և քննարկելով Պոնտոսի թագավոր Պտղոմեոսի ու Հայոց թագավոր Տիգրան II-ի թեկնածությունը՝ նախընտրեց վերջինիս՝ նրան հրավիրելով Ասորիք: Ակադեմիկոս Հ. Մանանդյանը իրավացիորեն ենթադրում է, որ Տիգրանի կողմնակիցներն այստեղ ըստ երևույթին Անտիոք քաղաքը և միջազգային տարանցիկ առևտրով չահագրգռված նրա վաճառականներն են եղել: Ընտրությունն ընկավ Տիգրանի վրա, Հուստինոսի ասելով այն պատճառով, որ նա ուներ իր սեփական ուժերը և դրա հետ միասին պարթևների դաշնակիցն էր ու Միհրդատի փեսան[1]: Դա է եղել հիմնական պատճառը, որ Ասորիքի ազդեցիկ խավին դրդել է իրենց մոտ հրավիրել Տիգրան II-ին, նրան ենթարկվել: Հայոց թագավորը, միջագետքը նվաճելուց հետո, տիրեց միջազգային առևտրի բոլոր կենտրոններին (Զեգմա, Եվևսիա, Նիզիբին, Արբելա),

[1] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Տիգրան երկրորդը և Հռոմը, Եր., 1948, էջ 51:

ինչպես և քարավանային ուղիներին, որոնք դուրս էին գալիս դեպի Ասորիքի նավահանգիստները, և գլխավոր առևտրական մայրուղուն՝ «Մետաքսի ճանապարհին», որը Պարսից ծոցը միացնում էր Միջերկրական ծովին: Ասորիքի վաճառականները հասկանում էին, որ Ասորիքի անցումը Տիգրան II-ի իշխանության տակ նշանակում է իրենց գործունեության ասպարեզի ընդլայնում, իրենց խոստանում է առևտրական նոր շահեր ու հարստացում և, բացի այդ, վերացնում է իրենց գլխին կախված հռոմեական նվաճման սպառնալիքը:

Գրավելով Ասորիքը՝ Տիգրան II-ը մեկ տարի անց հաստատվեց նաև Դաչտային Կիլիկիայում, որն Ասորիքի հետ միասին III–II դարերում Սելևկյանների իշխանության տակ էր: Տիրելով նաև Կապադովկիային ու Կոմագենին՝ Տիգրան II-ը կիսօղակով չրջապատեց Հռոմին ենթակա Լեռնային Կիլիկիան: Բայց փոխանակ դուրս գար Հռոմի դեմ, որն այն ժամանակ պատերազմում էր Միհրդատի դեմ, և գրավելով Լեռնային Կիլիկիան ու հռոմեական այլ պրովինցիաներ՝ ամրապնդեր իր պետության ռազմավարական դիրքերը, Տիգրան II-ը համարյա մինչև 70-ական թվականները կռվում էր Հարավային Ասորիքում ու Փյունիկիայում՝ իր իշխանությանը ենթարկելով Փյունիկիայի քաղաքները: Մոտ քառորդ դարի ընթացքում (95–70) Տիգրան II-ը մեծապես ընդլայնեց իր պետության սահմանները, մանավանդ հարավում և արևմուտքում, և ստեղծեց վիթխարի մի տերություն՝ Փուռ գետից մինչև Կիլիկիան ներառյալ, Պոնտոսի թագավորության սահմանից մինչև Պաղեստին:

Տիգրան II-ը Ասորիքի ու Դաչտային Կիլիկիայի փոխարքա նշանակեց Բագարատին, որի սերունդները աղդեցիկ ու հզոր իշխաններ դարձան Արշակունիների օրոք (I–IV դդ.), ինչպես և՝ արաբական դարաշրջանում, իսկ այնուհետև՝ IX դ. երկրորդ կեսին հիմնադրեցին Բագրատունիների դինաստիան, որը տիրել է մինչև XI դարի կեսը: Կիլիկիայի Սոլի քաղաքից, ինչպես և Ասորիքի, Փյունիկիայի ու Կապադովկիայի՝ նվաճված այլ քաղաքներից, Տիգրան II-ի հրամանով, բնակիչները գաղթեցվել են և բերվել կառուցվող Տիգրանակերտ:

Տիգրան II-ի պատերազմները, իհարկե, մեծ մասամբ նվաճողական բնույթ էին կրում. նրա նպատակն էր պետության սահմանների մեջ ներառնել կամ իր գերագույն իշխանությանը ենթարկել ոչ միայն հայաբնակ (Ծոփք), այլև ոչ հայաբնակ երկրները (Օսրոյենե, Միգդոնիա, Ասորիք, Կիլիկիա) կամ այն երկրները, որտեղ հայերը փոքրամասնություն էին կազմում (Միդիա, Ադիաբենե, Կորդուենե, Հյուսիսային Միջագետք):

Տիգրան II-ի պետությունը (կայսրությունը) կարելի է դասել այն պետությունների կարգին, որոնք չունեին իրենց տնտեսական բազան և ներկայացնում էին անկայուն ռազմավարչական միավորում, ցեղերի և ժողովուրդների կոնգլոմերատ, որոնցից յուրաքանչյուրն ապրում էր իր կյանքով և ուներ իր լեզուն: Տիգրան II-ի կայսրության գոյությունը խիստ կարճատև եղավ: Տիգրան II-ը ձգտում էր իր գերագույն իշխանության տակ առնել Հյուսիսային Միջագետքը, Ասորիքն ու Կիլիկիան և Միհրդատի հետ ետ մղել ստրկատիրական Հռոմի հարձակումը: Նրա հաջողությունը նպաստեց, թեև կարճ ժամանակով, առավել սերտ կապեր հաստատելու Ասիայի երկրների ու Եվրոպայի միջև և դրա հետ միասին ժամանակավորապես կասեցրեց հռոմեական ստրկատերերի նվաճումները Արևելքում:

Հայ թագավորի իշխանության հաստատումը Միջագետքում (Կապադովկիա և Դաչտային Կիլիկիա) ու Միջերկրական ծովի ափին (Կիլիկիա, Ասորիք, Փյունիկիա) նշանակում էր փակել Հռոմեացի ընչաքաղց ստրկատերերի, վաճառականների ու վաշխառուների առաջչարժման ուղիները դեպի հարուստ արևելյան երկրներ, դեպի Եփրատ ու Տիգրիս, որոնք քարավանային ճանապարհների և առևտրի կենտրոններն էին: Դա էր պատճառներից մեկը, որ Հռոմը խոչոր բանակներ է ուղարկում Տիգրան II-ի դեմ, ինչպես և Միհրդատի, որը խոչընդոտում էր Հռոմեացի նվաճողների առաջխաղացմանը դեպի Փոքր Ասիա, Պոնտոս, դեպի սևծովյան հարավային և արևելյան նավահանգիստներ:

Դաչտային Կիլիկիան երկար չմնաց հայոց թագավորի իշխանության տակ, և Տիգրանակերտը գրավվելուց հետո նա լքեց Կիլիկիան Ասորիքի հետ միասին: Թեև Լուկուլլոսը Տիգրանակերտի մոտ տարած իր հաղթանակից հետո խորանալով Հայաստանում՝ պարտություն կրեց ու ստիպված եղավ նահանջել, այնուամենայնիվ Տիգրան II-ին չհաջողվեց վերադարձնել իր նվաճած միջերկրածովյան մարզերը: Շուտով խոչոր ռազմական ուժերով և մեծ լիազորություններով Արևելքում հայտնվեց Պոմպեոսը: 67 թվին Պոմպեոսը Հռոմեական սենատից հանձնարարություն ստացավ ոչնչացնել ծովահենությունը Կիլիկիայում և Միջերկրական ծովում, որովհետև այն ոչ միայն խանգարում էր ծովային առևտրին, այլև սպառնում էր Արևելքի հետ Հռոմի ունեցած հաղորդակցության ուղիներին: Չնայած այն բանին, որ ունենալով մեծ զորք և ուժեղ նավատորմ՝ նա ջախջախեց ծովահեններին, բայց նրա հաջորդներին էլ վիճակվեց կռվել ծովահենների դեմ և ճնշել Կիլիկիայի բնակչության ապստամբությունները:

Պոմպեոսը միավորեց Լևոնային ու Դաչտային Կիլիկիաները և դրանց միացնելով հարևան առավել հետամնաց Իսավրիան, Պիսիդիան, Պամփիլիան ու Լիկաոնիան՝ ստեղծեց մի խոշոր պրովինցիա: Սոլի քաղաքը վերանվանեց Պոմպեոպոլիս: Սակայն այդ միավորումը տևական չեղավ:

Դիոն Կասիոսի[1] հաղորդմամբ Պոմպեոսը գտնվելով Կիլիկիայում՝ 66 թվականին տեղեկություն ստացավ հռոմեական սենատի որոշման մասին, որով նրան հանձնարարվում էր պատերազմ վարել Արևելքում, և նա այդ երկրում կենտրոնացրեց 50-հազարանոց մի բանակ: Բացի այդ Կիլիկիայում երկրի պաշտպանության համար թողնված էին երեք լեգեոններ, որոնց Պոմպեոսը հետագայում նույնպես պահանջեց՝ հռոմեական բանակը ուժասպառ արած Միհրդատի դեմ պատերազմական գործողությունների ժամանակ:

Շնորհիվ իր աչքառու հագրական դիրքի, հարմար նավահանգիստների և ամուր բերդերի՝ Կիլիկիան սկսեց Հռոմին ծառայել որպես ռազմավարական կարևոր բազաներից մեկը՝ Արևելքում իր նվաճումների համար, իր իշխանության տակ պահելու Փոքր Ասիան, Հայաստանը, Ասորիքը և այլ երկրներ:

Մ. թ. ա. I դարի 50-ական թվականներին Կիլիկիա պրովինցիայի մեջ ներգրավվեց Կիպրոս կղզին՝ հռոմեական նավատորմի ծովային բազան Միջերկրական ծովի արևելյան ափի մոտ: 50–51 թթ. մեկ պրովինցիայի մեջ միավորված Կիլիկիան ու Կիպրոսը կառավարում էր Ցիցերոնը:

Դա տագնապալի մի ժամանակաշրջան էր հռոմեացիների համար: Պարթևները, որոնք 53 թ. ջախջախել էին Կրասոսի հրամանատարությամբ կռվող հռոմեական զորքը, ցանկացած պահին կարող էին սպառնալ Ասորիքին ու Կիլիկիային: Մյուս կողմից, Կիլիկիայի բնակչությունը ըմբոստանում էր ու ապստամբում հռոմեական տիրապետության դեմ, մանավանդ Ամանոսի լեռների գավառներում, որոնց լեռնանցքներն անհրաժեշտ էր պաշտպանել և ձեռքից բաց չթողնել՝ նկատի ունենալով պարթևների ներխուժման վտանգը: Թեև Ցիցերոնին հաջողվեց ճնշել կիլիկեցիների ապստամբությունը, բայց Կիլիկիայի բնակչությունը չարունակում էր բողոքել զորահավաքման դեմ, հռոմեական զորքերի օթևանատների ու ծանր տուրքերի դեմ: Ատիկոսին ուղղված նամակում Ցիցերոնը գրում է, որ իր կառավարման ընթացքում ինքը Կիլիկիայում ոչինչ չի չորթել: Բայց հակառակ «անշահախնդրության» մասին իր սնապարծությանը, այդ կարճ

[1] **Հ. Մանանդյան,** *Տիգրան երկրորդը և Հռոմը, Եր., 1948, էջ 171:*

ժամկետի ընթացքում Ցիցերոնը կուտակել և իր կառավարմանը վըստահած պրովինցիայից տարել է 2300000 սեստերց[1]: Տարսոնի երկրորդ գրավման ժամանակ Կասիոսը քաղաքից այնպիսի վիթխարի ռազմատուգանք էր պահանջել, որ դրա վճարման համար քաղաքացիներն ստիպված էին տալ քաղաքային միջոցները, դրամի վերաձուլել սրբազան անոթները և ազատ քաղաքացիներին ստրկության վաճառել[2]:

Հայերի ու պարթևների դեմ Անտոնիոսի վարած ռազմական գործողություններում Կիլիկիան էլ իր ծանրակշիռ տեղն ուներ: Տեղական արքայատան չառավիղներից մեկը՝ Պոլեմոնը, ծնունդով Լիկեյի Լաոդիկեից (Կիլիկիա), պարթևական ներխուժման ժամանակ համառորեն պաշտպանում էր քաղաքը: Անտոնիոսը դրա համար թագավոր դարձրեց նրան և ի կառավարումն հանձնեց Կիլիկիայի մի մասը[3]:

Օկտավիանոսի և նրա հաջորդների օրոք Կիլիկիան մի քանի անգամ վերաձևվեց: Մի ժամանակ Լևոնային Կիլիկիան միացվել է Կապադովկիային, իսկ Դաչտայինը՝ Ասորիքին: Կիլիկիայի առանձին շրջաններ կառավարման էին հանձնվում տեղական արքայատներին: Դա պայմանավորված էր ոչ միայն քաղաքական փոփոխություններով, այլև Հռոմի քաղաքականությամբ Կիլիկիայի բնակչության նկատմամբ, որն այն ժամանակ կազմված էր գլխավորապես հույներից ու կիլիկեցիներից, ընդ որում վերջիններիս դիմադրությունը դժվար էր լինում կոտրել:

Կիլիկիայի ամբողջականությունը վերականգնվել է և տարածքն ընդարձակվել, երբ Վեսպասիանոսը միավորել է Դաչտային ու Լևոնային Կիլիկիաները մեկ պրովինցիայի մեջ՝ դրան միացնելով Կոմագենեն: Անտիոնոս Պիոսը Կիլիկիայի կազմ է մտցրել Իսավրիան ու Լիկաոնիան[4]: Վերամիավորված Կիլիկիան դարձել է լեգատի կողմից կառավարվող[5] կայսերական պրովինցիա: Կիլիկիայի ընդարձակումը հարևան երկրների հաշվին, թերևս, կատարվել է շնորհիվ այն բանի, որ վերջիններս, բացառությամբ Կոմագենեի, եղել են հետամնաց երկրներ և Հռոմի համար ավելի նվազ նշանակություն են ունեցել, քան Դաչտային Կիլիկիան իր առևտրաարդյունաբերական քաղաքներով ու նավահանգիստներով: Դրա համար էլ Կիլիկիան դարձել է

[1] *Տե՛ս* **А. Ранович,** *Восточные провинции Римской империи в I–III вв., с. 100:*

[2] *Տե՛ս* **М. А. Машкин,** *Принципат Августа, М., 1949, с. 204:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 529:*

[4] *Տե՛ս* **А. Ранович,** *Восточные провинции Римской империи в I–III вв., с. 97:*

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 105:*

ընդգրկված պրովինցիայի կորիզը, գլխավոր ռազմաստրատեգիական բազան Արևելքում: Ոչ միայն պարթևները, այլև Հ՚Լ ավելի մեծ չափով պարսիկները ձգտում էին տիրել դրան, որովհետև կիլիկյան նավահանգիստները դարպասների տեղ էին ծառայում դեպի Արևելքի երկրները հռոմեական լեգեոնների ներխուժման համար:

Մ. թ. III դարի երկրորդ կեսին, երբ Հռոմը ճգնաժամ էր ապրում, պարսից արքա Շապուհ I-ը զավթեց Կիլիկիան և այնտեղից տարավ բազմաթիվ գերիներ: Հետո Կիլիկիան որոշ ժամանակ մտավ Պալմիրա Օդենտայի և Զենոբիայի թագավորության մեջ, բայց 275 թվին հռոմեական տիրապետությունն այստեղ, ինչպես և ընդհանրապես Արևելքում, վերականգնվեց: IV դարի պարսկա-հռոմեական պատերազմների ժամանակ Կիլիկիան նման կետ է եղել հռոմեական զորքերի համար դեպի Միջագետք ու Հայաստան արշավանք կատարելիս, երկրներ, որոնք պայքարի օբյեկտներ էին Իրանի և Հռոմի միջև: Պարսից արքա Շապուհ II-ի հարձակումը Կոստանցիոսին ստիպեց օգնության պահանջել Հուլիանոսից, ինչը հարուցեց լեգեոնների խռովությունն ու Կոստանցիոսի գահընկեցությունը, որը մնաց Կիլիկիայում, և նրա ժամանումն այդ երկիր՝ Իրանի դեմ պատերազմը չարունակելու համար:

Կիլիկիայի առանձին մասերը՝ Դաշտայինն ու Լեռնայինը, խիստ տարբերվում էին միմյանցից էթնիկապես և հասարակական զարգացման մակարդակով: Տնտեսապես զարգացած քաղաքների կողքին կային հետամնաց լեռնային մարզեր, որտեղ դեռ պահպանվում էին նահապետական-տոհմային հարաբերությունների վերապրուկները:

Հռոմեական տիրապետության առաջին շրջանում և նույնիսկ մ. թ. III դարում էլ Կիլիկիայի քաղաքները չարունակում էին պահպանել իրենց բարգավաճ վիճակը, իրենց արդյունաբերությունն ու առևտուրը: Կիլիկիայից դուրս էին տանում գյուղատնտեսական մթերքներ և արհեստագործական արդյունաբերության արտադրանքներ: Կղեմես Աղեքսանդրիացին հաղորդում է, որ իր ժամանակ (III դ. սկիզբ) հռոմեացիները վուշը գնում էին ոչ թե Եգիպտոսից, այլ Հուդայի երկրից ու Կիլիկիայից, որտեղ դա աճեցնում էին մեծ քանակով: Դիոկղետիանոսի էդիկտում որպես առավելագույն գներ նշված են Տարսոնից ու դրա շրջակայքից բերվող դալմատիկանները, թիկնոցները, ժապավենները, գոտիները, գլխանոցները[1]:

Հռոմեական տիրապետության սկզբում կիլիկյան քաղաքները ինքնակառավարման մեծ արտոնություններ ունեին: Նրանց քաղա-

[1] Տե՛ս **А. Ранович,** Восточные провинции Римской империи в I–III вв, с. 102:

քային կարգը կազմակերպվում էր, հավանաբար, հունական պոլիսների ազդեցությամբ: Բայց հռոմեացիները ինչպես ամենուրեք, այնպես էլ այստեղ քաղաքներից աստիճանաբար խլում էին դրանց պատասխանատվությունը[1]: Հռոմեական դարաշրջանում ստրկատիրական հարաբերությունները Կիլիկիայում Հ՚Լ ավելի զարգացան:

Հռոմեական տիրապետության դարաշրջանում Կիլիկիայի քաղաքները, մանավանդ Տարսոնը, եղել են բարձր մշակույթի կենտրոններ: Եթե Ստրաբոնը չի չափազանցնում, Տարսոնի բնակիչները ջերմեռանդ սեր էին դրսևորում փիլիսոփայության ու գիտությունների հանդեպ և այդ առումով գերազանցում էին Աթենքին, Ալեքսանդրիային և այլ վայրերի, որտեղ կային փիլիսոփայական դպրոցներ և ուսումնական հաստատություններ[2]: Կիլիկյան քաղաքների ավերակները պահպանում են տաճարների, թատրոնների ու ջրմուղների մնացորդներ, որոնց մեծ մասը կառուցված է եղել դեռևս մինչհելլենյոտական դարաշրջանը: Հռոմեական կառավարությունը ամենից շատ հոգում էր ռազմական ճանապարհներ անցկացնելու, կամուրջներ գցելու և դրանք կարգին վիճակում պահելու մասին: Կառույցների արձանագրություններից հայտնի է, որ Վեսպասիանոսը կառուցել է Կալիկադնոսի կամուրջը Սելևկիայում: Մի արձանագրություն հաղորդում է կիլիկյան դարպասի մոտի կամուրջի ու ճանապարհի վերականգնման մասին: Անազարբայի ու Տարսոնի[3] մոտ եղած II դարի ճանապարհացույցները նույնպես վկայում են, որ ելնելով գլխավորապես ռազմաստրատեգիական բնույթի նկատառումներից՝ հռոմեացիները հոգում էին Կիլիկիայի ճանապարհները կարգին պահելու մասին, որոնք այդ երկիրը կապում էին հռոմեական մյուս պրովինցիաներին և տանում էին դեպի Արևելքի խորքը:

Կոստանդինը վարչական ռեֆորմ անցկացնելով՝ Կիլիկիան բաժանեց երեք պրովինցիայի. Առաջին Կիլիկիա, կենտրոնը՝ Տարսոն, Երկրորդ Կիլիկիա, կենտրոնը՝ Անազարբա և Լեռնային Կիլիկիա՝ Սելևկիա կենտրոնով: Այս բաժանումը, հավանաբար, որոշ ժամանակ պահպանվել է Հռոմեական կայսրությունը Արևելյանի և Արևմտյանի բաժանվելուց (395) հետո էլ, այսինքն՝ բյուզանդական տիրապետության դարաշրջանում:

Կոստանդին Միրանածինի «Բանակաթեմների և կայսրության կառավարման մասին» երկում Կիլիկիան բաժանվում է երկու բանակաթեմի՝ Առաջին Կիլիկիա և Երկրորդ Կիլիկիա: Առաջին բանակա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 97–101:

[2] Տե՛ս **А. Ранович,** Восточные пров., с. 102:

[3] Տե՛ս նույն տեղում:

թեմում, բացի դրա կենտրոն Տարսոնից, մտնում էին հետևյալ քաղաքները՝ Պոմպեոպոլիս, Սերաստիա, Կոռիկոս, Ադանա ու Զեֆուրիոն: Երկրորդ բանակաթեմում, բացի Անազարբայից, թվարկված են՝ Մոպսուեստիա, Էգեյա, Եպիփանիա, Ալեքսանդրիա, Պոսոս, Եյրենուպոլիս, Փլավիա (Սիս) և Կաստաբալա[1]:

Ըստ երևույթին, ոչ միայն կրոնական կառավարչության, այլև քաղաքացիական կառավարման տեսակետից Կիլիկիան նույն կերպ բաժանվում էր երկու մասի: Հռոմեական կայսրությունը Արևմտյանի և Արևելյանի բաժանվելուց (395) հետո Կիլիկիայի համար սկսվում է բյուզանդական տիրապետության շրջանը: Կիլիկիան, իհարկե, տնտեսական ու մշակութային առումով միշտ ավելի կապված է եղել Հունաստանի հետ, քան Իտալիայի, թեև հինգ դար չարունակ քաղաքականապես կախված է եղել Հռոմից:

IV–V դարերում, այն ժամանակ, երբ Արևմտահռոմեական կայսրությունը անկում էր ապրում, արդյունաբերությունն ու առևտուրը մարում էին, իսկ առանձին պրովինցիաներ աստիճանաբար նվաճվում էին վեստգոթերի, վանդալների, ֆրանկների և այլոց կողմից: Արևելահռոմեական կայսրությունը այս նույն ժամանակ դիմանում էր տնտեսական ու քաղաքական ճգնաժամին ու բարբարոսների հարձակումներին: Համարյա մինչև IV դարի վերջը Կիլիկիան մասնակցում էր ինչպես արևելյան երկրների հետ կայսրության առևտրին, այնպես էլ կայսրության առանձին պրովինցիաների միջև կատարվող առևտրաշրջանառությանը:

Բյուզանդական դարաշրջանում Լեռնային Կիլիկիան, Իսավրիայի հետ համասար, կայսրությանը քաջարի ռազմիկներ էր տրամադրում: Կայսր Զենոնը ծնունդով իսավրիացի էր և մասամբ հենվում էր Կիլիկիայից և Իսավրիայից հավաքագրված զորքի վրա: Մավրիկիոսը, որ մեծ նշանակություն էր տալիս ռազմական գործին, նույնպես ծնունդով Լեռնային Կիլիկիայից էր, Կուկուսից (Հայերեն՝ Կոկիսոն):

VI–VII դարերում Արևելքում Բյուզանդիայի վտանգավոր թշնամին՝ Իրանը, փորձում էր կրկնել Բյուզանդական կայսրության միջերկրածովյան պրովինցիաների գավթման փորձերը: Հաջողության դեպքում միջազգային առևտրի բոլոր մայրուղիներն ու կենտրոնները, ինչպես և Արևելքի ծովափնյա հարստագույն երկրները՝ սփռված այն ծովի ափին, որը կապում էր աշխարհի երեք մասերը, կընկնեին Սասանյանների ձեռքը:

[1] Տե՛ս Corpus script, hist, byzant., Const. Porphyrog., De thematibus et de administrando imperio, B. 1840, 397:

Հուստինիանոսի օրոք Խոսրով Անուշիրվանի զորքը Միջերկրական ծովի արևելյան ափի երկրների հետ գրավեց նաև Կիլիկիան, որը ետ էր նվաճվել Բելիսարիոսի կողմից 543 թվականին:

Շնորհիվ Բյուզանդիայի վրա արտաքին թշնամիների ճնշման թուլացման և հարաբերական խաղաղության հաստատման Կիլիկիայի, ինչպես և ընդհանրապես Բյուզանդական կայսրության, տնտեսական վիճակը VI դարի սկզբին բարելավվեց: Այս պրովինցիայի բնակչության դժգոհությունը Կոստանդնուպոլսից մեղմացավ նրանով, որ Անաստասիոս կայսրը ջանում էր հաշտեցնել կրոնական հոսանքները և միաբնակներին զիջումներ անելու ճանապարհով քաղաքացիական խաղաղություն պահպանել Արևելքում:

Իրերի դրությունը փոխվեց Հուստինիանոսի թագավորման օրոք և մանավանդ նրա հաջորդների: Արևմուտքում Հուստինիանոսի պատերազմների և արտաքին քաղաքականության հաջողությունները ձեռք էին բերվել կայսրության ուժերի սպառման գնով, հարկային ճնշման ուժեղացմամբ, որը քայքայել էր երկրի տնտեսությունը: Այս հաջողությունները կայուն չէին: Հուստինիանոսի մահից հետո Բյուզանդիան միջոցների և պաշարների անբավարարության պատճառով չէր կարող արդեն խոշոր բանակ պահել, իսկ հյուսիսից և արևելքից արտաքին թշնամիների ճնշումը ավելի ու ավելի ուժեղանում էր: Սասանյան Իրանը չէր հրաժարվել դեպի Սև և Միջերկրական ծովերի ափերը հասնելու մտքից: VI դարի վերջին Բյուզանդական կայսրության ներսում սրվեց դասակարգային պայքարը, և սոցիալական ու քաղաքական բնույթի լայն դժգոհությունն ընդգրկեց արևելյան պրովինցիաների բազմացեղ բնակչությանը, որը հանդես էր գալիս ընդդեմ քաղաքական ու հարկային ճնշման և Կոստանդնուպոլսի կառավարության կրոնական հալածանքների: Հակակառավարական ընդդիմությունը առանձնապես ուժեղ էր Եգիպտոսի, Ասորիքի ու Կիլիկիայի բնակչության մեջ, որտեղ Կոստանդնուպոլսի դեմ ընդհանուր դժգոհությունը արտահայտվում էր միաբնակների կրոնական չարժման տարածմամբ:

Մավրիկիոսի (Մորիկ) թագավորության վերջերին սրվեց սոցիալական պայքարը նաև եվրոպական պրովինցիաներում ու մայրաքաղաքում: Մավրիկիոսի կառավարումից ժողովրդական զանգվածների դժգոհությունը, որը թափանցել էր նաև բանակ, 602 թ. օգտագործեց պորավար Փոկասը՝ իշխանությունը գրավելու համար: Միաժամանակ կամ մի քիչ ուշ բռնկվեց քաղաքացիական պատերազմը Արևելքում, որը դաժան բնույթ ստացավ Կիլիկիայում, ինչի մասին հետաքրքիր

տողեր կան Դմիտրիոս Սոլունացու՝ հրաչքների մասին պատմության մեջ[1]: «Ով չգիտի,– պատմում է ժամանակակիցը,– թե բարեհիշատակ Մավրիկիոս Թագավորի օրոք փոչու ինչ ամպեր բարձրացրեց սատանան՝ սպանելով սերը և փոխադարձ թշնամանք սերմանելով ամբողջ Արևելքում ու Կիլիկիայում, և՛ Ասիայում, և՛ Պաղեստինում, և այն աստիճանի ալեկոծեց բոլոր հարևան մարզերը, նույնիսկ մինչև բուն արքայանիստ քաղաքը, որ դիմերը ոչ միայն բավականանում էին այն բանով, որ հրապարակներում արբենում էին ցեղակիցների արյունով, այլև փոխադարձաբար հարձակվում էին միմյանց կացարանների վրա և անողորմաբար սպանում նրանց, ում գտնում էին այնտեղ, վերին հարկերից ներքև էին չպրտում կանանց ու երեխաներին, ծերերին ու պատանիներին, որոնք ուժերի պակասության պատճառով չէին կարողանում փախչել փրկվել, և բոլ բարբարոսների նման թալանում էին իրենց համագյուղացիներին և ծանոթներին ու ազգականներին, հրի ճարակ դարձնում նրանց կացարանները»:

Սոցիալական պայքարը արևելյան պրովինցիաների քաղաքներում, այդ թվում և Կիլիկիայում, դիմերի պայքարը (որն առայժմ բավարար չափով չի ուսումնասիրված) օգտագործվել է, հավանաբար, հակակառավարական ընդդիմադիր ուժերի կողմից, որոնք դժգոհ էին Կոստանդնուպոլսի քաղաքականությունից, ծանր հարկերից, կրոնական հալածանքներից, որ սաստկացել էին հրեաներին քրիստոնյա դարձնելու մասին Փոկասի կարգադրության հետևանքով: Այսպիսով, միջերկրածովյան պրովինցիաներ պարսից արքա Խոսրով II-ի զորքի ներխուժման նախօրյակին և ընդհանրապես Իրանի ու Բյուզանդիայի միջև մեծ պատերազմի (611–628) նախօրյակին Կիլիկիայում, ինչպես և արևելյան այլ պրովինցիաներում, տեղի են ունեցել սուր սոցիալական պայքար ու հակաբյուզանդական շարժում: VII դարի սկզբի քաղաքացիական պատերազմը և արևելյան պրովինցիաներում կենտրոնական իշխանության թուլացումը նպաստել են ոչ միայն պարսիկների հաջողությանը, այլև Բյուզանդիայի դեմ արաբների հաղթանակին 30 տարի անց:

Մավրիկիոս կայսեր սպանությունից հետո Խոսրով II-ը, որը նրա բարեկամն էր, վրեժի պատրվակով պատերազմի է ելնում Փոկասի դեմ, որպեսզի նվաճի Եփրատից արևմուտք ընկած բյուզանդական պրովինցիաները, այդ թվում և Կիլիկիան: Ասորա-կիլիկյան կապանը պահպանող բյուզանդական զորքը ըստ երևույթին սկզբում ջախջախել է պարսից առաջապահ զորքին, բայց հետո գերակչիռ ուժերի ճնշման տակ նահանջել է: «Եւ զաւրացեալ դարձեալ պարսից՝ անցեալ կալաւ զՏարսոն քաղաք,– գրում է հայ պատմիչը,– և զամենայն բնակիչսն Կիլիկեցւոց գաւառին»[1]: Կիլիկիան մի քանի տարով կորած էր Բյուզանդիայի համար:

Սակայն արևելյան պրովինցիաները վերանվաճելիս Կիլիկիան բոլորից առաջ ազատագրվեց և դարձավ Բյուզանդական կայսրության ռազմական բազաներից մեկը Պարսկաստանի դեմ պատերազմելու համար: Այս պատերազմից հետո Բյուզանդիայի դեմ չուտով նյան արաբները: Արաբների առաջին ներխուժումը Կիլիկիա տեղի է ունեցել Ասորիքի փոխարքա Մուավիայի հրամանով 648 թվին՝ նրանց կողմից Կիպրոսը կողոպտվելու հետ միաժամանակ: Այնուհետև արաբական զորքերը քաոորդ դար պարբերաբար ներխուժում էին Փոքր Ասիա, իսկ 673 թվին հասան մինչև իսկ Կոստանդնուպոլիս, որը հինգ տարի չարունակ անհաջող պաշարեցին: Փոքր Ասիան նվաճելու և Կոստանդնուպոլիսը գրավելու Մուավիայի (661–680) փորձերը հաջողություն չունեցան: Փոքր Ասիայի արևմտյան մարզերի բնակչությունն արաբներին աջակցություն ցույց չէր տալիս, ինչպես Ասորիքը նվաճելիս ցուցաբերում էին սեմիտները:

VII դարի երկրորդ կեսին, Դամասկոսի խալիֆայության հիմնադրումից հետո, Կիլիկիան դառնում է սահմանամերձ մարզ և բյուզանդական ու արաբական ռազմական ընդհարումների ասպարեզ: Հուստինիանոս II-ը 692 թվին փորձեց անցնել հակահարձակման՝ ծրագրելով վերանվաճել Ասորիքը, բայց բյուզանդական զորքերը պարտություն կրեցին:

Արաբների արշավանքները դեպի Բյուզանդիայի սահմանները վերսկսվեցին VII դարի վերջին՝ խալիֆայությունում երրորդ երկարատևակռվական պատերազմը ավարտվելուց հետո: Վալիդի օրոք (705–715) արաբները երկու ուղղությամբ ներխուժեցին Բյուզանդիա. հյուսիս-արևելքից՝ Գալաթիա, որտեղ հասան մինչև Դորիլեա, և հարավ-արևելքից՝ Կիլիկիա ու Կապադովկիա, որտեղ գրավեցին չատ քաղաքներ, որոնց թվում և Տարսոնը (712): VII դարի վերջի և VIII դարի սկզբի արշավանքների հետևանքով արաբներին անցավ նյանակալի մի տարածք՝ Անտիոքից ու Հալեպից մինչև Տավրոս, որոնց թվում և՝ ցածրավայրային ու նախալեռնային Կիլիկիան: Լեռնային Կիլիկիան Բյուզանդիայի համար զարձավ Փոքր Ասիայի ու Արևմտյան (բյուզանդական) Հայաստանի, և նույնիսկ բուն մայրաքաղաքի

[1] Ф. Успенский, *История Византийской империи*, т. I, СПб., 1913, с. 630.

[1] Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի, 1879, էջ 81:

պաշտպանական գծի կարևորագույն տեղամասը արաբական զորքերի ներխուժման դեմ, իսկ Տարսոնը արաբների համար դարձավ ռազմական բազա և Փոքր Ասիայի խորքը արշավելու ելման կետ:

717 թվականին արաբները հենվելով Ասորիքի ու Կիլիկիայի նահանգիստների վրա՝ ծովային ու ցամաքային ուղիներով երրորդ անգամ հասան Կոստանդնուպոլիս և շրջապատեցին ծովից ու ցամաքից: Շնորհիվ մայրաքաղաքի պարիսպների ամրության, «հունական կրակի» գործադրման, Լևոն III-ի հմուտ ղեկավարության և իրենց ռազմական բազաներից արաբների հեռացածության՝ արաբների վերջին արշավանքը Կոստանդնուպոլսի վրա նույնպես վերջացավ անհաջողությամբ: 739 թվին խոշոր պարտություն կրելով Ակրոինի մոտ (Անատոլիկոն բանակաթեմ)՝ արաբներն այլևս չէին փորձում կտրել-անցնել Փոքր Ասիան: Կիլիկիայի մի մասը մնաց Բյուզանդիային, իսկ ավելի մեծ մասը անցավ արաբներին: Տարսոնը դարձավ արաբական տիրապետության ոչ միայն հիմնական ռազմական հենարանն այդ երկրում և Ասորիքը բյուզանդացիների հարձակումից պաշտպանող կետը, այլև ռազմական բազան դեպի Փոքր Ասիա արաբների ներխուժման համար:

Բյուզանդացիները նույնպես մեծ նշանակություն էին տալիս Լևոնային Կիլիկիայի ամրություններին: Նրանք նորոգեցին Կիլիկիայի լեռնային ամրոցները և դրանցում զգալի թվով կայազորներ էին պահում: Փոքր Ասիան պաշտպանելու նպատակով բյուզանդական կառավարությունը սահմանամերձ մարզերում բնակեցրեց սլավոնների ու հայերի, ինչը մեծացրեց կայսրության տնտեսական միջոցներն ու ռազմական ուժերը Արևելքում:

Արաբների առաջխաղացումը հաջողվեց կանգնեցնել Լևոնային Կիլիկիայի սահմանին: Բյուզանդիայի փորձերը՝ օգտագործել Դամասկոսի խալիֆայության թուլացումը և նոր գրավել Ասորիքն (745) ու Կիպրոսը (746), հաջողություն չունեցան: Այնուամենայնիվ, VIII դարի կեսերին, Իսավրական դինաստիայի գարաշրջանում, արաբական ներխուժումների վտանգը թուլացավ, և բյուզանդացիները գրավեցին Մարաշն ու Մելիտինեն:

Աբբասյանները Դամասկոսից հեռանալով Բաղդադ՝ շատ էին հոգում Դաշտային Կիլիկիայի ամրապնդման ու պաշտպանության մասին: 778 թվին բյուզանդական ուժեղ մի բանակ ներխուժեց Ասորիք: Ահա թե ինչու, ինչպես վկայում է Իբն-Հաուկալը, Մահդիի ու Հարուն ալ Ռաշիդի օրոք Տարսոնը հիմնավորապես ամրապնդված էր և կայազորի միջոցով լավ պաշտպանված, սկզբում՝ 8000 զինվորներով:

Նշանավոր Բար էլ Ջիհադից՝ «Սրբազան պատերազմի դարպասից» (Տարսոնի վեց դարպասներից մեկը) սովորաբար ամեն տարի ռազմարշավախումբ էր դուրս գալիս քրիստոնյաների դեմ: Գլխավորապես Կիլիկիայի լեռնային կապաններով էր արաբական հեծելազորը դուրս նետվում դեպի Բյուզանդիայի սահմանները: Պաշտպանական ամրացված գիծը Տարսոնից գնում էր Ադանա, Մոպսուեստիա, Անարզարբա, Մարաշ ու Մելիտինե:

IX դարում Բաղդադի խալիֆայությունն արդեն անկարող էր նոր նվաճումներ կատարել: Նա ստիպված էր ճնշել Միջին Ասիայի, Անդրկովկասի և Իրանի ժողովուրդների ապստամբությունները, որոնք հաճախ միահյուսված էին ժողովրդական զանգվածների սոցիալական չարժումներին: Ապրելով ներքին ճգնաժամ՝ Բաղդադի խալիֆաթը սկսեց մեծ նշանակություն տալ պաշտպանական գծի պահպանմանը, որը ձգվում էր Սև ծովից մինչև Միջերկրականը, Պոնտական Տավրոսից մինչև Կիլիկյան Տավրոսը:

Թեոփիլոսի օրոք (829–842) Բյուզանդիան հարձակման անցավ արաբների դեմ: Պահը հաջող էր ընտրված: Հենց 829–830 թվականներին էր, որ Բաղդադի խալիֆայության զորքերը պարտություն էին կրում Բարեկից: Մամուն խալիֆը, չնայած թիկունքում ճնշված չէր հուրրամիտների այնքան վտանգավոր չարժումը, իր կյանքի վերջին երեք տարիները մեծ մասամբ անցկացրեց Կիլիկիայում, որը գլխավոր ռազմաբեմը դարձավ Բյուզանդիայի ու խալիֆայության միջև: 831 թ. Թեոփիլոսը Կիլիկյան դարպասից անսպասելի ներխուժեց Կիլիկիա ու գրավեց Տարսոնը՝ տանելով վիթխարի ռազմավար ու մեծաթիվ գերիներ: 832 թ. Մամունը ոչ միայն վերականգնեց դրությունը Կիլիկիայում, այլև ռազմական գործողությունները տեղափոխեց Կապադովկիա և գրավեց բյուզանդական Տիանու ամրոցը: Մամունը մեռավ՝ դեպի Բյուզանդիայի սահմանները խոշոր արշավանքի նախապատրաստվելիս, և թաղվեց Տարսոնում (833):

837 թվին Բյուզանդիան նոր խոշոր արշավանք ձեռնարկեց խալիֆաթի դեմ: Բյուզանդական զորքերը գրավեցին Մելիտինեն, Սամոսատը և իրենց ենթարկեցին Հարավային Հայաստանի չատ մարզեր: Բայց Բաբեկի ապստամբությունը ճնշվեց հենց այդ ժամանակ: Խալիֆաթի երկու բանակները, որ ուժեղացված էին թյուրք վարձկան զորքերով, Կիլիկիայի ու Հայաստանի միջով ներխուժեցին Բյուզանդիայի սահմանները: Բաղդադի խալիֆայության զորքերը 838 թվին գրավեցին Ամորիոսը և Բյուզանդիային ստիպեցին հաշտություն խնդրել:

IX դ. առաջին կեսին Բյուզանդիան չկարողացավ արաբների կողմից ճնշված Անդրկովկասի և Իրանի ժողովուրդների ազատագրական չարժումն օգտագործել, որովհետև նա ինքն էր կեղեքում Բալկանյան թերակղզու, Փոքր Ասիայի ու Հայաստանի ժողովուրդներին, ճնշում գյուղացիական ապստամբությունները, պավլիկյաններին, թուլացել էր պատկերամարտական չարժումից և, բացի այդ, ստիպված էր պաշտպանողական պատերազմ մղել Բուլղարիայի դեմ:

Այնուամենայնիվ, IX դարի կեսերին Բյուզանդիան ժամանակավորապես հաղթահարում է ներքին ճգնաժամը, իսկ Մակեդոնական դինաստիայի սկզբից (867) սկսվում է նրա ուժեղացումը, մինչդեռ Բաղդադի խալիֆայության ներքին ճգնաժամը խորանում է և սկսվում է արաբական պետության անկումը, ինչը և նախապատրաստում է Կիլիկիայի անցումը Բյուզանդիայի իշխանության ներքո X դարի կեսին:

IX դարի երկրորդ կեսին Կիլիկիայի որոշ չրջաններ ընկան Տուլունյանների իշխանության տակ, որոնք իշխում էին Եգիպտոսում և սոսկ անվանապես էին ճանաչում Բաղդադի խալիֆայությունը: Այսպիսով, արդեն IX դարի երրորդ քառորդի վերջում Դաչտային Կիլիկիան փաստորեն դուրս եկավ Բաղդադի խալիֆայության ենթակայությունից և դարձավ կովախնձոր Տուլունյանների՝ Եգիպտոսի էմիրների, ու Համդանյանների՝ Սիրիայի էմիրների միջև, իսկ երբեմն էլ այն զավթում էին զանազան մուսուլման փոխարքաներ: 883 թ. Ահմեդ Տուլունյանը անհաջողություն կրեց Տարսոնի պաշարման ժամանակ, որտեղ ամրացել էր նրա զորապետ Յազմանը:

Բաղդադի խալիֆաթի փլուզումը և Միջագետքի, Սիրիայի ու Եգիպտոսի էմիրների երկպառակտչական պայքարը տարածքի բաժանման համար, մանավանդ այդ երկրների առևտրական կենտրոններին տիրելու համար, Բյուզանդիային թույլ տվեցին անցնել հարձակման:

Վասիլ I-ի օրոք (867–886) բյուզանդական զորքերը չարժվեցին դեպի Եփրատի վերին հոսանքները: 877–878 թթ. բյուզանդացիները գրավեցին Կիլիկիան, բայց չկարողացան պահել: Բացի այդ, IX դարի 80-ական թվականներին արաբական նավատորմը հաճախ դուրս էր գալիս Կիլիկիայի նավահանգիստներից և հարվածներ հասցնում Բյուզանդիային ծովում ու ծովափնյա վայրերում՝ խախտելով հաղորդակցությունը Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի արևմտյան ափի միջև: Այնուամենայնիվ, Բյուզանդիայի ճընշումը խալիֆաթի վրա X դարի սկզբին վերսկսվեց, իսկ հետագայում անընդհատ ուժեղացավ էր և այդ դարի 50-ական թվականներին նշանավորվեց խոչոր հաջողություններով:

Մակեդոնական դինաստիայի դարաչրջանում, մանավանդ X դարում, հայոց զորքերը նշանակալի դեր էին խաղում բյուզանդական բանակում: Ռազմական տաղանդով առանձնապես աչքի էին ընկնում ծագումով հայ բյուզանդական զորավարներ Յոհան Կուրկասը (Հովհաննես Գուրգեն) և Յոհան Յիմիսխիոսը (Հովհաննես Զմշկիկ): 920–942 թթ. բյուզանդական բանակը Գուրգենի հրամանատարությամբ նշանակալի հաջողությունների հասավ Արևելքում: Նա մի քանի անգամ մտավ Հայաստան և արաբներից նետ խլեց մի նշանակալի տարածք, այդ թվում և՝ Մելիտինեն:

X դարի երկրորդ կեսին Բյուզանդիան Կիլիկիայում հանդիպեց արաբների դիմադրությանը, որը գլխավորում էր Եռանդուն մի Համդանյան՝ Հալեպի տեր Սեյֆ ադ Դաուլան: Սակայն արաբների այդ դիմադրությունը թուլանում էր նրանց միջև եղած երկպառակություններից:

Բաղդադի խալիֆայության թուլացման սկզբից մինչև Նիկեփոր Փոկասի խոչոր նվաճումները, այսինքն՝ մեկ դար չարունակ, երբ Բյուզանդիան փորձում էր ճեղքել արաբական ամրությունների համակարգը Կիլիկիայում, Կիլիկիային տիրելու համար պայքար էր ծավալվել մուսուլման էմիրների և Սիրիայի ու Միջագետքի զորապետների միջև, ինչը հնչտացրեց բյուզանդացիների կողմից այդ երկրի նվաճումը X դարի 60-ական թվականներին:

Արաբների դեմ մղվող պայքարում Բյուզանդիան նոր խոչոր հաջողություններ ձեռք բերեց X դարի 60–70-ական թվականներին: 963–965 թթ. Նիկեփոր Փոկասի զորքերը գրավեցին Անազարբան, Ադանան, Մամեստիան ու Տարսոնը: Այսպիսով, Սիրիան պաշտպանող Մելիտինե–Տարսոն պաշտպանական գիծը ճեղքվեց, ինչը նչված է և՛ հայ, և՛ հույն պատմիչների կողմից: Նվաճված Կիպրոսն ու Տարսոնը նորից դարձան բյուզանդական ռազմաստրատեգիական բազաներ և հնչտացրին Անտիոքի հաջող պաշարման խնդիրը: Հենվելով այս բազաների վրա՝ բյուզանդական զորքը երեքամյա պաշարումից հետո Անտիոքին ստիպեց հանձնվել (968):

Իտալիայում պայմանագիր կնքելով Գերմանիայի կայսր Օտտոն I-ի հետ՝ Հովհաննես Զմշկիկն ուշադրությունը սևեռեց դեպի Արևելք, որտեղ գործերի վիճակը բարդացել էր:

Բյուզանդական զորավար Մլեհը, ազգությամբ հայ, 973 թ. ճեղքեց արաբների ամրացված սահմանը ու ներխուժեց Միջագետք, բայց

Ամիդի մոտ բյուզանդական զորքը ծանր պարտություն կրեց, և չատ զորականներ Մլեհի հետ միասին գերի ընկան[1]: Մյուս կողմից, Եգիպտոսի Ֆաթիմյանների սուլթանությունը, գրավելով Դամասկոսը (970), սպառնում էր գավթել ամբողջ Սիրիան: Այս հանգամանքներն էլ հենց արագացրին Հովհաննես Ձմշկիկի արշավանքը (974) դեպի Արևելք:

Արշավանքի նկնելով Բաղդադի խալիֆայության դեմ՝ Ձմշկիկը իր բանակով նախ գրավեց Հայաստանի հարավարևմտյան գավառներից մեկը՝ Տարոնը, որն արդեն գտնվում էր Բյուզանդիայի քաղաքական ազդեցության ներքո: Հայ բնակչությունը թշնամաբար էր տրամադրված բյուզանդացիների նկատմամբ: Սասունցի քաջերը հարձակումներ էին գործում բյուզանդական զորքերի վրա, երբ նրանք անցնում էին Տարոնի գավառի տարածքով: Տարոնում, խոշոր բանակի գլուխ անցած, բյուզանդական կայսեր հայտնվելը Հայաստանին ոչ մի լավ բան չէր խոստանում, և անկախությունը դեռ պահպանած հայ իշխանների երկյուղն էր հարուցում իրենց տարածքների նկատմամբ: Նրանք համախմբվեցին Անիի թագավոր Աշոտ III Բագրատունու չուրջը: Հայ իշխանները համննայն դեպս ի մի բերեցին իրենց բոլոր ռազմական ուժերը և Աշոտ III-ի զորքի հետ եկան Մանազկերտ՝ Հովհաննես Ձմշկիկի մոտ: Դա հայ իշխանների ռազմական ուժերի մի յուրատեսակ ցույց էր: Հայոց զորքի թիվը Մատթեոս Ուռհայեցին հաշվում է 80 հազար[2]: Եթե նույնիսկ այս թիվը չափազանցված է, այնուամենայնիվ հայ իշխանների բանակը բավականին նշանակալից է եղել Բյուզանդիայի կողմից սպասվող հարձակումը կանխելու համար: Հնարավոր է, որ բյուզանդական ազրեսիայի անմիջական սպառնալիք Անիի Բագրատունիների թագավորության կամ Վասպուրականի Արծրունիների թագավորության նկատմամբ դեռևս չկար, քանի որ պատերազմ էր սպասվում արաբների հետ: Ձմշկիկը, հավանաբար, արաբների դեմ արշավանքի նկնելուց առաջ ուզում էր ամրապնդել Բյուզանդիայի դիրքերը Տարոնում, որը Միջագետքի հյուսիսում էր, ինչպես և ձգտում էր արաբների դեմ մղվելիք առաջիկա պատերազմում իրեն կողմնակից տեսնել հայ ազդեցիկ իշխաններին: Ինչպես հայտնում է Մատթեոս Ուռհայեցին, Հովհաննես Ձմշկիկը Աշոտ III-ից ստացավ 10-հազարանոց օգնական զորք[3]: Բարեկամության դաշինք կնքելով Աշոտ Բագրատունու հետ՝ Հովհաննես Ձմշկիկը 974 թ. աշնանը արշավանքի նկավ արաբների դեմ:

[1] Տե՛ս **Ստ. Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն տիեզերական, 1885, էջ 196:

[2] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, Վաղ., 1898, էջ 17:

[3] Նույն տեղում:

Բաղդադի խալիֆայության ներքին քայքայումն ու բաժանումը այդ ժամանակ հասել էին իրենց գագաթնակետին: Բյուզանդական բանակը, հայկական զորքերով ուժեղացած, Մելիտինեի մոտից անցավ Եփրատը ու գրավեց Ամիդը, Մայաֆարկինը (Մուֆարղին), Նիզիբինը (Մծբին): Մատթեոս Ուռհայեցու ասելով, Հովհաննես Ձմշկիկը արյամբ ողողեց արաբական երկիրը, հաղթականորեն անցավ Համարյա մինչև Բաղդադ ու կործանեց երեք հարյուր բերդ[1]: Այնուհետև բանակը ձմեռելու տարան Կիլիկիա, իսկ Ձմշկիկը վերադարձավ Կոստանդնուպոլիս[2]:

975 թ. սկզբին Հովհաննես Ձմշկիկը նոր բանակով հասավ Կիլիկիա և, դրան միացնելով առաջին արշավանքին մասնակցած զորքը, ռազմական գործողություններ սկսեց Ֆաթիմյանների խալիֆաթի դեմ, որոնց իշխանության տակ էր Սիրիան: Այս արշավանքի մասին արժեքավոր տեղեկություններ կան Մատթեոս Ուռհայեցու մոտ, որը պահպանել է Ձմշկիկի նամակը Աշոտ III-ին: Նամակում նկարագրվում են բյուզանդական զորքերի նվաճումները Սիրիայում ու Պաղեստինում: Ի միջի այլոց, այդ նամակում Ձմշկիկը գրում է. «Եւ վասն ամբարտաւանութեան և հպարտութեան Ամիր ալ մումնոյ իշխանին ափրիկեցւոց, զորս Մախըր Արապիկ կոչեն, որ և բազում զօրօք եկեալ ի վերայ մեր և առ ժամ մի ի վտանգի արկին զօրսն մեր, և ապա յաղթեցաք նոցա մեծաւ զօրութեամբ և օգնականութեամբն աստուծոյ, և ամօթալից դարձան որպէս զայլս թշնամիսն: ... Եւ փութապէս դարձաք ի դուրս և արարաք ձմերոց...»[3]:

Այս նամակից անկասկած երևում է, որ 975 թ. սկզբին բյուզանդական զորքերի ռազմական գործողությունները Սիրիայում այնքան էլ լավ չէին ընթանում, և նրանք ստիպված էին նահանջել դեպի Կիլիկիա, որը դեպի Սիրիա կատարած բոլոր արշավանքների ժամանակ նրանց համար ծառայում էր որպես բազա ու ձմեռանոց: Այնուհետև Հովհաննես Ձմշկիկը երկրորդ՝ առավել հաջող արշավանքի մասին գրում է. «... և զամենայն հնծկլազօրսն մեր հաւաքեցաք, յապրիլ ամսեանն ի մուտն դիմեալ խաղացաք յաշխարհն փիւնիկեցւոց և պաղեստինացւոց և քննայոյզ առնէաք զպիղծ ափրիկեցիսն, որք եկեալ էին ի գաւառն Շամայ»[4]: Նամակը արժեքավոր նյութ է պարունակում Սիրիայի, Փյունիկիայի ու Պաղեստինի քաղաքների, ընդհուպ

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 17:

[2] Նույն տեղում, էջ 18:

[3] Նույն տեղում, էջ 20, 21:

[4] Նույն տեղում, էջ 21–26:

մինչև Երուսաղեմի նվաճման մասին, հարուստ ռազմավարի գրավման, Դամասկոսն ու մյուս քաղաքները հարկի տակ դնելու մասին: Ջմշկիկի խոսքերով՝ «եւ եթէ չէր լեալ յաստգոյնս խորչակ և անջրդի ճանապարհ ի յայն տեղիան, ... թագաւորութիւնս մեր մինչև ի Բաբելոն երթեալ էր, որ և դինքն իսկ յերկիրն եգիպտացւոց հալածեցաք և իսպառ յաղթահարեալ չնորհօքն աստուծոյ, որ թագաւորեցոյցն զմա»[1]:

Ռազմական գործողությունների գլխավոր բազաներն ու կման կետերը Սկլերոսի ու Փոկասի ապստամբությունների ժամանակ, որոնք հետո տեղափոխվեցին Մարմարա ծովի ափը, հանդիսանում էին Հյուսիսային Միջագետքը, Սիրիան ու Կապադովկիան, ինչպես որ դա լուսաբանել է նաև Յահյա Անտիոքացին՝ այս դեպքերի ժամանակակիցը, իր «Տարեգրության մեջ»[2]:

Արևելքում բյուզանդական զորավարների՝ փոքրասիական խոշորագույն ավատատերերի այս ապստամբություններին գործուն մասնակցում էին հայ զորականները, որոնք զգալի մասն էին կազմում բյուզանդական բանակի, քանի որ ռազմական գործողությունները ծավալվում էին այն մարզերում, որտեղ մեծ թվով հայեր էին ապրում: Բացի այդ, նրանք դժգոհ էին Կոստանդնուպոլսի կառավարությունից:

Վարդ Սկլերոսի ապստամբությունը Վասիլ II-ի դեմ սկսվում է այն բանից, որ նա 976 թ. գրավում է Մելիտինեն և իրեն հռչակում կայսր: Նրա դեմ ուղարկված Անտիոքի կառավարիչ Վուրցան ու Կիլիկիայի փոխարքա Եվստաֆիոս Մալեինը պարտություն են կրում Պիռամոս գետի վերին հոսանքներում: Շուտով Սկլերոսին ենթարկվում է համարյա ամբողջ Արևելքը: Միայն 979 թ. Նիկեփոր Փոկասին հաջողվում է Պանկալիայի մոտ ջախջախել Սկլերոսին, որը փախչում է Բաղդադ[3]:

987 թ. Վարդ Սկլերոսը նորից է հայտնվում Մելիտինեում ու վերսկսում պայքարը Վասիլ II-ի դեմ: Հետո նա Վարդ Փոկասի հետ երկու անգամ հանդիպում է Կիլիկիայում՝ Պիռամոսի հովտում, կայսրությունն իրենց միջև բաժանելու մասին պայմանավորվելու համար: Երկրորդ տեսակցության ժամանակ Վարդ Փոկասը հրամայում է բանտարկել Սկլերոսին, իսկ ինքն իրեն հռչակում է կայսր և նվաճում

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 26:

[2] Տե՛ս Зап. Акад. наук, СПб., 1883, т. 41:

[3] Նույն տեղում, էջ 12–13:

Փոքր Ասիան մինչև Դորիլեա[1]: Վարդ Փոկասի բանակը դուրս է գալիս Մարմարա ծովի ափը և սպառնում Կոստանդնուպոլսին, բայց Վասիլ II-ը ռուսական զորքի օգնությամբ ճնշում է փոքրասիական ավատատերերի խռովությունը: Արիղոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (989) սպանվում է Փոկասը, իսկ կայսերական իշխանության երկրորդ հավակնորդը՝ Սկլերոսը, որն ազատվել էր բանտարկությունից և վերսկսել պայքարը Կոստանդնուպոլսի դեմ, չուտով ենթարկվում է կայսրին:

Փոքր Ասիայի ապստամբությունների ճնշումից և Բուլղարիայի դեմ հաջող ռազմական գործողություններ ծավալելուց հետո Բյուզանդիայի ներքին ու միջազգային դրությունը բարելավվեց: 991 թ. Վասիլ II-ը արշավանք գործեց դեպի Սիրիա և ետ նվաճեց Հալեպը, որը պավթել էին եգիպտական զորքերը: 995 թ. նա վերսկսեց հարավային Սիրիան նվաճելու Ջմշկիկի փորձը, բայց հաջողություն չունեցավ: Առավել հաջող էր 999 թ. արշավանքը, երբ բյուզանդական զորքերը գրավեցին Շեյզարը: Սակայն Վասիլ II-ը դադարեցրեց հետագա հարձակումը և, Յահյա Անտիոքացու խոսքերով ասած, «վեց ամիս իր զորքերով մնաց Մսիսի ու Տարսոնի մարզերում՝ մտադիր լինելով վերադառնալ իսլամի երկրները»[2]: Ասորի տարեգրի այս հաղորդումը վկայում է, որ Կիլիկիան բյուզանդական կայսրությանը ծառայել է որպես ռազմական հենակետ Սիրիայում հետագա նվաճումներ կատարելու համար. այդ երկիրը բյուզանդացիների համար ռազմական հենակետ է հանդիսացել նաև Բաղդադի խալիֆաթի, Հայաստանի ու Վրաստանի դեմ արշավանքներ կատարելիս:

Տարսոնում եղած ժամանակ Վասիլ II-ը լուր ստացավ Դավիթ կուրապաղատի՝ Տայքի (Տաո) տիրոջ մահվան մասին, որը Բյուզանդիայի հարկադրմամբ կտակ էր կազմել, թե իր մահից հետո այդ տիրույթը պետք է կայսրությանն անցնի, և կայսրն չտապեց Տայք, որպեսզի այդ մարզը կցեր Բյուզանդիային: Նրա հետևից գնաց Անտիոքի կառավարիչն իր զորքերով[3]: Տայքը միացվեց Բյուզանդիային (1001)[4]:

X դարի երկրորդ կեսին կործանելով ամրությունների արաբական համակարգը Եփրատի ու Տավրոսի մարզերում, նվաճելով Հյուսիսային Միջագետքը, Անտիոքն ու Կիլիկիան (964–975), վերացնելով Սկլե-

[1] Տե՛ս Зап. Акад. наук, 1883, с. 23:

[2] Նույն տեղում, էջ 41:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **Ստ. Տարօնեցւոյ Asողկան** Պատմ. տիեզեր., Ս. Պ., 1885, էջ 275:

բոսի ու Փոկասի խռովությունները (976–989), իրեն ենթարկելով Տարոնը (962) և Տայքը (1000), ջախջախելով Բուլղարական թագավորությունը (1018)՝ Բյուզանդիան օգտվեց Բաղդադի խալիֆայության լիակատար թուլացումից և Վրաստանի ու Հայաստանի նկատմամբ նվաճողական գործողություններ սկսեց, որոնց հետևանքով 1021–1065 թթ. ժամանակաշրջանում ոչնչացրեց Վասպուրականի (1022), Անիի (1045) և Կարսի (1065) հայկական թագավորությունների քաղաքական անկախությունը:

Բյուզանդիայի ու Բաղդադի խալիֆայության համարյա անընդմեջ պայքարը Հայաստանի, Փոքր Ասիայի, Կիլիկիայի, Սիրիայի ու Միջագետքի համար ձգվում էր ավելի քան երեք դար (VII–X): Երկու թշնամական կողմերի պատերազմները, արշավանքները, ներխուժումները և հարձակումները ուղեկցվում էին վերոհիշյալ երկրների տարածքների ամայացմամբ: Սովորաբար բյուզանդացիների և արաբների արշավանքները հակառակորդի տարածքի կողոպուտի, ամայացման և խաղաղ բնակչության գերեվարման նպատակ էին հետապնդում: Առաջավոր Ասիայի երկրների համար բյուզանդական կայսրերի և արաբական խալիֆների երկարատև պայքարի ժամանակ աստիճ տուժում էին խաղաղ բնակիչները և, գլխավորապես, հայերը, որոնք ապրում էին ոչ միայն Հայաստանում, այլև սահմանամերձ մարզերում, այսինքն՝ հենց այն երկրներում, որոնց համար թշնամական կողմերը համառ պայքար էին մղում: Քաղաքներն ու գյուղերը հրկիզվում էին, թալանվում, բնակիչները մասամբ կոտորվում էին կամ գերի բռնվում, մասամբ բռնի գաղթեցվում կամ իրենք էին լքում իրենց հայրենի վայրերը:

Այս դարաշրջանում հայ ժողովուրդը հաճախ էր ապստամբում արաբական տիրապետության դեմ, բայց պարտություն էր կրում, և ապստամբներից շատերը ստիպված էին լինում տեղափոխվել բյուզանդական տարածք: Ժողովրդական զանգվածները պայքարում էին Բյուզանդական կայսրության և Բաղդադի խալիֆայության դեմ, աշխարհիկ ու հոգևոր ավատատերերի՝ հայերի, հույների և արաբների դեմ: Ազատագրական կամ գյուղացիական ապստամբությունները ճնշելիս բյուզանդացիները Հայաստանից բռնագաղթեցնում էին տասնյակ հազարավոր հայերի: Հատկապես հայերի՝ պավլիկյանների աղանդի հետևորդների զանգվածային գաղթեցումը Փոքր Ասիա ու Բալկանյան թերակղզի, որտեղ նրանք նպաստեցին բոգոմիլների շարժմանը:

VIII–XII դարերի հայ, արաբ, հույն և ասորի ժամանակագիրները բավարար չափով նյութ են տալիս դատելու Հայաստանից դեպի Փոքր Ասիա հայերի արտագաղթի ու բռնագաղթի մասին, մանավանդ դեպի Կապադովկիա (VII–IX), իսկ ապա նաև՝ Միջագետք, Կիլիկիա ու Սիրիա՝ Բյուզանդիայի կողմից այդ երկրների նվաճմանը զուգընթաց:

Երբ Բյուզանդիան, օգտվելով Դամասկոսի խալիֆայությունում տեղի ունեցող երկպառակտչական պատերազմներից, 688 թ. գրավեց Հայաստանը, բյուզանդական զորավար Լևոնը ավերեց 25 չրջաններ և 8000 ընտանիք Հայաստանից գաղթեցրեց Փոքր Ասիա[1]:

747 թ. հայերն ապստամբեցին արաբական տիրապետության դեմ: Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց: Շուտով Կոստանդին Կոպրոնիմոսը ներխուժեց Հայաստան: Հայ չատ իշխաններ անցան նրա կողմը և նրա անհաջողությունից հետո գնացին նրա նահանջող բանակի հետևից՝ վախենալով արաբների վրեժխնդրությունից: 751 թ., երբ Կոստանդինը գրավեց Մելիտինեն ու Եփրատամերձ մի չարք այլ քաղաքներ, հետևելիս հայերին գաղթեցրեց Փոքր Ասիա: Սա վկայում է, որ VIII դարում հայերն այդտեղ բնակչության նչանակալի խավն էին կազմում: 752 թ. բյուզանդական զորքերը գրավեցին ու կործանեցին Թեոդոպոլիսը (Կարին, այժմ՝ Էրզրում): Այս մարզի հայերից չատերը կայսրին խնդրեցին թույլ տալ գաղթելու Բյուզանդիա, որովհետև նրանք վախենում էին բյուզանդական զորքի նահանջից հետո արաբների հնարավոր բռնություններից:

Առանձնապես ամայացուցիչ էին բյուզանդական զորքերի արշավանքները IX դարի 30-ական թվականներին, որոնք ղուգակցվում էին Հայաստանի ու Միջագետքի չատ չրջանների ու քաղաքների կողոպուտներով և խաղաղ բնակչության գերեվարությամբ:

Հայաստանից դեպի Սիրիա կատարված գաղթի փաստեր կան VIII դարի առաջին քառորդում և ավելի վաղ: Ասորվոց միտրոպոլիտ Մար Դիոնիսիոսը, որն ապրել է XII դարի երկրորդ կեսին, ասում է. «... անցել է 440 տարի այն ժամանակվանից (Մար Աֆանասիոս III պատրիարքի օրերից), ինչ հայերը բնակություն են հաստատել Ասորիքում և տիրում են մեր հողերին, գյուղերին ու վանքերին: Այն ժամանակվանից, ինչ պարսիկները ոչնչացրին նրանց թագավորությունը, հայերն սկսեցին աստիճանաբար տեղափոխվել Ասորիք: Երբ Աֆանասիոս պատրիարքը տեսավ, որ Հայաստանից Ասորիք եկող հայերը քահանաներ ու եպիսկոպոսներ չունենալու պատճառով միանում են

[1] Տե՛ս **Ստ. Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն տիեզերական, էջ 132:

քաղկեդոնականներին կամ հուլիանոսականներին, գրեց Հովհաննես կաթողիկոսին, որ նա եպիսկոպոս ուղարկի հայերի համար: Մեր պատրիարքը հայ-ասորական սահմանի վրա մի վանք տվեց կաթողիկոսին, որտեղ հայ ու ասորի աշակերտները սովորում էին երկու լեզուներով»[1]:

Վերևում բերված տողերից երևում է, որ հայերի գաղթը Ասորիք (ինչպես և այլ անդրևփրատյան երկրներ) սկսվել է V դարում և ուժեղացել է արաբական տիրապետության դարաշրջանում, Հովհան Օձնեցու կաթողիկոսության ժամանակ, որը Դամասկոսում հայ ազնվականության ու հոգևորականության համար որոշ արտոնություններ էր ստացել, ինչպես և կապ հաստատել ասորի հոգևորականության հետ: Հայկական գյուղերը Օրոնտես գետի հովտում, Լաոդիկեի և Անտիոքի շրջակայքում, Կիլիկիայի սահմանի վրա, հավանաբար, սկսել են առաջանալ X դարից[2]:

VIII դարում հայ իշխանները Մեծ Հայքի այն շրջաններից, որոնք պատկանում էին Բյուզանդիային, հալածվելով բյուզանդական կառավարությունից Քաղկեդոնի ժողովի որոշումը չընդունելու համար, գաղթում էին Բաղդադի խալիֆայության տարածքը: Նրանք իրենց ենթակա մարդկանցով բնակություն էին հաստատում Միջագետքում՝ բյուզանդական սահմանի մոտ: IX դարում զաժան հալածանքի ենթարկվելով արաբների մոտ էին փախչում ու սահմանամերձ մարզերում բնակություն հաստատում հայ պավլիկյանները: Հայերը արաբական տարածքի այն մարզերում էին բնակվում, որոնք X դարում գրավվեցին Բյուզանդիայի կողմից:

Անհրաժեշտ է ընդգծել, որ երկու դար՝ VII-ի վերջից մինչև XI-ի վերջը, Բյուզանդիան բավարար չափով ուժեր չուներ Հայաստանը նվաճելու համար, և նրա զորքերի ներխուժումները Բաղդադի խալիֆայությանը ենթակա այդ երկիրը կրում էին ավերիչ արշավանքների բնույթ: Այս արշավանքների ժամանակ Հայաստանի ամբողջ շրջաններ կողոպուտի էին ենթարկվում, իսկ բնակիչները հաճախ բռնությամբ տեղափոխվում էին Բյուզանդիա: Այս ճանապարհով Բյուզանդական կայսրությունը ձգտում էր թուլացնել արաբներին և վրեժխնդիր լինել Փոքր Ասիայի սահմանները նրանց ներխուժման համար: Բյուզանդիայի ու Բաղդադի խալիֆայության միջև այդ կերպ մղվող պատերազմի պատճառով ռազմական բախումներից ամենից շատ տուժում էին այն հայերը, որոնք գրաղեցնում էին երկու պետու-

[1] **Ա. Ալպոյաճյան,** Հայ գաղթավայրերի պատմություն, էջ 362:

[2] Նույն տեղում:

թյունների սահմանամերձ մարզերը: Եվ հատկապես հայերն էին, որ երբեմն կամավոր, բայց մեծ մասամբ բռնությամբ բյուզանդացիների կողմից գաղթեցվում էին տեղից տեղ՝ համարյա ամբողջ Բյուզանդական կայսրության սահմաններում: Սակայն հայերի տեղաշարժը կատարվում էր գլխավորապես Հայաստանից դեպի Փոքր Ասիա, Միջագետք ու Սիրիա, իսկ X դարում՝ արաբների կողմից Դաշտային Կիլիկիան ու Հյուսիսային Սիրիան գրավելուց հետո՝ նաև դեպի այդ երկրներ:

IX դարում արդեն նշանակալիորեն մեծացել էր հայ բնակչության թիվը Բյուզանդիայի սահմանամերձ շրջաններում: Հայ շատ տոհմեր կային Լեռնային Կիլիկիայից մինչև Մելիտինն ձգվող պաշտպանական շերտում: Այդ ժամանակաշրջանում է՛լ ավելի մեծ դեր սկսեցին խաղալ հայ զորապետները բյուզանդական բանակում: Նրանցից մեկը, Մլեհ անունով, IX դարի վերջում իր նախաձեռնությամբ, հենվելով հայ բնակչության վրա, գրավեց Լիկանդոս քաղաքը և ամրացրեց պարիսպներով ու աշտարակներով: Լիկանդոսը ռազմավարական նշանակություն ուներ: Սա դեպի Սամոսատ, Մելիտինե, Կիլիկիա տանող ճանապարհների սկզբնակետն էր հանդիսանում: Մլեհը հաջողությամբ պատերազմում էր արաբների դեմ և ընդլայնեց նվաճած մարզը, որը նշանակալի չափով բնակեցված էր հայերով: Այդ մարզը վերակազմավորվեց բանակաթեմի: Մլեհը դարձավ դրա ստրատեգոսը և Կոստանդին VII-ից ստացավ մինիատրի[1] կոչում:

Այսպիսով, դեռևս VII դարի վերջից մինչև X դարի կեսը բյուզանդական կառավարությունը Փոքր Ասիայի արաբների կողմից ամայացված պրովինցիաներում, Կապադովկիայի, Սիրիայի ու Կիլիկիայի սահմանագծերի տարածքի նվաճմանը զուգընթաց, բնակեցնում էր շատ հայերի, որոնք զորակոչիկ էին տալիս բյուզանդական բանակին:

X դարում, բյուզանդական զորքերի հարձակողական գործողությունների ժամանակ, Դաշտային Կիլիկիայի և Սիրիայի ու Միջագետքի մի քանի շրջանների արաբ բնակչությունը սաստիկ նոսրացավ հատկապես այն պատճառով, որ արաբները կամ փախչում էին բյուզանդացիների ներխուժումների ահից, կամ այս ու այն մարզն ու քաղաքը գրավելուց հետո վերջիններիս կողմից էին գաղթեցվում: Արաբների լքած քաղաքներն ու գյուղերը բնակեցնում էին հույները, հայերը և մասամբ էլ ասորիները:

[1] Տե՛ս **Ш. Диль,** *Основные проблемы виз. истории, М., 1947, с. 99:*

Յակուտի հաղորդման համաձայն Նիկեփոր Փոկասի կողմից Տարսոնը գրավվելուց հետո մուսուլմանների մի մասը, որպեսզի մնար քաղաքում, ստիպված է եղել ծանր հարկ վճարել կամ քրիստոնեություն ընդունել: Իսկ մուսուլմանների մեծ մասը հեռացել է Տարսոնից ու բնակություն հաստատել մուսուլմանական երկրներում: Նրանց ունեցվածքն ու տները հույներին են բաժին ընկել[1]: Նման երևույթներ, հավանաբար, պատահում էին նաև Կիլիկիայի այլ քաղաքներում: Այսպիսով, եթե արաբների կողմից Կիլիկիան նվաճվելուց հետո հույն բնակչությունն այս երկրում նշանակալիորեն նոսրացել էր, ապա բյուզանդացիների կողմից վերագրավելուց հետո այն կրկին մեծացավ, միաժամանակ ուժգին աճեց հայ բնակչության թիվը Տարսոնում և ընդհանրապես Կիլիկյան հարթավայրի բոլոր քաղաքներում ու գյուղերում:

Հայ բնակչությունը չատացավ ոչ միայն Կիլիկիայում: Հովհաննես Զմշկիկը հայերին բնակեցնում էր Կապադովկիայում, Հյուսիսային Միջագետքում և Սիրիայում: Հայ բնակչությունն Անտիոքում այնքան մեծացավ, որ 976 թ. արդեն փորձ արեց խռովություն բարձրացնել արաբների դեմ, որոնք նորից էին ժամանակավորապես գավթել այդ քաղաքը[2]: Հայերի թիվը Սիրիայում և Կիլիկիայում չարունակում էր մեծանալ նաև Վասիլ II -ի թագավորության օրոք: Գրավելով Շեյզարը՝ նա այդ քաղաքում բնակեցրեց հայերին[3]:

Սահմանամերձ պրովինցիաները բնակեցնելով Հայաստանից քշված կամ կայսրության այլ մարզերից բերված հայերով՝ բյուզանդական կառավարությունը ոչ միայն ձգտում էր թիչնամական մուսուլման բնակչության փոխարեն ստեղծել ավելի բարեհույս էթնիկական խավ, այլև հետապնդում էր ռազմական նպատակներ: Հայ գաղթականները հողամասեր էին ստանում Կիլիկիայում ու Կապադովկիայում և պարտավոր էին զինվորական ծառայություն կատարել: Սահմանամերձ մարզերում նման նորաբնակ հայերի թիվը, անտարակույս, զգալի է եղել: Սա հաստատվում է նրանով, որ Նիկեփոր Փոկասը հատուկ օրենք է հրապարակել հայ ստրատիոտների մասին[4]:

Կիլիկիայում և դրան սահմանակից երկրներում հայ տարրի ուժեղացումը բավականին նշանակալից երևույթ դարձավ X դարում, ինչը

[1] Տե՛ս **Якут,** Աչխարհագրական բառարան (ձեռագիր), Ա. Նալբանդյանի թարգմանությամբ, էջ 5:

[2] Տե՛ս **Яхъя Антиохийский,** Зап. Академии наук, 1833, т. 44, с. 5:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 40:

[4] Տե՛ս Corp. Soript. byzant., Leo Diaconus, B., 1829, p. 318:

երևում է Միքայել Ասորու հետևյալ տողերից. «Այն դարաշրջանում, երբ հույները արաբներից գրավեցին Կապադովկիայի, Հայաստանի և Սիրիայի քաղաքները, նրանք Մեծ Հայքից բազմաթիվ հայերի դուրս հանեցին: Վերջիններս հաստատվեցին վերոհիշյալ վայրերում ու բազմացան»[1]: Այս նույն երևույթը նչում է XI դարի հայ պատմիչ Ստեփանոս Ասողիկը. «Իսկ յաւուրս Տեառն Խաչկայ Հայրապետի Հայոց (Հայոց կաթողիկոս՝ 973–992 թթ. – Գ. Մ.) սփռեալ տարածեցաւ ազգս Հայոց գկողմամբքն արևմտից, մինչև ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորւոց և ի Տարսոն Կիլիկեցւոց և ի Սուրընայ և յամենայն գաւառսն յայնոսիկ»[2]:

Այսպիսով, XI դարի սկզբներին Կիլիկիայում, Կապադովկիայում և Բյուզանդիայի՝ Եփրատից արևմուտք ընկած այլ մարզերում հայ բնակչությունը նչանակալիորեն մեծացավ: Հայերի գաղթը Փոքր Ասիա ավելի լայն թափ ստացավ՝ կապված հայ ավատական տիրույթների, Արծրունիների ու Բագրատունիների թագավորությունների ոչնչացման քաղաքականության հետ, որն սկսեց կիրառել Վասիլ II Բուլղարասպանը XI դարի սկզբին: XI դարի կեսին էլ հայերի ներգաղթն այդ երկրներ, մանավանդ Կիլիկիա, ուժեղացավ՝ կապված Հայաստանում սելջուկների ավերիչ արչավանքների հետ:

Այս ամենը նախապատմությունն է Կիլիկիայի հայկական պետության կազմավորման:

[1] Chronique de Michel le Syrien, Ed. par Chabot, Paris, 1905, t. III, p. 198.

[2] **Ստ. Տարոնեցւոյ Ասողկան** Պատմութիւն տիեզերական, էջ 185:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅՈՒՄ, ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ, ՍԻՐԻԱՅՈՒՄ ՈՒ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Բյուզանդիայի կողմից Վասպուրականի և Անիի թագավորությունների տարածքների զավթումը: Բյուզանդական կառավարության գաղթեցման քաղաքականությունը Հայաստանում XI դարում: Հայերի արտագաղթը դեպի Կապադովկիա: Սելջուկների ներխուժումը Հայաստան և հայերի արտագաղթի ուժեղացումը դեպի բյուզանդական կայսրության փոքրասիական ու անդրեփրատյան պրովինցիաները: Արծրունիների ու Բագրատունիների տիրույթները Կապադովկիայում: Հայ ավատատերերի դերը Միջագետքի, Սիրիայի ու Կիլիկիայի կառավարման և պաշտպանության գործում՝ սելջուկների ներխուժման ժամանակ: Փիլարտոս Վարաժնունին փորձ է անում ստեղծել ընդարձակ մի տերություն Հայաստանի սահմաններից մինչև Միջերկրական ծով: Հայկական իշխանապետությունները Միջագետքում և Սիրիայում XI դարի վերջից մինչև XII դարի սկիզբը և դրանց վերացումը խաչակիրների կողմից:

Նախորնթաց գլխում պարզվեց, որ հնագույն ժամանակներից մինչև XI դարի սկիզբը հայերի թիվը մեծանում էր Մեծ Հայքից արևմուտք ընկած մարզերում՝ Փոքր Հայքում, Կապադովկիայում, հյուսիսարևմտյան Միջագետքում, Սիրիայում ու Կիլիկիայում: Հայերի նոր հոսքը դեպի այդ մարզերը XI դարում պայմանավորված էր Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությամբ հարավարևելյան ու հյուսիսարևելյան Հայաստանի իշխանությունների նկատմամբ, կայսրության կողմից Արծրունիների ու Բագրատունիների տարածքների զավթմամբ և այդտեղից ավատատերերի մի մասին իրենց հպատակների հետ դեպի Կապադովկիա գաղթեցմամբ: Այս մակընթացությունն ուժեղացավ սելջուկների կողմից Հայաստան ու Փոքր

Ասիա ներխուժմամբ, երբ հայ զանգվածներն այդտեղից նետվում էին դեպի Սիրիա ու մանավանդ դեպի Կիլիկիա, ինչը և նպաստում էր Կիլիկիայի հայկական պետության ծագմանը:

X դարի կեսերին Հայաստանի հարավ-արևմտյան Տարոն երկրամասը՝ Մուշ կենտրոնով, վերջնականապես ազատագրվեց Բաղդադի խալիֆաթի լծից: Տարոնը կառավարում էր Բագրատունիների ճյուղերից մեկը: Բայց հազիվ էր Տարոնի իշխանապետությունն ազատվել արաբների քաղաքական ազդեցությունից, երբ Բյուզանդիան սկսեց խառնվել նրա ներքին գործերին: Կիլիկիան նվաճելուց հետո, դեռ մինչև Անտիոքի անկումը, Նիկոփոր Փոկասը 967 թ. իր իշխանությանը ենթարկեց Տարոնը, իսկ հաջորդ տարին բյուզանդացիները գրավեցին Մանազկերտը[1]:

Հովհաննես Ձմշկիկի հաջողությունները 974–975 թվերին Բաղդադի խալիֆայության ու Ֆաթիմյանների դեմ մղվող պատերազմներում, նրա նվաճումները Միջագետքում ու Սիրիայում, է՛լ ավելի ամրացրին Բյուզանդիայի դիրքերը Արևելքում ու վատթարացրին Արծրունիների և Շիրակի Բագրատունիների հայկական անկախ իշխանապետությունների վիճակը:

Սպառնալիք էր ստեղծվում նաև վրաց Բագրատունիների համար: Եթե Դավիթ կուրապաղատը՝ Տայոյի (Տայքի) տերը, Վարդ Սկլերոսի ապստամբության ժամանակ վճռական օգնություն ցույց տալով Վասիլ II-ին՝ ընդլայնել էր իր տիրույթի սահմանները, ապա Վարդ Փոկասին աջակցելու անհաջող փորձից հետո, Բյուզանդիայի ճնշման տակ, նա կտակ կազմեց, որի համաձայն նրա տիրույթը իր մահից հետո պետք է անցներ կայսրությանը:

Եթե Սկլերոսին ջախջախելու համար Դավիթ կուրապաղատի կողմից 12-հազարանոց զորաջոկատ ուղարկելը չմտածված քայլ էր, որի հետևանքով Վասիլ II-ի իշխանությունն ամրապնդվեց, և Բյուզանդիան չուտով վերսկսեց իր նվաճումները Արևելքում, ապա կտակ կազմելը կարելի է բացատրել վրաց և հայ Բագրատունիների թուլությամբ, ներքին ավատատիրական երկպառակություններով ինչպես հայերի, այնպես էլ վրաց ավատատերերի միջև, որոնցից յուրաքանչյուրը առանձին պայքարում էր Բագրատունիների կենտրոնացման քաղաքականության դեմ:

Վասիլ II-ը Կիլիկիայում էր և պատրաստվում էր Ֆաթիմյանների դեմ նոր արշավանքի, երբ ստացավ Դավիթ կուրապաղատի մահվան լուրը (1000): Նա չտապեց Հայաստան ու Վրաստան՝ հրաժարվելով

[1] **Ստ. Տարոնեցւոյ Ասողկան** Պատմութիւն տիեզերական, էջ 183:

արարների դեմ կռվելուց: Ասողիկի պատմությունից երևում է, որ բյուզանդական կայսրը զավթումների չատ ավելի լայն ծրագիր ուներ, քան Տայոյի գրավումն էր: Նա հայ ու վրաց Բագրատունիներից պահանջում էր ճանաչել կայսրության գերիշխանությունը: Բյուզանդիայի կողմից Դավթի տերության գրավման մասին Ասողիկը գրում է. «Իսկ թագաւորն Վասիլ չու արարեալ գնաց ի քաղաքն Ուխթեաց [Տայք], և զամենայն բերդս և զամրոցս Տայոց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով, զհաւատարիմս կարգեալ ի նոսա, և զմնացեալ ազատսն Տայոց առեալ տարաւ ընդ ինքեան՝ բնակեցուցանել յաշխարհին Յունաց»[1]:

Վասիլ II-ի կողմից Տայոյի բռնագրավումը պատճառ եղավ Բյուզանդիայի ու Վրաստանի միջև հաջորդ պատերազմների և խիստ վատթարացրեց Վասպուրականի, Անիի ու Կարսի հայկական թագավորությունների դիրքերը:

Բուլղարական թագավորության ջախջախումից (1018) հետո Բյուզանդիան առավել զավթողական քաղաքականություն է վարում Արևելքում: Բուլղարական պատերազմի ժամանակ վրաց թագավոր Գեորգի I-ը հաստատվեց Տայոյում, որի ռազմավարական նշանակությունը վիթխարի էր: 1021 թ. բյուզանդական բանակը Վասիլ II-ի գլխավորությամբ հայտնվեց Վրաստանի, Անիի ու Վասպուրականի թագավորությունների սահմանների մոտ[2]: Արաբական խալիֆայության դեմ պայքարը հետին պլան մղվեց: Բյուզանդական ագրեսիայի օրյեկտներ դարձան Վրաստանը և հայկական վերջին անկախ իշխանապետությունները: Վրաց զորքերը պարտություն կրեցին բյուզանդացիներից, և Վասիլ II-ը Գեորգի II-ին ստիպեց հրաժարվել Տայոյից: Ինչպես երևում է, Բյուզանդիան որոշել էր Տայոյի զավթմամբ չսահմանափակվել, այլև տիրել Անիի, Վասպուրականի ու Կարսի թագավորությունների տարածքներին, որպեսզի ընդհուպ մոտենար Բաղդադի խալիֆաթի սահմանին և գրավեր Հարավային ու Արևելյան Հայաստանի բոլոր ամրոցները, ինչպես և տարանցիկ այն ճանապարհը, որը Հայաստանի քաղաքների՝ Դվինի, Անիի, Արծնի միջով տանում էր Տրապիզոն:

1022 թվականին Վասիլ II-ի կողմից 1021 թ. Վրաստան կատարված արշավանքից հետո Վասպուրականի թագավոր Սենեքերիմը իր տերությունը հանձնեց Բյուզանդիային և հպատակների մի մասի հետ գաղթեց Կապադովկիա: Այս մասին Յահյա Անտիոքացին գրում է. «եվ ձմեռ եղավ, և Վասիլ թագավորը գնաց Տրապիզոն, որպեսզի զորքերը ձմեռն այդտեղ անցկացնեին և որպեսզի հետո վերադառնային արշավանքի: Եվ այդ ժամանակ Սաննաքարիրը (Սենեքերիմ — **Գ. Մ.**), Ասֆարագանի (Վասպուրական — **Գ. Մ.**) թագավորը, իր բոլոր ամրոցները, հողերը և ամբողջ Ասֆարագանի երկիրը զիջեց թագավոր Վասիլին»[1]: Համարյա բոլոր հետազոտողները այս փաստի միակ պատճառը համարում են Հյուսիսային Իրանի տիրակալների թյուրք վարձկանների հարձակումը Վասպուրականի վրա XI դարի սկզբին: Սակայն ուշադրության արժանի է Վ. Կ. Խաչատրյանի եզրակացությունը («Հայ-բյուզանդական քաղաքական առնչությունները X դ. կեսից մինչև XI դարի վերջը» դիսերտացիայում) այն մասին, որ Վասպուրականի թագավոր Սենեքերիմը Վասպուրականը փոխանակել է Սեբաստիայի հետ գլխավորապես այն բանի պատճառով, որ Վասիլ II-ի բյուզանդական զորքերը Վրաստանի դեմ մղած պատերազմում հրի ու սրի էին մատնել ամբողջ չրջաններ և կատարել խաղաղ բնակչության զանգվածային ոչնչացում:

Անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանի ու Վրաստանի դեմ բյուզանդիայի մի շարք հետևողական նվաճողական գործողությունները՝ Տարոնի (967), Տայքի (1001) գավթումը, Վասիլ II-ի արշավանքը վրաց և հայ Բագրատունիների դեմ 1021 թվին, բյուզանդական զորքերի գաղանությունները խաղաղ բնակչության նկատմամբ վրաց թագավոր Գեորգի I-ի դեմ պատերազմելիս և բյուզանդական ջոկատների հայտնվելը Վասպուրականի սահմանի մոտ, հասկանալու համար Սենեքերիմի կողմից Վասպուրականը լքելու պատճառը, որը, ակնհայտաբար, ավելի չատ ահաբեկված է եղել բյուզանդական հարձակումից, քան թյուրքական ցեղերի ասպատակություններից: Պետք է նշել, որ Վասպուրականի թագավորության զորքերին ընդհանուր առմամբ հաջողվում էր ետ մղել իրանից եկող քոչվոր ցեղերի հարձակումները[2]:

XI դարի առաջին կեսին, Վասպուրականի ու Շիրակի նվաճման ժամանակ, բյուզանդիան կիրառում էր հայ իշխաններին իրենց ռազմական ուժերի և մասամբ ևթակա բնակչության հետ դեպի Կապադովկիա գաղթեցնելու քաղաքականություն, որպեսզի թուլացներ հայերի դիմադրողականությունը քաղաքական անկախության համար մղվող նրանց պայքարում, որպեսզի հեչտացներ բյուզանդական վարչական համակարգի հաստատման խնդիրը Հայաստանի հարավային և արևելյան մարզերում:

[1] **Ստ. Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն տիեզերական, էջ 278:

[2] Տե՛ս Պատմութիւն **Արիստակիսի Լաստիվերտցւոյ,** 1912, էջ 26:

[1] Записки Академии наук, т. 44, СПб., 1883, с. 62.

[2] Տե՛ս **Թովմա Արծրունւոյ** Պատմ. տանն Արծրունեաց, Պ., 1887, էջ 302, 306:

Բյուզանդիայի գաղթեցման քաղաքականության մասին Թովմա Արծրունու պատմության մեջ ասվում է, որ հույները «տային պարգևս. և կարգեցին ի դուռն արքունի և տային փոխանակ քաղաքացն քաղաքս մեծամեծս և փոխանակ բերդիցն բերդս անմատոյցս և գաւառս և գեօղս և ագարակս և սուրբ մենաստանս...»[1]: Վասպուրականից Կապադովկիա հայերի զանգվածային գաղթի մասին այդ նույն սկզբնաղբյուրում ասված է. «և փոխեցին զհայրենի տունն իւրեանց հայկազունքն Արծրունիքն: Սննեքերիմ ի թուին հայկազեան տումարին ՆՀ (470=1021), և դեմ եղեալ գնացին յաչխարհն յունաց ԺԴՌ (14000) արամբք, թող զկանայս և զմանկտիս. և արկան ընդ լծով ծառայութեանն հռոմոց...»[2]: Պատմաբան Մ. Ջամչյանը Վասպուրականից Կապադովկիա գաղթած հայերի թիվը հաշվում է 400 հազար, որը կազմում էր Վասպուրականի բնակչության մեկ երրորդը[3]: Սամուել Անեցու վկայությամբ Վասպուրականում հաշվվում էր 4000 գյուղ, 72 բերդ, 8 քաղաք[4]: Մյուս պատմիչներն էլ մոտավորապես նույնպիսի թվեր են նշում[5]: Կարելի է ենթադրել, թե այդ մարզի բնակչության թիվը հասնում էր մեկ միլիոնի կամ մի քիչ ավելին էր: Բայց գաղթեցվել է 14 հազար ընտանիք, և եթե ուշադրության առնենք այն հանգամանքը, որ ընտանիքներն այն ժամանակ խոշոր են եղել, ապա գաղթականների թիվը կարելի է ենթադրաբար համարել 90 հազար:

Հայ իշխանների ու տասնյակ հազարավոր բնակչության՝ Վասպուրականից Կապադովկիա արտագաղթի և Բյուզանդիայի կողմից հարավային Հայաստանի ծայրակուն նահանգներից մեկի՝ Վասպուրականի գավթման փաստը խորին ցավով են նշում բոլոր հայ պատմիչները: «Ելեալ Սեննեքերիմ ամենայն ընտանեօք իւրովք և ոամկօք նկն ի Սեբաստիա և անտերացան աշխարհն Հայոց ի թագաւորաց և յիշխանաց»[6],— տրտնջում է Մատթեոս Ուռհայեցին:

Միքայել Ասորին Մեծ Հայքից դեպի Կապադովկիա հայերի այդ արտագաղթի մասին գրում է. «Վասիլ կայսրը հայերից խլեց Սեննեքերիր (Սեննեքերիմ) թագավորի երկիրը և փոխարենը տվեց Կապադովկիայի Սեբաստիան: Նրանք բազմացան այդ տեղերում և տարածվեցին Կապադովկիայով մեկ, Կիլիկիայում ու Սիրիայում»[1]: Իսկ մի այլ տեղ այս նույն հեղինակը ասում է, որ հայերը մեծ թվով բնակություն հաստատեցին Սիրիայում ու Կիլիկիայում X դարի վերջին՝ այս մարզերը արաբներից ետ գրավելուց հետո: Այսպիսով, 1022 թ. Վասպուրականից դեպի Կապադովկիա հայերի գաղթն այնպիսի խոշոր երևույթ է եղել, որ Միքայել Ասորին դա գնահատում է որպես հայ բնակչության թվի նոր ավելացում ոչ միայն Կապադովկիայում, այլև Սիրիայում ու Կիլիկիայում:

Աբխազա-վրացական թագավոր Գեորգի I-ի պարտությունը Տայքի համար մղած պայքարում և Բյուզանդիայի կողմից Վասպուրականի գավթումը վատթարացրին հարևան Անիի թագավորության դրությունը:

1022 թ. Տրապիզոն՝ Վասիլ II կայսեր մոտ է ուղարկվել Պետրոս կաթողիկոսը: Թագավորի անունից և ազնվականության մի մասի չահերից ելնելով՝ նա դաշինք կնքեց, ըստ որի Անիի թագավորությունը անդավակ Հովհաննես-Սմբատի մահվանից հետո անցնում էր Բյուզանդիային:

Անիի թագավորության անկումից ղեռ չատ առաջ նրա սահմաններում, ինչպես և Հայաստանի այլ մարզերում, խոշոր հողատիրության հետագա աճի հետևանքով տնտեսապես ու քաղաքականապես ուժեղացել էր ավատատիրական վերնախավը և բարձր հոգևորականությունը: Շատ ու չատ հողեր՝ դրանց վրա ապրող գյուղացիներով հանդերձ, վանքերի իշխանության տակ էին: Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ «վասն դի յորժամ էր Տեր-Պետրոս յաթոռ հայրապետութեան և ի Հայաստան աշխարհին, ուներ կազմութիւն հայրենեաց՝ տունեալ ի թագաւորացն հայոց հինգ հարիւր գեղ անուանի և մեծանիստ և չահաւետ ընտիր-ընտիր»[2]: Իհարկե, այդ գյուղերը գտնվելիս են եղել ոչ միայն Անիի թագավորության տարածքում, այլև հայկական մյուս մարզերում: Է՛լ ավելի չատ ամրոցներ ու գյուղեր կային աշխարհիկ ավատատերերի ձեռքին:

Ավատական հարաբերությունների հետագա զարգացումը պայմանավորեց խոշոր ավատատերերի ուժեղացումը, նրանց պայքարը թագավորական իշխանության դեմ, ինչը և իր հերթին նպաստում էր բյուզանդական նվաճման հաջողությանը: Անիի թագավորության մեջ իշխանների միջավայրում կազմվեց հունասերների կուսակցություն, որը հաջողություն ունեցավ հավանաբար նաև այն պատճա-

[1] Նույն տեղում, էջ 307:

[2] Նույն տեղում, էջ 307–308:

[3] **Մ. Ջամչեան,** Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1785, հ. Բ, էջ 903:

[4] **Սամուէլի Անեցւոյ** Հավաքմունք, Վաղ., 1893:

[5] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 49, **Սմբատ,** Պատմ., էջ 27:

[6] Տե՛ս նույն տեղում:

[1] Chronique de Michel le Syrien, t. III, p. 271.

[2] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 153:

ռով, որ ավատատիրական վերնախավի մի մասը, վաճառականությունն ու եկեղեցին, տարանցիկ առևտրի շնորհիվ, կապված էին Բյուզանդիայի հետ տնտեսական շահերով: Հայ ազնվականության նշանակալի մասի հունասիրությունը ուներ ևս առավել կարևոր պատճառ: Ավատատերերի ու եկեղեցու գլխավոր տնտեսական հիմքը խոշոր հողատիրությունն ու գյուղացիների վրա նրանց ունեցած իշխանությունն էր: Հողերի կենտրոնացումը խոշոր հողատերերի ու վանքերի ձեռքին առաջացրեց թոնդրակյան շարժում, որն սկսեց պայքարել ընդդեմ ավատատիրական հարաբերությունների, ընդդեմ ավատական հողատիրության, ընդդեմ կոռ ու բահրայի, ընդդեմ եկեղեցու: Ճիշտ է՝ ձևով կրոնական, բայց բովանդակությամբ սոցիալական այդ շարժման կենտրոնը Արևմտյան Հայաստանն էր, բայց նման օջախներ կային նաև Արևելյան Հայաստանում, և հողատերերը պետք է որ երկյուղներին այդ ժողովրդական հեղափոխական շարժման ներթափանցումից նաև Անիի սահմանները, քանի որ խմորումն ու դժգոհությունը աճել էին նաև այստեղ: Համենայն դեպս ավատատերերը, Բյուզանդիայի կողմնակիցները, հույս էին տածում բյուզանդական կառավարության օգնությամբ ամրապնդել իրենց իշխանությունը գյուղացիների, ժողովրդական զանգվածների նկատմամբ: Այսպիսին են, ակնհայտաբար, բյուզանդամետ խմբավորման սոցիալ-տնտեսական արմատները: Բայց ժողովուրդը, ինչպես և ազնվականության զգալի մասը պաշտպանում էին երկրի քաղաքական անկախությունը:

Անիի Հովհաննես-Սմբատ թագավորի մահից (1041) հետո կառավարման գլուխ կանգնեցին Վստ-Սարգիսը, Պետրոս կաթողիկոսը և հայտնի գիտնական Գրիգորը՝ Պահլավունիների ազդեցիկ տոհմից: Սրանք բոլորը հունասերներ էին: Սակայն 1042 թ. սրանց դեմ հանդես եկավ սպարապետ իշխան Վահրամ Պահլավունին՝ երկրի քաղաքական անկախության ձգտող կուսակցության առաջնորդը: Թագավոր հռչակվեց Հովհաննես-Սմբատի եղբորորդի պատանի Գագիկը:

Գագիկ II-ի գահակալումը Բյուզանդիան համարեց Տրապիզոնի դաշնագրի խախտում, ըստ որի Հովհաննես-Սմբատի մահից հետո Անին պետք է հունաց իշխանությանը անցներ: Կոստանդին Մոնոմախը Անին գրավելու համար երկու անգամ խոշոր բանակ ուղարկեց, բայց հայոց զորքերը Վահրամ Պահլավունու հրամանատարությամբ, քաղաքացիների աջակցությամբ արիաբար ետ մղեցին բյուզանդացիների հարձակումները և թշնամուն քշեցին Անիի թագավորության սահմաններից:

Տեսնելով, որ Անին ուժով վերցնելը դժվար է, Կոստանդին Մոնոմախը դիմեց ուխտադրժության և Գագիկին գայթակղեց տարավ Կոստանդնուպոլիս՝ բարեկամության դաշինք կնքելու պատրվակով: Ըստ հայ պատմիչների վկայության այդ միտքը կայսրին թելադրել է Վստ-Սարգիսը: Գագիկ II-ը երկու անգամ հրաժարվեց Բյուզանդիայի մայրաքաղաք մեկնելու հրավերից, բայց Վստ-Սարգիսն ու կաթողիկոսը նրան համոզեցին գնալ:

Գագիկ II-ը չուտով առնվեց հսկողության տակ: Նրան ստիպում էին Անին հանձնել Բյուզանդիային: Հայոց թագավորը համառորեն հրաժարվում էր: Բայց երբ նրան ցույց տվեցին Անիի 40 բանալիները, որոնք ուղարկված էին Կոստանդին Մոնոմախին Վստ-Սարգսի ու Պետրոս կաթողիկոսի ձեռքով, նա ստիպված եղավ հրաժարվել Անիի նկատմամբ իր իրավունքից՝ փոխարենը ստանալով երկու քաղաք Կապադովկիայում՝ Պիդան ու Կայսրիան[1]:

Հայ պատմագիր Արիստակես Լաստիվերտցին նշավակել է Պետրոս կաթողիկոսին որպես դավաճանի[2]: Նա Պետրոսին արծաթասիրություն է վերագրում: Եթե կարելի է կասկածել չահադիտական նպատակով ուղղակի դավաճանության մեջ, այնուամենայնիվ անկասկած է, որ ազնվականության և հոգևորականության մեծ մասը նպաստում էր Անիում բյուզանդական տիրապետության հաստատմանը՝ ելնելով ոչ միայն անձնական նյութական չահերից, այլև հետապնդելով դասակարգային-դասային չահեր, հուսալով, թե Բյուզանդիայի իշխանության տակ կամրապնդի իր հողային տիրույթներն ու դասային իրավունքները:

Ընդգծելով Անիի թագավորության անկման ներքին պատճառները (ավատատիրական երկպառակություններ, իշխանների մի մասի հունասիրություն և այլն), չի կարելի, սակայն, մոռանալ արտաքին-քաղաքական բնույթի պատճառները՝ Բյուզանդիայի հաջողությունները Արևելքում, նրա հաղթանակներն արաբների դեմ ընդհանրապես, ինչպես նաև Տարոնի ու Վասպուրականի զավթումը և Վրաստանի պարտությունը Տաոյի համար մղած պայքարում:

Այն բանից հետո, երբ Գագիկ II-ին Կոստանդնուպոլսում ստիպեցին հրաժարվել գահից և բյուզանդական զորքը փորձում էր գրավել Անին, ժողովրդական զանգվածները ոտքի նյան ի պաշտպանություն հայրենի քաղաքի և ետ մղեցին թշնամուն: Բայց Անիի կառավարող շրջաններում միաբանություն չկար, և, տեսնելով Բյուզան-

[1] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, Մ., 1856, էջ 45–46:

[2] Պատմութիւն **Արիստակեսայ Լաստիվերտցւոյ**, Թ., 1912, էջ 62:

դիայի խոշոր ռազմական պատրաստությունները նոր արշավանքի համար, որոշվեց Հանձնել քաղաքը (1045): Հայ պատմագիրները դառնությամբ, սրտի կսկիծով են նշում Անիի թագավորության անկումը՝ այդ իրադարձությունը գնահատելով որպես հայոց պետականության խորտակում[1]:

Ջավթելով Վասպուրականը, Անին և հայկական մյուս մարզերն ու ամրոցները, հայ իշխաններին իրենց ռազմական ուժերի հետ գաղթեցնելով Կապադովկիա և այլ մարզեր, այդպիսով թուլացնելով Հայաստանը՝ Բյուզանդիան դավճած մարզերում քաղաքական ճնշման ու կրոնական հալածանքի վարչական կարգ հաստատեց, որպեսզի ճնշեր անկախության համար հայերի պայքարի ամեն մի փորձ, և անուշադրության մատնեց սահմանների պաշտպանությունը, բերդերի ամրացումն ու զորքերի ավելացումը Հայաստանում:

Մատթեոս Ուռհայեցին Բյուզանդիային մեղադրում է այն բանում, որ նա ոչնչացրեց Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը և ռազմական կազմակերպությունը՝ արտաքսելով քաջարի զորականներին և կործանելով երկրի պաշտպանության հենարանները[2]: Արիստակես Լաստիվերտցին Կոստանդին Մոնոմախ կայսեր մասին ասում է, թե նա եղել է որկրամոլ ու հարբեցող, իսկ երկրի բոլոր կողմերից հարկերի միջոցով հավաքված գանձերը ծախսում էր ոչ թե հնձելդարդի մեծացման վրա, որպեսզի երկիրը պաշտպաներ թշնամիներից, այլ՝ փչացած կանանց վրա[3]:

Այսպիսով, Հայաստանի նկատմամբ իր քաղաքականությամբ Բյուզանդիան հեշտացրեց սելջուկների ներխուժումը այդ երկիր:

Սելջուկների առաջնորդ Տուղրիլ բեկը Իրանում կատարած նվաճումներից հետո մի չարք խոշոր ներխուժումներ ձեռնարկեց դեպի Հայաստան: Սելջուկները 1048 թ., Իբրահիմ Կութուլմիշի առաջնորդությամբ, Վասպուրականի միջով ներխուժեցին Հայաստանի կենտրոնական մարզերը և, Արիստակես Լաստիվերտցու ասելով, գալով Բասենի մարզ, ինչպես անկուշտ գայլեր, ավերեցին 24 գավառ[4]: Այնուհետև սելջուկները տարածվեցին Բասենի ու Կարինի ընդարձակ սարահարթով մեկ: Այստեղից նրանք ընդլայնեցին իրենց ասպատակությունների չառավիղը՝ արևմուտքում հասնելով մինչև Խաղտիքի գավառը, հյուսիսում՝ Սպերի և Տայքի ամրոցները, հարավ-արևմուտ-

[1] Տե՛ս **Մխիթար Սպարապետի** Պատմութիւն, Մ., 1856, էջ 47:

[2] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 135–136:

[3] **Արիստակէս Լաստիվերտցի**, էջ 108:

[4] Տե՛ս Պատմութիւն **Արիստակեայ Լաստիվերտցւոյ**, էջ 65:

րում՝ մինչև Տարոն, Հաչտյանքի գավառը և Խորձյանի անտառները[1]: Սելջուկները կողոպտեցին ու հրկիզեցին առևտրաարդյունաբերական բազմամարդ Արծն քաղաքը, սրբեցին տարան նրա հարստությունները, սրի քաշեցին ու գերի գցեցին տասնյակ հազարավոր բնակիչների[2]:

Դեպի Հայաստանի խորքը սելջուկների արշավի հանդգնությունը պետք է գլխավորապես բացատրել բյուզանդական կառավարության կողմից Հայաստանի հարավային սահմանների անփույթ պաշտպանությամբ:

Սելջուկների առաջին ներխուժումից հետո Բյուզանդիան կարծես մասամբ ուշքի եկավ: Վասպուրականի և Անիի բյուզանդացի կուսակալներին՝ Ահարոնին ու Կոմնենոսին, Տարոնի և Հյուսիսային Միջագետքի կառավարիչ Գրիգոր Մագիստրոսին հրամայեցին կենտրոնացնել իրենց ուժերը Բասենում[3]: Օգնության կանչեցին նաև վրաց իշխան Լիպարիտին[4]:

Սակայն բացակայում էր միասնական ռազմական ղեկավարությունը և միաբանությունը զորապետների միջև, իսկ բյուզանդական բանակի մարտունակությունը թույլ էր: 1050 թ. Բասենի սարահարթում տեղի ունեցած ճակատամարտում արիաբար մարտնչում էին հայ-վրացական զորքերը Լիպարիտի հրամանատարությամբ, որը, սելջուկներից հալածված բյուզանդական զորավարներից լքվելով՝ պարտություն կրեց ու գերի ընկավ[5]:

Նպատակ չունենալով նկարագրել սելջուկյան արշավանքը՝ նշենք սակայն, որ սելջուկների առաջին արշավանքից (1048) մինչև Ալփարսլանի կողմից Անիի գրավումը (1065) ընկած ժամանակաշրջանում Բյուզանդիան չհոգաց արևելքում ուժեղ բանակի կենտրոնացման մասին, բանակ, որն ընդունակ լիներ հակահարված տալ սելջուկներին: 1065 թ. Անին, չնայած քաղաքի բնակիչների քաջարի պաշտպանությանը, ընկավ[6]:

Արևելքում իր անհեռատես քաղաքականությամբ, մանավանդ նվաճված հայկական մարզերի սահմանների և ամրոցների պաշտպանության գործում դրսևորած անփութությամբ՝ Բյուզանդիան սել-

[1] Տե՛ս Պատմութիւն **Արիստակեայ Լաստիվերտցւոյ**, էջ 69:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 78:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 86:

[4] **Ս. Երեմյան**, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, Ե., 1947, էջ 86:

[5] Տե՛ս Պատմութիւն **Արիստակեայ Լաստիվերտցւոյ**, էջ 86–88:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 162:

ջուկների կողոպուտին մատնեց Հայաստանի բարգավաճ մարզերը, քաղաքներն ու գյուղերը, որի հետևանքով հարյուր հազարավոր հայեր սպանվեցին կամ գերի քշվեցին, զրկվեցին տունուտեղից կամ սարսափահար փախան հարազատ վայրերից՝ արտագաղթելով երկրից:

Նկարագրելով սելջուկների արշավանքը՝ դևպքերի ականատես Արիստակես Լաստիվերտցին գրում է. «... քաղաք աւերեալք և տունք այրեցեալք, ապարանք հնոցացեալք, և արքունաչէն սրահի աճիւնացեալք: Արք ի հրապարակս կոտորեալք, և կանայք ի տանց գերի ելեալք, և կաթնասուն տղայք զքարի հարեալք, և գեղեցիկ դեմք պատանեկաց թառամեալք... Սուրք թշնամեացն չլացեալք, և նետք ի կապարճից նոցա սպառեալք... և սիրտք նոցա յողորմութիւն ոչ նկեալք»[1]:

Սելջուկյան արշավանքի և հայերի մի մասի արտագաղթի հետևանքով Հայաստանում ստեղծված դրության մասին Արիստակես Լաստիվերտցին պատկերավոր կերպով ասում է. «... և այժմ անկեալ կայ [Հայաստանը] ի կիցս ամենայն ճանապարհաց մերկ և խայտառակեալ, և կոխեն զնա նախատանօք անցաւորք ճանապարհաց: Ելեալ ի տանէ, օտարացեալ ի ծանօթից, հեռացեալ յընտանեաց և յազգականաց, գերի և կալանաւոր ամենայն ազգաց»[2]:

Սելջուկ Տուղրիլ բեկի և Ալփարսլանի ավերիչ ներխուժումները Հայաստան, երկրի կողոպտումն ու խաղաղ բնակչության կոտորածը հայերի արտագաղթի նոր ալիք առաջացրին: 1065 թ., երբ սելջուկ-թուրքերը սպառնում էին Կարսին և Անիին, Կարսի Գագիկ Բագրատունի թագավորի հետ Կապադովկիա գաղթեցին չատ զորականներ:

1073 թ. սելջուկների ճնշման տակ հայ իշխան Օշինը Գանձակի գավառում թողեց իր հայրենական տիրույթը՝ Մայրենաց ջուրը և իր զորականներով տեղափոխվեց Կիլիկիա[3]: Բյուզանդական կառավարության կողմից հայ իշխանների ու նրանց զորաջոկատների, մասամբ էլ նրանց ենթակա մարդկանց հարկադիր տարաբնակեցումից հետո սկսվեց հայերի զանգվածային գաղթը, գլխավորապես ժողովրդական զանգվածների, որոնք սելջուկյան արշավանքների սարսափից ստիպված էին հայրենիքը լքել, ընդ որում որքան մոտենում էր XI դարի վերջը, այնքան ավելի լայն թափ էր ստանում Հայաստանից հայերի արտագաղթը դեպի Միջերկրական ծովի ափերը:

[1] Պատմութիւն **Արիստակեսայ Լաստիվերտցւոյ**, էջ 71:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 69–70:

[3] **Սամուէլ Անեցի**, Համաքմունք ի գրոց պատմ., Վենետիկ, 1893, էջ 117:

Զանգվածային արտագաղթի և նոր բնակավայրերում տարագիր հայերի խղճալի վիճակի նկարագրությունն է տալիս Մատթեոս Ուռհայեցին. «Իսկ յորժամ բարձրացաւ թուականութիւն Հայոց ի յամս ՇԻԸ (1079), եղև սով սաստիկ ընդ ամենայն աշխարհս խաչապաշտից յայնկոյս ծովուն Ովկիանոսի (Միջերկրական ծով – Գ. Մ.), վասն զի արեւանարբու և գազանացեալ ազգն թուրքաց տարածեցաւ ընդ ամենայն երկրի, որ ոչ մնաց գաւառ ի խաղաղութեան, այլ կայր մատնեալ ամենայն տունն քրիստոնէից ի սուր և ի գերութիւն. և արգելաւ վաստակ հողագործութեան յերկրէ, և հատաւ կերակուր հացի, և սրով և գերութեամբ հատան մշակք և վաստակաւորք, և առհասարակ տարածեցաւ սով ընդ աշխարհս: Եւ անմարդ եղեն բազում գաւառք, և փակեցաւ տունն արևելից, և եղև աւերակ աշխարհն հռոմոց, և ոչ ուրեք գտանեին հաց և կամ դադար հանգստեան մարդոյ, բայց ի յՈւռհա և յամենայն սահմանն նորա: Եւ Անտիոք և յամենայն աշխարհն Կիւլիկեա և մինչև ի Տարսոն և յամենայն աշխարհն Մարաշայ, ի Տլուք և յամենայն սահմանս աշխարհացս այսոցիկ ոչ գտանէին հանգիստ դադարման մարդոյ, և բանեալ ելանէին միահամուռ ամենայն արարածք և գային յաշխարհս յայսոսիկ անթիւ բազմութեամբ, հաղարք առ հազարս և բիւրք առ բիւրս, ծփայր մարդ ի վերայ երկրի. և ծածկեցաւ աշխարհքս այս, և որպէս զմարախ ի բազմութենէ նոցա ծածկէր երկիր... ազատք և իշխանք և կանայք մեծաչուք չրջեալ մուրանային. և զայս ամենայն աչք մեր տեսանէին. և երեսաց սովոյն և ի պանդխտութենէ կենացն մահ անկանէր ի նոսա ընդ ամենայն երկիր...»[1]:

Արտագաղթի նոր ալիք էր բարձրանում XI դարի 70-ական թվականների վերջին, երբ սելջուկ-թուրքերը հեղեղել էին համարյա ամբողջ Փոքր Ասիան, և հայերը նետվում էին դեպի ևիրատամերձ մարզերը, Միջերկրական ծովի ափերը:

Այսպիսով, Բյուզանդիայի գաղթեցման քաղաքականության և XI դարի վերջերին սելջուկների արշավանքների հետևանքով հայ բնակչությունը խիտ բազմացավ այդ մարզերում, մանավանդ Կիլիկիայում: Հենց այս հանգամանքը դարձավ Կիլիկիայի հայկական պետության ծագման ու զարգացման պատճառներից մեկը:

Արծրունիների ու Բագրատունիների վերաբնակեցման հետևանքով կապադովկիայում կազմավորվեցին հայկական այդ դինաստիաների ընդարձակ տիրույթներ՝ հայ զգալի բնակչությամբ: Արծրունիների տերության կենտրոնը դարձավ Սերաստիան, Գագիկ II Բագ-

[1] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, էջ 217–218:

բատունները՝ Կեսարիան, իսկ Կարսի տեր Գագիկ Բագրատունը՝ Մամնդավը:

Կայսրության արևմտյան պրովինցիաներ գաղթած հայ իշխաններր բյուզանդական կառավարությունից ձեռք էին բերում ավատատիրական իրավունքներ իրենց տարածքի ու գյուղացիների նկատմամբ, ինչպես նաև՝ վարչաքաղաքական փունկցիաներ տեղական բնակչության նկատմամբ: Իրենց զորագնդերի հետ նրանք դիտվում էին որպես ռազմական ուժ, որն անհրաժեշտ էր տվյալ պրովինցիայի, շրջանի կամ ամրոցի պաշտպանության համար:

Հայկական աղբյուրները չարունակում են Արծրունիներին ու Բագրատունիներին մեծարել թագավորներ անվանելով, բայց այդ տիտղոսը անվանական էր դարձել և դրա կրողին չէր տալիս իրական իշխանություն: Այսպես, օրինակ, նոր տեղում Սենեքերիմ Արծրունին, Կեղրինի արտահայտությամբ, հանդիսանում էր «Կապադովկիայի պատրիկ և դուքս»[1]:

Բագրատունիների և Արծրունիների մոտ՝ Կապադովկիայում, Վարաժնունիների և Պահլավունիների մոտ՝ Միջագետքում և Սիրիայում, Ռուբինյանների մոտ՝ Կիլիկիայում և այդ երկրների այլ իշխանական տներում ապաստան էին գտնում քիչ հայտնի ավատատերեր ու զանազան կարգի աննշան մարդիկ՝ Հայաստանի սելջուկներից փախած, ազատ ու կախյալ մարդիկ, որոնք մեծացնում էին տարագրված իշխանական տոհմերի ռազմական ուժը և քաղաքների ու գյուղական վայրերի հայ բնակչության թիվը վերոհիշյալ բյուզանդական պրովինցիաներում:

Հայ ուրիշ ավատատերերի նույնպես կառավարման էին հանձնել որոշ մարզեր հարավ-արևմտյան Հայաստանում, ինչպես և՝ ամրոցներ Միջագետքում, Սիրիայում ու Կիլիկիայում, այնպես որ նրանց տիրույթները տեղավորված էին Հալիս գետից մինչև Եփրատ, Անտիտավրոսի լեռներից մինչև Միջերկրական ծով: Այս պաշտպանական գծի նշանակությունը մեծացավ Ալփարսլանի կողմից Անին ու Կարսը գրավելուց հետո, մանավանդ Մանազկերտի մոտ Բյուզանդիայի պարտության առիթով:

Արծրունիների՝ Կապադովկիա տեղափոխվելուց չատ չանցած, արխաղա-վրացական թագավոր Գեորգիի դեմ Վասիլ II-ի մղած պատերազմի ժամանակ, Նիկեփոր Փոկասը (Վարդ Փոկասի որդին) Կոստանդնուպոլսից եկավ Կապադովկիա և ապստամբության դրոշ պարզելով ընդդեմ կայսր՝ Սենեքերիմ Արծրունու որդի Դավիթ Արծ-

[1] Corpus scriptorum hist. byzant, G. Cedrenus, B., 1839. t. II, p. 364.

րունուն դրդում էր հարել իրեն՝ խոստանալով նրան դարձնել հայոց թագավոր: Նիկեփորը դաչինք կնքեց նաև Գեորգիի ու Հովհաննես-Սմբատի հետ[1]:

Սակայն Սենեքերիմն ու Դավիթ Արծրունին որոշ ժամանակ տատանվելուց հետո, հույս չունենալով ապստամբության հաջողության նկատմամբ և վախենալով, որ կկորցնեն իրենց տիրույթները, հավատարիմ մնացին Վասիլ II-ին և նրան օգնեցին վերացնելու Նիկեփոր Փոկասի խռովությունը, որի համար Բյուզանդիայի կայսրը Դավթին իբրև տիրույթ տվեց Կեսարիան, Մամնդավն ու Խավարտանեքը՝ իրենց չրջաններով[2]: Եթե սրան ավելացնենք Վասպուրականի փոխարեն ստացած Սեբաստիան, Լարիսան և Ավարան, ապա ստացվում է, որ Արծրունիների իշխանության տակ կար Փոքր Հայքից դզալի մի տարածք՝ Եփրատից մինչև Անտիտավրոս:

Սենեքերիմի մահից (1026) հետո, որի աճյունն իր կտակի համաձայն տեղափոխվել է հայրենիք՝ Վասպուրական, ինչն ասես թե ակնարկում է Արծրունիների կապվածությունը իրենց տոհմական տիրույթի հետ և հարկադիր տեղափոխությունը դեպի Կապադովկիա, իշխանությունն անցավ Դավթին (1026–1035), որի մասին տեղեկությունները խիստ սուղ են: Դավթի մահից հետո Արծրունիների տիրույթը բաժան-բաժան արվեց. Բյուզանդիայից Սենեքերիմի ստացած տարածքն անցավ Դավթի եղբայրներին՝ Ատոմին և Աբուսահլին, իսկ այն, ինչը Դավիթն ստացել էր կայսրից, այսինքն՝ Կեսարիան և այլ քաղաքներ, ժառանգեց նրա դուստրը:

Բյուզանդական կառավարությունը մի քանի անգամ փորձել է վերացնել Արծրունիների տիրույթը: Միքայել IV կայսրը (1034–1041) միայն մատնագրի վրա հենվելով, ըստ որի Արծրունիներն իբրև թե «ապստամբության են պատրաստվում», նրանց դեմ զորք ուղարկեց, բայց Ատոմն անձամբ մեկնեց Կոստանդնուպոլիս և արդարացավ իր դեմ հարուցված մեղադրանքներից[3]:

1071 թ. Ռոմանոս Դիոգենեսը Ալփարսլանի դեմ արշավանքի գնալիս ժամանեց Սեբաստիա և սպառնում էր դատաստան տեսնել հայ բնակչության ու Սենեքերիմի որդիներ Ատոմի և Աբուսահլի հետ: Սակայն չնորհիվ Գագիկ II-ի և բյուզանդացի ազդեցիկ մեծամեծների միջնորդության Դիոգենես կայսեր և Արծրունիների միջև հաշտություն կայացավ, ինչը բացատրվում է, ակներևաբար, նրանով, որ

[1] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 30:

[2] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 51:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 83:

Ռոմանոս Դիոգենեսը վախենում էր նրանց դեմ գործադրվելիք բռնություններով դժգոհություն հարուցել այս արշավանքին մասնակցող հայ իշխանների մեջ, այդ պատճառով էլ Արծրունիների նկատմամբ հաշվեհարդարը հետաձգեց մինչև արշավանքի ավարտը[1]:

Արծրունիների՝ Կապադովկիայի տիրույթը սելջուկները զավթել են, հավանաբար, արդեն 70-ական թվականների վերջերին:

Վերջին անգամ Ատոմն ու Աբուսահլը հիշատակվում են 1079 թվականին, երբ նրանք անհաջող մասնակցում էին Կիզիստրա ամրոցի պաշարմանը, որտեղ բյուզանդացի իշխանների կողմից ուստատրժորեն բռնվել ու բանտարկվել էր Գագիկ II-ը[2]: Նրանց հետագա ճակատագիրն անհայտ է:

Անիի թագավոր Գագիկ II-ին, որ գայթակղել-տարել էին Կոստանդնուպոլիս, Բյուզանդիան սկզբում խոստացել էր տալ Մալաթիան, եթե նա հրաժարվեր իր տերությունից՝ Անիի թագավորությունից, բայց նա չէր համաձայնել[3]: Իսկ երբ նրա իշխանները Անին Բյուզանդիային հանձնեցին (1045), Գագիկ II-ը ստացավ միայն երկու աննշան քաղաքներ կամ բերդեր (Կալոնպալատը և Պիզան) Լիկանդոսի բանակաթեմում: Դրանք, հավանաբար, գտնվում էին Կիլիկիայի սահմանի մոտ: Այդ բնակավայրերի առավել ճշգրիտ տեղը պարզված չէ:

Կարճ ժամանակ անց Գագիկ II-ն ամուսնացավ Դավիթ Արծրունու դստեր հետ և իբրև օժիտ ստացավ Կեսարիան, Ծամնդավը և Խավարտանքը[4]: Այս ամենը միասին ընդարձակ մի տերություն էր, որտեղ հայերը բնակչության մեծամասնությունն էին կազմում: Գագիկ II-ը մեծ հեղինակություն ուներ Կապադովկիայի և դրան կից մարզերի հայ բնակչության մեջ: Նա պայքարում էր բյուզանդական կառավարության կողմից հայերի վրա քաղկեդոնություն փոխադրելու փորձերի դեմ: Մատթեոս Ուռհայեցին մանրամասն նկարագրում է Գագիկ II-ի ճանապարհորդությունը դեպի Կոստանդնուպոլիս, նրա մասնակցությունը եկեղեցական վեճերին ուղղափառ հոգևորականության հետ, նրա դիմադարձությունը Բյուզանդիային, որը ձգտում էր հայոց եկեղեցին ենթարկել հունականին[5]:

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 198:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 95:*

[4] *Պատմութիւն* **Արիստակէս Լաստիվերտցւոյ,** *էջ 62:*

[5] *Տե՛ս* **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 162:*

Գագիկ II-ը մահու տվեց Կեսարիայի հույն միտրոպոլիտ Մարկոսին այն բանի համար, որ նա վիրավորանք էր հասցրել հայերին: Հույն իշխանները՝ Մանդալ ազգանունով երեք եղբայրներ, ի հատուցումն դրա, ուստատրժորեն գերի վերցրին Գագիկ II-ին և կախեցին Կիզիստրա ամրոցի պարսպից: Կարսի Գագիկը Արծրունիների հետ չրջապատեց նրանց Կիզիստրա ամրոցը, բայց հաջողություն չունեցավ[1]:

Հետագայում Արծրունիների և Անիի Գագիկի մոտ տեղափոխվեց նաև Կարսի Գագիկը: Ընկած լինելով երկու կրակի արանքում (բյուզանդական զորքերի կողմից իր տարածքի զավթում և Ալփարսլանի սելջուկների կողմից դրա ամայացում)՝ նա Կարսն ու Կարսի մարզը հանձնեց Բյուզանդիային և տեղափոխվեց Կապադովկիա: Վարդանի խոսքերով ասած, «Թագաւորն Կարուց Գագիկ՝ որդի Աբասայ, նեղեալ յերկիւղէ Թուրքացն, տայ զՀայրենիս իւր ի յոյն և առնու զԾամնդաւ, զԱառիա, զԿոմանա և զպռաստին Հարիւր, որ է գԷոդևան»[2]:

Սմբատի տարեգրության մեջ ասված է, որ Գագիկը նույնպես ստացավ Կեսարիան ու Խավարտանքը[3]: Եթե այս տեղեկությունը հավաստի է, ապա դա նշանակում է, որ 1079 թ. Անիի Գագիկն արդեն կորցրած է եղել այդ քաղաքները, որոնք նա ստացել էր որպես օժիտ՝ ամուսնանալով Դավթի աղջա հետ:

Անհրաժեշտ է նշել, որ Արծրունիների ու Բագրատունիների երկու ճյուղերի տիրույթները գտնվում էին Կապադովկիայում՝ Կիլիկիայի սահմանից ոչ հեռու: Հայրենիքում միմյանց թշնամի լինելով՝ Հայաստանում երբեմնի տիրապետող այդ գերդաստանները տարագրության մեջ համերաշխ հարևաններ էին և միմյանց պաշտպանում էին, երբ Բյուզանդիան նրանց դեմ բռնություն էր գործադրում: Կարսի Գագիկը բյուզանդացիների ձեռքով սպանվեց 1081 թվին:

Բյուզանդական կառավարությունը, գաղթեցնելով հայ իշխանապետությունների տիրակալներին, վերջիններիս քաղաքական ինքնուրույնությունը ոչնչացնելուց հետո նրանցից առավել նվիրվածներին օգտագործում էր որպես զորապետներ ու կառավարիչներ հայերով քիչ թե շատ բնակեցված բյուզանդական պրովինցիաներում:

Անիի հունամետների կուսակցության առաջնորդներից մեկը՝ Գրիգոր Պահլավունին, Վեստ-Սարգսի չարաչար սութեան կամ նրա հետ գժտվելու հետևանքով դեռ մինչև Անիի թագավորության ան-

[1] *Տե՛ս* **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 220:*

[2] **Վարդանայ Բարձրբերդցւոյ** *Պատմութիւն տիեզերական, 1861, էջ 136:*

[3] **Սմբատայ Սպարապետի** *Պատմութիւն, էջ 63:*

կումը տեղափոխվել էր բյուզանդական տարածք: Գագիկ II-ի՝ Կոստանդնուպոլսում եղած ժամանակ (1044), Գրիգոր Պահլավունին նույնպես այնտեղ գտնվելով, ըստ Արիստակես Լաստիվերտցու, «տայ զբանալին Բջնոյ ցթագաւորն [Կոստանդին Մոնոմախ], և զամենայն գիւր զհայրենի ժառանգութիւնն. և մեծարեալ ի նմանէ՝ առնու զպատիվ մագիստրոսութեան, և զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց գիւղս և քաղաքս, գրով և ոսկի մատաննաւ յազգէ յազգ մինչև յաւիտեան»[1]:

Գագիկ II Թագավորը իր նամակում հանդիմանում էր Գրիգոր իշխանին իր տիրույթը Բյուզանդիային կամավոր հանձնելու համար: Սա իր արարքն արդարացնում էր նրանով, որ ստիպված է եղել դիմել այդ քայլին, երբ հասկացել է, որ բյուզանդացիները Գագիկին էլ թույլ չեն տա վերադառնալ հայրենիք՝ Անի:

Գրիգոր Պահլավունին Բյուզանդիային հանձնած իր կալվածքի փոխարեն ոչ միայն տարածք է ստացել Միջագետքում, այլև նշանակվել է, իր խոսքերով ասած, Միջագետքի, Վասպուրականի, Տարոնի, Մանազկերտի և այլ մարզերի մագիստրոս ու դուքս[2]: Որպես մարզերի կառավարիչ և զորավար, Գրիգոր Մագիստրոսը մինչև իր կյանքի վերջը նվիրված մնաց Բյուզանդիային: Նա մասնակցել է սելջուկների դեմ մղված ճակատամարտերին:

Գրիգորի մահվանից (1058) հետո այդ պաշտոնն ստանձնում է նրա որդին՝ Վահրամը, մինչև կաթողիկոս ընտրվելը: Նրա մյուս որդին՝ Վասակը, 1071–1078 ԹԹ. եղել է Անտիոքի դուքս[3]: Այս իշխանական տան անդամները XI–XII դարերում Միջագետքում և Ասորիքում ուրիշ շատ ամրոցների, գյուղերի ու վանքերի տեր էին: Նրանք մեկ դարից ավել զբաղեցրել են կաթողիկոսական աթոռը:

Միջագետքին հարևան Տարոնն ու Սասունը Մամիկոնյանների իշխանական տան ձեռքին էին: 40-ական թվականների սկզբից Կիլիկիան նույնպես հայազգի կառավարիչների իշխանության տակ էր: Ապլղարիպ Արծրունին, որը Սեբաստիայի հետ Մեծ Հայքից տեղափոխվել էր Սեբաստիա, հետագայում գնաց Կոստանդնուպոլիս և 1042 Թ. Կոստանդին Մոնոմախից ստացավ Տարսոնի, Միջագետքի, Պապևոնի ու Լամբրոնի, այսինքն Կիլիկիայի զգալի մասի կառավարման իրավունքը[4]: Նա մինչև իր կյանքի վերջը (1080) հավատարիմ

[1] Պատմութիւն **Արիստակիսոյ Լաստիվերտցւոյ**, էջ 61:

[2] Տե՛ս **Գրիգոր Մագիստրոսի** Թղթերը, Այնք., 1910, էջ 213:

[3] Տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հ. I, 1912, էջ 1228:

[4] Տե՛ս Documents arméniens, t. I, p. L:

մնաց Բյուզանդիային: Նրա դուստրերից մեկը ամուսնացած էր Գագիկ II-ի որդի Դավթի հետ, որն սպանվեց աներոջ ձեռքով, հավանաբար, բյուզանդական կառավարության կարգադրությամբ: Ապլղարիպի երկրորդ դուստրն ամուսնացավ 1073 Թ. Գանձակից Կիլիկիա եկած վտարանդի իշխան Օշինի հետ, որն իր աներոջից ստացավ Լամբրոնի ամրոցը և նույնանուն գավառը, որոնք մինչև XII դարի վերջը Օշինյանների ժառանգական տիրույթն էին: Կիլիկիայի հայկական պետության դարաշրջանում Օշինյանները մեկ դարից ավելի բյուզանդական կողմնորոշման հետևորդներ էին:

XI դարի 70-ական թվերին, Մանազկերտի մոտ Բյուզանդիայի պարտությունից հետո, հայ իշխան Փիլարտոս Վարաժնունին փորձեց իր իշխանությանը միացնել Կիլիկիան և Միջագետքի ու Սիրիայի մի քանի շրջաններ, որտեղ շատ հայեր էին ապրում, և Հայաստանից արտագաղթած հայ իշխանները մի քանի տիրույթներ ունեին:

Փիլարտոս Վարաժնունին ծագումով Վասպուրականից էր: Կայսր Ռոմանոս Դիոգենեսից ստանալով մեծ դոմեստիկոսի տիտղոս՝ զինվորական ծառայության մեջ էր բյուզանդական բանակում[1]: Մանազկերտի ճակատամարտի ժամանակ Փիլարտոսը Խարբերդում էր և հրամանատարն էր մեծ մասամբ հայերից բաղկացած բյուզանդական զորքերի: Նա հայ զորականների հաշվին մեծացրեց իր ռազմական ուժերը և օգտվելով Բյուզանդիայի պարտությունից՝ ստեղծեց մի ընդարձակ տիրույթ Հայաստանի սահմաններից մինչև Կիլիկիա: Նրա իշխանության գլխավոր ռազմավարական հենակետը Մարաշ քաղաքն էր: Տիրելով դրան և Կիլիկյան Տավրոսի արևելյան ճյուղերի այլ ամրությունների (Կապադովկիայի և Կիլիկիայի, Սիրիայի և Միջագետքի սահմանագծում), հենվելով հայ բնակչության և ռազմական ուժերի վրա՝ Փիլարտոսը կարողացավ ժամանակավորապես կասեցնել սելջուկների առաջխաղացումը և ներթափանցումն այդ երկրներ: Բյուզանդիան ստիպված եղավ ճանաչել Փիլարտոսի նվաճումները և նրան տալ սեբաստիոսի տիտղոս, երբ Փիլարտոսն արդեն իր իշխանությունն էր հաստատել արևելյան Կիլիկիայում ու դրան հարակից երկրներում, ընդ որում Բյուզանդիան, հավանաբար, հույս էր տածում, թե նա կճանաչի կայսրության գերիշխանությունը: Բացի այդ, Փիլարտոսը լինելով բյուզանդական ծառայության մեջ՝ իր նվիրվածությունը դրսևորեց բյուզանդական կայսրության հանդեպ ու քաղկեդոնություն ընդունեց:

[1] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 41:

Մատթեոս Ուռհայեցին խտացրած գույներով է նկարագրում նրա գործունեությունը, նրա կոիվները ոչ միայն սելջուկների, այլև հայ իշխանների դեմ՝ Փիլարտոսին հանդիմանելով դրա, ինչպես և այն բանի համար, որ նա հայոց դավանանքը փոխեց ուղղափառով: Մանազկերտի մոտ Ռոմանոս Դիոգենեսի պարտությունից (1071) հետո Փիլարտոսը, Ուռհայեցու խոսքերով՝ «... բռնակալեցաւ ի վերայ երկրի... տիրեալ բազում աշխարհաց և քաղաքաց և բազում մեծամեծ իշխանս կորոյս անողորմաբար...»[1]: Փիլարտոսը կովում էր Սասունի տիրոջ՝ քաջարի իշխան Թոռնիկի դեմ, ձգտում էր նվաճել նրա երկիրը, բայց ետ է մղվում[2]: Սակայն նրան հաջողվում է տիրել Եղեսիային[3]:

1078 թ., երբ հայ նշանավոր գիտնական Գրիգոր Մագիստրոսի եղբայր Վասակ Պահլավունին՝ Անտիոքի դուքսը, հույների ձեռքով սպանվեց այդ քաղաքի փողոցներից մեկում, Վասակի հայ զորականները Փիլարտոսին կանչեցին իրենց մոտ և օգնեցին, որ նա հաստատվի հյուսիսային Սիրիայի այնքան կարևոր կենտրոնում[4]:

Այս փաստերը վկայում են, որ Փիլարտոսը ձգտում էր նվաճել ընդարձակ մի տարածք՝ հարավարևմտյան Հայաստանից մինչև Միջերկրական ծովի ափերը, որի սահմանների մեջ էին մտնում ռազմավարական և առևտրական առումներով շատ կարևոր շրջաններ ու քաղաքներ: Փիլարտոսի տերության կորիզը եղել է հարավարևելյան Կիլիկիան՝ Մարաշ կենտրոնով, իսկ նրա տիրապետության ժամանակաշրջանը՝ 70-ական թվականները և 80-ականների առաջին կեսը: Երբ սելջուկյան արշավանքի ալիքը տակովն արավ Փոքր Ասիայի մեծ մասը, Միքայել Ասորու վկայությամբ, Կապադովկիայից Փիլարտոսի մոտ՝ Մարաշ եկավ հայերի մի ջոկատ, և նա սրանց գլուխն անցնելով՝ տիրեց Կիլիկիայի, հյուսիսարևմտյան Միջագետքի ու հյուսիսային Սիրիայի շատ գավառների նույնպես: Կիլիկիայում նրա հաստատվելու մասին Միքայել Ասորին գրում է. «Փիլարտոսը տիրեց Կիլիկիա երկրի մի բերդի. մեծ թվով հայեր հավաքվեցին նրա չուրջը, և նա զավթեց Կիլիկիայի ամրություններ մեծ մասը: Իմանալով այդ մասին, Հոռոմոց կայսրը նրան նվերներ ուղարկեց, և ապա Փիլարտոսն ինքը գնաց Կոստանդնուպոլիս, և հույները ուրախացան այդ առթիվ: Նրանք ոսկե գնեք տվեցին նրան և նրան «օգոստափառ» հռչակեցին: Փի-

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 206:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 206–209:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 223:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 213:

լարտոսը մեկնեց կառավարելու Տարսոնը և Մոպսուեստիան: Նա զավթեց Մարաշը, Քեսունը, Ռաբանը, Եղեսիան, Անազարբան ու մտավ Անտիոք: Նա ուժեղացավ ու ներխուժեց Ջեյհանի ու Մելիտինեի երկիրը»[1]: Այս հաղորդման մեջ հետաքրքիր է այն հանգամանքը, որ Փիլարտոսը դեռևս Կիլիկիայում Ռուբինյանների իշխանապետության ծագումից առաջ գրավել է երկրի նշանակալի մասը և, հավանական է, նաև՝ Տարսոնը, որտեղ մինչև 1080 թ. կառավարում էր Ապղարիպը:

Փիլարտոսը, ակներևաբար, սկզբից ևեթ փաստորեն անկախ է եղել և կախում չի ունեցել Բյուզանդիայից: Նա վրեժխնդիր եղավ հույներից նրանց կողմից սպանված Վասակ Պահլավունու համար: 1079 թ., երբ հույն իշխանները հայոց վերջին թագավոր Գագիկ II-ին արգելափակեցին Կիզիստրայի ամրոցում (Կապադովկիա), Փիլարտոսը նրանցից պահանջեց ազատել թագավորին՝ սպառնալով դատաստան տեսնել նրանց հետ[2]: Սակայն Փիլարտոսի սպառնալիքը հաջողություն չունեցավ: Գագիկ II-ը, ինչպես հայտնի է, սպանվեց:

Թուրքերի՝ Փոքր Ասիա ներխուժումից հետո Բյուզանդիան այլևս լուրջ քաղաքական ուժ չէր ներկայացնում Արևելքում, և Փիլարտոսը կարող էր հուսալ, որ ինքնուրույն կամ սելջուկյան սուլթանությունից կախում ունցող մի պետություն կստեղծեր: Այս հայ իշխանի հաջողությունը բացատրվում է գլխավորապես նրանով, որ դեպի Միջերկրական ծով սելջուկների արագ առաջխաղացումը՝ Սուլեյմանի առաջնորդությամբ, Բյուզանդիային կտրել էր Սիրիայից, Կիլիկիայից ու Միջագետքից, իսկ սելջուկների միջև երկպառակություն էր սկսվել Բյուզանդիայից գավթած տարածքների բաժանման համար: Բայց Փիլարտոսի հաջողությունը կարճատև եղավ: Շուտով թափ առավ սելջուկների առաջխաղացումը դեպի Միջերկրական ծով ու դեպի հարավ, և նրանց երկու հոսանքները (Սուլեյման և Դուքաղ) հանդիպեցին Սիրիայում:

Գրավելով Նիկեան՝ Սուլեյմանն սկսեց սպառնալ Կոստանդնուպոլսին Մարմարա ծովի կողմից, բայց փոխանակ փորձելու զավթել Բյուզանդիայի մայրաքաղաքը՝ 1084 թ. արշավեց Անտիոքի վրա: Հարց է ծագում. ինչո՞վ է նա տվյալ դեպքում ղեկավարվել: Մեզ թվում է, որ Սուլեյմանը նախ և առաջ բավականաչափ ուժեղ չի եղել, մանավանդ՝ ծովում, որպեսզի նվաճեր Կոստանդնուպոլիսը, և ապա, եթե Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավումը սելջուկներին խոստա-

[1] Cronique de Michel le Syrien, t. III, p. 173.

[2] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 220:

նում էր իշխանություն ունենալ համաշխարհային առևտրի կարևոր կենտրոնի վրա, ապա Սիրիայի նավահանգիստներին տիրելը նրանց համար ուներ ոչ պակաս, եթե ոչ ավելի մեծ նշանակություն, քանի որ այդ նավահանգիստները միջազգային առևտրի կարևորագույն կետեր էին և Արևելքը կապում էին Եվրոպայի հետ: Բացի այդ Անտիոքը գրավելը շատ ավելի հեշտ էր գլուխ բերել:

Փոքրասիական սելջուկների կողմից Անտիոքի գրավման մասին Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է. «... Սուլեյման ոմն ամիրայ որդի Գթըլմշոյ, որ բնակեալ էր ի քաղաքն Նիկիա՝ յաշխարհն Բիւթանացւոց, որ էր սահմանակից Ովկիանոս ծովուն, սորա յարուցեալ գաղտարար ընդ հեռաձիգ ճանապարհն և հասեալ ծածկաբար մինչև ի քաղաքն Անտիոք. և գտեալ զքաղաքն անպատրաստս և ի հալապայ դիհէն ի գիշերի գողացաւ զքաղաքն Անտիոք. և զՓիլառտոսն էր ի քաղաքն Ուռհա, և յայնմ ժամու զօրք հնձելոց ոչ գոյր ի քաղաքն: ... Եւ լուեալ զայս ամենայն Փիլառտոսն՝ ոչինչ կարաց առնել, ի լուր յոգւոց հանեալ և զառնապէս ապաշաւէր: Եւ Սուլեյման տիրեաց Անտիոքայ և ամենայն աշխարհին Կիլիկեցւոց»[1]:

Մեկ տարի անց Սուլեյման և Դուքաք Սելջուկյանների միջև արյունահեղ ճակատամարտ տեղի ունեցավ: Խնդիրն այն էր, թե սելջուկյան որ խմբավորմանը՝ փոքրասիակա՞ն, թե՞ իրանական, պետք է պատկաներ Սիրիան: Հաղթեց Դուքաքը: Նրա հզորացումը էլ ավելի վատացրեց Փիլարտոսի դրությունը, որովհետև այս սելջուկը իր առաջ խնդիր էր դրել իր իշխանությանը միացնել այն երկրները, որոնց մի մասը գտնվում էր սելջուկյան ուրիշ էմիրների իշխանության տակ, իսկ մյուս մասը պատկանում էր հայ իշխաններին:

1086 թվին Փիլարտոսը, Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, գրեց խոնարհվելու Մելիքշահ սուլթանին. «Եւ առեալ Փիլառտոսն բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ, և այնիւ ձիս և ջորիս, և հանդերձս երեւելիս և պայծառս, և գնացեալ առ սուլթանն ի յաշխարհն Պարսից»[2]: Որպեսզի իր ձեռքին պահեր իր տիրույթները, Փիլարտոսը քրիստոնեական կրոնն ուրացավ, բայց դա չօգնեց: Մելիքշահը նրան զրկեց իր բարեհաճությունից: Վերադառնալով, նա տեսավ, որ մուսուլմանները նոր բռնագրավումներ են կատարել իր տարածքից: Այս ամենից վշտահար՝ նա ապաշավեց և գնաց մտավ հայոց վանքը: Այդ մասին Միքայել Ասորու «Ժամանակագրության» մեջ այսպես է պատմվում. «Հաղթելով, նա բյուզանդական ջոկատների հետ կռվում

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 224–225:*

[2] *Նույն տեղում, էջ 223:*

էր թուրքերի դեմ: Բայց ի վիճակի չլինելով դիմագրավել նրանց, այս դժբախտը հրաժարվեց իր կրոնից, մնկնեց Բաղդադ ու Խորասան և իսլամ ընդունեց: Նա խալիֆից և սելջուկ սուլթանից հրովարտակ ստացավ, որը նրան էր չնորհում իր գրաված վայրերը: Երբ նա վերադարձավ, տեսավ, որ սելջուկները տիրում են այդ վայրերին: Նա գնաց Մարաշ, որտեղ և մեռավ: Ասում են, մահից առաջ նա նորից քրիստոնյա է դարձել»[1]:

Ձնայած Փիլարտոսի ու Մելիքշահի փոխհարաբերության վերաբերյալ այս պատմիչների տեղեկությունների տարբերությանը, նրանց ցուցմունքները՝ Փիլարտոսի ձեռնարկման անհաջողության մասին, համընկնում են:

Հայաստանի սահմաններից մինչև Անտիոք ընդարձակ մի տերություն ստեղծելու Փիլարտոսի փորձը հաջողություն չունեցավ: Այլ կերպ չէր կարող լինել ստեղծված այն դրության պայմաններում, 80-ական թվականներին, երբ Սիրիա ներխուժեցին սելջուկները, և Մելիքշահն ինքը խառնվեց սելջուկների նվաճած տարածքի բաժանման համար մղվող պայքարին, մի տարածք, որը ձգվում էր Իրանից մինչև Միջերկրական ծով, դևպի ուր ելք ունենալուն նա մեծ նշանակություն էր տալիս, ինչի մասին վկայում է Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ. «Եւ յայսմ ամի (1086) տիրեաց սուլտանն ամենայն աշխարհին Հայոց և Հոռոմոց և գայր հասանէր ի մեծ քաղաքն Անտիոք և տիրանայր այնմ աշխարհին Հալապայ, և տիրելով տիրեաց Կաղրիականէն մինչև ի յՈվկիանոս... յետ տիրանալոյն Անտիոքու՝ իջեալ յեղեր յՈվկիանոս ծովուն ի տեղին, որ կոչի Սևոտի, և տեսեալ սուլտանին զծովն մեծ՝ զոհանայր և օրհնէր զաստուած, և ձիով իւրով մտեալ կոխեր զՈվկիանոս, և ևհան զթուրն իւր և ասաց, եթէ «Ահա տիրել երևետ ինձ աստուած է ծովէն Պարսից մինչև ի ծովս այս...»[2]:

Այսպիսի հանգամանքներում Փիլարտոսը չէր կարող պահել իր նվաճած տարածքը: Այնուամենայնիվ, այս փորձն ինքնին և Փիլարտոսի նախնական հաջողությունը վկայում են հայ բնակչության ուժեղացման մասին Փոքր Ասիայի հարավային մարզերում (Կապադովկիա, Կիլիկիա), Միջագետքում ու Սիրիայում:

Սակայն Փիլարտոսի ստեղծածը միանգամից չփլվեց: Եվ այդ վաղանցիկ պետության անկումից հետո դրա տարածքի վրա XI դարի վերջին ու XII դարի սկզբին չարունակում էին գոյություն ունենալ մի

[1] *Chronique de Michel le Syrien, t. III, p. 173.*

[2] **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 234–235:*

չարք հայկական մանր իշխանություններ, որոնք ոչնչացվեցին խաչակիրների կողմից[1]: Դրանցից մեկն էր Եղեսիայի իշխանապետությունը:

Եղեսիա մեծ քաղաքում, որը գտնվում էր Եփրատի ափին, առևտրական ճանապարհների խաչուղու վրա, շատ ու շատ հայեր էին ապրում՝ արհեստավորներ ու վաճառականներ: Լինելով արհեստագործական արդյունաբերության և քարավանային առևտրի կենտրոն՝ Եղեսիան խիտ հարստացավ և XI–XII դարերում զանազան նվաճողների համար պայթարի առարկա ու համեղ պատառ էր հանդիսանում:

XI դարի 80-ական թվերին Եղեսիան, Միքայել Ասորու վկայությամբ, պատկանում էր Փիլարտոսին[2], որը, ըստ երևույթին, քաղաքի կառավարիչ էր նշանակել Թեոդորոսին (Թորոսին): 1094 թ. Թորոսը Դուկի կողմից Եղեսիայի կառավարիչ հաստատվեց և շատ ջանքեր ներդրեց քաղաքի ամրապնդման վրա, որպեսզի այն պաշտպաններ հարևաններից՝ մուսուլման էմիրներից[3]: Այսպես էր վիճակը մինչև խաչակիրների գալը:

Բալդուինը, Կիլիկիայում գրավելով Տարսոնը, հայ իշխան Բագրատի խորհրդով արշավեց դեպի հյուսիսարևելյան Սիրիա՝ Եփրատի ուղղությամբ, և հայ բնակչության աջակցությամբ տիրեց Թել-Բաշիրին (Տուրբեսել), Ռավենդանին (Ռավենել) և ուրիշ չատ բնակավայրերի: Խաչակրաց արշավանքների արևմտյան տարեգիրները նշում են հայերի խիտ մեծ դերը Սիրիայում և Միջագետքում Բալդուինի հաջողության մեջ: Վիլհելմ Տյուրացին գրում է. «Բագրատի առաջնորդությամբ նա [Բալդուինը] մտավ ամենաբերքառատ մի երկիր, որը բնակեցված էր քրիստոնյաներով, որոնք դժգոհ լինելով անհավատների իշխանությունից՝ նրան էին հանձնում ամրությունները, այնպես որ մի քանի օրվա ընթացքում նա հասավ մեծ գետին՝ Եփրատին, նվաճելով ամբողջ երկիրը»[4]:

Այսպիսով, միայն հենվելով հայ բնակչության վրա ու նրա օգնությամբ գրավելով Կիլիկիայից Եղեսիա ընկած ճանապարհի հենակետերը և ուժեղ ամրացված բերդերը, ինչի մասին վկայում են արևմտյան մյուս աղբյուրները ևս, ինչպես և՝ հայկականները, Բալդուինը կարող էր իր արշավանքը կատարել դեպի Եղեսիա ու տիրել այն, անցնելով նախկին տիրոջ՝ հայ իշխան Թորոսի դիակի վրայով:

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 260–333:*

[2] *Տե՛ս Chronique de Michel le Syrien, t. III, p. 139:*

[3] *Տե՛ս* **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 248:*

[4] *Historie occid, t. I, p. 153.*

Եղեսիայի կառավարիչ Թորոսն իմանալով Բալդուինի կողմից Թել-Բաշիրի գրավման մասին՝ նրան հրավիրում է իր մոտ, որպեսզի համատեղ ուժերով նվաճեն Սամոսատը: Թորոսը Բալդուինին հանդիսավոր կերպով որդեգրում է, ինչի մասին պատմում են խաչակրաց արշավանքի ժամանակագիրները, Գվիբերտ Նոժանացին և ուրիշներ[1]: Սակայն Սամոսատի ճակատամարտից հետո դավ է նյութվել Թորոսի դեմ, որին մասնակցել է Բալդուինը:

Գերմանացի պատմաբան Կուգլերն ասում է, թե «կոմսի մասնակցությունն այդ մարդասպանությանը ապացուցել չի կարելի»[2]: Ֆրանսիացի պատմաբան Գրուսսեն ձգտում է մեղմել Բալդուինի հանցանքը՝ պնդելով, թե Թորոսի դեմ նյութված դավադրության նախաձեռնությունն ու նրա սպանությունը քաղաքացիների ձեռքի գործն է, բայց Գրուսսեն ստիպված է խոստովանել, որ Բալդուինի վարքագիծը այդ սպանության ժամանակ կասկածելի է եղել. պետք էր ասել ոչ թե կասկածելի, այլ՝ բացահայտ ուխտադրուժ, ինչպես վկայում են հայ պատմիչ Մատթեոս Ուռհայեցին, նաև Ալբերտ Աախենացին և արևմտյան այլ հեղինակներ:

Մատթեոս Ուռհայեցին՝ դեպքերի ականատեսը, ասում է. «Իսկ յորժամ եկն կոմս Պաղտինն ի յՈւռհա, յայնժամ յարեան արք եննգաւորք և չարախորհուրդք և արարին միաբանութիւն ընդ կոմսն, վասն զի սպանցեն զԹորոս կուրապաղատն»[3]: Ահա թե նա ինչպես է չարադրում այդ իրադարձության մանրամասները. «Իսկ յայսմ աւուրս արք քառասունք եղեն միաբանեալ ի խորհուրդն Յուդայի և ի գիչերի գնացին առ կոմսն Պաղտինն, այն, որ էր եղբայր Կոնղևփրէի կոմսին, և միաբանեցին զնա ի չար խորհուրդս իւրեանց և խոստացան տալ զՈւռհա ի ձեռս նորա, և նա հաւանեցաւ չար խորհրդոց նոցա»[4]:

1098 թ. մարտի 8-ին դավադիրները գրավել են քաղաքի ամրություններից մեկը, որտեղ Թորոսի տունն էր, և կողոպտել են: Թորոսն ամրացել է միջնաբերդում: Նա բանակցությունների մեջ է մտել իր Հչնամիների հետ և խոստացել միջնաբերդը հանձնել նրանց ու քաղաքն էլ տալ, եթե նրանք երդվեն, որ իրեն չարիք չեն պատճառի և թույլ կտան, որ ինքն իր ընտանիքով հեռանա Մելիտինե: Բալդուինը և դավադիրները հանդիսավորապես երդվել են: Երբ Թորոսը դար-

[1] *Տե՛ս Historie occiden taus t. III, p. 165:*

[2] **Куглер,** *История крестовых походов, с. 417.*

[3] *Տե՛ս* **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 261–262:*

[4] *Նույն տեղում:*

պասը բաց է արել, նրանք ներխուժել են բերդը և նրան սպանել[1]: Այրերտ Ասենացին հաստատում է Մատթեոս Ուռհայեցու հաղորդածի իսկությունը: Ըստ նրա պատմածի Թորոսը վտանգ զգալով իր կյանքի համար՝ համաձայն է եղել հրաժարվել քաղաքից և աղերսել է Բալդուինին, որ իրեն թույլ տա մեկնել Մելիտինե: Բալդուինը խոստացել է պաշտպանել նրան դավադիրներից այն պայմանով, որ նա տա իր թաքցրած գանձերը: Դրանք ստանալուց հետո Բալդուինը չի պահել իր խոսքը և դավադիրներին թույլ է տվել, որ սպանեն Թորոսին[2]:

Եվ այսպես, խաչակիրների առաջին իշխանապետությունը Արևելքում՝ Եդեսիայի կոմսությունը, ծագեց ի հետևանք խաչակիրների ուխտադրժության:

XI դարի 80-ականների կեսին Հյուսիսարևմտյան Միջագետքում, Ներաոյալ և Կիլիկիայի մի մասը, Հայ իշխան Վասիլը (մականունը՝ Գող) հիմնադրեց բավականին խոշոր մի ավատական իշխանապետություն, որի կենտրոնը Քեսունն էր: Դրա սահմանների մեջ էին մտնում նաև Ռաբանը, Հռոմկլան, Մարաշը և այլ բնակավայրեր: Սկզբնաղբյուրներից երևում է, որ Վասիլը մինչ այդ եղել է Փիլարտոսի վասալը և նրա անունից տիրել է Քեսունին ու Ռաբանին[3]: Հետագայում Փիլարտոսից Վասիլին է անցել նաև Մարաշը[4]:

Գող Վասիլը մեծ հեղինակություն է ունեցել հայ ազնվականության շրջանում: Մատթեոս Ուռհայեցու ասելով. «առ նա էին ժողովեալք մնացեալ զօրքն հայոց և ամենայն ազգն Բագրատունեացն և Պահլաւունեացն հանդերձ ազատագունդ զօրօքն հայոց առ նա կային հանգուցեալ մեծաւ փառաւորութեամբ, և աթոռ հայրապետութեանն հայոց առ նա եղաւ, վասն զի տիրեալ էր բազում գաւառաց...»[5]: Այսպիսով, երևում է, որ նա հենվել է հայ իշխանական զորքի մնացորդների վրա, որոնք այստեղ էին գաղթել Բագրատունիների անկումից հետո: 1107 թ. և հաջորդ տարիներին նա մի քանի անգամ ետ մղեց Իկոնիայի սելջուկների ներխուժումները, որոնք Տավրոսի և Կիլիկիայի կապաններից խուժում էին նրա իշխանապետությունը[6]: Վասիլը սերտ հարաբերությունների մեջ էր խաչակիրների հետ: Հայտնի է, որ

[1] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 262:

[2] Տե՛ս Historie occiden taus, t. I, p. 355:

[3] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 76:

[4] Նույն տեղում:

[5] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 323–324:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 305–306:

նա, վիթխարի գումար վճարելով Դանիշմենդին[1], գերությունից ազատել է Անտիոքի իշխան Բոհեմունդին: Վերջինիս Եվրոպա մեկնելուց հետո Վասիլը կապ էր պահպանում նրա ազգական ու ժառանգորդ Տանկրեդի հետ, միասին կռվի նվնելով մուսուլմանների դեմ, իսկ երբեմն էլ նաև բախվելով նրա հետ[2]:

Գող Վասիլից հետո, որը մահացավ 1112 թ., նրա տիրույթն անցավ Վասիլ Տղային՝ Կամսարական տոհմից, որին նա որդեգրել ու պահել էր: Եդեսիայի կոմս Բալդուին Բուրժեցին մի քանի անգամ անհաջող կերպով հարձակվեց նրա տերության վրա: Վերջապես, Վասիլ իշխանին դավադրաբար բռնեցին ու հանձնեցին Բալդուինին, որը նրան տանջեց այնքան, մինչև որ նա հրաժարվեց իր տարածքի նկատմամբ ունեցած իրավունքից: Ազատ արձակվելով՝ նա մեկնեց Կոստանդնուպոլիս և բարյացակամորեն ընդունվեց Ալեքսիոս կայսեր կողմից: Խաչակիրներն այսպես կործանեցին ուժեղ իշխանապետություններից մեկը, որը սահմանակից էր Կիլիկիայի Ռուբինյանների իշխանապետությանը:

Գող Վասիլի եղբայր Բագրատը, Պանկրաս անվամբ, լավ հայտնի է եղել խաչակրաց արշավանքների արևմտյան տարեգիրներին, քանի որ նա մոտիկից մասնակցություն է ունեցել խաչակիրների շատ ձեռնարկումներին: Արդեն նշվել է, որ նա եղել է Բալդուինի խորհրդականն ու յուրատեսակ ուղեցույցը և շատ է օգնել գրավելու Եդեսիայի ճանապարհին գտնվող ռազմավարական կետերը: Բալդուինը նրան է տվել Ռավենդանը: Սակայն չուտով նա ուխտադրժորեն բռնել է Բագրատին, բանտարկել ու տանջել այնքան, մինչև որ նա ցուցում է տվել իր որդուն, որ Ռավենդանը Բալդուինին հանձնի[3]:

Բալդուինի հետ ընդհարվելուց հետո Բագրատն օգնել է Բոհեմունդին և Տանկրեդին: 1111 թվին հայ մյուս իշխանների հետ, որոնց մեջ եղել են Լևոն և Թորոս Ռուբինյանները, նա Տանկրեդ իշխանին օգնել է ընդդեմ սելջուկների[4]:

Հավանաբար, իր եղբայր Գող Վասիլի օգնությամբ Բագրատը տիրակալն է դարձել Գուրիսի՝ Հալեպից հյուսիս գտնվող լավ ամրացված այդ քաղաքի, բայց Բալդուին Բուրժեցին նրա ձեռքից այս տիրույթն էլ է խլել: Բալդուինը, ասում է Մատթեոս Ուռհայեցին. «աւարեաց և զմիւս իշխանն հայոց զԲագրատ զայր քաջ և յափշտակեաց

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 294:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 323:

[3] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 36:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 37:

դամեննայն գաւառն նորա, որ բնակեալ էր յԱրևելնդան մերձ ի Կուբիս...»[1]:

Մատթեոս Ուռհայեցին տալիս է Բալդուին Բուրժեցու արյունոտ գործերի վառ նկարագիրը: Սիրիայի և Միջագետքի հայ չատ իշխաններ նրա ոխերիմության ու ազրևսիայի զոհերն են դարձել: 1110 թվին, երբ Մոսուլի էմիր Մաուդուդը սպառնում էր Եդեսիային, Քեսունի իշխան Վասիլն ու Բիրի (բերդ՝ Եփրատի ափին) տեր Ապլղարիպը օգնության հասան Եդեսիայի իշխան Բալդուինին: Սակայն վեց-յոթ տարի անց Գող Վասիլի ժառանգորդ Վասիլ Տղան, ինչպես և Ապլղարիպն ու Սիրիայի այլ հայ իշխանները հարձակման ենթարկվեցին Եդեսիայի կոմս Բալդուինից և զրկվեցին իրենց տիրույթներից[2]:

Ապլղարիպը Պահլավունիների տոհմից էր: Նա Վասիլի որդին էր, Անտիոքի կառավարչի, որը հույների ձեռքով սպանվել էր 1078 թվին: Իր եղբայր Լիկոսի հետ, հրամանատարության տակ ունենալով մոտ հազար հայ, նա մուսուլմաններից խլեց Եփրատամերձ մի չարք բնակավայրեր: Բիր ամուր բերդը դարձավ Ապլղարիպի նստավայրը: Բալդուինը 1117 թ. մոտ մեկ տարի պաշարել էր Բիրը: Սովը Ապլղարիպին ստիպեց նրան հանձնել այդ ամրացված քաղաքն իր չրջակայքով և տեղափոխվել Կիլիկիա՝ իշխան Թորոսի մոտ[3]: *Բալդուինը զավթեց նաև մյուս հայ իշխանի՝ Գարգար ամրացված քաղաքի տեր Կոստանդինի տիրույթը, նրան մահու չափ տանջելով Սամոսատի ամրոցում*[4]: *«... և այսպիսի օրինակաւս,— գրում է պատմիչը,— հալածանս արար դիշխանսն հայոց... զայն, որ մնացեալ էին ի կատաղի ազգէն Թուրքաց»*[5]:

Բալդուին Բուրժացու և ընդհանրապես խաչակիրների գործունեության բնութագիրը լրիվ տալու համար բերենք Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունից» հետևյալ զայրագին տողերը. Բալդուինը «... և այլ բազում և գեղեցիկ իշխանք ի բանտ և ի չարչարանս և ի կապանս մեռուցանէր. և բազումք այն էին, որոց զաչսն խաւարեցուցեալ էին, զձեռն կտրեալ և զունչսն հատեալ: Հատանէին զերանսն և ի վայտ հաննալ սպանանէին զտղայսն անմեղսն վասն ծնողացն խրատեալ հրամայէին: Եւ այսպիսի գործս անթուելի և անպատմելի, զի հանապազ վասն գանձի առնելոյ անիրաւաբար

[1] ***Մատթեոս Ուռհայեցի,*** *Ժամանակագրություն, էջ 338:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Նույն տեղում:*

չարչարանօք յաւեր և յապականութիւն դարձուցին զերկիր, և յամենայն ժամ պարապեալ կային և այլ ոչինչ առնէին, բայց միայն նստեալ խորհէին, զչարութիւն, զհիլա և զամենայն ճանապարհս չարեաց սիրէին, բարեաց և ամենայն երախտեաց մոռացողք: Զբազում անիրաւութիւնս նոցա կամի գրել, բայց ոչ համարձակեցաք, զի ընդ իշխանութեամբ նոցա էաք»[1]: *Ականատես պատմիչի այս տրտունջները հատկանշական են հայերի և խաչակիրների փոխհարաբերությունը հասկանալու համար:*

Այսպիսով, Միջագետքի ու Սիրիայի հայկական բոլոր իշխանապետությունները կործանվել են խաչակիրների ձեռքով: Այնուամենայնիվ, հայկական իշխանապետություններից մեկը՝ Կիլիկիայի Ռուբինյանների իշխանապետությունը կենսունակ դուրս եկավ՝ դիմանալով Բյուզանդիայի, սելջուկների ու խաչակիրների դեմ հանուն գոյատևման իր մղած պայքարում:

[1] ***Մատթեոս Ուռհայեցի,*** *Ժամանակագրություն, էջ 339:*

ԳԼՈՒԽ ՀՈՐՐՈՐԴ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՅՔԱՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ XII ԴԱՐՈՒՄ

Կիլիկիայում հայկական Ռուբինյան իշխանապետության ծագումը: Կիլիկիայի հայերի փոխհարաբերությունը խաչակիրների, սելջուկների և Բյուզանդիայի հետ XI դարի վերջին և XII դարի սկզբին: Դաշտային Կիլիկիայի համար հայերի հաջող պայքարի ավարտը Լևոն I-ի օրոք (1129–1137): Հովհան Կոմնենոսի արշավանքը և Կիլիկիայի նվաճումը բյուզանդացիների կողմից: Թորոս II (1145–1169): Կիլիկիայի հայկական իշխանապետության վերականգնումը: Մանուիլ Կոմնենոսի արշավանքը դեպի Կիլիկիա: Կիլիկիայի հայկական իշխանապետության միջազգային դրության կայունացումը XII դարի 60-ական թվականներին: Կիլիկիայից բյուզանդացիների վերջնական արտաքսումը: Անտիոքի իշխանապետության կողմից Դաշտային Կիլիկիան զավթելու անհաջող փորձը: Ամբողջ Կիլիկիայի միավորումը Ռուբինյանների իշխանության ներքո: XII դարում Կիլիկիայի հայկական պետության ռազմաքաղաքական հաջողությունների պատճառները: XII դարի հայ գրողների վերաբերմունքը սելջուկների, խաչակիրների և Բյուզանդիայի նկատմամբ:

1080–1226 թթ. Կիլիկիայում տիրապետող Ռուբինյանների դինաստիայի հիմնադիր Ռուբեն իշխանի ծագման ու գործունեության մասին XII–XIII դարերի հայ պատմիչների տեղեկությունները հակասական են:

Սամուել Անեցու «Ժամանակագրության» տվյալների համաձայն Անիի իշխան Ռուբենը Անիի Բագրատունիներից[1] էր: Սամուել Անեցու «Ժամանակագրության» նախնական բնագիրը կազմված է եղել XII դարի երրորդ քառորդում: Հաջորդ ժամանակներում այդ «Ժամանակագրության» մեջ մտցվել են չատ ընդմիջարկություններ, այնպես

[1] ***Սամուէլի Անեցւոյ*** *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղ., 1893, էջ 117:*

որ դրա այժմյան տպագիր տեքստը մեծ քանակությամբ ընդմիջարկություններ ունի: Այդ «Ժամանակագրության» ամենահին՝ 1176 թ. ձեռագրում, որը գերծ է հետագա որևէ ընդմիջարկությունից, չկան վերոհիշյալ տողերը Բագրատունիների[1] արքայական տան Ռուբինյանների դինաստիայի հիմնադրի պատկանելու մասին:

XIII դարի գրող Կիրակոս Գանձակեցին պնդում է, թե Ռուբենն իշխանը Գագիկ Արծրունու[2] ազգականն է եղել: Սակայն նրա մի քանի ձեռագրերի Ռուբենը Գագիկ Արծրունու ազգականն է, ապա ըստ մյուսների համարվում է «յազգականութենէ և ի զօրացն Գագկայ»[3]:

Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն տպագիր տեքստում ասվում է, թե Ռուբինյանները ծագում էին երկու՝ ազգակցությամբ իրար կապված արքայական տոհմերից՝ Բագրատունիներից և Արծրունիներից[4], բայց ասորերեն բնագրում[5] և հայերեն թարգմանության վաղ օրինակների մեջ այդ տեղը բացակայում է[6]:

Պատմիչների հակասական տեղեկությունները և նշված ընդմիջարկությունները վկայում են Ռուբեն իշխանին թագավորական ծագում վերագրելու միտումի մասին: Դրանում կարելի է տեսնել պատմիչների ու գրիչների ձգտումը՝ բարձրացնել Ռուբինյանների տոհմը և հիմնավորել նրանց թագավորական իշխանության օրինական ժառանգորդությունը՝ Ռուբինյաններին ազգակցական կապերով կապելով Հայաստանի նախկին արքայատների՝ Բագրատունիների և Արծրունիների հետ:

Մատթեոս Ուռհայեցին՝ XI դարի վերջի և XII դարի սկզբի հայ պատմիչը, Ռուբինյանների հայկական իշխանապետության ծագման ժամանակակիցը, պատմելով այն մասին, թե ինչպես Ռուբենի թոռ Թորոսը վրեժխնդիր եղավ Գագիկ թագավորին սպանողներից, այդ արարքը բացատրում է նրանով, որ «Ռուբէն ի զօրացն Գագկայ էր»[7]: Պատմիչ Սմբատը Ռուբենին համարում է Գագիկի իշխաններից մեկը[8]:

[1] *Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1898:*

[2] *Տե՛ս* ***Կիրակոսի Գանձակեցւոյ*** *Պատմութիւն Հայոց, 1909, Թ., էջ 101:*

[3] *Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 3519, էջ 60:*

[4] *Տե՛ս* ***Մխիթար Այրիվանեցի,*** *Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 411:*

[5] *Chronique de Michel le Syrien, tr. Chabot, Paris, 1899–1905.*

[6] *Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1898:*

[7] ***Մատթեոս Ուռհայեցի,*** *Ժամանակագրութիւն, էջ 321:*

[8] *Տե՛ս* ***Սմբատայ Սպարապետի*** *Պատմութիւն, էջ 77:*

Այսպիսով, Ռուբենը, ըստ Լևոն Բ-ին, եղել է Գագիկ Բագրատունի թագավորի ոչ թե ազգականը, այլ նրա զորականներից մեկը, նրա վասալ իշխաններից մեկը: Ռուբենի գործունեության մասին հայ պատմիչների վկայությունները նույնպես հակասական են: Կիրակոս Գանձակեցու մոտ կա առասպելական մի պատմություն, թե Ռուբենը նախա ժամանակ իր ազգական Գագիկի սպանության պահին նրա մոտ է եղել: Հետո նա փրկվել է մի վաճառականի ձեռքով և դաստիարակվել նրա մոտ: Հասունանալով, նա խորամանկությամբ տիրել է Բարձրբերդին, որը հույն եպիսկոպոսի իշխանությանն է պատկանել[1]: Եթե ենթադրենք, թե Ռուբենը Գագիկ Թագավորի սպանության ժամանակ (1079) եղել է 5–10 տարեկան, ապա դուրս է գալիս, որ վերոհիշյալ բերդի գրավումը տեղի է ունեցել XI դարի վերջին կամ XII դարի սկզբին, ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Կիլիկիայի հայկական իշխանապետությունը ծագել է ավելի վաղ՝ մոտ 1080 թվին, Գագիկ II-ի մահից քիչ անց:

Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ XII դարի սկզբի Սիրիայի և Կիլիկիայի հայկական իշխանությունների մասին ասված է հետևյալը. «Եւ յայնմ ժամանակի կային գլխաւոր իշխանք ի Հայոց՝ Վասիլն, որ ի ժամանակին Փիլարտոսին ունէր զՔեսուն և զՌապան, և ոմանք ի Կիլիկիա, որք կոչին որդիք Ռոբինայ, ի Փիլարտոսէ իշխանացեալ ի տեղիս տեղիս, որք առաքեցին և տարան զկաթողիկոսն Հայոց ի Կիլիկիա»[2]:

Ա. Ալպոյաճյանը Միքայել Ասորու «Ժամանակագրության» այս վկայության հիման վրա եզրակացնում է, թե հենց Փիլարտոսն է ապահովել Ռուբենի հայկական իշխանապետության գոյությունը, և նույնիսկ պնդում է, թե Ռուբենին «Անդիտավրոսի բարձունքներուն վրա կանգնեցուցած էր Փիլարտոս»[3]՝ իր արևմտյան սահմանի պաշտպանության համար: Այս եզրակացությունը ոչ մի փաստով չի հիմնավորված: Նույնիսկ հենվելով հենց իր՝ Ալպոյաճյանի բերած տվյալների վրա, չի կարելի վերոհիշյալ եզրակացությունն ու պնդումն անել: Իսկ եթե դիմենք Միքայել Ասորու «Ժամանակագրության» ոչ թե հայերեն թարգմանությանը, այլ Շաբոյի հրապարակած ասորերեն բնագրին, ապա ակնհայտ կդառնա Ալպոյաճյանի պնդման անհիմն լինելը:

Բերենք «Ժամանակագրությունից» այն տեղը, որտեղ հիշատակվում է Ռուբինյանների մասին. «Այդ դարաշրջանում (XII դարի սկիզբ – Գ. Մ.) կային հայեր, որոնք Փիլարտոսի ժամանակներից (XI դարի 80-ական թվականներին – Գ. Մ.) գրաղեցնում էին մի քանի վայրեր: Նրանցից մեկը Գող Վասիլն էր, որը տիրում էր Քեսունին ու Ռաբանին: Կային նաև հայեր, որոնք տիրում էին Կիլիկիայի մի քանի վայրերի: Նրանց անվանում էին Ռուբինյաններ»[1]: Եթե ասորական բնագրի այս տողերը համեմատենք հայերեն թարգմանության վերոհիշյալ քաղվածքի հետ, որի հիման վրա Ալպոյաճյանը եզրակացնում է, թե Ռուբենը Կիլիկիայի իշխանությունն ստացել է Փիլարտոսից, ապա կտեսնենք, որ բնագրում բացակայում են այն բառերը, որոնք մատնանշում են, թե Ռուբինյանները (առավել ևս Ռուբենը) Փիլարտոսից որևէ տարածք են ստացել Կիլիկիայում:

Ալպոյաճյանը ծանոթ է Միքայել Ասորու «Ժամանակագրության» Շաբոյի հրատարակությանը և երբեմն օգտվում է դրանից, բայց Ռուբինյանների ծագման հարցը քննելիս նա զևկավարվում է հայերեն թարգմանությամբ, որը կատարված է XIII դարում, և չգիտես ինչու չի նկատել կամ եթե նկատել է, ապա չի նշել հայերեն և ասորերեն տեքստերի միջև եղած տարբերությունը: Հետաքրքիր է, որ Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն առավել հին ձեռագրերից մեկում նույնպես, ինչպես բնագրում, բացակայում է այն տեղը, ուր ասված է, թե Ռուբենը Փիլարտոսից ստացել է մի քանի վայրեր Կիլիկիայում: Կան նաև այլ տվյալներ, որոնք հաստատում են, որ Փիլարտոսի ու Ռուբենի միջև կապեր չեն եղել:

Ռուբինյանների կողմից Կիլիկիայի նվաճման մասին Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ ասվում է. «Ընդ այն ժամանակս (մոտ 1080 թ., երբ Թուրք սելջուկները գրավեցին Փոքր Ասիայի կենտրոնական մարզերը – Գ. Մ.) արքայազնին հայոց, որ յաւուրս Վասլի կայսեր եկեալ էին և ի վասպուրականէ և բնակեալ ի Սեւաստ և ի կեսարիա և ի Խաւարտանէքն, և բռնացեալ ունէին զբազում տեղիս, մտին երկիրն կիլիկեցւոց: Ոմանք ի նոցանէ Ռոբինեանք կոչեցեալք, որք էին յերկուց մեծամեծաց զարմից, հայկազունք և Սենեքարիմեանք խնամութեամբ խառնեալ ընդ միմեանս, որք թագաւորեցին ի Վասպուրական... և այժմ սկսան տիրել երկրին կիլիկեցւոց. թագաւորեալ արիական քաջութեամբ Ռոբեն նախ և Կոստանդին և Լեւոն և Թորոս և այլքն մի ըստ միոջէ»[2]: Սակայն այս «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մի այլ տեղում այդ իրադարձության մասին պատմվում է մի քիչ այլ կերպ. «Հայոց

[1] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 95:

[2] **Միքայէլ Ասորի,** Ժամանակագրութիւն, էջ 406:

[3] **Ա. Ալպոյաճեան,** Պատմութիւն հայ կեսարիոյ, Գ., 1937, էջ 476:

[1] Chronique de Michel le Syrien, ed. et trad. par Chabot, p., 1905, t. III, p. 187.

[2] **Միքայէլ Ասորի,** Ժամանակագրութիւն, էջ 411:

արք թուով յիսուն և բնակէին յանապատս և ծեծէին զթուրքն... և Նկին յերկիրն Մարաշայ, և գտին անդ այր մի հայ ազգաւ Փիլարտոս անուն, այր անձնեայ և զգեցիկ, և եղեւ նոցա գլուխ և մտին յերկիրն Կիլիկիոյ, և տիրեալ էր թուրքն երկրին, և առին ի նոցանէ բերդ մի և ամրացան ի նմա. և անտի առին զամենայն երկիրն քաղաքօք և բերդօք, և առին չուրջանակի Կիլիկիոյ աշխարհս բազումս, զՄարաշ, զՔեսուն, զԱպլսթայն և զՄլտենի և զՈւռհա՝ յայնկոյս Եփրատայ, և զայլս բազումս»[1]: Այս տեղեկութիւնը կա և՛ ասորական բնագրում, և՛ հայերեն թարգմանութեան վաղ շրջանի ձեռագրերում: Այս վկայութիւնը մենք գտնում ենք նաև Կիրակոս Գանձակեցու մոտ, որն անկասկած օգտագործել է «Ժամանակագրութեան» վերոհիշյալ տեղը, բայց ավելացնելով, թե Կիլիկիա եկած 50 հայերի մեջ էին Ռուբինյան արքայազունները:

Միքայել Ասորու «Ժամանակագրութեան» հայերեն թարգմանութեան և Կիրակոս Գանձակեցու «Պատմութեան» տեքստերի այս ընդմիջարկութիւնները նույնպես խոսում են այն բանի օգտին, որ մի կողմից՝ Ռուբենի կամ Ռուբինյանների, մյուս կողմից՝ Փիլարտոսի միջև չի եղել որևէ կապ կամ համատեղ գործողություն: Մատթեոս Ուռհայեցին, որպես իրադարձությունների ժամանակակից և ականատես, մյուս Հեղինակներից ավելի մանրամասն է խոսում Փիլարտոսի մասին, բայց նա նույնպես, ինչպես և Միքայել Ասորին կամ մյուս պատմիչները, ոչինչ չեն ասում Փիլարտոսի և Ռուբենի որևէ համատեղ գործունեության մասին:

Մի այլ տեղում Միքայել Ասորին մեկ անգամ միայն հիշատակում է Ռուբենին: Բերենք այդ քաղվածքը. «Երբ թուրքերը Խորասանից դուրս եկան և տարածվեցին այս երկրներում (Փոքր Ասիայում, Սիրիայում – Գ. Մ.), հույները սաստիկ թուլացան, և նրանց իշխանութիւնը դադարեց գոյութիւն ունենալուց, մանավանդ Սիրիայում, Կապադովկիայում և Հայաստանում: Այնժամ մի քանի հայեր մտան անմատչելի լեռներում գտնվող պաշտպանված բնակավայրերը և ամրացան այնտեղ: Կիլիկիայի լեռներում երկու եղբայրներ կային՝ Ռուբենի որդի Կոստանդինի որդիները»[2]: Այստեղ նույնպես ոչինչ չի ասված Ռուբենի գործունեության մասին: Մատնանշվում է միայն, որ նա եղել է Կոստանդինի հայրը, որի որդիներն ամրացել են Կիլիկիայի լեռներում: Սրանով էլ սահմանափակվում է Միքայել Ասորու տեղեկութիւնը Ռուբենի մասին:

[1] **Միքայէլ Ասորի,** *Ժամանակագրութիւն, էջ 399:*

[2] *Chronique de Michel le Syrien, t. III, p. 198.*

Եթե գտնենք առավել վաղ սկզբնաղբյուրին՝ Մատթեոս Ուռհայեցու՝ Կիլիկիայի հայկական իշխանապետության ծագման ժամանակակից «Ժամանակագրութեանը», ապա կտեսնենք, որ Ռուբեն իշխանի գործունեության մասին այս սկզբնաղբյուրում էլ ոչինչ չի ասվում: Ռուբենի անունը հիշատակվում է Մատթեոսի «Ժամանակագրության» մեջ մի քանի անգամ, բայց ամեն անգամ այդ իշխանի անունը տրվում է միայն նրա որդի Կոստանդինի և թոռներ Թորոսի ու Լևոնի գործունեության հետ կապված[1]:

Սակայն եթե XII դարի հեղինակների մոտ տեղեկություններ չկան Ռուբենի գործունեության մասին, ապա XIII դարի ժամանակագրություններում նկարագրվում է նրա գործունեությունը, նրա պայքարը Բյուզանդիայի դեմ, որի հետևանքով ծագեց հայկական իշխանապետությունը Կիլիկիայում: Եթե Ռուբենի ծագման մասին տվյալները հակասական են, ապա նրա գործունեության մասին տեղեկությունները ընդհանուր առմամբ նման են:

Սամուել Անեցու «Ժամանակագրության» նախնական տեքստում՝ 1176 թվի ձեռագրում, Ռուբենի գործունեության մասին տվյալներ չկան[2]: Բայց այդ «Ժամանակագրության» XIII դ. սկզբի ձեռագրում ասվում է, որ Անիի թագավոր Գագիկ Բագրատունու սպանությունից հետո «իշխանքն հայոց և ամենայն զօրք նոցա լքան և յամենայն տեղիս ցրուեցան, յորոց իշխան մի արենառու Գագկայ՝ Ռուբեն անուն, որ կալեալ ուներ գԿօսխտառայ (Կոպիտա՞ռ) բերդն: Յորժամ լուաւ զմահն Գագկայ, հարուցեալ ամենայն զարմօք իւրովք և նկն ի կողմանս Փռիւգիոյ՝ դիմելով ի գիւղ մի Կօլիմօզօլօ անուն, և անդ բնակեալ բազումք յազգէն հայոց, զորս զամենեսեան գնոսա առ ինքն կալեալ մնծն Ռուբէն և նոքօք զօրացեալ էառ զլեռնային կողմանսն՝ զՀոռոմսն անտի ի բաց մերժեալ և գնոցա տեղիան առեալ: Եւ Հ (70) ամաց լեալ բարեպաշտ կենօք վերափոխեցաւ առ Քրիստոս, և թաղեցաւ ի սուրբ ուխտն Կաստաղոն՝ թողեալ զիշխանութիւն յիւր հարատատ որդին ի Կոստանդին, որ և տիրեաց հռչակաւոր բերդին, որ Վահկայ կոչի...»[3]: Այս նույն վարկածը կա Վահրամ Ռաբունու «Ժամանակագրության» և Սմբատ Գունդստաբլի «Պատմության» մեջ:

Ըստ Դյուլորիեի Կոլիմոզոլոն կամ Կորոմոզոլը գտնվում էր Տավրոսի լեռներում՝ Զեյթունի մարզում[4]: Կոպիտառ կամ Կորիդար բերդի ճշգրիտ տեղը անհայտ է, բայց անտարակույս, այդ տեղամասը

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 298, 306, 318–321:*

[2] *Տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 930:*

[3] **Սամուէլի Անեցւոյ** *Հաւաքմունք ի գրոց, Վ., 1893, էջ 116:*

[4] *Տե՛ս Documents arméniens, t. I, p. 818:*

գտնվելիս է եղել Տավրոսի լեռնաշղթայի վրա, հավանաբար այն լեռնանցքի մոտ, որը հայտնի է Դրունք Կիլիկիո անունով, այսինքն՝ Կիլիկիան Կապադովկիայի հետ կապող լեռնանցքը: Ալիշանը Կոպիտառը նույնացնում է Կոլիդառի հետ՝ Տավրոսի լեռնաշղթայով անցնող քարավանային ճանապարհի սահմանամերձ ավանի հետ[1]:

Կասկած չկա, որ Կոպիտառի բերդը մտնում էր Կիլիկիայի հայկական թագավորության սահմանների մեջ: Այս առումով մի քանի վկայություններ կան հայ հեղինակների մոտ: 1194 թ. Կոպիտառի բերդում մահացել է կաթողիկոս Գրիգոր Քարավեժը, որը, ինչպես պատմում է Սմբատը[2], բանտարկված է եղել այդ ամրոցում Լևոն II-ի հրամանով: 1198 թ. Լևոն II-ի թագադրության հանդեսին թագավորի այլ վասալների թվում ներկա է եղել Կոպիտառ ամրոցի տեր Կոստանդինը[3]: Սիսի 1307 թ. Ակնդեցաժողովի մասնակիցների մեջ հիշատակվում է Կոպիտառի ամրոցի տեր Օշինը:

Պետք է ուշադրություն դարձնել Ռուբենի մասին Սամուել Անեցու վկայության այն կետի վրա, որտեղ պնդում է, թե նա մինչև Բյուզանդիայի դեմ պայքարը տիրում էր Կոպիտառի ամրոցին, որը, անկասկած, մտնում էր Կիլիկիայի հայկական պետության սահմանների մեջ: Այնուհետև պետք է նշել, որ նրա մոտ էլ վկայություններ չկան Ռուբենի ու Փիլարտոսի կապի մասին: Առավել գնահատելի է այս հեղինակի ցուցումն այն մասին, թե Ռուբենն ընդարձակեց իր տիրույթը՝ բյուզանդացիների դեմ իր մղած պայքարում այդ մարզերի հայ բնակչության օգնության շնորհիվ:

Ռուբեն իշխանի գործունեության վերաբերյալ եղրակացությունն այսպիսին է. թեև XII դարի գրողների մոտ տեղեկություններ չկան Ռուբենի մասին, բայց փոխարենը անհերքելի վկայություններ կան XIII դարի գրողների մոտ այն մասին, որ բյուզանդական կառավարության կողմից Գագիկ Բագրատունուն դատապարտելուց հետո Ռուբենը հանդես է եկել բյուզանդական տիրապետության դեմ՝ հենվելով Լեռնային Կիլիկիայի հայ բնակչության վրա:

Հայագետ Ն. Ադոնցը իր հոդվածում[4], որ նվիրված է Ռուբեն իշխանի՝ Ռուբինյանների հիմնադրի ծագման լուսաբանմանը, ևնթադրություն է անում, թե նա 1018–1019 թթ. 23–25 տարեկան հասակում Լարիսայի և Մակեդոնիայի ստրատեգոսն է եղել, ինչը երևում է

[1] Տե՛ս **Ալիշան,** *Սիսուան*, էջ 245:

[2] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** *Պատմութիւն*, էջ 96:

[3] Նույն տեղում, էջ 110:

[4] Տե՛ս **N. Adontz,** *L'aieul des Roubéniens* (Byzantion, Revue internationale des Etudes Byzantines, t. x, Brux., 1935):

Թերմոպիլեն պաշտպանող ամրոցի պատի վրա Ռուբենի անվան փորագրումից, իսկ XI դարի 70-ական թվականներին՝ եղել է Լիկանդոսի բյուզանդական կառավարիչը: Սակայն Ադոնցի ևնթադրության փաստարկները համոզիչ չեն: Չի կարելի սոսկ XI դարի սկզբի ստրատեգոսի և XI դարի վերջի Ռուբինյանների դինաստիայի հիմնադրի անունները համընկնելու փաստի հիման վրա նրանց մեջ տեսնել միևնույն անձնավորությունը, առավել ևս, որ այդ դեպքում Ռուբեն իշխանը 1080 թվին, այսինքն այն ժամանակ, երբ նա ապստամբել է բյուզանդական կառավարության դեմ, 80 տարեկանից վեր պետք է եղած լինի, իսկ մահանալիս (1092) մոտ 100 տարեկան: Այնուամենայնիվ, Ն. Ադոնցի փաստերն ու եղրակացությունները հետաքրքիր են նրանով, որ Ռուբեն իշխանը չի պատկանել ո՛չ Արծրունիների, ո՛չ էլ Բագրատունիների դինաստիաներին:

XII–XIII դարերի տարեգիրների և պատմիչների տեղեկությունները իշխան Կոստանդինի՝ Ռուբենի որդու գործունեության մասին, հիմնականում համընկնում են:

Մատթեոս Ուռհայեցին տեղեկացնում է, որ խաչակիրները, մոտենալով Կիլիկիայի սահմաններին, իրենց արշավանքի մասին լուր տվեցին հայ իշխան Կոստանդինին, որը Կոպիտառի գավառում տիրում էր Տավրոսի լեռներին[1]: Այս տեղեկության մեջ կարևոր է այն վկայությունը, որ 1097 թ., այսինքն՝ Բյուզանդիայի դեմ Ռուբենի կողմից ապստամբության դրոշ բարձրացնելուց 17 տարի հետո, Կոստանդինը, իր հոր նման, տիրում էր Կոպիտառին:

Այս նույն հեղինակի ասելով, Կոստանդինը (1092–1100) իր իշխանությունը տարածեց Կիլիկիայի մեծ թվով գավառների ու քաղաքների վրա և նվաճեց Տավրոսի զգալի մասը՝ խլելով սելջուկներից[2], իսկ մահից հետո թաղվեց Կաստալոնում: Տարեգիր-ժամանակակցի այս վկայությունը ցույց է տալիս, որ նախ՝ Կոստանդին իշխանը 90-ական թվականների կեսերին զգալիորեն ընդլայնել էր Կիլիկիայի հայկական իշխանապետության սահմանները սելջուկների հաշվին և երկրորդ՝ նա, ինչպես և նրա հայր Ռուբենը, թաղվել է Կաստալոնի ամրոցում, հետևաբար այդ ամրոցը նրանց տոհմական կալվածքն է եղել:

Եթե մինչև XI դարի 70-ական թվականները Կիլիկիան ամբողջովին պատկանում էր Բյուզանդիային, ապա այդ տասնամյակի երկրորդ կեսից և մանավանդ 80-ական թվականներին Փոքր Ասիայից և Սիրիայից այնտեղ ներխուժեցին սելջուկները, իսկ հյուսիսային և ա-

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն*, էջ 257:

[2] Նույն տեղում:

լևեյան մարզերի տիրապետությունն անցավ հայ իշխաններին (Ռուբեն, Օշին, Փիլարտոս): Սակայն, ըստ երևույթին, 90-ական թվականների սկզբին էլ բյուզանդական կայազորները և ավատատերերը շարունակում էին իրենց ձեռքին պահել Լևոնային Կիլիկիայի մի քանի բերդեր, բայց նրանց այս վերջին հենակետերն էլ չուտով անցան Ռուբինյաններին:

Սմբատի «Պատմության» համաձայն Կոստանդին իշխանը Կիլիկիայի հայկական իշխանապետության սահմաններն ընդարձակել է ոչ միայն սելջուկների հաշվին, այլև բյուզանդացիների՝ սրանցից խլելով «մեծ մասն լերինն, որ է առաջին բերդ Վահկայն»[1]: Այս նույնի մասին Սամուել Անեցու «Ժամանակագրության» մեջ կարդում ենք. «Կոստանդին... տիրեաց հռչակաւոր բերդին, որ Վահկայ կոչի, յորում տուն եղ ինքեան անդ և զտէրութիւն իւր հաստատեաց, և նովաւ բազում տեղիս էառ»[2]:

Այսպիսով, եթե Կիլիկիայի հայկական իշխանապետությունը ծագեց ի հետևանք Բյուզանդիայի դեմ կիլիկեցի հայերի պայքարի՝ Արևվելքում Բյուզանդիայի տիրապետության թուլացման պահին, ապա այն ընդլայնվեց XI դարի 90-ականներին՝ բյուզանդացիների ու սելջուկների դեմ մղվող պատերազմներում: Վահկա բերդը դարձավ Կիլիկիայի հայկական իշխանապետության քաղաքական կենտրոնը:

Հայտնի է, որ 1080 թ. Կիլիկիայի մի մասը գրավել էր Փիլարտոսը, բայց նրա իշխանության կենտրոնը եղել է Մարաչը՝ Կիլիկիայի արևվելյան սահմանից ոչ հեռու: Չկան ճշգրիտ տվյալներ այն մասին, թե Կիլիկիայի հատկապես ո՛ր քաղաքներն ու գավառներն են եղել նրա իշխանության տակ: Ամենից ավելի հավանական է, որ նրա ազդեցությունը տարածվել է գլխավորապես արևելյան Կիլիկիայի վրա, սահմանափակվել է XI դարի 80-ական թվականներով և դադարել է Փիլարտոսի մահվամբ (սելջուկների դեմ մղված պատերազմում):

Օշինը Բյուզանդիայից ստանալով Լամբրոնի լեռնային գավառը հարավարևմտյան Կիլիկիայում՝ թեև ստեղծեց հայկական ավատական տիրույթ, որը գոյություն ունեցավ մեկ դարից ավելի, բայց նրա հաջորդները մնալով Բյուզանդիայի հավատարիմ վասալներ՝ չկարողացան ստեղծել կայուն ու ինքնուրույն տիրապետություն Կիլիկիայում և XII դարի վերջին պետք է որ ենթարկվեին Ռուբինյաններին:

Առաջին Ռուբինյանների վաստակն այն է, որ նրանք ապստամբելով բյուզանդական տիրապետության դեմ՝ կիլիկեցի հայերին հա-

[1] **Սմբատայ Սպարապետի** *Պատմութիւն, էջ 74:*

[2] **Սամուէլ Անեցի,** *Հավաքմունք ի գրոց, էջ 116:*

մախմբեցին ոչ միայն Բյուզանդիայի, այլև սելջուկների դեմ մղվող պայքարում:

Խոսելով XI դարի վերջի և XII դարի սկզբի հայկական իշխանապետությունների մասին՝ Մատթեոս Ուռհայեցին մի տեսակ առանձնացնում է Կոստանդինին՝ նրան անվանելով «մեծ իշխան»: «Յայսմ ամի (1100),– ասում է նա,– մեռաւ մեծ իշխանն հայոց Կոստանդին՝ որդին Ռուբենայ, և մնաց իւր երկու որդի՝ Թորոս և Լեւոն: Սորա տիրելոյ էր բազում քաղաքաց և գաւառաց և ըմբռնեալ ուներ զմեծ մասն Տօրոս լերինն»[1]:

Բյուզանդիայի դեմ անկախության համար Ռուբինյանների մղած պայքարը XII–XIII դարերի հայ պատմիչները դիտում էին որպես չարունակություն այն պայքարի, որ հայերը մղում էին հայրենիքում ընդդեմ բյուզանդական տիրապետության: Դա արտահայտել է Մխիթար Այրիվանեցին կրոնական աշխարհայեցության ոգով. «Աստ տիրեցին Կիլիկիոյ Ռուբինեանքն. զատ արար աստուած զրկելոցս, զի հոռոմն երբէք զմեր թագաւորութիւնն, իսկ աստուած զերկիր նոցաետ հայոց, որք և այժմ թագաւորեն ի նմա»[2]:

Անհրաժեշտ է նշել, որ դեռևս խաչակիրների՝ Կիլիկիա գալուց առաջ հայ ավատատերերի ձեռքին էին Կիլիկիայի լեռնային մարզերը, և Ռուբինյանների իշխանապետությունն արդեն նշանակալիորեն խոշորացել էր: Խաչակիրները սելջուկներից զավթելով Դաշտային Կիլիկիան՝ չկարողացան իրենց ձեռքին պահել, և XII դարի սկզբին այն նորից անցավ Բյուզանդիային, իսկ սրանից էլ՝ Ռուբինյաններին:

Խաչակիրների գալուց հետո կիլիկեցի հայերն ստիպված եղան համառ պայքար մղել Բյուզանդիայի դեմ, որպեսզի իրենց ձեռքին պահեին Լեռնային Կիլիկիան, որովհետև Առաջին խաչակրաց արշավանքից հետո Բյուզանդիան վերականգնել էր իր տիրապետությունը Դաշտային Կիլիկիայում և փորձում էր խեղդել Տավրոսի լեռներում ծագած հայկական իշխանապետությունը: Ամբողջ XII դարի ընթացքում կիլիկեցի հայերը պայքար էին մղում բյուզանդացիների դեմ հանուն իրենց անկախության, իսկ խաչակիրների դեմ՝ Դաշտային Կիլիկիայի պատճառով՝ այն պաշտպանելով սրանց ներխուժումներից: Նրանք միաժամանակ հակահարված էին տալիս սելջուկների հարձակումներին:

Ռուբինյանների կողմից Կիլիկիայի լեռնային շրջաններին տիրելը տեղի է ունեցել XI դարի 80–90-ական թվականներին՝ մինչև Առաջին

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 269:*

[2] **Մխիթարայ Այրիվանեցւոյ** *Պատմութիւն, Ս.-Պ., 1867, էջ 74:*

խաչակրաց արշավանքը: 1097 թ. Կիլիկիա ժամանեցին խաչակիրների երկու ջոկատներ: Վահկա բերդի տեր Կոստանդինը, Լամբրոնի տեր Օշինը և մյուս հայ իշխանները կապեր հաստատեցին խաչակիրների հետ և սկսեցին համագործակցել: Այս մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս դևպքերին ժամանակակից Մատթեոս Ուռհայեցին. «Իսկ ի բազմութենէ զօրացն (փրանկաց) վտանգ հասանէր զօրացն ի հացէ և նեղէին ի կերակրոց, և յայնժամ իշխանքն, որ կային բնակեալ ի Տարսոս լեառն, Կոստանդին որդին Ռուբինայ, և երկրորդ իշխան Բագունի, և երրորդ իշխանն Օշինն, սոքա զամենայն կարիս կերակրոյ առաքէին առ զօրապետն փռանգաց, նոյնպէս և վանորայքն Սև լերինն կերակրօք օգնեին նոցա, և ամենայն ազգք հաւատացելոցն բարեմաղթութիւն ցուցանէին առ նոսա»[1]: Այսպիսին է եղել սկզբնական շրջանում հայերի վերաբերմունքը խաչակիրների հանդեպ, որովհետև նրանք հուսով են եղել, թե վերջիններս կկռվեն Արևելք քրիստոնյաներին օգնելու:

Երբ Տանկրեդը խաչակիրների մյուս առաջնորդներին կանխելով՝ Տավրոսի լեռնանցքներից մեկով մտավ Կիլիկիա և իջնելով Հարթավայր՝ մոտեցավ Տարսոնին, «ոմն հայ, որը ճանաչում էր Տանկրեդին, քանի որ եղել էր նրա մոտ (Իտալիայում – Գ. Մ.),– գրում է Ալբերտ Աախենացին,– խոստացավ դրդել քաղաքի բնակիչներին, որոնք ճնշվում էին թուրքերից, քաղաքը հանձնել Տանկրեդին, գործելով դգույշ ու թաքուն: Սակայն Տարսոնի բնակիչները վախենալով քաղաքում գտնվող թուրքերից ու նրանց պահակների աչալրջությունից՝ չէին չտապում ընդունել հայի առաջարկը»[2]:

Հետաքրքիր է նշել հետևյալ փաստը, որ հաղորդում է այս նույն հեղինակը: Երբ Տանկրեդի և չուտով Տարսոնին մոտեցած Բալդուինի միջև վեճ ծագեց, թե ում պետք է հանձնվի այդ քաղաքը, և նրանք այդ առթիվ քաղաքի բնակիչներին հարցրին իրենց ցանկության մասին, սրանք պատասխանեցին, որ իրենք ավելի շատ վստահում են Տանկրեդին, բայց, Ալբերտի խոսքերով ասած, այսպես պատասխանեցին, որ «վախենում էին Բոհեմունդից, որի գալստյանն սպասում էին և որը դեռ մինչև արշավանքը իր ռազմական փառքով հայտնի էր Հունաստանում, Ռոմանիայում և Սիրիայում, իսկ Գոտֆրիդի անունը սրանք առաջին անգամ էին լսում»[3]: Ինչպես հայտնի է, Տանկրեդը ազգականն էր ռազմաչուչ ու եռանդուն նվաճող Բոհեմունդի՝ հա-

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** ժամանակագրութիւն, էջ 259:

[2] Տե՛ս Recueil des hist. des crois. Hist., occid., t. IV, p. 342:

[3] Recueil des hist. des crois. Hist., occid., t. III, p. 638.

րավային Իտալիայի մի մասի տիրակալի, իսկ Բալդուինը՝ եղբայրը Գոտֆրիդ Բուլոնացու, որն առաջնորդում էր խաչակիրների գլխավոր ջոկատներին, որոնք անցել էին Տավրոսի արևելյան լեռնանցքները և դուրս եկել դեպի Անտիոք:

Վեճից ի վերջո հաղթող դուրս եկավ Բալդուինը, որը զավթեց Տարսոնը, իսկ Տանկրեդը ստիպված եղավ հեռանալ Տարսոնի պարիսպներից և ուղևորվեց դեպի Մամեստիա, ինչը նկարագրված է խաչակրաց արշավանքների չատ տարեգիրների մոտ: Տարեգիր Ռադուլֆի վկայությամբ նրան այդ բանին դրդել է հայ իշխան Օշինը՝ Ադանայի կառավարիչը: Արևմտյան տարեգիրների վկայությամբ Մամեստիան գտնվում էր բերքառատ մի վայրում, որը նրանք անվանում էին հայերի երկիր: Բայց այստեղ էլ սկզբից Տանկրեդի բախտը չբերեց: Շուտով այստեղ եկավ նրա նույն մրցնակից Բալդուինը, և Մամեստիան տիրելու համար մղված ճակատամարտում Տանկրեդը ջախջախվեց[1]: Սակայն երկու զավթիչները հաշտվեցին: Արկածախնդիր Բալդուինին Արևելքը հրապուրեց, և նա գնաց նվաճելու ու կողոպտելու մերձեփրատյան չրջանները: Օգտվելով Բալդուինի հեռանալուց՝ Տանկրեդը տիրեց Դաչտային Կիլիկիայի զգալի մասին:

Մինչև խաչակիրների գալը Լեռնային Կիլիկիայի մեծ մասը պատկանում էր Կոստանդին Ռուբինյանին, արևմտյան Կիլիկիայի որոչ գավառներ ու քաղաքներ և, հնարավոր է, նաև Դաչտային Կիլիկիայի մի մասը (Ադանա) գտնվում էին հայ Օշին իշխանի տիրապետության տակ: Իսկ Դաչտային Կիլիկիայի մեծ մասը սելջուկ թուրքերի ձեռքին էր:

Հայտնի է, որ Բալդուինի ու Տանկրեդի՝ Կիլիկիա եկած ռազմական ուժերը մեծ չէին: Խաչակիրների հիմնական զանգվածը չարժվում էր այլ ուղիով՝ Կիլիկիայի արևելյան սահմանամերձ մարզերով, Մարաչով՝ դեպի Սիրիա, դեպի Անտիոք: Ալբերտ Աախենացին, Տուդեբոդը և ուրիչ տարեգիրներ տեղեկացնում են, որ երբ լեռնային անցումներից ու քաղցից ուժասպառ խաչակիրները մոտեցան Մարաչին, քաղաքի բնակիչները (հայերը) նրանց ընդառաջ դուրս եկան և չատ մթերքներ բերեցին[2]:

Բալդուինի ու Տանկրեդի հաջողությունը բացատրվում է նրանով, որ Կիլիկիայի քաղաքներում ու ամրոցներում տեղավորված սելջուկյան կայազորները սակավամարդ էին, իսկ հայերի համակրանքը, որոնք XI դարի վերջին այդ երկրի բնակչության նչանակալի խավն

[1] Recueil des hist. des crois. Hist., occid., t. III, p. 638.

[2] Տե՛ս Hist. occid., t. I, p. 148; t. IV, p. 164:

Էին կազմում, խաչակիրների կողմն է եղել, որոնց արշավանքի իսկական նպատակները նրանք դեռ չգիտեին: Բյուզանդական ուխտադրուժ քաղաքականությունից ու սելջուկների ճնշումներից դժգոհ հայերը սկզբնական շրջանում հուսով էին, թե խաչակիրների գալով իրենց վիճակն ավելի կլավանա, ուստի և օգնում էին նրանց:

Խաչակրաց արշավանքների մասին պատմող արևմտյան հեղինակները Կիլիկիան ու նրա հարևան Կապադովկիան անվանում են Հայաստան կամ հայերի երկիր՝ վկայելով, որ հայերը օգնում էին խաչակիրներին: Ռոբերտ Մոնախն ասում է, թե «կարճ ժամանակում հայերի երկիրն եկած ֆրանկները նրանց աջակցությամբ տիրեցին Մամեստիային ու Ադանային և ուրիշ շատ ամրոցների»[1]:

Կոստանդինը և ընդհանրապես Կիլիկիայի ու Սիրիայի, ինչպես և Անտիոքի հայերը խաչակիրներին օգնում էին այդ քաղաքները պաշարելիս: Հայտնի է, որ Բոհեմունդը համաձայնության է եկել երկու աշտարակների պետ հայ Փիրուզայի հետ, որը դրանք հանձնելով խաչակիրներին՝ դգալիորեն հեշտացրել է նրանց կողմից Անտիոքի գրավումը[2]:

Կիլիկիայի հայերը, օգնելով խաչակիրներին, նրանց մեջ տեսնում էին իրենց դաշնակիցներին՝ ընդդեմ Արևելքի մուսուլմանների և, իհարկե, չէին կանխատեսում, թե իրենց վիճակվելու է հարձակման ենթարկվել նրանց կողմից: Սակայն անհրաժեշտ է նշել, որ խաչակիրների Արևելք գալը հաջող է օգտագործվել Ռուբինյանների կողմից: Խաչակիրները սելջուկներին արտաքսելով Դաշտային Կիլիկիայից և Սիրիայի ու Պաղեստինի ծովափնյա մարզերից՝ դրանով իսկ թուլացրել են նրանց:

Առաջին խաչակրաց արշավանքի հետևանքով սելջուկները Բյուզանդիային հանձնեցին Նիկեան ու, Դորիլեայի մոտ կրած պարտությունից հետո, թողեցին Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մարզերը: Հետևաբար, նրանք Սև, Մարմարա և Միջերկրական ծովերի ափերից ետ չպրավեցին դեպի Թերակղզու խորքը, և Ալեքսիոս I-ին (1081–1118) հաջողվեց գրավել Լիդիան ու մերձափնյա փոքրասիական մյուս պրովինցիաները և պայքար սկսել Կիլիկիան ու Սիրիան ետ նվաճելու համար:

Կոմնենոսների դարաշրջանում (1081–1185) Բյուզանդական կայսրությունը համարյա անընդհատ պատերազմի մեջ էր իր եվրոպական սահմաններում: Բյուզանդիան մե՛րթ ետ էր մղում պեչենեգների հարձակումները, մե՛րթ ճնշում բալկանյան սլավոնների ազատագրական շարժումը, մե՛րթ կռվում էր Հունգարիայի դեմ՝ Դալմատական ծովափի և մերձդանուբյան սլավոնաբնակ մարզերի համար, մե՛րթ յարված պայքար մղում Սիցիլիայի թագավորության դեմ՝ Սիցիլիայի ու հարավային Իտալիայի պատճառով, մե՛րթ Հռոմեական Սրբազան կայսրության կայսրերի հետ վիճարկում Եվրոպայի առաջնությունը: Բյուզանդիան միաժամանակ ձգտում էր Ռումի թուրքերից ետ նվաճել Փոքր Ասիան, խաչակիրներից ու Զենգիյաններից՝ Հյուսիսային Միջագետքն ու Սիրիան, իսկ հայերից՝ Կիլիկիան, քանի որ Ասիայի հարուստ մարզերը բյուզանդական գանձարանը միշտ լցնում էին ոսկով, պետությանը մատուցում զորքերի առավել քաջարի կանակազմ և մեծ նշանակություն ունեին Արևելքի հետ կայսրության առևտրի բնագավառում: Հատկապես պետք է նշել Կիլիկիայի ռազմավարական, իսկ առևտրի ասպարեզում Սիրիայի մեծ նշանակությունը: XII դարում Բյուզանդական կայսրությունը համառորեն ձգտում էր նվաճել ամբողջ Կիլիկիան: Ահա թե ինչու Կիլիկիայի հայկական պետությունը կազմավորվեց համառ պայքարում, գլխավորապես՝ բնդդեմ Բյուզանդիայի, ընդ որում այդ պայքարը բարդանում էր երկիրը սելջուկների ներխուժումից պաշտպանելու անհրաժեշտությամբ և Դաշտային Կիլիկիայի համար Անտիոքի իշխանապետության դեմ մղվող պատերազմներով:

Հավանաբար մոտ 1100 թ. կամ դրանից մեկ տարի առաջ Բյուզանդիան վերականգնել է իր տիրապետությունը Դաշտային Կիլիկիայում: Դժվար է ավելի ճշգրիտ սահմանել, թե երբ և ինչպես է դա տեղի ունեցել: Բյուզանդացիները գրավել են նաև հյուսիսային Սիրիայի կարևոր մի նավահանգիստ՝ Լաոդիկեն, բայց այդտեղից նրանց դուրս է բշել Բոհեմունդը:

Սվազի Էմիր Դանիշմենդի կողմից Բոհեմունդը գերվելուց (1101) հետո Տանկրեդը Անտիոքի իշխանությունն իր ձեռքն առավ և, ինչպես վկայում է տարեգիր Ռուդոլֆը իր «Գործք Տանկրեդի» երկում, 1101 թվին իրեն ենթարկեց Մամեստիան, Ադանան ու Տարսոնը:

1104 թ. խաչակիրների՝ Բոհեմունդի, որը հայ իշխան Վասիլի չնորհիվ ետ էր գնվել գերությունից, Բալդուին Բուրժեցու, Տանկրեդի ու Յոսցելլինի միացյալ ուժերը Խառանի մոտ (Միջագետք) սարսափելի պարտություն կրեցին Հալեպի Էմիր Ռիզվանից: Բյուզանդիան օգտվեց խաչակիրների այդ թուլացումից և 1104 թ. նորից վերականգնեց իր իշխանությունը Դաշտային Կիլիկիայի վերոհիշյալ քաղաքների նկատմամբ (Ռուդոլֆ, «Գործք Տանկրեդի»):

[1] Տե՛ս Hist. occid., t. I, p. 148; t. IV, p. 768:

[2] Տե՛ս նույն տեղում:

Խառանի մոտ պարտվելուց հետո Բոհեմունդը մեկնեց Եվրոպա, որպեսզի համալրում բերի հետագայում մուսուլմանների, ինչպես և Բյուզանդիայի դեմ պայքարելու համար, որը ձգտում էր խաչակիրներից ետ նվաճել նաև Անտիոքը: Սակայն հավաքելով ռազմական նոր ուժեր՝ նա մնաց Իտալիայում և վերսկսեց պատերազմը Բյուզանդիայի հետ Ալբանիայի համար: Տանկրեդը գտնելով հարմար պահ, երբ Բյուզանդիան ստիպված էր ետ մղել Բոհեմունդի հարձակումը Դուրացցոյի վրա, 1108 թ. նորից գրավեց Դաչտային Կիլիկիան[1]:

Անհաջողության կրելով Ալբանիայում՝ Բոհեմունդը ստիպված եղավ հաշտություն կնքել Բյուզանդիայի հետ, հրաժարվել Կիլիկիայում իր նվաճումներից և վերադարձնել Լաոդիկե նավահանգիստը և այլ բնակավայրեր: Նրան իրավունք էր վերապահվում ցմահ տիրել Անտիոքին որպես Բյուզանդիայի վասալ, և նա պետք է Տանկրեդին ստիպեր ենթարկվել այս դաշինքի պայմաններին:

Խաչակիրների պարտությունը Խառանի մոտ և Բոհեմունդի ռազմական անհաջողությունը Բալկաններում նպաստեցին Կիլիկիայում բյուզանդական տիրապետության վերականգնմանը: Հավանաբար, Ալբանիայում Բոհեմունդի պարտությունից որոշ ժամանակ անց Դաչտային Կիլիկիան նորից խաչակիրներից անցել է Բյուզանդական կայսրության իշխանությանը, քանի որ ըստ հայ պատմիչների վկայության Կոստանդինի որդիներ Թորոսը (1100–1129) և Լևոնը (1129–1137) Կիլիկյան հարթավայրը նվաճել են հենց բյուզանդացիներից, այլ ոչ թե Անտիոքի խաչակիրներից:

XII դարի առաջին կեսին Լևոնային Կիլիկիայում հիմնված Ռուբինյանների իշխանությունը ստիպված էր դիմանալ Բյուզանդիայի, Իկոնիայի սուլթանության, Դանիշմենդների և Անտիոքի իշխանապետության դեմ մղվող պայքարին, քանի որ դրանցից յուրաքանչյուրը ձգտում էր տիրել Կիլիկիային: Կիլիկիային տիրելու այդ պետությունների ձգտումը, մրցակցությունը նրա համար պայմանավորված էին առաջին հերթին Կիլիկիայի ռազմաստրատեգիական դիրքով, որը գտնվում էր Փոքր Ասիայի, Միջագետքի և Սիրիայի սահմանագծում:

XII դարի սկզբին կիլիկեցի հայերը բյուզանդացիներից աստիճանաբար նվաճում էին Դաչտային Կիլիկիան, այն պաշտպանում էին խաչակիրներից և ետ մղում Ռումի սելջուկների ու Մելիք-Ղազի Դանիշմենդի ջոկատների ներխուժումները:

XII դարի առաջին տասնամյակում Կիլիկիայի Ռուբինյանների հայկական իշխանապետությունը խիստ ընդլայնվեց: Կոստանդինի որդի Թորոսը արդեն իր իշխանությունը տարածեց համարյա ամբողջ Կիլիկիայի վրա: Մենմիայն Լամբրոնի գավառն էր, որ գտնվում էր Բյուզանդիայի վասալ հայ իշխան Հեթումի ձեռքին: Հնարավոր է, որ Թորոսի իշխանակիցը եղած լինի նրա եղբայր Լևոնը, քանի որ Աննա Կոմնինան չարադրելով Բոհեմունդի հետ Ալեքսիոս I կայսեր հաշտության դաշինքի պայմանները՝ Անտիոքի և Բյուզանդիայի տարածքների սահմանազատման կապակցությամբ ասում է, որ Լևոնը և Թորոսը տիրում էին Լևոնային Կիլիկիային որպես Բյուզանդիայի վասալներ[1]:

Այժմ ծագում է Բյուզանդիայի հետ առաջին Ռուբինյանների փոխհարաբերությունների խիստ կարևոր հարցը: Արդյո՞ք նրանք այդ ժամանակաշրջանում կայսրությունից կախում են ունեցել: Բյուզանդացի հեղինակի պնդումը, թե 1108 թ. Թորոսն ու Լևոնը կախում ունեին Բյուզանդիայից, իրականությանը չի համապատասխանում, ինչպես կարելի է դատել՝ ելնելով ներքոհիշյալ փաստերից:

Սկզբում հայերը Բյուզանդիայից խլել են Անազարբա քաղաքը, որը Բյուզանդական տիրապետության դարաշրջանում եղել էր Երկրորդ Կիլիկիայի կենտրոնը: Այսպիսով, հայկական տիրապետության չրջանն ընդլայնվել է դեպի Դաչտային Կիլիկիա: Այժմ Ռուբինյանների հայկական իշխանապետության տարածքը սփռվել է Տավրոսի լեռներից մինչև հարթավայր՝ պարփակված Պիռամոս ու Սարոս գետերի միջին հոսանքների միջև: Տիրելով Անազարբային՝ Թորոսը ամուր ոտքերով կանգնել է Պիռամոսի հովտում և մոտեցել է իշխան Գող Վասիլի տիրույթին, որի հետ դաշինքի մեջ է մտել՝ ընդդեմ այդ հովիտը ներխուժող սելջուկների[2]:

Ուսամա Մունկիդի վկայությամբ Անազարբայից բացի Թորոսը տիրում էր Մամեստիային ու Ադանային[3]: Միքայել Ասորին նրան համարում է Կիլիկիայի կառավարիչ ընդհանրապես[4]:

Մատթեոս Ուռհայեցին մանրամասն նկարագրում է, թե ինչպես է Թորոսը վրեժխնդիր եղել հույն ավատատեր Մանդալ եղբայրներից՝ հայոց թագավոր Գագիկ II-ին սպանողներից: Զավթելով Կապադովկիայի ու Կիլիկիայի սահմանի վրա՝ Տավրոսի ստորոտում գտնվող նրանց Կնդրոսկավիս (Կիզիստրա) ամրոցը՝ Թորոսը նրանց հրամայել է բերել իրենց կողմից սպանված հայոց թագավորի սուրն ու հա-

[1] Տե՛ս **Anna Comnina,** Alexiada, Schopen, t. II, p. 138:

[1] Տե՛ս **Anna Comnina,** Alexiada, Schopen, t. II, p. 239:

[2] Տե՛ս ***Մատթեոս Ուռհայեցի,*** ժամանակագրություն, էջ 305–306:

[3] Տե՛ս Revue de l' Orient latin, t. II, p. 521:

[4] Տե՛ս Chronique de Michel le Syrien, t. III, p. 227:

գուստը: Տեսնելով բերվածը՝ Թորոսը և նրա հայ զորականները դառնորեն լաց են եղել: Նա հրամայել է խոչտանգել հույն իշխաններին: Այնժամ Մանդալ եղբայրներից մեկն ասել է. «Դու հայ մարդ ես, և մեք հռոմի իշխանք, ի՞նչ կամիս պատասխանի տալ հռոմոց թագաւորին, որ դատես զհռոմ մարդ»: Յայնժամ սրտմտեալ Թորոս, և գոյն երեսացն այլագունեցաւ... և ասէր. «Ո՞վ էիք դուք, որ զայր հզոր և գօճեալ թագաւոր հայոց սպանանէիք և կամ ի՞նչ պատասխանի ետուք ազգին հայոց»: Եւ յալսաւոն սկսաւ չարաչար հարկանել զնա՝ մինչև սատակեցաւ դառնահառաչ մահուամբ: Եւ յայնժամ գոհանայր զաստուծոյ, որ էառ զվրէժ արեանն Գագկայ հայոց արքային, վասն զի հայր հօրն նորա Ռուբէն ի զօրացն Գագկայ էր»[1]:

Մենք համառոտ մեջ բերեցինք հայ պատմիչի այս պատմածը, որովհետև այստեղ արտացոլված է հայերի թշնամական տրամադրությունը Բյուզանդիայի նկատմամբ, որն իր նվաճողական քաղաքականությամբ ոչնչացրել էր Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը և հալածել հայերին ինչպես հայրենիքում, այնպես էլ կայսրության այլ մարզերում:

Կիլիկիան հաճախ էր հարձակման ենթարկվում Ռումի սելջուկների կողմից: 1107 թ. թուրքերը անցնելով Տավրոսը՝ ներխուժեցին Անազարբայի շրջանը, կողոպտեցին Թորոսի ամբողջ երկիրը և կըտրելով Մարաշի հարթավայրը՝ հասան մինչև Գող Վասիլի տիրույթը, մինչև Բերդուս բնակավայրը: Բայց Վասիլը հավաքելով հայկական զորաջոկատ՝ Թորոսի հետ միասին ջախջախեց թուրքերին[2]: Հաջորդ տարում թուրքերը նորից ներխուժեցին, բայց ջախջախվեցին դաժան ճակատամարտում: Եվս երկու տարի անց կրկին ներխուժեցին Կիլիկիա, բայց այս անգամ սահմանափակվեցին Անազարբայի գավառի կողոպուտով: Թորոսը չհամարձակվեց մեն-մենակ ելնել նրանց դեմ, և նրանք հեռացան մեծ ավարով[3]: Մատթեոս Ուռհայեցու հաղորդած այս փաստերը ցույց են տալիս, որ Կիլիկիայի հայկական իշխանապետության գոյության հենց սկզբից Փոքր Ասիայի սելջուկները կատարել են իրենց թալանչիական ներխուժումները դեպի Կիլիկիա, որոնք չարունակվել են երկու դար՝ առավել նվաճողական բնույթ ընդունելով XIII դարի առաջին կեսին: Բայց XII դարում սելջուկների դավճումները ընդդեմ Կիլիկիայի հայերի թուլանում էին նրանց դեմ Բյուզանդիայի մղած պատերազմներից:

[1] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 318–321:*

[2] *Նույն տեղում, էջ 306:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 316:*

Խաչակիրների հետ Թորոսի ու Լևոնի փոխհարաբերությունների մասին տեղեկությունները չատ սուղ են: Մատթեոս Ուռհայեցու վկայությունները այն մասին, որ Թորոսը գերելով Քեսունի իշխան Վասիլ Տղային՝ նրան տվել է Բալդուին Բուրժեցու ձեռքը, չնայած Վասիլը իր եղբայր Լևոնի փեսան էր և հոգեզավակը Գող Վասիլի, որն օգնել էր Թորոսին[1]: Նրա եղբայր Լևոնը դեռ 1118 թ. օգնել էր Անտիոքի իշխան Ռոժերին ընդդեմ Սիրիայի էմիրների և մեծ խիզախություն ցուցաբերելով՝ աջակցել էր նրա հաղթանակին[2]:

Կիլիկիայի հայկական իշխանապետության այս ժամանակաշրջանի ներքին կյանքի մասին հայ պատմիչների տեղեկությունները խիստ կցկտուր են: Հիշատակվում է, որ Թորոսը գրավելով Անազարբան՝ այդ քաղաքում կառուցել է մայր տաճար, որ նա վերականգնում էր հին վանքերը, կառուցում նորերը և նվիրատվություններ անում դրանց: Դրանցից մեկում՝ Դրազարկում, որը դարձել էր հայ իշխանների ու թագավորների հանգստարան, թաղվել է նա[3]:

Այդ ժամանակ ընդլայնվում էր ոչ միայն Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանապետության տարածքը: Անընդհատ մեծանում էին հայերի ռազմական ուժերը՝ հարևան մարզերից ներգաղթող ազգակիցների հաշվին, որոնք մեծ թվով ապրում էին Կապադովկիայում ու Սիրիայում: Իսկ Սիրիայում, ինչպես հայտնի է, հայկական իշխանապետությունները ջախջախվեցին խաչակիրների կողմից, և հայ չատ իշխաններ այնտեղից տեղափոխվեցին Կիլիկիա: Այսպես, օրինակ, Բալդուին Բուրժեցու կողմից Բիրի գրավումից հետո դրա տեր Ապլղարիպը տեղափոխվեց Կիլիկիա՝ Թորոսի մոտ[4]:

Լևոն I-ի օրոք (1129–1137) պայքարը Կիլիկիայի համար բոնկվեց նոր թափով: Կիլիկիա ներխուժեցին Մելիք-Ղազի Դանիշմենդի ջոկատները: Միաժամանակ կիլիկեցի հայերն ստիպված եղան պաշտպանել Դաչտային Կիլիկիան Անտիոքի իշխանապետության խաչակիրների հարձակումներից: Վերջապես, Բյուզանդիայի կայսր Հովհաննը ինքը 1137 թ. այստեղ եկավ մեծ բանակով:

Այս ժամանակաշրջանում Կիլիկիայի հայկական իշխանապետության փոխհարաբերությունները Անտիոքի իշխանապետության, Մելիք-Ղազի Դանիշմենդի և Բյուզանդիայի հետ պարզելու համար առավել արժեքավոր տեղեկություններ կան Միքայել Ասորու մոտ,

[1] *Տե՛ս* **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 337:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 342:*

[3] **Սամուէլի Անեցւոյ** *Հաւաքմունք ի գրոց, էջ 128:*

[4] *Տե՛ս* **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 338:*

որոնք բավարար չափով գնահատված չեն Կիլիկիայի պատմության հետազոտողների կողմից[1]:

Շալանդոնը նշում է, թե մինչև XII դարի 30-ական թվականները Դաշտային Կիլիկիան պատկանում էր Անտիոքի իշխանապետությանը, բայց համոզիչ փաստեր բերել չի կարողանում[2]: Սմբատի մոտ հայոց 581 թվի (1132) տակ կարդում ենք. «պարոն Լևոն Կաո զքաղաքն կիլիկեցւոց զՏարսոն և զԱտանա և զՄսիս»[3]: Շալանդոնի կարծիքով այդ քաղաքները նա նվաճել է Անտիոքի իշխանապետությունից, բայց անհերքելի փաստեր կան, որոնք ցույց են տալիս, որ Դաշտային Կիլիկիայի վրա Ռուբինյանների տիրապետությունը հաստատվել է դեռևս Թորոս I-ի օրոք (1100–1129):

Մեր նշման օգտին է խոսում Թորոսի ու Լևոնի ժամանակակից արաբ գրող Ուսամա Մունկիդի արժեքավոր վկայությունը: «Իմ հոր (Մուրշիդի, Օրոնտեսի գետափին գտնվող Շեյզարի տիրոջ – Գ. Մ.) և Ռուբենի ժառանգների՝ Թորոս ու Լևոն հայերի՝ Ալ-Մասիսի (Մամեստիա), Անազարբայի, Ադանայի ու Դորուբի (Տավրոսի լեռներ) տերերի միջև հաստատված էին բարեկամական հարաբերություններ և նամակների փոխանակություն էր տեղի ունենում, գլխավորապես չնորհիվ բազեների նկատմամբ իմ հոր հափշտակվածության»[4]: Այնուհետև ասվում է, որ հայ իշխանները Ուսամի հորն ուղարկում էին լեռնային բազեներ՝ հատուկ բազեապանների հետ, և փոխարենը եգիպտոսից ստանում էին ձիեր, օծանելիք և հագուստներ:

Որ ամբողջ Կիլիկիան գտնվել է Թորոսի իշխանության տակ, երևում է նաև Միքայել Ասորու վկայությունից: «Այդ տարի (1129),– գրում է նա,– մնաւ հայ Թորոսը՝ Կիլիկիայի տերը, նրան հաջորդեց իր եղբայր Լևոնը: Անտիոքի իշխան Բոհեմունդը նախապատրաստվեց Լևոնի դեմ պատերազմի»[5]: Թորոս I-ի մահից հետո փրանկ Բոհեմունդ II-ի և սելջուկ Մելիք-Ղազի Մուհամեդ Դանիշմենդի՝ Կիլիկիա ներխուժման մասին նրա նկարագրությունը էլ ավելի աներկբայությամբ մեզ համոզում է, որ այդ ժամանակ Կիլիկիայում իշխանությունը պատկանել է Ռուբինյաններին: «Էմիր Ղազին,– ասում է Միքայել Ասորին,– իմանալով Լևոնի մահվան մասին՝ իր զոկատներն

[1] Տե՛ս Chronique de Michel le Syrien, t. III, p. 227:

[2] Տե՛ս **F. Chalandon,** Les Comnènes, P., 1912, p. 108:

[3] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 79:

[4] **Ousama Mounkidh,** L'instr. par les exemples. (Revue de L'orient lat., t. II, p. 521).

[5] Chronique de Michel le Syrien, t. III, p. 227.

ուղարկեց Կիլիկիա: Երբ Թուրքերն այնտեղ հասան, փրանկներն արդեն այնտեղ էին, որոնք մտել էին երկրի մյուս կողմից: Ո՛չ փրանկները իմացան Թուրքերի գալու մասին, ո՛չ Թուրքերը՝ փրանկների ներկայության: Ե՛վ Թուրքերը, և՛ փրանկները ուզում էին կռվել հայերի դեմ: Հասնելով Անարզաբայի հովիտը, Թուրքերը տեսան Բոհեմունդին մի քանի ասպետների հետ. ճանաչեցին նրանց և սկսեցին ճակատամարտը»[1]:

Այնուհետև պատմիչը գրում է, թե փրանկները Բոհեմունդ II-ի հետ չրջապատվել են Թուրքերով ու ջախջախվել: Նշենք, որ Լևոնը գերադասել է հարձակվել փրանկների վրա, այլ ոչ թե սելջուկների: «Մյուս կողմից,– չարունակում է ասորի պատմիչը,– Լևոնը գրավեց կապանները և ոչնչացրեց փրանկների ջոկատը»[2]:

Նկարագրելով Մելիք-Ղազի Դանիշմենդի արշավանքները դեպի Բյուզանդիայի փոքրասիական տիրույթներ՝ Միքայել Ասորին գրում է. «Այդտեղից նա ներխուժից Կիլիկիա՝ Լևոն Հայի դեմ: Նա պաշարեց ու գրավեց բերդերը: Լևոնը երդվեց չներխուժել Մելիք-Ղազիի երկիրը և վճարել ամենամյա տուրք: Ղազին հեռացավ: Լևոնն իր խոսքը չպահեց և ոչինչ չվճարեց»[3]:

Վերոհիշյալ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Դաշտային Կիլիկիան մնացել է Լևոն I-ին:

Հարցը պարզաբանելու բանալին, թե Լևոն I-ը ումից է 1132 թ. խլել Ադանան, Մամեստիան ու Տարսոնը, տրվում է Միքայել Ասորու հետևյալ հաղորդման մեջ. «Այնուհետև Իսահակը (Բյուզանդիայի կայսր Հովհաննի եղբայրը – Գ. Մ.) եկավ Լևոնի մոտ: Եվ Լևոնն իր դստերը կնության տվեց կայսեր ազգականին (Իսահակի որդուն՝ Հովհաննեսին) և նվիրեց երկու քաղաք՝ Մամեստիան ու Ադանան: Շուտով նրանց միջև տարաձայնություն ծագեց: Լևոնը հույներից ետ խլեց այն ամենը, ինչին որ նրանք տեր էին դարձել, և Իսահակն իր որդու հետ փախավ սուլթան Մասուդի մոտ»[4]: Ասորի ժամանակագրի վկայությամբ սա տեղի է ունեցել 1132 թվին:

Միքայել Ասորու հաղորդումից կարելի է եզրակացնել, որ Լևոնը 1132 թ. հույներից խլել է այն ամենը, ինչին որ նրանք տիրում էին Կիլիկիայում, ի թիվս որոնց՝ նաև Մամեստիան ու Ադանան, որոնք դրանից քիչ առաջ իր իշխանության տակ էին և փոխանցված էին

[1] Chronique de Michel le Syrien, t. III, p. 226.

[2] Նույն տեղում, էջ 227:

[3] Նույն տեղում, էջ 230:

[4] Նույն տեղում, էջ 230–231:

Իսահակի որդուն: Միքայել Ասորու ասածի հետ համընկնում է Սըմբատի հաղորդումը հայ իշխան Լևոնի կողմից Դաշտային Կիլիկիայի քաղաքների նվաճման մասին: Հետևաբար, Լևոնն այդ քաղաքները խլել է ոչ թե խաչակիրներից, այլ բյուզանդացիներից կամ, ավելի ճիշտ, նա նորից վերադարձրել է այն, ինչը դրանից առաջ բյուզանդացիներից նվաճել էր իր եղբայր Թորոսը և ժամանակավորապես տրված էր Իսահակի որդուն: Ի դեպ նշենք, որ վերոհիշյալ Իսահակը՝ Հովհան կայսեր եղբայրը, այդ իրադարձությունից դեռ երկու տարի առաջ, բյուզանդական գահը խլելու անհաջող փորձից հետո, 1130 թ. փախել էր Ասիա և եղել մուսուլման ու քրիստոնյա չատ տիրակալների մոտ, այդ թվում և Լևոն Ռուբինյանի, սրանց սադրելով ընդդեմ Բյուզանդիայի:

Այսպիսով, Լևոնի կողմից Մամեստիան և Ադանան Իսահակին կամ նրա որդուն փոխանցելը չի նշանակում Կիլիկիայում Բյուզանդիայի տիրապետության, թեկուզ և մասնակի, վերականգնում: Կիլիկիայի հայկական իշխանապետության հաջողությունը, դրա սահմանների ընդլայնումը Դաշտային Կիլիկիայի հաշվին, որը մինչ այդ պատկանել էր Բյուզանդիային, բացատրվում է գլխավորապես նրանով, որ դրա բնակչության մեծ մասը հայերն էին, ինչպես և նրանով, որ Բյուզանդական կայսրությունը զբաղված էր պատերազմներով Եվրոպայում և Ասիայում:

Ինչպես նկարագրում է XII դարի բյուզանդացի պատմիչ Նիկիտա Խոնիատը, Ալեքսիոս I-ի թագավորության վերջին տարիները նշանավորվեցին ջննովացիների ու պիզացիների թշնամական գործողություններով ընդդեմ Բյուզանդիայի և Փոքր Ասիայի սելջուկ-թուրքերի աչխուժացմամբ: Ալեքսիոս I-ի հաջորդ Հովհան I-ը (1118–1143) նույնպես սկզբում զբաղված էր սելջուկների դեմ պատերազմներ մղելով և դրա հետ մեկտեղ ստիպված էր պեչենեգների հարձակումները ետ մղել:

XII դարի 30-ական թվականներին Կիլիկիայի հայկական իշխանապետության համար առավել վտանգավոր էին Անտիոքի խաչակիրները, որտեղ Բոհեմունդ II-ի մահից հետո իշխանությունն անցել էր Ռայմունդ Պուատիեին, որը և որոշեց վերսկսել իր նախորդների փորձերը Դաշտային Կիլիկիային տիրելու ուղղությամբ:

1136 թ. Անտիոքի իշխան Ռայմունդը, հույս չունենալով բաց մարտում հաջողության հասնել, ուխտադրժորեն գերի վերցրեց Լևոնին և միայն այն բանից հետո, երբ ստացավ 60000 դահեկան փրկագին և Մամեստիա, Ադանա ու Սարվանդիքար քաղաքները, ազատ արձակեց նրան[1]: Ազատվելով գերությունից՝ Լևոնը Անտիոքից ետ նվաճեց իր դիջած քաղաքները և դրանք իր ձեռքին պահեց, չնայած Անտիոքի իշխանին աջակցում էր Երուսաղեմի թագավոր Ֆուլկը:

XII դարում Կիլիկիայի հայերի ու Սիրիայի ֆրանկների միջև տեղի ունեցած պայքարի մասին ֆրանսիացի պատմաբան Ժակ դը Մորգանը գրում է. «Հայերի և Անտիոքի լատինացիների միջև վեճերի գլխավոր պատճառներից մեկը եղել է հարավային Ամանոսի ամրություններին և այն չրջաններին տիրելու համար մղվող պայքարը, որոնք հարում էին Ալեքսանդրետի ծոցին»[2]: Խաչակիրների ձգտումը չատ ավելի էր, քան նշում է ֆրանսիացի պատմաբան Մորգանը: Նրանց գլխավոր նպատակն էր՝ գրավել Դաշտային Կիլիկիան, առանց որի Կիլիկիայի հայկական պետությունը չէր կարող զարգանալ, քանի որ խաչակիրների հաջողության դեպքում այն զրկված կլիներ նյութից դեպի Միջերկրական ծով, չէր ունենա նավահանգիստներ ու առևտրաարհեստավորական կենտրոններ և խոշոր դեր չէր խաղա միջազգային առևտրում:

1137 թ. Լևոնը և Անտիոքի իշխան Ռայմունդը եղեսիայի կոմս Յոսցելլին II-ի միջնորդությամբ հաշտվեցին և պարտավորվեցին օգնել իրար, քանի որ հայտնի էր դարձել, որ նրանց վրա արշավանքի է պատրաստվում Բյուզանդիայի Հովհան կայսրը:

Կոմնենոսների դարաշրջանում Բյուզանդիան միչտ ձգտում էր ետ նվաճել կորցրած արևելյան պրովինցիաները, որոնց թվում Սիրիան ու Կիլիկիան: Այս քաղաքականությունը ավելի առանդուն էր վարում Հովհանը (1118–1143), որը հույս ուներ հաստատվել Կիլիկիայում և կայսրությանը վերադարձնել սիրիական նավահանգիստները և դեպի Եփրատ տանող առևտրական ճանապարհները:

Առաջին խաչակրաց արշավանքից հետո Ջենովան ու Վենետիկը իրենց փակտորիաներն (գաղութային առևտրավան) էին ստեղծում Սիրիայի նավահանգիստներում և արաբ, ասորի ու հայ վաճառականների միջնորդությամբ առևտրական կապեր էին հաստատում Իրանի, Հնդկաստանի և Արևելքի այլ քաղաքների հետ: Վերականգնվեց Եվրոպայի անմիջական առևտրական կապը Արևելքի հետ՝ սիրիական նավահանգիստների միջոցով, որը արաբների նվաճումների պատճառով համարյա թե ընդհատված կամ, համենայն դեպս, սաստիկ թուլացած էր:

---

[1] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 80:

[2] **J. Morgan,** Historie du peuple arménien, P., 1919, p. 171.

Սիրիայում ու Պաղեստինում խաչակիրների նվաճումների հետևանքով սիրիական նավահանգիստները սկսեցին մրցակցել Կոստանդնուպոլսի հետ, որը Տրապիզոնի և սևծովյան մյուս նավահանգիստների միջոցով ստանում էր արևելյան ապրանքներ ու վաճառում եվրոպացի, գլխավորապես վենետիկցի վաճառականներին: Սիրիական նավահանգիստների առևտրական մրցակցությունը սպառնալիք էր ստեղծում Բյուզանդիայի՝ որպես Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական միջնորդի համար: Հայտնի է, որ Կոստանդնուպոլսի տարանցիկ առևտրի գործունեությունները XII դարում նվազել էին, մինչդեռ սիրիական նավահանգիստների դերը միջազգային առևտրի մեջ հետզհետե բարձրացել էր: Սիրիական նավահանգիստների հետ Կոստանդնուպոլսի մրցակցությունից բացի, որը, ի դեպ, ավելի ուժգին սկսեց զգացվել XII դարի երկրորդ կեսին, Բյուզանդիան հասավ իր իշխանության վերականգնմանը Արևելքի այդ հարուստ երկրներում, քանի որ դրանք կայսրության համար գնահատելի էին ոչ միայն առևտրական ու արդյունաբերական առումներով, այլև՝ ֆինանսական, չնորհիվ դրանցից պետական գանձարան մտնող նկամուտների:

Հենց այս պատճառներով է, անկասկած, բացատրվում այն փաստը, որ Բյուզանդիան համառորեն ձգտում էր գրավել Հյուսիսային Միջագետքը, Սիրիան և Կիլիկիան, որոնք մինչև սելջուկների արշավանքը իրեն էին պատկանում: Չէ՞ որ այդ երկրների տարածքների միջով էին դեպի Միջերկրական ծով դուրս գալիս առավել հարմար առևտրական ճանապարհները, որոնք Արևելքի երկրները կապում էին հարավային և արևմտյան Եվրոպայի հետ: Վերադարձնել այն, ինչ Բյուզանդիան ձեռք էր բերել Նիկեփոր Փոկասի և Հովհաննես Զմըշկիկի արշավանքների չնորհիվ և ինչից նա զրկվել էր մեկ դար անց, երբ Մելիքշահի սելջուկ զորավարները հասան Միջերկրական ծովին, ոչնչացնել կամ գոնե Բյուզանդիային ենթարկել խաչակիրների պետությունները, որոնք գավթել էին Արևելքի՝ Կոստանդնուպոլսի հետ մրցակցող չուկաներն ու նավահանգիստները. ահա այն նպատակը, որ իրենց առջև դրել էին Կոմնենոսները: Այս նպատակին հասնելու համար պետք էր նաև գավթել Կիլիկիան, որպես հարմար պլացդարմ Սիրիան ու Միջագետքը նվաճելու համար:

Այս նպատակն էր հետապնդում Հովհան Կոմնենոսը 1137–1142 թվերին դեպի Կիլիկիա և Սիրիա կատարած արշավանքների ժամանակ, ինչի մասին բավականին պերճախոս վկայում են Հովհան Կիննամուսը և Նիկիտաս Ակոմինատոսը (Խոնիատը):

Կիննամուսը երկու պատճառ է առաջ քաշում այս արշավանքի առիթով: Առաջինը դա այն լուրն էր, թե Լևոնը գրավելով Իսավրիայի չատ քաղաքներ, համարձակվել է չրջապատել նաև Սելևկիան, երկրորդը՝ Անտիոքի իշխանապետության առաջարկը՝ ընդունել Բյուզանդիայի գերիշխանությունը այն պայմանով, որ Հովհան կայսրը համաձայնի Բոհեմունդի աղջա և իր որդու՝ Մանուիլի ամուսնությանը[1]: Սակայն այս ամուսնությունը խափանվեց, քանի որ Անտիոքի իշխանապետության գահաժառանգուհի Կոնստանցիան ամուսնացավ Ռայմունդ Պուատիեի հետ: Այսպիսով, Հովհանի ծրագիրը՝ տիրել Անտիոքին ամուսնական դաչինքի միջոցով, չհաջողվեց:

1137 թ. Հովհանը, Մելիք-Ղազի Դանիշմենդի դեմ մի չարք հաջող արշավանքներից հետո որոշեց վերականգնել Բյուզանդիայի իշխանությունը Կիլիկիայում և Սիրիայում: Կիննամուսը հաղորդում է, թե «անտիոքցիները հրաժարվեցին իրենց նախնական մտադրությունից (Կոնստանցիայի և Մանուիլի ամուսնական դաչինքը – Գ. Մ.): Նրանք աղաչեցին հայոց իշխան Լևոնին, որը գերի էր վերցվել և պահվում էր բանտում այն պայմանով, որ դառնա իրենց դաչնակիցը և իրենց հետ միասին պայքարի ընդդեմ հոռոմների»[2]:

Տիրելով Տարսոնին, Ադանային ու Անազարբային, ընդ որում վերջինիս պաշտպանները համառ դիմադրություն ցույց տվեցին բյուզանդացիներին, Հովհանը գնաց դեպի Վահկա բերդը, բայց իմանալով, որ Անտիոքը տենդագնորեն ամրացվում է, իր զորքերը չրջնց դեպի այդ կողմը: Անտիոքի խաչակիրները, Կիննամուսի խոսքերով ասած՝ «մեծ իրարանցման մեջ ընկան: Ռայմունդը նկավ կայսեր մոտ և թախանձագին խնդրեց նրան ընդունել քաղաքը, դառնալ դրա սուվերենը, այն պայմանով, որ Անտիոք քաղաքը Ռայմունդն ինքը կառավարի որպես կայսեր տեղապահ»[3]:

Բյուզանդիայի կայսեր համար, չնայած բյուզանդացի պատմիչի պարծենկոտ տոնին, հեչտ չի եղել Անտիոքի իշխանին ստիպել ենթարկվելու: Հովհանն ինքն է գերադասել փոխզիջում անել և բավարարվել նրանով, որ Անտիոքի իշխանապետությունը ճանաչի Բյուզանդիայի գերիշխանությունը (սուվերենիտետը), քանի որ կայսրը որոշել էր խաչակիրների օգնությամբ գրավել Հալեպը, ընդ որում պարտավորվել էր այն միացնել Անտիոքի իշխանապետությանը[4]:

[1] **Ioannes Cinnamus,** *Epitome rerum ab Joanne et Alexio Comnenis gestarum, Bon., 1836, p. 16.*

[2] **Cinnamus,** *Epitome, p. 16.*

[3] Նույն տեղում:

[4] Մանրամասնությունների տե՛ս **Ф. Успенский,** *История Византийской империи, т. III, с. 208:*

Այդ ծրագրի կատարումը Հովհաննը հետաձգեց հաջորդ տարի, քանի որ անհրաժեշտ էր ավարտել Լևոնային Կիլիկիայի նվաճումը:

Նիկիտաս Խոնիատը հանգամանորեն նկարագրում է Կիլիկիայի նվաճումը Հովհաննի կողմից: Տիրելով Ադանային ու Տարսոնին՝ կայսրը, այդ պատմիչի ասելով, «չբավարարվեց դրանով և չարունակում էր պատերազմը՝ նպատակ ունենալով գրավել ամբողջ Հայաստանը»[1]: Խոնիատը մանրամասն պատմում է, թե Անազարբայի ու Վահկա բերդի զորականները որքան աննկուն ու քաջաբար էին դիմադրում բյուզանդական զորքերին: Ըստ նրա ասածի՝ Անազարբան «պաշտպանում էին զինավառ և հույժ քաջարի մարդիկ»[2]:

Խոնիատը (Ակոմինատը) վկայում է ոչ միայն հայ զորականների քաջության, այլև հայերի բավական բարձր տեխնիկայի մասին: «Քաղաքը,— ասում է նա,— պաշտպանված էր բարձր պարիսպներով... Հայերը պարիսպներին դրել էին մեքենաներ, որոնք բյուզանդական զորքերի վրա խոշոր քարեր ու երկաթի չիկացած կտորներ էին նետում՝ բյուզանդացիներին խոշոր վնաս պատճառելով և զգալի գերակչռության հասնելով նրանց նկատմամբ: Դրանից ոգևորվելով՝ հայերը դուրս եկան ամրոցից, մի քանի անգամ սրընթաց հարձակվեցին թշնամու վրա և այրեցին պաշարողական մեքենաները»[3]: Ինչպես տեղեկացնում են երկու պատմիչները՝ կինեամուսն ու Խոնիատը, բյուզանդացիները հայերի արտագրոհից հետո աղյուսներով պատեցին իրենց մեքենաները և կործանեցին Անազարբայի առաջին պարիսպը, բայց քաղաքի պաշտպանները երկար ու համառորեն պաշտպանում էին պարիսպը, ինչպես նաև բերդի երկրորդ պարիսպը, և բերդը հանձնվեց արյունալի մարտերից հետո միայն:

Վահկա բերդի հայ զորականների ու բնակիչների մարտական ոգու, խիզախության և աներևրության մասին Խոնիատը գրում է. «Նրանք ոչ միայն գիություն չէին հայցում, այլև չէին համաձայնում հաշտության ոչ մի դաշինք կնքել... և բնավ չէին վախենում ճակատամարտից»[4]: Վահկա պաշտպաններից մեկի մասին նա ասում է. «Հայերի մեջ ամենանշանավորը Կոստանդինն էր, որն իր քաջությամբ գերազանցում էր ուրիշ չատերին: Նա ոչ միայն զորքը մարտակարգի էր բերում և քաղաքացիներին ոգևչչում պայքարելու հոոոմների դեմ, այլև ինքն էր հաճախ դուրս գալիս բերդից և, զինավառ կանգնելով բլրի վրա..., թագավորի գլխին լուտանք էր թափում հունարեն լեզվով»[1]:

Այնուամենայնիվ, ինչպես պատմում է Խոնիատը. «մի քանի օր անց, բերդը հանձնվեց կայսրին: Կոստանդինը գերի վերցվեց, չղթայվեց և նետվեց նավ, որը նրան պետք է տաներ Հասցներ Բյուզանդիա..., բայց այդ հայը հանդուգն և խիզախ մարդ էր: Իր ծառաների օգնությամբ նա վրայից հանեց չղթաները, զինչերով հարձակվեց իրեն հսկող զինվորների վրա, նրանցից չատերին սպանեց և փախավ ապատվեց»[2]:

Մենք այս քաղվածքները բյուզանդական պատմիչներից բերեցինք նրա համար, որ ցույց տանք, թե հայերը, ճիշտ է, երբեմն ստիպված լինելով զինջել Բյուզանդիայի գերակչիռ ուժերին, այնուամենայնիվ աննկուն ու արիաբար կռվել են իրենց անկախության համար: Այդ պայքարին մասնակցում էր ժողովուրդը, և այդ հանգամանքը վճռական նչանակություն ուներ Կիլիկիայի հայերի՝ հանուն իրենց անկախության մղած պայքարի հաջող ելքի համար:

Բյուզանդացի պատմիչների հաղորդումների արժեքը չատ մեծ է նաև նրանով, որ հայ ժամանակագիրները չատ ժլատ են խոսքի մեջ. նրանք գրում են լակոնիկ, արձանագրային լեզվով: Բյուզանդական զորքի՝ զնպի Կիլիկիա կատարած այս արչավանքի մասին զնպքին ժամանակակից, իրազեկ տարեգիր Մատթեոս Ուռհայեցու մոտ մենք կարդում ենք միայն հետևյալը. «յամս ՇՂՋ (1137) նոյն թագաւորն Հոոոմոց որդի Ալէքսին, որում անունն էր Պեապեոժէն, եկն մեծ խռովութեամբ ի քաղաքն Անազարբա: Եւ էր յաւուրն ամառնային՝ յամին յուլիոյ. և խաոարեաց զքաղաքն աւուրս երեսուն և հինգ, և նեղեաց բաւնովն. և նոքա առ վտանգին եռան զքաղաքն ի թագաւորն Պեապեոժէնն, և նա էառ զամենեսեան. զԼեւոն իշխանն հայոց և զորդիքն իւր, զկինն, էառ և զսուրբ պատկերն Աստուածածնին և տարաւ ի Կոստանդնուպոլիս...»[3]:

Կեսդարյա լարված պայքարով հայերի ստեղծած Կիլիկիայի հայկական իշխանապետությունը 1137 թ. ոչնչացվեց Հովհաննի ձեռքով, որն ուներ մեծ բանակ: Կիլիկիայի Ռուբինյանների իշխանությունը մի քանի տարով ընդհատվեց: Բայց հայ բնակչությունը Կիլիկիայում այդ ժամանակ նչանակալի ուժ էր, ինչը և գլխավոր հիմքը դարձավ Կիլիկիայում 1145 թվին Ռուբինյանների իշխանապետության վերականգնման համար:

[1] **Nicetas Choniata,** Historia, Bon., 1835, p. 29.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 34:

[4] Նույն տեղում, էջ 30:

[1] **Nicetas Choniata,** Historiam, Bon., 1835, p. 30.

[2] Նույն տեղում, էջ 33:

[3] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 369:

Տիրելով ամբողջ Կիլիկիային՝ Հովհաննը 1138 թ. գարնանը, Անտիոքի իշխան Ռայմունդի և Եդեսիայի կոմս Յոսցելինի հետ դաշնակցած՝ մոտեցավ Հալեպին, որը պատկանում էր Զենգիին: Բայց այդ քաղաքն ուժգին ամրացված էր, և Հովհաննը նահանջեց: Նա արագ դադարեցրեց Շեյզարի պաշարումը նույնպես: Բյուզանդական կայսեր այդպիսի վարքագիծը պայմանավորող պատճառները եղել են, մի կողմից՝ Սիրիայի ու Միջագետքի սելջուկ տիրակալների միմյանց միավորվելը, իսկ մյուս կողմից՝ խաչակիրների հետ իր կնքած դաշինքի անկայունությունը: Այս անհաջող արշավանքից հետո Հովհաննը ժամանեց Անտիոք և Ռայմունդից պահանջեց քաղաքն իրեն հանձնել Հալեպ կատարելիք արշավանքի համար, բայց Անտիոքում խռովություն ծագեց կայսեր դեմ, և նա ստիպված եղավ թողնել քաղաքը[1]:

Հովհաննի 1137 թ. արշավանքի հաջողությունը բավական թերի և անկայուն եղավ: Կայսրին չհաջողվեց հաստատվել Անտիոքում, գրավել Հալեպը և առաջ չարժվել Եփրատի ուղղությամբ: Ուստի 1142 թ. Հովհան Կոմնիանոսը նոր արշավանք գործեց, որպեսզի ամրացներ Բյուզանդիայի տիրապետությունը Կիլիկիայում և նվաճեր Սիրիան: Այս մասին պատմիչ Նիկիտաս Խոնիատն ասում է. «Այս արշավանքի պատճառներն էին, նախ՝ Հայաստանի (Կիլիկիայի – Գ. Մ.) կառավարման կազմակերպումը, դրա վրա տիրապետության ամրապնդումը, որպեսզի իր ենթակայության տակ պահեր այն քաղաքներն ու բերդերը, որոնք գրավել էր նախորդ արշավանքի ժամանակ, երկրորդ՝ Անտիոքի իշխանապետությունը կայսրությանը միացնելու կայսեր անհագ ցանկությունը: Այս երկրորդ պատճառը ամենից քիչ էր ազդարարվում զորքի մեջ և ամենից շատ էր նրանից թաքցվում»[2]:

Այս արշավանքի մասին Կիննամոսն ասում է. «Հովհաննը իմանալով, որ Անտիոքի կառավարիչ Ռայմունդը հեղաշրջում է նյութում, նորից արշավանքի ելավ՝ մտադրություն ունենալով Մանուիլին ժառանգությունից տալ ոչ միայն Կիլիկիան, այլև Անտիոքը՝ Ատտալիայի ու Կիպրոսի հետ միասին»[3]:

Մենք տեսնում ենք, որ Հովհաննը ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ արշավանքի ժամանակ իր առաջ նպատակ էր դրել նվաճել Կիլիկիան ու Սիրիան, ընդ որում Սիրիայի գավթմանը մեծ նշանակություն էր տալիս: Սակայն սկզբնաղբյուրներից երևում է, որ Բյուզանդիան հասկանում էր, որ առանց Կիլիկիայում կայուն տիրապետություն հաստատելու անհնար է նվաճել և ձեռքին պահել Սիրիան: Եվ իրոք, Կիլիկիան մեծ նշանակություն ուներ ավելի շուտ ռազմավարական տեսակետից, քան առևտրական, իսկ Սիրիան՝ ընդհակառակը: Այդ է վկայում նաև Հովհաննի նախագիծը՝ որդու իշխանության տակ միավորել առևտրական ու ռազմավարական առումով կարևոր Միջերկրական ծովի արևելյան առափնյա հիշյալ երկրները:

Առաջադրված խնդիրը դժվար իրագործելի էր: Դա հասկանում էր նաև Հովհաննն ինքը, ինչը երևում է Նիկիտաս Խոնիատի հետևյալ տողերից. «Նա գործադրում էր բոլոր միջոցները, որպեսզի որևէ կերպ լատինացիներին համոզեր իրեն զիջել գերագույն իշխանությունը նշանավոր Անտիոքի նկատմամբ, իսկ եթե նրանք չհամաձայնեին, քանի որ նա լավ գիտեր նրանց հպարտությունն ու գոռոզությունը, ապա գոնե իր կողմը գրավեր կիլիկեցիներին ու սիրիացիներին»[1]: Դա նշանակում է, որ Բյուզանդիան պատրաստ է եղել փոխզիջում անելու, բավարարվելու Բյուզանդիայի նկատմամբ Սիրիայի խաչակիրների կողմից իրենց վասալական կախման ճանաչումով, որպեսզի ռազմահնարան ուններ դեպի Եփրատ առաջխաղացման համար՝ այդ գործում հուսալով ստանալ խաչակիրների, ինչպես և Կիլիկիայի հայերի օգնությունը, ինչը վկայում է այն ժամանակվա Բյուզանդական կայսրության թուլության մասին:

Վերոհիշյալ նպատակին հասնելու համար Հովհաննը 1142 թ. ձեռնարկեց երկրորդ արշավանքը: Նա Ռայմունդից պահանջեց իրեն հանձնել Անտիոքը, որպեսզի այնտեղ հենակետ ստեղծեր Զենգիի դեմ ռազմական գործողություններ ծավալելու համար, Զենգիի, որը սաստիկ սպառնում էր Սիրիայի ու Միջագետքի խաչակիրներին: Բացասական պատասխան ստանալով՝ Հովհաննը պատրաստվում է պաշարել քաղաքը, բայց այդ ձեռնարկը հետաձգեց մինչև գարուն և գնաց Կիլիկիա, որտեղ որսի ժամանակ ինքն իրեն վիրավորեց ու վերջից մահացավ (1143)[2]: Խոնիատն ասում է, թե մեռնող կայսրը իր մահվան մահճի չուրջը հավաքվածներին ու կայսրության մեծամեծներին դիմեց մի ճառով, որով ներկայացնելով արշավանքի ժամանակ իրեն ուղեկցած Մանուիլ որդուն՝ գահաժառանգին, ի միջի այլոց ասաց. «Ես հույս ունեի ոչ միայն Սիրիան ինձ ենթարկել, այլև ավելի խոշոր սխրանք գործել: Ես մտածում էի ապահով լողանալ Եփրատում և կուշտուկուռ խմել դրա ջրից, նաև տեսնել Տիգրիսն ու խորտակել բո-

[1] Տե՛ս **Ф. Успенский**, *История Византийской империи*, т. III, с. 209:

[2] **Nic. Chon.** *Historia*, p. 52.

[3] **Ioan. Cin.**, *Epitome*, p. 21.

[1] **Nic. Chon.** *Historia*, p. 52.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 53:

լոր Թշնամիներիս, որոնք գտնվում են ինչպես Կիլիկիայում, այնպես էլ դրան հարող երկրներում..., իսկ ապա արծվի՝ թռչունների արքայի պես թռչել հասնել... ուղղակի Պաղեստին»[1]:

Այս ճառը քաղաքական կտակ է պարունակում՝ ուղղված Մանուիլ որդուն և ծրագիր՝ Արևելքում Բյուզանդիայի արտաքին քաղաքականության համար:

Հովհան Կոմնենոսի խոսքերից որոշակիորեն հետևում է, որ Սիրիայի ու Կիլիկիայի նվաճումը կամ վարչական ենթարկումը հանդիսանում էր Բյուզանդական կայսրության նվաճողական ծրագրի նվազագույնը, իսկ առավելագույն ձգտումն էր, հաջողության դեպքում, տիրել Միջագետքին, ինչպես նաև Պաղեստինին: Մանուիլը փորձում էր կենսագործել հոր այս կտակը: Դեռ ավելին. նա քայլեր էր ձեռնարկում Եգիպտոսը նվաճելու համար: Սակայն նրա արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը եղել է Իտալիայի ու Փոքր Ասիայի ետ գրավումը, իսկ Հովհանի կտակի կատարումը ետ էր մղված երկրորդ պլան:

Կոմնենոսները, մանավանդ Մանուիլը, երազում էին վերականգնել Հուստինիանոսի ժամանակվա կայսրության սահմանները Արևելքում և Արևմուտքում, որոնք խախտված էին արաբների, սելջուկների ու նորմանների կողմից: Այդ ծրագրի այն մասի կենսագործման դեպքում, որը վերաբերում էր Արևելքին, Կիլիկիայի ռազմավարական դերին մեծ ուշադրություն էր հատկացվում, ինչը երևում է Նիկիտաս Խոնիատի հետևյալ տողերից. «Մանուիլը հատկապես շատ էր հոգում Կիլիկիայի քաղաքների ու բերդերի անվտանգության մասին, որոնց մեջ առաջին տեղը բռնում էր Տարսոնը՝ այդ երկրի մայրաքաղաքը»[2]:

Սակայն Մանուիլի արտաքին քաղաքականությունը աչքի չէր ընկնում հետևողականությամբ ու նպատակասլացությամբ: Նրա նախորդը՝ Հովհանը, ավելի մեծ նշանակություն էր տալիս Արևելքի, քան Հարավային Իտալիայի նվաճմանը: Մանուիլն էլ, ընդհակառակը, տարվեց Իտալիայում բյուզանդական տիրապետությունը վերականգնելու երազանքով, միաժամանակ չհրաժարվելով նաև Արևելքը վերադարձնելու մտքից:

XI դարի վերջին և XII դարի սկզբին Կիլիկիայում՝ Միջերկրական ծովի ափին, ինքնուրույն իշխանապետություն ստեղծելու՝ կիլիկեցի հայերի ջանքերն իզուր չանցան: Տարագիր հայերը ամուր բնակություն հաստատեցին նոր վայրերում՝ քանակապես ուժեղացնելով Կիլիկիայի հայ բնակչությանը: Նրանք բնակվեցին Տավրոսի լեռներում, որտեղ հեշտ էր պաշտպանվել թշնամիներից և պահպանել ազատությունը, բնակվեցին խոշոր քաղաքներում, որտեղ լայն ասպարեզ կար արհեստներով ու առևտրով զբաղվելու, և բերքառատ Կիլիկյան հարթավայրում՝ զբաղվելով հողագործությամբ: Այսպիսով, ստեղծվել էին բարենպաստ տնտեսական պայմաններ այդ երկրում հայերի քաղաքական ուժեղացման համար: Այստեղ՝ Կիլիկիայում, սելջուկների ու բյուզանդացիների, ինչպես և խաչակիրների դեմ մղվող պայքարում դրսևորվեցին հայերի մարտական ավանդույթները և նրանց ձգտումը քաղաքական անկախության, ինչի մասին վկայում են ոչ միայն հայ, այլև բյուզանդացի պատմիչները:

Բյուզանդական տիրապետությունը Կիլիկիայում, որը վերականգնվել էր Հովհանի 1137 թ. արշավանքով, կայուն չեղավ, քանզի այդ երկիրը շատ էր խորթացած կայսրությունից և բնակեցված էր հայերով, որոնք թշնամաբար էին վերաբերվում Բյուզանդիային: Բացի այդ Կիլիկիան չրջապատված էր սելջուկներով ու խաչակիրներով, որոնք միայն հարմար պահի էին սպասում, որպեսզի գրավեին այն, ինչը և նրանց հաջողվեց Հովհանի մահից (1143) հետո, գրավելով մի քանի մարզեր: Այս դժվարություններին, որ խանգարում էին Բյուզանդիային Կիլիկիան իր ձեռքում պահելու, անհրաժեշտ է ավելացնել և այն, որ արտաքին քաղաքականության մեջ Հովհանի հաջորդ Մանուիլ կայսրը գլխավոր ուշադրությունը սևեռել էր Արևմուտք, հատկապես նորմաններից հարավային Իտալիան ու Սիցիլիան ետ գրավելու համար, այլ ոչ թե դեպի Արևելք, թեև թուլացնելով պայքարը Ռումի սելջուկների՝ Ասիայում իր ամենաուժեղ թշնամիների դեմ՝ նա այնուամենայնիվ փորձում էր վերականգնել բյուզանդական տիրապետությունը Կիլիկիայում ու Սիրիայում:

Իր գերդաստանով Կոստանդնուպոլիս տարված Լևոն իշխանը մահացավ բանտում, իսկ նրա որդի Թորոսը, որին բյուզանդացիներն ազատեցին և ուզում էին «ընտելացնել», փախավ Բյուզանդիայից ու հասավ Կիլիկիա: Հայ բնակչությունը միավորվեց նրա չուրջը և երկրի շատ գավառներից դուրս քշեց բյուզանդացիներին ու սելջուկներին: Կիլիկիայի հայկական պետությունը վերականգնվեց:

Կոստանդնուպոլսից Թորոսի վերադարձի և նրա կողմից Կիլիկիան բյուզանդացիներից ետ նվաճելու մասին մի քանի մեկնակերպ կա: Միքայել Ասորին ասում է, թե հոր՝ Լևոնի մահից հետո Թորոսը Կոստանդնուպոլսից Կիլիկիա եկավ և կապեր հաստատեց Ասորիքի մետրոպոլիտ Աթանասի հետ, որը նրան աջակցություն ցույց տվեց: Թո-

[1] Nic. Chon. Historia, p. 56:

[2] Նույն տեղում, էջ 180:

րոսն սկզբում տիրեց Համուդ բերդին, իսկ ապա՝ ամբողջ Կիլիկիային[1]:

Սամուել Անեցու «Ժամանակագրության» մեջ կա ևս երկու այլ մեկնակերպ Թորոսի՝ Կիլիկիա ժամանելու մասին: Ըստ մեկի՝ նա նախ նավով ժամանել է Անտիոք, իսկ այնտեղից՝ Կիլիկիա, գտել է իր եղբայր Ստեփանին, և նրանք խորամանկությամբ տիրել են Համուդին, իսկ հետագայում, հենվելով այդ բերդի վրա, գրավել են երկիրը: Ըստ մյուս մեկնության նա եկել է Վահկա չրջան և հայտնվել տեղի քահանային, որը նրա մասին պատմել է հայ բնակչությանը: Տեղական բնակչության օգնությամբ նա սկզբում գրավել է Վահկա բերդը, իսկ ապա՝ ամբողջ Կիլիկիան՝ խլելով իշխանությունը հույներից և դուրս քշելով հունական զորքը[2]:

Հավաստիությունից դուրկ է այն տեսակետը, թե Թորոսը գտնվելիս է եղել Հովհանի զորքի մեջ և նրա մահից հետո փախել է ճամբարից, իր չուրջը հավաքել իրեն նվիրված մարդկանց և տիրել Վահկա ամրոցին[3]:

Այսպիսով, վերադառնալով Կոստանդնուպոլսից՝ Թորոսը հենվում է հայ բնակչության վրա և աջակցություն ստանալով ասորիներից՝ վերականգնում է Կիլիկիայի իշխանապետությունը:

Բյուզանդիայից Թորոսի՝ Կիլիկիա փախչելու մասին հաղորդում են նաև Սմբատը[4] և Կիննամուսը: «Թորոսը,— ասում է Կիննամուսը,— բացառիկ բախտի տեր մարդ էր, ազգով հայ, դեռ Իսավրիայի պատերազմների ժամանակ (նկատի է առնում 1137 թ. Հովհանի արշավանքը Իսավրիա ու Կիլիկիա – Գ. Մ.) զերի վերցված լինելով կայսր Հովհանի կողմից՝ Բյուզանդիայից փախավ Կիլիկիա և նպատակ դնելով Կիլիկիան անջատել կայսրությունից՝ այդ պրովինցիայի քաղաքներին կոչ էր անում ազատվել հռոմեների իշխանությունից»[5]: Այս խոսքերը որոշ լույս են սփռում այն բանի վրա, թե ինչպես է Թորոսը Բյուզանդիայից կարողացել նախ նվաճել Կիլիկիան: Ինչպես երևում է, Կիլիկյան քաղաքների բնակչությունը՝ բյուզանդական աստիճանավորների ծանր տուրքերից դժգոհ, անցել է Թորոսի կողմը, որն սկզբում տիրել է լեռնային չրջաններին: 1152 թ. համարյա ամբողջ Կիլիկիան, այդ թվում և Տարսոն, Ադանա, Անազարբա, Սիս ու Մամեստիա քա-

[1] Տե՛ս **Մխայէլ Ասորի**, Ժամանակագրութիւն, էջ 422:

[2] Տե՛ս **Սամուէլի Անեցւոյ** Հաւաքմունք, էջ 131:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 206:

[4] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 81:

[5] **Ioan. Cin.**, Epitome, p. 121.

դաքները, անցել են Թորոսի իշխանության ներքո: Բյուզանդիայի համար Կիլիկիան կորցնելը նշանակում էր զրկվել Կիլիկիան ու Հյուսիսային Միջագետքը նվաճելու անհրաժեշտ բազայից:

Ֆ. Ուսպենսկին Շալանդոնին հետևելով կրկնում է, թե «Թորոսը աջակցություն է գտել լատինացի բարոններից՝ Եդեսիայի և Անտիոքի վասալներից»[1]: Այս պնդումը ճիշտ չէ: Թորոսն սկսել է գործել 1145 թվականից, այսինքն այն ժամանակվանից, երբ Եդեսիայի իշխանապետությունը կործանված էր աթաբեկ Զենգիի կողմից, և խոշոր հաջողությունների հասավ 40-ականների վերջին ու 50-ականների սկզբին, երբ Անտիոքին սպառնում էր Նուր ադ-դինը: Նրան աջակցել են ոչ թե լատինացի բարոնները, այլ Կիլիկիայի հայ բնակիչները:

Կիլիկիայի հայկական իշխանապետության վերականգնմանը նպաստել են նաև Եդեսիայի անկումից (1144) և Նուր-ադ-դինի դեմ տրված ճակատամարտում Ռայմոնդ Անտիոքացու մահից (1144) հետո խաչակիրների թուլացումը և Կորֆա կղզու համար Սիցիլիայի թագավորության դեմ Բյուզանդիայի մղած պատերազմը:

Մեծ նշանակություն տալով Կիլիկիայի ետ նվաճմանը՝ Մանուիլն այդ նպատակն իրագործելու համար 1152 թ. որոշեց այնտեղ ուղարկել մի մեծ բանակ Անդրոնիկոս Կոմնենոսի գլխավորությամբ: Ռազմարշավային բանակ պահելու համար նրան իրավունք էր վերապահված հարկ հավաքել նաև Կիպրոս կղզուց[2]: Մանուիլը Անդրոնիկոսին «լիակատար ազատություն տվեց պատերազմը վարելու գործում»[3] ընդդեմ Թորոսի: Թեև Կիլիկիայի նշանակալի մասը գրավված էր Թորոսի կողմից, սակայն լեռնային ամրոցներից մեկը՝ Լամբրոնը, գտնվում էր Բյուզանդիային մշտապես հավատարիմ, Հայազգի Օշինի ձեռքին, որն օգնում էր Անդրոնիկոսին Թորոսի դեմ ծավալած ռազմական գործողությունների ժամանակ:

Անդրոնիկոսի պատերազմը Թորոսի դեմ չատ անհաջող էր Բյուզանդիայի համար: Այս մասին կարդում ենք Նիկիտաս Խոնիատի մոտ. «Գալով Կիլիկիա և թշնամանալով Թորոսի հետ՝ նա հաճախ մարտի էր մտնում սրա հետ և անհաջող մարտնչում, և փառավոր ոչ մի բան չարեց... ու ամոթալի պարտություն կրեց սրանից»[4]: Բյուզանդական կայսրության պատերազմը Կիլիկիայի հայկական իշխանապետության դեմ 1152 թ. ավարտվեց բյուզանդական բանակի լիակատար

[1] **Ф. Успенский**, История Византийской империи, т. III, с. 284.

[2] Տե՛ս **Nic. Chon.** Historia, p. 180:

[3] Տե՛ս **Ioan. Cin.**, Epitome, p. 121:

[4] Տե՛ս նույն տեղում:

պարտութեամբ: Հայ և բյուզանդական աղբյուրների տեղեկութիւնները նրա պարտութեան մասին համընկնում են:

Իրադարձութիւնների ժամանակակից Գրիգոր Երեցը հաղորդում է, թե երբ Անդրոնիկոսի զորքը մոտեցավ Մամեստիայի պարիսպներին, հույները, սպառնալով Թորոսին, բղավում էին. «Մենք հետևներս ունենք այն չղթաները, որով կապկպեցինք ու գերի տարանք հորդ. դրանցով քեզ էլ կկապկպենք ու գերի կտանենք»: («Զերկաթն, որով զբո հայրն տարաբ, ի հետ ունիմք, որով զքեզ կապեալ տարցուք»)[1]: Նույն հեղինակի խոսքերով ասած. «Իբրև ոչ կարաց տանել կորովի այրս այս ամբարտավանութեան և խրոխտ կամաց նորա, ապա վստահացեալ ի զօրութիւն Քրիստոսի: Որ բարձրացոյց զնա և ի չգոյէ ի գոյ էած, պատառեաց զպարիսպ քաղաքին Մսոսայ [Մամեստիա] ի գիշերի: Եւ ծագել արեգականն առեալ զդօրս իւր ել ընդդէմ նոցա ի պատերազմ և հարեալ զնոսա՝ յաղթեաց և արար փախստական զամենեսեան՝ արս երկոտասան հազար. վատնէր զնոսա և ի սուր սուսերի մաշէր, ի մի ական քթթել տապաստ արկանէր զամենեսեան: Ընդ որս և ի մեծ պատերազմին ըմբռնեցին զՕշինն, որ էր տէր Լամբրոնին, և զվասիլն, որ տէր Բարձրբերդոյ և եղբայր Տիգրանայ, և այլ բազում զօրս կալեալ մերկացուցանէին և Թոզուին զթուլամորթ Հոռոմանին... առեալ բռնութեամբ ի նմանէ իբրև կանացոյ՝ խնդրելով զվրէժ հորն իւրոյ...»[2]: Միևնույն մեկնակերպն ենք կարդում Կիննամուսի մոտ, որը գրում է, թե ընտրելով անլուսին և անձրևոտ մի օր, Թորոսը արտագրոհ արեց և գլխովին ջախջախեց հռոմեներին, իսկ Անդրոնիկոսը, հաղիվ խուսափելով գերի ընկնելուց, ապաստան գտավ Անտիոքում[3]:

Նիկիտաս Խոնիատը տալիս է Մամեստիայի պարիսպների մոտ տեղի ունեցած ճակատամարտի հետաքրքիր նկարագրութիւնը: «Անդրոնիկոսը,– գրում է նա,– իր զորքերն այսպես չարեց. այն ներկայացնում էր կենդանու պես մի բան, որն ուներ գլուխ, պոչ և մնացած այլ մասերը: Թորոսն էլ, ընդհակառակը, իր զորքը բաժանեց մի քանի ջոկատների և փայլուն հաջողութեան հասավ: Մարտի ժամանակ Անդրոնիկոսի բանակը չդիմացավ ուժգին գրոհին հայոց զորքի, որն աստիճանաբար ուժեղանում էր ամրութիւններից դուրս եկածների հաշվին, և ամօթալի փախուստի դիմեց»[4]:

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** ժամանակագրութիւն, էջ 400:

[2] Նույն տեղում, էջ 400–401:

[3] Տե՛ս **Cin.,** *Epitome*, p. 124:

[4] **Nis. Chon.** *Historia*, p. 180.

Հայ և բյուզանդացի պատմիչների տեղեկութիւնները Մամեստիայի պաշարման ժամանակ Անդրոնիկոսի կրած պարտութեան մասին հետաքրքիր են չատ առումներով: Նախ՝ պարտութիւն է կրել բյուզանդացիների բավական մեծ մի բանակ, ընդ որում հայերը նրանց գերազանցել են ոչ միայն քաջութեամբ, այլև կովելու համառութեամբ, երկրորդ՝ ջախջախվել են և թուլացել կիլիկիայի հայ ազդեցիկ ավատատերերը՝ Բյուզանդիայի կողմնակիցները և Ռուբինյանների իշխանութեան տակ երկրի միավորմանը թշնամաբար տրամադրվածները: Նրանք ստիպված են եղել ընդունել Ռուբինյանների առաջնութիւնը:

Այդպիսի հայկական տոհմերից մեկը՝ Լամբրոնի իշխանական տոհմը, որի հիմնադիրն է եղել Օշինը, իսկ ներկայացուցիչը՝ Թորոսի մոտ գերի ընկած Օշինի թոռ Օշինը, յուրաքանչյուր հարմար պահի վերսկսում էր պայքարը Ռուբինյանների դեմ: Լամբրոնի իշխանները մինչև XII դարի վերջը եղել են Բյուզանդիային նվիրված վասալներ:

Եթե հավաստի է այն թիվը, որ տալիս է պատմիչ Հեթումը, Օշինը, որպեսզի ազատվեր գերութիւնից, պետք է վճարեր 40000 բյուզանտ, բայց վճարել է այդ գումարի կեսը միայն, երկրորդ կեսն էլ հաշվել են որպես Թորոսի աղջկա օժիտ, որի հետ ամուսնացել է Օշինի որդի Հեթումը: Բայց ազգակցական կապն էլ չդադարեցրեց կիլիկիայի երկու երևելի իշխանական տոհմերի միջև եղած թշնամութիւնը. այն նորից բռնկվեց, քանի որ Օշինը չարունակում էր օգնել Բյուզանդիային՝ նրա պայքարում ընդդեմ Թորոսի: Եվ Թորոսը պաշարեց Լամբրոնը: Երկու թշնամական կողմերի միջև որպես միջնորդ հանդես եկավ Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի եղբայր Ներսես Շնորհալին, որը չուտով կաթողիկոս դարձավ: Վերջինս հաշտեցրեց Օշինին ու Թորոսին՝ «նրանց կապելով անքակտելի բարեկամութեամբ», որը, սակայն, հակառակ այս սկզբնաղբյուրի պնդման, անկայուն դուրս եկավ:

Ռուբինյաններն այն դրական հատկանիշն ունեին, որ ձգտում էին կիլիկիայի ամբողջ տարածքն ազատել Բյուզանդիայի իշխանութիւնից: Թեև նրանք երբեմն ստիպված էին լինում խուսանավել և ժամանակավորապես ճանաչել Բյուզանդիայի գերիշխանութիւնը, բայց նվազագույն ոչ մի առիթ բաց չէին թողնում, որպեսզի անկախ դառնային և լինեին կիլիկիայի լիակատար տերերը, ինչը և նրանց ի վերջո հաջողվեց իրագործել:

Անդրոնիկոսի բանակի ջախջախումից հետո Բյուզանդիան զբաղված լինելով Իտալիայում մղվող անհաջող պատերազմով՝ չկարողա-

ցավ Կիլիկիա ուղարկել զգալի ուժեր, ուստի և Մանուիլը սպրդեց Ռումի սուլթան Մասուդին հարձակվելու Կիլիկիայի վրա: Սակայն, ինչպես ասում է ժամանակագիրը. «... զորացան չնորհիւն Քրիստոսի զօրքն հայոց և նկին լաւն ընդ մէջ՝ նոքա. յայնկոյս լերինն ընդ սահմանս իւրեանց, և սոքա յայսկոյս ընդ երկիրս իւրեանց՝ անհոգութեամբ ոչինչ համարելով զրազմութիւն այլազգեացն: Իսկ նոցա տեսեալ զհամարձակութիւն քրիստոնէից գնդին՝ զարմացեալք և ապշեալք ասեին. «Ձի՞նչ են նոքա զանձն ի մահ եղեալ...»: Եւ սուլտանն Թուրքաց պատգամաւոր առաքէր առ զօրաւարն հայոց Թորոս և ասէր. «... զառեալ երկիր, զոր առիր բռնութեամբ, դարձո անդրէն առ թագաւորն հունաց»... Հայոց կողմը պատասխանում է. «Երկիր դարձուցանել զմեզ ի հոռոմն անհնար է»: Զայս լուեալ սուլտանին՝ ոչ նեղեաց զնա, այլ զաչինս սիրո խաղաղութեան երդմամբ գրեալ նոտ տանել զօրսն հայոց...»[1]: Սակայն հայ իշխանի այս խոստումն անկատար մնաց:

1155 թ. Մասուդը, զրամական մեծ նպաստ ստանալով Մանուիլից, որպեսզի պատերազմ սկսեր Թորոսի դեմ, ներխուժեց Կիլիկիա: Բայց նա չկարողացավ վերցնել Մամեստիան, Անազարբան և Թիլ-Համդունը: Սելջուկների երեքհազարանոց զոհատը միաժամանակ փորձեց Կիլիկիայից՝ Պորտելլայի միջով ներխուժել Անտիոքի իշխանապետութիւնը, բայց լեռնային կապանում ջախջախվեց դարանակալած տաճարական ասպետներից և հայերից, որոնց գլխավորում էր Թորոսի եղբայր Ստեփանը: Այս պարտութեան լուրը սելջուկների հիմնական զորքին ստիպեց նահանջել Կիլիկիայի սահմաններից[2]: Նահանջի ժամանակ սելջուկները մեծ կորուստ կրեցին Տավրոսի լեռնային կածաններն ու կապանները բռնած հայերից:

Սուլթան Մասուդի զորքերի դեմ Կիլիկիա կատարած անհաջող ներխուժումներից հետո Մանուիլ Կոմնենոսը Անտիոքի իշխան Ռեյնալդ Շատիլիոնցուն դրդեց կռվի նլնել Կիլիկիայի հայկական իշխանապետութեան դեմ: Ռեյնալդը Թորոսից պահանջեց մաքրել սահմանամերձ Գաստոն բերդը: Անտիոքի խաչակիրների և Կիլիկիայի հայերի միջև ռազմական ընդհարումներ տեղի ունեցան: Ըստ մի աղբյուրի Ռեյնալդը պարտութեան կրեց և ստիպված եղավ նահանջել, ըստ ուրիշ աղբյուրների՝ պարտութեան կրեց Թորոսի զորքը[3]:

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** ժամանակագրութիւն, էջ 402–403:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 172:

Սակայն դա չէ կարևորը: Կարևորն այն է, որ Ռեյնալդը և Թորոսը չուտով հաշտվել են: Բյուզանդիայի քաղաքականութիւնը, որի նպատակն էր երկպառակութիւն սերմանել նրանց միջև և դրանով իսկ թուլացնել Անտիոքի ու Կիլիկիայի իշխանապետութիւնները, սնանկ է դուրս եկել: Ռեյնալդն ու Թորոսը հասկանալով այդ՝ ոչ միայն հաշտութիւն են կնքել, այլև 1156 թ. համատեղ հարձակում են գործել Բյուզանդիային պատկանող Կիպրոսի վրա և այնտեղից մեծ ավար բերել:

Այսպիսով, XII դարի 50-ական թվականներին Ռուբինյանների հայկական իշխանապետութիւնն արդեն այնքան ուժեղացավ, որ խոշոր հաղթանակ տարավ բյուզանդացիների դեմ և նոտ մղեց սելջուկների ու խաչակիրների հարձակումները: Վերջիններիս հետ դաշինք կնքվեց Բյուզանդիայի դեմ համատեղ գործողութիւններ սկսելու համար:

Բյուզանդիան ստիպված էր հաշտվել Կիլիկիայում իր տիրապետութեան անկման փաստի հետ, քանի որ զբաղված էր Ռոժեր Սիցիլիացու դեմ պատերազմելով: Բրինդիզիոնի մոտ Բյուզանդիայի կրած պարտութիւնը ցույց տվեց, որ նա անզոր է նոտ նվաճելու Իտալիան: Անհաջողութիւն կրելով Արևմուտքում և տեսնելով իր թշնամիների ուժեղացումը Ասիայում՝ Մանուիլը որոշեց դաշինք կնքել Ռոժերի հաջորդ Վիլհելմի հետ և զբաղվել Արևելքով:

Հովհան Կիննամուսը, նկարագրելով Մանուիլի արտաքին քաղաքականութիւնը և պատերազմները, ամեն անգամ նշում է Արևելքի ու Արևմուտքի ռազմական իրադարձութիւնների փոխադարձ կապը: «Այդպիսի անհաջող վախճան,– գրում է նա,– ունեցան հոռոմների համար իտալական պատերազմները, սակայն, երբ զրանք դեռ չարունակվում էին, կայսրը սաստիկ մտահոգված էր այն ժամանակ Ասիայում տեղի ունեցող իրադարձութիւններով, իսկ այժմ ամբողջովին զբաղվեց այդ գործով: Պարսից սուլթանը (Ռումի – Գ. Մ.) զրավեց հոռոմների Պոնուրա և Սիբիլա քաղաքները, Թորոսը, որի մասին արդեն հիշատակել ենք, նույնպես զրավել էր Կիլիկիայի շատ քաղաքներ, բացի այդ, պարսից Փիլարքոս Յակուբհասանը (Դանիշմենդը – Գ. Մ.)՝ Կապադովկիայի տերը, ասպատակում էր պոնտական Ինեոպը և Պավրայուն քաղաքները»[1]: Բայց միայն հարավային Իտալիան նորմաններից նվաճելու ձգտումը չէր, որ Մանուիլի ուշադրութիւնը չեզոում էր Արևելքից: Նա միջամտում էր նաև մերձդանուբյան երկրների ներքին գործերին: Նիկիտաս Խոնիատը այդ բանը նշում է հետևյալ

[1] **Ioan. Cin.,** Epitome, p. 176.

կերպ. «Իր գործերը հնարավորին չափով կարգավորելով Վրանից-լավում և Վելեգրադում, կայսրը վերադարձավ մայրաքաղաք, և երբ համաձայնագրի հետևանքով Թշնամիներն Արևմուտքում մի քիչ հանդարտվել էին, որոշեց արշավել դեպի Հայաստան»[1]:

Կիննամոսն ընդգծում է, որ հայ իշխան Թորոսի ռազմական հաջողությունները Կիլիկիայում XII դարի 50-ականներին և Անտիոքը իր իշխանության ենթարկելու Մանուիլի ձգտումը նրան դրդեցին 1158 թվին արշավանք կատարել Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի իշխանապետության դեմ[2]: Ժամանակավորապես հրաժարվելով Արևմուտքում մղվելիք պայքարից, ձգտելով կայունացնել բյուզանդական տիրապետությունը Արևելքում՝ Մանուիլը XII դարի 50-ական թվականներին Բյուզանդիայի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը համարում էր ոչ թե պայքարը Ռումի սուլթանության և Դանիշմենդների նվաճումների դեմ Փոքր Ասիայում, այլ Կիլիկիայի ու Սիրիայի նետ նվաճումը՝ այդ կողմով դեպի Երբատ առաջխաղացման համար: Հետաքրքիր է նշել, որ Ասիայում այլ հակառակորդների դեմ Մանուիլն իր զորապետներին էր ուղարկում ոչ մեծ ուժերով, իսկ դեպի Կիլիկիա ինքն էր արշավում:

Ռումի սուլթանության միջով չարժվելով դեպի Կիլիկիա՝ Մանուիլը ձեռնում էր, թե մտադիր է միայն սելջուկների դեմ կռվել, որպեսզի Թորոսին հանկարծակիի բերեր: Այս նպատակով, ինչպես և «սաստիկ ցանկանալով բռնել Թորոսին», Մանուիլը նրա դեմ ուղարկեց մի ջոկատ, որը պետք է Թորոսի հետ կռվի բռնվեր և նրան տեղում պահեր այնքան ժամանակ, մինչև ինքն անցներ նրա թիկունքը: Բայց Թորոսը նախազգուշացված էր կայսեր արշավանքի մասին և քաշվեց դեպի լեռները: Մանուիլը գրավեց Անարզաբան, Տարսոնը և այլ քաղաքներ, իսկ ապա ներխուժեց Սիրիա[3]: Ինչպես վկայում է Նիկիտաս Խոնիատը. «Մանուիլը հոր նման չկանգ պատերազմել Հանուն ամբողջ Հայաստանի տիրապետման և նույնիսկ Թորոսից չպահանջեց նետ վերադարձնել Հովհանի գրաված ամրոցները... Տարվելով դաշինքի հրապուրիչ պայմաններով՝ նա թեքվեց ու մտավ Անտիոք»[4]: Անտիոքի իշխան Ռեյնալդը, որը դրանից քիչ առաջ կողոպտել էր Բյուզանդիային պատկանող Կիպրոսը, ստիպված եղավ Մանուիլի մոտ գալ բանակցությունների: Երուսաղեմի թագավոր Բալդուինի միջնորդությամբ հաշտություն կայացավ, ըստ որի Անտիոքի իշխանապետությունը ճանաչում էր իր կախվածությունը Բյուզանդիայից և պարտավորվում էր նրա օգնության համար տրամադրել մի ջոկատ»[1]: Մանուիլը հաշտվեց նաև Թորոսի հետ: Մեզ թվում է, թե հաշտության դաշինքները իշխան Թորոսի և իշխան Ռեյնալդի հետ Մանուիլը կնքել է գլխավորապես Հանուն համատեղ պատերազմի՝ ընդդեմ Նուր ադ դինի, որը վտանգավոր էր դարձել և՛ խաչակիրների, և՛ Կիլիկյան Հայաստանի, և՛ Դաշտային Կիլիկիայի վրա բյուզանդական տիրապետության համար:

Բյուզանդական կայսրի զիջողական վերաբերմունքը և փոխզիջողական համաձայնագիրը Ռեյնալդի ու Թորոսի հետ բացատրվում են, ըստ երևույթին, Կիլիկիայի և Անտիոքի իշխանապետության վերջնական և հաստատուն նվաճման հետ կապված դժվարություններից բացի, նաև Մանուիլի ձգտումով՝ հյուսիսային Սիրիան ու Հյուսիսարևմտյան Միջագետքը գրավել Զենգիյաններից, որոնք չատ էին ուժեղացել նրանց կողմից Եդեսիայի կոմսության կործանումից (1114), Հալեպի ու Դամասկոսի զավթումից և երկրորդ խաչակրաց արշավանքի անհաջողությունից հետո, այսինքն Հովհան Կոմնենոսի մահվանից (1143) մինչև Մանուիլի արշավանքն (1159) ընկած միջանկյալ ժամանակաշրջանում:

Նուր ադ դինն այդ ժամանակ սաստիկ սպառնում էր Անտիոքի իշխանապետությանը և մասամբ Կիլիկիային: Ուստի հասկանալի է Երուսաղեմի թագավոր Բալդուինի փութաջանությունը, որն այնպես նոանդով միջնորդում էր Մանուիլի առաջ Ռեյնալդի ու Թորոսի համար: Ընդհանուր համաձայնության հետևանքով կազմվեց Երուսաղեմի թագավորության, Անտիոքի իշխանապետության, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդիայի ռազմական դաշինք՝ ընդդեմ ընդհանուր թշնամի Նուր ադ դինի: Մանուիլը հույս ուներ խաչակիրների և հայերի օգնությամբ ջախջախել Նուր ադ դինին, մուտենալ Եփրատին և իր գերագույն իշխանությունը տարածել Կիլիկիայի, Սիրիայի ու Պաղեստինի վրա: Սակայն այդ դաշինքը անկայուն ու կարճատև եղավ և չտվեց դրական արդյունքներ:

Դեպքերի ականատեսը՝ հայ տարեգիր Գրիգոր Երեցը, մասամբ լրացնելով լատինական ու հունական աղբյուրները՝ մի քանի ուշագրավ մանրամասնություններ է հաղորդում Բյուզանդիայի հետ Արևելքի քրիստոնյա պետությունների փոխհարաբերությունների մասին, ինչպես և այդ պետությունների փոխհարաբերությունների

[1] **Nic. Chon.** *Historia, p. 139.*

[2] **Ioan. Cin.,** *Epitome, p. 178.*

[3] Նույն տեղում, էջ 180:

[4] **Nic. Chon.** *Historia, p. 134.*

[1] **Ioan. Cin.,** *Epitome, p. 186.*

մասին միմյանց հետ՝ մի կողմից, և Նուր ադ դինի հետ՝ մյուս կողմից, դևպի Կիլիկիա ու Սիրիա Մանուիլի կատարած արշավանքի ժամանակ[1]: Նկարագրելով Նուր ադ դինի դեմ Անտիոքի իշխանապետության ու Երուսաղեմի թագավորության պայքարը հանուն սահմանամերձ մարզերի և ի թիվս դրանց նաև Դամասկոսի, որը գրավված էր վերջինիս կողմից, հայ տարեգիրը հաղորդում է, որ Բալդուին III թագավորը (1143–1162), նկնկով ստեղծված դրությունից, որոշել էր, ըստ երևույթին, ամուսնանալ Մանուիլի զարմուհու հետ: Նա անտարակույս ուզում էր իր համար կանխապես ապահովել Բյուզանդիայի աջակցությունը՝ Նուր ադ դինի դեմ մղվելիք պայքարում: Կայսր Մանուիլը հաճությամբ ընդունեց առաջարկը և հնծյալ ջոկատի ուղեկցությամբ իր քեռու աղջկան ուղարկեց Երուսաղեմ «և այլ ևս խոստանայ նմա իակ թագաւորն Հոռոմոց գալ անձամբ օգնական լինել քաղաքին Երուսաղէմի և ամենայն քրիստոնէից: Եւ ոչ յամեաց, այլ վաղվաղակի ի սոյն ամի, մինչ Թուականն Հայոց (1159) էր, նկն թագաւորն հունաց յաչխարհն Թորոսի, զոր բռնութեամբ առեալ էր ի կոմսնապահէն հունաց...»[2]:

Պատմելով հետագա դեպքերը (Բալդուին III-ի և տաճարականների միջնորդությունը Թորոսի համար, վերջինիս գալը կայսեր ճամբարը և նրա հետ հաշտվելը՝ Բյուզանդիայի գերիշխանությունը ճանաչելու պայմանով), Գրիգոր Երեցը գրում է. «Եւ այսորիկ խորհուրդ բարի ի մէնջ առեալ թագաւորքն և անյաղթելի զօրք փրերացն, տէրն Անտիոքու և Թորոս, միահամուռն ամենայն ազգ քրիստոնէիցն հաւատովք և ջերմեռանդն սրտիւ միաբանեալ կամ մեռանիլ և կամ փրկել զանգերծանելի գերեալսն ի բազում ժամանակաց յարիւնաչէն քաղաքն Հալապայ և Դմչկայ: Եւ չուեալ ամենայն բազմութեամբն եկն յԱնտիոք... Եւ լուեալ անօրինացն զհամբաւս զայս... յղեաց Նօրօտինն, որ էր տէր Հալապայ և Դմչկանայ՝ դեսպանս առ թագաւորն, և խոստացաւ տալ ծառայս ի գերելոց քրիստոնէից... Յանկարծակի յագդմանէ չարին հրովարտակ եհաս ի թագաւորական քաղաքէն չփոթ լինել աթոռոյն և կամ յայլ կախարդասար դիպուածոց, զոր ստուգիւ ոչ կարացաք ի վերայ հասանել պատճառին որպէս և եղև գործ սատանայի, բայց ստուգիւ այս էր պատճառն, որ լուր գրկինձն հաւանեցոյց և զԹորոսի խլած երկիրն դարձոյց, և դայն բաւական համարեցաւ իր յաղթութիւն»[3]: Այս նույն ժամանակագրի ասելով «ի

[1] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 413–423:*

[2] *Նույն տեղում, էջ 417:*

[3] *Նույն տեղում, էջ 419, 420, 421:*

խորհուրդ մտեալ թուլամորթ և կանացի ազգն Հոռոմոց՝ ասելով ընդ թագաւորն իւրեանց. «Մի՛ լսեր փառազաց և հայոց. փութացի՛ր երթալ յաթոռն քո, և դարձեալ եկեսցես յորժամ կամեսցես»[1]: Չնայած խաչակիրների հորդորանքներին՝ օգնել իրենց, որպեսզի Նուր ադ դինը գերությունից վերադարձնի քրիստոնյաներին, Մանուիլը հուրախություն վերջինիս՝ նրա հետ հաշտություն կնքեց և սկսեց նատդարձ երթը՝ «փոխանակ զօրեղ առիւծոյ՝ իբրև զաղուէս տկար, և որպես փախստական...»[2]:

Կիննամուսի հաղորդման համաձայն Մանուիլը խաղաղության դաշինք կնքեց Նուր ադ դինի հետ, որն ազատեց վեց հազար գերի քրիստոնյաների և խոստացավ նրան օգնել ընդդեմ «ասիացի թըշնամիների» (պետք է հասկանալ՝ ընդդեմ Ռումի սելջուկների), այնուհետև, սակայն, բախում տեղի ունեցավ բյուզանդացիների ու սարակինոսների միջև, և կայսրը նորից պատրաստվեց արշավանքի նլնել, «բայց Արևմուտքից նրան հասած լուրերը, թե՝ գործերն այնտեղ վերսկսվել են, նրան խանգարեցին կատարել իր մտադրածը»[3]: Միքայել Ասորին Նուր ադ դինի դեմ կատարվելիք արշավանքից Մանուիլի հրաժարվելու պատճառի մասին գրում է. «Բոլոր քրիստոնյաները՝ հույները, ֆրանկները և հայերը միավորվեցին, որպեսզի գրավեին Հալեպը, Դամասկոսն ու ամբողջ Սիրիան: Բայց այնժամ Կոստանդնուպոլսից լուր եկավ դավադրության մասին: Ուզում էին ուրիշ կայսր հաստատել գահի վրա: Ահա թե ինչու կայսրը վերադարձավ Կոստանդնուպոլիս, և դավադրությունը տեղի չունեցավ»[4]:

Պատմաբան Շալանդոնը ենթադրում է, թե Մանուիլը երբեք միտք չի ունեցել խորտակել Նուր ադ դինի հզորությունը, թե դա նրա կողմից մեծ սխալ կլիներ: Նրա կարծիքով կայսրը հրաժարվել է ոչ թե այն բանի համար, որ տագնապալի լուրեր է ստացել Կոստանդնուպոլսից, այլ Զննգիյանին չջախջախելու ցանկությունից, որից կուժեղանար Անտիոքի իշխանապետությունը[5]: Սա այնքան էլ ճիշտ չէ: Հակասությունները Արևելքի պետությունների միջև, ինչպես և Բյուզանդիայի ու դրանց միջև, ավելի բարդ են եղել: Աղբյուրներից հայտնի է, որ Մանուիլը մտադրություն է ունեցել պատերազմել Նուր ադ դինի դեմ, բայց տատանվել է և տատանվել է ոչ միայն նրա համար,

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 422:*

[2] *Նույն տեղում:*

[3] **Cin.,** *Epitome, p. 189.*

[4] *Chronique de Michel le Syrien, t. III, p. 316.*

[5] *Տե՛ս* **F. Chalandon,** *Les Comnènes, p. 454:*

որ վախենում էր խաչակիրների ուժեղանալուց: Բյուզանդական կայսեր տատանումը և անվճռականությունը բացատրվում են ոչ միայն Արևելքի իրադրությամբ, այլև Բյուզանդիայի ներքին թուլությամբ, ինչպես և Արևմուտքում կայսրության պատերազմներով: Կոմնենոսները տառապում էին մեծապետական մոլուցքով: Հովհաննն ու Մանուիլը ձգտում էին վերականգնել Հուստինիանոսի և Վասիլ I-ի ժամանակվա սահմանները ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում, իսկ Բյուզանդիայի նյութական և մարդկային ռեսուրսները ակնհայտորեն անբավարար էին, քանի որ զրկված էր Հայաստանից, Փոքր Ասիայից, Հարավային Իտալիայից և զգալի չափով կորցրել էր տարանցիկ առևտրի իր նկամուտները խաչակիրների կողմից Սիրիայի նավահանգիստները նվաճելու հետևանքով, որոնք, բացի այդ, մրցակցում էին Կոստանդնուպոլսի հետ:

Աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1158–1159 թթ. արշավանքի ժամանակ Մանուիլը ուժգին նախապատրաստվում էր պատերազմի ելնել Նուր ադ դինի դեմ: Գրավել առևտրական ուղիները՝ Սիրիայի նավահանգիստներից մինչև Եփրատ. սա եղել է բյուզանդական կայսրերի մշտական ձգտումը: Հովհանի արշավանքի նպատակը նույնպես եղել է Եփրատով ձգվող սահմանի վերականգնումը, որը խախտվել էր սելջուկ-թուրքերի ներխուժումից, ինչը երևում է նրա քաղաքական կտակից: Թորոսի ու Ռեյնալդի հետ համաձայնագիր կնքելիս Մանուիլի դիվոգականությունը կարելի է բացատրել հատկապես Կիլիկիայի Ռուբինյանների հայկական իշխանապետության և Անտիոքի իշխանապետության ուժերն այդ նպատակին հասնելու համար օգտագործելու նրա ցանկությամբ: Այս համաձայնագրի կնքումից հետո բյուզանդացիները, խաչակիրները և հայերը սկսեցին պատրաստվել Նուր ադ դինի դեմ[1] համատեղ արշավանքի: Արաբական աղբյուրներում կարելի է տագնապ նկատել այս նախապատրաստությունների և Մանուիլի ու խաչակիրների դաշինքի առթիվ, իսկ հայկականներում՝ Նուր ադ դինի դեմ հաղթանակի հույս: Արաբ հեղինակներից մեկը գրում է. «Հույների ճամբարից եկավ կայսեր դեսպանը՝ աթաբեկի համար նվերներ բերելով: Ասում են, որ ֆրանկները պայմանագիր են կնքել հունաց կայսեր հետ և թագավորների միջև դաշինք է կնքված: Թող ամենակարող ալլահը այդ երկու թագավորներից յուրաքանչյուրի սրտում չարություն բորբոքի և արժանի պատիժ որոշի նրանց ուխտադրժության դիմաց»[2]:

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** ժամանակագրություն, էջ 419:

[2] Historiens orientaux, t. IV, p. 104–105.

Հենց այս մասին հայ ժամանակակից պատմիչը գրում է. «Եւ լուեալ անօրինացն զհամբաւ զայս... զմիաբանութիւն հաւատացելոցն յաղագս այլազգեաց կործանման... ամենեքեան ահաբեկ եղեալ և ի կոր կործանեալ յերկիւղէ թագաւորացն (բյուզանդացի, հայ, ֆրանկ – Գ. Մ.) յոյց Նօրօտինն (Նուր ադ դին), որ էր տէր Հալապայ և Դրմշկայ (Դամասկոսի) դեսպանս առ թագաւորն, և խոստացաւ տալ ծառայս ի գերելոց քրիստոնէից, զոր անողորմ չարչարէին՝ տան հազար»[1]:

Երբ Սիրիայի արաբ իշխանները իմացան Մանուիլի Անտիոք ժամանելու մասին, իրենց ջոկատներով չտապցին Հալեպ՝ Նուր ադ դինին օգնության[2]: Նրանք ոչ միայն «սարսափով բռնվեցին», այլ սինքն հասկացան Երուսաղեմի թագավորության, Կիլիկյան Հայաստանի ու Բյուզանդիայի միացյալ ուժերի արշավանքի վտանգավորությունը, այլև իրենք միավորվեցին Մանուիլի ու նրա դաշնակիցների դեմ պայքարելու համար:

Մանուիլը պետք է որ նպատակ ունեցած լիներ կիլիկյան և անտիոքյան իշխանների օգնությամբ ջախջախել Նուր ադ դինին և, հենվելով կիլիկյան ու սիրիական նավահանգիստների վրա, այդ կողմից ընդհուպ մոտենալ Եփրատին, որի մատույցները հյուսիսից փակել էին Իկոնիայի սելջուկները և Դանիշմենդների պետությունը: Միջերկրական ծովից մինչև Եփրատ, Լաոդիկեից ու Տարսոնից մինչև Մելիտինն ու Եդեսիա ձգվող ամբողջ տարածության տիրապետման հեռանկարը գրավիչ էր, բայց դժվար իրագործելի: Դա Բյուզանդիայից կպահանջեր չատ ժամանակ և մեծ ռեսուրսներ, ապահովված թիկունք՝ Արևելքում, խաղաղություն՝ Եվրոպայում, ինչպես և անդորր՝ երկրի ներսում: Հենց այդ ամենն էր, որ պակասում էր Բյուզանդիային: Այստեղից էլ՝ Մանուիլի անվճռականությունն ու տատանումները:

Ըստ Շալանդոնի, Մանուիլի արշավանքը Նուր ադ դինի դեմ սխալ կլիներ: Իրականում արշավանքից նրա հրաժարումը չատ տխուր հետևանքներ ունեցավ Բյուզանդիայի, մանավանդ Կիլիկիայում նրա տիրապետության համար: Կայսեր հեռանալուց հետո Նուր ադ դինն ուժեղացավ և սկսեց սպառնալ Կիլիկիայի բյուզանդական կուսակալին, Անտիոքի իշխանապետությանը և Ռուբինյանների հայկական իշխանապետությանը: Բայց այնուամենայնիվ պետք է խոստովանել, որ Մանուիլի հաջողությունը Սիրիայում Կիլիկիայի հայերի համար

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** ժամանակագրություն, էջ 420:

[2] Տե՛ս Chronique de Michel le Syrien, t. III, p. 316:

առավել վտանգավոր կլիներ: Եթե Զննգիյանների դեմ Մանուիլի արշավանքը տեղի ունենար և ավարտվեր Նուր աղ դինի ջախջախմամբ, Կիլիկիայի հայկական իշխանապետությունը ավելի քիչ հնարավորություններ կունենար ազատ զարգացման համար:

Տարեգիր Գրիգոր Երեցը նշում է, թե այդ իրադարձություններից հետո (Կիլիկիայից Մանուիլի հեռանալուց հետո) «մնացեալ Պանասաստիոն Թորոս յերկիր հայրենի իւր՝ հրամանաւ և սիրով խաղաղութեամբ յանհոգս»[1]: Այսպիսով, Մանուիլի արշավանքը 1159 թ. դեպի Կիլիկիա և Սիրիա չամրապնդեց Բյուզանդական կայսրության դիրքերը Ասիայում, նրա հեղինակությունը Արևելքի ժողովուրդների մեջ, նրա գերիշխանությունը Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի իշխանապետության վրա: Հաջորդ տարիներին Թորոսն այնքան ուժեղացավ, որ ձեռք բերեց փաստացի ինքնուրույնություն, և Բյուզանդիան պետք է որ հրաժարվեր Կիլիկիայի նկատմամբ հավակնություններից:

1159 թ. արշավանքը դեպի Կիլիկիա ու Սիրիա ավելորդ անգամ հաստատեց Մանուիլի արտաքին քաղաքականության սնանկությունը, որը չհամակերպվելով կայսրության ներքին վիճակի և այն բանի հետ, որ կայսրությունը դաշնակիցներ չուներ, ձգտում էր Եվրոպայում ետ նվաճել հարավային Իտալիան: Երկյուղ կրելով Ֆրիդրիխ I-ի ուժեղացումից հյուսիսային Իտալիայում, նա իր դրամական նպաստներով օգնում էր լոմբարդական քաղաքներին, միջամտում էր Հունգարիայի ներքին գործերին, ճնշում էր բալկանյան սլավոնների ազատագրական չարժումները և միաժամանակ լայն ծրագիր ուներ ջախջախել Փոքր Ասիայի սելջուկ-թուրքերին, այլև ետ նվաճել Կիլիկիան, Սիրիան, Հյուսիսային Միջագետքը և նույնիսկ գրավել Պաղեստինն ու Եգիպտոսը:

Դեպի Կիլիկիա և Սիրիա կատարած արշավանքից վերադառնալուց հետո Մանուիլն զբաղվեց եվրոպական գործերով, գլխավորապես՝ Բալկանյան թերակղզու և Հունգարիայի: Սերբական ժուպան Ստեփան Նեմանը ձգտում էր ազատվել Բյուզանդիայի քաղաքական ազդեցությունից և ընդլայնել իրեն ենթակա տարածքը, բայց պիտի ժամանակավորապես նորից ճանաչեր իր կախումը Բյուզանդիայից: Մանուիլն ստիպված եղավ առավել համառ պայքար մղել Բուլղարիայի դեմ՝ մերձդանուբյան մարզերի և Դալմաթիայի պատճառով: Անհրաժեշտ է նշել, որ XI–XII դարերում ուժեղացան տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերը արևմտյան, հարավային, արևելյան սլավոնների և Հունգարների միջև, և Հունգարիայի դեմ Բյուզանդիայի մղած պատերազմի ժամանակ չեխերն ու Յարոսլավ Գալիցկին Հունգարների կողմն էին: 60-ական թվերի կեսերին, մի չարք անհաջողություններ կրելուց հետո, Մանուիլին այնուամենայնիվ հաջողվեց ամրապնդել իր տիրապետությունը Դանուբի վրա և գրավել Դալմաթիան, բայց հենց այդ ժամանակ էլ վատացան Բյուզանդիայի գործերն Արևելքում, որտեղ ուժեղացել էր Նուր աղ դինը:

Հարիմի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (1164) Դաչտային Կիլիկիայի բյուզանդացի կառավարիչ Կոստանդին Կոլոմանոսը, Անտիոքի իշխան Բոհեմունդը և Տրիպոլիի կոմս Ռայմունդը ջախջախվեցին Նուր աղ դինի զորքերից և գերի ընկան: Ճակատամարտին մասնակցած Թորոսին հաջողվեց խույս տալ պարտությունից ու գերությունից:

Այս հաղթանակից հետո Նուր աղ դինը սկսեց ուժգին ճնշել Անտիոքին և սպառնալ Կիլիկիային: Այս առթիվ պատմիչ Կիննամուսը գրում է. «Այս իրադարձություններից կայսրը վաղուց էր վրդովված, ուստի և որոշեց արշավանք կատարել դեպի Ասիա, բայց խանգարեցին Արևմուտքից եկած նոր լուրերը»[1]: Այստեղ նկատի ունի Հունգարական գահի համար վերսկսված պայքարը: Մանուիլի հաճախակի միջամտությունը Հունգարիայի գինաստիական պայքարին՝ այն Բյուզանդիայի քաղաքական ազդեցության տակ պահելու համար, և նրա դեմ մղվող պատերազմները Դալմաթիայի համար, ինչպես և դեպի Սերբիա կատարած արշավանքները՝ սերբերի XII դարի 60-ականների ազատագրական չարժումները ճնշելու համար, կայսրության ուժերը չեղում էին արևելյան գործերից:

Զնայած Արևելքում իր դիրքերի թուլացմանը՝ Բյուզանդիան մինչև XII դարի 80-ական թվականները չարունակում էր իր իշխանության տակ պահել Դաչտային Կիլիկիան:

Կիլիկիայի հայկական իշխանապետության փոխհարաբերությունները Բյուզանդիայի հետ, վերջինիս դեմ իր ինքնիշխան գոյության համար նրա մղած պայքարի հաջողությունները չի կարելի ճիշտ լուսաբանել՝ ուշադրության չառնելով Մանուիլի արտաքին քաղաքականության ընդհանուր ուղղվածությունը ինչպես Եվրոպայում, այնպես էլ Արևելքում:

Մանուիլի արևմտյան և արևելյան քաղաքականությունը լավ է լուսաբանել Ֆ. Ուսպենսկին[2], բայց նա քիչ ուշադրություն է հատկացրել Կիլիկիայի հայկական իշխանապետության հետ Բյուզանդիայի փոխհարաբերություններին XII դարի 50–70-ական թվականներին:

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 423:

[1] **Ioan. Cin.,** *Epitome, p. 216.*

[2] Տե՛ս **Ф. Успенский,** *История Византийской империи, т. III, с. 272–291:*

Պատմիչ Նիկիտաս Խոնիատը, դժգոհ Մանուիլի արտաքին քաղաքականության ընդարձակ ծրագրերից, մանավանդ արևմտյան քաղաքականությունից՝ նրան հանդիմանում է այն բանի համար, որ նա «իր հայացքը հառում էր դեպի աշխարհի ծայրը և անօգուտ վատնում այն դրամը, որ գձլում էր իր հպատակների վրա դրած ծանր, ուժասպառ անող հարկերից ու տուրքերից»[1]: Արևելքի գործերն արհամարհելու համար Մանուիլին կշտամբել են ոչ միայն նրա որոշ ժամանակակիցները, այլև պատմաբան-հետազոտողները:

Սակայն Բյուզանդիայի XII դարի, մանավանդ Մանուիլ Կոմնենոսի արտաքին քաղաքականությունը հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Արևելքը կայսրության համար շատ կարևոր է եղել անցյալում՝ մինչև այն կորցնելը XI դարի վերջում: Իսկ XII դարում Բյուզանդիան տնտեսապես և քաղաքականապես ավելի շատ կապված է եղել Եվրոպայի, քան թե Ասիայի հետ:

Արևելքից՝ Հայաստանից, Վրաստանից ու Փոքր Ասիայից, Բյուզանդական կայսրությունը նախկինում կորզում էր զինվորական ուժ ու խոշոր եկամուտներ: Նա առևտրական հարաբերություններ ուներ Ասիայի երկրների հետ՝ օգտվելով հյուսիսային ճանապարհներից, որոնք անցնում էին Հայաստանի և Վրաստանի միջով, և հարավային ճանապարհներից, որոնք կտրում-անցնում էին Եփրատը և դուրս գալիս Միջերկրական ծով ու գնում Սիրիա: Այս բոլոր երկրները կորսված էին, և որպեսզի վերադարձվին գոնե Փոքր Ասիան ու Սիրիան, պետք էր ջախջախել Իկոնիայի սելջուկներին, Զննգիյաններին, Ռուբինյաններին և Անտիոքի իշխանապետությանը:

Ուշադրության առնելով XI դարի տարածքային կորուստները, ավատատիրական հարաբերությունների զարգացումը, սոցիալական հակասությունների աճը, եվրոպական պետությունների հետ սրված հարաբերություններն ու պատերազմները՝ արևելյան պրովինցիաների նոգրավումը Բյուզանդիայի համար շատ դժվարին գործ էր:

Բայց եթե Արևելքը կորված էր և դժվար էր նետ վերադարձնել, ապա XII դարում Բյուզանդիան տնտեսական սերտ կապեր ուներ Արևմուտքի հետ շնորհիվ այն դերի, որ Կոստանդնուպոլիան ուներ որպես միջնորդ Ասիայի և իտալական առևտրական հանրապետությունների՝ Վենետիկի, Ջենովայի ու Պիզայի միջև, որոնք այդտեղ խոշոր առևտրական գործարքներ էին կատարում: Սրան պետք է ավելացնել և այն հանգամանքը, որ Մանուիլն ստիպված էր դիմադրել Ֆրիդրիխ II-ի՝ Իտալիայում հաստատվելու ձգտումներին, ինչպես

[1] **Nicetas Coniata,** *Historia, Bonnae, 1835, p. 265.*

և վիճարկել նրա հետ հռոմեական կայսեր տիտղոսը կրելու իրավունքը:

Սակայն այս հանգամանքները ամբողջովին չեն վերացնում Մանուիլի մեղքը՝ արտաքին քաղաքականության մեջ նրա անհաջողության համար: Վարելով մեծապետական քաղաքականություն և՛ Եվրոպայում, և՛ Ասիայում՝ նա գերագնահատել է կայսրության ուժերը ու միաժամանակ թերագնահատել Փոքր Ասիայի Սելջուկյանների կողմից սպասվող վտանգը: Եթե Մանուիլը չկարողացավ էլ վերադարձնել XI դարում Արևելքում կորցրած ամբողջ տարածքը, այնուամենայնիվ, հրաժարվելով Կիլիկիան ու Սիրիան նվաճելուց՝ կարող էր կանգնեցնել սելջուկների առաջխաղացումը և նույնիսկ ջախջախել նրանց: Այդ սպառնացող վտանգը նա հասկացավ չափազանց ուշ: 60-ական թվականներին Բյուզանդիան համարյա անուշադրության էր մատնել գործերի վիճակը Արևելքում, ինչը խոշոր անհաջողություններ բերեց ինչպես այդ, այնպես էլ հատկապես հետագա ժամանակաշրջանում:

Եթե XII դարի 50-ական թվականներին Կիլիկիայի հայկական իշխանապետությանը սպառնում էր գլխավորապես Բյուզանդական կայսրությունը, ապա Մանուիլի՝ 1159 թ. արշավանքից հետո ուժգնացավ վտանգը Նուր ադ դինի կողմից:

Կիլիկիայի հայկական պետության միջազգային հարաբերությունները միշտ բարդ են եղել, քանի որ այն գործ է ունեցել ոչ միայն Բյուզանդիայի հետ, այլև Իկոնիայի սուլթանության, Զննգիյանների, սրանց հաջորդների Այուբյանների, Անտիոքի իշխանապետության, իսկ հետագայում էլ մոնղոլների ու Եգիպտոսի սուլթանության հետ: Թորոսին վիճակվել էր պատերազմել ոչ միայն Մանուիլի զորավարների դեմ, այլև Մասուդ, Խլիճ-Արսլան, Նուր ադ դին սուլթանների դեմ և բախվել խաչակիրների հետ:

Հետաքրքիր է Գրիգոր Երեցի տեղեկությունը Թորոսի և Խլիճ-Արսլանի փոխհարաբերությունների մասին: Փոքր Ասիայի սելջուկները ձգտում էին տարածվել դեպի հարավ՝ դեպի Եփրատ, և տիրել Կապադովկիայի, Միջագետքի ու Սիրիայի սահմանակից մարզերին, որտեղ գտնվում էին առևտրական ու ռազմավարական ճանապարհների կարևոր հանգույցները: Հենց այս նպատակն էին իրենց առջև դրել Զննգիյանները, Բյուզանդիան, խաչակիրները և Ռուբինյանները: Հայերին, Թորոսի եղբայր Ստեփանի առաջնորդությամբ, հաջողվեց տիրել այդպիսի կետերից մեկին՝ Բևրդուսին, բայց Թորոսը դա վերապարձրեց սուլթան Խլիճ-Արսլանին ու նրա հետ խաղաղության դա-

չինք կնքեց: «Յետ այսր ամենայնի,— ասում է վերոհիշյալ տարեգիրը,— գնաց սուլտանն յաթոռ իւր՝ խորհելով ընդ մեծամեծս դրան իւրոյ յաղագս հաստատելոյ զսէրն, զոր արար ընդ փոռնգաց և ընդ հայերն: Եւ նոքա հաւանեալ սուլտանին՝ դարձեալ առաքեաց զհաւատարիմս իւր յԵրուսաղէմայ յԱնտիոք և առ Թորոս, անխաբեն ունել զդաշինս սիրոյ, զոր կամեցան երկոքեան կողմունքն. և այս ոչ եթէ ի բնութենէ սրտի իւրոյ սուլտանին եղև, քանզի զիՙնչ հաղորդութիւն է Քրիստոսի և Բելիարայ, այլ այս էր պատճառ. զորդին Զանգէ, որ էր տէր Հալապայ և փեսայ սուլտանին, Խլիճ-Արսլանի քոյր, յետ մահուան Մասուտ սուլտանին արհամարհեաց զորդի իւր, զոր եդ յաթոռ թագաւորութեան իւրո և բռնացաւ ի վերա երկրին քրիստոնէից և Լանց զսահման պատուիրանի Մասուտ սուլտանին. և Լառ զոր կարաց զանաւրէն Անթափ և զՓարդման և զգնդս ամենայն: Եւ սուլտանն Խլիճ-Արսլան բազում անգամ գրեաց առ փեսայն՝ «Մի՛ առներ անիրաւութիւն, զարձո՛, ասէ, զերկիրն իմ, զոր հայրն իմ սահման եդ իս և ընդ քեզ»[1]:

Այսպիսով, Նուր ադ դինի նվաճումները նրա հարևաններին ստիպել են պայմանագիր կնքել, որի կոնկրետ բովանդակությունը անհայտ է, բայց պարզ է, որ այն ուղղված է եղել ընդդեմ ռազմաչունչ Զննգիյանի:

Հույների ու թուրքերի դեմ մղվող պատերազմներում Թորոսին առանձագին օգնում էին նրա եղբայրներ Ստեփանն ու Մլեհը, որոնք իրենց հոր՝ Լևոնի ու եղբայրներ Ռուբենի և Թորոսի գերության ժամանակ ապրում էին Եդեսիայում իրենց հորեղբոր մոտ և դրա համար էլ խուսափել էին գերությունից: Ստեփանը բյուզանդացիների դեմ մղվող ճակատամարտերում աչքի էր ընկել իր քաջությամբ: Նա դավադրաբար գերի բռնվեց Դաշտային Կիլիկիայի փոխարքա Անդրոնիկոսի կողմից և տանջամահ արվեց:

Թորոսի ու նրա եղբայր Ստեփանի մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Սոքա ընդարձակեցին զսահմանս իւրեանց քաջութեամբ՝ տիրելով բազում գաւառաց և քաղաքաց աչխարհին Կիլիկեցւոց և Սուրացւոց և այլոց բազմաց. առին զանուան քաղաքս աչխարհին՝ զՏարսոն, և զՍիս, և զԱտանա, և զՍկեւկիա և որ չուրջ նոքօք գաւառք և քաղաքք»[2]: Ճիշտ է, Թորոս II-ը ստիպված եղավ Մանուիլ Կոմնենոսին դիջել Դաշտային Կիլիկիան, բայց Լեռնային Կիլիկիան նա ամուր պահեց իր ձեռքում:

[1] **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրութիւն, էջ 413–414:

[2] **Կիրակոս Գանձակեցւոյ** Պատմութիւն, Թ., 1915, էջ 101:

Կիլիկիայի հայկական իշխանապետությունը ոչ միայն վերականգնվեց, այլև Բյուզանդիայի դեմ մղվող պատերազմներում պաշտպանեց իր գոյությունը: Կիլիկիայի հայկական իշխանապետության վերականգնման պայմաններից մեկը պետք է համարել այն, որ հայերն արդեն Կիլիկիայի բնակչության մեծամասնությունն էին կազմում, ուստի և Բյուզանդիայի դեմ մղվող պայքարում Թորոս II-ը ամուր հենարան ուներ:

Կիլիկիայի հայերի մեծաքանակության մասին վկայում է և այն փաստը, որ Թորոս II-ը բանակցություններ է վարել Երուսաղեմի թագավոր Ամալրիխի (1162–1173) հետ՝ 30 հազար հայերի Կիլիկիայից Պաղեստին տեղափոխելու մասին, որպեսզի ուժեղացվեին Երուսաղեմի թագավորության ռազմական ուժերը, որը համարյա անընդհատ պատերազմում էր եգիպտոսի և Նուր ադ դինի դեմ:

Թորոսին հաջորդեց փոքրահասակ որդին՝ Ռուբենը (1169–1170), որին խնամակալ նշանակվեց Թոմաս իշխանը: Սակայն մեկ տարի անց Մլեհը՝ Ռուբենի հորեղբայրը, նրանից խլեց Կիլիկիայի իշխանությունը, իսկ Ռուբենին Անտիոք տարավ խնամակալը, այնտեղից էլ՝ Հռոմկլա, որտեղ տղան չուտով մահացավ:

Դեռ Թորոսի կենդանության օրոք Մլեհը ձգտում էր իշխանության: Նա մտադրվել էր սպանել եղբորը, բայց Թորոսն իմացավ և նրան արտաքսեց Կիլիկիայի սահմաններից: Մլեհը գնաց Հալեպ՝ Նուր ադ դինի մոտ, և ընդունվեց ծառայության՝ նրանից ստանալով Գուրոս քաղաքն իր գավառով: Որպես Հալեպի սուլթանի վասալ՝ Մլեհը մասնակցում էր նրա արշավանքներին: Լսելով եղբոր մահը, նա Նուր ադ դինի տված մի հեծյալ զոկատի գլուխ անցած՝ ներխուժեց Կիլիկիա և իշխանությունը զավթեց՝ զորականներին առատորեն վարձատրելով ռազմավարով, իսկ «զիւր հակառակն բռնեց եդ ի բանդ. և բռնեալ զեպիսկոպոսունս՝ ատամնաթափ արար զնոսա: Ուր կարծէր, թէ գոյ ոսկի կամ արծաթ, խլէր և դնէր ի ջամբ իւր... Եւ էր այր գազանամիտ և չար և անողորմ, և ատէին զնա ամենեքեան...»[1]:

Միքայել Ասորին նույնպես պարսավում է նրան. «արարեալ յոլով չարիս քրիստոնէից ձեռնտուութեամբ անօրինացն»[2]: Հավանորեն, ասորի գրողը ի նկատի ունի Մլեհի մասնակցությունը խաչակիրների վրա մուսուլմանների հարձակումներին: Հայ պատմիչներ Սմբատը, Վահրամը և ուրիշներ, ինչպես երևում է, խոտացնում են գույները,

[1] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 88:

[2] **Միքայէլ Ասորի**, ժամանակագրութիւն, էջ 454:

որովհետև Մլեհը ձգտելով ուժեղացնել իր իշխանապետությունը՝ անողոք է եղել ավատատերերի նկատմամբ: Սրա հետ միասին պետք է նշել, որ չնորհիվ Նուր աղ դինի հետ նրա սերտ մերձեցման՝ Կիլիկիայի հայկական պետությունը մեծ հաջողությունների հասավ արտաքին քաղաքականության մեջ: Նուր աղ դինի օգնությամբ Մլեհը 1173 թ. Բյուզանդիայից նվաճեց Դաշտային Կիլիկիայի մեծ մասը: Նա հաջողությամբ կռվում էր Երուսաղեմի Ամորի թագավորի խաչակիրների և Անտիոքի իշխան Բոհեմունդի դեմ[1]:

Նուր աղ դինի հետ Մլեհի համագործակցության մասին հիանալի տողեր ենք գտնում արաբ պատմիչ Իբն ալ Ասիրի մոտ: «Աթաբեկների պատմության» մեջ նա գրում է. «Մեծ իմաստության օրինակ է հանդիսանում նրա վարքագիծը Մլեհի նկատմամբ՝ Լևոնի փոքր որդու, Փոքր Հայաստանի, ինչպես և Դորուբի (Տավրոսի լեռնանցքների) տիրոջ: Նա (Նուր աղ դինը) այնքան էր սիրաչահում սրան, որ սա որոշից ծառայության մտնել նրա մոտ, մասնակցել նրա արշավանքներին և օգնել պատերազմներում ընդդեմ փրանկների: Նուր աղ դինը այս առիթով ասում էր. «ես նրա բարեկամությունն էի փնտրում այն պատճառով, որ նրա երկիրը հարմար պաշտպանություն ունի. ճանապարհներն այնտեղ համարյա անանցանելի են, իսկ բերդերն անչափ ուժեղ են: Մենք նրա երկիրը տանող ճանապարհ չունենք, այնինչ նա հնարավորություն ունի դուրս նետվել իր երկրից և ջախջախել մուսուլմանական երկիրը: Եթե ես նրա դեմ արշավանքի ելնեմ, նա կքաշվի իր երկրի խորքը, ինչպես անմատչելի որջում: Տեսնելով այդ՝ ես նրան դիջեցի մի քանի տիրույթ, որպեսզի ձեռք բերեի նրա վստահությունը, որպեսզի իմ կողմը գրավեի նրան, և ես հասա այն բանին, որ նա ինձնից կախման մեջ մտավ և ինձ օգնում էր ընդդեմ փրանկների»[2]: Այնուհետև այս հեղինակը տեղեկացնում է, որ Նուր աղ դինի մահից հետո նրա հաջորդները դադարեցին հետևել այսպիսի քաղաքականության, որի հետևանքով Մլեհի հաջորդը նրանցից խլեց որոշ քաղաքներ ու բերդեր:

Մլեհի դաշինքը Նուր աղ դինի հետ և նրա բացասական հետևանքները Արևելքում Բյուզանդիայի տիրապետության համար նշում է նաև Հովհան Կիննամոսը: Նկարագրելով վենետիկցիների ոտնձգությունները Ռոդոսի բռնագրավումը (1171), նա չարունակում է. «Սրա հետ միաժամանակ բարդացան գործերը Կիլիկիայում, որտեղ Թորոսի մահից հետո իշխանությունն անցել էր նրա եղբայր Մլեհային (Մլեհ – Գ. Մ.),

[1] Տե՛ս Hist. orient., t. I, p. 588:

[2] Նույն տեղում:

որն սկսեց հոռոմներին ոչ պակաս վնաս պատճառել, քան Թորոսը»[1]: Այդ նույն ժամանակ Մանուիլը զբաղված էր նրանով, որ հունգարական գահին վերջնականապես հաստատեց Բելա III-ին (1173–1194) և արշավանք կատարեց Ստեփան Նեմանի դեմ, «որպեսզի վրեժխնդիր լիներ սերբերից նրանց հանդգնության համար»[2]:

Ավարտելով Հունգարիայում ու Սերբիայում տեղի ունեցող այս իրադարձությունների նկարագրությունը՝ Կիննամոսը չարունակում է. «Այսպես էին դասավորվում գործերը Արևմուտքում, բայց Ասիան տեղից չարժվեց: Նուր աղ դինը՝ Վերրոյոսի, Մելոսի կառավարիչը, Հայաստանի տիրակալը, Լիկաոնիայի սուլթանը, ինչպես և Անկիրայի ու մնացած Գալաթիայի կառավարիչները եկան փոխադարձ համաձայնության՝ պատերազմ սկսել հոռոմների դեմ»[3]:

Բյուզանդիայի դեմ Մլեհի ու Նուր աղ դինի այս համատեղ պայքարի մանրամասնությունները լավ չարադրված են մուսուլմանական սկզբնաղբյուրի հետևյալ հատվածում. «Ջամադ ամսվա (19 դեկտ. 1172 թ.–17 հունվարի 1173 թ.) մեկին Մլիհը՝ Լևոն Հայի որդին, իշխանը էլ Դորուբ երկրի, որ հարևան է Հալեպին, ջախջախեց Կոստանդնուպոլսի հույների բանակը: Ահա թե ո՛րն էր այս պատերազմի պատճառը. Նուր աղ դինը իր մոտ ծառայության էր ընդունել վրդովիչ Մլիհին և նրան էր դիջել հիանալի մի տիրույթ: Մլիհը Նուր աղ դինի ջերմեռանդ վասալն էր: Մասնակցում էր նրա պատերազմներին ընդդեմ փրանկների: Նուր աղ դինի այսպիսի վարքագիծը, հիրավի, արդյունք էր նրա մեծ խելամտության և առնցուն իմաստության: Երբ նրան կչտամբանք էին արել, թե ինչո՞ւ է ծառայության վերցրել հայ իշխանին և նրան տվել մուսուլմանական տարածքում գտնվող մի տիրույթ, նա պատասխանել էր. «Ես դա արել եմ նրա համար, որպեսզի պայքարեմ նրա հավատակիցների դեմ: Ես նենգությունից ազատել եմ իմ բանակի մի մասին, որին հակառակ դեպքում պետք է պատրաստ պահեի, որպեսզի խանգարեի նրա ներխուժումները դեպի սահմանները մեր այն տարածքի, որը սահմանակից է նրա երկրին»: Մլիհն էլ իր կողմից Նուր աղ դինի օգնությունն էր ստանում, երբ կռվում էր հայերի (Լամբրոնի իշխանների՝ Բյուզանդիայի վասալների – Գ. Մ.) և հույների դեմ, որոնք նրա հարևաններն էին: Ադանա, Մասսիսա (Մոպսուեստիա) ու Տարսոն քաղաքները գտնվում էին հունաց թագավորի՝ Կոստանդնուպոլսի տիրոջ իշխանության ներքո: Մլիհը զարձավ դրանց տերը, քանզի

[1] Ioan. Cin., Epitome, p. 286.

[2] Նույն տեղում, էջ 287:

[3] Նույն տեղում, էջ 288.

այդ քաղաքները տեղավորված էին նրա երկրի հարևանությամբ: Հունաց թագավորը նրա դեմ իզուր ուղարկեց բավականին մեծաքանակ մի բանակ, որին գլխավոր էր կարգել իր ազգականներից մի քանի նրևելի պատրիկների: Մելիհը նրանց ընդառաջ ելավ Նուր ադ դինի բանակի մի ջոկատով և քաջաբար կռվեց նրանց դեմ: Հույները ջախջախվեցին և նրանցից վիթխարի թվով մարդիկ զոհվեցին կամ գերի ընկան: Մելիհի հզորությունը նշանակալիորեն ամրապնդվեց, և հույները իրենց երկիրը ևս նվաճելու ամեն հույս կորցրին: Հայ իշխանը Նուր ադ դինին նվիրեց գերիների մի մասը, այդ թվում 30 հոգի առավել նրևելի մարդկանցից»[1]:

Կիլիկիայում բյուզանդական զորքերի այս պարտությունից հետո կայսր Մանուիլը, որն արդեն ավարտել էր գործերը Հունգարիայում ու Սերբիայում, 1174 թ. արշավեց Արևելք: Ճամբար դնելով Ֆիլադելֆիայի մոտ՝ նա, Կիննամուսի ասելով, «մտածում էր միայն այն մասին, թե ինչ կերպ կարելի է իրարից անջատել վերոհիշյալ բարբարոսներին»[2]: Սահմանափակվելով խաղաղության դաշինք կնքելով Ալփ-Արսլանի հետ և, Կիննամուսի կարծիքով, դրանով իսկ խորտակելով Բյուզանդիայի բոլոր թշնամիների միությունը Արևելքում՝ Մանուիլը վերադարձավ Կ. Պոլիս[3]:

Սակայն պայքարը Արևելքում կայսրության միավորվող և ուժեղացող թշնամիների դեմ դարձել էր բարդ ու վտանգավոր: Թուլացնելով պայքարը Ռումի սուլթանության դեմ և նույնիսկ համաձայնագիր կնքելով Ալփ-Արսլանի հետ՝ Արևելքում Բյուզանդիայի մյուս թշնամիների դեմ համատեղ պայքարի համար, Մանուիլը չուտով հենց նրանից ծանր պարտություն կրեց Մարիոկեֆալոսի մոտ (1176):

Նուր ադ դինի հետ Մլեհի դաշինքը նպաստում էր ոչ միայն Բյուզանդիայից Ռուբինյանների վասալական կախման ոչնչացմանը, մի կախում, որը, ճիշտ է, համարյա անվանական էր, և կարող էր առանց դրա էլ չուտով վերանալ, այլև Կիլիկիային պաշտպանում էր Անտիոքի իշխանապետության հարձակումներից:

Մլեհի կարճատև կառավարման ժամանակաշրջանի ներքին կյանքի իրադարձություններից պետք է նշել այն, որ նա պետության մայրաքաղաք դարձրեց վերստին կառուցված Սիսը՝ հին Փլավիոպոլիսը, որն այդ ժամանակից մինչև 1375 թ. մնացել է որպես Կիլիկյան Հայաստանի քաղաքական կենտրոն:

[1] Hist. orient., Du Kamel Altewarykh, t. I, p. 588.

[2] **Ioan. Cin.,** Epitome, p. 289.

[3] Տե՛ս նույն տեղում:

Մլեհը վերսկսեց պայքարը Հեթումյանների ավատական տան դեմ: Նրա զորքերը երկար ժամանակ, բայց ապարդյուն պաշարում էին Լամբրոնը՝ բնակիչներին սովամահ անելով:

1175 թ. վերջին կամ 1176 թ. սկզբին «ետ եօթն ամի տերութեան պարոն Մլեհին, որ էր թիւին ՈՒԴ, իշխանք նրա սպանին զնա ի նոյաչէն քաղաքն Սիս վասն վատ բարուց նորայ»[1],– գրում է Սմբատը: «Սպանաւ իշխանն Կիլիկեցւոց կամօք իշխանաց իւրոց ի բերդն»[2],– ասում է նաև Միքայել Ասորին: Հավանաբար նրան սպանող իշխանները դժգոհ են եղել ամենից առաջ նրա անհողդողդ իշխանությունից:

Մլեհի մահից հետո իշխանությունն անցավ Ռուբեն III-ին (1175–1187)՝ նրա եղբայր Ստեփանի որդուն: Ժառանգելով իշխանական գահը՝ Ռուբենը մահվան դատապարտեց իր հորեղբորն սպանողներից գլխավորներին, որոնք հույս ունենալով, թե Ռուբենի կողմից կվարձատրվեն, պարծենում էին իրենց արած ոճրագործությամբ[3]:

Ռուբենի՝ իշխանության գլուխ անցնելուց չատ չանցած՝ Բյուզանդիան ծանր պարտություն կրեց Ռումի սուլթանության դեմ մղած պատերազմում: Մանուիլի բանակի ջախջախումը Միրիոկեփալոսի մոտ 1176 թվին չոչափելիորեն ցույց տվեց, որ Բյուզանդական կայսրությունն ի զորու չէր վերականգնել իր նախկին դիրքը Փոքր Ասիայում, Կիլիկիայում և Սիրիայում: Այս հանգամանքը փոխում էր ուժերի հարաբերակցությունը Մերձավոր Արևելքում: Ջքացավ բյուզանդական նվաճման վտանգը Կիլիկիայի հայկական իշխանապետության և Անտիոքի իշխանապետության նկատմամբ:

Օգտվելով Բյուզանդիայի նոր թուլացումից, ինչը հաջորդեց Մանուիլ կայսեր մահվանը (1180), Ռուբեն III-ը տիրեց Դաչտային Կիլիկիայի Բյուզանդիային պատկանող վերջին կտորին՝ Ադանա քաղաքով և Կիլիկիայում բյուզանդական տիրապետության կենտրոն Տարսոնով: Այս ակտով ավարտվեց Կիլիկիայի հայկական պետության դարավոր պայքարը Բյուզանդիայի դեմ:

Կիլիկիայից բյուզանդացիների վերջնական արտաքսումից հետո վերսկսվեց Թշնամանքը Լամբրոնական տոհմի դեմ: Ռուբենը չրջապատեց Լամբրոնը: Այս ամրոցի տեր իշխան Հեթումը դաշինք կնքեց Անտիոքի իշխան Բոհեմոնդի հետ, որը ցանկանում էր զավթել բյուզանդացիներից Ռուբինյանների գրաված Դաչտային Կիլիկիան, բայց հույս չդնելով իր զենքի զորության վրա, դիմեց խորամանկության:

[1] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 90:

[2] **Միքայէլ Ասորի,** Ժամանակագրութիւն, էջ 476:

[3] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 91:

1185 թ. Ռուբենին հրավիրելով Անտիոք՝ «ուտել և ըմպել ընդ պոռնիկ կանայս», Բոհեմոնդը նրան բանտ նստեցրեց[1]: Այս մասին Միքայել Ասորու «Ժամանակագրության» մեջ ասվում է. «Եւ ի սուն ժամանակս բրինձն Անտիոքայ արար սէր ընդ Սալահադնին, և նենգիւ որսաց զՌոբէն զտէրն Կիլիկիոյ, և ըմբռնեաց զնա և եդ ի բանտի, և նմուտ ի Կիլիկիա և յամեաց ամառն մի բովանդակ, և ոչինչ կարաց առնել նմա, զի պարոն Լեւոն եղբայր նորա իմաստասէս վարէր զիշխանութիւն երկրին: Եւ բրինձն ել ամօթով յերկրէն, բայց յետոյ տուին կամաւ իւրեանց ոսկի և զթիլն և զԱտանա, և հանին ի բանտէ զՌոբէն. որ և նա այնորիկ առին զտեղիս իւրեանց և արհամարհեցին զբրինձն»[2]: Սմբատ պատմիչն այս հարցի առթիվ ասում է, թե Անտիոքին զիջել են ճակեր սահմանամերձ ամրոցը, ինչպես և Սարվանդիքարը, որի պատճառով պայքարը վերսկսվել է մի քանի անգամ[3]:

Շուտով Լևոն II-ը (1187–1219) ետ վերադարձրեց կորսվածը, և Կիլիկիայի հայերի ու Անտիոքի խաչակիրների միջև տեղի ունեցող զարավոր մրցակցությունը հանուն Կիլիկիայի հարթավայրի XII դարի 80-ական թվականներին ավարտվեց հայերի հաղթանակով, ինչը մեծ նշանակություն ունեցավ Կիլիկիայի հայկական պետության հետագա զարգացման համար, որը հաստատորեն տիրել էր Միջերկրական ծովափին՝ Ալեքսանդրետից մինչև Սելևկիա: Հենց նա էլ վերջնականապես ջարդեց Լամբրոնի տերերի հզորությունը և բերդը գրավեց: Կիլիկիայի երկու իշխանական տների մրցակցությունն ավարտվեց Ռուբինյանների հաղթանակով:

Սկզբնաղբյուրների հիման վրա մենք հետևեցինք XII դարում հայկական իշխանապետության մղած պայքարին ընդդեմ Բյուզանդիայի, սելջուկների ու խաչակիրների՝ հանուն իր ինքնուրույն գոյության իրավունքի, Կիլիկիայի ամբողջ տարածքի վրա տիրապետության, դեպի Միջերկրական ծով ելք ունենալու, հանուն քաղաքական անկախության: Այս պայքարը պսակվեց լիակատար հաջողությամբ:

XI–XII դարերում Կիլիկիայի հայ բնակչությունը բավական չատ էր և ռազմական առումով բավականաչափ կազմակերպված: Հենց այդ հանգամանքն է նպաստել Կիլիկիայի հայկական պետության ծագմանն ու զարգացմանը: Աղբյուրներից հայտնի է, որ բյուզանդական կառավարությունը Կապադովկիա ու Կիլիկիա է տեղափոխել հայ ավատատերերին իրենց զորականների՝ ազնվականների ու կախյալ մարդկանց հետ: Հայերի ներհոսքը Կիլիկիա ուժեղացավ թուրք սելջուկների արշավանքներից և խաչակիրների կողմից Սիրիայի ու Միջագետքի հայ իշխանապետությունների ոչնչացումից հետո: Անկրկնելի է, որ Ռուբինյանները հենվել են այդ հայերի ռազմական ուժի վրա[1], որոնց ռազմական արիությունը վկայված է նաև բյուզանդացի գրողների կողմից: Այդ ուժը պետք է որ պատկառելի լիներ, այլապես չէին լինի մի չարք փայլուն հաղթանակները թշնամիների խոշոր ուժերի դեմ, չէր նվաճվի ամբողջ Կիլիկիան: Մատթեոս Ուռհայեցու մոտ այս առթիվ կարդում ենք. «Յայնժամ ձայն տուեալ մեծ իշխանն հայոց ամենայն հայոց զօրացն, որ էին ի բանակին, և ժողովեցան ամենայն զօրքն հայոց առ քաջ զօրականն Քրիստոսի Լեւոն»[2]:

Կիլիկիայի հայկական պետության ավատատիրական հարաբերությունների հարցը առանձին կքննարկվի: Նշենք միայն, որ Կիլիկյան Հայաստանի ավատական համակարգը իր բնորոշ գծերով ձևավորվել է Լևոն II-ի օրոք: Դա պայմանավորված է եղել նախընթաց զարերում ավատական հարաբերությունների զարգացմամբ, ինչպես և դրանց հետագա զարգացմամբ XII դարում՝ ամբողջ Կիլիկիայում Ռուբինյանների իշխանության հաստատման ժամանակ:

Ռուբինյանները հենվում էին առաջին հերթին հայերի ռազմաավատական դասի վրա, որն ուժեղացել էր Կիլիկիայում XI–XII դարերում, և իր ներքին ու արտաքին քաղաքականության մեջ զեկավարվում էր այդ դասի չահերով:

Կիլիկիայի հայկական պետության ծագումը, ինչպես հայտնի է, կապված է Բյուզանդիայի դեմ Լեռնային Կիլիկիայի հայ բնակչության պայքարի հետ՝ Ռուբեն իշխանի զեկավարությամբ: Այդ պետության պատմության առաջին շրջանում՝ դրա ծնունդից՝ 1080 թ., մինչև բյուզանդացիների կողմից 1182 թ. Տարսոնը լքելը, Կիլիկիայի հայկական երիտասարդ պետության առավել վտանգավոր թշնամին պետք է համարել Բյուզանդիային, որը ձգտում էր իր իշխանության տակ պահել ոչ միայն Դաչտային Կիլիկիան, այլև նվաճել Լեռնային Կիլիկիան՝ այդ նպատակով Ռուբինյանների դեմ ուղարկելով խոշոր բանակներ, որոնց երեք անգամ զլխավորել են կայսրերն իրենք:

Բյուզանդացիների դեմ մղվող պատերազմներում հայերը դրսևորել են մեծ խիզախություն և ազատասիրություն: Բարենպաստ է եղել և այն, որ Բյուզանդական կայսրությունն ստիպված էր պատե-

[1] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 92:

[2] **Միքայէլ Ասորի**, Ժամանակագրութիւն, էջ 491:

[3] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 93:

[1] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, էջ 342:

[2] Նույն տեղում:

րագմել Եվրոպայում, բացի այդ Ասիայում էլ հարկադրված էր հաճախակի պատերազմներ մղել և համարյա անընդհատ բախումների մեջ լինել Փոքր Ասիայի սելջուկների հետ:

Թեև Բյուզանդիան Կիլիկյան Հայաստանի հիմնական թշնամին էր և հաճախ էր սպառնում նրա քաղաքական անկախությանը, իսկ երբեմն էլ բուն գոյությանը, այնուամենայնիվ Բյուզանդիայի պայքարը սելջուկների դեմ նպաստում էր վերջիններիս զավթողական քաղաքականության թուլացմանը: Ռումի սելջուկները հաճախ կաթվածահարված էին լինում Կոմնիններոսների հարձակողական պատերազմներից և չէին կարողանում եռանդուն չարժվել Կիլիկիայի, Միջագետքի ու Սիրիայի կողմը, թեև այդպիսի միտում ունեին:

Անգելոսների դինաստիայի դարաշրջանում (1185–1204), Բյուզանդիայի թուլացումից և անկումից հետո, Չորրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ (1204) Փոքր Ասիայի սելջուկների պետությունն ուժեղացավ ու դարձավ Կիլիկյան Հայաստանի վտանգավոր թշնամին:

Կիլիկիայի հայկական պետությունը ծագեց մինչև խաչակիրների Արևելք գալը: Այնուամենայնիվ, նրանց գալուստը կարելի է համարել բարենպաստ հանգամանքներից մեկը, որ նպաստել է Կիլիկիայի հայկական պետության սահմանների ընդլայնմանը: Առաջին խաչակրաց արշավանքի հետևանքով XI դարի 80-ական թվականներին Սիրիան գրաված սելջուկները նետ մղվեցին Միջերկրական ծովի ափերից: Թուլացան նաև փոքրասիացի սելջուկները: Առանց խաչակիրների գալու Լեռնային Կիլիկիայի հայերի համար, որոնք հյուսիսից ու հարավից շրջապատված էին սելջուկ թուրքերով և արաբներով, դժվար կլիներ ընդլայնել իրենց տարածքը:

XII դարում Ռուբինյանները խաչակիրների հետ հաճախ պատերազմներ էին մղում (գլխավորապես պաշտպանական) Բյուզանդիայի, Ռումի Սելջուկյանների, Զննգիյանների դեմ, և նրանց այդ դաշինքը հաճախ դրական արդյունք էր տալիս:

Սակայն չպետք է մոռանալ, որ Կիլիկիայի հայկական պետության կազմավորման ու զարգացման գործում մեծ նշանակություն ուներ Դաշտային Կիլիկիան իր սահմանների մեջ ներառնելը և կլքը դեպի Միջերկրական ծով: Այս առումով Անտիոքի խաչակիրները չատ վտանգավոր մրցակիցներ էին: Նրանք մեկ դար չարունակ պայքարում էին հայերի դեմ, որպեսզի տիրեին բերքառատ Կիլիկյան հարթավայրին՝ իր խոշոր քաղաքներով ու հարմար նավահանգիստներով: Բյուզանդիայի դեմ կիլիկեցի հայերի պայքարին ու խաչակիրներին հակահարված տալուն նպաստել է, վերջապես, Մլեհի և Ռուբենի դաշինքը Նուր աղ դինի հետ:

Այսպիսով, Ռուբինյանները հմտորեն օգտագործել են Բյուզանդիայի, սելջուկների, Զննգիյանների ու խաչակիրների միջև եղած հակասությունները և պատերազմները և XII դարում միջազգային կյանքում Կիլիկիայի հայկական պետության համար բարենպաստ այլ հանգամանքները:

XII դարում Կիլիկիայի հայկական պետության ռազմաքաղաքական հաջողության հիմնական պատճառը, այնուամենայնիվ, այն է, որ կիլիկեցի հայերն այդ ժամանակներում գրավել և նշանակալիորեն բնակեցրել էին Կիլիկիան, որ նրանց թիվը XII դարում անչեղորեն աճեց ինչպես բնական աճի հետևանքով, այնպես էլ չնորհիվ Հայաստանից, Կապադովկիայից, Միջագետքից ու Սիրիայից նոր ներհոսքի: Հայ ավատատերերը ամուր նստեցին երկրի լեռնային ամրոցներում, որի աշխարհագրական պայմանները նպաստում էին նրա պաշտպանությանը: Հայերը սերտ դանդվածներով ապրում էին Կիլիկիայի քաղաքներում ու գյուղերում՝ զբաղվելով գյուղատնտեսությամբ, հանքագործությամբ, արհեստներով և առևտրով: Նրանց էր պատկանում առաջատար դերը երկրի տնտեսության մեջ, ինչը պայմանավորեց հայկական պետության քաղաքական հզորությունը:

Հայ, հույն, լատին և արաբ գրողների երկերից երևում է, որ XII դարում կիլիկեցի հայերը քաջաբար մարտնչել են նորակազմ պետության անկախության համար: Սակայն ռազմական հաջողությունների պտուղները յուրացրել են ավատատերերը, որոնք զավթել էին ընդարձակ հողային տիրույթներ: Կիլիկիայի հայկական պետության առաջին տասնամյակները լուսաբանող հայկական աղբյուրներից առավելագույն արժեք ունի Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը»[1], որը չարունակել է Գրիգոր Երեցը: Առաջինը նկարագրել է 957–1137 թվականների, երկրորդը՝ 1137–1163 թվականների պատմական իրադարձությունները: Երկուսն էլ գրել են գլխավորապես Միջագետքի, Սիրիայի, Կիլիկիայի, Հայաստանի և մասամբ էլ սահմանակից երկրների, այսինքն՝ Առաջավոր Ասիայի երկրների երկու դարի (957–1163) իրադարձությունների մասին:

Մատթեոս Ուռհայեցին նկարագրում է Հայաստանի քաղաքական ինքնուրույնության կործանումը, Բյուզանդիայի արտաքին քաղաքականությունն ու պատերազմները Արևելքում, սելջուկների արշավանքը, հայերի արտագաղթը դեպի արևմուտք և նոր տեղերում հայ-

[1] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898:

կական իշխանապետությունների առաջացումը, Առաջին խաչակրաց արշավանքը, խաչակիրների պատերազմները մուսուլմանների դեմ և նրանց փոխհարաբերությունները հայերի հետ, բյուզանդական կայսրերի արշավանքները Փոքր Ասիայի սելջուկների, ինչպես և Կիլիկիայի ու Սիրիայի դեմ:

Նա բազմաթիվ այնպիսի մանրամասնություններ է ներկայացնում, որոնք չկան արևմտյան ու բյուզանդական պատմիչների երկերում: Իհարկե, նրա մոտեցումը նույնպիսին է, ինչպես համարյա բոլոր միջնադարյան ժամանակագիրներինը՝ յուրաքանչյուր պատմական իրադարձության ու հասարակական կյանքի երևույթ դիտում է կրոնական աշխարհայեցողության դիրքերից, յուրաքանչյուր ազնտ, քաղաքների ավերում քրչվորների ձեռքով և պետությունների կործանում նա բացատրում է մարդկանց մեղքերի դիմաց տրվող աստվածային պատժով: Այնուամենայնիվ, նա ճշմարտացիորեն է ներկայացնում իր ժամանակի միջազգային կյանքի փաստերը:

Մատթեոս Ուռհայեցին ողբում է՝ տեսնելով իր ժողովրդի տառապանքները, նրա տարածքների զավթումը բյուզանդացիների ու սելջուկների կողմից, հայերի զանգվածային գաղթեցումը հարազատ վայրերից, նրանց նկոտությունները, սովը և մահացությունը օտար երկրներում: Նա զայրանում է սելջուկ թուրքերի վրա՝ Մեծ Հայքի ծաղկուն քաղաքներն ու գյուղերը կործաննելու համար, նրանց գազանությունների և ամայացուցիչ ասպատակությունների համար: Նա վրդովմունքով զատապարտում է Բյուզանդիայի նենգ քաղաքականությունը հայկական իշխանապետությունների նկատմամբ, հույների կողմից սրանց քաղաքական ինքնուրույնության ոչնչացումը, կրոնական հալածանքները հայերի դեմ, բայց և միաժամանակ նշում է բյուզանդական ազնվականության ներկայացուցիչներից ոմանց դրական կողմերը:

Մատթեոս Ուռհայեցին ամենից ավելի վրդովված է խաչակիրների զավթողական գործողություններից, կողոպուտի նկատմամբ նրանց հակվածությունից: Նա խաչակիրներին հանդիմանում է աչքաբացության և հայերի հանդեպ ուշադրություն լինելու համար: Բալդուին Բուրժեցու մասին, օրինակ, տարեգիրը գրում է. «ի հոգս առեալ զբրիստոնէայս առաւել, քան զթուրքն»[1]:

Գրիգոր Երեցը նկարագրել է քսանհինգ տարվա դեպքերը՝ Հովհան Կոմնենոսի կողմից Լևոն I իշխանի գերեվարումից (1137) մինչև նրա որդի Ստեփանի դավադրաբար սպանվելը (1163) Անդրոնիկոսի

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 338:

հրամանով: Այսպիսով, նա պատմում է Հովհանի և Մանուիլի արշավանքների մասին: Այս ժամանակաշրջանում, ինչպես հայտնի է, ուժեղացան Զենգիյանները, ընկավ Եդեսիան, լիակատար անհաջողությամբ ավարտվեց երկրորդ խաչակրաց արշավանքը, Նուր ադ դինը գրավեց Դամասկոսը և սպառնում էր Անտիոքին: Հայ ժամանակագիրը Բյուզանդիային դատապարտում է, որ նա միշտ սպառնում էր Կիլիկիայի, Անտիոքի իշխանապետություններին և փոխանակ գլխավորեր այս պետություններին Նուր ադ դինի դեմ ընդհանուր պայքարում, նրա հետ խաղաղության դաշինք կնքեց: Այս կապակցությամբ նա հետևյալ տողերն է գրում. «Յունաց թագաւորին ոչինչ փրկութիւն գործեալ քրիստոնէից, այլ մանավանդ խլումն ու առումն քաղաքաց և գաւառաց: Եւ նոցա չնորհիւն եկան հայք յերկրէն իւրեանց, և այլազգիքն զօրացան և եկեալ տիրեցին ամենայնի, առին առաջին զԱրծն քաղաք, զՄելտենի և զՍեւաստ և զԱնի զթագաւորաբնակ քաղաքն, և մինչև ի սինօռ Կոստանդնուպոլիս քաղաքի...»[1]:

Փոփոխված իրադրության հետևանքով Գրիգոր Երեցը, ի տարբերություն Մատթեոս Ուռհայեցու, ֆրանկների մասին ընդհանուր առմամբ դրական է արտահայտվում. «Եւ ազգն արիական, որք են փառանգն, երրորդ անգամ եկին ի փրկութիւն քրիստոնէիցն, և զաւճանութեամբ և նենգութեամբ թագաւորին յունաց կործաննել և յաղթեալ եղեն ի թուրքաց, զոր մեք տեսաք աչօք մերովք. զի թէ վասն քրիստոնէից էր եկեալ, եոթնամսեան ժամանակաւ ոչ էր ի Մսիս յամեալ. նոյնպէս և հայրն իւր արար, որ զպարոն Լեւոն տարաւ և զայլ հայերն: Եւ այս բաւական էր, որ միտս ունին, առնելիք թագաւորացն հոռոմոց, և այնչափ ատելութիւն, զոր ունին առ ազգս հայոց»[2]: Այս տարեգիրները իրենց տարեգրությունները գրել են այն ժամանակ, երբ Կիլիկիայի հայկական իշխանապետությունը դեռ չէր ամրապնդվել: Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրությունը» ավարտում է Լևոն I-ի գերումով, իսկ Գրիգոր Երեցը իր պատումն ընդհատում է Մանուիլի արշավանքից (1159) անմիջապես հետո, երբ Թորոսից խլված էին Մամեստիան ու Ադանան, և նա ճանաչել էր Բյուզանդիայի գերիշխանությունը:

Միջնադարյան Հայաստանի ականավոր գրող, խոշորագույն եկեղեցական գործիչ, տաղանդավոր բանաստեղծ Ներսես Շնորհալին, որը 1166–1173 թթ. զբաղեցրել է այն ժամանակ Հռոմկլայում գտնվող կաթողիկոսական աթոռը, իր երկերում լավ է արտացոլում հայաս-

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, էջ 421:

[2] Նույն տեղում:

տանի քաղաքական վիճակը և հայ ժողովրդի տրամադրությունը, հայ ավատական ազնվականության ու բարձր հոգևորականության չահերն ու գաղափարախոսությունը: Բյուզանդական կայսրության հետ բանակցությունների մեջ մտնելով հայ և հույն եկեղեցիների մերձեցման հարցի կապակցությամբ՝ Ներսես Շնորհալին, ըստ երևույթին, հուսով էր, թե կայսրությունը կկարողանա որոշ օգնություն ցույց տալ մուսուլման տիրակալներին ենթակա հայերին, թե նա վերջ կտա Բյուզանդիայի տարածքում ապրող հայերի նկատմամբ կրոնական հալածանքներին:

Թեև խաչակիրների ու կիլիկեցի հայերի կողմից զգալի թշնամանք կար Բյուզանդական կայսրության նկատմամբ, վերջինս, սակայն, մինչև XII դարի 80-ական թվականները դեռ վայելում էր Արևելքի քրիստոնյաների մոտ որոշ հեղինակություն, քանի որ նրանք հույս ունեին, թե Բյուզանդիան կօգնի իրենց նեղող նոր ադ դինի սարակինոսների դեմ պայքարելիս:

1165 թ. առիթ ներկայացավ հայ և հունական եկեղեցիների մերձեցման մասին բանակցություններ սկսելու համար: Այդ տարի Մամեստիայում Ներսես Շնորհալին իրար հետ թշնամացած Լամբրոնի Օշին իշխանին և Թորոս Ռուբինյանին հաշտեցնելու համար Կիլիկիա եկած ժամանակ հանդիպում ունեցավ Բյուզանդիայի փոխարքա Ալեքսիոսի՝ Մանուիլի փեսայի հետ, որի խնդրանքով կաթողիկոսը գրեց հայոց եկեղեցու դավանանքի հիմնական սկզբունքները:

1065 թվականից կաթողիկոսական աթոռն զբաղեցնող Պահլավունյաց նշանավոր տոհմի ներկայացուցիչները չափավոր հունասերներ էին: Այս տոհմին պատկանող Ներսես Շնորհալին բարեկամական հարաբերություններ էր պահպանում Կիլիկիայում բյուզանդական կողմնորոշման հետևող Օշինի հետ: Նա չէր ըմբռնում և ճիշտ չէր գնահատում Թորոս II-ի կողմից Բյուզանդիայի և Օշինյանների դեմ մղվող պայքարի նշանակությունը: Հնարավոր է, որ նա չէր հավատում Ռուբինյանների հաղթանակին և քաղաքական հաջողություններ չէր կանխատեսում Կիլիկիայի հայկական պետության համար ապագայում:

Երկու եկեղեցիների մերձեցման հարցով բանակցություններ սկսվեցին Ներսես Շնորհալու և Մանուիլի միջև, որոնք չարունակվեցին նաև նրա հաջորդ Գրիգոր Տղայի օրոք: Մանուիլի դեսպանները մի քանի անգամ եկան Հռոմկլա: Երկու կողմերը զիջումներ արեցին, որպեսզի գային փոխզիջողական համաձայնության: 1179 թ. Հռոմկլայում գումարվեց եկեղեցական ժողով, որին ներկա էին 17 եպիս-

կոպոսներ Հայաստանից և 16-ը՝ Կիլիկիայից ու սահմանակից երկրներից, որոնք հակված էին որոշ զիջումներ անելու: Հայաստանի արևելյան մարզերի եպիսկոպոսներն ու գիտնական-վանականները, մանավանդ ժողովի չեկած Գրիգոր Տուտեորդին, դեմ էին Բյուզանդիային զիջումներ անելուն, դեմ էին եկեղեցիների մերձեցմանը: Եկեղեցական ժողովը որոշում ընդունեց անել աննշան զիջումներ, որոնք չէին կարող հիմք ծառայել եկեղեցիների միավորման համար, ինչին ձգտում էր Բյուզանդիան[1]:

Շուտով Մանուիլը մահացավ (1180): Անդրոնիկոսը կրոնական սաստիկ հալածանք ծավալեց բյուզանդական տարածքում ապրող հայերի դեմ, և բանակցություններն ընդհատվեցին: Նույնիսկ եթե տեղի չունենային վերոհիշյալ իրադարձությունները, միևնույն է, եկեղեցիների միավորումը տեղի չէր ունենալու, որովհետև Հայաստանի եպիսկոպոսները դեմ էին զիջումներին և մերձեցմանը, իսկ Քաղկեդոնի ժողովի որոշումներն ընդունելու պահանջի հետ համաձայն չէին ոչ միայն նրանք, այլև զիջումների հակված արևմտահայ հոգևորականությունը:

Հայ գրականության ամենանշանավոր հուշարձաններից մեկն է Ներսես Շնորհալու բանաստեղծական տաղանդով ստեղծված, հայրենիքի հանդեպ սիրո խոր զգացմունքներով տոգորուն «Ողբ Եդեսիո» պոեմը, որը գրվել է 1146 թ. Մոսուլի աթաբեկ Զենգիի կողմից Եդեսիայի գրավման ու կործանման առթիվ:

Ներսես Շնորհալին իր այս երկը ստեղծել է պրոսէպոպեայի ձևով: Եդեսիան իբրև թե ինքն է պատմում իր տխուր բախտի մասին: Պոեմում շատ են քաղաքի, բնության, Եդեսիայի պաշտպանների հերոսական պայքարի տեսարանների գեղարվեստական նկարագրությունները: Ողբալով Եդեսիայի ավերումը՝ բանաստեղծը վերհիշում է Անիի ու Հայաստանի մյուս քաղաքների կործանումը և սգում նրա քաղաքական ինքնուրույնության անկումը, և այն, որ նրա շատ զավակներ ցրիվ են եկել զանազան երկրներ:

«Ողբ Եդեսիո» պոեմում արտահայտված է հավատը այն բանի նկատմամբ, թե լավ ժամանակներ են գալու, երբ Հայաստանը կվերածնվի և նորից հայերը աշխարհի բոլոր ծայրերից կվերադառնան իրենց հայրենի երկիրը:

Ներսես Շնորհալին բողոքում է, որ ոչ ոք օգնության չեկավ և, ի նկատի ունենալով խաչակիրներին՝ հանդիմանությամբ ասում է.

[1] **Մ. Օրմանյան,** Ազգապատում, հ. Բ, 1913, էջ 1466–1470:

Քանզի յամեալ յապաղեցին,
Որ յընդհանուր կողմանս էին,
Գալ յօգնութիւն իմոյ կոմսին
Երկրպագուք սրբոյ խաչին:

Ներսես Շնորհալու հույսը խաչակիրների օգնության վերաբերյալ իրական չէր: Ֆրանկները (խաչակիրները) Արևելք էին եկել ոչ թե որպես ազատարարներ, այլ որպես նվաճողներ ու կողոպտիչներ:

Ո՛չ Կիլիկիայի հայկական պետության դարաշրջանում՝ XI–XIV դարերում, ո՛չ էլ հետագայում Կիլիկիայի կամ բուն Հայաստանի հայերը Արևմուտքից օգնություն չեն ստացել: Ինչպես խաչակիրների նվաճողական քաղաքականությունը միջին դարերում, այնպես էլ եվրոպական պետությունների քաղաքականությունը նոր ժամանակներում, ինչպես պապականության դիվանագիտությունը խաչակրաց արշավանքների դարաշրջանում, այնպես էլ մեծ տերությունների դիվանագիտությունը իմպերիալիզմի դարաշրջանում, հայ ժողովրդին բերեցին միայն աղետ ու տառապանք:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները Անտիոքի իշխանապետության ու Սալադինի հետ XII դարի 80-ական թվականներին: Վերաբերմունքը Ֆրիդրիխ Շիկամորուսի՝ դեպի Արևելք կատարած արշավանքի նկատմամբ: Անտիոքի խաչակիրների՝ Դաշտային Կիլիկիան գրավելու վերջին փորձը: Փոքր Ասիայի սելջուկների թուլացումը և Կիլիկյան Հայաստանի տարածքի ընդլայնումը XII դ. 90-ական թվականներին: Բանակցություններ Կոստանդնուպոլսի և Հռոմի հետ՝ Լևոն II-ի կողմից թագավորի տիտղոս ընդունելու առթիվ: Լևոն II-ի փոխհարաբերությունները հոգևոր-ասպետական օրդենների ու պապականության հետ: Պայքար Անտիոքի իշխանապետության գահի համար: Կիլիկյան Հայաստանի պատերազմները Փոքր Ասիայի սելջուկների դեմ XIII դարի սկզբին:

Կիլիկյան Հայաստանի միջազգային հարաբերությունները Լևոն II-ի թագավորության օրոք բավականին բարդ էին: Նրա կառավարման ժամանակը համընկավ Մերձավոր Արևելքում տեղի ունեցող խոշոր քաղաքական իրադարձությունների և փոփոխությունների հետ, այն է՝ Սալադինի կողմից Երուսաղեմի գավթման, Ինոկենտիոս III-ի ժամանակ (1198–1216) Արևելքում պապական դիվանագիտության աչքառուժացման, Երրորդ, Չորրորդ և Հինգերորդ խաչակրաց արշավանքների հետ, որոնք համարյա չփոփոխեցին իրերի վիճակը Սիրիայում ու Պաղեստինում, բայց և այնպես որոշ չափով ազդեցին Արևելքի պետությունների միջև ուժերի հարաբերակցության վրա, Բյուզանդիայի թուլացման հետ՝ Անգելոսների (1185–1204) դինաստիայի դարաշրջանում և մանավանդ խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի գրավումից (1204) հետո, XII դարի վերջին Իկոնիայի սուլթանության

ժամանակավոր անկման և նրա նոր ուժեղացման հետ, ինչը հաջորդեց Բյուզանդական կայսրության ժամանակավոր տապալմանը 1204 թվին, Նիկեայի և Տրապիզոնի կայսրությունների կազմավորման, Վրաստանի բարձրացման հետ՝ Թամարի օրոք, երբ վրաց-հայկական զորքերը սկզբունքներից ազատագրեցին Հայաստանի հյուսիսային և արևելյան մարզերը:

Միջազգային իրադրությունը Լևոն II-ի օրոք, չնայած իր ողջ բարդությանը և հաճախակի փոփոխականությանը, ընդհանուր առմամբ բարենպաստ էր Կիլիկյան Հայաստանի համար և վատացավ միայն Լևոն II-ի կառավարման վերջում, երբ խաչակիրների՝ Բյուզանդիային հասցված հարվածից (1204) հետո ծավալվեցին Փոքր Ասիայի սելջուկների նվաճումները:

Լևոն II-ը իր արտաքին քաղաքականության մեջ հմտորեն օգտագործեց միջազգային իրադրության բարենպաստ պահերը: Իր հարևանների դեմ մղած պաշտպանողական և հարձակողական պատերազմներում նա երբեմն համագործակցում էր խաչակիրներին, թեև երբեմն հարկ էր լինում բախման մեջ մտնել նրանց հետ: Լևոն II-ը դաշնակիցներ ձեռք բերեց հանձինս հովհաննական ուխտի ասպետների, նա իր մոտ վասալական ծառայության էր ընդունում խաչակիրներին, արքայական թագ ստանալու համար կապ էր հաստատում պապականության, Հռոմեական Սրբազան կայսրության և Բյուզանդիայի հետ, բայց իր արտաքին քաղաքականության մեջ լիովին ինքնուրույն էր՝ հենված լինելով հայ բնակչության ու երկրի ռեսուրսների, Կիլիկիայի հայ ավատատերերի աճած ռազմական հզորության վրա:

Ջգայնկանալով նպաստել Ֆրիդրիխ I-ի նվաճողական ծրագրին՝ Լևոն II-ը ջանում էր չեզոքություն պահպանել Երրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ: Նա հաստատակամություն ու ինքնուրույնություն դրսևորեց պապականության հետ հարաբերություններում և հմտորեն օգտագործելով Ալիճ-Արսլանի որդիների միջև ծագած գժտությունը՝ գրավեց Իսավրիայի և Կապադովկիայի սահմանամերձ շրջանները:

Սակայն պետք է նշել, որ Լևոն II-ը, հրապուրվելով իր դինաստիայի իշխանությունը նաև Անտիոքի իշխանապետության վրա տարածելու ծրագրով, միջոցներ ձեռք չառավ Փոքր Ասիայի սելջուկների ներխուժումից Կիլիկիայի տարածքի պաշտպանության համար, հաշվի չառավ Չորրորդ խաչակրաց արշավանքից հետո նրանց հզորացումը:

Լևոն Ռուբինյանը երկիրը փաստորեն կառավարում էր 1185 թվից, երբ նրա եղբայր Ռուբենը ուխտադրժորեն գերվեց Անտիոքի իշխան Ռեյնալդի կողմից: Գերությունից ազատվելուց հետո Ռուբենը իշխանությունը տալով Լևոն II-ին՝ չուտով վանք մտավ և մահացավ 1187 թվին:

Լևոն II-ը եղբոր բացակայության ժամանակ արդեն հռչակ էր ձեռք բերել՝ 1185 թ. ետ մղելով Անտիոքի խաչակիրների ներխուժումը և արժանանալով Միքայել Ասորու գովասանքին, որն այս իրադարձության առթիվ գրում է, թե «բրինձն Անտիոքոյ... եմուտ ի Կիլիկիա և յամեաց ամառն մի բովանդակ և ոչինչ կարաց առնել նմա, զի պարոն Լևոն եղբայր նորա իմաստասպես վարեր զիշխանութիւն երկրին: Եւ բրինձն ել ամոթով յերկրէն...»[1]:

Անտիոքի իշխան Ռեյնալդը ձեռնարկելով այս հարձակումը Կիլիկիայի վրա՝ ըստ էության չարունակում էր իր նախորդների քաղաքականությունը: Անտիոքի իշխանապետությունը իր գոյության սկզբից ևեթ ձգտում էր զավթել Դաշտային Կիլիկիան, բայց հաջողություն չէր ունենում: Մանուիլ Կոմնենոսի մահից հետո Կիլիկյան Հայաստանի համար վերացավ վտանգը Բյուզանդիայի կողմից, որը XII դարի 80-ական թվերին թուլացել էր Անդրոնիկոսի կողմից իշխանությունը զավթելու կապակցությամբ ծավալած ներքին պայքարից և ստիպված էր հրաժարվել Սիրիան և Կիլիկիան նվաճելու մտքից:

Բայց եթե Կիլիկյան Հայաստանի համար վերացավ Անտիոքի իշխանապետության և Բյուզանդիայի սպառնալիքը, ապա փոխարենը աճեց վտանգը Սալադինի կողմից, որն իր իշխանության տակ միավորել էր Եգիպտոսը, Արաբիան, Դամասկոսի, Հալեպի և այլ էմիրություններ և Լևոն II-ի գահակալության հենց սկզբում նվաճել Երուսաղեմը: Այս իրադարձությունը վտանգարացրեց, առաջին հերթին, Անտիոքի իշխանապետության վիճակը, իսկ հետո արդեն նաև՝ Կիլիկյան Հայաստանի: Սակայն վերջինս կարողացավ պահպանել իր սահմանները:

Ռուբեն III-ի մահից չատ չանցած, հավանաբար 1187 թ., Լևոն II-ը ետ մղեց թուրքմենների ներխուժումը Կիլիկիա, ինչպես նշված է Սմբատի «Պատմության» մեջ: «Ի թուին ՈԼՂ (3 փետրվ. 1187 – 2 փետր. 1188),– գրում է նա,– թուրքման ոմն՝ անուն Ռոստամ, ժողովեաց չատ թուրքման և եմուտ յաչխարհն կիլիկեցւոց... գնաց մինչև ի Սիս... պարոն Լևոն քչիկ կռուեալ ընդ նոսա՝ ձգեց յառաջ զգլխաւոր

[1] **Միքայել Ասորի,** *Ժամանակագրություն, էջ 491:*

նոցա գՌոստոմ, և ամենեքեան փախեան: Եւ նա զհետ մտեալ՝ կոտորեաց զնոսա մինչև ի Սարուանդի քարն»[1]:

Որտեղի՞ց էին հայտնվել և ովքեր էին այս թուրքմենները: Ըստ երևույթին, սրանք այն թուրքմեններն են, որոնց մասին իր «Ժամանակագրության» վերջում հիշատակում է Միքայել Ասորին: «Թուրքմեն մեծ ժողովուրդը,– գրում է նա,– որը վրանաբնակ է, ձմռանը իջնում է լեռներից ձմեռելու համար այն անապատում, որը գտնվում է Սիրիայի հարավում, որտեղ ձյուն չի գալիս և սառնամանիքներ չեն լինում և որտեղ կան ձմեռային արոտավայրեր, իսկ գարնանը թուրքմենները բարձրանում են հյուսիսային երկիրը (Հայաստան – Գ. Մ.), որտեղ նրանք արոտավայր են գտնում իրենց անասունների համար»[2]: Սիրիայի, ինչպես և Առաջավոր Ասիայի մյուս երկրների ձմեռային արոտավայրերը դեպի իրենց էին քաշում չատ քոչվորների, և պայքարը դրանց, ինչպես որ ամառային արոտավայրերի համար այստեղ մեծ նշանակություն ուներ միջին դարերի միջազգային հարաբերություններում ու բախումներում: Միքայել Ասորին պատմում է, թե թուրքմենները Հայաստանի ամառային արոտավայրերից դեպի Սիրիայի ձմեռանոցները քոչելիս բախվեցին քրդերի հետ, որոնք նույնպես քոչվորական կյանք էին վարում: Արոտավայրերին տիրելու համար նրանց միջև արյունալից կռիվներ են տեղի ունեցել Նիզիբինի (Մծբին) և Մոսուլի մոտերքում: Մի քանի ճակատամարտերում ջարդված «քրդերը փախան ու ապաստանեցին սարերում՝ Կիլիկիայի սահմանների մոտ, որպեսզի Հայերի հարևանությամբ ապահովին իրենց երեխաների և ունեցվածքի անվտանգությունը: Թուրքմենները քրդերին գտան և այստեղ, հարձակվեցին նրանց վրա և սկսեցին կոտորել... և քրդերը ցրիվ եկան Միջագետքով ու Սիրիայով մեկ»[3]: Այնուհետև Միքայել Ասորին նկարագրում է, թե ինչպես հյուսիս-արևելյան Սիրիա եկած թուրքմեններն սկսեցին թալանել ու կոտորել քրդերից բացի նաև հայ ու ասորի բնակչությանը Կիլիկիային սահմանակից մարզերում և նույնիսկ ներխուժել այնտեղ: «Այնժամ,– գրում է նա,– այդ մարզերի յուրաքանչյուր իշխան, տեսնելով թուրքմենների կողմից իր երկիրը թալանված և իր քաղաքներն ավերված՝ սկսեց կռվել նրանց դեմ, Կապադովկիայով մեկ և Մելիտինն երկրում ընդհարումներ ու ճակատամարտեր էին տեղի ունենում: Երբ թուրքմենները

[1] **Մաթեոս Սպարապետի** Պատմութիւն, էջ 93:

[2] Chonique de Michel le Syrien, t. III, p. 401.

[3] Նույն տեղում, էջ 402:

ներխուժեցին Claudia (Claudicpolis–Կոմագենեում – Գ. Մ.), այդ երկրի իշխանը կռվի ելավ նրանց դեմ»[1]:

Լևոն II-ի կողմից թուրքմենների՝ Կիլիկիա ներխուժումը նոտ մղելուց անմիջապես հետո սկսվեց Սալադինի զորքերի հարձակումը երկրի վրա: 1188 թ. Սալադինի զորքերի մի խոշոր ջոկատ ներխուժեց Անտիոքի իշխանապետության սահմանները, իսկ այնտեղից Ամանոսի լեռնանցքով թափանցեց Կիլիկիա: Այստեղ, ինչպես տեղեկացնում են հայկական և արաբական աղբյուրները, Սալադինի զորքերը ջախջախվել են հայերի կողմից՝ Լևոնի գլխավորությամբ: Կիլիկիայում կրած այս անհաջողությունից մեկ տարի անց Սալադինին վիճակվեց գործ ունենալ Երրորդ խաչակրաց արշավանքի խաչակիրների հետ, և Անտիոքի իշխանապետության ու Կիլիկիայի վրա այդ ահեղ Այուբյանի հարձակումները ժամանակավորապես դադարեցին:

Հետազոտողների մեծ մասն ընդգծում է Լևոն II-ի ու Ֆրիդրիխ I-ի միջև եղած բարեկամական հարաբերությունները, բայց իրականում դա այդպես չի եղել:

Ֆրիդրիխ Շիկամորուսի դավթողական ծրագրերի վերջնական նպատակն էր իր իշխանության տակ միավորել անցյալում Հռոմեական կայսրությանը պատկանած տարածքի մեծ մասը: Դրան նա ձգտում էր դեռևս Երրորդ խաչակրաց արշավանքից չատ առաջ: Իտալիայի նվաճումը հանդիսանում էր նրա նվաճողական ծրագրի, ճիշտ է, կարևոր, բայց սոսկ մեկ հանգրվանը: Թեև Ֆրիդրիխ I-ը հաճախահարված ստացավ լոմբարդական քաղաքների լիգայից, որին ա-ջակցություն էին ցույց տալիս Բյուզանդիան և պապականությունը, և 1177 թ. Վենետիկի խաղաղության կոնգրեսը նրա պարտությունն էր նշանակում, սակայն նրան հաջողվեց իր որդի Հենրիխին ամուսնացնել Սիցիլիայի գահաժառանգուհի Կոստանցիայի հետ և, այդպիսով, իր դինաստիայի տիրապետությունը հաստատել Հարավային Իտալիայում ու Սիցիլիայում: Դրանով իսկ ստեղծվեց որոշ հենակետ, ինչը կարող էր պետք գալ Բալկանյան թերակղզու և Մերձավոր Արևելքի դեմ ռազմական գործողություններ ծավալելու դեպքում: Բյուզանդիայի համար սպառնալիք ստեղծվեց այդ կողմից, որն, ասենք, անցյալում էլ կար նորմանացի նվաճող Գյուիսկարի ժամանակներից ի վեր:

Երրորդ խաչակրաց արշավանքի ղուրս գալիս Ֆրիդրիխ Շիկամորուսը լայն նպատակներ էր հետապնդում: Նա ձգտում էր ոչ միայն Սալադինից նոտ նվաճել Երուսաղեմը, այլև իր իշխանությանը ենթարկել Մերձավոր Արևելքի երկրները, ինչպես և Բալկանյան թերակղզին:

[1] Chonique de Michel le Syrien, t. III, p. 402.

Գտնվելով Բալկաններում և մտադրվելով դավթել Կոստանդնուպոլիսը՝ Ֆրիդրիխ I-ը մերժեց սերբական ժուպան Ստեֆան Նեմանիի և բուլղարական ազատագրական շարժման առաջնորդներ Ասեննոս եղբայրների առաջարկությունները՝ Բյուզանդիայի դեմ համատեղ գործողություններ ծավալելու վերաբերյալ: Նման դաչինք կնքելու համար Սերբիան ու Բուլղարիան պայման էին դնում կայսեր առաջ, որ նա ճանաչեր Սերբիայի օրինական իրավունքը Դալմաթիայի, իսկ Բուլղարիայինը՝ բուլղարաբնակ տարածքի նկատմամբ: Ֆրիդրիխ Շիկամորուսը չէր ցանկանում համագործակցել հարավային սլավոնների ազատագրական շարժումներին և դաչինքով կապվել նրանց հետ՝ հուսալով, որ սեփական ուժերով վերջ կտա Բյուզանդիային և կհաստատվի Բալկաններում: Այս նպատակով նա իր որդի Հենրիխին մի գաղտնի նամակ գրեց՝ հրահանգելով, որ 1190 թ. գարնան կողմը զորք ու նավատորմ հավաքի, որպեսզի երկուսով միաժամանակ հարձակվեն Կոստանդնուպոլսի վրա ծովից ու ցամաքից: Երկու կողմերը՝ Ադրիանապոլսում տեղավորված Ֆրիդրիխ I-ը և բյուզանդական կառավարությունը՝ Իսահակ կայսեր գլխավորությամբ, լրջորեն պատրաստվում էին պատերազմի, բայց գերմանացիներին չհաջողվեց իրագործել Կոստանդնուպոլսի գրավման նախագիծը, և Ֆրիդրիխ I-ը համաձայնության գալով Իսահակի հետ՝ իր բանակը Դարդանելով անցկացրեց Փոքր Ասիա[1]:

Նկարագրելով Ֆրիդրիխի նվաճողական գործողություններն ընդդեմ Բյուզանդիայի՝ ակադեմիկոս Ֆ. Ուսպենսկին միաժամանակ նշել է գերմանական կայսեր հակասլավոնական քաղաքականությունը: Եվ իսկապես, գերմանացի խաչակիրների հաղթանակի դեպքում Բալկաններում լուրջ վտանգ էր ստեղծվելու բալկանյան սլավոնների անկախության համար: Հիմք կա ենթադրելու, որ Արևելքում Ֆրիդրիխի հաջողության դեպքում նման վտանգ կարող էր սպառնալ նաև Կիլիկիայի հայերին:

Հայտնի է, թե որքան դժվարին է եղել գերմանական բանակի անցումը Փոքր Ասիայով: Գերմանացի խաչակիրները ջրի ու պարենի պակասության պատճառով չատ զրկանքներ էին կրում: Պատմագիր Վարդանը հաղորդում է, թե գերմանական ասպետները Իկոնիա հասան սաստիկ սովահար վիճակում՝ ճանապարհին ուտելով իրենց ձիերին[2]: Ֆրիդրիխ I-ը, Իկոնիայից մուտք գործելիս, երեք անգամ դիմել է Լևոն II-ին՝ խնդրելով օգնել մթերքներով և առաջարկելով միանալ արշավանքին: Լևոն II-ը, կայսրից նամակ ստանալով, Ներսես Լամբրոնացուն ուղարկել է Հռոմկլա՝ հայոց Գրիգոր կաթողիկոսի մոտ, որպեսզի նա իր մոտ գա[1]: Վարդանը հաղորդում է, որ Գրիգոր կաթողիկոսը Ֆրիդրիխին, որը մոտեցել էր Կիլիկիայի սահմաններին, տեղեկացրել է իր՝ Մսխա գալու մասին (ըստ այլ ձեռագրերի՝ Սիս) նրա հետ հանդիպելու համար: Սրան ի պատասխան վերջինս իբրև թե կաթողիկոսին հայտնել է, թե հետը բերում է արքայական մի թագ և թագադրելու է նրան, ում որ կաթողիկոսը կամենա[2]:

Վարդանի հաղորդումը հետաքրքիր է այն առումով, որ նամակագրություն է տեղի ունենում կայսեր և կաթողիկոսի միջև:

Լևոնի դեսպանները Ֆրիդրիխի մոտ են եկել 1190 թ. հուլիսի 8-ին, իսկ երկու օր անց կայսրը խեղդվել է Սելեփում (Կալիկադնոս): Անհայտ է, թե ինչ փոխհարաբերություն կստեղծվեր Ֆրիդրիխի ու Լևոնի միջև: Սակայն կան բևեռ էդ դինի ու Գալֆրիդ Գիննեգոթի և այլ հեղինակների ուշադրության ու լիակատար վստահության արժանի հաղորդումները, որոնք թույլ են տալիս ենթադրելու, որ Լևոն II-ը գերմանական կայսեր դեպի Արևելք կատարած արշավանքին վերաբերվել է խիստ զգուշորեն: Հայոց իշխանը, հնարավոր է, ձգտել է օգտագործել Ֆրիդրիխի Արևելք գալը և նրանից, որպես կայսրից ստանալ արքայական թագ, բայց միաժամանակ նա Ֆրիդրիխ I-ի արշավանքի մեջ տեսել է, սրա հաջողության դեպքում, սպառնալիք իր պետության անկախությանը, որ Կիլիկիայի հայերը պաշտպանել էին Բյուզանդիայի դեմ մղած դարավոր պայքարում:

Արաբ գրող Բևեռ էդ դինի մոտ կա մի վկայություն, թե Գրիգոր կաթողիկոսը լուր է տվել Սալադինին դեպի Փոքր Ասիա Ֆրիդրիխի բանակի առաջխաղացման մասին: Ալիշանը և Տուրներիզը կասկածում են, թե կաթողիկոսը կարող էր նման արարք կատարել՝ միաժամանակ նամակ ուղարկելով և՛ Ֆրիդրիխին, և՛ Սալադինին[3]: Բայց դա աններկրայելի փաստ է: Գրիգոր կաթողիկոսը հավանարար գործել է Լևոնի գիտությամբ, որը, ինչպես երևում է հենց այդ նամակից, հաղորդակցվում էր գերմանական կայսեր արշավանքին կիլիկիայի միջով: Ի միջի այլոց պետք է նկատել, որ կաթողիկոսի աթոռանիստը գտնվում էր Հռոմկլայում՝ Այուբյանների տարածքում: Գրիգոր կաթողիկոսը բարեկամական հարաբերություններ էր պահպանում դեռևս Սալադինի նախորդ Նուր ադ դինի հետ, որի օգնությամբ զբաղեցրել էր կաթողիկոսական աթոռը, իսկ այնուհետև նաև Սալադինի հետ:

[1] Տե՛ս **Ф. Успенский,** *История Виз. империи, т. III, с. 337–341:*

[2] Տե՛ս **Վարդանայ Բարձրբերդցւոյ** *պատմութիւն, կ. Պոլիս, 1885, էջ 178:*

[1] *Documents arméniens, t. I, p. 564.*

[2] Տե՛ս **Վարդանայ Բարձրբերդցւոյ** *պատմութիւն, էջ 179:*

[3] Տե՛ս **Tournebize,** *Hist., polit, et relig, de l'Arménie, p. 185:*

Բևեռնք մի քաղվածք Գրիգոր կաթողիկոսի՝ Սալադինին գրած նամակից, որտեղ նկարագրելով Ֆրիդրիխ Շիկամորուսի արշավանքը՝ Հունգարիայից սկսած մինչև Իկոնիա, նա եգիպտոսի սուլթանին հաղորդում է. «Ալիճ Արսլանը պարտավորեցրել է կայսրին, որպեսզի նա չարունակելով իր ճանապարհը՝ ուղղվի Տարսոնի ու Մամեստիայի կողմը՝ դեպի Փոքր Հայաստան: Դա արվել է այն նպատակով, որ գերմանացիները որքան կարելի է չուտ դուրս գան իր երկրից: Հիրավի, կայսրը ուղղվեց Կիլիկիայի կողմը և իր դեսպանին ուղարկեց այդ երկրի իշխանի մոտ՝ անցնելու թույլտվություն խնդրելու: Դեսպանին հանձնարարված էր իշխանի մոտ չարաղրել կայսեր վիճակը, այն նեղությունները, որոնք ապրել են ճանապարհին, և կայսեր իսկական մտադրությունը. միայն կտրել-անցնել նրա երկիրը, որպեսզի ուղիղ ճանապարհով հասներ Սիրիա: Այսպիսի հանգամանքներում Հայաստանի իշխանը կայսրի մոտ է ուղարկել իր մարդկանցից չատերին, որպեսզի նրան դրդեին փոխել իր արշավանքի ուղղությունը, բայց կայսրը չի անսացել ոչ մի հորդորանքի՝ չարունակելով իր ճանապարհը, և իր ճամբարն է դրել գետի ափին»[1]:

Նամակ ուղարկելով, կաթողիկոսը, հնարավոր է, ցանկացել է Սալադինին հավաստիացնել, թե հայերը նրա բարեկամներն են, թե նրանք դաշինքի մեջ չեն խաչակիրների հետ: Այս նամակի բովանդակությունը ցույց է տալիս, որ Լևոն II-ի նման վարքագիծը թելադրված է եղել իր պետության չահերով և դրա անկախության համար երկյուղներով: Կաթողիկոսը երկրորդ նամակն էլ է ուղարկել սուլթանին՝ տեղեկացնելով գերմանական բանակի վիճակի մասին Ֆրիդրիխի մահվանից հետո[2]. նամակում դրա հետ միասին մատնանշվել է Ֆրիդրիխ I-ի որդու՝ ուժի գործադրման սպառնալիքը, եթե Լևոն II-ը հրաժարվի գերմանական բանակին թույլ տալ անցնելու Կիլիկիայի միջով:

Բեհա էդ դինի հաղորդումը, թե Սալադինը նամակ է ստացել Գրիգոր կաթողիկոսից, որով նա տեղեկացրել է սուլթանի դեմ Ֆրիդրիխ Շիկամորուսի արշավանքի մասին, հաստատվում է արաբ գրող Աբու Շամաթի՝ այդ իրադարձությունների ժամանակակցի կողմից: Նրա ասելով, կաթողիկոսի նամակը տեղեկություններ էր պարունակում խաչակիրների բանակի թվակազմի մասին և նախազգուշացնում էր արաբական զորքերի թուլության մասին, որոնք պետք է դիմակայեին

[1] Bibliotheque des crois. par Michaud, Chronoques arabes, trad., par Reinaud, t. IV, p. 276–277.

[2] Նույն տեղում, էջ 278–279:

դրան: Աբու Շամաթն ասում է նաև, որ «երբ ստացվեց հայ կաթողիկոսի նամակը, որի կարևորությունը բոլորը խոստովանում էին, ապա այդ տխուր լուրի ազդեցության տակ ամենուրեք մուսուլմանների մեջ նկատվեց անհանգստություն: Ոմանք խոստովանում էին նամակում հաղորդվածի իսկությունը, ուրիշներն էլ այդ տեղեկությունները կեղծ էին համարում: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա ես դրանք համարում էի հավաստի և կարծում եմ, որ այսպիսի վտանգի հանդիման մուսուլմանները պետք է մոռանան իրենց գժտությունները և միավորվեն»[1]: Այսպիսով, Ալիչանը և Տուրնեբիզը իզուր են կասկածում, թե Գրիգորը նամակ է ուղարկել Սալադինին և նախազգուշացրել Ֆրիդրիխ I-ի արշավանքի մասին:

«Անգլիայի Թագավոր Ռիչարդի երթուղին դեպի Երուսաղեմ» երկում, որը պատկանում է Գալֆրիդի գրչին, զետեղված է Ֆրիդրիխ I-ի և Սալադինի միջև տեղի ունեցած նամակագրությունը: Ահա թե Ֆրիդրիխ Շիկամորուսը ինչ է գրել Սալադինին իր նամակում. «Դուք գիտե՞ք արդյոք, որ երկու եթովպիաները, Մավրիտանիան, Սկյութիան, երկրները, որոնք բնակեցված են պարթևներով ու ողողված են մեր Կրասոսի արյամբ, որ Արաբիան, Քաղդեան ու մանավանդ Եգիպտոսը, որտեղ մեծն Անտոնիոսը իրեն թույլ տվեց ստրկանալ Կլեոպատրայի անառակ սիրույն, մի խոսքով, բոլոր այդ երկրները կախում են ունեցել մեր կայսրությունից: Կարո՞ղ եք արդյոք չգիտենալ, որ Հայաստանը և մյուս անթիվ-անհամար երկրները ենթարկվել են մեր տիրապետությանը: Նրանց թագավորները, որոնց արյամբ այնքան չատ անգամ ներկվել է հռոմեացիների սուրը, լավ գիտեին այս մասին, և դուք նույնպես Աստծո օգնությամբ կհասկանաք, թե ինչի են ընդունակ մեր հաղթական արծիվները, մեր կոհորտաները, բազմաթիվ ժողովուրդների գնդերը: Դուք ձեզ վրա կփորձեք կատաղությունն այն տեւտոնների, որոնք սպառազինված են ման գալիս նույնիսկ խաղաղության ժամանակ»[2]:

Այս նամակից երևում են գերմանական կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի նվաճողական ծրագրերը, Արևելքի մարզերը նվաճելու ծրագրերը, երկրներ, որոնք երբեմն ենթարկվում էին հռոմեական կայսրերին, որոնց ժառանգորդն էր համարում ինքն իրեն: Նամակում սպառնալիք է պարունակվում Արևելքի բոլոր ժողովուրդների հասցեին: Դրանում պնդվում է, թե Հայաստանը ենթարկվել է Հռոմին,

[1] **Ա. Նալբանդյան,** Արարական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (ձեռագիր, ՀԽՍՀ պատմության ինստիտուտ):

[2] Bibliotheque des crois, par Michaud, t. II, p. 664.

մինչդեռ հայտնի է, որ վերջինիս չի հաջողվել ամուր ու տևականորեն իր տիրապետությունը հաստատել այդ երկրում և որ նա տիրել է, և այն էլ ոչ երկար ժամանակով, Հայաստանի միայն մի փոքր մասին: Հռոմեացի նվաճողները Հայաստանում արյունոտ չատ չարագործություններ են կատարել, ինչով և պարծենում է Ֆրիդրիխ I-ը իր նամակում, ինչը և կարող էր սոսկ նախազգուշացում լինել Լևոն II-ի համար, եթե Սալադինն այդ մասին հաղորդած լիներ նրան: Եթե Սալադինը նրան տեղեկացրած էլ չլիներ կայսեր նամակի մասին, միևնույն է, նա պետք է հասկանար գերմանական կայսեր արշավանքի ողջ վտանգավորությունը Կիլիկյան Հայաստանի համար: Զէ՞ որ մի ամբողջ դար Անտիոքի խաչակիրները հայերի հետ վիճարկում էին Դաշտային Կիլիկիան: Արևելքում Ֆրիդրիխի խոշոր հաջողության դեպքում կարող էր նրա կողմից սպառնալիք ծագել Կիլիկիայի հայկական պետությանը: Ակնհայտաբար, Լևոն II-ը Ֆրիդրիխի վերաբերմամբ չարունակել է, բայց թաքուն, Մլեհի քաղաքականությունը, որը համագործակցելով Նուր ադ դինին՝ հաջողությամբ պայքարում էր Անտիոքի իշխանապետության ու Բյուզանդիայի դեմ:

Կիլիկյան Հայաստանի այս քաղաքականությունը Ֆրիդրիխի և Սալադինի վերաբերմամբ չի վրիպել Կ. Մարքսի ուշադրությունից: «Մորուքավորը (Ֆրիդրիխ I-ը – Գ. Մ.),– ասում է նա,– առաջ է գնում հարուստ ավարով: Այնուհետև գալիս է **քրիստոնյա Հայաստան** (փոքրը Հայաստան), այսինքն՝ **Կիլիկիա:** Հայերը Սալադինի դաշնակիցներն են, բայց միևնույն ժամանակ գերմանացի խաչակիրներին ուղեկցում են լեռների միջով՝ նրանց վնաս չպատճառելով»[1]: Այսպիսով, Մարքսն ընդգծում է, որ Կիլիկիայի հայերը Սալադինի դաշնակիցներն են, իսկ դա նշանակում է, որ նա չէր կասկածում, թե Ֆրիդրիխ I-ի արշավանքի ժամանակ Կիլիկյան Հայաստանը պահպանում էր բարեկամական հարաբերությունները Սալադինի հետ:

Երրորդ խաչակրաց արշավանքը ժամանակավոր սպառնալիք ստեղծեց Սիրիայում ու Պաղեստինում Սալադինի տիրապետության համար, բայց չնորհիվ այդ արշավանքի անհաջողության, ինչպես և սելջուկ սուլթանների և աթաբեկների թուլացման, Փոքր Ասիայում, Հայաստանում ու Պարսկաստանում ստեղծվում էր խիստ հարմար իրադրություն Սալադինի կողմից վերոհիշյալ երկրների նվաճման ծրագիր կազմելու համար: Սպառնալիք ստեղծվեց նաև Կիլիկիայի համար: Հենց այս մասին Իբն ալ Ասիրի մոտ չատ հետաքրքիր մի տեղեկություն ենք գտնում, որը, ի միջի այլոց, լույս է սփռում նաև

[1] Архив Маркса и Энгельса, т. V, Л., 1938, с. 169. Ընդգծումը Կ. Մարքսինն է:

դեպի Կիլիկիա Սալադինի արշավանքի վերաբերյալ հայ մի ժամանակագրի հաղորդման վրա: Այս երկու աղբյուրների հաղորդումները համադրելիս ավելի պարզ է դառնում Այուբյանի նվաճողական ծրագիրը՝ Ռիչարդ I-ի հետ խաղաղություն կնքելուց հետո: Ահա մի քաղվածք Իբն ալ Ասիրից. «Նախքան հիվանդ պառկելը, Սալադինը 1193 թվին մոտը կանչեց իր որդի Ալ Աֆդալ Ալիին ու իր եղբայր Ալ Մելիք Ալ Ադիլ Աբու Բեքրին և նրանցից խորհուրդ հարցրեց, թե ինչ պետք է անել: «Մենք ջախջախել ենք ֆրանկներին,– ասաց նա,– և չկա ոչ ոք այս երկրում (Պաղեստինում ու Սիրիայում), որ կարողանա այն գրավել: Մենք հիմա ո՞ր կողմը սլանանք»: Նրա եղբայր Ալ Ադիլը խորհուրդ տվեց ուղղություն բռնել դեպի Խլաթ, որովհետև նրան այդ քաղաքն էր խոստացված, եթե այն նվաճվեր: Ինչ վերաբերում է նրա որդի Ալ Աֆդալին, ապա նա խորհուրդ տվեց արշավանքի ելնել Ռումի դեմ, որը գտնվում էր Խլիճ-Արսլանի որդիների իշխանության տակ: «Այդ երկրում,– ասաց նա,– մեծ թվով քաղաքներ կան, բնակչությունը չատ է, ու նրանք բավականին հարստություն ունեն: Բացի այդ, այդտեղով է գնում ցամաքային ճանապարհը, որով անցնում են ֆրանկները: Երբ մենք նվաճենք Փոքր Ասիան, նրանց կկանգարենք անցնելու այդ երկրով»: Սալադինը նրանց ասաց. «Դուք երկուսդ էլ սխալվում եք և ձեր մտածումները անհնհատես են: Ինչ վերաբերում է ինձ, ես դեպի Ռում կգնամ»: Այնուհետև, դիմելով եղբորը, նա ասաց. «Դու հետդ վերցրու իմ տղաներից մեկին ու բանակի մի մասը և ճամփա ընկիր դեպի Խլաթ: Ռումի հետ հաշիվը մաքրելուց հետո ես ձեզ մոտ կգամ, և մենք Խլաթից կներխուժենք Ատրպատական: Մենք կհասնենք պարսիկների երկիրը և այնտեղ չկա ոչ ոք, որ կարողանա մեզ հակահարված տալ»[1]:

Հավանաբար, 1193 թ. որդու և եղբոր հետ տեղի ունեցած այս խորհրդակցությունից հետո Սալադինը դեսպաններ է հղել Լևոնի մոտ՝ պահանջելով «Իրեն հանձնել ոչ միայն հարևաններից նրա նվաճած նրա տարածքները, այլև նրա ժառանգական հողը: Լևոնը մերժել է այդ պահանջը և Սալադինի դեսպաններին ասել. «Ասէ ցսուլթանն, թէ երկիր ոչ ունիմ տալ քեզ. բայց եթե գայցես յերկրիս իմում, տաց քեզ երկսայրից ըմպելիս, որպես հավատակցին քո Ըռոստոմի»: Եվ սուլտանն լուեալ դայս՝ մոմոէր որպես զառիծ էր զզօրս իւր գալ յերկիրն Կիլիկիա, զի բնաջինջ արասցէ զՀաւատացեալսն Ք-սի: Եւ ևկն եմուտ մինչև ի գետն, որ կոչի Սեաւ»[2]: Բայց արշավանքի ժամանակ Սալադինը մեռել է, և նրա զորքը ետ է վերադարձել:

[1] Rec. des hist. des crois., Hist. orientaux, t. II, p. 72,

[2] **Ալիշան,** Հայապատում, էջ 437:

Ըստ Լևոյթին, Կիլիկիան գրավելու Սալադինի մտադրությունը կապ ունի Այուբյանների վերոհիշյալ նվաճողական ծրագրի հետ՝ կազմելով դրա մնկ մասը: Որպեսզի նվաճվեր Փոքր Ասիան, նախ պետք է տիրեր Կիլիկիային, ուստի եղբոր և իր որդու հետ խորհրդակցելիս Սալադինի նշած նվաճումների ծրագրի կատարման համար նախ ձեռնարկվել է արշավանք դեպի Կիլիկիա: Փոքր Ասիայում ու Հայաստանում Այուբյանների լայն նվաճողական ծրագրի իրականացումն ընդհատվել է Սալադինի մահով:

Սալադինի մահից հետո Կիլիկյան Հայաստանի համար Այուբյանների կողմից վտանգը նվազեց: Նրանց միջև երկպառակություն սկսվեց՝ պատճառ դառնալով նրա ստեղծած պետության մասնատման: Բարելավվեց և Անտիոքի իշխանապետության դրությունը:

1193 թ. Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ը, որպեսզի հեչտացներ հայերից Կիլիկյան հարթավայրի նվաճումը, Լևոն II-ին իր մոտ՝ Անտիոք հրավիրեց՝ նրան գերելու ուխտադրուժ մտադրությամբ: Լևոնին կանխապես տեղեկացրել էին նրա չար մտադրության մասին: Լևոնն ընդունեց Բոհեմունդի հրավերը, բայց հանդիպման վայրը նշանակեց սահմանի վրա, Գաստոն ամրոցի մոտ, որտեղ կիրառելով հակառակորդի ծրագրած ննդամիտ հնարը՝ ինքը գերի բռնեց վերջինիս (1194): Հևրիխ Շամպանացու միջնորդությամբ Անտիոքի իշխանն ստիպված եղավ Լևոն II-ի հետ համաձայնագիր կնքել, ըստ որի Լևոն II-ին վերադարձրեց 1185 թվին նրա եղբայր Ռուբեն III-ին գերելու ժամանակ գրաված սահմանամերձ վայրերը, ի թիվս որոնց և՝ Պորտելլան: Նա հրաժարվեց Կիլիկիայի հարթավայրի հարավային մասի՝ Գաստոնից մինչև Այաս ընկած տարածքի պահանջմանդրությունից և գերությունից ազատվեց: Ըստ համաձայնագրի երկրորդ կետի Բոհեմունդի որդի Ռայմունդը ամուսնացավ Լևոն II-ի աղգականուհի Ալիսի հետ[1]: Այս ամուսնությունից ծնված Ռայմունդ-Ռուբենը հետագայում Լևոնի կողմից հայտարարվեց միաժամանակ նաև հայոց գահի ժառանգորդ:

Այսպիսով, Կիլիկիայի սահմանամերձ մարզերի համար հայերի դեմ Անտիոքի իշխանապետության խաչակիրների դարավոր պայքարն ավարտվեց հօգուտ Կիլիկյան Հայաստանի, իսկ XIII դարի սկզբին Լևոն II-ը փորձ արեց իր գինաստիայի իշխանությանը ենթարկել նաև Անտիոքը:

Կիլիկիայի հայկական իշխանապետության հաջողությունների համար բարենպաստ պահերից մնկն էլ այն հանգամանքն էր, որ սուլթան Ալիճ-Արսլանը դեռևս կենդանության օրոք իր պետության տարածքը բաժանեց որդիների միջև, ինչը թուլացրեց Փոքր Ասիայի սելջուկների ռազմական հզորությունը և նրանց արշավանքը Կիլիկյան Հայաստան:

Բաժանվելով մի չարք թշնամական էմիրությունների՝ Իկոնիայի սուլթանությունը քառորդ դար չարունակ ոչ միայն դադարեց վտանգավոր թշնամի լինել Կիլիկյան Հայաստանի համար, այլև զրկվեց մի քանի սահմանամերձ մարզերից, որ նվաճեց Լևոն II-ը:

Լևոն II-ի թագավորության սկզբնական ժամանակաշրջանի մասին արժեքավոր տվյալներ կան Միքայել Ասորու «Ժամանակագրության» մնջ: Շնորհիվ Արևելքում միաբնակ դավանանքի պատրիարքի իր դիրքի և մի քանի թագավորների հետ ունեցած կապերի նա լավ տեղյակ էր Առաջավոր Ասիայի միջազգային հարաբերություններին[1]: «Սուլթան Ալիճ-Արսլանի մահից հետո,– գրում է նա,– Լևոնը տիրեց Beth Romaye-ի 72 ուժեղ հենակետերին, որոնք մասամբ թուրքերից խլեց, մասամբ էլ հույներից: Թուրքերի նկատմամբ նա միշտ հաղթող էր, ահա թե ինչու սուլթանի (Ալիճ-Արսլանի – Գ. Մ.) որդիները ապավինեցին նրա հովանավորությանը: 1195 թ. Մալիքը (Մուղիս Էդդին Տողրուլչահը՝ Ալիճ-Արսլանի որդին – Գ. Մ.), Ալբիստանի տերը, եկավ Լևոն II-ի մոտ և իրեն կախյալ հայտարարեց նրանից: Այնժամ Լևոնը արշավանքի ելավ Կեսարիայի տիրոջ դեմ (Նուր աղ դին Սուլթանշահի, Ալիճ-Արսլանի որդու – Գ. Մ.), հաղթեց նրան և գրավեց Կեսարիային հարևան մի բնակավայր»[2]:

Ալիճ-Արսլանի որդիների գժտության, Լևոն II-ի նվաճումների և Սալադինի որդիների պատակտման այս նկարագրությամբ ավարտվում է Միքայել Ասորու «Ժամանակագրությունը», որի հայերեն թարգմանության մնջ այդ նույնի մասին խոսվում է մի քիչ այլ կերպ. «Եւ ինքն արիագոյնն Լևոն տիրեաց եւթանասուն և երկու բերդի, էր զոր նախնիքն իւր կալեալ էին և էր զոր ինքն էառ ի յունաց և ի թուրքաց... Եւ եկ մնծն Լևոն և էառ բերդ մի մերձ Կեսարիոյ և նա նմա», մնլիքին՝ Ալպիստանի տիրոջը[3]: Այնուհետև «Ժամանակագրության» հայերեն թարգմանության չարունակողը գրում է. «Իսկ պարոնն Լևոն որդին Ստեփանէ օր ըստ օրէ երթայր ու զորանայր աստուծով յաջողեալ և յամննեցունց փառաւորեալ, և յայնժամ յորժամ տակարացոյց աստուած չուրջանակի զթշնամիս նորա և ի կոր կործա-

[1] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 97:

[1] Տե՛ս **Пигулевская Н. В.**, Византия и Иран на рубеже VI–VII вв., М-Л., 1946, с. 33:

[2] Cronique de Michel le Syrien, t. III, p. 411.

[3] **Միքայել Ասորի**, Ժամանակագրութիւն, էջ 501–502:

նեաց զամենայն հակառակորդս նորա, տիրեաց նա լիով երկուց Կիլիկէից լերամբք և դաչտօք, քաղաքօք և ամրական դղեկօք, և առ քաջութեամբ իւրով և զհասարակն Սուրաւոց և մասունս ոչ սակաւս յերկրորդ Կապադովկացւոց, յերրորդ Հայոց, զոր ոմանք Առաջինն անուանեն Հայք. գրաւեաց բնդ իւրով իշխանութեամբ և յԱսորեստանեաց գաւառաց»[1]: Չնայած գովասանական տոնին՝ այստեղ լավ են լուսաբանված Կիլիկյան Հայաստանի ռազմական հաջողությունները, նրա սահմանների ընդլայնումը XII դարի վերջում:

Այսպիսով, իր թագավորության առաջին չրջանում (1187–1198), մինչև թագավորական տիտղոս ընդունելը, Լևոն II-ը ընդլայնեց իր պետության սահմանները: Հիմա Կիլիկիայի բոլոր մատույցները և նրբերը դեպի հարևան երկրներ, բերդերով պաշտպանված բոլոր լեռնային կապանները նրա իշխանության տակ էին:

Նոր տարածքի նվաճումը, ինչը պայմանավորված էր ավատատերերի չահերով, նպաստում էր աշխարհիկ ու վանական խոշոր հողատիրության ընդլայնմանը, ավատական հարաբերությունների հետագա զարգացմանը և գյուղացիների վրա ավատատերերի իշխանության ուժեղացմանը:

Արտաքին թշնամիների դեմ ձեռք բերված հաղթանակների և Կիլիկիայի հայկական պետության տարածքի ընդլայնման հետևանքով բարձրացավ Լևոն II-ի հեղինակությունը:

XII դարի վերջին Կիլիկիայի հայկական պետությունը նշանակալի զարգացման հասավ: Կիլիկիայի ամբողջ տարածքը գրավելու համար հարևանների դեմ XII դարում մղած պատերազմներում և իր անկախության համար պայքարում Կիլիկիայի հայկական պետությունը ոչ միայն հաղթանակեց, այլև ընդլայնվեց ի հաշիվ Անտիոքի իշխանապետության և Ռումի սուլթանության: Լևոն II-ը խոշոր հաջողությունների հասավ նաև պատերազմներում և արտաքին քաղաքականության մեջ XII դարի վերջում: Բնակչության ստվարացումը, երկրի տնտեսական վերելքը, գյուղատնտեսության, քաղաքների և արտաքին առևտրի զարգացումը նպաստում էին Կիլիկյան Հայաստանի ծաղկմանը: Կազմավորվեց ավատական հասարակարգ Լևոն II-ից կախյալ ավատատերերի ռազմական կազմակերպությամբ:

Կիլիկյան Հայաստանը դարձավ Միջերկրական ծովի արևելյան ափի ուժեղ պետություններից մեկը: Այսպիսով, պայմաններ ստեղծվեցին Լևոն II-ի կողմից թագավորական տիտղոս ընդունելու համար, ինչին նա ձգտում էր, որպեսզի էլ ավելի բարձրացներ իր իշխանու-

[1] **Մխիթար Ասորի**, *Ժամանակագրութիւն*, էջ 502:

թյան վարկը ինչպես երկրի ներսում, այնպես էլ հարևանների աչքում: Այդ հարցի կապակցությամբ առավել գնահատելի են Սմբատ և Կիրակոս պատմիչների հաղորդումները: Սմբատի «Ժամանակագրության» մեջ կարդում ենք. «Եւ ի թուին ՈՒՀԶ (1196) յղեաց թագաւորն յունաց պարոն Լեւոնի թագ պատուական, և խնդրէր ի նմանէ զմիաբանութիւն սիրոյ: Եւ նա առ և ընկալաւ ուրախութեամբ»[1]:

Այնուհետև ժամանակագիրը հաղորդում է, որ դրանից քիչ անց Կոստանդնուպոլիս ուղարկվեց հայկական դևսպանություն՝ Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ: Այս դևսպանության մասին համանման տեղեկություններ կան պատմական այլ աղբյուրներում ևս, բայց դրանք մանրամասնությունների մեջ մի քիչ տարբերվում են: Այսպես, օրինակ, Կիրակոս Գանձակեցին հաղորդում է. «Եւ լուեալ կայսրն յունաց, եթէ փոանկք նուաճեն Լեւոնի, առաքեաց և նա ընծայս և թագ գեղեցիկ՝ ոսկւով և ականբք պատուականօք ընդկուզեալ»[2]: Դևսպանին հանձնարարված էր ասելու. «Զթագն Հռոմնացւոց մի ղիցես ի գլուխ քո, այլ զմերդ, զի առ մեզ հուպ ես, քան թէ ի Հռոմ»[3]: Այս հարցի քննարկումը, բոլոր աղբյուրների տվյալների և հաղորդումների համադրումը մեզ բերում է այն եզրակացության, որ Սմբատի «Ժամանակագրության» մեկնակերպը ճիշտ է:

Թեև տվյալներ չկան վերոհիշյալ դևսպանության իսկական նպատակների մասին, սակայն կարելի է ենթադրել, որ բյուզանդական կայսրից թագ ստանալուց հետո իր դևսպաններին ուղարկելով Կոստանդնուպոլիս՝ Լևոն II-ը նրանց հանձնարարել էր պարզաբանել Բյուզանդիայից թագավորական տիտղոսի պաշտոնական ընդունման պայմանները, քանզի դրա հետ էին կապված Կիլիկյան Հայաստանի և մասամբ Հայոց եկեղեցու անկախության հարցերը:

Հայոց եկեղեցուն, որի կենտրոնը (կաթողիկոսական աթոռը՝ Հռոմկլայում) գտնվում էր Լևոն II-ի ազդեցության տակ, սաստիկ հետաքրքրում էր իր փոխհարաբերությունը հունական եկեղեցու հետ: Ինչպես հայտնի է, դեռևս XII դարի 70-ական թվականներին Կիլիկիայի Հայ Հոգևորականությունը հանդես եկավ որպես բյուզանդական կառավարության և Հունա-ուղղափառ եկեղեցու հետ հավատի դոգմանների ու եկեղեցական ծեսերի կապակցությամբ բանակցություններ վարելու կողմնակից՝ այդ եկեղեցիների մերձեցման նպատակով, բայց այդ բանակցությունները, այնուամենայնիվ, դրական արդյունքներ չտվին:

[1] **Սմբատայ Սպարապետի** *Պատմութիւն*, էջ 97:

[2] **Կիրակոս Գանձակեցւոյ** *Պատմութիւն*, էջ 150:

[3] Նույն տեղում:

Ինչպես երևում է Սմբատի տեքստից, կայսր Ալեքսիոսը թագ ուղարկելով՝ Լևոն II-ին դրդում էր Եկեղեցական հարցերի նոր քննարկման, հանուն որի էլ Կոստանդնուպոլիս է գնացել հայկական դեսպանությունը: XII դարի վերջերին թուլացած Բյուզանդիան ձգտում էր քաղաքական ու եկեղեցական համաձայնության գալ հայերի հետ: Ալեքսիոս III-ը, Իսահակից գավթելով իշխանությունը, հրաժարվեց կրոնական հալածանքների քաղաքականությունից, որ կիրառում էր իր նախորդը Բյուզանդիայի տարածքում ապրող հայերի նկատմամբ[1]:

Այս դեսպանության մասին, որը Կոստանդնուպոլիս է ուղարկվել նման մի այլ դեսպանություն մեկ տարի առաջ Հռոմ ուղարկվելուց հետո, տեղեկություններ գտնում ենք «Տեառն Ներսեսի Լամբրոնացւոյ և արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոց, յորժամ չոգաւ դեսպանութեամբ ի թագաւորէն հայոց Լէօնէ ի Կոստանդնուպոլիս» ձեռագրում[2]: Համաձայն այս աղբյուրի Ներսես Լամբրոնացին, որը մեծ պատվով ընդունվել է Բյուզանդիայի կայսեր կողմից, նրան է հանձնել Լևոն II-ի և կաթողիկոս Գրիգոր Ապիրատի նամակները: Հունական հոգևորականության հետ կրոնական բանավեճի մեջ Ներսես Լամբրոնացին, ասում են, հաղթել է իր հակառակորդներին, ինչը հնարավոր է, քանի որ նրան վերագրում են աստվածաբանական մեծ գիտելիքներ և հռետորական խոշոր տաղանդ: Սակայն Կոստանդնուպոլսի բանակցությունները հաջողություն չեն ունեցել: Հույն հոգևորականությունը անդիջում դիրք է բռնել և հայոց եկեղեցու ներկայացուցչից պահանջել, որ ընդունի ուղղափառ դավանանքի մի շարք ծեսեր ու դոգմաներ: Երկու եկեղեցիների հաշտեցում, չխոսելով դեռ մերձեցման մասին, տեղի չի ունեցել:

Իհարկե, Ներսես Լամբրոնացու դեսպանության անհաջողությունը չէր կարող նպաստել Բյուզանդիայի և Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու եկեղեցական մերձեցմանը:

XII դարի վերջին, Ֆրիդրիխ Շիկամորուսի պարտությունից հետո այն պայքարում, երբ լոմբարդական քաղաքները պապերի հետ դաշնակցած մղում էին իրենց անկախության համար Գերմանիայի կայսեր դեմ, պապական իշխանությունը մոտենում էր իր հզորության գագաթնակետին: Դեռևս Երրորդ խաչակրաց արշավանքի կազմակերպման ժամանակ Կլիմենտ III պապը Կիլիկյան Հայաստանը դի-

[1] **Վարդանայ Բարձրբերդցւոյ** Պատմութիւն տիեզերական, էջ 175:

[2] **Ց. Տաշեան,** Յուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1896, էջ 335:

տում էր որպես մի պետություն, որի ռազմական ուժերը անհրաժեշտ է օգտագործել Երուսաղեմը մուսուլմաններից ետ գրավելու համար: Դրա հետ միասին պապությունը չոչափում էր այն հիմքը, որով հայոց եկեղեցին հնարավոր լիներ Հռոմին ենթարկելու:

Կիլիկիայի հայերը, որոնց սոսկ աննշան մասն էին ազնվականներն ու վաճառականները, որ քաղաքականապես ու տնտեսապես կապված էին Եվրոպայի հետ և պատրաստ էին զիջումներ անել կաթոլիկությանը, մեծ մասամբ XIII–XIV դարերի ընթացքում պապությանը համառ դիմադրություն էին ցույց տալիս և կաթոլիկություն չընդունեցին:

Դեռ 1196 թվին, Ներսես Լամբրոնացու՝ Կոստանդնուպոլիս գնալուց առաջ, Լևոն II-ը Ցելեստինոս III պապի մոտ ուղարկեց մի դեսպանություն, որին հանձնարարված էր պապի աջակցությամբ արքայական թագ ստանալ կայսրից[1]: Շուտով այդպիսի հնարավորություն ներկայացավ:

Հենրիխ VI կայսրը այդ ժամանակ գտնվում էր Իտալիայում: Դեռ 1194 թվին գալով Իտալիա, նա, Մարքսի խոսքերով ասած, «իրեն պահում էր ինչպես բարբարոս... Սիցիլիայում նա հրամայում էր կուրացնել, ցից հանել, խորովել, կաշին քերթել, հողի մեջ թաղել և ամենից առաջ՝ կողոպտել»[2]:

Հարավային Իտալիան, ներառյալ և Սիցիլիան, Գերմանիայի կայսեր համար դեպի Պաղեստին խաչակրաց արշավանքի նպատակով միջոցներ կորզելու աղբյուր էր և ռազմաստրատեգիական հենակետ՝ Բյուզանդիայի ու Արևելքի նվաճման ճանապարհին:

1196 թ. Պաղեստինը նվաճելու համար Իտալիայից դեպի Արևելք ճանապարհվեց գերմանացի խաչակիրների ջոկատը, որը, սակայն, հաջողություն չունեցավ, ուստի և Պաղեստին ուղարկվեց Հենրիխ VI-ի քարտուղար արքեպիսկոպոս Լյուբեկ Կոնրադը, որին հանձնարարված էր ղեկավարել գերմանացի խաչակիրների գործողությունները Պաղեստինում: Նա իր հետ թագեր էր բերել Լևոն II-ի և Կիպրոսի Ամորի Լուզինյանի համար: Կոնրադը թագադրեց Ամորիին և Նիկոզիայից, չմտնելով Կիլիկիա, ուղևորվեց դեպի Պտղոմեա՝ խաչակիրների մոտ[3]: Գուցե սրա հետ է կապված և այս ժամանակին է վերաբերում Ներսես Լամբրոնացու ուղևորությունը դեպի Կոստանդնուպոլիս: Ըստ երևույթին, Գերմանիայի կայսեր խաչակրաց նոր ար-

[1] **Ալիշան,** Սիսուան, էջ 474:

[2] Архив Маркса и Энгельса, т. V, М., 1938, с. 176.

[3] **Ալիշան,** Սիսուան, էջ 464:

չավանքը Լևոն II-ին ստիպեց Կոստանդնուպոլսում չոչափել Բյուզանդիայի հետ մերձեցման հնարավորությունը: Այնուամենայնիվ Լևոն II-ը չսահմանափակվեց Բյուզանդիայի հետ բանակցություններով և 1197 թ. սեպտեմբերին Կոնրադի մոտ՝ Պտղոմեա ուղարկեց մի դեսպանություն՝ Սիսի արքեպիսկոպոս Հովհաննեսի գլխավորությամբ: Այդ ժամանակ (1197–1198) Պաղեստինում անհաջողություններ կրած գերմանացի խաչակիրները լուր ստանալով, որ Հենրիխ VI-ը մահացել է, չտապեցին տուն վերադառնալ: Նրանց հետ Եվրոպա վերադարձավ Կոնրադ Լյուբեկացին՝ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտելսբախին հանձնարարելով թագը տանել Լևոն II-ին և գործել ըստ Ցլեստինոս III պապի հրահանգների[1]: Հռոմի պապը ձգտում էր այն բանին, որ Լևոն II-ը թագն ստանար ոչ թե Բյուզանդիայից, այլ՝ «Հռոմեական Սրբազան կայսրությունից», և ճանաչեր Հռոմեական եկեղեցու առաջնությունը:

Արքեպիսկոպոս Կոնրադը մեկնեց Կիլիկիա և բանակցություններ սկսեց Լևոն II-ի թագի հանձնման պայմանների մասին[2]: Պապի անունից նա Լևոնից պահանջեց գրավոր պարտավորություն ստանձնել կաթոլիկական մի քանի ծեսերի ընդունման մասին[3]:

Լևոն II-ը խորհրդակցության կանչեց կաթողիկոսին և եպիսկոպոսներին, որպեսզի խորհուրդ հարցներ: Հայ հոգևորականությունը հրաժարվեց ընդունել պապության պահանջը: Բայց Լևոնը իր եպիսկոպոսներին համոզեց ընդունել պապի պայմանները՝ ասելով. «Դուք մի՛ ինչ հոգայք վասն այդորիկ, ես հաճեցից զմիտս նոցա առ անգամ մի կնդծաւորութեամբ»[4]: Պապի պատվիրակի՝ կարդինալ Կոնրադի պահանջով 12 հայ եպիսկոպոսներ երդում տվեցին կատարել պապության պայմանները:

Լևոն II-ի թագադրման հանդեսը տեղի ունեցավ 1198 թ. հունվարին Տարսոնում: Թագավորի թագադրմանը ներկա էին տասնյակ աշխարհիկ և հոգևոր իշխաններ[1], հակոբիկների պատրիարք Միքայելը՝ «Ժամանակագրության» հեղինակը, հայոց կաթողիկոս Գրիգոր VI-ը և հարևան ժողովուրդների շատ դեսպաններ՝ նվերներով: Նվերներ էր ուղարկել նաև Բաղդադի խալիֆը[2]: Այս ամենը խոսում է այն մասին, որ Կիլիկյան Հայաստանի միջազգային դերն ու հեղինակությունը Լևոն II-ի ժամանակ խիստ բարձրացել էր:

Միաժամանակ պետք է նշել, որ Լևոն II-ի թագադրումը ժամանակակիցների՝ XIII դարի հայ գրողների կողմից գնահատվում էր որպես հայկական թագավորության վերականգնում, որպես խոշոր քաղաքական իրադարձություն հայոց պատմության մեջ: Հայ պատմիչ Սմբատի մոտ կան նշանակալից խոսքեր. «Եւ եղև ուրախութիւն հայոց, զի յաւուրս յետինս զանկեալ զտէրութիւն իւրեանց տեսին կանգնեալ և նորոգեալ յերեսս Լևոնի արքայի Հայոց»[3]: Միքայել Ասորու «Ժամանակագրության» թարգմանիչը հայերեն գրում է. «Եւ այսպէս վերստին նորոգեցաւ թագակալութիւն Արամեան գաւակին, և թագն Հայկազանց և Սենեքերիմանց եղաւ ի գլուխ արժանաժառանգ գարմին Լևոնի ի ՈՒԽԵ թուին հայոց»[4]:

Հայագետ Ալիշանը «Սիսվան»-ում մի չարք փաստարկներով պընդում է, թե Լևոն II-ի թագադրումը տեղի է ունեցել 1199 թ. հունվարի 6-ին: Այս տարեթիվն է ընդունում նաև Տուրներիզը: Հայոց եկեղեցու պատմաբան Մ. Օրմանյանը որպես ապացույց այն բանի, որ Լևոն II-ի թագադրումը տեղի է ունեցել 1199 թ. հունվարի 6-ին, ի միջի այլոց բերում է այն փաստարկը, թե «Հանդեսին ներկա եպիսկոպոսներուն մեջ չիչուիր Ներսես արքեպիսկոպոսն Տարսոնի և Լամբրոնի»[5]:

Օրմանյանի այս փաստարկը հիմք չունի: Մի ձեռագրում հենց իր՝ Ներսես Լամբրոնացու ձեռքով գրված է հետևյալը. «Մինչև ի լրումն թուիս ՈՒԽԵ (1198) յորժամ ամի վերապատուեցաւ թագաւոր հայոց Լևոն, որ յՌուբենեանց բարեպաշտ և յաղթող աստուծով: Որոյ հռչակ արութեան չարժեաց զմեծ ինքնակալսն հին Հռոմայ զՀենոի և նոր Հռոմայ՝ զԱլեքս, որք զսա քարամբք պատուականաւ յեկեղեցի Տարսոնի, որ իմ անարժանութեամբս հովուին»[6]:

[1] Տե՛ս **Ալիշան,** Սիսուան, էջ 464:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **Կիրակոս Գանձակեցւոյ** Պատմութիւն, էջ 149: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին բերում է Լևոն II-ին թագի հանձնման հետևյալ երեք պայմանները, որոնք նրան է ներկայացրել պապի պատվիրակը. «Տանել զտօն տեառն և ամենայն սրբոց, յորում աւուր և հանդիպի. միշտ եկեղեցիսդն կատարել զպատճան տուրնջեան և գիշերոյ, զոր ի վաղուց հետե ոչ առնեին հայք ի հինահարութեանցն Իսմայէլի, բայց միայն ի ժամ խորհրդածութեան սրբոյ պատարագին. և ոչ լուծանել զծրագայոցն ծննդեանն և յարութեանն, բայց միայն ձկամբ և ձիթով»:

[4] Նույն տեղում:

[1] **Մմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 98:

[2] **Կիրակոսի Գանձակեցւոյ** Պատմութիւն, էջ 150:

[3] **Մմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 99:

[4] **Միքայէլ Ասորւոյ** Ժամանակագրութիւն, էջ 504:

[5] **Մ. Օրմանյան,** Ազգապատում, էջ 1545:

[6] **Ց. Տաշեան,** Յուցակ հայերեն ձեռագրաց, Վիեննա, 1896, էջ 283:

Այս գրառման չնորհիվ որոշակիորեն երևում է, որ Լևոն II-ի թագադրումը տեղի է ունեցել 1198 թվին՝ դեռ Ներսես Լամբրոնացու կենդանության օրոք: Այս առթիվ ոչ մի կասկած չի կարող լինել, քանի որ ճշգրիտ հայտնի է, որ Ներսես Լամբրոնացին՝ վերոհիշյալ գրառման հեղինակը, մահացել է 1198 թ. հուլիսի 14-ին: Հետևաբար, թագադրումը չէր կարող տեղի ունենալ 1199 թվին, ինչպես պնդում են Օրմանյանն ու Ալիշանը:

Ներսես Լամբրոնացու հաղորդումը Լևոն II-ի թագադրման մասին կարևոր է նաև այլ առումով: Եվրոպական, ինչպես և հայ պատմաբանները սովորաբար ընդգծում են Հռոմի պապի պատվիրակի ձեռքից ստացված թագով Լևոն II-ի թագադրման փաստը, մինչդեռ Տարսոնի մայր տաճարի վանահայր Ներսես Լամբրոնացին վերոհիշյալ գրության մեջ հավաստիացնում է, թե Լևոն II-ը պսակվել է Գերմանիայի և Բյուզանդիայի կայսրերի կողմից:

Երկու կայսրերից Լևոն II-ի թագ ստանալու փաստը, հավանաբար, բացատրվում է իր իշխանության մեծ հեղինակություն և միաժամանակ Գերմանիայի և Բյուզանդիայի կայսրերի կողմից Կիլիկյան Հայաստանի ինքնիշխանության դեմ հնարավոր ոտնձգությունները չեզոքացնելու նրա ձգտմամբ:

Լևոն II-ը և նրա հաջորդները միանգամայն անկախ են եղել ինչպես Հռոմեական Սրբազան կայսրությունից, այնպես էլ Բյուզանդական կայսրությունից: Դրան նպաստում էր և այն, որ XII դարի 80-ականներին Բյուզանդիան արդեն կորցրել էր իր տիրույթները Կիլիկիայում և հաջորդող ժամանակաշրջանում հեղինակություն ու քաղաքական կշիռ չուներ Արևելքի երկրներում, իսկ Գերմանիայի կայսրերին չէր հաջողվել հիմնավորվել Մերձավոր Արևելքում:

Չնայած Վատիկանի կողմից Կիլիկիան իրեն ենթարկելու բազմիցս կրկնվող փորձերին՝ Կիլիկիայի հայկական պետությունը մինչև իր գոյության վերջը քաղաքական առումով անկախ էր Հռոմեական կայսրությունից, իսկ կրոնական առումով՝ հռոմեա-կաթոլիկական եկեղեցուց:

Լևոն II-ի լիակատար անկախության մասին վկայում է թեկուզ այն փաստը, որ նեթ խրիսովուլում՝ առևտրական պայմանագրում, որ կնքված էր Ջենովայի հետ 1201 թ. մարտին, նա իրեն մեծարում է «Լևոն, աստծո ողորմածությամբ թագավոր հայոց» և ապա հիշատակում է, որ ինքը արքայական թագն ստացել է Հռոմեական կայսրությունից, ապա վենետիկցիների անունով գրված խրիսովուլում, ինչպես և իր թագավորության վերջին ժամանակաշրջանի փաստաթղթերում ինքն իրեն մեծարում է միայն «աստծո ողորմածությամբ թագավոր հայոց»[1] ձևակերպումով:

Դեռևս XII դարի կեսերին տաճարականների օրդենը տիրույթներ ձեռք բերեց Հյուսիսային Սիրիայում՝ Կիլիկիայի սահմանի մոտերքում: Տաճարական ասպետները մերթ հայերի հետ միասին կռվի էին ելնում մուսուլմանների դեմ, մերթ հայերի դեմ էին կռիվ սկսում սահմանամերձ բերդերի համար: Թորոս II-ին վիճակվեց տաճարականների դեմ կռվել սահմանամերձ Գաստոն ամրոցի համար: Նրա հաջորդ Մլեհը տաճարական ասպետներին դուրս քշեց Կիլիկիայի սահմաններից:

Լևոն II-ի օրոք հովհաննականների (հիվանդապահների) միաբանությունը և տևտոնական միաբանությունը նրանից ստացան բազում ամրացված քաղաքներ ու գյուղեր, գլխավորապես՝ սահմանամերձ: 1191 թվին Լևոն II-ը օգտվելով նրանից, որ Սալադինը զբաղված էր խաչակիրների դեմ պատերազմելով գրավեց Կիլիկիային սահմանակից ամրացված քաղաքներ Բագրասն ու Դարբսակը, որոնք դրանից քիչ առաջ (1188) Սալադինը Անտիոքից էր խլել, և դրանք հանձնեց հիվանդապահներին որպես ավատային տիրույթ: Այդ արարքով նա ցանկանում էր հանձինս հովհաննական ասպետների դաշնակիցներ ձեռք բերել Կիլիկիայի սահմաններն ապահովելու համար, որին սպառնում էին Սալադինը և Անտիոքի իշխանապետությունը: 1210 թ. հայոց թագավորը հովհաննականների ուխտին «լիակատար իրավունքով ցամաքի ու ծովի վրա ի հավերժ օգտագործումն» չնորհեց Սելևկիա քաղաքը, Կաստելում Նովումը (Նորբերդը) և Կամարդեղումը (Կամարբերդը)[2]:

Իկոնիայի սուլթանության դեմ մղվող պատերազմներում Լևոն II-ը ռազմական օգնություն էր ստանում հովհաննականների ուխտից: Ընծայման գործողությունը կատարվել է այն բանից հետո, երբ այդ օրդենի ասպետները նրան օգնեցին ետ մղելու սուլթան Իզզ էդդին Քեյ Քավուսի հարձակումը Կիլիկիայի վրա: Բացի այդ, Լևոն II-ը հովհաննականների աջակցությունն ստացավ հենց Անտիոք քաղաքում՝ Անտիոքի գահը իր թոռ Ռուբեն-Ռայմոնդի օգտին ապահովելու համար մղված պայքարի ժամանակ:

Երկու հետաքրքիր փաստաթղթեր են պահպանվել Լևոն II-ի և հովհաննական ուխտի միջև դրամական գործառնությունների մասին: Դրանցից մեկը, որը նշված է 23 ապրիլի 1214 տարեթվով, վերաբերում է Լևոն II-ի՝ Վաներ քաղաքը իր չրջապատով և մշակված ու

[1] **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, pp. 105, 109, 114, 122.*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 113:*

անմշակ հողերով այդ ուխտին 10000 սարակինոսյան բյուզանտով դիջելու գործողությանը, ինչն անհրաժեշտ էր իր դստեր՝ Երուսաղեմի թագավոր Ժան դը Բրիենի հետ ամուսնացող Ֆեմյայի օժիտի համար[1]:

Այդ նույն նպատակով, այսինքն աղջկա օժիտի համար դրամի կարիք զգալով, Լևոն II-ը 20000 բյուզանտի դիմաց հովհաննականների ուխտի մագիստրոս Գուրանխո դը Մոնտ Ակուտոյի մոտ գրավ դրեց ճկների չրջանը, որն ուներ 10 բնակավայր, ի թիվս որոնց նաև Կալամելա նավահանգիստը, որը գտնվում էր Ալեքսանդրետի ծոցի արևելյան ծայրին, ուխտին դիջելով գրավ դրված տարածքի հարկերի գանձման իրավունքը հետայսու, մինչև պարտքի մարումը[2]: Աբբայի գրած նամակում Ժերվե Ժան դը Բրիենը հաղորդում է, որ ինքը ամուսնացել է հայոց թագավոր Լևոն II-ի դստեր հետ՝ իր բոլոր բարոնների խորհրդով, հուսալով, որ այս ամուսնական դաշինքը մեծ օգուտ կբերի Երուսաղեմի թագավորությանը: Հնարավոր է, որ Երուսաղեմի թագավորը հույս է ունեցել իր աներոջ օգնությամբ ետ նվաճել Երուսաղեմը Այուբյաններից, ակնկալել է, թե իր սերունդները կժառանգեն Կիլիկյան Հայաստանի գահը: Սա հաստատվում է նրանով, որ Լևոն II-ի մահից հետո նա հանդես է եկել որպես հայոց գահի հավակնորդ:

Հովհաննականների ուխտի տիրույթները գտնվում էին սահմանամերձ չրջաններում՝ Ռումի սուլթանության և Անտիոքի իշխանապետության սահմաններում: Այս ուխտի ասպետները եկամուտներ ունենալով ավատական տիրույթներից ու դրամաառևտրական գործառնություններից՝ չհագրգռված էին պահպանել իրենց տարածքները և որպես վասալներ օգնում էին Լևոն II-ին ու նրա հաջորդներին: Կիլիկիայում ֆրանկ ասպետների հիմնավորվելը նպաստում էր հայ ազնվականության մեջ խաչակիրների ասպետական կենցաղի ազդեցության տարածմանը:

Կիլիկիայում տիրույթներ է ձեռք բերում նաև տևտոնական ուխտը, որը չատ ավելի ուշ էր հիմնավորվել Արևելքում: Լևոն II-ի կողմից այս ուխտին Համուդ ամրոցի (Սիրիայի սահմանի մոտ) չնորհման մասին պաշտոնական փաստաթուղթը վերաբերում է 1212 թվին: Համուդից բացի տևտոնական ուխտն ստացել էր առևտրական արտոնություններ. «վաճառելու և գնելու լիակատար ազատություն Կիլիկիայի ամբողջ տարածքում՝ քաղաքներում, ավատներում, գյուղերում, կամուրջների վրա, նավահանգիստներում, հարթավայրերում ու լեռներում՝ առանց մաքսի վճարման»[1]:

1236 թ. տևտոնական ուխտը նրանից ստացավ Հարունիա քաղաքը՝ իր չրջակա գյուղերով, վանքերով ու ավատներով և դրանցից ստացվող եկամուտներով: Բայց հողային տիրույթներ և առևտրական արտոնություններ ստանալով՝ գերմանացի ասպետների այդ ուխտը համապատասխան ռազմական օգնություն ցույց չէր տալիս Կիլիկյան Հայաստանին:

Հայտնի է, որ տևտոնական ուխտը հաջողություն չունեցավ Արևելքում և իր զավթողական գործունեությունը ծավալեց պրուսների երկրում:

Քաղաքական և առևտրական կապերի հաստատումը Եվրոպայի ու խաչակիրների հետ, արաբների ու սելջուկների դեմ մղվող պատերազմներում նրանց հետ համագործակցելը, Երուսաղեմի թագավորության, Անտիոքի իշխանապետության ու Կիպրոսի թագավորության հետ ամուսնական կապերով կապվելը նպաստում էին Կիլիկիայի հայ ազնվականության ու բարձր հոգևորականության միջավայրում լատինասիրական ուղղության հանդես գալուն և կաթոլիկ եկեղեցու հետ մերձեցման ձգտումների առաջացմանը: Այս հոսանքի կողմնակիցներ են եղել XII դարի վերջի և XIII դարի սկզբի կաթողիկոսներ Գրիգոր Տղան (1173–1193) ու Գրիգոր Ապիրատը (1194–1203):

XII դարի վերջին իր լատինասիրությամբ աչքի էր ընկնում աստվածաբան Ներսես Լամբրոնացին՝ Կիլիկյան Հայաստանի հոգևոր և աչխարհիկ ազնվականության այդ հոսանքի ամենանչանավոր ներկայացուցիչը, մի հոսանք, որը հույս էր տածում, թե աննչան զիջումների ճանապարհով, ընդունելով միայն կաթոլիկական որոչ ծեսեր և պապի առաջնությունը եկեղեցական գործերում, ռազմաքաղաքական համագործակցություն կհաստատեն խաչակիրների ու պապական իշխանության հետ:

Մեծ Հայքի եպիսկոպոսներն ու վարդապետները (գիտնական վանականները) դեմ էին Կիլիկիայի հայերի մեջ պապության հետ մերձեցման և կաթոլիկության ազդեցության տարածման քաղաքականությանը, որի կողմնակիցներն էին կաթողիկոս Գրիգոր Ապիրատը և մանավանդ նոանդուն Ներսես Լամբրոնացին: Այդ քաղաքականության դեմ հանդես եկան Սանահինի վանքի վարդապետ Գրիգոր Տու-

[1] **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 123.*

[2] *Նույն տեղում, էջ 142:*

[1] **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 142.*

տեորդին և Հաղպատի վարչապետ Դավիթ Քոբայրեցին՝ ունենալով հայկական արևելյան մարզերի այլ եպիսկոպոսների և Անիի արքեպիսկոպոս Բարսեղի աջակցությունը: Նրանք հանդիմանում էին Ներսես Լամբրոնացուն նորամուծության համար, մեղադրում էին լատինասերներին և նրա դեմ բողոքում Լևոն II-ին: Նրանց պնդմամբ Լևոն II-ը հավանաբար չցանկանալով վիճել արևելյան մարզերի բարձր հոգևորականության հետ, որն իր կողմնակիցներն ուներ Կիլիկիայում, և առավել զգուշավոր ու չափավոր լինելով պապության հետ կրոնական ու քաղաքական մերձեցման հարցերում՝ Ներսեսին հեռացրեց պալատից ու նրա եղբայր Հեթումին հանձնարարեց ներշնչել Ներսեսին, որ չափավորի իր լատինասիրությունը[1]:

Ներսես Լամբրոնացին մի ժամանակ մեկուսացավ Տարսոնում, որի արքեպիսկոպոսն էր ինքը և 1195 թ. Թագավորին գրեց մի նամակ, որի մեջ վիճաբանելով արևելահայ վարդապետների հետ, անպատվելով իր հակառակորդներին և անարդարացիորեն նրանց մեղադրելով տգիտության մեջ՝ ի միջի այլոց գրում էր հետևյալը. «Եւ ինձ հայն որպէս լատինացին, և լատինացին որպէս զհելլենացին, և հելլենացին որպէս զեգիպտացին, և եգիպտացին որպէս զասորին: Արդ եթէ ես միոյ ազգի ջատագով էի, ընդ այլն ե՞րբ էր կար հաղորդիլ, բայց ընդ իւրաքանչիւրսն որ միմեանց թշնամիք են՝ խառնիմ, և զընաւսն չահիմ ըստ Քրիստոսի առաքելոյն»[2]: Ներսես Լամբրոնացին ավելի չուտ տարբերություն չէր դնում քրիստոնեական կրոնի դավանանքների միջև: Հելլենը նրա համար ուղղափառ եկեղեցու հետևորդ է, լատինացին՝ կաթոլիկական և այլն: Հնարավոր է, որ այսպիսի հայացքը պայմանավորված էր նրանով, որ Կիլիկիայում ապրում էին ոչ միայն հայեր, այլև՝ ասորիներ, հույներ, ֆրանկներ, զանազան դավանանքի քրիստոնյաներ: Լևոն II-ի վասալների՝ իշխան-ավատատերերի թվում բացի հայերից կային և ֆրանկ-խաչակիրներ ու հույներ, և Ներսես Լամբրոնացին, այսպիսով, արտահայտում էր Կիլիկիայի ազնվականության չահերը ընդհանուր առմամբ՝ անկախ նրանց դավանանքից:

Ներսես Լամբրոնացին բարեկամական նամակագրություն ուներ ասորիների Միքայել պատրիարքի հետ: Նա գիտեր ասորերեն և հունարեն և մի անգամ հույն հոգևորականության ներկայությամբ ցանկացել է պատարագ մատուցել հունարենով, բայց ներկա գտնվող թագավորը նրան արգելել է այդ բանն անել: Նա մոտիկ կապերի մեջ է եղել նաև Անտիոքի իշխանապետության և Կիպրոսի թագավորության խաչակիրների հետ:

[1] **Մ. Օրմանեան,** *Ազգապատում, էջ 1514:*

[2] **Ներսիսի Լամբրոնացւոյ** *Առեներաններին և թուղթք, Վիեննա, 1838, էջ 215:*

Ներսես Լամբրոնացին արտահայտում էր Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր ավատական վերնախավի մի մասի ձգտումները՝ կապված Եվրոպայի հետ, և պաշտպանում քրիստոնեության չահերն ընդհանրապես՝ ցանկանալով միավորել բոլոր քրիստոնյաներին իսլամի դեմ մղվող պայքարում: Քանի որ XII դարի վերջում Բյուզանդիան թուլացել էր և այդ պայքարում ղեկավար դեր սկսել էր խաղալ պապական իշխանությունը, ուստի նա դարձել էր կաթոլիկական եկեղեցու հետ մերձեցման ջատագով:

Ներսես Լամբրոնացին Հայաստանի եպիսկոպոսների հետ բանավիճելիս, որոնք նրան հանդիմանում էին լատինասիրության մեջ, թագավորին ուղղված իր նամակում գրում էր, թե ինքը կրոնական ծեսերի մարզում այնքան է մեղավոր իր նորամուծությունների, հռոմեական եկեղեցու հանդեպ իր հակվածության մեջ, որքան Լևոն II-ը՝ իր մեծատոհմիկների ու պալատականների համար եվրոպական տիտղոսների գործածման մեջ, պալատում ֆրանկների կենցաղի ու սովորությունների նմանակման մեջ[1]: Նրա համեմատությունը մասամբ ճշմարիտ է: Արևմտյան ազդեցությունը դրսևորվում էր ոչ միայն կրոնի մեջ, այլև կենցաղում ու քաղաքական կյանքում: Սակայն թագավորի արտաքին ու ներքին քաղաքականության և ֆրանկների ու կաթոլիկ եկեղեցու նկատմամբ Ներսես Լամբրոնացու վերաբերմունքի միջև նկատելի տարբերություն կա: Լևոն II-ը հաստատակամություն էր դրսևորում Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու կրոնական անկախությունը պահպանելու գործում: Այս մասին են վկայում նրա ողջ արտաքին քաղաքականությունը և պապության հետ նրա փոխհարաբերության ընթացքը:

Լևոն II-ի՝ Վատիկանից անկախ քաղաքականության ապացույցներից մեկը Անտիոքի համար Տրիպոլիի կոմս Բոհեմունդի դեմ նրա պայքարի ժամանակ Ինոկենտիոս III-ի հետ բանակցությունը էր և նրա համառ անդիջողականությունը պապի հորդորանքների հանդեպ, որով վերջինս կոչ էր անում դադարեցնել պայքարը, տաճարականներին՝ Բոհեմունդի դաշնակիցներին վերադարձնել նրանցից բռնագրավված ամրոցները Կիլիկիայում:

Լևոն II-ի կողմից Անտիոքի պաշարման ժամանակ, որը Բոհեմունդ IV-ը խլել էր Ռուբեն-Ռայմունդից, տաճարականների ուխտը կանգնեց նրա հակառակորդների կողմը: Հայոց թագավոր Լևոն II-ը դրան պատասխանեց Կիլիկիայում տաճարականների ամրոցների բռնագրավումով և երկրից տաճարական ասպետների արտաքսմամբ

[1] **Ներսես Լամբրոնացւոյ** *Առեներաններին և թուղթք, 1838, էջ 234:*

(1203)։ Ինոկենտիոս III-ը երկար ժամանակ հորդորում էր Լևոնին վերադարձնել տաճարականներից խլված տիրույթները, բայց թագավորն անդրդվելի էր։ Չնայած դրան, Անտիոքի համար մղվող երկարատև պայքարի ժամանակ Ինոկենտիոս III-ը չարունակում էր դիվոգական դիրք դրսևորել Լևոնի նկատմամբ, Տրիպոլիի կոմսից էլ պահանջելով դադարեցնել պայքարը։ Պապին ոչ մի կերպ չհաջողվեց Լևոն II-ին դիմումների մղել Բոհեմունդի հետ ունեցած նրա վեճի ժամանակ։ Պապի և թագավորի միջև հաշտություն կայացավ լոկ այն ժամանակ, երբ Լևոն II-ը հասավ իր նպատակին՝ Անտիոքի իշխանապետության գահը փոխանցեց Ռուբեն-Ռայմունդին՝ իր եղբոր թոռ Ռուբեն III-ին[1]։

Եթե համեմատենք Ինոկենտիոս III-ի՝ Եվրոպայում ունեցած վիթխարի ազդեցությունը Կիլիկյան Հայաստանում նրա դիվանագիտության անհաջողությունների հետ, ապա դա կարելի է բացատրել նրանով, որ Վատիկանի իշխանությունը այդ երկրի վրա չէր տարածվում։ Ֆրանսիացի պատմաբան Տուրներիզը չի կարողացել թաքցնել այն փաստը, որ Ինոկենտիոս III-ը Լևոն II-ի հետ Անտիոքի համար վերջինիս մղած պայքարի ժամանակ պարտություն է կրել։ Չնայած իր ձգտմանը՝ ցույց տալ կաթոլիկական ազդեցության ներգործությունը կիլիկյան հայերի վրա, նա արձանագրում է հայ թագավորի և կաթողիկոսի՝ պապականության սուպրեմատիայի ընդունման սոսկ ձևական բնույթը և ստիպված է անել հետևյալ եզրակացությունը. «Սակայն հակառակ ննջարկվելու (պապականությանը – Գ. Մ.) բոլոր այդ կրկնվող հավաստիացումներին, նուրբ դիվանագետը (Լևոն II-ը – Գ. Մ.) նպատակ էր հետապնդում լինել անկախ՝ քաղաքական և կրոնական տեսակետից[2]։

Լևոն II-ը, հակառակ իր խոստումներին՝ աջակցել է հայոց և հռոմեական եկեղեցիների մերձեցմանը և ճանաչել վերջինիս սուպերմատիան, հակառակ պապական դիվանագիտության ջանքերին՝ հայոց եկեղեցին ենթարկել հռոմեականին, սուպերմատիայի սկզբունքը կյանքում չիրագործեց։

Կաթոլիկության ազդեցությունը Կիլիկյան Հայաստանում XII դարի վերջին և XIII դարի սկզբին խոր արմատներ չուներ։ Պալատը, բարձր ազնվականությունը, բարձր հոգևորականության մի մասը և, հնարավոր է, վաճառականության որոշ շերտեր ցանկանում էին քաղաքական և կրոնական կապեր հաստատել խաչակիրների ու պապության հետ, բայց առանց կտրվելու հայոց եկեղեցու ավանդույթներից։ Ներսես Լամբրոնացու նորամուծությունները մեծ նշանակություն չունեցան։ Լևոն II-ի ժամանակ կաթոլիկության տարածումը կիլիկյան հայերի մեջ հայտարարություններից և աննշան փոխառություններից այն կողմ չանցավ։

Երրորդ խաչակրաց արշավանքի անհաջողությունից հետո, XII դարի վերջին, Անտիոքի իշխանապետությունը նշանակալիորեն թուլացավ։ Նրա խաչակիրների մի մասը իր չահագրգռություններով կապված էր Լևոն II-ի հետ և դեմ չէր, որ նրա իշխանությունը հաստատվի նաև Անտիոքի վրա։ Կիլիկյան Հայաստանը, ընդհակառակը, այնքան էր ուժեղացել, որ Լևոն II-ը հուսով էր Անտիոքի թագաժառանգի հետ իր ազգականուհու՝ եղբոր աղջկա, ամուսնության միջոցով Անտիոքը ևս ենթարկել իր քաղաքական ազդեցությանը։

1195 թ. Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ի որդի Ռայմունդը ամուսնացել էր Լևոն II-ի աղգականուհի Ալիսի հետ։ Այդ ամուսնությունից ծնվել էր Ռուբեն-Ռայմունդը, որն իր պապ Բոհեմունդ III-ի մահից (1201) հետո պետք է ժառանգեր Անտիոքի գահը, քանի որ նրա հայր Ռայմունդը ավելի չուտ էր մահացել՝ 1200 թվին։ Նրա հորեղբայրը՝ Բոհեմունդ III-ի կրտսեր որդին՝ Տրիպոլիի կոմս Բոհեմունդ IV-ը, չտապից հասնել Անտիոք, որտեղ գտնվում էր հայկական կայազորը՝ Անտիոքի գահը գրավելու նպատակով։ Ֆրանկների օգնությամբ Բոհեմունդը գրավեց Անտիոքը։ Հայկական ջոկատը քաղաքից հեռացավ, գնաց Կիլիկիա։ 1203 թ. Լևոն II-ը հանդես եկավ Բոհեմունդ IV-ի դեմ՝ պաշտպանելով իր եղբոր թոռան ժառանգական իրավունքները Անտիոքի իշխանապետության նկատմամբ։ Սկսվեց մի պայքար, որը փոփոխական հաջողությամբ ձգվեց 13 տարի (1203–1216)։ Բոհեմունդը հենվում էր ոչ միայն ֆրանկ խաչակիրների նշանակալի մասի վրա, այլև՝ Անտիոքի հույների, ինչպես և՝ տաճարականների վրա։ Հովհաննականները, ֆրանկների մի մասը և Անտիոքի կաթոլիկ արքեպիսկոպոսը, ընդհակառակը, կանգնած էին Լևոն II-ի կողմը[1]։

1203 թ. Լևոն II-ի զորքի գրոհը Անտիոքի վրա ետ մղվեց, ինչին նպաստեցին տաճարական ասպետները։ Երեք տարի անց հովհաննականների աջակցությամբ հայկական ջոկատը գրավեց Անտիոքը, բայց նկատի ունենալով Հալեպի էմիրի կողմից հարձակման սպառնալիքները՝ ստիպված եղավ նորից թողնել այդ քաղաքը։

[1] Տե՛ս **F. Tournebize,** *Histoire polit, et relig. de l' Arménie, p. 188.*

[2] Նույն տեղում։

[1] Տե՛ս **P. Grousset,** *Histoire des crois. et de royaume franc de Jerusalem, P., 1936, t. III, p. 74.*

1216 թ. Լևոն II-ին, Անտիոքի սննդյալ Ամորիի աջակցությամբ, հաջողվեց գրավել Անտիոքը և այդ իշխանապետությունում հաստատել իր եղբոր թոռ Ռուբեն III-ի կառավարումը: 1209 թ. Լևոն II-ը, ինչպես ասվեց, Ռուբեն-Ռայմունդին հայտարարել էր իր գահաժառանգը, քանի որ նա ժառանգ չուներ: Այս կերպ գործելով՝ նա ձգտում էր իր դինաստիայի իշխանության տակ միավորել և՛ Կիլիկիան, և՛ Անտիոքը, որն Արևելքում մեծ նշանակություն ուներ որպես ուժեղ ամրացված բնակավայր և առևտրական կենտրոն:

Սակայն 1219 թ. Անտիոքի ֆրանկներից մի խումբ Գիլիոմ դը Ֆարրելի գլխավորությամբ դավադրություն կազմակերպեց Ռուբեն-Ռայմունդի դեմ, և վերջինս ստիպված եղավ փախչել Անտիոքից: Այնժամ Լևոն II-ը փոխեց իր որոշումը և Կիլիկիայի թագաժառանգ նշանակեց իր մանկահասակ դուստր Իզաբելլային (Զաբել), որը ծնված էր նրա երկրորդ կնոջից՝ Սիբիլլայից, Կիպրոսի թագավոր Ամորի Լուզինյանի և Իզաբելլա Պլանտագենտի դուստրից:

Անտիոքում իր դինաստիայի իշխանությունը հաստատելու և այն նույնիսկ Կիլիկիային միացնելու Լևոն II-ի փորձը Կիլիկիայի հայկական թագավորության ուժերը չեղոքց Փոքր Ասիայի սելջուկների դեմ մղվող պայքարից, որոնք, Բոհեմունդ IV-ի սադրանքով, Հալեպի էմիրի հետ դաշինք կնքած՝ ներխուժեցին Կիլիկիա, բայց հաջողություն չունեցան:

1206 թ. Լևոն II-ը ոչ միայն ետ մղեց Հալեպի էմիրի զորքերի հարձակումը, այլև ինքը սկսեց ավերել Հալեպի էմիրության սահմանամերձ տարածքը, որպեսզի նրան ստիպեր հրաժարվել Բոհեմունդ IV-ին աջակցելուց՝ Անտիոքի համար մղվող պայքարում: «Այմելիք Ադ-Դահեր Ղազին՝ Սալադին Յուսուֆի որդին,– գրում է արաբ պատմիչ Քամալը,– հավաքեց իր ջոկատները և ուրիշ թագավորներից էլ օգնություն խնդրեց: Նա Հալեպից հարձակվեց Լևոնի երկրի վրա»[1]: Սակայն Լևոն II-ը կանխատես իմացել էր այդ ներխուժման ծրագրի մասին: Այս նույն հեղինակի ասելով՝ «Լևոնը հապշտապ ընդառաջ գալով նրան (զորապետ Դարևհ Մկմունին – Գ. Մ.) և գրոհեց նրա վրա: Ճակատամարտը շատ դաժան եղավ... Արաբները ջարդվեցին, հայերը շատ ավար ու գերիներ տարան»[2]: Այնուհետև նկարագրվում է, թե ինչպես հայերը ջախջախելով Ադ-Դահերի երկրորդ ջոկատն էլ՝ իրենց երկիրը վերադարձան մեծ ավարով և ամրացրին իրենց լեռնային բերդերը: Մելիք Դահերը ստիպված է եղել հրաժարվել Կիլիկիա ներխուժելու ծրագրից:

[1] Rec. des. hist. des crois or., t. II, p. 98.

[2] Նույն տեղում, էջ 99:

Բայց տասը տարի անց՝ 1216 թ., երբ Լևոն II-ի զորքերը զբաղված էին Անտիոքի համար պայքարելով, Փոքր Ասիայի սելջուկները նորից ներխուժեցին Կիլիկիա և այս անգամ հաջողություն ունեցան:

Կոստանդնուպոլսի գրավումը խաչակիրների կողմից և Սելջուկյանների պետության նոր միավորումը նպաստում էին հարևանների նկատմամբ նրանց ագրեսիայի ուժեղացմանը: Պարսկական, արաբական, հունական ու վրացական աղբյուրները պատմում են սելջուկների նվաճողական արշավանքների մասին Գիյաս էդ դին Քեյ Խոսրովի (1205–1210) և Իզզ էդ դին Քեյ Քավուսի (1210–1219) օրոք՝ ընդդեմ Տրապիզոնի և Նիկեայի կայսրությունների, Վրաստանի, Կիլիկիայի հայկական թագավորության, Հայաստանի ու Միջագետքի մուսուլմանական էմիրությունների:

Փոքր Ասիայի սելջուկները հարևանների դեմ նվաճողական արշավանքները կատարում էին հանուն ավատական վերնախավի և մուսուլման առևտրականների շահերի, որպեսզի նոր հողեր զավթեին բնակերին բաժանելու համար (ընդ որում նվաճված տարածքների վարելահողերը նրանք վերածում էին արոտավայրերի), ինչպես և՝ որպեսզի գրավեին կարևոր քարավանային ուղիներ ու տարանցիկ առևտրի կենտրոններ:

Եթե Առաջին խաչակրաց արշավանքի չնորհիվ սելջուկ Թուրքերը ետ չպրտվեցին Սև, Մարմարա ու Միջերկրական ծովերից, և Բյուզանդիան ընդլայնեց ու ամրապնդեց իր տիրապետությունը սևծովյան ու միջերկրածովյան առափնյա տարածքներում, ապա Զորրորդ խաչակրաց արշավանքի հետևանքով Բյուզանդիան բաժան-բաժան եղավ և նրա տարածքի մի մասի վրա առաջացած Լատինական կայսրությունը չարունակեց պայքարն ընդդեմ Նիկեյան կայսրության, որը կազմվել էր Բյուզանդիայի փոքրասիական պրովինցիաներից: Այսպիսով, սելջուկների նվաճողական քաղաքականության համար ստեղծվեց բարենպաստ իրադրություն: Բացի այդ, չնորհիվ Խլիճ-Արսլանի որդիների կողմից պետության բաժանված մասերի միավորման ջանքերի հաջողության ամրապնդվեց սելջուկ Թուրքերի ռազմական հզորությունը: Սելջուկ սուլթանների առաջին արշավանքները հաջողություն ունեցան: Ռուքն էդ դին Սուլեյմանշահ II-ի արշավանքը դեպի Վրաստան ավարտվեց սելջուկների լիակատար պարտությամբ: Թամար Թագուհու հայ-վրացական զորքերը ջախջախեցին նրանց: Հայաստանում սելջուկների առաջխաղացումը դեպի արևելք ոչ միայն կանգնեցվեց, այլև վրացիներն ու հայերը եղբայրական ռազմական համագործակցությամբ սկսեցին նրանց նույնիսկ ետ մղել դեպի արևմուտք:

Շնորհիվ Վրաստանի կողմից Տրապիզոնի կայսրությանը ցուցաբերած օգնության 1205 թ. անհաջողություն կրեց Տրապիզոնը գրավելու Գիյաս էդ դինի փորձը: Բայց նրան հաջողվեց, ինչպես հայտնի է, ֆրանկներից զավթել Ադալիան, հասնել Միջերկրական ծովին: Նա դոհվեց Լասկարիսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Թուրքերին չհաջողվեց նվաճել Նիկեյան կայսրությունը և դուրս գալ դեպի Մարմարա ծով: Առավել հաջող էին գործում նրանք սուլթան Իզզ էդ դին Քեյ Քավուսի օրոք, որը գրավեց Սինոպը:

1205 թ. Լևոնը անհաջող փորձում էր սելջուկներից գրավել Ալբիստանը: Ընդհակառակը, 1208 թվին նա ստիպված եղավ զիջել Բերդուս ամրոցը՝ Ալբիստանից հարավ-արևմուտք ընկած Կիլիկիայի սահմանամերձ բերդը, և նրանց հարձակումներից պաշտպանել իր պետության հյուսիսային սահմանները[1]:

Գիյաս էդ դինի մահից հետո Լևոն II-ը խառնվեց իշխանության համար նրա որդիների Իզզ էդ դինի և Ալա էդ դինի միջև տեղի ունեցող պայքարին, և օգնում էր վերջինին՝ Կեսարիան պաշարելիս: Այդ մասին Իբն ալ Բիբին գրում է. «Գիյաս էդ դինի մահից հետո բեկերի ընտրությամբ գահին բազմեց նրա ավագ որդին՝ Իզզ էդ դինը: Սակայն նրա եղբայրներից մեկը՝ Ալա էդ դինը չցանկացավ ենթարկվել նրան և դաշինք կնքեց Հարևան մի քանի պետությունների հետ, ի թիվս որոնց նաև Հայոց Լիփունի (Լևոն II-ի) հետ, պաշարեց Կեսարիան, որտեղ այն ժամանակ գտնվում էր Իզզ էդ դինը, որը դեռ չէր հասցրել գրավել Կոնիան: Սակայն ոմն Ջելալ էդ դինի միջնորդությամբ Իզզ էդ դինին հաջողվեց առանձին դաշինք կնքել Լիփունի հետ՝ Ալա էդ դինից թաքուն, այնպես որ վերջինս հանկարծ իրեն տեսավ իր ամենաուժեղ դաշնակցից լքված: Կեսարիայից Լիփունի ետ քաշվելուց քիչ անց Ալա էդ դինի մյուս դաշնակիցներն էլ դեսուդեն ցրվեցին, և նա ստիպված եղավ պաշարումը վերացնել ու հեռանալ Անկյուրիա»[2]: Սելջուկների պատմաբանի այս հաղորդումը համընկնում է հայ ժամանակագիր Վահրամի վկայությանը, թե Լևոնը

«Բազում աւար՝ անտի ածեալ,
Եւ ցնծութեամբ աստէն եկեալ»,

պաշարեց Կեսարիան, պայմանագիր կնքեց սուլթանի հետ[3]: Հավանաբար Լևոն II-ը նպատակ չուներ նվաճելու Կեսարիան՝ քարավանային առևտրի այդ կարևոր կետը, այլ միայն ուզում էր օգտագործել

[1] Տե՛ս **Ալիշան**, Սիսուան, էջ 507:

[2] Византийский Временник т. I, в. 3 и 4, с. 629.

[3] **Վահրամայ Բաբունւոյ** Պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859, էջ 214:

սելջուկների ներքին պայքարը և Իզզ էդ դինի հետ հաշտվեց՝ գերադասելով, որ նա հաղթի, այլ ոչ թե Ալա էդ դինը:

Իր օգտին ամրապնդելով հայրական գահը՝ Իզզ էդ դին Քեյ Քավուս I-ը հաստատվեց Սև ծովի ու Միջերկրական ծովի առափնյա տարածքներում և արշավանք ձեռնարկեց դեպի Կիլիկիա: Այդ իրադարձությունը նկարագրող սկզբնաղբյուրից երևում է դրանց փոխադարձ կապը: Իրն ալ Բիբին այդ մասին գրում է այսպես. «Ձմռանը, Սինոպը գրավելուց հետո, սուլթանը հանգստացավ՝ իր ժամանակն անցկացնելով զանազան զվարճալիքներով: Գարնանը Սիսից եկան «խարաջ» հավաքողները՝ տրտնջալով Լիփունի տեգվերի անբարեկարգությունից: Բեկերի խորհրդով անհնազանդին պատժելու համար կատարվելիք արշավանքը հետաձգվեց մինչև աշուն»[1]: Մյուս աղբյուրները չեն հաղորդում, թե մինչև այդ արշավանքը Կիլիկյան Հայաստանը հարկ էր վճարում Իկոնիայի սելջուկներին: Իրն ալ Բիբին ինքը մի ուրիշ տեղում, ինչպես արդեն հայտնի է, Լևոն II-ին անվանում է Ալա էդ դինի «ամենաուժեղ դաշնակիցը»: Հայկական աղբյուրներում չկա վկայություն այն մասին, թե Կեսարիան Լևոն II-ի կողմից պաշարվելու (1210) և սելջուկների՝ դեպի Կիլիկիա կատարած արշավանքի (1216) միջև ընկած ժամանակաշրջանում պատերազմ է տեղի ունեցել, որն ավարտվել է սելջուկների հաղթանակով և հայերի կողմից նրանց հարկ վճարելու պայմանագրով, այնպես որ սելջուկյան պատմիչի հաղորդումը չի համապատասխանում իրականությանը: Լևոն II-ը, իմանալով Ռումի սուլթան Իզզ էդ դինի արշավանքի մասին, որոշել է հակահարված տալ նրան, բայց սկզբում, ինչպես երևում է, հիվանդության պատճառով չի մասնակցել ռազմական գործողություններին:

Սելջուկները գրավել են սահմանամերձ ճանճի և Կանչի բերդերը: Մեկ չարաթի չարունակ նրանք կողոպտել են երկիրը, «իսկ ապա որոշվել է նահանջել՝ ի նկատի ունենալով տարվա անձրևային եղանակը»[2]: Նահանջը հավանաբար ոչ թե այդ հանգամանքից է ծագել, այլ՝ վախից, որ հայերը կփակեն լեռնային կապանները և կկտրեն նահանջի ճանապարհը, ինչպես դա մի քանի անգամ տեղի էր ունեցել XII դարում, ինչը հաստատվում է ճանապարհորդ Վիլբրանդտ Օլդենբուրգցու ուշադրության արժանի հաղորդմամբ, մի ճանապարհորդ, որը 1212 թ. այցելել է Կիլիկիա: Իր նկարագրության մեջ նա գրում է. «Սա (Կիլիկիան – Գ. Մ.) շատ ուժեղ ամրացված մի երկիր է,

[1] Византийский Временник т. I, в. 3 и 4, с. 637.

[2] Նույն տեղում:

քանդի մի կողմից գոտևորվում է ծովով, իսկ մնացած կողմերից պաշտպանված է բարձր ու խստաչունչ լեռներով, որոնք քիչ ելքեր ունեն և շատ ամրություններ, այնպես որ թշնամին եթե ներխուժի երկիր, ապա առանց Թագավորական հրամանի այնտեղից դուրս գալ չի կարողանա»[1]:

Մի քանի օրվա մեջ սելջուկները սաստիկ կողոպտել են սահմանամերձ շրջանները, գերի տարել շատ բնակիչների, քշել-տարել մեծ թվով անասուններ և մեծ ավար: Լևոն II-ի և Իզզ էդ դինի միջև հաշտություն է կնքվել, որի մասին «Սելջուկ-Նամեում» ասված է հետևյալը. «Լիփունը հաշտվեց սուլթանի հետ, որը համաձայնվեց նրան ճանաչել որպես Սիսի տեգվեր, այն պայմանով, որ նա 1) վճարի ապառքը, 2) հետ այսու առանց այլևայլության վճարի 20000 ոսկի խարաջ, չհաշված նվերները»[2]: Ճակատամարտի մասնակիցների թվում հայկական կողմից հիշատակվում են պարոն Վասիլը, պարոն Օշինը, պարոն Նոչինն ու պարոն Գունդստաբլը:

Ըստ հայկական աղբյուրների հայոց տոմարի 665 թվին (25 հունվարի 1215 – 25 հունվարի 1216) սելջուկյան զորքը չրջապատել է ռազմավարական առումով կարևոր սահմանամերձ Կապան ամրոցը, որը պաշտպանում էր լեռնանցքը: Սելջուկների այս ներխուժման մասին պատմիչ Սմբատը հետևյալն է պատմում. «Եւ ի ժամանակս Լեվոնի ժողովեաց զօր սուլտանն Կոնին (Իկոնիոյ), որ էր ի Սալչուքիցն, որ անունն է Իզզ էդ դին Քեյ Քավուզ: Եւ ի ծերութեան Լևոնի, որ ցաւոտեալ էր ի նկրկիսէն, և աւերեալ էր ձեռքն ու ոտքն, կամեցան քէն հանել վասն ուժերոյն, զոր արարեալ էր Լևոն թագաւորն իւրեանց, և առաւել էր զԱրակլի և զԼառընդա, և կեսարիոյ սղարէլն, զոր ի յաո Լաճ, և դարձաւ ծախեց իւրեանց: Նա սուլտանն երեկ սղարեաց զԿապանն զբերդն, նա զպարոն Կոստանդին սպարապետն, և զպարոն Ատանն (Ադամ) պայլ թագաւորն Լևոն եդ զօրապլուխ, որ առին զամէն հայոց հեծեալն, և գնացին իջան ի Շոշականն՝ վերև ի լեառն: Եւ սուլտանն սկսաւ սերտ կռուիլ ի վերայ բերդին: Բայց պարոն Լևոն տէրն Կապնուն և այլ իշխանք, որ կային ի ներս, ելան ի դուրս ու զարկին իւրենք, և զիւրեանց պահերն ընդ աք տարան և այրեցին զբանին, ու այնով պրծան զէտ քաջ մարդիկ: Եւ սուլտանն խորհեցաւ իջուցանել ի զօրացն ի դաշտն. և ելան եկին առաւոտուն ի տեղի մի ի Շողակն, որ կոչի Իգտի: Նա պարոն Կոստանդին գունդրատապլն ընդդեմ գնաց, և եղարկ զիւրեանք իւր զօրօքն ու խառնեցաւ. ու պարոն Ատանիրի զօրքն չօգնեց իւրեանց, հանց որ չատ էր թուրքն: Եւ ի տեղն առին ծառայ զպարոն Կոստանդին զորդին Հեթմոյ Լամբրոնին տիրոջն, որ էր իւր աներ, և զԿռնոսակ զՍիկոյ տէրն զԱսիլ (Վասիլ) Լօքսենց և այլ իշխանք և ձիաւորք: Եւ եղեւ կոտորածք ի զօրքն Հայոց: Եւ տարան զամէնն առ սուլտանն ի Կապան: Նա սուլտանն ասաց, թէ այս՝ ինձ չահ հերիք է, և չէառ զԿապանն, և ելեալ գնաց յիւր աշխարհն, և եղ երկաթէ կապով զնոսա ի բանդ: Եւ անդ կացին (նոքա) տարի մի և չորս ամիս: Նա թագաւորն Լևոն գթացաւ յիւրեանք, որ զիւրեանք սնուցել էր. և իւր ետ զԼուլուայ և զԻսաւրիոյ գետն և զանառիկ ծագն Լօզատի, և էառ զիւր իշխանքն»[1]:

Սելջուկների 1216 թ. արշավանքի Սմբատի նկարագրությունից երևում է, որ նրանց չի հաջողվել գրավել Կապանը, իսկ այդպիսի ուժեղ բերդեր Կիլիկիայում շատ կային: Հայոց զորքի պարտության պատճառներից մեկը եղել է այն հանգամանքը, որ պարոն Ադամը՝ Լևոն II թագավորի խոշորագույն վասալը, ձեռնպահ է մնացել ճակատամարտից: Սմբատի կողմից բերված պատճառը՝ թշնամիների գերակչռությունը, համապատասխանում է իրականությանը. սելջուկների ռազմական հզորությունն այդ ժամանակ աճել էր: Ադամի արարքի հիման վրա կարելի է ենթադրել, որ Լևոնի վասալները նրան վատ են օգնել այս պատերազմում, որ նրանցից ոմանք պատերազմի չեն դուրս եկել իրենց ջոկատներով: Միքայել Ասորու «Ժամանակագրության» չարունակողի մոտ մի հետաքրքիր տեղեկություն կա այս առումով: Խոսելով 1216 թ. Լևոն II-ի զորքի պարտության մասին Իկոնիայի սուլթանության հետ տեղի ունեցած պատերազմում, նա գրում է. «Եւ այս լինէր ի ծերութենէ մարմնոյն, և իշխանք ոչ էին ընդ նմա ուղիղ»[2]:

Համեմատելով վերոհիշյալ սկզբնաղբյուրների տեղեկությունները՝ մենք տեսնում ենք, որ ըստ Իբն ալ Բիբիի Լևոն II-ը պատերազմին անձամբ մասնակցել է, ըստ Սմբատի էլ նա հիվանդության ու ծերության պատճառով չի մասնակցել, ինչը հաստատվում է նաև Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ: Առաջին աղբյուրում Կապանը չի հիշատակվում, բայց նչված է երկու բերդերի գրավումը այդ նույն շրջանում, երկրորդ աղբյուրում Կապան ամրոցը պատերազմի գլխավոր վայրերից մեկն է: Իբն ալ Բիբին ոչինչ չի ասում հայ խոշոր ավատատերերին գերելու և տարածքներ զիջելու մասին, բայց հաստատում է Լևոն II-ի կողմից ամե-

[1] Laurent, *Peregrinatores medii aevi quatuor, Lipsioe, 1863, p. 174.*

[2] *Византийский Временник т. I, в. 3 и 4, с. 638.*

[1] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 107–108:

[2] **Միքայել Ասորի,** Ժամանակագրութիւն, էջ 513:

նամյա հարկ մուծելու փաստը: Երկու աղբյուրներում էլ հիշատակված հայ ավատատերերը համարյա բոլորը միևնույն անձինք են: Այսպիսով, կասկած չկա, որ միևնույն պատերազմն է նկարագրվում:

Ո՛չ Սմբատը, ո՛չ էլ հայկական մյուս աղբյուրները չեն նշում Լևոնի ռազմական որևէ պարտություն մինչև այս պատերազմը: Ընդհակառակը, նրանք վկայում են սելջուկների դեմ նրա տարած հաղթանակների մասին: Սմբատը պատերազմի պատճառ է համարում սելջուկների փոխվրեժի ձգտումը իրենց նախկին պարտության դիմաց, ուստի դժվար է համաձայնել Իբն ալ Բիբիի այն պնդման հետ, թե պատերազմի պատճառը Լևոնի՝ վճարելիք հարկից հրաժարվել էր:

Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ բերված փաստերը մի քիչ տարբերվում են Սմբատի նկարագրությունից, բայց չեն հակասում դրան: Այնտեղ ասվում է, թե «Թագաւորն Լևոն իբրև լուաւ զկոտորումն զօրաց և զըմբռնումն իշխանացն, առեալ զզօրս իւր արշաւէր ի միւս այլ կողմն աշխարհին Հոռոմոց, և բերէր աւար անթիւ...»[1]: Ժամանակագիր Վահրամն այսպես է ասում իր իշխանների պարտությունից հետո Լևոն II-ի հաջող արշավանքի մասին: Արքան դրանից չատ չվշտացավ և չընկճվեց, այլ հավաքեց մնացած զորքը ու ներխուժեց սուլթանի երկիրը և վերադարձավ հարուստ ավարով: Իմանալով այդ մասին, սուլթանը վերադարձավ տուն[2]: Այս վկայությունը հաստատվում է և Ալիշանի բերած հիշատակարանում. «Լևոն ժողովեալ զկաց մնաց զօրականին՝ երիտասարդօրէն նրագութեամբ խաղալով ընդ զանխուլ ուղի՝ մխեցաւ ի սահմանս Կեսարիոյ, և սկսաւ ասպատակաւ կոխել, աւերել, և շրջան առեալ դառնալ ընդ նույն: Ընդ անակնկալ լուրն զարմացեալ սուլտանին, և զանգիտեալ նէիէ գուցէ և զոր կալաւն կորուսցէ, չատ համարեցաւ զայն, և գիտացեալ, դի այնուհետև անմարթ է առնուլ զկապանն՝ դարձաւ գերութեամբն յերկիրն իւր»[3]: Վերջին երկու հաղորդումների մեջ պետք է ընդգծել այն, որ հայերի ներխուժումը սելջուկ սուլթանին ստիպել է լքել Կիլիկիայի սահմանները: Սա նույնպես հերքում է Իբն ալ Բիբիի պնդումն այն մասին, թե սելջուկներն ստիպված եղան նահանջել անձրևային եղանակի պատճառով:

Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանության համաձայն Լևոն II թագավորը հաշտություն կնքելիս «խոստացաւ տալ Հոռոմոց սուլտանին յամենայն ամի երիք հարիւր այր ի

[1] **Մխիթար Ասորի,** Ժամանակագրութիւն, էջ 512:

[2] Տե՛ս **Վահրամայ Բաբունւոյ** Պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859, էջ 216:

[3] **Ալիշան,** Սիսուան, էջ 521:

ծառայութիւն և հնազանդեցաւ նմա»[1]: Այլ աղբյուրների հիման վրա Վ. Գորդլևսկին գրում է, որ Լևոն II-ը «պարտավորվեց յուրաքանչյուր տարի մատակարարել հազար ձիավոր և 500 թնդանոթաձիգ, այսինքն՝ որակյալ զորականներ»[2]:

Ակադեմիկոս Վ. Գորդլևսկին իր «Փոքր Ասիայի Սելջուկյանների պետությունը» աշխատության մեջ տվյալներ է բերում Քեյ Քավուսից Լևոն II-ի անկախության մասին: Վկայակոչելով Իբն ալ Բիբիին՝ նա գրում է. «Սուլթան Իզզ էդ դին Քեյ Քավուս I-ից կառավարման մասին նորոգված հրովարտակ ստանում է նաև Հայոց Թագավոր Լևոնը»[3]:

Իբն ալ Բիբիին՝ «Սելջուկ-նամեի» հեղինակին, Վ. Գորդլևսկին արդարացիորեն անվանում է «Սելջուկյանների ջատագով» և նկատում, որ «նրա թվագրումը երբեմն կասկածելի է (նա հիշատակում է Լևոն II Թագավորին, երբ Փոքր Հայաստանում արդեն Հեթում I-ինն էր)»[4]: Եվ իրոք, հայտնի է, որ ոչ թե Լևոն II-ը, այլ Հեթում I-ինն է (1226–1270), որ իր թագավորության սկզբում իրեն համարել է Քեյ-Կուբադի վասալ: Պահպանվել է հայկական մի դրամ, որի մի կողմում Հեթումի պատկերն է, իսկ մյուսում՝ նրա սուվերենի՝ սելջուկ սուլթանի[5]: Բայց մոնղոլների գալուց հետո հայոց թագավոր Հեթումն ազատվեց այդ վասալական կախումից:

Իբն ալ Բիբիից բացի, ուրիշ ոչ մի աղբյուրում չի խոսվում, թե Կիլիկյան Հայաստանը մինչև 1216 թվականը կամ դրանից հետո հարկ է վճարել Սելջուկյաններին: Սելջուկյաններից Կիլիկիայի հայկական պետության որոշ կախվածություն արտահայտվել է 1216 թ. Լևոն II-ի պարտությունից հետո՝ աննշան թվով զինվորներ տրամադրելով միայն: Սելջուկները պետք է սահմանափակվին դրանով, քանի որ Կիլիկիան նվաճելը շատ դժվար էր: Սելջուկներին հաջողվում էր, անցնելով լեռնային կապանները, թալանել երկիրը, բայց Կիլիկիայի ամրոցները գրավել չէին կարողանում:

1216 թ. պատերազմում Կիլիկիայի հայկական թագավորության պարտությունը նախապատրաստված էր Չորրորդ խաչակրաց արշավանքից հետո Սելջուկյանների համար իրադարձությունների բարենպաստ զարգացմամբ և նրանով, որ հենց 1216 թ. Լևոն II-ը

[1] **Մխիթար Ասորի,** Ժամանակագրութիւն, էջ 513:

[2] **Вл. Гордлевский,** Государство Сельджукидов Малой Азии, с. 15.

[3] Նույն տեղում, էջ 75:

[4] Նույն տեղում, էջ 8:

[5] Տե՛ս **V. Langlois,** Numismatigue de l' Arménie au moyen âge, P., 1855, p. 55:

դրաղված էր Անտիոքի համար մղվող պայքարով: Ահել էր նաև սելջուկների ռազմական հզորությունը: Այսպես, օրինակ՝ «Մելջիսի էմիրը, որը առաջապահ զորքի հրամանատարն էր, հայոց թագավոր Լևոնի դեմ արշավելիս 3 հազար հնծյալ և հարյուրհոգիանոց մի ջոկատ ալպ էր տրամադրել...»[1]: Սելջուկ ավատատեր-բեկերի կենտրոնախույս ձգտումները դեռ բավականաչափ չէին դրսևորվել: Ճիշտ է, Լևոն II-ի խոշոր վասալ Սբր Ատանը (Ադամը) ընդարձակ մարզի էր տիրում Պամփիլիայում և, հավանաբար, նույնպես կարող էր 2–3 հազար զինվոր տրամադրել, բայց նա ճակատամարտին մասնակցելուց խուսափել է: Միքայել Ասորու «Ժամանակագրության» մեջ վկայություն կա այս պատերազմի ժամանակ իշխանների՝ թագավորին չհնազանդվելու մասին:

Լևոն II-ին ժամանակակից հայ գրողները դրական գնահատական են տալիս նրա ներքին և արտաքին քաղաքականությանը, նշում նրա անձնական արիությունն ու խիզախությունը: Նա իր ժամանակի ստեղծագործություններում, ինչպես և հաջորդ սերունդների հիշողության մեջ հանդես է գալիս որպես քաջ զորական, որը բարձրացրել է Կիլիկյան պետության վարկը, որպես հայկական պետականության վերականգնող, որպես մի թագավոր, որի փառքը տարածված է եղել Կիլիկիայի սահմաններից հեռու:

Կիրակոս Գանձակեցին նրա մասին գրում է. «վախճաննեցաւ և նա (Ռուբեն III-ը – Գ. Մ.) և էառ գիշխանութիւնն Լևոն՝ այր քաջ և պատերազմող: Սա ընդ տիրելն իսկ և իսկ ընդարձակեաց զսահմանս տէրութեանն իւրոյ, զի ետ նա պատերազմ ընդ չրջակայ ազգան և յաղթեաց քաջութեամբ ըստ անուանն, առիւծարար, զի Լևոնն առիւծ կոչի»[2]:

Ահա մյուս ժամանակակից՝ Միքայել Ասորու՝ հակորիկների պատրիարքի կարծիքը, մի մարդու, որն անձնապես ճանաչել է Լևոն II-ին. «և համրաւ արիութեան նորա թուլացուցանէր զջիկս անօրինաց և պարզէր զերևոս քրիստոնէից... թագաւորն յունաց վասն պատճառին, զի թևրևս նովաւ հաղթել թուրքացն... իսկ թագաւորն փոանկաց վասն դաչանց սիրոյն... երկոքին առաքեցին նմա թագ ոսկիակազմ և պսակեցին զնա յաղթութեան պսակաւն...»[3]: Վարդան Մեծը նրա մասին ասում է. «եւ էր ճոխ և յաղթեազգեաց և հարկադիր և լծատանջ ամենայն չրջակայ ազգացն»[1]: Սամուէլ Անեցին այսպիսի կարծիք է հայտնում. «քաջ և արի ի պատերազմի»[2]: Մմբատը նշում է, որ «նա գոյր այր իմաստուն և գիտուն... և հանգուցանէր պարգևօք...»[3]:

Իհարկե, Լևոնի մասին հայ պատմիչների ու ժամանակագիրների կարծիքների մեջ չափազանցություններ կան: Նրանց գովաբանական տոնը վերաբերում է նրա հասցեին արվող դիփիրամբի: Բայց նրա գործունեության մասին այդ տեղեկությունները հաստատվում են արևմտյան և արևելյան կողմից:

Լևոն II-ը խոշոր պետական գործիչ է եղել, արտասովոր քաղաքագետ և խիզախ զորական: Նրա անվան հետ է կապված Կիլիկյան Հայաստանի ծաղկումը:

Լևոն II-ի գործունեությունն ընթացել է, ինչպես հայտնի է, միջդպային իրադրության բարդ պայմաններում: Նա գործ է ունեցել Սալադինի, Ֆրիդրիխ Շիկամորուսի, Ինոկենտիոս III-ի, Փոքր Ասիայի սելջուկների հետ՝ ընդ որում դրսևորելով արտասովոր դիվանագիտական ընդունակություններ: Նա մի շարք հաղթանակներ է տարել, որոնց հետևանքով նշանակալիորեն բարձրացել է Կիլիկիայի հայկական պետության ռազմաքաղաքական հեղինակությունը:

Լևոն II-ի գործունեությունը կապված է եղել աչխարհիկ ու հոգևոր ավատատերերի չահերի հետ: Հողային չնորհումները ավատատերերին ժամանակավորապես նպաստում էին ավատատիրական զորքի ստեղծմանը և նվաճումներին, բայց արագացրին խոշոր հողատիրության աճը, հանգեցրին ավատատերերի զորացմանը և գյուղացիների ճորտացմանը, ինչը հետագայում բացասաբար անդրադարձավ երկրի պաչտպանունակության վրա: Անհրաժեչտ է նչել, որ խաչակիրներին և պապականությանը մերձենալու նրա քաղաքականությունը իրեն չարդարացրեց:

Հանուն իր դինաստիայի չահերի Անտիոքի իչխանապետության գահին տիրելու նրա փորձերը թուլացրին հյուսիսային սահմանների պաչտպանությունը սելջուկների ներխուժումից:

Կիլիկիայի ռազմաքաղաքական հաջողությունները XII դարի վերջին երկու տասնամյակներին և XIII դարի սկզբին համընկան Թամարի օրոք (1184–1213) Վրաստանի բարձրացման հետ: Այդ ժամանակ հայ-վրացական զորքերը սելջուկներից ազատագրեցին Հայաս-

[1] **Вл. Гордлевский,** Государство Сельджукидов Малой Азии, с. 79.

[2] **Կիրակոս Գանձակեցւոյ** Պատմութիւն հայոց, էջ 148:

[3] **Միքայէլ Ասորի,** Ժամանակագրութիւն, էջ 501:

[1] **Վարդանայ Բարձրբերդեցւոյ** Պատմութիւն տիեզերական, էջ 182:

[2] **Սամուէլ Անեցի,** Հաւաքմունք ի գրոց, էջ 145:

[3] **Մմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 99:

տանի տարածքի նշանակալի մասը: Բայց Վրաստանի և Կիլիկյան Հայաստանի միջև կապ չի հաստատվել Փոքր Ասիայի սելջուկների դեմ համատեղ պայքարի համար, որոնց իշխանության տակ էր Արևմտյան Հայաստանը: Այնուամենայնիվ, վրաց պետության խոշոր դիվանագետ ու պետական գործիչ Զաքարեն, որը տիրում էր Հայաստանի ընդարձակ մի տարածքի, հարաբերություն ունեցել է Կիլիկյան Հայաստանի հետ: 1208 թ. Զաքարեն խորհուրդ հարցնելու համար դիմել է «Դատաստանագիրք հայոց»-ի կազմող Մխիթար Գոշին մի շարք եկեղեցական հարցերի կապակցությամբ և գլխավորապես հետևյալ հարցով՝ հայոց եկեղեցու կանոններին չի՞ հակասի արդյոք, եթե իններ, վրացիների օրինակով, ունենա երեքային (չարժական) եկեղեցի պատերազմական ժամանակներում: Մեսերի փոփոխությունները, որ առաջարկում էր Զաքարեն իր այդ դիմումի մեջ, հայ և վրաց եկեղեցիների որոշ մերձեցում էր նշանակում: Մխիթար Գոշը, ինչպես տեղեկացնում է Կիրակոսը, պատասխանել է. «Մեք ոչ կարեմք առնել զայդ առանց հրամանի կաթողիկոսին հայոց և թագաւորին Լեւոնի»[1], և խորհուրդ է տվել նրանց հետ խորհրդակցել: Այնժամ Զաքարեն այդ նպատակով դեսպանություն է հղել Կիլիկիա:

Լեւոն II-ը եպիսկոպոսներին կանչել է Սիս՝ Զաքարեի բարձրացրած հարցերը քննելու համար: Եպիսկոպոսների ժողովը գտել է, որ «զխնդիրս նորա համաձայն առաքելական կանոնաց, և ոչ արտաքոյ»[2]:

Հովհաննես կաթողիկոսը, որն այդ ժամանակ գժտված էր թագավորի հետ, նույնպես դրական է պատասխանել Զաքարեի հարցմանը և նրան ուղարկել է երեքային մի եկեղեցի՝ գմբեթաձև գագաթով վրան և մարմարե դռհասեղան[3]: Լեւոն II-ի և Հովհաննես կաթողիկոսի դրական պատասխանները վկայում են, որ նրանք ձգտել են ամրացնել բարեկամական կապերը Զաքարյանների՝ Հյուսիսային Հայաստանի ազդեցիկ այդ իշխանական տոհմի հետ: Լեւոն II-ը Զաքարեի եկեղեցական քաղաքականությանը հավանություն է տվել ըստ երևույթին նաև նրա համար, որ դա կարող էր է՛լ ավելի ամրացնել հայ ու վրաց աղնվականության ռազմական ու քաղաքական համագործակցությունը և նպաստել Փոքր Ասիայի սելջուկների դեմ վրաց պետության ու Կիլիկյան Հայաստանի ընդհանուր պայքարին:

[1] **Կիրակոս Գանձակեցւոյ** Պատմութիւն հայոց, էջ 158–159:

[2] Նույն տեղում, էջ 159–160:

[3] Նույն տեղում, էջ 161:

Այս գլխով չի սպառվում Կիլիկիայի այն ժամանակվա պատմությունը: XIII դարի սկզբին ընդլայնվել են նրա առևտրական կապերը Եվրոպայի և Ասիայի երկրների հետ: Այդ նույն ժամանակ հիմնականում կազմավորվել էին Կիլիկյան հայկական պետության ավատական համակարգը և քաղաքական կարգը, ինչը լուսաբանվելու է հաջորդ երկու գլուխներում:

XII դարի վերջին և XIII դարի սկզբին Կիլիկյան Հայաստանը, չնայած համեմատաբար ոչ մեծ տարածքին, նկատելի դեր էր խաղում Մերձավոր Արևելքի միջազգային հարաբերություններում:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ, ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ XII–XIII ԴԱՐԵՐՈՒՄ

Կիլիկիայի քաղաքները որպես արհեստային արտադրության և առևտրի կենտրոններ: Առևտրական հարաբերությունները Ջենովայի ու Վենետիկի հետ 1201–1261 թթ.: Կիլիկիայի տարանցիկ ճանապարհները: Սելջուկների կողմից Փոքր Ասիայի առևտրական ճանապարհների ու նավահանգիստների զավթումը: Կիլիկյան Հայաստանի առևտրական կապերը Արևելքի երկրների, Ղրիմի և սևծովյան առափնյա վայրերի հետ:

Կիլիկիան իր պատմության ընթացքում ունեցել է բարգավաճման ու անկման ժամանակաշրջաններ, որոնք պայմանավորված են եղել այս կամ այն պահին ներքին զարգացմամբ և միջազգային իրավիճակով: Կիլիկիայի հայկական պետության գոյության ժամանակաշրջանում (1080–1375), մանավանդ XIII դարում, երկրի տնտեսության համար ստեղծվեցին բարենպաստ պայմաններ:

Պետության տարածքի ընդլայնումը՝ բերքառատ Դաշտային Կիլիկիայի ընդգրկման միջոցով, որտեղ գտնվում էին Տարսոն, Ադանա ու Մամեստիա առևտրաարդյունաբերական քաղաքները և նկքը դեպի Միջերկրական ծով, Սիրիական ու Կիլիկյան լեռնանցքների վրա իշխանության հաստատումը, տարանցիկ ուղիներին տիրելը, որոնցով վաճառականները Սիրիայից անցնում էին դեպի Փոքր Ասիա՝ մինչև Կոստանդնուպոլիս ու Սև ծովի նավահանգիստները, երկրի բնակչության թվի մեծացումը, Բյուզանդիայի ու սելջուկների ավերիչ ներխուժումների դադարեցումը,– այս ամենը, միասին վերցրած, նպաստում էին Կիլիկյան Հայաստանի տնտեսական վերելքին, նրա գյուղատնտեսության զարգացմանը, արհեստային արտադրությանն ու առևտրին, Եվրոպայի և Ասիայի երկրների հետ առևտրական փոխանակության աշխուժացմանը:

Կիլիկիայի լեռները հարուստ են օգտակար հանածոներով: Հավաստի տվյալներ կան XII–XIV դդ. դանագան հանքատեսակների արդյունահանման մասին: Մշակվում էին երկաթահանքի մի քանի հանքավայրեր՝ երկաթի հարուստ պարունակությամբ[1]: Երկաթի արդյունահանման մշակման ու տեղափոխման մասին տվյալներ պահպանվել են այն ժամանակվա աղբյուրներում: 1285 թ. մի պայմանագրում, որ կնքված էր Եգիպտոսի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի միջև, հիշատակվում է վերջինիս պարտավորությունը՝ ամեն տարի Եգիպտոսի սուլթանին մատակարարել 10000 երկաթե չորսու[2]:

Մի քանի վայրերում (Գուգլակ, Սիս և այլն) արդյունահանվում էին ոսկի, արծաթ և պղինձ: Տավրոսի լեռներում մշակվում էին կապարի հանքեր, և արդյունահանված կապարը տարվում էր Եվրոպա[3]: Կիլիկիայում XI–XIV դդ. արդյունահանվում էին նաև աղ, սոդա, արջասպ, ծծումբ, փայլար և այլ հանածոներ[4]:

Կիլիկիայի լեռնային մարզերը հարուստ են ամառային արոտավայրերով, իսկ Կիլիկիայի հարթավայրը՝ ձմեռանոցներով: Անասնապահություն XII–XIV դարերում զարգացած էր, ինչպես վկայում են աղբյուրները: Անտիկ դարաշրջանից երկիրը հռչակված էր իր ձիերով: Կիլիկյան Հայաստանից արտահանվում էին ձիեր, ջորիներ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, կաշի և բուրդ[5]: Լեռների բնակիչները զբաղված էին մուշտակավոր գազանների որսով: Մուշտակեղենը արտահանման առարկա էր:

Կիլիկյան բերքառատ հարթավայրում ցանում էին բամբակ, վուշ և այլ կուլտուրաներ, որոնք վերամշակվում էին տեղում ու տարվում Իտալիա և, հնարավոր է նաև՝ այլ երկրներ:

Կիլիկիան հռչակված էր իր մայրի ծառերի ու կաղնիների անտառներով: Տեղեկություններ կան Կիլիկյան Հայաստանից Եգիպտոս նավաշինական անտառանյութ արտահանելու մասին:

Կիլիկյան Հայաստանի բնական հարստությունները նույնպես նպաստում էին գյուղատնտեսական վերելքին, հանքագործության և արհեստագործական արդյունաբերության զարգացմանը, քաղաքների, ներքին և արտաքին առևտրի աճին:

---

[1] Տե՛ս **V. Langlois,** *Vouage dans la Cilicie, p. 362:*

[2] Տե՛ս **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménien, p. 224:*

[3] Տե՛ս **Ալիշան,** *Սիսուան, էջ 9:*

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում:

Կիլիկյան Հայաստանի քաղաքները XII դարի վերջից վերելք են ապրում և դառնում արհեստագործական արտադրության և առևտրի խոշոր կենտրոններ: Դեռ Հելլենիստական դարաշրջանում Տարսոնը, Ադանան, Մամեստիան (Մոպսուեստիան) և Կիլիկիայի ուրիշ քաղաքներ եղել են ծաղկուն, հարուստ: VII–X դարերում արաբների դեմ Բյուզանդիայի պատերազմների, ինչպես և XI–XII դարերում սելջուկների, խաչակիրների, Բյուզանդիայի ու հայերի՝ միմյանց դեմ մղած պայքարի ընթացքում Կիլիկիայի քաղաքները ձևրից ձևրջ էին անցնում ու ևնթարկվում կողոպուտի: Կիլիկիայի քաղաքների ծաղկումը XIII դարում պայմանավորված էր ինչպես Կիլիկիայի հայկական պետության ռազմաքաղաքական հաջողություններով XII դարում և երկրի ընդհանուր տնտեսական վերելքով, այնպես էլ Մերձավոր Արևելքում ու Եվրոպայում միջազգային առևտրի հետագա զարգացմամբ:

Կիլիկյան Հայաստանի խոշոր քաղաքները գտնվում էին կա՛մ Միջերկրական ծովի ափին (Այաս, Կոռիկոս), կա՛մ քարավանային առևտրի ճանապարհների վրա (Տարսոն, Մամեստիա), կա՛մ Պիռամոս (Մամեստիա) ու Սարոս (Ադանա) գետերի գետաբերաններին, որոնք այն ժամանակ ստորին հոսանքներում նավարկելի էին և ծովային նավերի համար մատչելի: Այդ քաղաքներն էլ այն դարաշրջանում այնքան հեռու չէին Միջերկրական ծովից, որքան հիմա են[1]:

Դա նպաստում էր ինչպես կիլիկյան քաղաքների մասնակցությանը միջազգային առևտրին XII–XIV դարերում, դրանց առևտրական կապերին Եվրոպայի ու Ասիայի երկրների հետ, այնպես էլ արհեստագործության արտադրանքի զարգացմանն այդ քաղաքներում:

Կիլիկյան Հայաստանի քաղաքներում զարգացած է եղել արհեստագործական արտադրություն: Արհեստավորներից առաջին տեղում էին հայերը: Նրանք զբաղվում էին ապակեգործությամբ, կարպետագործությամբ, կաշեգործությամբ ու բարձրորակ մագաղաթի մշակմամբ, բրգև, վուշե ու բամբակե կտորներ գործելով, ներկած ու պղնձե ամաններ պատրաստելով, ոսկերչությամբ, գինագործությամբ, բրուտագործությամբ և այլ արհեստներով:

Հատկապես պետք է նշել հայ արծաթագործների աքանչելի վարպետությունը, որոնք ամաններ էին կերտում գլխավորապես գեղարվեստական դաջվածքով: Այդ կարգի դաջված իրեր գտնվել են Բերդյանսկում և Մերձուրալում, Վիլգորտ գյուղում: Դրանք ուսումնասիրված ու նկարագրված են ակադեմիկոս Օրբելու կողմից[2]:

[1] Տե՛ս Documents arméniens, t. I, p. XL, VL:

[2] Տե՛ս Сборник «Памятники эпохи Руставели», Изд. Гос. Эрмитажа, с. 278:

Կիլիկիայում գործածված գորգերը Եվրոպա են արտահանվել և շատ են գնահատվել: «Կարպետ» հայերեն բառը մտել է մի շարք եվրոպական լեզուների բառային ֆոնդը:

Կիլիկիայում մեծ չափով զարգացած է եղել կամելոտի՝ բրդից պատրաստվող այդ գործվածքի արտադրությունը: Կամելոտի մշակմամբ գլխավորապես հայ արհեստավորներն էին զբաղվում:

Կիլիկյան Հայաստանի քաղաքները, մանավանդ Տարսոնը, Մամեստիան, Այասը, եղել են զարգացած արհեստագործական արտադրության և աշխույժ առևտրի արտաքին ու ներքին կենտրոններ, ինչի մասին վկայում են պատմական, գրական, իրավական շատ աղբյուրներ, ինչպես և առևտրական ու հաշտության պայմանագրեր:

Քաղաքային արհեստագործական արտադրության գլխավոր դեմքը եղել է արհեստավորը՝ մանր ապրանք արտադրողը: Աղբյուրներից հայտնի է նաև արտադրության մեջ, չինարարական գործում վարձու աշխատանքի կիրառման, Կիլիկյան քաղաքներում տարբեր կարգի վարձու աշխատողների առկայության, քաղաքային բնակչության ստորին խավերի՝ պլեբեյության կազմավորման մասին: Կիլիկյան Հայաստանի քաղաքային բնակչության զգալի չերտավորումը և սոցիալական անհավասարությունը աներկբայելի փաստ է: Վաճառականների, վաշխառուների, աշխարհիկ ու հոգևոր ավատատերերի, որոնց մի մասն ապրում էր քաղաքներում ու մասնակցում դրամական գործառնություններին, ձևրում հարստությունների կուտակման մասին, շատ են գրում XII դարի եկեղեցական գրողներ Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին և XIII դարի նշանավոր առակագիր Վարդան Այգեկցին, ինչը մեր կողմից մանրամասն լուսաբանվում է հաջորդ գլխում:

Կիլիկյան Հայաստանի քաղաքներում հայերից բացի ապրում էին նաև ասորիներ ու հույներ: XIII դարում այնտեղ սկսեցին բնակություն հաստատել իտալացիները՝ վաճառականներ և արհեստավորներ: Իտալացիներն ապրում էին առանձին թաղամասերում, ունեին իրենց եկեղեցիներն ու գերեզմանոցները: Իտալացիների մեջ շատ կային պանդոկների, դարբնոցների, կաշվի մշակման արհեստանոցների տերեր, գինու, ձիթայուղի վաճառականներ ու զանազան կարգի արհեստավորներ: Եկվոր իտալացի վաճառականները քաղաքներում կառուցում էին քարվանսարաներ՝ իրենց ապրանքների պահպանման ու վաճառման համար: Իտալացիները Կիլիկիայի խոշոր քաղաքներում ունեին հյուպատոսներ, որոնք պաշտպանում էին իրենց հայրենակիցների չահերը:

Հայ, արաբ, ասորի և իտալացի վաճառականները հաչտ ու խաղաղ առևտուր էին անում իրար հետ: Բոլոր ազգերի վաճառականների համար նորմալ պայմաններ էին ստեղծված առևտրով և արհեստներով զբաղվելու համար:

Կիլիկիայի քաղաքներն էին ժամանում եվրոպացի վաճառականներ՝ ջենովացիներ, վենետիկցիներ, պիզացիներ, ֆրանսիացիներ, գալիս էին գնելու բամբակ, բուրդ, կաչի, գործվածքներ, գորգեր, համեմունքներ և տեղական ու բերովի այլ ապրանքներ, գալիս էին ու գնում Արևելքի երկրները՝ առևտրի: Այնտեղ էին գալիս նաև արևվեյան վաճառականները՝ իրենց քարավաններով: Արաբներն ու ասորիները Սիրիայից բերում էին բամբակ, չաքար, Արաբիայի հոտավետ իրեր և այլ ապրանքներ: Դրանց մի մասը նրանք վաճառում էին Կիլիկիայի քաղաքների աշխույժ չուկաներում, իսկ մյուս մասը տանում էին Կոստանդնուպոլիս ու դեպի Սև ծովի նավահանգիստներ:

Կիլիկիայի գրողների մոտ կան հետաքրքիր տվյալներ վաչխառուական և վաճառականական կապիտալի զարգացման մասին: Քարավանային առևտրի վաճառականների կողմից «բանկիրների» միջոցով գրամական գումարներ մի երկրից մյուսը փոխանցելու մասին տվյալներ կան Վարդանի առակների ժողովածուներում: Դրանցից մեկում ասվում է. «Իմաստուն վաճառականք, յորժամ երկնչի/ն/ յաւազակաց ի ճանապարհին, ոչ տանին զգանձս իւրեանց ընդ ինքեանս, այլ տան ի փոխս զգանձս իւրեանց /յ/այնպիսի վաճառական, որ ունին յաչխարհն իւրեանց տուն և գանձ. և առնուն ի նմանէ ձեռագիր և երթայ խաղաղութեամբ. և տանի զձեռագիր վաճառականին, և առնու զգանձն իւր ի տանէ նորա»[1]:

Վենետիկը և Ջենովան՝ Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական փոխանակության գլխավոր միջնորդները, առաջիններն էին, որ առևտրական կապեր հաստատեցին Կիլիկյան Հայաստանի հետ: Վենետիկը բոլորից առաջ, դեռ մինչև խաչակրաց արշավանքները, Բյուզանդիայի միջնորդությամբ առևտրական կապեր էր հաստատել Արևելքի հետ, այդ թվում և Կիլիկիայի հետ: Հեյդը իր «Միջին դարերի լատինական առևտրի պատմությունը» կապիտալ աշխատության մեջ գրում է. «Շատ հավանական է, որ իտալացի վաճառականները Կիլիկիա էին այցելում մինչև հայկական պետության գոյությունն այդ երկրում, երբ այն դեռևս բյուզանդական պրովինցիա էր: Հիրավի, Բյուզանդիայի կողմից 1082 թ. վենետիկցիներին չնորհված արտո-

[1] **Н. А. Марр,** *Сборники притч Вардана, ч. II, с. 284.*

նության մեջ ճշգրիտ նշված են այն չուկաները, որոնք նրանց համար բաց են եղել: Դրանց թվում հիշատակվում են Մամիստրան (Մամեստիա), Ադանան և Տարսոնը»[1]: Հեյդը աչքաթող է անում այն, որ հիշյալ քաղաքները հենց այդ ժամանակ գրավված են եղել սելջուկների կողմից, իսկ ապա ձեռքից ձեռք են անցել և միայն XII դարի երկրորդ կեսին է, որ, ինչպես հայտնի է, մտել են Կիլիկյան Հայաստանի սահմանների մեջ:

Տվյալներ չկան այն մասին, թե վենետիկցի վաճառականները առևտուր արե՞լ են Կիլիկիայի հետ XII դարում: Ըստ երևույթին, Կիլիկիայի չուկաները այդ ժամանակ լայնորեն չեն օգտագործվել Վենետիկի կողմից, և վենետիկցի վաճառականների առևտուրը Կիլիկիայում չէր կարող կարգավորվել: Դրան խանգարում էին Բյուզանդիայի, սելջուկ թուրքերի, խաչակիրների ու Կիլիկիայի հայկական իշխանապետության միջև տեղի ունեցող պատերազմները՝ Դաշտային Կիլիկիայի վերոհիշյալ քաղաքներին տիրելու համար:

XII դարում, Առաջին խաչակրաց արշավանքից հետո եվրոպական քաղաքներից Վենետիկն ու Ջենովան առաջնակարգ դեր էին խաղում լևանտական առևտրի մեջ: Նրանք խաչակիրներին օգնեցին գրավելու Սիրիայի ու Պաղեստինի քաղաքներն ու նավահանգիստները, դրանցում ամբողջ թաղամասեր ձեռք բերեցին քարվանսարաներ չինելու համար, առևտրական արտոնություններ ստացան և ուղղակի կապ հաստատեցին Մերձավոր Արևելքի չուկաների հետ:

Քաղաքների, արհեստների և առևտրի աճը Եվրոպայում և ամենից առաջ Իտալիայում XII–XIII դարերի սահմանագծին, քաղաքային բնակչության տնտեսական և մշակութային մակարդակի բարձրացումը, եվրոպական ազնվականության և ունևոր բյուրգերների աճած պահանջմունքը պերճանքի առարկաների, արևելյան գործվածքների ու համեմունքների նկատմամբ խթանում էին Արևմուտքի և Արևելքի փոխանակության հետագա ընդլայնումը:

Վենետիկի և Ջենովայի հանրապետությունների առևտրական կապիտալը միջնորդի դեր էր կատարում եվրոպայի և Ասիայի միջև՝ շահագործելով այդ առևտրական փոխանակության մեջ ներքաշված երկրների արտադրողներին:

Դաշտային ու Լեռնային Կիլիկիանները Ռուբինյանների իշխանության տակ միավորվելուց հետո և Լևոն II-ի օրոք (1187–1219) ավելի ուժեղ ու կայուն, դեպի Միջերկրական ծով ելք ունեցող հայ-

[1] **W. Heyd,** *Historie du commerce du Levante au moyen âge, Leipzig, 1923, t. I, p. 369.*

կան պետություն դառնալով Ջննովան ու Վենետիկը Արևելքի երկրների հետ առևտրական կապերն ընդլայնելու նպատակով 1201 թվականին առևտրական պայմանագրեր կնքեցին Կիլիկիայի հայկական թագավորության հետ և նրա օգնությամբ կայուն առևտրական կապեր հաստատեցին նաև այլ երկրների հետ: Ջննովան ու Վենետիկը առաջին պետություններն էին, որ իրենց լիազոր դեսպաններին ուղարկեցին, որպեսզի Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական համաձայնություն կնքեին:

Ջննովայի դեսպան Օհերիո դը Պալլոն 1201 թ. մարտին Լևոն II-ից խրիսովուլ ստացավ, որի մեջ նշվում էին առևտրական արտոնությունները ու առանձնաշնորհումները, իրավաբանական և այլ կարգի պիջումները: Այս փաստաթղթում նախ և առաջ խոսվում է վաճառականների տեղաշարժման ազատության և առևտրի ազատության մասին. «Ուստի և քեզ՝ Օհերիո դը Պալլոյիդ՝ Ջննովայի քաղաքացուդ, որ Ջննովացիների կողմից նկել ես իմ արքայական կուրիայի մոտ, իմ արքայական մեծության մոտ և ազատություններ, սեր ու հարգանք ես փնտրում իմ թագավորության մեջ, իմ արքայական կուրիայի համաձայնությամբ ազատություն եմ տալիս՝ մտնելու ու նլնելու ցամաքով ու ծովով, գնման ու վաճառքի, նավահանգիստ մտնելու ու նավահանգստից դուրս գալու»[1]: Այնուհետև խրիսովուլով ապահովվում է վաճառականների անձի ու ունեցվածքի ապահովություն և զանազան հարկերից, տուրքերից ազատվելու արտոնություն: «Թույլատրում եմ, նաև կամենում, որ բոլոր Ջննովացիները իրենց իրերով ու ապրանքներով իմ ամբողջ թագավորությունով մեկ՝ քաղաքներում, գյուղերում և ամբողջ տարածքում... և իմ պարոնների ամբողջ տարածքում ապրեն ողջ ու անվտանգ..., գան ու վերադառնան, ազատ ու հանգիստ վաճառեն ու գնեն առանց որևէ հարկադրանքի, ճնշման, տուրքերի, հարկերի, ճանապարհային տուրքերի ու պարհակների»[2]:

Խրիսովուլը իրավունք էր երաշխավորում Կիլիկիայի ափերի մոտ նավերի խորտակման ժամանակ իրերի և ապրանքների, դրանց պահպանման ու սեփականատերերին վերադարձնելու նկատմամբ, մինչդեռ ուրիշ շատ երկրներ կիրառում էին այն իրերի յուրացման սկզբունքը, որոնք մնացել էին նավախորտակումից և ընկել իրենց տարածքները[3]: Հետաքրքիր է նշել, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» կա հենց այսպիսի ձևակերպում, որն ապահովում է սեփականատերերի իրավունքը նավի խորտակումից հետո ալիքների միջոցով ափ նետված իրերի նկատմամբ[4]: Ուոստացվում էր նաև վերադարձնել Կիլիկիայի տարածքում հափշտակվածը[5]: Այս ամենը վկայում է, որ պետությունը հոգում էր առևտրի պահպանության մասին և ձգտում նորմալ պայմաններ ստեղծել օտարերկրացի վաճառականների առևտրական գործունեության համար:

Ջննովացիներին նաև սեփական ննթադատության սահմանափակ իրավունք էր ընձեռվում: Ջննովացիների և այլ ազգության ներկայացուցիչների միջև դատական հայցի դեպքում գործը քննվում էր Ջննովական դատարանում, եթե մեղադրվողը Ջննովացին էր, և Թագավորական դատարանում, եթե Ջննովացին հայցվորն էր[3]: Խրիսովուլի համաձայն Սիս, Մամեստիա, Տարսոն քաղաքներում Ջննովացիներին տեղ էր հատկացվում քարվանսարաների, եկեղեցիների, դատարանի շենքերի ու տների կառուցման համար[4]: Այսպիսով, XIII դարի սկզբում իտալացիներն սկսում են բնակություն հաստատել Կիլիկյան Հայաստանի քաղաքներում, իսկ դա խոսում է այն մասին, որ Ջննովացիները խրիսովուլ կազմելիս մտադիր են եղել ոչ միայն ապրանքներ բերել-տանել, այլև ամուր հիմնավորվել Կիլիկիայում մշտական բնակության համար: Այլ աղբյուրներից հայտնի է, որ Ջննովացիները զբաղվում էին արհեստագործությամբ և մասնակցում էին ներքին առևտրին:

1201 թ. դեկտեմբերին Հակոբ Բադուաբիոսը՝ Վենետիկի դոժ Հենրիկո Դանդոլոյի դեսպանը, նույնպես Լևոն II-ից ստացել է խրիսովուլ՝ առևտրական արտոնություններով, որը կազմված է մոտավորապես նույն ոգով, ինչպես առաջինը:

Հետաքրքիր է նշել, որ վենետիկցիներին չնորհված խրիսովուլում հիշատակվում է նրանց տարանցման (տրանզիտի) իրավունքը: «Բացի այդ, թույլատրում և կամենում եմ, որ եթե Վենետիկի որևէ վաճառական ցանկանա անցնել մեր տարածքով դեպի մի այլ երկիր՝ քրիստոնեական թե սարակինոսյան, որի հետ մենք հաշտ ենք, ապա կարող է անարգել կատարել այդ ճամփորդությունը ցանկացած տեսակի ապրանքներով ու վերադառնալ»[5]: Թեև խրիսովուլում խոսվում

[1] V. Langlois, Le trésor des chartes d' Arménie, p. 107.
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

[1] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 414:
[2] V. Langlois, Le trésor des chartes d' Arménie, p. 107.
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 106:
[5] Նույն տեղում, էջ 110:

է անմաքս առևտրի արտոնությունների մասին, այնուամենայնիվ կա հետևյալ վերապահությունը. «Բացառելով այն, որ անդրծովյան երկրներում մշտականորեն ապրող վենետիկցիները Պորտելլայով (Սիրիա–Կիլիկյան լեռնանցքը – Գ. Մ.) անցնելիս պետք է այնտեղ մաքս վճարեն...»[1]: Խրիսովուլի այս կետը վկայում է, որ վենետիկցիները չահագրգռված են եղել Կիլիկյան Հայաստանի տարանցիկ ճանապարհների օգտագործմամբ: Հատուկ նշանակություն ուներ վաճառականների անցումը Սիրիա–Կիլիկյան կապանով, որտեղ գտնվում էր մաքսատունը: Մաքսի ենթակա էին ձուլածո ոսկին և արծաթը, որ վենետիկցիները տանում էին դրամ կտրելու համար:

Եթե վենետիկցին մեռնում էր և համաքաղաքացիներից ոչ ոք չէր լինում, ապա նրա ունեցվածքը ի պահ էր հանձնվում Սիսի արքեպիսկոպոսին՝ մինչև Վենետիկի դոժից կարգադրություն ստացվեր նրա իրերը փոխանցելու մասին: Մամեստիա քաղաքում վենետիկցիներին տեղեր էին հատկացվում քարվանսարա, տներ, նկեղեցիներ և հոգևորականներին կացարաններ կառուցելու համար[2]:

Համադրելով և համեմատելով երկու խրիսովուլների որոշ կետեր՝ կարելի է եզրակացնել, որ վենետիկցիների համար կարևոր էր ոչ միայն առևտուրը Կիլիկիայի հետ, այլև նրա տարանցիկ ճանապարհների օգտագործումը՝ հարևան երկրների հետ առևտրի համար, գլխավորապես՝ Սիրիայի: Եթե Ջենովացիներին չնորհված առաջին խրիսովուլում հիշատակություն չկա նրանց կողմից Կիլիկիայի ճանապարհները ուրիշ երկրների համար օգտագործելու մասին, ապա 1215 թվականին խրիսովուլում, որն ստացել է Ջենովայի ներկայացուցիչ վիկոնտ Ֆերրարիոն, կա շատ հետաքրքիր մի կետ, որը վկայում է այն մասին, որ վենետիկցիները կտրում-անցնում էին Կիլիկյան Հայաստանը տարբեր ուղղություններով՝ հարևան երկրների հետ առևտուր անելու համար: Ջենովացի վաճառականները պարտավոր էին չորս գլխավոր կետերում (երկիր մտնելիս և երկրից դուրս գալիս, այսինքն՝ ապրանքների տարանցման համար) մաքս վճարել սահմանամերձ այն ամրոցների տերերին, որտեղ գտնվում էին մաքսատները: Նկատի ունենալով հարցի կարևորությունը՝ մենք ներկայացնենք հատվածն ամբողջությամբ. «Բացի այդ, տալիս եմ ձեզ և չնորհում իմ ամբողջ երկրով մեկ, որ այժմ ունեմ և ունենալու եմ գնման ու վաճառքի ազատություն, ժամանման ու մեկնման, ինչպես ծովով, այնպես էլ ցամաքով, առանց որևէ ճնշման կամ առանց որևէ հարկի,

[1] V. Langlois, Le trésor des chartes d' Arménie, p. 110.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 111:

առանց որևէ անցման մաքսի: Կարող եք ժամանել, գնել ու վաճառել իմ ամբողջ տարածքով մեկ, ինչպես ծովում, այնպես էլ ցամաքում, բացառությամբ, սակայն, այն տարածքի, որը սենյոր Օտտո դը Տարարինայի ձեռքին է, բացառությամբ Աղամ դը Գաստոնի տարածքի, բացառությամբ Կոռիկոս կոչվող երկրի, որը սենյոր մարշալ Վահրամի ձեռքին է, բացառությամբ այն լեռնանցքի, որին տիրում է Լևոն դը Կապանը՝ Ջահան գետի հոսանքն ի վար ձգվող մարզում»[1]:

Այսպիսով, մեջբերված հատվածից երևում է, որ Ջենովացի վաճառականները մաքս վճարելուց չէին ազատվում Կիլիկյան Հայաստանի չորս խոշորագույն ավատատերերի տիրույթներով անցնելիս, որոնք գտնվում էին Կիլիկիա մտնելու և դուրս գալու սահմանամերձ ամենակարևոր կետերում: Վերոհիշյալ ավատատերերի՝ մաքսը իրենց օգտին գանձելու իրավունքը պայմանավորված էր Կիլիկյան Հայաստանում ավատական համակարգի զարգացմամբ և հանդիսանում էր խոշոր ավատատերերի հաղթանակը, բայց ժամանակավոր հաղթանակը, քանի որ Կիլիկիայի հայկական թագավորությունում չուտով հաստատվեց մի կարգ, ըստ որի բոլոր մաքսատների եկամուտները մտնում էին թագավորական գանձարան[2]:

Ջենովայի ու Կիլիկյան Հայաստանի միջև 1215 թ. առևտրական համաձայնագիրը կայացավ Ջորրորդ խաչակրաց արշավանքից հետո, որի հետևանքով Վենետիկը տիրապետող դիրք ստացավ Սև ծովում և զրավեց դեպի ծով ելք ունեցող երկրների հետ կատարվող առևտուրը՝ դժվարացնելով առևտրական մրցակիցների մուտքը դեպի Սև ծով: Հնարավոր է, որ այս հանգամանքն է Ջենովային ստիպել չրջանցիկ ուղիներ գտնել սևծովափնյա երկրների հետ առևտուր անելու համար, և նա 1215 թ. նոր պայմանագիր է կնքել Կիլիկյան Հայաստանի հետ:

Վենետիկն էլ Կիլիկյան Հայաստանի հետ 1201 թ. առևտրական պայմանագիր կնքելուց հետո երկար ժամանակ այն չէր նորոգում: Կարելի է ենթադրել, որ դրա կարիքը շատ էլ չի եղել, քանի որ մինչև 1261 թ. Սև ծովին տիրապետողները վենետիկցիներն էին, որոնք անմիջական առևտրական կապեր ունեին փոքրասիական մարզերի հետ սևծովյան նավահանգիստների օգնությամբ:

1245 թվականին վենետիկցիներին չնորհվեց նոր խրիսովուլ այնպիսի արտոնություններով, որը քիչ բանով է տարբերվում 1201 թվականի խրիսովուլից: Բայց հետաքրքիր է նշել հետևյալ հանգա-

[1] V. Langlois, Le trésor des chartes d' Arménie, p. 126.

[2] Նույն տեղում, էջ 156:

մանքը: 1245 թվականի խրիստովուում ասվում է, որ վենետիկցու՝ Մամեստիայի բնակչի մահվան դեպքում նրա իրերը պետք է հանձնվի հայկական պետությանը ի պահպանություն՝ մինչև Վենետիկի պայլից դրավոր կարգադրություն ստացվելը, որի նստավայրը գտնվում էր Ակկոնում[1]: Այսպիսով, Մամեստիա քաղաքի վենետիկցիների գաղութը դեռևս մեծ նշանակություն չուներ, այնտեղ բայլ չկար. այդ առումով նա կախում ուներ Ակկոնից: Իսկ 1271 թ. կնքված համաձայնագրից հայտնի է, որ Սիսում կար վենետիկյան բայլ: Այսպիսով, Ակկոնը (և ընդհանրապես Սիրիան) 1245 թ. վենետիկցիների համար չատ ավելի կարևոր նշանակություն է ունեցել Արևելքի հետ կատարվող առևտրի մեջ, քան Մամեստիան (և Կիլիկյան Հայաստանը ամբողջությամբ վերցրած):

Այիչանի վկայությամբ Վենետիկի արխիվում պահպանվում է 1261 թվականի առևտրական պայմանագրի պատճենը, որի մեջ հիշատակվում է Այաս նավահանգիստը, որի անունը չկա նախորդ պայմանագրերում: 1261 թ. պայմանագրից երևում է, որ վենետիկցիները ապրելավայր էին ընտրել Այասը[2]: Նոր՝ 1261 թվականի պայմանագրի կնքումը, Այասի նավահանգստի օգտագործումը վկայում են, որ Վենետիկի հետաքրքրությունը Կիլիկյան Հայաստանի տարանցիկ ճանապարհների նկատմամբ ուժեղացել է և նրանց գործունեությունն այդ երկրում աչքուժացել: Գուցե և այդ հանգամանքը կապ ուներ 1261 թվականի Լատինական կայսրության անկման հետ, երբ Սև ծովի տիրապետությունն անցավ Ջենովացիների ձեռքը: Այս իրադարձությունը համընկավ մոնղոլների կողմից Բաղդադի խալիֆայության կործանմանը (1258), որի հետևանքով վենետիկցիների համար և ընդհանրապես եվրոպացիների համար դժվարացավ առևտուրը Արևելքի հետ՝ Բաղդադի ու սիրիական նավահանգիստների միջոցով, և վենետիկցի վաճառականները ստիպված էին նոր ուղիներ գտնել արևելյան երկրները թափանցելու համար: Այս քաղաքական փոփոխություններից հետո սկսեց մեծանալ Այասից դեպի Ասիայի խորքը գնացող ճանապարհի դերը:

Եթե մինչև 1261 թվականը կնքված վերոհիշյալ բոլոր պայմանագրերի հիման վրա համեմատենք վենետիկցիների ու Ջենովացիների գործունեությունը Կիլիկյան Հայաստանում, ապա կերևա, որ վերջիններս չատ ավելի նշանակալից դեր են խաղացել ինչպես ներքին ու արտաքին առևտրի, այնպես էլ Կիլիկիայի տարանցիկ ճանապարհների օգտագործման մեջ: Նրանք ապրելավայրեր են ունեցել Սիսում, Տարսոնում ու Մամեստիայում, մինչդեռ վենետիկցիք՝ միայն վերջին քաղաքում: Ջենովացիների մասին չատ ավելի կոնկրետ վկայություններ կան, թե նրանք անցնում էին լեռնային կապաններով, որտեղ մաքսատներ կային: Իսկ վենետիկցիների մասին կոնկրետ հիշատակվում է, որ նրանք անցնում էին Պորտելլայով: Սակայն բացառված չէ անցման հնարավորությունը նաև այլ լեռնանցքներով:

[1] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 143:

[2] Տե՛ս **Այիչան,** Սիսուան, էջ 359:

XIII դարի առաջին կեսին Կիլիկյան Հայաստանի տարանցիկ ճանապարհները դեռևս մեծ նշանակություն չէին ձեռք բերել Արևելքի հետ Արևմտյան Եվրոպայի միջազգային առևտրում: Այս շրջանում չատ ավելի կարևոր նշանակություն ունեին Սիրիայից և Կիլիկիայի նավահանգիստներից Կիլիկյան Դարպասով դեպի Իկոնիայի սուլթանության սահմանները և այնտեղից դեպի Կոստանդնուպոլիս ու Սև ծովի նավահանգիստներ գնացող առևտրական ճանապարհները:

Միջին դարերում ասիական մայրցամաքի և մանավանդ Առաջավոր Ասիայի առևտրական ճանապարհների ուղղությունն ու նշանակությունը հաճախ պայմանավորվում էին Արևելքում արտաքին քաղաքական փոփոխություններով: Խոշոր նվաճումները տարանջատում էին հին ուղիները կամ նպաստում էին մի քանի ուղիների միավորմանը մեկ նոր ուղու մեջ կամ մղում տալիս նոր ուղիների զարգացմանը, իսկ երբեմն էլ աչքուժացնում էին վաղուց լքված ճանապարհները: Մի խոսքով, դրանք նպաստում էին որոշ ուղիների անկմանը և մյուսների բարգավաճմանը: Առևտրական ճանապարհների ուղղությունների մեջ մեծ փոփոխություններ առաջացրին նախ սելջուկյան նվաճումներն ու խաչակրաց արշավանքները, իսկ ապա մոնղոլների արշավանքները: Այդ իրադարձությունների ազդեցությունը առանձնապես նկատելի է Առաջավոր Ասիայի առևտրական ճանապարհների վրա: Դա վերաբերում էր նաև Կիլիկյան Հայաստանի ուղիներին: Կիլիկիայի հայկական պետության տարածքի՝ տարբեր ուղղություններով անցնող առևտրական ուղիների տարանցիկ նշանակությունը Արևելքի և Արևմուտքի երկրների առևտրական փոխանակության մեջ մինչև Բաղդադի խալիֆայության անկումը պայմանավորված էր ինչպես Եվրոպայի և Ասիայի տնտեսական վերելքով, այնպես էլ խաչակրաց արշավանքների քաղաքական հետևանքներով:

Խաչակրաց արշավանքները և Եվրոպայում քաղաքների զարգացումը նոր դարաշրջան բացեցին Արևելքի և Արևմուտքի առևտրի պատմության մեջ: Միջերկրական ծովի առևտուրը, գլխավորապես

դրա հարավարևելյան մասում, սաստիկ աշխուժացավ՝ հասնելով մինչ այդ չտեսնված չափերի: Առաջին խաչակրաց արշավանքից հետո խոշոր փոփոխությունների ենթարկվեցին նաև առանձին երկրներ միջազգային առևտրում իրենց ունեցած դերով: Սաստիկ նվազեց Բյուզանդիայի՝ որպես Արևմուտքի և Արևելքի միջև գլխավոր միջնորդի նշանակությունը: Զգալիորեն ընկավ Կոստանդնուպոլսի՝ որպես արևելյան երկրներից դեպի Արևմտյան Եվրոպա ապրանքների տարանցման կարևորագույն կետի դերը, քանի որ Հնդկաստանից և Իրանից եկող ապրանքների հոսքը այժմ արդեն անցնում էր Եփրատով դեպի Միջերկրական ծով՝ դեպի Սիրիայի նավահանգիստները տանող ճանապարհներով:

Սելջուկների կողմից համարյա ամբողջ Առաջավոր Ասիայի գրավումը, իսկ ապա խաչակրաց արշավանքները ուժգին հարված հասցրին առևտրական այն ճանապարհներին, որոնք անցնում էին Հայաստանի Անի, Կարս և Արծն քաղաքներով դեպի Տրապիզոն, այսինքն դեպի այն նավահանգիստը, որով մինչ այդ արևելյան ապրանքները մտնում էին Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից էլ Եվրոպա:

Խաչակրաց արշավանքների, ինչպես և նախընթաց դարաշրջանում Բաղդադը քարավանային առևտրի ամենագլխավոր կենտրոնն էր Առաջավոր Ասիայում, Արևելքից դեպի Արևմուտք բերվող ապրանքների տարանցման կարևոր կետը: Հնդկական ապրանքները ջրային ուղիով հասցվում էին Բաղդադ և ապա Տիգրիսն ու Եփրատը միացնող ջրանցքով Ռաքքա քաղաքը՝ քարավանային ուղիների խաչաձևման կետը: Ռաքքան քարավանային ճանապարհով կապված էր Հալեպի հետ՝ Արևելքի ապրանքների՝ չինական մետաքսի, հնդկական համեմունքների, Հայաստանի և Իրանի բրդե ու մետաքսե կտորների և գորգերի, Արաբիայի հոտավետ նյութերի և արևելյան ուրիշ երկրների այլ ապրանքների այդ կարևոր չուկայի հետ: Հալեպում եվրոպացի վաճառականները առևտուր էին անում եգիպտոսից, Արաբիայից, Միջագետքից, Իրանից, Փոքր Ասիայից ու Կիլիկիայից եկած արաբ, ասորի և հայ վաճառականների հետ: Հալեպից Ասորա-կիլիկյան լեռնանցքով դեպի Կիլիկիա և Տավրոսի լեռնանցքներն էր անցնում Սիրիայից Փոքր Ասիա գնացող ճանապարհը: Դրա մեկ ճյուղը հասնում էր մինչև Մարմարա ծով, մինչև Կոստանդնուպոլիս, մյուսը՝ մինչև Սև ծով, մինչև Սինոպ[1]:

XII դարում Սիրիայի և Եգիպտոսի հետ Կիլիկյան Հայաստանի առևտրական կապերի մասին հետաքրքիր տվյալներ կան արաբ գրող

[1] Տե՛ս **Heyd**, Histoire du commerce du Levant au moyen âge, p. 367:

Ուսամա Մունկիդի մոտ: Նա հաղորդում է, որ իր հայր Մուրշիդը՝ Շիզարի (ոչ մեծ իշխանապետություն Հյուսիսային Սիրիայում) տերը, Լևոնային Կիլիկիայի հայ իշխաններ Թորոսին և Լևոնին ուղարկում էր արաբական նժույգներ, օծանելիքներ և եգիպտական գործվածքներ[1]:

Վարդան Այգեկցին իր առակներից մեկում թվարկում է հետևյալ ապրանքները, որոնց մեծ մասը նա, անկասկած, բազմիցս տեսել էր Կիլիկիայի քաղաքների չուկաներում: «Եւ նոքա (վաճառականները — Գ. Մ.) իջևալ հանգեան ի գաւառն ցանկալի,— գրում է Այգեկցին,— և գոին անդ գվաճառս յոյժ պիտանի, զոր խնդրէին մեծ փափաքանաւք. զականս պատուականս և զմարգարիտն մեծագին. զօսկին սոփերա (Օֆիրոսի) և զարծաթն ընտիր. զբևհեղն ցանկալի և զոսկեթել ծիրանին, որ է զգեստ թագաւորի, զանազան խունկս անոյշահոտս և մանեակն ոսկի, զկամարն ականակապ, զպատմուճանն ոսկեհուռ և զթագն մարգարտաչար»[2]:

Վերոհիշյալ տեսակի ապրանքները, լինելով Հնդկաստանի, Արաբիայի և այլ երկրների արտադրանքներ և հանդիսանալով Արևելքի պերճանքի առարկաներ, որոնք նախատեսված էին ազնվական դասի օգտագործման համար, վաճառվում էին Կիլիկիայում, ինչպես և տարվում դրա սահմաններից դուրս:

XIII դարում երկրի քաղաքական և տնտեսական բարգավաճման հետևանքով բարձրացավ արտաքին առևտրի նշանակությունը, Կիլիկյան Հայաստանի նավահանգիստների, չուկաների, տարանցիկ առևտրի ճանապարհների դերը, ինչը ազդում էր այդ պետության արտաքին քաղաքականության վրա՝ սրելով փոխհարաբերությունները հարևանների՝ Փոքր Ասիայի սելջուկների և Անտիոքի իշխանապետության հետ:

Արևելքի երկրների հետ Կիլիկիայի հայկական թագավորության առևտրական կապերի պարզաբանման համար կարևոր նշանակություն ունի Փոքր Ասիայի սելջուկների նվաճողական քաղաքականության լուսաբանումը, որոնք XIII դարի սկզբին Փոքր Ասիայից դավթում էին նոր հողեր, նոր առևտրական ճանապարհներ ու կետեր, սպառնում Կիլիկիային:

[1] Տե՛ս Revue de l' Orient latin, t. II, p. 521:

[2] Օֆիրոսի երկրի տեղը պարզված չէ: Հետազոտողներից ոմանք Օֆիրոսը փնտրում են Հնդկաստանում, ուրիշներ նույնացնում են եգիպտական Պունտոսի հետ: Փորձել են ապացուցել, որ Օֆիրոսը Հարավային Աֆրիկան է:

Մուսուլմանական, հունական ու հայկական աղբյուրները արժեքավոր տեղեկություններ են պարունակում Ռումի սուլթանների նվաճողական արշավանքների մասին, որոնք նպատակ ունեին զավթելու Փոքր Ասիայի քարավանային ուղիները, առևտրական կենտրոններն ու նավահանգիստները: Սելջուկները 1201 թվականին գրավեցին Կարինը (Էրզրում), իսկ 1205 թվականին փորձեցին գրավել Տրապիզոնը, այսինքն միջազգային առևտրի ամենակարևոր կետերը: Նրանք հաճախ պատերազմներ էին մղում, որպեսզի նվաճեին Կիլիկիայի լեռնանցքները, կռվում էին նաև իրենց հարավային հարևանների դեմ, Միջագետքի մուսուլմանական պետությունների դեմ, որտեղով անցնում էին գլխավոր առևտրական ուղիները և որտեղ գտնվում էին քարավանային կարևոր առևտրական կենտրոնները: 1207 թվականին Ադալիան (Ատտալիան) և 1214 թվականին Սինոպը նվաճելուց հետո սելջուկները ձեռք բերեցին Միջերկրական և Սև ծովերը տանող ելքերը:

Արաբ հատմիչ Իբն ալ Ասիրը, որը Բաղդադի խալիֆների դիվանագիտական հանձնարարություններն է կատարել, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում այն մասին, որ Առաջավոր Ասիայի երկրների, Ռուսիայի ու պոլովցիների միջև XIII դարի սկզբում աչքառու առևտուր էր կատարվում գլխավորապես Տրապիզոնի միջոցով: Նա պատմում է, որ երբ Գիյաս էդ դինը պատրաստվում էր արշավանքի նշնել այդ քաղաքի դեմ, Սվասում կանգնել-մնացել էին Սիրիայից, Իրանից, Մոսուլից և այլ տեղերից եկած վաճառականները, որոնք նպատակ ունեին իրենց ապրանքները Տրապիզոնով տանել Ղրիմ և այնտեղից դեպի պոլովցիների տափաստաններն ու ավելի հեռու[1]: Սիրիայից դեպի Տրապիզոն ապրանքները տանում էին Կիլիկիայի միջով:

Գիյաս էդ դինին հաջողվեց 1205 թ. գավթել Տրապիզոնը, իսկ 1207 թվականին միջերկրածովյան Անտալիա նավահանգիստը: Բյուզանդական կայսրությանը պատկանող Ադալիա նավահանգիստը 1204 թվականին կայսրության անկումից հետո անցավ ֆրանկներին, իսկ 1207-ին չրջապատվեց սելջուկներից: Իբն ալ Բիբիի խոսքերով՝ «Անտալիայի վրա կատարված արշավանքը ծագեց այն անարդարության դեմ մուսուլման վաճառականների բողոքներից, որ նրանց վիճակվում էր կրել Անտալիայի կառավարչի կողմից, որն այնտեղ իշխում էր ֆրանկ թագավորների անունից: Երկու ամիս սուլթանը (Գիյաս էդ

[1] Տե՛ս Византийский Временник, т. XXV, Ленинград, 1928, с. 66:

դինը) տասը բարաններով կործանում էր պաշարված Անտալիայի պարիսպները և, վերջապես, քաղաքը գրավվեց գրոհով»[1]: Գրավված Անտալիայում կուսակալ նշանակելով՝ «սուլթանը վերադարձավ Կոնիա և վերադիրով վարձահատույց եղավ վիրավորված վաճառականներին»[2]: Այսպիսով, այդ արշավանքը թելադրված էր, ամենից առաջ, վաճառականների չահերով:

Անտալիայի գավթումը փոքրասիացի սելջուկներին ելք տվեց դեպի Միջերկրական ծով: Սակայն Անտալիայի նավահանգիստը տասը տարվա ընթացքում (1209–1219) երկու անգամ Նիկեայի կայսրության իշխանության տակ ընկավ և միայն Քեյ Կուբադի օրոք (1219–1236) մշտապես անցավ սելջուկների ձեռքը: Ձգտելով հասնել նաև Մարմարա ծովին՝ Գիյաս էդ դինը կռվի ելավ Նիկեյան կայսրության դեմ, բայց ճակատամարտում սպանվեց (1210): Շարունակելով Գիյաս էդ դինի նվաճողական քաղաքականությունը՝ նրա հաջորդ Իզզ էդ դինը 1214 թ. արշավանք ձեռնարկեց ընդդեմ Տրապիզոնի կայսրության, որը հիմնվել էր Վրաստանի օգնությամբ՝ խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի գրավումից հետո, և զավթեց ղրան պատկանող Սինոպը: Սելջուկների կողմից Սինոպը նվաճելուց հետո աշխուժացավ Սիրիայից Կիլիկիայի միջով ապրանքների փոխադրումը դեպի այդ նավահանգիստը: Կիլիկյան Հայաստանն էլ առևտրական կապեր ուներ Սինոպի ու Սև ծովի հարավային ափի մյուս նավահանգիստների հետ և դրանց միջոցով՝ նաև Ղրիմի հետ:

Սելջուկների կողմից Սինոպի նվաճումը ունեցավ այն նշանակությունը, որ Իկոնիայի սուլթանությունը Սև ծովի ափին ձեռք բերեց սեփական նավահանգիստ՝ Ղրիմի, մերձսևծովյան տափաստանների, Ռուսիայի և մյուս երկրների հետ առևտուր անելու համար: Մեծացավ նաև Առաջավոր Ասիայի տարբեր երկրներից, նաև Սիրիայից, Կիլիկիայով դեպի Սինոպ եկող առևտրական ճանապարհների նշանակությունը:

Պատահական չէ, որ Սինոպի գրավումից երկու տարի անց Իզզ էդ դինը խոշոր արշավանք կատարեց Կիլիկյան Հայաստանի դեմ և փորձում էր տիրել Կապան ամրոցին, որը պաշտպանում էր նույնանուն լեռնանցքը և որտեղով Կիլիկիայից դեպի Փոքր Ասիա էր անցնում առևտրական ճանապարհը[3]:

[1] Византийский Временник, т. I, в. 3 и 4, СПб., 1894, с. 624.

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 636:

Փոքր Ասիայի առևտրական ուղիների մասին, որոնք անցնում էին քարավանային առևտրի կենտրոններով՝ Կեսարիայով, Սվազով և Իկոնիայով դեպի Ադալիա, Սինոպ ու Կիլիկիայի լեռնանցքները, հետաքրքիր տվյալներ ենք գտնում «Սելջուկ Նամե»-ում: Այս աղբյուրի հեղինակ Իբն ալ Բիբին (Էմիր Նասըր Էդ դին Յահյա), բարձր դիրք ունենալով սուլթան Քեյ Կուբադի հաջորդների օրոք, իր ժամանակի քաղաքականության և առևտրի մեջ շատ իրազեկ մարդ է եղել: Իբն ալ Բիբին բերում է երեք մուսուլման վաճառականներին կողոպտելու մասին մի պատմություն, որը լույս է սփռում Առաջավոր Ասիայի առևտրական ճանապարհների ուղղության վրա և օգնում է բացահայտել դեպի Սև ու Միջերկրական ծովերը ելքեր ունենալու ու քարավանային ուղիներին տիրելու համար Իկոնիայի սուլթանության կողմից իր հարևանների դեմ մղած պայքարի իմաստը: «Երբ սուլթան Ալա ադ դին Քեյ Կուբադը,– ասում է այս հեղինակը,– մայրաքաղաքից ժամանեց Կեսարիա, դատարան ներկայացավ մի վաճառական, որը առևտրական գործերով շատ էր ճանապարհորդել ինչպես ծովով, այնպես էլ ցամաքով: Մի անգամ նա լսել է ղփչաղների (պոլովցիների) ու ռուսների երկրներում առևտրի լավ պայմանների մասին և վճռել է ապրանքներն առած մեկնել այնտեղ: Երբ նա հասել է Խաղարական գետանցարանին, հարձակվել են նրա վրա և ամբողջ ապրանքը խլել: Այս վաճառականը դեռ խոսքը չավարտած՝ մի այլ վաճառական սկսեց իր տխուր պատմությունը, թե նրը ինքը Հալեպից գնում էր Կեսարիայի ուղղությամբ և երբ անցել է Լևֆունի (Լևոն II) վիլայեթը, իր վրա նույնպես հարձակվել են և ամբողջ ունեցվածքը խլել: Երրորդ վաճառականն էլ իր տխուր պատմությունն արեց: Նա Անտալիայում իր ապրանքները նավ է բարձել և ճեռնարկել ծովային ճանապարհորդության: Նրա վրա հարձակվել են ֆրանկները և ոչ միայն ապրանքներն են խլել, այլև իրեն են գերի վերցրել»[1]: Այս պատմության մեջ տեղեկություն է տրվում Իկոնիայի սուլթանության քարավանային ճանապարհների երեք ուղղությունների մասին: Դրանցից մեկը դեպի Սև ծովն էր դուրս գալիս Սինոպով, որը կապված էր Ղրիմի, պոլովցիների տափաստանների և Ռուսիայի հետ, երկրորդը՝ դեպի Միջերկրական ծով Անտալիայի (Անտալիա կամ Ադալիա) միջոցով, որը առևտրական կապեր ուներ Սիրիայի, Եգիպտոսի ու Եվրոպայի հետ, երրորդը՝ Կիլիկիայի կողմը, որի տարածքով

[1] «Византийский Временник», т. I, в. 3 и 4, с. 54.

էր անցնում Հալեպ տանող ճանապարհը: Այս քաղաքը լայն առևտուր էր անում Եգիպտոսի, Արաբիայի, Բաղդադի և այլ երկրների հետ, ինչպես և Փոքր Ասիայի, ու կապված էր Սինոպի հետ: Հետաքրքիր է այն, որ իրենց բողոքը վաճառականները սուլթանին բերել էին Կեսարիայում՝ վերոհիշյալ երեք առևտրական ուղիների խաչաձևման կետում:

Անհրաժեշտ է նշել, որ Իբն ալ Բիբին սելջուկ սուլթանների բոլոր արշավանքներն ու գավթումները հիմնավորում է կա՛մ իրենց վաճառականներին կողոպտելով Իկոնիայի սուլթանության հարևան երկրներում, կա՛մ սրանց կողմից պայմանագրերի խախտումներով: «Սելջուկ Նամե»-ի հեղինակն այս ճանապարհով ուզում է արդարացնել և նույնիսկ հիմնավորել սելջուկ սուլթանների գավթումները, որոնք ի սեր վաճառականների ու բեկերի չահերի, վերջին հաշվով հանուն սելջուկ թուրքերի ավատական վերնախավի նվաճողական պատերազմներ էին մղում, որպեսզի գրավեին կարևոր առևտրական ուղիներ ու կենտրոններ և ռազմավար ու գերիներ ձեռք բերեին՝ ստրկության վաճառելու համար, որպեսզի հարկերով չահագործեին պարտված ժողովուրդներին և նոր հողեր ձեռք բերեին իրենց բեկերին բաժանելու համար:

«Սելջուկ Նամե»-ի՝ վերևում բերված հատվածում այնուհետև ասվում է. «Սուլթանը, լսելով օգնության խնդրանքը, զայրացավ, պատվիրեց հատուցում տալ վաճառականներին, հրամայեց զինել զորքը, զորապետ կարգեց ամիր Հուսամ ադ դին Ջուպանին, որը պետության գլխավոր ամիրն էր ու զորավարը, և ուղարկեց Սուղակ քաղաքի կողմը»[1]: Սելջուկ զորքը Սինոպում նավ է նստում, հասնում է պոլովցիների տափաստանները, ջախջախում պոլովցիներին ու գրավում նրանց ևթակա Սուղակ քաղաքը, որը ստիպված է լինում սելջուկներին ռազմական տուրք վճարել:

Իբն ալ Բիբիի պատմածից երևում է, որ արշավանքի գլխավոր նպատակը մուսուլման վաճառականների չահերի պաշտպանությունն է եղել և Իկոնիայի սուլթանության ձգտումը՝ իր քաղաքական տիրապետությունը հաստատելու Ղրիմի նավահանգստի (Սուղակ, Սոլդայա) վրա, որը նշանակալի դեր էր խաղում մի կողմից՝ Ղրիմի, պոլովցիների տափաստանների և Ռուսիայի, մյուս կողմից՝ Առաջավոր Ասիայի միջև տեղի ունեցող առևտրում: Այս արշավանքը կատարվել է Սինոպից, որը կարևոր նշանակություն ուներ վերոհիշյալ

[1] «Византийский Временник», т. XXV, с. 54.

առևտրի մեջ: Սելջուկների կողմից դեպի դիչաղյան տափաստանը կատարվող արշավանքի հետ միաժամանակ մի այլ ղորք էլ ուղարկվել է Կիլիկյան Հայաստանի դեմ[1]:

Սելջուկների արշավանքները պոլովցիների և Կիլիկիայի դեմ տեղի են ունեցել 1221 թվականին: Վաճառականների «բողոքները» այն մասնանշումով, թե որտեղ են իրենց կողոպտել, և սելջուկների արշավանքների միաժամանակյա իրականացումը պոլովցիների ու Կիլիկիայի դեմ, ցույց է տալիս, որ Իկոնիայի սուլթանությունը չահագրգռված է եղել այն առևտրական ճանապարհով, որը Հալեպից Կիլիկիայի միջով հասնում էր Սինոպ ու շարունակվում մինչև Ղրիմ և ավելի հեռու: Այս ճանապարհը նշանակություն ուներ ոչ միայն Սիրիայի հետ հարավռուսական տափաստանների առևտրական կապերի, այլև Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական կապերի համար:

Իկոնիայի սուլթանությունը Քեյ Կուբադի օրոք (1219–1236) հասավ թեև կարճատև, բայց ամենաբարձր ռազմական հզորության: Քեյ Կուբադի ղորքերը նվաճեցին Կիլիկյան Հայաստանին պատկանող Կալոնորոս նավահանգիստը, որը ձևոք էր բերվել դեռ Լևոն II-ի կողմից և ֆեոդալի իրավունքով տրված էր Սբր Ադամին: Սելջուկների կողմից պաշարման ժամանակ նավահանգիստը գտնվում էր Կիր Վարդի՝ Սբր Ադամի թոռան[2] ձևքին: Քաղաքի տեր «Կիր Վարդը,– ասում է Իբն ալ Բիբին,– որոշեց նստել մինչև վերջ: Պաշարումը տևեց երկու ամիս: Թուրքերը քաղաքի պարիսպները փլցնում էին հարյուրավոր բարաններով և գրավեցին քաղաքը: Այա էղ դինը Կալուրուսի (Կալոնորոս) ժայռերի վրա հիմնեց մի ամրոց, որն անվանեց Ալայայ»[3]: Այս մասին հաղորդում է նաև Իբն Բաթուտան, որը եղել է այս քաղաքում: «Ալայում,– գրում է նա,– քաղաքի ամենաբարձր տեղում կա մի հրաշալի և ամուր բերդ, որը կառուցել է սուլթան Ալա էղ դին ար Ռումը»[4]: Ալայա նավահանգիստը առևտրական կապեր ուներ Եգիպտոսի սուլթանության և Սիրիայի հետ: Այս նավահանգստից անտառանյութ էր տարվում Եգիպտոս: Կալոնորոսից (Ալայայից) բացի, Քեյ Կուբադը անհաջող կերպով ձգտում էր գրավել նաև Սելևկիան, որտեղով Իկոնիայի մայրաքաղաքից նկող ճանապարհն անցնում էր դեպի Կիլիկիա:

[1] Տե՛ս «Византийский Временник», т. I, в. 3 и 4, с. 640, т. XXV, с. 55:

[2] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 109:

[3] Византийский Временник, т. I, в. 2.

[4] Voyages d'ibn Batoutah, par Defremery, P., 1853, t. II, p. 257.

Փոքր Ասիայի սելջուկները գրավեցին Առաջավոր Ասիայի քարավանային ճանապարհների համարյա բոլոր հանգուցային կետերը: Քեյ Կուբադը,– գրում է Սմբատը,– «գնաց չատ զօրօք և էառ զԵրզնկայն, և կորոյս զայնոր սուլտանն: Անտի (գնաց) ի յԱռզռումն, և զայն այլ էառ, և զՄանծկերտ մինչ ի Կարուց գաւառն: Ապա ոլորեցավ անտի, և երկ էառ զՄնլտինի և զԽարբերդ և զՁմչկածագքն և զԱմիթ և զԾովքն, և մինչ եփրատ կտրէ զամէնն մլքեց, և կորոյս զսուլտայնքն: Հայնց որ նլաւ եկաւ Մսրայ սուլտանն Անթափայ տիրոջն ի յօգն ու չկարաց իրք առնել, խանգարեաց զամէնն ու փախոյց»[1]:

Հետևապես, Փոքր Ասիայի հիմնական առևտրական մայրուղիները կարճ ժամանակով Փոքր Ասիայի սելջուկների տիրապետության տակ էին, մինչև Քյոսադաղի մոտ 1243 թ. մոնղոլներից կրած պարտությունը:

Փոքր Ասիայի ճանապարհները և առևտուրը XIII դ. առաջին կեսին ամենասերտ կերպով կապված էին մի կողմից՝ Առաջավոր Ասիայի բոլոր երկրների հետ, իսկ մյուս կողմից՝ Սուդակի նավահանգստի միջոցով, Ռուսիայի և դիչաղների (պոլովցիների) տարածքի հետ, ինչպես որ հայտնի է XIII դ. պատմիչ Իբն ալ Ասիրի վկայությունից, որը չատ լավ իմացել է Մերձավոր Արևելքի քաղաքական ու տնտեսական դրությունը XIII դ. առաջին կեսին: Սուդակ էին բերվում զանազան գործվածքներ և այնտեղից տանում մորթի և ստրուկներ[2]: Հայտնի է, որ Կիլիկիայում նույնպես կային մորթու ու ստրուկների չուկաներ, որոնք բերվում էին տարբեր ճանապարհներով, ի թիվս որոնց նաև Սինոպով՝ հյուսիսային երկրներից:

Արժեքավոր տեղեկություն կա Ռուբրուկի (Ռուբրուկվիս) մոտ ինչպես Սուդակ բերվող ապրանքների մասին, այնպես էլ այն երկրների, որտեղից գալիս էին վաճառականներն այդ ապրանքներով: Հայտնի է, որ Ռուբրուկը այդ նավահանգիստն է այցելել 1253 թվականին, երբ դա և սևծովյան երկրները պատկանում էին Ոսկե Հորդայի մոնղոլներին: Նրա հաղորդումից երևում է, որ Սուդակը կապված է եղել Սինոպի հետ և որ Փոքր Ասիայի ու Ռուսիայի միջև այդ նավահանգիստների միջոցով աչխույժ առևտուր է կատարվել: «Ոմանք բերում են,– գրում է նա,– կնգումների, սկյուռների և այլ թանկագին մորթիներ, ուրիչները՝ բամբակե գործվածքներ, բումազեն (gambasio), մետաքսե կտորներ և հոտավետ արմտիքներ»[3]: Մորթի-

[1] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 109:

[2] Տե՛ս **В. Тизенгаузен,** Сб. материалов, отн. к ист. Зол. Орды, т. I, с. 26:

[3] **В. Рубрук,** Путешествие в восточные страны, Л., 1911, с. 66.

ները Սուդակից գալիս էին Սինոպով և գնում Մերձավոր Արևելքի մուսուլմանական երկրները, ինչպես և Կիլիկիա ու Սիրիա: Այստեղ մորթեղենի մի մասը գնվում էր տեղական ազնվականների ու վաճառականների կողմից, իսկ մյուս մասը այդ երկրների նավահանգիստներով տարվում էր Եվրոպա:

Փոքրասիական սելջուկների տիրապետության դարաշրջանում, ինչպես և Առաջավոր Ասիայում մոնղոլական գերիշխանության ժամանակաշրջանում, Սվազը առևտրական ճանապարհների խաչման գլխավոր կենտրոններից մեկն էր, որոնք գալիս միանում էին այստեղ Ղրիմից, Անդրկովկասից, Իրանից, Միջագետքից, և վերջիններիս միջոցով էլ՝ Չինաստանից ու Հնդկաստանից, ինչպես և՝ Կիլիկիայից, Սիրիայից, Արաբիայից ու Եգիպտոսից:

Սիրիայից Սինոպ եկող ճանապարհը, որը շատ սերտ կապված էր Սուդակի և Ղրիմի մյուս նավահանգիստների հետ, անցնում էր Կիլիկիայի միջով: Այն կտրում անցնում էր նաև Կեսարիան ու Սվազը: Փոքր Ասիայի, Ղրիմի և Սիրիայի քաղաքներում ու նավահանգիստներում կար բավականին հայ բնակչություն՝ արհեստավորներ ու վաճառականներ: Այս առիթով Բրունը գրում է. «Նրանց (Հայերի – Գ. Մ.) թիվը XIII դ. Ղրիմում այնքան շատ էր, որ որոշ ժամանակակից գրողներ այս երկիրը նույնիսկ անվանում էին «Մովամերձ Հայաստան»[1]: Տվյալներ կան, որ XIII դարում հայերը կարևոր դեր էին խաղում Ղրիմի առևտրում և գործարար կապեր ունեին Կիլիկիայի հետ:

Իկոնիայի սուլթանության քաղաքներում նույնպես առևտրով ու արհեստով զբաղվում էին գլխավորապես հայերը: Ակադեմիկոս Կունիկի մոտ գտնում ենք շատ հետաքրքիր հաղորդում այն մասին, որ Սինոպում մոտ 1223 թ. սուլթանի անունից կառավարում էր ոմն Հեթումը: Հեթումը հայկական անուն է և շատ տարածված Կիլիկիայի հայ ավատական վերնախավի միջավայրում, մանավանդ Լամբրոնի իշխանների տոհմում, այնպես որ հնարավոր է դրանում որոշ կապ տեսնել Կիլիկյան Հայաստանի ու Սինոպի միջև: Այս Հեթումի կառավարման ժամանակ ռազմական ընդհարում տեղի ունեցավ Սինոպի և Տրապիզոնի միջև, որի պատճառը այդ երկու նավահանգիստների կողմից Ղրիմի հետ առևտրի մրցակցությունն էր և Ղրիմի վրա քաղաքական ազդեցություն ունենալու համար նրանց պայքարը: Հեթումը գրավեց մի նավ, որը Կորսունից հարկ էր տանում Տրապիզոնի կայսրին, իսկ ապա դինված նավեր ուղարկեց, որոնք կողոպտեցին

[1] **Ф. Брун,** Черноморье, Одесса, 1880, т. II, с. 138.

Կորսունը և Կորսունի մարզը: Տրապիզոնի կայսրությունը Սինոպի դեմ ուղարկեց մի նավատորմիղ, որը կողոպտեց նավահանգստի ամբողջ առափնյա շրջակայքը մինչև Սինոպի բուն վաճառանոցը և Սինոպի նավահանգստում գրավեց այդ նավահանգստի վաճառականներին պատկանող առևտրանավերը: Վերջիններս Հեթումին ստիպեցին հաշտվել՝ դավթվածը երկու կողմից վերադարձնելու պայմանով: Իմանալով պատահածի մասին, սուլթան Քեյ Կուբադը Տրապիզոնի դեմ ուղարկեց մի նավատորմիղ, որը փոթորիկի պատճառով հաջողություն չունեցավ[1]:

Իկոնիայի սուլթանության մի այլ քաղաքում՝ Սվազում, որ Առաջավոր Ասիայի քարավանային առևտրի կենտրոնն էր, նույնպես, ինչպես Սուդակում ու Թեոդոսիայում (Կաֆա), հայերը գերակշիռ դեր էին խաղում և բնակչության մեծամասնություն էին կազմում:

Այն, որ հայ բնակչությունը Փոքր Ասիայի մի քանի մարզերում և հատկապես Կեսարիա ու Սեբաստիա (Սվազ) քաղաքներում XIII դարում (հենց վերջին ժամանակներս էլ) եղել է նշանակալի և ազդեցիկ, երևում է այն փաստից, որ Սվազի հայ եպիսկոպոս Անանիան, դժգոհ լինելով Լևոն II-ի լատինասիրական քաղաքականությունից, Իկոնիայի սուլթանության հայ եպիսկոպոսների հավանությամբ (որոնց թվում և՝ Կեսարիայի) և սուլթան Ռուքն Էդ դինի համաձայնությամբ դարձել է ինքնուրույն կաթողիկոս՝ Սվազ աթոռանիստով[2]:

Ինչպես արդեն նշվել է, Կիլիկիայից Սվազ տանող մի ճանապարհ կար: Այդ ճանապարհով Կիլիկյան Հայաստանը Սինոպ, Ղրիմ ու Սեծովամերձ տափաստաններ էր տանում սեփական արտադրության ապրանքները, ինչպես ցույց են տալիս հնագիտական գտածոները:

Կիլիկյան Հայաստանում արտադրվում էին արծաթե կոփածո իրեր, հատկապես տարբեր տիպի ամաններ ու անոթներ, որոնց մի մասը տարվում էր այլ երկրներ, այդ թվում նաև, ըստ երևույթին, Ղրիմով սեծովամերձ տափաստաններ, դեպի հյուսիս ու արևելք: Ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին հաստատել է կիլիկյան ծագումը արծաթե մի չերեփիկի, որը գտնվել է 1892 թվականին Բերդյանսկի գանձերի մեջ և նկարագրված է «XII–XIII դարերի ճամփորդական չերեփիկ» հոդվածում[3]: Այդ հնագիտական գտածոն, իհարկե, Կիլիկիայի հայ վարպետների կոփածո իրերի միակ օրինակը չէ, որ տարվել է երկրի սահմաններից դուրս:

[1] Տե՛ս Ученые записки Акад. наук по первому и третьему отделению. СПб., 1853, т. II, с. 731:

[2] Տե՛ս Դիտան Հայոց պատմութեան, հ. X, 1912, էջ 388:

[3] Տե՛ս Сборник «Памятники эпохи Руставели», Лен., 1938, с. 279:

Մերձուրալի Վիլգորտ գյուղից 1925 թ. գտնված արծաթե թասի տեխնիկայի ու ոճի մանրամասն վերլուծության ճանապարհով Հ. Ա. Օրբելին որոշել է, որ այն պատրաստված է Կիլիկիայում XII դարի վերջին: «Թասի վրա չկա մակագրություն,– գրում է նա,– բայց դրա պատրաստման ժամանակը կարելի է սահմանել XII դարի վերջը: Պատրաստման տեղը անկասկած որոշվում է փոքրիկ մի պետության սահմաններով, որն ընկած է Փոքր Ասիայի միջերկրածովյան մերձափնյայում: Այդ թասի դերը կարելի է որոշել Կիլիկիայի կամ Փոքր Հայաստանի պետության արքունիքի պահանջմունքներով»[1]:

Ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին հնագիտության ու մշակույթին վերաբերող իր աշխատություններում մատնանշել է Կիլիկյան Հայաստանի, Ղրիմի և Անդրկովկասի միջև եղած առևտրական ու մշակութային կապերը: Նրա աշխատությունների և այլ տվյալների հիման վրա կարելի է հաստատել Կիլիկյան Հայաստանի գեղարվեստաարհեստային արտադրության կոփածո իրերը Մերձսևծովյան մարզեր, հնարավոր է նաև ուսական իշխանապետություններ տանելու փաստը:

Սևծովամերձ տափաստանների հետ Կիլիկյան Հայաստանի առևտրի մասին են վկայում Աքքերմանի մոտ գտնվող Կիլիկիայի հայոց թագավորների դրամները[2], որ պեղվել են Դնեստրի գետաբերանում:

Կիլիկիայի տարանցիկ ճանապարհներից և լեռնանցքներից օգտվում էին ջննովացի վաճառականները դեպի Փոքր Ասիա առևտրական ճանապարհորդություններ կատարելիս, ինչը երևում է ջննովային չնորհված առևտրական արտոնություններից:

1254 թ. Իկոնիայում Ռուբրուկը հանդիպել է չատ ֆրանսիացիների և մեկ ջննովացի վաճառականի՝ Ակրայից, անունը՝ Նիկողայոս Սեն-Սիրև, որը բացառիկ իրավունք էր ստացել Իկոնիայի սուլթանությունում չիբի առևտուր անելու: Անհրաժեշտ է նշել, որ այս վաճառականի՝ Ակրայից լինելու փաստը ցույց է տալիս, թե Սիրիայում ապրող եվրոպացի վաճառականները նույնպես Կիլիկիայով անցնող քարավանային ճանապարհով են գնացել Իկոնիայի սուլթանություն:

Ռուբրուկը Եվրոպա վերադառնալիս, ինչպես հայտնի է, իր հետադարձ ճամփորդությունը կատարել է Դերբենտի լեռնանցքով: Նա անցել է Սարայով, Դերբենդով, Շամախիով, Նախիջևանով, Անիով (Շիրակի – Գ. Մ.), Կամախով, Սերաստիայով, Կեսարիայով, Իկոնիա-

[1] Տե՛ս Сборник «Памятники эпохи Руставели», Лен., 1938, с. 263:

[2] Տե՛ս **Bratianou,** Recherches sur le commerce Génois dans la mer, Noir, p. 161:

յով, Կոռիկոսով, որտեղից վերադարձել է Սիս և Եվրոպա մեկնել Այասի նավահանգստից[1]:

Ռուբրուկի երթուղին Մոնղոլիայից Դերբենտի լեռնանցքով դեպի Կիլիկիա համարյա համընկնում էր առևտրական այն ճանապարհին, որը որոշ դեր ուներ նաև սիբիրյան մորթեղենը Սիրիա ու Եվրոպա տանելու համար: Այս մասին Ռեյը գրում է. «Հատկապես Փոքր Հայաստանի թագավորության միջով էին Սուրբ Երկրի լատինական գաղութները ստանում մորթեղենը: Այասը խոշոր կուտակատեղ էր այդ կարգի ապրանքների համար, որոնք զանազան ուղիներով այդտեղ էին գալիս հյուսիսից և կենտրոնական Ասիայից: Միջին դարերում մուշտակեղենը մեծ կիրառություն ուներ: Դրանք ամենից առաջ կնգումի (սպիտակ կզաքիսի), կզաքիսի, սամույրի, ջրասամույրի, կուղբի, վայրի կատվի, սկյուռի մորթիներ էին: Սև ու սպիտակ աղվեսների մորթիները, որ Վոլգայի նավերով և Կասպից ծովով բերվում էին Դերբենդ, այն ժամանակ մեծ պահանջարկ ունեին և համարվում էին ամենաթանկարժեք մորթիները»[2]:

Սակայն մորթիները Կիլիկիա էին հասնում Ղրիմից նույնպես՝ Սինոպով: XIII դարի առաջին կեսին առևտուրը Ղրիմի և Առաջավոր Ասիայի միջև կատարվում էր գլխավորապես Սինոպի միջոցով, ինչպես ցույց է տալիս այդ դարաշրջանի աղբյուրների վերլուծությունը: Ոսկե Հորդայի կազմավորման, դեպի Սև ծովի հյուսիսային ափեր տանող ուղիների զարգացման և Հուլավյանների պետության ծագման ու Բաղդադի անկման հետ, Հնդկաստանի և Ասիայի այլ երկրներից ապրանքներն ու մթերքները սկսեցին բերվել Ղրիմի Կաֆա ու մերձազովյան Տանա նավահանգիստներ, ինչպես և Տրապիզոն ու Այաս: Այս ամենի հետևանքով Սուդակն ու Սինոպը կորցրին իրենց նախկին նշանակությունը առևտրում:

Ոսկե Հորդային ենթարկվող Ղրիմի և Իրանի մոնղոլական պետությանը ենթարկվող Առաջավոր Ասիայի միջև կատարվող առևտրին խանգարում էր 1262 թ. Հուչյանների և Հուլավյանների միջև ծագած թշնամանքը, որի պատճառներից մեկը նրանց մրցակցությունն էր Արևելյան Անդրկովկասի առևտրական ուղիներին տիրելու համար:

Մոնղոլների կողմից Բաղդադի գրավումով (1258) փոփոխվում է Առաջավոր Ասիայի քարավանային ճանապարհների ուղղությունը, իսկ դրա հետ կապված՝ մեծ նշանակություն է ձեռք բերում Այաս-

[1] Տե՛ս **В. Рубрук,** Путешествие в восточные страны, с. 175:

[2] **Rey,** Les colonies frangues de Syrie aux XII-me et XIII-me siécles, P., 1883, p. 208.

Թավրիզ առաջավորասիական նոր տարանցիկ ճանապարհը: Ուստի նկատելիորեն բարձրանում է Կիլիկիայի տարանցիկ ուղիների նշանակությունը և Կիլիկիայի հայկական պետության դերը XIII–XIV դարերի միջազգային առևտրում:

Կիլիկիայի և Ղրիմի միջև առևտրական կապերը չարունակվում էին նաև այս ժամանակաշրջանում: XIII դարի վերջին վերաբերող նոտարական ակտերում մենք առևտրական ու դրամական գործարքներ ենք գտնում Ղրիմի Սուդակ ու Կաֆա նավահանգիստների և Կիլիկյան Հայաստանի Այաս նավահանգստի վաճառականների միջև: Ջենովացի մի նոտարիուս 1274 թ. հուլիսի սկզբին եղել է Այասում, նույն ամսի կեսին՝ Սուդակում, հուլիսի կեսին նա նոտարական ակտեր է կազմել Սև ծովի փոքրասիական ափի Վատացա նավահանգստում, վերջապես, օգոստոսի 21-ին դանազան նոտարական ակտեր է կազմել՝ կապված Սուդակում կատարվող առևտրի հետ: Կաֆայի արխիվում տվյալներ կան Այասի հայ վաճառականների և Ղրիմում իտալացի վաճառականների այդ ջենովական գաղութի միջև տեղի ունեցած առևտրական գործարքների մասին[1]:

XII դարում և XIII դարի առաջին կեսին Առաջավոր Ասիայի առևտրական ճանապարհների ուղղությունների ամփոփումը ցույց է տալիս, որ դրանք կապված են եղել Կիլիկյան Հայաստանի ճանապարհների հետ, որոնք այդ բանի շնորհիվ մեծ նշանակություն են ձեռք բերել Արևելքի և Արևմուտքի միջև, Առաջավոր Ասիայի և սևծովափնյա հյուսիսային երկրների միջև կատարվող տարանցիկ առևտրում:

Սակայն խաչակրաց արշավանքների և Փոքր Ասիայում սելջուկ թուրքերի քաղաքական տիրապետության դարաշրջանում Կիլիկիայի տարանցիկ ճանապարհների նշանակությունը միջազգային առևտրում դեռևս մեծ չի եղել, քանի որ ապրանքների գլխավոր հոսքը Ասիայից Եվրոպա անցել է Բաղդադով դեպի սիրիական նավահանգիստները, որոնք մնում էին խաչակիրների ու եվրոպացի վաճառականների ձեռքին մինչև XIII դ. 60-ական թվականները, իսկ դրանցից Ակրան ու Տրիպոլին՝ մինչև 1291 թվականը: Միայն Բաղդադը մոնղոլների կողմից նվաճվելուց և մամլուքների կողմից Սիրիայի համարյա բոլոր նավահանգիստները գրավվելուց հետո Արևելքում նոր ժամանակաշրջան սկսվեց միջին դարերի միջազգային առևտրի պատմության մեջ:

[1] Տե՛ս **G. Bratianou,** *Actes des notaires Génois de Pera et de Caffa de la in treizième siècle (1281–1290), P., 1936, p. 22:*

XIII դ. երկրորդ կեսին և XIV դ. առաջին կեսին Կիլիկիայի հայկական պետության արտաքին, հատկապես տարանցիկ առևտուրը մեծ նշանակություն ձեռք բերեց գլխավորապես շնորհիվ այն բանի, որ այդ տարածքով էր անցնում Առաջավոր Ասիայի գլխավոր քարավանային ուղին, որը դուրս էր գալիս դեպի Միջերկրական ծով, այսինքն՝ Թավրիզից Այաս հասնող ճանապարհ:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԸ

XI–XII դարերում Կիլիկիայում ավատական հարաբերությունների զարգացման մասին: Ավատական հասարակության սոցիալական կյանքը XII–XIII դդ.: Հերետիկոսության տարածումը որպես դասակարգային պայքարի դրսևորում: Հասարակական-քաղաքական կարգը: Պետական կարգը և իրավունքը ըստ Սմբատի «Դատաստանագրքի»: Մշակութային կապերը Կիլիկիայի և Հայաստանի հայերի միջև:

Ավատական հասարակարգի, մասնավորապես Կիլիկյան Հայաստանի ագրարային հարաբերությունների ուսումնասիրումը մի չարք դժվարություններ է ներկայացնում: XII–XIII դարերի պատմական երկերում և այլ կարգի աղբյուրներում տվյալներ կան ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր ավատատերերի խոշոր ավատական հողատիրության աճի և ավատատերերի ու թագավորական իշխանության փոխհարաբերությունների մասին: Բայց այդ ժամանակվա տարեգրություններում ու պատմական աշխատություններում մենք քիչ տվյալներ ենք գտնում ժողովրդական զանգվածների սոցիալ-տնտեսական դրության մասին, աշխատավորության չահագործման ձևերի մասին: Սակայն նյութական բարիքներ ստեղծողների, գյուղացիների և արհեստավորների աշխատանքի պայմանների, նրանց սոցիալ-իրավական դրության ու չահագործման և աշխարհիկ ու հոգևոր ավատատերերի դեմ պայքարի մասին մենք կարող ենք դատել ըստ օրենքների ժողովածուների ու գրական ստեղծագործությունների:

Բյուգանդիայի կայսրերի X դարի ագրարային օրենսդրությունը (Ռոմանոս Լակապինոսի, Կոստանդին VII-ի ու Վասիլ II-ի նովելները), որն ուղղված էր դինատների ու վանքերի կողմից համայնական հողերի ու գյուղացիական հողաբաժինների զավթման դեմ, մանավանդ ստրատիոտների հողակտորների, և որը նպատակ ուներ թուլացնել փոքրասիացի ավատատերերի տնտեսական ու քաղաքական

հզորությունը և պաչտպանել գյուղացիներին որպես հարկատու և զինվորական դասի,– հետևողականորեն չկենսագործվեց ու չէր կարող կասեցնել խոշոր հողատիրության զարգացումը և գյուղացիների ճորտացման գործընթացը:

Դեռևս Կիլիկյան Հայկական պետության կազմավորումից առաջ Կիլիկիայի ու սահմանամերձ այլ մարզերի հողերի մի մասը, որ բյուզանդիան ետ էր նվաճել արաբներից, բաժանվում էր հողակտորների, տրվում ստրատիոտներին, որոնց մեծ մասը հայեր էին: Բայց ստրատիոտների դրությունը դրանից չէր փոխվում: Նրանք չահագործվում էին ու ճնչվում խոշոր հողատերերից, որի հետևանքով չատ ստրատիոտներ լքում էին իրենց հողակտորները, ոմանք էլ փախչում էին Սիրիա՝ արաբների մոտ: Ստրատիոտների կողմից հողաբաժինների լքումը այնքան զանգվածային երևույթ է եղել, որ Նիկեփոր II Փոկասը մի նովել է հրապարակել, որի կետերից մեկի համաձայն երեք տարի բացակայած հայ ստրատիոտը վերադառնալիս կորցնում էր իր հողաբաժինը օգտագործելու իրավունքը[1]: Անտարակույս, X–XII դարերում Կիլիկիայում նույնպես, ինչպես փոքրասիական այլ պրովինցիաներում, տեղի էր ունենում խոշոր հողատիրության աճ և սրա հետ միասին վատանում էր գյուղացիների տնտեսական ու իրավական դրությունը: Նրանց մի մասը ոչ միայն կորցնում էր իր հողը, այլև տուժում իրավական առումով:

Կեդրինի մոտ հետաքրքիր տվյալներ կան X դարի վերջում խոշոր հողատիրության աճի մասին, դինատների ընդարձակ տիրույթների կազմավորման մասին Կիլիկիայում և դրան սահմանակից Կապադովկիայի շրջաններում, որոնք Կիլիկիայի հայկական պետության ծագումից մեկ դար անց նույնպես մտան նրա սահմանների մեջ:

975 թ. Հովհաննես Ձմշկիկը Սիրիա և Պաղեստին կատարած արշավանքից Կիլիկիայի միջով վերադառնալիս և Անարզաբայի ու Պոդանայի մոտով անցնելիս, տեսել է բերքառատ հարթավայրեր և հարցրել, թե ով է դրանց տերը: Նրան պատասխանել են, թե այդ հողերը, որոնք արաբներից ետ է նվաճել Նիկեփոր Փոկասը, պատկանում են դոմեստիկոս Վասիլին[2]: Սա եզակի դեպք չի եղել դինատների կողմից Փոքր Ասիայի այս կամ այն պրովինցիայի ամբողջ շրջաններ զավթելու առումով: Այս նույն հեղինակը ներկայացնում է Կապադովկիայի կառավարչի կողմից համայնքային հողերի զավթման ոչ պակաս բնորոշ դեպք: 995 թ. Վասիլը իր բանակով վերա-

[1] Տե՛ս Corpus scriptorum hist. buzant. Leo Diaconus, 1828, p. 318–320:

[2] Տե՛ս նույն տեղում, G. Gedrenus, tomus alter, B., 1839, 414:

դառնալիս է եղել արաբների դեմ կատարած արշավանքից: Կապադովկիայի միջով անցնելիս՝ կայսրին ընդունել են Եվստաֆիոս Մալեինոսի ամրոցում, որտեղ նրան ու նրա զորականներին ամրոցի տերը ճոխ հյուրասիրություն է կազմակերպել: Վասիլ II-ը համոզվելով, որ Կապադովկիայի հողերի զգալի մասը Մալեինոսի սեփականությունն է դարձել, հրամայել է, որ նրան վերցնեն հսկողության տակ: Մալեինոսին բերել են Կոստանդնուպոլիս[1]: Կայսր Վասիլ II-ը վճռել է մեկուսացնել Մալեինոսին, որպես մի ավատատիրոջ, որի հզորությունն աճել է իր տիրույթների ընդլայնման հետևանքով՝ վախենալով նրա կողմից հնարավոր ապստամբությունից, քանի որ մինչ այդ Կապադովկիան ու դրան հարակից պրովինցիաները համարյա տասնհինգ տարի եղել էին խոովարար դինատների Վարդ Սկլերոսի ու Վարդ Փոկասի հենակետերը: Իզուր չէր, որ Եվստաֆիոս Մալեինոսի ձերբակալությունից հետո Վասիլ II-ը հրապարակում է «40-ամյա վաղեմիության վերացման մասին» նովելը, որի մեջ որպես դինատական հողատիրության վառ օրինակ բերում է Մալեինների և Փոկասների հողային տիրույթների ընդլայնումը 100–120 տարվա ընթացքում, այսինքն՝ IX դարի վերջից մինչև X դարի վերջը[2]:

XI դարում դեպի Հայաստան ու Փոքր Ասիա սելջուկների ներխուժման նախօրյակին և դրա ժամանակ բյուզանդական կառավարություն, ինչպես հայտնի է, հայ ավատատեր-զորապետներին՝ Հայաստանից արտագաղթածներին, կառավարման էր հանձնում քաղաքներ, բերդեր և ամբողջ շրջաններ Կիլիկիայում: Դա հանգեցրեց այն բանին, որ XI դարի 70-ական թվականների վերջերին Կիլիկիայում բյուզանդական տիրապետության կործանման ժամանակ Կիլիկիայի մարդերի ու քաղաքների մի մասը հայտնվել էին հայ ավատատերերի ձեռքին, որոնք աստիճանաբար ընդլայնում էին իրենց տիրույթները և ուժեղացնում իշխանությունը գյուղացիների նկատմամբ: Այս ճանապարհով XI դարում Կիլիկիայում մեծացավ հայ այն ավատատերերի թիվը, որոնց ձեռքին կենտրոնացել էին խոշոր հողային տիրույթներ: Այդ ավատատեր հայերից առավել ազդեցիկները, ինչպես հայտնի է, Արծրունիներն էին, Օշինյաններն ու Ռուբինյանները:

Կիլիկիայի հայկական իշխանապետության ծագումից հետո բյուզանդական տիրապետությունը, այնուամենայնիվ, Կիլիկիայի հարթավայրային մասում պահպանվեց նաև XII դարում: Այս ժամանակաշրջանում Կոմնենոսներն ավատատերերին կալվածքներ ու հողեր էին բաժանում, ինչն ուժեղացնում էր գյուղացիների ճորտացումը: Ռուբինյանների կողմից ամբողջ Կիլիկիան նվաճվելուց հետո հայ ավատատերերի թիվը երկրում խիստ նվազեց, համարյա հասավ զրոյի, փոխարենը մեծացավ հայ ավատատերերի թիվը: X դարի II կեսից ընդհուպ մինչև Ռուբինյանների հայ իշխանապետության ծագումը (1080), նույնպես և XII դարում, ինչպես որ մեծ մասամբ Բյուզանդիայի պատկանող Դաշտային Կիլիկիայում, այնպես էլ Ռուբինյանների իշխանության տակ եղած Լեռնային Կիլիկիայում տեղի էր ունենում խոշոր հողատիրության և ավատական հարաբերությունների զարգացման պրոցես: Խոշոր հողատիրության աճի կարևորագույն աղբյուրը, ինչպես հետո մանրամասն կպարզաբանվի, եղել է սեփականատեր գյուղացու սնանկացումը, ավատատերերի ու վանքերի կողմից գյուղացիական հողակտորների ու համայնքային հողերի գրավումը: Դրա հետ միասին XII դարում այդ աճին ուժգին նպաստել է և այն, որ Ռուբինյանները, աստիճանաբար ընդլայնելով իրենց տիրապետությունը Կիլիկիայում, սկսել են իրենց վասալ զորականներին բաժանել նվաճված հողերը որպես ռազմական կալվածքներ: Ավատական հարաբերությունները Հայաստանում գոյություն ունեին վաղեմի ժամանակներից: Այդպիսին էին նաև հարևան խաչակիրների հասարակական հարաբերությունները:

Ռուբինյանների մոտ ապաստան էին գտնում Կապադովկիայի, Միջագետքի ու Սիրիայի հայ այն ավատատերերը, որոնք զրկվում էին իրենց տիրույթներից՝ սելջուկների ու խաչակիրների կողմից ղրանց դավճման հետևանքով: Այդ ավատատերերը դառնում էին Ռուբինյանների վասալները և կալվածքներ ստանում: Այսպես վարվեց Բիրի տեր Աբել-Ղարիբը (Ապղարիպ), երբ նրա տիրույթը խլեցին խաչակիրները[1]: XII դարի վերջին Սասունից Կիլիկիա գաղթեցին իշխաններ Հեթում և Շահնչահ Մամիկոնյանները[2]: Դեռ Թորոս I-ի ժամանակից Ռուբինյանները նորոգում էին հին վանքերն ու կառուցում նորերը և դրանց օգտին հողային նվիրատվություններ անում[3]:

Կիրակոս Գանձակեցին բերում է հողային նվիրատվության մի հետաքրքիր փաստ, որ կատարել է Թորոս II-ը հավանաբար Գրիգոր Կաթողիկոսի խնդրանքով, որը համոզել է Հռոմկլա բերդի տիրոջ այրուն՝ իրեն զիջել Եփրատի ափի այդ ամրացված բնակավայրը, որ-

[1] Տե՛ս Corpus scriptorum historiae buzantine. G. Cedrenus, tomus alter, 1839, p. 448:

[2] Տե՛ս Сборник документов по социально-экономической истории Византии, М., 1951, с. 163:

[1] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** ժամանակագրութիւն, էջ 338:

[2] Տե՛ս **Մխիթար Սպարապետի** Պատմութիւն, էջ 94:

[3] Տե՛ս **Սամուէլ Անեցի,** ժամանակագրութիւն, էջ 121:

պետի իր աթոռանիստը դարձնի, իսկ նրան՝ իշխանի այրուն, հովինակի ասելով՝ «յուղարկեալ սրբոյ հայրապետին գկինն յաշխարհն կիլիկեցւոց առ մեծ իշխանաց իշխանն հայոց Թորոս, և նա ետ նմա գիւղս և ագարակս և այլ կալուածս...»[1]:

Պարզ է, որ Թորոս II-ը, որ գրավել էր Կիլիկիայի նշանակալի մասը, կարող էր իր զորապետներին է՛լ ավելի մեծ մասշտաբի կալվածքներ նվիրել, քան իր նախորդները: Նրա որդի Ռուբենի մասին ժամանակագիր Սմբատն ասում է, թե նա, իշխանության գլուխ անցնելով, «սկսաւ տալ պարգևս ամենեցուն առատապէս... և առատ սեղանով անուշացնէր զսիրտ իշխանացն և զինվորացն...»[2]:

Ագնվականության ու վանքերի խոշոր հողատիրության զարգացումը և XII–XIII դարերում Կիլիկիայի գյուղացիների սոցիալ-իրավական վիճակի վատթարացումը հաջողվում է բավականին լավ լուսաբանել ըստ այդ դարաշրջանի հայ գրականության երկերի տվյալների: Գյուղացիների և արհեստավորների աշխատանքային կյանքը, նրանց դերը հասարակական արտադրության մեջ, նրանց չհագուրծումը հողատերերի ու վաչխառուների կողմից, նրանց սոցիալական բողոքը ընդդեմ ավատատերերի ու եկեղեցու բավականին լայն արտացոլում են գտել գեղարվեստական գրականության մեջ, մանավանդ առակներում ու ղրույցներում, որոնք քաղաքային կյանքի զարգացման արդյունք են հանդիսանում և արտացոլում են աշխատավոր ժողովրդի, բնակչության դեմոկրատական խավերի գաղափարները, մտքերն ու տրամադրությունները:

Հայտնի է, որ քաղաքային կյանքը Արևելքում, մանավանդ Միջերկրական ծովի արևելյան ափի երկրներում, խոր հնություն ունի: Քաղաքային կյանքն այստեղ ծագել է հարյուրավոր տարիներ մեր թվարկությունից առաջ և երբեք չի ընդհատվել: Կիլիկիայի հայկական պետության քաղաքական հաջողությունների հետ միասին XII դարում, գլխավորապես ավատական հասարակության արտադրական ուժերի հետագա զարգացման շնորհիվ, սկսվեց նաև երկրի տնտեսական ծաղկումը. գյուղատնտեսության վերելքը, քաղաքների, արհեստային արտադրության, ներքին և արտաքին առևտրի զարգացումը: Գյուղում ու քաղաքում ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը փոփոխություններ առաջացրեց Կիլիկյան Հայաստանի ավատական հասարակության սոցիալական կյանքում: Ուժեղացավ քաղաքային բնակչության տեսակարար կշիռը և սրվե-

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 101:

[2] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 90:

ցին սոցիալ-դասակարգային հարաբերությունները ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում: Այս ամենը իր արտացոլումն է գտել գրականության մեջ:

Առակներում ու ղրույցներում, ինչպես և այն ժամանակվա քարոզիչների խրատներում արժեքավոր նյութ կա աշխարհիկ ու եկեղեցական խոշոր հողատիրության զարգացման, հողերը բարձր խավի, աղնվականների ու վանականների ձեռքում կենտրոնացնելու, գյուղացիների ճորտացման և աշխատավորության չհագուրծման ուժեղացման, վաճառականական ու վաչխառուական կապիտալի գործունեության ընդլայնման մասին:

Դեռ XII դարում եկեղեցական հեղինակ Սարգիս Շնորհալու քարոզներում արտացոլվել է պատերազմների ու զավթումների դարաշրջանը՝ կապված սելջուկների ու խաչակիրների ներխուժումների հետ, սոցիալական փոխհարաբերությունների սրումը՝ պայմանավորված ավատական կարգի զարգացմամբ: Խրատելով՝ Սարգիս Շնորհալին գրում է. «Ի խոր խաղաղութենէ ամենայն աշխարհ վայելէին: Ո՛չ ազգայզգի վերայ յառնել: Ո՛չ սուր սրեալ: Ո՛չ արիւնհեղութիւնք: Ո՛չ կործանումն տանց: Ո՛չ աւերումն քաղաքաց: Ո՛չ առումն ընչից: Ո՛չ գերութիւնք»[1]: Մի այլ տեղում գրում է. «Զի ի՞նչ չարաչար կիրք ի մեզ, քան զթշնամանելն և զթշնամանիլն, անպատուելն և անպատուիլ, ատել և ատիլ, հարկանել և հարկանիլ»[2]: Դիմելով հարուստներին՝ նա ասում է. «Է՞ր վասն այդչափ կատաղիք ի ցանկութենէ չահիցդ, իզո՞ւր աշխատելով. և ընդունայն խոռվելով, է տուէ և ի գիշերի հոգալ առ ի գրկել և ի նեղել, ի կեղեքել և ի տառապեցուցանել զաղքատս, զորբս և զայրիս լացուցանել»[3]: Եկեղեցական բարոյագիտությունից ելնելով՝ քարոզիչը հարուստներին համոզում է հրաժարվել անարդար ցանկություններից, չճնշել խեղճ մարդկանց, այլ՝ ձեռք բերածը բաժանել աղքատներին[4]:

Արատները, ի թիվս որոնց անառակությունը, և աշխարհիկ մարդկանց միջև եղած հասարակական հակասությունները նկարագրելով՝ հեղինակը՝ հոգևոր կոչման տեր անձը, խոստովանում է, որ հոգևորականության միջավայրում այս արատները է՛լ ավելի են տարածված: Նա նախատում է հոգևորականությանը նաև առևտրով ու այգեգործությամբ զբաղվելու համար: Հոգևոր անձի կողմից այգի մշակելը նա համարում է ադետների աղբյուր նրա համար: Սաստիկ նա-

[1] Մատենադարան, ձեռ. 1318, էջ 37բ:

[2] Նույն տեղում, էջ 40:

[3] Նույն տեղում, էջ 18:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 19:

խատում է նաև վաճառականներին, ասելով, որ նրանք խորհում են միայն առևտրական չահույթի մասին, թե ինչպես որևէ մեկին պլոկեն: Ասես դարան մտած՝ վաճառականները վրա են տալիս պարզամիտներին ու նրանց հաչվին իրենց գրպաններն ուռճացնում, մրմնջալով՝ «գոհանամ ի տեր»[1]: Սարգիս Շնորհալին արտահայտվում է աստվածաշնչյան մարգարեների լեզվով, միջնադարյան քրիստոնեական աչխարհայեցողության ոգով: Բայց նրա քարոզներում մենք տեսնում ենք այն ժամանակվա տնտեսական հարաբերությունների արտացոլումը: Այդ տեսակետից գնահատելի են նրա հետևյալ խոսքերը. «Զսովորութիւն մեծատանցն և իշխանացն պախարակէ բանիւս, զի զձեռամբ աննկալան իւրեանց ժողովեն բռնութեամբ, իրաւունս վարկանելով հնձել զարդաստանս իւրեանց ի տաւթա ժամու և ի փուչջ: Եւ ո՛չ կերակուր պատրաստական մատուցանեն, և ո՛չ ըմպելի: Եւ նոքա զաւրն ցերեկ. կան մնան յաչխատութեանն վաստակելք, սովալուկ և ծարաւիք: Եւ առ տարակուսանս մտացն և զայրացման սրտին, առ աստուած բողոքեն»[2]: Սարգիս Շնորհալին կողմնակից է բնական տնտեսության, նա դեմ է առուծախին, պարսավում է չահ կորզելու ձգտումը, տոկոսը: Նա ասում է. «Զնոք ասէ, որ ոչ վաստակիցէ, կերիցէ՛ մի, և զվաստա՛կս ձեռաց քոց կերիցես»[3]: Շահագործողների վրա իր հարձակումներում Սարգիս Շնորհալին ասում է. «Դատարկակեացս անուանեմք զնոսա և իշամեղուս, յայլոց աչխատութեանց կերակրեալս»[4]:

Կիլիկիայի և Սիրիայի հասարակական հարաբերությունների ու սոցիալական հակասությունների մասին խիտ գնահատելի նյութ կա Ներսես Շնորհալու՝ հայոց եկեղեցու կաթողիկոսի (1166–1173) «Թուղթ ընդհանրական»-ում, որով նա քարոզով դիմում է բոլոր հասարակական խավերին: Նրա «Թղթի» ներքոհիշյալ տողերում մենք գտնում ենք հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած մի խոշոր իրադության՝ դգալի թվով հայերի տարաբնակեցմանը Առաջավոր Ասիայի արևմտյան մարզերում և աչխարհի այլ երկրներում: Դիմում եմ,– ասում է նա,– «ընդհանուր հաւատացելոց հայկականցդ սնոից, որք յարևելս ի սփիհական աչխարհդ Հայաստաննայց բնակեալք. և որք յարևմտեան կողմանսդ սահեալք նչդհութեամբ. և որք ի Միջերկրայս՝ ի մէջ այլազգու ազանց տարաբերեալք, և որք յիւրաքանչիւր յեղերս աչխարհաց ըստ մեզաց մերոց ցրուեալք՝ ի քաղաքս, ի դղեակս, ի գիւղս, և յայգարակս...»[1]:

Որպես հայոց եկեղեցու պետ՝ Ներսես Շնորհալին ղեկավարվում է ավատատերերի չահերով: Նրա «Թուղթը» տոգորված է ավատատիրական գաղափարախոսությամբ և եկեղեցական աչխարհայեցությամբ, սակայն այս փաստաթուղթը հարուստ է կոնկրետ նյութով, որը լուսաբանում է ավատական հարաբերությունների զարգացումն ու սոցիալական հակասությունները Կիլիկիայում, Սիրիայում ու Միջագետքում XII դարի կեսերին: «Թղթի» հեղինակը ձգտում է դասակարգային խաղաղություն հաստատել տիրող խավերի և աչխատավորության միջև: Այս նպատակով նա հանդես է գալիս դաստիարակի դերում, խրատում է ավատատերերին ու եպիսկոպոսներին: Բայց ռևալ իրականությունը դրանից չէր փոխվում: Մեր առջև բացվում է ավատատերերի կողմից ժողովրդական զանգվածների վրա բռնության ու նրանց չահագործման պատկերը:

Վանքերի ու հոգևորականության հարստության աճի մասին Ներսես Շնորհալին գրում է. «Զի նոքա և զորս յաչխարհի ունէին ժառանգութիւնս և ստացուածս՝ թողին, և թողուլ օրինադրեցին, և զնաչ առաքինութեան բարձին, և զկնի գնացին Քրիստոսի, որպէս և ինքն հրամայէր մեծատանն, թէ՝ երթ վաճառեա՛ զոր ինչ ունիս, և տուր աղքատաց, և դու առ զնաչ քո, և նկ զկնի իմ, և ունիցիս գանձս բազումս յերկինս: Եւ զարձեալ թէ՝ որ կամիցի զկնի իմ գալ, և ոչ ուրասցի զամենայն, զոր ունիցի յաչխարհի, և առցէ զնաչ իւր հանապաղ, ոչ կարէ իմ աչակերտ լինել: Եւ այլ ևս՝ որ այսպիսիք են աւետարանական պատուիրանք աչակերտելոց անձանց, որ էք դուք: Յորոց բազումք են ի ժամանակիս կրօնաւորաց, որ յաչխարհի առանց ժառանգութեան էին, և հարկատուք իչխանաց, և աղքատք ի գոյից, և կարօտք հարկաւորացն. և յորժամ զձև կրօնաւորութեան ընկալան, տեարք եղեն ի վանորայս բազում ժառանգութեան, և փարթամացան ստացուածովք. և ոչ միայն հարկաւոր պիտոյից եղեն անկարօտ, այլև աւելորդաբար լցան....»[2]:

Ներսես Շնորհալին նախատում է վանականներին ու հոգևորականությանը այն բանի համար, որ նրանք դարձել են այգետերեր և իրար հանդիպելիս գրուցում են ոչ թե հոգու առողջության ու արատների մասին, այլ միմյանցից հարցափորձ են անում ծառերի բերքատվության մասին, հավաքված բերքի չափի մասին ու թախծալի տրտնջում

[1] Մատենադարան, ձեռ. 1718, էջ 110:

[2] Նույն տեղում, 1318, էջ 115:

[3] Նույն տեղում, 1318, էջ 54բ:

[4] Նույն տեղում, էջ 54բ:

[1] **Ներսես Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 5:

[2] Նույն տեղում, էջ 28:

են, թե դրա մի մասը փչացել է ճիճվից, մյուս մասն էլ ժամանակին չծաղկելուց[1]:

Ներսես Շնորհալին հոգևոր անձանց նախատելով այն բանի համար, որ նրանք փողի միջոցով հասնելով եկեղեցական պաշտոնների, այնուհետև հարստանում են եկեղեցական ունեցվածքի ու ծխականների հաշվին, միաժամանակ հարուստ փաստական նյութ է տալիս հոգևորականության չահագործողական դերի վերաբերյալ:

Վանքերը իշխաններից ու հարուստ աշխարհականներից հողեր և այլ ընծաներ ստանալով, չահագործելով գյուղացիներին՝ ոչ միայն սկսել էին հարստանալ, հարստանում էին նաև վանահայրերը, որոնք վանքի ունեցվածքի հաշվին ձևոք էին բերում անձնական սեփականություն: Վանահոր պաշտոնը այնքան եկամտաբեր էր դարձել, որ դրան հասնել ձգտողները ամեն միջոցի դիմում էին: Ներսես Շնորհալու «Թուղթ առ վանահայրս» նամակը լույս է սփռում վանական կյանքի վրա: «Մի զնուիրեալն յեկեղեցիս՝ կամ կենդանեաց միաբանութեան կամ մեռելոց յիշատակի, անձին միայնոյ սեպհականեսցէ առաջնորդն, այլ ի պետս եկեղեցւոյն ծախիցէ: Ջնոյն և հատուսցէ եկեղեցեաւն զհոգևոր պարտսն, զի մի յարդար դատաստանին աւար պահանջեսցէ իւրաքանչիւրօք զտուեալն, և զի՝ ոչ ունիցի յայնժամ հատուցանել, զիւրն առեալ բարեգործութեան փոխարէն տայցեն:

Եւ թէ առաջնորդն առաջին, զոր առ, յաւուրս իւր ի ծախս եկեղեցւոյն վատնեաց հաստատուն վկայիւք, և ոչ ժամանեաց յաղագս օրհասին մահու կանխելոյ՝ հատուցանել զպարտսն, երկրորդն, որ զկնի նորա ժառանգէ զառաջնորդութիւն եղբայրութեանն, պարտական է վճարելոյ և եթէ անտես առնէ, ունի տոկոսեօք, վճարել առաջի Քրիստոսի»[2]: Այնուհետև նա չարունակում է. «Մի՛ որ ինքնակամ ախտիւ չարժեալ՝ կաշառանօք աւագաց յափշտակեսցէ զառաջնորդութիւն վանաց առանց ժամանակին առաջնորդի քննութեան և հրամանի: Քանզի երկու են պատճառ իրաւացի փոխելոյ զվանաց առաջնորդս. կա՛մ վասն զանարժանս զործելոյ արտաքոյ օրինաց աստծոյ, և այն՝ ճշմարիտ վկայիւք. կա՛մ եկեղեցւոյն ոչ չինութեան, այլ աւերման լինելոյ պատճառ»[3]:

«Թուղթ առ եպիսկոպոսունս»-ից մենք իմանում ենք XII դարի եպիսկոպոսների «գործոց» մասին: Սուրբ գրքի վկայակոչմամբ Ներսես Շնորհալին բացատրում է, թե քրիստոնեական կրոնի տեսակետից ինչպիսին պետք է լինի եպիսկոպոսը բարոյական առումով: Մեզ հետաքրքրում է ոչ թե այդ, այլ այն, թե ինչ դեր էր խաղում բարձրագույն հոգևորականությունը հասարակության մեջ XII դարի կիլիկիայում ու դրա հարևան մարզերում: Ներսես Շնորհալին դիմելով եպիսկոպոսներին, ասում է. «Մի՛ արծաթասէր. արծաթասիրութիւն, զոր մայր ասէ Պօղոս ամենայն չարեաց, թէպէտ և ամենայն ումեք և յամենայն գործս, յորում են մարդիկ, վնասակար է, առ թագաւորս և դատաւորս, առ իշխանս և գործակալս և առ ամենայն ոք, որ յաշխարհի են, բայց առաւել առ հոգևոր առաջնորդութիւնն»[1]: Նախատելով եպիսկոպոսներին տգիտության համար՝ նա ասում է, թե նրանք վատ գիտեն Սուրբ գիրքը: Ներսես Շնորհալին նշում է նաև, որ «այնքան հեռացաք ի բարւոյ նոցին նմանութիւնէ, մինչև զի ոչ այլ ինչ գործոյ պատճառ գիտել զեպիսկոպոսութիւնն, որք յօժարին ստանալ զնա, բայց միայն զանազան հնարիւք ինչս ժողովել ի հնազանդելոցն, և փառս որսալ ի փառաւորչաց. զոր անարգանս պարտ է ասել, և ոչ փառս»[2]:

«Թողից զասել զևս դժնդակագոյնն այսր ժամանակի եպիսկոպոսաց գործ, զի և բազում անարգանաց և տուժից տանին յայլազգեաց,— չարունակում է նա,— ոչ յաղագս աստուածային օրինացն՝ որպէս առաջին սուրբքն, զի այն նրանութեան էր արժանաւոր, այլ վասն անոտի փառացն յուսոյ և զգերփենալոն ի հնազանդելոց պէսպէս հնարիւք և բռնութեամբ, զոր եկեղեցւոյ պայծառութիւն և յաղքատաց պէտս հրամայեցաւ լինել, զայնոսիկ ժողովն որպէս զմաքսաւորս, և զրոնակալաց աշխարհի նուիրեն»[3]:

Ներսես Շնորհալին եպիսկոպոսներին մեղադրում է, որ եկեղեցական պաշտոններ ստանալու համար մուտքման իշխաններին նվերներ ու կաշառքներ տալու սովորությունը հանգեցրել է այն բանին, որ վերջիններս սկսել են եկեղեցիները կապալով տալ:

«Առ դասս քահանայից» նամակում Ներսես Շնորհալին գծում է ցածր հոգևորականության կենցաղի ու բարքերի աննախանձելի պատկերը: Նա քահանաներին հանդիմանում է, որ նրանցից չատերը «սիրեցին տգիտության կուրութիւնը», չգիտեն սաղմոսներ, չեն հոգում իրենց կրթության մասին, թաղված են աշխարհիկ գործերի մեջ, առավոտից իրիկուն քաղաքային չուկաներում զբաղվում են առևտրով, վիճում ու կռվում են, որ ավելի չատ ծխականներ ունենան,

[1] Տե՛ս **Ներսես Շնորհալի,** *Թուղթ ընդհանրական, էջ 30:*

[2] *Նույն տեղում, էջ 51:*

[3] *Նույն տեղում, էջ 52:*

[1] **Ներսես Շնորհալի,** *Թուղթ ընդհանրական, էջ 61:*

[2] *Նույն տեղում, էջ 65:*

[3] *Նույն տեղում, էջ 66:*

դրաղվում են ֆիավարժութիյամբ, դինվորական գործերով, պսակ առնելիս խախտում են եկեղեցական կանոնները, կրոնական ծեսեր կատարելիս ծխականներին ճնշում են մեծ հարկերով, բազում անօրենութիյուններ են անում[1]:

Ներսես Շնորհալու՝ աշխարհիկ իշխաններին ուղղված «Թղթում» բացահայտվում է ավատատերերի կողմից աշխատավոր ժողովրդի նկատմամբ գործադրվող բռնութիյունների ու կամայականութիյունների պատկերը: Այդտեղ նա ասում է. «Եւ նախ և առաջին առ իշխանսդ, որք ի նուաղեալ ժամանակիս տիրեք ի տեղիս բազմաց և կամ սակաւաց, զօրաց և գաւառաց:

Զորս աղաչեմ, մի՛ անհնազանդ լինիք օրինացն աստուծոյ, այլ որպէս կամիք, զի ծառայք զկամս հրամանի ձերոյ հնազանդութիւնամբ և անթերի կատարեսցեն, որք թէև զմի ինչ ի հրամայելոցն անկատար թողուն պատուհաս կրեն ի ձեռջ, նոյնպէս և դուք, վասն զի բռնութիւնամբ ծառայք էք աստուծոյ, ծառայեցէ՛ք տեառն երկիւղիւ... մի՛ անիրաւարար վարիք առ հնազանդեալսդ ծանր և դժուարակիր հարկադրութիյամբ, զոր ոչ կարեն բառնալ, այլ օրինօք դատեցէք...

Մի՛ չար և անիրաւ գործակալս և գաւառապետս կացուցանէք ի վերայ աշխարհի ձերոյ, զի մի՛ յանիրաւութիւնէ նոցա գործեն, զուք դատիք յաստուծոյ հանդերձ նոքօք, այլ զարդարամիտս և զարդարադատս ընտրեցէք ունել ի վերայ մարդկան զգործակալութիւն, զի մի՛ զարբունական սահմանեալ իրաւունսն՝ վաստակաւորացն թողցեն վասն սակաւ կաշառացն զրազումն, և կամ ինքեանք գողասցին. և մի՛ առաւել քան զհրամայեալսն նեղեսցեն զնոսա և առցեն, զի անիրաւութիւն են երկու կողմանքն առաջի աստուծոյ, այլ այնպես իրաւադատ լինիցին, զի տացեն զկայսերն՝ կայսեր, և զաստուծոյն՝ աստուծոյ»[2]:

«Թղթում» չոչափվում են այլ հարցեր ևս: Կա նաև խրատ, թե ինչպես վարվել զորականների հետ[3]:

Դիմելով վաճառականներին և արհեստավորներին՝ Շնորհալին նրանց հորդորում է, որ իրենց ապրանքները վաճառելիս չխաբեն պարզամիտ գնորդներին, այլ արդարացիորեն վաճառեն իրենց ձեռքի գործը կամ ապրանքները, չարհամարհեն գյուղացիներին, իբրև տգետների ու պարզամիտների: Նա դատապարտում է վաչխառութիյունը, զրամը տոկոսով տալը:

[1] **Ներսես Շնորհալի,** *Թուղթ ընդհանրական, էջ 63:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 92–94:*

[3] *Նույն տեղում, էջ 100:*

Շնորհալին գյուղացի հողագործներին հորդորում է չզազրախոսել: Համարյա սրանով էլ սահմանափակվում է նրա խրատը գյուղացիներին: «Թուղթ առ հողագործս» նամակում չկա եկեղեցու բարոյախոսութիյանը բնորոշ խրատը՝ համբերութիյամբ հնազանդվել տերերին, տանել բոլոր երկրային զրկանքները՝ հանուն երկնային երանութիյան, ինչը, սակայն, կա նրա մյուս երկերում[1]:

Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին (1152–1198) իր երկերից մեկում նկարագրում է հայ աղնվականութիյան պայքարը եկեղեցական բարձր պաշտոնների համար: Նա հերքում է Պահլավունյաց իշխանական տոհմի հակառակորդների կարծիքը, թե այդ երևելի տոհմի անդամներն զբաղեցնում են պատրիարքական աթոռը ժառանգականութիյան սկզբունքով: Ներսես Լամբրոնացին պնդում է, որ Պահլավունյաց գերդաստանից սերած կաթողիկոսները ամեն անգամ ընտրվել են չնորհիվ իրենց անձնական արժանիքների: «Սակայն թէպէտ և այս այսպէս, չար ախտս յայսմանէ առեալ գնիւթ՝ սկսաւ ճարակել. և ոչ ասեն, թէ տէր Ներսէս արժանի յաջորդեաց յեղբօրէն, այլ զի եղբայր, վասն այնորիկ և եղբօրն փոխան: Ուստի և ամենեքեան ի նոյնս կործանեալ հարան, ակն ի վեհագոյն աթոռն տան՝ ունելոյ գմեղացս պատճառ. եպիսկոպոսք զվիճակս, հարք զվանորայս, քահանայք զեկեղեցիս՝ մարմնական ընտանեացն գրեն որպէս գմարմնական ժառանգութիւն: Եւ բարձաւ աստուածային ընտրութիւնն, կամ իմաստնոց կոչումն, կամ պատուոյ անարգողի պատիւ: Այլ որ զանձն ընծայեցուցանէ՝ ընծայի, և զոր տէր ընծայեցուցանէ՝ անարգի, սակս որոյ և ի վերայ միմեանց յարուցմունք, կաշառք իշխանաց և տոկոսիք վասն վիճակաց և վանորէից: Զանձրայեցուցաք ընդ Քրիստոսի խաչեալ կրօնաւորքս զիշխանս՝ առ ի խնդրել զառաջնորդական պատիվ, և ոչ ամաչեմք»[2]: Պետք է նշել, որ դրան (առաջնորդական պատվին) էր ձգտում և ինքը՝ Ներսես Լամբրոնացին:

Շարունակելով քննադատել ժառանգականութիյան սկզբունքը՝ նա այդ բանը մատնացույց է անում որպես պատճառ այն չարիքի ծագման, որ եպիսկոպոսներն իրենց թեմերը, վանահայրերն իրենց վանքերը, քահանաներն իրենց եկեղեցիները սկսել են համարել իրենց ժառանգական սեփականութիյուն, իսկ դրա պատճառով կոչում ունեցող անձինք կռվի են ելել միմյանց դեմ:

Ներսես Լամբրոնացին նկարագրում է հոգևորականների բանսարկութիյուններն ու պայքարը եկեղեցական կոչումներ ձեռք բերելու

[1] *Տե՛ս* **Ներսես Շնորհալի,** *Թուղթ ընդհանրական, էջ 109:*

[2] **Ներսէսի Լամբրոնացւոյ** *Մորհրդածութիւնք..., Վաղարշապատ, 1847, էջ 535–536:*

համար. «Նորին դարձեալ տաղտկացուցին զունկն կաթողիկոսի վասն եպիսկոպոսութեանն, և ոչ վհհերին, հայր՝ ոչ եթէ անհայր վանից լինել, այլ որպէս զի զոր կայն կործանեսցէ և ինքն նստցի...»[1]:

Ներսես Լամբրոնացին պարսավում է եկեղեցական պաշտոնը մուսուլման իշխաններից կապալով վերցնելու սովորույթը, որ ծագել է եկեղեցական պաշտոն ձեռք բերելու համար մուսուլմաններին կաշառք տալուց: Հոգևորականության այս բոլոր արատները և եկեղեցական կազմակերպության թերությունները Ներսես Լամբրոնացուն անհանգստացնում են նաև նրա համար, որ դրանք գրգռում են աշխարհիկ մարդկանց մտքերը՝ նրանց մեջ հակաեկեղեցական տրամադրություններ ու մտքեր հարուցելով: «Ով աղետից, և ապա պի՞նչ. այսպանի անուն քրիստոնէիցս ի մէջ աշխարհի. հայհոյի վասն մեր անունն աստուծոյ ի մէջ հեթանոսաց»[2]:

Կիլիկիայի հայարնակ, մուսուլմանահպատակ մարզերում, իհարկե, չի եղել եկեղեցիները կապալով վերցնելու սովորույթը: Բայց հողերի գավթում, պայքար եկեղեցական բարձր պաշտոնների համար, եկեղեցական ու վանական հարստության օգտագործում հանուն անձնական հարստացման, աշխատավոր բնակչության չահագործում տեղի են ունեցել նաև այստեղ, ընդ որում առավել մեծ չափերով, քանի որ Կիլիկիայի հայկական պետության մեջ եկեղեցին օգտվում էր հայ ավատատերերի նախ իշխանապետական, ապա թագավորական հովանավորությունից:

Սարգիս Շնորհալու, Ներսես Շնորհալու և Ներսես Լամբրոնացու երկերը արժեքավոր նյութ են տալիս կիլիկեցի և մերձևփրատյա հայերի վերաբերյալ, ինչը վկայում է XII դարի Կիլիկիայում ավատական հարաբերությունների հետագա զարգացման մասին:

Շատ ավելի կոնկրետ ու խիստ, քան XII դարի հեղինակները, ավատատերերին, վաճառականներին ու վաչխառուներին մերկացրել է տաղանդավոր առակագիր Վարդան Այգեկցին՝ XII դարի վերջի և XIII դարի սկզբի մի գրող, որն իր երկերում մեջ է բերել առակներ Աստվածաշնչից՝ մշակելով դրանք, ժողովրդական առակներ, առակներ Եզոպոսից ու «Ֆիզիոլոգի» հայկական վերսիայից, առակներ ու զրույցներ, որ ինքն է հնարել՝ իրական կյանքի դիտարկման հիման վրա:

Վարդան Այգեկցու խրատներում, քարոզներում և առակներում հարուստ նյութ է պարունակվում, որի մեջ իրենց արտացոլումն են

[1] **Ներսէսի Լամբրոնացւոյ** *Խորհրդածութիւնք..., էջ 536:*

[2] *Նույն տեղում:*

գտել Կիլիկյան Հայաստանի սոցիալական հակասությունները և աշխատավորության դասակարգային պայքարն ընդդեմ ավատատերերի ու եկեղեցու: Այգեկցու, ինչպես և Մխիթար Գոշի խրատական զրույցների ու առակների այս կողմի վրա ուշադրություն են դարձրել Հայ գրականության և պատմության հետազոտողները: Այս տեսակետից հետաքրքիր են խոշոր հայագետ Մ. Աբեղյանի «Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ» հոդվածը, ակադեմիկոս Հ. Օրբելու «Ռուսթավելու հերոսները և նրանց հպատակները»[1], «Ցածր խավերի ինքնագիտակցությունը XII–XIII դարերի առակներում» հոդվածները, Լ. Խաչիկյանի «Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում 12–14-րդ դդ.» հոդվածը և այլ հեղինակների մի շարք աշխատություններ: Լ. Խաչիկյանն իր հոդվածում լուսաբանելով այն ժամանակվա հերետիկոսական գաղափարները, ինչպես և դրանց ծագման սոցիալական նախադրյալները, ցույց է տվել, թե Հայաստանի պատմության ուսումնասիրման համար ինչ մեծ նշանակություն ունեն Մատենադարանի չհրատարակված ձեռագիր նյութերը, որոնք վերաբերում են միջնադարյան հայ հասարակության գաղափարախոսությանն ու մշակույթին:

Հայաստանի, ինչպես և Կիլիկյան Հայաստանի ժողովրդական դանդվածների գաղափարախոսություն, սոցիալական չարժումները, միջնադարյան հասարակության հասարակական հոսանքները դեռևս անրավարար են ուսումնասիրված՝ չնայած կան ինչպես հրատարակված, այնպես էլ ձեռագիր աղբյուրներ: Այս առումով վիթխարի նշանակություն ունի Վարդան Այգեկցու գրական ժառանգության ուսումնասիրումը: Վարդան Այգեկցին սովորել է Արքակաղինում և իր երկերը գրել է Դրազարկում ու Կիլիկիայի ուրիշ խոշոր վանքերում, որոնք ունեին հարուստ գրադարաններ և ձեռագրատներ: Նա թափառել է Սիրիայի և Կիլիկիայի քաղաքներում, գյուղերում ու վանքերում, երբեմն հալածանքի ենթարկվել իր մերկացնող քարոզների համար[2], ուստի և լավ է իմացել Կիլիկիայի քաղաքային ու գյուղական կենցաղը՝ ավատական կարգերը, գյուղացիների իրավազրկությունը, նրանց չահագործումը ավատատերերի կողմից, վաճառականների ու վաչխառուների միջավայրը: Նա տեսել է, թե ինչպես է վատթարանում քաղաքի աշխատավորության վիճակը առևտրական կապիտալի աճման հետ: Որպես հոգևոր դաստիարակ, նա հիանալիորեն

[1] *Տե՛ս Памятники эпохи Руставели, Ленинград, 1938:*

[2] *Տե՛ս* **Марр,** *Сборники притч Вардана, ч. I, СПб., 1898, с. 293–299:*

իմացել է նաև Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանների կենցաղն ու մոտ գործերը և նրանցից մի քանիսի հետ նամակագրություն է ունեցել, օրինակ՝ Անտիոքի Միքայել եպիսկոպոսի հետ, հայ իշխան Բալդուինի հետ[1]: Կիլիկյան Հայաստանի հասարակական կարգի և աշխատավորության պայքարի որոշ կողմերի պարզաբանման ու լուսաբանման համար անհրաժեշտ է ներկայացնել Վարդան Այգեկցու հայացքները սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ: Քարոզներից մեկում նա ասում է. ձևքը չոչափելիքի օրգան է, ձևքը չի ստեղծված, որ գողանա կամ յուրացնի կամ էլ ստրկացնի որևէ մեկին, այլ վաստակի, ողորմություն տա աղքատներին և կարեկից լինի անանկացածներին[2]: Նա բաղմիցս կրկնում է, որ պետք է ապրել սեփական աշխատանքի պտուղներով և դատապարտում է ամեն մի ճնշում ու շահագործում մարդ արտադրողի նկատմամբ՝ գյուղացու, արհեստավորի ու վարձու աշխատողի, նրանց շահերի ամեն մի սահմանափակում: Նա պարսավում է վաշխառուությունը, ընդգծելով դրա կործանարարությունը մարդ սեփականատիրոջ համար[3]: Վաշխառուությունն ու մաքսագանձումը Վարդան Այգեկցին հավասարեցնում է գողության: Մաքսատնից և տուդանքներից եկող եկամուտները նա դատապարտում է ոչ պակաս եռանդով, քան վաշխառուությունը՝ այդպիսով նորից ու նորից պաշտպանելով աշխատավոր դանգվածների, մանր ապրանքարտադրողների և սպառողների շահերը: Նա այն կարծիքին է, որ արատների տարածմանը ամենաշատը նպաստում են մաքսատունը, հասարակաց տունը և հևքիմի տունը[4]: Խրատելով երիտասարդ վանականներին՝ սրանց խորհուրդ է տալիս նվիրատվություններ չվերցնել «անարևվաստակ» նվիրատուներից, այլ միայն այն անձանցից, ովքեր ապրում են իրենց աշխատանքով: Այս ամենը ցույց է տալիս, որ նրա համակրանքը աշխատավոր ժողովրդի կողմն է: «Մեծատունք, մշակք, իշխանք, չունք և հավք» առակում իր վառ արտացոլումն է գտել հասարակական հարաբերությունների այն իրականությունը, այն գաղափարը, որ անմիջական արտադրողների աշխատանքի արդյունքները յուրացվում են տերերի կողմից և որ նրանց աշխատանքը ըստ արժանվույն չի գնահատվում: Վարդան Այգեկցին հասկանում է, որ նյութական բարիքների աղբյուրը աշխատավորի աշխատանքն է:

[1] Տե՛ս **Марр,** *Сборники притч Вардана, ч. I, СПб., 1898, с. 297–312:*

[2] Տե՛ս Մատենադարան, ձեռ. 8356:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

«Եւ արդ՝ ահա տեսանեմք զմեծատունսն, որ ի ձեռն մշակաց գործոյն,— ասում է Վարդան Այգեկցին,— և փչովք պատեն և պահեն զայգիս և զդրախտս: Եւ ի ժամ ճաշակման ողկուզիցն և պտղոցն ոչ զմշակն յիշեն և ոչ զփուչն, այլ տանուտեառն չնորհակալ լինին. և նմա (յերկար) կենանք և խաղաղական հայցեն յաստծոյ: Նոյնպէս և վաւաղարդ մեծամեծ իշխանքն ի ձեռն չանց և գիչակեր թռչնոցն որսան զերէսն և յթռչունսն: Իսկ ի ժամ ճաշակման պարարտ և անուշահամ մսոյն ոչ զչունսն յիշեն և ոչ զթռչունսն, այլ իշխանին լինին չնորհակալ, և յաստուծոյ խնդրեն յերկար ժամանակաւք վարել նմա զիշխանութիւն:

Նոյնպէս և դուք, ո՛վ ժողովուրդք աստուծոյ, ո՛չ ինձ, այլ յաստուծոյ յերուք չնորհակալ և զնա՛ աւրհնաբանեալ գովեցէք, որ ստեղծ զիս...»[1]:

Վարդան Այգեկցու ստեղծագործությունը նկեղեցու ուժեղ աղղեցության տակ է եղել: Քրիստոնեական աշխարհայեցողության համաձայն, Աստված ամենայն բարիքների արարիչն ու աղբյուրն է, իսկ նմին խորամուխ լիննենք առակի իմաստի մեջ, երկրային իրական բարիքների արարչի դերը հատկացվում է աշխատավորին: Վարդանի «Եզն և ձի» առակում մենք տեսնում ենք այն գաղափարը, որ ավատական հասարակության մեջ արտադրական հարաբերությունների հիմքում ընկած է գյուղացու աշխատանքի յուրացումը ավատատերերի կողմից: Ահա այդ առակի լրիվ տեքստը. «Եզն ու ձին խոսեցան ընդ միմյանս: Ասաց ձին ընդ եզն, թէ,— Դու ո՞վ ես կամ զի՞նչ պէտս ես: Ես ձի եմ,— ասէ,— որ թագաւորք և իշխանք և պարոնայք կազմեն զիս ոսկով և արծաթով և բազմին ի վերայ իմ: — Ասէ եզն.— Ամէն աշխարհիս չէն եմ ես, որ վաստակիմ և չարչարիմ և խոնջիմ, և ապա դու և քու թագաւորն ուտէք, և ամենայն մարդ զվաստակս ուտեն, և թէ ոչ վաստակիմ, դու և քու թագաւորն մէկ հետ մեռանիք: Եւ դու երախտամոռաց մի՛ լինար:

Յուցանէ առակս, թէ մարդ կայ, որ աշխատի քան զեզն, և մարդ կայ, որ հանապազ զձի հեծնի և աւար ածէ աշխարհի: Եւ թէ աշխատաւորն ոչ աշխատի, որպէս եզն, նայ մեռանի ձին և հեծնող նորա»[2]:

Երկու հիմնական հանգամանք կարելի է նկատել Վարդան Այգեկցու առակներում ու քարոզներում. մի կողմից՝ գոյություն ունեցող սոցիալական կարգերի ուժեղ քննադատություն, ավատական հասա-

[1] **Н. Я. Марр,** *Сборники притч Вардана, ч. I, с. 341.*

[2] **И. Орбели,** *Герои поэмы Руставели... (в сб. «Памятники...»), с. 154.*

րակարգի քննադատություն, բողոք ընդդեմ սոցիալական անհավասարության ու անարդարության, և, մյուս կողմից՝ չարին չհակառակելու քարոզ:

Աստվածաշնչյան մարգարեների հետևողությամբ հարց է տալիս Աստծուն. ինչո՞ւ մարդկանց ստեղծեցիր այնպիսին, որ ինչպես խոշոր ձկները ծովում կուլ են տալիս մանրերին, այդպես էլ հարուստ մարդիկ կուլ են տալիս աղքատներին[1], որոնք պաշտպանություն չեն գտնում, քանի որ ոակին սուսիկ-փուսիկ մտնում է դատարանի դահլիճը և իր փայլով խոցում դատավորի սիրտը[2]:

Սոցիալական անհավասարության ու բռնության մասին Վարդան Այգեկցին ոչ թե Աստվածաշնչում է կարդացել, այլ այդ ամենը իր չուրջն է տեսել, քանի որ ապրել է խոշոր հողատիրության բուռն զարգացման և հարստությունների աճի ժամանակ, ինչը կատարվում էր գյուղացիների և արհեստավորների սնանկացման հաշվին:

Քաղաքային կյանքի զարգացման հետ, պերճանքի առարկաների արտադրության զարգացման ու տեղափոխման և ընդհանրապես ղրամաապրանքային հարաբերությունների, ներքին ու արտաքին չուկայի զարգացման հետ աճեց նաև ավատատերերի ղրամի պահանջմունքը, և դրա հետ կապված՝ ուժեղացավ գյուղացիների չահագործումը՝ ավատական տուրքերի ու պետական հարկերի գանձման ձևով: Վարդան Այգեկցին ննթադրում է, թե ավատատերերը և եպիսկոպոսները չահագործում ու ճնշում են ժողովրդին այն պատճառով, որ նրանք ունեն «զիշխանութիւնն և զկարողութիւնն և զբազդում կարիքն»[3]:

«Թուղթ առ երիտասարդ արեղայս» նամակում նա բացահայտում է տիրող դասերի՝ ավատատերերի ու հոգևորականության տնտեսական հարաբերությունների, քաղաքական ճնշման էությունը: Ընդ որում, դառը փորձից դաս առած, այն, որ անվտանգ բան չէ այս աշխարհի հզորների դեմ խոսելը, նա վկայակոչում է երկու վարդապետների՝ Սահակի ու Տիրանի կարծիքները: Այն մասին, թե պե՞տք է արդյոք ողորմություն վերցնել իշխաններից, հայ բարեպաշտ մի իշխան,— գրում է Վարդան Այգեկցին,— հարցրել է հայ իմաստուն վարդապետ Սահակին, ինչպես և Տիրանին, և նրանք հետևյալ պատասխանն են տվել նրան. «Ով բարեպաշտ իշխան, ոչ է հնար, թէ կարէ տուն իշխանի մնալ առանց զրկանաց և կամ տուն թագաւորի

[1] Մատենադարան, ձեռ. № 8356:

[2] Նույն տեղում:

[3] **Н. Я. Марр,** Сборники притч Вардана, с. 299–300.

կամ առաջնորդի էր որ կամաւ, զի հարկն պահանջէ և է որ ակամա, զի ոչ կարէ իմանալ զիրաւունքն և է որ ի գործաւորացն խաստութենէ և չարութենէ, և է որ յաւարէ և յափշտակութենէ, և է որ ի գողութենէ, և է որ բռնութեամբ ու քինով»[1]:

Վարդան Այգեկցին մերկացնելով թագավորական իշխանությունը՝ միաժամանակ այն համարում է կառավարման օրինական և անհրաժեշտ ձև: Կիլիկիան կառավարող Լևոն II Ռուբինյանին նա համարում է «քրիստոսապսակ և ահարկու ի վերայ անօրինաց»[2] թագավոր: Թեև որպես ռեալիստ, նա թագավորին նույնացնում է գիշատիչների հետ՝ առյուծի և արծվի, ինչպես ընդունված է առակներում, այնուամենայնիվ նրա խրատներում միաժամանակ հավատ է արտահայտվում բարի թագավորների գոյության վերաբերյալ:

Նրա իդեալը հեղաբարո թագավորն է, խաղաղարար թագավորը: Այս առումով հատկանշական է «Իղձք երից որդոց թագաւորի» առակը: Արքայազուններից մեկն ասաց. «... մարդ չէի, խնդրէի յաստուծոյ, զի առիւծ լինէի, զի թագաւոր է և պատառէ զամենայն»: Մյուսն ասաց. «Խնդրէի արծիւ լինել, զի թռչնոց թագաւոր է և պատառէ զամենայն և բարձր գնայ»: Երրորդն էլ ասաց. «Ես խնդրէի ադաւնի լինել, զի անմեղ է և ոչ ումեք առնէ վնաս և էրամասէր և ոչ թռչի միայն, այլ սիրէ զխաղաղութիւն»: Թագավորը՝ նրանց Հայրը, թաքուն ականջ էր դնում նրանց և ամեն ինչ լսեց: Նա հասկացավ, որ երկու որդիներից մեկը գիշատիչ է լինելու ժողովրդի համար, մյուսը՝ մեծամիտ, գոռոզ ու գիշատիչ, և նրանցից ոչ մեկին թագավոր չկարգեց: Նա հասկացավ, որ երրորդը խաղաղարար է լինելու, և դրան կարգեց թագավոր[3]: «Թագաւոր ծառոց» առակում ասվում է, որ ծառերը թագավոր կարգեցին տատասկին, որը ծակում էր, վիրավորում նրանց, ովքեր իրեն մոտենում էին, և պտուղ չէր տալիս, իսկ բարոյականի մեջ ասված է. «զհնգն և զհամրերողն պարտ է կացուցանել առաջնորդ և թագաւոր, իշխան և դատաւոր, և ոչ զայնոկն և զխիստն և զչարաբարոյն և զանզգամ»[4]: Տատասկի կերպարի մեջ ներկայացված են թագավորական իշխանության մի քանի գծեր միայն: Ավատական հասարակության թագավորը ոչ բոլորին է ծակում որպես փուշ, այլ՝ աշխատավորությանը: Խլելով աշխատավորության աշխատանքի պտուղները՝ նա դրանք բաշխում է ազնը-

[1] **Н. Я. Марр,** Сборники притч Вардана, с. 316.

[2] Նույն տեղում, էջ 307:

[3] Տե՛ս **Н. Я. Марр,** Притч Вардана, с. 186:

[4] Նույն տեղում, էջ 221:

վականության և Հոգևորականության միջև, և, հակառակ Վարդան Այգեկցու բարի ցանկությանը, ոչ մի «հնդ ու բարեմիտ» թագավոր այլ կերպ չի կարող վարվել:

Հոգևոր դասը ոչ միայն դաժանորեն չահագործում էր Կիլիկիայի աշխատավորությանը, այլև անբարոյական կյանք էր վարում: Դա իր արտացոլումն է գտել Վարդան Այգեկցու երկերում, որը լավ գիտեր ինչպես բարձր, այնպես էլ ցածր հոգևորականության կենցաղը: Նրա առակներում, քարոզներում ու խրատներում բացահայտված են հոգևոր դասի խոցերը. կաշառքով տգետ մարդկանց եպիսկոպոս ու քահանա օծելը, արծաթասիրությունը, վաչխառությունը, կեղծ բարեպաշտությունը և հոգևորականության այլ արատները: Վարդան Այգեկցին հարձակվում է հոգևոր կոչման տեր անձանց վրա այն բանի համար, որ նրանց գործը խոսքից տարբերվում է: Հիմա ամեն ոք,– ասում է նա,– դարձել է վարդապետ ու քարոզիչ Աստծո օրենքների, իսկ ինքը հեռու է այն բանից, ինչը սովորեցնում է ուրիշներին: Դրա համար էլ նմանվում է գուսանի[1]: Այս միտքն արտահայտվում է «Խնցգետին և ձագը» առակում: «Ասեն,– ասում է նա,– թե խնցգետին խրատեր զձագս ի յղորդ ընթանալ զճանապարհն և ինքն թիւր գնայր: Իսկ նոցա տեսեալ զմայրն, որպէս գնայր, նոքա այլ այնպէս գնացին, և մայրն սաստէր նոցա ուղղորդ գնալ, և նոքա ասէին, որպէս դու գնաս, նոյնպէս և մեք»: Այս առակի բարոյականում ասվում է. «Այսպէս առաջնորդք, որ ծուռ գնան և զժողովուրդն խրատեն ուղիղ ընթանալ, նոքա տեսանեն, թէ զառաջնորդն որպէս գնայ, նոյնպէս և նոքա»[2]:

Վարդան Այգեկցու քարոզներից մեկում ընդգծվում է, որ արատները տարածված են ոչ միայն աշխատավորների մեջ, այլև հոգևորականների, որ գողություններ վերջ չունի, իսկ կեղեքումները՝ թիվ ու համար, որ վաչխառությունն ու կաշառակերությունը բազմացել են, ագահությունն ու արծաթասիրությունը՝ աճել, իսկ երկերեսանիությունն ու կեղծ բարեպաշտությունը անհնար է նկարագրել[3]:

XIII դարի ձեռագրերից հայտնի է, որ հոգևոր կոչում ունեցող անձինք խմում-հարբում էին, ժամանակն անցկացնում հարբեցողների ընկերակցությամբ, ինչպես և՝ անառակ կանանց հետ, զվարճանալով պարերով և գուսանների երգերով և, աշխարհականների նման, դիմում էին հեքիմներին[4]: Ժողովրդական դանգվածների գիտակցության մեջ պարզ պատկերանում էր, որ աշխարհիկ իշխանների նման հոգևոր իշխաններն էլ՝ եպիսկոպոսներն ու վանահայրերը, չահագործում են գյուղացիներին ու արհեստավորներին, որ քահանաներն ապրում են ծխականների հաշվին: Այս առումով բնութագրական են «Եկեղեցի և ջրաղաց» առակը «Առակք Վարդանա» ժողովածուից և ուրիշ շատ առակներ ու խրատական ղրույցներ: Ահա վերոհիշյալ առակի լրիվ տեքստը. «Եկեղեցին պարծեցաւ ի սրբութիւն իւր և ասաց, թէ՝

– Ես եմ տաճար աստուծոյ, և յիս գան քահանայք և ժողովուրդք յաղօթս մատուցանել աստուծոյ և պատարագ: Եվ հաշտի աստուած ընդ աշխարհիս, և մեղաց թողութիւն լինի:

Յայնժամ գայ ջրաղացն և ասէ ընդ եկեղեցին, թէ զինչ դու ասես՝ արդար է ճշմարիտ, բայց դու զիմ երախտիքն մի մոռանար, որ գիշեր ու ցերեկ կու աշխատիմ և կու դատիմ, որ կու ուտեն քահանայքն և ժողովուրդքն և ապա գան առ քեզ աղօթել և երկիր պագանել աստուծոյ:

Ցուցանէ առակս, թէ կան աշխարհի մարդիկ, որ հանապազ աշխատին և դատին, որպէս մեղու, և թագաւորք և իշխանք և ամենայն մարդիկ զվաստակս նոցա ուտեն և ապա երթան յեկեղեցին և զաստուած օրհնեն և յիշեն»[1]:

Առակներից մեկը Վարդան Այգեկցին ավարտում է հոգևորականության և ընդհանրապես խոշոր սեփականատերերի հետևյալ մերկացումով. «... Յուդայի ասեն նեղէ և տանջէ զմեզ, որ է արծաթասիրութիւն և ագահութիւն, վասն որոյ և սուտ քահանայքս և սուտ քրխատոնեայքս սկսանիմք և ջանամբք հանապազ զրկել, յափշտակել, ննջգել, գողանալ, ի զուր տուգանել, խարել, վաչխս տալ, ի չափս և ի կշիռս մեղանչել, սղավաճառս լինել, գոռամբ և ուրախանամբ, զաղքատսն և զորբսն զրգռումբ, գոչմամբ և ասմամբ. Իմ է հայրենիքս, գաւառս, քաղաքս և գեղս, ագարակս, այգիս...»[2]:

Այս տողերում մենք տեսնում ենք Կիլիկյան Հայաստանի ավատական հասարակության իսկական վիճակը, երևույթներ, որոնք սերտորեն կապված են խոշոր հողատիրության զարգացման ու քաղաքային կյանքի հետ, առևտրի ու վաչխառության հետ:

Հոգևորականության արատների մերկացմանը հանդիպում ենք Վարդանի և՛ առակներում, և՛ քարոզներում, և՛ խրատական ղրույցներում: «Մանուկ և ձագք» առակում պատմվում է, թե մայրը որդուն

[1] Մատենադարան, ձեռ. № 8356:

[2] **Н. Я. Марр,** Сборники притч Вардана, ч. I, с. 216.

[3] Մատենադարան, ձեռ. № 8356:

[4] Նույն տեղում:

[1] **Н. Я. Марр,** Притч Вардана, ч. I, с. 216.

[2] Նույն տեղում, էջ 364:

հանձնարարեց հսկել ճտերին, իսկ նա ճտերին միմյանց կապկռվ՝ թևի ծայրն ամրացրեց թռչոսին այնպես, որ հայտնված ագռավը հափռելով ճտերից մեկին, տարավ բոլոր ճտերին՝ թռչոսն էլ հետները: Այս առակն ավարտվում է հետևյալ մերկացումով ու եզրակացությամբ. «զի ամենայն խոտորեցաք ի միասին և անպիտանացաք, քանզի ժողովուրդն կապակալ կայ առ առաջնորդն և առաջնորդն ի թագաւորն»[1]: Վարդան Այգեկցու կարծիքով, հոգևոր հովիվները պարտավոր են ժողովրդին խրատել ու տանել ճշմարտության ճանապարհով, բայց իրենք են շեղվել ճիշտ ճանապարհից, քանզի «թաղվել են աշխարհիկ հոգսերի մեջ», ինչը հասարակական հարաբերությունների լեզվով թարգմանելիս նշանակում է, որ հոգևորականությունը դասային չահերով կապված լինելով թագավորական իշխանության և ավատատերերի հետ՝ ինքն է չահագործում ու ճնշում ժողովրդին՝ որպես ընդարձակ հողերի և այլ կարգի հարստության սեփականատեր: Միջնադարյան բարոյախոսը կարծում է, որ հարբստություն և իշխանություն ունեցողները՝ թագավորը, իշխանները և հոգևոր հովիվները, դրա համար արժանի են դաժան պատժի, արժանի են դժոխքի տանջանքների:

Արհեստի և գյուղատնտեսության, ներքին և արտաքին առևտրի հետագա զարգացման պայմաններում կիլիկիայի ավատական հասարակության մեջ ուժեղանում է հողային ու դրամական հարստության կուտակման ձգտումը, հաճախանում են հողերի զավթումները, ուժեղանում են մաներ սեփականատիրության հաչվին խոչորի աճը, գյուղացիների և քաղաքի ցածր խավերի չահագործումն ու ճնշումը: Տասը թակարդների մասին իր առակում Վարդան Այգեկցին այլաբանորեն այսպես է արտահայտել ավատական հասարակության վերնախավերի կողմից հարստության կուտակելու ձգտումը. «Ահա ծով ջրեղէն, որ ահագին որոտմամբ յերկինս բարձրանային ալիք նորա, քանզի հողմ անդնդային ի ներքուստ ի վեր խոովեցուցանէր զնա, յորմէ փախեան իմաստուն նաւավարքն նաւաւք իւրեանց, և ամենայն գետք տիեզերաց մտանէին ի նա, և նա լցաւ և հերիք ոչ ասաց, և առաքեաց վարձակս և պատգամս ընդ ամենայն տիեզերս, զի ուր և գտցեն կաթ ջրոյ ի լերինս և ի խորաձորս, զամէնն առ ինքն ժողովեսցեն, և այս պէս ցամաքացուցանէր զաշխարհս ամենայն և ինք ոչ հագեցաւ»: Վարդան Այգեկցին նույնացնում է ծովը բռնության հետ, «զոր արար և ուսոյց մարդկան իշխանն,— ասում է նա,— աշխարհի

[1] **Н. Я. Марр,** *Сборники притч Вардана, с. 204.*

տգրուկն խաւարասեր, որ ծծէ զչարաւս մեղացն և յագի»[1]: Չարգացած ավատական հասարակության մեջ նկատելով նյութական արժեքների կուտակման միտում՝ նա, համաձայն իր նկեղեցական աշխարհընկման, դա համարում է սատանայի ձեռքի գործ:

Ավատատերերի, հոգևորականության, վաճառականների ու վաշխառուների կողմից աշխատավոր ժողովրդի նկատմամբ գործադրվող չահագործման, բռնության ու ճնշումների միջոցով հարստությունների կուտակման գաղափարին Վարդան Այգեկցին վերադառնում է մի քանի անգամ՝ այն արտահայտելով ավելի իրական ու որոշակի:

Կուտակման անհագ ծարավի պարսավանքի հետ է անխզելիորեն կապված ուժեղ, հարուստ մարդկանց կողմից աշխատավորների չահագործման ու կեղեքման մեթոդների ու ձևերի՝ Այգեկցու գրչով արված մերկացումը: Այս կարգի խրատները, քարոզներն ու առակները կրում են «Վասն զրկանացն» անվանումը: Իր քարոզներից մեկում Վարդան Այգեկցին ասում է. «Քանզի մարմնաւոր իշխանքն և դատաւորքն և հոգևոր առաջնորդք, զոր ինչ և առնուն ի մարդկանէ բռնութեամբ կամ նենգութեամբ կամ խաբանաւք, զոր աստուած ճանաչէ, որ զրկանք է, և է աւելի, քան զսահմանել իրաւունքն և զհարկն իւրեանց...»[2]: Այս նույն քարոզի մեջ ասվում է. «Ջանամք և հնարիմք ազգի-ազգի կերակուրք... ժողովեմք ինչս և փարթամանամք և գոչեմ ասելով, թէ իմ սեփական հայրենիք է. գաւառս, քաղաքս, գեւղս, ագարակս, անդաստանս, դրախտս, այգիս, տունս: Եւ ապա ջանամք հափշտակեմք զաղքատացն. և յաւրինեմք տուն ի տունս մեր և անդաստան յանդաստանս մեր և աստուածաբար զաւշաղութեամբ չրջիմք ի մէջ աղքատաց և ահաւոր ձայնիւ դողացուցանեմք զնոսա՝ զրկելով և նեղելով»[3]:

Վ. Այգեկցին ոչ միայն սաստիկ վրդովվում է ազնվականության ու հոգևորականության վրա այն բանի համար, որ նրանք չահագործում ու ճնշում են գյուղացիներին, նա խստորեն դատապարտում է նաև վաճառականներին, վաշխառուներին ու բոլոր նրանց, ովքեր օգտագործում են վարձու աշխատանքը, ովքեր ճնշում են քաղաքային և գյուղական բնակչության ցածր խավերին: Նա երկնային պատիժներով սպառնում է նրանց, ովքեր կտրում ու յուրացնում են օրավարձու աշխատողների ու մշակների աշխատավարձը, ովքեր չահագործում են ու ճնշում աղքատներին ու տնանկներին, ովքեր գինուն և կալին

[1] **Н. Я. Марр,** *Сборники притч Вардана, ч. I, с. 331.*

[2] *Մատենադարան, ձեռ. № 714, էջ 55:*

[3] *Նույն տեղում, էջ 55–56ա:*

ջուր են խառնում[1]: «Դառնագոյն է ախտ զրկանացս և անողորմ,– գրում է Վարդան Այգեկցին,– քանզի է սա չար բազմագլխեան գազան, և ունի ժանիս և մագիլս պատառոտողս, առաւել քան զառւեծու: Եւ սա ծրծէ զարիւն տնանկաց և աղքատաց, և ծածուկ և յայտնի զամենայն մարդ կորուսանէ»[2]: Մերկացնելով ու խրատելով՝ նա առում է. «Ապա դուք տեսէք և ի միտ առէք, թէ առ ձեզ քանի առաւել գործի զրկանք ծածուկ և յայտնի, կամա-ակամա, ի կրպակս և հրապարակս և ի վաճառանոցս, և ի չուկայս, ի կապանս և ի մաքսատունս, և ի կիցս ճանապարհնաց, ի գողութիւնս, և ի կաշառս, ի վաչխս և ի վարձս մշակաց, ի չափս և ի կչիռս, ի ճշդավաճառութիւնս և յայլ անբառ գործս և ի տեղիս»[3]: Վարդանի մի առակի վերջաբանում ասվում է, թէ «հարուստները ծծում են ժողովրդի ուղեղը, և հաճախ է պատահում, որ աղքատն իրեն ճնշող աղետներից մահանում է»[4]:

Այգեկցու առակներից մեկի խրատական մասում կասկածանք է սպրդում այն բանի արդարացիութեան վերաբերեալ, թէ ինչու է Աստված հանդուրժում, որ ոմանք հանգիստ ուտում-խմում են, իսկ ուրիշները քաղցից մեռնում, ինչպես և, քողարկված ձևով, որոշ կասկածանք Սուրբ գրքի «Համբերութեան» սկզբունքի ճշտութեան վերաբերեալ: «Նոյնպէս արդարք և սուրբք ընտրեալք աստուծոյ, յԱդամայ մինչև օր վերջին զարմացեալ ընդ համբերութիւն աստուծոյ,– ասում է նա,– զի դասք մեղաւորացն հանգչին ուտելով և ըմբելով և փափկանան ի յայս կեանքս և դասք սրբոցն սովամահ չարչարին և նեղին մեծաւ տագնապանօք և վշտօք և ամենայն աստուածաչունչ գիրք խրատեն մեզ և ասեն՝ համբերեցէ՛ք, մի՛ նախանձիք ընդ չարս, զի այս կեանքս անհաւատից է և անդարձ մեղօրացն է տեղի հանգրստեան, իսկ սրբոցն և հաւատացելոցն տեղի չարչարանաց և մահուն է, զի այն կեանքն է հանգիստ նոցա»[5]: Այսպիսով, Այգեկցին հավատում է, որ իրական երջանկութիւնը աշխարհում պատկանում է հարուստներին, իսկ աշխատավորների համար այս աշխարհը տանջանքի վայր է:

XIII դարի սկզբին Կիլիկյան Հայաստանում արագացավ գույքային անհավասարութեան զարգացումը և սրվեցին սոցիալական հակասութիւնները, որի հետ կապված ուժեղացավ աշխատավորութեան դժգոհութիւնը ավատական հասարակարգից: Սա իր արտացոլումն է գտել Այգեկցու խրատներում: Ահա մի քաղվածք դրանցից. «... ոմն թագաւոր, և անբաւ գանձս պահէ, և ոմն մուրացիկ և ի սովոյ մեռանիցի, ոմն ծերացեալ դանդաչի, և ոմն մանուկ մեռանի, և կամ յորվայնէ վիժի, ոմն զեղեցկապատկեր, և ոմն չարադէմ և տգեղ ոմն մեղաւոր և լցեալ բարութեամբ, ոմն արդար և կարաւտ ի կերակրոյ և զգեստու, և այլ այսպիսի անդէպ գործ, զոր արարէր աստուած... Եւ ես այս չարեացս մեզ զժոխք սպառնացար, ընդէ՞ր ոչ աւգնես մեզ...»[1]:

Վարդան Այգեկցին նշում է ավատական դարաշրջանին էլ հատուկ թշնամանքն ու պատերազմները ժողովուրդների միջև և տիալական պայքարը չհագործողների ու չհագործվողների միջև տրտնջում է, որ դժվար է նրանց միջև խաղաղութիւն հաստատել: «Այծ և գայլք» առակում նա ասում է. «Ցուցանէ առակս, թէ բնութեամբ ամրացեալ է սիրտ մարդոյն ի թշնամութիւն՝ ի չատելութիւն ազգի առ ազգ և տոհմք առ տոհմ և մարդոյ առ մարդ, նայ դժվարաւ կարէ հաստատել սէր և խաղաղութիւն ի մէջ նոցա, որպէս տեսանեմք ի մեծատուն և չատքատն»[2]: Նշելով ավատական հասարակութեան հակասական երևույթները՝ նա, սակայն, չէր կարողանում հասնել մասնավոր սեփականութեան վրա հիմնված ավատական և ընդհանրապես ամեն մի հասարակութեան պայմաններում սոցիալական հակասութիւնների անհաշտելիութեան ըմբռնմանը:

Վ. Այգեկցու ստեղծագործութիւններում իր արտացոլումն է գտել գյուղացիների և արհեստավորների նյութական ու իրավական դրութեան վատթարացումը՝ խոշոր հողատիրութեան և դրամաապրանքային հարաբերութիւնների հետագա զարգացման պայմաններում՝ կապված քաղաքների աճման հետ: Նրա առակներում մենք գտնում ենք ավատական հարաբերութիւնների արտացոլումը և դրանց քննադատութիւնը, կիլիկյան Հայաստանի ավատական հասարակութեան մեջ տիրող չհագործման ու կամայականութեան վառ պատկերը: Նա տեսնում էր, որ ավատատերերը, հոգևորականութիւնը, վաճառականներն ու վաչխառուները ապրում են աշխատավոր ժողովրդի հաշվին: Որպես քարոզիչ և առակագիր, Այգեկցին խստորեն մերկացնում էր չհագործողներին ու կեղեքիչներին՝ դուրս չգալով, սակայն, քրիստոնեական բարոյախոսութեան շրջանակներից: Աշխա-

[1] Մատենադարան, ձեռ. № 714, էջ 55:

[2] Նույն տեղում, ձեռ. № 8356, էջ 47բ:

[3] Նույն տեղում:

[4] Памятники эпохи Руставели, с. 157.

[5] **Н. Я. Марр,** Сборники притч Вардана, с. 178.

[1] Մատենադարան, ձեռ. № 8356, էջ 99բ:

[2] **Н. Я. Марр,** Сборники притч Вардана, с. 193.

տավորներին նա սփոփում էր դրախտի երանելի կյանքի հույսով, իսկ տիրող դասակարգը, հույս ուներ, որ կսանձվի երկնային դատաստանի սպառնալիքով: Պաշտպանելով դրախտի և դժոխքի գոյության գաղափարը՝ նա ձգտում էր պահպանել սոցիալական աշխարհը ավատական հասարակության մեջ: Սա է նրա աշխարհայեցողության թույլ կողմը: Ընդհակառակը, նրա առակներում ժողովրդական զանգվածների բողոքի ձայնն է հնչում հոգատերերի ու վաճառականների կողմից նրանց չհագործման ու կեղեքման դեմ:

Ավատական կարգերի քննադատությունը Վարդան Այգեկցու ստեղծագործության ու գործունեության դրական գիծն է: Նրա առակները, խրատական զրույցներն ու քարոզները հարուստ նյութ են պարունակում ավատական հարաբերությունների լուսաբանման համար և վառ պատկերացում են տալիս XII–XIII դարերի կիլիկյան Հայաստանի հասարակական կարգի ու աշխատավոր զանգվածների սոցիալ-իրավական դրության մասին:

Իր առակներն ու այլաբանական զրույցները Այգեկցին վերջացնում էր քրիստոնեական բարոյախոսության կերպարանքով զգեցած խրատներով, բայց իրականում դրանք ուղղված էին ավատական չհագործման ու ճնշման դեմ, դրանք գոյություն ունեցող կարգերի քննադատությունը և աշխարհիկ ու հոգևոր իշխանների մերկացումն էին բովանդակում: Ուստի իզուր չէ, որ նրա առակներից ու զրույցներից շատերը լայն տարածում են գտել ժողովրդական զանգվածների մեջ:

«Վարդանի առակներ» կոչվող ժողովածուներում հանդիպում են նովելատիպ առակներ ու այլաբանական զրույցներ, որոնց մի մասը պատկանում է Վարդան Այգեկցուն, իսկ մյուս մասը այն պատմվածքներն են, որոնք լայնորեն տարածված լինելով ժողովրդի մեջ՝ մշակման են ենթարկվել և ավելի վառ են արտացոլում ժողովրդական զանգվածների բացասական վերաբերմունքը ավատատերերի հանդեպ: Այդպիսի կենցաղային պատմվածքներում, որոնք ձևով ու բովանդակությամբ նման են Բոկաչչոյի «Դեկամերոնի» նովելներին, ռեալիստական գծերով նկարագրվում է վանականների ու քահանաների տգիտությունը, չատակերությունը, չհասիրությունը, գողությունը և այլ արատներ: Նրանց կենցաղն ու բարքերը ցուցադրված են անհրապույր տեսքով, իսկ դա վկայում է այն մասին, որ հոգևորականությունը հարգանք ու հեղինակություն չէր վայելում ժողովրդի մեջ:

Վարդանի ժողովածուի առակներից մեկը, որն, ինչպես երևում է, նրա գրչին չի պատկանում, շատ բնութագրական է այն տեսակետից, թե ժողովուրդն ինչպես է վերաբերվել իշխանավորներին: Այս առակում պատմվում է, որ «այրի կին մի կայր ի նոյն քաղաքի, և իշխանն հարկ պահանջելով նեղեր զնա: Եւ կինն աղօթելով ասէր, թէ՝ Աստուած, զինքն խաղաղութեամբ պահէ:

Գնացին ասացին իշխանին, թէ՝ քո չարիդ համար աղօթք կու առնէ: Եկն ձեռնաւորն և ասէ.

– Ես քեզ լաւ չեմ արարել, դու ինձ համար է՞ր կու աղօթես:

Նա ասաց, թէ՝

– Քո հայրն վատ մարդ էր. ես անիծեցի, նա մեռաւ, դու նստար ի նորա տեղն՝ այլ խիստ չար, կու վաևեմ, թէ մեռանիս, նայ քո որդին այլ խիստ լինի չար»[1]:

Այս առակը վկայում է, որ ավատատերերի ճնշումը սերնդեսերունդ աստկանում էր:

Եկեղեցական գրողների երկերի, քարոզների և առակների տվյալները, որոնք լուսաբանում են ժողովրդական զանգվածների սոցիալական չարժումը, հաստատվում են նաև XIII դարի կեսի օրենքների ժողովածուով՝ Սմբատի «Դատաստանագրքով»[2]: «Դատաստանագրքի» հենց առաջին հոդվածում ասված է, որ «Իշխանքն պարտին զիւրեանց հարկատուացն և հնազանդիցն պահել, որ ամէն մէկն զիր չինածն և կորթեցած հայրենիքն ուննայ և չլինին ի վերայ իրաց պատճառայոյզք ի պիղծն»[3]: «Դատաստանագրքի» 60-րդ հոդվածում կա մի հրահանգ, որ «ոչ որ չպետք է նախանձով նայի նրանց վրա, որոնք սոցիալական դրությամբ բարձր են կանգնած, այլ պետք է նայել ցածր կանգնածներին ու փառք տալ Աստծուն»[4]: Ըստ 19-րդ հոդվածի թագավորին կամ իշխանին վիրավորողը կամ անհնազանդություն ցուցաբերողը ենթարկվում է բանտարգելության, իսկ հատուկ դեպքերում՝ արտաքսման, ունեցվածքի բռնագրավումով[5]:

Ավատական հասարակության հետագա զարգացումը, հատկապես դրամաապրանքային հարաբերությունների ընդլայնումը XII–XIII դարերում, հերետիկոսական զաղափարների աչխուժացում առաջացրեց Միջագետքի, Սիրիայի ու Կիլիկիայի

[1] **Н. Я. Марр,** *Сборники притч Вардана, ч. II, с. 328.*

[2] **Սմբատի** «Դատաստանագրքի» մասին մանրամասն տե՛ս Հետագայում:

[3] **J. Karst,** *Sembad'scher Kodex., erster Band, Strassb., 1905, s. 23.*

[4] Նույն տեղում, էջ 82:

[5] Նույն տեղում, էջ 37:

Հայկական եկեղեցին այդ ժամանակ իր ձեռքում կենտրոնացրած լինելով վիճխարի հարստություն, գլխավորապես խոշոր կալվածքներ, դաժանորեն չահագործում էր աշխատավորությանը: Բարձրագույն հոգևորականությունը օգտվելով երկրի կառավարման գործում իր ունեցած մեծ ազդեցությունից՝ ուժեղացրեց իր աշխարհիկ և եկեղեցական իշխանությունը ժողովրդական զանգվածների վրա: Կիլիկյան Հայաստանի եկեղեցական գրողները նոանդուն կերպով մշակում էին ու պրոպագանդում ավատական դասակարգերի գաղափարախոսություն՝ աստվածաբանություն: Եկեղեցին ինքը, լինելով ավատական հաստատություն, արդարացնում ու պաշտպանում էր ավատատերերի իշխանությունն ու սեփականությունը:

Ֆ. Էնգելսը իր «Գյուղացիական պատերազմը Գերմանիայում» նշանավոր աշխատության մեջ խորապես բացահայտել է այն երևույթը, որ այդ դարի կեսերին ավատական հասարակության չահագործվող ու կեղեքվող դասակարգերի ու խավերի սոցիալական պայքարը ընդդեմ աշխարհիկ ու հոգևոր ավատատերերի ընդունում էր հերետիկոսության ձև, որ հակաավատական հասարակական չարժումները հանդես էին գալիս կրոնական քաղանթով: «... Եկեղեցին,— ասում է նա,— հանդիսանում էր գոյություն ունեցող ավատական կարգի բարձրագույն ընդհանրացումն ու սանկցիան: Պարզ է, որ այդ պայմաններում համընդհանուր հարձակումները ֆեոդալիզմի վրա, և ամենից առաջ հարձակումները եկեղեցու վրա, բոլոր հեղափոխական, սոցիալական ու քաղաքական ուսմունքները պետք է որ իրենցից ներկայացնեին միաժամանակ նաև որպես աստվածաբանական հերետիկոսություններ»[1]:

Հերետիկոսական գաղափարներն ու չարժումները Կիլիկյան Հայաստանում տարածվում էին ինչպես քաղաքացիների մեջ, այնպես էլ գյուղացիների: Կիլիկյան Հայաստանի XII–XIII դարերի տարբեր բնույթի ստեղծագործություններում տվյալներ կան քաղաքի ու գյուղի աշխատավորության ոչ միայն կենցաղի ու տրամադրության փոփոխությունների մասին, ոչ միայն եկեղեցու և հոգևորականության հանդեպ ժողովրդի բացասական վերաբերմունքի փաստեր, այլև նյութեր եկեղեցու և ավատատերերի համար վտանգավոր գաղափարների տարածման մասին, գաղափարների, որոնք խախտում էին հավատը սուրբ գրոց նկատմամբ, որոնք ժխտում էին եկեղեցական ծեսերն ու դոգմանները: Եկեղեցական գրողներն ու քարոզիչները Աստծուն, Քրիստոսին ու սրբերին հայհոյողներին խստորեն

[1] **К. Маркс и Ф. Энгельс,** Соч., т. VIII, с. 128.

պարսավում են, պարսավում են այն մարդկանց, ովքեր կասկածում են դրախտի ու դժոխքի իրական լինելը, և նրանց, ովքեր տրտնջում են Աստծո դեմ, սոցիալական անհավասարության դեմ, այն բանի դեմ, որ ժողովուրդը չարչարվում է, իսկ հոգևորականությունն ու աղնվականությունը խժռում են նրա աշխատանքի պտուղները:

Հայտնի է, որ ժողովրդական զանգվածների սոցիալական պայքարը կրոնական չարժումների ձևով Առաջավոր Ասիայում ծագել է դեռևս հին ժամանակներում: Դա համարյա չի դադարել նաև այն ժամանակ, երբ Մերձավոր Արևելքի քաղաքները մերթ ընդ մերթ անկում էին ապրում: Քաղաքների ծաղկման ու դրամապրանքային հարաբերությունների զարգացման ժամանակաշրջանում դասակարգային պայքարն ուժեղանում էր, և դրա հետ կապված՝ հերետիկոսությունը, որպես սոցիալական հակասությունների գաղափարախոսական արտահայտություն, նորանում էր, կերպարանափոխվում, հարստանում նոր գաղափարներով՝ ըստ տեղի, ժամանակի և այլ պատմական հանգամանքների, տարածվում այս կամ այն երկրում:

Բաբեկի ղեկավարությամբ գյուղացիների խոշոր ապստամբությունը Ատրպատականում ընդդեմ սեփական և արաբ ավատատերերի տիրապետության, պավլիկյանների ու թոնդրակեցիների սոցիալական չարժումները, որոնք հանդիսանում էին Հայաստանի գյուղացիության ապստամբություն ընդդեմ հայ ու բյուզանդացի ավատատերերի, ընդդեմ Բյուզանդիայի քաղաքական ճնշման, հագեցված էին հերետիկոսական գաղափարախոսությամբ, ավատական կարգերը մերժող գաղափարներով:

XII դարի Կիլիկիայում և հարևան երկրներում հերետիկոսները գաղափարական կապեր ունեին Առաջավոր Ասիայի և առանձնապես Հայաստանի հերետիկոսների հետ: Այս դարաշրջանի սոցիալական հակասությունները և դասակարգային պայքարը Միջագետքի, Սիրիայի ու Կիլիկիայի հայ բնակչության միջավայրում իրենց դրսևորումն են գտել զանազան աղանդների տարածման ձևով: Գյուղացիները, քաղաքացիները, դժգոհ ավատատերերի և եկեղեցու տընտեսական ու քաղաքական ճնշումից, տոգորվում էին հերետիկոսական, հակաավատական ու հակաեկեղեցական գաղափարներով:

Ցավոք սրտի մենք չունենք ինչպես Մեծ Հայքի, այնպես էլ Կիլիկյան Հայաստանի աղանդների գրական աղբյուրներ, որոնք ստեղծված լիներին դրանց կողմնակիցների ձեռքով: Այն, ինչ մեզ հայտնի է նրանց մասին, պահպանված է եկեղեցու ներկայացուցիչների բանավիճական երկերում, նրանց, ովքեր պայքարելով հերետիկոսական

ուսմունքների դեմ, հերքելով դրանք՝ ստիպված են եղել գրել հերետիկոսությունների գաղափարական բովանդակության մասին՝ սովորաբար խեղաթյուրելով այդ ուսմունքները:

Հայոց եկեղեցու խոշոր ներկայացուցիչ, XII դարի կաթողիկոս Ներսես Շնորհալու երկերում կան հետաքրքիր տվյալներ Առաջավոր Ասիայի ժողովուրդների, այդ թվում և Միջագետքի, Սիրիայի ու Կիլիկիայի հայերի մեջ զանազան աղանդավորական ուսմունքների աշխուժացման մասին, որոնք այնքան վտանգավոր են եղել, որ հայոց եկեղեցին սկսել է առանդուն կերպով պայքարել դրանց դեմ: Ներսես Շնորհալին Մեծ Հայքի, Կիլիկիայի և հայաբնակ այլ երկրների եպիսկոպոսներին ուղղած ճառում այսպես է բնութագրել եկեղեցական և աշխարհիկ գործերի վիճակը XII դարի կեսերին. «... տարագիր գոլով ի հայրենի ժառանգութենանցն՝ յաշխարհս յայս փշաբեր... նորին աղագաւ անվաւեր և փոփոխական ամենայն ինչ եղև եթէ աստուածային գործոյն տեսութիւնս, և եթէ նիւթականիս աշխարհի իշխանութիւն»[1]: Այս խոսքերը վկայում են եկեղեցու ուսմունքին հակառակ գաղափարների և ավատատերերի դեմ ուղղված սոցիալական չարժումների տարածման մասին, ինչը հաստատվում է նույն հեղինակի այլ հաղորդումներով նույնպես:

Հասարակական հարաբերությունների և գաղափարների փոփոխականության և անկայունության պատճառը եղել է ոչ թե տարագրությունը, ինչպես ենթադրում է Ներսես Շնորհալին, այլ քաղաքների և ապրանքային հարաբերությունների զարգացումը: Այս գործընթացն սկսվել էր Հայաստանում դեռ մինչև Ներսես Շնորհալին: Պատահական չէ, որ աղանդավորությունը հայ տարագիրների մեջ, ինչպես Ներսես Շնորհալին է վկայում, կապված է եղել Թոնդրակեցիների աղանդավորական չարժման հետ: Դա պայմանավորված է եղել ինչպես Միջագետքի ու Կիլիկիայի համանման հասարակական պայմաններով, այնպես էլ այն բանով, որ տարագրված հայ գյուղացիները դեռ հայրենիքում վարակված են եղել հերետիկոսությամբ: Այս նույն ճառում Ներսես Շնորհալին վչտացած ասում է, թե չար ժամանակներ են եկել, թե «աթոռս սուրբ դրդուեալ ի հաստատութենէ, ի զանազան և յանպատչաճ վայրս տարբերի ընդ հարկաւ և երկիւղիւ այլասոից, և անօգնական և աննուէր ի մերասերաց...»[2]:

[1] **Ներսես Շնորհալի,** Նամականի, Վենետիկ, 1838, էջ 7:

[2] Նույն տեղում, էջ 22:

Ներսես Շնորհալին հավաքված եպիսկոպոսներին խոստանում էր, որ կպայքարի հերձվածողների դեմ, եկեղեցական ծեսերն ու եկեղեցական դավանանքը հայհոյողների դեմ[1]:

Դեռ կաթողիկոս ընտրվելուց առաջ Ներսես Շնորհալին, իր եղբոր՝ Գրիգորիս կաթողիկոսի հանձնարարությամբ հյուսիսարևմտյան Միջագետքի հայ հոգևորականությանը նամակ-ուղերձ է գրում, որի մեջ հերքում է այն հերետիկոսությունները, որոնք ծագել էին Կիլիկյան Հայաստանին սահմանակից Համայք (Ցամայք) մարզում և տիրել քահանաներից չատերի մտքերին[2]:

Հերետիկոսությունների աչխուժացումը XII դարի կեսերին Կիլիկիայի սահմանների մոտ վտանգավոր էր ոչ միայն եկեղեցու համար, այլև՝ ավատատերերի: Դա երևում է նրանից, որ աղանդավորությունների տարածման մասին կաթողիկոսին տեղեկացնում է Թլկուրանի իշխան Առյուծը և խնդրում ներգործության միջոցներ ձեռք առնել հերետիկոսների դեմ:

Միջագետքի, Սիրիայի ու Կիլիկիայի հայ բնակչության՝ գյուղացիների ու քաղաքացիների մեջ տարածվել էր կասկածանք, թե դժոխք գոյություն ունի, որը հետո վերածվել-դարձել էր դժոխքի և ահեղ դատաստանի իրողության նկատմամբ ուղղակի անհավատության: Ն. Շնորհալին վտանգավոր հերձվածողություն է համարում դրախտի գոյության ժխտումը. «Եւ այս ոչ թէ նորոգ ի դոցանէ ասի,— ասում է նա,— այլ կանխագոյն ասացեալ եղև ի հերձուածողաց ոմանց ի դոցին վարդապետաց, մանաւանդ թէ ի չարեաց վարդապետէն սատանայէ չարժեալ նոքօք և դոքա խօսին զայդպիսիսդ, որով կամի զամենայն աներեւոյթ արարածս աստուծոյ յոչ էութիւն տալ կարծել մարդկան, դի յորժամ յայս հաւանեցուցանէ, այնուհետև զրոլորիցն արարչէն ըստ անզգամին տայ խորհել, որ ասէ ի սրտին, թէ չիք աստուած, և սուտ զամենայն և առասպելս տա վարկանել... սուտ և անգոյ է ըստ նոցա տապանն Նոյի»[3]: Վերջացնելով, Ներսես Շնորհալին հոգևորականությանը խորհուրդ է տալիս, թե ինչպես պետք է մարդկանց խրատել, որ գոյություն ունի դրախտ: «Եւ արդ որպէս այսոքիկ ամենեքեան զոր ասացաք, ունին ստուգապէս գոլացութիւն առանց կեղակարծութեան և են օրինակք այլոց իրաց,— գրում է նա,— ըստ այսմ հաւատացի և դրախտն լինել... իսկ որք ասեն՝ ոչ գոլ դրախտ աստուծոյ և ոչ Ադամ յառաջագոյն ի նմա, ոչ լինի արժանի մտից

[1] Տե՛ս **Ներսես Շնորհալի,** Նամականի, էջ 26:

[2] Տե՛ս նույնի Թուղթ ընդհանրական, 1865, էջ 333:

[3] Նույն տեղում, էջ 333:

նորա, այլ փակեսցի ընդդեմ նոցա դուռն դրախտին... բաղում ունեաք ասել հաստատութիւն բանիս ի մէնջ և ի հարցն վկայութեանց»[1]:

Գրիգոր Մագիստրոսի նամակներից հայտնի է, որ նա XI դարի 50-ական թվականներին, լինելով հարավային Հայաստանի և Միջագետքի բյուզանդական մի քանի մարզերի կառավարիչ, «հրով ու սրով» հալածում էր Թոնդրակեցիներին, որոնք մերժում էին եկեղեցական ծեսերը, խորհուրդները, եկեղեցական կազմակերպությունը, անդրշիրիմյան կյանքը, մեղքերի դիմաց հատուցումը և դատապարտում էին ավատական հասարակարգը: Նրանց մի մասը հալածանքներից փրկվելու համար Հայաստանից գաղթել է հյուսիսային Միջագետք, ինչի մասին ուղղակի վկայություն կա նրա նամակներից մեկում[2]:

Մասնավորապես հետաքրքրություն են ներկայացնում Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ի մեջ եղած տեղեկությունները, թե Թոնդրակեցիների ուսմունքը տարածվել էր ոչ միայն բնակչության ցածր խավերի մեջ, այլև դրանով վարակված է եղել նաև քահանաների մի մասը: «Լուաք դարձեալ, զի ոմանք ի մոլար քահանայից զծածկեալ գարչահոտ պղծութիւն անիծելոյն Սմբատայ Թոնդրակեցւոյ վերստին չարժեն ի կործանումն լսողացն, ասելով, եթէ եկեղեցի ոչ չիննեալ է ի մարդկանէ, այլ մեք միայն, և Մաշտոցն գիրք և որ ի նմա կարգեալքն են խաչ օրհնել և եկեղեցի և այլքն ոչ են ընդունելի»[3]: Հերքելով Թոնդրակեցիների ուսմունքը՝ Ներսես Շնորհալին հարձակվում է նրանց վրա այն բանի համար, որ նրանք մերժում են եկեղեցական կազմակերպության աստվածային դրվածքը, խաչի պաշտամունքը, մեռոնի օգտագործումը: Նա հատկապես պաշտպանում է եկեղեցական ծեսերն ու խորհուրդները և հրահանգում, որ պետք է բացատրել աստվածային չնորհի և սուրբ խորհուրդների՝ մկրտության, հաղորդության, քրիստոնեական հուղարկավորության և այլնի հերքման ողջ վնասակարությունը[4]:

Թեև հայ բարձր հոգևորականությանը այս անգամ էլ հաջողվել է հանգեցնել վտանգավոր հակաեկեղեցական շարժման հրդեհը, որը հարություն էր տալիս Թոնդրակեցիների գաղափարներին և որը միայն ձևով էր կրոնական, իսկ բովանդակությամբ սոցիալական ժողովրդական շարժում էր, գլխավորապես գյուղացիական շարժում՝

[1] **Ներսես Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, էջ 366–372:

[2] **Գր. Մագիստրոսի** Թղթերը, Ալ., 1910, էջ 50:

[3] **Ներսես Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, էջ 372:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 376:

ուղղված ավատական կարգերի դեմ, այնուամենայնիվ, Թոնդրակեցիների ուսմունքի առանձին տարրեր չարունակել են գոյություն ունենալ Կիլիկիայում հաջորդ դարերում ևս, ինչի մասին վկայում են Նկեղեցական քարոզները: Չի բացառված այն հնարավորությունը, որ խաչակիրները Թոնդրակյան աղանդի որոշ գաղափարներ տարել են Եվրոպա:

Իր նամակը Ներսես Շնորհալին վերջացնում է կամքի ազատության սկզբունքի ազդարարությամբ՝ պնդելով, որ «մարդս իշխան է բուն հոգւոյ իւրոյ կամաց, զի զոր ինչ կամի առնէ, եթէ բարի և եթէ չար. և ոչ ի բարին բռնադատի յաստուածոյ և ոչ ի չարէն ակամայ ձգի ի չարիս. այլ յոր կողմն հակամիտէ յօժարութիւն կամաց իւրոց և սիրէ, զայն գործէ, եթէ զբարին և եթէ զչարն, վասն որոյ և վարձս ընդ բարեացն և տանջանս ընդ չարեացն ընդունելոց է»[1]: Նա իր հոտին համոզում է «ի բաց դարձուսջիք լսելիս ձեր ի թիւր և մոլար բանիցն անիմաստիցն և մոլորելոցն»[2]: Կամքի ազատության սկզբունքը եկեղեցական հեղինակների կողմից առաջ էր քաշվում Ներսես Շնորհալուց առաջ էլ, նրանից հետո էլ, որպեսզի հիմնավորվեր մեղքերի հատուցումը, որպեսզի ժողովրդական զանգվածներին վախեցնեին ահեղ դատաստանով և նրանց հետու պահեին դասակարգային պայքարից: Սոցիալական հակասությունների սրման կապակցությամբ բոլոր եկեղեցական գործիչները XII դարում պայքարում են դրախտի ու դժոխքի գոյությունը հերքող գաղափարների դեմ: Քարոզիչները առանձին խստությամբ նախատում են նրանց, ովքեր հերքում են Ահեղ դատաստանը: Այդպես է վարվել նաև Վարդան Այգեկցին, բայց ի տարբերություն ուրիշ գործիչների, նա դժոխքի տանջանքներով սպառնում էր հատկապես նրանց, ովքեր չահագործում ու ճնշում էին ժողովրդին:

Նա չարագույն ու ծանրագույն մեղք էր համարում ընչաքաղցությունը, վաշխառությունը, յուրացումը, չահագործումը, չորթումը, աշխատավոր ժողովրդի հողերի և ունեցվածքի զավթումը: «Դարձեալ և զայս ի միտ առէք, որդեակք իմ,— ասում է նա,— ... զի այն է պրկանացն ապաշխարութիւն, որ ուստի առ գնա, կրկին յետս դարձուցանէ գնա... և եթէ զոք պրկելոց եմ ես, չորեքպատկեայ հատուցանեմ նմա»[3]: Քառգներից մեկում նա ասում է. «Դարձեալ և զայս գիտացիք. զի սէր և գանգութիւն ոսկւոյ և արծաթոյ եւթնապատիկ

[1] Տե՛ս **Ներսես Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, էջ 399:

[2] Նույն տեղում, էջ 400:

[3] Մատենադարան, ձեռ. 714, էջ 60–61ա:

բռնաւորագոյն է, քան սէր կանանց և զգանկութիւն չնութեան»[1]: Նրա կարծիքով սոցիալական պայքարի և հերձվածողության պատճառը աշխատավորության ճնշումն ու շահագործումն է, ինչը երևում է հետևյալ տողերից. «Եւ է որ ի վաստակոց և ի հայրենեաց, ժողովեն ինչս բազումս և պահեն դիւացն խաբանաւք՝ ակն ունելով սովոյ կամ գերութենէ, աղքատութենէ կամ ծերութեան: Եւ այսպէս բարկացուցանեն զաստուած, և զմարդիկ գայթագղեցուցանեն»: Սակայն անդրադառնալով բռնության ու շահագործումը՝ Այգեկցին միաժամանակ դատապարտում է աշխատավորների պայքարը և մարտնչում հանուն շահագործողների և շահագործվողների հաշտեցման: Ամեն ոք,— ասում է նա,— ով որ խռովարար է, սիրում է խռովություն գցել և մարդկանց դրդում է խառնակության ու պայքարի, սատանայի ծնունդ է, քանզի անսպառ է բարիքն աշխարհի[2]: Աշխատավորներին նա համբերության ու հնազանդության կոչ է անում: Պայքարելով հերձվածողական գաղափարների դեմ՝ նա առանդով հարձակվում է նրանց վրա, ովքեր հերքում են դժոխքի գոյությունը: Վարդան Այգեկցին իր քարոզով ամենից հաճախ դիմում է քաղաքացիներին: Մոտեցեք,— ասում է նա,— դուք՝ ամեն կարգի արհեստավորներ ու վաճառականներ, և լսեցեք Ահեղ դատաստանի մասին[3]: Իր քարոզներից մեկում Վարդան Այգեկցին գրում է. «Ապա ժամանակս վերջին է և սկսան երևել կարապետք նեռինն անիծեալ աւձին, որք ասեն, թէ չիք մեղաց հատուցումն, և չիք յարութիւն կամ դժոխք. գան և այլք և ասեն, թէ աստուած ողորմած է և ոչ դատէ զոք»[4]: Նրա կարծիքով այդ հայացքից է բխում այն, որ մարդիկ չարիք են գործում՝ երկյուղ չունենալով, թե իրենց սպասում է դժոխքի փոխհատուցումը: Շարունակելով իր քարոզը՝ նա ասում է. «Բայց, ո՛վ որդեկք իմ, դուք մի՛ կարծեք, թէ ես ուրախ եմ և կամիմ, զի հաստատուն լիցի սպառնալիք դժոխոցն, զի մարդ որ կամի, թէ մեղաւոր անկցի ի դժոխս, նա ինքն անձամբ իւրով լցցէ զդժոխս և ինքն միայն կացցէ ի տանջանս նորա և ոչ այլ ոք: Քանզի և ես ծնունդ եմ ախտի ի սառնացեալ ժամանակիս և եմ անգեալ ի ներքոյ չար և չարաւարեր անօրէնն գործոց, և քան զմնծամեծ մեղաւորս առաւել պէտս ունիմ ողորմութեան աստծոյ և քակմանն դժոխոց»[5]: Քարոզն ավարտում է այն եղրահանգմամբ, թե

[1] Մատենադարան, ձեռ. 714, էջ 61բ:

[2] Նույն տեղում, ձեռ. № 8356:

[3] Նույն տեղում, ձեռ. № 714, էջ 61:

[4] Նույն տեղում, ձեռ. № 8356:

[5] Նույն տեղում, էջ 105:

«բազմապատիկ բարի և չհաւատ է մեզ սպառնալիք դժոխոցն, քան դխոստումն արքայութեան և քան զաւետիք անճառ հանգստեան և ցնծութեան»[1]:

Վարդան Այգեկցու վերոհիշյալ քարոզի մեջ որոշ ակնարկ կա այն բանի, որ գուցեև դժոխք գոյություն էլ չունի, բայց եթե այն իրականում չկա էլ, ապա պետք է ստեղծել երևակայությամբ: Նրա համոզմամբ մարդկանց գիտակցության մեջ պետք է լինի դժոխքի տանջանքների, Ահեղ դատաստանի վառ պատկերացումը: Դա նա համարում է մի միջոց, որը կարգավորում է սոցիալական հարաբերությունները, պահպանում աշխարհը: Այսպիսով, սոցիալական հարցի լուծումը նա տեղափոխում է երկինք: Հերձվածողությունը և աստվածանարգումը պայմանավորված են եղել սոցիալական անհավասարության ուժեղացմամբ: Ժողովրդի մեջ կասկած է ծագում՝ արդարացի՞ է արդյոք Աստծու կողմից, որ ոմանք հարուստ են, իսկ մյուսները՝ աղքատ: Ձևռագրերից մեկում ասվում է. «Վասն է՞ր չարքն հանգիստ կան և մնծատունք են և փափկականն միշտ և յուրախութեան են հանապազ: Եւ մեք քրիստոնէայք աղքատ և ի գերութեան և կարօտ ամենայն բարեաց...»[2]:

«Աղոթք աղքատի» առակում արտացոլված է ժողովրդի համոզմունքն այն մասին, թե Աստված ոչ միայն չի լսում աղքատ մարդկանց աղոթքները և նրանց չի պաշտպանում ուժեղների բռնությունից, այլև վերջիններիս թույլատրում է խլել նրանց վերջին իսկ բարիքները: Բերենք այդ առակն ամբողջությամբ: «Այր մի աղքատ երթայր ի ճանապարհ: Եւ հանդիպեցաւ սմա հիւանդութիւն ի ճանապարհին: Եւ աղաչէր զաստուած պատրաստել զգրաստ մի՝ տանել զնա ի չէնն: Եւ ահա գայ ոմն չարաբարոյ, հարկանէ զնա և ասէ.

— Յոտն կաց և չալկն զբուռակս այս, զի ոչ կարէ գալ ընդ մօրն իւրոյ:

Եւ յարեալ և լայր դառնապէս, զի չկարէր յոտն կալ: Եւ այրն չար ոչ դադարեր ի հարկանելոյ:

Եւ նա ասէ.

— Վայ ինձ, աստուած իմ, փոխանակ թեթևացուցանելոյ՝ ծանրացուցեր ի վերայ իմ վիշտս:

Առակս ցուցանէ, թէ աղքատք տառապին վասն չքաւորութեան և խնդրեն ինչք և ստացուածք յաստուծոյ, և զինչ որ ունեն՝ զայն այլ կու կողոպտեն և թալանեն թագաւորք և բռնաւորքն»[3]:

[1] Մատենադարան, ձեռ. № 8356, էջ 105:

[2] Նույն տեղում, ձեռ. № 2189, էջ 229:

[3] **Н. Я. Марр,** *Сборники притч Вардана*, ч. II, с. 196.

Աչխատավորության մեջ հակակրոնական գաղափարների տարածման մասին, ժողովրդի մեջ այն գիտակցության ծագման մասին, որ ավետարանի բովանդակությունը կեղծ է, վկայում է «Աղքատ, երեց և ավետարան» առակ-նովելը, որտեղ պատմվում է, թե աղքատը եկավ մի գյուղ և գնաց մտավ փլփլված ժամատունը, անձրև եկավ, և աղքատը թրջվեց և դողում էր ցրտից ու հետն էլ սաստիկ քաղցած: Այդ ժամանակ եկեղեցի մտավ քահանան և բացելով ավետարանը՝ սկսեց կարդալ այն տեղը, ուր ասվում է. «Օտար էի, և ժողովեցէք զիս, մերկ էի, և զգեցուցէք զիս, քաղցեալ էի, և կերակրեցէք զիս»: Եվ թեև քահանան հետո տեսավ էլ աղքատին, սակայն ապաստան չտվեց նրան: Այնժամ աղքատը մտքում ասաց, թե այն ամենը, ինչ ասվում է ավետարանում, կեղծ է, և վերցրեց ավետարանը, նետեց մի ջրափոս ու վրևից էլ մի քար գցեց վրան[1]: Կրոնական անտարբերության մասին խոսվում է «Քահանայ և անցորդք» փոքրիկ նովելում[2]:

Քաղաքների զարգացման հետ միջնադարյան մտահայեցողության մեջ ճեղքվածք է առաջանում: Ասկետիզմին ու միստիցիզմին զգալի հարված է հասցվում: Ուժեղանում է հակումը դեպի աչխարհիկ զվարճությունները, ուրախություններն ու խաղերը: Բուն Հայաստանի և Կիլիկիայի եկեղեցական գործիչները դժգոհ էին, որ ժողովուրդը անտարբեր է դարձել եկեղեցական ժամասացության հանդեպ, կրոնական քարոզների հանդեպ, որ ժողովուրդը գնում է ոչ թե եկեղեցի, այլ՝ հրապարակ, և գինի է սիրում ու գուսանների երգեր, խաղեր, կատակներ և խեղկատակների ու ակրոբատների ներկայացումներ[3]: Հատուկ քարոզներում խստորեն դատապարտվում էին այս և սրանց նման զվարճալիքները: Եկեղեցին սպառնում էր, որ նրանց, ովքեր հանձնվում են «սատանայական զվարճություններին», սպասում է անդրչիրիմյան պատիժ, և կոչ էր անում ազոթել ու ապաչխարել:

«Ուխտ միակեցի ընդ սատանայի» առակ-նովելում պատմվում է, որ սատանայի հետ դաչինք կնքած ճգնավորին սատանայի ներչընչմամբ եպիսկոպոսը նչանակում է եկեղեցական, իսկ հետո՝ արեղա, իսկ հետո էլ, երբ եպիսկոպոսը մեռնում է, թագավորը և մեծամեծները եպիսկոպոսի աստիճան են չնորհում նրան: Դրա փոխարեն կատարելով սատանայի խնդրանքը՝ եպիսկոպոսի աստիճան ստացած

[1] **Н. Я. Марр,** Сборники притч Вардана, ч. II, с. 264.

[2] Նույն տեղում, էջ 265:

[3] Մատենադարան, ձեռ. 8356, էջ 212բ:

ճգնավորը իր սրեմի տակ թաքցնում է չորսլարանի մի երաժչտական գործիք և երբ ժամասացության ժամանակ մատով խփում է մեկ լարին, եկեղեցին հանկարծ լցվում է բաղում թմբուկների թնդյունով և ջութակների նվագով: Առակի վերջարանն այսպիսին է. եպիսկոպոսը մահվան է դատապարտվում: Իսկ բարոյականն այսպիսին է. չարքի հետ կապի մեջ մտնող ամեն մեկին այս նույն բանն է սպասվում[1]: Այս պատմվածքում մեզ հետաքրքրում է ոչ թե բարոյախոսությունը և ոչ էլ նույնիսկ այն, որ սատանայի հետ դաչինքի մեջ է մտնում հոգևոր կոչման տեր անձը, այլ այն, որ եպիսկոպոսն ու թագավորը գործում են սատանայի ցուցումով: Նովելում մենք տեսնում ենք այն սոցիալական իրականության արտացոլումը, որտեղ փողի միջոցով կարելի էր եպիսկոպոսի աստիճան ձեռք բերել: Աղանդները տարածված են եղել ոչ միայն գյուղացիների և արհեստավորների մեջ, այլև՝ հարուստ քաղաքացիների:

Քաղաքային բնակչությունը, այդ թվում և հարուստ քաղաքացիներից չատերը հակվում էին այս կամ այն աղանդի կողմը: Սա հայտնի է Սմբատի «Դատաստանագրքի» 64-րդ հոդվածից: Այնտեղ ասվում է, որ ով Աստծուն «հայհոյէ և անարգէ... ի տեղն քարկոծեն զինքն. և այս է դատաստանն նոցա, թէ հարուստ լինայ և թէ տառապեալ»[2]: Այս նույն հոդվածում ասվում է. «Զի թէ որ զՔրիստոս անարգէ, ... եկեղեցին քննէ և զոր պարտն է ի դարպասն (թագավորական դատարանը – Գ. Մ.) տայ, որ դատէ»[3]: Այսպիսով, աստվածանարգումն ու հերձվածողությունը խստորեն պատժվում էին:

Կիլիկյան հայկական պետության հակասվատական հասարակական խավերի՝ բովանդակությամբ սոցիալական, ձևով կրոնական չարժումները պայմանավորված են եղել քաղաքների ու դրամական հարաբերությունների զարգացման դարաչրջանի ավատական հարաբերություններով, աչխատավորության չահագործմամբ և դասակարգային պայքարի սրմամբ: Սակայն սոցիալական հակասությունները և դասակարգային պայքարը Կիլիկյան Հայաստանում չընդունեցին գյուղացիների կամ արհեստավորների ապըստամբության ձև:

Լևոն II-ի թագավորության չրջանը (1187–1219) եղել է Կիլիկյան Հայաստանի պետության ծաղկման ժամանակաչրջանը: Այդ ծաղկումը նախապատրաստված էր ինչպես XII դարում երկրի տնտե-

[1] Տե՛ս **Н. Я. Марр,** Сборники притч Вардана, ч. II, с. 252:

[2] **Դատաստանագիրք** Սմբատ իշխանի, Էջմիածին, 1918, էջ 43–44:

[3] Նույն տեղում, էջ 44:

սական ու հասարակական-քաղաքական զարգացմամբ, այնպես էլ Բյուզանդիայի դեմ, սելջուկների ու խաչակիրների դեմ մղված հաջող պայքարով, որը հանգեցրեց անկախ պետության ստեղծմանը:

Իրրև արդյունք նախընթաց ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանի պատմական զարգացման՝ XII դարի վերջին արդեն ուննք պետության վիճակի հետևյալ պատկերը. տարածքի ընդլայնում ու բնակչության աճ, երկրի տնտեսական վերելք, ներքին և արտաքին առևտրի աճ, ավատական հարաբերությունների հետագա զարգացում, քաղաքական և ռազմական հզորության ուժեղացում, Կիլիկիայի հայկական պետության միջազգային դրության ամրապնդում՝ Բյուզանդիայի, խաչակիրների ու սելջուկների դեմ մղված պատերազմներում ունեցած ռազմական հաջողությունների հետևանքով, հասարակական ու միջազգային հարաբերությունների սրում: Այս ամենը նպաստում էին Կիլիկիայի հայկական պետության հասարակական-քաղաքական կարգի ձևավորմանը:

Այդ հասարակարգի ձևավորումը իր առանձնահատկություններով նախապատրաստված էր նախընթաց ժամանակաշրջանի Կիլիկիայի պատմության ամբողջ ընթացքով, այստեղ X–XI դարերում հայերի տարաբնակեցմամբ, հայ իշխանների կողմից ընդարձակ հողերի գրավմամբ և, հատկապես, XII դարում տեղի ունեցած հասարակական զարգացմամբ: Լևոն II-ի օրոք ավատական հարաբերությունները իրենց հետագա զարգացումն ստացան, և հիմնականում ձևավորվեցին Կիլիկյան Հայաստանի ավատական համակարգն ու պետական կարգը: Կիլիկիայի հայկական պետության հասարակական հարաբերությունների ու քաղաքական կառուցվածքի զարգացման հետ կապված հարցերը պարզաբանելիս անհրաժեշտ է ուշադրություն առնել Հայաստանի նախընթաց դարաշրջանի ավատական կարգերը, խոշոր հողատիրության աճն ու Կիլիկիայում գյուղացիության ճորտացման գործընթացը, ինչպես և X–XII դարերում ավատատիրության զարգացումը Բյուզանդիայում, Երուսաղեմի թագավորության ավատական համակարգը և ավատական հարաբերությունները արաբական Արևելքում, քանզի, նախ՝ հայ ավատատերերն իրենց հետ Կիլիկիա բերեցին Հայաստանի ավատական կարգերի ավանդույթներն ու տարրերը, երկրորդ՝ նրանք հաստատվեցին մի երկրում, որը X դարի կեսից մինչև XI դարի 70-ական թվերը բյուզանդական պրովինցիա էր եղել, երրորդ՝ Կիլիկիայի հայ իշխանները ռազմաքաղաքական կապեր էին պահպանում խաչակիր պետությունների հետ՝ միաժամանակ չփումներ ունենալով արաբական ու սելջուկյան պետությունների հետ:

Մինչև Կիլիկիայում հայկական պետության կազմավորումը, այստեղ արդեն տեղի էր ունենում ավատատիրության զարգացման գործընթաց, որն ուժեղացել էր X դարում:

XII–XIII դարերում Կիլիկիայի հայկական պետության հասարակական-քաղաքական կարգը, դրա ավատական համակարգը և պետական մարմինները հիմնականում զարգանում ու կազմավորվում էին հայկական ավանդույթների ուժգին ազդեցության տակ՝ որպես բուն Հայաստանի ավատական կարգերի տարրերի հետագա զարգացում տեղի, ժամանակի ու հանգամանքների նոր պայմաններում: Հայ խոշոր հողատերերը, որոնք, հաճախ իրենց վասալների հետ միասին, XI դարում արտագաղթում էին Հայաստանից, Կիլիկիա էին բերում Բագրատունիների դարաշրջանում կազմակերպված ավատական հարաբերությունների ավանդույթներն ու սովորույթները:

Բարձրագույն իշխանության ներկայացուցիչը՝ Կիլիկիայի հայկական պետության սուվերենը, XII դարի վերջից անվանվում էր հայկական ծագում ունեցող տերմինով՝ «թագաւոր»: Լևոն II, Հեթում I և հաջորդ թագավորները հայերեն կամ լատիներեն գրված իրենց փաստաթղթերն ստորագրելիս օգտագործում էին «թագաւոր հայոց» կամ «թագաւոր Հայաստանի» տիտղոսով: Հենց այս տերմինով են Կիլիկյան Հայաստանի թագավորներն անվանվում նաև XII–XIV դարերի տարեգրություններում ու վիմագիր արձանագրություններում:

Հետաքրքիր է նշել, որ XIII դարի պարսկական «Սելջուկ-Նամե»-ում, ինչպես և պարսկերեն այլ երկերում, նույնպես և արաբերեն աղբյուրներում «թագաւոր» տերմինը ոչ միայն նշանակել է Կիլիկիայի հայոց թագաւոր, այլև ընդհանրապես քրիստոնյա թագավոր: «Թագաւոր» բառից է ծագել և գործածության մեջ մտել Եվրոպայում, գլխավորապես Իտալիայում «թաքոլին» բառը (Արևմուտքում այսպես էր կոչվում XIII–XIV դարերի հայկական ոսկե դրամը, որը հատում էին Կիլիկիայի հայ թագավորները):

Կիլիկյան Հայաստանում XIII դարի երկրորդ քառորդի սկզբին վերականգնվեց Արշակունիների դարաշրջանում գոյություն ունեցած բարձրագույն պալատական պաշտոնը՝ «թագադիրը», որը ժառանգաբար վարել են Բագրատունիները:

Հեթում I թագավորի (1226–1270) հայր Կոստանդինը (Լամբրոնի իշխանական տոհմից), լինելով Լևոն II-ի դստեր՝ մանկահասակ Զաբելի խնամակալը (գանձապահը), 1226 թ. հեղաշրջում կատարեց՝ բռնությամբ նրան ամուսնացնելով իր որդու հետ, որի հետևանքով

հաստատեց Հեթումյանների իշխանությունը[1]: Որպեսզի իշխանությունը իր տոհմի վրա հաստատել տալու գործում ապահովեր իր աղգականի (նույնպես Կոստանդին անունով) աջակցությունը, Կոստանդինը նրան վերադարձրեց դեռ Լևոն II-ի կողմից Հեթումյանների տոհմից խլված Լամբրոնի տոհմական ամրոցը և նրան դարձրեց իր որդի Հեթումի թագադիր: Այսպես է օգտագործվել Հայաստանի ավատական կարգի վաղեմի ավանդույթը, ինչի մասին վկայում է Կիրակոս Գանձակեցին[2]:

Իրրև ապացույց այն բանի, որ այդ բարձրագույն պալատական պաշտոնը գոյություն է ունեցել նաև հաջորդ ժամանակներում, կարող է լինել «1288 թվի ճաշոցի» (Հայսմավուրք) առաջին էջին եղած կերպարանքների պատկերումը: Հայկական մանրանկարչության մասնագետ Լ. Ա. Դուրնովան գտնելով, որ ձեռագիր մանրանկարի կերպարանքները թագավորն ու չորս պալատական պաշտոնյաներն են, որոնցից թագավորին ամենամոտիկ կանգնածը արդարացիորեն համարում է թագադիրի պատկերը, որը թագը մատուցում է թագավորին[3]:

«Պարոն» տերմինի հետ և դրան հավասար օգտագործվում էին նաև «տեր» և «իշխան» տերմինները: Պատմագիր Սմբատը կազմել է Լևոն II-ի վասալների ցուցակը, որոնցից յուրաքանչյուրին անվանում է «պարոն» և միաժամանակ «տեր» տերմինով, ցուցակը վերնագրելով այսպես. «Իշխանք, որք էին բերդատէրք»[4]:

Կիլիկիայի հայկական պետության մեջ հայկական տարրի վիթխարի կարևորության մասին է վկայում նաև այն, որ այնտեղ կիրառվում էր օրենքների մի ժողովածու, որը կազմված էր Հեթում թագավորի եղբայր Սմբատի կողմից՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» (ստեղծված 1184 թ. Հայաստանում) որոշ վերամշակման հիման վրա[5]:

Կիլիկիայի հայկական պետության ավատական կարգերի վրա Բյուզանդիայի որոշ ազդեցությունը պայմանավորված է եղել նրանով, որ Լևոնային Կիլիկիան մինչև XI դարի վերջը, իսկ Դաշտային Կիլիկիան ընդհատումներով՝ մինչև XII դարի վերջը, մտնում էին Բյուզանդական կայսրության կազմի մեջ:

[1] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 271:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Լ. Ա. Дурнова,** «Чашоц», 1288 г., Изв. АН. АРМ. ССР, об. и., 1946, № 4, с. 66:

[4] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 100:

[5] Տե՛ս **Ս. Սամուելյան,** Հայ իրավունքի պատմություն, I, 1939, էջ 93:

Հայ խոշոր ավատատերերը XI–XII դարերում բյուզանդական կայսրերից ստանում էին սեբաստիոսի տիտղոս: Թորոս II-ը Մանուիլ կայսրից ստացել էր սեբաստիոսի տիտղոս: Նույնիսկ XIII դարում Կիլիկիայի իշխանների շարքում մենք որոշ թվով հույների ենք հանդիպում: Նրանց նկատմամբ գործածվում է «կիր» (սըր) տերմինը, որը նշանակում է սենյոր[1]: Բյուզանդական ազդեցության չնորհիվ Կիլիկիայում սկսեցին կիրառել «դուքս», «պրոքսիմոս» բառերը. երկրորդ բառը հաստատուն կերպով մնաց պետական ապարատում: Փաստաթղթերից երևում է, որ ֆինանսների կառավարիչը անվանվում էր ոչ թե հայկական կամ եվրոպական տերմինով, այլ հենց հունականով[2]:

XII դարի վերջի ավատական դասակարգի գաղափարախոս Ներսես Լամբրոնացին՝ Լևոն II-ի զինակիցը, այն ժամանակաշրջանում, երբ տեղի էին ունենում ավատական համակարգի, վարչակարգի ու դատարանի վերափոխումներ, իրավակարգի գաղափարների ու նորմաների փոխառման համար դիմում էր Բյուզանդիային: Իր նամակներից մեկում Ներսես Լամբրոնացին դիմելով Լևոն II-ին՝ ընդգծում է, որ նա կառավարում է որպես ինքնակալ[3]: «Ինքնակալ» տերմինը հունարեն «ավտոկրատոր» բառի թարգմանությունն է: Օգտագործելով այդ տերմինը և իշխանության սկզբունքը՝ Ներսես Լամբրոնացին դրանով իսկ ուզում էր բարձրացնել թագավորի վարկը ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, և հիմնավորել նրա անսահմանափակ իշխանությունը: Դրանով նա արտահայտել է և այն պատմական փաստը, որ Լևոն II-ը եղել է անկախ թագավոր, լիակատար սուվերեն իշխանությամբ օժտված:

Թագավորական ուժեղ իշխանության սկզբունքի հիմնավորման անհրաժեշտությունը պայմանավորված էր ընդհանրապես ավատատերերի դասակարգի շահերով ավատատիրության ծաղկման, քաղաքների ու միջազգային առևտրի աճի և սոցիալական հակասությունների ու արտաքին-քաղաքական հարաբերությունների սրման ժամանակաշրջանում:

Արևմտաևրոպական ազդեցությունն սկսեց թափանցել Կիլիկիա դեռևս XII դարում, երբ Առաջին խաչակրաց արշավանքից սկսած, քաղաքական փոխհարաբերություններ հաստատվեցին հայ իշխանների, գլխավորապես Ռուբինյանների և խաչակիրների միջև (նրանց

[1] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 102:

[2] Տե՛ս **Ներսէսի Լամբրոնացւոյ** Առենարանութիւն, Վենետիկ, 1838, էջ 235:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 203:

համատեղ ռազմական ելույթներն ընդդեմ Բյուզանդիայի ու սելջուկների): Հաստատվեցին նաև ազգակցական կապեր մի կողմից՝ Ռուբինյանների, մյուս կողմից՝ Անտիոքի իշխանների ու Երուսաղեմի թագավորների միջև:

Ֆրանկների, ինչպես Արևելքում սովորաբար անվանում էին խաչակիրներին ու եվրոպացիներին, ազդեցությունը Կիլիկիայում հ՛լ ավելի ուժեղացավ XII դարի վերջին, Լևոն II-ի թագավորության օրոք: Դրան նպաստում էր նախ՝ Եվրոպայի հետ առևտրական կապերի ընդլայնումը, երկրորդ՝ Լևոն II-ի ռազմաքաղաքական համագործակցությունը խաչակիրների պետությունների և տաճարականների ու հովհաննականների ասպետական ուխտերի հետ և, երրորդ՝ նրա դիվանագիտական հարաբերությունները պապականության ու արևմտյան կայսրությունների հետ: Արևմտաևրոպական ազդեցությունը ամենից առաջ թափանցում էր թագավորական պալատ, բարձր խավի կենցաղ և մասամբ միայն արտահայտվում էր Կիլիկիայի հայկական պետության քաղաքական կառուցվածքում, որը, սակայն, եվրոպական տիտղոսների ու կոչումների արտաքին թաղանթի տակ պահպանում էր իր ինքնակա բնույթը:

Ամենից առաջ գործածության մեջ մտավ «բարոն» բառը՝ հայկական արտասանությամբ դառնալով «պարոն»: Պարոն էին կոչում բոլոր ազդեցիկ իշխաններին: Պատմիչ Սմբատի մոտ բերված է խոշոր իշխանների ցուցակը, որտեղ նա ամեն մեկին առանձին-առանձին անվանում է պարոն: Պարոնները խոշոր սենյորներ էին՝ թագավորի անմիջական վասալները: «Պարոնություն» տերմինը այս հեղինակը գործածում է «իշխանապետություն» իմաստով: «Պարոն» բառը հաստատուն կերպով մտավ հայոց լեզվի մեջ և հետագայում սկսեց նշանակել «տեր»:

Ֆրանկներից փոխառվել են բարձր պաշտոնյաների ու պալատականների անվանումներն ու տիտղոսները: Զորքերի գլխավոր հրամանատարին անվանում էին «գունդստաբլ» (կոննետաբլ): Այս բառի հետ միասին աղբյուրներում հանդիպում է նույնանշանակ հայերեն «սպարապետ» տերմինը, որը գոյություն ուներ հայ Արշակունիների դարաշրջանից: Բարձր պալատական աստիճանների տիտղոսները հայերեն հնչում էին այսպես. սինջալ (սենեշալ), մարաջախտ (մարշալ), ջանցլեր (կանցլեր):

Խաչակիրների ասպետական կենցաղի ազդեցությունը Կիլիկիայի հայ ավատական վերնախավի վրա, գլխավորապես Լևոն II-ի արքունիքի վրա, այնուամենայնիվ չատ խորը չի եղել: Եվրոպական տիտ-

դոսներն ու սովորույթները չփոխեցին Կիլիկիայի հայկական պետության ավատական համակարգի ինքնակա էությունը, մի պետություն, որը հիմնականում չարունակությունն ու հետագա զարգացումն էր Մեծ Հայքում կազմավորված ավատական կարգերի:

Վիկտոր Լանգլուան պարզաբանելով ֆրանկների ազդեցությունը Կիլիկիայի հայկական պետության վրա՝ վերջիվերջո ստիպված է եղել հետևյալ խոստովանությունն անել. «Զնայած այդ կեղծ արտաքինին, ուշադիր ուսումնասիրությունը չի հապաղում ի հայտ բերել, որ Հայաստանի (Կիլիկիայի – Գ. Մ.) էությունը միշտ մնացել է նույնը՝ իր արևելյան դրոշմով, ինչը չէր կարող ջնջվել մինչև Սիսի պետության գոյության վերջը»[1]:

Զնայած արևմտյան ազդեցությունը XIII դարի երկրորդ կեսից հայ վերնախավի միջավայրում ուժեղանում էր, այնուամենայնիվ Կիլիկիայի հայկական պետությունը մինչև վերջ պահպանեց իր յուրահատուկ կերպարանքը: Պետական լեզուն հայերենն էր: Կիլիկեցի հայերը սերտ շփման մեջ լինելով բուն Հայաստանի հայերի հետ՝ ստեղծեցին խոշոր մշակութային արժեքներ գրականության ու արվեստի ասպարեզներում, իրենց լուման ներդնելով հայ մշակույթի գանձարանում:

Լևոն II-ի և Հեթում I-ի օրոք կազմավորվեց Կիլիկիայի հայկական պետության ավատական հասարակական և պետական կարգը:

XII դարի վերջին և XIII դարի սկզբին ավելի կազմակերպված ավատական պետության (քան եղել էր Կիլիկիայի հայկական իշխանապետությունը) ստեղծումը պայմանավորված էր մի կողմից՝ ավատական հարաբերությունների զարգացմամբ, քաղաքների, արհեստային արդյունաբերության, ներքին ու արտաքին առևտրի աճով, որի հետևանքով բարդացան ու սրվեցին սոցիալական հակասությունները, և մյուս կողմից՝ Կիլիկիայի տարածքը արտաքին ինչնամուռնձգություններից պաշտպանելու անհրաժեշտությամբ ու այն ընդլայնելու ձգտումով: Երկրի պաշտպանությունը և նոր հողերի նվաճումը, այսինքն Կիլիկյան Հայաստանի պաշտպանական ու նվաճողական պատերազմները հարևանների դեմ տեղի էին ունենում միջդպային բարդ իրադրության մեջ, խաչակրաց արշավանքների և Հանուն Միջերկրական ծովի արևելյան ափի մղվող սուր պայքարի դարաշրջանում, մի պայքար, որի ընթացքում նրա մրցակիցներն էին Բյուզանդիան, խաչակիրները, սելջուկները և Սիրիայի ու Եգիպտոսի արաբական պետությունները:

[1] V. Langlois, Essai historigue et critigue... p. 45.

Ե. Դյուրիեն[1] և Լանգլուան[2], ուսումնասիրելով Կիլիկյան Հայաստանի ավատական կարգը, գլխավոր ուշադրություն դարձրել են արևմտաեվրոպական ավատական համակարգի քաղաքական կառուցվածքի վրա: Նրանք թերագնահատել են հայկական տարրի դերը, հայկական ավատական համակարգի ավանդույթի դերը Կիլիկիայի ավատական հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման մեջ XII–XIII դարերում:

Կիլիկիայի հայկական պետության ավատական կարգն ուսումնասիրելիս Վ. Լանգլուան քաղաքական կարգը կտրում է հասարակական հարաբերություններից: Նա ավատական սեփականության զարգացումը չի դիտում որպես մանր հողատերերի հաշվին, սրանց սնանկացման ու կողոպտման հետևանքով տեղի ունեցած գործընթաց: Նա ուշադրություն չի դարձնում գյուղացիների տնտեսական ու քաղաքական ստրկացման վրա: Նրան բնավ չեն հետաքրքրում ավատատերերի ու գյուղացիների դասային հարաբերությունները: Նա միայն հետազոտում և լուսաբանում է թագավորի և ավատատերերի, այսինքն՝ սյուզերենի ու վասալի փոխհարաբերությունները: Ըստ նրա ֆեոդալիստական ըմբռնման ավատատիրությունը Կիլիկիայի հայկական պետության մեջ հաստատվել է Լևոն II-ի կառավարման տարիներին և հենց միայն նրա գործունեության շնորհիվ: Այս հարցի առթիվ Լանգլուան գրում է. «Ընդունելով Կիլիկիայի կառավարումը, որից Ռուբեն III-ը հրաժարվել էր՝ հրաժարվելով գահից, սրա եղբայր Լևոն II-ը բերդերի ու քաղաքների կառավարիչներին հաստատեց ավատական տիրապետության իրենց իրավունքների մեջ և նրանց տվեց նաև իր սուվերենիտետին ենթակա հողային ավատներից: Սա Կիլիկիայի ավատական համակարգի սկիզբն է եղել»[3]: Լանգլուան չի քննում ավատական հողատիրության և ավատական հարաբերությունների ծագման ու զարգացման գործընթացը Կիլիկիայի հայկական պետության մեջ, Կիլիկիայի ֆեոդալիզմի ուսումնասիրումը նա սկսում է Լևոն II-ից՝ ավատական հասարակարգի սկիզբը համարելով ամրոցներին տիրելու պարոնների իրավունքների հաստատման ակտերը, բայց աղբյուրներում չկան կոնկրետ վկայություններ, թե Լևոն II-ը կատարել է այդպիսի ակտեր:

[1] Տե՛ս **Dulaurier,** *Edute sur l'organisation politigue, ... (journalasiat., 1861):*

[2] Տե՛ս **V. Langlois,** նշված աշխատությունը, տե՛ս Записки Ак. наук, серия VII, т. III, СПб., 1860:

[3] **V. Langlois,** *Essai historigue et critigue... p. 45.*

Մենք արդեն քննարկել ենք ավատական հարաբերությունների զարգացումը Կիլիկիայում X դարի վերջից մինչև XI դարի սկիզբը, այսինքն մինչև Լևոն II-ի կառավարման սկիզբը: Իհարկե, ավատական հարաբերություններ Կիլիկիայում առաջ էլ էին եղել, բայց դրանց հետագա զարգացումը տեղի է ունեցել հիմնականում XI–XII դարերում:

Սակայն սխալ կլինի գրոյի հավասարեցնել Լևոն II-ի գործունեությունը, նրա դերը ավատական համակարգի կազմակերպման գործում: Նա քաղաքական իշխանությունն ու եկեղեցական կազմակերպությունը օգտագործեց ավատական կարգի ամրապնդման համար, բայց այդ ամրապնդումը նախապատրաստված էր ավատական հարաբերությունների նախընթաց զարգացմամբ: Լևոն II-ի կառավարման տարիներին տեղի էր ունենում ֆեոդալիզմի հետագա զարգացում ու ձևավորում, ինչին նպաստում էին հաջող պատերազմները: XII դարի վերջին նշանակալիորեն ընդլայնվեց Կիլիկիայի հայկական պետության տարածքը: Վերնախավը, որը մասնակցել էր սելջուկների ու խաչակիրների դեմ մղվող պատերազմներին, և հոգևորականությունը (վանքերը), որոնք փառաբանում էին Լևոն II-ի զինական ուժը, ստացան խոշոր առանձնաշնորհումներ՝ հողեր, կալվածքներ, բերդեր: Հողերի զգալի մասը մնաց թագավորի տրամադրության տակ՝ կազմելով նրա հայրենական կալվածքը:

Լևոն II-ը ավելի հաստատուն կարգ սահմանեց հողատիրության բնագավառում և թագավորական իշխանության ու ավատատերերի միջև փոխհարաբերություններում, ինչը նպաստեց ավատական ռազմաքաղաքական համակարգի ձևավորմանը:

Ավատական հարաբերությունների զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ Կիլիկիայի հայկական պետության մեջ XII–XIII դարերում, մասնավորապես գյուղացիների սնանկացման, խոշոր հողատերերի կողմից սրանց հողակտորների զավթման ու նվաճված տարածքների հաշվին աղնվականության ու եկեղեցուն արված հողային նվիրատվությունների հետևանքով, հողերը կենտրոնանում էին ավատատերերի ու բարձր հոգևորականության (վանքերի) ձեռքին: Տարեգրությունները, օրենքների ժողովածուները, առակներն ու մերկացնող քարոզները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու խոշոր հողատիրության և գյուղացիների ճորտացման մասին վերոհիշյալ ժամանակաշրջանում: Այդ աղբյուրները վկայում են հատկապես այն մասին, որ XII–XIII դարերում խոշոր հողատիրության ու վանքերի զարգացման հետ վատացավ գյուղացիների սո-

ցիալ-տնտեսական և իրավական դրությունը, ուժեղացավ նրանց չահագործումը և կախվածությունը ավատատերերից:

Կիլիկյան Հայաստանի թագավորը երկրի ամենախոշոր ավատատերն էր: Ռուբինյանների հայրենական կալվածքը ընդգրկում էր ընդարձակ տարածություններ: Բացի պետության քաղաքական կենտրոնից՝ Սիս քաղաքից ու դրա չրջանից, Ռուբինյանների անմիջական իշխանության տակ էին Կիլիկիայի հետևյալ խոշոր քաղաքները՝ Տարսոնը, Անարզաբան, Ադանան, Մամեստիան, Այասը և այլն[1]: Ի հաստատումն ասվածի՝ մենք կվկայակոչենք այն փաստը, որ այս քաղաքները չեն հիշատակվում Լևոն II-ի վասալ ավատատերերի տիրույթների ցուցակում, որտեղ թվարկվում են բոլոր նշանավոր սենյորները՝ բերդերի տերերը:

Կիրակոս Գանձակեցու և Սմբատի մոտ հետաքրքիր տեղեկություններ ենք գտնում Լամբրոնի իշխանների կալվածքները, նրանց տոհմական ամրոցը՝ Լամբրոնը, որին նրանք տիրել էին հարյուր տարուց ավելի, և դրա գավառը թագավորի հայրենական տիրույթների մեջ անցնելու մասին:

Սմբատը իր «Պատմության» մեջ հետևյալ կերպ է պատմում այն, թե Լևոն II-ը ինչպես է զավթել Հեթումյանների հայրենական կալվածքը: Լևոնը «ունէր ի մտի գչարսն Լամբրոնեցւոց, զոր անցուցեալ էին ընդ հայս կիլիկեցւոց և ընդ Ռուբինեանց. զէտ երբեմն պարոն Օշին՝ հայր Հեթմոյ, առաջնորդ եղև թուրքին, տարաւ ի յԱտանոյ գերի աղջիկս հինգ հարիւր կոյս. թող զայլ առ և զաւար: Խորհէր իմաստութեամբ փետել զթևս նոցա»[2]: Այնուհետև խոսվում է Հեթումյանների հետ բարեկամանալու Լևոնի առաջարկի մասին, որն ընդունվել է Հեթումի կողմից: «Եւ եկին Հեթմանք ամենայն տամբ և զաւակովք ի Տարսուս,— գրում է Սմբատը: — Յայնժամ թագաւորն Լևոն կալաւ զնոսա, և էառ զԼամբրուն առանց կռուոյ. եղ զՀեթումն ի բանդ ժամանակ մի, և ապա եհան նոտ նմա չատ գեղերք»[3]: Հեթումյանների տոհմական ամրոց Լամբրոնն անցավ արքայական տիրույթների մեջ, իսկ Հեթումն ինքը իր օրերն ավարտեց Դրազարկի վանքում:

Այն մասին, որ Լամբրոնը արքունի հողերի չարքն է անցել, վկայում է նաև XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին: «Արքայն Լևոն մինչ կենդանի էր,— գրում է նա,— էր բերդ մի ի նորա յաչխարհին

1 Թեև Մամեստիան Լևոն II-ր տվել էր իշխան Հեթում Մամիկոնյանին, իսկ Սելևկիան՝ նրա եղբայր Շահնշահին, սակայն չուտով այս քաղաքները ետ են խլվել:

2 **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 102–103:

3 Նույն տեղում, էջ 103:

յոյժ անառիկ, որում անունն էր Լամբրոն: Եւ իշխանն, որ տիրէր բերդին, ապստամբեաց ի նմանէ, որում անունն էր Հեթում: Եւ նա բաղում անգամ ջանացեալ ոչ կարէր նուաճել զապստամբն: Ապա յետոյ խորամանկութեամբ... ըմբռնեալ զնա և զորդիս նորա չարչարեալ, ետուն ի նա զամրոցն: Եւ նորա առեալ՝ եղ ի նմա զմայր իւր զտիկնանց տիկինն և զրեաց նզովս՝ «Ոչ ևս տալ զնա (Լամբրոնը — Գ. Մ.) այլ ումեք իշխանին, բայց միայն արքունի լիցի»[1]:

XIII դարի ժամանակագրություններում տեղեկություններ են պահպանվել Լևոն II-ի առատաձեռն չնորհումների մասին, որի չնորհիվ նա արժանացել է եկեղեցական ու ավատական չրջաններին պատկանող ժամանակակից պատմիչների գովասանքին: Սմբատ պատմիչը գրում է. «Զի էր արքայն Լևոն իմաստուն և հանճարեղ... և առատասիրտ ի հեռաւորս և ի մերձաւորս, ի մեծամեծս և ի փոքունս, ի վաներս և յեկեղեցիս»[2]: Իհարկե, այս առատաձեռն հողային ընծայաբերումները ավատատերերին ու վանքերին Լևոն II-ը կատարում էր գյուղացիների վիճակի վատթարացման հաչվին: Միքայել Ասորու «Ժամանակագրության» մեջ չատ ավելի պարզ է արտահայտված, թե ինչ առատաձեռնությամբ էր նա հողեր բաչխում վանքերին: Նա «բաղմացոյց,— ասում է պատմիչը,— զարդիւնս աստուածապաչտութեան, եկից վանորաիւք և անապատաւորօք զաչխարհս իւր, և չինուածօք եկեղեցւ. զման ազնիւ և զպարարտութիւն երկրի իւրոյ տալով նոցա և նուիրելով աստուծոյ արձանագրութեամբ և կտակօք անլոյծ»[3]: Ոչ պակաս խոշոր հողային չնորհումներ Լևոն II-ն անում էր հօգուտ աչխարհիկ ավատատերերի: Բերենք այդ մասին Սմբատի «Պատմությունից» հետևյալ տողերը. «Եւ ուր իմասցաւ, թէ գոյ այր իմաստուն և գիտուն, և աչող ի գործ կամ ի գինուորութիւն, կամ ի խօսս և ի պատասխանիս, յղէր և կոչէր խոստմամբ, և հանգուցանէր պարգևօք»[4]:

Լևոն II-ի կողմից ավատատերերին ու վանքերին հողերի ընծայման մասին այն ժամանակվա տարեգրություններից բերված վերոհիչյալ տվյալները որոչակիորեն ցույց են տալիս խոշոր ավատական հողատիրության ու վասալական համակարգի հետագա զարգացումը Կիլիկիայի հայկական պետության մեջ XII դարի վերջերին և XIII դարի սկզբին:

1 **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 271:

2 **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 99:

3 **Միքայել Ասորի,** Ժամանակագրութիւն, էջ 404:

4 **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 99:

Հոգային առանձնաշնորհումները նոր վասալներին Լևոն II-ը, հավանաբար, կատարում էր իրրև ցմահ նվիրատվություն (բենեֆիցիա), ցմահ պարգև՝ թագավորին ռազմական օգնություն ցույց տալու համար: Նման ենթադրության հիմք է տալիս այն հանգամանքը, որ որոշ բերդեր և տիրույթներ մի ավատատիրոջ ձեռքից մյուսին էին անցնում, ինչը նույնպես կարելի է բացատրել անցանկալի կամ անհնազանդ վասալների ձեռքից հողը խլելու թագավորի իրավունքով: Բենեֆիցիաներից բացի Կիլիկիայի հայ ավատատերերի ձեռքին կենտրոնացված են եղել մեծ թվով ժառանգական հոգային տիրույթներ: Այսպիսով, Լևոն II-ի ժամանակ աչքառիկ հողատիրությունը ձեռք է բերել վասալայնային համակարգին ներհատուկ բնույթ:

XII դարի վերջին աչքառիկ ավատատերերի խոշոր հողատիրության զարգացումը այնպիսի չափերի հասավ, որ կազմավորվեց ավատատիրական ազդեցիկ ազնվականություն: Մեզ հարկ է եղել մի քանի անգամ վկայակոչել Սմբատի «Պատմության» մեջ եղած Լևոն II-ի վասալների ցուցակը, որոնք 1198 թ. ներկա էին թագավորի թագադրման հանդեսին: Ժամանակագրի ասելով՝ «յօծումն թագաւորին Լեւոնի էին եպիսկոպոսունք և իշխանք չատք. զոր քիչ մի գրեցի աստ՝ առ ի գիտելոյ կարդացողացդ»[1]:

Լևոն II թագավորի վասալների ցուցակը արժեքավոր պատմական փաստաթուղթ է, քանի որ այդտեղ թվարկվում են ոչ միայն նրևելի իշխանների անունները, այլև Կիլիկիայի բերդ-ամրոցները: Այս ցուցակում հիշատակված իշխաններից կամ նրանց սերունդներից շատերը հանդես են գալիս Կիլիկյան Հայաստանի պատմական իրադարձություններում, ուստի մենք նպատակահարմար ենք համարում տալ այդ ցուցակը, որն ունի այսպիսի վերնագիր. «Իշխանք, որ էին բերդատերք, այս են՝ պարոն Ատան՝ տէր Պաղրու, պարոն Օստէր՝ տէր Ճկերոյն, պարոն Արևգոյն՝ տէր Համուսին, պարոն Սմբատ՝ տէր Սարուանդիքարին, պարոն Լևոն՝ տէր Հարունոյն, պարոն Սիրուհի՝ տէր Սմանկալին, պարոն Հերի՝ տէր Անէոյն, պարոն Ապղարիպ գունդըստասլն՝ տէր Կուտոյ, պարոն Պաղտին՝ տէր Ընկուղատին, պարոն Ստեփ՝ տէր Թոռնկային, պարոն Լևոն՝ տէր Բերդուսին, պարոն Գրիգոր՝ իւր որդին, պարոն Աչոտ՝ տէր Կանչոյն, պարոն Ապղարիպ՝ տէր Ֆոռնոսայ, պարոն Մանկրի՝ տէր Կապնուն, պարոն Կոստանդին՝ տէր Ճանճոյն, պարոն Ճոփրի՝ տէր Շոդականն, պարոն Սիմոն՝ տէր Մադոտնաչին, պարոն Սիմոն՝ տէր Ամուտոյն, պարոն Ռուպերտ՝ տէր Թլին, պարոն Թորոս՝ տէր Թլպասոյ, պարոն Վասիլ մարաջախտն՝

[1] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 99:

տէր Վաներոյ, պարոն Գէորգ՝ տէր Բարձր բերդոյ, պարոն Կոստանդին՝ տէր Կոպիտառոյ, պարոն Աժառոս՝ տէր Մոլիվոնին, պարոն Սմբատ՝ տէր Կուկկայ, պարոն Հեթում՝ տէր Լամբրոնին, պարոն Շահհննշահ՝ տէր Լուլվարոյ, պարոն Բարուրան՝ տէր Պապառու, պարոն Վասակ՝ տէր Բերդկան, պարոն Տիգրան՝ տէր Պռականոյ, պարոն Կոստան՝ տէր Սիլիֆկոյ, պարոն Ճոսլին՝ տէր Սինիտոյ, պարոն Սիմոն՝ տէր Կոռիկոսի, պարոն Ամանոս՝ տէր Ատառոսոյ, պարոն Նիկոփոս՝ տէր Վահկիսոյ, պարոն Խոսաֆ՝ տէր Լաւազատոյ, պարոն Հալկամ՝ տէր Լամօսոյ և Ժամնկանն և Անամօռին, պարոն Հերի Սևաստոս՝ տէր Նոր բերդոյ, պարոն Պաղտին՝ տէր Անդուչծին և Կապուային, պարոն Կեռսակ՝ տէր Մաղվոյ և Սիկոյ, պարոն Մենսայլ՝ տէր Մանովչատին և Ալարոյ, պարոն Կոստանդին՝ տէր Լագռաւենոյ, պարոն Նիկոփոս՝ իւր եղբայրն, պարոն Կեռվարդ՝ տէրն Ազօլին և Կոտրատոյ»[1]:

Այսպիսով, այս ցուցակում, որի մեջ մտել են Կիլիկիայի ոչ բոլոր խոշոր ավատատերերը, թվարկվում են 45 խոշոր ավատատերեր, թագավորի վասալներ, և նշված է, թե ինչի տերեր են: Նրանք միաժամանակ որակվում են չորս տերմիններով՝ իշխան, տէր, պարոն, բերդատէր:

Ավատատիրական այս վերնախավը, որը տեր էր բերդերի և ընդարձակ հողային տիրույթների, չէր կարող միանգամից հայտնվել: Սա ստեղծվել էր խոշոր հողատիրության զարգացման հետ միասին՝ XI–XII դարերի ընթացքում: Ավատատերերի ճնշող մեծամասնությունը եղել են հայերը, և նրանց միայն մեկ քառորդ մասն են հույները ու ֆրանկները: Ավատատերերի ցուցակը միաժամանակ տալիս է Կիլիկիայի 45 ամրացված բնակավայրերի՝ ամրոցների, բերդերի, ամրացված քաղաքների ցանկը:

Կիլիկիայի լեռնային բնույթը, հատկապես սահմանամերձ մարզերի, դրա պատմական պայմաններն ու ռազմավարական նշանակությունը պայմանավորել էին այդ համեմատաբար ոչ մեծ երկրում սահմանի երկայնքով մեկ տեղադրված բազմաթիվ ամրոցները:

Կիլիկիայի ամենախոշոր ավատատերերը եղել են բերդատերերը: Բերդատերերի չարքում, մանավանդ սահմանամերձ բերդերի, եղել են խոշոր, ազդեցիկ ավատատերեր, որոնք երկրի կառավարման և ֆինանսական մարզում օժտված են եղել ավելի մեծ իրավունքներով, քան մյուսները: Առանձնապես աչքի են ընկել չորս մեծ ավատատերեր՝ տերերն այն սահմանամերձ մարզերի, որոնց կենտրոնները մաք-

[1] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 100–102:

սատներ են ունեցել: Նրանք իրավունք էին ձեռք բերել մաքս վերցնելու, ինչպես մեզ արդեն հայտնի է 1215 թվի արտոնությունից, որ Լևոն II-ր չեղարկել էր ջենովացիներին:

Այս չորս ավատատերերից մեկը եղել է Օտտո դը Տարարիան: Նրա տիրույթը վերոհիշյալ ցուցակում չի նշված: Ենթադրում են, թե նա տիրում էր մի բերդի, Պորտելլա (Դուռն Կիլիկիո) լեռնանցքի մոտ, որտեղ մաքսատուն կար: Երկրորդը եղել է Ադամ դը Գաստոնը՝ Սիրիային սահմանամերձ Գաստիմ կամ Գաստոն բերդի տերը: Նա ազդեցիկ մի սենյոր էր, սկզբում՝ սենեչալ, ապա՝ պետության խնամակալ: Նա նույնպես ընդարձակ գավառի տեր էր Իսավրիայում: Երրորդը մարշալ Վահրամն է եղել՝ տերը Կոռիկոս ծովային ամրոցի ու նավահանգստի, որտեղ մաքսատուն կար: Չորրորդը եղել է պարոն Լևոնը՝ Կապանի լեռնանցքի նույնանուն ամրոցի տերը, որտեղ նույնպես մաքսատուն կար[1]:

1215 թվականի արտոնության մեջ այդ խոչորագույն ավատատերերի կողմից մաքս գանձելու իրավունքների հիշատակումից հետո, մաքս, որից ջենովացիները Լևոն II-ի տված արտոնության համաձայն ազատվում էին Կիլիկիայի ամբողջ տարածքում, իսկույն ևեթ հաջորդում է հետաքրքիր մի վերապահություն. «Սակայն եթե այդ հողերից որևէ մեկը կամ վերոհիշյալ լեռնանցքներից ինչ-որ մեկը վերադարձվեն մեր կամ մեր ժառանգորդների իշխանությանը, ցանկանում ենք, որ դուք այնտեղ ունենաք նույնպիսի արտոնություն, ինչպես ձեզ տրված է մեր մնացած տարածքում»[2]:

Լևոն II-ի հաջորդների կողմից ջենովացիներին կամ վենետիկցիներին չեղարկված արտոնություններից երևում է, որ հաջորդ ժամանակներում իրենց օգտին մաքս գանձելու՝ վերոհիշյալ ավատատերերի իրավունքը ոչնչացվել է, և Կոռիկոսի, Կապանի, Պորտելլայի և այլ տեղերի մաքսատներն արդեն պատկանել են թագավորին:

Հայտնի է, որ Երուսաղեմի թագավորությունում էլ թագավորի իշխանությունը նույնպես թույլ է եղել, ինչպես, օրինակ՝ Ֆրանսիայում XI–XII դարերում: Կիլիկյան Հայաստանում թագավորի իշխանությունը ավատատերերի նկատմամբ եղել է շատ ավելի ուժեղ ու հեղինակավոր, քան սյուզերենի իշխանությունը վասալի նկատմամբ նույն դարաշրջանի Արևմտյան Եվրոպայում:

Լևոն II-ը, որպես սյուզերեն և հզոր թագավոր, ոչ միայն իրավունք ուներ նաև վերցնելու հողատիրույթները անհնազանդ կամ իրեն անհաճո ավատատերերից, այլև կարողացել է իրապես գործադրել սյուզերենի իր իրավունքը: Նա ավատներից զրկում էր այն ավատատերերին, որոնք վտանգավոր էին ինքնուրույնության ձգտումներով: Այդպես վարվեց նա Լամբրոնի իշխանների հետ՝ նրանցից նաև վերցնելով իրենց տոհմական տիրույթը: Նա ավատներից զրկեց տաճարական ասպետներին, որոնք Անտիոքի իշխանապետության գահի համար մղվող պայքարի ժամանակ անցել էին իր հակառակորդի՝ Տրիպոլիի կոմս Բոհեմունդ IV-ի կողմը: Այն ավատատիրոջ հողերը, ում մահից հետո չէր մնում անմիջական ժառանգորդ, վերադարձվում էին թագավորին: Այսպես, օրինակ, պարոն Վասիլի ավատը նրա մահից հետո նորից անցավ Լևոն II-ի տնօրինությանը[1]:

Կարելի է մի քանի փաստ բերել, որոնք խոսում են այն մասին, որ Լևոն II-ի հողային չեղարկումները կապված են եղել ռազմական համակարգի հետ: Հողերն ու բերդերը չեղարկվում էին վասալական ծառայության պայմանով. կամ այն վայրի սահմանների պաշտպանության համար, որտեղ գտնվում էին ընծայված հողերը, կամ թագավորի կոչի համաձայն արշավանքի ելնելու համար:

Կիլիկյան Հայաստանի զինված ուժերի միջուկը հայ հնծելազորն էր: Պատմիչ Սմբատն այսպես է անվանում այն հնծյալ զորքը, որ 1216 թ. կռվի էր դուրս եկել Կիլիկիա ներխուժած փոքրասիացի սելջուկ թուրքերի դեմ[2]: Այն կազմվում էր, հավանաբար, թագավորին ենթակա ավատատերերի ջոկատներից, որոնք արշավանքի էին ելնում իրենց վասալ-ազնվականների և ազատ ու կիսաազատ գյուղացի հնծյալների հետ:

Հայտնի է, որ բյուզանդական կառավարությունը XI դարի սկզբին Կապադովկիա, Սիրիա ու Կիլիկիա դաղթեցրեց հայ խոշոր ավատատերերի, որոնք այդ մարզերում հաստատվում էին իրենց զինված ուժերով և ռազմական ծառայության ներգրավում տեղացի հայերին: Սկզբում նրանք բերդերի կայազորների պետեր էին, իսկ բյուզանդական տիրապետության կործանումից հետո դարձան բերդերի և գավառների տերեր: Երբ Կապադովկիայի ու Սիրիայի նրանց տիրույթները գրավում են սելջուկները կամ խաչակիրները, նրանք տեղափոխվում են Կիլիկիա և ծառայության անցնում Ռուբինյանների մոտ՝ նպաստելով Կիլիկիայի հայկական պետության ռազմական հզորությունների:

[1] V. Langlois, Le trésor des chartes d' Arménie, p. 126.

[2] Նույն տեղում:

[1] V. Langlois, Le trésor des chartes d' Arménie, p. 116.

[2] Սմբատայ Սպարապետի Պատմութիւն, էջ 107:

Շնորհիվ համարյա անընդմեջ պատերազմների զինվորական դասը չատ ազդեցիկ խավ էր դարձել Կիլիկիայի ավատական հասարակության մեջ: Դա երևում է թեկուզև այն փաստից, որ Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական»-ում անհրաժեշտ է համարել հատուկ դիմել զինվորական դասին և զորականներին հորդորել, որ հնազանդ լինեն իրենց տերերին: «Եւ եթէ կարգիցիք ի տէրանց ձերոց ի գործ վերակացութեան,– ասում է Ներսես Շնորհալին՝ դիմելով զորականներին,– կամ առաքիցիք ի տնօրէնութիւն ինչ բանի արդարութեամբ և իրաւամբ առ հնազանդեալն վարեցարուք. մի՛ զոք նեղելով անողորմաբար արտաքոյ իրաւանց... մի՛ առնուլ զհրամայեալն ձեզ առնիցէք... այլ թոչակօքն ձեր բաւականասջիք»[1]:

Այս նույն «Թղթում» նա ասում է. «Նոյնպէս և զորս սահմանեալ հոդան ձեր անիրաւաբար և բռնութեամբ յաղքատաց յափշտակէք, կամ ի տէրանց ձերոց ընչից գողանայք, ունիք տալ զվճարն առանց պակասութեան յաւուրն դատաստանի»[2]:

Վերևում մեջբերված քաղվածքի բովանդակության հիման վրա կարելի է ենթադրել, որ «հոդ» բառը, որպես տերմին, ըստ կոնտեքստի իմաստի ունի նույնպիսի նշանակություն, ինչպես «ի կերակրումն» հայտնի տերմինը, որը վերաբերում էր Ռուսիայի ավատական հասարակարգի այն երևույթին, երբ վոյևոդներին ուղարկում էին այս կամ այն մարզը կառավարելու, ուղարկում էին «ի կերակրումն»: Ըստ երևույթին, Կիլիկիայում նույնպես մարզերի կառավարիչներին վերապահվում էր իրենց կողմից կառավարվող մարզերի կամ բերդերի եկամուտների մի մասը յուրացնելու իրավունք, բնակչությունից իրենց օգտին հարկ գանձելու իրավունք: Սա նույնպես իր տեսակի մեջ «ի կերակրումն» է եղել:

Ներսես Շնորհալու «Թուղթ առ դասն զօրականաց»-ը չատ գնահատելի է, քանի որ վկայում է, թե բերդատերերը միաժամանակ ունեցել են և՛ վարչական, և՛ զինվորական փունկցիաներ:

Տալով Լևոն II-ի վասալների ցուցակը, Սմբատ պատմիչը այնուհետև գրում է. «Եւ այսպիսի խոհեմ իշխանօք և քաջ զօրօք և առատ պարգեւօք և ընդարձակ սեղանով զամէնն յօժար կազմէր ի կռիւ»[3]:

Այսպիսով, Կիլիկիայի ավատատերերը չհագրգռված են եղել Լևոն II-ի պատերազմներով, որոնք արագացնում էին խոշոր հողատիրության զարգացման գործընթացը և ավատական կարգի ձևավորումը:

[1] **Ներսես Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, էջ 105:

[2] Նույն տեղում, էջ 106:

[3] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 102:

Կիլիկիայի հայկական պետության էության և կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կազմակերպված է եղել Մեծ Հայքի ավատական պետականության հիման վրա: Չի բաժանվել առանձին ավատական իշխանապետություններից, ինչպես Երուսաղեմի թագավորությունը: Երուսաղեմի թագավորության ավատական համակարգը իր արմատներով կապված է եղել XI–XIII դարերի Ֆրանսիայի ավատական կարգերի հետ: Կիլիկիայի հայկական պետությունը Երուսաղեմի թագավորությունից տարբերվում էր իր կենտրոնացվածությամբ և առավել ուժեղ թագավորական իշխանությամբ:

Կիլիկիայի հայկական թագավորության մեջ կառավարման կենտրոնական մարմինը թագավորական արքունիքն էր: Պալատում էին գտնվում կենտրոնական իշխանության գերատեսչությունները: Հենց այստեղ էր հավաքվում բարձր ազնվականության խորհուրդը, այլ կերպ ասած՝ պետական կամ թագավորական խորհուրդը՝ կարևոր պետական գործերը քննարկելու: Կիլիկիայի հայ թագավորների պաշտոնական փաստաթղթերում արքունիքը կամ պարոնների խորհուրդը լատիներեն անվանվել է նույն տերմինով՝ «կուրիա», իսկ հայկական աղբյուրներում՝ «դիվան»: Այս երկակի իմաստով (արքունիքի և պետական խորհուրդի) կուրիա բառը, պետք է ենթադրել, օգտագործված է 1201 թ. Լևոն II-ի կողմից Ջենովայի հանրապետության տրված արտոնության հետևյալ տողերում. «Քեզ՝ Օհերիո դը Պալո, Ջենովայի քաղաքացուդ, ջենովացիների անունից իմ արքայական մեծությանը և իմ թագավորական կուրիային ներկայացնողիդ, իմ պետության մեջ սիրո, հարգանքի և առավելությունների արժանացածիդ, իմ թագավորական կուրիայի համաձայնությամբ քեզ արտոնություն եմ տալիս և չնորհում՝ մնկնել ու վերադառնալ իմ տարածքով, ցամաքով ու ծովով, վաճառել ու գնել (ապրանքներ), ժամանել նավահանգիստները և մեկնել նավահանգիստներից»[1]:

Այսպիսով, Լևոն II թագավորը արտոնություններ է չնորհում ջենովացի վաճառականներին իր թագավորական կուրիայի համաձայնությամբ, որը, սակայն, ինչպես երևում է, մեծ նշանակություն չուներ, քանի որ Կիլիկիայի հայ թագավորները իրենց հաջորդ փաստաթղթերում չեն ասում, թե տվյալ հարցի վերաբերյալ որոշումը ընդունված է պարոնների համաձայնությամբ, այլ վկայակոչում են իրենց կամքը միայն: Դիվանը (կուրիան) ավելի չուտ եղել է պետական (թագավորական) խորհուրդ, քան ավատական մասնատվածության դարաշրջանի արևմտաեվրոպական տիպի կուրիա:

[1] **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 106.

Կուրիայի գոյությունը չի կարող ապացույց ծառայել այն բանի, թե Լևոն II-ի օրոք թագավորի իշխանությունը խիստ սահմանափակ է եղել՝ հօգուտ խոշոր ավատատերերի: Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն տեքստում նրա մասին ասված է. «Եւ ցուցաւ ինքնագլուխ և ճոխ իշխանութեամբ»[1]: Այս խոսքերից կարելի է անել, նախ, այն եզրակացությունը, որ թագավորական իշխանությունը բավականին ուժեղ է եղել ավատատերերի նկատմամբ, և, երկրորդ, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը Լևոն II-ի դարաշրջանում եղել է անկախ պետություն:

Լևոն II-ի օրոք բավականին ուժեղ թագավորական իշխանության ու պետության ինքնիշխանության մասին մեր պնդումը հաստատվում է նաև ուրիշ փաստերով, սակայն կուրիայի գոյությունը վկայում է, որ ավատական վերնախավը այնուամենայնիվ ազդեցիկ է եղել: Դիվանը (կուրիան) նաև բարձրագույն դատական ատյան էր, գերագույն կամ թագավորական դատարան, որը գլխավորում էր իշխանաց իշխանը: Սմբատի օրենագրքում, որը կազմվել է 1264 թ., ասված է. «Եւ դիշխանքն դատ իշխանաց իշխանն՝ իշխանօք և իրենց տեսովն»[2]: Այսպես կամ այլ կերպ՝ «մեծ իշխան» տիտղոս ունեցել են Կոստանդինը (Հեթում I-ի հայրը) և Հեթում II-ը՝ հօգուտ իր ազգական Լևոն IV-ի գահից հրաժարվելուց հետո:

Գլխավորապես Հայաստանի պետական կարգերի ավանդույթների հիման վրա Լևոն II-ը իր պալատին կից ստեղծեց կենտրոնական կառավարման գերատեսչություններ ու պալատականների չքախումբ, ընդ որում որոշ տիտղոսներ փոխ առնվեցին բյուզանդացիներից ու ֆրանկներից:

Թագավորական դիվանատան գլուխ կանգնած էր կանցլերը: Նա կազմում էր արտոնություններ և այլ փաստաթղթեր, գրագրություն էր վարում պապի և օտարերկրյա պետությունների հետ: Փաստաթղթերը կազմվում էին գլխավորապես հայերեն, ինչպես և լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն: Պետության մայրաքաղաք Սիսում կար պետական արխիվ, որը ոչնչացավ մամլուկների արշավանքի ժամանակ: Պահպանվել են միայն այն փաստաթղթերը, մեծ մասամբ լատիներեն, որոնք հայտնաբերվել են Վատիկանի, Վիեննայի, Ջենովայի, Փարիզի, Մադրիդի, Մոնպելիեի ու Եվրոպայի այլ քաղաքների արխիվներում[3]:

[1] **Միքայէլ Ասորի,** *Ժամանակագրութիւն, էջ 503:*

[2] *Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 47:*

[3] *Տե՛ս* Академия наук, Серия VII, т. III, СПб., 1860:

Այնպիսի կարևոր պաշտոն, ինչպիսին է պետական կանցլերի (ջանցլեր) պաշտոնը, Ռուբինյանները ձգտում էին տալ թագավորի հետ ավելի սերտ կապված անձանց, հատկապես բարձր հոգևորականության ներկայացուցիչներին, որպեսզի այդ պաշտոնը չդառնար որևէ իշխանական տան ժառանգական արտոնություն: Այսպես, օրինակ, Լևոն II-ի կանցլերը եղել է Սիսի արքեպիսկոպոս Հովհաննեսը: Հետագայում այդ պաշտոնում տեսնում ենք հայ գրող Վահրամ Բարունուն և ուրիշ աշխարհիկ ու հոգևոր անձանց: Այդ պաշտոնում հոգևոր անձանց ներգրավելը վկայում է Լևոն II-ի կողմից թագավորական իշխանության ուժեղացման ձգտման մասին, այնպես ինչպես դա տեղի է ունենում Վրաստանում, որտեղ «առաջին վեզիրի»՝ պետական կանցլերի («մծիդնոբարտ-ուխուցեսի») պաշտոնը տրվում էր բացառապես Զխոնդիդիի արքեպիսկոպոսին:

Ռազմական գործի գլուխ կանգնած էր սպարապետը (գունդստաբլ)՝ զորքերի գլխավոր հրամանատարը: Սպարապետներից առաջինը եղել է Բալդուինը, հայ իշխան, որն սպանվել է 1188 թ. բերդի պաշարման ժամանակ, իսկ վերջինը՝ Լիպարիտը, որը չատ խիզախություններ է գործել երկրի պաշտպանության ասպարեզում պետության անկման նախօրյակին և հերոսի մահով ընկել մամլուքների դեմ մղված ճակատամարտում (1371): Ամենանշանավոր սպարապետ-գունդստաբլը եղել է Սմբատը՝ պատմիչը և «Դատաստանագիրքը» կազմողը, որն այս պաշտոնն զբաղեցրել է մոտ կես դար ու մահացել է 1276 թ. այն վերքից, որ ստացել էր Կիլիկիա ներխուժած սելջուկների դեմ մղված ճակատամարտում:

Սմբատի «Պատմության» մեջ զետեղված է այն պարոնների ցուցակը, որոնք զբաղեցրել են գունդստաբլի պաշտոնը, ինչպես և մարշալների (մարշալներ)[1] ցուցակը, որոնք, ինչպես այդ դարաշրջանի Ֆրանսիայում, վարում էին թագավորական ախոռները և միաժամանակ գունդստաբլի տեղակալներն էին ռազմական գործում[2]:

Մեծ ազդեցություն ուներին արքունիքի գործերի կառավարիչը՝ սինիջալը (սենեչալ) և թագավորական հանդերձարանի վարիչը՝ ջամբլայնը (չամբելան): Աղբյուրներից հայտնի է, որ բարձրագույն արքունական պաշտոնները զբաղեցնում էին խոշոր ազնվականության ներկայացուցիչները:

[1] *Տե՛ս* **Սմբատայ Սպարապետի** *Պատմութիւն, էջ 129–130:*

[2] *Տե՛ս* **Шарль,** *Пти-Дютайн, Феодальная монархия..., с. 206:*

«1288 թ. ճաչոց»-ի անվանաթերթի խորանում կան չորս պալատականների դիմանկարներ՝ թագադիրի, որը մեկնած աջ ձեռքին բռնել է ոսկե թագը, մատովակի, որը վեր բարձրացրած աջ ձեռքին ունի ոսկե թաս, ննջարանապետի, որը ձախ ձեռքի ափի մեջ պահել է ոսկե կուժ, իսկ աջ ձեռքին սրբիչ կա, և մաժորդոմի կամ սեննչալի՝ ֆրանսիական մանուշակի տեսքով գայիսոնը ձեռքին[1]:

Կիլիկիայի հայկական թագավորության կենտրոնական վարչության առավել կարևոր գերատեսչությունը եղել է ֆինանսների գերատեսչությունը: Այն վարում էր պրոքսիմոսը: Նրան էր ենթարկվում մաքսատնային պաշտոնյաների և պետական հարկերի, մաքսեր ու զանազան տուրքեր հավաքողների անձնակազմը: Առանձնապես նշանակալից են եղել մաքսատների եկամուտները XIII դարի երկրորդ կեսից մինչև XIV դարի առաջին կեսը: Բայց արտահանման ու ներմուծման մաքսերից բացի, որոնց անվանացանկը և չափերը հայտնի են 1288 թ. ջննովացիներին չնորհված արտոնությունից, ինչպես և այլ արտոնություններից, գանձվում էին նաև չուկայական ու նավահանգստային տուրքեր, հարկեր արհեստավորներից ու վաճառականներից, հարկեր գինվորական ծառայությունից ազատվելու համար և այլն:

Կիլիկյան Հայաստանի տարանցիկ և արտաքին առևտրի զարգացման, չահավետ աշխարհագրական դիրք ունենալու, բերրի հողերի և բնական հարստությունների չնորհիվ թագավորական գանձարանը զգալի եկամուտներ էր ստանում: Առևտրական այն արտոնագրերից, որոնք ստացել են Ջննովան, Մոնպելիեն և եվրոպական այլ պետություններ ու քաղաքներ, հայտնի է օտարերկրացի վաճառականներից մի չարք մաքսերի, հարկերի ու տուրքերի գանձումը: Դրանցից ամենից ավելի հաճախ հիշատակվում են ներմուծման և արտահանման մաքսերը, որոնք զանազան ապրանքներ ներմուծելիս կամ արտահանելիս վաճառականներից գանձվում էին սահմանային մաքսատներում, փոխադրավարձերը, որոնք գանձվում էին ապրանքները լեռնանցքներով կամ կամուրջներով անցկացնելիս, խարսխային տուրքը՝ Կիլիկիայի նավահանգիստները ժամանող նավերից, տուրք՝ ժամանող ու մեկնող օտարերկրացիների ուղեբեռների ստուգման համար: Օտարերկրացի վաճառականներից գանձվում էին նաև չուկայական մաքսեր և այլ հարկեր:

Կիլիկիայի հայկական պետության կողմից XIII դարի վերջին և XIV դարի սկզբին Եգիպտոսի սուլթանությանը ամեն տարի մոտ քառորդ միլիոն (ռուբլու վերածած) հարկ վճարելու կարողությունը բացատրվում է ոչ միայն մաքսատնային տուրքերի մեծ մուտքերով, այլև բնակչությունից գանձվող բարձր հարկերով:

Անհրաժեշտ է ընդգծել, որ XI–XIV դարերում Կիլիկիայում չափազանց մեծ դեր էր խաղում հայ եկեղեցու կենտրոնը: Կաթողիկոսական աթոռը XII դ. կեսից մինչև XIII դարի վերջը գտնվում էր Հռոմկլայում՝ Կիլիկիայի սահմաններից ոչ հեռու, Կիլիկիայի, Կապադովկիայի, Միջագետքի և Սիրիայի կեդրոնում, հետո՝ Սիսում՝ Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաքում:

XII դարի կեսին Զննդիյանների տարածքում գտնվող կաթողիկոսական աթոռի կապերը Կիլիկիայի հայկական պետության հետ դեռ թույլ էին: Ռուբինյանների կողմից կաթողիկոսներին նյութական ու քաղաքական աջակցություն համարյա չէր ցուցաբերվում: Դա իր արտացոլումն է գտել կաթողիկոս Ներսես Շնորհալու «Նամականի»-ում: «Եւ քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ գոյ ազգի մերում,– ասում է նա,– որպէս զի անդանօր նստելով յաթոռ հայրապետութեան և վարդապետութեան, ուսուցանէաք մերոյ գաստուածային պատուիրանս, ըստ առաջին հայրապետացն և վարդապետացն: Այլ եմք իբրև զայծեամն յորսորդաց և ի չանց փախուցեալք ի քարանձաւս (այստեղ քարանձավ է անվանված Եփրատի ափի Հռոմկլա բերդը – Գ. Մ.) յայս բնակելով. յորում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիք չատացեալք ի գեղից կա յագարակաց. յորոց ունիմք և ոչ մի: Նա և ոչ անդաստան հողոյ, զի վաստակօք և աչխատութեամբ զպէտս մեր լնուաք, և ոչ օգնութիւն ուստեք՝ որպէս արժան էր ի թագաւորաց և յիշխանաց ի Քրիստոս հաւատացելոց»[1]: XII դարի 60-ական թվականներին, երբ գրվում էին այս տողերը, Կիլիկիայի հայկական պետությունը, որի հիմքերը հաստատորեն դրված էին, դեռևս ամրացված չէր: Սիսը դեռ այդ պետության մայրաքաղաքը չէր: Կաթողիկոսական աթոռը, գտնվելով Կիլիկիայից դուրս (թեև սահմանից ոչ այնքան հեռու) և մուսուլմանական տիրույթներով չրջապատված՝ չէր կարող ընդլայնել իր հողերը: Նույնիսկ Կիլիկյան հայ բարձրագույն հոգևորականությունն ու վանքերը այնքան չռայլ ընծաներ չէին ստանում, ինչպես հետագայում է եղել: Ռուբինյանների ու կաթողիկոսների միջև սերտ համագործակցություն չկար: Ահա թե ինչու է Ներսես Շնորհալի կաթողիկոսը տրտնջում, որ Անիի թագավորության անկումից հետո հայոց եկեղեցու պատրիարքական աթոռը պետության կողմից աջակցություն չի ստանում: Այդ

[1] Տե՛ս Լրաբեր ՀԱՍՀ ԳԱ, 1946, № 4, էջ 66–67:

[1] **Ներսես Շնորհալի,** Նամականի, էջ 40–41:

վերաբերմունքը աստիճանաբար փոխվում է XII դարի վերջին քառորդում և արմատապես՝ նույն հարյուրամյակի վերջում. կաթողիկոսական աթոռի և արքունիքի միջև սերտ կապ ու համագործակցություն է հաստատվում: Հռոմկլայի կաթողիկոսները թագավորական իշխանությունից նյութական ու քաղաքական աջակցություն են ստանում, իսկ Կիլիկիայի վանքերը՝ խոշոր հոդային ընծաներ:

XII դարի վերջին Կիլիկյան Հայաստանում կային 5 արքեպիսկոպոս, 15 եպիսկոպոս, որոնք գործում էին քաղաքներում ու խոշոր վանքերում: Վանքերից խոշորագույնները եղել են Դրազարկը, Արքակաղինը, Սկևռը և Ակները: Կիլիկիայի հայոց վանքերը, արքեպիսկոպոսությունները և եպիսկոպոսությունները խոշոր հարստությունների տերեր էին և մեծ նկամուտներ էին ստանում ինչպես եկեղեցական ծխերից, այնպես էլ հողատարածքներից՝ չահագործելով կախյալ գյուղացիներին: Հայ բարձր հոգևորականությունը կազմում էր ավատատերերի ազդեցիկ խավը XII–XIV դարերի Կիլիկիայում: Պատմելով այն մասին, որ Լևոն II-ի թագադրմանը ներկա էին բազմաթիվ հոգևորականներ՝ Սմբատ պատմիչը բերում է տասնհինգ ազդեցիկ հոգևոր իշխանների՝ արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների ու խոշորագույն վանքերի վանահայրերի անուններ[1]: Կիլիկիայի մի քանի արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ միաժամանակ հանդիսանում էին վանքերի առաջնորդներ, իսկ նրանցից առավել ազդեցիկները՝ վանական կալվածքների տերեր: Նրանք ծագում էին իշխանական գերդաստաններից և ղեկավարներն էին դարձել խոշոր վանքերի, որոնք ընդարձակ հողեր ունեին և, այդպիսով, նրանք յուրատեսակ սենյորներ էին:

Պահպանվել են XIV դարի սկզբի Սիսի և Ադանայի[2] եկեղեցական ժողովների մասնակիցների ցուցակները, որոնցից երևում է, որ դրանց մասնակցում էին տասնյակ հայ արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ Հայաստանից, Փոքր Ասիայից, Սիրիայից և այլ երկրներից: Նրբանց մեջ առաջին տեղը գրավում էր Կիլիկիայի բարձր հոգևորականությունը: Հոգևոր իշխանների ազդեցությունն ուժեղացել է չնորհիվ այն բանի, որ կաթողիկոսական աթոռը գտնվում էր Սիսում և թագավորական հովանավորության տակ էր: Կաթողիկոսները, հազվադեպ բացառությամբ, գործում էին Կիլիկիայի հայ թագավորների հետ համագործակցելով: Կիլիկյան Հայաստանի եկեղեցին սերտ կապված

[1] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 99:

[2] **Կղեմէս (Գալանոս),** Մի բանութիւն հայոց սր. եկեղեցւոյն ընդ եկեղեցւոյն Հռոմայ, մաս 1-ին, Հռոմ, 1650, էջ 458, 503:

է եղել պետության հետ: Ժողովրդական զանգվածների վրա ունեցած կրոնական ներգործության չնորհիվ նա ոչ միայն ձգտում էր արդարացնել ավատատերերի իշխանությունն ու հարստությունը, այլև ինքն էր դարձել քաղաքական ու տնտեսական մեծ ազդեցիկ ուժ: Բարձր հոգևորականությունը հզոր էր երկրի կառավարմանն իր մասնակցությամբ, եկեղեցական գաղափարախոսության տարածմամբ և վանքապատկան հողերից իր ստացած եկամուտներով:

Եպիսկոպոսներից չատերը բարձր պետական պաշտոններ էին դրաղեցնում կամ թագավորների խորհրդականներ էին, ինչպես, օրինակ՝ Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին, որը նոանդուն գործունեություն էր ծավալում առավել ամուր եկեղեցական կազմակերպություն ստեղծելու և ավատատերերի դասակարգի գաղափարախոսության մշակման գործում: Նրա երկերը ամենաարժեքավոր աղբյուրներն են հայոց եկեղեցու XII դարի պատմության և լույս են սփռում եկեղեցական կազմակերպության սոցիալ-քաղաքական կողմերի վրա:

Ներսես Լամբրոնացին ձգտում էր բարենորոգումների օգնությամբ ամրապնդել եկեղեցական կազմակերպությունը՝ ելնելով ավատական դասի չահերից ընդհանրապես: Նա դատապարտում է ոչ միայն սիմոնականությունը, այլև եկեղեցական բարձրագույն պաշտոնների ժառանգականությունը, ընդ որում պաշտպանում էր գոյություն ունեցող աշխարհիկ կազմակերպության օրինակով եկեղեցական կազմակերպության ստեղծման գաղափարը: «Ունի՞ իշխանութիւն ծառայ թագաւորին և պաշտոնեայ,– գրում է Ներսես Լամբրոնացին,– փոխանակ հօրն ի գործն արքունի յետ մահու զոք յիշխանական պատիւն իւր հանել. Է՞ կարելի նմա զքաղաքն արքունի ի ժառանգութիւն որդւոցն գրել. համարձակելի՞ է առանց փորձելոյ արքային զեղբայր իւր ի տէրունական աթոռն կարգել. ո՞չ ապաքէն զայս գործելով յինքն սեպհականել զհաւատացեալ գործն. և է այնուհետև ոչ ծառայ արքային և պաշտպան, այլ հակառակամարտ նմին ինքնիշխան. հարկ է այնուհետև թագաւորին մարտակից նմին ելանել որպէս թշնամւոյն»[1]: Լամբրոնացին կարծում է, որ եկեղեցին պետք է հետևի աշխարհիկ իշխանության կարգերին: «Հարիւրապետ կարգէ հազարապետն, և հազարապետ՝ զուքսն, իսկ զուքս՝ արքայն: Տուք տեղի ճշմարտութեանն՝ հաւանական յարացուցիւս. եղիցի գոնէ օրէնք մեր որպէս զմարմնաւորացն, որք բարձր և անօսր գործ վերացաք. ժառանգեցուսցէ զքահանայ ժողովրդեանն փոխանակ քո, զոր

[1] **Ներսիսի Լամբրոնեցւոյ** Խորհրդածութիւնք ի կարգս..., էջ 544:

եպիսկոպոսն ընտրվ և մի՛ զոր զու»[1]: Լամբրոնացին մեղադրում է կաթողիկոս Գրիգոր Տղային (1173–1193) այն բանում, որ նա պատրիարքական աթոռը և ամբողջ եկեղեցին վերածել է իր ժառանգական սեփականության, իր կալվածքի[2]:

Կիլիկիայի հայկական պետության հասարակական-քաղաքական կարգերի ուսումնասիրության համար արժեքավոր աղբյուր են այդ երկրի օրենքների ժողովածուները: Հատկապես արժեքավոր փաստական նյութ է պարունակում Սմբատի «Դատաստանագիրքը», որը լավ է լուսաբանում XIII դարի սոցիալ-իրավական հարաբերությունները:

Դեռևս XII դարի վերջին Կիլիկիայում Ներսես Լամբրոնացին հունարենից թարգմանել է հայերեն օրենքների մի ժողովածու, որը կազմված է եղել Մովսեսի օրենքների՝ «էկլոգայի» և «Ռազմական օրենքի» հիման վրա: Այս դատաստանագիրքը հայերեն թարգմանելու հանգամանքների ու պատճառների մասին Լամբրոնացին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում իր հիշատակարանում:

1193 թ. Սիրիայի քաղաքներում ու շրջաններում մուսուլման կառավարիչների իշխանության տակ ապրող հայերը դիմեցին Գրիգոր կաթողիկոսին և հարց հարուցեցին քաղաքացիական իրավունքի օրենքների ժողովածու ունենալու անհրաժեշտության մասին, քանի որ մուսուլման իշխանները և դատավորները հայերի դատական հարցերի քննությամբ չէին զբաղվում այն հիման վրա, որ, համաձայն Մուհամմեդի պատվիրանի, քրիստոնյաները պետք է դատվեին իրենց օրենքներով: Ուստի չատ հայեր, որոնք միմյանց միջև դատավեճ ունեին, գալիս էին քահանաների և եպիսկոպոսների մոտ ու խնդրում էին իրենց օրենքների ժողովածու տալ՝ դեկավարման համար, բայց նրանք չէին կարողանում բավարարել այդ հայերի խնդրանքը: Կաթողիկոսը հրամայեց որոնել ու պարզել, թե կաթողիկոսական գրադարանում չկա՞ն արդյոք օրենքների ժողովածուներ, բայց այնտեղ գտան միայն կանոնական իրավունքի՝ եկեղեցական օրենքների ժողովածու: Քաղաքացիական օրենքների ժողովածու չգտնվեց նաև իշխանների մոտ[3]:

1196 թ. նոր կաթողիկոս Գրիգոր Ապիրատը (1194–1203) Ներսես Լամբրոնացուն հանձնարարեց թարգմանել ասորի քահանա Թեոդոսիոսից իր ստացած օրենքների ժողովածուն: «Յետ որոյ ապա և ի

[1] **Ներսիսի Լամբրոնեցւոյ** Ստորհրդածութիւնք ի կարգս..., էջ 545:

[2] Տե՛ս նույն տեղում, 546:

[3] Քաղաքային օրէնք Ներսիսի Լամբրոնացւոյ, Փարիզ, 1907, էջ 5:

հելլենացւոց գրոց արարի թարգմանութիւն մովսիսական աւրինացդ և Լևոնի և Կոստանդևայ աւրինացդ,– չարունակում է Ներսեսը,– ի նմանէ թարգմանեցի և գղինուորական աւրէնդ. և ընծայեցի որոց սիրեննն վարիլ սովաւ և հաճոյ գտանիլ Աստուծոյ, և կառաւարիչք քաղաքաց և գաւառաց»[1]:

Հայ իրավունքի պատմաբան Ա. Սամուելյանը ենթադրում է, որ թարգմանելով այդ ժողովածուն, իսկ հնարավոր է և՝ ասորա-հռոմեականը, Ներսես Լամբրոնացին չի իմացել, որ Հայաստանում Մխիթար Գոշը 1184 թ. կազմած է եղել օրենքների ժողովածու[2]:

Ներսես Լամբրոնացու և Մխիթար Գոշի օրենքների ժողովածուները Կիլիկիայում կիրառվում էին մինչև Սմբատի «Դատաստանագրքի» կազմումը 1264 թվին: Ավատական հարաբերությունների, առևտրի ու արհեստային արտադրության հետագա զարգացումը և դրանցով պայմանավորված նոր երևույթները սոցիալ-ունեցվածքային հարաբերություններում, ինչպես և դասակարգային պայքարի սրումը, ավատատերերին թելադրում էին նոր օրենքների ժողովածուի ստեղծման անհրաժեշտությունը, այնպիսի օրենքների, որոնք ավելի համապատասխաններին իրենց դասային չահերին ու Կիլիկյան Հայաստանի ավատական հասարակության պայմաններին: Այս գործը հանձն առավ Հեթում Թագավորի եղբայր սպարապետ Սմբատը՝ «Պատմության» հեղինակը:

Կիլիկիայի ավատատերերն օգտվում էին Մխիթար Գոշի «Դատաստանագրքից», բայց այն գրաբար էր, որ դժվարացնում էր դրա լայն կիրառությունը դատական պրակտիկայում: Սմբատի «Դատաստանագիրքը» կազմված է Մխիթար Գոշի՝ Մեծ Հայքում ստեղծված ժողովածուի օրենքների յուրացման ճանապարհով: Հենց այդ օրենքների ժողովածուն է Սմբատի համար գլխավոր աղբյուր եղել իր «Դատաստանագիրքը» կազմելիս: Դրա նախաբանում Սմբատն ասում է, թե ինքը չատ ջանք է թափել, որպեսզի դժվարահասկանալի գրաբարով գրված դատաստանագրքի օրենքները վերաչարադրի ժամանակակից, «հնչտալուր»[3] լեզվով, այսինքն՝ կիլիկեցի հայերի խոսակցական լեզվով:

Սակայն Սմբատի «Դատաստանագիրքը» Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» թարգմանությունը չէ: Ելնելով ավատական դասակարգի չահերից՝ Սմբատը իր օրենքների ժողովածուում փոփո-

[1] Քաղաքային օրէնք **Ներսիսի Լամբրոնացւոյ**, Փարիզ, 1907, էջ 5:

[2] **Ա. Սամուելյան**, Հին հայ իրավունքի պատմություն, եր., 1939, էջ 58:

[3] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 15:

խութիւններ ու լրացումներ է կատարել Կիլիկիայում այդ ժամանակ գոյութիւն ունեցող հասարակական-քաղաքական հարաբերութիւններին համապատասխան, ինչը առանձին արժէք է տալիս նրա «Դատաստանագրքին» ոչ միայն որպես իրավունքի սկզբնաղբյուրի, այլև որպես Կիլիկիայի հայկական պետութեան հասարակական-քաղաքական կարգի սկզբնաղբյուրի:

Սմբատի «Դատաստանագրքում» իրենց արտացոլումն են գտել Կիլիկիայի հայկական պետութեան ավատական հարաբերութիւններն ու պետական-իրավական կարգերը XIII դարի երկրորդ կեսին: Նկատենք, որ ստեղծելով իր «Դատաստանագիրքը»՝ Սմբատը ոչ մի խոսք չի ասում այն մասին, որ օգտագործված «Դատաստանագրքի» հեղինակը Մխիթար Գոշն է: Այն մասին, թե ինչպես է օգտվել Մխիթար Գոշի «Դատաստանագրքից» նա գրքի նախաբանում ասում է, որ ինքը չի թարգմանել, այլ միայն ներկայացրել է Գոշի «Դատաստանագրքի» էութիւնը, բովանդակութիւնը՝ այն չարաղրելով ավելի հակիրճ[1]: Սակայն պետք է ասել, որ Կիլիկիայի «Դատաստանագրքի» հեղինակը ոչ միայն սեղմ չարադրել է էութիւնը («զսիրտ բանիցն առնալ եղի համառօտարար»)[2], այլ նոր կետերով կամ էլ այս կամ այն օրենքի նոր մեկնութեամբ շատ բան է ներմուծել իր «Դատաստանագրքում»՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» համեմատութեամբ: Հիրավի, «Դատաստանագրքի» այս կամ այն հոդվածի առանձին ձևակերպումներ ու հիմնավորումներ կրճատված են կամ ամբողջովին բաց թողնված, բայց փոխարենը տրված են նոր ձևակերպումներ, իսկ երբեմն էլ՝ նոր հիմնավորումներ, մի խոսքով՝ օրենքի նոր խմբագրում, ինչը Սմբատի «Դատաստանագիրքը» դարձնում է արժեքավոր պատմական սկզբնաղբյուր Կիլիկյան Հայաստանի իրավունքի, պետական կարգի ու հասարակական հարաբերութիւնների ուսումնասիրման համար:

«Դատաստանագրքի» կազմման նպատակի մասին Սմբատը գրում է. «Արդ, գրեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ և պիտանաւորութեան երկրիս և վասն աշխարհական դատաւորաց և թագաւորաց»[3]: Օրէնսգիրքը կազմողի այս խոսքերից հետևում է, որ այն նախատեսված է եղել աշխարհիկ և հոգևոր ավատատերերի դասակարգային շահերի պաշտպանութեան համար, ավատական պետական ապարատի ամրապնդման համար:

[1] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 15:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

«Դատաստանագրքում» օրենքների դասավորութեան և սկզբունքի մասին Սմբատը հետևյալն է գրում. «Յառաջ պատեհ համարեցաք զվիճակեալ դատաւորացն գրել, բուն զթագաւորացն, վասնզի յաստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն, և յաստուծոյ տեղին է համարած ի յերկրի և զնոցին դատաստանն և իրաւունքն գրեցաք: Եւ ապա զկարգաւորացն և զաշխարականացն և զայրուկնոջն»[1]:

Թեև Սմբատի «Դատաստանագրքում» չկա օրենքների դասավորութեան խստորոշ կարգ, այնուամենայնիվ սկզբում գերակշռում են այն օրենքների հոդվածները, որոնք վերաբերում են պետական իրավունքի նորմերին, իսկ ապա՝ եկեղեցական ու քաղաքացիական օրենքներին, մինչդեռ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» եկեղեցական օրենքները նախորդում են աշխարհիկ օրենքներին:

Սմբատի «Դատաստանագրքի» առաջին հոդվածները նվիրված են Կիլիկիայի հայկական թագավորութեան պետական-իրավական կարգին, թագավորական իշխանութեան սուվերենիտետին, թագավորի և ավատատերերի իրավունքների սահմանազատմանը[2]: Առաջին հոդվածի սկզբում չարադրվում է գահաժառանգի իրավունքը: Մխիթար Գոշի մոտ թագավորական գահը պետք է ժառանգեն ոչ թե որդիները, այլ նախ և առաջ թագավորի եղբայրները[3], իսկ Սմբատի մոտ գահն անցնում է որդուն, բայց ոչ պարտադիր՝ ավագին (այս մասում Սմբատը համամիտ է Մխիթար Գոշի հետ), այլ՝ որդիներից լավագույնին: Սակայն նա նոր կետ է մտցնում. այն է՝ լավագույնին ընտրելիս հայրը պետք է ուշադրութեան դարձնի իշխանների և եկեղեցու կարծիքներին[4]: Եթե օրենքի առաջին մասի նոր ձևակերպումը, թե գահը պետք է ժառանգի ոչ թե եղբայրը, այլ որդին, արտացոլում է գահաժառանգման հարցը կարգավորելու միտում, գերագույն իշխանութեան կայունութեան տալը, ապա երկրորդ մասում մտցված կետը ցույց է տալիս աշխարհիկ ու հոգևոր իշխանների ազդեցութեան գահաժառանգման հարցում ուժեղացնելու ձգտում:

«Դատաստանագրքի» առաջին իսկ հոդվածում չարադրվում են թագավորի, իշխանների (պարոնների) և ասպետների փոխադարձ իրավունքները և պարտականութիւնները, թագավորի՝ որպես սյուզերենի և ավատատերերի՝ որպես նրա վասալների, պարոնների և

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 14:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 16:

[3] **Մխիթար Գոշի** Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 300:

[4] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 16:

ասպետների փոխհարաբերությունները[1]: Կիլիկիայի հայկական պետության ավատական հասարակության հասարակական կառուցվածքը մեզ ներկայանում է որպես ավատական աստիճանակարգ, ճիշտ է, առանց երկիրը առանձին-առանձին, քաղաքականապես անկախ ավատական տիրույթների բաժանելու:

Եթե համեմատենք Կիլիկյան Հայաստանի ավատական հասարակության կառուցվածքը աստիճանավոր բուրգի հետ, ապա դրա վերին աստիճանն զբաղեցնում էր թագավորը, որպես ավատատերերից առաջինը, որպես սյուզերեն, ապա հաջորդական աստիճաններով դասավորվում են նրա վասալները՝ իշխանները, պարոնները, ասպետները: Ավատական հիերարխիայի ամբողջ բուրգը ավատական չահագործման իր ծանրությամբ նստած էր ճորտ ու կախյալ գյուղացիության ուսերին: Կիլիկիայի հայկական պետության, որպես տիպիկ ավատական հասարակարգի հիմքը ավատատերերի սեփականությունն էր հողի նկատմամբ, այսինքն՝ խոշոր ավատական հողատիրության տիրապետությունը:

Ըստ Սմբատի «Դատաստանագրքի» «թագաւորն է, որ կարէ դեկան չինել և քաղաք և բերդ և մեծ գետոց կանղարայ և հոգևտուն ի մեծ ճամփինի և ի կապնի երկրին: Եւ թէ իշխան կամենայ յայսոց չինել, նա թագաւորին հրամանով չինէ»[2]:

Երկրի բնակչի նկատմամբ իրավունքները բաշխվում էին հետևյալ կերպ: Ոսկու հանքերը, որ հայտնաբերված են իշխանի տարածքում, պատկանում են թագավորին, իշխանը կարող է օգտվել դրանց նկամուտների միայն աննշան մասից: Սակայն տեղացի իշխանին է պատկանում իրավունքը երկաթի ու պղնձի հանքերի, աղահանքերի և այլ հանածոների մշակման նկատմամբ[3]:

Կիլիկիայում ավատական հողատիրության հիմնական ձևը XIII դարում արդեն ավատն էր, ինչը երևում է առաջին հոդվածի հետևյալ հատվածից. «Եւ թէ ժառանգաբար յիր երկիրն ծախվորի և բերդ կամ ամրոց չինէ, կամ այլ ինչ, նա վասն այնոր կու չինէ, որ իր ու իր յետմնացացն մնացական մնայ, մի լիցի թագաւորին յայն ձեռնարկել, այլ իշխանքն զիւրեանցն ունենան մնացական և թագաւորին (զինվորական) ուժ տան»[4]: Այս տողերում հրահանգավորվում է ավատական կալվածքների կամ տիրույթների ժառանգականության սկզբունքը: Դա վկայում է, որ Կիլիկիայի ավատատերերի տիրույթները այդ շրջանում ոչ թե բենեֆիցիաներն են եղել, այլ ավատները (ֆեոդ), հայրենական կալվածքները:

«Դատաստանագրքի» երկրորդ հոդվածում ասվում է. «Թէ իշխան և թէ այլ ոք, որ ի թագաւորի ծառայութիւն և ի հնազանդութիւն լինի և իրք պատճառ առնէ թագաւորին հայնց՝ որ մեռնի իրաւնօք, նա եղբարքն և որդիք, որ յառաջագոյն լել են, նա վասն հորն մեղացն չլինին զրկած ի հայրեննացն ժառանգութենէ»[1]:

Սմբատի «Դատաստանագիրքը» պաշտպանում է ավատի նկատմամբ ժառանգական իրավունքը նույնիսկ թագավորի վասալի որդու՝ ծնված հոր մահից հետո, որը սյուզերենի կողմից մահապատժի է ենթարկվել, զավաճանությունից բացի, որևէ մի հանցանքի համար: Նույն կերպ պետք է պարոնները վարվեին իրենց վասալ-ասպետների հետ[2]: Դա սյուզերենի ու վասալի հարաբերությունները կանոնավորող տիպիկ ավատական իրավունքն է, որը սահմանում է վասալի անկապտելի ժառանգական իրավունքը ավատի նկատմամբ, քանի դեռ նա չի զավաճանել իր սենյորին:

Ավատատիրական կարգերի զարաշրջանում ամենուրեք պատերազմը եղել է ավատատերերի զբաղմունքներից, նրանց հարստացման աղբյուրներից մեկը: Պատերազմները մղվում էին գլխավորապես հանուն զավթումների, հող ձեռք բերելու, որը ավատատիրոջ նկամուտի գլխավոր աղբյուրն էր, ինչպես և հանուն չարժական գույքի հափշտակման: Պատերազմները սովորական երևույթներ էին նաև Կիլիկիայի իշխանների համար: «Դատաստանագիրքը» սահմանում է թագավորի, իշխանների ու զորականների միջև ռազմավարի բաշխման կանոնները: «Եթէ երթայ թագաւորի յիչաւ ի չարկամու երկիրն, նա ոսկի՝ ինչ չահի, թագաւորինն է... Եւ թագաւորն զիր չահուն տասնեակն պատեհ է, որ նկեղեցուն տայ: Եւ ինչ չահ կենայ, ըղորդն այն է, որ ամենքն յիրար քչտեն, ու կէս թագաւորին է և կէս իշխանաց՝ ըստ իրենց մարդաթիւի չափոյն յիրանց վերայ բաժնեն, և նոքա զիրենց տասնեակն տան յիրենց եկեղեցացն: Ապա թէ թագաւոր չլինի ի հետ ու իշխան յիչուէ իր երկիրն դիպան, նա ոսկին թագաւորին է՝ անհնար. և չահուն տասնեակն միայն տան թագաւորին, և եկեղեցւոյն յիսնէն մէկ մի օրինօք: Նշանակ և պուկ բերդատէրն մէն իշխէ վերցնել»[3]: Տեքստում այնուհետև խոսվում է իշխանների և զինվորների փոխհարաբերությունների մասին:

[1] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 16–20:

[2] Նույն տեղում, էջ 16:

[3] Նույն տեղում, էջ 18:

[4] Նույն տեղում, էջ 19:

[1] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 19:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 19–20:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 18:

Ըստ «Դատաստանագրքի» «գող և ծեծվոր [ասպատակիչ] չէ պարտ յղարկել թագաւորին, ապա ալանի ծեծէ, զի այդ իշխանաց և սինօռ պահելոց է հասոյթ: Եւ զոր իշխան ոք որ յղարկէ ի ծեծ [ուղարկի ասպատակութեան], նա ի կէս է չահն ընդ պարոնն: Եւ թէ լոկ ինքն յիրմէ երթայ ծեծէ, առանց պարոնին, նա երկու բաժին ծեծվորինն է, մնկ բաժին պարոնին, զի ինքն յիրմէ գնաց ի ծեծ»[1]:

Այս հարցում Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» և Սմբատի «Դատաստանագրքի» օրենքները մի քիչ տարբերվում են: Սմբատը ավելի ներողամտաբար է վերաբերվում ասպատակութիւններին: Դա արտացոլումն է այն իրականութեան, երբ զրանք սովորական ձևնարկումներ էին համարվում: Կիլիկիայի իշխանները խաչակիրների, արաբների ու սելջուկների նման, որոնք ասպատակում էին քաղաքներն ու գյուղերը՝ կողոպտելու համար, նույնպես զրաղվում էին այդ գործով և ոչ միայն նտ էին մղում հարևանների հարձակումները, այլև իրենք էին ներխուժում նրանց սահմանները նույն նպատակով: Համեմատութեան համար մենջրևրենք Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» տեքստի համապատասխան տեղը. «Իսկ գող թագաւորի և իշխանի ոչ վայել է, բայց միայն լրտես: Ապա թէ արտաքոյ իրաւանց ելցեն և առաքեսցեն, վասն հրամանին կէսն լիցի ի մարդոյ և յանասնոյ: Իսկ եթէ առանց հրամանի երթիցեն, երկու բաժինն երթողին լիցի, զի կամօք ի մահ դիմեցին»[2]:

Իշխանի և զորականների փոխհարաբերութիւնների մասին Սմբատի «Դատաստանագրքում» (ինչպես և Մխիթար Գոշի մոտ) ասվում է, «թէ ծեծվոր յղարկէ պարոնն զոք ու բռնվի, նա պարոնն պարտի որ գնէ, և թէ ինքն յիրմէ երթայ, նա ինք զինք գնէ: Մարդ որ մարդ պրկէ [գերի վերցնի], ամենն, ինչ կենայ, նա պրկողին է, և զրհին մէն պարոնին»[3]:

Որևէ տեղից գրավված ավարը բաժանելիս, «ածաթն և արծաթով կտաւ և պրիամէն, որ ուրդի՝ իշխանացն է ամենն. պղինձ և երկաթ, բրդնղէն և բամբակեղէն զօրացն է ան բաժինք. ոսկի ու ոսկով կտաւ, որ ի չահն ուրդին թագաւորինն է»[4]:

«Դատաստանագրքի» հոդվածներից չատերը նվիրված են վանական կարգուկանոնին, վանքերի սեփականութեան ու կառավարման հարցերին: 63-րդ հոդվածն ընդգծում է, որ «թագաւորք և իշխանք

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 18:

[2] **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք Հայոց, էջ 312:

[3] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 18:

[4] Նույն տեղում:

իրենց վանաց տուն են հաստատել և հայր և գլուխ դրել այլ եղբարց. և չէ պատեհ զհայր վանացն փոխել, քաւել քանց մեծ պատճառի, որ խալապայ անէ հայրն, նա փոխէ զինքն, և զեռ պատեհ է, որ խրատ տալով յանդիմանեն և ապա թէ չլսէ՝ նա փոխեն»[1]:

XIII դարում նույնպես, ինչպես որ նախընթաց դարերում էր լինում, աշխարհիկ ու հոգևոր իշխանները կաշառքով վանահայր էին նչանակում իրենց համար հաճո անձանց, ինչը երևում է «Դատաստանագրքի» 63-րդ հոդվածից: «Ընդդեմ աստուծոյ իրաւանց և օրինաց և ճշմարտութեան է, որ թագաւոր կամ իշխան կամ այլ ազգ գլխավոր եկեղեցական կամ աշխարհական, որ վասն կաշառոյ սոցա հայր դնէ, զոր իրենք չուզենան. և կարեն ամենն նզնել ի վանացն, ինչ որ դատաստանն ուղղի ու իրենց հայր գայ, որ ամէն հաճին ընդ այն. և եկեղեցոյն եպիսկոպոսն պատեհ է, որ սահմանէ և ուղղէ զիրենց կարգն և ոչ այլ ոք, որ է յաշխարհականաց»[2]: Այնուհետև ասվում է. «Յայտնի է, որ յառաջին եպիսկոպոսունք կին ունննային և որդիք. և ի քաղաքս կննային... և հիմայ ի կուսան և ի միաբանութիւն վանից արեղայք: Նա ի հիմայ օրենքս կու հրամայէ, որ վասն այսօր եպիսկոպոսն չիշխէ պակասցնել յաթոռոյն իրացն բնաւ, ապա ի միաբանութիւն մնայ իրք աթոռոյն: Եւ եթէ իրք կենայ, որ ճանչենան, որ ըղորդ իւր լինի ու բնաւ չլինի աթոռին, նա կարէ վկայեցնել ու տալ տիաթկով իր ազգին. զի թէ վկայութեամբ չայնէ, նա հետ իր մահուն տուժին զազնն և առնուն»[3]:

«Դատաստանագիրքը» ձգտում է վանական ունեցվածքը պաշտպանել եպիսկոպոսների ու վանահայրերի հափշտակումներից, ուստի և առաջարկում է. «Եւ թէ... աղքատանայ եկեղեցին վասն երևան պատճառանաց կամ յեպիսկոպոսէ կամ յայլ եկեղեցականաց... նա զէդ մարդասպան ձգնն զինքն և դատն հանաւորն ու դննն եկեղեցոյն կարիքն»[4]: Այս կետը բացակայում է Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»:

«Դատաստանագրքի» մի չարք հոդվածներում Սմբատը պայքարում է հոգևոր կոչման տեր անձանց կողմից եկեղեցական պաշտոնների ժառանգման սկզբունքի դեմ:

«Դատաստանագրքի» 16-րդ հոդվածում դատապարտվում է իրենց հոգևոր աստիճանը ժառանգաբար փոխանցելու՝ եպիսկոպոս-

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 43:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 21:

[4] Նույն տեղում, էջ 22:

նների ձգտումը, ընդ որում բերվում է այն հիմնավորումը, որ եպիսկոպոսը «ոչ կարէ իր եպիսկոպոսութեան ժառանգ դնել, քանզի զայն, որ ընտրութեամբն աստուծոյ և հայրապետին և ամենայն ժողովըրդեանն արժանի այնեն: Եւ թէ ոք յանդգնի, ձգվի յաթոռոյն և տուժվի ի զարպասն»[1]: Բայց ոչ մի օրենք ի վիճակի չէր արմատախիլ աներ այս երևույթը, ինչպես և հոգևոր կոչումների առուծախը:

Մերկացնող երկերից մեզ հայտնի է, որ եպիսկոպոսի աստիճանը ձեռք էին բերում զրամով, այսինքն կիլիկիայում զարգացած է եղել սիմոնականությունը: Սմբատի «Դատաստանագրքում», Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» համեմատությամբ, խիստ ընդլայնվել ու կերպարանափոխվել է եպիսկոպոսի ձեռնադրմանը վերաբերող հոդվածը: Հրահանգվում է, որ կաթողիկոսը պետք է որևէ մեկին եպիսկոպոսի աստիճան չնորհի ամբողջ երկրի հավանությամբ, եպիսկոպոսների, վարդապետների, գիտուն այրերի մասնակցությամբ[2]: Պայքարելով եկեղեցական պաշտոնների զավթման դեմ՝ «Դատաստանագիրքը» եպիսկոպոսներին ու քահանաներին արգելում է իրենց իսկ կարգակից ընկերոջ հոգևոր աստիճանը խլել[3]:

17-րդ հոդվածում ասվում է, որ եպիսկոպոսներին վայել չէ զբաղվել աշխարհիկ գործերով և առևտրով: 54-րդ հոդվածը պատվիրում է, որ հոգևոր անձը ոչ մի դեպքում տոկոսով փող պարտք չտա[4]:

«Դատաստանագրքի» վերոհիշյալ բոլոր հոդվածները վկայում են, որ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հոգևորականության կողմից վանական ու եկեղեցական ունեցվածքի հափշտակումը, եպիսկոպոսությունը տոհմական ժառանգության վերածելու ձգտումները, առևտրով ու վաշխառությամբ զբաղվելը, այսինքն այն ամենը, ինչը դատապարտվում էր XII դարի մտավորականության կողմից, տեղի էր ունենում նաև XIII դարում:

«Դատաստանագրքի» հատուկ հոդվածներում, ինչպես և մի շարք այլ հոդվածներում, զգալի նյութեր կան ավատական հասարակարգի կառուցվածքի, դասային հարաբերությունների, դատարանի դասայնության, բարձր դասի առանձին խավերի փոխհարաբերությունների, յուրաքանչյուր դասի և դրա առանձին խմբերի իրավական դրության մասին կիլիկիայի հայ հասարակության մեջ: Սմբատ Գունդստաբլը այս հարցերում հետևել է հայ ավատական իրավունքի օրենքների

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 23:

[2] Նույն տեղում, էջ 37:

[3] Նույն տեղում, էջ 23:

[4] Նույն տեղում, էջ 37:

ժողովածուին՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքին»: Մխիթար Գոշը լինելով կրթված ու խոշոր մտածող՝ ավատական աշխարհայացքի և իրավարմբռնման հիման վրա ստեղծել է իր նշանավոր «Դատաստանագիրքը», որտեղ արտացոլվել է միջնադարյան Հայաստանի հասարակարգի զարգացումը: Բայց հասարակական խավերի փոխհարաբերություններին, ինչպես և գյուղացիների նկատմամբ ավատատերերի իրավազորության իրավունքին նվիրված հոդվածներում հետևելով նրան, Սմբատ Գունդստաբլը այնուամենայնիվ ներմուծել է Հայաստանից տարբեր, կիլիկյան Հայաստանի ավատական հասարակության պայմաններին կոնկրետ համապատասխանող նոր իրավանորմեր:

«Յաղագս թագաւորաց, իշխանաց և ձիաւորաց» հոդվածում ասվում է, թե «թագաւորք, որ աստծոյ լինին, նա ատուած միայն կարէ դինք աքսորել, թէ լաւ է, թէ վատ. ապա զայնոնք, որ մարդիկք դննն, նա թէ հայնց պէտ լինին, որ չկարէ հանդուրժել աշխարհն, նա այլ վայր իրենք եկեղեցովն և ամէն բնակչօք երկրին կարին աքսորել: Բայց եթէ որդիք կենայ թագաւորին... ի յայնոնց ընտրեն զաղէկն և դննն թագաւոր, վասն զի սեփական է թագաւորութիւնն ի հօրէ յորդիքն»[1]: Այս հարցում Սմբատը չի չեղվում Մխիթար Գոշից, որը իր «Դատաստանագրքի» մի այլ տեղում կողմ է իշխանությունը թագավորից եղբորն անցնելու տեսակետին»[2]: Եթե հանուն երկրի փրկության իշխանները ցանկանան պատժել թագավորին և նրան մահու տալ, ապա նրանք իրավունք չունեն դա անելու առանց կաթողիկոսի և մյուս թագավորի[3]: Մեծ իշխանին կարող են դատել միայն մեծ իշխանները, իսկ իշխանին՝ իշխանաց իշխանը՝ իշխանների մասնակցությամբ և համաձայնությամբ: Ազնվականներին՝ ասպետներին, վասալներին, ավատատերերին, դատում է իշխանաց իշխանը՝ ազնվականության օգնությամբ: Թագավորի վասալներին դատում են թագավորի համաձայնությամբ[4]: Սմբատի «Դատաստանագիրքը» ավատական դատարանի իրավազորության այս հարցերում անկախ է արևմտաեվրոպական իրավունքից և հիմնականում չի չեղվում Գոշի «Դատաստանագրքից», բայց այստեղ չատ ավելի մանրամասնորեն է քննարկված դասերի ենթադատության հարցը:

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 46:

[2] Տե՛ս **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք Հայոց, էջ 300:

[3] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 46:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 47:

Ազնվականության իրավազորության, դատական իրավունքի մասին «Դատաստանագրքում» ասված է. «Եւ այլք հայնց ցեղ ամէն մէկ գիրն դատեն՝ իրենց դարպասն և գիրենց ճորտերն, ըստ իւրաքանչիւր կերպի, և այլ ցած հեծլվորք և այլ վերցածքն, որ ազատ կոչեն, բայց գիսրատուն կամ միացնելն առանց թագավորի կամ իշխանաց իշխանի չէ արժան անել, զի չկայ ամենևին հրաման յօրինացս, որ այլ ոք մարդ իշխէ աւերել կամ խոռել գմեղկանն, քաւել թագաւորն և իշխանաց իշխանն մեն գնտանել և ծեծել և տուգնել և հանել վարել յիրենց տեղոյն ի բաց՝ հարենացնել: Եւ այլ ցած չինականք հեծելվորք ամէն կարեն դատել, նոյնպէս ու գիսրատուն և զվրտեն՝ որպէս գրել ենք, ասպա հայրենի տիրել չկարեն առանց պարոնին»[1]:

Թե ինչ գիրք էր գրավում Կիլիկյան Հայաստանի այս կամ այն հասարակական խավը ըստ դասակարգային իրավունքի, դա երևում է «Դատաստանագրքի» հետևյալ խոսքերից. «Զամէն ազգի արուեստաւոր պատուեցէք, բայց դղարրինն, գհիան և գքարգործն՝ աւելի: Եւս առաւել գդրագիրն ու գրժշկերն, զի մարդս կու ստածեն: Դարպսեցիք (պալատականները) հարկևորած լինին յերկրէն: Քան զայլ ազգ մարդիկն՝ վարդապետք հարկևորած պիտին, զի հոգւոյ բժշկեն և նկեղեցոյ հաստատութիւն»[2]: Հետաքրքիր է նշել, որ Սմբատի տնօրաչից դուրս է ընկել հողագործը, որը սկզբնաղբյուրում՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում», հիշատակված է առաջին տեղում՝ որպես «օգտակար և անհրաժեշտ» արտադրող: Ընդհանրապես, Մխիթար Գոշի համեմատությամբ, Սմբատ Գունդստաբլը խիստ ընդգծում է ազնվականության ու հոգևորականության դերը՝ նրանց համարելով հենարանը նկեղեցու, որը միջին դարերում ավատական պետության ջատագովն էր, ավատատերերի շահերի պաշտպանը:

Օրենսդրության դասակարգային սկզբունքը վառ կերպով դրսևորվել է 146-րդ հոդվածում, որտեղ ասված է. «Կու հրամայն օրէնքըս, որ մարդկային ազգս չատ ազգեր են, և են, որ ազատք են ու հեծելվորք, և են, որ չեն, և այլ ազգ գործերն, որ գործ դնեն: Ամ, այն մարդն, որ յիւր գործոյն պատեհն մնոնի, նա անպարտ են տէրքն»[3]: Ճիշտ է, այս ընդհանուր սկզբունքից բացի, «Դատաստանագրքում» կան հոդվածներ, որտեղ տերը պատասխանատվություն է կրում, եթե մշակը նրա ակնհայտ մեղքով խեղվում է կամ մեռնում[4]:

[1] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 47:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 19:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 72:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 21:

«Դատաստանագրքի» մի քանի հոդվածներում հիշատակվում են (ցավոք, չատ հակիրճ) գյուղական ու քաղաքային աշխատավոր բնակչության ցածր խավերի տարբեր կատեգորիաները:

4-րդ հոդվածում, որտեղ խոսվում է գտածոյի նկատմամբ գտնողի իրավունքի մասին, ընդ որում ուշադրության է առնվում իրը գտնողի սոցիալական դիրքը, թվարկվում են բնակչության ցածր դասի երեք կատեգորիաները: «Ապա թէ,— ասվում է հոդվածի վերջում,— մշակ կենայ կամ այլ ցեղ վարձվոր կամ յոռքվոր, նա չտան իր, քանց բաժին իրիք մասնաւորն»[1]: Տնքստում խոսվում է վարձու աշխատողների երեք կատեգորիաների մասին: Հավանաբար, նրանց միջև որոշ տարբերություն է եղել: Մշակի սոցիալական դրությունը տարբեր դարաշրջաններում բոլորովին էլ միանման չի եղել: Վարդանի առակներում և այլ ստեղծագործություններում մշակը մշակում է խաղողի այգիներ ու պարտեզներ[2] և, ընդհանրապես, մշակը վարձու աշխատող է, որի աշխատանքը կիրառվում է գլխավորապես գյուղատնտեսության մեջ: 176-րդ հոդվածում, որը վերնագրված է «Վասն այգեաց և այգեգործաց», մշակների աշխատանքների դիմաց վարձատրությունը որոշվում է տարվա բերրիությամբ և անբերրիությամբ[3]: 153-րդ հոդվածում մշակը հիշատակվում է որպես վարձու աշխատող՝ ջրվոր[4]: Այսպիսի աշխատող ավելի չուտ կարող էր լինել քայքայված-սնանկացած գյուղի գյուղացին կամ չունևոր գյուղացին, այսինքն մի մարդ, որը գիտե, թե ինչպես են մշակում պարտեզը կամ արտը: Հ. Աճառյանի «Հայոց լեզվի արմատական բառարան»-ում «մշակ» նշանակում է «Հողագործ, երկրագործ, այգու աշխատավոր»[5]: Իհարկե, դա ոչ ամեն մի հողագործ է, այլ միայն վարձու հողագործը: Միջնադարյան Կիլիկիայում, ինչպես և հայկական մյուս մարզերում, մշակներն աշխատում էին ոչ միայն գյուղատնտեսության մեջ: «Մշակ», հավանաբար, նշանակել է ընդհանրապես վարձու աշխատող, ինչպես երևում է «Դատաստանագրքի» մի քանի հոդվածներից[6]: Սակայն առաջին հերթին հենց ընչազուրկ գյուղացիներն էին, որ վարձվում էին կալվածատերերի և այլ սեփականատերերի կողմից՝ այգիների և արտերի մշակման համար, և «մշակներ» կոչվում:

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 20:

[2] Տե՛ս **Н. Я. Марр,** Сборник притч Вардана, ч. III, с. 77:

[3] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 81:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 73:

[5] **Հ. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 44 (1-ին հրատ.):

[6] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 21:

Վարձու աշխատանքի երկրորդ ներկայացուցիչը՝ «վարձվորը», տեքստում բնորոշվում է որպես «այլ կարգի վարձու աշխատող»: Դրանով իսկ կազմողն ընդգծել է, որ «վարձվորը» տարբերվում է մշակից: 152-րդ հոդվածում ասված է. «... թէ վարձվոր լինի ի բան ինչ կամ ի գործ, և զգուշացնէ պարոնն ու ասէ, թէ դիտայ պատրաստ արա, ու նա չանէ, ու վասն այնոր վնասի, նա անպարտ է: Ապա թէ ոչ, անխնամ երետ որոգայթել, նա պարտական է»[1]: «Պարոն» էր կոչվում ոչ միայն իշխանը կամ կալվածատերը, այլև՝ տերը: Տվյալ դեպքում, մեզ թվում է, խոսքը վերաբերում է տիրոջը, իսկ վարձվորը խնդում է ստանում ոչ թե դաշտային աշխատանքներում, այլ, հավանաբար, չինարարության մեջ: Այստեղից կարելի է ենթադրել, որ վարձվորը վարձու աշխատանք կատարողն է քաղաքում, այլ ոչ թե գյուղում, ինչպես մշակը:

Ըստ իր սոցիալական դրության, հավանաբար, այդպիսին է եղել հասարակության մեջ նաև «վարձականը», որի մասին 145-րդ հոդվածում ասված է. «եւ վարձական, որ ի տիրոջ բանն սարվազ կոտրէ, չտայ վճար, ապա թէ իր կամօք վնասէ, նա վճարէ»[2]: Այնուհետև հոդվածում հաջորդում է երկրորդ կետը, որտեղ «վարձական» բառը փոխարինված է «վարձվոր» բառով, որը, սակայն, նշանակում է ոչ թե մի ուրիշ կարգի աշխատող, այլ որպես «վարձական»-ի հոմանիշ: Այս կետում ասված է. «Բայց վարձվորն, որ իր սարվզնով (գործիքներով) գայ վարձ առնու և բանի, նա չտայ վճար ցտէրն: Եւ թէ գտիրոջն յիւր բանն կոտրէ, նա չտայ վճար»[3]: Այսպիսին է, հավանաբար, նաև «գործաւոր» բառի սոցիալական նշանակությունը: Այս տերմինը նշանակում է վարձու աշխատանքի ներկայացուցիչ, ծագել է «գործ» բառից: Մխիթար Գոշի տեքստի համապատասխան տեղում դրված է «վարձական» բառը[4]:

«Հոոգվոր» բառը, որն առաջացել է «հոոգ» բառից, նշանակում է ոռճիկ, պարենավորում, որ ստանում են զինվորականները, աստիճանավորները և մարզերի կառավարիչները[5]: XII դարի մի շարք աղբյուրներից կարելի է եզրակացնել, որ «հոոգվորը» վարձական զինվորն է[1]: Ըստ Սմբատի «Դատաստանագրքի» «հոոգվորը» վարձու աշխատողն է[2]:

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 73:

[2] Նույն տեղում, էջ 71:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս **Հ. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 44: Տե՛ս նաև «Հայկազեան բառարան»-ը:

Հոոգվորները, հավանաբար, սեւագործ բանվորներ են եղել, որոնք աշխատել են քաղաքներում օրավարձով կամ գործավարձով: Սմբատի «Դատաստանագրքի» այս բոլոր տվյալները մշակների, վարձվորների, վարձականների, գործավորների և հոոգվորների մասին անկասկած վկայում են XIII դարի Կիլիկյան Հայաստանում վարձու աշխատանքի զարգացման մասին:

«Դատաստանագրքի» 144-րդ հոդվածում խոսվում է իր պատվիրատուի հետ պատվերի վրա աշխատող արհեստավորի ու պատվիրատուի փոխհարաբերության մասին: Բերենք հետևյալ քաղվածքը այդտեղից. «Արուեստաւոր, որ յամնքէ վարձ առնու, որ իր իրք չինէ, կամ կապալով բան անէ, ու չանէ զբանն հայնց զէտ որ պայմանն լինի ու չհաճեցնէ զինքն, նա իր տեղ ըերէ ու հաճեցնէ, կամ դարձնէ զվարձն և նիւթն»[3]: Այստեղ խոսվում է հավանաբար այն արհեստավորի մասին, որն աշխատում է հատուկ պատվերով և պատվիրատուի տված չինանյութով: Այդպիսի արհեստավորն ավելի չուտ կմտնի միջնադարյան բանվորի կատեգորիայի մեջ: Կիլիկիայում կային զգալի թվով սեփականատեր-արհեստավորներ, որոնց մի մասը կախման մեջ էր վաճառականական կապիտալից և սկսել էր անկանոն:

Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքում» հասարակության ցածր խավերը, աղքատ ժողովուրդը, սնանկացած արհեստավորներն ու գյուղացիները համարվում են «տառապեալք» և «կարոտեալք»: Օրենքների ժողովածուն կազմողը հարուստներին համոզում է ժլատություն չանել, չկտրել վարձը աղքատների ու ընչազուրկների և նրանց, ովքեր քաղաքից կալվածքներն են տանում հասցնում անհրաժեշտ բանները[4]:

Աշխատավորության ցածր խավերի սոցիալական ու նյութական դրության վերաբերյալ տվյալները վկայում են մանր արտադրողների՝ արհեստավորների ու գյուղացիների սնանկացման մասին:

Վարձու աշխատողների հասարակական խավը՝ մշակները, վարձվորները, հոոգվորները, վարձականները, գործավորները և արհեստավորները, որոնք աշխատում էին պատվերով ու պատվիրատուի նյութով, ինչպես և հունից դուրս ընկած «տառապյալներն ու կարոտ-

[1] Տե՛ս **Ներսես Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, էջ 106:

[2] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 73:

[3] Նույն տեղում, էջ 71:

[4] Նույն տեղում:

յայները», առաջանում էին մանր սեփականատեր-արտադրողների, առաջին հերթին՝ գյուղացիների սնանկացման հետևանքով: Այս մասին է վկայում «Դատաստանագրքի» 114-րդ հոդվածը, որտեղ ասված է. «Եւ որ հող կամ գետին վաճառէ, թէ վասն տառապելութեան որ ծախէ զիր գետինն և գայ իւր դրացին և ընկերն ու ննէ, նա ի պայմանն է իր համբերելն: Ապա թէ հարուստ է, նա մենակ պարտի այնել զվճարն ի ժամն, զի թէ տարին լմնա ու չլինայ վճարել, նա ի վճարն կարէ առնուլ զիր հողն այլվայ, ու տայ զինչ տուել լինի ի գնողէն, թէ պիտննայ, զի վաճառին վճարն է հանած մանաւանդ այնոց, որ վասն աննկութեան կու ծախեն զիրենց իրքն, զի ինչվի եօթն լոկ գրեցաք, թէ չէ յորդից յորդիք, կամ վճարի գինն թղթով և վկայօք, կամ դառնա ծախածն, և մեկ տարին է պայման»[1]:

Ավատական հասարակության ամենամարդաչատ դասակարգը գյուղացիությունն է: Գյուղացիության սոցիալ-իրավական դրությունը նշանակալի չափով աղդում է ամեն ավատական պետության կյանքի չատ կողմերի վրա:

Կիլիկիայի գյուղացիությունը բաղկացած էր հայերից, մասամբ էլ ասորիներից ու հույներից: Ամենից կարևոր դերը հայ գյուղացիությանն էր պատկանում: Ավատական հողատիրության հետագա զարգացման հետ աստիճանաբար վատանում էր Կիլիկիայի բնակչության, հատկապես գյուղացիների սոցիալ-տնտեսական դրությունը: XII դարի պատերազմներին մասնակցած հայ գյուղացիները նույնպես կախման մեջ էին ավատատերերից:

Կիլիկյան Հայաստանի գյուղացիությունը ըստ չահագործման աստիճանի և ըստ սոցիալական դրության բաժանվում էր չորս կատեգորիայի: Առաջին կատեգորիային պատկանում էին չատ թե քիչ ազատ գյուղացիները: Երկրորդ կատեգորիային՝ դոմննները (regis rustici), երրորդին՝ կախյալ գյուղացիները, որոնք հայտնի են «հարկատուք», «հնազանդք» անվանումներով, չորրորդին՝ «պարիկոս»ները՝ ճորտ գյուղացիները:

«Դատաստանագրքում» կգկտուր տեղեկություններ կան գյուղացի սեփականատերերի իրավաունեցվածքային դրության մասին, որոնք ըստ սոցիալական դրության պետք է քիչ թե չատ ազատ լինեին: Արդեն բերվել է գյուղացիների կողմից իրենց հողակտորները վաճառելու մասին 114-րդ հոդվածի համապատասխան կետը: Վաճառքի փաստից հետևում է, որ XIII դարում Կիլիկիայում կային սեփականատեր գյուղացիներ, բայց գյուղացիության այս խավը սր-

[1] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 62:

նանկանում էր ու նվազում: Գյուղացիները սնանկանում էին և ստիպված էին լինում վաճառել կամ գրավ դնել իրենց հողերը: 117-րդ հոդվածում խոսվում է հենց մանր սեփականատերերի կողմից իրենց ժառանգական ունեցվածքը գրավ դնելու մասին: Հավանաբար, այստեղ խոսքը տուրը կամ հողը գրավ դնելու մասին է: Ահա այդ հատվածը. «Բայց թէ վասն աղքատութեան մարդ ընդ մարդ հաչիվ անէ պայմանով և տայ՝ թէ կալ զիսայ հայրենիքս և տուր ինձ զիսայ չաք դևկանս ինչվի հանչանք մի ժամ, նա յայն սահմանեալ ժամն կամ յոր ժամ ուզէ, որ դառնայ յինք յիր պայմանովն և վկայօք, նա կամ դառնայ կամ ազգ մի հաչտին ընդ իրար»[1]:

Այս կետը չկա Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»: Մանր սեփականատեր գյուղացիների կողմից իրենց հողակտորները վաճառելու կամ գրավ դնելու մասին Սմբատի «Դատաստանագրքի» հոդվածները, գերագույն իշխանության կողմից վանքերին ու աղնվականությանը ընդարձակ հողեր ու գյուղեր ընծայելու մասին ժամանակագրերների տեղեկությունները, ավատատերերի ու հոգևորականության կողմից գյուղացիների հողակտորների զավթման մասին մերկացնող գրականության մեջ եղած պատկերավոր նկարագրությունները, բոլորը վկայում են գյուղացիության սնանկացման, հողազրկման ու ճորտացման մասին:

Դոմեն գյուղացիները կամ պետական գյուղացիները (regis rustici), ինչպես որ նրանց անվանել են 1236 թվի ընծայագրում, հավանաբար եղել են կիսաազատ գյուղացիներ: Համենայն դեպս նրանք ավելի ազատ են եղել, քան կախյալ գյուղացիները: Բայց նրանք էլ պարտավոր էին իրենց բերքի մեկ հինգերորդը տալ թագավորական կառավարչին: Ավատատիրոջ իշխանության տակ անցնելիս, ինչպես դա երևում է ընծայագրից, այդ տուրքը նրանք վճարում էին նոր տիրոջը: 1236 թ. ընծայագրից իմանում ենք, որ ավատատերերն ու վանքերը ստանում էին ոչ միայն հողերը, այլև գյուղացիներից տուրքը գանձելու իրավունքը[2]: Դոմենի (հայրենակալվածքի) գյուղացիները նույն տուրքը նույն չափով վճարում էին, ինչպես պետք է վճարեին, ըստ Սմբատի «Դատաստանագրքի»՝ կախյալ գյուղացիները:

Կախյալ գյուղացիների տարբեր կատեգորիաները՝ բահրատուները, ենթակաները, պարիկոսները և մյուսները, թեև իրենց սոցիալ-իրավական դրությամբ տարբերվում էին միմյանցից, բայց բոլորն էլ ավատատիրոջ արտատնտեսական հարկադրանքի տակ էին, կատա-

[1] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 65:

[2] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 142:

բում էին կոռ և բահրա էին վճարում: Կիլիկյան Հայաստանի անձնապես կախյալ գյուղացիների բոլոր կատեգորիաներից ամենածանր պարիկոսների՝ ճորտերի վիճակն էր, որոնք ամրացված էին հողին:

Մխիթար Գոշը «Դատաստանագրքի» հոդվածներից մեկում, որը վերնագրված է «Յաղագս դատաստանաց չինականաց», խիստ արժեքավոր վկայություն է տալիս Հայաստանի գյուղացիների ճորտացման մասին: Այս հոդվածը, որն օգտագործել է Սմբատ Գունդստաբլը իր «Դատաստանագրքում», օգնում է հասկանալու Կիլիկիայի գյուղացիների սոցիալ-իրավական վիճակը, մանավանդ ճորտ պարիկոս-գյուղացիների: Ուստի անհրաժեշտ է նախ և առաջ դա լուսաբանել. «Ազատ յարարչէն եղև մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տէրանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ զայս պատչաճ կարծեմ դատաստան, զի թողեալ զտէրունիան ազատ է ուր կամեսցի կալ: Ապա թէ այսմ ոչ ներէ ոք ի տէրանցն և բռնազատէ զգենացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն ազատ են որդիք ծնեալք այլուր և ոչ անդ»[1]: Այս տողերում Մխիթար Գոշը արտահայտել է (ճիշտ է, աստվածաչնչյան ոգով պարուրված) իր ժամանակի համար չատ համարձակ և առաջադիմական միտք, թե մարդն իր բնույթով, իր բնական էությամբ կամ ծնունդով ազատ է, թե նրա կախվածությունը ծագում է այն բանից, որ հողն ու ջուրը խոշոր հողատերերի սեփականությունն են:

XII դարում ուժեղացավ ճորտատիրական իրավունքը Հայաստանում, ու թեև Գոշը տեսականորեն այն կարծիքն է պաշտպանում, որ չինականները պետք է ազատ լինեն, բայց քանի որ նրանք արդեն նշանակալի չափով ճորտացված են, որովհետև սեփականության իրավունքը իրենց կողմից մշակվող հողակտորի նկատմամբ պատկանում է ավատատերերին և իրենք այդ տերերի իշխանության տակ են, ապա նա, լինելով ավատատերերի գաղափարախոսը, փաստորեն ճանաչում է գյուղացիության հիմնական զանգվածի ճորտացման փաստը և կալվածատիրոջ իրավունքը՝ բռնել ու վերադարձնել փախած գյուղացուն: Նա բավարարվում է սոսկ այն բանով, որ ճորտացումից պաշտպանում է փախած գյուղացիների զավակներին, եթե սրանք ծնվել են նոր վայրում:

Նախ, պետք է ասել, Գոշը չինականների մասին իր հոդվածի տեսական մասով ելնում է այն դրույթից, որ երբեմնի գյուղացիները սկզբից եղել են անձնապես ազատ, և կարծում է, թե նրանք պետք է որ այդպիսին լինեին, և դա նրան պատիվ է բերում: Սակայն կապված

[1] **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք Հայոց, էջ 320:

լինելով ավատական չրջանների հետ և կազմելով ավատական իրավունքի օրենքների ժողովածուն, որը կոչված էր պաշտպանելու խոշոր հողատերերի շահերը, Մխիթար Գոշը հաշտվում է այն բանի հետ, որ ավատատերերը անձնապես ազատ գյուղացիներին վերածել են ճորտերի: Նա ճանաչում է ավատատերերի իրավունքը գյուղացիական հողակտորների նկատմամբ և օրենքի հոդվածի առաջին մասում չատ թույլ փորձ է անում առարկել ընդդեմ գյուղացիների ճորտացման, որոնք նստած են տերունական հողի վրա: Ըստ էության «Դատաստանագրքի» այս հոդվածը նշանակում է ոչ այլ ինչ, քան գյուղացիներին հողին ամրացնելու փաստի հաստատում օրենքով, մի կալվածատիրոջից մյուսին, մի կալվածքից մյուսն անցնելու արգելում օրենքով: Այս նույն սկզբունքին է հետևում նաև Սմբատ Գունդստաբլը իր «Դատաստանագրքում»:

Մխիթար Գոշի այդ նույն հոդվածը Սմբատի «Դատաստանագրքում» այսպես է վերնագրված. «Թէ պառիկոս փախչի յիր պարոնէն»: Կազմողը բաց թողնելով Գոշի այդ հոդվածի առաջին մասը, այն տալիս է հետևյալ խմբագրությամբ. «Կու հրամայէ օրէնքս, որ թէ պառիկոս փախչի յիր պարոնէն, նա այն պառիկոսն ապրի, նա կարէ դինք առնուլ պարոնն, ապա թէ մնոնի ի դուրս, նա զորդիքն չկարէ կահրա տանել, քաւել թէ իր կամօք երթայ»[1]: Սմբատի «Դատաստանագրքի» այս հոդվածը հետաքրքիր է նրանով, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» «չինական» բառը այստեղ փոխարինված է բյուզանդական ծագում ունեցող «պարիկոս» բառով, որը նշանակում է ճորտ, այսինքն հողին ամրացված գյուղացի: Սմբատը միանգամայն բաց է թողնում օրենքի ամեն մի հիմնավորում, ինչը նրա հետ հազվադեպ է պատահում, և տվյալ դեպքում, հավանաբար այն պատճառով, որ Մխիթար Գոշի մոտ կա մի պատճառաբանություն, թե մարդիկ իրենց բնույթով ազատ են: Պարիկոսը եղել է լրիվ ճորտացված գյուղացին: Սմբատի «Դատաստանագիրքը» հրահանգում է ավատատերերի իրավունքը փախած պարիկոս-գյուղացիներին վերադարձնելու նկատմամբ, ինչը վկայում է Կիլիկյան Հայաստանի գյուղացիության մի մասը հողին ամրացած լինելու մասին, կախյալ գյուղացիների լայն խավերի լիակատար ճորտացման մասին:

«Դատաստանագրքում» արժեքավոր տեղեկություններ կան գյուղացիների կողմից ավատատերերին բահրա վճարելու մասին, նրանց կոռի ու բեգյարի մասին: Օրենքը, սահմանելով չափը այն բահրայի, որ կախյալ գյուղացիները վճարում էին ավատատերերին, «ըղորդ»

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 67:

(արդարացի) է համարում «հարկուն սահմանն այս, որ զինչ աստուած տա հարկտվին ի հինկէն մէկն»[1]: Իսկ իրականում գյուղացին, հավանաբար, ստիպված էր ավատատիրոջը տալ իր բերքի մեկ հինգերորդ մասից ավելին: Սմբատ Գունդստաբլն ընդգծում է, որ արդարացի է բերքի մեկ հինգերորդ բաժինը վերցնելը: Նշանակում է, իրականում գանձում էին նաև ավելին, ինչը հայտնի է մերկացնող գրականությունից, որտեղ հաճախ է խոսվում անարդարացի տուրքերի մասին: Բահրայի չափը կապված էր լինում ժամանակից, տեղից, գյուղացու կախվածության աստիճանից և այլ հանգամանքներից, բայց, ցավոք, մեզ չեն հասել այն սկզբնաղբյուրները, որոնք ավելի կոնկրետ են ցույց տալիս բահրայի չափերը: Այս բահրայի մասին Մխիթար Գոշի մոտ համապատասխան տեղում ասված է. «եւ արդ այսպէս լիցի: Զանգաստանացին զհինգերորդ մասն առցեն, որպէս Յովսէփ օրինադրեաց յեգիպտոս, զի յորժամ ստացաւ զերկիրն փարաւոնի զհինգերորդն կարգեաց. յայտ է զի նախ ինքեանց էր ժառանգութիւն և ոչ էր հինգերորդ, այլ հայրենի կտուր սակաւ»[2]:

Գոշի «Դատաստանագրքում» այնուհետև ասվում է. «զի արծաթագին անդաստան և այգեստան և բուրաստան մի լիցի ընդ հարկաւ հնգկի, նմանապէս և ջրաղաց և տուն և խանութ»[3]: Սմբատ Գունդստաբլի մոտ սրա փոխարեն ասված է. «Ջրաղացք և այսպիսի չինուածք ազատ է [հարկումից]: Եւ ածուք և այսպիսիք ի տասնէն մէկն տանն»[4]:

«Հնգորդն» անվանվող բահրայի մասին տվյալներ կան 1236 թ. Հեթումի և Զաբելի կողմից տևտոնական ուխտի անունով տրված ընծայագրում, որի համաձայն հայրենակալվածքի (դոմնն) գյուղացիները վճարում էին այսպես կոչված հայկական տուրք[5] (armenice engague): Վ. Լանգլուան մեկնաբանելով ընծայագրի տեքստի «engague» տերմինը, այս տուրքի վերաբերյալ անում է հետևյալ ծանոթագրությունը. «Հայերեն այս բառը նշանակում է նկամուտ, ռննտա, եկք»[6], բայց «ռննտա» բառից հետո դնում է հարցական նշան: Այս բացատրությունը ճիշտ չէ: Սմբատի «Դատաստանագրքում» հիշատակված բերքի մեկ հինգերորդի չափով բահրան կոչվում է «հնկակ»: Անկասկած է, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» «հնգորդը» 1236 թվի ընծայագրի «հայկական էնգագը» (armenice engague) և Սմբատի «Դատաստանագրքի» «հնկակը» միևնույն բանն են: Ընծայագրում լատիներեն տառերով (engague) տրված է հարկի անվանումը, ինչպես որ հնչում է Կիլիկիայում հայերեն (հնգակ-հնգագ): Բերքից մեկ հինգերորդի չափով բահրան հայերեն կոչվում էր «հնգագ»: Հետևաբար, լատինական տեքստի «armenice engague»-ն բահրա էր, որ գանձվում էր և՛ Հայաստանում, և՛ Կիլիկիայում:

Սմբատի «Դատաստանագրքի» նույն հոդվածի համաձայն բահրայից բացի, գյուղացին պարտավոր էր «... ի չարաքն օր մի պարոնին բանի»: Բայց դրանով չէր սահմանափակվում գյուղացիների չահագործումը ավատատերերի կողմից: Գյուղացին պարտավոր էր ավատատիրոջը տալ նաև մեկ լիտր յուղ յուրաքանչյուր կովից, մեկ գառ՝ տասը ծնած ոչխարից: Եղն ազատվում էր այդ հարկումից այն հիման վրա, որ նա տվել է իր հնգնորդն հարկը («եզն այլ ծառայութիւն չպարտի, զի զիր հնկակն տվել է»)[1]: Այստեղ ի նկատի է առնվում այն հանգամանքը, որ արդեն վճարվել է մեկ հինգերորդ մասը այն բերքի, որն աճեցվել է եզան՝ քաշող ուժի օգնությամբ: Զիևրը, ջորիներն ու էշերը հարկման ենթակա չէին, «զի յամէն տօներն, որ են ի տարին 12 դարպայ, գան ծառայն պարոնին և ի բերդն երեու ճանապայ՝ հաց տանեն և երկու [բեռ] աղ»[2]:

Աշխատավոր բնակչությունը, հավանաբար, գլխավորապես գյուղացիները, համընդհանուր պարհակի կարգով ներգրավվում էին ամրոցների շինարարության մեջ, ինչպես դա երևում է «Դատաստանագրքի» հետևյալ բառերից. «Ի քաղաքի և ի բերդի չէնք պատեհ է, որ ամէն երկիրն օգնեն ամէն իրօք, զի ամէնին է, և տեղոյ բնակիչքն՝ աւելի»[3]: Բնակչությունից գանձվող հարկի մասին «Դատաստանագրքում» ասվում է. «Գաւառաց հարկն, որ սահմանովն որ սահմանած է, առնուն պարոնայքն, որ չիշխէ ոք առանց թագւորին՝ զիր աւելցնել»[4]:

Այսպիսով, Կիլիկիայի կախյալ ու ճորտ գյուղացիները ավատատերերին վճարում էին բահրա՝ դաշտերի և այգիների բերքից, կոո էին անում, դանազան տուրքեր տալիս և կատարում էին առերման և այլ պարհակներ:

---

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 18:

[2] **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք Հայոց, էջ 314:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 18:

[5] Տե՛ս **V. Langlois**, Le trésor des chartes d' Arménie, p. 142.

[6] Նույն տեղում:

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 18:

[2] Նույն տեղում, էջ 19:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 18:

«Դատաստանագրքի» վերաբերյալ ավատական տուրքերի ու պարհակների վերոհիշյալ նորմերը ավատատերերի կողմից չէին պահպանվում: XIII–XIV դարերում արագ աճեց Կիլիկիայի քաղաքների բնակչությունը և ուժեղացավ գյուղատնտեսական մթերքների տեղափոխումը արտասահման, ինչը խթան հանդիսացավ գյուղացիներից ավելի բարձր տուրքերի գանձման համար: Մեծացան հարկերը նաև հատկապես այն պատճառով, որ 1266–1375 թթ. ժամանակաշրջանում անհաջող պատերազմներ էին տեղի ունենում Եգիպտոսի սուլթանության դեմ, և մամլուք սուլթանները Կիլիկյան Հայաստանի վրա ծանր ռազմական տուրքեր էին դնում:

«Դատաստանագրքի» մի քանի հոդվածներ նվիրված են ստրուկների սոցիալ-իրավական դրությանը: Ստրուկների վերաբերյալ օրենքները խիստ էին: Համարյա անընդմեջ պատերազմները ստրուկների ձեռքբերման աղբյուրներից էին: Հայտնի է նաև, որ հատկապես XIII դարի երկրորդ կեսից Կիլիկիան եղել է ստրկավաճառության չուկաներից մեկը, որտեղ տարբեր երկրներից ստրուկներ էին բերում ու տանում եվրոպացի ու մուսուլման վաճառականները: Մուսուլմաններից ստրուկներ գնելու և նրանց իրավունքների մասին խոսվում է մի քանի հոդվածներում: Այսպես օրինակ՝ դրանցից մեկում ասված է. «Եւ թէ որ քրիստոնէ ծառայ գնէ յանօրինաց, նա ծառայէ դգնողն է տարի և ապա կարէ բաժնել յիրմէ և վճարել զիր գինն»[1]: 120-րդ հոդվածում մուսուլման ստրուկի մասին ասված է, թե «ուզէ ծառայն քրիստոնէ լինել, նա չկարէ արգելել զինքն տէրն. բայց ծառայ է յիր մկրտութենեն, որ չկարէ բաժնել յիրմէ. բայց թէ ժողվէ զիր գինն տայ յիր տէրն, նա պատեհ է, որ վասն քրիստոնէութեան՝ առնու և ազատէ զինք»[2]: Իտալացի վաճառականները գնում էին ստրուկներ և վաճառում գլխավորապես մուսուլմանական երկրներում, մանավանդ Եգիպտոսում: Արգելվում էր քրիստոնյա ստրուկներին վաճառել մուսուլմաններին[3]: «Դատաստանագրքի» օրենքներից մեկը ստրուկների մասին ասում է. «Եթէ ոք դուստրն վասն աղքատութեան ծախէ... և յորժամ կարենան ծնողքն կամ ազգն վճարել զպարտն՝ նա ազատ է»[4]: Ստրուկին ոչ միայն կարելի էր գնել ու վաճառել: Տերը կարող էր սպանել իր ստրուկին: Սակայն «Դատաստանագիրքը» պարզաբանում է, որ ամեն տեր չէ, որ անսահմանափակ իրավունք ունի անպատիժ կերպով սպանելու իր ստրուկին: «Եթէ ոք զիր ծառայն քշտէ ու սպաննէ, նա զարեան գինն ի զարպասն վճարէ, զի սպանելն և խրատելն պարոնացն է: Բայց թէ ի դարկուց ժամն չմեռնի ու երկու օր անցնի, նա այլ տուգանք չտայ, թէ յետև մեռնի, զի իր ծառան է»[1]: Այսպիսով, եթե օրենքը արգելում էր ոչ տիտղոսավոր ստրկատերերին մահու տալ կամ սպանել ստրուկներին, ապա այն համեմատ դեպք ձևակերպված էր այնպես, որ փաստորեն ամեն մի տեր կարող էր սպանել իր ստրուկին և մնալ անպատիժ՝ նույնիսկ դրամական տուգանք չվճարելով:

Ստրուկն իրավունք չուներ ժառանգել իր տիրոջ ունեցվածքը՝ նույնիսկ նրա կտակի համաձայն. կարող էր ժառանգել միայն իշխանի համաձայնությամբ[2]: Ստրուկը չի կարող դառնալ քահանա՝ առանց իր ազատ արձակման մասին իր տիրոջ գրավոր վկայականի: Ընդ որում օրենքն առաջարկում է գործել չրջահայացորեն, որպեսզի ստրուկին հոգևոր դասի մեջ ընդունելը չդառնա «չարիքի» աղբյուր և պախարակության ու ասեկոսեների տեղիք չտա[3]:

«Դատաստանագրքի» մի քանի հոդվածներում խոսվում է ստրուկներին ազատ արձակելու պայմանների մասին: Այսպես, օրինակ, 5 տարի աշխատած ստրուկը կարող է փրկագնվել և ազատ արձակվել[4]:

Նշելով ստրուկների սոցիալ-իրավական ծանր դրությունը, այնուամենայնիվ անհրաժեշտ է ընդգծել, որ XII–XIV դարերի Կիլիկիայում ստրկությունն ունեցել է առավել մեղմ ձևեր, քան անտիկ ստրկությունն էր: Ստրկական աշխատանքը, հավանաբար, կիրառվում էր գլխավորապես տնային գործերում: Զկան տվյալներ այն մասին, թե ստրկական աշխատանքը նշանակալի չափերով կիրառվել է գյուղատնտեսության մեջ, արհեստային արդյունաբերության կամ հանքագործության մեջ:

«Դատաստանագիրքը» կազմող Սմբատը նաև հայերեն է թարգմանել խաչակիրների ավատական իրավունքի օրենքների ժողովածուներից մեկը՝ «Անտիոքի ասսիզները» և դրանով իսկ հետագա դարերի համար պահպանել է այս կոդեքսը, քանի որ դրա ինքնագիրը կորած է: Թարգմանության վերջում զետեղված իր հիշատակարանում Սմբատն ասում է, թե «Անտիոքի ասսիզները» սկսել է թարգ-

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 66:

[2] Նույն տեղում, էջ 66:

[3] Տե՛ս **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 155:*

[4] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 66:

[1] Դատաստանագիրք Սմբատ իշխանի, էջ 66:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

մանել 1266 թվին՝ եգիպտոսի սուլթանության մամլուքների դեմ տրված Մաոիի ճակատամարտում հայոց զորքերի պարտությունից հետո[1]: «Ասիզները» հայերեն թարգմանելու նպատակը, հավանաբար, այն է եղել, որ դրանք գործադրելով՝ ավատատերերին ստիպեին ավելի լավ կատարել թագավորի հանդեպ ռազմական պարտականությունը, քանի որ վերոհիշյալ ճակատամարտի ժամանակ թագավորի վասալների մի մասը կռվին չէր մասնակցել:

Թարգմանության նախաբանում Սմբատը, ի միջի այլոց, ասում է, որ Անտիոքի իշխանապետության «Ասիզների» ինքնագիրը ստացել է իր ազգականից՝ Անտիոքի կոննետաբլ Սիմոնից, և թարգմանել հայերեն[2]: Իր աշխատանքի նպատակի, այսինքն «Ասիզների» թարգմանության մասին նա գրում է. «և որպեսզի մեր ժողովուրդը և հայոց արքունիքը հետևեին Ասիզների օրինակին..., ես մեծ փութաջանությամբ ու մեծ ջանքեր թափելով ձեռք բերեցի այն և ձեռնարկեցի թարգմանել, իսկ կրը թարգմանեցի, թարգմանությունն ու բնագիրը ուղարկեցի Անտիոքի արքունիք, որտեղ նրանք բաղդատեցին և ստորագրություններով հաստատեցին, որ ղրանք բառ առ բառ համապատասխանում են իրար»[3]:

Օրենքների այդ ժողովածուն, իհարկե, կազմված է եղել Երուսաղեմի թագավորության «Ասիզների» հիման վրա, բայց զգալիորեն տարբեր է դրանից: Ճիշտ է, տարբերվում է ոչ թե իրավական սկզբունքներով, այլ օրենքների խմբագրմամբ, բովանդակության ավելի պակաս լեցունությամբ: Անտիոքի իշխանության «Ասիզները» հրատարակել է Ալիշանը 1876 թվին, հայերեն տեքստի փրանսերեն զուգահեռ թարգմանության հետ միասին: «Անտիոքի ասիզները» բաժանվում են երկու մասի՝ սենյորների ու վասալների ասիզներ և քաղաքացիների ասիզներ:

Առաջին մասը, որը նախանշված էր բարձր պալատի համար, այսինքն՝ Անտիոքի արքունիքի կուրիայի, կազմված է 17 գլխից, որոնցում խոսվում է գլխավորապես սենյորի ու վասալի փոխհարաբերությունների մասին՝ պատերազմի ժամանակ և խաղաղ ժամանակ, իր սենյորի նկատմամբ վասալի պարտականությունների մասին և ընդհակառակը, մի խոսքով՝ սենյորի ու վասալի փոխադարձ իրավունքների ու պարտականությունների մասին:

[1] Տե՛ս Assises d' Antioche, trad. L. Alishan, Venise, 1876, p. 93:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 3:

[3] Նույն տեղում:

«Անտիոքի ասիզների» երկրորդ մասի բոլոր գլուխներում՝ քաղաքացիների ասիզներում, որոնք, հավանաբար, կիրառվում էին պալատում քաղաքային բնակչության դատական գործերի քննության ժամանակ, չարադրված են սեփականության հարաբերությունների իրավական նորմերը՝ կապված առևտրական ու դրամական գործառնությունների հետ: Քաղաքացիների ասիզները պետք է բավարարեին օրենքների ժողովածուի այն պահանջը, որն առաջացել էր XIII դարի կեսերին Կիլիկյան Հայաստանի քաղաքների հետագա աճից:

Եթե «Անտիոքի ասիզները» ավելի մանրամասնորեն չուսումնասիրում էին սենյորների ու վասալների փոխհարաբերությունների կամ առևտրական ու դրամական գործարքների իրավական հարցերը և կարող էին Կիլիկյան Հայաստանում օգտագործվել այդ տեսակետից, ապա դրանք ընդհանուր առմամբ չատ էին զիջում Սմբատի «Դատաստանագրքին», որը չատ ավելի լայնորեն էր ընդգրկում Կիլիկիայի հայկական պետության ավատական հասարակության սոցիալ-իրավական ու քաղաքական հարաբերությունները և չատ ավելի լայնորեն էր կիրառվում դատական պրակտիկայում՝ որպես ավատատերերի չահերը աշխատավոր ժողովրդի դեմ պաշտպանող օրենքների ժողովածու:

Հայտնի չէ, թե Կիլիկիայում ի՞նչ մասչտաբով է կիրառվել «Անտիոքի ասիզները»: Այս օրենքների ժողովածուն լինելով ճշգրիտ թարգմանություն՝ որպես պատմական սկզբնաղբյուր կոնկրետ պատկերացում չի տալիս Կիլիկյան Հայաստանի հասարակական հարաբերությունների մասին, մինչդեռ Սմբատի «Դատաստանագիրքը», որը կազմված էր Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» վերափոխման հիման վրա և կիրառելի էր Կիլիկյան Հայաստանի իրական հասարակական պայմանների համար, չատ արժեքավոր սկզբնաղբյուր է, որն օգնում է լուսաբանել այդ պետության հասարակական-քաղաքական կարգերը:

Կիլիկիայում հայ խիտ բնակչության կենտրոնացումը և ինքնուրույն պետության կազմավորումը XI դարում բարենպաստ պայմաններ ստեղծեցին այդ երկրում հայ մշակույթի զարգացման համար: Կիլիկիայի հայկական պետության մշակույթը զարգանում էր Հայաստանի մշակույթի հետ սերտ փոխկապակցվածությամբ և փոխազդեցությամբ: XI դարից Կիլիկիայում առաջացել են հայ մշակույթի նոր օջախներ, նոր կենտրոններ: Քաղաքներում (Տարսոն, Սիս և այլն) ու խոշոր վանքերում (Կարմիրվանք, Դրազարկ և այլն) բացվել էին դպրոցներ ու մատենադարաններ:

XI դարի արտագաղթի ժամանակ և հաջորդ դարերում Հայաստանից Կիլիկիա էին բերվում ձեռագրեր: Կիլիկիայում արտագրված և նոր գրված ձեռագիր գրքերը հետո ուղարկվում էին Հայրենիք:

Կիլիկյան Հայաստանում մեծ ուշադրություն էր դարձվում նախորդ դարերում ստեղծված հայկական ձեռագրերի հավաքման, արտագրման և ուսումնասիրման վրա, ինչպես և գրական, աստվածաբանական ու գիտական նոր երկերի ստեղծման վրա: Հազարավոր հայերեն ձեռագրերից մի քանի հարյուրը՝ հույժ գնահատելի, հիանալի մանրանկարներով զարդարված, այժմ պահվում է Երևանի Մատենադարանում և հին ձեռագրերի այլ գրադարաններում:

Նոր վայրերում՝ Միջագետքում ու Կիլիկիայում, հայ գրողներն ու գիտնականները, չկտրելով իրենց կապերը Հայրենիքի հետ, ստեղծում էին այնպիսի երկեր, որոնք հավասարապես վերաբերում էին ինչպես հայրենաբնակ հայերին, այնպես էլ արտագաղթածներին, հավասարապես գնահատվում էին և՛ սրանց, և՛ նրանց կողմից, ու մտել են հայ ժողովրդի մշակույթի ընդհանուր ֆոնդի մեջ:

Եթե XII դարում իրենց երկերով աչքի էին ընկնում պատմիչ Մատթեոս Ուռհայեցին, բանաստեղծ Ներսես Շնորհալին (Հռոմկլա), Գրիգոր Տղան, որը գրել է «Ողբ Երուսաղեմի» պոեմը (Հռոմկլա), ապա XII դարի վերջին և XIII դարի սկզբին մեծ նշանակություն են ստանում Կիլիկյան Հայաստանի մշակութային կենտրոններն ու գրողները: Այդ բանին նշանակալիորեն նպաստում էին երկրի տնտեսական վերելքը, հասարակական առաջընթացը և Կիլիկիայի հայկական պետության ռազմաքաղաքական հաջողությունները: Կիլիկյան Հայաստանում XIII դարում ստեղծվել են զգալի թվով գրականության ու արվեստի արժեքավոր գործեր, որոնցից մի քանիսը պարունակում էին վերածնության մշակույթի սաղմեր, սակայն մի շարք անբարենպաստ հանգամանքների պատճառով հետագա զարգացում չեն ստացել:

Կիլիկյան Հայաստանի գրական ու գիտական երկերը ակնառու տեղ են գրավում XI–XIV դարերի հայ մշակույթի պատմության մեջ: Դրանցից ամենաարժեքավորները Վարդան Այգեկցու «Առակներն» են, որոնք խորապես բացահայտում են կիլիկյան հայ հասարակության կենցաղն ու սոցիալական հակասությունները, Սմբատի «Դատաստանագիրքը»՝ կիլիկյան Հայաստանի իրավունքի ու պետական կարգի շատ արժեքավոր մի սկզբնաղբյուր, Սմբատի «Պատմությունը», որը լուսաբանում է այդ պետության ներքին կյանքը և միջազգային հարաբերությունները, Գրիգոր Ակնեցու «Պատմութիւն վասն

ազգին նետողաց»-ը, որն արժեքավոր աղբյուր է Հեթում I-ի ներքին ու արտաքին քաղաքականության ուսումնասիրության համար (այս աշխատության հեղինակը առաջ համարվում էր Մաղաքիան): Պատմական երկերին կարելի է ավելացնել Վահրամ Րաբունու և Հեթումի ժամանակագրությունները:

Կիլիկյան Հայաստանում ստեղծվում էին նաև ինքնուրույն ու թարգմանական (հունարենից, լատիներենից, ասորերենից, արաբերենից) երկեր՝ քիմիայից, մաթեմատիկայից ու բժշկությունից: Բժշկական ինքնուրույն երկերից մատնանշենք հայ բժիշկ-գիտնական Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութեան» նշանավոր աշխատությունը՝ գրված կիլիկեցի հայերի խոսակցական լեզվով: Նա ծագումով Հերից էր (Խոյ), հավանաբար սովորել և անկասկած աշխատել է Կիլիկիայում: Մխիթար Հերացին եղել է շատ զարգացած գիտնական, իմացել է հունարեն, արաբերեն ու պարսկերեն: Բժշկությունից բացի, նա ուսումնասիրել է փիլիսոփայություն, աստղագիտություն և բնական գիտություններ: Այդ հիրավի գիտական աշխատության մեջ Մխիթար Հերացին դրսևորել է հույն և արաբ գիտնականների բժշկական երկերի ու բնության օրենքների խոր, հիմնավոր իմացություն: Մալարիայի պատճառները հետազոտելիս և այդ հիվանդության բուժման եղանակները չարաշահելիս նա դրսևորել է այնպիսի մտածողություն, որը կաչկանդված չէ սխոլաստիկայով ու հեղինակություններով, քննադատաբար է վերաբերվել անտիկ և արար հեղինակների առանձին դրույթներին: Նրա աշխատությունը վկայում է, որ բժշկական կարևորագույն հարցերի տեսական մշակումը նա կապում էր դրանց գործնական կիրառման հետ[1]:

Մխիթար Հերացին իր բազմագիտությամբ և մի քանի լեզուների իմացությամբ բացառություն չէր: Կիլիկյան Հայաստանի շատ գրողներ ու գիտնականներ երկու-երեք և ավելի լեզուներ են իմացել: Սկզբում գերակշռում էր հունարեն և ասորերեն սովորելու ձգտումը, իսկ հետո՝ լատիներեն ու ֆրանսերեն: Լեզուներ իմանալու չնորհիվ հայ գիտնականները ոչ միայն ուսումնասիրում էին փիլիսոփայական, գրական, գիտական, աստվածաբանական և այլ երկեր հունարեն, լատիներեն, ասորերեն և արաբերեն լեզուներով, այլև այդ լեզուներից թարգմանում էին հայերեն: Ներսես Լամբրոնացին, օրինակ, հունարեն, ասորերեն և լատիներեն լեզուներից մի քանի երկեր է թարգմանել: Ինչպես հայտնի է, Կիլիկիայում հայերեն են թարգմանվել «Անտիոքի ասպիզները», Միքայել Ասորու «Ժամանակագրությունը» և մի շարք այլ գործեր:

[1] Տե՛ս **Л. А. Оганесян,** *История медицины в Армении, т. II, Ер., 1946, с. 76:*

Հովհաննես Երզնկացին մի քանի տարի ապրելով Կիլիկիայում, այդտեղ սովորել է լատիներեն լեզուն և թարգմանել Թովմա Աքվինացու «Աստվածաբանության հանրագումարի»՝ միջնադարյան սխոլաստիկական փիլիսոփայության այդ խոշորագույն երկի մի մասը: Սակայն նա իր պոեզիայում դրսևորել է այլ աշխարհընդրոնում: Բանաստեղծություններից մեկում նա այս կերպ է արտահայտել իրականության զարգացման հակասականությունը.

Աչխարհս ի տոլապ նման, որ ի վեր՝ է ի վայր թաւալի,
Վերինն այլ ի վայր դառնայ, և վարինն ի վեր ոլորի,
Մտիկ դու հիւանն արա, որ թապուե՝ է օրոցք չինէ նա,
Մէկն գայ և մէկն երթայ, նա իւր բան պակաս չի մնայ[1]:

Վահրամ Բարունին՝ Լևոն III-ի գրասենյակի վարիչը, իր «Ստորոգութենական Արիստոտելի» աշխատության մեջ խոր իմացություն է դրսևորում փիլիսոփայության ասպարեզում:

Կիլիկյան Հայաստանում արվեստի տեսակետից առանձին զարգացման ու կատարելության հասավ մանրանկարչությունը, որն աչքի է ընկնում բարձր վարպետությամբ, այուժենների բազմազանությամբ, ձևի ու բովանդակության հարստությամբ: Կիլիկիայի մանրանկարիչները արքունիքի և աղնվականության հովանավորությանն էին արժանանում՝ նրանցից ստանալով ձեռագրերը մանրանկարներով զարդարելու պատվերներ: Կիլիկյան Հայաստանի ձեռագրեր հավաքողներից ու գնահատողներից պետք է նշել պատմիչ Սմբատին, արքեպիսկոպոս Հովհաննեսին՝ Հեթում I-ի եղբայրներին: Պահպանվել են Հովհաննեսի կողմից կամ նրա պատվերով արտագրված մի քանի տասնյակ ձեռագրեր, որոնք զարդարված են կիլիկյան դպրոցի մանրանկարներով: Կիլիկյան Հայաստանում ստեղծված հայկական մանրանկարներին բնորոշ են ռևալիզմը, վառ գույները, ոսկու փայլը:

Կիլիկիայի նկարիչները մանրանկարչության արվեստում դրսևորում են բնության իմացություն ու սեր բնության նկատմամբ, մարդուն, բուսական ու կենդանական աշխարհը պատկերելու հմտություն: Կիլիկյան վարպետների հիանալի մանրանկարներում մենք գտնում ենք կենցաղի և սոցիալական միջավայրի արտացոլում, իրական կյանքից տեսարաններ, անհատական ու խմբային դիմանկարներ: Կիլիկյան Հայաստանի խոշոր մանրանկարիչների՝ Թորոս Ռոսլինի (XIII դ. երկրորդ կես) և նրա աշակերտների ստեղծագործությունները տոգորված են Վերածնության մշակույթի ոգով:

[1] Մարգարիտներ հայ քնարերգության, Ե., 1971, էջ 154:

Կիլիկյան Հայաստանի մանրանկարչության արվեստը ծագեց ու զարգացավ բուն Հայաստանի մանրանկարչության հետ սերտ կապի մեջ և դրա հետ ընդհանուր բնորոշ գծեր ունի:

Ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում XI–XIV դարերի գրական ու գիտական երկերն ստեղծվում էին հայ մշակույթի ընդհանրության և Կիլիկիայի ու Հայաստանի գրողների սերտ չփման հիման վրա: Անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ Հայաստանի և Կիլիկիայի մշակութային կենտրոնների միջև կենդանի կապ էր պահպանվում: Այդ երկրների գրողներն ու գիտնականները նամակագրության մեջ էին միմյանց հետ: Ինչպես որ գիտելիքների ծարավ մարդիկ Հայաստանից գալիս էին Կիլիկիա՝ սովորելու և աշխատելու, այդպես էլ կիլիկեցի հայերից շատերը նույն նպատակով գնում էին Հայրենիք, մանավանդ Հյուսիսային Հայաստանի մշակութային կենտրոններ: Կիլիկիա էին գալիս նաև աստվածաբաններ ու եպիսկոպոսներ Մեծ Հայքից և այլ երկրներից, որտեղ ապրում էին տարագիր հայերը՝ եկեղեցական գործերով դիմելով կաթողիկոսին ու թագավորին:

Դեպի Կիլիկիա ուղևորություն է կատարել և այստեղի մշակութային կենտրոններում հին ձեռագրեր է ուսումնասիրել, իր գիտելիքներն ընդլայնել «Դատաստանագիրք Հայոց»-ի հեղինակ Մխիթար Գոշը: Նա իր օրենքների ժողովածուում ներառել է օրենքի մի քանի նորմեր, որոնք ընդունված են եղել Կիլիկիայում ու Սիրիայում: Նրա «Դատաստանագրքի» ծովային իրավունքի նորմերը կիրառվում էին Կիլիկիայում: Պատմիչ Վարդանը 1236 թ. եկել է Կիլիկյան Հայաստան և Հանդիպում ունեցել Հեթում թագավորի հետ: Ապա մի քանի տարի անց է կացրել Հռոմկլայում[1]:

Պատմիչ Վարդանը, Կիրակոս Գանձակեցու նման, խիստ հետաքրքրվում էր Կիլիկիայի պատմությամբ և ընթացիկ քաղաքական իրադարձություններով: Երկուսն էլ արժեքավոր շատ փաստեր են հաղորդում սելջուկների, խաչակիրների, մոնղոլների, Բյուզանդիայի ու Եվրոպայի հետ Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունների մասին, ինչպես և Կիլիկիայի ու Հայաստանի միջև եղած կապերի մասին:

1286 թ. Կիլիկիա է եկել «Սիսական տան պատմության» հեղինակ Ստեփաննոս Օրբելյանը, որն այն ժամանակվա առավել նշանավոր տոհմից էր՝ Սյունիքի տերերի: Կիլիկիայում կաթողիկոսը նրան Սյունիքի միտրոպոլիտի աստիճան է չնորհել, և նա պատիվների է արժանացել Լևոն III թագավորի կողմից:

[1] Տե՛ս **Մ. Օրմանյան,** Ազգապատում, Կ. Պ., 1913, էջ 1625 և 1635:

Հայ խոշորագույն բանաստեղծ-մտածող Հովհաննես Երզնկացին 1281 թ. նկել է Կիլիկիա և այստեղ երեք տարի զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ՝ օգտվելով Լևոն III թագավորի հովանավորությունից: 1316 թ. նա նորից է նկել Կիլիկիա՝ եկեղեցական ժողովին մասնակցելու համար:

Այսպիսով, Կիլիկյան Հայաստանի հասարակական-քաղաքական կարգը և մշակույթը զարգանում էին Հայաստանի մշակույթի ու հասարակական կյանքի հետ անխզելի կապի մեջ: Կիլիկեցի հայերը կենդանի կապ էին պահպանում Առաջավոր Ասիայի այլ մարզերի հայերի հետ և մանավանդ մայր Հայրենիքի՝ Մեծ Հայքի, որտեղից հայերի ներհոսքը XIII դարում չէր ընդհատվում: Այս ամենի շնորհիվ Կիլիկիայի հայկական պետությունը մինչև իր գոյության վերջը պահպանում էր իր ինքնատիպ դեմքը, և հայերենը մինչև վերջը մնում էր որպես պետական լեզու:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1220–1270 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հեթումյանների կողմից իշխանության գլուխ անցնելը: Մոնղոլների կողմից Անդրկովկասն ու Փոքր Ասիան նվաճելը և Հեթում I-ի դիրքը: Հեթում I-ի պատերազմները Կոստանդին Լամբրոնացու և Իկոնիայի սուլթանության դեմ: Սմբատի ուղևորությունը դեպի Հորդա՝ Գույուկ խանի մոտ, և Հեթում I-ինը՝ Մանգու խանի մոտ: Պատմիչ Հեթումը՝ Մանգու խանի հետ Հեթում թագավորի դիվանագիտական հարաբերությունների մասին: Հուլավու խանի կողմից Բաղդադի խալիֆայության նվաճումը և Կիլիկյան Հայաստանի զորքերի մասնակցությունը մոնղոլների՝ դեպի Սիրիա կատարած արշավանքներին: Իկոնիայի սելջուկների ու թուրքմենների դեմ մղված պատերազմները: Հուլավու խանի միջամտությունը Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սուլթանության փոխհարաբերություններին: Մոնղոլ ուլուսների միջև եղած թշնամանքը և Եգիպտոսի սուլթանության կողմից դրա օգտագործումը խաչակիրների ու Կիլիկիայի վրա հարձակվելու համար: Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները մոնղոլների, խաչակիրների և Եգիպտոսի սուլթանության հետ XIII դարի 60-ական թվականներին: Մամլուքների հարձակումը Կիլիկիայի վրա 1266 թվականին և Մառիի մոտ տրված ճակատամարտը: Ներքին կյանքը XIII դարի 60-ական թվականներին: Հայ պատմիչների վերաբերմունքը մոնղոլների հանդեպ:

Լևոն II-ի գահը ժառանգեց մանկահասակ դուստրը՝ Զաբելը, որի մայր Սիվիլլան Կիպրոսում իշխող Լուզինյանների և Պլանտագենտների դինաստիայից էր: Հոր կամքով նրա խնամակալները դարձան Ադամը՝ Գաստոնի սենյորը և Պամփիլիայի ընդարձակ մի մարզի տերը, և Կոստանդինը՝ Լամբրոնի իշխանների տոհմից: Ադամը, տարեգիրների ասելով, «ըստ բնական ատելութեանն յունաց ընդ ազգիս հայոց, քանզի հոռոմ էր ազգաւ, խորհէր ի միտս յինքն առնուլ զիշ-

խանութին, վասն որոյ փութապէս ի խնամոցն աստուծոյ առնու զարժանն պատուհաս, սպանաւ ի հաչիչնացն սակաւ ժամանակս ինչ կալեալ զպայլութիւնն»[1]:

Պետութեան խնամակալը զարձաւ Կոստանդին պայլը՝ աղդեցիկ ու զորեղ մի ավատատեր: Նա իրադարձութիւնների հետագա ընթացքն օգտագործեց, որպեսզի թագավորական գահին բազմեցնի իր որդի Հեթումին:

Լևոն II-ի մահից չատ չանցած՝ Անտիոքում հեղաչրջում եղավ հօգուտ Բոհեմունդի՝ Տրիպոլիի կոմսի, որի կողմնակիցները քաղաքի դարպասները բացեցին նրա առաջ: Ռուբեն-Ռայմունդը սկզբում թաքնվեց միջնաբերդում, իսկ քիչ անց գիշերով փախավ Կիլիկիա: Լինելով Ռուբեն III-ի թոռը, նա անհաջող փորձ արեց տիրել Կիլիկիայի թագավորական գահին, բայց Կոստանդինի հրամանով նրան բռնեցին ու բանտ դրեցին, որտեղ, ըստ Աբուլ Ֆառաջի, նրան իր մոր՝ Ալիսի հետ սպաննեցին: Ըստ այլ աղբյուրների, Ռուբեն-Ռայմունդը մահացել է բանտում՝ երկու տարվա բանտարկութիւնից հետո:

Կոստանդինը չէր կարող Ռուբենի դեմ տարած հաղթանակն իսկույն օգտագործել իր որդի Հեթումի համար գահն ապահովելու նպատակով: Դրան խանգարում էին ուրիշ ուժեղ ավատական տներ: Սմբատի ժամանակագրութեան մեջ պատմվում է, որ 1222 թ. նա խորհրդակցութեան հրավիրեց բարձր հոգևորականութեանը և զինվորական վերնախավին և նրանց դիմեց հետևյալ խոսքերով. «Պարոնա՛յք, դուք գիտեք... թէ մեր պարոնադուստրս (Լևոն II-ի դուստրը) կարգման եղաւ: Ամէնդ թէ տպիրվեցուք, որ մեզ պարոն բերեմք, զի ես ուզեմ, որ իմ տանն և իմ որդուոցն անդորրութիւն առնեմ»[2]: Խորհրդակցութիւնը մի քանի օր տևեց, և «հայնց պատահեցին, որ բան ի յայլ տեղաց, բերեն զԱնտիոքոյ բրնձին որդին՝ զՖիլիպն, զի ի մօտս է, և յաւ կարէ օգնել մեզ ի մեր ամէն կարիք»[3]:

Աղբյուրներից երևում է, որ Կոստանդինը դեմ չի եղել մանկահասակ Զաբելին ամուսնացնել իր անչափահաս որդի Հեթումի հետ և ինքը կառավարել, բայց պարոնները այլ բան են որոշել, և Կոստանդինն ստիպված է եղել զիջել նրանց: Զաբելին պսակել են արքայադուստր Ֆիլիպի հետ, որը 16 տարեկան էր: Կիլիկիայի հայ իշխանները Ֆիլիպի առաջ պայման են դրել, որ «հայենակ կենայր, ու զեկեղեցին և զանդան հայենակ տանէր, և զամէն մարդ յիւր իրաւունքն պահէր»[1]: Առաջվա նման իշխանութեան գլուխ մնում էր Կոստանդինը: Բայց Ֆիլիպը չուտով խախտել է այդ պայմանը և փորձել է իշխանութիւնից հեռացնել նրան: Կոստանդինը հենվելով իրեն հավատարիմ իշխանների վրա՝ Ֆիլիպին գցել է գահից: Այս առթիվ պատմիչ Սմբատն ասում է, որ երբ Ֆիլիպը «մեծացաւ և եղև քան տարւոյ, նա իր հօրն թէ տպրով կուզէր, որ ձգէր զհայոց զամէն իշխանքն, և իրոյն (ֆրանկներին – Գ. Մ.) զնէր, այնչափ որ չկարացին ժուժել իւրեան: Բռնեցին զինքն ի Թիլն և յաթոռոյն ձգեցին, և արարին բերդարգել, որ մնաւ: Եւ պայլ դրին զպարոն Կոստանդին»[2]: Կիրակոսը հաղորդում է, որ Ֆիլիպը իր հոր խորհրդով Անտիոք ուղարկեց «զթագն Լևոնի արքայի և զպաղատն արքունական, զոր երևելի աւուրս կանգնէին, և այլ գանձս ոսկւոյ և արծաթոյ: Իբրև տեսին իշխանքն, եթէ ոչ է միամիտ այրն յարքայութեան անդ, ըմբռնեալ զնա՝ արարին յարգելս»[3]:

Այսպիսով, Կոստանդինը օգտագործելով հայ իշխանների դժգոհությունը, որ առաջացել էր Ֆիլիպի կողմից հայկական սովորութիւնները պահպանելու խոստումը խախտելու պատճառով, պետական հեղաչրջում է կատարել: Իշխանութիւնը գրավելու համար Կոստանդինն իր կողմն է գրավել կաթողիկոսին և աղդեցիկ իշխաններին: 1226 թ. թագավոր է հռչակվել Կոստանդինի որդի Հեթումը, որը պսակված էր Զաբելի հետ՝ հակառակ վերջինիս ցանկութեանը: Որպես զահապահ (ռեգենտ) Կոստանդինը փաստորեն կառավարում էր երկիրը: Այս մասին Կիրակոսը գրում է. «Իսկ մեծ իշխանն Կոստանդին... զամենայն հոգս արքայութեան յանձն առնալ՝ իմաստարար կարգաւորէր. զկէսն հնազանդէր սիրով, և զոչ հնազանդսն բառնայր ի միջոյ՝ զոմանս փախստական առնելով և զայլս մահուամբ»[4]: Այս փոփոխութեանը թշնամաբար տրամադրված խաչակիրներին ու կաթոլիկ հոգևորականութեանը արտաքսել են երկրից: 1226 թ. հեղաչրջումը ոչ միայն նոր դինաստիայի հաստատում էր նշանակում, այլև՝ խաչակիրների քաղաքական աղդեցութեան թուլացում Կիլիկիայում:

Հենվելով Բյուզանդիայի վրա՝ Լամբրոնի իշխանները Կիլիկիայի հայկական պետութեան ծագումից սկսած մինչև Լևոն II-ի թագադրումը պայքարում էին իրենց ինքնուրույնութեան համար: Զաբելի

[1] **Մխիթար Այրիվանեցի,** *Ժամանակագրութիւն, էջ 506:*

[2] **Սմբատայ Սպարապետի** *Պատմութիւն, էջ 111:*

[3] *Նույն տեղում:*

[1] **Սմբատայ Սպարապետի** *Պատմութիւն, էջ 111:*

[2] *Նույն տեղում, էջ 111–112:*

[3] **Կիրակոս Գանձակեցի,** *Պատմութիւն, էջ 177:*

[4] *Նույն տեղում, էջ 179:*

հետ Հեթումի ամուսնության չնորհիվ երկու տոհմերը՝ Ռուբինյաններն ու Հեթումյանները միավորվեցին, առաջացավ Ռուբինյան–Հեթումյան դինաստիան: Փաստորեն իշխանությունն անցավ Հեթումյաններին: Այս գերդաստանի անդամները տիրեցին երկրի բարձրագույն պաշտոններին. Հեթում Թագավորի հայր Կոստանդինը դարձավ որդու իշխանակիցը, Հեթումի եղբայր Սմբատը ստացավ կոննետարրի պաշտոնը և, այսպիսով, դարձավ պետության դինված ուժերի հրամանատարը, մյուս եղբայրը՝ Օշինը դարձավ ծովափնյա Կոռիկոս բերդի ու նավահանգստի տերը, կրտսեր եղբայրը՝ Լևոնը, հետագայում դարձավ մարշալ, մյուս ազգականները դարձան վանահայրեր ու եպիսկոպոսներ[1]: Լամբրոնի ամրոցն ու տիրույթը վերադարձվեցին Հեթումյանների ազգականներից մեկին՝ Կոստանդինին:

Հեթումի (1226–1270) թագավորման առաջին տարիները համընկան Իկոնյան սուլթանության առավելագույն հզորության՝ սուլթան Քեյ Կուբադի (1219–1236) կառավարման ժամանակաշրջանի հետ: Բայց Արևելքում չուտով խոշոր փոփոխություններ տեղի ունեցան՝ կապված մոնղոլների արշավանքի հետ, և Կիլիկյան Հայաստանի միջազգային դրությունը փոխվեց: Մոնղոլների առաջին ներխուժումը Անդրկովկաս (1220–1222) ուժգին ցնցումներ չառաջացրեց Առաջավոր Ասիայի երկրներում: Առավել վտանգավոր եղան սուլթան Ջալալ էդ դինի (1225–1231) ամայացուցիչ ներխուժումները: Զարմադանի ու Բաչուի (1235–1244) հորդաների երկրորդ արշավանքի ժամանակ մոնղոլները կործանեցին Փոքր Ասիայի Սելջուկյանների հզորությունը: Վերջապես, Հուլավու խանի գալուց և Միջագետքը նվաճելուց հետո սկսվեց մոնղոլների պայքարը եգիպտոսի դեմ՝ Սիրիային տիրելու համար, եգիպտոսի, որը նրանց ուժեղ հակառակորդը դուրս եկավ: Դրան նպաստում էր նաև Լյուդովիկոս IX-ի գլխավորած VII և VIII խաչակրաց արշավանքների անհաջողությունը, որոնց նպատակն էր գրավել եգիպտոսը: Եգիպտոսի սուլթանությունը էլ ավելի ուժեղացավ մամլուքների կողմից իշխանությունը զավթելուց հետո, որոնք Սիրիայի համար XIII դարի 50–60-ական թվականների պատերազմներում հաղթեցին մոնղոլներին, վերջնականապես ջախջախեցին խաչակիրներին և ապառնալիք դարձան Կիլիկիայի համար:

Իհարկե, Կիլիկյան Հայաստանը քաղաքական կտրուկ փոփոխությունների ենթարկվեց՝ կապված Առաջավոր Ասիայում մոնղոլների նվաճումների հետ: Առաջավոր Ասիայի երկրներում տվյալ փուլի միջազգային հարաբերությունների այս գլխավոր գործոններով էլ պայ-

[1] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 179:

մանավորված էին Հեթում I-ի դիվանագիտական հարաբերությունները մոնղոլների հետ:

Հայտնի է, որ Միջին Ասիան նվաճելուց հետո մոնղոլական զորամասերը Ջեբեի և Սուբեդեի գլխավորությամբ հետապնդելով Խորեզմ շահ Ջալալ էդ դին Մուհամմեդին՝ 1220 թ. ներխուժեցին Իրան և Անդրկովկաս: Հայ-վրացական զորքերը Իվանե աթաբեկի հրամանատարությամբ մոնղոլներին համառ դիմադրություն ցույց տվին Շամխորի մոտ (1221): Այնուհետև, ինչպես հայտնի է, մոնղոլները անցնելով Դերբենդի լեռնանցքը՝ ներխուժեցին պոլովցիների տափաստանները և Կալկայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո նա վերադարձան:

Մոնղոլների արշավանքի մասին Իբն ալ Ասիրը գրում է, որպես «այնպիսի իրադարձության, որի կայծերը հասնում էին բոլոր կողմերը և որի չարիքը տարածվում էր ամենքի վրա: Այն անցնում էր գյուղերով մեկ, ինչպես թուխպ, որին քշում է քամին»[1]: Արաբ պատմիչը ընդհանուր առմամբ ճիշտ էր հասկացել Զինգիզ խանի նվաճումների քաղաքական հետևանքները:

Մոնղոլների արշավանքների «կայծերը» հասան մինչև Մոսուլ, բայց Կիլիկիային գեռ անմիջականորեն չդիպան: Պատմական իրողությանը չի համապատասխանում այն, որ մոնղոլները 1226 թ. մոտեցել են Կիլիկյան Հայաստանի սահմաններին և որ Թագավոր Հեթում I-ը համաձայնել է հարկ տալ մոնղոլներին և ըստ նրանց պահանջի զորք տրամադրել[2]: Հավանաբար, այդ սխալը թույլ է տրվել այն պատճառով, որ Սմբատի «Պատմության» հատվածների ռուսերեն թարգմանության մեջ թարգմանչի սխալի հետևանքով այս իրադարձությունը տարվել է 1226 թվական[3]: Իրականում այս իրադարձությունը տեղի է ունեցել ոչ թե 1226 թվին, այլ 1243 թ., Քյոսեդաղի ճակատամարտում սելջուկների պարտությունից հետո:

Ի դեպ պետք է ասել, որ Ջալալ էդ դինի հետ կապված իրադարձությունները պատմարան Մորգանը վերագրել է Զինգիզ խանին, ինչը երևում է նրա հետևյալ տողերից. «Հեթումը և բոլոր քրիստոնյա ու մուսուլման իշխանները միավորվեցին և հակահարված տվին Զինգիզ խանին, որը վերադարձավ Քրդստան, որտեղ սպանվեց 1231 թվին»[4]:

[1] **В. Тизенгаузен,** *Сборник мат., относящихся к истории Золотой орды, т. I, СПб., 1884, с. 2.*

[2] *Տե՛ս Большая Советская Энциклопедия, I изд., т. 40:*

[3] *Տե՛ս «История монголов по армянским источникам», пер. Патканяна, с. 66:*

[4] **Morgan,** *Histoire du peuple armén., Paris, 1919, p. 203.*

Հեթումը կռվել է ոչ թե Ջինգիզ խանի դեմ, ինչպես պնդում է Մորգանը, այլ՝ Ջալալ էդ դինի զորքերի, որոնք Խորեզմի պետության ջախջախումից հետո ներխուժել էին Իրան ու Հայաստան: Մոնղոլների կողմից Միջին Ասիայի նվաճումը հետևանքներ ունեցավ նաև Կիլիկյան Հայաստանի համար: Վախենալով Ջալալ էդ դինի հարձակումից՝ Առաջավոր Ասիայի մյուս պետությունների հետ Կիլիկյան Հայաստանն էլ կռվի ելավ նրա դեմ:

1225 թ. Ջալալ էդ դինի՝ Հայաստան ներխուժման մասին Ստեփաննոս Օրբելյանը հաղորդում է. «Բայց պատմեցին ձեզ աստանոր զրույցս զարհուրելացուիչս. զի նախ քան զայս հալածական եղեալ ի թաթարէն սուլտանն Խորազմաց Ջալալադինն՝ որդի Խորազմ շահին, գայ ընդ Պարսկաստան և անցեալ ընդ Ատրպատական՝ մտանէ յաչխարհս Հայոց, յոր տեղ և հասանէր՝ աւերէր, գերփէր, ապականէր՝ ոչ խնայելով ի մարդ կամ յանասուն: Ապա եկեալ յԱրարատեան գաւառ՝ բանակ հարկանէր անդ վասն որոյ ժողովեալ Իւանէ աթաբեկին զամենայն ոյժ և զօրութիւն հայոց և վրաց՝ կամէր մարտիւ պատահել նոցա»[1]: Բայց Իվաննն պարտություն է կրել Գառնիի ճակատամարտում:

Հաստատվելով Իրանում՝ Ջալալ էդ դինը 1225–1230 թվականների ընթացքում մի քանի անգամ կողոպուտի ենթարկեց Հայաստանի և Վրաստանի քաղաքները: Նա գրավեց Խլաթ քաղաքը, որը պատկանում էր Աչրաֆ Այուբյանին: Բայց 1230 թ. Աչրաֆը, նրա եղբայր Քամիլը և Իկոնիայի սուլթան Ալա ադ դին Քեյ Կուբադը միավորվեցին, օգնության կանչեցին Ծովափնյա Փրանկներին ու Կիլիկիայի հայոց զորքին և երևքօրյա ճակատամարտում ջախջախեցին Ջալալ էդ դինին[2]: Այսպիսով, Խլաթի ճակատամարտին մասնակցում էին նաև Հեթումի զորքերը:

Խլաթի մոտ կրած պարտությունից հետո Ջալալ էդ դինը դժվար դրության մեջ ընկավ: Նրան ամենուրեք հետապնդում էին մոնղոլական ջոկատները: 1231 թ. Քրդստանում Ջալալ էդ դինը գոհվում է վրեժխնդիր մի քրդի ձեռքով[3]:

Ջինգիզ խանի հաջորդ Ուգեդեյ խանի (1227–1241) օրոք մոնղոլները լայն մասշտաբով վերսկսեցին իրենց արշավանքները դեպի Մերձավոր Արևելք: Մոնղոլների բանակը Ջարմաղանի հրամանատարությամբ 1235 թ. ներխուժեց Անդրկովկաս: Այդ ժամանակ վրաց պետությունը, որի մեջ մտնում էին նաև Հայաստանի հյուսիսարևելյան գավառները, թուլացած էր իշխանների կենտրոնախույս ձգտումներից և չէր կարող ուժեղ դիմադրություն ցույց տալ մոնղոլ նվաճողներին: Նրանցից ոմանք չտապում էին ենթարկվել մոնղոլներին, որպեսզի պահպաններն իրենց տիրույթները, մյուսներն էլ արտագաղթում էին կամ հեռանում անմատչելի լեռները: Միայն մի քանի քաղաքներ (Գանձակ, Անի) համառորեն և արիաբար պաշտպանվում էին: Ամենից առաջ 1235 թ. գրավվեց ու կործանվեց Գանձակը, իսկ բնակիչները մեծ մասամբ կոտորվեցին: Այնուհետև, չորս տարվա մեջ, գրավեցին Լոռին, Թրիլիսին, Կարսը և Անդրկովկասի այլ քաղաքներ:

Փոքր Ասիայի Սելջուկյանների պետությունը, որի բնակչությունը ձգտում էին ինքնուրույնության, իսկ երկրի ենթակաները՝ անկախության, և ուր տեղի էին ունենում ժողովրդական զանգվածների սոցիալական ընդվզումներ, չդիմացավ մոնղոլների ճնշմանը:

1242–1244 թթ. Ջարմաղանի հաջորդ Բաչուն գրավեց ու կործանեց Հարավային և Արևմտյան Հայաստանի քաղաքներ Խլաթը, Կարինը, Երզնկան[1]: Սուլթան Քեյ Խոսրով II-ը (1236–1245) ջախջախվեց մոնղոլներից Քյոսադաղի ճակատամարտում՝ Էրզրումի և Երզնկայի արանքում (1243): Հեթում I-ը նրան խոստացել էր օժանդակ զորք ուղարկել, բայց խոստումը չկատարեց[2]: Դրանում արտահայտվեց նրա հեռատեսությունը:

Այսպիսով, մոնղոլները ջախջախեցին Իկոնիայի սուլթանությունը, իսկ քիչ անց՝ նաև Խլաթի Այուբյանների սուլթանությունը: Մոնղոլները կողոպտեցին և ավերեցին քարավանային առևտրի ու արհեստագործական արդյունաբերության կենտրոններ Կեսարիան ու Սեբաստիան, որոնք բնակեցված էին գլխավորապես հայերով: Այժմ արդեն հրդեհի ոչ թե «կայծերը», այլ բոցը մոտեցավ Կիլիկյան Հայաստանի սահմաններին:

Այսպիսի միջազգային իրադրության մեջ Հեթումը որոշեց ճանաչել մոնղոլների գերիշխանությունը և նրանց հետ խաղաղություն ու բարեկամություն հաստատել և այդ նպատակով 1244 թ. գարնանը դեսպանություն առաքեց մոնղոլ զորավար Բաչուի մոտ: Այս մասին Կիրակոս ասում է. «Հեթում արքայ, որ աշխարհին Կիլիկեցւոց և այնոցիկ նահանգաց իշխէր, յորժամ ետես, եթէ պարտեցաւ սուլտանն առաջի նոցա, առաքեաց առ նոսա դեսպանս և պատարագս արժանաւորս՝ դնել ընդ նմա ուխտ խաղաղութեան, և նմա կալ ի նոցա ի

[1] **Ստեփաննոսի Օրբելեանի** Պատմութիւն տիեզերական, Ս. Պ., 1885, էջ 292:

[2] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 215:

[3] Տե՛ս նույն տեղում:

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 221–269:

[2] Նույն տեղում, էջ 270:

հնազանդութեան»[1]: Դեսպանները նկան և Ջալալ իշխանի միջնորդութեամբ ներկայացան Բաչու Նուինին, էլթինա խաթունին՝ Զարմաղանի կնոջը, և «այլ մեծամեծ աւագանւոյն»: Իմանալով թագավորի առաջարկութեան մասին և ընդունելով նվերները՝ նրանք պահանջեցին իրենց հանձնել սուլթանի մորը, կնոջը և աղջկան, որոնք ապաստանել էին նրա տիրույթներում: Լսելով այս մասին՝ Հեթումը սաստիկ վշտացավ և ասաց. «Լաւ էր ինձ, եթէ զորդի իմ՝ զԼևոն խնդրեալ էին յինէն, քան թէ զնոսա»[2]:

Այնուհետև Կիրակոսը պարզաբանում է Հեթումի համար ստեղծված ծանր վիճակը՝ կապված մոնղոլների պահանջի հետ, և հյուրընկալության սովորույթի հարկադրական խախտումը բացատրում է հետևյալ կերպ. «Այլ քանզի երկնչէր ի նոցանէ, զի մի մեծ չարեաց պատճառ լիցի այն, յակամայ կամաց նոտ ի ձեռս նոցա (սուլթանի ընտանիքը – Գ. Մ.)»[3]: Այլ որոշում Հեթումն ընդունել չէր կարող: Նա գիտեր այն սարսափելի ավերածությունների մասին, որ մոնղոլները կատարել էին Կիլիկիայի հարևան երկրներում ամենուրեք, և չէր կարող Կիլիկիան կողոպուտի վտանգին ենթարկել՝ հանուն Իկոնիայի սուլթանի ընտանիքի, որը, ինչպես և նրա նախորդները, մինչև մոնղոլների արշավանքը թշնամանք էր դրսևորում Կիլիկյան Հայաստանի հանդեպ: Այս նույն հղինակը նշում է, որ մոնղոլները «հաստատեցին և սէր ընդ արքայի, նոտուն և գիր ըստ դնինն իւրեանց, զոր էլ տաղմայն կոչէին»[4]:

Բաչուի հետ Հեթում արքայի դեսպանների բանակցություններին աջակցում էր հայ իշխան Հասան Ջալալը՝ Խաչենի տերը, որը մասնակցում էր փոքրասիական թուրքերի դեմ մոնղոլների արշավանքին և մեծ ազդեցություն էր ձեռք բերել մոնղոլ զորապետի մոտ[5]:

Կիլիկյան Հայաստանը ո՛չ XIII դարի 40-ական թվականներին, ո՛չ էլ հետագայում չի ենթարկվել մոնղոլական արշավանքի սարսափներին: Հայտարարելով մոնղոլներին իր ենթարկվելու մասին՝ Կիլիկիայի հայկական թագավորությունը ներքին կյանքում լիակատար ինքնուրույնություն էր պահպանում: Սակայն դրանից հետո նա մոնղոլների հետ միասին պետք է գործեր նրանց հակառակորդների դեմ:

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 270:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Տե՛ս **И. Орбели,** Асан Джалал, князь Хаченский, Изв. АН, 1909, с. 421:

Քյոսադաղի ճակատամարտը Փոքր Ասիայի սելջուկների ռազմաքաղաքական տիրապետության վերջը տվեց: Միջազգային իրադրությունը փոխվեց: Գիյաս էդ դին Քեյ Խոսրովը իրեն մոնղոլների վասալ ճանաչեց: Սակայն նա դեռևս այնքան ուժ ուներ, որպեսզի վրեժխնդիր լիներ իր ընտանիքը Բաչու խանին հանձնելու համար: Բացի այդ, նա դաշնակից ուներ՝ ի դեմս Լամբրոնի իշխան-սենյորի, որը Հեթումյանների կողմից իշխանության գլուխ անցնելու ժամանակ, լինելով նրանց ազգականը՝ նոտ ստացավ տոհմական կալվածք Լամբրոնը, բայց, Կիրակոսի ասելով, «ըստ հայրենի սովորութեանն իւրեանց՝ ապստամբեաց ի քուերորդւոյ իւրոյ՝ յարքայնէն Հեթմոյ: Եւ թէպէտ չատ ջանաց Կոստանդին՝ հայրն արքայի, և ինքն իսկ արքայ, ոչ կարաց ածել զնա ի հաւանութիւն հնազանդութեան, զի ձեռն նոտ նա ի սուլտանն Հոռոմոց և այսպէս կայր ապստամբ»[1]:

Սելջուկների պարտությունից հետո, երբ Հեթում I-ը խոռվարար իշխան Կոստանդինից նոտ առավ բոլոր ընծաները և կալվածքները, վերջինս թագավորին խնդրեց իրեն թողնել միայն Լամբրոնի ամրոցը, բայց մերժում ստացավ: «Ապա գնացեալ Կոստանդնի ի Կոնն [Իկոնիա],– ասում է Կիրակոսը,– առեալ զօրս սուլտանին Հոռոմոց, որք յայնժամ թշնամիք էին արքայի, զի նոտ զմայր սուլտանին Հոռոմոց ի թաթարն, գայ յեղակարծ ժամու, մինչդեռ ցրուեալ էին զօրքն արքունի իւրաքանչիւր տեղիս, և մտեալ յաչխարհն՝ աւերեաց զբազում ականս և զագարակս այրմամբ և սպանմամբ և գերութեամբ, զբազում քրիստոնեայս կոտորեալ և կողոպտեալ և այսպէս բազում չարիս անցուցեալ ընդ աշխարհն քինահանութեամբ:

Իսկ արքայ՝ իբրև նոտս գայն չարիս, ժողովեալ զզօրս իւր, արիութեամբ հասեալ ի վերայ բազմութեանն՝ սրոյ ճարակ նոտ զամենեսին: Եւ փախեալ միայն ապստամբ իշխանն և սակաւք ընդ նմա»[2]:

Քեյ Խոսրով II-ի և Կոստանդինի զորքերի Կիլիկիա ներխուժելու մասին Սմբատը հետևյալն է պատմում. «... ոմանցաւ սուլտանն Քայի Խոսրով... ժողովեաց հեծել, և առաջնորդութեամբ պարոն Կոստանդնայ, Լամբրոնի տիրոջն՝ մտաւ ընդ Պապառոնին լեռան ի վայր, ու այրեաց զամէնն: Եւ թագաւորահայրն պարոն Կոստանդին ու Սմբատ Գունդստաբլն եկին մտան ի Տարսուս. և թագաւորն իւր հեծելովն կայր ի յԱտանա: Թուրքն սղարեաց զՏարսուս. իջան ի զարուտն հետ գետին, գերեցին զամէն երկիրն, և կեցան վեց օր. և ապա նլ ածին որ նլնէին ընդ Կուկլկայ կապանն: Թագաւորն հեծելովն ի հետ նլ, և

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 271:

[2] Նույն տեղում:

թագաւորահայրն, և Սմբատ Գունդստաբլն, և հասին ի տեղ մի, որ Մայծատ ասեն»[1]:

Պատմիչ Սմբատը, որը մասնակիցն էր այս պատերազմի, պատմում է, թե «... հետ ի մի գալ տարւոյն ի թուն ՈՂԵ արարին չատ ժողովք ու եկին մտան ընդ Կուկլկայ կապանն երկու հարիւր և վաթսուն հազար մարդ, և բոլոր պատեցին զՏարսուս: Թագաւորահայրն և նա՝ Սմբատ Գունդստաբլս, մտաք ի Տարսուս... Եւ ապա եկին դնսպան ի թաթարէն, որ թողէին ելանել. նա չէաք ի լսել, վասն զի զքաղաքան առած ունէին... երբ լսեցին (սուլթանի մահը), ի զրոյց մտան ընդ թագաւորն ու ուղեցին զՊռականա, որ սիրով ի տուն երթային. նա թագաւորն երետ. որ ելան ու գնացին»[2]: Երկու տարի անց Կիլիկյան Հայաստանը նորից տիրեց Պռական ամրոցին և 1249 թ. մի չարք հաղթանակներ տարավ Իկոնյան սուլթանության դեմ մղվող ռազմական գործողություններում: Ճակատամարտերից մեկում գրավվեց սուլթանի վրանը: Այս մեծաքան վրանը, ժուանվիլի վկայությամբ, արժեր հինգ հարյուր լիվր: Որպես գեղեցիկ մի բան, Հեթում թագավորի կողմից այն նվիրեցին Լյուդովիկոս IX թագավորին, որն այդ ժամանակ Արևելքում էր[3]: Սելջուկների ներխուժման ժամանակ մոնղոլները ոևէ օգնություն ցույց չտվին Հեթումին, իսկ նրանց դիվանագիտական միջնորդությունը և ճնշումը սելջուկների վրա անարդյունք եղավ:

Այսպիսով, Կիլիկյան Հայաստանը թեև խուսափեց մոնղոլների ամայացուցիչ ներխուժումից, սակայն սրվեցին թշնամական հարաբերությունները Ռումի սելջուկների հետ, որոնց դաշնակիցն էր հայ ուժեղ իշխան Կոստանդին Լամբրոնացին: Այնուամենայնիվ նա դիմացավ ու ետ մղեց սելջուկյան զորքերի և Կոստանդինի հարձակումները: Շուտով ավելի սերտ դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների միջև:

Կոտրելով Սելջուկյանների պետության ռազմաքաղաքական հզորությունը, իրենց ենթարկելով Առաջավոր Ասիայի երկրների մեծ մասը՝ մոնղոլ խաները, որպեսզի ամրապնդեին և ընդլայնեին իրենց տիրապետությունը, սկսեցին վասալական կախման մեջ գցել ոչ միայն իրենց զրաված տարածքների ավատատերերին, այլև դեռ անկախ երկրների զանազան տիրակալներին և ծրագրեր կազմել Բաղդադի խալիֆայությունն ու Սիրիան գրավելու համար:

[1] **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 113:

[2] Նույն տեղում, էջ 114–115:

[3] Տե՛ս Memoire de jean sire de joinville, Paris, 1858, p. 44:

XIII դարի հայ պատմիչները չատ տվյալներ են բերում այն մասին, թե ինչ միջոցներ են ձեռնարկել Գույուկ ու Մանգու խանները և Ոսկե Հորդայի Բաթու խանը, որպեսզի ամրացնեին Կիլիկիայի հայկական թագավորության վասալական դրությունը:

Այն գլխում, որ նվիրված է Հեթում թագավորի ուղևորությանը Մանգու խանի մոտ, Հեթում պատմիչը գրում է. «Նա (Հեթում թագավորը) սկզբում մեծ խանի մոտ ուղարկեց պարոն Սմբատին՝ հայոց թագավորության գունդստաբլին, որովհետև Հրաման ստացավ անհապաղ գալ (Գույուկի մոտ)»[1]: Սմբատը 1248 թ. մեկնեց Հեթումի վոխարեն, որը կանչված էր մեծ խան Գույուկի մոտ: Այն, որ հենց իր՝ Հեթումի ուղևորությունն էլ էր սպասվում, երևում է Կիրակոսի հետևյալ տողերից. «Արքայն հայոց Հեթում, որ ի Կիլիկիա, առաքեաց զեղբայր իւր Սմբատ զօրավարն առ դանն երևելի, պատարագօք: Եւ նորա երթեալ խաղաղութեամբ զերկայնութիւն ճանապարհին, և յոյժ մեծարեաց ի նմանէ, դարձաւ երևելի փառօք և հաւատարիմ հրովարտակօք»[2]: Մաղաքիա պատմիչը նույնպես հաղորդում է, որ Սմբատը խանից ստացավ «նարլաս և փայզայս ոսկիս»[3], այսինքն՝ ոսկե տախտակիկ, որով ճանաչվում էր Հեթումի իշխանությունը Կիլիկիայի նկատմամբ: Այս մասին Կիրակոսը գրում է. «... տուեալ նմա (խանը՝ Հեթումին) գաւառս բազումս և բերդս յոլովս, զոր յառաջ լեալ էր Լեւոնի արքայի, և զկնի մահուանն առ ի նոցունց Ալադին սուլտանն հոռոմոց»[4]:

Եթե մոնղոլների համար Սմբատի գալը նշանակում էր Կիլիկյան Հայաստանի կողմից նրանց գերիշխանության ճանաչման հաստատում, ապա Կիլիկիայի համար թագավորի եղբոր դիվանագիտական առաքելությունը նշանակում էր օգնության խոստման ստացում՝ Իկոնիայի սուլթանության դեմ մղվող պայքարում:

Վերադառնալուց հետո Սմբատը Գույուկ խանի հրամանը՝ հայերին ընդդեմ սելջուկների օգնելու մասին, հաղորդեց մոնղոլ դորապետ Բաչուին: Բայց օգնությունը սահմանափակվում էր միայն նրանց կողմից սելջուկների վրա դիվանագիտական ճնշումով: Կիլիկյան Հայաստանի զորքերի ռազմական գործողություններն ընդդեմ Իկոնիայի սուլթանության XIII դարի 50-ական թվականներին հաջող էին ընթանում: Հեթումին հաջողվեց ոչնչացնել դրա դաշնակից Լամբրոնացուն: Նա սպանվեց իր սեփական ամրոցում 1250 թվին: Կիլի-

[1] Documents arméniens, t. II, p. 164.

[2] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 301:

[3] **Մաղաքիա,** Պատմութիւն վասն ազգին նեստորեաց, Ս. Պ., 1870, էջ 17:

[4] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 302:

կիայի հայկական պետության դրությունը զգալիորեն կայունացավ՝ այդ խռովարար իշխանի ու սելջուկների կողմից սպառնացող վտանգի վերացման չնորհիվ:

Հորդայում եղած ժամանակ Սմբատը պատվիրան ստացավ, որ Հեթումն ինքը ներկայանա մեծ խանին: Ելնելով որոշ նկատառումներից, որոնք դժվար է որոշել ճշգրտորեն, Հեթումը հապաղում էր և, ինչպես երևում է, ուզում էր խուսափել մեծ խան Մանգուին խոնարհվելու գնալուց: Աղբյուրներում տարբեր պատճառներ են մատնանշվում դեպի Հորդա Հեթումի ուղևորության հապաղման կապակցությամբ: Նա մերթ վախեցել է ճանապարհի հեռավորությունից, մերթ իր ղժդոհ իշխանների խռովությունից, մերթ իր բացակայությամբ սելջուկների հարձակման սպառնալիքից, մերթ կնոջ՝ Զարելի մահվան պատճառով (1252): Գուցե նա չէր չտապում, սպասելով, որ հանդամանքներն այնպես դասավորվեն, երբ հնարավոր կլինի խուսափել ի նչան հպատակության Հորդա մեկնելուց: Հեթումը մեկնեց միայն Բաթու խանի միջոցով Մանգու խանի արած կրկնակի հրավերից հետո: Հայտնի է, որ մոնղոլներից կախում ունեցող թագավորները «առաջին իսկ կանչով պետք է անառարկելիորեն ներկայանային Հորդա, և անհապաղ գալուց խուսափելը դիտվում էր որպես պետական դավաճանություն»[1]:

Հեթումին, հավանաբար, հաջողվել է չկատարել իր մոտ մեկնելու՝ Գույուկի պահանջը, որովհետև վերջինս չուտով մեռել է, իսկ ապա երկու տարի Հորդայում պայքար է ընթացել, մինչև որ, վերջապես, մեծ խան է ընտրվել Մանգուն:

XIII դարի հայ պատմաբան Միքայել Ջամչյանը՝ նոահատոր «Հայոց պատմության» հեղինակը, չհիմնավորված պնդում է, թե Հեթումը իմանալով Մեծ Հայքի հայերին ծանր հարկերով ճնշելու մասին՝ ինքն է եղել Մանգու խանի մոտ գնալու նախաձեռնողը և այդ նպատակով նամակ է գրել Հյուսիսի մեծ խան Բաթուին՝ խնդրելով միջնորդ դառնալ դաշինքի նորոգման գործում: Հաջորդ տարում Հեթումը իբրև թե ստացել է իր նամակի պատասխանը Բաթու խանից, որը նրան հրավիրել է գալ իր մոտ և Մանգու խանի մոտ[2]: Այս տեսակետն են հիմնականում պաշտպանում համարյա բոլոր հետագա պատմաբանները:

Տուրներիզը այս հարցի առթիվ գրում է. «Հեթումն անձամբ ուղևորվեց Բաթու և Մանգու խանների մոտ, որպեսզի իր ժողովրդին

[1] История дипломатии, т. I, М., 1945, с. 129.

[2] Տե՛ս **Մ. Ջամչյան,** Հայոց պատմություն, հ. Գ, 1786, էջ 274:

(Հայաստանի բնակչությանը) ազատեր բռնակալական հարկապահանջություններից»[1]:

Իհարկե, Հեթումը Հայաստանի բախտով որոշ չափով չհաղթրդրված եղել է, բայց Ղարաղորում գնալու նրա նախաձեռնությունը պատկանել է ոչ թե նրան, այլ՝ մոնղոլներին: Իսկ դրա գլխավոր նպատակը եղել է իր երկրի՝ Կիլիկիայի չահերը պաշտպանելու ձգտումը, այլ ոչ թե Մեծ Հայքի:

Մաղաքիան, նկարագրելով, թե ինչպես էր Մանգու խանի կարգադրությամբ Հայաստան եկած գլխավոր բասկակ Արղունը անգթորեն գանձում ուժից վեր հարկեր և ինչպես էին մոնղոլները դաժան կտտանքների ու տանջանքների ենթարկում հարկերը վճարելուց խուսափող հայերին, ի միջի այլոց, գրում է. «Իսկ լուեալ զայս բարեպաչտ թագաւորն Հայոց Հեթում, թէ Հուլաւունն զան և այնպէս բարեսէր է և քրիստոնէասէր, ապա և ինքն Հայոց թագաւորն գնաց յարեւելք բազումք ընծաիւք, և ետես զՀուլաւունն զանն, և տեսեալ զանն զՀայոց թագաւորն յոյժ սիրեաց և պատուեաց զնա»[2]:

Մաղաքիայի այս խոսքերում արտահայտված է ոչ միայն Մեծ Հայքի հայերին օգնելու Հեթումի ձգտումը, այլև մոնղոլների՝ դեպի Կիլիկիա Հնարավոր արշավանքի հանդեպ երկյուղը: Մոնղոլների կողմից Հայաստանի և սահմանամերձ Կապադովկիայի ամայացումը սպառնալիորեն նախազգուշացնում էր Հեթումին, որ այդ նույնը կարող է տեղի ունենալ Կիլիկիայում, եթե չգնա ու խոնարհվի մեծ խանին:

XIII դարի պատմիչ Մաղաքիան ավարտելով մեծ խան Գույուկի մոտ Սմբատ սպարապետի ուղևորության մասին իր պատմությունը, գրում է, թե Գույուկ (Սային) խանը «այսպէս մեծարանօք պատուեալ զսպարապետն Հայոց, յուղարկեաց յաշխարհն իւրեանց առաջի քրիստոսապսակ արքային Հայոց Հեթմոյ՝ հրամայելով նմա գնալ առ ինքնին, և տանել գնա...»[3]: Ժամանակակցի այս խոսքերից երևում է, որ Հեթումի՝ դեպի Ղարաղորում ուղևորության նախաձեռնությունը ծագել է մոնղոլներից և դեռևս Մանգու խանի նախորդ Գույուկից: Գույուկի, իսկ ապա Մանգու խանի ցանկությունը, որ Հեթումը մեկներ Հորդա, բացատրվում է գլխավորապես մեծ խանների սովորական քաղաքականությամբ, որոնք իրենց մոտ էին կանչում վասալ թագավորներին՝ նրանց նկատմամբ իրենց քաղաքական տիրապետությունը հաստատելու համար:

[1] **F. Tournebize,** Histoire politigue..., p. 210.

[2] **Մաղաքիա,** Պատմութիւն վասն ազգին նետողաց, էջ 31:

[3] Նույն տեղում, էջ 17:

Հեթումին իրենց մոտ կանչելով՝ մոնղոլ խաները ձգտում էին ոչ միայն ամրացնել իրենց գերիշխանությունը Կիլիկյան Հայաստանում, այլև ավելի սերտ կապեր հաստատել, քանի որ չնորհիվ իր ռազմավարական դիրքի՝ Կիլիկիան կարող էր օգտագործվել Առաջավոր Ասիայի, առաջին հերթին Կիլիկիայի սահմանակից երկրների վերջնական նվաճման ժամանակ:

Հեթում թագավորի՝ դեպի Ղարաղորում կատարած ուղևորության վերաբերյալ Կիրակոսի պատմածի մեջ վկայություն կա այն մասին, որ ոչ միայն մեծ խանը, այլև Բաթուն հետաքրքրություն էր դրսևորում Հայաստանի նկատմամբ, և որ Հեթումն իր ուղևորությունը դեպի Հորդա կատարել է Բաթուի պատվերով, որի իշխանությունը մոնղոլների գրաված Առաջավոր Ասիայի երկրների վրա նշանակալի էր: Սմբատի ուղևորության արդյունքի նկարագրությունից հետո Կիրակոսն իր պատմությունը շարունակում է հետևյալ կերպ. «Իսկ յորժամ թագաւորեաց Մանգու դանն, առաքեաց մեծ թագաւորահայրն և զօրեպետն Բաթու... առ թագաւորն Հեթում գալ տեսանել զնա և զՄանգու դանն: Եւ նա երկուցեալ ի նմանէ՝ գայ գաղտագողի, այլակերպեալ զինքն վասն ահին թուրքաց, որի սահմանակից նորա էին, զոր հոռոմոց սուլտանն անուաննն, որում անունն էր Ալադին, զի ոխս մեծերեալ ունէին ընդ նմա վասն ձեռն տալոյ նորայ ի թաթարին»[1]: Հավանաբար, իր կարգադրությամբ Բաթուն գլխավորապես կատարում էր Մանգու խանի կամքը: Բայց կարգադրվում էր նաև ներկայանալ իրեն՝ Բաթու խանին: Հայ հեղինակի այս տողերում կա նաև ակնարկն այն բանի, որ Ոսկե Հորդայի խան Բաթուն նույնպես չահագրգռված էր Առաջավոր Ասիայի նվաճմամբ և հավանաբար գիտեր Կիլիկիայի ռազմավարական նշանակությունը: Առաջավոր Ասիայում նրա քաղաքական ազդեցության մասին վկայում են Կիրակոսի այն խոսքերը, թե «նա երկուցեալ ի նմանէ» (Հեթումը վախենում էր Բաթուից): Ուրեմն հայոց թագավորը իմացել է Բաթուի իշխանության ուժի և այն մասին, որ նա կարող է այդ իշխանությունը գործադրել Կիլիկիայի նկատմամբ:

XIII դարի 50-ական թվականներին մոնղոլները լրջորեն պատրաստվում էին նոր արշավանքի դեպի Առաջավոր Ասիա, որպեսզի ամրապնդեին իրենց իշխանությունը մինչ այդ գրաված երկրներում, որպեսզի նվաճեին Միջագետքն ու Սիրիան: Այդ կապակցությամբ մոնղոլ խաները ձգտում էին ուժեղացնել իրենց ազդեցությունը Կիլիկիայում և Մերձավոր Արևելքի ուրիշ վասալ երկրներում, որպեսզի դրանք նպաստեին իրենց առաջիկա արշավանքի հաջողությանը: Դրա համար էլ Հեթումը կանչվել էր Ոսկե Հորդա:

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 350:

Այսպիսով, Հեթումը, ստանալով Հորդա ներկայանալու կրկնական կարգադրություն, 1254 թ. գարնանը ձեռնարկեց դժվարին մի ճանապարհորդություն դեպի հեռավոր Ղարաղորում՝ մեծ խան Մանգուի մոտ: Մանգու խանի մոտ Հեթումի կատարած ուղևորության մասին Կիրակոսը պատմում է, թե հայոց թագավորը «փութով անցեալ ընդ երկիր նորա յաւուրս երկոտասան, եկն ի կարս քաղաք: Եւ տեսեալ զԲաչու նուինն, որ զօրապետ էր թաթար զօրուն, որ յԱրևելս, և զայլ մեծամեծսն, և պատուեալ ի նոցունց»[1]: Այնուհետև հեղինակը պատմում է, թե Հեթումը կանգ առավ «յոտն Արագածու՝ հանդեպ լերինն Արայի, ի գիւղն, որ կոչի Վարդենիս, ի տանն իշխանին, զոր Քուրդ անուանէին, հայ ազգաւ, կրօնիւք քրիստոնեայ... մինչև բերաւ նմա ինչք ի տանէ իւրմէ ի պէտս ընծայից և պատարագաց»[2]: Բայց հեղինակի հետագա շարադրանքից կարելի է եզրակացնել, որ հայոց թագավորը նախապես պայմանավորված է եղել իր մոտ՝ Վարդենիս գյուղում բազմաթիվ ազդեցիկ եպիսկոպոսների և իշխանների հավաքի մասին, որոնցից մեկը՝ Հակոբ վարդապետը. թագավորի կողմից զեսպան էր գնացել Տրապիզոնի կայսեր մոտ կրոնական, գուցե քաղաքական հարցերով բանակցություններ վարելու, իսկ մյուսը, Բարսեղն էլ՝ Բաթուի մոտ: Վարդենիս էր եկել Մխիթար վարդապետը Կիլիկիայից, ուր գնացել էր Մեծ Հայքից ինչ-որ հանձնարարությամբ: Այս բոլորը և ուրիշ հոգևորականներ ու իշխաններ ևս Կիլիկյան Հայաստանից և Մեծ Հայքից հավաքվել էին Հեթումի մոտ, հավանաբար, որպեսզի թագավորին տեղեկացնեին Մեծ Հայքում և այլ հայաբնակ երկրներում քաղաքական ու կրոնական գործերի վիճակի մասին, ինչպես և այդ հարցերի քննության համար՝ կապված մեծ խանի մոտ նրա առաջիկա ուղևորության հետ:

Պարզ է, որ հայ աշխարհիկ ու հոգևոր վերնախավը չէր կարող չխոսել թաթարական լծի ծանրության մասին և իրենց ավատական իրավունքների պահպանման միջոցների մասին՝ նույնիսկ մոնղոլական տիրապետության պայմաններում: Բայց Կիրակոսը ոչինչ չի ասում, թե ինչի մասին էր Հեթում թագավորի և Մեծ Հայքի իշխանների դրույցը: Կիրակոսը բավականին տեղյակ մարդ է իր ժամանակի քաղաքական իրադրության հարցերում[3], բայց նա իր «Պատմութիւնը»

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 351:

[2] Նույն տեղում:

[3] Մոնղոլական տիրապետության ժամանակ Հյուսիսային Հայաստանը մտնում էր Գյուրջստանի վիլայեթի մեջ: Այստեղ հայ ամենախոշոր իշխանը Զաքարե Շահնշահն էր, որը գլխավորում էր ոչ միայն հոր տիրույթը, այլև հորեղբոր՝ Ավագի, որը մահացել

դրել է XIII դարի 60-ական թվականներին, երբ մոնղոլներն իշխում էին Հայաստանում, իսկ Հեթում թագավորը ողջ էր, ուստի և չէր կարող ազատորեն արտահայտվել այն քաղաքական հարցերի մասին, որոնք կապող էին քննարկվել Վարդենիսում:

Հեթումը Հայաստանից Շիրվանով ու Դերբենդի կապանով ուղևորվեց Բաթուի և նրա որդի Սարթախի մոտ, նրանց կողմից մեծ պատվով ընդունվեց, ապա մեկնեց Մանգուի մոտ: Ջորսամայա ճանապարհորդությունից հետո Հեթումն իր մարդկանցով հասավ մեծ խանի ռազմակայանը (տեքստում ասված է՝ «Թաթարստան»), որն այդ ժամանակ, հավանաբար, Ղարաղորումում էր: Սեպտեմբերի 13-ին Հեթումը ներկայացավ Մանգու խանին, նրան մատուցեց նվերներ և «մեծարեցաւ ի նմանէ ըստ արժանւոյն»: Հայոց թագավորը Հորդայում մնաց 50 օր: Մանգու խանը նրան տվեց յառլիկ, որն արգելում էր ճնշել Հեթումին և նրա թագավորությանը[1]:

Այնպիսի կարևոր եղելության մասին, ինչպիսին Հեթումի ապրելն էր մեծ խանի Հորդայում, Կիրակոսը նույնպես չատ քիչ բան է հաղորդում: Բայց նա նշում է ուղևորության գլխավոր արդյունքը. այն, որ Կիլիկյան Հայաստանը չի ճնշվելու մոնղոլ զորապետների կողմից: Բացի այդ, հաստատված է եղել մի արտոնություն, որն ազատում էր հայ եկեղեցին հարկերից, ինչը վերաբերում էր Մեծ Հայքին, և բարենպաստ պայմաններ էր ստեղծում հոգևոր ավատատերերի ուժեղացման ու եկեղեցական հողատիրության աճման համար:

Անհայտ է մնում. Հեթումը և Մանգուն պայմանավորվե՞լ են, որ հայոց թագավորը պարտավորվում է օժանդակ զորք տրամադրել մոնղոլներին դեպի արևմուտք նոր արշավանքի համար, որն արդեն ձեռնարկել էր Հուլավու խանը: Վերադարձի ճանապարհին Հեթումը նրան հանդիպեց Թալասում: Հուլավուն արդեն, Կիրակոսի ասելով, ատացել էր Արևելքի երկրները, այսինքն՝ Մերձավոր Արևելքը, որպես իր բաժին[2]: Նման խոսակցություն կարող էր տեղի ունենալ: Հայտնի

1251 թվին: Այսինքի տեղն էր Սմբատ Օրբելյանը՝ վրացական ծագումով երևելի իշխանական տոհմի ներկայացուցիչ: 1251 թ. նա գնացել է Ղարաղորում՝ Մանգու խանի մոտ և նրանից ստացել մեծ արտոնություններ: Այս ուղևորությունից հետո Օրբելյանները սկսել են անմիջապես կախում ունենալ մոնղոլ խաներից: Անդրկովկասի հայաբնակ մյուս մարդերի հայ ազնվական իշխաններից աչքի էր բնկնում Հասան-Ջալալ Խաչենցին, որին մահապատժի ենթարկեց բասկակ Արղունը 1261 թ.: Շահ-արմենների նախկին տարածքում կազմակերպվել էր մի վիլայեթ, որը կոչվում էր Մեծ Հայք:

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 353:

[2] Տե՛ս նույն տեղում:

է, որ մոնղոլներից կախում ունեցող իշխանները պարտավոր էին նրանց ռազմական օգնություն ցույց տալ և, ինչպես հաղորդում են աղբյուրները, Հեթում թագավորը մասնակցել է Հուլավու խանի՝ դեպի Սիրիա կատարած արշավանքին: Կիրակոսը ոչինչ չի ասել նաև այն մասին, թե մոնղոլներին հարկ վճարվո՞ւմ էր արդյոք: Կիլիկյան Հայաստանը նվաճված չի եղել մոնղոլների կողմից, բայց ենթարկվել է նրանց և հարկ է վճարել, ինչպես վկայում են Համդալլահ Ղազվինին և ուրիշները: Ենթարկվել, հարկ վճարել և ռազմական օգնություն ցույց տալ — ահա թե ինչ էին պահանջում մոնղոլները նվաճված և ենթակա երկրներից:

Ռուբրուկը Մանգու խանի մոտ կատարած ուղևորությունից հետո Կիլիկիայով վերադառնալիս՝ Կիլիկիայի Կոռիկոս նավահանգստում լուր ստանալով, որ Սիս են ժամանել Հորդայից վերադարձող Հեթում թագավորի սուրհանդակները, «մեկնեցի թագավորի մոտ լսանալու, թե նա որևէ բան չի՞ լսել իր որդու մասին: Ես,— ասում է Ռուբրուկը,— ծերունուն (Կոստանդինին — Գ. Մ.) գտա Իղիայում (Սիսում)..., նա որդուց որոշ լուրեր էր ստացել, այն, որ նա վերադառնում է, որ Մանգու խանը զգալի չափով թեթևացրել է նրա տուրքը»[1]: Տուրքի նվազեցումը նշանակում է, որ այն վճարվում էր, սակայն դրա չափը մեծ չի եղել: Բացի այդ, 50-ականների վերջերից Կիլիկյան Հայաստանը պետք է մոնղոլներին օժանդակ զորք տրամադրեր և հետևեր մոնղոլ խաների արտաքին քաղաքականությանը: Այս առումով Հեթումը քիչ բանով էր տարբերվում մոնղոլների մյուս վասալներից: Հայտնի է, օրինակ, որ «Ոսկե Հորդայի խանների վասալները՝ ռուս իշխանները, պարտավոր էին ոչ միայն տուրք վճարել նրանց և պարհակներ կատարել, այլև իրենց ողջ արտաքին քաղաքականությունը ենթարկել նրանց կամքին, խաների հրամանով իրենց զորքերով նրանց օգնության հասնել»[2]: Այն, որ XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի սկզբին Կիլիկիայի հայկական պետության արտաքին քաղաքականությունը ենթարկված է եղել մոնղոլներին, ակներևաբար դրսևորվել է Հուլավուի և նրա հաջորդների կողմից Եգիպտոսի դեմ Սիրիայի համար մղված պայքարի ժամանակ, որի մեջ ներքաշված էր նաև Կիլիկյան Հայաստանը:

Բաթուի քաղաքական ազդեցությունը Առաջավոր Ասիայում՝ ընդհանրապես, և Կիլիկիայի հանդեպ՝ մասնավորապես, չարունակվում էր նաև այն ժամանակ, երբ Հուլավուն զորքերով գնում էր դեպի

[1] **Рубрук,** *Путешествие в восточные страны, СПб., 1911, с. 176.*

[2] *История дипломатии, т. I, М., 1941, с. 128.*

արևելք, որպեսզի վերջնականապես հնազանդեցներ Իրանը, նվաճեր Միջագետքը, Սիրիան և այլ երկրներ: Հեթումը Մանգու խանի հետ տեսակցության ժամանակ նրանից նամակ էր ստացել Բաթուի անունով, որպեսզի սա կատարեր իր կարգադրությունները Կիլիկիայի վերաբերմամբ: Հեթումն այս նամակն ուղարկեց Բաթուին, իսկ ինքը վերադարձավ Հայաստան այլ ճանապարհով և, այցելելով Բաչուին՝ Սյունիքում, նորից կանգ առավ Վարդենիսում: Այս մասին Կիրակոսը գրում է. «Իսկ թագաւորն բարեպաշտ Հեթում՝ եկեալ ի տուն իշխանին Քրդին, ի գիւղն Վարդենիս, ուր թողեալ էր զաղխ իւր և զկարասի, և մնայր գալստեան Բարսեղի քահանայի, զոր յուղարկեալ էր առ Բաթոյն վերստին, զի ցուցցէ նմա զգիրս և զհրաման Մանգու դանին, զի և նա ըստ նմին օրինակի՝ գրեսցէ հրամանս:

Ապա եկին առ նա վարդապետքն իւր՝ Յակոբ, զոր ևթող աստէն ի պէտս գործոյ եկեղեցւոյ, և Մխիթար, զոր դարձոյց ի Բաթուէն, մինչչև երթեալ էր առ Մանգու դանն»[1]:

Այսպիսով, Ոսկե Հորդայի խանի հետ Հեթումի դիվանագիտական սերտ կապերի մասին վկայում է այն փաստը, որ Բարսեղից բացի, Բաթուի մոտ գնացել է նաև Մխիթարը՝ որպես թագավորի դեսպան:

Կիրակոսի հաղորդումն այն մասին, որ Հորդայից Մեծ Հայք Հեթումի վերադարձից հետո նրա մոտ, հենց նույն տեղում՝ Վարդենիսում, հավաքվել են, հավանաբար, մեծ մասամբ նույն մարդիկ, արժանի է ուշադրության: Նա ներկա է եղել Հեթումի հետ հայ մեծամեծների այդ հանդիպմանը, բայց ցավոք ոչինչ չի հաղորդում այն մասին, թե հայոց թագավորը իր մոտ հավաքված իշխանների ու եպիսկոպոսների հետ խոսե՞լ է արդյոք այն քաղաքական հարցերից, որոնք քննարկվել են մեծ խանի ռազմակայանում, և այն մասին, թե ինչո՞ւ է ձեռք բերել խանի մոտ գնալով: Փոխարենը նա գրում է. «Բազում իրս զարմանալիս և անծանօթս պատմէր նա մեզ զբարբարոս ազգացն, զոր տեսեալ էր և լուեալ»[2] և, տալով Հեթումի պատմածի միայն մի մասը, իր հաղորդումն ավարտում է հետևյալ խոսքերով. «Բազում այլ ինչ պատմէր թագաւորն իմաստասէր ի խժական ազգացն, զոր թողաք մեք, զի մի աւելորդ ումեք թուեսցէ»[3]:

Որոշ հարցերի մասին Կիրակոսի հակիրճ գրելաձևի պատճառով, ինչպես և նրա այն երկյուղից, որ իր պատմածները որևէ մեկին վնաս կպատճառեն, մեզ չեն հասել Հայաստանի իշխանների և Մանգու

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 355:

[2] Նույն տեղում, էջ 356:

[3] Նույն տեղում, էջ 357:

խանի հետ Հեթում թագավորի փոխհարաբերությունների մանրամասները:

Պատմիչ Հեթումը (Hayton), ընդհակառակը, մոնղոլների մասին ֆրանսերեն գրված իր երկում մանրամասնորեն պատմում է այն բանակցությունների մասին, որոնք տեղի են ունեցել Հեթումի և Մանգու խանի միջև հայ թագավորի Ղարաղորումում եղած ժամանակ[1]:

Հեթումի երկում համառոտ պատմվում է ոչ միայն մոնղոլների մասին, այլև նրանց հարևանների ու Խաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծովը նրանց կողմից նվաճված երկրների մասին: Մանրամասնորեն նկարագրվում է Իրանի իլխանների պատերազմը Եգիպտոսի դեմ: Գիրքն ավարտվում է Եգիպտոսի նկարագրությամբ և այն խորհրդատվությամբ, թե ինչպես խաչակրաց արշավանք կազմակերպել Երուսաղեմը նոր նվաճելու համար:

Հեթում պատմիչը իր երկում հաղորդում է, որ Հեթում թագավորը Մանգու խանին առաջարկել է քրիստոնեություն ընդունել ու Երուսաղեմը նոր նվաճել մամլուքներից, և որ այդ առաջարկությունն իբրև թե անփոփոխ ընդունվել է մեծ խանի կողմից:

Հեթումի «Պատմությունն» օգտագործելիս, մանավանդ այն վայրերը, որոնք վերաբերում են մոնղոլների կողմից քրիստոնեություն ընդունելուն, անհրաժեշտ է ցուցաբերել քննադատական մոտեցում: XIV դարի սկզբին, երբ Հեթումը գրել է իր «Պատմությունը», պապությունն այս հարցով դեռ չարունակում էր հետաքրքրվել: Պապական իշխանությունը Իրանի մոնղոլներին դիտում էր որպես իր դա-

[1] Հեթում պատմիչը եղել է Հեթումյանների թագավորական տոհմից և Կոռիկոսի ծովափնյա բերդի ու նավահանգստի տերը: Մամլուքների՝ Կիլիկիա ներխուժման ժամանակ նա տեղափոխվել է Կիպրոս և ընդունվել կաթոլիկական վանքը (1305), իսկ հաջորդ տարին այցելել է Կլեմենտ V պապին և նրան պատմել թաթարների ծագման ու սովորությունների մասին, նրանց հիմնած կայսրության մասին: Պապը Հեթումին հանձնարարել է գրել թաթարների պատմությունը: Այն ամենը, ինչ որ Հեթումը գիտեր նրանց ու նրանց ենթակա ժողովուրդների մասին, ֆրանսերեն թելադրել է Նիկողայոս Ֆայկոնին, որն էլ հենց Հեթումից գրի առած պատմությունը թարգմանել է լատիներեն, և 1307 թ. Հեթումի «Պատմությունը» ներկայացվել է պապին (Documents arméniens, t. II, pp. 113, 253): Ֆրանսերեն և լատիներեն տեքստերը դետեղված են Recueil des historiens des croisades. Documents arméniens-ի երկրորդ հատորում «La flor des estoires de la terred'orient» վերնագրով:

1842 թ. Մխիթարյան ոխտից Ավգերյանը Հեթումի երկի լատիներեն տեքստը թարգմանել է գրաբար, թարգմանությունը վերնագրելով՝ «Հեթում-պատմիչ թաթարաց»:

նակիցների՝ Եգիպտոսի դեմ մղվող պայքարում: Հեթում պատմիչը մոնղոլների մասին իր պատմությամբ ըստ երևույթին ցանկացել է պապությանը ցույց տալ, թե հայերը վաղուց գործում են այն ուղղությամբ, որպեսզի մոնղոլներին քրիստոնյա դարձնեն, և համոզելու համար զետեղել է մի գրույց, որն իբր թե տեղի է ունեցել Մանգուի ու Հեթումի միջև՝ վկայակոչելով այն, որ թաթարների պատմությունը, սկսած Մանգու խանից մինչև Հուլավուի մահը, ինքը պատմում է որպես իր հորեղբորից, այսինքն Հեթում թագավորից լսած պատմություն: Այսպիսով, մոնղոլների ու մամլուքների մասին իր այդ պատմական տեղեկատվությամբ նա ցանկանում էր օգտակար լինել պապությանը, որը չէր հրաժարվում նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու մտքից՝ Կիլիկյան Հայաստանի, ինչպես և մոնղոլների մասնակցությամբ, որոնք թեկուզև արդեն իսլամ էին ընդունել, բայց դեռ դիտվում էին որպես դաշնակիցներ ընդհանուր թշնամու՝ Եգիպտոսի դեմ մղվող պայքարում:

Հեթումն արտահայտում էր Կիլիկիայի հայ ավատատերերի այն խմբի ձգտումները, որը չահագրգռված էր քաղաքական և եկեղեցական կապեր պահպանել պապության հետ՝ հուսալով եվրոպական պետություններից օգնություն ստանալ Եգիպտոսի դեմ մղվող պայքարում:

Հեղինակի ասելով հայոց թագավոր Հեթումը «նախ և առաջ խնդրել է, որ կայսրը և նրա ողջ ժողովուրդը դառնան քրիստոնյա և մկրտվեն: Ապա խնդրել է, որ հավիտենական խաղաղություն և կայուն բարեկամություն հաստատվի թաթարների ու քրիստոնյաների միջև: Այնուհետև խնդրել է, որ թաթարներից նվաճված և նրանց ենթակա բոլոր երկրներում քրիստոնեական եկեղեցիները և հոգևոր կոչում ունեցող բոլոր անձինք ազատ լինեն և ազատվեն ամեն հարկից: Այնուհետև թագավորը խնդրել է, որ Մանգու խանը բարեհաճի օգնել սարակինոսների ձեռքից Սուրբ Երկիրը ազատագրելու և այն քրիստոնյաներին վերադարձնելու գործում: Այնուհետև խնդրել է, որ նա հրաման տա Ռումի սուլթանության մեջ ապրող թաթարներին, որպեսզի նրանք ոչնչացնեն Բաղդադը և խալիֆին՝ Մուհամմեդի կեղծ հավատի գլխավորին ու վնհապետին: Այնուհետև խնդրել է արտոնություններ տալ և կարգադրություններ անել, որ հայոց թագավորության մեջ գտնվող թաթարները իրեն օգնեն, եթե ինքը դիմելու լինի նրանց: Չորրորդ խնդրանքն է եղել, որ հայոց թագավորությունից սարակինոսների զավթած և այժմ թաթարների ձեռքն անցած կամ նրանց վաճառված բոլոր հողերը վերադարձվեն իրեն ա-

զատ ու խաղաղորեն, և դրանից բացի այն հողերը, որոնք հայոց թագավորը նվաճել կարողանա սարակինոսներից, կարող է իրեն պահել խաղաղ ու հանգիստ, առանց թաթարների կողմից հակաճառության հանդիպելու»[1]:

Հաջորդ՝ XVII գլխում Հեթում պատմիչը բերում է հայոց թագավորի խնդրանքներին Մանգու խանի տված պատասխանները: «Երբ Մանգու խանը,– գրում է նա,– լսել է հայոց թագավորի խնդրանքները, կանչել է իր արքունիքին և հրամայել, որ հայոց թագավորը գա, և իր բարոնների ու ողջ արքունիքի ներկայությամբ պատասխանի. քանի որ հայոց թագավորը իր բարի կամքով այսքան երկար ճանապարհ կտրելով՝ եկել հասել է մեր կայսրություն, պետք է ուրևմն մենք կատարենք նրա բոլոր խնդրանքները: Ձեզ, հայոց թագավոր, մենք՝ կայսրս, ամենից առաջ ասում ենք այն մասին, որ մկրտվելու ենք և քրիստոնեական հավատն ենք ընդունելու և մկրտելու ենք բոլոր նրանց, ովքեր մեր իշխանության տակ են, որպեսզի քրիստոնյա դառնան: Սակայն կարծում ենք, որ դա պետք է լինի բարի կամքով, քանզի հավատը հարկադրանք չի հանդուրժում: Երկրորդ խընդրանքին մենք պատասխանում ենք, որ համաձայն ենք, որպեսզի խաղաղություն ու հավիտենական բարեկամություն լինի քրիստոնյաների ու թաթարների միջև, և եթե քրիստոնյաները պահպանեն բարի խաղաղություն ու հավատարիմ բարեկամություն, մենք էլ նրանց նկատմամբ այդպես կվարվենք: Ցանկանում ենք նաև, որ քրիստոնեական բոլոր եկեղեցիները և կղերականությունը ազատ լինեն և ազատվեն ամեն հարկից: Սուրբ երկրի վերաբերյալ մենք ասում ենք, որ եթե կարողանանք, անձամբ կգնանք՝ Հիսուս Քրիստոսի նկատմամբ տածած մեր հարգանքից, բայց քանի որ մենք այստեղ շատ գործեր ունենք, ուստի կհրամայենք մեր եղբայր Հուլավուին, որպեսզի կատարի այդ պարտականությունը՝ ազատագրի Սուրբ Երկիրը ու վերադարձնի քրիստոնյաներին: Մենք կարգադրություն կանենք, որ Բաթուն և մյուս թաթարները, որոնք Ռումում են և այլ երկրներում, օգնեն մեր եղբայր Հուլավուին՝ գրավելու Բաղդադ քաղաքը և ոչնչացնելու Խալիֆին՝ մեր մահացու թշնամուն: Թաթարներից օգնությունն ստանալու մասին խնդրված արտոնությունը մենք սիրով հաստատում ենք: Այն հողերը, որոնք հայոց թագավորը խնդրում է վերադարձնել իրեն, մենք սիրով հաստատում ենք նրա վրա և կհրամայենք մեր եղբայր Հուլավուին՝ նրան վերադարձնել բոլոր այն հողերը, որոնք նրան են պատկանելիս եղել, և նրան կտանք

[1] *Recueil des historiens des croisades, Documents arméniens, t. II, pp. 164–165.*

այն հողերը, որոնք նա կկարողանա նվաճել սարակինոսներից, և հատուկ ոգորմածությամբ մենք կտանք այն ամրոցները, որոնք մինչ այդ պատկանելիս են եղել նրան»[1]:

Հաջորդ գլխում Հեթումը գրում է. «Երբ Մանգու խանը կատարեց հայոց թագավորի խնդրանքները, տեղնուտեղը մկրտվեց այն եպիսկոպոսի ձեռքով, որը Հայոց թագավորության կանցլերն էր: Կնքվեցին նաև նրա գերդաստանի անդամները և շատ տղամարդիկ ու կանայք»[2]:

Մենք հին ֆրանսերենից թարգմանեցինք այն խոսակցության տեքստը, որը տեղի է ունեցել հայոց թագավոր Հեթումի ու Մանգու խանի միջև: Լատիներեն տեքստը հիմնականում նույնական է ֆրանսերենին: Իսկ լատիներենից արված գրաբար թարգմանությունը խիստ տարբերվում է իր բնօրինակից: Բերենք բնագրի մի քանի ադամադումներ հայերեն թարգմանության մեջ, որը կատարել է Ավգերյանը:

Հեթում թագավորի երկրորդ խնդրանքը. «Secundo petit guatinus pax et amicia perpetua inter christianos et Tataros firmanenter»[3], Ավգերյանը թարգմանել է. «Երկրորդ, զի խաղաղութիւն և բարեկամութիւն մշտնջենաւոր հաստատեսցի ի մէջ նոցա»[4], այսինքն՝ «քրիստոնյաների և թաթարների» միջև խաղաղության փոխարեն, թարգմանիչը գրում է «նրանց միջև» խաղաղության ու բարեկամության դաշինքի կնքման մասին, այլ կերպ ասած՝ Հեթումի և Մանգու խանի միջև: Երրորդ խնդրանքի մեջ խոսվում է հոգևորականության արտոնության մասին, թե նա ազատվում է հարկերից: Իսկ հայերեն թարգմանության մեջ ասված է. «զի յամենայն երկիրս թաթարաց կարիցեն չինել եկեղեցիս քրիստոնէից, և հայք ազատ լինիցին յամենայն կապալաց և յայլոց ծանրութեանց»[5]: Այսպիսով, Ավգերյանը փորձում է բանն այնպես ներկայացնել, որ իբր թե բանակցությունները վերաբերում էին հայոց թագավորի և մոնղոլների մեծ խանի դաշինքին: Հեթումը հարցն ավելի լայն է դնում. նա խոսում է բոլոր քրիստոնյաների ու մոնղոլների դաշինքի մասին:

Հայոց եկեղեցու պատմաբան Օրմանյանը պնդում է, թե Հեթում թագավորը դեռևս մինչև իր եղբայր Սմբատի ուղևորությունը, «իւր

[1] Documents arméniens, t. II, p. 297.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 297:

[4] Հեթում՝ պատմիչ թաթարաց, 1842, Վենետիկ, էջ 43:

[5] Նույն տեղում:

փափագն էր անձամբ տեսակցութեան երթալ Քհուք մեծ խանին և անոր միտքը գրավել իմաստուն առաջարկութիւններով, և քրիստոնէից պաշտպան դարձնել իսլամութեամբ զորացած աղգերուն դէմ, մինչև իսկ թաթարները քրիստոնեութեան աշակերտել»[1]: Կասկածելի է, թե Հեթումն այսպիսի մտադրություն ունեցած լինի: Իսկ Մանգու խանի մոտ մեկնելիս նա կարող էր ձգտում ունենալ խանին հակելու դեպի քրիստոնեությունը: Բայց, հակառակ պատմիչ Հեթումի պընդմանը, Մանգու խանը քրիստոնեություն չի ընդունել ո՛չ Հեթում թագավորից, ո՛չ էլ մեկ ուրիշից:

Հայտնի է, որ XIII դարի 40 և 60-ական թվականներին, երբ Արևմտյան Եվրոպան դեռ վախենում էր մոնղոլների նոր արշավանքից, երբ տեղի էին ունենում խաչակրաց արշավանքների վերջին բռնկումները, երբ Արևմուտք էին հասնում կեղծ լուրեր, թե մոնղոլները քրիստոնեություն են ընդունել, Ինոկենտիոս IV պապը, Լյուդովիկոս IX-ը և եվրոպական այլ թագավորներ թաթար զորապետների ու խանների մոտ են ուղարկել մի քանի դեսպանություններ, որպեսզի հետախուզեին՝ վտանգ չկա՞ արդյոք Արևմուտքի դեմ թաթարական նոր արշավանքի, որպեսզի չոչափեին՝ հնարավո՞ր է արդյոք քրիստոնեություն տարածել թաթարների մեջ և նրանց օգտագործել եգիպտոսի սուլթանության դեմ մղվող պայքարում:

Սակայն Պլանո Կարպինիի 1245 թ. և Անդրեասի 1249 թ. ուղևորությունները Գույուկ խանի մոտ, Ասցելինոսի 1247 թ. ուղևորությունը Բաչու խանի մոտ, Ռուբրուկինը՝ 1253–1255 թթ. Մանգու խանի մոտ, դրական արդյունքներ չտվեցին:

Հայոց թագավոր Հեթումի եղբայր սպարապետ Սմբատը, Գույուկ խանի մոտից վերադառնալիս 1248 թ. Սամարղանդից նամակ է ուղարկել իր աղգականին՝ Կիպրոսի թագավոր Հէնրիխին, որի մեջ, ի միջի այլոց, գրել է. «Մենք հանդիպեցինք Արևելքի երկրում ցրիվ եկած բազմաթիվ քրիստոնյաների, և բազում բարձաբերձ ու գեղեցիկ հին եկեղեցիների, որոնք թաթարների ձեռքով կործանվել են՝ մինչև նրանց կողմից քրիստոնեություն ընդունելը»[2]:

Քրիստոնյաներ և քրիստոնեական տաճարներ Սմբատը կարող էր տեսած լինել, բայց, չնայած քրիստոնեության որոշ տարածմանը մոնղոլների մի մասի մեջ, նրանք մնում էին հեթանոսներ: Նրա նամակը Կիպրոս կղզում կարող էր աղավաղված կարծիք առաջացնել մոնղոլների, որպես քրիստոնյաների մասին: Այդ ժամանակ Կիպրոսում

[1] **Մ. Օրմանյան,** Ազգապատում, էջ 1637:

[2] Assises d' Antioche, Venetik, 1876, p. 90.

էր Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ը: Կղզին, ինչպես հայտնի է, ծառայում էր որպես հենակետ խաչակիրների VII արշավանքի համար: Նրա մոտ մոնղոլ ելչիկատայից դեսպան եկավ, որը պատմեց, թե մեծ խանը քրիստոնեություն է ընդունել և չատ լավ է տրամադրված քրիստոնյաների հանդեպ:

Դևլի Եգիպտոս կատարած անհաջող արշավանքից հետո, գերությունից ազատվելով, Լյուդովիկոս IX-ը չարունակում էր ռազմական գործողությունները Սիրիայում: Այդ ժամանակ մոնղոլական ջոկատները սկսեցին հարձակվել Միջագետքի և Հյուսիսարևելյան Սիրիայի վրա: Ստանալով նրանց անսպասելի աջակցությունը՝ նա հասկացավ, որ պետք է կապ հաստատել մոնղոլների հետ: Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ը Մանգու խանի մոտ ուղարկեց վանական Ռուբրուկին, որը գործում էր անվճռականորեն ու մեծ զգուշավորությամբ: Երբ Ռուբրուկին մեծ խանի Հորդայում հարցրել են, թե չի՞ ուզում արդյոք բարեկամության պայմանագիր կնքել, և բացասական պատասխան են ստացել, մոնղոլները զարմանքով ասել են. «Բա էլ ինչո՞ւ է ևկել, եթե չի ուզում խաղաղության դաշինք կնքել»[1]: Ռուբրուկը Լյուդովիկոսի կողմից լիազորված չի եղել մոնղոլների հետ ռազմական դաշինք կնքելու ընդդեմ մուսուլմանների: Նա ավելի չուտ հետախուզության է գնացած եղել, քան թե քաղաքական դաշինք հաստատելու հեթանոսների հետ: Նա չէր դադարում մոնղոլներին հեթանոս համարել, թեև նչել է նաև, որ քրիստոնյաները որոշ ազդեցություն ունեին մեծ խանի ռազմակայանում, որի քարտուղարը նեստորական էր: Նա այնտեղ տեսել է հայ Սարգիսին և ուրիչ քրիստոնյաների:

Եթե Հեթում թագավորին հաջողված լիներ Մանգու խանին համոզել մկրտվելու, ինչպես հաղորդում է Հեթում պատմիչը, ապա այդ մասին Ռուբրուկը տեղյակ կլիներ, քանի որ Կիլիկիայով վերադառնալիս՝ նա Հեթում թագավորի հորից՝ Կոստանդինից իմացել է մոնղոլների հետ հայոց թագավորի դիվանագիտական բանակցությունների մասին, և այնպիսի կարևոր իրազարձություն, ինչպիսին մեծ խանի մկրտությունն էր, նա կհաղորդեր Ռուբրուկին, եթե այդ փաստը իրոք տեղի ունեցած լիներ: Այսպիսով, Հեթում պատմիչի հաղորդումը, թե Մանգու խանը մոնղոլ չատ իշխանների և անվանի մարդկանց հետ կնքվել է, չի համապատասխանում իրականությանը:

Եթե Հեթումին հավատանք, ապա դուրս է գալիս, որ Բաղդադի, Պաղեստինի և Սիրիայի նվաճման ծրագիրը Մանգու խանին ներշնչել

[1] **В. Рубрук,** *Путешествие в восточные страны, СПб., 1911, с. 115.*

է Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթումը, որ մոնղոլներն Առաջավոր Ասիան նվաճել են ըստ վերջինիս մշակած պլանի, և այդ ամենը նրանք արել են որպես նորադարձ քրիստոնյաներ՝ ի բարօրություն քրիստոնեության, հանուն Ասիայում դրա տարածման: Հեթումի այս պատմածների մեջ արտացոլվել է պապական դիվանագիտության կողմից XIII դարի երկրորդ կեսի և XIV դարի սկզբի քաղաքականությունը, այսինքն՝ մոնղոլների և Կիլիկյան Հայաստանի օգնությամբ երուսաղեմի հետգրավման և Արևելքի նվաճման պլանը, ինչը կնպաստեր կաթոլիկության տարածմանը արևելյան երկրներում:

Հեթում պատմիչը, հավանաբար, ցանկացել է պապական իշխանությանը ցույց տալ, որ դեռ Հեթումյանների դինաստիայի հիմնադիր Հեթում I-ինն է փորձել նպաստելու քրիստոնեության հաղթանակին Արևելքում, այդ նպատակով է նա հեռավոր ճանապարհորդություն կատարել դեպի Ղարաղորում և մեծ խանին հորդորել՝ քրիստոնեություն ընդունելու, որ իսլամի դեմ պայքարելու համար նրա հետ ռազմական դաշինք է կնքել և Մանգու խանին դրդել պատերազմելու ընդդեմ Բաղդադի ու եգիպտոսի մուսուլմանների, այսինքն՝ քրիստոնյաների գլխավոր թշնամիների:

XIV դարի սկզբին պապությունը վերջին փորձերն անելով երուսաղեմը եգիպտոսից ետ նվաճելու, նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու՝ Կիլիկյան Հայաստանին դրդում է գործուն մասնակցություն ունենալ դրանում: Որպես կաթոլիկ և հռոմեական եկեղեցու հետ միավորվելու կողմնակից՝ Հեթումը եղել է պապի այդ քաղաքականության ջատագովը Կիլիկյան Հայաստանում: Հենց այդպիսի քաղաքականություն էր վարում նաև Հեթում II թագավորը, որի իշխանության օրոք է Հեթում պատմիչը գրել իր «Պատմությունը»:

Շատ հեղինակներ անբննադատաբար են մոտենում Հեթում պատմիչի տեղեկություններին Հեթում թագավորի ու Մանգու խանի փոխհարաբերությունների վերաբերյալ, ուստի և հարկ եղավ կանգ առնել այս հարցի վրա:

Վերջում պետք է մեկ անգամ էլ ընդգծել, որ Հեթումի կողմից Ոսկե Հորդա կատարած ուղևորության նախաձեռնությունը պատկանում է մոնղոլներին: Նա այնտեղ է գնացել խանի կրկնականչից հետո: Հեթումը չէր կարող հրաժարվել խանի հրավերից, քանի որ նման մերժումը սովորաբար դիտվում էր որպես անհնազանդություն, որպես դավաճանություն: Հորդա կանչելով Հեթումին, որպեսզի նա հաստատեր իր հնազանդությունը մեծ խանին, Մանգու խանը դրանով իսկ ցանկանում էր ամրապնդել իր սուվերեն իշխանությունը Կիլիկիայի

նկատմամբ, որի տարածքը նվաճված չէր մոնղոլների կողմից, բայց կարևոր ռազմավարական նշանակություն ուներ:

Հնթումը դեպի Ղարաղորում ճանապարհորդությունը կատարել է ամենից առաջ հանուն իր պետության չահերի, այլ ոչ թե քրիստոնեությունը մոնղոլների մեջ տարածելու համար: Նա ձգտում էր իր երկիրն ապահովել թաթարների ներխուժումից՝ նրանց նոր նվաճողական արշավանքների դեպքում: Հնթումը չէր կարող անտարբեր նայել Մեծ Հայքի ծանր, իրավազուրկ դրությանը, բայց հնարավորություն չուներ պաշտպանելու նրա քաղաքական չահերը մեծ խանի մոտ:

Կիլիկյան Հայաստանը ենթարկվում էր մեծ խաներին, իսկ հետագայում՝ Հուլավյաններին, բայց չատ ավելի մեծ ինքնուրույնություն ուներ, հատկապես ներքին կյանքում, քան մոնղոլների լծի տակ ընկած մյուս երկրները: Ռուբրուկը հնթումի ուղևորության արդյունքի մասին ի միջի այլոց գրում է. «Բացի այդ, Մանգու խանը նրան արտավկություն էր չնորհում, որպեսզի ոչ մի դևսպան ոտք չդնի նրա երկիրը»[1]: Հավանաբար, խոսքն այն մասին է, որ մոնղոլ խանների պաշտոնյաները չպետք է ոտք դնեին Կիլիկիայի տարածքը: Այս վկայությունը պետք է դիտել որպես մոնղոլների կողմից Կիլիկիայի հայկական թագավորության անկախության ճանաչում, որպես երկրի կառավարման մեջ հնթումի գերագույն իշխանության ճանաչում:

Կիլիկյան Հայաստանի և Իրանի մոնղոլների միջև այսպիսի փոխհարաբերություններ պահպանվում էին նաև XIII դարի վերջին ու XIV դարի սկզբին: Կիլիկիայի հայկական թագավորությունը Հուլավյաններին որոշ հարկ էր վճարում, պատերազմի ժամանակ օժանդակ զորք էր տրամադրում և հետևում մոնղոլների արտաքին քաղաքականությանը, բայց իլխանները չէին միջամտում այդ պետության ներքին գործերին: Այս մասին Համդալլահ Ղազվինին գրում է. «Փոքր Հայաստանը Իրանի (Հուլավունների պետության – Գ. Մ.) փաստական մասը չէ... Այդ երկիրը յուրաքանչյուր տարի 30000 դինարի տուրք է վճարում Իրանի գանձարանին»[2]:

Ինչպես արդեն նշվել է, 1235–1244 թթ. մոնղոլները նվաճեցին Իրանն ու Անդրկովկասը և ջախջախեցին Փոքր Ասիայի Սելջուկյանների պետության ռազմական հզորությունը: Սակայն չարունակում էր գոյություն ունենալ Բաղդադի խալիֆաթը: Սիրիան մամլուքյան սուլթանների իշխանության տակ էր:

[1] **Рубрук,** *Путешествие в восточные страны, СПБ., 1911, с. 171.*

[2] *The geographie part of the Nuzhat-al-gulub, composed by Hamd-Allah Mustawfi of Qazwin, ed by le Strange, p. 100.*

Մոնղոլները, սակայն, նրանց էլ էին սպառնում: 1252 թ. մոնղոլների մեկ ջոկատ ներխուժեց Միջագետք և կողոպտեց Դիարբեքիրի ու Մուֆարղինի մարզերը: Այս նույն ջոկատը հարձակվեց այն քարավանի վրա, որը Խառանից գնում էր Բաղդադ, և կոտորեց մարդկանց: Մոնղոլները զգալի ավար վերցրին. վաթսուն բեռ չաքար, մեծ քանակությամբ եգիպտական բամբակ և այլն: Քարավանային առևտրի կենտրոնների, Միջագետքի ու Սիրիայի ծաղկուն քաղաքների հարստությունը միչտ գրավել է մոնղոլներին, Բաղդադի՝ համաչխարհային առևտրի ու առևտրական ճանապարհների կարևորագույն կենտրոնի զավթումը հարուստ ավար ու նոր եկամուտներ էր խոստանում: Այս խնդիրը չատ ավելի կոնկրետ է դրված եղել, երբ Մանգու խանն ընտրվել է մեծ խան: Այս խնդրի կատարումը հանձնարարված է եղել Հուլավու խանին:

Մանգու խանի կողմից իշխանության գլուխ անցնելը վերջ դրեց մոնղոլների միջև տեղի ունեցող ներքին պայքարին, և նրանք վերսկսեցին իրենց նվաճողական արշավանքները: Ռաշիդ ադ դինը, որը մանրամասն տեղեկություններ է տալիս մոնղոլական վերնախավի նվաճողական ծրագրերի մասին, ասում է, թե Մանգու խանը «իր եղբայր Կուբիլայ Կաանին նշանակեց արևելյան տիրույթների չրջանում՝ Խիտայում, Մաչինում, Կարաչանակում, Տանգուտում, Տիբեթում, Ջուրջեում, Սոլոնգայում, Ղաոլիում և Հինդուստանի մի մասում, որը սահմանակից է Խիտային ու Մաչինին, իսկ Հուլավու խանին բաժին հանեց Իրանի արևմտյան մարզերը, Սիրիան, Մսրը, Ռումը և Հայաստանը, որպեսզի նրանք իրենց ունեցած զորքերով դառնային նրա աչ ու ձախ թևերը»[1]:

Ըստ այդ ծրագրի ստեղծվելու էր մոնղոլական մի տիրապետություն Խաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծով սփռված բոլոր երկրների վրա, և այդ դևպքում բոլոր առևտրական մայրուղիները, որոնք Չինաստանից, կենտրոնական Ասիայից ու Հնդկաստանից գալիս էին դեպի Միջերկրական ծով, ընկնելու էին մոնղոլական կայսրության կենտրոնում նստող մեծ խանի իշխանության տակ:

Ռաշիդ ադ դինը նաև մի քանի այլ տեղեկություններ է հաղորդում Հուլավու խանի կողմից դեպի Առաջավոր Ասիա կատարած արշավանքի պատճառների մասին, այն է՝ Իրանը լիովին հնազանդված չէր, Բաղդադի խալիֆը, Ռումի սուլթանները, Շիրազի աթաբեկները, եգիպտոսի ու Սիրիայի տիրակալները միմյանց հետ թշնամանքի մեջ էին, իսկ մինչ այդ նվաճված երկրները կարող էին ձեռքից գնալ[2]:

[1] **Рашид-ад-дин,** *Сборник летописей, т-III, М.-Л., 1946, с. 23.*

[2] *Նույն տեղում, էջ 24:*

Միջագետքի ու Սիրիայի նվաճման միջոցով Մանգու մեծ խանը ձգտում էր գրավել առևտրական մայրուղիների առավել կարևոր հատվածները, այսինքն՝ ինչպես Չինաստանից ու Միջին Ասիայից, այնպես էլ Հնդկական օվկիանոսից դեպի Միջերկրական ծով տանող ճանապարհները: Հուլավյանների ջատագով Ռաշիդ ադ դինը առանձնապես ընդգծում է նրանց իրավունքը Առաջավոր Ասիայի երկրների նկատմամբ: Էլ Օմարի հաղորդումից երևում է, որ դեռ մինչև Մանգու խանի կառավարումը մեծ խանները ձգտում էին իրենց ձեռքին պահել Անդրկովկասը և ընդհանրապես Առաջավոր Ասիայի երկրները[1]:

Հուլավու խանը 1253 թ. սկսելով արշավանքը դեպի արևմուտք՝ գնում էր դանդաղ, կանգառներով և միայն 1255 թ. հասավ Սամարղանդ[2]: Գուցե այս դանդաղկոտությունը բացատրվում է նրանով, որ Բաթուն իր որդի Բերկայի համառ պահանջով բողոքում էր այդ արշավանքի դեմ, ինչպես պնդում է էլ Օմարին[3]:

Հեթումը, վերադառնալով Ղարաղորումից, հանդիպեց Հուլավու խանին Թալասի մոտ[4]: Հուլավու խանը գնում էր կատարելու Ասիայի արևմտյան մարզերը հնազանդեցնելու մասին Ջինգիզ խանի պատվիրանը և իր մեծ եղբայր Մանգու խանի հրահանգը:

1255 թ. Անդրկովկասում արդեն սպասում էին նրա գալստյանը[5]: Վրաց և հայ իշխանները, որպես վասալներ, ստիպված եղան մասնակցել Հուլավու խանի նվաճողական արշավանքներին:

Հակառակ մի քանի հետազոտողների պնդումների՝ Հեթումը չէր մասնակցում Իկոնյան սուլթանության ու Բաղդադի խալիֆայության դեմ մոնղոլների արշավանքներին: Նույնիսկ Հեթում պատմիչը, որը բերում է Մանգու խանի հետ Հեթում թագավորի կնքած ռազմական դաշինքի պատմությունը, նկարագրելով մոնղոլների ներխուժումը Իկոնիա և նրանց կողմից Բաղդադի գրավումը, ոչինչ չի ասում այդ ռազմական գործողություններին հայոց թագավորի մասնակցության մասին: Նրա մոտ կա միայն վկայություն այն մասին, որ Հեթումը, Հուլավու խանից պատիվների և ընծաների արժանացած, տուն է վերադարձել Բաչուի ուղեկցությամբ, այլ կերպ ասած՝ առաջ է շարժվել նրա բանակի հետ, որը գործում էր Իկոնիայի սուլթանության դեմ[6]:

[1] Տե՛ս **В. Тизенгаузен,** *Сборник мат., относ, к истории Зол. Орды, т. I, с. 245:*

[2] Տե՛ս **Рашид-ад-дин,** *Сборник летописей, т. III, с. 23:*

[3] Տե՛ս **В. Тизенгаузен,** *Сборник мат., т. I, с. 246:*

[4] **Կիրակոս Գանձակեցի,** *Պատմութիւն, էջ 86:*

[5] *Նույն տեղում, էջ 358:*

[6] Տե՛ս *Հեթում – պատմիչ թաթարաց, էջ 44:*

Դա հաստատում է նաև Կիրակոսը. «Գնաց ընդ նոսա և թագաւորն Հայոց Հեթում,– գրում է նա,– որ եկեալ էր ի Մանգու դանէն, ի Բաթոյէն, և ի Սարթախէն, և ի Հուլաւուէն և էր առ Բաչու նուինին, զոր բազում զօրօք առաքեաց յերկիր իւր ի Կիլիկիա, ի քաղաքն Սիս. որ և բազում ընծայիւք և զօրօք սպասաւորութիւն կատարէր Բաչու նուինին և զօրացն, որ ընդ նմա, մինչև թուղթ գոհութեան և գովութեան գրեալ վասն նորա առ Հուլաւուն»[1]: Այս հաղորդումից կարելի է եզրակացնել, որ Հեթումի կարգադրությամբ մոնղոլներին Կիլիկիայից ռազմամթերք էին հասցնում և ըստ հնարավորին նաև այլ ծառայություններ մատուցում:

Հուլավու խանի նվաճումների ժամանակ Առաջավոր Ասիայում չկար ուժեղ մի պետություն, որն ընդունակ լիներ հակահարված տալու նրա զորքերին կամ միավորեր Մերձավոր Արևելքի բաժանբաժան ուժերը՝ մոնղոլներին դիմադրելու: Փոքր Ասիայի Սելջուկյանները անկում էին ապրում և 1243 թ. ենթարկվում էին մոնղոլ խաներին: XIII դարի 50-ական թվականներին պետության տարածքը բաժանված էր Քեյ Խոսրով II-ի երկք որդիների միջև: Նրանք գժտվում էին, որին միջամտում էին մոնղոլները: Մինչ Հուլավու խանը գործում էր Իրանում ասասինների դեմ, զորապետ Բաչուն նրա հրամանով հանդես եկավ Փոքր Ասիայում մոնղոլների տիրապետությունը այստեղ ամրապնդելու համար՝ ընդդեմ անհնազանդ ու միահնծանության ձգտող Իզզ ադ դին Քեյ Քավուս II-ի, որը ջախջախվեց Սուլթան խանի մոտերքում և փախավ Թեոդորոս Լասկարիոսի մոտ:

XIII դարի կեսերին Բաղդադի խալիֆայությունը, ունենալով զարգացած ու խոշոր ֆինանսական միջոցներ, քաղաքականապես այնուամենայնիվ թույլ էր: Բաղդադը հինգ դար Մերձավոր Արևելքի համաշխարհային առևտրի խոշորագույն կենտրոնն էր, առևտրական ճանապարհների խաչավորման կարևորագույն կետը: XII–XIII դարերում ապրանքների գլխավոր հոսքը, մանավանդ Հնդկաստանից եկող, Բաղդադով էր անցնում դեպի Միջերկրական ծովի նավահանգիստները: Այս քաղաքի զավթումը մոնղոլներին մեծ օգուտներ էր խոստանում: Բաղդադի նվաճումը խոշոր քաղաքական և ռազմավարական նշանակություն կունենար և կնպաստեր Առաջավոր Ասիայում մոնղոլների տիրապետության ընդլայնմանն ու ամրապնդմանը:

Վերջապես, միայն Բաղդադի գրավմամբ կարելի էր հասնել առաջադրված նպատակին. նվաճել Ասիայի արևմտյան մարզերը, մինչև

[1] **Կիրակոս Գանձակեցի,** *Պատմութիւն, էջ 360:*

«ամենավերջին սահմանները», այսինքն դուրս գալ դեպի Միջերկրական ծով և տիրել առևտրական ճանապարհներին, որոնք Պարսից ծոցից գալիս էին ու Բաղդադով անցնում գնում էին դեպի Սիրիայի նավահանգիստները, գրավել հարուստ ավար, խոշոր նկամուտներ, վարելահողեր և ամառային արոտավայրեր Միջագետքում ու Սիրիայում: Այդ քաղաքի նվաճմանը Հուլավու խանը մեծ նշանակություն էր տալիս: 1258 թ. փետրվարի 5-ին նրա զորքերը գրավեցին Բաղդադը և կողոպտեցին:

Մոնղոլների կողմից Բաղդադի գրավման քաղաքական, տնտեսական և մշակութային հետևանքները մեծ էին: Քաղաքական առումով Առաջավոր Ասիայի մուսուլմանությունն զգալի հարված ստացավ Հնթանոս մոնղոլներից: Բաղդադը, որպես համաչխարհային առևտրի կենտրոն, կորցրեց իր դերը Առաջավոր Ասիայի տնտեսական կյանքում: Մոնղոլների և հետագայում մյուս քոչվոր ժողովուրդների տիրապետությունը ընդհանուր անկում առաջացրեց և երկար ժամանակով կասեցրեց Առաջավոր Ասիայի երկրների պատմական առաջընթացը:

Հնթում I թագավորը Բաղդադի վրա մոնղոլների արշավանքի ժամանակ զբաղված էր Իկոնիայի սուլթանության հետ պատերազմելով: Այս կամ այն պատճառով նա Բաղդադի պաշարմանը չի մասնակցել: Նվաճելով Բաղդադը՝ մոնղոլներն անցան Միջագետքի մյուս քաղաքների պաշարմանը:

Մոնղոլների կողմից Բաղդադի գրավումից ու կողոպտումից հետո Միջագետքի երկրները և հատկապես մուսուլմանական էմիրությունները Ե՛լ ավելի սերտորեն միավորվեցին Եգիպտոսի չուրջը, որը Իկոնիայի սուլթանության ջախջախումից և Բաղդադի անկումից հետո ամենաուժեղ մուսուլմանական պետությունն էր:

Այն մասին, որ Միջագետքի ու Սիրիայի քաղաքները Բաղդադի անկումից հետո էլ որոշել էին դիմադրել մոնղոլներին, վկայում է Մուֆարղինի (Մարտիրուպոլիս), Հալեպի և այլ քաղաքների համառ պաշտպանությունը:

1258 թ. Միջագետքը նվաճելու համար Հուլավուն մեծ զորք ուղարկեց՝ թաթարների մի ջոկատ Ջաղաթայի գլխավորությամբ և Հայերի ջոկատը՝ Պռոշ իշխանի գլխավորությամբ: Ջնայած սարսափելի սովին, որը բնակիչներին մարդակերության էր հասցրել, Մուֆարղինը գրավվեց միայն երկամյա պաշարումից հետո[1]: Քանի մոնղոլները գնում էին դեպի արևմուտք, քանի մոտենում էին Սիրիային,

[1] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 369:

այնքան մուսուլմաններն ավելի էին հույս դնում Եգիպտոսի օգնության վրա, և այստեղ ամրացված չատ քաղաքներ համառ դիմադրության էին ցույց տալիս Հուլավու խանի զորքերին: Կիլիկյան Հայաստանը, ինչպես արդեն նշվել է, մոնղոլներին չէր օգնում, երբ նրանք նվաճում էին Միջագետքը: Իր զորքերով Հնթումի գործուն մասնակցությունը Հուլավուի նվաճողական պատերազմներին սկրսվում է 1259 թվից՝ մոնղոլների կողմից Սիրիա ներխուժելու պահից, այլ ոչ թե 1256 թվից, ինչպես կարծում է Ալիշանը: Հետաքրքիր է նշել, որ այդ բանում նախաձեռնությունը պատկանել է մոնղոլներին, որ Հուլավու խանն է Հնթումին հրավեր հղել իր զորքով ներկայանալու:

Սիրիայի նվաճմանը Հնթում I-ի մասնակցության մասին տեղեկացնում են հայ պատմիչներ Հնթումն ու Վարդանը: Հնթումն իր «Պատմության» 28-րդ գլխում գրում է. «Յայնժամ Հուլաւուն զգաստացաւ ի հանդարտութենան զամի մի. և առաքեաց առ թագաւորն Հայոց գալ առ ինքն զօրօք իւրովք ի քաղաքն Ուռհա ի թագաւորութենան Միջագետաց, քանզի խորհէր երթալ ի սուրբ երկիրն, զի տացէ զայն ի ձեռս քրիստոնէից: Յայնժամ Հնթում արքայ երկոտասան հազար հեծելովք և քառասուն հազար հետևակօք ճանապարհ արարեալ, եկն առ Հուլաւուն և ասէ ցնա. «Տէր, սուլտանն Հալէպու ի ձերին ունի զրովանդակ երկրին Ասորւոց դիշխանութիւն. և յայնմ թագաւորութենան է քաղաքն Երուսաղէմ, վասն որոյ պէտք են նախ արկանել ի բուռն զգլխաւոր քաղաքն Հալէպու, և այնպէս եղիցիս տէր երկրին Ասորւոց ողջոյն: Հաւանեալ Հուլաւունի ընդ խորհուրդն, հրաման ետ պաշարել զՀալէպ քաղաք, որ էր յոյժ զօրաւոր, ամրացեալ պարսպօք բազմամբոխ և բազմահարուստ»[1]:

Մենք մեջբերում արեցինք հայերեն թարգմանությունից: Ֆրանսերեն և լատիներեն տեքստերում այս նույնի մասին մի քիչ այլ կերպ է ասվում, որն ավելորդ անգամ ապացուցում է, որ հայերեն թարգմանությանը չպետք է հենվել: Բնագրում ասվում է, որ Հնթումը հավաքեց մեծ զորք՝ հեծյալ և հետևակ, քանզի Հայոց թագավորությունը իր ծաղկման շրջանում կարող էր ներկայացնել 12000 հեծյալ և 60000 հետևակ[2]: Այսպիսով, Հնթումը որոշակի չի ասում, թե թագավորը իր հետ Հուլավու խանի մոտ բերեց 52000 հետևակ և հեծյալ զորք, ինչպես նշվում է հայերեն թարգմանության մեջ և չատ պատմաբանների կողմից օգտագործված է որպես հավաստի թիվ, այլ ընդգծում է, որ Կիլիկյան Հայաստանը նախկինում 72000 զինվոր էր դուրս բերում:

[1] Հնթում – պատմիչ Թաթարաց, էջ 47:

[2] Տե՛ս Documents arméniens, Paris, 1906, t. II. p. 170:

Հեթումի դուրս բերած զորքի քանակը, այդ աղբյուրի համաձայն, ակնհայտորեն չափազանցված է, բայց Ալիշանը և ուրիշ հեղինակներ ընդունում են Հեթումի հաղորդած թվերը իբրև հավաստի: Մեզ թվում է, որ Հեթում թագավորը դնպի Սիրիա կատարած արշավանքի ժամանակ կարող էր զուրս բերել մինչև 10-հազարանոց մի զորագունդ: Ալիշանը պնդում է, թե Հեթումը եղնսիա է գնացել Հալեպը նվաճելու համար, որը հետո Հուլավու խանը զիջել է նրան[1]: Սակայն ոչնչով չհիմնավորված այս պնդման հետ համաձայնել չի կարելի: Այնպիսի կարևոր ռազմավարական մի կետ և առևտրական կենտրոն Սիրիայում, ինչպիսին Հալեպն էր, որտեղով քարավանային ճանապարհներն էին անցնում, մոնղոլները չէին կարող տալ Կիլիկյան Հայաստանին:

Այսպիսով, Հեթում պատմիչը, իր պատմածին հավատարիմ, ըստ որի Հեթում թագավորը դեռ 1254 թ. Մանգու խանին խնդրել է նվաճել Երուսաղեմը և տալ քրիստոնյաներին, պնդում է, թե հայոց թագավորը 1259 թ. Եղնսիայում Հուլավու խանին խորհուրդ է տվել հանուն Երուսաղեմի նվաճման նախ Հալեպը վերցնել, բայց դա չի համապատասխանում իրականությանը: Տուրնեբիզը, չմատնանշելով աղբյուրը, գրում է. «Հեթումը միացավ Հուլավու խանին, և ճշմարտանման է, որ հետևելով նրա խորհուրդներին, Հուլավուն մինչև իր՝ կենտրոնական Ասիա մեկնելը ուզում էր ազատագրել Երուսաղեմը սարակինոսների լծից»[2]:

Հուլավու խանը վաղուց արդեն ծրագրել էր Հալեպը, Երուսաղեմը և Սիրիայի նավահանգիստները գրավել՝ հանուն Առաջավոր Ասիայի հարուստ երկրների և առևտրական ճանապարհների վրա մոնղոլների տիրապետության, այլ ոչ թե հանուն քրիստոնեության, և 1259 թ., իր զորքն ուժեղացնելով Հեթումի զորագնդով, գրավեց Հալեպը: Սիրիական արշավանքի ժամանակ Կիլիկյան Հայաստանը մոնղոլների աջակցությամբ գրավեց Սիրիայի մի քանի սահմանամերձ չրջաններ ու քաղաքներ:

Երբ մոնղոլները նվաճում էին Միջագետքը, ոչ միայն Հեթում թագավորը, այլև Կոստանդին կաթողիկոսը ուղևորություն կատարեց դեպի Եղնսիա՝ Հուլավու խանի մոտ և, Վարդան Մեծի խոսքերով ասած, «Օրհնեաց զնա և սիրեցաւ զնմանէ»[3]: Կաթողիկոսի այս ուղևորությունը, հավանաբար, կատարվել է քաղաքական դրդապատ-

[1] Տե՛ս **Ալիշան,** Սիսուան, էջ 554:

[2] Tournebize, Hist. politigue et religieuse de l' Arménie, p. 211.

[3] **Վարդան Բարձրբերդցւոյ** Պատմութիւն տիեզերական, 1861, Մ., էջ 151:

ճառներով. մոնղոլ խաները հասկանում էին, թե ինչ մեծ ազդեցություն ուներ հայ հոգևորականությունը հայկական մարզերում, և նկատի ունենալով հայ կղերականության նկատմամբ բարեհաճ ուշադրությամբ ձգտում էին դեպի իրենց տրամադրել հայ կղերին: Հայ հոգևորականությունն էլ իր կողմից ձգտում էր թաթարական լծի պայմաններում նույնիսկ պահպանել իր քաղաքական և տնտեսական տիրապետությունը երկրում: XIII դարի կաթողիկոսները ավելի կայուն ու սերտ կապեր ունեին Կիլիկյան Հայաստանի հետ և ապրում էին Հռոմկլայում:

Հալեպը գրավելուց հետո Հուլավուն նվաճեց Դամասկոսը, Եղնսիան և չատ այլ քաղաքներ՝ առևտրական առումով կարևոր, բայց նրան չհաջողվեց ավարտել Սիրիայի նվաճումը: Իմանալով իր եղբոր՝ մեծ խան Մանգուի մահը, Հուլավուն որոշեց մեկնել Հորդա՝ որպես մեծ խանի կոչման հավակնորդ: Սիրիայում թողնելով իր զորքի մի մասը՝ իր զորավար Քիթբուղայի հրամանատարության ներքո, Հուլավու խանը իր զորքի մյուս մասի հետ մեկնեց Իրան, որպեսզի այնտեղից ճանապարհը չարունակի, բայց Թավրիզում արդեն լուր ստացավ, որ մեծ խան է ընտրվել իր եղբայր Խուբիլայը: Նա եղբոր հետ գերագույն իշխանությունը վիճարկելու միտք չուներ և պատրաստվեց Սիրիա վերադառնալ, քանի որ իմացել էր, որ իր բացակայության ժամանակ Քիթբուղան պարտվել է եգիպտոսի զորապետ Կուտուզի կողմից:

Քիթբուղայի 1260 թ. պարտության մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Իսկ սուլտանն Մսրա (Եգիպտոսի) ժողովեալ զօրս բազումս, եկն ի վերայ կողմնապահաց թաթար զօրուն, որոց գլխաւոր էր այր մի, Քիթբուղա անուն, հաւատով քրիստոնեայ, նայիման ազգաւ, այր մեծ պատուով, որ եւ պատերազմաւ ընդդեմ սուլտանին. և քաջապես մարտուցեալ՝ կոտորեցաւ ամենայն զօրօքն, որ ընդ իւր, զի յոյժ բազումք էին եգիպտացիքն: Եւ կռուեցան ի դաշտն Թաբորական լերինն: Կային ընդ Քիթբուղային ի պատերազմի անդ յոլովք ի հայոց և ի վրաց, որք ընդ նմա կոտորեցան: Եւ եղև այս յՁԹ (709) թուականին հայոց»[1]:

Սա մոնղոլների առաջին լուրջ պարտությունն էր Առաջավոր Ասիայում: 1259 թ. Սիրիա արշավելու ժամանակ մոնղոլների համար անբարենպաստ հանգամանքներից մեկը այն էր, որ վրաց թագավոր Դավիթ Նարինը ապստամբել էր և հարկ եղավ նրա դեմ զորք ուղարկել, մյուսն էլ այն էր, որ Հուլավուն Մանգու խանի մահից հետո

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 372:

ընդհատեց ռազմական գործողությունները Սիրիայում և զորքի մի մասի հետ գնաց Արևելք: Դրա հետևանքով եգիպտոսի մամլուքների դեմ Սիրիայում գործող մոնղոլական ջոկատը ճակատամարտի պահին չատ ավելի սակավամարդ էր: Այս պատճառը նչել է Վարդանը: Սիրիայում մոնղոլական ջոկատի պարտության մասին նա ասում է. «Ի սոյն ժուին կատարեցան զօրքն, զոր Թողեալ էր Էլղան Հուլաւուն կողմապահ երկրին Շամայ իրրև քսան հազար ընդ մեծ զօրագլխին՝ Քիթբուղայ կոչեցեալ, քրիստոնեայ հաւատով, ընդ որ մարետաւ սուլտանն Մսրայ առ ստորոտով Թաբօրական լերին անթիւ բազմութեամբ»[1]:

Մոնղոլական զորքի մնացորդները հանգրվանեցին Կիլիկիայում: Այս ճակատամարտին չմասնակցած Հեթումը նրանց օգնության ցույց տվեց պարենամթերքով, զգեստով ու ձիերով: Հուլավու խանն ուզում էր ձեռնարկել նոր արշավանք դեպի Սիրիա և Ուլու Դավիթից պահանջեց կռվի նչել իր հետ եգիպտոսի դեմ, բայց վրաց թագավորը հրաժարվեց: Հուլավու խանը ստիպված եղավ հետաձգել սիրիական արշավանքը և նոր զորքեր ուղարկել ինչպես Դավիթ Նարինի դեմ, այնպես էլ՝ Ուլու Դավիթի, իսկ 1262 թվին պատերազմ բռնկվեց ընդդեմ Ոսկե Հորդայի, ինչը մոնղոլ խանին ստիպեց ուշադրությունը կենտրոնացնել Ջուչյանների դեմ մղվող պայքարին:

Ջնայած մոնղոլներին չհաջողվեց գրավել Սիրիան, այնուամենայնիվ մոտավորապես երկու-երեք տարվա մեջ Հուլավու խանը ընդարձակ տարածք նվաճեց Առաջավոր Ասիայից և ուժեղացրեց մոնղոլների տիրապետությունը մինչ այդ նվաճված երկրներում:

Հուլավյանների պետության կորիզը Իրանն էր, իսկ մայրաքաղաքը՝ Թավրիզը: Այդ պետության կազմում էին Հայաստանը, Վրաստանը, Ադվանքը, Փոքր Ասիայի մեծ մասը, Միջագետքը և այլ երկրներ: Այն տարածվում էր արևելքից՝ ուլուս Ջաղաթայի սահմանից (Ամու-Դարյա) մինչև արևմուտք՝ համարյա մինչև Միջերկրական ծով, եթե հաչվի առնենք մոնղոլներից կախման մեջ գտնվող Իկոնյան սուլթանությունը, և հարավից՝ Հնդկական օվկիանոսից մինչև հյուսիս՝ Դերբենդի լեռնանցքը, որտեղով անցնում էր Ոսկե Հորդայի հետ նրա սահմանը: Այնուամենայնիվ Հուլավուին չհաջողվեց դուրս գալ անմիջականորեն Միջերկրական ծով և տիրել սիրիական նավահանգիստներին:

Ասիայի հեռավոր արևմուտքում Հուլավյանները բախվեցին մի ուժեղ պետության՝ եգիպտոսի սուլթանության հետ, որը ռազմական

[1] **Վարդան Բարձրբերդցւոյ** *Պատմութիւն տիեզերական, էջ 152:*

առումով էլ ավելի ամրացավ VIII խաչակրաց արշավանքի անհաջողությունից և մամլուքների կողմից Այուբյանների դինաստիայի տապալումից հետո:

Եգիպտոսի սուլթանությունը մամլուք Բահրիյանների դինաստիայի տիրապետության ժամանակաշրջանում (1260–1382), խաչակրաց արշավանքների վերջից մինչև Կիլիկիայի հայկական թագավորության անկումը, չատ կարևոր դեր էր խաղում միջազգային առևտրում, քանի որ գլխավորապես Ալեքսանդրիայով էին դեպի Եվրոպա տարվում հնդկական համեմունքները: Ուստի և եգիպտոսի սուլթանությունը մոնղոլներից եռանդագին պաչտպանում էր Սիրիայի իրեն ենթակա մարզերը և ձգտում էր նվաճել Անտիոքի իչխանապետությունը: Դրա համար նա խնդիր ուներ Սիրիայի ծովափնյա քաղաքներից վերջնականապես դուրս քչել խաչակիրներին, խանգարել մոնղոլներին ամրանալու Միջերկրական ծովի ափին և տիրելու սիրիական բոլոր նավահանգիստներին:

Առաջավոր Ասիայում Հուլավու խանի երևան գալուց ի վեր և մանավանդ Բաղդադը նրա կողմից նվաճվելուց հետո Իկոնիայի սուլթանության վիճակը վատացավ: Ուժեղացավ վերջինիս կախումը մոնղոլներից:

1255 թ. ամռանը վերադառնալով Մանգու խանի մոտից՝ Հեթումն սկսեց նտ նվաճել Կիլիկիայի սելջուկների գրաված սահմանամերձ չրջաններն ու բերդերը: Հոկտեմբերին նա մեծ զորք հավաքեց և արշավանքի ելավ ընդդեմ Իկոնիայի սուլթանության, հասավ մինչև Հերակլեա և վերադարձավ մեծ ռազմավարով:

1257 թվից թուլացած սելջուկների դեմ պայքարել սկսեցին թուրքմենները՝ կարամանի առաջնորդությամբ: Այդ ժամանակից թուրքմենները կամ, ինչպես իրենք սկսեցին իրենց անվանել պարագլխի անունով, թուրքմեն-կարամանլիները, դարձան Կիլիկյան Հայաստանի անմիջական ու վտանգավոր հարևանները: Կարամանը իր ամայացուցիչ կողոպտչական ասպատակություններով մեծ վնաս հասցրեց Սելևկիային ու Իսավրիային: Նա երկու անգամ ջախջախեց Հեթումի ուղարկած ջոկատները: Կարամանը իննամիս պաչարված պահեց Մանիոն ամրոցը, որը պատկանում էր Սմբատ կոնետաբլին: Հեթումը, «վսեմասուած իր խորամիտ հայր Կոստանդինից», ինչպես ժամանակագիրն է ասում, զորք հավաքեց և արշավանքի ելավ, որպեսզի թուրքմեններին ստիպեր հանել բերդի պաչարումը: Նաև Հեթումի զորքը հասավ Սելևկիա: Այստեղ նկան նաև Հեծելազորը, Հետևակը ու ցորենով բարձված ջորիների քարավանը Կիլիկիայի այլ

վայրերից: Սելևկիայից հայոց զորքը ճամփա ընկավ դեպի Մանիոն: Թշնամին ետ չպրտվեց բերդից, բերդի կայազորն ամրապնդվեց թարմ ուժերով: Վերադարձի ճանապարհին Հեթումի զորքը նեղ կիրճում ենթարկվեց Կարամանի թուրքմենների հարձակմանը, որոնք, սակայն, պարտություն կրեցին և դիմեցին փախուստի (1262)[1]:

1260 թ. մոնղոլական ջոկատի ջախջախումը Սիրիայում սկիզբը դարձավ Հուլավյանների ու Եգիպտական սուլթանության միջև մրցվող տևական պայքարի, որն արմատապես փոփոխեց Կիլիկյան Հայաստանի միջազգային հարաբերությունները՝ սրելով մամլուք սուլթանների հետ նրա փոխհարաբերությունները:

Սելջուկների դեմ մղվող պատերազմներում, որոնք չարունակվում էին Հորդայից Հեթումի վերադառնալուց դեռ մի քանի տարի հետո էլ, Կիլիկյան Հայաստանը ակնհայտ գերակշռություն ուներ: XIII դարի 60-ական թվականների սկզբին սելջուկներն արդեն վտանգավոր չէին Կիլիկյան Հայաստանի համար, ընդհակառակը, 1260 թ. Սիրիայում մոնղոլների պարտությունից հետո, սպառնալիք էր ստեղծվում Եգիպտոսի կողմից, որտեղ իշխանությունն անցել էր մամլուք սուլթան Բեյբարսի ձեռքը:

Հուլավուն հնարավորություն չունենալով մեծ պատերազմ սկսել Եգիպտոսի սուլթանության դեմ՝ որոշեց վերջ դնել Հեթում Թագավորի և Իկոնիայի սուլթան Ռուքն էդ դինի (1257–1265) միջև տեղի ունեցող թշնամական բախումներին, որպեսզի Կիլիկյան Հայաստանը մոնղոլական օժանդակ ջոկատների օգնությամբ կարողանար ռազմական գործողություններ սկսել Բեյբարսի դեմ, որը գործում էր Սիրիայում և Եփրատյան սահմանի վրա:

Այս նպատակով 1263 թ. Հեթումին Հուլավու խանը կանչեց Իրան և ցուցում տվեց հաշտության պայմանագիր կնքել Ռումի սուլթանության հետ: Նա իլխանի մոտից վերադարձավ մոնղոլ արբիտրների հետ, որոնք «Թագավորի հետ ուղևորվեցին Հերակլեա: Այնտեղ նկավ նաև Ռումի սուլթան Ռուքն էդ դինը և այնտեղ մի քանի օր մնալով՝ նրանք երդմամբ խաղաղության պայմանագիր կնքեցին»[2]: Մոնղոլների միջնորդությունը այս պայմանագրի կնքմանը ակներևորեն ցույց է տալիս, որ նրանք ազդում էին Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության վրա:

1263 թ. ավելի սերտ կապ է ստեղծվում Կիլիկյան Հայաստանի ու մոնղոլների միջև արտաքին քաղաքականության հարցերում: Նրանք

[1] **Ալիշան,** *Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 294:*

[2] **D' Ohsson,** *Histoire des Mongols, t. III, p. 353.*

համատեղ ռազմական գործողություններ են ձեռնարկում Եգիպտոսի սուլթանության դեմ: Այդ ժամանակից սկսած՝ Կիլիկիայի հայկական պետությունը սկսեց ավելի գործուն մասնակցություն ունենալ Եգիպտոսի սուլթանության դեմ Հուլավյանների պայքարին հանուն Սիրիայի:

Սկսած XIII դարի 60-ական թվականների կեսերից, Սիրիայում մոնղոլների անհաջողությունից կամ արևմտյան սահմանում (Եփրատ) նրանց ռազմական ուժի թուլացումից հետո, մամլուքները ներխուժում էին Կիլիկիա, ավերում երկիրը, վիթխարի ռազմավար տանում ու մեծ ռազմատուգանք գանձում: Մյուս կողմից էլ՝ թուրքմեն-կարամանլիները XIV դարի սկզբից ուժեղացան և դարձան Եգիպտոսի սուլթանության դաշնակիցները: Եթե մամլուքները ներխուժում էին Կիլիկիա Սիրիայի կողմից, ապա թուրքմենները և սելջուկները նրանց հետ համաձայնված՝ ներխուժում էին Իկոնիայի կողմից:

Եգիպտոսի սուլթանության դեմ հանուն Սիրիայի Հուլավյանների պատերազմների ժամանակ պայքար ու թշնամություն ծագեց ուլուսների՝ Ջինգիզ խանի սերունդների միջև՝ սահմանամերձ մարզերի և մոնղոլական կայսրության վերաբաժանման համար: Կիլիկյան հայկական պետության համար այս թշնամանքը խիստ աննպաստ էր: Պատերազմները, մի կողմից՝ Ջուչյանների ու Ջաղաթայների, մյուս կողմից՝ Հուլավյանների միջև թուլացնում էին Հուլավյանների պետության դիրքերն արևմուտքում, Եփրատի սահմանի վրա և մամլուքներին հնարավորություն էին տալիս անպատժելիորեն ներխուժել Կիլիկիա:

Աղբյուրները վկայում են, որ Ջուչյանների ու Հուլավյանների միջև գժտությունների գլխավոր պատճառը արևմտակասպյան արոտավայրերն էին, որոնք ձմեռանոցներ էին մոնղոլական հեծելազորի համար, և այն հանգամանքը, որ մինչև Հուլավու խանի Առաջավոր Ասիա կատարած արշավանքը այդ երկիրը Ոսկե Հորդայի իշխանության տակ էր եղել: Բացի այդ, Բերկեն հենվելով այն բանի վրա, որ իր ուլուսի մարդիկ օգնում էին Հուլավու խանին նրա նվաճումների ժամանակ, պահանջում էր իրեն տալ մերձկասպյան մարզերը, որտեղ քաղաքներ կային և ձմեռային արոտավայրեր:

Հուլավյանների ու Ջուչյանների միջև մղվող պայքարում նշանակություն ուներ նաև Ջուչյանների ձգտումը՝ տիրել Դերբենդի լեռնանցքին, որտեղով անցնում էր Ոսկե Հորդայից դեպի Առաջավոր Ասիա տանող առևտրական ճանապարհը, իր իշխանությանը ենթարկել Ազվանքի արհեստավորական և առևտրական քաղաքները և ա-

վելի մոտ լինել Արևելքի հարուստ երկրներին, որտեղից «վաճառականները (տարբեր կողմերից) բերում էին նրան (Բաթուին) զանազան ապրանքներ»[1]: Այս առթիվ Ա. Յու. Յակուբովսկին արդարացիորեն մատնանշում է, որ «Հուլավուն և նրա հաջորդները վիթխարի նշանակություն էին տալիս հարուստ արհեստային արդյունաբերությանը, առավելապես՝ տեքստիլին, որով հռչակված էին Աղվանքի մարզերի քաղաքներն ու գյուղերը»[2]: Ոսկե Հորդայի ու Ատրպատականի միջև կատարվող աշխույժ առևտրի մասին և այն մասին, որ Ջուչյաններն ու Հուլավյանները դրան մեծ նշանակություն էին տալիս, վկայում են պարսիկ պատմիչ Վասսաֆը[3], հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին և ուրիշ հեղինակներ:

Գույուկ խանի մահից հետո, մեծխանության համար մղվող պայքարի ժամանակաշրջանում, Բաթուն օգնեց Մանգու խանին մեծ խան դառնալու գործում, և նրանք ըստ էության կիսեցին Մոնղոլական կայսրության տարածքը և իշխանությունը: Բաթուն դարձավ «երկրորդը թագավորության մեջ»:

Այն հանգամանքը, որ Բաթուն յառլիկներ էր տալիս ու ճանաչում Առաջավոր Ասիայի թագավորների և իշխանների վասալական իրավունքները, վկայում է Ոսկե Հորդայի խանի իրական իշխանության մասին Անդրկովկասում և Իրանում և ընդհանրապես այն ամբողջ տարածքում, որը ձգվում էր Թալասից դեպի արևմուտք, Կասպից ծովից մինչև Բաղդադի խալիֆայությունը, Սև ծովից մինչև Հնդկական օվկիանոս: Բաղդադի նվաճումից (1258) հետո Հուլավուն դարձավ ոչ միայն նոր նվաճված հողերի խանը, այլև այն երկրների, որոնք մինչ այդ ենթարկվում էին Բաթուին: Այստեղից էլ, հիմնականում, ծագեց թշնամանքը Ջուչյանների ու Հուլավյանների միջև:

Բաթուի ազգականներ Կուլին, Բալախանը, Թաթար Մենգանը, Ղաթաղանը և ուրիշ Ջուչյաններ, որոնք մասնակցել էին Մոնղոլական կայսրության տարածքի ընդլայնմանը Ասիայի Հարավ-արևմուտքում և հետագայում՝ Առաջավոր Ասիայի նվաճմանը, սկսեցին պահանջել իրենց բաժինները: Երկպառակություն ծագեց, որն ավարտվեց նրանց կոտորածով՝ Հուլավուի հրամանով: Հուլավու խանին թշնամի մոնղոլների մի մասը փախավ Ոսկե Հորդա և այնտեղ գործուն տարր դարձավ Հուլավու խանի դեմ մղվող պայքարում[4]: Իսկ մյուս մասն էլ

[1] **В. Тизенгаузен,** *Сборник матер., т. II, с. 22.*

[2] **Греков Б. Д. и А. Ю. Якубовский,** *Зол. Орда и её падение, М.-Л., 1950, с. 76.*

[3] **В. Тизенгаузен,** *Сборник матер., т. II, с. 82.*

[4] *Տե՛ս* **Մաղաքիա,** *Պատմութիւն վասն ազգին Նեստորաց, էջ 35:*

փրկություն ու ապաստան գտավ Եգիպտոսում՝ մամլուքների սուլթան Բեյբարսի մոտ[1]:

Առաջավոր Ասիայի երկրների նկատմամբ Ոսկե Հորդայի իրավունքների մասին արևելյան ու հայկական աղբյուրների տեղեկությունները համընկնում են և համապատասխանում իրականությանը: Այդ իրավունքները հաստատվեցին Մանգու և Բաթու խանների միջև կնքված համաձայնագրով այն բանից հետո, երբ Ոսկե Հորդայի խանի օգնությամբ առաջինը դարձավ մեծ խան: Նրանք բաժանեցին ազդեցության ոլորտները մոնղոլների նվաճած տարածքների վրա՝ Խաղաղ օվկիանոսից մինչև Սև ծով: Սահմանը Թալասից մի քիչ արևվելքով էր անցնում[2]:

Արաբ գրող Էլ Օմարին որոշակիորեն վկայում է, որ մինչև Բաթուի մահը Ոսկե Հորդան քաղաքական ազդեցություն ուներ Առաջավոր Ասիայի երկրների վրա, որ Իրանը և Աղվանքը մտնում էին դրա տերության մեջ, և որ Ջուչյանները հակառակ էին դեպի արևմուտք Հուլավու խանի արշավանքին, գլխավորապես՝ Բաղդադի նվաճմանը[3]: Էլ Օմարիի այն հաղորդումը, թե Հուլավու խանը Մանգու խանի առաջ հարց է հարուցել Բաղդադի նվաճման վերաբերյալ, ուշադրության արժանի է ոչ միայն նրա համար, որ այդտեղ խոսվում է Արևվելքի քարավանային ուղիների և առևտրի այդ ամենակարևոր կենտրոնը նվաճելու՝ մեծ խանի նպրոր ծրագրի մասին, այլև Ջուչյանների ու Հուլավյանների միջև Աղվանաց աշխարհի համար մղված պայքարը պարզաբանելու տեսակետից:

Երբ Ոսկե Հորդայում իշխանությունն անցավ Բերկե խանին (1256– 1265), Հուլավու խանն սկսեց գործել նրանից անկախ: Սկսած 1262 թվից, երբ Թյնամանք ծագեց Բերկեի ու Հուլավուի միջև և առաջինը իսլամ ընդունեց, դիվանագիտական հարաբերություններ սկսվեցին Եգիպտոսի սուլթանության ու Ոսկե Հորդայի միջև. փոխադարձ նամակագրություն էր տեղի ունենում և դեսպանների երթուդարձ:

Արաբ հեղինակները մանրամասնորեն լուսաբանում են Եգիպտոսի սուլթանության ու Ոսկե Հորդայի միջև XIII դ. 60-ականներին տեղի ունեցող դիվանագիտական հարաբերությունները: Բեյբարսը հմտորեն օգտագործում էր ուլուսների միջև գոյություն ունեցող երկպառակությունները, որպեսզի Հուլավուի ուշադրությունը չեղեր Սիրիան գրավելու ծրագրից. այդ նպատակով նա Բերկեին նամակներ է գրել,

[1] **В. Тизенгаузен,** *Сборник матер., т. I, с. 100.*

[2] *Տե՛ս* **В. В. Бартольд,** *История Туркестана, Ташкент, 1922, с. 35:*

[3] **В. Тизенгаузен,** *Сборник матер., т. I, с. 246.*

որոնցով վերջիններս սպրում էր ընդդեմ իլխանի, իսկ սա, ձգտելով գրավել Աղվանքը՝ իր հակառակորդին թուլացնելու համար մամլուքների սուլթանին առաջարկում էր միասնաբար գործել՝ արևմուտքից և արևելքից: Եգիպտոսի մամլուքների, սուլթանների և Ոսկե Հորդայի խանների միջև դիվանագիտական հարաբերությունները, նրանց համատեղ ռազմական գործողությունները Հուլավյանների դեմ, թուլանալով կամ ուժեղանալով, շարունակվել են տասնյակ տարիներ և բավականին նշանակություն են ունեցել Իրանի իլխանների կողմից Սիրիան նվաճելու անհաջողության մեջ[1]:

1260 թ. Սիրիայում մոնղոլական ջոկատի կրած պարտությունից հետո Հուլավու խանը չէր կարող եգիպտոսի սուլթանության դեմ նոր արշավանք ձեռնարկել Ջուչյանների հետ բախման պատճառով: Նա պետք է պահպաններ Եփրատի սահմանը, որով պայմանավորված էր նրա զորքերի թուլությունը Ոսկե Հորդայի դեմ մղվող առաջին պատերազմի ժամանակ: Ըստ Ռաշիդ ադ դինի, Հուլավուի և Բերկեի միջև առաջին պատերազմը սկսվեց 1262 թ. օգոստոսին Ոսկե Հորդայի հարձակումով Հուլավյանների պետության վրա, իսկ 1263 թ. հունվարի 13-ին Թերեքի ափին տեղի ունեցավ վճռական ճակատամարտ, որտեղ Հուլավու խանը պարտություն կրեց[2]:

Հուլավուի պարտությունը և Ջուչյանների ու Ջաղաթայների հետ նրա հաջորդների հարաբերությունների սրումը լուրջ հետևանքներ ունեցան՝ ազդելով Հուլավյանների արտաքին քաղաքականության վրա: Այդ պարտությունը նրանց ստիպեց հրաժարվել սիրիա-եփրատյան սահմանում մեծ ծավալի ակտիվ գործողություններից՝ մինչև որ հյուսիսային սահմանը ապահովված չլիներ Ջուչյանների ներխուժումից: Այժմ Ոսկե Հորդայի դեմ պայքարը Հուլավյանների ուշադրության կենտրոնում էր. նրանք ստիպված էին իրենց զորքերը ավելի մոտ պահել կովկասյան, իսկ հետո՝ արևելյան սահմաններին, որտեղից սկսել էր ներխուժմամբ սպառնալ Ջուչյանների դաշնակից Բարոկը:

Հուլավուն և նրա հաջորդները հասկանում էին, որ գլխավոր վտանգը իրենց պետությանը սպառնում է առավել ուժեղ թշնամու՝ Ոսկե Հորդայի կողմից, որը շարունակում էր իր իրավունքները ներկայացնել Աղվանքի նկատմամբ և չէր հրաժարվում ուժով այն նվաճելու մտադրությունից: Ուստի Հուլավուն, ինչպես և նրա հաջորդ Արաղան, երկար ժամանակ եգիպտոսի դեմ հարձակողական գործո-

[1] Տե՛ս **В. Тизенгаузен,** *Сборник матер., т. I, с. 55, 59, 420 и др:*

[2] Տե՛ս նույնը, *т. II, с. 74:*

դություններ չէին ձեռնարկում ու չէին կարողանում իրականացնել Սիրիայի նվաճման ծրագիրը: Դա իր հերթին վտանգավոր վիճակ էր ստեղծել Կիլիկյան Հայաստանի համար: Կախված լինելով մոնղոլներից՝ Կիլիկյան Հայաստանը պետք է կռվեր եգիպտոսի դեմ, բայց ապահովված չէր մոնղոլների կողմից ժամանակին հասցվող իրական օգնությամբ, երբ իր վրա հարձակվում էին մամլուքները:

Բեյբարսը մեծ նշանակություն էր տալիս Հուլավուի պարտությանը: Մակրիզին գրում է. «Իմանալով այդ մասին (Հուլավուի պարտության – Գ. Մ.), սուլթանը (եգիպտոսի) ուրախացավ, ժողովուրդն էլ ուրախացավ, որ Հուլավուն այժմ չի կարող արշավել դեպի Սիրիա»[1]: Բեյբարսը ոչ միայն հասկացել էր, որ Հուլավուն չի կարող խոշոր արշավանք ձեռնարկել դեպի Սիրիա, այլև ինքն էր հարմար պահի սպասում Կիլիկիա և Փոքր Ասիա ներխուժելու համար:

Արաղայի օրոք Ոսկե Հորդայի կողմից կովկասյան սահմանի վրա ծավալված թշնամական գործողությունների հետ միաժամանակ տարաձայնություններ սկսվեցին Իրանի իլխանի ու Բորակի՝ Ջաղաթայի ծոռան միջև՝ Իրանի արևելքի սահմանամերձ մարզերի պատճառով[2]:

Այսպիսով, եգիպտոսի դեմ Սիրիայի համար մղվող պայքարի ժամանակ իլխաններն զրաղված են եղել նվաճված տարածքները Ջուչյանների ու Ջաղաթայի հետ կիսելու համար մղվող պատերազմներով:

Միայն նկատի առնելով XIII դարի երկրորդ կեսին մոնղոլ ուլուսների միջև տեղի ունեցած երկպատակչական պայքարը՝ կարելի է հասկանալ, թե ինչու Հուլավյաններին չհաջողվեց հասնել Միջերկրական ծովին: Ուլուսների միջև տեղի ունեցող գժտությունները չատ ավելի վճռական նշանակություն ունեցան իլխանների՝ դեպի Սիրիա կատարած արշավանքների անհաջողությունների մեջ, քան Բեյբարսի ռազմական դիմադրության ուժը, Բեյբարսի, որն իր հետևում քաղաքականությամբ հանձինս Ջուչյանների ձեռք բերեց ուժեղ դաշնակիցներ:

Զթողնել Իրանի մոնղոլներին, որ դուրս գան Միջերկրական ծով, խանգարել, որ չտիրեն սիրիական նավահանգիստներին՝ Եվրոպայի հետ անմիջական առևտրական կապեր հաստատելու, ահա թե ո՛րն էր եգիպտոսի սուլթանության գլխավոր նպատակը: Արդյո՞ք նույն նպատակն էին հետապնդում Ոսկե Հորդայի խանները: Նրանք բարեկամական-դիվանագիտական կապեր պահպանո՞ւմ էին արդյոք

[1] **В. Тизенгаузен,** *Сборник матер., т. I, с. 420.*

[2] Տե՛ս **Рашид-ад-дин,** *Сборник летописей, М.-Л., 1946, т. III, с. 71:*

Եգիպտոսի հետ և նրա հետ դաշինքի մեջ էին միայն իլխաններից տարածքներ ձավթելո՞ւ համար, թե՞ նրանց էլ ցանկալի էր, որ Իրանի մոնղոլները չանցնեին դեպի Միջերկրական ծով և ուղղակի ցամաքային ճանապարհ չհաստատեին Չինաստանից, Միջին Ասիայից ու Հնդկաստանից դեպի Եվրոպա:

Հայտնի է, որ Չինաստանից Միջին Ասիայով առևտրական ճանապարհն անցնում էր դեպի Սիրիա և ավելի հեռու՝ դեպի Սև ծով: Ոսկե Հորդայի խանները չհագրգռված էին, որ Չինաստանից և Ասիայի մյուս երկրներից նկող ապրանքները տարվեին այս ճանապարհով: Ոսկե Հորդան Եգիպտոսին դրդելով պատերազմել Իրանի մոնղոլների դեմ՝ ոչ միայն նպատակ էր հետապնդում ռազմապես թուլացնելու Հուլավյաններին, այլև ցանկանում էր դեպի Միջերկրական ծով դուրս գալու և Սիրիայի ծովափնյա քաղաքները գրավելու նրանց ծրագրի տապալումը, որպեսզի նրանք չկարողանային անմիջական առևտրական կապ հաստատել Եվրոպայի հետ՝ ի վնաս Սև ծովում Ոսկե Հորդային պատկանող նավահանգիստների առևտրի:

Եգիպտոսի սուլթանությունը Սիրիան իր ձեռքին պահելու համար մղվող պայքարում ուներ հուսալի ու չհագրգիռ դաշնակիցներ: Այդպիսի դաշնակիցներ մոնղոլները համարյա չունեին: Այս առումով մոնղոլների համար մեծ նշանակություն էր ձեռք բերում Կիլիկյան Հայաստանը՝ իր ռազմավարական դիրքի շնորհիվ: Նախ՝ Կիլիկիան մոնղոլների տիրույթների համար մի պատնեշ, պատվար էր մամլուքների՝ դեպի Փոքր Ասիա ներխուժման փորձերի դեմ, երկրորդ՝ Սիրիայի հետ լինելով հարևան երկիր, մեծ դեր էր խաղում որպես հենակետ՝ Սիրիան նվաճելու համար մոնղոլների հարձակողական գործողությունների դեպքում: Այս բանը հաշվի էին առնում և՛ մոնղոլները, և՛ մամլուքները: Կիլիկյան Հայաստանի այդպիսի ռազմավարական դիրքը զգալիորեն կանխորոշում էր նրա մասնակցությունը Հուլավյանների պետության և Եգիպտոսի սուլթանության միջև մղվող պայքարում՝ հանուն Միջագետքի ու Սիրիայի, որոնց միջով էին անցնում Պարսկական ծոցից դեպի Միջերկրական ծով գնացող առավել հարմար և XI–XIII դարերում Արևելքը Եվրոպային միացնող առավել կարևոր քարավանային ուղիները:

Այսպիսով, ինչպես արդեն նշվել է, մոնղոլների պայքարը Սիրիայի համար տևել է տասնյակ տարիներ: Դրանում ներքաշվում էին մոնղոլներից կախում ունեցող երկրներ ու ժողովուրդներ: Սիրիայի դաշտերում ճակատամարտերին մասնակցում էին ֆրանկների, վրացիների, Մեծ Հայքի հայերի ամբողջ զոկատներ, որպես մոնղոլական բանակի օժանդակ ուժեր: Առանձնապես գործուն մասնակցություն էր ունենում Կիլիկյան Հայաստանը: Դա բացատրվում է նրանով, որ նա կախում ուներ մոնղոլներից արտաքին քաղաքականության հարցերում և պարտավոր էր օժանդակ զորք տալ: Սակայն չի կարելի նկատի չունենալ այն, որ Հեթումը, փորձելով օգտվել ստեղծված իրավիճակից, այսինքն 1259–1260 թթ. մոնղոլների կողմից մուսուլմանական իշխանապետությունների ջախջախումից Միջագետքում ու Սիրիայում, ձգտում էր ընդլայնել իր պետության տարածքը Կապադովկիայի, Միջագետքի և Սիրիայի սահմանագծում, որտեղ կային մի շարք քաղաքներ, որոնք առևտրի կենտրոններ էին և քարավանային ուղիների հանգուցային կայաններ:

Այդ ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանի համար մեծ նշանակություն ձեռք բերեց Սիրիայի հետ կատարվող առևտուրը և ապրանքների լուսմուտը սիրիական լեռնանցքներով, այն ուղիներով, որոնք գնում էին Սիրիայից դեպի Կիլիկիա և Կիլիկիայով դեպի ուրիշ երկրներ:

Դամասկոսի և Սիրիայի այլ քաղաքների ու շրջանների գրավումից հետո Հուլավու խանը, պատմիչ Հեթումի խոսքերով ասած, «Հայոց թագավորին (Հեթումին – Գ. Մ.) տվեց ռազմաավարի մեծ մասը և շատ բերդեր, որոնք գտնվում էին Հայոց թագավորության սահմանի մոտ»[1]: Նրա ձեռքն անցան անցյալում Կիլիկյան Հայաստանին պատկանած Մարաշ քաղաքը, որի ստրատեգիական և առևտրական նշանակությունը զգալի էր, ինչպես և՝ Պահհանին:

Կիլիկյան Հայաստանին սահմանակից Անտիոքի իշխանապետությունը նույնպես ճանաչել էր մոնղոլների գերիշխանությունը: Թեև Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի իշխանապետության միջև մի ժամանակ տարաձայնություններ կային և նույնիսկ թշնամական գործողություններ էին կատարվում, բայց ընդհանուր առմամբ, մանավանդ 60-ական թվականներին, Հեթումը ազգակցական և բարեկամական կապեր էր պահպանում ինչպես Սիրիայի խաչակիրների այդ պետության հետ, այնպես էլ՝ Կիպրոսի թագավորության: Նա Անտիոքին օգնության էր գնում, երբ մոնղոլների 1260 թ. պարտությունից հետո մամլուքներն սկսել էին հարձակվել այդ քաղաքի վրա: Վարձկան-խաչակիրներն էլ իրենց հերթին մասնակցում էին Տարսոնի պաշտպանությանը՝ սելջուկների շրջապատման ժամանակ[2]: Խաչակիր ֆրանկներն էլ մասնակցում էին Իկոնյան սուլթանության դեմ Հեթումի արշավանքներին:

[1] Documents arméniens, t. II, p. 171.

[2] **Մաթեոս Սպարապետի** Պատմութիւն, էջ 114:

1262–1263 թթ., Բերկեի և Հուլավուի միջև տեղի ունեցող առաջին պատերազմի ժամանակ, երբ վերջինիս զորքերն զբաղված էին ոսկեհորդյան զորքերի հարձակումների ետմղմամբ կովկասյան սահմանի վրա, սուլթան Բեյբարսը Սիրիայում ակտիվ գործողություններ անցավ խաչակիրների դեմ: Նա հարձակվեց Անտիոքի վրա, բայց նրան օգնության կան մոնղոլներն ու Հեթումը: Սակայն Ակրայի, Տյուրոսի, Սիդոնի, ինչպես և Սիրիայի ու Կիպրոսի թագավորության ծովափնյա մյուս ամրացված քաղաքների խաչակիրները և Կիլիկյան Հայաստանը միավորված չէին մամլուքների դեմ համատեղ գործելու համար: Յուրաքանչյուրը հույսը դնում էր իր բերդերի ամրության վրա: 1263 թվականին, երբ Բեյբարսը իր բանակով անցավ ամբողջ Սիրիայով՝ հարավից մինչև Անտիոք, թիկունքում կործաննելով խաչակիրների ծովափնյա ամրությունները, Հուլավուն զբաղված լինելով Բերկեի հետ պատերազմելով՝ ոչինչ չկարողացավ ձեռնարկել ընդդեմ Եգիպտոսի: Նա իր մոտ կանչեց Հեթումին և խորհուրդ տվեց խաչակիրներին աջակցելու համար ռազմական գործողություններ սկսել մամլուքների սուլթանի դեմ՝ դադարեցնելով սահմանային թշնամական բախումները Ռումի սուլթան Ռուքն էդ դինի հետ:

Հեթումն արշավանքի ելավ և հարձակվեց Այնթապի վրա. այս քաղաքը գտնվում էր Սիրիայի, Փոքր Ասիայի և Միջագետքի սահմանագլխին: Այստեղ էին խաչավորվում այն ճանապարհները, որոնք գալիս էին Եգեսիայից Հալեպ ու գնում դեպի Միջերկրական ծով և Սիրիայից՝ Մարաշ ու գնում դեպի Փոքր Ասիա: Շնորհիվ այսպիսի տեղադրության և բնական անմատչելիության ու ամրոցային չինություններ, Այնթապը կարևոր ռազմավարական և առևտրական նշանակություն ուներ: Բայց Բեյբարսն էլ լավ հետախուզություն ուներ: Նա արագ իմանում էր, թե ինչ է նախապատրաստվում իր սահմանների վրա: Նրա հրամանով Համատի և Էմեսսայի իշխանապետությունների զորքերը կռվի նյան Հեթումի դեմ: Հեթումի ջոկատը հանկարծակի հարձակման ենթարկվեց, ջախջախվեց և փախուստի մատնվեց: Ըստ երևույթին, Հեթումը բավարար չափով ուժեր չուներ: Նա դիմեց մոնղոլների օգնությանը, բայց նրանք էլ նկատի ունենալով իրենց պարտությունը Ջուչյանների դեմ և սրանց կողմից նոր հարձակումների հնարավորությունը՝ արևմտյան սահմանի մոտ մեծ զորք չէին պահում: Հեթումն աննչան օգնական ուժ ստացավ՝ մոնղոլների 700-հոգիանոց մի ջոկատ: Իր զորքը համալրելով նոր զորականներով՝ այդ մոնղոլների և Անտիոքի 150 ասպետների օգնությամբ Հեթումը 1263 թ. նորից ներխուժեց Սիրիա: Դա խաչակիրների տիրույթների վրա Բեյբարսի հարձակման պատասխանը եղավ: Բայց այդ ուժերն անբավարար էին լուրջ արշավանքի և մամլուքներին զգալի հարված հասցնելու համար: Դաշնակից զորքերը տեղավորված էին Հարիմի հարթավայրում և ստիպված եղան նահանջել՝ կորուստներ տալով: Այսպիսով, Եգիպտոսի դեմ Հեթումի և խաչակիրների ծավալած ռազմական գործողություններից Հուլավու խանը ցանկալի արդյունք չըստացավ:

1264 թ. կովկասյան սահմաններում որոշ անդորր իջավ: Ոսկե Հորդան, ըստ երևույթին, գլխավորապես չնորհիվ Խուրիայի կողմից Հուլավու խանին ցույց տրված աջակցության, վճռական գործողություններ չէր ձեռնարկում: 1264 թ. վերջին մոնղոլական զորքը Հուլավուի հրամանով պաշարեց ռազմավարական առումով մի չատ կարևոր ամրոց՝ Սիրիայի բանալի էլ-Բիրեն (Բիր): Այս քաղաքը, որ Եփրատի ափին է, Եդեսիայից 80 կմ և Հալեպից 135 կմ հեռու, վերին Միջագետքից հյուսիսային Սիրիա ու Կիլիկիա տանող ճանապարհին, լավ ամրացված էր: Բիրը Եգիպտոսի սուլթանի անունից կառավարում էր Էմիր Ջեմել ուդ դինը: Երբ Բեյբարսն իմացավ, որ մոնղոլները Բիրի պարիսպների տակ են, չտապ ուղարկեց 4 հազարհոգիանոց մի հեծյալ ջոկատ, հետևից էլ ևս մի ջոկատ, մոտավորապես նույն քանակությամբ: Հունվարի վերջին նա արդեն պատրաստ էր դուրս գալու կռվի, երբ լուր տվին, որ մոնղոլներն իմանալով մամլուքների զգալի ուժի մոտենալու մասին՝ ոչնչացրել են իրենց պաշարողական մեքենաները և չտապ ետ քաշվել Բիրից: Մեծ նշանակություն տալով այդ կարևոր ստրատեգիական կետը ապագայում իր ձեռքում պահելուն՝ Բեյբարսը հրամայեց էլ ավելի ամրացնել այն, ապահովել պարենամթերքով և հուսալի ռազմական պաշտպանությամբ[1]:

Հեթումի ռազմական գործողությունները հյուսիսային Սիրիայում և մոնղոլների կողմից Բիրի պաշարումը ցույց են տալիս, որ Հուլավուն չէր համարձակվում ինքն անձամբ մեծ մասշտաբի արշավանք կատարել, քանի որ հիմնական ուժերը և ռեզերվները ստիպված էր պահել կովկասյան սահմանի վրա: Հնարավոր է, որ այդպիսի արշավանքից նրան ետ էին պահում նաև Ֆարսիստանում տեղի ունեցող հուզումները և իր ընդարձակ պետության վարչական կառուցվածքով զբաղվելու անհրաժեշտությունը:

Բիրի պարիսպների մոտից մոնղոլների ետ քաշվելուց մի քանի օր անց Հուլավու խանը մեռավ (7/II 1265): Բիրի անհաջող պաշարումը, Հուլավու խանի որդիների միջև իշխանության համար մղված ոչ տե-

[1] Տե՛ս D' Ohsson, Histoire des Mongols, t. III, p. 406:

վական պայքարը և 1265 թ. ամռանը Ջուչյանների նոր ներխուժումը Անդրկովկաս բացասական հետևանքներ ունեցան Սիրիայի խաչակիրների ու Կիլիկյան Հայաստանի համար: Բեյբարսը հմտորեն օգտվեց ստեղծված բարենպաստ իրադրությունից Կիլիկյան Հայաստանի վրա հարձակվելու (1266), իսկ այնուհետև Անտիոքի իշխանապետությունը գրավելու (1268) համար: Ոսկե Հորդայի դեմ պատերազմելով դրգռված Իրանի մոնղոլները չէին կարող խանգարել նրան այդ բանում: Բեյբարսը լիովին վստահ էր, որ մոնղոլները Եփրատի կողմից չեն կարողանա ակտիվ ռազմական գործողություններ ձեռնարկել:

Անտարակույս, փոխադարձ կապ է եղել վերոհիշյալ իրադարձությունների միջև, որոնք միաժամանակ տեղի են ունեցել Կովկասյան լեռնաշղթայի մոտ (Հուլավյանների ու Ջուչյանների սահմանի վրա), Եփրատ գետի ափին, Սիրիայում ու Կիլիկիայի սահմանի մոտ: Հունվարին մոնղոլները թողնում Բիրի պաշարումը, փետրվարի սկզբին մեռավ Հուլավուն: Այս իրադարձություններն արձակել են Բեյբարսի ձեռքերը խաչակիրների դեմ վճռական, ակտիվ գործողությունների դիմելու համար: 1265 թ. փետրվարին նա հանկարծակի չրջապատեց ու գրավեց Կեսարիան: 1265–1266 թթ., հենց այն ժամանակ, երբ ռազմական բախումներ էին տեղի ունենում Ջուչյանների ու Հուլավյանների միջև, Բեյբարսը գրավեց խաչակիրների ամրացված քաղաքները՝ Կեսարիան, Արզուֆը, Հայֆան և այլն:

Հուլավու խանի մահից հետո Հեթումը չահագրգռված լինելով, որ Եգիպտոսի սուլթանության մամլուքները պարտություն կրեն Սիրիայում, չարունակում էր ռազմական համագործակցությունը Հուլավու խանի հաջորդի՝ Աբաղայի (1265–1282) հետ, որին չէր լքում Սիրիան նվաճելու միտքը, բայց նա Ոսկե Հորդայի ու Ջաղաթայի զորքերի հարձակումները ետ մղելով զբաղված լինելու պատճառով չէր կարողանում խոշոր ռազմական ուժեր կենտրոնացնել Արևմուտքում՝ մամլուքներին Սիրիայից դուրս մղելու և Հեթումին ռազմական օգնություն ցույց տալու համար:

Բեյբարսը գժտություն ու պայքար բորբոքելով ուլուսների միջև և դրանից հմտորեն օգտվելով՝ 1266 թ. որոշեց հարձակվել Կիլիկյան Հայաստանի վրա: Բեյբարսի զորքերի հարձակման պատճառի մասին Վարդան Մեծը գրում է. «Ի նոյն թուին մերձ յաչնան եղանակն բացաւ մեզ ամն դառն քացախոյն և մրուր բարկութեան աստուծոյ Հայկազարմ ազգիս, քանզի սուլտանն Մսրա՝ Փնղխտար անուն, խնդրէր զերկրդն, զոր Թաթարին ուժովն առեալ էր Հայոց Թագաւորն Հեթում: Եւ ի չտալն աւելի վասն Թաթարին բարկանայր յոյժ և զօրս

գումարէր բազում յոյժ, և առաքէ ի ձեռն զօրագլխի իւրում Մալմօի անուն, յերկիրն Կիլիկեցւոց»[1]: Այս տողերում արտահայտված է Կիլիկյան Հայաստանի ողբերգությունը՝ պայմանավորված մոնղոլների արտաքին քաղաքականության հետ նրա կախվածությամբ և երկու ուժեղ նվաճողների միջև այդ երկրի մերձակայքի դիրքով: Տվյալ դեպքում Հեթումն այլ ընտրություն անել չէր կարող, քանզի Կիլիկյան Հայաստանը մոնղոլներին էր ենթարկվում: Ճիշտ է, նա ինքն էլ չահագրգռված էր իր ձեռքին պահել Բեյբարսի պահանջած տարածքներն իրենց բերդերով ու քաղաքներով, որոնք մեծ նշանակություն ունեին առևտրական ու ռազմավարական առումներով, բայց, այնուամենայնիվ, Հեթումը, հավանաբար, կդիջեր դրանք, որպեսզի խաղաղություն պահպաներ մամլուքների հետ, եթե երկյուղ չլիներ, որ մոնղոլները դա դավաճանություն կհամարեին:

Աբուլֆարաջի «Սիրիական ժամանակագրություն»-ից հայտնի է, որ Եգիպտոսի սուլթանության պահանջները չատ դաժան են եղել: «1266 թվին,– ասում է Աբուլ Ֆառաջը,– Բունդոքդարը հայոց թագավորից պահանջեց հպատակություն, դրամ, դեպի Սիրիայով անցնող ճանապարհների բացում և հացի մատակարարում: Թագավորը թաթարների հետ իր ունեցած բարեկամությանը հավատարիմ, չէր կարող բարենպաստ պատասխան տալ»[2]: Այս հղինակը նույնպես նչում է, որ Հեթումը վախենում էր խախտել հավատարմությունը մոնղոլ խանին:

Բեյբարսից կախում ունեցող էմիրներն ու զորապետները՝ Մելիք Մանսուրը, էմիր Քելավունը և Ավզ էդ դին Իգանը, Սեմելմոտ մականունով, նրա հրամանով եկան Կիլիկյան Հայաստանի դեմ և Մաոիի կապանում՝ Դարբսակի մոտ (Անտիոքից հյուսիս-արևմուտք) ջախջախեցին հայոց զորքը, որը գլխավորում էին Հեթումի որդիներ Լևոնն ու Թորոսը: Սրանցից առաջինը գերի ընկավ, երկրորդն սպանվեց[3]:

Հայերը ջախջախվեցին Սիրիայի արաբների ու Եգիպտոսի սուլթանության միացյալ զորքերի գերակչիռ ուժերի կողմից: Հեթումն այդ ժամանակ բացակայում էր: Կանխազգալով Եգիպտոսի սուլթանի մոտալուտ հարձակումը՝ նա մեկնել էր մոնղոլների մոտ օգնություն խնդրելու: Բայց հենց այդ ժամանակ Աբաղա իլխանի զորքերը կենտրոնացված էին Ոսկե Հորդայի սահմանի վրա, քանի որ Ջուչյանների

[1] **Վարդան Բարձրբերդցւոյ** Պատմութիւն տիեզերական, էջ 162:

[2] Abulfaradj sive Bar Hebrei, Chronicon Syriacum, Lipsiae, 1789, p. 568.

[3] Տե՛ս **Makrizi,** Histoire des sultans Mamelouks d' Egypte, t. II, deuxiéme partie, p. 33:

ու Հուլավյանների հարաբերությունները սրված էին, ինչը մատնանշում են մուսուլմանական ու հայկական աղբյուրները, և Հեթումը մոնղոլներից սպասելիք օգնությունը չի ստացել:

Կիլիկիայի դեմ Բեյբարսի հարձակման ժամանակ Կովկասյան սահմանի վրա Բերկեի թշնամական գործողությունների մասին Վարդան Մեծը գրում է. «Իսկ ի մտանել թուին ՌՃԺՆ հարիւր հնգետասան (1265–1266) կոմսնակալն Հիւսիսի՝ կոչեցեալն Բարքայ, որ ունէր զտեղի Բաթուին և զՍարդախին և հաւանեալ էր օրինացն տաճկաց, լուեալ զմահուանէ մեծի Հուլաւուին՝ գայ բազմութեամբ առ Կուր գետով և ցուցանէ, դինքն յայսմ կողմանէ կացեալ զօրացն Ապարային և եղբօր իւրոյ Խամուտին՝ իբր թէ կենդանի է յետ մահու հօր իւրոյ»[1]: Հավանաբար, Բերկեի և Բեյբարսի գործողությունները նախապես համաձայնեցված են եղել, քանի որ հայտնի է, որ երկու կողմերը հաճախ միմյանց մոտ դեսպաններ են հղելիս եղել՝ առաջարկելով համատեղ ու միաժամանակյա գործողություններ կատարել:

Արաղան հետևում էր պաշտպանական տակտիկայի: Վարդանի խոսքերով ասած՝ «յորմէ զարհուրեալ (Բերկեի հրոսակից – Գ. Մ.) յայսմ կողմանէ կացելոցն՝ ցանկէն (Հուլավյանները – Գ. Մ.) զերկայնութիւն գետոյն աստի, զոր չիբարն կոչէին, և զգուշացան ամենայն պատրաստութեամբ զաւուրս ձմերայնոյն»[2]: Այսպիսի պայմաններում Արաղան, զբաղված լինելով հյուսիսային սահմանի պաշտպանությամբ, որի մոտ կենտրոնացած էր Բերկեի զորքը, չէր կարող օգնության գալ Հեթումին:

Մաուի մոտ հայոց զորքի պարտությանը հաջորդեց մամլուքների հոծ հրոսակների ներխուժումը Կիլիկիա, նրանց կողմից երկրի ավերումը, բնակչության կոտորածն ու գերեվարումը, որը Վարդանի մոտ նկարագրված է հետևյալ խոսքերով. «որ (Սեմկմոտը – Գ. Մ.) և հանպատրաստից մտեալ յաչխարհն՝ առնու զՍիս մայրաքաղաքաց զարբայանիստն, այրէ զնա եկեղեցեօքն որ ի նմա, և գտանէ զտունն գետնափոր զանձուցն և առնու յոյժ բազում, զոր ի միում ամանի լինել ասեն վաթսուն հազար կարմիր: Եւ ապա լսէ համբաւ յերկրէն (Մբսրից) երկիւղի, և դառնայ աւարաւ և գերութեամբ քառասուն հազարաւ»[3]: Վարդանի նկարագրության հետ համընկնում է Մակրիզիի հաղորդումը, որի համաձայն մամլուքները թափանցել են Սիս քաղաքը, կողոպտել և սաստիկ ավերել են: Նրանք մի քանի օր մնացել են այդ չրջանում, երկիրն ամենուրեք կողոպտել, բնակիչներին կոտորել են և մեծ թվով մարդկանց գերի քշել[1]:

Սրանից հետո Իգան էմիրը, Մակրիզիի վկայությամբ, ճանապարհ է ընկել դեպի Ռում, իսկ Քելավուն էմիրը՝ դեպի Մսիս, Ադանա, Այաս ու Տարսոն: Երկուսն էլ բնակչության կոտորած են արել, գերի տարել, կործանել են ամրությունները և ամեն ինչ հրի ճարակ դարձրել: Նահանջելիս նրանք իրենց հետ վիթխարի ավար են տարել: Մի ցուցր տաս դիրհեմով էին ծախում, բայց գնորդ չէին գտնում: Կիլիկիայի սարսափելի ամայացման մասին, վիթխարի ռազմավարի ու գերիների մասին խոսում են նաև մյուս աղբյուրները:

Ինչպես հայտնի է, միջին դարերում, հատկապես Արևելքում, պատերազմը մղվում էր ոչ միայն տարածքներ նվաճելու համար կամ տերազմը մղվում էր ոչ միայն տարածքներ նվաճելու համար կամ առևտրական չահերից ելնելով, այլև հանուն քաղաքների ու գյուղերի կողոպտման և բնակչության գերեվարման՝ ստրկության վաճառելու համար: Այս նպատակն էին հետապնդում նաև Եգիպտոսի մամլուք սուլթանները, որտեղ ստրկությունը բավականին զարգացած է եղել կիլիկյան Հայաստանի դեմ մղվող պատերազմների ժամանակ, որը, ինչպես վերոհիշյալ, այնպես էլ հայկական ու արաբական այլ հեղինակների վկայությամբ, սաստիկ կողոպտվել է և ավերվել: Շատ բնակիչներ զոհվել են մամլուքների յաթաղանների հարվածներից, հազարավոր մարդկանց գերի են քշել ու ստրուկներ դարձրել:

Մամլուքների ներխուժման նախօրյակին կիլիկյան Հայաստանը մեծ հաջողությունների էր հասել տնտեսության մեջ: Արտաքին, տարանցիկ առևտուրը և արհեստագործության աչքառյժ զարգացումը նպաստում էին քաղաքների հարստության աճմանը և գյուղատնտեսության վերելքին: Կես դարի ընթացքում երկիրը համարյա չէր ենթարկվել ներխուժման ու ավերածության: Խուսափել էր մոնղոլների ներխուժումներից, որոնք կործանել ու կողոպտել էին Առաջավոր Ասիայի մյուս երկրները: Կիլիկյան Հայաստանի բնակիչների թիվն արագորեն աճել էր նաև բուն հայկական մարզերից փախածների հաշվին: Այս մասին Կիրակոսը գրում է. «Լցաւ երկիրն բազմութեամբ մարդկան անարուեստից և արուեստաւորաց, որք ժողովեցան յամենայն կողմանց փախուցեալք յաւերմանէ թաթարին, որք եկեալ յարեւելից հիւսիսոյ տապալեցին զամենայն տիեզերս»[2]:

[1] **Վարդան Բարձրբերդցւոյ** Պատմութիւն տիեզերական, էջ 162:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[1] Տե՛ս **Makrizi,** Histoire des sultans Mamelouks d' Egypte, P., 1837, t. I, deuxiéme partie, p. 34:

[2] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն, էջ 179:

Եգիպտական զորքերի թիվը Մառիի ճակատամարտում, հավանաբար, հասնում էր 25–30 հազարի: Ինչպես երևում է, հայերը չատ ավելի քիչ զինվոր են ունեցել, և դա է եղել նրանց պարտության գլխավոր պատճառը:

Իհարկե, հաղթանակի պայմանը ոչ միայն զորքի քանակն է, այլև որակը, նրա կազմակերպվածությունն ու տեխնիկան, երկրի էկոնոմիկան ու հասարակական հարաբերությունները և այլն: Մամլուքները պրոֆեսիոնալ զորականներ էին, որոնց համար ռոճիկից բացի, ռազմավարն էլ էր խթան, վատ չէին կռվում: Իսկ հայոց զորքը, ինչպես երևում է, արդեն մասամբ կորցրել էր այն մարտունակությունն ու խիզախությունը, որ նա դրսևորում էր XII դարում՝ անկախության համար մղվող պայքարի ժամանակ, քանզի գյուղացիությունը ճորտացվել էր, իսկ ավատատերերը վատ էին ննթարկվում թագավորական իշխանությանը:

Մաղաքիան գրում է, որ Հեթումը հրաժարվեց բավարարել Բեյբարսի պահանջը՝ հույսը դնելով «իր իշխանների միաբանության վրա»[1], բայց ոչ բոլոր իշխաններն էին, որ կատարեցին իրենց վասալական պարտքը: Նրանցից միայն 12-ն են մասնակցել, մինչդեռ խոշոր տիրակալ իշխանները մոտ 50-ն էին: Կան տվյալներ, որոնք թույլ են տալիս ննթադրելու, որ իշխաններից չատերը չեն ներկայացել թագավորի կոչով, իսկ նրանք, ովքեր ներկայացել են, չեն մարտնչել աննկուն ու արիաբար:

Մաղաքիայի ասելով՝ «Թագաւորն Հայոց իբրև գիտաց զգալ Թուրքին ի վերայ երկրի իւրոյ, յայնժամ ժողովեաց զօրս իւր և նտ ի ձեռս իւր Թագաժառանգ որդոց իւրոց պարոն Լեւոնի և Թորոսին. և ինքն գնաց սակաւ մի զօրօք առ տաթարն, որ կայր իջևալ ի մէջ Աբլստանին և կոկոսնոց. և անդ յամևալ աւուրս ինչ՝ ոչ գիտելով զերկպառակութիւն զորաց իւրոց. և մինչ հոգաց առ գլխաւորս տաթարին գալ և օգնել զօրաց նորա և ինքն երեկ Բ աւուրբ յառաջ, ապա լսեաց զգալն Թուրքին և զբեկումն զօրացն երկմտից, որ նտուն զԹագաժառանգ որդիան իւր ի ձեռս անօրէնն գայլոցն, և ինքեանք փախեան յամուրս իւրեանց. զի զգնղեցիկ որդի Թագաւորին զպարոն Թորոս պատերազմին սրախողխող արարին յիւրում երիւարսն, և զպարոն Լեւոն ըմբռնեալ բազում զօրօք Թուրքացն և տարան ծառայի Մսըր»[2]:

Նկարագրելով մամլուքների ներխուժումը Կիլիկիա, նրանց կողմից երկրի ավերումը և մայրաքաղաք Սիսի կողոպտումը, Մաղաքիան

[1] **Մաղաքիա,** Պատմութիւն վասն ազգին նետողաց, էջ 39:

[2] Նույն տեղում, էջ 40:

ասում է, որ «բարեպաշտ Թագաւորն Հեթում առ ոչինչ համարել զայս ամենայն անցս աղետից առ ժամանակ մի վասն ննդգաբարու և երկմիտ իշխանացն, չահելով զբարս նոցա ուրախութեամբ սրտի»[1]:

Մաղաքիայի հետագա չարաղրանքից կարելի է եզրակացնել, որ Մառիի ճակատամարտի ու մամլուքների՝ Կիլիկիա ներխուժելու ժամանակ չատ իշխաններ ռազմական օգնություն ցույց չեն տվել Թագավորին, որ Թագավորի ու վասալների միջև գժտություն ու տարաձայնություններ են եղել, որ պատերազմի ճգնաժամային պահին միակամություն չի եղել Կիլիկյան Հայաստանի իշխանների միջև[2]:

Կիլիկիայում ավատական հարաբերությունների հետագա զարգացումը ոչ միայն նպաստել է Թագավորի նկատմամբ ավատատերերի անկախության ուժեղացմանը, այլև հանգեցրել է ավատական չահագործման ուժեղացմանը, ավատատերերի ու գյուղացիների միջև սոցիալական հարաբերությունների սրմանը: Դևպքերին ժամանակակից Վահրամ Բարունու չափածո «Պատմությունը» հետաքրքիր բնութագիր է, պարունակում 1266 թ. Մառիի մոտ հայոց զորքերի պարտության նախօրյակին Կիլիկյան Հայաստանի ավատական հասարակության բարձր խավերի բարոյական վիճակի մասին: Ահա մի հատված նրա «Պատմությունից»: «Ապրելով հանգստյան ու փարթամության մեջ և լինելով գործերով հաջողակ, հաճույքներ վայելելուց լկտիացած ու հղփացած... նրանք իրենց սրտերից դուրս էին քշել ուրախությունը և այն փոխարինել խայտառակությամբ: Սովածներին հաց չէին տալիս, մերկերին չէին հագցնում, անտուններին ծածկի տակ չէին առնում... և ամենքը գերադասում էին որկորն ու հեչտանքը»[3]: Այսպիսով, Վահրամը նչում է աշխատավորության դրության վատթարացումը, բարձր խավի հարստությունն ու հղփացածությունը, ցածր խավերի աղքատությունն ու կեղեքումը: Այդպիսի պայմաններում անխուսափելի էր դասակարգային հակասությունների սրումը և միասնականության բացակայումը արտաքին թշնամու դեմ մղվող պայքարում: Կիլիկյան հասարակության վիճակը Վահրամը համեմատում է Սոդոմի հետ, որի բնակիչները, նրա խոսքերով ասած, «խորասուզվել էին արատների անդնդում, խժռում էին ու լակում»[4]:

[1] **Մաղաքիա,** Պատմութիւն վասն ազգին նետողաց, էջ 41:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 40:

[3] Documents arméniens, t. I. p. 520–522.

[4] Տե՛ս նույն տեղում:

Ազնվականության մեջ ռազմական արիության անկումը հաստատվում է նաև Մարկո Պոլոյի վկայությամբ. «Հենում այստեղի ազնվականները քաջ են եղել ու ռազմաչուն: Հիմա սրանք թույլ են ու ողորմելի և միայն խմում-հարբում են»[1]: Հնարավոր է, որ այս տողերում մի քիչ չափազանցություն լինի, խիստ լինի Պոլոյի դատավճիռը, որ խոտացված լիներն Վահրամ Բաբունու գույները: Բայց ընդհանուր առմամբ Վահրամի, Մարկո Պոլոյի և մյուս աղբյուրների նկարագրություններում արտահայտվել են այն հասարակական փոփոխությունները, որոնք բացասաբար են ազդել երկրի պաշտպանունակության վրա: Սմբատ պատմիչը նույնպես վկայում է, որ կիլիկեցի հայերի մեջ թուլացել է ռազմական ոգին, որ նրանք երաժշտություն են սիրում և գուսաններ:

Քաղաքների, արհեստային արդյունաբերության ու ներքին առևտրի զարգացումը, արտաքին առևտրի ընդլայնումը ունևոր քաղաքացիների և ազնվականների հարստության աճ էին բերում, պերճանքի ձգտում, չահի ծարավ: Այս պահանջները բավարարելու համար ազնվականներն ուժեղացրել էին աշխատավորության չահագործումը: Սրանց դրության վատթարացումն իր արտացոլումն է գտել խրատական-մերկացնող գեղարվեստական գրականության մեջ՝ Վարդան Այգեկցու և ուրիշների ստեղծագործություններում, ինչպես այդ մասին արդեն խոսվել է նախորդ գլխում:

Ազնվականները չահի այլ աղբյուրներ էլ ունեին: Մոնղոլական արշավանքների դարաշրջանում՝ XIII դարի 40–50-ական թվականներին, ուժեղացել էին հայ ազնվականների և ֆրանկ ասպետների ասպատակությունները դեպի Իկոնիա ու Սիրիա սովորաբար ի պատասխան սելջուկների ու մամլուքների ներխուժումների[2]: Երբեմն նախաձեռնությունը առաջիններինն էր լինում: Դրա համար բարենպաստ պայմաններ կային. սելջուկներն ու մամլուքները թուլացել էին մոնղոլների հարվածներից: Դրանից օգտվելով՝ Կիլիկյան Հայաստանը այդ ժամանակ տիրեց մի չարք վիճելի շրջանների, որոնք սահմանակից էին Իկոնիայի սուլթանությանը և Սիրիայի արաբական

[1] **Марко Поло,** Путешествие, 1940, с. 17.

[2] Սիրիայի վրա կատարած այդ ասպատակությունների արձագանքները կան XIII դարի հայերեն մի քանի երգերում, որոնք հասել են մինչև մեր ժամանակները: Այս երգերը երգում էին երգիչ-գուսանները ազնվականների ու վաճառականների խնջույքներին: Տե՛ս **Մ. Աբեղյան,** Հին գուսանական ժողովրդական երգեր, Ե., 1931, էջ 166:

էմիրություններին: Կիլիկիայի իշխանները արշավանքներ էին կազմակերպում դեպի հարևան երկրներ:

Դեպի Իկոնիա կատարած այդպիսի մի արշավանքի արդյունքի մասին ասվում է, որ դրա մասնակիցները «անդ չահեցան արջառս և ոչխարս, ձիս և ջորիս, ծառայս և ոսկիս. և բազում աւարաւ դարձան յաշխարհն իւր. և ուրախացան ոչ սակաւ աւուրս»[1]: Այդ արշավանքներին մասնակցում էին նաև ֆրանկ ասպետները: Հայոց թագավորի դևսպանները, որոնք 1248 թ. գնացել էին Կիպրոս՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ի մոտ, փայլուն տեսքով էին պատկերում իրենց հայրենակիցների հաղթական պայքարը Իկոնիայի սելջուկների դեմ և այդ պատմություններով չատ ուխտագնացների հրապուրում ծառայության մտնելու Հեթում թագավորի մոտ[2]:

Ջորքի ավատական կազմակերպման հետևանքով ժողովրդական դանգվածները, հավանաբար, ակտիվ մասնակցություն չէին ունենում մամլուքների դեմ մղվող պատերազմներում: Ավատատերերի դասակարգն էլ համախմբված չէր: Իհարկե, եղել են իշխաններ, որոնք, վասալական պարտքին հավատարիմ՝ գիտակցել են եգիպտոսի սուլթանության դեմ պայքարի նշանակությունը երկրի պաշտպանության գործում: Եվ Մաոիի 1266 թ. ճակատամարտի այդ կարևորության գիտակցությունն իր արտացոլումն է գտել տարեգիր Մաղաքիայի կողմից Հեթում թագավորի բերանը դրած այն խոսքերում, որոնցով նա Մաոիի ճակատամարտը համեմատում է Ավարայրի ճակատամարտի հետ[3]: Բայց Ավարայրի դաշտի ճակատամարտում (451) հայ ժողովուրդը Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ սասանյան Իրանի բռնապետության դեմ մղված ազատագրական պայքարում դրսևորեց արիության և անձնուրացության հրաշքներ: Ավարայրի զորականների հերոսությունը հետագա ժամանակներում էլ հայ ժողովրդին ոգևնչում էր անկախության համար նրա մղած պայքարում: Իսկ Մաոիի ճակատամարտը չատ բանով տարբերվում էր Ավարայրի ճակատամարտից: Մաոիի ճակատամարտին մասնակցում էին գլխավորապես ավատական տարրերը, այլ ոչ թե ժողովրդական աշխարհազորը: Այստեղ հայերը չէին դրսևորում ոգևչընչվածություն և անհաչտ պայքարի ոգի, ինչպես Ավարայրի ճակատամարտի դաշտում էր եղել:

[1] **Ալիշան,** Սիսուան, էջ 174:

[2] Տե՛ս **Ե. Կուտլեր,** История крестовых походов, с. 383:

[3] Տե՛ս **Մաղաքիա,** Պատմութիւն վասն ազգին Նետոդաց, էջ 40:

Կիլիկյան Հայաստանը տուժում էր այն պատերազմներից, որոնք մղում էին մոնղոլներն ու մամլուքները Սիրիայի պատճառով: Իրանի իլխանները Կիլիկյան Հայաստանին ներքաշել էին այդ պայքարի մեջ, բայց ճգնաժամային պահին օգնություն ցույց չտվեցին նրան: Հենց Մառիի ճակատամարտի ժամանակ և դրանից հետո էլ Արաղան կըռվում էր Ոսկե Հորդայի դեմ և ապա ուղուս Ջաղաթայ-Բորակ խանի դեմ, ինչը հայտնի է արաբական ու հայկական աղբյուրներից:

Նկարագրելով մամլուքների ներխուժումը Կիլիկիա 1266 թ.՝ Հեթում պատմիչը գրում է. «Դրանից հետո մնծացավ թշնամիների (Եգիպտոսի – Գ. Մ.) հզորությունը և թուլացավ հայոց թագավորի ուժը: Թեև հայոց թագավորը միշտ ձգտում էր կործանել սարակինոսների հզորությունը և շատ անգամ էր ջանքեր թափում, որպեսզի համոզեր Արաղա խանին՝ բաժանել ու թուլացնել նրանց, բայց շատ հաճախ սա հրաժարվում էր՝ հարևանների հետ պատերազմի մեջ լինելու պատճառով»[1]:

Հեթումը, վերադառնալով Աբաղա խանի մոտ կատարած ճանապարհորդությունից, որը նրան ոչնչով չօգնեց, երկիրը գտավ կողոպտված ու ավերված: Նա օգնության համար դիմեց Կղեմես պապին, որը Մառիի ճակատամարտի նախօրյակին նրան դրդում էր օգնել Սիրիայի խաչակիրներին: Պապը Հեթումին իր կարեկցանքն արտահայտեց Մառիի ճակատամարտի պարտության և իր ցավակցությունը նրա որդիներ Թորոսի մահվան և Լևոնի գերության առթիվ, հղեց իր մխիթարանքը՝ խոստանալով օգնել նրան: Այդ խոստումը հայ ազնվականությանը հույս էր ներշնչում, թե եվրոպան կօգնի Կիլիկյան Հայաստանին: Պապը նամակ գրեց Միքայել Պալեոլոգին՝ նրան հորդորելով խաչակրաց արշավանք ձեռնարկել և օգնել Կիլիկիայի հայերին, բայց կայսրը դրանով զբաղվել չէր կարող[2]:

Օգտվելով այն բանից, որ Կիլիկյան Հայաստանը թուլացել էր 1266 թվի պարտությունից հետո, իսկ Աբաղա խանը զբաղված էր իր հյուսիսային և արևելյան սահմանների պաշտպանությամբ՝ Մենգու-Թիմուրի և Բորակի թշնամական դիրքն ի նկատի ունենալով, Բեյբարսի զորքը 1268 թ. գրավեց Անտիոքը: Դրանից հետո Հեթումն ստիպված եղավ խաղաղության դաշինք կնքել Եգիպտոսի սուլթանի հետ: Այս առթիվ Հեթում պատմիչը գրում է. «Թագավորը տեսնելով, որ չի կարող հույս դնել թաթարների օգնության վրա, դեսպաններ ուղարկեց Եգիպտոսի սուլթանի մոտ և նրա հետ պայմանագիր կնքեց»: Ուշագրավ է, որ այն ստորագրվել է 1268 թ. մամլուքների կողմից հենց նոր գրավված Անտիոքում: Կիլիկյան Հայաստանը Եգիպտոսի սուլթանությանն է զիջել Բևհեսնի, Դարբսակ, Մերզեբան և այլ բաղաքներ: Բեյբարսի հովանավորյալ Սոնկորի հետ, որը գերի էր մոնղոլների մոտ, փոխանակելով՝ ազատվել է Հեթումի որդի Լևոնը: Քիչ անց Հեթումը մեկնեց Աբաղա խանի մոտ, որն այն ժամանակ Բաղդադում էր, և պայմանավորվեց իր գահը Լևոն որդուն փոխանցելու մասին: Սիս վերադառնալուց հետո նա իր իշխաններին կանչեց Տարսոն և գահը հանձնեց որդուն: Այնուհետև նա քաչվեց վանք, որտեղ և մահացավ 1270 թ.:

Հենց նույն՝ 1270 թ. Աբաղա խանը Բեյբարսին նամակ գրեց՝ սպառնալով կռվի ելնել նրա դեմ: Բայց Աբաղան չկարողացավ իրագործել իր սպառնալիքը: 1270 թ. ամռանը Բորակը արևելքից ներխուժեց Խորասանի սահմանները, և Աբաղա խանը ստիպված եղավ ետ մղել նրա հարձակումը:

Եգիպտոսի սուլթանության համար սպառնալիք կար ոչ միայն արևելքից՝ մոնղոլների կողմից, այլև՝ արևմուտքից՝ Ֆրանսիայի թագավորի կողմից: Հայտնի է, որ 1270 թ. Լյուդովիկոս IX-ը ձեռնարկեց Ութերորդ և վերջին խաչակրաց արշավանքը, որն ըստ նախնական պլանի, ուղղված էր Եգիպտոսի դեմ, բայց ռազմական գործողությունները ծավալվեցին Թունիսում: Բեյբարսը գիտակցում էր սպառնալիքի ռեալությունը ֆրանսիացիների հաղթանակի դեպքում: Դա երևում է արաբ պատմիչ Մակրիզիի հետևյալ հաղորդումից. «Նա (Բեյբարսը – Գ. Մ.) իմացավ, որ Ֆրանսիայի թագավորը բազմաթիվ ֆրանսիացի արքայազուններով ուղևորվել է Թունիս և հարձակվել այդ քաղաքի բնակիչների վրա: Սուլթան Բեյբարսը Թունիսի տիրակալին նամակ գրեց՝ տեղեկացնելով, որ իր զորքը արշավի է դուրս ելել, որպեսզի նրան օգնի ընդդեմ ֆրանկների: Միևնույն ժամանակ նա պատվիրեց արաբներ Բարկիին և Մահրիբին օգնության չտապել Թունիսին: Նա իրեն պարտավոր էր համարում իր զորքերն ուղարկել, բայց լուր ստացավ, որ Ֆրանսիայի թագավորը մեռել է, որ նրա

[1] Rec. des hist. des crois., Documents arméniens, p. 177.

[2] Պապության այս դիվանագիտական քայլը ոեալ չի եղել, քանի որ Բյուզանդիան այդ ժամանակ հնարավորություն չուներ բանակ ուղարկել եգիպտոսի դեմ և չահագրգռված չէր դրանում: Նրան սպառնում էր Կառլոս Անժուացին, որը չուտով իր եղբայր Լյուդովիկոս IX-ի հետ պատերազմ սկսեց Հյուսիսային Աֆրիկայի ու եգիպտոսի արաբների դեմ: Արաբների դեմ նրանց հաղթանակը կուժեղացներ Անժուական դինաստիայի դիրքը Իտալիայում ու Սիցիլիայում, Բյուզանդիայի վրա նրա հարձակման վտանգը: Ուստի և բացառվում էր եգիպտոսի սուլթանության դեմ խաչակրաց արշավանքին Միքայել Պալեոլոգի մասնակցության որևէ հնարավորություն:

որդին և նրա բանակի մի մասը ջախջախված են և որ արաբների օժանդակ ջոկատները ժամանել են Թունիս»[1]:

Խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանն ավարտվեց անհաջող Ութերորդ արշավանքով (1270): Եգիպտոսի սուլթանությունն ազատվեց Եվրոպայի կողմից սպառնացող վտանգից, ինչը ուժեղացրեց նրա դիրքը մոնղոլների և Կիլիկյան Հայաստանի նկատմամբ:

Անհրաժեշտ է նշել այն ժամանակվա Հայաստանի և Կիլիկիայի հայ գրողների ու պատմիչների վերաբերմունքը մոնղոլական արշավանքի ու տիրապետության նկատմամբ: XIII դարի հայ պատմիչներ Կիրակոսը, Մաղաքիան, Վարդանը, Ստեփաննոս Օրբելյանը և ուրիշներ սրտի ցավով են նկարագրել մոնղոլների կործանարար ուժը և ջարդերի ողջ սարսափը, ծաղկուն քաղաքների և գյուղերի կործանումն ու այրումը, բարբարոսական դաժանությունները, բնակիչների կոտորածը, գերեվարումը և հայ ժողովրդի իրավազուրկ վիճակը:

Մեզ են հասել Թաթար-մոնղոլների արշավանքի նկարագրություններ՝ արված XIII դարի հայ գրիչների կողմից, որոնք վկայում են, որ հայերը, մոնղոլներից վախենալով, գաղթում էին Կիլիկիա: Այսպես, օրինակ՝ 1233 թ. Կիլիկիայում ավարտված ձեռագրի արտագրողը խոսում է իր հորեղբոր որդու մասին, որ նա Միջագետքից փախել է մոնղոլների արշավանքից՝ «զմարդակերպ գազանսն (զթաթարս), որ տապալեցին զամենայն աշխարհս Հայոց և զբազում աղգս մաշեցին ի սուր սուսերի, և սա թողել զհայրենի ժառանգութիւն իւր, վասն բարբարոսացն երկիւղի, նկեալ յաշխարհս Կիլիկեցւոց իւրովք հարազատովքն»[2]:

Մի ձեռագրում, որը հավանաբար ավարտված է եղել 1251 թ., կարդում ենք գրիչի տրտունջը Հայաստանում մոնղոլների բռնության դեմ. «զաւրացեալ ազգն նետողաց ի վերա քրիստոնէից, և սուր սուսերի մաշեն, և յաւարի հարկանեն, և ի գերութիւն վարեն զբազում զաւառս. և բազում և անիրաւ հարկապահանջութեամբ զատեն զամենեսեան, և այլ բազում չարիս լինի ի ժամանակիս մերում, զոր ոչ է կար մի ըստ միոջէ պատմել կամ ընդ գրով արկանել: Իսկ մեք ոչ ունելով հանգիստ՝ այսր-անդր չրջելով և փախստական լինելով՝ էաք որպէս գառինս ի մէջ գայլոց»[3]: XIII դարի 40–50-ական թվականներին Հայաստանի հայերից շատերը գաղթեցին Կիլիկիա: 1267 թ.

[1] Տե՛ս **Makrizi,** Histoire des sultans Mamelouks d' Egypte, t. II, p. 83:

[2] **Հ. Սարգիսյան,** Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. I և II, 1914–1924, էջ 403:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 174:

ձեռագրում գրիչը գրում է. «... չարժեալ զմարդակերպ գազանսն, որ տապալեցին զամենայն աշխարհս Հայոց և զբազում աղգս մաշեցին ի սուր սուսերի»[1]:

Այսպիսով, հայ հեղինակների մոտ մոնղոլների մասին մենք գըտնում ենք բացասական գնահատականներ, բայց Ստեփաննոս Օրբելյանի, Վարդանի և մյուսների երկերում, որոնք ավատատիրության ու Եկեղեցու ներկայացուցիչներ են եղել, բացասական բնութագրի կողքին նկատվում է հաշտվողական վերաբերմունք մոնղոլների հանդեպ և հույս այն բանի նկատմամբ, թե կթեթևանա մոնղոլական ռեժիմը, եթե նրանք քրիստոնեություն ընդունեն: Այդպիսի հույս էին փայփայում՝ ելնելով մոնղոլ խանների կողմից հայոց Եկեղեցուն չնորհված արտոնություններից և քրիստոնյաների նկատմամբ մոնղոլ կառավարիչների համեմատաբար բարեհաճ վերաբերմունքից՝ ի տարբերություն մուսուլմանների հանդեպ դրսևորվող նրանց թշնամական վերաբերմունքի: Երբ Վարդան պատմիչը կանչվել է Հուլավուի մոտ, դրույցի ժամանակ խանը նրան ասել է. «Մեր եղբարքն հետ մեզ վասն այն են ի կռուի, որ մենք զքրիստոնեայ սիրենք և քրիստոնէութիւն կա ի մեր տանս: Նոքա տաճկասէր են և տաճկութիւն կայ ի նոցա տանն»[2]: Հուլավյանների ու Ջուչյանների վեճի պատճառը, ինչպես հայտնի է, այլ բան է եղել: Նրանց միջև գժտություն ծագեց նվաճված տարածքները բաժանելիս: Հուլավյանների ներողամտությունը քրիստոնյաների և թշնամանքը մուսուլմանների հանդեպ պայմանավորված էին ներքին և արտաքին քաղաքականությամբ:

Վարդանը Հուլավուին անվանում է «բարեսէր, քաղցրաբարոյ և մեծ», բայց հանդիպում է նաև «ահեղ Հուլավու» փոխաբերությունը: Իրոք, այդ նա է տասնյակ քաղաքներ կործանել և հազարավոր բնակիչների սրի քաշել: Վարդան Մեծը Հուլավուին խորհուրդ տալիս ասում է. «Ի դրան հանց մարդ կացո, որ յաստուծոյ երկնչի և զձեզ սիրէ, որ զլալով նկած տառապալն, որ աղերս չունի և կաչառք՝ ուրախ ի տուն յուղարկէ և քեզ յիշեցնէ»[3]: Նման խորհուրդ տալով՝ նա փորձում էր մեղմել մոնղոլների ռեժիմը Հայաստանում: Ի դեպ մոնղոլ խանի հետ զրուցելիս Վարդանը դրսևորել է չիտակություն, արհամարհանք՝ հարստության, և հոգացողություն իր հայրենիքի բախտի նկատմամբ: Հուլավուի այս խոսքին. «մեծացուցանեմ զքեզ

[1] **Հ. Սարգիսյան,** Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. I և II, 1914–1924, էջ 403:

[2] **Վարդան Բարձրբերդցւոյ** Պատմութիւն տիեզերական, էջ 158:

[3] Նույն տեղում, էջ 157:

ոսկի զգեստիւ, և չատ ոսկի տամ», նա համեստորեն պատասխանել է. «Ոսկին և հողն մեզ մի են: Մեք այլ մեծ ուղեմք, որ վայել է քո մեծութեանդ՝ ողորմութիւն ի վերայ աշխարհի»[1]: Եվ Հուլավուն պատասխանում է. «Եւ զայդ, զոր ասացիր, առնեմ, և մարդիկ յղարկեմ, որ տեսանեն զաշխարհս (Հայաստանը – Գ. Մ.)»[2]: Բաժանվելիս Վարդանը Հուլավու խանին, որը ցանկացել է նրան ոսկի ու հագուստ տալ, ասել է. «Էյզո՛ն, այդ քո զրամդ հատանի և հանդերձ մաշի, մեք անհատանելի և անմաշելի խնդրեցաք պարգեւք»[3]: Հուլավուն դրան պատասխանում է. «Առաջի օրն զքո խօսքդ լմնեցի. առեվս (յարլիկ) եմ գրել տուել՝ կարդալ տուր, և դինչ քո սրտիդ պիտի աւելի, դայն այլ գրել տուր»[4]:

Չնայած Հուլավու խանի խոստումներին՝ կարգավորել Հայաստանի կառավարումը, այնուամենայնիվ կողոպտչական չահագործման ու կեղեքման համակարգը չարունակվում էր:

Հուլավու խանի ու Վարդանի միջև այս զրույցը տեղի է ունեցել 1264 թ. Կուրուլտայի ժամանակ, երբ խորհրդակցության էին եկել այլ խաններ, նրա ազգականները, մոնղոլ մեծամեծերը, երբ իլխանի կոչով նրան էին ներկայացել «թագաւորն Հայոց Հեթում և թագաւորն վրաց Դաւիթ և բրինձն Անտիաքու և սուլտանք ի Պարսից կողմանց յօրով»[5]: Հուլավու խանը անսում էր հայ հոգևորականության ձայնին և ձգտում էր օգտագործել ժողովրդի վրա ունեցած նրա ազդեցությունը: Իսկ զրույցը Վարդանի հետ, որը մեծ հեղինակություն է ունեցել, նա վարել է, ինչպես երևում է, ցանկանալով ավելի նորմալ հարաբերություններ հաստատել նվաճողների՝ մոնղոլների ու հայ ազնվականության միջև, որը Հուլավու խանի զորքի հետ մասնակցում էր նրա արշավանքներին դեպի Սիրիա և ուրիշ երկրներ:

Վարդանը, Կիրակոսը և մյուս պատմիչները, ինչպես և ընդհանրապես հայ ազնվականությունն ու հոգևորականությունը, հետաքրքրվում էին ոչ միայն Հայաստանի, այլև Կիլիկիայի հայկական թագավորության բախտով, որտեղ պահպանվում էր հայ պետականությունը և գտնվում էր հայոց կրոնական կենտրոնը՝ կաթողիկոսական աթոռը: XIII դարի վերջին քառորդի սկզբին հարավային Հայաստանում գրված հայերեն մի ձեռագրի հիշատակարանում կան

[1] **Վարդան Բարձրբերդցւոյ** Պատմութիւն տիեզերական, էջ 158:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

ուշադրության արժանի տողեր այն մասին, որ Հայաստանը և Կիլիկիան մտնում էին Մոնղոլական կայսրության համակարգի մեջ, որը տարածվում էր Խաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծով: Այդ հիշատակարանում Կիլիկյան Հայաստանի թագավոր Լևոն III-ը (1270–1289) դիտվում է որպես հայոց թագավոր, որպես հայոց պետականության գլուխ: Մեջբերենք այդ տողերը. «Սույն ձեռագիրն ավարտված է հայոց տոմարի 725 թվի մեհեկան ամսին (1275 թ., 18 հուլիսի), տիեզերքի վրա Կուբիլայ խանի տիրապետության ժամանակ, Աբաղա խանի՝ նրա աղգականի կուսակալության օրոք, հայոց Լևոն թագավորի դստեր՝ Զաբելի որդի Լևոն թագավորի օրոք, Ստեփան կաթողիկոսի պատրիարքության ժամանակ, Վասպուրականի գավառի ս. Աստվածածնի վանքում»[1]:

Անհրաժեշտ է նշել, որ XIII դարի վերջի Անիի ձեռագրի հիշատակարանում արդեն չկա մեծ խանի անվան հիշատակությունը: Այդ նրանից է, որ Ղազան խանն արդեն կախում չուներ մեծ խանից, այսինքն ինքնիշխան էր:

Երբ Կիլիկյան Հայաստանի վրա կախվել էր սուլթան Բեյբարսի նոր ներխուժման վտանգը և ընդհանրապես հաճախակի էին դարձել մամլուքների հարձակումները, և 1273 թ. Աբաղան ջանջանեց Բորակին և մեծ հնարավորություն ստացավ արևմտյան սահմաններում ակտիվ գործողությունների անցնելու, Կիլիկիայի հայերի մեջ հույս ծագեց մոնղոլների օգնության նկատմամբ: Այդ առումով ուշագրավ է ձեռագրերից մեկի գրչի հիշատակարանը. «Եւ արդ գրեցաւ սա ի ժամանակիս, որ է թիւ հայկական տումարի թուաբերութեան ՉԻԲ (1273)՝ Եւ է աշխարհակալ թագաւոր Աբաղայ, որ է սայ որդի Յուլայու զանին և են սորա յազգէ մեծ տոհմին Զընգզղանին... Արդ ի յայսմ ամի եղև սայ զաւրաժողով ի վերայ սուլտան (Բեյբարս – Գ. Մ.)... Զայս միաբերան աղաչեմք զաստուածն, զի տացէ թագաւորիս մերոյ Ապաղայ զանիս՝ զաւրութիւն և յաղթութիւն սմա ի վերա թըշնամեաց խաչին եղիցին Թշնամիք սորայ կոխան ամենայն ազգաց քրիստոնէից»[2]:

Հոգևորականության ներկայացուցչի այս տողերում մոնղոլները համարվում են յուրատեսակ փրկիչներ՝ վտանգավոր թշնամիներից՝ մամլուքներից: Միաժամանակ արտահայտվում է այն բաղձանքը, որ բոլոր քրիստոնյա ժողովուրդները (պետք է հասկանալ՝ ֆրանկները, ասորիները, վրացիները և Հայաստանի հայերը) ընդհանուր ջանքերով հաղթանակ տանեն մուսուլմանական եգիպտոսի դեմ:

[1] Documents arméniens, t. I, p. 606.

[2] **Ե. Լալայան,** Յուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, 1915, էջ 98:

Բայց նթե ավատական և նկեղեցական չրջանների հետ կապված հայ գրողները, պատմիչները օգնություն էին սպասում մոնղոլներից, ապա մոնղոլների հանդեպ այլ վերաբերմունք է արտահայտել հայ խոշորագույն բանաստեղծ Ֆրիկը իր նշանավոր «Ընդդեմ փալաքին» բանաստեղծության մեջ և մյուս ստեղծագործություններում: «Հիմիկ դժարեց բաներս,— ասում է նա,— Որ թաթարն եղաւ թագաւոր: Զրկեց դամենայն աչխարհս, Ու գողերն եղեր մեծաւոր»: Ֆրիկը տեսել է մոնղոլական լծի բոլոր սարսափները: Նա կապված էր աչխատավոր ժողովրդի հետ և պաչտպանում էր նրա չահերը: Վրդովվում է, որ մոնղոլները ստրկության են վաճառում հայ կանանց ու երեխաներին, որ ամենուրեք բռնություն է թագավորում: Դրա հետ միասին Ֆրիկը բողոքում է ընդդեմ ունեցվածքային և սոցիալական անհավասարության՝ իր ստեղծագործություններում ընդգծելով մի կողմից՝ ժողովրդական զանգվածների աղքատությունն ու իրավազրկությունը, մյուս կողմից՝ հարստությունն ու իչխանների կամայականությունը: Ի դեպ Հայաստանի բանաստեղծ Ֆրիկը եղել է և, հավանաբար, նույնիսկ որոչ ժամանակ ապրել է Կիլիկիայում: Նրա ստեղծագործություններում մենք տեսնում ենք նաև այդ երկրի հասարակական կարգի, սոցիալական հակասությունների ու քաղաքական իրադարձությունների արտացոլումը:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ XIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XIV ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Այաս–Թավրիզ առևտրական մայրուղին (Պեգոլոտտիի երթուղին): Այաս–Թավրիզ առևտրական ճանապարհի և Այասի նավահանգստի դերը համաչխարհային առևտրի մեջ XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի առաջին կեսին: Կիլիկյան Հայաստանի առևտրական փոխհարաբերությունները Վենետիկի և Ջենովայի հետ: Նրա առևտրական հարաբերությունները Սիցիլիայի, Ֆլորենցիայի, Կատալոնիայի և Ֆրանսիայի հետ: Կիլիկյան Հայաստանի առևտրական կապերը Մերձավոր Արևելքի, Հայաստանի, Ղրիմի և այլ երկրների հետ: Արտաքին ու տարանցիկ առևտրի ազդեցությունը երկրի տնտեսության ու քաղաքականության վրա:

Մոնղոլական ընդարձակ կայսրության կազմավորումը, որը միավորել էր մինչ այդ որոչ չափով տարանջատ բազում երկրներ, չնայած իր ավատական բնույթին, ուլուսների բաժանված լինելուն ու դրանց գժտություններին, չնայած նվաճված երկրների տնտեսությանը մոնղոլական արչավանքների պատճառած վիթխարի վնասներին՝ ակներևաբար օժանդակեց XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի առաջին կեսին ստեղծելու առավել կայուն գործող ու համեմատաբար անվտանգ առևտրական ճանապարհներ, որոնք անցնում էին ասիական մայրցամաքի տարբեր ուղղություններով և հասնում մինչև Սև ու Միջերկրական ծովերը: Դա մասամբ նպաստեց Եվրոպայի ու Ասիայի հեռավոր չրջանների միջև առևտրական կապերի ամրապնդմանը XIII–XIV դարերում, երբ Արևմտյան Եվրոպան, որը Ռուսիայի չնորհիվ պաչտպանված էր մոնղոլական արչավանքներից, տնտեսական վերելք էր ապրում, իսկ մոնղոլներին ենթակա երկրներից չատերն արդեն անկման վիճակում էին, և միայն որոչ մարզերում կային զարգացած արհեստագործական արտադրության օջախներ:

Մոնղոլների կողմից Սև ծովի ափերի գրավումը նպաստեց Չինաստանից Միջին Ասիայով մինչև Ոսկե Հորդային ենթակա Տանա և Ղրիմի նավահանգիստները հասնող առևտրական ճանապարհի զարգացմանը: Միաժամանակ մեծ նշանակություն ձեռք բերեցին Տրապիզոնը, Այասը և Ալեքսանդրիան: Այս նավահանգիստների արագ զարգացմանը նպաստում էր նաև այն պարագան, որ Պարսից ծոցից Բաղդադով դեպի սիրիական նավահանգիստները գնացող քարավանային ուղին կորցրել էր իր նշանակությունը, որովհետև մոնղոլներին չէր հաջողվել տիրել Սիրիային, և վերոհիշյալ ճանապարհի մի մասն էր միայն (Իրանի և Միջագետքի տարածքում) մոնղոլների ձեռքին մնացել, իսկ մյուս մասը (Սիրիայում) ընկել էր թշնամական եգիպտոսի սուլթանության իշխանության տակ: Այս ամենի հետևանքով սիրիական նավահանգիստները զգալիորեն կորցրեցին իրենց նշանակությունը միջազգային առևտրում, մինչդեռ այդ նույն պատճառներով Կիլիկյան Հայաստանի նավահանգիստների դերը Եվրոպայի և Ասիայի առևտրական շրջանառության մեջ նշանակալիորեն մեծացավ:

Թեև Իրանի մոնղոլները կտրված էին սիրիական նավահանգիստներից, այնուամենայնիվ նրանք ելք ունեին դեպի Միջերկրական ծով Կիլիկիայի միջով: Եթե Ջուչյանները տիրում էին ասիական մայրցամաքից դեպի Սև ծովի հյուսիսային ափերը գնացող քարավանային ուղիների ելքերին, ապա Հուլավյանները որոշ հսկողություն ունեին դեպի Սև ծովի հարավային ափերն ու Միջերկրական ծով հասնող քարավանային այն ճանապարհների ելքերի վրա, որոնք գալիս էին Չինաստանից, Հնդկաստանից ու Միջին Ասիայից և անցնում Տրապիզոնի կայսրության ու Կիլիկյան Հայաստանի նավահանգիստներով՝ Տրապիզոնով ու Այասով:

Հուլավյանների պետության աշխարհագրական դիրքը խիստ բարենպաստ էր ինչպես ներքին Ասիայի ու Եվրոպայի միջև տարանցիկ առևտրին նրա մասնակցության, այնպես էլ երկրից ապրանքների արտահանման տեսակետից: Դեպի Իրան էին գնում քարավանային ճանապարհները Չինաստանից, Միջին Ասիայից ու Հնդկաստանից: Ամենահարավային քարավանային ճանապարհն անցնում էր Նանկինից դեպի Խոտան, Յարքենդ, Հերաթ: Քարուլով ու Ղազնիով այս ճանապարհը կապված էր Հնդկաստանի հետ: Չինաստանից ու Հընդկաստանից նկող նավերը կառանում էին Պարսից ծոցի նավահանգիստներում՝ Օրմուզում ու Բասրայում: Երկրորդ ճանապարհը Նանկինից Կաշգարով, Սամարղանդով ու Բուխարայով հասնում էր Ռեյ,

որտեղ ճյուղավորվում էր երկու ուղղությամբ՝ դեպի Բաղդադ ու դեպի Թավրիզ, որտեղից էրզրումով անցնում էր դեպի Այաս ու Տրապիզոն տանող ճանապարհը:

Հուլավյանների մայրաքաղաք Թավրիզը, ուր գալիս էին արևելյան ու եվրոպացի վաճառականները ապրանքներ բերելով ու տանելով և որտեղից Այասով ու Տրապիզոնով Եվրոպա էին տարվում Հնդկաստանի, Իրանի և այլ երկրների մթերքներ, գլխավոր առևտրական կենտրոնն էր, որտեղ խաչավորվում էին Ասիայի կարևորագույն առևտրական ուղիները Հուլավյանների զարաչրջանում:

Մոնղոլների՝ Առաջավոր Ասիայում կատարած նվաճումները հարված հասցրին Միջագետքով (Բաղդադ) դեպի սիրիական նավահանգիստները գնացող առևտրական ճանապարհներին և նպաստեցին Տավրոսից էրզրումով դեպի Տրապիզոն և Այաս գնացող ճանապարհների զարգացմանը:

Թավրիզից էրզրումով դեպի Տրապիզոն և Այաս գնացող քարավանային ուղին բացասաբար ազդեց Հայաստանի, Արևմտակասպյան մարզերի և հարևան ուրիշ երկրներ տնտեսության վրա: Առևտրական ուղիների տեղափոխումը հարավ (Հյուսիսարևելյան Հայաստանից՝ Հյուսիսային Իրան), Անի–էրզրում ճանապարհի նշանակության անկումը և Թավրիզ–էրզրում ճանապարհի զարգացումը XIII դարի վերջին նպաստեցին Անիի անկմանը և Թավրիզի բարձրացմանը: Սակայն հայտնի է, որ որևէ երկրի տարանցիկ ճանապարհներն ու տարանցիկ առևտուրը չեն կարող հիմք ծառայել դրա առաջադիմության համար:

Չնայած Եվրոպայի հետ Տրապիզոն և Այաս նավահանգիստներով տարանցիկ առևտրի ընդլայնմանը և Հուլավյան պետության որոշ մարզերում առևտրի ու արհեստային արդյունաբերության նույնիսկ հարաբերական ծաղկմանը, մոնղոլահպատակ երկրների արտադրական ուժերը ոչ միայն չէին զարգանում, այլև անկում էին ապրում: Ղազվինիի վկայությամբ, Ռումի երկրամասից պետության նկամուտը մոնղոլների օրոք տասնհինգից իջավ հասավ երեք միլիոնի: Իրանի մոնղոլները չկարողացան պայմաններ ստեղծել՝ վերականգնելու այն, ինչն իրենք էին ավերել: Դրան խանգարում էին աշխատավորների չահագործման նրանց սահմանած ռեժիմը, իրավազրկությունն ու բռնությունը, արտաղրողների կյանքի, աշխատանքի և ունեցվածքի համար երաշխիքի բացակայությունը: Ի. Պ. Պետրուշևսկին իրավացիորեն նկատում է, որ առևտրական կապիտալի ծաղկումը Հուլավյանների պետության մեջ չէր նշանակում դրա

հասարակական առաջադիմություն[1]:

Մի քանի բարենպաստ պայմաններ կային այն բանի համար, որ Կիլիկյան Հայաստանը կարողանար XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի առաջին կեսին նշանակալի դեր խաղալ Եվրոպայի և Ասիայի միջև կատարվող առևտրական փոխանակության մեջ: Դրան նպաստում էր այն, որ, առաջին, Կիլիկյան Հայաստանը դեռևս XIII դարի սկզբից կայուն կապեր ուներ Եվրոպայի հետ, երկրորդ, որ վենետիկցի և ջենովացի վաճառականները Կիլիկիայի տարանցիկ ճանապարհներն օգտագործում էին Սիրիա և Իկոնիա ուղևորվելու համար, երրորդ, որ սիրիական ճանապարհները իրենց նշանակությունը կորցրել էին մոնղոլների կողմից Բաղդադի գրավման ու Սիրիայի համար մամլուքների դեմ պատերազմների հետևանքով, չորրորդ, որ Այասից Կիլիկիայի միջով մի հարմար ճանապարհ էր գնում դեպի իլխանների մայրաքաղաք Թավրիզ:

Այաս–Թավրիզ ճանապարհի մասին մենք տեղեկություններ ենք գտնում Ֆրանչեսկո Բալդուչչի Պեգոլոտտիի մոտ, նրա «Առևտրի պրակտիկան» երկում[2], որը չատ գնահատելի աղբյուր է Մոնղոլական կայսրության դարաշրջանում Արևելքի հետ Եվրոպայի առևտրի պատմության ուսումնասիրության համար: Պեգոլոտտին եղել է Ֆլորենցիայի նշանավոր բանկիրական և առևտրական Բարդիի տան առևտրական գործակալը: 1317 թվից մինչև 1320 թիվը ապրել է Անգլիայում և փաստաթղթերում անվանված է Բարդիի առևտրական տան վաճառական: 1324–1327 թթ., ինչպես և 1335 թ., Պեգոլոտտին եղել է Բարդիի փիրմայի առևտրական գործակալը Կիպրոս կղզում և հենց այդ ժամանակ այցելել է Կիլիկիա, որտեղ Լևոն V-ից ստացել է առևտրական արտոնություններ՝ հօգուտ իր ընկերության[3]:

Պեգոլոտտին մանրամասն նկարագրել է Այաս–Թավրիզ առևտրական ճանապարհը էրզրումով: Այս երթուղին ուսումնասիրել են գիտնականներ Կիպերտը, Հեյդը, Յուլը և ուրիշներ: Հեյդը ամբողջ ճանապարհը բաժանում է չորս մասի. 1. Այաս–Սվազ, 2. Սվազ–Երզնկա, 3. Երզնկա–Էրզրում, 4. Էրզրում–Թավրիզ: Ըստ Հեյդի այս ուղու հանգուցային կայարաններն էին՝ Սվազը, Երզնկան, Էրզրումը, ինչպես և Թավրիզը, որտեղից այն չարունակվում էր դեպի Պարսից ծոց, իսկ այստեղից սկսվում էր ծովային ուղին դեպի Հնդկաստան: Թավրիզից էլ քարավանային ճանապարհը գնում էր Միջին Ասիա, Հնդկաստան

[1] Известия Акад. наук, 1937, № 4, с. 910.

[2] F. Pegolotti, La pratica della mercatura, ed. by Allan Evanse, Mass., 1936.

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 60:

ու Ջինաստան: Վերոհիշյալ գլխավոր կայարանները լավ հայտնի են, և Պեգոլոտտիի երթուղու ուղղությունը կարելի է նշանակել այդ կետերի միջոցով, որոնք միաժամանակ Առաջավոր Ասիայի քարավանային ճանապարհների հանգուցային կայարաններն են եղել:

Փորձենք ճշտել Այաս–Թավրիզ ճանապարհի ուղղությունը: Վերոհիշյալներից բացի, պարզելով նոր հանգուցային կայարանները՝ Պեգոլոտտիի երթուղին կարելի է բաժանել վեց հատվածների: Նախ հետևենք երթուղու վերոհիշյալ չորս հատվածների բաժանմանը:

Ճանապարհների առաջին մասն անցնում է հետևյալ կայարաններով. Այացցո, Կոլիդարա, Գանդոն, Կազննա, Գավազերա դել Ամիրալիո, Գավազերա դել Սոլդանո, Գաղուն, Գավազերա դը կազա Ջաքոմի[1]: Պեգոլոտտիի առևտրական երթուղու ելման կետը՝ Այացցոն, ոչ այլ ինչ է, քան Այաս նավահանգիստը, որը Մարկո Պոլոն և այլ աղբյուրներ անվանում են նաև Լայաս: Բոլոր հետազոտողները համաձայն են, որ երկրորդ կայարանը՝ Կոլիդարան, Խաչակրաց արշավանքների դարաշրջանի տարեգրություններում հիշատակվող հայկական Կոպիտառ ամրոցն է և նույնպես գտնվում է Կիլիկիայում, Տավրոսի լեռներում, բայց վիճում են, թե որտե՞ղ է այն եղել: Կիպերտը ենթադրում է, թե Այասից դեպի Կոլիդարա տանող ճանապարհն անցնում էր Սիսով, և Կոպիտառի ամրոցը դրա հյուսիսարևելյան կողմում է եղել: Հեյդը առարկելով Կիպերտին՝ ենթադրում է, թե ճանապարհն Այասից գնում էր Ջայհան (Պիռամոս) գետի հովտանքով մինչև Անապատ, որտեղ այդ գետից չուռ էր գալիս, ընթանում Անապատ վտակին զուգահեռ և հայկական Կապան ամրոցի պարիսպների մոտով անցնում էր նույնանուն լեռնանցքով: Որպես ապացույց Հեյդը բերում է այն, որ Կապանում էր գտնվում մաքսատունը, և ջենովացի վաճառականները մաքս էին մուծում այդ ամրոցի տիրոջը[2]: Հեյդն այս հարցում սխալվում է: Նա աչքաթող է անում, որ կա երկրորդ (ժամանակի առումով Պեգոլոտտիի դարաշրջանին ավելի մոտիկ)՝ 1288 թ. արտոնագիրը, որի համաձայն ջենովացիները մաքսը վճարում էին Գուգլակում, ուրեմն նրանք անցնում էին ոչ թե Կապանով, այլ՝ Գուգլակով:

Դա հաստատվում է Պեգոլոտտիի երկերի երկրորդ ուղղված հրատարակության նոր տվյալներով, որոնցից բխում է, որ Կոպիտառը գտնվելիս է եղել Գուգլակով անցնող ճանապարհի վրա և որ չորրորդ կայարան (երրորդը եղել է Գանդոնը) Կազննան եղել է Կեսարիան:

[1] F. Pegolotti, La pratica della mercatura, ed. by Evance, Mass., 1936, p. 28.

[2] Տե՛ս Heyd, Histoire du commerce du Levante au moyen âge, t. II, p. 114:

Պեգոլոտտիի երթուղու ճշտման համար անհրաժեշտ է պարզել, թե որտե՞ղ էր ճանապարհը կտրում-անցնում կիլիկիայի սահմանը: Անցնում էր Կապանո՞վ, թե՞ Գուգլակով, և որտե՞ղ է եղել Կազենան: Չորրորդ կայարանի՝ Կազենայի տեղադրության առնչությամբ կիպերտը ենթադրում էր, որ իտալացի վաճառականների քարավանները գնում էին Ջիհունի հոսանքն ի վեր մինչև Մամեստիա քաղաքը, որտեղից նրանք ծովում էին դեպի հյուսիս, որպեսզի հասնեին Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաքին, Սիսից էլ անցնում էին լեռնանցքներով, որտեղով հոսում էր Սիհունը (Սարոսը), Կազենայի գավառով, որտեղ էլ, ըստ նրա ենթադրության, Կազենա կայարանն էր[1]: Հեյդն էլ կարծում էր, թե Կազենան Կոկիսոնն է, որը հիշատակվում է խաչակիրների աղբյուրներում ու հայ հեղինակների մոտ: Հեյդի այդպիսի մոտեցումը բացատրվում է այն բանով, որ ըստ նրա երթուղին տանում էր դեպի Կապան, որտեղից ճանապարհ կա դեպի Կոկիսոն[2]: Պեգոլոտտիի երկերի երկրորդ հրատարակության խմբագիրը ոչ առանց հիմքի պնդում է, որ Կազենան՝ Այաս–Թավրիզ առևտրական ճանապարհի կայարանը, ոչ այլ ինչ է, եթե ոչ Կեսարիա քաղաքը:

Հաջորդ կայարանը՝ Գավազերա դել Ամիրալիոն (սա նշանակում է Էմիրի քարվանսարա), հավանաբար գտնվում էր Կեսարիայի մոտ[3]:

Այն, որ Կազենան Կեսարիան է, հաստատվում է Գավազերա դել լա Սոլդանոյի (նշանակում է՝ սուլթանի քարվանսարա) տեղադրության պարզաբանմամբ: Այս կայարանի մասին Էվանսն ասում է. «Պեգոլոտտիի երկերի Պագանինիի հրատարակության մեջ այս կայարանի անունը բաց է թողնված, դրա համար էլ մնացել է առանց մեկնաբանության: Բանն այն է, որ Կեսարիայից քառասուն կիլոմետր դեպի հյուսիս՝ Սվազ տանող ճանապարհին, կան մեծ մի քարվանսարայի ավերակներ, որը ըստ ավանդության հայտնի է որպես սուլթանի քարվանսարա: Եթե հնարավոր է այս քարվանսարան նույնացնել Պեգոլոտտիի Գավազերա դել լա Սոլդանոյի հետ, ապա այն ժամանակ հաստատվում է այն ենթադրությունը, թե Պեգոլոտտիի երթուղին անցնում էր Կեսարիայով»[4]:

Հօգուտ այն բանի, որ Կազենան ոչ այլ ինչ է, եթե ոչ Կեսարիան, կարելի է ուրիշ փաստեր ու փաստարկներ ևս բերել: Հայտնի է, որ Կեսարիան նախկին դարաշրջաններում կարևոր ռազմավարական ու

[1] Տե՛ս **W. Heyd,** Histoire du commerce du Levante... p. 114:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 113:

[3] Տե՛ս **F. Pegolotti,** La pratica della mercatura, ed. by Evance, p. 389:

[4] Նույն տեղում:

առևտրական կետ է եղել, ինչպես և՝ հանգուցային կայարան առևտրական ուղիների համար: Բայց XIII դարում Կեսարիայի այդ նշանակությունը հատկապես մեծանում է և հասնում իր գագաթնակետին՝ Այաս–Թավրիզ ճանապարհի զարգացմանը զուգընթաց: Միջազգային հարաբերությունների պատմությունից հայտնի է նաև, որ 1211 թ. Լևոն II–ը պաշարել է Կեսարիան և որ 1221 թ. այս քաղաքի վաճառականները բողոքել են սուլթան Քեյ–Կուբադին այն խոչընդոտների առիթով, որ իրենց հանդեպ հարուցում էր Կիլիկիայում Լևոն II–ը՝ դեպի այդ երկիր առևտրական ուղևորություններ կատարելու ժամանակ: 1277 թ. եգիպտոսի սուլթան Բեյբարսը ներխուժելով մոնղոլներին ենթակա Իկոնիա՝ անհրաժեշտ համարեց նախ գրավել Կեսարիան: Այսպիսով, նա կտրել է Սև ու Միջերկրական ծովերի նավահանգիստներից, Դերբենդի լեռնանցքից, Իրանից և ավելի հեռավոր երկրներից նկող, այստեղ խաչավորվող ճանապարհները: Կեսարիայով են անցել XIII դարի եվրոպացի նշանավոր ճանապարհորդներ Ռուբրուկը և Մարկո Պոլոն: Վերջապես, ջենովացիների 1288 թ. առևտրական արտոնագրից հայտնի է, որ նրանք անցնում էին Գուգլակ լեռնանցքով, այսինքն՝ մի ուղիով, որը տանում էր դեպի Կեսարիա: Պարզվում է, որ Պեգոլոտտիի նկարագրած առևտրական ճանապարհը անցել է Գուգլակով (Դուռն Կիլիկիո), այլ ոչ թե Կապանով, իսկ ապա՝ Կեսարիայով:

Այս փաստի հաստատումը կարևոր է նաև այն առումով, որ Կեսարիայով էր անցնում ոչ միայն Այասից դեպի Թավրիզ, այլև դեպի Կոստանդնուպոլիս, դեպի Սինոպ ու Տրապիզոն գնացող ճանապարհը: Հետևաբար, Կեսարիայում ճյուղավորվում էր Սիրիայից ու Այասից նկող քարավանային ճանապարհը: Ճանապարհի ճյուղավորումներից մեկը գնում էր դեպի Կոստանդնուպոլիս, մյուսը՝ Սվազ, որը կապված էր Սինոպի հետ: Սվազից չարունակվելով դեպի էրզրում՝ Այաս–Թավրիզ ճանապարհը այստեղ նորից էր ճյուղավորվում: Մի ճյուղավորումը գնում էր դեպի Տրապիզոն, մյուսը՝ Թավրիզ: Էրզրումը կապվում էր նաև Անդրկովկասի և Ասիայի այլ երկրների ճանապարհների հետ:

Այն հանգամանքը, որ Կեսարիան՝ Առաջավոր Ասիայի կարևոր առևտրական ճանապարհների խաչավորման կետը, միաժամանակ եղել է Պեգոլոտտիի երթուղու հանգուցային կայարանը, է՛լ ավելի է բարձրացնում Այաս–Թավրիզ քարավանային ուղու նշանակությունը:

Այսպիսով, առաջին հանգուցային կայարանը եղել է Կեսարիան, այլ ոչ թե Սվազը, ինչպես կարծում էր Հեյդը, և Այաս–Սվազ ճանա–

պարհը կարելի է բաժանել երկու հատվածի. Այաս–Կեսարիա և Կեսարիա–Սվազ: Այս հատվածի նախավերջին կայարանի (Գադուն) մասին Հեյդը ենթադրություն է անում, թե այն գտնվում էր Կոմաննից Թոնուզով դեպի Սվազ գնացող հին հռոմեական ճանապարհի վրա: Գավազներա-դը-կազա-Ջակոմիի տակ ենթադրում են Թոնուզի ու Սվազի միջև գտնվող Կոյա-Դիբի գյուղը:

Սվազի ու Երզնկայի միջև միջանկյալ կայարաններն են եղել Դուգրիագան, Գրևրոկոն, Մուգհիսարը: Սվազը Պեգոլոտտիի մոտ նչված է Սալվատորո անունով, հայ հեղինակների մոտ՝ Սեբաստիա: Ինչպես հայտնի է, Սվազը քարավանային ուղիների խաչավորման տեղում է եղել: Կապված է եղել Պեգոլոտտիի երթուղուց դեպի տարբեր կողմեր՝ դեպի Սև ծով (Սինոպ) ու դեպի հարավ՝ Միջագետք գնացող այլ ճանապարհների հետ: Համդալլահ Ղազվինիի վկայությամբ XIV դարի առաջին կեսին Սվազը Փոքր Ասիայի ամենախոշոր քաղաքն է եղել: Հաջորդ կայարանը՝ Դուգրիագան, ինչպես ենթադրում է Հեյդը, այժմյան Թոդուրգա գյուղն է՝ Սվազից հյուսիս-արևելք, Հալիսի հովտի վերին մասում[1]:

Ըստ Կիպերտի, Գրևրոկոն՝ հռոմեական դարաշրջանի երթուղու կետերից մեկն է՝ Arauraci-ն է, որը Պիզիտանի եղբայրների 1367 թ. քարտեզի վրա նչված է Agreboce անունով, իսկ Մուգհիսարը, Հեյդի կարծիքով, այժմյան Muchar-ն է:

Ճանապարհի երրորդ հատվածը (ըստ Հեյդի)՝ Երզնկա–Էրզրումը, ավելի կարճ էր և ուներ հետևյալ կայարանները՝ Arzinga, Gavasera sulla Ligurti Ponte, Gavasera fuori d' Arzerone, Bagni d' Arzerone: Միջանկյալ կայարանների դասավորությունը մեծ մասամբ ճշգրիտ չի որոշված:

Երզնկա քաղաքը, չնորհիվ XIII–XIV դարերի եվրոպացի, արևելցի ու հայ հեղինակների նկարագրությունների, լավ հայտնի է որպես արհեստագործական արտադրության ու առևտրի կենտրոն և առևտրական ճանապարհների կարևոր հանգուցակետ: Այնուհետև գալիս են երկու քարվանսարաններ, ապա՝ մինչև այժմ չպարզված մի կետ՝ Լիգուրտի, և Եփրատի կամուրջը: Մոտենալով Էրզրումին՝ քարավանները կանգ էին առնում քարվանսարայի մոտ, իսկ ապա՝ այն կետի մոտ, որտեղ բաղնիքն էր և մաքսատունը՝ Էրզրումի արվարձանում[2]:

Պեգոլոտտիի երթուղու չորրորդ (ըստ Հեյդի) հատվածը՝ Էրզրում–Թավրիզը, ամենաերկարն է եղել: Ուներ հետևյալ կայարանները,

[1] Տե՛ս W. Heyd, Histoire du commerce du Levant, t. II, p. 115:

[2] Տե՛ս նույն տեղում:

որոնց տեղադրությունը դեռ լիովին պարզված չէ. Arzerone, Bagni d' Arzerone verso Torisi, Polorbecch, Sermessa calo, Aggia, Calacresti, Trechise, sotto Larconoe, Scaracanti, Locche, Piano di Falconieri, il Camuzoni, Piana del Fiume rosso, Congro, Sandoddi, Torisi:

Ըստ Հեյդի նկարագրության, առևտրական քարավանները, չարունակելով Էրզրումից դեպի Թավրիզ տանող ճանապարհը, նախ մրտնում էին Էրզրումի արևելյան արվարձանը, որտեղ նույնպես կային բաղնիք ու մաքսատուն: Իննժամյա անցումից հետո քարավանները հասնում էին Արաքսին՝ Polorbecch կետում, ինչպես անվանում է Պեգոլոտտին, հայերեն՝ Բոլորապահակ, և Արաքսն անցնում էին յոթկամարանի կամրջով, որը հայտնի է Զորան Քևփրի անունով: Այնուհետև քարավաններն անցնում էին Արաքսի հովտով և ապա Դելի Բաբա կապանով մտնում լեռնանցքը և անցնում լեռներով, որտեղ գտնվելիս է եղել այժմ գոյություն չունեցող Sermessa calo կետը[1]:

Այս կապանն անցնելուց հետո քարավանները հասնում էին Aggia, որը, Ի. Պ. Պետրուշևսկու կարծիքով, համապատասխանում է Հաջի Խալիլին[2]:

Ապա հաջորդում էին Calacresti և Tre chices կայարանները: Առաջինն այժմյան Ղարաքիլիսան է, երկրորդը՝ Ուչ Քիլիսան, որը, ինչպես և իտալերեն անվանումը, բառացիորեն նչանակում է երեք եկեղեցի:

Polorbecch և Tre chiese կայարանների մասին ակադեմիկոս Հ. Մանանդյանը գրում է. «Առաջինը, անկասկած, համապատասխանում է հայկական Բոլորապահակին, որն ընկած է Արաքսի հետ Պասինսուի խառնման տեղին մոտ, այսինքն՝ այժմյան Քյորփքյոյին: Երկրորդը՝ Tre chiese-ն նչանակում է «երեք եկեղեցի» և նույնական է այժմյան Ուչ-Քիլիսայի հետ, այսինքն՝ Bagauna-ն է՝ ըստ Պետինգերի Աղյուսակների՝ Բագավանը: Այսպիսով, Arzerone-ից Tre chiese գիծը անցնում էր, ինչպես և հռոմեական ժամանակներում, այժմյան Բասենով, Քյոփրիքյոյով, Ալաչկերտի դաշտով դեպի հին Բագավան, որը Պեգոլոտտիի մոտ անվանված է Tre Chiese (Ուչ-Քիլիսա)»[3]:

Հաջորդ կայարանը՝ Sotto Larconoé-ն, Հեյդի կարծիքով, գտնվում էր այժմյան Դիադինի մոտ, որտեղից երևում է Արարատը: Բայց Ալիշանը գրում է, որ ճանապարհն անցնում էր «ընդ Պայէզիտ (Sotto L' Arca Noe), ի ստորոտ լերինն Նոյեան տապանի»[4], այսինքն՝

[1] Տե՛ս W. Heyd, Histoire du commerce du Levant, t. II, p. 116:

[2] Տե՛ս Известия АН, Отд. общ. наук, 1937, № 4, ст. И. П. Петрушевского:

[3] Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Ե., 1930, էջ 197–198:

[4] Ալիշան, Սիսուան, էջ 368:

Արարատ սարի ստորոտի կայարանով, որտեղ և գտնվում էր Բայազետը:

Ըստ Հեյդի, Scaracanti կայարանը համապատասխանում է այժմյան Կարաքենդին: Դրան հաջորդող կայարանը՝ Locche-ն, Կիպերտի ենթադրությամբ, Մակուի մոտ է եղել: Պեգոլոտտին այնուհետև հիշատակում է Piana di Falconieri կայարանը, որի տեղը չի պարզված: Ակադեմիկոս Մանանդյանը հետազոտելով Արտաշատ–Խոյ–Պարեսական ճանապարհի ուղղությունը ըստ Պտոլեմեոսի քարտեզի, պարզել է, որ Piana di Falconieri-ն գտնվելիս է եղել Ավարայրի կամ այժմյան Թայ Ջավարայի դաշտում՝ Արտազ գավառում, որտեղ գըտնըվում էր նաև Բազուձորը: Ըստ նրա որոնումների, Piana di Falonieri նշանակում է «բազեորսի դաշտ», Բազուձորը՝ Բազեների ձոր[1]: Դուրս է գալիս, որ վերոհիշյալ տեղանունները նույնական արմատային իմաստ ունեն և իտալերեն անվանումը՝ Piana di Falconieri-ն, բառացի թարգմանությունն է տեղական տերմինի, որն ունի «բազե» արմատը, որով անվանվում էին Իրանի սահմանի մոտերքում եղած Հայաստանի մի չարք վայրեր:

Li Camusoni անհայտ կետից հետո գալիս էր մի կայարան, որը Պեգոլոտտիի մոտ նշանակված է Piana del Fiume Rosso անունով: Յուլր ենթադրում էր, թե Rosso-ն Արաքս բառի աղավաղումն է, բայց Կիպերտը ցույց տվեց, որ Fiume Rosso-ն բառացի նշանակում է «կարմիր գետ», ինչը հայկական Կարմիր գետի թարգմանությունն է, այժմյան Ղզըլ-Ջայի, Արաքսի վտակի: Ղզըլ-Ջայը, ինչպես հայտնի է, ողողում է Խոյ քաղաքի պարիսպները: Հեյդը ենթադրում է, թե ճանապարհը չի անցել Խոյի միջով, քանզի այդ ժամանակ Պեգոլոտտին այդ կետը կանվաներ ոչ թե Piana del Fiume Rosso (Կարմիր գետի հովիտ), այլ Խոյ քաղաքի անունով: Հեյդը չէր կասկածում, որ հաջորդ կայարանի անվան տակ՝ Condro, կարող է թաքնված լինել Խոյ քաղաքը, ինչպես հաստատել է Հ. Մանանդյանը:

Condro (Խոյ) կետը առևտրական ուղիների հանգուցային կայարան է եղել: Ղազվինիի «Նուզհաթ-ալ-կուլուբ» աշխարհագրական երկում, գրված մոտ 1340 թ., հիշատակվում է «արևմտյան մեծ ճանապարհը»՝ Սուլթանիա–Զանջան–Արդաբիլ (դեպի Մարագու և դեպի Միյանիջ ճյուղավորումներով) Ուջան–Սաիդաբադ–Մարանդ–Խոյ–Արճիշ–Մալասջիրդ–Խնուս–Արզան-ար-ռում (Էրզրումում)–Արզանջան–Սվազ–Ռումի Կոնիա[2]: Այն, ինչպես երևում է երթուղուց, անցել է Խոյի միջով: Անգլիայի թագավոր Էդվարդ I-ի (1272–1307) դեսպան Լանգելլեն 1292–1293 թթ. իլխան Հեյխաթի մոտ կատարած ուղևորությունից վերադարձել է Թավրիզ–Խոյ–Արճիշ–Մանազկերտ–Էրզրում–Տրապիզոն երթուղով[1]:

Այսպես, Սվազը, Երզնկան, Թավրիզն ու Նախիջևանը կապված են եղել առևտրական ու դրամական գործարքներով: Այստեղից կարելի է ենթադրել, որ Նախիջևանը կապված է եղել Թավրիզ–Այաս մայրուղու հետ: Այս ենթադրությունն ամրապնդվում է նրանով, որ արաբ աշխարհագրագետների տվյալների համաձայն Նախիջևանը կապված է եղել Խոյի հետ[2]: Նախավերջին կայարանի՝ Sandodi-ի վերաբերյալ Կիպերտը ենթադրում է, թե դա ոչ այլ ինչ է, եթե ոչ Marand-ը:

Պարզաբանելով, որ Casena-ն հանգուցակետ Կեսարիան է, իսկ Condro-ն՝ Խոյը, հանգուցային կայարանների թիվը երեքից հասնում է հինգի (Կեսարիա, Սվազ, Երզնկա, Էրզրում, Խոյ), և Պեգոլոտտիի երթուղին կարելի է բաժանել ոչ թե չորս հատվածների, ինչպես վարվում է Հեյդը, այլ՝ վեց, այն է՝ 1) Այաս–Կեսարիա, 2) Կեսարիա–Սվազ, 3) Սվազ–Երզնկա, 4) Երզնկա–Էրզրում, 5) Էրզրում–Խոյ, 6) Խոյ–Թավրիզ: Շնորհիվ այս հանգուցային կայարանների՝ Այաս–Թավրիզ առևտրական մայրուղին կապված է եղել Առաջավոր Ասիայի համարյա բոլոր առևտրական ուղիների հետ: Վերոհիշյալ հանգուցային կայարանները նախկինում էլ, սկսած անտիկ դարաշրջանից, եղել են առևտրական ճանապարհների կարևոր կետեր:

Այդ բոլոր հանգուցային կայարաններում, որոնք միաժամանակ արհեստային արտադրության ու քարավանային առևտրի կենտրոններ էին, նշանակալի թվով հայ արհեստավորներ ու վաճառականներ էին ապրում:

Թավրիզը եվրոպացի վաճառականների համար վերջնակետ էր հանդիսանում, ուր նրանք XIII դարի երկրորդ կեսից գալիս էին վաճառելու եվրոպական արդյունաբերության արտադրանքը, իսկ գնում էին Հնդկաստանի համեմունքներ, թանկագին քարեր և այլ ապրանքներ, Իրաքի, Իրանի, Հայաստանի և Ասիայի այլ երկրների արտադրանքներ: Թավրիզից ճանապարհը տանում էր դեպի Պարսից ծոց՝ Հորմուզ, որ կարևորագույն չուկա էր, ուր ծովային ու քարավանային ճանապարհներով բերում էին Հնդկաստանի մթերքներ:

Թավրիզում միջերկրական ու Սև ծովերից եկող ճանապարհները խաչվում էին Պարսից ծոցից, Զինաստանից, Հնդկաստանից ու Միջին Ասիայից եկող քարավանային ճանապարհների հետ:

[1] Տե՛ս Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, ե., էջ 147–164:

[2] Տե՛ս Известия АН, Отд. общ. наук, № 4, 1937, с. 914:

[1] Տե՛ս W. Heyd, Histoire du commerce du Levant, t. II, p. 95:

[2] Տե՛ս Известия АН, Отд. общ. наук, № 4, 1937, с. 913:

Պեգոլոտտիի ճշգրիտ երթուղին որոշելը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն այս ուղու նշանակությունը պարզաբանելու առումով, որպես մոնղոլների դարաշրջանում Ասիայի ու Եվրոպայի միջև առևտրի կարևոր մայրուղիներից մեկի, ոչ միայն այն ժամանակվա միջազգային առևտրում Կիլիկյան Հայաստանի դերի ավելի լավ բացահայտման տեսակետից, այլև նրա ներքին պատմության ու արտաքին քաղաքականության որոշ կողմերի, մոնղոլների հետ փոխհարաբերությունների լավ ըմբռնման համար:

Պեգոլոտտիի երթուղու ուղղության ճշգրտման և սկզբնաղբյուրների առավել մանրամասն և ուշադիր ուսումնասիրության հիման վրա, սկզբնաղբյուրներ, որոնք լուսաբանում են մոնղոլական դարաշրջանի առևտրական ճանապարհները և առևտուրն Արևելքում, կարելի է պնդել, որ այդ երթուղին եղել է Առաջավոր Ասիայի այդ ժամանակվա դեպի Միջերկրական ծով դուրս եկող գլխավոր առևտրական ճանապարհը:

Այլ երկրների հետ Այասի առևտրական կապերի, Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական փոխանակության մեջ նրա դերի մասին Մարկո Պոլոն տալիս է խիստ արժեքավոր մի վկայություն, որը կբերենք այնպես, ինչպես առաջ էր հասկացվում, ասենք, հիմա էլ դեռ թարգմանությունների մեծամասնության մեջ այդպես է հասկացվում: «Այնտեղ՝ ծովի ափին կա առևտրական մի քաղաք՝ Լյասը,– ասում է Պոլոն: – Ճիշտը որ ասենք, բոլոր համեմունքները և բոլոր գործվածքները եփրատից բերվում են այս քաղաքը, բոլոր թանկագին ապրանքները Վենետիկից, Ջենովայից բերվում են այստեղ և գնվում են այստեղից: Այստեղից դեպի Եփրատ են գնում և՛ վաճառականները և՛ ճանապարհորդները»[1]:

Մարկո Պոլոյի երկերի հայտնի հետազոտող Յուլը պնդում է, որ վերոհիշյալ տողերի ֆրանսերեն տեքստը հրատարակման ժամանակ աղավաղված է և որ Մարկո Պոլոյի ձեռագրում իրականում խոսվում է ոչ թե Եփրատի հետ Այասի առևտրական կապերի մասին, այլ՝ ներքին Ասիայի: Յուլի այս կարծիքին է նաև Հեյդը:

Բայց հարց է ծագում. ինչպիսի՞ն է եղել այդ ճանապարհի ուղղությունը: Հեյդը կարծում է, թե Հնդկաստանի համեմունքները Այաս էին մտնում Բաղդադով, Պորտելլայի լեռնանցքով[2]: Թեև նա արդարացիորեն նշում է, թե Այասի բարձրացումն սկսվել է XIII դարի 70-ական թվականներին, բայց սխալմամբ կարծում է, թե նավահանգստի զարգացումը այդ դարի վերջին տասնամյակներին պայմանավորված է եղել Սիրիայի հետ և Սիրիայի միջոցով՝ Պորտելլայով, նաև այլ հնարավոր երկրների հետ կատարվող առևտրով: Այդ ճանապարհով, նրա կարծիքով, Հնդկաստանի համեմունքները, ինչպես և Սիրիայի բամբակը և այլ ապրանքներ Այասով տարվում էին ոչ միայն Եվրոպա, այլև Կիլիկիայի միջով՝ Փոքր Ասիա[1]:

1288 թ. Ջենովայի ստացած արտոնագրի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Ջենովացի վաճառականները այդ ժամանակներում արդեն Հնդկաստանից համեմունքներ էին տանում Գուգլակի կապանով՝ Թավրիզ–Այաս ճանապարհով: Այդ փաստաթղթում կարդում ենք. «Այասում ու Գուգլակում վճարվող մաքսը թող լինի այսպիսին... ինդիգոյից և ներկաքիմիական ապրանքներից, բացառությամբ պղպեղի, զենջեֆիլի ու ներկերի, 25 նոր դրամ (նոր հատած թաքոլիններ) մեկ ուղտաբեռից, 19-ը՝ ջորեբեռից, 16-ը՝ իշաբեռից: Պղպեղից, զենջեֆիլից ու ներկերից՝ 20 նոր դրամ՝ մեկ ուղտաբեռից»[2]:

Չի կարելի հերքել այն փաստը, որ համեմունքները Կիլիկիա էին ներմուծում Պորտելլայով, ինչպես և այն փաստը, որ, մի կողմից՝ Այասի և Կիլիկիայի այլ քաղաքների, մյուս կողմից՝ Իկոնիայի միջև աշխույժ առևտուր է եղել: Բայց XIII դարի 70-ական թվականներից, երբ Իկոնիայի սուլթանությունը ենթարկվում էր Իրանի մոնղոլներին և Թավրիզը դարձել էր Առաջավոր Ասիայի քաղաքական ու տնտեսական կենտրոն, հարկ չկար Փոքր Ասիա համեմունքներ տանել շրջանցող ճանապարհով (Սիրիայով ու Կիլիկիայով), ինչպես ենթադրում է Հեյդը: Պետք է նկատի ունենալ և այն, որ Սիրիան արդեն գրավված էր մոնղոլների մշտական թշնամի մամլուքների կողմից:

Այասի և Թավրիզի միջև տեղի ունեցող առևտրի մասին, հետևաբար և Այաս–Թավրիզ առևտրական ճանապարհի մասին Հեյդը գրում է. «Այն դարաշրջանում, երբ Պեգոլոտտին ապրում էր Հայաստանում (1335), երկու քաղաքների միջև տեղի ունեցող առևտուրը պետք է որ լիովին աշխույժ լիներ»[3]: Բայց Հեյդը չի մատնանշում, թե երբ է սկսվել Այասի առևտուրը Թավրիզի հետ կամ երբ է այնքան կարևոր առևտրական ճանապարհը, ինչպիսին Այաս–Թավրիզն էր, սկսել զարգանալ: Կան անտարակուսելի փաստեր, որոնք վկայում են, որ այն արդեն որոշ նշանակություն է ձեռք բերել XIII դարի երեք ոչ 70-ական, ապա գոնե 80-ական թվականներին: Պետք է ենթադրել, որ

[1] **Марко Поло,** Путешествие, Ленинград, 1940, с. 17.

[2] Տե՛ս **W. Heyd,** Histoire du commerce du Levant, t. II, p. 85:

[1] Տե՛ս **W. Heyd,** Histoire du commerce du Levant, t. II, p. 85:

[2] **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 154.

[3] **W. Heyd,** Histoire du commerce du Levant, t. II, p. 78.

գանձվող մաքսի իջեցումը բացատրվում է արտոնյալ մաքսի միջոցով, Այասով այդ տեսակի համեմունքների տեղափոխումը խրախուսելու Կիլիկյան Հայաստանի ցանկությամբ:

Հայտնի է, որ Այասում ու Գուգլակում կային մաքսատներ, և պարզ է, որ Այասում մաքս էր գանձվում Եվրոպայից բերվող այն ապրանքներից, որոնք վաճառվում էին այստեղ կամ պետք է Գուգլակով տարվեին ուրիշ երկրներ և, ընդհակառակը, Գուգլակում մաքս էր գանձվում այն ապրանքներից, որոնք Կիլիկիա էին բերվում հետո Այասով Եվրոպա տանելու համար: Մաքսի ենթակա ապրանքների ցուցակից կարելի է եզրակացնել, որ դրանց մի մասը, օրինակ՝ եվրոպական գործվածքներն ու Սիրիայի բամբակը, Այասից տարվում էին Իկոնիա և, անկասկած, Թավրիզ, ինչպես վկայում է Մարկո Պոլոն[1]: Իսկ հնդկական համեմունքներն ավելի հարմար է եղել Իկոնիա տանել Թավրիզից և Իկոնիայով ու Գուգլակով՝ Այաս, այնուհետև՝ դեպի Եվրոպա, այլ ոչ թե հակառակը՝ Այասից Իկոնիա, ինչպես կարծում է Հեյդը:

Ներքոհիշյալ փաստերը վկայում են, որ ջենովացի վաճառականները Այաս–Կեսարիա–Սվազ–Երզնկա–Էրզրում–Թավրիզ երթուղուց օգտվել են XIV դարի սկզբին ևս: XIII դարի վերջին Ջենովական հանրապետությունը այս երթուղու (որով տանում էին Հնդկաստանից և Իրանից բերվող ապրանքները) կարևոր կետերից մեկում՝ Սվազում, ուներ իր հյուպատոսը: Մարկո Պոլոն Թավրիզի մասին, որով նա անցել էր եթե ոչ 1271 թ., ապա, անկասկած, 1293 թվին, գրում է. «Թորիսը լավ տեղում է. այստեղ ապրանքներ են բերում Հնդկաստանից, Բաղդադից, Կրեմոզորից և ուրիշ շատ տեղերից: Հենց այստեղ են օտարերկրյա ապրանքների համար գալիս հավաքվում լատինացի վաճառականները: Այստեղ վաճառվում են նաև թանկագին քարեր, և դրանք շատ են այստեղ[2]:

Հնդկաստանի համեմունքների մի մասը իտալացի վաճառականները Թավրիզից Եվրոպա էին տանում Տրապիզոնով, մյուս մասը՝ Այասով: Թեև Հնդկաստանի մթերքների զգալի մասը Եվրոպա էր տարվում Ալեքսանդրիայով, սակայն համեմունքների նուրբ տեսակները գերազանցապես Բաղդադով էին տարվում Թավրիզ հետևյալ պատճառներով. ցամաքային երկար ճանապարհի ծախսերը զգալիորեն չէին ազդում այդ թանկարժեք, բայց ըստ քաշի թեթև ապրանքների ինքնարժեքի վրա, երկրորդ՝ Ալեքսանդրիայում դրանց վրա շատ

[1] **Марко Поло,** Путешествие, Ленинград, 1940, с. 16.

[2] Նույն տեղում:

ավելի մեծ մաքս էր դրվում, քան մոնղոլների կայսրության մեջ ու Կիլիկիայում, երրորդ՝ գերազասում էին ցամաքային ճանապարհը՝ ծովով տեղափոխման հետևանքով այդ համեմունքների որակի վատացումից խուսափելու համար[1]:

Թավրիզից նուրբ տեսակի համեմունքները, ամենայն հավանականությամբ, մեծ մասամբ պետք է մտնեին Այաս, այլ ոչ թե Տրապիզոն, իսկ ապա՝ Եվրոպա, որովհետև ծովային ուղին Այասից Իտալիա ավելի կարճ էր, իսկ Կիլիկիայում մաքս ավելի քիչ էր վճարվում, քան Տրապիզոնով ու նեղուցներով անցկացնելիս:

Թեև Վենետիկի հանրապետությունը ուրիշներից առաջ և ավելի սերտ առևտրական հարաբերություններ էր հաստատել եգիպտոսի սուլթանության հետ և Ալեքսանդրիայից էր տանում հնդկական մթերքները, բայց միևնույն ժամանակ վենետիկցի վաճառականները Այասից էին գնում առավել գնահատելի ու նուրբ տեսակի համեմունքները: 1298 թ., օրինակ՝ վենետիկցի երկու վաճառականներ (Դը Թաթարոն՝ Մարկո մականունով, և Պաոլո Մորոզինին) Այասից գնել են վեց հակ բարձրորակ զենջեֆիլ[2]:

XIV դարի սկզբին Այաս–Թավրիզ քարավանային ճանապարհը, որը չարունակվում էր մինչև Հնդկաստան, անկասկած, արդեն մեծ նշանակություն էր ձեռք բերել և լավ հայտնի էր, ինչը երևում է Մարինո Սանուտոյի «Խաչակիրների գաղտնի գիրք՝ Սուրբ Երկրի նվաճման ու պահպանման վերաբերյալ» վերնագրով նշանավոր երկից: Հեղինակը իր երկի առաջին գրքում եվրոպացի վաճառականներին խորհուրդ էր տալիս Ալեքսանդրիայից չգնել հնդկական ապրանքներ և Հնդկաստան գնալու համար չօգտվել այդ ճանապարհից, այլ այն ճանապարհից, որն անցնում է Կիլիկիայով և Իրանի մոնղոլներին ենթակա տարածքով[3]:

XIV դարի սկզբին վենետիկցիներն սկսեցին առևտրական ուղևորություններ կատարել դեպի Թավրիզ: Այս մասին խոսվում է Վենետիկի ներկայացուցչի, վենետիկցի վաճառական Ջուստինիանիի և Լևոն V-ի միջև 1320 թ. կնքված պայմանագրում, որի կետերից մեկի համաձայն վենետիկցի վաճառականներին թույլատրվում էր ապրանքներ ձեռք բերելու համար մեկնել Թավրիզ ու Սիրիա[4]:

[1] Տե՛ս **Heyd,** Histoire du commerce du Levant, t. II, p. 78:

[2] Տե՛ս **W. Heyd,** Histoire du commerce du Levant, t. II, p. 76:

[3] Տե՛ս **Sanuto,** Liber secretorum fidelium crucis... Hanoviue, 1611, p. 6:

[4] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 182:

Մարկո Պոլոն, որը 1271 թ. եղել էր Այասում, նչում է այդ նավահանգստի, որպես Այաս–Թավրիզ ճանապարհի նման կետի մեծ դերը Եվրոպայի ու ներքին Ասիայի միջև տեղի ունեցող առևտրում: Յուլի կարծիքով, դեպի Չինաստան կատարած ճանապարհորդության ժամանակ Մարկո Պոլոն հոր և հորեղբոր հետ անցել է Այասից մինչև Երզնկա, իսկ հետո թեքվել դեպի Մուչ-Մարդին ու գնացել հասել Հորմուզ: Միջագետքը նկարագրելիս Մարկո Պոլոն թույլ է տվել մի չարք անճշտություններ, որոնք կասկած են հարուցում, թե նա անցել է այն երթուղով, որ Յուլն է նչում[1]: Կարելի է մի չարք փաստարկներ բերել հօգուտ այն բանի, որ վենետիկցի ճանապարհորդները 1271 թ. Չինաստան գնացել են մոտավորապես այն մայրուղով, որը 60 տարի հետո նկարագրել է Պեգոլոտին: Մարկո Պոլոն խոսում է Պեգոլոտիի երթուղու բոլոր հանգուցային կայարանների՝ Այասի (Լայաս), Կեսարիայի (Կասսարի), Սվազի (Սեբաստ), Երզնկայի (Արզինգա), Էրզրումի (Արգիրոն), Թավրիզի (Թորիս) մասին: Նա լավ տեղյակ է, թե Այաս–Թավրիզ ճանապարհի յուրաքանչյուր հանգուցային կայարան ինչ նշանակություն ունի միջազգային առևտրում: Մարկո Պոլոն այնպես է նկարագրում Հայաստանը, որ կասկած չկա, թե վենետիկցի ճանապարհորդները անցել են նրա տարածքը Երզնկայից Էրզրում, իսկ այդտեղից էլ Բագավանով և Ալաղաղի լեռնանցուղերով հասել Թավրիզ[2]: Հայաստանի մասին Մարկո Պոլոն գրում է. «Մեծ Հայքը մեծ երկիր է. այն սկսվում է Երզնկայի մոտից, որտեղ պատրաստվում է աշխարհի ամենալավ բոկարանը: Այնտեղ կան նաև հիանալի բազնիքներ և աշխարհի ամենալավ աղբյուրները»: Մի այլ տեղում նա ասում է. «Երկիրը (Հայաստանը – Գ. Մ.) մեծ է և ամռանը, ասեմ ձեզ, այստեղ են գալիս արևմտյան թաթարների բազմություններ, որովհետև ամբողջ ամառ այստեղ լայնարձակ արոտավայրեր կան անասունների համար, և թաթարներն այնտեղ իրենց նախիրներով ապրում են ամռանը, իսկ ձմռանը նրանք չկան, անասունը չի տանում խիստ ցուրտն ու ձյունը, և ձմռանը թաթարները հեռանում են այնտեղ, որտեղ տաք է, խոտ կա և արոտավայր անասունի համար»[1]: Այս նկարագրությունից երևում է, որ խոսքը, հավանաբար, վերաբերում է Հուլավյանների արոտավայրերին: Հայկական և մուսուլմանական աղբյուրները[2] վկայում են, որ Հուլավյանների ամառային կայանատեղը լեռներով չրջապատված Ալաղաղն է եղել, որը Բագավանի ու Դիադինի[3] հարավում էր, այսինքն՝ հենց Էրզրում–Թավրիզ ճանապարհին, որն անցնում էր Ուչ-Քիլիսայով: Ալաղաղի ամառային արոտավայրերը Մարկո Պոլոն կարող էր տեսնել նաև 1293 թվին՝ վերադարձի ճանապարհին, որը, ինչպես հայտնի է, նա անցել է Թավրիզ–Էրզրում–Տրապիզոն երթուղով:

Այսպիսով, այս փաստարկները խոսում են հօգուտ այն բանի, որ վենետիկցի ճանապարհորդները՝ Պոլո եղբայրներն ու երիտասարդ Մարկոն, Չինաստան են մեկնել Այաս–Էրզրում–Թավրիզ ճանապարհով: Այստեղից կարելի է եզրակացնել նաև, որ Այաս–Թավրիզ առևտրական ճանապարհը դեռևս մինչև Պեգոլոտիի կողմից այն նկարագրելը գոյություն է ունեցել:

Մարկո Պոլոն մեզ հայտնի եվրոպացի ճանապարհորդներից և հեղինակներից առաջինն է եղել, որը նկատել ու գնահատել է Այասի ու Թավրիզի՝ Այաս–Թավրիզ առևտրական ճանապարհի վերջնակետերի մեծ դերը միջազգային առևտրում: Ուրևմն Պեգոլոտիից կես դար առաջ Մարկո Պոլոն գիտեր այդ ճանապարհի առևտրական նշա-

[1] Ուշադրության արժանի է Կ. Ի. Կունինի արտահայտությունը (Марко Поло, Путешествие, с. VIII), թե «Պոլոյի ճանապարհը հիմա Ակրա ամրոցից անցնում էր Կեսարիայով, Սվազով, Երզնկայով դեպի Փոքր Ասիա և Պարսկաստանի քաղաքները՝ Թավրիզ, Սավա, Եզդ, Քերման ու հասնում Պարսից ծոցի Հորմուզի նավահանգիստը, բայց, ցավոք, նա փաստարկներ չի բերում այս պնդումը հիմնավորելու համար:

[2] Ջ. Բեյքերը («История геогр. открытий», М., 1950, с. 55) Մարկո Պոլոյի, նրա հոր ու հորեղբոր Առաջավոր Ասիայով անցած երթուղու մասին գրում է. «Մեր ճանապարհորդները Ակրայից ճանապարհվել են դեպի հյուսիս՝ Հայաստանով, չրջանցել են Վանա լճի հյուսիսային ծայրը և Թավրիզով ու Եզդով հասել են Հորմուզ»: Երթուղու այս տարբերակը, որով անցած լինեն նրանք, նույնպես հնարավոր է, քանի որ կար Էրզրում–Մնուս–Մանազկերտ–Արճեշ–Թավրիզ ճանապարհը: Տվյալ դեպքում նրանք դարձյալ գնացել են այն ճանապարհով, որը անցնում է Ալաղաղի հարավով:

[1] **Марко Поло,** Путешествие, Ленинград, 1940, с. 21.

[2] Հուլավյանների այս նստավայրի մասին Վարդան Մեծր գրում է (Պատմութիւն տիեզերական, էջ 151). «Դարձաւ Հուլաւուն (1259 թ. դեպի Սիրիա կատարած արշավանքից – Գ. Մ.) յիջևանս ի ձմերոցն ի դաշտն Մուղանա և ի կայս ամարայնի ի Դաւին գաւառ կոչեցեալն, կամ բուռ այլոց ի Դարան դաշտ»: Շեյխ Ուվեյսի պատմության մեջ (Тизенгаузен, Сб. мат., т. II, с. 90) ասված է. «Այն ժամանակ (Հուլավու խանի օրոք) կար այսպիսի սովորույթ. մի քանի էմիրներ, արքայազուններ և Բերկե խանի զորակար այսպիսի սովորույթ. մի քանի էմիրներ, արքայազուններ և Բերկե խանի զորականները ամառանոց էին գալիս Ադվանք, իլխաններն էլ ձմեռն անց էին կացնում Զաբադաթում, իսկ ամռանը՝ Այաղաղում»: Իլխանների ամառային կայանավայրը Այաղաղում, ինչպես և ձմեռանոցը Մուղանի տափաստանում շատ էին գնահատվում նրանց կողմից՝ չնորհիվ արոտավայրերի առկայության, որոնք անհրաժեշտ էին մոնղոլական հեծելազորի համար:

[3] Տե՛ս **Я. А. Манандян,** О торговле и городах Армении, 1939, Եր., էջ 207:

նակության մասին, գիտեր միջազգային առևտրի կենտրոնների մասին, Այասի մասին, որտեղ բերվում էին «բոլոր համեմունքներն ու բոլոր գործվածքները Ասիայից, բոլոր թանկարժեք ապրանքները Վենետիկից ու Ջենովայից», և Թավրիզի մասին, «որտեղ իրար էին հանդիպում լատինացի վաճառականները»[1]:

Այն, որ այդ ճանապարհը որոշ նշանակություն էր ձեռք բերել XIII դարի 70-ական թվերին, մենք գիտենք նաև այլ փաստերից: 1274 թ. նոտարական-առևտրական մի փաստաթղթից հայտնի է, որ Այասը կապված է եղել Սվազի հետ: Նոտարական արձանագրության մեջ, որը կազմվել է Ջենովացի նոտարիուսի կողմից 1280 թվի մայիսի 18-ին Սվազում, ասվում է, որ զբաղեցված գումարը պարտապանի կողմից պետք է վերադարձվի Սվազում կամ Թավրիզում:

Բացի Թավրիզ–Բյուրիրքյոյ–Էրզրում և Թավրիզ–Արճեշ–Էրզրում ճանապարհներից, որոնք դուրս էին գալիս Տրապիզոն, գոյություն ունեին նաև Առաջավոր Ասիայի այլ երկրորդական ճանապարհներ, որոնք այս կամ այն չափով կապված էին Թավրիզ–Այաս գլխավոր քարավանային մայրուղու հետ: 1280 թ. փաստաթղթերից մենք կիմանանք այն զրամական գործառությունների մասին, որ կատարել են Սվազ, Երզնկա, Նախիջևան ու Թավրիզ այցելող ջենովացիները[2]: Այսպիսով, վերոհիշյալ փաստաթղթերը վկայում են, որ Հայաստանի արևմտյան, կենտրոնական, ինչպես և հարավային շրջանները, որոնք գտնվում էին Արաքսի հովտում, սահմանակից էին Իրանին և այն ժամանակ տնտեսական առումով հակված էին դեպի Թավրիզը, Պեգոլոտտիի երթուղու հանգուցային կետերով կապված են եղել Այաս–Թավրիզ քարավանային մայրուղու հետ:

Այասը Սվազի և սեծովյան նավահանգիստների միջոցով կապ էր պահպանում Ղրիմի հետ[3]: Սվազից կար նաև դեպի Սինոպ գնացող ճյուղավորում: Պեգոլոտտիի երթուղին ճյուղավորվում էր Կարինում (Էրզրում), որտեղից Բարբրդով (Բայբուրթ) ճանապարհը գնում էր դեպի Տրապիզոն: Այսպիսով, ստեղծվում էր Այաս–Տրապիզոն ուղին, որը Միջերկրական ծովը կապում էր Սև ծովի հետ: Թավրիզ–Տրապիզոն ճանապարհն էլ մրցակցում էր Թավրիզ–Այաս ճանապարհի հետ, իսկ Տրապիզոնի նավահանգիստը մրցակցում էր Այասի հետ:

Կիլիկյան Հայաստանը Դերբենդի լեռնանցքով առևտրական կապեր ուներ Ոսկե Հորդային ենթակա մարզերի, ինչպես և՝ կենտրոնական Ասիայի հետ: Այս ճանապարհով 1254–1255 թթ. Կեսարիա–Երզնկա–Կարս–Դերբենդ լեռնանցքով և Ոսկե Հորդայով Մանգու խանի մոտ իր ուղևորությունն է կատարել Հեթում Թագավորը: Ինչպես հայտնի է, Սարայ, Դերբենդ, Շամախի, Նախիջևան, Անի, Երզրում, Երզնկա, Սվազ, Կեսարիա, Այաս ճանապարհով է Ռուբրուկը վերադարձել մեծ խանի մոտ կատարած իր ճանապարհորդությունից:

Գուգլակով, իսկ այնուհետև Կեսարիա, Կոնիա և այլ կետերով էր անցնում այն առևտրական ճանապարհը, որը գալիս էր Սիրիայից, ինչպես և Այասից ու գնում դեպի Կոստանդնուպոլիս: Կեսարիայի միջոցով այդ ճանապարհը կապված էր Պեգոլոտտիի նկարագրած մայրուղու հետ: 1285 թ. խաղաղության պայմանագրում, կնքված Կիլիկյան Հայաստանի ու Եգիպտոսի սուլթանության միջև, արժեքավոր վկայություն կա այն մասին, որ Առաջավոր Ասիայի ճանապարհների չարունակվում էին մամլուքյան սուլթաններին ենթակա տարածքներում: «Հայոց Թագավորը (Կիլիկիայի),– ասվում է պայմանագրում,– պարտավորվում է թույլ տալ ճանապարհն անցնելու յուրաքանչյուր վաճառական-ճանապարհորդի և ամեն խավի մարդկանց, Ռումից, Արևելքի երկրներից, Արևմուտքից, Իրաքից, Բաղդադից, Պարսկաստանից և այլ երկրներից եկողին և Հայաստանի (Կիլիկիայի) տարածքը մտնողին, որպեսզի այդտեղից ուղևորվի դեպի Եգիպտոսի սուլթանության պետությունը»[1]:

Այս պայմանագրում թվարկված երկրների մեծ մասը առևտրական կապ ուներ Եգիպտոսի հետ Կիլիկիայի միջոցով, գլխավորապես Այաս–Թավրիզ ճանապարհով: Կիլիկիայով վաճառականների անարգել անցնելու մասին պայմանագրում եղած պահանջը ցույց է տալիս, որ այդ ճանապարհը, ըստ երևույթին, բավականին կարևոր նշանակություն է ունեցել Եվրոպայի համար: Այս առավել երկար, չրջանցիկ ճանապարհը, որ Առաջավոր Ասիայի երկրներից Կիլիկիայի միջով անցնում էր Սիրիա ու Եգիպտոս, այդպիսի նշանակություն էր ձեռք բերել, հավանաբար, նրա համար, որ մոնղոլների ու մամլուքների միջև տեղի ունեցող համարյա անընդմեջ պատերազմների պատճառով չատ դժվարացել էր երթուղարձը այն ուղիներով, որոնք անցնում էին Եփրատով դեպի Սիրիա ու Եգիպտոս:

Առաջավոր Ասիայի առևտրական ճանապարհների ուղղությունների փոփոխությունը նշանակալի չափով պայմանավորված էր մոնղոլների նվաճումներով և Եգիպտոսի սուլթանության ու Ոսկե Հորդայի դեմ Հուլավյանների պայքարով:

[1] **Марко Поло,** Путешествие, Ленинград, 1940, с. 21.

[2] Տե՛ս **Bratianou,** Recherches sur le commerce Génouis... p. 314:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 223:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը[1], պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկին[2] և ուրիշ հետազոտողներ ճշտորեն նշում են, որ XIII–XIV դարերում մոնղոլների նվաճման և Հուլավուի կողմից Սիրիան գրավելու անհաջող փորձերի հետևանքով հյուսիսային քարավանային ուղիները, որոնք դուրս էին գալիս դեպի Սև ծովի նավահանգիստները՝ Տրապիզոն, Թանա և Կաֆա, ավելի մեծ նշանակություն էին ձեռք բերել, քան հարավայինները (Պարսից ծոցից դեպի Սիրիայի նավահանգիստները): Սակայն պակաս կարևոր նշանակություն չէին ստացել նաև Թավրիզ–Այաս քարավանային ճանապարհը և Զինաստանից ու Հնդկաստանից դեպի Իրանի ու Եգիպտոսի ափերը տանող ծովային ուղիները:

Այսպիսով, Բաղդադի անկումից հետո իրենց նշանակությունը կորցրին դեպի սիրիական նավահանգիստները հասնող հարավային ուղիները, և սկսեց զարգանալ Թավրիզ–Այաս քարավանային ճանապարհը, որն անցնում էր Հուլավյաններին ենթակա տարածքով և դուրս գալիս դեպի Կիլիկիա ու Միջերկրական ծով: Թավրիզ–Այաս ճանապարհի զարգացման հետ սկսեցին զարգանալ նաև Զինաստանից դեպի Պարսից ծոց տանող (այսինքն՝ դարձյալ դեպի Հուլավյանների տիրույթները), ինչպես և Հնդկաստանից Կարմիր ծով՝ դեպի Եգիպտոսի ափերը տանող ծովային ուղիները, այդտեղից էլ ցամաքով դեպի Ալեքսանդրիա տանող ճանապարհը:

Անհրաժեշտ է նշել ջենովացիների և իլխանների կողմից Զինաստանից ու Հնդկաստանից դեպի Պարսից ծոց տանող ծովային ուղին ավելի լայնորեն օգտագործելու փորձը:

Մոնղոլական կայսրությունը իր գոյության նույնիսկ առաջին շրջանում լիովին կենտրոնացված պետություն չէր: Իսկ ուլուսների, առանձին պետությունների բաժանվելուց հետո մեծ խանի իշխանությունը ավելի ու ավելի անվանական էր դառնում: Մեծ խանները չէին կարողանում վերացնել Ջուչյանների և Հուլավյանների միջև կամ վերջիններիս ու Ջաղաթայների միջև տեղի ունեցող երկպառակտչական պատերազմները: XIII դարի երկրորդ կեսին, հատկապես վերջերին, չկար միասնական իշխանություն քարավանային ուղիների նկատմամբ, որոնք անցնում էին արդեն բավականին ապակենտրոնացված Մոնղոլական կայսրության տարբեր ուղղություններով: Քարավանային առևտուրը դժվարանում էր ուլուսների միջև հաճախ տեղի ունեցող պատերազմներից, որոնք մասամբ պայմանավորված

[1] Տե՛ս **Я. А. Манандян**, О торговле и городах Армении, с. 194:

[2] Տե՛ս Известия АН, Отд. общ. наук, № 4, 1937, с 912:

էին լինում առևտրական ճանապարհներին տիրելու համար մղվող պայքարով: Եվրոպայի ու Ասիայի միջև առևտրական փոխանակության աճը և ցամաքային ճանապարհների դժվարությունները Եվրոպացի ու արևվելցի ձեռներեց վաճառականներին մղում էին ծովային ուղի հաստատել Եվրոպայի ու Ասիայի միջև:

Դրանում, հավանաբար, չահագրգռված էին Խուբիլայը և, անկասկած, Հուլավյանները: Գուցե պատահական չէ, որ Պոլո եղբայրները, որոնք արդեն եղել էին Զինաստանում և Խուբիլայի հանձնարարությամբ չրջել Եվրոպայում, դեպի Զինաստան կատարած իրենց երրորդ ճանապարհորդությունը (Մարկո Պոլոյի հետ) փորձում էին կատարել ծովային ուղով: Է՛լ ավելի ուշագրավ է այն, որ Մարկո Պոլոն Զինաստանից վերադարձել է ծովային ուղով՝ Պարսից ծոցով և Հուլավյանների տարածքով, ինչին ամենից շատ բարեհաճ վերաբերմունք է ցույց տվել Խուբիլայը, որը նրան հանձնարարել է իր հետ տանել Իրանի իլխանի համար նախատեսված մի հարսնացուի:

Հատկապես զարգացավ Հնդկաստանից Պարսից ծոց ու Կարմիր ծով տանող ծովային ճանապարհը: Ալեքսանդրիան մեծ նշանակություն ձեռք բերեց Հնդկաստանից Եվրոպա համեմունքներ տեղափոխելու գործում: Այս նավահանգստից սկսեցին օգտվել վենետիկցիները: Սրանց մրցակից ջենովացիները, ընդհակառակը, ավելի հաստատ հիմնավորվեցին Թավրիզում: XIII դարի վերջին զավթելով Սև ծովի առևտուրը՝ նրանք ծրագրեր էին մշակում իրենց առևտրական տիրապետությունը հաստատելու նաև Հնդկական օվկիանոսում: Իրանի հարավում ծովային հենակետ ստեղծելու նախագծի մասին է պատմում մի չատ իրագեկ անձ՝ Սուլթանիեի կաթոլիկ եպիսկոպոսը: Ջենովան Արղուն խանին առաջարկել է Պարսից ծոցի ափին կառուցել մի նավահանգիստ և դրա միջոցով կատարել Հնդկաստանի հետ կատարվող ամբողջ ծովային առևտուրը: Որպեսզի Հնդկաստանի մըթերքները Իրանով Եվրոպա տանելու մենաշնորհը նվաճեին, նախատեսվում էր Հուլավյանների պետության ու Ջենովայի հանրապետության համատեղ ուժերով Ադենում պահել պահակային նավեր, որոնք պետք է փակեին Կարմիր ծով մտնող վաճառականական նավերի ճանապարհը: Այս նախագծի իրականացմանը խանգարեց գվելֆյանների ու գիբելինների կուսակցությունների պայքարը Զենովայում[1]: Այս նախագծի հաջող իրականացումը կարող էր վերջ տալ Հնդկաստանից Եգիպտոս ապրանքների փոխադրումը և ոչնչացնել Ալեքսանդրիայում կատարվող համեմունքների առևտուրը: Ջենովա-

[1] Documents arméniens, t. II, p. 551.

յին չհաջողվեց փակել Կարմիր ծովի մուտքը և հարված հասցնել իր առևտրական մրցակից Վենետիկին, որն առևտրական մեծ արտոնություններ ուներ Եգիպտոսի սուլթանությունում Ալեքսանդրիայից համեմունքների արտահանության գծով: Դրանց հետո է՛լ ավելի բարձրացավ Ջենովացի վաճառականների հետաքրքրությունը Տրապիզոնի և Այասի նավահանգիստների նկատմամբ, որոնք հարմար ուղիներով կապված էին Թավրիզի հետ, որը Հնդկաստանից համեմունքներ էր ստանում և այլ մթերքներ:

Քանի որ Հուլավյաններին չհաջողվեց գրավել Սիրիան ու փակել Եգիպտոս գնացող նավերի ճանապարհը, ապա նրանք առավել ևս չահագրգռված էին Թավրիզ–Այաս ճանապարհով, որպեսզի ելք ունենային դեպի Միջերկրական ծով Կիլիկյան Հայաստանով, Այասի նավահանգստով: Այասի և Ալեքսանդրիայի բուռն զարգացումն սկսվեց Բաղդադի խալիֆայության անկումից (1258) և Իրանում մոնղոլների պետության կազմավորումից հետո, երբ Հուլավու խանը մայրաքաղաքը Բաղդադից տեղափոխեց Թավրիզ: Սիրիայում մոնղոլների պարտությունից (1260) և մամլուքների կողմից Սիրիայի ու Անտիոքի իշխանապետության նավահանգիստների գրավումից հետո (1268) մոնղոլների ձեռքին մնացին առևտրական ուղիների այնպիսի հին ու կարևորագույն կենտրոններ, ինչպիսիք էին Բաղդադը և Բասրան, այնուհետև դրանց իրենց զարգացմամբ կանխող նոր կենտրոններ Թավրիզը, Սուլթանիեն, Հորմուզը և այլն, իսկ Միջագետքով ու Սիրիայով անցնող ճանապարհների սիրիական նավահանգիստները ընկան Եգիպտոսի մամլուքյան սուլթանների ձեռքը:

Հետաքրքիր է նշել, որ այս իրադարձություններից և Լատինական կայսրության անկումից (1261) հետո աճեց Վենետիկի հետաքրքրությունը Այասի և Ալեքսանդրիայի նկատմամբ, քանի որ վենետիկցի վաճառականների համար դժվարացել էր դեպի Սև ծով մուտք գործելը:

XIII–XIV դարերի արևմտյան և արևելյան հեղինակների վկայությամբ, Այասն այն ժամանակ համաշխարհային առևտրի սակավաթիվ կարևորագույն կենտրոններից մեկն էր Արևելքում: XIX դարի գիտնականներից դրան մեծ նշանակություն են տալիս Հեյդը, Դյուրիեն ու Լանգլուան: Ճիշտ չէ Դյուրիեի պնդումն այն մասին, թե Այասը իր զարգացմամբ և Եվրոպայի ու Ասիայի առևտրական փոխանակության մեջ իր նշանակալի դերով պարտական է խաչակրաց արշավանքներին[1]: Ընդհակառակը, դրա զարգացումը սկսվեց խա-

[1] Տե՛ս Documents arméniens, t. I, introduction:

չակիրների պարտությունից հետո, ուժեղացավ Այաս–Թավրիզ ճանապարհի դարգացման հետ և իր բարձրակետին հասավ XIV դարի սկզբին:

Արաբ աշխարհագետ-պատմիչ Աբուլֆեդան իր «Աշխարհագրություն» երկում գրում է. «Այն պահից, երբ մուսուլմանները ետ վերցրին ծովափնյա քաղաքներ Տրիպոլին, Ակրան և այլն, ֆրանկները չատ հազվադեպ են կառանում Սիրիայի նավահանգիստներում, որոնք մուսուլմանների ձեռքին են, և նրանք՝ ֆրանկները, նետվեցին դեպի Այաս, որը պատկանում է քրիստոնյաներին: Ուստի այս քաղաքը դարձավ նշանավոր նավահանգիստ և ծովային ու ցամաքային վաճառականների հանդիպման վայր»[1]: Աբուլֆեդայի այս հաղորդումը ճիշտ է այն առումով, որ ցույց է տվել Այասի բարձրացման հիմնական պատճառը: Սակայն պետք է նկատել, որ կան բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ Այաս նավահանգստի բարձրացման սկիզբը պետք է տանել չատ ավելի առաջ, քան Ակրայի անկումը: Ինչպես հայտնի է, դեռևս Մարկո Պոլոն, որը Բաղդադի և Լատինական կայսրության անկումից մի քանի տարի անց այցելել է Այաս, վկայում է Վենետիկի, Ջենովայի և ներքին Ասիայի հետ դրա ունեցած լայն առևտրական կապերի մասին: 1271 թ. Վենետիկի արտոնագրի մեջ ասվում է, թե վենետիկցիների համար Այասում տեղ է տրվում նկղեցի կառուցելու համար[2], իսկ դա նշանակում է, որ հենց այդ տարին, երբ Մարկո Պոլոն այցելել է այս քաղաքը, այստեղ արդեն վենետիկցիների այնպիսի նշանակալի գաղութ է եղել, որ անհրաժեշտություն է զգացվել նկղեցի կառուցելու: Դեռ Ակրայի անկումից առաջ Այասը եղել է անդրծովյան առևտրի մի նշանակալի կենտրոն, որտեղ վենետիկցիները և եվրոպացի այլ վաճառականներ կատարում էին մեծածավալ ապրանքների գնումներ: Վենետիկի Մեծ խորհուրդը 1283 թ. որոշում է կայացրել Այասում հիմնելու բամբակի, բրդի և պղպեղի գնման առևտրական ընկերություն: Այդ առևտրական ընկերության մասնակիցը պետք է այդ ձեռնարկության մեջ ներդներ 200 բյուզանտ[3]:

Այասն իր բարձրացման առաջին շրջանում ավելի չատ նշանակություն է ունեցել վենետիկցիների, քան այլ եվրոպացի վաճառականների համար, ի թիվս որոնց և իրենց մրցակից Ջենովացիների: Ուշագրավ է այն փաստը, որ հենց 1261 թ. Լատինական կայսրության

[1] Géographie d' Aboulféda, P., 1848, t. II, p. 27.

[2] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 152:

[3] **Ալիշան,** Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 51:

անկման տարում, Վենետիկը նոր համաձայնագիր է կնքել Կիլիկյան Հայաստանի հետ, որտեղ հիշատակվում է Այաս նավահանգիստը, որի անունը առաջին պայմանագրում չի հանդիպում[1]: Մինչ վենետիկցիները 1271 թ. ստացան նոր արտոնություններ, Ջենովան երկարատև ընդմիջումից հետո (1216 թվից) 1288 թ. կնքեց նոր առևտրական պայմանագիր, որը պարունակում է Այասով ու Գուգլակով բերվող ապրանքների ցուցակը: Ինչպես արդեն մատնանշվել է, դա ապացույցն է Այասի բարձրացման՝ կապված Այաս–Թավրիզ ճանապարհի զարգացման հետ: 1288 թ. պայմանագրում թվարկված ապրանքների տեսականին չատ է հիշեցնում ցուցակն այն ապրանքների, որ բերում է Պեգոլոտին. «Այասում կա չատ զարգացած առևտուր,– գրում է նա,– քանի որ այն գտնվում է ծովափին և այնտեղ ապրում են մըշտարնակ վաճառականներ»[2]: Այնուհետև թվարկում է հետևյալ ապրանքները, որոնք վաճառվում ու գնվում էին Այասում՝ պղպեղ, զնջվնփիլ, դարչին, չաբար, խոտնկ, կնդրուկ, ներկեր, լաք, կարմիր խեժ, բամբակ, երկաթ, պղինձ, արճիճ և այլն: Այլ աղբյուրներից հայտնի է, որ Այասի չուկայի ապրանքների անվանացուցակը չատ ավելի ընդարձակ է եղել: Ըստ ժամանակակից գրողներ Աբուլֆեդայի և Սանուտոյի վկայության, Այասը մեծ ու լավ ամրացված քաղաք է եղել: «Այասը մեծ քաղաք է,– գրում է Աբուլֆեդան,– ունի գեղեցիկ նավահանգիստ, որն սպասարկում է բոլոր երկրներին: Դրա պաշտպանության համար ֆրանկները ծովի վրա կառուցել են ամրոցի նման մի բան»[3]: Մարինո Սանուտոյի նկարագրության համաձայն Այասի դիմաց մի կղզի կար, որի վրա ամրոց էր կառուցված: Քաղաքի բերդը ծովասպատնեչի միջոցով հաղորդակցություն է ունեցել կղզու հետ: Ֆրանսիացի գիտնական Վիկտոր Լանգլուան, որը 1853 թ. ճանապարհորդել է Կիլիկիայում, Այասի մասին գրում է. «Այասի ավերակները լայնարձակ տարածություն են բռնում, և դատելով չինությունների մնացորդներից ու ամեն կարգի բեկորներից, որոնք սփռված են գետնին, այս քաղաքը պետք է որ նշանավոր եղած լինի միջին դարերում»[4]:

Անհրաժեշտ է նշել, որ XIII–XIV դարերում Այասը գլխավոր այն նավահանգիստներից մեկն է եղել, որտեղից արևմտյան ճանապարհորդները և վաճառականները իրենց ուղևորություններն են կատարել դեպի Ասիայի խորքը և այնտեղից սովորաբար այս նավահանգստով են վերադարձել Եվրոպա: Իրոք, Այասով են Եվրոպա վերադարձել XIII դարի նշանավոր ճանապարհորդներ Ռուբրուկը և Պոլո եղբայրները: 1271 թ. այդ վենետիկցիները Այասն են ընտրել որպես մեկնման կետ դեպի Չինաստան իրենց երկրորդ ճանապարհորդության համար: Այս նավահանգիստը և Այաս–Թավրիզ առևտրական ուղին էին իրենց հայրենակիցներին հանձնարարում Սանուտոն ու Պեգոլոտին (Ալեքսանդրիայի փոխարեն):

Այասը եղել է Կիլիկյան Հայաստանի խոշոր նավահանգիստը և առևտրաարդյունաբերական կենտրոնը, XIII–XIV դարերի կարևորագույն նավահանգիստներից մեկը, որի միջոցով էր տեղի ունենում Արևելքի և Արևմուտքի առևտրական փոխանակությունը: Այն մի աչքսւյժ չուկա և արևելյան ապրանքների պահեստավայր էր, որոնց ետևից գալիս էին եվրոպացի վաճառականները: Այն ժամանակվա միջազգային առևտրում Այասի նավահանգիստը զգալի դեր էր խաղում: Այս նավահանգստով բերվում էին հացահատիկ, եվրոպական գործվածքներ և տարվում էին թանկարժեք քարեր, մետաքս, մահուդ, համեմունքներ, բուրավետ նյութեր, ներկեր, մետաղներ, բամբակ, չաբար և այլ ապրանքներ:

Ցավալի է, որ Մարկո Պոլոյի երկերի հրատարակության (Կ. Ի. Կունինի խմբագրությամբ) մեկնաբանություններում Այասի մասին տրվում է հետևյալ աղճատված պատկերացումը. «Լայաս–Այաս – միջնադարյան քաղաք Փոքր Ասիայում, Սկանդերունի ծոցում, XII–XIV դարերում եղել է վենետիկցիների խոշոր գաղութային առևտրավան»[1]: Կիլիկիայի հայկական պետության խոշոր ծովափնյա քաղաքը՝ XIII–XIV դարերի միջազգային առևտրի կարևորագույն նավահանգիստներից մեկը, սխալ կերպով դիտվում է որպես վենետիկցիների առևտրավան:

Վ. Շկլովսկու «Մարկո Պոլո» գրքում Կիլիկյան Հայաստանին վերաբերող չատ խեղաթյուրումներ կան: Այդ գրքում կարդում ենք. «Կիլիկիան բաժանվել էր իտալացի վաճառականների միջև (1082)» կամ «Հայաստանի առևտրական նշանակությունն ընկավ 1268 թ. խաչակիրների անհաջողությունների կապակցությամբ»[2]: Իսկ իրականում տեղի է ունեցել հակառակը: Հենց խաչակիրների անհաջողությունների պահից սկսվում է Կիլիկյան Հայաստանի առևտրի դերի բարձրացումը:

[1] **Ալիշան,** Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 51:

[2] **Pegolotti,** La pratica della mercatura, 1936, p. 59.

[3] Géographie d' Aboulféda, Guyard, P., 1848, t. II, p. II, p. 27.

[4] **V. Langlois,** Le voyage dans le Cilicia, p. 429.

[1] **Марко Поло,** Путешествие, Ленинград, 1940, с. 278.

[2] **В. Шкловский,** Марко Поло, с. 338.

Եթե մոնղոլ իլխանները տասնյակ տարիներ ձգտում էին նվաճել սիրիական նավահանգիստները կամ մտադրվում էին արգելափակել դեպի Եգիպտոս տանող ծովային ճանապարհը՝ փակելով Կարմիր ծովի մուտքը, որպեսզի հարված հասցնեին Ալեքսանդրիային, ապա մամլուքյան սուլթանները իրենց արտաքին քաղաքականության գլխավոր նպատակը տեսնում էին նրանում, որ Իրանի մոնղոլներին խանգարեին Սիրիայով դեպի Միջերկրական ծով դուրս գալ, և ձգտում էին զավթել Այասը, որպեսզի փակեին Թավրիզ–Այաս գլխավոր քարավանային մայրուղու ելքը: Սանուտոն վկայում է, թե մամլուքները ցանկանում էին ասիական առևտրի մեծ ճանապարհի ուղղությունը փոխել այնպես, որ այն անցներ իրենց տարածքով:

Հայտնի է Եգիպտոսի սուլթանության ու Ոսկե Հորդայի միջև տեղի ունեցած ընդարձակ դիվանագիտական գրագրությունը նրանց ռազմական միության և Հուլավյանների պետության դեմ համատեղ գործողությունների վերաբերյալ: Ինչպես ևնթադրում է Ի. Պ. Պետրուշևսկին. «Անդրկովկասին տիրելու համար Իրանի Հուլավյանների և Ոսկե Հորդայի Ջուչյանների միջև տեղի ունեցող պայքարը ոչ պակաս չափով եղել է պայքար նաև Եվրոպայի հետ քարավանային առևտրի Անդրկովկասով անցնող ճանապարհների տիրելու համար»[1]: Ջուչյաններն էլ են չահագրգռված եղել, որ Հուլավյանները չտիրեին Սիրիայի նավահանգիստներին, քանզի այնժամ անմիջական առևտրական հարաբերություններ կհաստատվեին Եվրոպայի և այն երկրների միջև, որոնք ևնթակա էին Իրանի իլխաններին, ինչը կարող էր մասամբ թուլացնել առևտրական այն ուղիների նշանակությունը, որոնք կտրում անցնում էին Ոսկե Հորդայի տարածքը և դուրս գալիս Սև ծով: Հիշենք Բևրկևի խորհուրդը Բևյբարսին՝ արգելափակել Հուլավուի զորքերի ճանապարհը դեպի Եփրատ, ինչը և հաջողվեց Ջուչյաններին: Ջնայած Եգիպտոսի սուլթանության դեմ Սիրիայի համար մղած տևական պայքարին՝ Հուլավյաններին չհաջողվեց տիրել դեպի սիրիական նավահանգիստները տանող հարավային ճանապարհնեը: Սակայն գոյություն ուներ Այաս–Թավրիզ ճանապարհը, որը մոնղոլներին ելք էր տալիս դեպի Միջերկրական ծով:

XIII դարի երկրորդ կեսից մինչև XIV դարի կեսերը Եգիպտոսի սուլթանության մամլուք զորքերը չատ անգամ են կողոպտել Այասը, իսկ 1335 թ. գրավեցին և սկզբում մի քանի տարով, իսկ ապա առհավետ փակեցին այդ կարևոր նավահանգիստն ու վերոհիշյալ ճանապարհը:

[1] Изв. АН, Отд. общ. наук, № 4, 1937, с. 912.

Երկու հարևան պետությունների թշնամական հարաբերությունների սրությունն ու լարվածությունը պայմանավորված էին նրանով, որ Այաս–Թավրիզ քարավանային ճանապարհը մրցակիցն էր Հընդկաստան–Կարմիր ծով ծովային ուղու, իսկ Այասի նավահանգիստը մրցակցում էր Ալեքսանդրիայի հետ Հնդկաստանից Եվրոպա մթերքների փոխադրման գործում:

Կիլիկիայի հայկական պետության մասնակցությունն ու դերը միջադարային առևտրին մեծանում է XIII դարի երկրորդ կեսից՝ Բաղդադը մոնղոլների կողմից գրավվելուց (1258) հետո, խաչակիրների պետության անկումից, սիրիական նավահանգիստները Եգիպտոսի սուլթանության իշխանության տակ անցնելուց և մոնղոլների կողմից Սիրիայով դեպի Միջերկրական ծով դուրս գալու անհաջող փորձերից հետո: Սրա հետ կապված՝ մեծանում է Կիլիկիայի հայկական պետության տարանցման նշանակությունը Արևելքի հետ եվրոպացի վաճառականների՝ Այասի միջոցով կատարվող առևտրի մեջ: Մեծանում է նաև զանազան ապրանքների, գյուղատնտեսական մթերքների և հումքի արտահանումը Կիլիկիայից: Մեկ հարյուրամյակ Կիլիկյան Հայաստանի մասնակցությունն ու դերը համաշխարհային առևտրում չատ նշանակալից է եղել:

Եվրոպայում Արևելքի առևտրական կապերի ընդլայնման համար նոր խթան եղավ այն, որ այս ժամանակաշրջանում Եվրոպայի առաջավոր երկրներում սկսվեց ավատական կարգերի քայքայումը: Ազնվականությունն սկսեց իր տնտեսությունը հարմարեցնել չուկայի պահանջներին: Բարձրացան ազնվականության դրամական եկամուտները: Քաղաքների աճը, արհեստային արդյունաբերության և առևտրի զարգացումը նպաստում էին ունևոր քաղքենիության նշանակալի խավի կազմավորմանը: Եվրոպայում ազնվականների ու քաղաքացիների մոտ մեծացավ արևելյան արտադրանքների ու մթերքների նկատմամբ պահանջարկը:

Եվրոպայի և Ասիայի միջև գլխավոր առևտրական միջնորդները Վենետիկն ու Ջենովան էին, որոնք XIII–XIV դարերում ընդլայնում են իրենց գործունեությունը Կիլիկիայում: Միևնույն ժամանակ առևտրական կապեր են հաստատում Կիլիկիայի ու Եվրոպայի այլ քաղաքների հետ՝ կատալոնական, հարավֆրանսիական և այլն: Կիլիկյան Հայաստանը չարունակում է առտրական կապեր հաստատել նաև Ղրիմի և այլ երկրների հետ: Քննարկենք նախ Վենետիկի ու Կիլիկյան Հայաստանի առևտրական հարաբերությունների հարցը:

Եվրոպայի և Ասիայի միջև միջնորդական առևտրում խաղալով գլխավոր դերերից մեկը՝ Վենետիկը ձգտում էր առևտրական կապեր հաստատել բոլոր այն երկրների հետ, որտեղից հնարավոր էր չահավետորեն գնել արևելյան ապրանքներ կամ Եվրոպայի արհեստային արտադրության համար անհրաժեշտ հումք: Վենետիկի հանրապետությունը հատկապես ձգտում էր առևտրական արտոնություններ և առավելություններ ձեռք բերել այնպիսի երկրներում, որոնք մեծ նշանակություն ունեին տարանցիկ առևտրում և տեր էին այնպիսի նավահանգիստների, որտեղ ավարտվում էին Ասիայի հեռավոր երկրներից եկող առևտրական ուղիները: Այդ առումով առավել կարևոր էին Եգիպտոսը՝ իր Ալեքսանդրիա նավահանգստով, և Կիլիկիան՝ իր Այաս նավահանգստով: Լատինական կայսրության անկումից հետո (Վենետիկը Սև ծովի ավազանում տիրապետությունը կորցնելուց և մամլուքները սիրիական նավահանգիստները զավթելուց հետո) վենետիկցի վաճառականները ձգտում էին ընդլայնել իրենց առևտրական գործունեությունը Եգիպտոսում ու Կիլիկիայում՝ այդ երկրներից տեղական ու բերովի ապրանքներ և հումք գնելու համար: Բացի այդ, Այասի նավահանգիստը նրանց համար ծառայում էր որպես ելման կետ Արևելք թափանցելու, Արևելքի երկրների հետ ավելի անմիջական առևտրական կապեր հաստատելու համար:

Եգիպտոսի սուլթանության կողմից սիրիական նավահանգիստների զավթումից հետո Վենետիկի առաջին առևտրական պայմանագիրը Կիլիկյան Հայաստանի հետ կնքվել է 1271 թվին[1]: Այն կազմված է ֆրանսերեն: Դրա բովանդակությունից երևում է, թե որքան էր մեծացել վենետիկյան գաղութների դերը Կիլիկիայում: Եթե անցյալում 1245 թ. պայմանագրի համաձայն Ակրայի հյուպատոսը զբաղվում էր նաև Կիլիկյան Հայաստանի քաղաքներում բնակվող Վենետիկի քաղաքացիների գործերով, ապա այժմ 1271 թվի պայմանագրում խոսվում է Կիլիկյան Հայաստանում Վենետիկի հյուպատոսի մասին, որն անկախ էր Ակրայից և անմիջականորեն կապված էր Վենետիկի կառավարության հետ: Վենետիկի հյուպատոսները իրենց վրա էին վերցնում Վենետիկի իրավական և առևտրական չահերի պաշտպանությունը: Հյուպատոսը հարկ եղած դեպքում պաշտպանում էր վենետիկյան քաղաքացիներին ընդդեմ Սիսի արքունիքի:

Վենետիկցի վաճառականները Այասում խոչոր առևտրական գործարքներ էին կատարում ինչպես տեղական ու բերովի բամբակի (որն Այաս էին հասցնում արաբ վաճառականները Սիրիայից), այնպես էլ

[1] Տե՛ս **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 151:*

Հնդկաստանի համեմունքների առանձնապես թանկարժեք տեսակների գնումների գծով: Հենց այստեղից էին ձեռք բերում ստրուկներ ու մորթիներ: Այս ամենը վենետիկցիները գնում էին Եվրոպա տանելու համար: Կիլիկիայում վենետիկցի վաճառականների առևտրական գործունեության ընդլայնման նպատակով Այասում հիմնվել է առևտրական ընկերություն՝ բամբակ, բուրդ ու պղպեղ գնելու համար:

Հայտնի է, որ առևտուրը միջին դարերում էլ միահյուսվում էր ավազակության հետ: Ծովահենությամբ ու կողոպուտով վենետիկցիներն զբաղվում էին նաև Կիլիկիայի ափերի մոտ: Հայտնի է, օրինակ, որ վենետիկյան նավերը 1295 թ. Այասի նավահանգստում զավթել են մի նավ, որը պատկանելիս է եղել մարսելցի վաճառական Պետրոս Կվատրոլինգվային[1]: 1304 թ. վենետիկյան երկու նավ՝ Անդրեաս Սանուտոյի և Պողոս Մորոզինիի հրամանատարությամբ, կողոպտել են Այասի բերդը: Տուժածների մեջ են եղել պիզայեցի և հայ վաճառականներ: Կողոպտվել է նաև թագավորական դինանոցը: Հայոց կառավարությունը կազմել է կողոպտված ունեցվածքի ցուցակը 30000 դրամ գումարով (մեկ դրամը՝ մոտ 40 կոպ.): Այս իրադարձությունը համընկնում է Լևոն IV-ի կարգադրությանը՝ վենետիկցիներից գանձել 4 % մաքս՝ ներմուծվող ապրանքների դիմաց, մինչդեռ նրանք առաջ ազատված էին ներմուծման մաքսի վճարումից:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ վենետիկցի ծովահենների գործողությունների պատճառով Կիլիկյան Հայաստանի ու Վենետիկի միջև հարաբերությունները երբեմն վատանում էին և դառնում թշնամական: Բայց Վենետիկը չէր կարող զրկվել հումքի գնման և ապրանքների վաճառահանման լավ չուկայից, ինչպես և դեպի Արևելքի մյուս երկրներ տանող տարանցիկ ճանապարհներից, ուստի և վճարել է այն վնասները, որ վենետիկցիները պատճառել էին Այասի նավահանգստի ծովային ամրոցի կողոպուտով: 1307 թ. կնքվել է նոր առևտրական պայմանագիր Կիլիկյան Հայաստանի և Վենետիկի միջև:

Չնայած 1304 թվականի կոնֆլիկտը խաղաղորեն հարթվել էր և պայմանագրով հաստատվել էր Վենետիկի արտոնությունները, այնուամենայնիվ Վենետիկի վաճառականների և Հայաստանի կառավարության միջև հաճախ էին վեճեր ծագում մաքսային գրույքների չուրջ: Բերենք այդ պայմանագրից մի հատված, որտեղ խոսվում է հարկերի մասին. «Մեղնից նաև խնդրում են գյուղերում հարկեր չգանձել վենետիկցիներից: Մենք հրամայում ենք, որպեսզի նրանք

[1] Տե՛ս **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 164:*

հարկերից ազատ լինեն մեր տիրապետության տակ գտնվող մեր հողի ու մեր հայրերի հողի քաղաքներում ու գյուղերում»[1]: Բայց 1307 թ. արտոնություններ ստանալուց հետո էլ Վենետիկի ու Կիլիկյան Հայաստանի միջև կոնֆլիկտներ էին ծագում մի շարք հարցերի առնչությամբ՝ կապված վենետիկցի վաճառականների և արհեստավորների գործունեության հետ Կիլիկիայում: Վենետիկցի վաճառականները տրտնջում էին, թե իրենց ճնշում են հայ աստիճանավորները: Վենետիկի դեսպան Միքայել Ջուստինիանոսը 1320 թ. Լևոն Թագավորին մի շարք խնդրանքներ է ներկայացրել ու բավարարում պահանջել: Մեզ է հասել այդ խնդրանքներով և Լևոն V-ի պատասխաններով փաստաթուղթը: Վենետիկցիների խնդրանքին՝ թույլ տալ ազատորեն ոսկի և արծաթ վաճառել, պատասխանն ասում է, որ վենետիկցիները կարող են ոսկին ազատորեն վաճառել, բայց արծաթի մի մասը պետք է տան դրամահատարանին[2]: 1320 թ. այդ փաստաթղթում կան նաև հետաքրքիր տվյալներ վենետիկցիների կողմից ապառիկով ապրանքներ գնելու մասին: Վենետիկցիներն ազատվում էին գետանցումների մաքսի վճարումից: Վենետիկը բողոքել է, թե թագավորական աստիճանավորները ճնշում են Կիլիկիայի քաղաքներում ապրող վենետիկցի աղքատներին: Թագավորը պատասխանել է, թե այսուհետև վենետիկցի աղքատներից ոչ մեկը չի ճնշվի[3]: Վենետիկը բողոքել է, թե Սիսում և այլ քաղաքներում մորթի, կաշի ու բուրդ գնելիս, խախտելով պայմանագիրը, ստիպում են մաքս վճարել: Պատասխանը եղել է, թե վենետիկցի վաճառականները նման ապրանքներ գնելիս ազատվում են մաքս վճարելուց[4]: Հետաքրքիր է նշել Վենետիկի ևս մի կարևոր խնդրանքը, այն է՝ թույլ տալ Կիլիկյան Հայաստանի տարածքով ազատ երթևեկել Թավրիզ ու Սիրիա: Այս խնդրանքին ի պատասխան ասվում է. «Վենետիկցի բոլոր վաճառականները կարող են Կիլիկիայի միջով ազատորեն երթևեկել Թավրիզ ու Սիրիա, երբ խաղաղություն լինի սարակինոսների հետ»[5]:

Առևտրական պայմանագրերի տեքստերը, Վենետիկի խորհրդի ու սենատի որոշումները, ինչպես և այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են հյուպատոսներին Կիլիկյան Հայաստանում, բավարար նյութ են տալիս ապացուցելու համար, որ վենետիկցիները XIII դարի

[1] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 179:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 180:

[3] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 181:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում:

վերջին և XIV դարի սկզբին Կիլիկյան Հայաստանում աչքառու առևտրական գործունեություն են ծավալել, լայնորեն օգտվել են նավահանգիստներից ու տարանցիկ ճանապարհներից՝ Արևելքի հետ առևտրական հարաբերություններ ունենալիս: Սենատի որոշումներում հաճախ հիշատակվում է հայոց թագավորներին թանկարժեք նվերներ, ատլաս, դիպակ և այլ բաներ ուղարկելու մասին: Մի քանի անգամ առևտրական բանակցությունների համար Կիլիկիա են եկել վենետիկցի դեսպաններ, որոնք նոր զիջումներ և արտոնություններ են ձեռք բերել հօգուտ վենետիկցի վաճառականների[1]: Բերենք Վենետիկի հանրապետության կողմից այդ նպատակով Կիլիկիայում հատուկ դեսպան նշանակելու բնորոշ մի փաստ: 1333 թ. Կիլիկյան Հայաստանում Վենետիկի հյուպատոս Պետրոս Բրագադինոն զեկուցել է իր կառավարությանը, թե վենետիկցիները ճնշվում են Կիլիկիայում, թե վենետիկցի ազնվական Ստեփան Բադոարոն ձերբակալված է, թե մաքսատան ու նավահանգստի աստիճանավորները խոչընդոտներ են հարուցում վենետիկյան առևտրական նավերին ծով դուրս գալու թույլտվություն տալու ժամանակ ու հարկերով ծանրաբեռնում են կամելոտ (մահուդ) արտադրողներին և այլն: Վենետիկի սենատը 1333 թ. հուլիսի 17-ին որոշել է, որ դոժը և 60-ի Խորհուրդը վաճառականներից մեկին հանձնարարեն բանակցություններ վարել Կիլիկյան Հայաստանի հետ: Վենետիկի դոժ Ֆրանցիսկո Դոնալդոն այդ նպատակով Սիս է ուղարկել Հակոբոս Տրևիզանոյին: Նրան տրվել է հետևյալ հրահանգը. ոսկե դուկատը պետք է հավասարվի 24 թագավորական դրամի կամ թաքոլինի (ինչպես անվանում էին հայկական արծաթե դրամը), և արծաթը պետք է ուննա ոսկու հետ հավասար չրջանառություն: Եթե թագավորը պահանջի մեկ տոկոս հարկի վճարում, ապա պետք է նրան հասկացնել, որ վենետիկցի վաճառականներն այդ հարկը վճարում են կամավոր կերպով, այլ ոչ թե ըստ պայմանագրի, և առաջիկայում էլ այն կվճարեն: Եթե թագավորը պահանջի, որպեսզի մաքս վճարվի վաճառվող ապրանքների դիմաց, ապա հյուպատոսը պետք է ձգտի ձեռք բերել մաքսից ազատվելու արտոնություն[2]:

Վենետիկի դեսպան Հակոբոս Տրևիզանոն Լևոն V թագավորին չարադրել է Վենետիկի կառավարության ցանկությունները և նրանից ստացել խրխռովուլ (տան արտոնությունների չարադրմամբ), որը լուսաբանում է Կիլիկյան Հայաստանում վենետիկցիների առևտ-

[1] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 193:

[2] Տե՛ս **Ալիշան,** Սիսուան, էջ 118:

րական ու արհեստավորական գործունեությունը և արժեքավոր նյութ է պարունակում այս տեսակետից: Նախ՝ սահմանվում էր վենետիկցիների ազատ մուտքը Կիլիկիա, այնտեղ մնալու և մեկնելու ազատ իրավունք, երկրորդ՝ այդպիսի իրավունք էր տրվում նաև այն վենետիկցիներին, որոնք գալիս էին Վենետիկին պատկանող տիրույթներից, երրորդ՝ որ անարդարություն թույլ չի տրվի Կիլիկիայում ապրող վենետիկցի մահուդագործ ջուլհակների նկատմամբ, չորրորդ՝ որ ապրանքատեր վենետիկցիները չնչին հարկ վճարեն վաճառվող գինու դիմաց, բայց եթե նրանք վաճառվածից ավելի պակաս ցույց տան, ապա կպատժվեն, հինգերորդ՝ պակասում էր վաճառվող մաճառի վրա դրվող հարկը, վեցերորդ՝ վենետիկցիներն ազատվում էին մաքսից՝ Տարսոնից մորթիներ ու կաշիներ արտահանելիս, յոթերորդ՝ վենետիկցիները կարող էին գնել ու երկրից արտահանել նրբագեղմ բուրդ՝ համաձայն չնորհված մի այլ արտոնության, ութերորդ՝ վենետիկցի վաճառականներն ազատվում էին մահուդի չափման համար գանձվող հարկից, իններորդ՝ խոստում էր տրվում, որ աստիճանավորները չպետք է ստիպեն հացահատիկ և աղ գնել՝ արտահանելու համար, տասներորդ՝ երկրից մեկնող վենետիկցի պարտապանը պետք է պարտավորագիր տար իր վերադառնալու ժամկետի մասին[1]:

Այս փաստաթուղթը վկայում է Կիլիկյան Հայաստանում վենետիկցիների գործունեության ընդլայնման մասին: Առևտրից բացի նրանք զբաղվում էին մահուդ պատրաստելով և փոքր պանդոկներ պահելով: Ապրանքներից գլխավորապես ներմուծում ու վաճառում էին մահուդ, իսկ արտահանում էին բուրդ, մորթի ու կաշի: Մի այլ փաստաթղթից հայտնի է, որ վենետիկցիները Կիլիկյան Հայաստանից ապառիկով գնում էին ապրանքներ, գլխավորապես՝ բամբակ:

Եգիպտոսի հետ տեղի ունեցած պատերազմի ժամանակ (1335–1337) Կիլիկիայից արտաքսվել են եգիպտահպատակ արաբ վաճառականները, որոնք բամբակ էին բերում Այաս և ապառիկով վաճառում վենետիկցիներին: Եգիպտոսի սուլթանության պահանջով Լևոն V-ը պարտավոր էր արաբ վաճառականներին վճարել 27000 թաքուլին. այդքան գումար նրանց պարտք էին վենետիկցի վաճառականները: Այս հարցի կապակցությամբ կա Լևոն V-ի 1341 թ. նամակը վենետիկի դոժի անունով, որի մեջ թվարկվում են վարկատուների ու պարտապանների անունները և հայտնվում է, թե նրանց պարտքը արաբ վաճառականներին վճարված է, և պահանջ է ներկայացվում, որ վենետիկցի պարտապաններն այդ գումարը վճարեն թագավորին:

[1] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 193:

Ահա, օրինակ, տվյալներ բամբակը ապառիկով գնելու և պարտապաններից մեկի պարտքի մասին. «Առաջին՝ Պետրոս Սալոմոնուսը սարակինոս Ելլել դը Օսոյից գնել է 10 հակ բամբակ՝ 309 հայկական ռոտոլ քաշով, ելնելով յուրաքանչյուր ռոտոլի արժեքի հաշվարկից, ընդամենը՝ 4944 թաքուլինի գումարով»[1]: Այս փաստաթղթից երևում է, որ Այասը եղել է ինչպես տեղական, այնպես էլ բերովի (եգիպտոսի սուլթանության սահմաններից) բամբակի չուկա, որի գնորդները եղել են նաև վենետիկցի վաճառականները: Նրանցից մի քանիսը 1341 թվին վերոհիշյալ գումարը պարտք էին մնացել եգիպտոսի սուլթանության վաճառականներին սրանցից ապառիկով գնված բամբակի դիմաց[2]:

Ալիշանի տվյալներով, իտալացի վաճառական Թաթարոն Կիլիկիայից վենետիկ է արտահանել միանգամից 4000 հակ բամբակ, մի քանակ, որը, սակայն, կասկած է հարուցում[3]: Ըստ նրա իսկ հաշվարկների XIV դարի սկզբին վենետիկցի վաճառականների տարեկան արտահանությունը Այասի նավահանգստով կազմում էր մոտ 1440000 ֆրանկ[4]:

XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի առաջին կեսին կնքված առևտրական պայմանագրերը, ինչպես և այլ փաստեր ցույց են տալիս, որ վենետիկցի վաճառականները լայնորեն օգտվել են Կիլիկիայի և նրա հետ կապված երկրների չուկաներից ու տարանցիկ ճանապարհներից:

Բյուզանդական կայսրության վերականգնումից (1261) մինչև Կյոջեի մոտ նրա պարտությունը (1380) ընկած ժամանակաշրջանում Ջենովայի վաճառականական հանրապետությունը ամենաուժեղ ծովային տերությունն էր և որպես Եվրոպայի ու Ասիայի միջև առևտրական միջնորդ առաջնակարգ դեր էր խաղում: Ջենովայի առևտրական և ռազմական նավատորմը իշխում էր Միջերկրական ու Սև ծովերում. Ջենովացիները տիրում էին ամենակարևոր ստրատեգիական և առևտրական կետերին ու նավահանգիստներին: Ջենովացի վաճառականները ուրիշներից ավելի լայն առևտրական հարաբերություններ ունեին ասիական երկրների հետ:

Լատինական կայսրության անկումից հետո Ջենովան Միքայել Պալեոլոգին ռազմական օգնություն ցույց տալով Բյուզանդիայի վե-

[1] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 222:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **Ալիշան,** Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 60:

[4] Տե՛ս նույն տեղում:

բականգնման համար՝ մի շարք առևտրական արտոնություններ ձեռք բերեց այդ պետության մեջ և տիրապետող դիրք գրավեց Սև ծովի առևտրում՝ մի ժամանակ համարյա լիովին դուրս մղելով այդ շրջաններից մրցակից Վենետիկին: Ջենովան զավթեց Սուդակը, հիմնադրեց Կաֆան (1266), կազմակերպեց իր առևտրագաղութները Կովկասի ծովափին (Կոպա և Մատրեգա) և Արևազիայում (Սևաստոպոլ — այժմյան՝ Սուդում), հիմնեց իր վաճառատները, իջևանատները, հյուպատոսությունները Տրապիզոնում ու Սինոպում: Հաստատվելով այս նավահանգիստներում՝ Ջենովացի վաճառականները նոուն գործունեություն ծավալեցին արևելյան չուկաների մեծ մասում և առևտուր էին անում Առաջավոր Ասիայի, Հնդկաստանի ու Ջինաստանի հետ, ինչպես և՝ Արևելյան Եվրոպայի:

Թվում էր, թե այդ դարաշրջանում վերոհիշյալ հանգամանքների պատճառով Ջենովան չպետք է Կիլիկյան Հայաստանի նավահանգիստների ու տարանցիկ ճանապարհների կարիքն զգար: Սակայն Ջենովայի հանրապետությունը մի քիչ ավելի ուշ, քան Վենետիկը, նույնպես ընդլայնեց իր առևտրական գործունեությունը Կիլիկիայում, մանավանդ Այասում, որտեղից Ջենովացի վաճառականները առևտրական ուղևորություններ էին կատարում դեպի Թավրիզ և այլ երկրներ:

Հաստատվելով Բոսֆորի ափերին և Ղրիմում XIII դարի 50-ական և 60-ական թվականներին Մերձավոր Արևելքում տեղի ունեցած քաղաքական խոշոր փոփոխություններից հետո՝ Ջենովան միաժամանակ ասես թուլացրեց ուշադրությունը Կիլիկիայի նավահանգիստների, ճանապարհների ու չուկաների նկատմամբ, իսկ Վենետիկը, ընդհակառակը, 1261 թ. կորցնելով իր տիրապետող դիրքը Բյուզանդիայում ու Սև ծովում՝ ընդլայնեց առևտրական գործունեությունը Կիլիկիայում և Եգիպտոսում: Կիլիկիայի հայկական պետության ու Ջենովայի հանրապետության միջև խաղաղ առևտրական հարաբերություններին հարված հասցվեց նաև նրանով, որ Ջենովայի ծովակալ Գրիմալդին 1268 թ. կողոպտեց Կոռիկոսի նավահանգստում կանգնած այն առևտրանավը, որի վրա իրենց ապրանքներով կային 37 հայ, արաբ և ասորի վաճառականներ՝ մեծ մասամբ հայոց թագավոր Հեթումի, Աբաղա խանի և Անտիոքի պատրիարքի հպատակներ կամ առևտրական գործակալներ: Հայոց թագավորը պահանջեց փոխհատուցել վնասները և ժամանակավորապես արգելեց Ջենովացի վաճառականների մուտքը: Բանակցություններից հետո Ջենովայի ներկայացուցիչ Պալավիչինոն 1271 թ. 22700 սարակինոսյան ոսկու

գումարով պարտավորագրեր տվեց տուժած վաճառականների վնասները հատուցելու համար: Ջենովան վճարեց վերոհիշյալ գումարը[1], որպեսզի վերականգնվեին առևտրական կապերը Կիլիկյան Հայաստանի հետ: Այս փաստը վկայում է, որ չնայած Սև ծովում իր առևտրական գերիշխանությանը՝ Ջենովան չէր ցանկանում կորցնել Կիլիկիայի չուկաներն ու տարանցիկ ճանապարհները:

Թեև XIII դարի 70-ական թվականներից Ջենովայի ու Կիլիկյան Հայաստանի միջև կնքված որևէ առևտրական արտոնագիր կամ պայմանագիր չի մնացել և լիովին հավանական է, որ Ջենովան այդ տարիներին Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական պայմանագիր չի կնքել, այնուամենայնիվ Ջենովացի վաճառականների գործունեությունը Կիլիկիայում չարունակվել է, ինչպես այդ մասին վկայում են Ջենովացի նոտարիուսների նոտարական ակտերը, որոնք կատարված են 70-ական թվերին Այասում[2]: Այդ ակտերից և այլ փաստաթղթերից երևում է, որ Ջենովացի վաճառականները Եվրոպայից ապրանքներ էին բերում Կիլիկիա և այստեղից տանում տեղական արտադրության և Արևելքի այլ երկրների ապրանքներ ու մշերքներ: Կիլիկիայից գնված ապրանքների մի մասը նրանք վաճառում էին Սիրիայի նավահանգիստներում (Բեյրութում, Ակրայում, Տյուրոսում): Այասից ու Կոռիկոսից նրանք առևտրական ուղևորություններ էին կատարում ինչպես դեպի Կիլիկիայի խորքը, այնպես էլ հարևան երկրներ: Հնդի խոսքերով ասած՝ «Հայաստանի Ջենովական գաղութը արագ զարգանում էր և անկախություն ձեռք բերում»[3]: Ջենովական գաղութի գլխավորը սկզբում կոչվում էր վիկոնտ, հետո՝ հյուպատոս (կոնսուլ) վիկարիուս: Այսպես էին մնծարվում Ֆիլիպինո Տարտարոն 1274 և Լևո դը Նեգրին 1279 թվականներին: Տարտարոն թույլ չէր տալիս բողոքարկել իր դատավճիռները Տյուրոսի Ջենովական պողպատին՝ բարձրագույն ատյան ճանաչելով Ջենովայի հանրապետության կապիտանների տրիբունալը[4]:

1288 թ. Կիլիկյան Հայաստանը նոր առևտրական համաձայնագրեր կնքեց Ջենովայի հետ: Ջենովացիներին իրավունք տրվեց առանց մաքսի ապրանքներ վաճառել Կիլիկիայի քաղաքներում: «Այն ամենի համար, ինչ որ վաճառվում է չուկաներում... ոչինչ չի վճարվում»,— ասված է պայմանագրում և բացատրվում է. «Տակառով կամ կժերով

[1] Տե՛ս V. Langlois, Le trésor des chartes d' Arménie, p. 150–151:

[2] Տե՛ս Archives d' Orient, t. I, p. 550:

[3] W. Heyd, Hist, du commerce du Levante, t. I, p. 83.

[4] Տե՛ս նույն տեղում:

վաճառվող գինու համար, տակառներով կամ կժերով վաճառվող ձեթի համար թող ոչ մի հարկ չվճարեն, բացառությամբ միջնորդավարձի՝ տակառից մեկ նոր դրամի չափով»[1]: Այլ աղբյուրներից հայտնի է, որ ջենովացիները տեղի բնակչության պես զբաղվում էին խաղողի այգու և ձիթենու մշակությամբ: Պետք է ենթադրել, որ վաճառականները ոչ միայն բերովի, այլև տեղական գինի և ձիթենու յուղ էին ծախում:

Կիլիկիայի չուկաներում, գլխավորապես Այասում, վաճառվում էին տարբեր երկրներից բերվող ստրուկներ: Սրանց վաճառքի պայմանների մասին ասված է. «Ստրուկների համար, որոնց մեր երկրից գնում են արտահանման նպատակով և որոնց դիմաց մաքս են վճարում, թող այլևս չվճարեն, բայց քրիստոնյա ստրուկներ գնելիս թող երդում տան, որ նրանց չեն վաճառի ո՛չ մուսուլմաններին, ո՛չ էլ այն մարդկանց, ովքեր մտադիր են նրանց վերավաճառել մուսուլմաններին»[2]: Մեզ թվում է, թե վերապահությունը նրանից է առաջացել, որ իտալացի վաճառականները քրիստոնյա ստրուկներին վաճառում էին Եգիպտոսի սուլթանի վաճառականներին՝ կիլիկեցի հայերի վրտանգավոր թշնամուն, որը նրանց մի մասին կարող էր չահագործել որպես մամլուք զինվորների: Իհարկե, ոչ մի երդում չէր կարող իտալացիներին ետ պահել քրիստոնյա ստրուկներին մուսուլմաններին վաճառելու չահավետ գործարքից:

Կիլիկիայից նավաշինական փայտանյութ էր արտահանվում գլխավորապես Սիրիայի և Եգիպտոսի նավահանգիստներ: Այլ աղբյուրներից բացի, այս մասին մենք իմանում ենք 1288 թ. առևտրական պայմանագրից, որի մեջ ասվում է, թե «փայտանյութի հարկը, որը սահմանված է 18 կրուազատի չափով՝ ամեն բարդունգից, 4 կրուազատի չափով՝ մեկ ֆելյուգից (փոքր առագաստանավ), 13 կրուազատի չափով՝ կրկնակի ֆելյուգից, թող գանձվի, բացառությամբ մինչ այդ վճարվող մեկ տոկոսից»[3]: Վերացվում էր նաև խարսխային տուրքը, որն առաջ գանձվում էր երկու արծաթե դրամի չափով (թաքոլին) յուրաքանչյուր կառանումից՝ Սարոսի և Պիռամոսի գետաբերաններում, որոնց ափերին էին Տարսոն ու Մամեստիա քաղաքները:

Լեռնային Կիլիկիայում, որտեղ լավ արոտավայրեր կային, զարգացած էր անասնաբուծությունը: Երկրից միշտ մաներ ու խոշոր եղ-

[1] Տե՛ս **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 154:*

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

ջերավոր անասուն էր արտահանվում: 1288 թ. համաձայնագիրը սահմանել էր ձիերի, լծկան և եղջերավոր անասունների ու կաչվի անմաքս արտահանություն: «Երկրից արտահանելիս,— ասված է այդ փաստաթղթում,— ամեն մի ձիու և ջորու համար վճարում են 4 նոր դրամ, էշի համար՝ 5, ցուլի համար՝ 3 նոր դրամ ու մեկ կրուազատ, ոչխարի համար՝ 4 կրուազատ, գոմեշի կաչվի համար՝ 6 կրուազատ: Թող այլևս այս մաքսը չվճարեն»[1]: Հարկման չէին ենթարկվում նաև երկրից դուրս տարվող հավերն ու ձվերը:

Բայց եթե Կիլիկիան ուներ անասունի ավելցուկ, ապա կարիք էր զգում հացի՝ Դաչտային Կիլիկիայի խոշոր քաղաքները կերակրելու համար, որտեղ բնակչությունը մեծ մասամբ զբաղվում էր այգեգործությամբ (ձիթենի, խաղող) և բամբակագործությամբ: «Թող այլևս չվճարեն հացահատիկի համար, որը բերվում է ծովով և որի համար գանձում են 4 % մաքս ու միջնորդավարձ»[2]:

Այս հաղորդումը հետաքրքիր է և գնահատելի ոչ միայն մաքսային քաղաքականության տեսանկյունից, այլև նրա համար, որ հացահատիկը Կիլիկիա էին բերում, հավանաբար, ջենովացիները սևծովամերձ մարզերից, երևի Ղրիմի նավահանգիստներից, որոնք պատկանում էին Ջենովային և մատակարարում էին նաև Տրապիզոնի կայսրությանը: Իտալիան ինքը այնտեղից հացահատիկ էր տանում, ուստի և չէր կարող մատակարարել Կիլիկիային, բավարարել քաղաքային բնակչության աճող պահանջները, ինչն անհրաժեշտություն էր առաջացնում հացահատիկի ներմուծման:

Կիլիկիայի լեռներում արդյունահանվում էր երկաթահանք, որի զգալի մասը տարվում էր Եվրոպա և Եգիպտոս: 1288 թ. փաստաթղթում ասված է, որ երկաթից գնման վայրում գանձվում է դրա արժեքի մեկ տոկոսը[3]:

Վերցվում էր նաև խարսխատուրք, որն առաջ գանձվում էր երկու նոր դրամի չափով Սարոսի ու Պիռամոսի գետաբերաններում, որոնց ափերին, ծովից ոչ հեռու կային առևտրի և արհեստային արդյունաբերության խոշոր կենտրոններ՝ Տարսոնն ու Մամեստիան:

Ջենովացիների նկատմամբ ինչպես ներքին առևտրի, այնպես էլ ապրանքների ներմուծման ու արտահանման բնագավառում հարկային ու մաքսային քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց խոշոր արտոնություններ են տրված եղել:

[1] Տե՛ս **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 154:*

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 154, 175:

Այլ վերաբերմունք ենք նկատում տարանցիկ ապրանքների ներմուծման ու արտահանման բնագավառում, դրանք Կիլիկիայի տարածքով Եվրոպա անցկացնելուն և հակառակը: 1288 թ. առևտրական պայմանագիրը հետաքրքիր տվյալներ է պարունակում այն ապրանքներից գանձվող մաքսերի չափերի մասին, որոնք Ջենովացիները Կիլիկիայով Արևելքի երկրներից տանում էին Եվրոպա և հակառակ ուղղությամբ: «Այասում և Գուգլակում վճարվող մաքսը,– ասվում է պայմանագրում,– թող որ այսպիսին լինի. հում մետաքսի համար վճարում են 25 նոր դրամ (արծաթ, արժեքը՝ մոտ 40 կոպ.) մեկ ուղտաբեռին, մետաքսե կտորի համար՝ նույնպես 25 նոր դրամ: Ֆրանկների երկրներից բերված բոլոր բրդե կտորների համար՝ ինչպես կոպիտ, այնպես էլ նուրբ, այդ երկրներից բերված նուրբ կտավի ու սովորական կտավի համար վճարում են 25 նոր դրամ՝ մեկ ուղտաբեռին, 15՝ մեկ ջորեբեռին, 12՝ մեկ իշաբեռին: Բամբակի, չաքարի, անղիկի, մարջանի, պղնձի, արույրի և բոլոր այլ ապրանքների համար մաքս են վճարում 15 նոր դրամ մեկ ուղտաբեռին, 12՝ մեկ ջորեբեռին, 8՝ մեկ իշաբեռին: Օճառի համար վճարում են. մեկ ուղտաբեռին՝ 10 նոր դրամ, մեկ ջորեբեռին՝ 8 և մեկ իշաբեռին՝ 7 դրամ»[1]: Մեր կողմից արդեն բերվել են համեմատություններից գանձվող մաքսերի չափերի մասին տվյալները:

Մաքսերը, որոնք գանձվում էին ըստ քանակի, այլ ոչ ըստ ապրանքների արժեքի, ավելի ցածր էին այլ երկրներում, օրինակ, Եգիպտոսում համեմատության արժեքի համար գանձվող մաքսերից, ինչպես և ցածր էին Տրապիզոնում ու Կոստանդնուպոլսում գանձվող մաքսերից[2]: Հարկային այսպիսի քաղաքականությամբ Կիլիկյան Հայաստանը ձգտում էր մեծացնել ապրանքների տարանցումը իր տարածքով:

Կիլիկիայի հայկական պետության մաքսային քաղաքականությունը թելադրվում էր ավատական դասի շահերից: Անասունի անմաքս արտահանումը շահավետ էր կալվածատերերին. դա խթանում էր անասնաբուծության զարգացմանը: Հացահատիկի անմաքս ներմուծումը ցույց է տալիս, որ հացահատիկի արտադրությունը կալվածատիրական հողերում մեծ նշանակություն չի ունեցել, այլապես ազնվականները դեմ կլինեին դրան:

Պետությունը մեծ եկամուտներ ուներ և՛ արտաքին առևտրի, և՛ տարանցիկ առևտրի մաքսերից: Հատկապես նշանակալից էին Այասի ու Կոռիկոսի նավահանգիստների և Գուգլակ ու Պորտելլա լեռնանցքների մաքսատների եկամուտները:

[1] **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 157.*

[2] *Տե՛ս* **W. Heyd,** *Hist. du commerce du Levant au moyen âge, t. II, p. 103:*

Հետաքրքիր է նշել, որ Ջենովայի հանրապետության ներկայացուցիչը հաջորդ՝ 1289 թ. գարնանը նորից է նկել Կիլիկյան Հայաստան: Լևոն III-ն արդեն կենդանի չէր: Նրան հաջորդել էր Հեթում II-ը, որը հաստատեց Ջենովացիների կողմից դեպի Իկոնիա ազատ անցման արտոնությունը և նրանց դիջեց ծածկած չուկան[1]:

1288 թ. առևտրական պայմանագիրը մեզ խիստ արժեքավոր տեղեկություններ է տալիս: Ինչպես արտահանվող ու ներմուծվող, այնպես էլ տարանցիկ ապրանքների սակագների, մաքսերի և արտոնությունների անվանական մանրամասն թվարկումը, անկասկած, խոսում է հօգուտ Կիլիկյան Հայաստանի չուկաներում Ջենովացիների լայնորեն ծավալած գործունեության և Կիլիկիայի տարանցիկ ճանապարհներով նրանց չահագրգռվածության:

XIII դարի վերջին Վենետիկը արտաքսված լինելով Սև ծովի ավազանից՝ ձգտում էր պահպանել իր առաջնային դիրքերը Եգիպտոսում ու Կիլիկիայում, բայց Ջենովան այստեղ էլ հալածում էր իր մրցակցին: Դեռևս մինչև Կուրցոլի մոտ (1296) Վենետիկի ծովային տիրապետությանը հարված հասցվելը, Կիլիկիայի ափերի մոտ ծովային ճակատամարտ տեղի ունեցավ վենետիկյան ու Ջենովական նավատորմիղների միջև, որն ավարտվեց Ջենովացիների հաղթանակով: Այս մասին Հեթումին վերագրվող հակիրճ ժամանակագրության մեջ կարդում ենք. 1293 թ. «ճնուիզացն ղալէք (նավեր) ԺԲ կռուեցան ի յԱյաս ընդ ԼԲ ղալէք և ընդ զարիթ վնիսիացոցն և չահեցան ի նոցանէ ԻԴ ընդ զարիթ և ընդ խալէ»[2] (12 ճենովական նավեր մարտի մտան 32 վենետիկյան նավերի հետ և 24-ին գերի վերցրին): Լոպեզը Վենետիկի ու Ջենովայի ռազմանավերի այդ բախումը համարում է խոշոր ծովային ճակատամարտ՝ Միջերկրական ծովի արևելյան մասում գերիշխանության համար մղված այս հանրապետությունների պայքարի պատմության մեջ[3]:

Չնայած Ջենովայի այսպիսի գործուն քաղաքականությանը Կիլիկիայի չուկաների ու ճանապարհների օգտագործման նկատմամբ XIII դարի վերջին (1288 թ. պայմանագիր) և Վենետիկի դեմ պայքարի սրմանը, մենք նոր պայմանագրեր չենք տեսնում Ջենովայի ու Կիլիկյան Հայաստանի միջև XIV դարի առաջին կեսին: Հեյդն իրավացիորեն նշում է, որ գրավոր պայմանագրի բացակայությունը չի կարող

[1] **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 162.*

[2] **Վ. Հակոբյան,** *Մանր ժամանակագրություններ, եր., 1951, հ. I, էջ 86:*

[3] *Տե՛ս* **R. Lopez,** *Storia della colonie nel mediterraneo, Bologna, 1938, p. 230:*

ապացույց ծառայել այն բանի, թե այդ երկու պետությունների միջև առևտուրը դադարել էր[1]:

Հայտնի է, որ 1297 թ. վենետիկյան նավը Թեոֆիլո Մորոզինիի հրամանատարությամբ հարձակվել է Այաս նավահանգստի վրա և կործանել ջենովացիներին պատկանող պահեստը[2]: Պեգոլոտտին XIV դարի 30-ական թվականներին հաղորդում է, թե ջենովացիները, ինչպես և վենետիկցիները, օգտվում էին մաքսային արտոնություններից: Այս փաստերը խոսում են այն մասին, որ ջենովացիների գործունեությունը Կիլիկիայում չարունակվում էր:

Սակայն նկատելի է, որ Ջենովայի ուշադրությունը Կիլիկիայի նկատմամբ XIV դարում թուլացրել էր: Դա, հավանորեն, առաջացել էր այն բանից, որ նրան էր պատկանում տիրապետությունը Սև ծովում: Ջենովան կարող էր Առաջավոր Ասիայի, ինչպես և Հնդկաստանի հետ կապ ունենալ ոչ միայն միջերկրածովյան Այաս նավահանգստի միջոցով, այլև՝ Տրապիզոնի, որը նրա համար ավելի կարևոր նշանակություն ուներ: Հիմնականում սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ XIV դարում Ջենովան Կիլիկյան Հայաստանի հետ նոր պայմանագիր չի կնքել, մինչդեռ Վենետիկը XIV դարի առաջին կեսին մի քանի անգամ նորոգել է առևտրական համաձայնագրերը Կիլիկիայի հետ:

Այսպիսով, Ջենովայի և Վենետիկի հետ Կիլիկիայի հայկական պետության առևտրական փոխհարաբերությունների պատմությունը պարզաբանելիս ակնհայտ է դառնում, որ այն ժամանակ երբ Ջենովան Արևելքի հետ առևտուր էր անում առաջին հերթին սևծովյան նավահանգիստների միջոցով (Կաֆա, Սուլսում, Տրապիզոն և այլն), Վենետիկն օգտվում էր միջերկրածովյան նավահանգիստներից (Այաս, Ալեքսանդրիա):

Վերևում մենք տեսանք, որ Արևելքի և Արևմուտքի միջև գլխավոր առևտրական միջնորդները՝ Ջենովան ու Վենետիկը, այլ երկրներից ավելի վաղ՝ արդեն XIII դարում, առևտրական հարաբերություններ են հաստատել Կիլիկյան Հայաստանի հետ և մրցակցում էին այդ երկրի չուկաներում առաջնային դերի համար: Մեկ դար անց Սիցիլիան, Ֆլորենցիան, Կատալոնիայի, Հարավային Ֆրանսիայի և Եվրոպայի այլ քաղաքներ նույնպես առևտրական կապեր են հաստատում Կիլիկիայի հետ:

[1] **W. Heyd,** Hist. du commerce du Levant au mouen âge, t. II, p. 85.

[2] Տե՛ս նույն տեղում:

XIV դարի 30-ական թվականներին առավել հաստատուն առևտրական հարաբերություններ հաստատվեցին Սիցիլիայի թագավորության և Կիլիկյան Հայաստանի միջև: Պահպանվել է 1331 թ. հայոց թագավոր Լևոն V-ի ստորագրությամբ արտոնագիրը Սիցիլիայի թագավոր Ֆրիդրիխ I-ի անունով, որի դատեր հետ էր նա ամուսնացած: Այդ արտոնության մեջ ասվում է. «Սիցիլիայի մեծանուն և հարգարժան բնակիչները ժամանել են մեր պետությունը՝ խնդրելու, որ իրենց վրա էլ տարածենք մեր արտոնությունները: Հանուն մեր ծնողի՝ Ֆրիդրիխ թագավորի հանդեպ ունեցած մեր սիրո՝ մենք բավարարեցինք նրանց խնդրանքը»[1]: Արտոնագրի մեջ ասվում է, որ սիցիլիացիները ապրանքներ ներմուծելիս կամ արտահանելիս վճարում են դրանց արժեքի միայն երկու տոկոսը: Պետք է նկատել, որ չնայած ամուսնական կապերին՝ Լևոն V-ը, դատելով արտոնության տեքստից, իր աներոջ վաճառականներին չի չնորհել անմաքս առևտրի լիակատար արտոնություն, ինչը, բառացությամբ տարանցիկի, ուներին վենետիկցիներն ու ջենովացիները՝ ներմուծելիս և արտահանելիս: Իսկ Պեգոլոտտիի վկայությամբ, որն իր աշխատությունը գրել է Արևելքում 1335 թվին եվրոպացիների առևտրի մասին, սիցիլիացիները ջենովացիներին ու վենետիկցիներին հավասար ազատված են եղել ներմուծման ու արտահանման մաքս վճարելուց[2]: Հնարավոր է, որ Սիցիլիան դրան հասել է 1331 թ. պայմանագրի կնքումից հետո:

Կիլիկիայում պիզացի վաճառականների գործունեության մասին և ընդհանրապես Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունների մասին պահպանվել է միայն Պեգոլոտտիի մի կարճ տեղեկությունը, թե «պիզացիները վճարում էին ապրանքի արժեքի 2 տոկոսը՝ ներմուծելիս, և 2 տոկոսը՝ արտահանելիս»[3]: Պեգոլոտտին հակիրճ հիշատակում է, որ ոչ լրիվ արտոնությունից օգտվում էր Պերուցցիի ֆլորենտական ֆիրման: Ավելի մանրամասն հաղորդում է առևտրական այն արտոնությունների մասին, որոնք ինքն էր ստացել 1335 թվականին, որպես Ֆլորենցիայի Բարդիի առևտրական ու բանկիրական ընկերության ներկայացուցիչ: Ուշադրության է արժանի այն փաստը, որ XIV դարի 20-ական թվականներին Պեգոլոտտին եղել է Բարդիի ֆիրմայի լիազորը Լոնդոնում, 30-ական թվականներին՝ Կիպրոսում, իսկ 1335 թվին այցելել է Կիլիկյան Հայաստան: Բարդիի բանկիրական տունը վարկավորել է Լևոն V-ին և Կիլիկիայում ան-

[1] **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 188.

[2] Տե՛ս **Pegolotti,** La pratica della mercantura, 1936, p. 63:

[3] Նույն տեղում:

մաքս առևտրի արտոնություն ստացել: Հայտնի է, որ Բարդիի և Պերուցցիի բանկիրական տները XIV դարի կեսին ամենահարուստն էին Եվրոպայում: Հայտնի է, որ դրանք պարտքով դրամ էին տալիս Եվրոպայի չատ պետությունների, գլխավորապես Էդուարդ III-ին, և փոխարենը զանազան արտոնություններ և առավելություններ ու մեծ եկամուտներ ստանում ոչ միայն տոկոսներից, այլև առևտրական ու վարկային ուրիշ գործառնություններից: Նրանց ֆինանսական և առևտրական գործունեության ցանցը ծավալվել էր Անգլիայից մինչև Կիլիկիա: Ըստ Վիլլանի տված տեղեկությունների, նրանք դրամ են փոխ տվել Անգլիայի թագավոր Էդուարդ III-ին այն ժամանակվա համար վիթխարի մի գումարով՝ 1365000 ոսկե ֆլորին:

Լևոն V-ի չնորհած առևտրական արտոնությունների տեքստը պահպանվել է Պեգոլոտտիի մոտ: Ի նկատի ունենալով հարցի կարևորությունը՝ լրիվ մեջբերենք. «Բարդիի ընկերությունը ազատված է մաքսի վճարումից: Ոչինչ չի վճարում Հայաստանի ամբողջ թագավորության մեջ՝ ո՛չ ներս մտնելիս, ո՛չ դուրս գալիս, և չպետք է ճնշումների ենթարկվի: Ֆլորենտացին կամ այլ լեզվով խոսող մարդիկ տուգանքի ենթակա չեն ո՛չ ունեցվածքից, ո՛չ էլ անձից, բացառությամբ իր կամ իր ընկերության գործով թույլ տրված զանցանքի, ինչի համար և արտոնություն կա, որը հաստատված է ոսկե կնիքով ու հայոց թագավորի ստորագրությամբ: Տրված է Հայաստանում Քրիստոսի ծննդյան 1335 թ. հունվարի 10-ին: Այս արտոնագիրը հիշյալ ընկերության համար ստացավ Ֆրանչեսկո Բալդուչչին, որը տվյալ պահին ընկերության գործերի կապակցությամբ բնակվում է Կիպրոսում»[1]:

Բարդիի մրցակցի՝ Պերուցցիի ֆիրմայի գործունեության մասին Պեգոլոտտին, ցավոք, խոսում է չատ հակիրճ, թե «Պերուցցիի ֆլորենտական ընկերությունը, կատալոնցիներն ու պրովանսացիները ներմուծման և արտահանման համար վճարում են երկու տոկոս»[2]:

Այդ նշանավոր ֆինանսական ընկերությունների գործունեության ընդլայնմանը Կիլիկիայում խանգարում էին մամլուքների հաճախակի կրկնվող ներխուժումները, որոնք ուժեղացան հատկապես XIV դարի 30-ական թվականներից և չարունակվեցին ընդհուպ մինչև Կիլիկիայի հայկական պետության անկումը՝ 1375 թվականը:

Արևելքի հետ կատարվող առևտրում Իսպանիայից գործուն մասնակցություն ունեին Կատալոնիայի քաղաքները: Տվյալներ են պահպանվել այն մասին, որ Արագոնի թագավոր Հակոբ II-ը, 1293 թ. իր

[1] **Pegolotti,** La pratica della mercantura, M., 1936.

[2] Նույն տեղում, էջ 59:

դեսպան Պեդրո Պորտին մոնղոլ Հեյխաթ խանի մոտ ուղարկելիս՝ միաժամանակ հանձնարարել է լինել Կիլիկյան Հայաստանի թագավորի մոտ և նրան նամակ հանձնել կատալոնցի վաճառականներին արտոնություններ տրամադրելու խնդրանքով (մաքսի իջեցում, չվաճառված ապրանքների ազատ բեռնման իրավունք, ծածկած չուկայի տրամադրում ապրանքների համար և թաղամաս՝ բնակվելու համար): Կատալոնցիներին չնորհված արտոնագրերը չեն պահպանվել, բայց մի չարք փաստերի հիման վրա կարելի է վստահորեն ենթադրել, որ կատալոնցի դեսպանի առաքելությունը Կիլիկյան Հայաստան պսակվել է հաջողությամբ[1]: Պեգոլոտտին հիշատակում է, որ կատալոնցիները, ինչպես և սիցիլիացիները, մաքս էին վճարում նվազեցված չափով, այսինքն երկու տոկոս՝ չորսի փոխարեն, որ վճարում էին արտոնություններից չօգտվող վաճառականները[2]:

Հեյդը Կիլիկիայի հետ Կատալոնիայի առևտրական հարաբերությունների մասին գրում է. «Ամենայն հավանականությամբ, Կատալոնիայում է կազմված եղել այն ծովային կոդեքսը, որը հայտնի է «Consulado mare» անունով և, անկասկած, սկզբում պետք է կիրառված լինի այն երկրի կողմից, որի վաճառականները հաճախակի ուղևորություններ են կատարել դեպի Հայաստան»[3]:

Հարավային Ֆրանսիայի քաղաքները՝ Մոնպելիեն, Նիմը և Մարսելը, գործուն առևտուր էին անում Կիլիկյան Հայաստանի հետ: Հավանաբար մինչև 1314 թ. առևտրական արտոնություններ ստանալը Մոնպելիեի վաճառականները առևտուր էին անում Այասի հետ, քանի որ նրանք հիշատակվում են 1295 թ. Այասում վենետիկցիների կողոպտած նավի տուժած վաճառականների թվում: Մոնպելիեի մունիցիպալ արխիվում պահպանվել է Կիլիկյան Հայաստանի Օշին թագավորի 1314 թ. հունվարի 7-ի կարգադրությունը պետության պրոքսիմոս եգաննեցի անունով՝ Մոնպելիեի վաճառականների՝ Այասով ազատորեն երկիր մտնելու թույլտվության և նրանցից երկու տոկոսով մաքսի գանձման մասին: 1321 թ. Լևոն V-ը նոր հրամանով հաստատում է զեղչված մաքսի նախկին արտոնությունը:

Այս բոլոր փաստաթղթերը խոսում են Կիլիկիայի հետ առևտրական հարաբերություններ ունենալու՝ Մոնպելիեի չահագրգռվածության մասին: XIII դարի վերջին սկսված առևտրական կապերը, ինչպես վկայում է Պեգոլոտտին, չարունակվում էին նաև նրա ժամանակ.

[1] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 163:

[2] Տե՛ս **Pegolotti,** La pratica della mercantura, p. 60:

[3] **V. Heyd,** Histoire du commerce du Levant, t, II, p. 84.

պրովանսացիները չարունակում էին մուծել 2 % մաքս: Հարավֆրանսիական քաղաքներ Մոնպելիեի և Նիմի հետ աչխույժ առևտուր է եղել: Դա կարելի է տեսնել նաև Պեգոլոտտիի բերած չափերի, դրամների, կչիռների համեմատական աղյուսակում, որոնք կիրառվել են Մոնպելիեում, Նիմում և Այասում համեմատություններ, մետաքս, թանկագին քարեր վաճառելիս[1]:

Հետաքրքիր մի փաստաթուղթ՝ Մարսելի առևտրական նավի կողոպտման մասին արձանագրություն կա Լանգլուայի ժողովածուում: Այս արժեքավոր փաստաթղթից մենք իմանում ենք, որ վենետիկյան նավախումբը կողոպտել է մարսելցի վաճառականին պատկանող «Բոնդիմիրա» անունով նավը, որը Այասից ուղևորվելիս է եղել դեպի Ռոմանիեի (Բյուզանդիայի) ափերը և որի մեջ եղել են հայելիներ, ածելիներ, փարիզյան գորգեր, սփռոցներ, անձեռոցիկներ, մոմի ճրագներ, օճառ, ֆրանսիական արդյունաբերության արտադրանքներ, ինչպես և Կիլիկիայի արտադրանքներ ու մթերքներ՝ կոհիկոսի գորգեր, բամբակ և այլն[2]: Հետաքրքիր է, որ գորգը նչված է հայերեն՝ «կարպետ», մի բառ, որն սկսել էր օգտագործվել Եվրոպայի մի քանի ժողովուրդների կողմից (անգլերեն՝ carpet, ֆրանսերեն՝ carpette):

. Կիլիկյան Հայաստանը իր տարանցիկ ուղիների միջոցով XIII–XIV դարերում առևտրական կապեր էր պահպանում ինչպես Եգիպտոսի սուլթանությանը և Հուլավյաններին ենթակա, այնպես էլ ուրիշ, ավելի հեռավոր երկրների հետ:

Բաղդադից, մինչև մոնղոլների կողմից դրա գրավումը, ինչպես և Սիրիայից Ամանոսի լեռնաչղթայի կապաններով Կիլիկիա էին մրտնում արևելյան զանազան ապրանքներ: Կիլիկիայից այդ ապրանքների մի մասը երկրի արտադրանքի հետ (ինչպես պարզաբանվել է 6-րդ գլխում) գնում էր դեպի Փոքր Ասիա և Ղրիմ: Այդ երկրների հետ կապերը չարունակվում էին նաև Բաղդադի խալիֆայության անկումից հետո՝ Առաջավոր Ասիայում մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում:

Իբն-Բիբիի «Երկք վաճառականների պատմության»[3] հիման վրա, մենք ցույց ենք տվել Քեյ Կուբադի ժամանակվա Իկոնիայի սուլթանության վաճառականների չահագրգռվածությունը Սիրիայի հետ Կիլիկիայի միջոցով կատարվող առևտրական հարաբերություննե-

[1] Տե՛ս **Pegolotti,** La pratica della mercantura, M., 1936, p. 62:

[2] **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 164.

[3] Византийский Временник, т. XXV, с. 54.

րում: 1285 թ. Եգիպտոսի սուլթան Քելավունի[1] հետ Լևոն III-ի կնքած խաղաղության պայմանագրից մենք կիմանանք, որ վերջինս պայմանագրի կետերից մեկը դարձրել է Փոքր Ասիայից, Միջագետքից, Իրանից, Արևմուտքի և Արևելքի երկրներից Կիլիկիայի միջով անարգել անցումը դեպի Եգիպտոսի սուլթանության սահմանները, ինչպես և նրա վաճառականների Կիլիկիա մտնելն ու այնտեղից մեկնելը և Կիլիկիայի բանտերից նրա հպատակներին՝ արաբ վաճառականներին ազատ արձակելը: Այս ամենը ցույց են տալիս, որ Կիլիկիայի տարանցիկ ճանապարհները և դրա չուկաները կարևոր նշանակություն ունեին Առաջավոր Ասիայի ու նույնիսկ Եվրոպայի հետ Եգիպտոսի սուլթանության առևտրում, ինչի մասին նույնպես խոսվում է վերոհիչյալ պայմանագրում:

Առևտրական հարաբերությունները Եգիպտոսի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի միջև պահպանվում էին ծովով ու քարավանային ճանապարհներով: Սիրիայի և Այասի նավահանգիստների միջև տեղի ունեցող առևտրի մասին տվյալներ կան Դևսիմոնիի հրատարակած ակտերում[2]:

1258 թ. մոնղոլների կողմից թալանվելուց հետո Բաղդադն անկում էր ապրում՝ իր տեղը զիջելով Թավրիզին, բայց և այնպես մինչև XIV դարի կեսը Հնդկաստանի և Ջինաստանի ապրանքների մի մասը այդ քաղաքով էր գալիս և, չնայած մոնղոլների ու մամլուքների միջև տեղի ունեցող թշնամական գործողություններին, բերվում էր նաև Այաս (Հալեպով): Կիլիկիայից Եգիպտոս էին տանում երկաթ, ձիեր, ջորիներ (Համաձայն 1285 թ. խաղաղության պայմանագրի) և նավաշինական փայտանյութ: Եգիպտոսի սուլթանության արաբ վաճառականները Այաս էին բերում խունկ, չաքար, բամբակ[3]: Վենետիկցի վաճառականները 1321 թ. խնդրելով իրավունք ձեռք բերեցին Սիրիա անցնել Այասով ու Պորտելլայով՝ առևտրական գործողությունների համար[4]: Մինչև Ակրայի անկումը վաճառականներն այդտեղից Կիլիկիայի տարածքով մեկնում էին Իկոնիա չիր գնելու (Ռուբրուկ): Սիրիայից ու Եգիպտոսից եկած արաբ վաճառականները Կիլիկիայի չուկաներից գնում էին մուչտակեղեն, որոնք այստեղ էին բերվում մոնղոլներին ենթակա հյուսիսային և արևելյան երկրներից:

[1] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 223:

[2] Տե՛ս Archives de l' Orient latin, Paris, t. I, 1881, p. 551:

[3] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 196:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 182:

Կաֆայի ջենովացի նոտարիուսների XIII դարի վերջի նոտարական արձանագրություններում տվյալներ կան Կիլիկիայի և Ղրիմի վաճառականների միջև տեղի ունեցած առևտրական ու դրամական գործարքների մասին: Այդ արձանագրություններից մեկում ասված է. «Մարկիոնե Բարբարիան ու Բոնիֆացիո Գրիլոն Ջիկոմո Մուսոյին են զիջում Այասում Գանդուլորոյից պարտքը ստանալու իրենց բոլոր իրավունքները[1]:

IV գլխում մենք ավելի մանրամասն տվյալներ ենք բերել XIII դարի առաջին կեսին և մասամբ ավելի ուշ Ղրիմի հետ Կիլիկիայի առևտրական կապերի մասին: Դժվար է ասել՝ այդ կապերն ուժեղացե՞լ են, թե՞ թուլացել XIII դարի վերջին և XIV դարում, բայց կասկած չկա, որ դրանք չարունակվել են, ինչը երևում է Կաֆայի ջենովական գաղութի արձանագրություններից: Հնարավոր է, որ ջենովացիները ծովային ճանապարհով Ղրիմից Կիլիկիա տարած լինեն հացահատիկ, ինչպես որ կարելի է ենթադրել 1288 թ. առևտրական պայմանագրի հիման վրա: XIII դարի յոթանասունական թվականների կեսերին ջենովացի նոտարիուս Ֆրեդրիկո Պլացալունգի ուղևորությունը Այասից Սուդակ վկայում է, որ առևտրական կապերը Կիլիկիայի և Ղրիմի միջև չարունակվում էին:

Դենստրի մոտ Կիլիկյան դրամների հայտնաբերումը հնարավորություն է տալիս ենթադրելու, թե կիլիկեցի վաճառականներն այդ ճանապարհով թափանցում էին Գալիցիա, Հունգարիա ու Լեհաստան: Կիլիկյան ճամփորդական չլրևիը, որ գտնված է Բերդյանսկում, ցույց է տալիս, որ Կիլիկյան արտադրանքները Դոնի ճանապարհով կարող էին թափանցել ռուսական իշխանապետություններ:

Արդեն նշվել է, որ XIII դարի վերջին ջենովացի նոտարիուսները առևտրական ու դրամական գործարքների գծով նոտարական գործողություններ էին կատարում Սվազում, Երզնկայում, Էրզրումում և Նախիջևանում: Անտարակույս, կապ է գոյություն ունեցել Այասի, սևծովյան նավահանգիստների (Վատացա, Կաֆա, Սուդակ), Սվազի, Երզնկայի, Էրզրումի ու Թավրիզի միջև, ինչի մասին, արձանագրություններից բացի, վկայում են նաև այն պայմանագրերը, որոնք 1288 թվականին Կիլիկյան Հայաստանը կնքել է Ջենովայի, իսկ 1321 թ. Վենետիկի հետ, ինչպես և՝ Պեգալոտտիի տվյալները Այաս–Թավրիզ ճանապարհի մասին:

Այդ ճանապարհը Այասը կապում էր Առաջավոր Ասիայի բոլոր երկրների հետ՝ Փոքր Ասիայի, Հայաստանի, որտեղից Այաս էին բերվում գորգեր, բոկարան և այլ արտադրանքներ, Ղրիմի, որտեղից բերվում էին ռուսական մորթիներ, Հնդկաստանի ու Չինաստանի հետ, որտեղից ստացվում էին համեմունքներ, մետաքս ու թանկագին քարեր:

Այաս–Թավրիզ ճանապարհը Մեծ Հայքը կապում էր Կիլիկյան Հայաստանի հետ ոչ միայն տնտեսական, այլև մշակութային առումով: Այստեղից Սիս՝ հայոց թագավորների արքունիքից էին գալիս հայ դիտնականներ ու գրողներ:

Կիլիկյան քաղաքների քաղաքային տնտեսությունը և քաղաքական կառուցվածքը ուսումնասիրված չեն և վատ են ենթարկվում ուսումնասիրության: Հայկական տիրապետության ժամանակաշրջանում Կիլիկիայում մի քանի քաղաքներ կային՝ 30–50 հազար բնակչությամբ: Սակայն կիլիկյան քաղաքների արևմտյան նյութերը, որոնք բազմիցս կողոպուտի են ենթարկվել մամլուքների ու թուրքերի կողմից, անդառնալիորեն կորել են:

Ռուբինյան ու Հեթումյան դինաստիաների հայ թագավորները հոգում էին ներքին ու տարանցիկ առևտրի մասին՝ մեծ եկամուտներ ստանալով առևտրական հարկերից ու մաքսերից: Նրանք սիրով առևտրական համաձայնագրեր էին կնքում Եվրոպայի քաղաքների ու հանրապետությունների հետ:

Լատիներեն, իտալերեն ու ֆրանսերեն գրված առևտրական արտոնագրերում, որոնք XIII–XIV դարերում հայ թագավորների կողմից չնորհվել են իտալական, ֆրանսիական ու կատալոնական քաղաքներին ու պահպանվում են Եվրոպայի արխիվներում, չատ հաճախ են հիշատակվում Այաս, Տարսոնը, Սիսը, Ադանան ու Մամեստիան, որտեղ կային վենետիկցիների ու ջենովացիների գաղութներ: Այս քաղաքներում բնակություն էին հաստատում ոչ միայն վաճառականներ, այլև մահուդագործներ, որոնք բրդե կտոր՝ կամելոտ էին գործում, հյուրանոցների տերեր, դարբնոցների, կաշեգործական արհեստանոցների տերեր և այլն:

Կիլիկիայի քաղաքների հիմնական բնակչությունը կազմում էին հայ արհեստավորներն ու վաճառականները: Հայերից բացի, այստեղ ժամանակավոր կամ մշտական բնակվում էին ասորիներ, արաբներ և իտալացիներ: Կիլիկիայի քաղաքներում ապրող արաբ, ասորի և իտալացի վաճառականներն ու արհեստավորները ապահովված էին խաղաղ համակեցությամբ և նպաստավոր պայմաններ ունեին առևտրով ու արհեստներով զբաղվելու համար: Լեզվով ու հավատով տարբեր այդ մարդկանց միջև առևտրական հարաբերությունների հետ մի-

[1] Տե՛ս **Bratianou,** *Actes des notaires génois de Pera et de Caffa... p. 331:*

սին տեղի էին ունենում նաև կենցաղային ու մշակութային չփումներ: Այս առումով մեծ է եղել Այաս նավահանգստի դերը, որտեղ խաչաձորվում էին Արևելքի և Արևմուտքի մշակութային ազդեցությունները:

Վաճառականներից, արհեստավորներից ու պլեբեյական խավերից զատ քաղաքներում ապրում էին նաև ազնվականներ: 1217 թ. մի ձեռագրի հիշատակարանից երևում է, որ ազնվականը քաղաքի առևտրատեղի տերն է եղել, որից ստացված նկամուտը նա կտակել է եկեղեցուն:

Որքան մոտենում է XIV դարը, այնքան ավելի բազմամարդ են դառնում իտալացի վաճառականների ուղևորությունները Կիլիկիայի տարանցիկ ճանապարհներով, որոնց վրա էին Այաս, Տարսոն, Ադանա, Մսիս քաղաքները: Նրանք լևոնային կապաններով թափանցում էին Փոքր Ասիա և Սիրիա: Քաղաքներում կային բարեկարգ չուկաներ, մաքսատներ ու քարվանսարաներ: Քարվանսարաններ կային նաև առևտրական ճանապարհների կայարաններում:

Իհարկե, Կիլիկիայի քաղաքների զարգացումը, ներքին և տարանցիկ առևտրի ընդլանումը, ինչը լուսաբանվում է բազմաթիվ փաստերով, ազդում էին Կիլիկիայի հայկական թագավորության ավատական կարգերի վրա: XIII–XIV դարերում Կիլիկիայի ավատական կարգերի քայքայման գործընթացը գտնվում էր նախնական փուլում:

Երկիրը ներքաշված էր միջազգային առևտրի ուղեծրի մեջ. այնտեղից արտահանվում էին ոչ միայն գյուղատնտեսական մթերքներ, այլև ներքին ու արտաքին չուկայի համար աշխատող արհեստագործության արտադրանքներ: Առևտրական կապիտալը իրենից կախման մեջ էր դրել արհեստագործության որոշ ճյուղեր, ինչպես օրինակ՝ բրդե գործվածքների՝ կամկոտի, և կարպետ-գորգերի արտադրությունը:

Դրամա-ապրանքային հարաբերություններն սկսել էին թափանցել գյուղերը: Գյուղատնտեսության համար կար ինչպես ներքին չուկա (խոշոր քաղաքներ), այնպես էլ՝ արտաքին (ապրանքների ու մթերքների արտահանում դեպի Եվրոպա և այլ երկրներ): Անկասկած, առևտուրն իր բոլոր տեսակներով (ներքին, արտաքին և տարանցիկ) այնքան էր զարգացած Կիլիկյան Հայաստանում, որ քայքայիչ ազդեցություն ուներ արտադրության ավատական եղանակների վրա: Ապրանքադրամային հարաբերությունների գյուղ ներթափանցելու մասին վկայող փաստեր կան XII–XIII դարերի աղբյուրներում: Գյուղացիների կողմից գյուղատնտեսական մթերքների վաճառք ներքին չուկայի պահանջմունքների և արտահանման համար, հարկերի վճարում դրամով և ավատական պարհակների մի մասի փոխարինում դրամական վճարումներով, անկասկած, նշանակալի չափերով տեղի են ունեցել՝ կապված քաղաքների աճի և արտաքին առևտրի ընդլայնման հետ:

Դրամաշրջանառությունը Կիլիկյան Հայաստանում բավականին զարգացած է եղել: Սկսած XII դարի վերջից՝ Կիլիկիայի հայ թագավորները հատում էին ոսկե, արծաթե ու պղնձե դրամներ: Լևոն II-ի ոսկե դրամը կոչվում էր «դահեկան» և կոչում էր 7 գրամ: Արծաթե «դրամը», կամ «թագավորական»-ը, արժեր 40 կոպեկ՝ ռուբլու համեմատությամբ[1]: Իտալացիները այս դրամն անվանում էին «թաքոլին»: Կիլիկյան Հայաստանի արծաթե դրամները՝ «թագավորականները», մեծ գործածություն ունեին և շրջանառության մեջ էին մեծ բանակությամբ: Հայկական դրամներ են գտնվել Սև ծովի ափին՝ Դնեստրի գետաբերանի մոտ և այլ վայրերում[2]: 1285 թ. պայմանագրով Լևոն III-ը պարտավորվում էր ամեն տարի եգիպտոսի սուլթանությանը վճարել 500 000 «թագավորական»[3]: Հայտնի է, որ նկամուտների մեծ մասը թագավորական գանձարանը մաքսերից էր ստանում:

Սակայն XIII դարում դրամաապրանքային հարաբերությունների զարգացումը արմատական փոփոխություններ չառաջացրեց քաղաքում ու գյուղում: Կիլիկյան Հայաստանի տնտեսության հիմքը գլխավորապես չարունակում էր մնալ կախյալ գյուղացիների մանր տընտեսությունը և արհեստավորների արտադրությունը: Արհեստային արտադրությունը առևտրական կապիտալի ազդեցության տակ էր, բայց դեռ լրիվ կախված չէր դրանից: XIV դարում այստեղ դեռ բանը չհասավ մանուֆակտուրային արտադրության սաղմերի ծագմանը: Դրան խանգարեցին ոչ միայն ավատական հարաբերությունների կայունությունը, այլև մամլուքների կործանիչ ներխուժումները Կիլիկիա, ինչպես և՝ մոնղոլական լծից առաջացած ընդհանուր անկումը Առաջավոր Ասիայի երկրներում: Դրա համար էր ընդհատվել զարգացումն այն ամենի, ինչը կարող էր հանգեցնել Կիլիկյան Հայաստանում արտադրության ավատական եղանակի քայքայմանը:

---

[1] Տե՛ս **Ղ. Ալիշան,** Սիսուան, էջ 385:

[2] Տե՛ս **G. Bratianou,** Recherches sur le commerce Génuis dans la mer Noire du XIII-me siécle, Paris, 1929, p. 161:

[3] Տե՛ս **V. Langlois,** Le trésor des chartes d' Arménie, p. 224:

Լևոն այն կարծիքն է հայտնել, թե Կիլիկյան Հայաստանը իտալական կապիտալի ազդեցությամբ դուրս էր եկել միջին դարերի հասարակական հարաբերությունների դարաշրջանից և մտել կապիտալիզմի շրջանը, թե իտալական կապիտալը Կիլիկիայի հայ պարոններին առևտրական գործ էր սովորեցնում, թե «ազնվականական հողատիրությունը լուծվում էր դրամական տնտեսության մեջ»[1]: Լևոյի այս կարծիքի հետ չի կարելի համաձայնել: Ավատատերերի ու վանքերի կալվածքների տնտեսությունները թեև տնտեսական կապերով կապված էին ներքին ու արտաքին չուկաների հետ, բայց կալվածատիրական տնտեսության մեջ դրամապարանքային հարաբերությունները վճռական դեր չէին խաղում, և այդ տնտեսությունները պահպանում էին իրենց բնատնտեսական բնույթը:

Կիլիկյան Հայաստանում կային խոշոր կալվածատիրական տնտեսություններ, որտեղ կիրառվում էր ճորտերի աշխատանքը: Սակայն երկրի տնտեսության մեջ դրանք մեծ նշանակություն չունեին: Գերակշռում էր մթերային ռենտան (բահրա), այլ ոչ թե կոռը կամ դրամական ռենտան: Ավատատերերը ներքին ու արտաքին առևտրով չափահագրգռված էին, որովհետև եկամուտներ էին ստանում հացահատիկի, բամբակի, անասունի, բրդի և կախյալ գյուղացիներից բահրայի տեսքով գանձվող գյուղատնտեսական այլ մթերքների վաճառքից, ինչպես և՝ առևտրական հարկերից ու մաքսերից: Մաքսերից ստացվող եկամուտները ընկնում էին ավատատերերի, առանձնապես բարձր պալատական ազնվականության ձեռքը՝ թագավորական գանձարանի միջնորդությամբ:

Ինչպես հայտնի է, Հայաստանում և Առաջավոր Ասիայի չատ քաղաքներում, նաև Ղրիմում, XIII–XIV դարերի հայ վաճառականները նշանակալի դեր էին խաղում այդ երկրների տնտեսական կյանքում: Հայ վաճառականության դերը Կիլիկիայում, որտեղ հայկական պետականություն կար, պետք է որ է՛լ ավելի նշանակալի լիներ: Հայ վաճառականները Այասի, Տարսոնի և Կիլիկիայի այլ քաղաքների չուկաներում վաճառում ու գնում էին ինչպես տեղական ապրանքներ, այնպես էլ բերովի: Նրանք ապրանքներ էին տանում և ապրանք բերելու էին գնում նաև Առաջավոր Ասիայի զանազան երկրներ, ինչպես և Կիլիկյան նավահանգիստներից Եվրոպա էին տանում Կիլիկիայի և Արևելքի այլ երկրների արտադրանքներ ու մթերքներ: Մի խոսքով, գործուն մասնակցություն էին ունենում միջազգային առևտրում: Տվյալներ կան Իտալիայում հայ վաճառականների գործունեության մասին[1]: Ցավոք սրտի, աղբատիկ են հայ վաճառականների կողմից միջերկրածովյան առևտրին ու ծովագնացությանը մասնակցելու մասին տեղեկությունները: Ջնայած դրան, տվյալներ կան, որոնք վկայում են այն մասին, որ կիլիկեցի հայերը զբաղվում էին նաև ծովագնացությամբ և անդրծովյան առևտրով, և որ Կիլիկյան Հայաստանում եղել են նավապետներ ու ծովայիններ[2], ինչպես և նավատերեր ու վաճառականներ[3], կապված ծովային առևտրի հետ:

Արաբ հեղինակ Իբն էլ Վարդին նկարագրելով 1323 թ. եգիպտական զորքերի կողմից Այասի պաշարումը՝ ասում է, թե այդ նավահանգստում հայերն ունեին երեք ռազմանավ, որոնք կոչվում էին «Ատլաս», «Շամա» և «Այաս»: Երբ քաղաքի հայ բնակիչները տեսան, որ քաղաքը պաշարած արաբները ճեղք են բացել բերդի պարսպի մեջ, շատ ընտանիքներ իրենց իրերով նետվեցին այդ ռազմանավերը, որպեսզի փախչեին Կիպրոս: Այլ աղբյուրներից հայտնի է, որ Այասի անկման ժամանակ բնակիչները նստել են նաև Կիպրոսից ուղարկված նավեր:

Կիլիկյան Հայաստանը, անկասկած, ունեցել է ռազմաառևտրական նավատորմիղ, բայց այն, ըստ երևույթին, այնքան էլ մեծաթիվ չի եղել: Դրան խանգարել է այն, որ միջերկրածովյան առևտուրը, ինչպես հայտնի է, գլխավորապես Վենետիկի ու Ջենովայի ձեռքին է եղել: Ինչպես արդեն նշվել է, այդ հանրապետությունների ռազմանավերը Կիլիկիայի ափերի մոտ էլ կովի էին բռնվում, որպեսզի տիրապետություն ձեռք բերեին Միջերկրական ծովի արևելյան մասում, իսկ երբեմն հարձակվում էին կիլիկյան նավահանգիստների վրա: Այսպիսով, Ջենովայի և Վենետիկի հանրապետությունները իրենց ծովային հզորությամբ ու ծովահենությամբ խոչընդոտում էին այդ երկրի ծովագնացության ու ծովային գործի զարգացմանը[4]:

Անհրաժեշտ է նշել, որ հայ քաղաքային բուրժուազիայի, որպես ուշ միջնադարի բյուրգերականության նորմալ զարգացումը արգելակվեց մի շարք հանգամանքներով: Կիլիկյան Հայաստանի բնակչությունը խառն է եղել: Ինչպես հայտնի է, Այասում, Տարսոնում և այլ քաղաքներում հայերից բացի, ապրում էին ասորիներ և իտալացիներ, որոնք նույնպես զբաղվում էին առևտրով և արհեստներով: Լայն արտոնություններն ու առավելությունները նպաստում էին

[1] Տե՛ս **Ալիշան**, Հայ-Վենետ, էջ 146:

[2] Տե՛ս **Ալիշան**, Սիսուան, էջ 371:

[3] Տե՛ս **V. Langlois**, Le trésor des chartes d' Arménie, p. 148:

[4] **Ա. Նալբանդյան**, Արաբ հեղինակները Հայաստանի և հայերի մասին (ձեռագիր):

[1] **Լեո**, Միջնադարյան կապիտալ, Եր., 1934, էջ 53:

իտալացիների առևտրական և արհեստավորական գործունեությանը, որոնք մրցակցում էին հայ վաճառականների և արհեստավորների հետ: XIII դարի 60-ական թվականներից սկսվեցին մամլուքների ամայացուցիչ արշավանքները դեպի Կիլիկիա: Այդպիսի պայմաններում հայ քաղաքային բուրժուազիան չէր կարող ձևավորվել որպես հասարակական ազդեցիկ ուժ:

Թեև առևտրական կապիտալն սկսել էր քայքայել երկրի արտադրության ավատաբնատնտեսական եղանակը, բայց դրամապրանքային հարաբերությունների և բուրժուական հարաբերությունների զարգացմանը խանգարում էին տարանցիկ առևտրի գերակըշռություններ արտահանման նկատմամբ, ներքին չուկայի թույլ լինելը և, մանավանդ, Եգիպտոսի ու Սիրիայի մամլուքների, Իկոնիայի սելջուկների ու թուրքմենների հաճախակի հարձակումները Կիլիկիայի վրա, որ ուղեկցվում էին երկրի կողոպուտով, բնակիչների գերեվարությամբ, ինչը և XIV դարի կեսին առաջացրեց Կիլիկյան Հայաստանի արտադրական ուժերի անկում:

Ամփոփելով, պետք է ասել, որ Կիլիկիայի տարանցիկ ճանապարհների վիթխարի նշանակությունը միջազգային առևտրում և Այասի մրցակցությունը Ալեքսանդրիայի հետ Կիլիկյան Հայաստանի ու Եգիպտոսի սուլթանության հարաբերությունների սրման պատճառներից են եղել: Դրա հետ միասին ուրիշ պատճառներ էլ կային նրանց միջև մղվող պայքարի համար, օրինակ, ասենք, Կիլիկիայի բարեկամական հարաբերությունները մոնղոլների հետ, դիվանագիտական հարաբերությունները Եվրոպայի հետ՝ ռազմական օգնություն ստանալու նպատակով:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIV ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Կիլիկյան Հայաստանի միջազգային ու ներքին դրությունը XIII դարի վերջին: Բեյբարսի մամլուքների ներխուժումը Կիլիկիա: Մոնղոլների ռազմական պարտությունը Սիրիայում և Եգիպտոսի հետ Լևոն III-ի կնքած խաղաղության դաշնագիրը (1285): Հեթում II-ի բանակցությունները հռոմեական եկեղեցուն հայկականի միավորման մասին: Արղունի դիվանագիտական հարաբերությունները պապության, Ֆրանսիայի և Անգլիայի հետ՝ մոնղոլների ու խաչակիրների միացյալ ուժերով Պաղեստինն ու Սիրիան նվաճելու հարցով: Մամլուքների հարձակումը խաչակիրների վերջին հենակետերի և Կիլիկիայի վրա: Պայքար թագավորական իշխանության համար Կիլիկիայում XIII դարի վերջին: Ղազան խանի արշավանքները Սիրիա և Հեթում II-ի մասնակցությունը: Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները Իրանի մոնղոլների հետ XIV դարի սկզբին:

Երեք հիմնական հանգամանքներ վճռական նշանակություն ունեցան Կիլիկիայի հայկական պետության միջազգային հարաբերություններում XIII դարի վերջին և XIV դարի սկզբին. առաջին՝ այն ժամանակվա համաշխարհային առևտրում Կիլիկյան Հայաստանի դերի բարձրացումը և Այասի մրցակցությունը Ալեքսանդրիայի հետ, երկրորդ՝ Սիրիայի համար Եգիպտոսի սուլթանության դեմ մոնղոլների մղած պայքարին Կիլիկիայի մասնակցությունը, երրորդ՝ պապական դիվանագիտության փորձերը՝ կազմակերպել նոր խաչակրաց արշավանքներ Սիրիան ու Պաղեստինը նվաճելու նպատակով, ընդ որում Կիլիկիային, որպես ռազմակետ, մեծ նշանակություն էր տրվում: Այս երեք հանգամանքները ուժգին ազդում էին Կիլիկիայի հայկական պետության արտաքին քաղաքականության վրա, գլխավորապես՝ տվյալ ժամանակաշրջանում Եգիպտոսի սուլթանության հետ նրա փոխհարաբերությունների վրա:

Եգիպտոսի սուլթանությունը դժգոհ էր, որ Կիլիկյան Հայաստանը մոնղոլների ու եվրոպական պետությունների դաշնակիցն էր, որոնք երբեմն պայմանավորվելով համատեղ գործել՝ ձգտում էին Կիլիկիայի մասնակցությամբ նվաճել Սիրիան ու Պաղեստինը: Բացի այդ, Այասի և Ալեքսանդրիայի առևտրական մրցակցության հետևանքով Եգիպտոսը ձգտում էր հարված հասցնել Կիլիկյան Հայաստանին ու խանգարել տարանցիկ առևտուրը, որը աչխուժորեն տեղի էր ունենում Եվրոպայի և Արևելքի միջև Կիլիկիայի նավահանգիստների միջոցով: Ի նկատի ունենալով մամլուքների կողմից Կիլիկիա ներխուժելու մըշտական սպառնալիքը՝ Կիլիկիայի կառավարող շրջանները ռազմական օգնության համար դիմում էին մոնղոլներին և Եվրոպային, ընդ որում XIV դարի սկզբից եվրոպական տերությունների նկատմամբ հույսն սկսեց աճել՝ Հուլավյանների ռազմական հզորության նվազմանը զուգընթաց:

Այս ժամանակաշրջանի պատմությունն սկսվում է Լևոն III-ի կառավարումից (1270–1289): Դա համընկավ խաչակրաց արշավանքների ավարտմանը: Լյուդովիկոս IX -ի մահով Եգիպտոսի սուլթանության համար վերացավ Ութերորդ խաչակրաց արշավանքի սպառնալիքը: Էդուարդ I-ի ժամանումը Սիրիա չփոխեց գործերի վիճակը Արևելքում:

Կիլիկիայի հայկական թագավորության միջազգային դրությունն այդ ժամանակ կտրուկ կերպով վատացավ: 1268 թ. Եգիպտոսի սուլթան Բեյբարսը ոչնչացրեց Անտիոքի իշխանապետությունը: Ամբողջ Սիրիան, բացառությամբ Ակրայի և Տրիպոլիի, ենթարկվում էր նրա իշխանությանը: Նա Կիլիկյան Հայաստանը դիտում էր որպես մոնղոլների և խաչակիրների դաշնակից և ձգտում էր նվաճել այն, իսկ եթե դա չհաջողվեր, քայքայել, ավերել ներխուժումներով: Հուլավյաններն էլ այդ նույն ժամանակ զբաղված էին իրենց տոհմակիցների՝ Ջուչի և Ջաղաթայ ուլուսների դեմ պատերազմելով:

Կիլիկիայի հայկական թագավորության միջազգային հարաբերությունների պատմության մեջ կարևոր հանգամանք է եղել արքունիքի բանակցությունները պապության ու եվրոպական արքունիքների հետ՝ ռազմական օգնություն ստանալու վերաբերյալ: Պապությունը ձգտում էր համախմբել Եվրոպայի ավատական ուժերը, իր կողմը գրավել նույնիսկ Իրանի մոնղոլներին և օգտագործել Կիլիկիայի հայերի ու Կիպրոսի խաչակիրների ուժերը Եգիպտոսի սուլթանության դեմ իր կազմակերպած պայքարում՝ երուսաղեմը ետ նվաճելու ու կաթոլիկ եկեղեցու տիրապետությունը Արևելքում տարածելու համար: XIII–XIV դարերի խաչակրաց արշավանքների համարյա բոլոր նախագծերում նչվում է Կիլիկիայի ռազմաստրատեգիական կարևոր դերը Սիրիան ու Պաղեստինը մուսուլմաններից ետ նվաճելու գործում: Օգնության խոստումներով պապությունը Կիլիկյան Հայաստանին կովի էր դրդում Եգիպտոսի սուլթանության դեմ՝ ուժեղացնելով մամլուքյան սուլթանների թշնամանքը կիլիկեցի հայերի նկատմամբ և մամլուքներին հրահրում ներխուժելու Կիլիկիա:

Եգիպտոսի սուլթանության հետ հարաբերությունները սրվելիս՝ Կիլիկյան թագավորությունը միշտ մնում էր առանց Եվրոպայի որևէ օգնության, ինչը պապությունը չռայլորեն խոստանում էր: Պապության փորձերը՝ օգտագործել Կիլիկյան Հայաստանի դժվարին վիճակը Եգիպտոսի սուլթանության և մամլուքների հարձակումների առնչությամբ և Կիլիկիայի հայերին ստիպել կաթոլիկություն ընդունելու՝ դա համարելով իր կողմից տրվելիք ռազմական օգնության պարտադիր պայման, որ չատ կործանարար հետևանքներ ունեցավ այդ պետության գոյության համար:

Անտիոքի իշխանապետության անկումից հետո պապական դիվանագիտության կարևոր կողմերից մեկը եղել է նոր խաչակրաց արշավանք կազմակերպելը: VII խաչակրաց արշավանքի անհաջողությունից մինչև Կիպրոսի թագավոր Պիեռի մահը (1369) ընկած ժամանակաշրջանում, Պիեռի, որը հանդուգն, բայց ապարդյուն արշավանք էր գործել Եգիպտոսի սուլթանության դեմ, պապությունը չատ անգամ է Եվրոպայի թագավորներին կոչ արել նոր խաչակրաց արշավանքի ելնելու՝ Պաղեստինի ու Սիրիայի ետ նվաճման համար: Մի քանի անգամ դիվանագիտական բանակցություններ են տեղի ունեցել մի կողմից՝ հայոց թագավորների ու կաթողիկոսների, մյուս կողմից՝ պապության ու եվրոպական թագավորների միջև, ինչպես Հռոմ, Փարիզ ու Լոնդոն ուղարկվող հայկական դեսպանությունների, այնպես էլ պապական լեգատների Կիլիկիա կատարած այցելությունների միջոցով, նաև՝ փոխադարձ գրագրություններ:

Բայց իսլամի միջնաբերդի՝ Եգիպտոսի սուլթանության դեմ սրբազան պատերազմի պրոպագանդան հաջողություն չունեցավ Արևմուտքում: XIII դարի երկրորդ կեսին և XIV դարում Արևմտյան Եվրոպայի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը անհրաժեչտ նախադրյալներ չէր տալիս դեպի Արևելք նոր արշավանքներ կատարելու համար: Խաչակրաց արշավանքների բոլոր նախագծերի տապալումը, Եվրոպայի թագավորների կողմից «տիրոջ չիրիմն ազատելու» խոստումների խախտումը բացատրվում է Արևմտյան Եվրո-

պայի ավատական հասարակության տնտեսական ու քաղաքական զարգացման ընթացքով, դասակարգային պայքարի սաստկացմամբ և եվրոպական խոշոր պետությունների միջև միջազգային հարաբերությունների սրմամբ, ինչպես և կայսրերի դեմ պապերի մղած պայքարով:

Եվրոպայի առաջավոր երկրների արտադրական ուժերի զարգացումը XIII դարում հանգեցրեց այն բանին, որ ազնվականները գերադասում էին զբաղվել գյուղատնտեսությամբ և նույնիսկ արհեստներով ու առևտրով, քան թև վտանգավոր արշավանքի գնալ դեպի Արևելք: Ֆրանսիայի, Իտալիայի և Անգլիայի գյուղացիությունը, նկատի ունենալով չարդարացված հույսերն այն առթիվ, թև Արևելքում հող ձեռք կբերի ու ազատություն և, գլխավորապես, Եվրոպայում հասարակական զարգացման ու դասակարգային պայքարի սրման հետևանքով խուլ էր մնում նոր խաչակրաց արշավանքի կոչելու պապության կոչերին և պայքարի էր նետվում ընդդեմ ավատատերերի: XIII դարի երկրորդ կեսին վտանգավոր էր դարձել գյուղացիական աշխարհազորին մուսուլմանների դեմ հանելը: Ավատատերերն այդ բանը հասկացան Լյուդովիկոս IX-ին գերությունից ազատելու համար խաչակրաց արշավանք կազմակերպելիս: Հայտնի է, որ այդ նպատակի համար հավաքված գյուղացիներն սկսեցին հարձակվել իշխանների ամրոցների վրա:

Պատմիչ Ժուանվիլը՝ Յոթերորդ խաչակրաց արշավանքի մասնակիցը, վճռականորեն դատապարտել է Ութերորդ խաչակրաց արշավանքի կազմակերպումը: Արտահայտելով ավատական դասակարգի մի մասի տրամադրությունները, որը դժգոհ էր խաչակրաց արշավանքների հետ կապված չարչարանքներից ու սնանկացուցիչ ծախսերից, նա խաչակրաց արշավանքին միանալու կոչին պատասխանել է մերժումով՝ դա պատճառաբանելով այն բանով, որ մինչ ավատատերերը թափառում են օտար երկրներում ու պատերազմ մղում ծովից այն կողմ, նրանց տիրույթները քայքայվում են ու աղքատանում և որ դրա համար էլ ինքը որոշել է տանը մնալ, որպեսզի զբաղվի իր կալվածքի բարեկարգմամբ ու պաշտպանությամբ[1]:

XIII դարի վերջից Ֆրանսիայի պայքարը Ֆլանդրիայի համար և պապության դեմ, Անգլիայի թագավորների արշավանքները դեպի Իռլանդիա ու Շոտլանդիա, իսկ ապա Հարյուրամյա պատերազմը առաջնակարգ նշանակություն ունեին այդ երկրների ավատատերերի համար և հետին պլան մղեցին Արևելքը նվաճելու գաղափարը: Սակայն Անգլիայի ու Ֆրանսիայի թագավորները չէին հրաժարվում Արևելքը նվաճելու մտքից: Այդ է հենց վկայում պապության հետ, Կիլիկիայի հայ թագավորների ու մոնղոլների հետ նրանց դիվանագիտական հարաբերությունների պատմությունը: Գերմանիան, որ կորցրել էր հենակետը Հարավային Իտալիայում ու Սիցիլիայում և թուլացել ուժեղացած ավատատերերի ու պապության դեմ կայսերական իշխանության համար մղած պայքարից, այլևս չէր կարող մասնակցել խաչակրաց արշավանքին: Ուժասպառ եղած Բյուզանդիան, որին XIII դարի վերջին և XIV դարի սկզբին սպառնում էին օսման թուրքերը, անտարբեր էր Սիրիայի ու Պաղեստինի ճակատագրի հանդեպ: Վենետիկը առևտրական չահավետ պայմանագիր կնքելով եգիպտոսի սուլթանության հետ՝ մեծ չահույթներ էր հավաքում Ալեքսանդրիայի չուկաներում և այլ նավահանգիստներում ունեցած իր արտոնյալ դիրքի շնորհիվ:

Այսպիսով, XIII դարի վերջին տասնամյակներից XIV դարի առաջին տասնամյակներն ընկած ժամանակաշրջանում միջազգային իրադրությունը Եվրոպայում բարենպաստ էր Եգիպտոսի սուլթանության կողմից Կիլիկյան Հայաստանի դեմ ծավալվող արշավանքի համար: Արևելքում դրան նպաստում էին նաև Ոսկե Հորդայի և Հուլավյանների միջև տեղի ունեցող գժտությունները ու պատերազմները, ինչպես և վերջիններիս թուլացումը XIV դարի սկզբին: Այս ամենը բացասաբար է անդրադարձել Կիլիկիայի հայկական թագավորության միջազգային դրության վրա: Նա ընկել էր Միջերկրական ծովի արևելյան ափը տիրելու համար Արևելքի և Արևմուտքի միջև մղվող պայքարի ջրապտույտի մեջ. սեփական ուժերով արդեն չէր կարող դիմագրավել եգիպտոսի սուլթանությանը:

Գրիգոր X պապը 1274 թ. եկեղեցաժողով գումարեց Լիոնում, որի ընթացքում հունական ու հռոմեական եկեղեցիների միավորման հարցի հետ զրված էր նաև Բյուզանդիայի դեմ խաչակրաց արշավանք կազմակերպելու հարցը: Պատմագիր Պախիմերի մոտ հետաքրքիր տողեր կան այն պատճառների մասին, որոնք Միքայել Պալեոլոգին դրդել են ճանաչելու (ձևականորեն) հռոմեական և հունական եկեղեցիների միավորումը: «Վերջինս (Միքայել Պալեոլոգը— Գ. Մ.),— ասում է Պախիմերը,— հաշտության (միավորման) էր ձգտում՝ վախենալով միայն Կառլոս Անժուացուց, իսկ եթե այդ երկյուղը չլիներ, ապա նրա մտքով իսկ չէր անցնի հաշտությունը»[1]:

[1] Տե՛ս Memoire de jean sire de Joinville, P., 1858, p. 135:

[1] **Г. Пахимер,** История Михаила и Андроника Палеологов, СПб., 1860, с. 339.

Հրավեր է հղված եղել նաև հայոց թագավոր Լևոն III-ին: Հայոց եկեղեցու պատմաբան Օրմանյանը նկատում է, որ, հակառակ Ալիչանի պնդման, Լիոնի եկեղեցաժողովում Կիլիկյան Հայաստանից դեսպաններ չեն եղել[1]:

Թեև Ռուդոլֆ Հաբսբուրգը, Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ III-ը, Անգլիայի թագավոր Էդուարդ I-ը և Եվրոպայի չատ իշխաններ խոստացան մասնակցել պապության կողմից կազմակերպվող արշավանքին ընդդեմ Եգիպտոսի սուլթանության, բայց, ինչպես հայտնի է, Լիոնի եկեղեցաժողովից չատ չանցած՝ Գերմանիայի կայսրը պատերազմ է սկսել Զեխիայի թագավոր Պշեմիսլ II-ի դեմ, Ֆրանսիայի թագավորը զերադասել է պատերազմել Իսպանիայի դեմ, իսկ Անգլիայի թագավորը զրաղվել է Շոտլանդիան զրավելով:

Լիոնի եկեղեցաժողովից երկու տարի անց Աբաղա խանը երկու դեսպան հղեց Հովհաննես պապի մոտ՝ խնդրելով արագացնել Եգիպտոսի սուլթանության դեմ խաչակրաց արշավանքի կազմակերպումը, և իր կողմից առաջարկեց խաչակիրների բանակն ապահովել ամեն անհրաժեչտ բաներով, եթե այն ժամանի Սիրիա: Մոնղոլ խանի դեսպանները այնուհետև այցելեցին Արագոնի, Կաստիլիայի, Անգլիայի ու Ֆրանսիայի թագավորների արքունիքները, բայց հաջողություն չունեցան[2]:

Այսպիսով, 70-ական թվականների սկզբին Կիլիկյան Հայաստանը համարյա մեկուսացած վիճակի մեջ էր: Նա չէր կարող հույս դնել ո՛չ մոնղոլների օգնության վրա, որոնք զբաղված էին իրենց արևելյան սահմաններում տեղի ունեցող պատերազմներով, ո՛չ Եվրոպայի օգնության վրա, որտեղ այդ ժամանակ բարդացել էին միջազգային հարաբերությունները և նախապրյալներ չկային նոր խաչակրաց արշավանքի համար: Այլ էր նրա վտանգավոր թշնամու՝ Եգիպտոսի սուլթանության վիճակը: Սա դաչնակիցներ ուներ Արևելքում: Դրանք Փոքր Ասիայի թուրքմեններն ու սելջուկներն էին, ինչպես և Ոսկե Հորդայի մոնղոլները: Եգիպտոսի սուլթանությունը կարող էր հույսը դնել նաև Առաջավոր Ասիայի մուսուլման բնակչության համակրանքի վրա, որը ի դեմս Բեյբարսի, որ իր մոտ էր պահում Աբբասյանների խալիֆին, տեսնում էր իսլամի պաչտպանին:

Բարեհաջող չէր նաև դրությունը երկրի ներսում: Կիլիկիայի խոչոր իշխանների մեջ ուժեղացել էին կենտրոնախույս ձգտումները, որոնք անցյալում էլ էին նկատվում: Աղբյուրներում կարելի է գտնել վկա-

[1] Տե՛ս **Մ. Օրմանեան,** Ազգապատում, էջ 1684:

[2] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 607:

յություններ այն մասին, որ Լևոն III-ը մամլուքների՝ Կիլիկիա ներխուժման ժամանակ չէր կարող հույս դնել իր վասալների ռազմական օգնության վրա: 1275 թ. ձեռագրի հիչատակարանում կարդում ենք «Լևոն թագավորը հույս չդնելով իր վասալների վրա և տեսնելով նրանց չար մտադրությունն ու դավաճանությունը, կռվի դուրս չեկավ թշնամու դեմ»[1]: Այլ աղբյուրներից հայտնի է, որ նա, չունենալով բավականաչափ ուժ՝ որոչ ժամանակ գերադասել է թշնամուց թաքնվել ամրոցներում, քան բաց մարտի դուրս գալ: Իշխանների կողմից թագավորի դեմ նյութվող դավերի մասին հիչատակում է թագավորական գրասենյակի քարտուղար Վահրամ Բաբունին[2]: Խոռվարար ոգու դրսևորում է նկատվել որոչ իշխանների մեջ: Լևոն III-ի դեմ ապստամբել է Լևոնը՝ Մոլևոնի տերը, Ապլղարիպի հետ դաչնակցած[3]: Դևպքերին ժամանակակից մի հեղինակի մոտ նչված է, որ Լևոն III-ի թագավորության երրորդ տարում (1273) նրա դեմ չարիք էր նյութվում[4]:

Սուլթան Բեյբարսը, հավանաբար, բարենպաստ է համարել Արևվելքի գործերի վիճակը ագրեսիայի համար: 1275 թ. նրա մամլուքները ներխուժեցին Կիլիկիա և կողոպտեցին Մամեստիան, Տարսոնը, Այասը՝ տանելով մեծ ավար: Նրանք ներխուժեցին նաև Սիս, որտեղ վառեցին թագավորական պալատը, բայց միջնաբերդը չկարողացան վերցնել: Լեռնային Կիլիկիայի բերդերը մնում էին Լևոն III-ի ձեռքին, որին այդ դժվարին պահին այնուամենայնիվ հաջողվեց իր չուրջը համախմբել լավագույն զորականներին ու հավատարիմ մարդկանց և հարվածել թշնամուն: Թշնամիների դեմ քաջաբար մարտնչում էր զառամյալ տարիքի հասած Սմբատ սպարապետը՝ «Դատաստանագրքի» կազմողը: Սիսի մոտ մամլուքներն անհաջողություն կրեցին: 1276 թ. նրանք նորից ներխուժեցին Կիլիկիա, բայց Լևոնը փակեց նրանց ճանապարհը, չատերին ոչնչացրեց, իսկ մնացածները փախան: Ըստ երևույթին մինչև 1277 թ. իր խոչոր արչավանքը դեպի Փոքր Ասիա, Բեյբարսը փորձել է սելջուկների հետ դաչնակցած՝ կործանել Կիլիկյան Հայաստանը: Նա այդ բանը ցանկացել է անել ոչ միայն մոնղոլների դեմ արչավելու դեպքում իր թիկունքն ապահովելու նպատակով, այլև, հնարավոր է, Հանուն Կիլիկիայի գրավման, քանի որ տիրելով դրան՝ հետո հեչտ կլիներ նվաճել նաև Փոքր Ասիան:

[1] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 527:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Ալիշան,** Սիսուան, էջ 142:

[4] Տե՛ս Գիտ. աչխ. ժողովածու, Երևանի Համալսարան, հ. XXIII, էջ 377:

Այսպիսով, մամլուքների ու նրանց դաշնակիցների արշավանքները դեպի Կիլիկիա 1275–1276 թվականներին՝ Բեյբարսի զորքերի կողմից 1277 թ. Փոքր Ասիա ներխուժելու նախօրյակին, ինչպես երևում է, նպատակ էին հետապնդում խոշոր արշավանք նախապատրաստել Իկոնյան սուլթանության դեմ՝ Կիլիկիայի միջով, ինչին զբղդում էին նաև այն սելջուկ բեկերը, որոնք ղժգոհ լինելով մոնղոլական տիրապետությունից՝ փախել էին Եգիպտոս: Բեյբարսի հետ գաղտնի կապ է ունեցել նաև Փերվաննե՝ Ռումի սուլթանության վեզիրը, որը նրան դրդում էր արշավել Փոքր Ասիա՝ խոստանալով օգնել: Իկոնիայի սելջուկները գերադասում էին կախում ունենալ Եգիպտոսից, քան մոնղոլներից: Այս մասին Ռաշիդ ադ դինը գրում է. «647 թվի (1275–1276) ամռանը Զիյա ադ դինը՝ Հաղիրի որդին, և Փերվաննե որդին Ռումի մարզից հարյուր հոգով ճանապարհվեցին դեպի Սիրիա՝ Ռուքն ադ դին Բունդուքդարի (Բեյբարս – Գ. Մ.) մոտ և նրան դրդեցին արշավանքի գնալ Ռումի դեմ»[1]:

Հույսը դնելով Իկոնիայի սուլթանությունում առկա իր կողմնակիցների վրա՝ Բեյբարսը 1277 թ. գարնանը արշավանք գործեց դեպի Փոքր Ասիա՝ Ալբիստանի միջով, որտեղ Ռումի երկիրը պահպանում էին մոնղոլ էմիրներ Տուկան և Տուդունը, ունենալով մի զորք, որը բաղկացած էր 11000 մոնղոլներից ու 3000 վրացիներից, ինչպես և սելջուկների օժանդակ ջոկատներից[2]: Կատաղի ճակատամարտ տեղի ունեցավ, մոնղոլական զորքը ջախջախվեց, քչերն ազատվեցին: Մոնղոլները կորցրին 7000 հոգի: Բեյբարսը մտավ Կեսարիա՝ Ռումի քաղաքական և առևտրական այդ կարևորագույն կենտրոնը: Սակայն նա Ռումում չհանդիպեց իր կողմնակիցների խոստացված աջակցությանը: Նրանց պարագլուխ Փերվաննեն, հույս չունենալով Բեյբարսի վերջնական հաղթանակի վրա, փախավ Թոքաթ: Վախենալով, որ մոնղոլներն իրեն կկտրեն Տավրոսի լեռնանցքներից ու կկորցնի նահանջի ճանապարհը՝ Բեյբարսն չտապ նահանջեց[3]: Այս մասին Ռաշիդ ադ դինի մոտ կարդում ենք. «Բունդուքդարը Կեսարիա մտավ և այնտեղ մնաց մեկ շաբաթ... Նրանց համար պարենամթերքի պակասություն եղավ, իսկ Փերվաննեն Թոքաթի բերդում էր: Բունդուքդարը նրա մոտ սուրհանդակներ ուղարկեց՝ հրավիրելու, որ գա իր մոտ: Նա հրավերը չընդունեց: Բունդուքդարը սպանել տվեց մի քանի քրիստոնյաների, որոնց թվում և հայերի, ու նոր դարձավ»[4]: Այլ կերպ կլիներ նրա վիճակը, եթե տիրեր Կիլիկիային, որի ռազմավարական դիրքի մասին Սանուտոն XIV դարի սկզբում գրել է. «Փոքր Ասիայի և սուլթանի (Եգիպտոս – Գ. Մ.) երկրների միջև Հայաստանն է (Կիլիկիան – Գ. Մ.): Եթե սուլթանին հաջողվի նվաճել այն, ապա նրա իշխանության տակ կմիավորվեն թուրքական ու սարակինոսյան տերությունները և նրանք միմյանց կօգնեն ու հեշտությամբ կդիմագրավեն թաթարներին»:

Իմանալով Ալբիստանում իր զորքի կործանման և Բեյբարսի՝ Ռումի սահմանները ներխուժելու մասին, Աբաղա խանը հենց նույն օրը դուրս եկավ Թավրիզից և չուտով հասավ Ռում: Նա, Ռաշիդ ադ դինի խոսքերով ասած, հրամայեց «սպանել խառնակչություն գցած թուրքմեններին... Նա հրամայեց նաև, որ կոտորեն ու թալանեն Ռումի մի քանի գավառներ»[1]:

Աբաղա խանը ցանկացել է արշավել դեպի Սիրիա, բայց էմիրները խորհուրդ են տվել հետաձգել մինչև ձմեռվա սկիզբը: Բեյբարսի այն հույսերը, թե Իկոնիայի սուլթանությունում սելջուկների գործուն աջակցությունը կստանա, չարդարացան: Բեյբարսը պետք է որ համոզվեր, որ դժվար կլինի նվաճել Փոքր Ասիայի ներքին գավառները, քանի դեռ գոյություն ունի Կիլիկիայի Հայկական պետությունը, որը Սիրիայի կողմից փակում է նրա մատույցները: Իր նահանջից չատ չանցած՝ Բեյբարսը մեռավ Դամասկոսում (1277), իսկ նրա հաջորդները համարձակվեցին, նրան կրկնելով, նոր արշավանք գործել դեպի Փոքր Ասիայի խորքը:

Չնայած Փոքր Ասիայում տարած խոշոր հաղթանակին՝ Աբաղա խանը չկարողացավ օգտագործել ու զարգացնել 1277 թ. պատերազմաշրջանի հաջողությունը և արշավել Սիրիա, քանի որ 1278–1279 թթ. ձմռանը Ջաղաթայի ուլուսի մի խոշոր ջոկատ, օգտվելով այն բանից, որ Աբաղա խանի զորքերը կենտրոնացած էին սիրիական սահմանի վրա՝ ներխուժեց Ֆարս[2]:

Բացի այն, որ Իրանի իլխանները չատ հաճախ էին ստիպված լինում պատերազմել և՛ Եգիպտոսի, և՛ Ոսկե Հորդայի դեմ ու միաժամանակ Խորասանը պաշտպանել Արևելքից, կար նաև մի ավելի խոր պատճառ, որը Հուլավյաններին խոչընդոտում էր իրենց ուժերը կենտրոնացնել Սիրիան նվաճելու համար: Դա Հուլավյանների պետության ներքին թուլությունն էր, որն առաջացել էր Հայաստանը,

[1] **Рашад-ад-дин,** *Сборник летописей, т. III, с. 88.*

[2] *Տե՛ս* **D' Ohsson,** *Hist. des Mongols, t. III, p. 482:*

[3] *Տե՛ս* **Lane-Poole,** *History of Egypte, L., 1901, p. 270:*

[4] **Рашад-ад-дин,** *Сборник летописей, т. III, с. 88.*

[1] **Рашад-ад-дин,** *Сборник летописей, т. III, с. 88.*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 91–92:*

Վրաստանը, Իրանը, Միջագետքն ու Փոքր Ասիան նվաճելու հետևանքով, երկրներ, որոնք տնտեսապես ու մշակույթով հասել էին զարգացման բավականին բարձր աստիճանի: Այդ և հաջորդ ժամանակաշրջանում Հուլավյանների պետությունը տնտեսական անկում էր ապրում, ինչը նվազեցնում էր պատերազմելու համար նրա նյութական պաշարները: Բացի այդ, մոնղոլ խանների և ավատատերերի կողմից Առաջավոր Ասիայի նվաճված երկրների ժողովուրդների քաղաքական իրավունքների ոտնահարման բռնապետական վարչակարգը և աշխատավորության դաժան չահագործումը հարկերով, կոպիտ բռնության գործադրմամբ, հաճախակի ապստամբության էին դրդում ու պայմանավորում Հուլավյանների թիկունքի անկայունությունը պատերազմի ժամանակ: Առանձնապես ուժգին էր մոնղոլների լծի դեմ ծավալված չարժումը Վրաստանում: Հուզումներ էին տեղի ունենում նաև Իրանում: Փոքր Ասիայի և Միջագետքի մուսուլման բնակչությունը թշնամաբար էր տրամադրված մոնղոլների նկատմամբ և համակրանք էր տածում եգիպտոսի հանդեպ:

Պետությունների ներքին և արտաքին դրությունն այնպես էր, որ Հուլավյանները դեպի արևմուտք արշավանքի դուրս գալիս՝ իրենց դինված ուժերի մի մասը պետք է պահեին հյուսիսային և արևելյան սահմանների վրա, քանի որ սովորաբար եգիպտոսի, Ոսկե Հորդայի և Ջաղաթայի ուլուսի հարձակումները քիչ թե չատ համաձայնեցված էին լինում: Նրանք պետք է կազմ ու պատրաստ զորք ունենային նաև երկրի ներսում՝ առ ի դեպ ննթակա ժողովուրդների ապստամբության: Այսպիսով, Հուլավյանների պետության ռազմական ուժերը սովորաբար դեսուդեն են ցրված եղել: Հուլավյաններն իրենք էին զգում իրենց թուլությունը և այն, որ սեփական ուժերով իրենք չեն կարող նվաճել Սիրիան: Կիլիկյան Հայաստանից բացի Հուլավյաններն ուրիշ դաշնակիցներ չունեին: Դրանով են հավանաբար բացատրվում Աբաղա խանի 1274 և 1277 թվականների դիվանագիտական հարաբերությունները պապության, Անգլիայի ու Ֆրանսիայի հետ դաշինք կնքելու համար, որի նպատակն էր մամլուքներին դուրս քշել Սիրիայից՝ Իրանի մոնղոլների ու եվրոպացի խաչակիրների ուժերի միավորման ճանապարհով:

Բեյբարսի մահից հետո կարճատև դադար եղավ, բայց 1279 թ. եգիպտոսի սուլթան Սելիդ Նասիր ադ դինը երկու ջոկատ ուղարկեց. մեկը՝ եգիպտական, մյուսը՝ սիրիական, 13 հազար հոգի, որպեսզի գրավեին Եփրատի ափի կարևորագույն ամրոցը՝ Կալա ատ ար Ռումը (Հռոմկլա)՝ հայոց կաթողիկոսների աթոռանիստը: Քաղաքը մերժեց

հանձնվելու առաջարկը և քաջաբար պաշտպանվում էր, բայց գրավվեց: Սակայն մամլուքներին չհաջողվեց գրավել միջնաբերդը, և նրանք ավար առնելով՝ նահանջեցին: Աբաղան որոշեց կռվի նլնել եգիպտոսի սուլթանության դեմ: Շուտով Սիրիայի իրադարձությունների արագացրին մոնղոլների արշավանքը դեպի արևմուտք: Կահիրեում տեղի ունեցավ մամլուքյան սուլթանների՝ դարաշրջանի համար սովորական դարձած հեղաշրջումներից մեկը, և իշխանությունը գրավեց Քելավունը (1279–1290): Նրա դեմ ապստամբեց Բեյբարսի սերակից, Դամասկոսի էմիր Սոնկորը՝ նպատակ ունենալով իր ինքնուրույն իշխանությունը հաստատել Սիրիայում: Պարտությունն կրելով՝ Սոնկորը դիմեց Աբաղա խանին և նրան սկսեց դրդել, որ արշավանք գործի դեպի Սիրիա[1]:

Սիրիայի իրադարձությունները Աբաղա խանին չատ բարենպաստ թվացին հաջող արշավանք կատարելու համար, ինչը խոստանում էր իրագործել Սիրիայի նավահանգիստների գրավման վաղուց մտածված ծրագիրը, և 1280 թվին նա սկսեց պատրաստվել արշավելու դեպի Սիրիա: Սակայն Սոնկորը չուտով գերադասեց ննթարկվել Քելավունին՝ վախենալով, հավանաբար, մոնղոլների ամայացուցիչ ներխուժումից Սիրիա:

Իրանի հետ ստեղծված բարդությունների ժամանակ Քելավունը, Բեյբարսի օրինակով, վերսկսեց դիվանագիտական հարաբերությունները Հուլավյանների թշնամիների հետ՝ հյուսիսում և արևելքում: Աբաղա խանը կանխատեսել էր դա, ուստի և 1280 թ. Սիրիայի արշավանքի հետ միաժամանակ համալրում ուղարկեց Դերբննդի կապանը պահպանող զորքերին և մեկ զորաջոկատ էլ ուղարկեց Խորասան՝ Արղունի հրամանատարությամբ: 1280 թ. հոկտեմբերին մոնղոլական զորքերը ներխուժեցին հյուսիսային Սիրիա և արագ գրավեցին Այնթապը, Դարբսակը և Բագրասը:

Լրտեսների միջոցով տեղեկություններ ստանալով մոնղոլների տեղաշարժման մասին՝ Քելավունը նախապատրաստվեց հակահարված տալու նրանց: Հոկտեմբերի 27-ին նրա զորքերը հասան Էմեսսա, որտեղ նրան իր ջոկատով միացավ Սոնկորը: Աբաղա խանի կողմից Սիրիային սպառնացող վտանգի պահին Քելավունի չուրջը համախմբվեցին նրա էմիրները և քոչվոր ցեղերի առաջնորդները: Նրա բանակը հասավ 40–50 հազարի:

Հնթում պատմիչի վկայությամբ Մննգու Թիմուրի մոնղոլական բանակը ուներ 30 հազար դինվոր[2], բայց հավանական է, որ այն մի

[1] Տե՛ս **D' Ohsson,** *Histoire des Mongols, t. III, p. 524:*

[2] Տե՛ս *Documents arméniens, t. II, p. 182:*

քիչ պակաս եղած լինի: Հուլավյանների վասալների զորաջոկատները 25 հազար զինվոր են ունեցել: Այդ բանակների միացյալ ուժերը քանակական նկատելի առավելություն կունենային, եթե նրանց միանային Աբաղայի զորքերը:

Մենգու Թիմուրի աջ թևի մոնղոլները, որոնք սկսել էին գրոհը, ջարդվել են և դիմել փախուստի: Իսկ ձախ թևում եղած վրացիները, հայերը, օյրոտներն ու մոնղոլները մամլուքներին ջախջախել են ու հալածել մինչև Էմեսայի պարիսպները, որտեղ զարմանքով իմացել են Մենգու Թիմուրի զորքերի պարտության ու փախուստի մասին: Հենց այս պարտությունը վերագրում է բեդվինների գրոհին: Մենգու Թիմուրի արշավանքը դեպի Սիրիա ավարտվել է անհաջողությամբ: Մամլուքներից հալածված՝ իր բանակի մնացորդներով նա փախել հասել է Եփրատին:

Աբաղան իմանալով իր զորքերի պարտությունը, տաքացած հայտարարել է, որ ինքը անձամբ կռվի կգնա եգիպտոսի սուլթանության դեմ, բայց նոր արշավանք սկսելը նրա ուժերից վեր էր: Նախ՝ նրա ուժերն անբավարար էին, այնուհետև՝ գրավված չէին Եփրատի վրա գտնվող ամրությունները, որոնք կասեցնում էին նրա ներխուժումը Սիրիա: Բացի այդ, հենց նույն ժամանակ Ջաղաթայի ուլուսի մոնղոլները ներխուժել են Իրանի հարավարևմտյան մարզերը և հասել Պարսից ծոցին: Այսպիսի հանգամանքներում արշավանքը դեպի Սիրիա չէր կարող տեղի ունենալ: 1282 թ. փետրվարի 13-ին Աբաղա խանը մեռավ:

Մոնղոլների պարտությունից ու Սիրիայից նահանջելուց հետո Կիլիկյան Հայաստանին վիճակվեց փոխհատուցել մոնղոլների կողմում պատերազմին ակամա մասնակցելու համար, նրանց ռազմական անհաջողությունների համար: Թուրքմենների ու քրդերի ջոկատը եգիպտոսի սուլթանի հրամանով ներխուժեց Կիլիկիա, հասավ մինչև Այաս, կողոպտեց և այրեց այդ քաղաքը: Սակայն հարուստ ավարով վերադառնալիս՝ ջոկատի մեծ մասը ջախջախվեց լեռնանցքում[1]:

Աբաղա խանի մահից հետո Հուլավյանների պետության մեջ իշխանության համար պայքար բռնկվեց նրա որդի Արղունի և եղբայր Թողուղարի միջև, որը հենվելով իսլամի կողմնակիցների վրա՝ գրավեց իշխանությունը, իսլամ ընդունեց և Ահմեդ անվամբ կառավարեց երկու տարի (1282–1284)[2]: Ահմեդը դեսպանություն ուղարկեց սուլթան Քելավունի մոտ՝ նամակով հայտնելով, թե ինքը իսլամ է ընդունել, և հաշտություն առաջարկեց: Նա Քելավունից դրական պատասխան ստացավ: Հուլավյանների պետության մեջ մուսուլմանական կուսակցության հաղթանակը և Իրանի ու եգիպտոսի միջև տեղի ունեցող խաղաղության բանակցությունները վատացրին Կիլիկիայի հայկական թագավորության միջազգային դրությունը: Շուտով Քելավունի հրամանով Հալեպի էմիրը ներխուժեց Կիլիկիա: Թևև վերադառնալիս մամլուքները գրոհի ենթարկվեցին Ալեքսանդրետի լեռնանցքում և հալածվեցին հայերից, բայց և այնպես Լևոն III-ը հասկացավ, որ մոնղոլների վրա հույս դնել չի կարելի, իսկ սեփական ուժերով պայքարել ուժեղ եգիպտոսի դեմ անհնար է: Հետևաբար, եթե 70-ական թվականներին, մանավանդ Փոքր Ասիայից Բեյբարսի նահանջից ու նրա մահից հետո (1277) Լևոն III-ը կարող էր հուսալ, թե մոնղոլների օգնությամբ իրեն կհաջողվի պաշտպանել իր տիրածքն ու անվտանգությունը մամլուքների ներխուժումից և Սիրիայում նրանց տիրապետության կործանման դեպքում նույնիսկ ընդլայնել այն, ապա էմեսայի մոտ մոնղոլների պարտությունից և Աբաղայի մահից (1282) հետո, երբ Ահմեդը իշխանության գլուխ անցնելով՝ ձգտում էր վերջ տալ եգիպտոսի դեմ մղվող պատերազմներին, իսկ եվրոպայից օգնության հույս չկար, նա վճռեց ինչ գնով ուզում է լինի խաղաղության պայմանագիր կնքել եգիպտոսի սուլթանության հետ:

Լևոն III-ը մի քանի անգամ դեսպան ուղարկեց Կահիրե, բայց նրանք ձերբակալվեցին սուլթան Քելավունի հրամանով: Վերջապես 1285 թ. եգիպտոսի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի միջև տաճարական ոսկու կոմանդորի միջնորդությամբ խաղաղության դաշինք կնքվեց 10 տարի 10 ամիս 10 օրով: Համաձայն այդ պայմանագրի Կիլիկյան Հայաստանը պարտավորվում էր յուրաքանչյուր տարի վճարել 500000 «թագավորական» (մոտ 200000 ռուբլի), ուղարկել 25 ցեղական նժույգ, 25 ընտիր ջորի և 10000 երկաթի քառակողիկ՝ պայտերի համար, և մեխեր[1]: Կիլիկյան Հայաստանի կողմից այսպիսի վիթխարի գումարի վճարումը բացատրվում է միայն նրանով, որ արտաքին առևտուրը հասել էր մեծ չափերի, և պետությունը խոշոր եկամուտներ էր ստանում մաքսերից:

1285 թ. խաղաղության պայմանագրում, ի միջի այլոց, ասվում էր, թե «երկու կողմերի վաճառականները (եգիպտոսի և Կիլիկիայի), որոնք ձեռնարկել են առևտրական ճանապարհորդություն, չպետք է ճնշումների ենթարկվեն և նրանց նկատմամբ պետք է պահպանել

[1] Տե՛ս **Ալիշան**, Սիսուան, էջ 264:

[2] Տե՛ս **Рашад-ад-дин**, Сборник летописей, т. III, с. 48:

[1] Տե՛ս **V. Langlois**, Le trésor des chartes d' Arménie, p. 221:

օրենք, արդարադատություն և արդարություն»[1]: Պայմանավորվել էին, որ «բոլոր վաճառականներին, ռամիկներին, ճանապարհորդներին և բոլոր դասերի մարդկանց, որոնք գալիս են Արևմուտքից, Ռումից, Արևելքի երկրներից, Իրաքից, Բաղդադից, Պարսկաստանից և այլ երկրներից ու ոտք են դնում Հայաստանի տարածքը, որպեսզի այդտեղից մեկնեն սուլթանի պետությունը, թագավորը (Հայոց) պարտավոր է լիակատար իրավունք տալ նրանց, որպեսզի կատարեն իրենց ճանապարհորդությունը»[2]: Այնուհետև խոսվում է կիլիկիայից ազատորեն ստրուկներ և այլ ապրանքներ գնելու և դուրս տանելու մասին:

Հետաքրքիր է նշել, որ իլխան Ահմեդը սուլթան Քելավունին ուղարկած իր նամակում նույնպես գրել է. «Մենք հրամայել ենք հարգանքով վերաբերվել ուխտագնացությանը, պահպանել ուխտավորներին և ապահովել նրանց ամեն անհրաժեշտ բաներով, երաշխավորել ճանապարհորդության անվտանգությունը, վերացնել քարավանային ճանապարհների խոչընդոտները: Մենք վաճառականներին թույլ ենք տալիս ազատորեն տեղաշարժվել երկրից երկիր և առևտուր անել ըստ իրենց հայեցողության»[3]: Պատասխան նամակում Քելավունը Ահմեդին հայտնում է իր բավարարվածությունը այդ առթիվ և հաղորդում, որ ինքն էլ իր հերթին հրամայել է Ռահբեի, Հալեպի, Բիրի, Այնթապի կառավարիչներին, որ վաճառականների ու ճանապարհորդների հետ նույն կերպ վարվեն[4]: Քելավունի այս նամակագրությունը Ահմեդի հետ և նրա պայմանագիրը Լևոն III-ի հետ վկայում են, որ եգիպտոսի սուլթանությունը մեծ ուշադրություն էր հատկացնում առևտրի զարգացմանը և իր վաճառականների շահերի պաշտպանությանը, իրեն ենթակա երկրների և Կիլիկիայի միջև նորմալ պայմանների ստեղծմանը, ինչպես և Կիլիկիայի տարանցիկ ճանապարհների լավագույնս օգտագործմանը՝ ավելի հեռավոր երկրների հետ առևտուր անելու համար:

Եգիպտոսի հետ խաղաղություն կնքելուց հետո Կիլիկյան Հայաստանի ներքին դրությունը մնում էր ծանր: Այնուամենայնիվ կարճատև դադարը նրան հնարավորություն տվեց բուժել վերքերը, ինչին նպաստում էր նաև ներքին և տարանցիկ առևտրի զարգացումը: Երբ Իրանում հաղթեց Արղունը, Լևոնը պետք է գնար նրա մոտ, բայց նա

[1] **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 226.*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] **Wassafs,** *Geschichte Hammer-Purgstall, Wien, 1856.*

[4] *Տե՛ս նույն տեղում:*

չէր չտապում, հավանաբար, սպասելով նրա իշխանության ամրապնդմանը կամ, որ ավելի հավանական է, վախենալով իր դեմ գրգռել եգիպտոսի սուլթան Քելավունին:

Պետության միջազգային իրադրությունը և ներքին վիճակը է՛լ ավելի վատթարացավ XIII դարի վերջին ու XIV դարի սկզբին, երբ գահակալեց Հեթում II-ը՝ Լևոն III-ի որդին: Նրա կառավարման չբարգանը համընկավ համաշխարհային առևտրի մեջ Կիլիկյան Հայաստանի դերի մեծացմանը, Կիլիկիայի հայ ազնվականության մեջ արևմտյան ազդեցության հետագա աճին, գլխավորապես ֆրանսիականի ազդեցությանը՝ պետության ներքին կյանքում, իսկ արտաքինում՝ Ակրայի ու Տրիպոլիի անկմանը, մոնղոլների խոչոր արշավանքներին դեպի Սիրիա և նրանց վերջնական պարտությանը՝ Միջերկրական ծով դուրս գալու համար եգիպտոսի սուլթանության դեմ մղված երկարատև պայքարում: Այդ ժամանակաշրջանում աշխույժ դիվանագիտական հարաբերություններ էին տեղի ունենում մի կողմից՝ Կիլիկիայի հայերի ու Իրանի մոնղոլների և մյուս կողմից՝ պապության ու եվրոպական պետությունների միջև՝ եգիպտոսի սուլթանության դեմ մղվելիք համատեղ գործողությունների վերաբերյալ, որոնք սակայն դրական արդյունքներ չտվեցին:

Հեթում II թագավորը ամուսնացել էր Կիպրոսի թագավոր Հուգո III-ի դուստր Մարգարիտի հետ: Պատմիչ Հեթումի կնոջ ծնողներն էին Գյուի դը Իբելինը և Ֆեման՝ Հեթում թագավորի դուստրը: Ե՛վ Հեթում II թագավորը, և՛ Հեթում պատմիչը լավ գիտեին ֆրանսերեն ու կաթոլիկ միաբանության անդամ էին: Հայ երևելի ազնվականներից շատերը գիտեին լատիներեն ու ֆրանսերեն: Պալատ էին ներթափանցել խաչակիրների ավատական ամրոցների ասպետական սովորությունները ու բարքերը: Խոշոր քաղաքների չուկաներում իտալերեն խոսքն էր հնչում:

Վերնախավը, մանավանդ թագավորական ընտանիքի անդամները ազգակցական կապեր ունեին Կիպրոսի թագավորության հետ, որը եվրոպացիների հենակետն էր Արևելքում, այսինքն ռազմական բազան՝ խաչակրաց արշավանքների համար, առևտրական բազան՝ Արևելքի երկրների հետ առևտրական հարաբերությունների համար, ինչպես և կաթոլիկ քարոզիչների համար՝ Ասիա ներթափանցելու ելման կետ:

Հեթում II-ի կառավարման առաջին տարիները համընկան Քելավունի և Աշրաֆի (1290–1293) ագրեսիայի ակտիվացման հետ՝ ընդդեմ խաչակիրների ծովամերձ ամրոցների, որոնք նաև չուկաներ էին

հանդիսանում եվրոպացիների համար (Ակրա, Տրիպոլի և այլն) և կարող էին ռազմավարական հենակետեր դառնալ նոր խաչակրաց արշավանքի դեպքում: Եգիպտական սուլթանությունը որոշից մեկընդմիշտ վերջ տալ խաչակիրներին, վերջին հարվածը հասցնել փրանկների տիրապետությանը Արևելքում:

90-ական թվականների սկզբին Կիլիկյան Հայաստանի համար ստեղծված մամլուքյան դավճումների սպառնալիքը լավ է նկատել Հեթում պատմիչը. «Արդ՝ յայսմ ժամանակի,– գրում է նա, իր ձեռագիր հիշատակարանում,– ցաւէր աշխարհ իբրև զծեր և երկնէր որպէս զմայր և ծիւէր որպէս զծով և առաւել ևս ազգք քրիստոնէից և եկեղեցի Քրիստոսի ամբոխեալ խռովէր իբրև ի հողմոց չնչմանէ յանօրինացն յարուցմանէ. որով և երկիրս Հայոց որ ի նահանգիս Կիլիկիոյ, որում տիրէին քրիստոսապսակ թագաւորք սերեալք ի Յոռբինանց զարմէ, և իշխանք գաւառատէրք ի նոցունց ազգակցութենէ, սաստիկ և անհնարին նեղութեամբ վչտանայր եգիպտական ազգէն, ի գազանամիտ և գոռոզաբարու սուլտանացն, որք տիրէին անդ յաւուրս մերոյ ժամանակաց, որք և մաշեալ սպառեցին և աւերեալ ջնջեցին զծովեղերայ աշխարհն, յորում բնակեալ էին արիական ազգն փռանգաց»[1]:

Կիլիկյան Հայաստանի ավատական ազնվականությունը հույս չունենալով իր սեփական ուժերի վրա՝ ավելի աշխույժ դիվանագիտական հարաբերությունների մեջ է մտնում պապական իշխանության հետ, համաձայնելով միավորվել կաթոլիկ եկեղեցու հետ: Լատինասեր հոսանքը զարձավ գերիշխող արքունիքում և եկեղեցական բարձր շրջաններում:

Հեթում II-ը հարմար դեմք էր Եվրոպայի հետ առավել սերտ ռազմաքաղաքական համագործակցության հաստատման և կաթոլիկ եկեղեցու հետ Հայոց եկեղեցու միավորման խնդիրներում՝ պապի միջնորդությամբ եվրոպական պետություններից ռազմական օգնություն ստանալու նպատակով, քանզի նա դաստիարակված էր կաթոլիկական ոգով ու երկրի լատինասեր ուղղությունն էր գլխավորում: Իշխանությունն ընդունելով փոթորկալի մի ժամանակաշրջանում, երբ ուժեղացել էին Եգիպտոսի սուլթանության հարձակումները, Հեթումը օգնության համար դիմում է պապությանը և ցանկություն հայտնում նպաստել Հայոց եկեղեցին Հռոմեականի հետ միավորելուն: Ի պատասխան հետևում է Նիկողայոս IV պապի նամակը թագավորի և հայ իշխանների անունով՝ հայերին հորդորելով կաթոլիկություն ընդունել:

[1] Մատենադարան, ձեռագիր № 1781:

Այդ ժամանակ կաթողիկոսական աթոռն զբաղեցնում էր Կոստանդին Քեթուկեցին (1286–1289), որը հայոց եկեղեցին Հռոմեականին միավորելու հակառակորդ էր: Չհամաձայնելով Հեթումի քաղաքականության հետ՝ նա ստիպված եղավ հրաժարվել իր պաշտոնից: Թեև նրա փոխարեն կաթողիկոս ընտրվեց Ստեփաննոսը, բայց եկեղեցական քաղաքականությունը, ըստ էության, ղեկավարում էր Գրիգոր Անավարզեցին՝ մի թունդ լատինասեր և թագավորի համախոհ[1]:

Կիլիկյան Հայաստանի միջազգային դրությունը XIII դարի 80-ական թվականներին վատթարացել էր ոչ միայն մամլուքների հարձակումների հետևանքով, այլև նրա համար, որ Հուլավյանների պետությունը, որ թուլացած էր հպատակ ժողովուրդների ժողովրդազատագրական ելույթներից ու խանական իշխանության խմբավորումների պայքարից, իր սեփական ուժերով չէր կարող կռվի ելնել Եգիպտոսի սուլթանության դեմ: Ուստի իլխան Արղունը նրա դեմ պայքարելու համար, Հեթումի նման, ստիպված էր դիմել Ֆրանսիայի և Անգլիայի ռազմական օգնությանը:

Իրանի մոնղոլների միջև տեղի ունեցող կրոնական երկպառակությունները նույնպես ազդում էին Հուլավյանների արտաքին քաղաքականության վրա: XIII դարի վերջում մոնղոլ մեծամեծների միջև խանության և արտաքին քաղաքականության այս կամ այն ուղղության համար տեղի ունեցող պայքարը հաճախ միահյուսվում էր Հեթանոսության և իսլամի կողմնակիցների միջև մղվող պայքարի հետ: Արաղա խանի մահից (1282) հետո Իրանի մոնղոլների միջև տեղի ունեցող ներքին պայքարը և խանական իշխանության համար պայքարը համարյա չէին ընդհատվում մինչև XIII դարի վերջը: Միաժամանակ առանձին մարզեր, ժողովուրդներ ու ցեղեր ապստամբում էին մոնղոլական տիրապետության դեմ: Շարունակվում էր նաև Ոսկե Հորդայի և Ջաղաթայների միջև առկա թշնամանքը: Դա էր պատճառը, որ մինչև Ղազան խանի կողմից իշխանության գլուխ անցնելը (1295) մոնղոլներին չհաջողվեց խոշոր արշավանք սկսել Եգիպտոսի սուլթանության դեմ, թեև, ինչպես երևում է Եվրոպայի հետ մոնղոլների այդ ժամանակաշրջանի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից, նման արշավանքի ծրագիր միշտ էլ եղել է:

Ներքին թուլությունը, պայքարը հարևան ուլուսների դեմ և ուժեղ դաշնակիցների բացակայությունը Ասիայում, որոնք ընդունակ լինեին

[1] Տե՛ս **Մ. Օրմանյան**, Ազգապատում, էջ 1746:

օգնելու Սիրիայի ու Եգիպտոսի մուսուլմանների միավորված ուժերի դեմ պայքարելու, համարյա բոլոր իլխաններին ստիպում էին դաշնակիցներ որոնել Եվրոպայում, դիմել պապական իշխանությանը: Պապությունն էլ իր հերթին այդ ժամանակ դեռևս հույս ուներ Իրանի մոնղոլներին քրիստոնյա դարձնել և նրանց օգնությամբ կաթոլիկությունը տարածել Արևելքում:

Ինչպես վերևում նշվեց, իշխանությունը զավթելով՝ Ահմեդը ձգտում էր այն պահել մոնղոլների միջավայրում նաց իսլամի կողմնակիցների օգնությամբ և Առաջավոր Ասիայի ու Եգիպտոսի մուսուլմանների համագործակցությամբ, որոնց հետ նա չտապեց խաղաղության դաշինք կնքել: Իսկ Արղունի (1284–1291) կրոնական քաղաքականությունը, որն իշխանության հասավ Ահմեդի դեմ տարած հաղթանակի հետևանքով, այլ էր: Նրան օգնում էին մոնղոլական կարգերին և հեթանոսության կրոնական ավանդույթներին հետևողները, քրիստոնեական տարրերի հետ բարեկամության և իսլամի, ուլուսների ու եգիպտոսի դեմ պայքարելու կողմնակիցները, նրան օգնում էին մոնղոլական աղնվականության այն խավերը, որոնք մուսուլմանական հարուստ երկրները (Սիրիա, Պաղեստին) գրավելով՝ ուզում էին ամրապնդել իրենց տիրապետությունը Առաջավոր Ասիայում: Արղունի կրոնական և արտաքին քաղաքականությանը բարյացակամորեն էր վերաբերվում հայ և ասորի բարձր հոգևորականությունը:

Արղունը նույնպես եվրոպական պետություններից ու պապությունից օգնություն էր ակնկալում եգիպտոսի սուլթանության դեմ պայքարելու համար: Նա համառորեն ձգտում էր եվրոպայի հետ ռազմական դաշինք կնքել, քանի որ Հուլավյանների սեփական ուժերն անբավարար էին: Իր կառավարման յոթ տարիների ընթացքում նա չորս դեսպանություն ուղարկեց Եվրոպա: Պապության, Ֆրանսիայի և Անգլիայի հետ իլխան Արղունի փոխհարաբերությունների պատմության առավել արժեքավոր աղբյուրը «Մար-Յաբալահի պատմությունն»[1] է: Կապերը չխզելով չամանիզմի՝ իրենց նախնիների հավատի հետ, լինելով նաև Չինաստանում տարածված բուդդիզմի ազդեցության տակ, իր սովերին Խուբիլայ խանի տիրույթներում, որը նրան ռազմական օգնություն էր ցույց տալիս՝ Արղունը, քաղաքական նկատառումներից ելնելով, միաժամանակ հովանավորում էր քրիստոնյաներին: Ոչոր եվրոպական պետությունների հետ ռազմական դաշինք կնքելու Արղունի ձգտման պատճառի մասին

[1] Տե՛ս Historie du patr. Mar-jabalaha (Revue de l' Orient lat., t. II):

«Մար-Յաբալահի պատմության» մեջ կարդում ենք. «Արղունը ձգտում էր թափանցել Սիրիա և Պաղեստին, որպեսզի նվաճեր դրանք, բայց նա ասում էր. «Եթե արևմտյան քրիստոնյա պետությունները ինձ օգնության չգան, չեմ կարողանա իմ մտադրությունն իրագործել»[1]: Արղունի այս խոսքերում ամփոփված է նրա քաղաքականության էությունը: Հուլավյանների պետության ճգնաժամային վիճակը մոնղոլական վերնախավին թելադրում էր նվաճել Սիրիան ու Պաղեստինը, բայց սեփական ուժերն անբավարար էին, իսկ դաշնակիցներ էլ, չհաշված վասալ ժողովուրդներին, նա Արևելքում չուներ:

Հուլավյանների պետության համարյա բոլոր բնագավառների էկոնոմիկան քայքայված էր հարկերի կողոպտչական գանձումների պատճառով, ավատատերերի կողմից ժողովրդական զանգվածների՝ գյուղացիների և արհեստավորների դաժան շահագործման, ինչպես և վաչկատնության աճի պատճառով: Աստիճանավորների արտակարգ գանձագողության հետևանքով պետության ֆինանսներն անմխիթար վիճակում էին:

Արշավանքների ժամանակ կողոպտելով Առաջավոր Ասիայի ծաղկուն շրջանները՝ մոնղոլներն այնուհետև չէին կարողանում նորմալ պայմաններ ստեղծել նվաճված երկրների տնտեսական կյանքի զարգացման համար: Նյութական բարիքներ ստեղծողների՝ գյուղացիների և արհեստավորների անձն ու գույքը ապահովված չէին: Քաղաքական ու տնտեսական դժվարություններից ելքը Հուլավյանները փնտրում էին Սիրիայի և Պաղեստինի նվաճման, կողոպտման ու շահագործման մեջ:

Իշխանության հասնելուց մեկ տարի անց Արղունը դիվանագիտական բանակցություններ սկսեց պապության և եվրոպայի հետ դաշնակցելու համար: Նա պապությանը առաջարկում էր եգիպտոսի սուլթանությունից ետ նվաճել Սիրիան ու Պաղեստինը՝ մոնղոլների և խաչակիրների համատեղ ուժերով: Այս մասին տեղեկություններ կան Բարոնիուսի «Եկեղեցական աննալներում», որտեղ 1285 թվի տակ բերվում է Արղունի առաջին նամակի բովանդակությունը՝ հասցեագրված պապական աթոռին, որն այն ժամանակ զբաղեցնում էր Հոնորիոսը: Նամակում խոստում էր տրվում Սիրիան նվաճելու դեպքում եվրոպացիներին թույլ տալ ազատորեն ելումուտ անել այնտեղ և հողի մի մասը տալ քրիստոնյաներին: Նամակի վերջում իլխանը գրում էր. «Մենք՝ Արղունս, մեծ խան Խուբիլայի հրամանով կազատենք քրիստոնյաների հողը և կառնենք մեր հովանավորության տակ: Մենք

[1] Տե՛ս Historie du patr. Mar-jabalaha (Revue de l' Orient lat., t. II), p. 81:

ձեզ առաջարկում ենք համատեղ նվաճել Սիրիան ու Եգիպտոսը, այսինքն՝ սարակինոսների երկիրը..., որը մեր և ձեր միջև է: Մենք ձեզ մոտ ուղարկում ենք դեսպաններ, որպեսզի ձեզ խնդրենք մի բանակ ուղարկեք Եգիպտոսի վրա, որ մենք գալով մի կողմից, դուք էլ մյուս կողմից կարողանանք նվաճել այն: Պապի ու մեծ խանի օգնությամբ մենք դուրս կքշենք սարակինոսներին»[1]:

Արղունի առաջին դեսպանությունը Հռոմ դրական արդյունք չտրվեց: 1287 թ. Արղունը Եվրոպա է ուղարկում երկրորդ դեսպանությունը, որը գլխավորում էր ասորի եպիսկոպոս Բար Սուման, որը Հռոմ հասավ 1287 թ. ամռանը՝ Հոնորիոս IV պապի մահվանից հետո: Կարդինալներին՝ պապական թափուր գահի պահապաններին, Բար Սուման հաղորդեց, որ իլխան Արղունը պապական գահից խնդրում է օգնել Սիրիան ու Պաղեստինը նվաճելու համար: Կարդինալները հայտարարեցին, որ իրենք չեն կարող պատասխան տալ, մինչև նոր պապի ընտրությունը[2]: Արղունի դեսպանությունը Հռոմից ուղևորվեց Փարիզ ու ներկայացավ Ֆիլիպ Գեղեցիկին: Ֆրանսիայի թագավորը ծանոթանալով Արղունի նամակին՝ նրա դեսպաններին խոստացավ մեծ բանակով ժամանել Արևելք[3]: Իլխանի դեսպանները Փարիզից մեկնեցին Անգլիայի թագավոր Էդուարդի մոտ, որն այդ ժամանակ Բորդոյում էր: Արղունի առաջարկին նա նույնպես դրական պատասխան տվեց[4]: Բար Սուման Ֆրանսիայից վերադարձավ Ջենովա և իմանալով Նիկողայոս IV-ի ընտրության մասին, 1288 թ. փետրվարին մեկնեց Հռոմ, ներկայացավ պապին և նրան հանձնեց պատրիարք Յաբալահի ու իլխան Արղունի նամակը[5]: Նիկողայոս IV պապը իր պատասխան նամակում զովաբանում էր Արղունին, որ նա բարեհաճ է քրիստոնյաների նկատմամբ ու ցանկանում է մկրտվել Երուսաղեմում՝ այդ քաղաքը նվաճելուց հետո[6]: 1288 թ. ամռան վերջին Բար Սուման վերադարձավ Արղունի մոտ, որը գոհ մնաց իր դեսպանության ձեռք բերած արդյունքներից:

1289 թ., Բար Սումայի վերադարձից մեկ տարի հետո, չտեսնելով Ֆրանսիայի և Անգլիայի թագավորների կողմից արշավանքի ելնելու խոստումների իրականացման նշաններ՝ Արղունը Եվրոպա ուղարկեց

[1] **Baronius,** *Annales eccles., t. XXII.*

[2] *Տե՛ս Revue de l' Orient lat., t. II, p. 93–103:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 106:*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 109:*

[5] *Տե՛ս նույն տեղում:*

[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 576:*

երրորդ դեսպանությունը, որը գլխավորեց Ջենովացի Բուսկարելը: Հասնելով Հռոմ՝ նա Նիկողայոս IV պապին հանձնեց Արղունի նամակը, որով իլխանը տեղեկացնում էր, թե ինքը պապի ցանկության համաձայն արշավանքի դուրս կգա Պաղեստինը նվաճելու համար այն ժամանակ, երբ սկսվի խաչակրաց արշավանքը: Նիկողայոս IV-ը Բուսկարելին հանձնարարական նամակ տվեց Էդուարդ I-ի անունով, որով Անգլիայի թագավորին խնդրում էր մեծ ուշադրությամբ վերաբերվել Արղունի առաջարկությանը: Բուսկարելը նախ այցելեց Փարիզ ու Ֆիլիպ IV-ին հանձնեց Արղունի նամակը, որով նա Ֆրանսիայի թագավորին տեղեկացնում էր, որ ինքը պատրաստ է իր բանակով արշավանքի դուրս գալ Եգիպտոսի սուլթանության դեմ և որ իրեն կուղեկցեն վրացի երկու քրիստոնյա թագավորներ, որոնք կարող են իրենց հետ բերել 20000 հեծյալ: Արղունը պարտավորություն էր ստանձնում Ֆրանսիայի թագավորին մատակարարել 20–30 հազար նժույգ, անասուններ, հացահատիկ, անասնակեր[1]: Ֆիլիպ IV-ի պատասխանը Արղունի այս առաջարկին չի պահպանվել: Հնարավոր է, որ նա կրկնած լինի իր նախորդ խոստումը, բայց փաստորեն գերադասել է զբաղվել ներքին գործերով:

. Փարիզից Բուսկարելը ուղևորվել է Լոնդոն, որտեղ Էդուարդին հանձնել է Արղունի նամակը: Պահպանվել է Էդուարդի պատասխան նամակը Արղունին: Թագավորը չնորհակալություն է հայտնում Արղունին, որ նա խոստանում էր անգլիացի խաչակիրներին ապահովել ձիերով և հավաստիացնում է, որ հենց որ ստանա պապի հավանությունը խաչակրաց արշավանքի վերաբերյալ, ինքն իր բանակով իսկույնևեթ ճանապարհ կընկնի և այդ մասին կտեղեկացնի նրան[2]: Բայց Արղունի Եվրոպա ուղարկած երրորդ դեսպանությունն էլ դրական արդյունք չտվեց:

Չնայած դրան՝ Արղունը 1290 թ. դեկտեմբերին չորրորդ դեսպանությունն է ուղարկում Եվրոպա, որը գլխավորում էր նորահավատ Շահանը (Ջահան), հետն էլ ուղարկելով նամակներ պապին և Անգլիայի թագավորին: Հռոմում Շահանին միանում է նախորդ դեսպանությունից Սահմադին անունով մի դեսպան[3]: Պապը նրանց հանձնարարական նամակ է տալիս Էդուարդ I-ի անունով: Սակայն Ար-

[1] *Տե՛ս Revue de l' Orient lat., t. II, p. 610:*

[2] *Նույն տեղում, էջ 615:*

[3] *Դա մի հարուստ հայ վաճառական էր անունը՝ Սահմադին, որն ունեցել է խոշոր կալվածքներ Հայաստանի Հարավարևելյան մասում, քարավանային ճանապարհների մոտ:*

դունի, ինչպես և նրա հաջորդների բոլոր բանակցությունները պապի, Ֆրանսիայի և Անգլիայի հետ եգիպտոսի սուլթանության դեմ ռազմական միություն ստեղծելու վերաբերյալ դրական արդյունք չունեցան, գլխավորապես Եվրոպայի սոցիալ-քաղաքական զարգացման պատճառով, որից սրված էին դասակարգային պայքարն ու միջազգային հարաբերությունները:

Անդրկիրատյան պրովինցիաների, հատկապես Սիրիայի նվաճումով ու մեծ ավարի զավթումով Արղունը, հավանաբար, հույս ուներ ոչ միայն քայքայված ֆինանսները չտկել, զանձարանի եկամուտները մեծացնել, ձմեռային արոտավայրեր ձեռք բերել և տիրել առևտրական առումով շատ կարևոր քարավանային ուղիների ու միջներկրածովյա նավահանգիստների, այլև ամրապնդել ինչպես իր իշխանությունը պետության մեջ, այնպես էլ ընդհանրապես Հուլավյանների հեղինակությունը Արևելքում:

Այն պատճառները, որոնք Արղունին դրդում էին Եվրոպայի հետ ռազմական միության մեջ մտնել, որպեսզի համատեղ ուժերով խորտակեին եգիպտոսի սուլթանությունը, է՛լ ավելի պարզ կդառնան, եթե ուշադրություն դարձնենք այդ տարիների Հուլավյանների պետության ներքին վիճակի վրա:

Խանական իշխանության համար մղվող պայքարը, որին մասնակցում էին Հուլավու խանի սերունդները, մոնղոլ ազնվականությունը և էմիրները, նրանց խոստանում էր հաջողության դեպքում հարստանալ պետության հողային կալվածքների ու պետական եկամուտների հաշվին: Հաղթելով Ահմեդին և իշխանությունն իր ձեռքն առնելով (1284), Արղունը մարզերի կառավարումը բաշխեց մոնղոլ ազնվականության ներկայացուցիչների՝ արքայազունների, էմիրների միջև, և Բուկային վեզիր նշանակեց[1]: Կարճ ժամանակում վերջինս մեծ հարստություն դիզեց և սկսեց ինքնագլուխ կառավարել[2]: Այդ մասին տեղեկացրին Արղունին: Բուկայը, չնորհագրկվելով, 1289 թ. սկսեց դավադրություն նախապատրաստել՝ նպատակ ունենալով տապալել Արղունին, և դավադրության մեջ ներգրավեց նաև վրաց Թագավոր Դիմիտրիին: Դավադրությունը բացահայտվելուց հետո մահապատժի ենթարկվեցին Բուկայը իր համախոհներով և Արղունի մոտ կանչված վրաց Թագավոր Դիմիտրին[3]: Միաժամանակ Արղունի որդի Ղազանը ճնշեց ազդեցիկ էմիր Նովրուզի ապստամբությունը:

[1] Տե՛ս **Рашид-ад-дин**, *Сборник летописей, т. III, с. 114:*

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 119:

[3] Տե՛ս **M. Brosset**, *Histoire de la Georgie, t. I, p. 603:*

Այսպիսով, այն պահին, երբ Արղունն զբաղված էր Բուկայի դավադրության ճնշմամբ, բարդացան հարաբերությունները Վրաստանի հետ, որը շատ կարևոր ռազմավարական նշանակություն ուներ՝ չնորհիվ պետության հյուսիսային սահմանում ունեցած իր դիրքի, որտեղ համարյա անընդհատ ռազմական բախումներ էին տեղի ունենում Ոսկե Հորդայի հետ, և չնորհիվ այն բանի, որ վրաց զորքերը միշտ մասնակցում էին մոնղոլների՝ դեպի Սիրիա ու Ոսկե Հորդայի դեմ կատարվող արշավանքներին: Միաժամանակ պետության արևելքում բռնկվեց Նովրուզի վտանգավոր խռովությունը, իսկ հյուսիսից հարձակվեցին Ջուչյանների ուլուսի Թաթարական ջոկատները: Հենց այդ ժամանակ Քելավունի զորքերը գրոհներ ձեռնարկեցին Սիրիայի խաչակիրների վերջին հենակետերի վրա և ներխուժեցին Միջագետք:

Այսպիսով, XIII դարի 80-ականների վերջերին, երբ Արղունը ռանդուն բանակցություններ էր վարում Ֆրանսիայի և Անգլիայի հետ եգիպտոսի սուլթանության դեմ համատեղ գործողություններ սկսելու մասին, նորից վատացան հարաբերությունները Ոսկե Հորդայի հետ, իսկ Հուլավյանների պետության ներքին վիճակն այնպիսին էր, որ Արղունը չէր կարող մեծ արշավանք ձեռնարկել, եթե խաչակիրները նույնիսկ գային հասնեին Արևելք:

Հուլավյանների պետության մեջ հպատակ ժողովուրդները դաժանորեն տառապում էին մոնղոլական լծի ծանրությունից: Ի դեպ ասենք, որ բուրժուական շատ պատմաբաններ, մանավանդ անգլիացիները, փառաբանում են մոնղոլական լուծը՝ դրանով իսկ ձգտելով արդարացնել անգլիացիների կողմից գաղութային ժողովուրդների ստրկացումն ու կեղեքումը:

Բրոունը իր «Պարսկաստանի գրականության պատմության» III հատորում չարաղրելով Գ. Հովորտի ռասիստական տեսակետը՝ համերաշխվում է նրա հետ Մերձավոր Արևելքը մոնղոլների կողմից նվաճվելու պատմական նշանակության գնահատականի հարցում: Հովորտը մոնղոլների մեջ «ամուր մկանուտ ուժ»[1] էր տեսնում: Նրա կարծիքով Առաջավոր Ասիայի բնակիչներին պետք էր մոնղոլական նոանդուն արյան թարմ չիթերով պատվաստում կատարել[2]: Մոնղոլական ջարդերի մղձավանջը և իլխանների բռնապետական տիրապետության արյունոտ վարչակարգը Հովորտը համարում է յուրատեսակ անհրաժեշտություն, բարերարություն Արևելքի ժողովուրդ-

[1] **Broune**, *A literary history of Persia vol III, Camb., 1928, p. 13.*

[2] Նույն տեղում, էջ 14:

ներին՝ ի նկատի ունենալով վրացիներին, հայերին, պարսիկներին և ուրիշների: Նա ասում է. «Դա (մոնղոլական դաժան լուծը) երաշխիք է եղել այդ զոհերի (Արևելքի ժողովուրդների – Գ. Մ.) մեծ առաջադիմության համար, քանի որ նրանց ծաղկումը եղել է փուչ ու հավակնոտ, նրանց մեծությունը ոսկեզօծված է եղել»[1]:

Բուկայի զավադրության կապակցությամբ Հուլավյանների թուլացման և 1289–1292 թթ. եգիպտոսի սուլթանության զորքերի ռազմական գործողությունների միջև ուղղակի փոխադարձ կապ կա: Մոնղոլների դիվանագիտական հարաբերությունները Հռոմի, Ֆրանսիայի և Անգլիայի հետ տեղի էին ունենում XIII դարի 80-ական թվականներին: Սուլթան Քելավունը, հավանաբար, այդ մասին իմացել ու որոշել է զրավել խաչակիրների հենակետերը, որպեսզի դրանք պլացդարմ չծառայեին ֆրանսիական զորքերի ափհանման համար: Մյուս կողմից՝ նա իմացել է, որ դեպի Սիրիա մոնղոլների արշավանքները չեն կարող տեղի ունենալ ներքին բարդությունների պատճառով: 1289 թ. զավթելով Տրիպոլին՝ Քելավունը պատրաստվեց հաջորդ տարի Ակրան պաշարել: Միաժամանակ մամլուքների մի ջոկատ փորձեց ներխուժել Կիլիկիա, բայց ետ մղվեց:

Եգիպտոսի դեմ Արղունի ու Ֆիլիպ IV-ի համատեղ ռազմական գործողությունների նախագիծը, որը պետք է իրագործվեր 1291 թ. փետրվարին, այդպես էլ մնաց թղթի վրա: Ֆրանսիան ու Անգլիան հանդես չեկան մոնղոլների հետ դաշնակցած՝ ընդդեմ եգիպտոսի սուլթանության, ի պաշտպանություն խաչակիրների ու Կիլիկյան Հայաստանի, իսկ եվրոպական որոշ պետություններ, օրինակ՝ Վենետիկի հանրապետությունը, նույնիսկ անցել էին մամլուքների կողմը:

1290 թ. գարնանը Ջենովան առևտրական պայմանագիր կնքեց եգիպտոսի սուլթանության հետ, որպեսզի վենետիկցիների նման հնդկական համեմունքներ ստանար Ալեքսանդրիայով: Պապական կուրիայի հետ թշնամացած և Արևելքի հետ առևտուրն ընդլայնելու մեջ չահագրգռված Արագոնի թագավոր Ալֆոնս III-ը և նրա եղբայր Սիցիլիայի թագավոր Հակորը բարեկամության պայմանագրեր կնքեցին եգիպտոսի սուլթանության հետ:

Քելավունի մահից հետո նրա որդի Աշրաֆը չարունակելով հոր քաղաքականությունը՝ 1291 թ. գարնանը պաշարեց Ակրան: Խաչակիրների սիրիական այդ հենակետը ռազմական օգնություն չստացավ Եվրոպայից: Նա ինքնուրույն չկարողացավ պաշտպանվել քաղաքի ներսում ջենովացիների, տաճարականների ու հովհաննականների միջև գոյություն ունեցող երկպառակություններից: 1291 թ. մայիսի 18-ին Ակրան՝ Արևելքի խաչակիրների այդ հարուստ քաղաքն ու նավահանգիստը ընկավ, իսկ մի քանի չաբաթ անց Տյուրոսը, Սիդոնն ու Բեյրութը նույնպես անցան եգիպտոսի իշխանության տակ: Այն մասին, թե այդ իրադարձությունն ինչ նշանակություն ունեցավ Կիլիկյան Հայաստանի համար, երևում է դրան հենված պատմիչի տված գնահատականից, որն իր հիշատակարանում նշելով Ակրայի անկումը, գրում է. «Որ սաստկագոյն քան զգայլ գոռոզն գոռայր (Աշրաֆը – Գ. Մ.), իբրև զամպ կարկտածին ի վերայ մերոյ աշխարհիս, և ծանացոյց առաւել զպահանջումն հարկին: Եւ զեզերային գաւառսն մեր բոլոր սահմանօք ի ձեռն սրիկայից արանց արաբացւոց և թուրքաց գերէր միշտ և աւերէր և անբնակ առնէրն»[1]:

Խաչակիրների՝ Սիրիայում եղած հենակետերը մամլուքների կողմից զրավվելուց հետո ավելի սաստկացավ Կիլիկյան Հայաստանի վրա մամլուքների հարձակման վտանգը: Խաչակիրների հաշիվը վերջացնելով՝ Աշրաֆը ռազմական գործողություններ սկսեց մոնղոլների ու կիլիկեցի հայերի դեմ: Հեթումը զորքեր ուղարկեց պաշտպանելու Ամանոսի լեռնաշղթայի կապանները, որոնք Սիրիայից տանում էին Կիլիկիա և օգնության համար դիմեց մոնղոլներին, բայց Արղունի մահից հետո Հյուսաթուն զրաղված էր իր գերագույն իշխանությունն ամրապնդելով: Հեթումը դեսպաններ ուղարկեց Եվրոպա, որոնք նախ այցելեցին Հռոմ և Նիկողայոս IV պապից հանձնարարական նամակ ստացան Ֆիլիպ IV-ի անունով[2]: Նա միաժամանակ դիմեց Էդուարդ I-ին: Բայց իզուր եղան պապական աթոռից ու եվրոպական պետություններից օգնություն ստանալու հայոց թագավորի փորձերը:

Այդ ընթացքում եգիպտոսի սուլթան Աշրաֆի զորքերը 1292 թ. մայիսի 15-ին պաշարեցին Եփրատի աջ ափին գտնվող ուժեղ ամրացված Հռոմկլա բերդը: Այդ բերդը մամլուքների գերակշիռ ուժերից քաջարար պաշտպանում էր իշխան Ռայմոնդը՝ Հեթումի քեռին: Մամլուքները, սակայն, ներխուժեցին քաղաք և կոտորեցին նրա պաշտպաններին ու բնակիչներին, բացառությամբ աննչան գերի տարվածների, որոնց մեջ էր նաև Ստեփաննոս կաթողիկոսը: Մոնղոլական զորքերը, որոնք ուղարկված էին մամլուքների հարձակումները ետ մղելու Հռոմկլայից (Կալատ ար Ռում), չկարողացան նրանց խանգարել գրավելու այդ կետը[3]: Զավթելով Հռոմկլան՝ մամլուքները

[1] Broune, A literary history of Persia vol III, Camb., 1928, p. 14.

[1] Մատենադարան, ձեռագիր № 1781:

[2] Տե՛ս Baronius, An eccles, t. XXIII, p. 118:

[3] Տե՛ս Рашид-ад-дин, Сборник летописей, т. III, с. 133:

չարժվեցին դեպի Կիլիկյան Հայաստանի սահմանները, որպեսզի պաշարեին Բհհանի բերդը: Հեթումը հույս չդնելով մոնղոլների ու Եվրոպայի օգնության վրա՝ ստիպված եղավ, ինչպես վկայում է Մակրիզին, Եգիպտոսի սուլթանին հանձնել Մարաշը, Թիլ-Համդունը և Բհհանին[1]: 1294 թ. Հեթում Թագավորը հրաժարվեց գահից օգուտ իր եղբայր Թորոսի:

XIII դարի 90-ական թվերին Կիլիկյան Հայաստանի վիճակը վատացել էր նաև այն պատճառով, որ Հուլավյանների պետությունը իր թուլությամբ ու քայքայված ֆինանսներով նրան չէր կարողանում պաշտպանել Եգիպտոսի հարձակումներից[2]:

Սակայն Հռոմկլայի անկումից հետո Հեյսեթուն Աչրաֆը, այնուամենայնիվ, գրեց Եգիպտոսի սուլթանին Հալեպը պաշարելու իր մտադրության մասին, որը երբեմնի նվաճված էր եղել իր նախնի Հուլավուի կողմից, բայց սուլթանը դրան պատասխանեց, թե ինքը մտադիր է գրավել Բաղդադը և այն նորից դարձնել իսլամի կենտրոն[3]: Աչրաֆը չկարողացավ անցնել իր սպառնալիքի իրագործմանը, քանի որ իշխանության համար մղվող ներքին պայքարը, սովն ու համաճարակը թուլացրել էին Եգիպտոսի սուլթանությունը: Հուլավյան պետությունը, որը նույնպես տնտեսապես ու քաղաքականապես ցրնցված էր, չկարողացավ օտագործել իր հակառակորդի թուլությունը: Ներքին գժտություններն ու թևրությունները ինչպես Եգիպտոսում, այնպես էլ Իրանում մի քանի տարով հետաձգեցին մոնղոլների և մամլուքների գոտեմարտը Հանուն Սիրիայի, մինչև որ իշխանության գլուխ անցան եռանդուն Ղազան խանը և Նասիր Մուհամմեդ սուլթանը:

Կիլիկյան Հայաստանը կարճ ժամանակով ազատվել էր մամլուքների ներխուժումների սպառնալիքներից, բայց արդեն թուլացել էր, ինչպես մատնանշվեց վերևում, իսկ 1296–1299 թթ. զբաղված էր իշխանության համար մղվող ներքին պայքարով: 1295 թ. Հեթումը ներկա էր իր քույր Զաբելի հարսանիքի հանդեսին, որն ամուսնանում էր Ամորիի՝ Կիպրոսի թագավոր Հենրիխ II-ի եղբոր հետ: Այստեղ Թորոսը և հայ մեծամեծները Հեթումին համոզեցին նորից իր ձեռքն առնել երկրի կառավարման սանձերը[4]: Վերստին իշխանության գլուխ անցնելով՝ Հեթումը մեկնեց Իրան Հեյսեթուի մահից հետո

[1] Տե՛ս **Macrizi,** Hist. des sult. Mamelouks d' Egipte, t. II, p. 147–148:

[2] Տե՛ս **Рашид-ад-дин,** Сборник летописей, т. III, с. 135:

[3] Տե՛ս **D' Ohsson,** Hist. des Mongols, t. IV, p. 89:

[4] Մատենադարան, ձեռագիր № 2037, էջ 127ա:

գահ բարձրացած Բայդու խանի մոտ՝ օգնություն խնդրելու ընդդեմ մամլուքների, բայց տեղ հասավ այն պահին, երբ Բայդուի դեմ ելել էր Ղազան խանը՝ նրա հետ վիճարկելով խանական իշխանությունը[1]:

Հեթումը երկու ամիս ապրեց Մարաղայում՝ սպասելով երկպառակության ելքին և, վերջապես, ներկայացավ Ղազան խանին, որը հաղթող էր դուրս եկել ներքին պայքարից: Ղազան խանը լավ ընդունեց Հեթումին: Հայոց թագավորը մոնղոլ խանին բողոքեց այն հալածանքներից, որոնց ենթարկվում էին հայերը մոնղոլների կողմից: Ղազան խանը, Ստեփաննոս պատմիչի վկայությամբ, իրեն անմասն ձևացնելով այդ գործին՝ ասաց. «ես ոչ գիտեմ զայդ, այլ Նաւռուզն գործեաց զամենայն»: Ստեփաննոսի ասելով՝ Ղազան խանը «հրամայեաց առ ժամայն գրել հրովարտակ ընդ ամենայն աշխարհ, զի մի իշխեսցեն ձեռնարկել յեկեղեցիս և ի քրիստոնեայս, այլ խաղաղութեամբ բնակեսցեն՝ ամենայն ոք զիւր հաւատ և պաշտօն համարձակ ունելով»[2]:

Շուտով Հեթումին առիթ ներկայացավ աղգակցական ու բարեկամական հարաբերություններ հաստատել Բյուզանդիայի հետ: Ղազան խանի մոտից վերադառնալուց հետո Հեթումը բյուզանդական կայսր Անդրոնիկոս II-ի դեսպաններին գտավ իր տանը, որոնք եկել էին իր քրոջ՝ Մարգարիտի ձեռքը խնդրելու թագաժառանգ Միքայելի համար[3]: Հեթումը մեծ բավականությամբ ընդունեց այդ առաջարկը, հուսալով հավանարար, որ ի դեմս բյուզանդական կայսեր՝ աջակից կունենա միջազգային հարաբերություններում: Բյուզանդական դեսպանների հետ Կոստանդնուպոլիս մեկնեցին Հեթումի երկու քույրերը՝ Մարգարիտը, որն ամուսնացել էր Միքայել IX Պալեոլոգի հետ, և Թեոփանեն, որպես Հովհաննես Անգելոսի հարսնացու:

1296 թ. Հեթումը իր եղբորը՝ Սմբատին, նշանակելով երկրի կառավարիչ՝ ինքը մյուս եղբոր՝ Թորոսի հետ մեկնեց Կոստանդնուպոլիս որպես հյուր քրոջը ու, գուցե և, բանակցություններ վարելու մամլուքների հարձակման դեպքում Բյուզանդիայից օգնություն ստանալու հնարավորության մասին: Օգտվելով Թագավորի մեկնումից՝ Սմբատը, մի քանի իշխանների աջակցությամբ և իր կողմն ունենալով Գրիգոր կաթողիկոսին, Թագավոր օծվեց Սիսում[4]:

[1] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, էջմիածին, 1910, էջ 474:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 2037, էջ 127ա:

[4] Տե՛ս **Մ. Օրմանեան,** Ազգապատում, էջ 1155:

Վերադառնալով Կիլիկիա և տեսնելով, որ գահը զավթել է եղբայրը՝ Հեթումը նախ մեկնեց Կիպրոս, հուսալով, թե օգնություն կստանա Կիպրոսի թագավորից, որպեսզի վերականգնի իր իշխանությունը: Նպատակին չհասնելով՝ նա մեկնեց Կոստանդնուպոլիս՝ համագործակցություն խնդրելու Անդրոնիկոս կայսրից, որը, սակայն, միայն ոսկի տվեց նրան, որն առած՝ նա գնաց Ղազան խանի մոտ: Բայց այդ գործում Սմբատը կանխեց նրան: Ձավթելով իշխանությունը՝ նա մեծ ընծաներով գնաց իլխանի մոտ, ամուսնացավ մոնղոլ արքայադստեր հետ՝ իլխանի ազգականուհու, և ճանաչվեց թագավոր: Վերադառնալով իլխանի մոտից՝ նա, ինչպես ասում է տարեգիրը, «ի սահմանս Կեսարիոյ հանդիպեցան նմա Բ եղբարքն իւր և նա կալեալ զնոսա և տարեալ եղ ի բանտի ի Բարձրբերդ: Եւ ետ սակաւ աւուրց խորհրդով ննգաւոր իշխանացն՝ եսպան զեղբայրն իւր զԹորոս և Լհան զաչս Հեթմին»[1]: Եգիպտոսի սուլթանությունը որոշեց Կիլիկիայում հանուն թագավորական իշխանության մղվող պայքարն օգտագործել այդ երկրի վրա հարձակվելու համար: 1298 թ. մամլուքները ներխուժեցին Կիլիկիա ու գրավեցին Նիջիմե ամրոցը: Այդ նույն տարին Սմբատը Բոնիփացիոս VIII պապին նամակ է գրում՝ տեղեկացնելով մամլուքների կողմից Կիլիկիային սպառնացող խոշոր ներխուժման մասին, և օգնություն է խնդրում: Ստանալով նրա նամակը՝ պապը դիմում է Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV-ին և Անգլիայի թագավոր Էդուարդ I-ին:

Բոնիփացիոս VIII-ը Ֆիլիպ IV-ին գրած նամակում Կիլիկյան Հայաստանին օգնելու խնդրանքը հիմնավորում է նաև այն փաստարկումով, որ Կիլիկիան որպես բերքառատ և Սուրբ Երկրին ամենամոտ երկիր, կարող է չատ բանով նպաստել խաչակիրների կողմից Սուրբ Երկրի ետ նվաճմանը[2]: Կիլիկյան Հայաստանի ռազմաստրատեգիական նշանակությունը խաչակիրների՝ Սիրիայում գտնվող վերջին հենակետերի անկումից հետո բարձրացել էր՝ պապության կողմից նոր խաչակրաց արշավանքի պրոպագանդայի առիթով:

Մինչ Արևմուտքի հետ անպտուղ նամակագրություն էր տեղի ունենում, նույն 1298 թ. Կոստանդինը՝ Հեթումի երրորդ եղբայրը, ելավ Սմբատի դեմ: Սիսի մոտ տեղի ունեցող ճակատամարտում եղբայրների զորքերն անգթորեն ջարդում էին իրար, ազգականներն սպանում էին միմյանց, մինչև որ հաղթեց Կոստանդինը, որը Սմբատին բանտարկեց ամրոցում և բանտից ազատեց կուրացված Հեթումին՝ իշխանությունը, սակայն, վերցնելով իր ձեռքը[1]:

1298 թ. Սմբատի և Կոստանդինի միջև տեղի ունեցող պայքարի թեժ պահին Եգիպտոսի սուլթան Լաջինը, հաջողությամբ ընտրելով հարմար պահը, Սիրիայի Էմիրին հրամայեց զորք կուտակել Հալեպում, որպեսզի ներխուժեն Կիլիկիա: Եգիպտական ջոկատներից մեկը Էմիր Բեղր Էդ դին Բեկթաշի հրամանատարությամբ կտրեց անցավ Ամանոսի լեռնաշղթան Ալեքսանդրետի լեռնանցքով և ճամբար դրեց Թիլ Համդունի մոտ, իսկ մյուս ջոկատը Հալեպ Էդ դին Սինջարի հրամանատարությամբ Մառիի լեռնանցքով ներխուժեց Կիլիկիա, որտեղ Եգիպտական զորքերի երկու ջոկատները միացան: Բեկտաշը առաջարկեց պաշարել ամրացված կետերը: Սինջարը պնդեց սահմանափակվել Դաշտային Կիլիկիայի քաղաքների և գյուղերի կողոպուտով: Այնուհետև առաջին ջոկատը ճամփա ընկավ դեպի Ադանա, երկրորդը գնաց մինչև Սիս: Մամլուքներն իրենց ճանապարհին այրում էին գյուղերը, թալանում ունեցվածքը, քշում-տանում անասունները, կոտրում կամ գերեվարում բնակիչներին: Այնուհետև նրանք ետ քաշվեցին և Մամեստիայով վերադարձան Անտիոք: Սուլթան Լաջինը իմանալով իր զորքերի ետ քաշվելու մասին՝ հրաման տվեց, որ չվերադառնան՝ մինչև չգրավեն Համդունը: Եգիպտոսի սուլթանության զորքերը նորից ներխուժեցին Կիլիկիա: Ջոկատներից մեկը մոտեցավ Այասին, բայց ետ մղվեց: Իսկ մամլուքների գլխավոր բանակը ուղղվեց դեպի Թիլ Համդուն ու գրավեց այն[2]:

Թշնամու այս ներխուժման ժամանակ Սմբատը, որ, ինչպես տեսանք, զբաղված էր եղբայրների հետ երկպառակտչական պատերազմով, լիակատար անկարողություն դրսևորեց պետության սահմանների ու տարածքի պաշտպանության գործում՝ իր դեմ հարուցելով հայ իշխանների դժգոհությունը, որոնց մեծ մասն անցավ Կոստանդինի կողմը և նպաստեց նրա հաղթանակին: Իշխանությունն իր ձեռքը վերցնելով՝ Կոստանդինը Սիսից զորք ուղարկեց Դաշտային Կիլիկիան պաշտպանելու, բայց սահմանային բերդերն արդեն գրավված էին մամլուքների կողմից, բացի այդ սուլթան Լաջինը պահանջեց իրեն զիջել Կիլիկյան Հարթավայրը մինչև Պիռամոս գետը: Աբուլ-Ֆեդայի վկայությամբ Կոստանդինն ստիպված եղավ կատարել այդ պահանջը, սակայն Եգիպտոսի սուլթանությունը ձեռք բերած տարածքի վրա տիրապետություն հաստատեց մոտ մեկ տարի, մինչև

[1] **Սամուէլ Անեցի,** Հաւաքմունք ի գրոց, էջ 154:

[2] Տե՛ս Baronius Annales eccles, t. XXIII, p. 235:

[1] Տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 2037, էջ 127ա:

[2] Տե՛ս **D' Ohsson,** Hist. des Mongols, t. IV, p. 214:

Ղազան խանի 1299 թ. արշավանքը դեպի Սիրիա, երբ Հարթավայրը նորից միավորվեց Կիլիկյան Հայաստանին[1]:

Մեկ տարի անց, 1299 թվին, Հեթումը բուժվեց: Կուրացման գործողությունը, ըստ երևույթին, դիտավորյալ լրիվ չէր արված: Իր կողմնակիցների՝ հայ ավատատերերի և հիվանդապահների ուխտի օգնությամբ նա իշխանությունն իր ձեռքն առավ և եղբայրներին՝ Կոստանդինին ու Սմբատին ուղարկեց Կոստանդնուպոլիս, որտեղ նրանք մահացան բանտարկության մեջ: Մոտ երեք տարի տևեց իշխանության համար մղվող այս հանցավոր պայքարը, որը նպաստեց մամլուքների կողմից երկրի ավերմանը և ժամանակավորապես քայքայեց տնտեսությունը, որի հետևանքով 1299 թ. Կիլիկիայում սով սկվեց:

Հեթումի կողմից երրորդ անգամ՝ 1299 թվին, իշխանության գլուխ անցնելը համընկավ Ղազան խանի՝ դեպի Սիրիա կատարած խոշոր արշավանքին, որին նա վաղուց էր պատրաստվում: Հուլավյանների պետության մեջ այդ ժամանակ միասնություն չկար մոնղոլ ավատատերերի միջև: Մոնղոլ շատ զորապետներ և էմիրներ ձգտում էին ինքնուրույնության: 1299 թ. Ռումի էմիր Սուլամիշը՝ Բաչուի թոռը, ապստամբեց Ղազան խանի դեմ՝ նպատակ ունենալով տապալել նրան: Նա բանակ կազմեց մոնղոլական այն զորքերից, որոնք տեղավորված էին Ռումում, և իր կողմը գրավեց սելջուկներին ու թուրքմեններին: Ղազանը Սուլամիշի դեմ ուղարկեց Կուշլուղ չահին, որը ջախջախեց խռովարարներին: Սուլամիշը փախավ Եգիպտոս: Նորից Ռում անցնելու փորձ անելիս՝ նա բռնվեց Կիլիկիայում հայ և մոնղոլ զորքերի կողմից և ուղարկվեց Ղազան խանին[2]:

Այս իրադարձությունից հետո նույն 1299 թ. Ղազան խանի մոտ Նկան Սիրիայից փախածներ, որոնք նրան ղրդում էին արշավանք սկսել՝ հավաստիացնելով, որ սիրիական գավառների բնակչությունը մոնղոլների կողմը կլինի: Ղազան խանը վճռեց խոշոր արշավանքի նշնել դեպի Սիրիա: Հոկտեմբերի 16-ին նա դուրս նկավ Թավրիզից, դեկտեմբերի 7-ին 80-հազարանոց բանակով անցավ Եփրատը և դեկտեմբերի 12-ին հասավ Հալեպ: Ձեռնարկելով այդ ուժեղ ամրացված քաղաքը պաշարել, չարունակելով ռազմերթը՝ նա անցավ Համան և էմեսային չհասած՝ ջախջախեց եգիպտոսի սուլթանության զորքերը, իսկ ապա գրավեց էմեսան[3]:

[1] Տե՛ս **Ա. Նալբանդյան,** Արար գրողներ Հայաստանի և հայերի մասին, էջ 27:

[2] Տե՛ս **Рашид-ад-дин,** Сборник летописей, т. III, с. 180–181:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 182–183:

Հեթում II-ը մասնակցում էր մոնղոլների արշավանքին: Արշավանքի դուրս գալուց առաջ Ղազան խանը, Հեթում պատմիչի ասելով, հրամայեց, որ հայոց թագավորը, վրաց թագավորը և արևելյան երկրների այլ քրիստոնյաներ ներկայանան իրեն[1]: Հեթումը ներկայացավ հայոց այրուձիով, որը մասնակցեց Սիրիայի համար մղվող կռիվներին և մամլուքներին էմեսայի մոտ ջախջախելուց հետո հետապնդեց նրանց[2]:

Մոնղոլներն էմեսայում հարուստ ավարի տիրացան: Այս մասին Հեթում պատմիչը գրում է. «Երբ Հեթումը, ավարտելով թշնամուն հետապնդելը, վերադարձավ, տեսավ, որ էմեսան հանձնվել է Ղազանին՝ սուլթանի գանձարանի հետ միասին, որը պարունակում էր անհաչիվ հարստություն, ինչը իլխանը չուայլորեն բաժանել էր իր մերձավորներին՝ հարստացնելով նրանց»[3]:

Էմեսայից հետո Ղազան խանը զրավեց Դամասկոսը և սրա վրա վիթխարի ռազմատուգանք դրեց: Իլխանին չվիճակվեց երկար մնալ Սիրիայում: Լուր ստանալով իր թոռ Ուգեդեյ Ղայդու խանի ապստամբության մասին՝ Ղազան խանը վերադարձավ Իրան: Մոնղոլների տիրապետությունը Սիրիայում տևեց ընդամենը մի քանի ամիս:

Մոնղոլների կողմից Սիրիայի գրավումը արձագանք գտավ Եվրոպայում: Արագոնի թագավոր Հակոբ II-ը իր դեսպան Պեդրո Սոլիվերոյի միջոցով Ղազան խանին հանձնված նամակում չնորհավորելով նրան Սիրիայում տարած հաղթանակի առթիվ՝ ռազմական օգնություն էր առաջարկում, պայմանով, որ իրեն տրամադրվի Սուրբ Երկրի և այն երկրների մեկ հինգերորդ մասը, որ նա ինքը կնվաճի հետագայում[4]: Սա ակնհայտորեն ցույց է տալիս, որ Արագոնի թագավորությունը, որը դեռևս 1293 թ. առևտրական պայմանագիր էր կնքել Կիլիկյան Հայաստանի հետ, չահագրգռված է եղել չուկաներ ձեռք բերել Մերձավոր Արևելքում:

1300 թ. աշնանը Ղազան խանը սկսեց իր երկրորդ արշավանքը դեպի Սիրիա: Հունվարի սկզբին մոնղոլական զորքերը հասան Հալեպ: Վատ եղանակ սկսվեց, որը տևեց 6 չաբաթ: Պակասում էր մթերքը, ուտելիք չկար: Սկսվեց բեռնակիր անասունների ու հեծելազորային ձիերի անկում: Մոնղոլներն ստիպված եղան նահանջել Եփրատից այն կողմ[5]:

[1] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 194:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս **D' Ohsson,** Hist. des Mongols, t. IV, p. 322:

[5] Տե՛ս **Рашид-ад-дин,** Сборник летописей, т. III, с. 187:

Դևպի Սիրիա կատարած առաջին երկու արշավանքները հավանարար համոզեցին Ղազան խանին, որ առանց Եվրոպայի հետ դաշնակցելու դժվար կլինի հաղթել Եգիպտոսի սուլթանությանը: Պատրաստվելով երրորդ արշավանքին՝ նա դեսպանություն ուղարկեց Անգլիա ու Ֆրանսիա: Մոնղոլների դեսպանը, ինչպես 14 տարի առաջ, նույն Բուսկարելն էր:

Մոնղոլ խանին ուղարկած պատասխանում Էդուարդ I թագավորը, ի միջի այլոց, գրել է. «Քրիստոնյաներին ալեկոծած պատերազմները երկար ժամանակ խանգարում էին որևէ որոշում ընդունել Սուրբ Երկրի վերաբերյալ, բայց երբ պոնտիֆիկատը մեզ այնպիսի դրության մեջ դնի, որ մենք կարողանանք զբաղվել այդ գործով, մենք մեր բոլոր ջանքերը կներդնենք այդ ձեռնարկում»[1]: Այս պատասխանը հասկանալի կդառնա, եթե ուշադրության առնենք, որ Անգլիայի թագավորի ու պապական իշխանության միջև միաժամանակ բանակցություններ էին տեղի ունենում անգլիացիների՝ դևպի Արևելք կատարելիք արշավանքի պայմանների վերաբերյալ: Էդուարդ I-ը, ի թիվս այլ պայմանների, առաջ էր քաշում այն պահանջը, որ իրեն իրավունք վերապահվի գանձել հատուկ մի հարկ, որպեսզի արշավանքի համար անհրաժեշտ դրամական միջոցներ ունենա, ինչին պապը պատասխանել է իր համաձայնությամբ, բայց այդ ճանապարհով, ըստ երևույթին, դրամ չի հավաքվել:

Անգլիայի թագավորի պատասխանը լույս է սփռում XIII–XIV դարերում խաչակրաց արշավանքների պրոպագանդայի անհաջողությունների գլխավոր պատճառների վրա: Դրանք, նախ և առաջ, պատերազմներն էին, և երկրորդ՝ եվրոպական թագավորների միջոցների անբավարարությունը խոշոր մասշտաբի խաչակրաց արշավանքներ կատարելու համար:

1303 թ. Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Գեղեցիկի մոտ եկան Ղազան խանի դեսպանները՝ հանուն Սուրբ Երկրի նվաճման սարակինոսների դեմ համատեղ գործողություններ ծավալելու առաջարկով[2]: Անհայտ է, թե ինչ է պատասխանել Ֆրանսիայի թագավորը մոնղոլ իլխանի դեսպաններին: Բայց մի բան պարզ է, որ նա չէր կարող դրական պատասխան տալ կամ եթե տալ էլ, չէր կարող խոստումը կատարել, քանզի այդ ժամանակ զբաղված էր Ֆլանդրիայի համար մղվող պատերազմով և Բոնիֆացիոս VIII-ի հետ վիճաբանությամբ, որոնք կլանում էին երկրի բոլոր ուժերը:

[1] Baronius Annales eccles, t. XXII.

[2] Տե՛ս D' Ohsson, Hist. des Mongols, t. IV, p. 345:

Պապական իշխանությունը, որն առաջին պարտությունն էր կրել աշխարհիկ իշխանության դեմ իր պայքարում և ճգնաժամի ու անկման փուլ էր մտել, չէր կարող հարկ եղած ձևով զբաղվել դևպի Արևվելք կատարվելիք արշավանքի կազմակերպմամբ:

Այսպիսով, երրորդ արշավանքը դևպի Սիրիա Ղազան խանը ձեռնարկեց՝ կանխապես չապահովելով Եվրոպայի օգնությունը, չկանխելով Ջուչյանների ու Ջաղաթայի կողմից հարձակման մշտական սպառնալիքները, ինչպես և պետության ներսում գանազան ընդվզումների հնարավորությունը: 1303 թ. Ղազան խանը Սիրիա ուղարկեց 50-հազարանոց մոնղոլական մի բանակ, որին միացան հայերի, վրացիների և Հեթումի կիլիկեցիների օժանդակ զորքերը: Այդ բանակը հասավ մինչև Դամասկոս: Դրան ընդառաջ եկան Մելիք-Նասրի եգիպտական զորքերը: Ճակատամարտի ժամանակ եգիպտական բանակի աջ թևը մոնղոլների, հայերի, վրացիների ու փրանկների ճնշման տակ քայքայվեց, բայց մյուս թևում գործողություններն անհաջող ընթացան: Մոնղոլները ճակատամարտը տանուլ տվին:

Հեթում պատմիչը այս արշավանքի մասին արժեքավոր մանրամասնություններ է հաղորդում: «1303 թ.,— գրում է նա,— Ղազան խանը հավաքելով վիթխարի մի բանակ, մոտեցավ Եփրատին՝ մտադիր լինելով ներխուժել Սիրիա, որպեսզի լրիվ ոչնչացներ սարակինոսներին և Սուրբ Երկիրն առներ տար քրիստոնյաներին: Սարակինոսները էլ իմանալով Ղազան խանի արշավանքի մասին, հավաքեցին մթերքն ու հրի ճարակ դարձրին, որպեսզի ներխուժած մոնղոլները կեր ու մթերքի պաշար չգտնեն: Երբ Ղազանն իմացավ, թե հագարացիք ինչ են արել, որոշեց ձմեռել Եփրատի ափին և վաղ գարնանը, հենց որ խոտն սկսի բուսնել, ելնել արշավանքի, քանզի թաթարներն ավելի շատ հոգում են ձիերի, քան իրենց մասին»[1]:

Հեթում պատմիչն այնուհետև պատմում է, թե Ղազան խանը իր մոտ կանչեց հայոց թագավոր Հեթումին, որը նույնպես տեղավորված էր գետափին, բայց այդ ժամանակ դեսպաններ եկան Իրանից և լուր տվին, որ Ղայդուն նորից է ներխուժել երկիր և շատ վնասներ պատճառել: Դա Ղազան խանին ստիպեց վերադառնալ Իրան՝ արշավանքի դևկավարությունը հանձնարարելով Կութլուղ շահին[2]:

Հեթումի պատումի վերջում Ղազան խանի մասին կա արժեքավոր մի տեղեկություն, թե անհաջող արշավանքից հետո «Հեթում թագավորը մեկնեց Իրան՝ Ղազան խանի մոտ, որը նրան մեծարանքով

[1] Documents arméniens, t. II, p. 199.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 200:

ընդունեց և տվեց 1000 զորական ու որոշ քանակությամբ դրամ: Հայոց թագավորը դրանով վերադարձավ Կիլիկիա՝ Ղազան խանից խրախուսված և նրա խրատն առած՝ պահպանել իր թագավորությունը, մինչև որ խանն ինքը կկարողանա մտնել Պաղեստին»[1]: Այստեղից պարզ է. առաջին, որ Ղազանը մտադիր էր նոր արշավանք գործել դեպի Սիրիա, երկրորդ, որ նա մեծ նշանակություն էր տալիս Կիլիկիայի ռազմավարական դիրքին:

Երրորդ անհաջող արշավանքից չատ չանցած՝ մամլուքները մի քանի անգամ ներխուժեցին Կիլիկիա: 1304 թ. մայիսին Բեկթաշի հրամանով մամլուքների երկու ջոկատ, մեկը՝ Հոոմկլայով, մյուսը՝ Ամանոսի լեռնանցքով, ներխուժեցին Կիլիկիա և, իրար միանալով, գրավեցին Թել-Համդունը:

1305 թ. Հալեպի էմիր Կարա Սոնկորը այն պատրվակով, թե հայոց թագավորը ուշացնում է հարկի վճարումը, ներխուժեց Կիլիկիա: Հեթում թագավորը ուշացնում է հարկի վճարումը, ներխուժեց Կիլիկիա: Հեթում թագավորը հայերի, ֆրանկների ու մոնղոլների գլուխն անցած՝ ջախջախեց նրանց Ամանոսի լեռնաշղթայի կապանում[2]:

Հեթումի հաղորդման համաձայն «1305 թ. հուլիսին, յոթ հազար սարակինոսներ ներխուժեցին հայոց պետություն և ամեն ինչ ճանապարհին կողոպտելով՝ հասան Տարսոն... Շատ չարիքներ գործելով՝ նրանք սկսեցին նետ քաշվել, բայց հայերը Այասի մոտ փակեցին նրանց ճանապարհը և բոլորին, 300 հոգուց բացի, կոտորեցին ու գերեցին: Դրանից հետո սարակինոսները սիրտ չէին անում ներխուժել Կիլիկիա, իսկ եգիպտոսի սուլթանը հաչտություն կնքեց հայոց թագավորի հետ»[3]: Հեթում պատմիչը եգիպտոսի զորքերի դեմ Կիլիկյան Հայաստանի տարած այս հաղթանակը գնահատել է որպես նրա միջազգային դրության ամրապնդում[4]: Արաբ պատմիչ Մուֆազզալի ասելով, Կիլիկիայի հայերը երբեք այդպիսի խոշոր հաղթանակ չէին տարել արաբների դեմ: Ըստ երևույթին, կրած պարտության հետևանքով եգիպտոսի սուլթանությունը տասներկու տարի այլևս չանհանգստացրեց իր հարձակումներով:

[1] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 204:

[2] Տե՛ս **D' Ohsson,** Histoire des Mongols, t. IV, p. 532:

[3] Documents arméniens, t. II, p. 206.

[4] 1305 թ. Հեթում պատմիչը մեկնել է Կիպրոս, իսկ այդտեղից՝ Ավինիոն և ներկայացել է Կլիմենտ պապին (1307): Այնուհետև նա բնակություն է հաստատել Ֆրանսիայում:

1305 թ. Հեթումը նորից, երրորդ և վերջին անգամ, հրաժարվեց գահից: Նրա ազգական Լևոնը՝ Սմբատի ձեռքով սպանված Թորոս III-ի որդին, իր կին Մարգարիտ Լուզինյանի հետ թագադրվեց Սիսում: Բայց Հեթումը, ինչպես երևում է աղբյուրներից ու հետագա իրադարձություններից, չարունակել է ազդել պետական և, մանավանդ, եկեղեցական գործերի վրա:

Սիրիայում մոնղոլների պարտությունից հետո Կիլիկիայի ավատատիրական վերնախավը Եվրոպայի օգնությունը համարում էր չատ անհրաժեշտ: 1306 թ. գարնանը Լևոն IV-ի (1305–1307) դեսպանները Նեապոլով ճանապարհվեցին դեպի Հռոմ ու Փարիզ: Կլեմենտ V-ը խոստանալով չուտով օգնություն ցույց տալ՝ հայերին դրդում էր կաթոլիկություն ընդունել: Թագավորի արքունիքը Գրիգոր VII կաթողիկոսի համագործակցությամբ ավելի եռանդուն էր գործում, որպեսզի իրականացներ հայոց եկեղեցու միացումը Հռոմեականին: 1307 թ. Սիսի եկեղեցաժողովը ընդունեց մի չարք որոշումներ երկու եկեղեցիների մերձեցման համար: Միավորման ճանապարհով Կիլիկիայի հայ ազնվականությունը և գլխավորապես թագավորի արքունիքը ու սրա հետ կապված բարձր հոգևորականությունը հույս ունեին ապահովել Արևմուտքի օգնությունը: Սակայն միավորման մասին Սիսի եկեղեցաժողովի որոշումը թշնամաբար ընդունվեց հայ բնակչության լայն խավերի կողմից ինչպես Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում:

Իշխանների կողմից ինքնուրույնության ձգտման ուժեղացման և եկեղեցիների միավորման կողմնակիցների ու հակառակորդների պայքարի սրման հետևանքով ներքին համերաշխության թուլացման հետ միաժամանակ սկսվեց նաև մոնղոլների ու հայերի հարաբերությունների վատացումը: 1307 թ. նոյեմբերին Լևոն թագավորը, նրա հորեղբայր Հեթումը և չատ իշխաններ խորհրդակցելու պատրվակով մոնղոլ զորապետ Բիլարղուի կողմից հրավիրվեցին Անարզաբա և ուխտադրժորեն սպանվեցին նրա հրամանով:

Պատմաբան Ջամչյանը պնդում է, թե հայ իշխաններից ոմանք՝ միավորման մասին Սիսի որոշումից դժգոհները, Կիլիկիայում տեղավորված մոնղոլական զորքերի զորապետին դրդել են, որ սպանի Լևոն թագավորին և նրա հորեղբայր Հեթումին[1]: Հայ պատմաբանի այս կարծիքը կրկնում է և Դյուլորիեն, սակայն նման պնդման համար հիմքեր չկան:

[1] **Մ. Ջամչյան,** Հայոց պատմութիւն, հ. Գ, էջ 311:

Բերենք այն ամենը, ինչ կա հայկական աղբյուրներում այս իրադարձության մասին: Սամուել Անեցու չարունակողը Բիլարղուի արարքը բացատրում է մոնղոլ զորապետի կողմից Կիլիկիան զրավելու ցանկությամբ: Նա գրում է, թե Հեթումը «ունկնդիր իւր զնոր օծեալ տղա թագաւորն Լևոն զնդրորորդին իւր զՕչին սինէգալն, որ յայնժամ գունդստարին էր, և զայլ բազում իշխանս, որք իբրև եկին առ նա, յարեաւ ի վերայ և եսպան զամենեսին առ ոտս Անազարբու, և կամէր զԿիլիկիա յինքն յափշտակել»: Հեթումին վերագրվող «Ժամանակագրության» մեջ ասվում է. «1307 թ. նոյեմբերի 17-ին Անազարբայի բերդի ստորոտում ուխտադրժորեն սպանվել են մեծ իշխան Հեթումը և նրա եղբայր պարոն Թորոսի որդի Լևոն թագավորը»[1]: Սմբատի «Պատմության» չարունակողը կ'ել ավելի հակիրճ հաղորդում է, թե «սպան Պիլարղուն զտղայ թագաւորն Լևոն, և զհօր եղբայրն պարոն Հեթում՝ յԱնաւարզոյ առջևն»: Այսպիսով, այն ժամանակվա հայկական աղբյուրներում ցուցում չկա, թե սպանությունը կատարված է հայ լատինասեր իշխանների սադրանքով: Այդպիսի տվյալներ չկան նաև արևելյան աղբյուրների մեջ, որոնք ավելի լավ ու մանրամասն են լուսաբանում տվյալ իրադարձությունը: Ռաշիդ ադ դինի չարունակողը, ինչպես երևում է, քաջատեղյակ է Լևոն Թագավորի, նրա հորեղբայր Հեթումի և հայ չատ իշխանների սպանության պատճառներին: Համաձայն այս աղբյուրի, Բիլարղուն սկսել է ճնշել հայոց թագավորին՝ դրամ պահանջելով: Լևոն IV-ը մի քանի անգամ նրա դեմ բողոքել է մոնղոլ խան Օլջեյթուին՝ ապարդյուն կերպով ձգտելով հեռացնել տալ Բիլարղուին իր զրաղեցրած պաշտոնից: Վերջինս իմանալով այդ մասին՝ որոշել է վրեժ լուծել: Շուտով ներկայացել է առիթը: Լևոն IV-ը, որը միաժամանակ հարկ էր վճարում և՛ Իրանի իլխանին, և՛ Եգիպտոսի սուլթանությանը, վերջինիս գաղտնի տեղեկացրել է, թե Բիլարղուն ինքնագլուխ կերպով է տնօրինում երկրի եկամուտները և իրեն դնում այնպիսի դրության մեջ, որ չի կարող Եգիպտոսի հարկը վճարել: Մելիք Նասըր-Մուհամմեդը Բիլարղուի մոտ դեսպան է ուղարկել, որպեսզի բանակցություններ վարի Կիլիկյան Հայաստանի կողմից մոնղոլներին ու Եգիպտոսին հարկ վճարելու վերաբերյալ: Դեսպանը Բիլարղուին գաղտնի հաղորդել է Եգիպտոսի սուլթանի հետ Լևոնի գաղտնի բանակցությունների մասին: Բիլարղուն Լևոնին կանչել է այն պատրվակով, թե Եգիպտոսի դեսպանը ցանկանում է խոսել նրա հետ, որից հետո կարելի կլինի ընդհանուր պատասխան տալ Մելիք Նասըրին հարկը վճարելու մասին: Լևոնը իր հորեղբայր Հեթումի և քառասուն իշխանների ուղեկցությամբ եկել է Անարզաբա՝ Բիլարղուի մոտ, որտեղ նրանք բոլորն էլ սպանվել են վերջինիս կողմից[1]:

[1] **Սամուէլ Անեցի,** Հաւաքմունք ի գրոց... Վաղարշապատ, 1893, էջ 155–156:

Իշխան Օչինը՝ Հեթումի չորրորդ եղբայրը, իմանալով իր եղբոր, եղբորորդու և չատ իշխանների սպանության մասին, կովի է նլել Բիլարղուի դեմ և նրան ստիպել, որ հեռանա Կիլիկիայից: Այնուհետև նա բողոքելու է գնացել Օլջեյթու խանի մոտ: Բիլարղուն սկզբից արդարացվել է խանի կողմից: Սակայն չուտով այդ գործը վերանայվել է, և նա մահապատժի է ենթարկվել: Հավանաբար այս որոշումն ընդունվել է Հեթումի հինգերորդ եղբայր Ալինախի կողմից իլխանի մոտ կատարված ուղևորությունից հետո, որը պնդել է, որ Բիլարղուն իր կատարած ոճրագործության համար մահապատիժ ստանա:

Իրանի մոնղոլների կողմից իսլամ ընդունելուց և Սիրիայում նրանց պարտությունից հետո Հուլավյանների վերաբերմունքը Կիլիկիայի հայկական թագավորության նկատմամբ աստիճանաբար վատացավ: Կիլիկյան Հայաստանի նկատմամբ Բիլարղուի թշնամական քաղաքականությունը, հավանաբար, հավանություն էր գտնում մոնղոլական վերնախավի մեջ, ուստի և սկզբում նա արդարացվել է: Կիլիկյան Հայաստանի արքունիքն էլ իր կողմից երևի չէր հավատում մոնղոլների հզորությանը, հույս չուներ, որ Հուլավյանները կկարողանան հաղթել Եգիպտոսի սուլթանությանը և կպաշտպանեն Կիլիկիային, ուստի և Եվրոպայի հետ դիվանագիտական հարաբերությունները չարունակվում էին XIV դարում: Սակայն դրանք դրական արդյունք չտվեցին և ավելի սրեցին Կիլիկյան Հայաստանի հարաբերությունները Եգիպտոսի սուլթանության հետ:

Մոնղոլ իլխանների ու մամլուք սուլթանների մրցակցությունը Սիրիայի համար, որը Ղազան խանի օրոք հասել էր գագաթնակետին, այնուհետև կորցրեց իր սրությունը, թեև երբեմն վերակսվում էր: Կառավարման սկզբում Օլջեյթուն մտադիր էր չարունակել իր եղբայր Ղազան խանի քաղաքականությունը Եգիպտոսի նկատմամբ: Հետևելով իր նախորդների օրինակին՝ նա դեսպաններ հղեց Եվրոպա, որպեսզի պայմանավորվեն Եգիպտոսի սուլթանության դեմ կատարելիք համատեղ գործողությունների մասին: 1305 թ. Ֆիլիպ Գեղեցիկին հղած նամակում Օլջեյթուն թագավորին հիշեցնելով իրենց նախնիների միջև եղած բարեկամության մասին՝ հաղորդում էր, որ «Զինգիզ խանի արյունից սերած իշխանները, որոնք 45 տարի երկպառակությունների մեջ են եղել, այժմ ապրում են համերաշխության մեջ և

[1] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 549:

ընդհանուր խաղաղություն են հաստատել»[1]: Առաջարկելով վերականգնել բարեկամությունը՝ մոնղոլների խանն ավելացնում է, թե ինքը «բավականությամբ է իմացել ֆրանսիացիների և անգլիացիների միջև տեղի ունեցող երկպառակությունների ավարտման մասին»: Օլջեյթուի դեսպանները Ֆրանսիայի և Անգլիայի թագավորներին առաջարկում էին համատեղ ուժերով եգիպտոսից ետ գրավել Սուրբ Երկիրը՝ խոստանալով տրամադրել 200 հազար բեռ հացահատիկ և հանել 100-հազարանոց հեծելազոր:

Հայտնի չէ, թե Ֆիլիպ IV-ը ինչ է պատասխանել Օլջեյթուի դեսպաններին, բայց պահպանվել է Էդուարդ II-ի հուլիսի 7-ի պատասխանը: Անգլիայի թագավորը, ի միջի այլոց, գրում է. «Մենք ուրախ ենք խաղաղության համար, որ ձեր կողմից հաստատվում է այն երկրից, որտեղից ծագում է արևը, մինչև անդրծովյան սահմանները» և իր կողմից ծանուցում է. «Մենք նույնպես խաղաղություն ու համերաշխություն ենք հաստատել և հուսով ենք, որ վերջ կտրվի երկպառակություններին»[2]: Խոսքը վերաբերում էր Ֆրանսիայի և Անգլիայի միջև Գիեննի դավառի պատճառով տեղի ունեցող պատերազմի ավարտմանը: Բայց հայտնի է, որ թշնամանքը այդ երկու տերությունների միջև համարյա չի ընդհատվել և 30 տարի անց վերաճել է Հարյուրամյա պատերազմի: Օլջեյթուի նամակը և Էդուարդ II-ի պատասխանը ցույց են տալիս, որ երկու կողմերն էլ հիանալիորեն հասկանում էին, թե ինչ խոչընդոտներ են առաջացնում երկպառակությունները մի կողմից ուլուսների և մյուս կողմից Ֆրանսիայի ու Անգլիայի թագավորների միջև՝ եգիպտոսի դեմ մղվելիք իրենց համատեղ գործողությունների համար:

Անհրաժեշտ է նշել, որ այն ժամանակ, երբ Օլջեյթուն Արևմուտքին հավատացնում էր մոնղոլների միջև տեղի ունեցող ներքին գժտությունների ավարտման մասին, Ոսկե Հորդայի խան Թողտան եգիպտոսի սուլթան Նասըրի մոտ դեսպաններ է հղել, որոնք նրան հաղորդել են խանի հետևյալ խոսքերը. «Մենք արդեն Խարբանդեի (Օլջեյթուի) մոտ դեսպաններ ենք հղել՝ նրանից պահանջելու Խորասանը մինչև Թավրիզի սահմանները, մեր նպատակն է չարժվել նրա դեմ: Հավաքե՛ք ձեր զորքերը և եկե՛ք մեզ մոտ: Մենք ու դուք կմիանանք՝ նրան (Խարբանդեին) երկրամասից դուրս քշելու համար: Այն հողերը, որտեղ կմտնեն ձեր հեծյալները, թող ձերը լինեն, իսկ այն հողերը, որտեղ կլինեն մեր հեծյալները, մերը կլինեն»[3]:

[1] **D' Ohsson,** *Histoire des Mongols, t. IV, p. 589.*

[2] *Նույն տեղում, էջ 592:*

[3] **В. Тизенгаузен,** *Сборник матер., относящихся ист. Золотой Орды, т. I, с. 196.*

Այսպիսով, XIII դարի վերջին և XIV դարի սկզբին եգիպտոսի սուլթանության դեմ համատեղ գործողություններ ծավալելու վերաբերյալ պապության, Ֆրանսիայի և Անգլիայի հետ Հուլավյանների բանակցությունները դրական արդյունքներ չտվեցին: Հաղիվ թե հնարավոր լիներ կայուն դաշինք հաստատել նրանց միջև, քանի որ կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր տիրել Սիրիային ու Պաղեստինին: Եթե նույնիսկ ընդհանուր ուժերով նրանք նվաճեին էլ վերոհիշյալ երկրները, ապա, այնուամենայնիվ, դրանց պատճառով հետագայում հավանաբար գժտվելու էին: Պետք է ընդգծել, որ XIV դարի սկզբին, ինչպես և նախորդ ու հաջորդ ժամանակներում, ուլուսների միջև գոյություն ունեցած տարանջատվածությունը, թշնամանքն ու պատերազմները պատճառ են եղել, որ Հուլավյաններին խանգարել են նվաճելու Սիրիան, իսկ Անգլիայի ու Ֆրանսիայի հարաբերությունների սրումը խանգարել է կատարելու նոր խաչակրաց արշավանք: Միջազգային այս իրադրությունը կայունացրել է եգիպտոսի սուլթանության դիրքը Սիրիայում ու Պաղեստինում և զրկել նրան Կիլիկյան Հայաստանի նկատմամբ ավելի հարձակողական լինել:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՊՈՒԹՅԱՆ, ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԵՏ: ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ 1307–1361 ԹԹ.

Կիլիկյան Հայաստանի միջազգային դրության վատթարացումը XIV դարի սկզբին: Պայքարի սրումը Օչին թագավորի (1307–1320) կողմից պապության հետ միավորվելու և երկրում կաթոլիկություն տարածելու փորձի կապակցությամբ: Լևոն V (1320–1342). մամլուքների ներխուժումները Կիլիկիա և պապության, Ֆրանսիայի ու Անգլիայի հետ Կիլիկյան Հայաստանի դիվանագիտական հարաբերությունների ընդլայնումը: Գվիդոն (Գի) Լուզինյանի՝ իշխանության գլուխ անցնելը: Հռոմեական եկեղեցու հետ հայոց եկեղեցու միավորման վերաբերյալ բանակցությունների չարունակումը: Պատերազմները Եգիպտոսի սուլթանության դեմ XIV դարի 40–60-ական թվականներին: Պապության կողմից Կիլիկյան Հայաստանի վզին եկեղեցական միություն փաթաթելու անհաջող փորձերը:

Օչին իշխանը իմանալով եղբայր Հեթումի, եղբորորդի Լևոն IV-ի և անվանի իշխանների սպանության մասին՝ կովի է կանչում Բիլարդուի դեմ և նրան ստիպում է հեռանալ Կիլիկիայից: Իշխանությունն անցավ Օչինին (1307–1320):

Բիլարդուի արարքը դեռևս չէր նշանակում Կիլիկյան Հայաստանի նկատմամբ Հուլավյանների քաղաքական կուրսի արմատական փոփոխություն դեպի վատթարացում: Մոնղոլներն առաջվա նման չէին սպառնում Կիլիկիային, բայց դրա փոխարեն XIV դարում Կիլիկիայի համար ուժեղացավ վտանգը Եգիպտոսի կողմից:

Հուլավյանների պետության թուլացման հետևանքով XIV դարի առաջին կեսին աստիճանաբար վատթարացավ Կիլիկյան Հայաստանի միջազգային դրությունը, քանի որ Եգիպտոսի սուլթանությունը գործողությունների ավելի մեծ ազատություն ստացավ Կիլիկիայի

նկատմամբ և սկսեց կողոպտչական հարձակումներով քայքայել այդ երկիրը: Սակայն XIV դարի սկզբին մամլուքների հարձակումները 10–15 տարով դադարեցին: Այդ կարճատև դադարի ընթացքում արտաքին ու տարանցիկ առևտուրը նոր թափ ստացավ, ինչը մեծացրեց պետության մաքսային եկամուտները:

Մոնղոլները Եգիպտոսի հետ կնքված խաղաղությունը խախտեցին միայն մեկ անգամ՝ 1312 թվին, երբ Սիրիայի չորս էմիրներ հայտնի Կարա-Սոնկորի գլխավորությամբ Սուլթանիին նկան, որոնց իլխան Օլջեյթուն լավ ընդունեց և քաղաքներ ու հողեր հատկացրեց: Ըստ երևույթին, նա չէր հրաժարվել նաև իր նախորդների ծրագրից՝ ճեղքել-անցնել դեպի Միջերկրական ծով: Փախստականների դրդմամբ և հույսը դնելով Սիրիայի բնակչության համակրանքի վրա՝ Օլջեյթուն որոշեց 1312 թ. նոր արշավանք գործել դեպի Սիրիա, բայց անհաջողության մատնվեց Ռահբե քաղաքի պաշարման ժամանակ[1]: Ակներևաբար արշավանքը վատ է նախապատրաստված եղել, և բացի այդ մոնղոլներն արդեն չունեին բավականաչափ պաշարներ, որպեսզի մեծ բանակ հանեին: Կիլիկյան Հայաստանի զորքը այս արշավանքին չի մասնակցել: Հավանաբար դրանով է բացատրվում այն, որ մոնղոլների և Կիլիկյան Հայաստանի միջև բարեկամական հարաբերությունները վատթարացան: Եգիպտոսի սուլթանության դեմ անհաջող արշավանքից հետո մոնղոլների մի ջոկատ 1314 թ. կողոպտչական ասպատակություն կատարեց դեպի Կիլիկիա: Սակայն դա պատահական երևույթ էր: Հուլավյանների և Կիլիկյան Հայաստանի միջև եղած բարեկամական հարաբերությունները չարունակվեցին նաև Արու Սաիղի օրոք (1316–1335):

Սիրիայի արաբները սովորաբար Ռում էին ներխուժում Մալաթիայով: Այս քաղաքում բնակվող հայերը հաճախ հարձակվում էին արշավանքից վերադարձողների վրա և գերի վերցնում: 1315 թ. Եգիպտոսի սուլթանությունը Մալաթիայի դեմ զորք ուղարկեց, որին միացան Հալեպի և այլ քաղաքների ջոկատները, որոնց թվում և Աբուլֆեդայի ջոկատը: Ըստ Աբուլֆեդայի մամլուքները կողոպտեցին Մալաթիան, իսկ բնակիչներին համարյա գլխովին կոտորեցին: Ռումի մոնղոլ կառավարիչ Զուպանը ոչ միայն օգնության չեկավ Մալաթիային, այլև մամլուքների հեռանալուց հետո էլ անուշադրության մատնեց այն: Միաժամանակ Եգիպտոսի սուլթանությունը Կիլիկյան Հայաստանից պահանջեց ավելի մեծ հարկ վճարել, ինչը և ստիպված եղան կատարել:

[1] *Տե՛ս* **D' Ohsson,** *Histoire des Mongols, t. IV, p. 555:*

Կիլիկյան Հայաստանի կառավարող շրջանները տեսնելով Եգիպտոսի ակտիվացումը և մոնղոլների թուլացումը՝ իրենց հույսերը դրեցին Եվրոպայի վրա՝ համաձայնելով հռոմեական եկեղեցուն հայոց եկեղեցու միացման պապության պահանջի հետ:

Կլեմենտ V և Հովհաննես XXII պապերը համոզվելով իլամ ընդունած մոնղոլների շրջանում քրիստոնեության քարոզի անհաջողության մեջ իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրին Կիլիկյան Հայաստանի վրա՝ համարելով այն իրենց դաշնակիցն ու առավել հարմար հենակետը Ասիայում, ինչպես և Կիպրոսի վրա՝ այս կղզին էլ դիտելով որպես ռազմածովային բազա խաչակրաց նոր արշավանք կազմակերպելու դեպքում:

Այդ ժամանակ Կիլիկիայի ներսում ուժեղացել էր պայքարը Հռոմի հետ եկեղեցական միության կողմնակիցների և հակառակորդների միջև: Սիսի եկեղեցաժողովի (1307) որոշումները չէին կենսագործվում: Պապությունն էլ ռազմական օգնության պայմանով, ինչը Եվրոպան պետք է ցույց տար Կիլիկիայի հայերին, կաթոլիկականին հայկական եկեղեցու ննթակայության հարցն էր դնում: Հովհաննես XXII պապը որոշեց ավելի եռանդուն գործել: 1316 թ. նա նամակ գրեց Օշինին՝ պահանջելով նոր եկեղեցաժողով հրավիրել՝ Սիսի ժողովի որոշումները հաստատելու համար: Կրոնական քաղաքականության մեջ Օշինը դնում էր Հնթումի հետքերով: Այդ բանում նրան համագործակցում էր Կոստանդին III կաթողիկոսը: Նույն թվին Ադանայում հրավիրվեց եկեղեցաժողով՝ 18 եպիսկոպոսների, 7 վարդապետների և աղնվականության 10 ներկայացուցիչների մասնակցությամբ, որը հաստատեց Սիսի ժողովի որոշումը Հռոմի հետ միավորման մասին[1]:

Ադանայի ժողովի որոշումը և այն կենսագործելու փորձերը դիմադրության հանդիպեցին Կիլիկիայի բնակչության լայն խավերի կողմից: Նոր ծեսերին ու դոգմաներին հետևում էր միայն թագավորի արքունիքը և պատրիարքական պալատը: Ոչ մի խիստ միջոց, որ կիրառվում էր միացման առավել մոլի հակառակորդների դեմ, օգուտ չէր տալիս: Կիլիկիայի կառավարող շրջանները ընդունելով միացումը՝ հույսով էին, որ պապության և եվրոպական պետությունների օգնությամբ երկիրը կապահովեն թշնամիների հարձակումներից և կպահպանեն իրենց իշխանությունը, սակայն բնակչությունը, որը դաժանորեն չահագործվում էր ավատատերերից ու բարձր հոգևորականությունից և դժգոհ էր թագավորական աստիճանավորների ճնշումներից, թշնամաբար էր վերաբերվում կաթոլիկական հավատին, որն իր վրին փաթաթվում էր թագավորի ու կաթողիկոսի ձեռքով՝ դրա մեջ տեսնելով իր կյանքի պայմանների վատթարացման վտանգ: Իշխանների և աղնվականության մի մասը, որը ոչ մի բանով կապված չէր Եվրոպայի հետ, և ցածր հոգևորականությունը նույնպես դեմ էին միավորմանը:

Թագավորական արքունիքը դաժան դատաստան էր տեսնում միացման հակառակորդների նկատմամբ: Օշին թագավորը կաթողիկոսի և աղնվականության հավանությամբ հրամայեց ձերբակալել կաթոլիկության դեմ եռանդուն հանդես եկողներին: Ներանցից չատերին՝ քահանաների և աշխարհականների, գլխատեցին: Վարդապետներին բանտարկեցին ամրոցներում, իսկ վանականներին աքսորեցին Կիպրոս, որտեղ նրանց մի մասը մեռավ[1]:

Ֆրանսիացի պատմաբան Մորգանը արդարացնելով Օշինի դաժան միջոցառումները՝ գրում է. «... ստիպողական անհրաժեշտությունը, որպեսզի դիմակայեին արտաքին վտանգի դեմ, Օշինին ստիպեց եռանդուն գործել դիվոտածների դեմ, որոնք ազգի չահերը զոհաբերում էին իրենց զգացմունքներին և դատարկ ու չնչին ծեսերին»[2]: Մորգանը, արտահայտելով փրանսիական բուրժուազիայի չահերն Արևելքում, այստեղ հանդես է գալիս պապության նվաճողական քաղաքականության պաշտպանի դերում, որը դարեր չարունակ ձգտել է միացման ճանապարհով կաթոլիկ եկեղեցուն և Արևմտյան Եվրոպայի քաղաքական չահերին ննթարկել Բալկանյան թերակղզին, Արևելքը, Ուկրաինան և այլ երկրներ: Ինչպես փլորննտական ունիան (միավորումը), որը պապության կողմից բյուզանդական (արևելաուղղափառ) եկեղեցին հռոմեա-կաթոլիկականին ննթարկելու փորձ էր, Բյուզանդիային չփրկեց կործանումից 1453 թ. Թուրքերի հարձակման ժամանակ, այդպես էլ Ադանայի ունիան Կիլիկյան Հայաստանին չփրկեց եգիպտոսի սուլթանության հարձակումներից: Պապության բազմաթիվ փորձերը XIV դարում՝ Եվրոպայի ռազմական օգնության խոստումների միջոցով հայերին ստիպել, որ ընդունեն ունիան (միավորումը), Կիլիկիային մեծ վնաս բերեցին:

Կաթոլիկական ունիան միչտ հակառակ էր գնում այն ժողովուրդների չահերին, որոնց վրին այն փաթաթվում էր. ամենուրնք դիմադրության էր հանդիպում բնակչության լայն խավերի կողմից և առաջացնում առաջադիմական պայքար: Հայտնի է, թե հետադիմա-

[1] Տե՛ս **Մ. Օրմանեան,** Ազգապատում, էջ 1819:

[1] Տե՛ս **Մ. Զամչյան,** Պատմութիւն Հայոց, հ. III, էջ 314:

[2] **F. Morgan,** Histoire du peuple arménien, p. 215.

կան ինչ դեր է խաղացել ունիան, որը պապությունը փորձում էր իրականացնել Ուկրաինայում ու Բելոռուսիայում լեհական մագնատների միջոցով, որը ձգտում էր իր դասակարգային տիրապետությունն ուժեղացնել ուկրաինացի ու բելոռուս ժողովուրդների վրա: Հենց այդ պատճառով էլ այս ժողովուրդները, աղատագրական ու դասակարգային պայքար մղելով լեհական պանների դեմ՝ միաժամանակ պայքարում էին նաև ունիայի դեմ: Կիլիկեցի հայերի լայն խավերը նույնպես հասկանում էին, որ Հռոմի հետ միավորվելն իրենց չի փրկի, այլ, ընդհակառակը, ավելի կվատացնի իրենց դրությունը, և համառորեն դիմադրում էին ունիայի ընդունմանը:

Եկեղեցաժողով հրավիրելով և դրա որոշումները կենսագործելով՝ Օշինն ուզում էր պապությանը ցույց տալ, թե ինքը կատարել է Հովհաննես XXII պապի պահանջը եկեղեցիների միավորումը ճանաչելու մասին: 1317 թ. նա պապին նամակ է գրում օգնության խնդրանքով, Ֆրանսիայի թագավորի մոտ է ուղարկում մի դեսպանություն՝ Հակոբ եպիսկոպոսի գլխավորությամբ[1]: Պապությունը հոգում էր ոչ թե հայերին ռնալ օգնություն ցույց տալու, այլ Կիլիկիայում կաթոլիկություն արմատավորելու մասին: Պապը տեղյակ էր այն բանից, որ հայոց եկեղեցին կաթոլիկականին ննթարկելու մասին եկեղեցաժողովի որոշումը Կիլիկյան Հայաստանի հայերի դիմադրությունն է հարուցել: 1318 թ. մայիսին պապը թագավորին և կաթողիկոսին նամակ է գրում եկեղեցիների միավորման անհրաժեշտության մասին, իսկ մեկ ամիս անց՝ հայոց արքունիքին դրդում է կաթոլիկներին հովանավորել երկրում և դպրոցներ հիմնել լատիններեն լեզուն սովորեցնելու համար: Այդպիսի մի դպրոց հիմնվել է Այասում[2]: Այսպիսով, ռնալ օգնության փոխարեն պապությունը Կիլիկիայում կաթոլիկություն էր արմատավորում, ինչը հանգեցրեց ներքին երկպառակության և նպաստեց Կիլիկիայի հայկական թագավորության թուլացմանը:

Հենց այդ ժամանակ սկսվեցին մամլուքների պարբերական ներխուժումները և Իկոնիայի թուրքմեն-կարամանների ասպատակությունները, որոնք համաձայնեցված էին գործում: 1318 թ. ժամանակագիրներից մեկը նշում է. «Նյու խարամանն չատ հնծելով և գերեաց զսահմանսն Տարսոնի... նա գունդն Կոռիկոսոյ պարոն Օշին երեք հարիւր մարդով հասաւ նոցա, և կոտորեաց զնոսա»[3]: Բայց չուտով մամլուքների և թուրքմենների ներխուժումներն ուժեղացան, հաճախակի դարձան և հանգեցրին ողբալի հետևանքների:

[1] Տե՛ս **Baronius,** *Annales ecclesiatici, t. XXIV, p. 73:*

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] ***Մխիթար Սպարապետի*** *Պատմութիւն, էջ 120:*

Օշինի մահից հետո գահն անցավ նրա մանկահասակ որդի Լևոնին: Լևոն V-ի կառավարման շրջանում (1320–1341) Կական փոփոխություններ տեղի ունեցան ինչպես Մերձավոր Արևելքի միջազգային հարաբերություններում, այնպես էլ Արևմտյան Եվրոպայում, որոնք պայմանավորված էին Հուլավյանների պետության լիակատար անկմամբ և Հարյուրամյա պատերազմի սկսումով:

Աբու-Սաիդի օրոք (1316–1335) մոնղոլները ներքին թուլության հետևանքով ստիպված եղան վերջնականապես հրաժարվել Սիրիան նվաճելու մտքից: Կիլիկյան Հայաստանն այլևս չէր կարող հույս դնել նույնիսկ այն օգնության վրա, որ մի ժամանակ ցուցաբերում էին մամլուքյան սուլթանների հետ մրցակցող իլխանները:

Մյուս կողմից՝ Անգլիայի ու Ֆրանսիայի միջև հարաբերությունների սրումը բացառում էր այդ երկրների մասնակցությամբ նոր խաչակրաց արշավանքի կազմակերպման հնարավորությունը, բայց Կիլիկյան Հայաստանը կառավարող հայ ազնվականությունն այդ բանը չէր հասկանում: Միջազգային հարաբերությունների վատթարացման հետ Կիլիկյան Հայաստանում սկսվեցին ներքին երկպառակությունները: Նորից, ինչպես քառորդ դար առաջ, բռնկվեց պայքար իշխանության համար: Ուժեղացան նաև տարաձայնությունները հայոց կրոնը դավանողների ու միավորվելու կողմնակիցների միջև: Այս հանգամանքները էլ ավելի էին թուլացնում պետության պաշտպանունակությունը:

Թագավորական պալատի, ազնվականության ու բարձր հոգևորականության լատինասիրությունը պայմանավորված էր տնտեսական ու քաղաքական չահերով, այլ ոչ թե կրոնական դրդապատճառներով: Դևպի Արևմուտք կողմնորոշման սաստկացումը մասամբ բացատրվում է նրանով, որ այդ ժամանակաշրջանում Եգիպտոսի դեմ մոնղոլների օգնության ոչ մի հույս չկար: Թեև արդեն մոտ մեկ դար Կիլիկյան Հայաստանի կառավարող շրջանները իրենց հայացքը հառում էին Արևմուտք՝ օգնության հույսով, սակայն նրանք խոստումներից ու կաթոլիկական քարոզից բացի այնտեղից ոչինչ չէին ստանում: Ռազմական օնության խոստումները մնում էին անկատար, հայերին օգնելու համար խաչակիրների չուտափույթ Արևելք ժամանելու մասին պապերի տեղեկությունները միշտ կեղծ էին դուրս գալիս: Հետևաբար, Կիլիկիայի կառավարող շրջաններին անհրաժեշտ էր համապատասխան եզրակացություն անել և չհավատալ պապական քաղաքագետների կեղծ խոստումներին, որոնք սոսկ վատթարացնում էին Կիլիկյան Հայաստանի ու Եգիպտական սուլթանության հարաբերությունները:

Եվրոպայի ավատական հասարակության ընդերքում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունների պատճառով պապությունը XIV դարում նշանակալիորեն կորցրել էր իր նախկին կշիռը միջազգային հարաբերությունների հարցերի լուծման ասպարեզում, ինչին նպաստում էր և պապական աթոռի տեղափոխումը Ավինիոն և դրա կախվածությունը Ֆրանսիայի թագավորներից: Սակայն պապությունը համառորեն ձգտում էր ազդել եվրոպական պետությունների արտաքին քաղաքականության վրա և դրանց միավորել Արևելքի նվաճման համար:

Եթե մոնղոլների ուժերը տարանջատված էին և Հուլավյանների պետությունը անկում էր ապրում, եթե սրվել էին եվրոպական պետությունների միջազգային հարաբերությունները, և պապությունը անզոր էր վերջ տալու նրանց միջև մղվող պատերազմներին, ապա, դրան հակառակ, եգիպտոսի սուլթանությունը, որտեղ կես դար կառավարման գլուխ էր կանգնած փորձով հմտացած Մալիք-Նասերը, այդ ընթացքում նշանակալիորեն ուժեղացել էր: Մալիք-Նասերը հաշվի առնելով միջազգային իրադրության բոլոր բարենպաստ հանգամանքներն ու Կիլիկյան Հայաստանի ներքին երկպառակությունները՝ նրան մի չարք այնպիսի հարվածներ հասցրեց, որոնցից այլևս ուշքի գալ չէր կարող:

XIV դարի 20-ական թվականներին Կիլիկյան հայկական պետության մեջ իշխանությունը փաստորեն իշխան Օշինի ձեռքին էր՝ տասնամյա թագավոր Լևոնի խնամակալի: Նա ամուսնացել էր այրիացած թագուհի Հովհաննայի հետ, իսկ իր դուստր Ալիսային պսակել էր պատանի թագավորի հետ: Օշինն ընդունեց պայլի, այսինքն՝ գահապահի տիտղոս, և իրեն հայտարարեց Կիլիկիայի ու Իսավրիայի պարոն: Ռազմական բարձրագույն պաշտոնը Օշինը հանձնարարեց իր եղբայր Կոստանդինին: Կոռիկոսի իշխանների կողմից իշխանության այդպիսի լիակատար կենտրոնացումն իրենց ձեռքին առաջացրեց մի քանի ազդեցիկ իշխանների դժգոհությունը, որոնք սկսեցին դավադրություն նախապատրաստել Օշինի դեմ: Նրանց աջակցում էր հանգուցյալ թագավորի քույր Ջաբելը՝ Տյուրոսի կոմս Ամորի Լուզինյանի այրին, որն իր չորս որդիներով ապրում էր Կիլիկիայում, իսկ հինգերորդ որդին, Գվիդոնը Բյուզանդիայում էր: Օշինն իմացավ այդ մասին և դաժան դատաստան տեսավ նրա հետ: Օշինի հրամանով Ջաբելին իր երկու որդիների հետ բանտարկեցին, բանտում էլ նրանք մնան: Ջաբելի մյուս երկու որդիները՝ Ժանը (Ջիվանը) և Բոհեմունդը ապաստան գտան Հռոդոսի հովհաննականների մոտ: Նրանց

հորեղբայրը՝ Կիպրոսի թագավոր Հենրիխը, պատրաստվում էր պատերազմել Օշինի դեմ, բայց այդ գործին միջամտեց Հովհաննես XXII պապը[1]: Նա հաշտեցրեց թշնամացած կողմերին, քանի որ բարձր էր գնահատում եգիպտոսի դեմ մղվող ընդհանուր պայքարում և Արևվելքում կաթոլիկության հաղթող տարածման գործում Կիպրոսի ու Կիլիկիայի դերը և մեծ նշանակություն էր տալիս Կիպրոսի թագավորության ու Կիլիկյան Հայաստանի միջև խաղաղության պահպանմանը:

Մինչ Կիլիկյան Հայաստանն զրաղված էր ներքին գժտություններով, Իկոնիայի թուրքմեններն ու սելջուկները և եգիպտոսի սուլթանության զորքերը սկսեցին երկու կողմից միաժամանակյա ավերիչ ներխուժումներ կատարել դեպի Կիլիկիա: Իկոնիայի սուլթանության անկումից հետո նրա տարածքում առաջացած տասը էմիրություններից երկուսը առավել ուժեղ էին և ագրեսիվ: XIV դարի 20-ական թվականներին, այն ժամանակ երբ օսման-թուրքերը չարժվում էին դեպի Մարմարա ծով՝ նվաճելով Փոքր Ասիայի բյուզանդական պրովինցիաները, սելջուկ-թուրքերը և թուրքմեն-կարամանները ներխուժումներ էին կատարում Կիլիկիա: 20-ական թվականների սկզբին Կարամանիան կառավարում էր Թիմուրտաշը՝ Արու-Սաիդի վեզիր Զուպանի որդին: Պայմանավորվելով Մալիք-Նասերի հետ՝ նա 1321 թ. ներխուժեց Կիլիկիա:

Մամլուքների ու Թիմուրտաշի զորքերի կողմից Կիլիկիա կատարվող համատեղ ներխուժումների նախաձեռնությունը, ինչպես երևում է, պատկանում էր եգիպտոսի սուլթան Մալիք-Նասերին: Ի պատասխան Հաշտության պայմանագիր կնքելու Կիլիկյան Հայաստանի ադաջարկությանը՝ նա պահանջեց վերադարձնել Սիրիային սահմանակից այն վայրերը, որոնք հայերը գրավել էին եգիպտոսի հետ Ղազան խանի պատերազմների ժամանակ: Մերժում ստանալով՝ եգիպտոսի սուլթանը հրամայեց Շիհաբ ուդ դին էմիրին ներխուժել Կիլիկիա: Մամլուքների հեծելազորը անցավ Պիռամոսը՝ կորցնելով մոտ 1000 ձիավոր, ապա բաժանվելով մի քանի ջոկատների՝ 17 օր թալանեց Կիլիկիան ու վերադարձավ մեծ ավարով: Այնուհետև Նասերը տեղեկանալով, որ Լևոն V-ը Եվրոպային զրգռում է եգիպտոսի դեմ՝ Թիմուրտաշի հետ համաձայնության եկավ Կիլիկիայի հայկական թագավորության դեմ համատեղ գործողություններ ծավալելու[2]:

[1] Տե՛ս **Tournebize,** *Histoire politigue et relig. de l' Arménie, p. 232:*

[2] Տե՛ս **D' Ohsson,** *Histoire des Mongols, t. IV, p. 661:*

Կարինի եպիսկոպոս Գրիգորին պատկանած ձեռագիր Հայսմավուրքում կա հետաքրքրություն ներկայացնող մի հիշատակարան Թիմուրտաչի թուրքմենների ու սելջուկների ներխուժման մասին, որտեղ ասված է. «Եւ արդ մինչ էր (թուականս) Հայոց Ջ և Ն (770= 1321) ամպարիշտ ոմն յաղգէն նետողաց, որում անուն Դամուրդաչ ասի, այսինքն՝ երկաթաբար, անօրէնն գայ յաշխարհն Հոռոմոց, և տեսեալ զերկիրն Հայոց զԿիլիկիա, զի որպէս ճիւղ մի ձիթենւոյ մնացեալ դադարէին ի նեղ և ի յանձուկ և խարչակահար երկրին, բազում տառապանօք ի մէջ երկուց անօրէն ազգացն այն՝ եգիպտացւոց և յարակլիացւոց: Արդ, անօրէնն երկաթաքարն ի նախանձ մտեալ ընդ թագաւորին Հայոց՝ վասն իրիք պատճառանաց, և խորհէր յաւարի առնուլ զերկիրն... դեսպանս կազմէ, զի ըմբռնեսցէ զթագաւորն Հայոց... Զոր լսացեալ... ոչ հնազանդեցան հրամանի նորա, այլ ամրացան իւրաքանչիւրս, դղեակս և յամրոցս և քարանձաւս և այլ անառ կայսն»[1]: Իհարկե, ամրոցներում կարող էին թաքնվել ազնվականությունը և բնակչության մի մասը միայն:

Այլ աղբյուրներից հայտնի է, որ Թիմուրտաչի զորքերը կոտորել ու գերի են քշել չատերին: Մի տարեգիր 1321 թվի տակ նշում է. «Ի ՋՀ թվին եկն անօրէն նուիննն Թամուր-տաչն որդի Զօպանին յերկիրն Սրսոյ և բազում վնաս գործեաց, զբազումս նսպան, և զբազումս գերի վարեաց և ել ի Հոռոմս»[2]:

Իրադարձություններին ժամանակակից, կաթոլիկության Թունդ Հետևորդ Ներսես Բալենցը այս ներխուժման մասին հաղորդում է հետևյալ մանրամասնությունները. «յորում ժամանակի ասացեալ (1321) Դամուրտաչն բազում հեծելօք ավելի քան 30000 և բազում հետևակօք... ի յաշխարհն Հայոց ի Կիլիկիա մտաւ. և բազում աւեր արար, սպանութիւն և աւար. և բազում ջան եղ եթէ ամրոց ինչ կարիցէր առնուլ, բայց ոչ կարաց: Այլ ի նոյն հայերոյն թաթարնին բազում պակասութիւն և կորուստ յոմանս անցս և ի կիրճս ընկալան»[3]: Այստեղ արժեքավոր է մատնանշումն այն բանի, որ Թիմուրտաչը չի կարողացել գրավել Լեռնային Կիլիկիայի ամրոցները:

Թուրքմենների և սելջուկների կողմից Կիլիկիա ներխուժելուց հետո հարավից Այասի վրա հարձակվեցին մամլուքները: Այս մասին Բալենցն ասում է. «Եւ իբրև և Դամուրտաչն ի Հայոց՝ ի ձմերայնի գոլով, ի գարունն մերձակայ ապրիլէլի քսան՝ զօրքն սուլտանին ԽՌ (40000) հեծեալս և այլ անչափ հետևակս եկին ի նոյն երկիրն Հայոց, և եկեալ ի քաղաք եգէլոյ, որ է Այաս, յերկրորդ օրն յօր տօնի սրբոյն Գէորգեայ՝ 23 ապրիլէլի, առին զմինային բերդն, զի ծովն ցամաքեցաւ և ի ներս գնաց. և տաճիկնին ի ծովէն եկին և կտրեցին զճանապարհն որ ի ներսի բերդն, և ի ծովն չկարեր ոչ ոք գնալ. և գերեցին անթիւ անձինք և անբաւ աւար առին. և ապա նստան սղարելով ի վերայ ներսի բերդին. եղին բարան և զամենայն ի փուլ ածին, և զամենայն դրունս և զպէչք նիւթան քաղաքին բերեալ՝ կարմունճ կապեցին ընդ ծովն ի ներս, մինչ եկին մօտ պարսպի բերդին, նետախորով առնէին զմարդիկն, որ քայլէին ի դրան կողմն դղեկին, որով յամենայն կողմանց սաստկացաւ մարտն: Այլ և թագաւորն Կիպրոսի առաքեաց խալէս (ռազմական թիանավ) ինն յօգնութիւն քրիստոնէից, որք կորընտան եղեն պատճառ, քան փրկութեան, քանզի ամենայն ոք, որ փախչէին ի բերդն՝ ընդունէին և առնուին, և զամենայն ինչ ևս, որ լինէր, իսկ զի ոչ ոք մնաց ի բերդի քաղաքացեացն, այլ իւրեանց ընչիւքն գնացին ի խալէքն»[1]:

Սմբատի «Պատմության» չարունակողը այս նույնի մասին պատմում է. «Ի թուին ՋՀԱ եկն զօրքն Մսրայ ի կիլիկեցւոց յաշխարհս ի վերայ քաղաքին, որ կոչի Այաս, և պաշարեաց գնա, և էառ զմինն զայն, և բազում քրիստոնեայս գերեցին: Եւ զկնի երկոտասան աւուր չատ ազգեր հնարիւք և բարնիւք մարտեան ի վերայ ձգրին: Նա բեկեցան գլխաւորք տեղւոյն, գաղտ ի գիշերի մտան զալեքն կիպրոսայ տիրոջն, որ և եկեալ էին իւր հրամանօք յօգն քաղաքին, և նաւով փախան՝ ոմանք ի Կիպրոս, և ոմանք ի Կոռիկոս»[2]: Այսպիսով, Այաս Հարուստ նավահանգիստը՝ Ալեքսանդրիայի մրցակիցը, սաստիկ տուժեց մամլուքների հարձակումից: Վերոհիշյալ «Պատմության» մեջ այնուհետև ասվում է. «Եւ զկնի այս աւերածոյս եկին իջան ի գետեղրն, որ կոչի Ջահան: Եւ հրաման տուեալ զօրացն յարձակիլ առ ստորոտ լերանց աշխարհիս, չատք գերեցին: Իսկ զօրք թագաւորին Լևոնի սրտախոց եղեն ընդ աւերումն երկրիս. քիչ մի մարդով գնացին ի վերայ իջևանի նոցա, և արարին խիստ կոտորած»[3]:

Սակայն պայքարն անհավասար էր: Հայկական սակավաթիվ ջոկատներն այնուհետև պարտություն կրեցին մամլուքների հեծելազորից ճակատամարտում ընկան իշխան Հեթումը՝ Զևլեկոնցի տերը, նրա եղբայր Կոստանդինը, մի քանի պարոններ, երկու տասնյակ աս-

[1] **Ալիշան,** Հայապատում, էջ 530:

[2] **Սամուէլ Անեցի,** Հաւաքմունք ի գրոց..., էջ 158:

[3] **Ալիշան,** Հայապատում, էջ 530:

[1] **Ալիշան,** Հայապատում, էջ 530:

[2] Սմբատայ Սպարապետոյ Պատմութիւն, էջ 121:

[3] Նույն տեղում:

պետներ ու չատ զինվորներ[1]: Հայոց զորքի պարտության գլխավոր պատճառն այն էր, որ Եգիպտոսի սուլթանության զինված ուժերը ավելի բազմամարդ էին և ռազմական առումով ավելի լավ էին կազմակերպված, բացի այդ, Իկոնիայի կողմից էլ ներխուժեցին Թիմուրտաշի՝ Եգիպտոսի սուլթանության դաշնակցի զորքերը:

Կիլիկիայի հայկական պետության ռազմական կազմակերպության թույլ կողմը նրա վասալա-ավատական բնույթն էր: Երկրի բնակչության ազգային կազմը միատարր չէր, թեև հայերը ճնշող մեծամասնություն էին կազմում: Ընդունելով, որ Կիլիկիայում XIV դարում եղել է մոտ մեկ միլիոն բնակչություն և ուշադրության առնելով այն, որ վերոհիշյալ պատճառներով իշխանների մի մասը, ինչպես և ասորիներն ու հույները, չէին մասնակցում պատերազմներին, կարելի է ենթադրել, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը XIV դարի առաջին կեսին կարող էր հանել մոտ 20000 զինվոր, մինչդեռ Կիլիկյան Հայաստանի մարդկային ռեզերվները չատ ավելի մեծ են եղել: Այլ հանգամանքներում Կիլիկիան կարող էր հանել մոտ 50 հազար զինվոր: Եգիպտոսի սուլթանության և Իկոնիայի սելջուկների կողոպտչական ներխուժումների դեմ պաշտպանողական պատերազմ մղելու համար Կիլիկիայում կային բավականաչափ միջոցներ և հնարավորություններ: Պետական եկամուտներն զգալի էին, երկրի սահմանները լավ պաշտպանված էին բարձր լեռնաշղթաներով և մի չարք խոշոր բերդերով: Սակայն կենտրոնական իշխանությունը XIV դարի 20-ական թվականներին, մամլուքների ու թուրքերի ներխուժումների ժամանակ, ինչպես և հետագայում, չկարողացավ ժամանակին հավաքագրել երկրի նյութական ռեսուրսներն ու մարդկային ռեզերվները թշնամուն ետ մղելու համար: Թույլ է եղել նրա զեկավար դերը երկրի պաշտպանության կազմակերպման ու մարտունակ բանակ ստեղծելու գործում: Զորքերը լիովին չէին օգտագործում երկրի բարենպաստ բնական պայմանները, որպեսզի կասեցնեին թշնամու զորքատների անցումը լեռնանցքներով:

Կիլիկյան Հայաստանի ռազմական պարտությունը բացատրվում է նաև նրանով, որ այդ ժամանակ երկիրը բռնված էր ներքին գժտություններով, ինչպես հայոց նկեղեցու և միավորման կողմնակիցների միջև, այնպես էլ խոշոր ավատատերերի կենտրոնախույս ձգտումների հետևանքով:

Կային Եգիպտոսի սուլթանության դեմ մղվող պատերազմներում Կիլիկիայի պարտության նաև այլ պատճառներ: Քիչ նշանակություն

[1] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** Պատմութիւն, էջ 122:

չուներ սոցիալական ու գույքային անհավասարության և դասային հակասությունների ուժեղացումը:

Ընդհանուր առմամբ Եգիպտոսի սուլթանության դեմ մղվող պատերազմներում Կիլիկիայի հայկական պետության պարտությունները պայմանավորված են եղել գյուղացիության ճորտացմամբ և տեղում ավատատերերի իշխանության ուժեղացմամբ, պապության կողմից մշակվող լաչակրաց արշավանքների հանցավոր ծրագրերով և Կիլիկիայում կաթոլիկություն տարածելու պապերի ձգտմամբ:

Սկսած 1321 թ. մամլուքների ու թուրքմենների ներխուժումները Կիլիկյան Հայաստան պարբերաբար կրկնվում էին յուրաքանչյուր 5–10 տարին մեկ՝ մինչև պետության անկումը (1375): Այս ներխուժումները քայքայում էին երկրի արտադրական ուժերը: Կիլիկիայի քաղաքները, առևտրի ու արդյունաբերության կենտրոնները և գյուղերը կողոպտվում էին, մասամբ հրկիզվում, բնակչությունը գերի քշվում: Ժողովրդական զանգվածների գլխին եկող աղետները սարսափելի էին:

Մամլուքների ու թուրքմենների ամայացուցիչ ասպատակությունները 1320–1375 թվերին պատճառ դարձան Կիլիկիայի թագավորության տնտեսական անկման: XIV դարի սկզբին Կիլիկյան Հայաստանի աննկանելի վիճակի մասին արժեքավոր տողեր ենք գտնում իրադարձություններին ժամանակակից վենետիկցի Սանուտոյի մոտ, որն իր «Liber secretorum fidelium crucis» գրքում, գրված 1306–1321 թվերին, մեծ նշանակություն էր տալիս Կիլիկիայի ռազմավարական դիրքին՝ Սիրիան ու Պաղեստինը նվաճելու համար: «Հայոց թագավորությունը,– ասում է նա,– ժանիքներով բզկտում են չորս գազաններ. մի կողմից՝ առյուծը, այսինքն՝ թաթարները, որոնց մեծ հարկ է վճարում հայոց թագավորը, մյուս կողմից՝ ընձառյուծը, այսինքն՝ սուլթանը (Եգիպտոսի – Գ. Մ.), որն ամեն օր երկիրն ավերում է և քրիստոնյաներին ոչնչացնում, երրորդ կողմից՝ գայլը, այսինքն՝ թուրքերը (Իկոնիայի – Գ. Մ.), որոնք ավերում են տնտեսությունն ու թագավորությունը, չորրորդ կողմից՝ օձը, այսինքն՝ մեր ծովի ծովահենները (վենետիկցիներն ու Ջենովացիները– Գ. Մ.), որոնք ամեն օր ջարդում են Հայաստանի քրիստոնյաների ոսկորները»[1]:

Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV-ին գրած իր նամակում Սանուտոն նրան խորհուրդ է տալիս «Կիլիկյան Հայաստանի տարածքը պահպանելու համար ուղարկել երեք հարյուր հեծյալ և հազար ընտիր հետևակ, քանզի չափազանց մեծ կորուստ ու խայտառակու-

[1] **M. Sanutus,** *Liber secretorum fidelium crucis, Hanoviae, 1611, p. 32.*

թյուն կլինի համայն քրիստոնեության համար, եթե այդ երկիրը կործանվի»[1]: Այս նույն նամակում Սանուտոն ննջաղրում էր, թե Հռոդոսն ու Կիպրոսը կարող են օգնել Կիլիկյան Հայաստանին, եթե ըրանցից յուրաքանչյուրը ուղարկի 350 ձիավոր: Միջերկրական ծովի արևելյան ափի պահպանության համար նա Ֆրանսիայի թագավորին խորհուրդ էր տալիս ուղարկել 10 խոշոր թիանավ, յուրաքանչյուրի վրա՝ 250 հոգի: Այս պայմաններում, նրա կարծիքով, Կիպրոսը, Հռոդոսը և Կիլիկիան պաշտպանված կլինեն ու Եգիպտոսի սուլթանությունը մեծ վնաս կկրի[2]: Ֆիլիպ IV-ն զբաղված էր ֆրանսիական հողերն ի մի բերելով, թագավորական իշխանությունն ամրապնդելով և ֆլանդրիական քաղաքների դեմ պատերազմելով: Ուստի նա չէր կարող զբաղվել Արևելքի գործերով, որոնք, բացի այդ, մեծ ծախսեր էին պահանջում ու մեծ վտանգների հետ էին կապված:

Իր վերոհիշյալ գիրքը, որտեղ Մերձավոր Արևելքի XIV դարի սկզբի դրության մանրամասն վերլուծությունն է տրված, 1321 թ. Սանուտոն ներկայացրել է Հովհաննես XXII պապին: Գրքում հանգամանորեն մշակված էր դեպի Արևելք կատարելիք խաչակրաց արշավանքի նախագիծը: Սանուտոն պապին խորհուրդ էր տալիս օգնել Եգիպտոսի սուլթանության դեմ արշավանքի ելնելու համար զորք հավաքելուն: Եվրոպացի վաճառականներին հեղինակը խորհուրդ էր տալիս Եգիպտոսի սուլթանությանը մետաղ, փայտանյութ ու հաց չմատակարարել: Նա խորհուրդ էր տալիս չրջափակել Եգիպտոսի ափերը, Ալեքսանդրիայից չգնել հնդկական համեմունքներ և Հընդկաստանի հետ առևտուր անելու համար օգտվել այն ճանապարհներից, որոնք անցնում են Կիլիկիայով և Հուլավյանների տարածքներով՝ պայմանագիր կնքելով մոնղոլների և Կիլիկյան Հայաստանի հետ[3]: Բայց նրա հայրենակից վենետիկցիները զեկավարվելով առևտրական չահերով՝ մամլուքյան սուլթանների հետ առևտրական համաձայնագրեր էին կնքում, նրանց մատակարարում պատերազմ մղելու համար անհրաժեշտ նյութեր և նրանց չուկաներից էին գնում արևելյան ապրանքները:

Իմանալով Կիլիկյան Հայաստանի իրադարձությունների մասին, այն մասին, որ Մելիք Նասրի ու Թիմուրտաշի զորքերը ներխուժել են Կիլիկիա, Հովհաննես XXII պապը կոնդակ է հղում ամենուրեք՝ կոչ

[1] M. Sanutus, Liber secretorum fidelium... p. 5.

[2] Նույն տեղում, էջ 6:

[3] Տե՛ս նույն տեղում:

անելով սրբազան պատերազմի ելնել Եգիպտոսի սուլթանության դեմ: Միաժամանակ նա փորձ է անում կապ ստեղծել Իրանի մոնղոլների ու եվրոպական պետությունների միջև՝ ուղղված Եգիպտոսի սուլթանության դեմ, և դրա հետ միասին նրանց համոզել, որ քրիստոնեություն ընդունեն:

Հովհաննես XXII պապը Աբու Սաիդին մի քանի նամակ է գրում: 1323 թ. հուլիսի 12-ի նամակում պապը իլխանին հիշեցրել է, որ նրա նախնիները դեսպաններ էին հղում՝ ի հավաստումն պապական գահի նկատմամբ ունեցած մեծարանքի և Ֆրանսիայի թագավորների հետ բարեկամության պայմանագրի կնքման: Պապն առաջարկում է նորոգել բարեկամությունը Ֆրանսիայի թագավորի հետ: Երկրորդ նամակում, որը թվագրված է հուլիսի 13-ով, պապը Աբու Սաիդին հորդորում է հետևել իր նախնիների օրինակին և օգնություն ցույց տալ Կիլիկիայի հայոց թագավորությանը:

Պապը միաժամանակ նամակներ է գրել հայոց թագավորին ու Կոստանդին կաթողիկոսին և նրանց հորդորել, որ համագործակցեն հայերի մեջ կաթոլիկություն տարածելուն: Այդ ժամանակ պապությունն ուժեղացրել էր կաթոլիկական պրոպագանդան Մերձավոր Արևելքում, մանավանդ Մեծ Հայքում: Պապը Կոստանդին կաթողիկոսին համոզում էր, որ նա իր պատվիրակները ուղարկի Հայաստան և օգնի կաթոլիկ արքեպիսկոպոսին, որի աթոռանիստը Սուլթանիեում էր, կաթոլիկություն քարոզելու բուն Հայաստանում (Бароний, «Церковные анналы», т. XXIV):

Անկախ այն բանից, թե Հովհաննես պապը ինչ էր գրում իլխանին, Աբու Սաիդը ելնելով իր պետության չահերից՝ պետք է որ միջամտեր Եգիպտոսի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններին, որպեսզի ապահովեր իր տիրույթների արևմտյան սահմանները, որտեղ դրությունը բարդացել էր նաև նրանով, որ Հուլավյանների վեզիր Ջուպանի որդին՝ Թիմուրտաշը, իշխանություն ստանալով սելջուկներով ու թուրքմեններով բնակեցված մարզի վրա, Մելիք Նասրի հետ դաշնակցած, ինչպես նչվել է, սկսել էր ավերել Կիլիկյան Հայաստանը՝ ի վնաս Հուլավյանների պետության չահերի, իսկ հետո էլ ապստամբեց Աբու Սաիդի դեմ՝ ձգտելով ստեղծել ինքնուրույն պետություն Փոքր Ասիայում: Անհաջողություն կրելով՝ Թիմուրտաշը փախավ Եգիպտոս՝ Մելիք Նասրի մոտ, բայց սա, հանուն Աբու Սաիդի հետ խաղաղության, հրամայեց գլխատել իր նախկին դաշնակցին:

Իրանի մոնղոլները, որ զբաղված էին Ոսկե Հորդայի հետ ռազմական բախումներով և ստիպված էին ետ մղել Ուզբեկ խանի[1] հարձակումները, Կիլիկիայի ու Փոքր Ասիայի իրադարձություններից հետո այնուամենայնիվ հասկացան, որ պետության արևմտյան մարզերում իրենց տիրապետությանը վտանգ է սպառնում, որ անհրաժեշտ է աջակցել Կիլիկյան Հայաստանին:

Նկատի ունենալով հյուսիսից և արևելքից կատարվող հաճախակի հարձակումները, ֆինանսական զրության վատթարացումը, զորքի մարտունակության նվազումը և հպատակ ժողովուրդների ճնշված բնակչության աճող դժգոհությունը՝ Աբու Սաիդը հրաժարվեց իր նախորդների՝ Սիրիան նվաճելու ծրագրից: Սակայն Եգիպտոսի մամլուքների կողմից Կիլիկիայի հայկական պետության ջախջախումը կարող էր սպառնալիք ստեղծել Հուլավյանների իշխանության կայունությանը Փոքր Ասիայում ու Միջագետքում, ուստի և Աբու Սաիդն ուղարկեց 20000 զորական, որոնք բաչխվեցին պետության արևմտյան գավառներում և, սահմանները պահպանելուց բացի, նրանք պետք է անհրաժեշտության դեպքում օգնեին Կիլիկյան Հայաստանին:

Այսպիսով, Հուլավյանների պետությունը, ընդհանուր առմամբ հետևելով պաչտպանողական տակտիկայի ու բանակցություններ վարելով կոնֆլիկտի խաղաղ կարգավորման ուղղությամբ, միաժամանակ Եգիպտոսի սուլթանին հասկանալ տվեց իր չահերն արևմտյան սահմաններում պաչտպանելու վճռականություն ու պատրաստակամություն: Մելիք Նասրը համարյա մչտական տարաձայնություններ մեջ լինելով Սիրիայի էմիրների հետ՝ նույնպես հակված չէր մոնղոլների հետ նոր պատերազմ սկսելու: Նա ընդունեց Աբու Սաիդի միջնորդությունը Կիլիկիայի հայկական պետության հետ հաչտություն կնքելու վերաբերյալ:

1323 թ. Կոստանդին կաթողիկոսը մեկնեց Կահիրե՝ սուլթան Մելիք Նասրի մոտ, և նրա հետ պայմանագիր կնքեց ծանր պայմաններով՝ յուրաքանչյուր տարի վճարել 1200000 դիրհեմ: Եգիպտոսի սուլթանն էլ իր հերթին պարտավորվեց վերականգնել իր զորքերի կողմից ավերված քաղաքներն ու բերդերը, բացի Այասից[2]:

Այասի ավերումը 1321 թ. ուժեղ տպավորություն թողեց Եվրոպայի քաղաքական, առևտրական ու եկեղեցական չրջաններում, որոնք չահագրգռված էին Կիլիկիայի չուկաներով ու տարանցիկ ճանա-

[1] **В. Тизенгаузен,** *Сборник матер., т. II, с. 86.*

[2] *Տե՛ս* **V. Langlois,** *Le trésor des chartes d' Arménie, p. 232:*

պարհներով և այն դիտում էին որպես հարմար հենակետ՝ Սիրիան ու Պաղեստինը նվաճելու համար: Հենց դրանով է բացատրվում Հովհաննես XXII պապի կարգադրությունը Կիլիկյան Հայաստանին 30000 ֆլորին տալու մասին՝ ռազմական ծախսերի և Այասի վերականգնման համար[1]: Բայց դրամի հանձնումը տարիներով ձգձգվում էր: 1331 թ. պապին տեղեկացրին, որ հայոց թագավորը խոչընդոտներ է հարուցում կաթոլիկական պրոպագանդայի դեմ, և պապը ցույց տվեց հայոց արքունիքին կից իր լեգատներին, որ չտան այն դրամը, որ նախատեսված էր Կիլիկիայում վերականգնման աչխատանքների համար: Սակայն, չնայած դրան, Այասն արագ վերականգնվեց, ինչին նպաստում էին արտաքին ու տարանցիկ առևտրի զարգացումը և Եգիպտոսի սուլթանության հետ կնքած պայմանագրից հետո ստեղծված խաղաղ իրավրությունը:

1329 թ. Լևոն V-ը, որն այդ ժամանակ 19 տարեկան էր, հրամայեց բռնել պետության գահապահ Օչինին և նրա եղբայր, սպարապետ Կոստանդինին և մահապատժի ենթարկել Ադանա քաղաքում: Ժամանակագրի ասելով՝ «Պատճառք զայս դրին, թէ ետ մահուան Օչին թագաւորին չատ բերդեր ապրան առին»[2]: Անհավատարմության մեջ մեղադրվելով՝ սպանվեց նաև թագուհին՝ Օչինի դուստր Ալիսը: 1330 թվին Լևոն թագավորն ամուսնացավ Կոստանցյայի՝ Սիցիլիայի թագավոր Ֆրիդրիխ I-ի դստեր հետ: Նա իր մոտ կանչեց հորեղբոր որդիներին՝ Ջարելի տղաներին: Նրանցից մեկը՝ Ջիվան Լուզինյանը, դարձավ պայլ, իսկ սրա եղբայր Բոհեմոնդը՝ Կոռիկոսի տերը: Դա իր տխուր հետևանքներն ունեցավ: Ուժեղացավ լատինասիրական տարրը արքունիքում, և հետագայում հեչտացավ իչխանության անցումը Լուզինյանների դինաստիային:

1330 թ. Եգիպտոսի սուլթանության զորքերը հարձակվեցին Այասի վրա, բայց ետ մղվեցին: Հաջորդ տարի նրանց այնուամենայնիվ հաջողվեց ներխուժել Այաս և կողոպտել: Այնուհետև մամլուքները հեռացան:

Խաչակրաց արչավանքների մասին ծրագրերը Եվրոպայից օգնություն ստանալու զուր հույսեր էին ներչնչում հայ ազնվականությանը, որը համարյա մեկ հարյուրամյակի ընթացքում չկարողացավ հասկանալ, որ նոր արչավանքի նախագծերն անիրական են: Սակայն հայերից առավել հեռատեսները դա հասկանում էին:

[1] *Տե՛ս* **Ալիչան,** *Սիսուան, էջ 390:*

[2] **Մխիթար Սպարապետի** *Պատմութիւն, էջ 124:*

1332 թ. Լևոն Թագավորը Եվրոպա ուղարկեց Տարսոնի եպիսկոպոս Ստեփանոսին: Հավանաբար, նրա ուղևորության հետևանքով Ֆիլիպ VI-ը այդ նույն՝ 1332 թ. կարգադրում է իր գանձապետին երկու տարվա ընթացքում վարկի ձևով Հայոց Թագավոր Լևոնին տալ 10000 ֆլորին: Այդ կարգադրության մեջ ասվում է. «Քանի որ մեր սիրելի եղբայրը՝ Հայոց Թագավորը, մեզ տեղեկացրել է, թե սարակինոսները սպառնում են իր տերությանը, մենք կամենում ենք օգնել նրան, որպեսզի նա կարողանա պահպանել իր երկրի բերդերը և դիմադրություն ցույց տա սարակինոսներին, քանզի Հայոց երկիրը (Կիլիկիան) առավել հարմար է ընդունելու մեզ և մեր զորականներին, եթե մենք նավերով հասնենք այնտեղ՝ դեպի Սուրբ Երկիրը արշավանք կատարելու համար»[1]: Սա այն վկայություններից մեկն է, որ Ֆիլիպ VI-ը լրջորեն մտածում էր դեպի Արևելք արշավանք կատարելու մասին:

Իր պոնտիֆիկատի (1314–1334) վերջին տարում Հովհաննես XXII պապը Լևոն V-ին տեղեկացրել է Ֆիլիպ VI-ի կողմից խաչակրաց արշավանք նախապատրաստելու մասին: Նրա հաջորդ Բենեդիկտոս XII պապի օրոք պապական աթոռը նորից է տեղեկացնում Հայոց Թագավորին, թե Ֆրանսիայի Թագավորը խոստացել է Անգլիայի ու Ջևխիայի Թագավորների հետ դաշնակցած՝ խաչակրաց արշավանք կատարել (Бароний, Церковные анналы, т. XXIV):

Ֆրանսիայի Թագավորներից ամենից ավելի Ֆիլիպ VI-ն էր ձգտում խաչակրաց արշավանքի՝ այդ բանում մեծ նշանակություն տալով Կիլիկյան Հայաստանի ռազմավարական դիրքին: Պատմագիր Ֆրուասարի հաղորդման համաձայն Ֆիլիպ VI-ը 1336 թ. այցելել է հարավային Ֆրանսիայի քաղաքներն ու նավահանգիստները՝ խաչակրաց արշավանքի նախապատրաստմանը ծանոթանալու նպատակով: Մարսելում, Մոնպելիեում և այլ նավահանգիստներում կենտրոնացել էին մեծ թվով տարբեր տեսակի նավեր, որոնք կհարողանային տեղափոխել 60 հազար խաչակիրների և նրանց համար անհրաժեշտ պարենամթերք: Միաժամանակ բանակցություններ էին վարում, որպեսզի արշավանքի մեջ ներգրավեին Վենետիկի, Ջենովայի, Կիպրոսի և Սիցիլիայի Թագավորությունները և եվրոպական մյուս խոշոր պետությունները: Բայց չուտով Ֆրանսիայի և Անգլիայի միջև հարաբերությունները սրվեցին և բռնկվեց Հարյուրամյա պատերազմը, որի հետևանքով նախապատրաստվող խաչակրաց արշավանքը տեղի չունեցավ[2]:

[1] **Ալիշան,** Սիսուան, էջ 391 (լատիներեն նամակ):

[2] Տե՛ս Chonigue de J. Froissart, public. par Luce, P., 1879, t. I, p. 117–118:

Անգլիայի ու Ֆրանսիայի միջև Հարյուրամյա պատերազմի սկսվելուց հետո դեպի Արևելք խաչակրաց արշավանքի ամեն մի հնարավորություն ի չիք դարձավ, բայց պապությունը համառորեն չարունակում էր նախագծեր մշակել նոր խաչակրաց արշավանքի համար և Կիլիկիայի ավատական ազնվականությանը հավատացնել, թե օգնություն կհասցվի, եթե հայերը կաթոլիկություն ընդունեն:

Կիլիկյան Հայաստանի ավատական վերնախավը չկարողացավ հասկանալ Եվրոպայի օգնության վերաբերյալ իր հաշվարկի սխալականությունը: Սակայն հայերից չատերը դա հասկանում էին: Խաչակիրների օգնության իրողության վերաբերյալ կասկածանքի արտահայտություն գտնում ենք Հետևյալ Հավելման մեջ, որ արված է հայերեն մի ձեռագրի գրչի ձեռքով. «Գրեցաւ... ի Հայկազեանս թուականի ՋՋԴ (1335)... ի տեղիքս տէրունի՝ Երուսաղէմի սուրբ քաղաքի... Բայց լսեցաք համբաւ բարի, թէ փռանգ ազգն չարժի վասն դաքի... Բայց լսեցաք համբաւ բարի, թէ փռանգ ազգն չարժի վասն տեղացս տէրունի՝ Երուսաղէմա, սուրբ քաղաքի. նրանի թէ այս մեզ լինի, որ մեր բնկեալ սիրտս կանգնի... Բայց ըստ գործոցս, որ դեռ գործի, չեմ խնալ, թէ այդ մեզ լինի»[1]:

Նույնիսկ Տուրնեբիզը չարադրելով Հայ և Հռոմեական եկեղեցիների հարաբերությունների պատմությունը կաթոլիկության չահերի տեսակետից՝ երբեմն չի կարողանում ծածկել ճշմարտությունը և չնշել այն վաստերը, որոնք ցույց են տալիս, թե ինչ վնաս էր բերում պապական դիվանագիտությունը Հայաստանում: «1335 և 1336 թվերին,– գրում է նա,– սոսկ լուր ստանալով, թե Ֆիլիպ VI-ը պատրաստվում է խաչակրաց արշավանքի, նրանք (մամլուքները– Գ. Մ.) նորից ներխուժեցին Կիլիկիա»[2]: Մելիք Նասրը հավանաբար իմացել է պապական աթոռի ու Ֆրանսիայի Թագավորի հետ Լևոն V-ի դիվանագիտական հարաբերությունների մասին: Նրան հասել են նաև այն լուրերը, թե նոր խաչակրաց արշավանք է նախապատրաստվում, և նրա հրամանով 1335 թ. Հալեպի էմիրը՝ Ալթուն Բուղան, ներխուժել է Կիլիկիա: Եգիպտական զորքերը կողոպտել են Մամեստիան, Ադանան, հասել մինչև Տարսոն և մեծ ավար հափշտակել:

Հաջորդ տարում մամլուքների նոր ներխուժում տեղի ունեցավ: Գրավեցին մի քանի սահմանապահ ամրոցներ: Միաժամանակ ներխուժեցին թուրքմենները: Կիլիկիայի Հայկական Թագավորության համար ստեղծվեց ծայրահեղ ծանր դրություն: Լևոն V-ի զնսպանությունը, որ մարաջախտ Բալդուինի գլխավորությամբ ուղարկված

[1] **Լ. Խաչիկյան,** ԺԴ դարի Հայերեն ձեռ. Հիշատակարաններ, Ե., 1950, էջ 273:

[2] **Tournebize,** Histoire politigue..., p. 234.

էր Կիպրոս, ձերբակալվեց Հալեպում: Միայն 1337 թ. Մելիք Նասըրը համաձայնեց հաշտություն կնքել, որը տրվեց ծանր գնով: Լևոն թագավորը եգիպտոսի սուլթանությանը զիջեց Այասը և ամբողջ մնացած տարածքը մինչև Ջահան գետը: Նա ստիպված եղավ Ավետարանով երդվել, որ Ֆրանսիայի թագավորի ու պապի հետ հարաբերություններ չի ունենա:

Բայց Լևոն V-ը հարաբերությունները չվզեց Արևմուտքի հետ: Նա չարունակում էր գաղտնի բանակցություններ վարել Բենեդիկտոս XII պապի հետ, որը նրան երդումից ազատեց և քաջալերեց չուտափույթ օգնության հույսով, պայմանով, որ հայոց թագավորը և կաթողիկոսը բոլոր ջանքերը գործի դնեն երկու եկեղեցիների իրական միավորում ստեղծելու գործում:

Վիլլանիի վկայությամբ, գտնվեցին պապության հետ Լևոն V-ի հարաբերություններից դժգոհ մարդիկ, որոնք մեռցրին նրան: Տուրնեբիզն էլ այն հիման վրա, որ ֆրանսիացի վանական Դարդելը իր «Ժամանակագրությունում» չի գրում այդ մասին, հնարավոր չի համարում Լևոն V-ի սպանությունը, ենթադրելով, թե նա հանկարծամահ է եղել 1341 թ. վերջին կամ 1342 թ. սկզբին[1]: Լևոն V-ը մահացավ՝ լրման չհասցնելով հայ եկեղեցին հռոմեական եկեղեցուն ենթարկելու վերաբերյալ բանակցությունները: Դրանք չարունակվեցին նրա մահից հետո:

Արևմուտքի ու Կիլիկիայի հայկական արքունիքի միջև առավել աչքսույժ դիվանագիտական բանակցություններ տեղի էին ունենում XIV դարի 30-ական և 40-ական թվականներին: Հենց այս ժամանակաշրջանում էլ Սիրիայի ու եգիպտոսի արաբներն ու մամլուքները, Փոքր Ասիայի թուրքմեններն ու սելջուկները առավել ամայացուցիչ ասպատակություններ էին անում դեպի Կիլիկիա: Շատ քաղաքներ ու գյուղեր ավերվեցին, բազմաթիվ խաղաղ բնակիչներ զոհվեցին կամ գերի քշվեցին: Այն ժամանակ երբ Հռոմի պապերը կամ եվրոպացի թագավորները հայերին կերակրում էին դատարկ խոստումներով, մամլուքներն ու թուրքմենները կատարում էին իրենց արյունոտ ոճրագործությունները և Կիլիկյան Հայաստանը վերածում ավերակների:

Ըստ 1337 թ. հաշտության պայմանագրի՝ Դաշտային Կիլիկիայի մի մասի զիջումը եգիպտոսի սուլթանությանը և մանավանդ մամլուքների կողմից Այասի՝ երկրի գլխավոր նավահանգստի ու եկամտի խոշոր աղբյուրի գավթումը, դրա հետ միասին քաղաքների կողո-

[1] Տե՛ս **Tournebize,** *Histoire politigue et relig, de l' Arménie, p. 659:*

պուտները, սաստիկ քայքայեցին երկրի էկոնոմիկան և արագացրին Կիլիկյան Հայաստանի անկումը:

Իր գոյության վերջին ժամանակաշրջանում Կիլիկյան հայկական թագավորությունը տնտեսական ու քաղաքական անկում է ապրում: 1360 թ. կորցնում է իր տարածքի մեծ մասը՝ Դաշտային Կիլիկիան, իսկ 1375 թ. եգիպտոսի սուլթանության զորքերը վերջին հարվածն են հասցնում՝ գրավելով մայրաքաղաք Սիսը և Լեռնային Կիլիկիան:

Լևոն V-ի մահից հետո գահը Ռուբինյան–Հեթումյաններից անցնում է Լուսինյանների[1] դինաստիային, որն ազգակցական կապերով կապված էր Կիպրոսի թագավորության հետ և կողմնորոշվում էր դեպի կաթոլիկական Արևմուտքը:

Կիպրոսում Լուսինյանների դինաստիայի հաստատումից սկսած՝ այդ գերդաստանի և Կիլիկիայի հայ թագավորների միջև հաստատվեցին ոչ միայն քաղաքական, այլև ազգակցական կապեր, որոնք մասամբ նչված են մեր կողմից: Ինչպես արդեն ասել ենք, Օշին թագավորի քույր Զաբելը ամուսնացած էր Ամորի Լուսինյանի հետ: Նրա հինգ որդիներից երկուսը՝ Ջիվանն ու Բոհեմոնդը, ապրում էին Կիլիկիայում, իսկ Գվիդոնը իր մորաքույր Քսենյայի մոտ էր՝ Զաբելի և Օշինի քրոջ՝ Միքայել IX Պալեոլոգի (1295–1320) այրու և Անդրոնիկոս III-ի (1328–1341) մոր:

Սկզբում իշխանությունը Լևոն V-ից ժամանակավորապես անցավ Ջիվան Լուսինյանին, որը երկիրը կառավարեց մինչև Գվիդոնի գալը: Կիլիկիայի հայկական թագավորության վերջին ժամանակաշրջանի պատմության գլխավոր աղբյուրը Ժան Դարդելի «Ժամանակագրությունն» է, որը վերջին թագավոր Լևոն VI Լուսինյանին օգնել է ազատվելու եգիպտական գերությունից և նրան ուղեկցել է Եվրոպայում կատարած ուղևորության ժամանակ: Դարդելը իրազեկ անձ էր Լուսինյանների դինաստիայի թագակալման հանգամանքներին, ինչի մասին նա հաղորդում է հետևյալը. «Լևոն թագավորի մահից հետո երկրի անվանի և անանուն մարդիկ միահամուռ որոշեցին, որ Ջիվան (Ջեյհան) Լուսինյանը՝ հայոց թագավորության իշխանն ու կոնետաբլը, կառավարի այն (Կիլիկիան): Այնժամ նա դեսպանություն ուղարկեց իր եղբայր Գվիդոն (Գի) Լուսինյանի մոտ, տեղեկացնելով, որ Լևոն թագավորը՝ իրենց քեռու տղան, որը մահացել է անժառանգ, նրան՝ Գվիդոնին զարձրել է իր ժառանգը և որ Ջիվան իշխանն ինքը հանուն իր եղբոր հանդես ունեցած սիրո թագավորությունը կա-

[1] Լուզինյան (ֆրանսիական ծագում ունեցող) ազգանունը հայերենում դարձել է Լուսինյան:

ռավարի մինչև եղբոր ժամանելը Հայաստան: Բայց Գվիդոն իշխանը հրաժարվեց հայոց գահը ժառանգելու իրավունքից, քանզի բարձրաստիճան պաշտոնյայի փայլուն դիրքի էր հասել Կոստանդնուպոլսում»[1]:

Գվիդոն (Գի) Լուսինյանը Մակեդոնիայի չրջաններից մեկի կառավարիչն էր: Երբ Հովհաննես Կանտակուզենը (1341–1345) Հովհաննես Պալեոլոգի՝ Քսենիայի թոռան հետ վիճարկում էր Բյուզանդիայի գահը, Գվիդոնը կանգնեց վերջինիս կողմը: Կանտակուզենի հաղթանակը Գվիդոնին ստիպեց 1342 թ. լքել Բյուզանդիան ու գալ Կիլիկիա, որտեղ նրան, որպես ավագ եղբոր, մինչ այդ էլ կանչում էր Ջիվանը, որ ղրաղեցներ Լևոն V-ի կողմից նրան կտակված արքայական գահը: Գվիդոնը, ժան Դարդելի խոսքերով ասած, «Հայաստան եկավ բազում (ըստ այլ աղբյուրների՝ մոտ երեք հարյուր) զորականներով»[2]: Այս նույն ժամանակագրի հաղորդման համաձայն եգիպտոսի սուլթանը նրանից հարկ պահանջեց, բայց նա հրաժարվեց կատարել այդ պահանջը:

Գվիդոն Լուսինյանը մեծ հույսեր դնելով Արևմուտքի վրա՝ 1343 թ. Եվրոպա ուղարկեց ասպետ Գրեգուարին ու վանական Անտուանին, որոնք այցելեցին Ավինիոն, որտեղ Կլեմենտ VI պապը նրանց հանձնարարական նամակներ տվեց Ֆիլիպ VI-ի և Էդուարդ III-ի անունով: Մինչ դեսպանները անհաջող բանակցություններ էին վարում Փարիզում ու Լոնդոնում, պապը նոր քայլեր էր ձեռնարկում, որպեսզի Կիլիկիայի հայերին ստիպեր կաթոլիկություն ընդունելու: Բանն այն է, որ դեռևս Լևոն V-ը 1341 թ. սկզբին Բենեդիկտոս XII պապի մոտ էր ուղարկել մինորիտ Դանիել Թավրիզեցուն՝ Սսի մայր տաճարի քարոզչին, և ասպետ Թորոս Միքայելենցին, որոնք նրան ներկայացրել էին թագավորի և կաթողիկոսի նամակը՝ օգնության խնդրանքով: Հայոց թագավորի դեսպաններին պապը պատասխանել էր, թե ինքը «իմացել է կաթոլիկական եկեղեցուն հակառակ դավանանքի տարածումը Հայաստանում ու Կիլիկիայում... դրա համար էլ հրաժարվում է քրիստոնյաներին կոչ անել հօգուտ հերետիկոսության ու երկպառակության կողմնակից ժողովրդի»[2]:

1341 թ. օգոստոսի 1-ին Կլեմենտ VI պապը Լևոն V թագավորին ու կաթողիկոս Հակոբին գրել է, որ նրանք հրավիրեն եկեղեցական ժողով, որը հատուկ արձանագրությամբ ճանաչեր Հռոմեական եկեղեցու առաջնությունը: Սրա հետ միասին Դանիելն ու Թորոսը, հա-

[1] Documents arméniens, t. II, p. 21.

[2] Նույն տեղում, էջ CCXV:

վանաբար, հենց այդ ժամանակ պապից բերել են «Հայոց եկեղեցու մոլորությունը» կամ «Libellus» անունով հայտնի այն փաստաթուղթը, որը պարունակում է հայոց եկեղեցուն վերագրվող 117 «մոլորություններ», որոնք առաջարկվում էր դատապարտել հատուկ այդ նպատակով գումարվելիք եկեղեցաժողովում[1]: 1343 թ. Կլեմենտ VI-ը կյրկնեց ահա այս պահանջը:

Վերոհիշյալ փաստաթղթի հեղինակը եղել է հայ կաթոլիկ Ներսես Բալենցը՝ Ուրմիայի եպիսկոպոսը, որը հետո դարձավ Մանազկերտի արքեպիսկոպոս, նա, ով Լևոն V-ի դեսպանությունից առաջ ժամանել էր Ավինիոն և պապին տեղեկացրել հայերի մեջ կաթոլիկական պրոպագանդայի անհաջողության մասին: Որպես մոլի կաթոլիկ, նա նոր բադարձներին հատուկ ջերմեռանդությամբ հարձակվել էր հայոց եկեղեցու դոգմանների ու ծեսերի վրա: Բալենցի կազմած այս փաստաթղթի հերքումն է եղել Դանիել Թավրիզեցու «Responsio ad errores impositos hermenis» աշխատությունը[2]:

Գվիդոն թագավորը նոր դեսպանություն ուղարկեց, որը հանձնելու տարավ «Responsio»-ն: Այս դեսպանության մեջ մտավ նաև Դանիելը՝ «Պատասխանի» հեղինակը: Կլեմենտ VI-ը հավանաբար գոհ է մնացել պատասխանից և Գվիդոնի պահվածքից: Նա հույս ուներ, որ կաթոլիկության տարածումը Կիլիկիայում հաջողություն կունենա[3]:

Կաթոլիկ թագավոր Գվիդոն Լուսինյանը հայերին ստիպում էր կաթոլիկության անցնել, յուրացնել լատինական ծեսերն ու սովորույթները: Նա կառավարման գործից հեռացնում էր ունիայի կառավարողներին, իսկ նրա կողմնակիցներին առաջ էր քաշում բարձր պաշտոնների: Նա փորձում էր արգելել հայոց լեզուն արքունիքում: Դրա հետ միասին 1343–1344 թվերին թուրքմեններն ու սելջուկները հաճախ էին հարձակվում Կիլիկիայի վրա, թալանում երկիրն ու բնակիչներին գերեվարում: 1343 թ. եգիպտոսի սուլթանության մի մեծ զորամաս գրավեց Ադանա հարուստ քաղաքը, բայց այդ զորամասի հրամանատարը՝ Ակ Սոնկորը, մեծ կաշառք վերցնելով՝ դադարեցրեց արշավանքը: Գվիդոնի կաթոլիկամետ քաղաքականությունը և Կիլիկիան թշնամիների հարձակումներից պաշտպանելու նրա լիակատար անկարողությունը հայ իշխանների վրդովմունքն առաջացրին, և նա սպանվեց իր բերած վարձկան ֆրանկների հետ միասին: Իրա-

[1] Documents arméniens, t. II, p. CCX.

[2] Նույն տեղում, էջ CCXV:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 26:

կանությանը չի համապատասխանում Դարդելի այն տեղեկությունը, թե Գվիդոնին հայերն են սպանել, որովհետև նա «նրանց ստիպում էր կռվել»[1]: Հենց այս մասին Արուլֆեդայի տարեգրության չարունակողն էլ գրում է. «Հիջրայի 746 թվին (4 մայիսի 1345– 23 ապրիլի 1346) հայերն սպանեցին իրենց թագավորին՝ մի փրանկի, որն անկարող էր կառավարել երկիրը, որի հետևանքով թչնամիներն ավերում էին այն»[2]: Այսպիսով, Գվիդոն Լուզինյանի կողմից հայերի վզին կաթոլիկական եկեղեցու հետ փաստացի ունիա փաթաթելը սնանկ դուրս եկավ:

Գվիդոնի մահից հետո Լուզինյան դինաստիան համարյա 30 տարի հեռացվեց իշխանությունից: Լուզինյաններին թշնամաբար վերաբերվող, ապստամբած ու Գվիդոնին սպանած հայ իշխանները թագավոր ընտրեցին ազդեցիկ իշխան Կոստանդինին՝ Նիհրյան իշխանական տնից: Պատմաբան Ջամչյանը նրան դասում է Հեթումյանների թագավորական գերդաստանին՝ չբերելով, սակայն, ոչ մի աղբյուր[3]: Դարդելը պնդում է, թե հայ սենյորները թագավոր ընտրեցին մարշալ Բոդուենի որդուն և որ Կոստանդինը թագավորի գերդաստանից չէր և նրան անվանում է ուզուրպատոր[4], ձգտելով այդպիսով պաշտպանել Լուզինյան դինաստիայի չահերը:

Իշխանությունն ստանալով՝ Կոստանդին IV-ը (1345–1363) պետությունը կառավարեց դժվարին մի ժամանակաշրջանում, երբ մամլուքներն անընդհատ սպառնում էին Կիլիկիային իրենց հարձակումներով: Նրա աթոռանիստը Տարսոն քաղաքն էր:

Գվիդոնի սպանության լուրը սաստիկ դժգոհությամբ ընդունեց պապը: Ավինիոնում գտնվող հայ դեսպաններին հայտնեցին, որ Կիլիկիա են ուղարկվելու պապի երկու լեգատներ, և եթե հայերը «իսկապես ևնթարկվեն և ընդունեն հռոմեական եկեղեցու դավանանքը, նրանց ռազմական օգնություն ցույց կտրվի»[5]: Հայ դեսպանները, որոնց թվում և Դանիելը, 1345 թ. վերադարձան Կիլիկիա: Այսպիսով, Կոստանդին IV-ը բավվեց Կլեմենտ VI պապի՝ եկեղեցական միավորումն իրականացնելու կտրական պահանջին, որպես Եվրոպայից

[1] Documents arméniens, t. II, p. 29. Ըստ Դարդելի Գվիդոնն սպանվել է 1344 թվի նոյեմբերի 17-ին:

[2] **Ա. Նալբանդյան,** Արար գրողները հայերի և Հայաստանի մասին, էջ 70 (ձեռագիր):

[3] Տե՛ս **Մ. Ջամչեան,** Պատմութիւն հայոց, հ. III, էջ 349:

[4] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 32:

[5] Նույն տեղում:

Կիլիկյան Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու պայման: Նա, ըստ երևույթին, կարծում էր, թե չի կարելի յոլա գնալ առանց արտաքին օգնության և որոշեց բանակցությունները չարունակել պապության հետ: 1345 թ. նա եկեղեցաժողով հրավիրեց Սիսում, որպեսզի քննարկեն Բալենցի կազմած «Libellus»-ը[1]: Ժողովին ներկա էին մի քանի տասնյակ եպիսկոպոսներ ու վարդապետներ՝ Մխիթար կաթողիկոսի գլխավորությամբ: Ժողովի մասնակիցները եկել էին Կիլիկիայից և հարևան մարզերից (Փոքր Ասիայից, Սիրիայից ու Միջագետքից): Հայաստանի հոգևորականության ներկայացուցիչները, որոնք միավորման հակառակորդներ էին, բացակայում էին: 1345 թվին եկեղեցական ժողովը նպատակ էր դրել մի քանի զիջումներով և ավելի չուտ ձևական, քան իրական միավորման ճանապարհով բերել պապության ու եվրոպական պետությունների օգնությունը:

Հայկական եկեղեցու դեմ առաջ քաչված մեղադրանքների առաջին կետը «filogue»-ի, այսինքն՝ կաթոլիկական տերահռչակ դավանության մերժումն էր, դավանանք, ըստ որի սուրբ հոգին իրրև թե ծագում է ոչ միայն Հայր-աստծուց, այլև՝ որդի-աստծուց:

Սիսի ժողովում ընդունելի ոգով ձևակերպվեցին պապության կողմից հայոց եկեղեցուն ներկայացված մեղադրանքների դեմ առարկություններ կամ փոխզիջումային բնույթի պատասխաններ[2], և ճանաչվեց հայոց եկեղեցու միացումը Հռոմեականին: Այս ճանապարհով Կիլիկիայի հայկական թագավորության կառավարող չրջանները հույս ունեին Եվրոպայի օգնությունն ստանալ: Սիսի ժողովից չատ չանցած՝ Կիլիկյան Հայաստանը ևնթարկվեց, ինչպես երևում է, թուրքմենների ու մամլուքների համաձայնեցված հարձակմանը: 1346 թվի ապրիլին թուրքմեններն ու սելջուկները գրավեցին Կապան սահմանամերձ ամրոցը: Կոստանդին թագավորը չտապեց կռվի ևնտվել նրանց դեմ, բայց այդ ժամանակ Կիլիկիայի վրա հանկարծակի հարձակվեցին մամլուքները: Կիլիկյան Հայաստանի ուժերից վեր էր ևտ մղել թչնամիների հարձակումը երկու կողմից, և նա պարտություն կրեց:

Պապական աթոռը լրտեսության միջոցով տեղյակ էր, որ Կիլիկյան Հայաստանի կառավարող չրջանները միջոցառումներ չեն անցկաց-

[1] Մ. Օրմանյանը կարծում է, թե այդ նպատակով եկեղեցական ժողովը կայացել է նաև 1343 թ. սկզբին, Գվիդոնի եղբոր՝ Ջիվանի կառավարման ժամանակ, որն ընդունել էր Կոստանդին անունը (Ազգապատում, էջ 1869), բայց ավելի հավանական է, որ նա այդ ժողովն արել է 1345 թվին:

[2] Տե՛ս **Մ. Օրմանեան,** Ազգապատում, էջ 1870–1903:

նում երկրում կաթոլիկության տարածման համար, որ ռևալ միացում չի իրագործվել: Դա իրագործելու նպատակով Կիլիկիա ուղարկվեցին պապի լեգատները, որոնք հայ մեծամեծներից գրավոր պարտավորություն վերցրին, թե Կիլիկիայի հայերը կաթոլիկություն կդավանեն, և խոստացան, որ պապը դրամական օգնություն ցույց կտա երկիրը պաշտպանելու ունակ դորք պահելու համար[1]:

Կրևսիի մոտ ֆրանսիացիների պարտությունից հետո Կլեմենտ VI-ը, որը միջազգային հարաբերություններում ֆրանսիական կողմնորոշման հետևորդ էր, դիմեց Էդուարդ III-ին, պնդելով ու համոզելով, որ վերջ տա ֆրանսիացիների հետ պատերազմելուն, որ խաչակրաց արշավանք կատարեն դեպի Արևելք[2]: Սակայն Էդուարդը բոլորովին չէր հետաքրքրվում Կիլիկյան Հայաստանի ճակատագրով: Նա ձգտում էր ընդլայնել իր քաղաքական տիրապետությունը Ֆրանսիայում և նույնիսկ տիրել այդ երկրի գահին:

Կլեմենտ VI-ի կողմից նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու փորձերը, երբ դրա իրականացման համար ռևալ պայմաններ չկային, է՛լ ավելի սրեցին հարաբերությունները Կիլիկյան Հայաստանի ու Եգիպտոսի սուլթանության միջև: Եգիպտոսի սուլթանը, իմանալով պապի և արևմտյան թագավորների հետ հայերի հարաբերությունների մասին, դա օգտագործեց որպես պատրվակ Կիլիկյան Հայաստանի վրա հարձակվելու համար: Եգիպտական սուլթանության բոլոր ծայրերից հավաքել կենտրոնացրել էին նշանակալից ուժեր, որոնք ներխուժեցին Կիլիկիա: Կոստանդին թագավորը դորք հավաքեց, որին գլխավոր կարգեց քաջ հրամանատար Լիպարիտին: Թշնամին ջախջախվեց ու ետ չպրտվեց, ընդ որում հայերն էլ մեծ կորուստներ կրեցին[3]:

Կիլիկյան Հայաստանին օգնության եկան Կիպրոսի թագավոր Հուգոն, ինչպես և Հոոդոսի ասպետների մագիստրոս Դևոդատ դը Գոզոներ, որոնք նույնչափ չահագրգռված էին Եգիպտոսի սուլթանության դեմ մղվող պայքարում: Ընդհանուր ջանքերով Եգիպտոսի սուլթանությունից ետ նվաճվեց Այասը, բայց նույն՝ 1347 թ. վերջին Եգիպտական նավատորմը չրջապատեց Այասը, և այն նորից անցավ թշնամու ձեռքը[4]:

[1] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 28:

[2] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 708:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 706:

[4] Տե՛ս նույն տեղում:

Նշենք, որ Վիեննտիկի դուժ Անդրեա Դանդոլոն հրաժարվեց միջնորդ դառնալ Հայոց թագավոր Կոստանդինի և Եգիպտոսի սուլթանի միջև՝ Այասը դրամական փոխհատուցմամբ Եգիպտացիներից Կիլիկյան Հայաստանին վերադարձնելու հարցում, քանի որ Վիեննտիկը չահավետ առևտրական հարաբերություններ ուներ Եգիպտոսի հետ և իր միջնորդությամբ, ըստ երևույթին, վախենում էր փչացնել բարեկամական հարաբերությունները նրա հետ:

Այսպես, անհաջողությամբ ավարտվեցին Այասը՝ Կիլիկյան Հայաստանի այդ կարևորագույն նավահանգիստը, վերադարձնելու փորձերը, որը շատ բանով նպաստում էր երկրի առաջընթացին: Այասի վերադարձումը կմեծացներ նյութական ռեսուրսները և կարող էր նշանակալիորեն ուժեղացնել երկրի պաշտպանունակությունը:

Համարյա միաժամանակ, 1347 թ., Թուրքմեն-կարամանները՝ Եգիպտոսի սուլթանության դաշնակիցները, զավթեցին չատ կարևոր Պապևռոնի բերդը՝ Տարսոնից վեց ժամվա ճամփա հեռու:

Հաջորդ՝ 1348 թ. ահավոր աղետը՝ ժանտախտը, որ բռնել էր Ասիան, Աֆրիկան ու Եվրոպան, մտավ և Կիլիկիա:

Մամլուքների ներխուժումները, ժանտախտը և դրանց ուղեկցող ավերածություններն ու սովը հայերի մի մասին ստիպեցին արտագաղթել Կիլիկիայից[1]:

XIV դարի 40-ական թվականներին Եգիպտոսի սուլթանությունը իր հերթին թուլացել էր Մելիք Նասըրի որդիների կողմից իշխանության համար մղվող պայքարից: Այնուամենայնիվ արաբների ու մամլուքների կողոպտչական հարձակումները Կիլիկիայի վրա կրկնվում էին: 1349 թ. Կոստանդինը Հայոց զորքի և Հոոդոսից ուղարկված օգնական զորքերի գլուխն անցած՝ ջախջախեց ներխուժած թշնամիներին և, հետապնդելով մինչև Իսոսի ծոցի արևելյան ափը, գրավեց Ալեքսանդրետը[2]: Բայց Կիլիկյան Հայաստանի ուժերն անբավարար էին Սիրիայի և Եգիպտոսի դեմ պայքարը հաջողությամբ չարունակելու համար:

1349 թ. Կոստանդին թագավորի քարտուղար Կարսիլին երկրորդ անգամ մեկնեց Եվրոպա: Նա նախ եղավ Ավինիոնում՝ Կլեմենտ VI-ի մոտ, իսկ ապա նրա նամակներն առած՝ ուղևորվեց Անգլիայի թագավորի մոտ, որից նա ստացավ խուսափողական պատասխան: Երբ Կարսիլին Անգլիայից վերադարձավ Ավինիոն, պապը նրան հավատիացրեց, թե խաչակիրների արշավանքը դեպի Արևելք այնուամե-

[1] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 710:

[2] Տե՛ս նույն տեղում:

նայնիվ կայանալու է և որ ինքը նամակներ է գրել Կիպրոսի թագավոր Հուգոյին, Հոռոդոս՝ հովհաննականների ասպետական ուխտի մագիստրոս դը Գոզոնին, Ջմյուռնիա՝ պոնտիֆիկատի նավատորմի ծովակալին՝ Կիլիկիային օգնություն ցույց տալու վերաբերյալ: Բայց խոստացված օգնությունն այդպես էլ չեկավ:

Ներսես Բալենցի հաղորդման համաձայն Կլեմենտ VI պապը դեռ 1347 թ. Մխիթար կաթողիկոսին խոստացել էր Կիլիկիայի հայկական թագավորությանը ամենամյա վարկ տալ 12000 ֆլորինի չափով և 1000-հոգանոց հեծյալ ջոկատ տրամադրել, եթե հայերը համաձայնեն եկեղեցիների միացում կատարել: Ըստ Դարդելի, վարկը պետք է հանձներ պապական եկամուտների Կիպրոսի հարկահավաքը: Բայց խոստացված վարկը չտրվեց այն պատրվակով, որ թագավորն ու կաթողիկոսը ունեին չէին իրագործել[1]:

Կոստանդին թագավորին ու Մխիթար կաթողիկոսին ուղարկվել է կաթոլիկական դավանանքի կրոնական դոգմաների և եկեղեցական ծեսերի մի ցուցակ՝ կազմված 53 կետից: Մխիթարը վերապահություններով է ընդունել կաթոլիկական դավանանքի որոշ կետեր և պատասխանել է ընդհանուր արտահայտություններով:

Տուրներիզը իր «Հայաստանի քաղաքական ու կրոնական պատմությունը» աշխատության մեջ, ելնելով կաթոլիկական եկեղեցու և բուրժուազիայի չահերից, ափսոսում է, որ հայոց եկեղեցին չենթարկվեց Արևմուտքին, չմիացավ կաթոլիկականին, չնայած ունիայի, ըստ նրա, հաղթանակի լիակատար հնարավորությանը Կիլիկիայում: Պապական աթոռը նույնպես համարում էր, որ Կիլիկիայում ունիան իրագործելի է: Ինչի՞ վրա էր կառուցված այդ հաշվարկը: Հավանաբար, հիմնականում այն բանի վրա, որ Կիլիկյան Հայաստանը, որը չատ հաճախ էր ավերվում և որին մշտապես իրենց ասպատակություններով սպառնում էին մամլուքները, վերջիվերջո ստիպված կլինի ընդունել կաթոլիկություն: Կիլիկյան Հայաստանի նկատմամբ պապության քաղաքականությունը միջին դարերում նմանության որոշ գծեր ուներ նոր ժամանակների եվրոպական պետությունների քաղաքականության հետ: XIII–XIV դարերի պապական դիվանագիտությունը նույնպես չարաչահում էր մամլուքների ներխուժումները Կիլիկիա, որպեսզի հայերի վրին փաթաթներ ունեան, վերջին հաշվով ետ նվաճեր Պաղեստինը և հպատակեցներ Կիլիկիան, ինչպես XIX–XX դարերի եվրոպական երկրների դիվանագիտությունն էր չարաչահում թուրքական սուլթանների կազմակերպած հայկական ջարդերը, որպեսզի զավթեր Մերձավոր Արևելքը, այդ թվում և Հայաստանը: Պապական դիվանագիտությունն այնպես էր հրահրում եգիպտոսի սուլթանությանը հարձակվելու Կիլիկյան Հայաստանի վրա, ինչպես եվրոպական պետությունների դիվանագիտությունն էր հայկական ջարդեր հրահրում Թուրքիայում:

[1] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 29:

Արևելքի երկրներից Կիլիկիայի հայկական թագավորությունը պապերի ուշադրության կենտրոնում էր գտնվում ոչ միայն նրա համար, որ այն դիտվում էր որպես խաչակիրների պլացդարմ ու դաչնակից, այլև նրա համար, որ Կիլիկիայում ունեայի հաջողություններ կնպաստեր կաթոլիկության ավելի արագ տարածմանը Հայաստանում, որտեղ արդեն կային դրա օջախները: Անհրաժեշտ է նշել, որ կաթոլիկական պրոպագանդան Հայաստանի որոշ շրջաններում չատ ավելի մեծ հաջողություններ էր ունեցել, քան Կիլիկիայում:

Ունիթոր-վանական (կաթոլիկ-ունիատ) Մխիթար Ապարանցին՝ XIV դարի վերջի և XV դարի սկզբի հայ հեղինակ, հռոմեա-կաթոլիկական եկեղեցուն այս կամ այն չափով հարող հայերի մեջ տարբերակում է. առաջին՝ Կիլիկիայի հայերին, որոնք ձևականորեն հետևում էին ունեային, պահպանում էին հայկական եկեղեցական ծեսերը և, երկրորդ՝ ունիթոր հայերին, որոնք լրիվ միացել էին կաթոլիկական եկեղեցուն: Սրանք ցրված էին Ղրիմում, Հայաստանում և այլ երկրներում: Կաթոլիկական քարոզչությունը XIV դարում հաջողություն ունեցավ հայերի մեջ այն վայրերում, որոնք ներքաչված էին միջազգային առևտրի ուղեծրի մեջ, քարավանային ճանապարհների կամ խաչմերուկների վրա էին:

50-ական թվերին եգիպտոսի սուլթանությանը ենթակա մուսուլման էմիրների գլխված ջոկատների ներխուժումները Կիլիկիա պարբերաբար կրկնվում էին: 1355 թ. հայերը ետ մղեցին Սիրիայի կողմից Տարսոնի և Ադանայի վրա խոչոր հարձակումը: 1360 թ. Հալեպի էմիրության զորքերը ներխուժեցին Կիլիկիայի հայկական թագավորություն և գրավեցին Դաշտային Կիլիկիան՝ Տարսոն և Ադանա խոչոր քաղաքներով: Այս քաղաքների գրավման մասին Արու Մահասինը հաղորդում է, թե Հալեպի էմիր Սևֆ էդ դին Բեյթիմուր Խվարեզմին 1360 թ. «նվաճեց Ադանան և Տարսոնը..., հրամայեց այնտեղ խուտբա կարդալ, դրամ հատել սուլթան Հասանի անունով, այդ քաղաքների կառավարիչներ նչանակեց և այնտեղ եգիպտական կայազորներ դրեց: Նա վերադարձավ Հալեպ մեծ ավարով՝ իր հետ բերելով բազմաթիվ գերիներ: Այս երկու քաղաքների բանալիները նա ուղարկեց Կահիրե»[1]:

[1] Documents arméniens, t. II, p. 32:

Դաչտային Կիլիկիան Ադանա և Տարսոն քաղաքների հետ կորցնելուց հետո Կիլիկիայի հայկական պետության տարածքը կրճատվեց մինչև 1130 թվականի սահմանները, այսինքն՝ մինչև առաջին Ռուբինյանների տիրապետության սահմանները:

Եգիպտոսի սուլթանության զորքերի այս ներխուժման ժամանակ կարաման-թուրքմենները պաշարեցին ծովափնյա Կոռիկոս ամրոցը և սպառնում էին զավթել Կիլիկյան Հայաստանի այդ վերջին նավահանգիստը: Կոռիկոսի բնակիչները իրենց ուժերի վրա հույս չդնելով՝ դիմեցին Կիպրոսի թագավոր Պիեռին: Կիպրոսի թագավորության նավատորմը ազատեց չրջապատված Կոռիկոսը, բայց այն նվաճեց Կիպրոսի թագավորի կայազորը և, այդպիսով, ենթարկվեց Կիպրոսի իշխանություններ[1]:

Կիլիկիայի հայկական պետության համար այս ճգնաժամային պահին չարունակվում էր կործանարար նամակագրությունը պապի հետ, և այդ կապակցությամբ Կիլիկիայում սրվել էին կրոնական վեճերն ու բախումները ունիայի և հայոց եկեղեցու կողմնակիցների միջև: Բանը հասավ մինչև զինված ընդհարման: Ըստ երևույթին, երկրում կրոնական գժտությունները մեղմացնելու համար և վերջնականապես համոզվելով, որ պապության կողմից բաղմիցս խոստացված ռազմական օգնությունը դատարկ խարեություն է, Մևրոպ կաթողիկոսը, անկասկած, Կոստանդին IV թագավորի համաձայնությամբ, 1361 թ. Սիսում եկեղեցաժողով գումարեց, որը դատապարտեց ունիան և նախորդ եկեղեցական ժողովներում պապությանն արված բոլոր զիջումները[2]:

Այսպիսով, XIII–XIV դարերում պապության փորձերը՝ իրեն ենթարկել հայոց եկեղեցին և կաթոլիկություն տարածել Կիլիկիայի հայերի մեջ, չտվեցին ցանկալի արդյունք: Պապության այդ քաղաքականությունը մեծ վնաս բերեց Կիլիկյան Հայաստանին:

[1] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 711:

[2] Տե՛ս **Մ. Օրմանեան,** Ազգապատում, հ. II, էջ 1922:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Կիպրոսի թագավոր Պիեռ I-ի (1359–1369) ձգտումը՝ տիրել Կիլիկյան Հայաստանի գահին: Նրա կողմից խաչակրաց արշավանք կազմակերպելու փորձը և Ալեքսանդրիայի, Այասի ու Եգիպտոսի սուլթանության մյուս նավահանգիստների վրա հարձակումները: Մամլուքների հարձակումը Սիսի վրա: Հաշտություն Եգիպտոսի հետ: Լատինամետ ազնվականության խմբավորման կողմից, Կոստանդին V-ից (1365–1373) գաղտնի, դեսպանության ղեպի Եվրոպա կատարած ուղևորությունը: Կոստանդին V-ի սպանությունը և Լևոն VI Լուսինյանի գահակալումը: Սսի պաշարումն ու գրավումը (1375) եգիպտոսի սուլթանության զորքերի կողմից: Լևոն Լուսինյանի ազատումը եգիպտական գերությունից: Նրա ուղևորությունը դեպի Իսպանիա, Ֆրանսիա և Անգլիա: Կիլիկիան հայկական պետության անկումից հետո: Կիլիկիայի հայկական պետության պատմության կարևորագույն կողմերը:

Կոռիկոսը Կիպրոսի թագավոր Պիեռ I-ի իշխանության տակ անցնելու (1360) պահից, մանավանդ Կոստանդին IV-ի մահից (1363) հետո, սաստիկ թուլացած Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը կապված է եղել Կիպրոսի հետ:

Այլևս չհավատալով Եվրոպայի օգնության իրողությանը՝ հայ իշխանները, մանավանդ ֆրանկասերները, սկսեցին իրենց հույսը դնել Կիպրոսի թագավորության վրա, որը XIV դարի կեսին իր հզորության գագաթնակետին էր հասել և ուներ ուժեղ նավատորմ, որի միջոցով պայքարում էր եգիպտոսի դեմ: Կիպրոսի թագավոր Պիեռ I-ն էլ (1359–1369), իր հերթին, Եվրոպայի օգնությամբ խոչոր խաչակրաց արշավանքի նախապատրաստվելով, սկզբում Կիլիկիան դիտում էր որպես հարմար հենակետ, իսկ հետագայում, իր կողմն ունենալով մի քանի հայ իշխանների համակրանքը, ցանկանում էր իրեն ենթարկել Կիլիկյան Հայաստանը: Կիպրոսում էին այդ ժամանակ նաև

Ջիվան Լուսինյանի որդիները՝ Բոհեմունդն ու Լևոնը՝ Կիլիկիայի հայկական թագավորության գահի հավակնորդները:

Կիլիկիայի ֆրանկասերների կուսակցությունը, ըստ երևույթին, դժգոհ էր Կոստանդին IV-ից, Սիսի 1361 թ. եկեղեցական ժողովի որոշումից, որը մերժել էր Հռոմի հետ եկեղեցական ունիան, հեղաշրջում էր նյութում հօգուտ Բոհեմունդի՝ Ջիվանի որդու: Այս չարժման արձագանքը մենք գտնում ենք Ժան Դարդելի մոտ, որի «Ժամանակագրությունը» համարյա միակ աղբյուրն է, որ տալիս է Կիլիկիայի հայկական պետության վերջին ժամանակաշրջանի իրադարձությունների հյուսվածքի հենքը: Սակայն նրա «Ժամանակագրությանը» անհրաժեշտ է քննադատաբար մոտենալ: «Այն ժամանակներում,– գրում է նա,– Կիպրոսի թագավոր Պիեռ I-ը մեկնեց Ուրբանոս V պապի մոտ՝ նրանից խնդրելու, որ զորք ուղարկեր ծովի այս կողմը, բայց քանի որ հայոց երկրի իշխանները նրան գրել էին, որ նա թույլ տա իրենց մոտ գա Բոհեմունդ Լուսինյանը՝ տիկին Սոլդանայի ավագ որդին, իսկ իրեն՝ Բոհեմունդին, որպես իրենց օրինական իշխանի, նամակ էին գրել, խնդրելով, որ նա գա կառավարի իրենց, ապա Պիեռ I-ը իր հետ վերցրեց Բոհեմունդին, որպեսզի պապի միջնորդությամբ նրան թագավոր օծեն, բայց վերջինս Հռոմ գնալու ճանապարհին մեռավ Վիտերբոյում 1363 թվին»[1]: Այն ժամանակ Պիեռը, ըստ Դարդելի, որոշեց հայկական թագը ձևոք բերել Բոհեմունդի եղբոր՝ Լևոն Լուսինյանի համար, և ստացավ պապի գրավոր համաձայնությունը: Վերադառնալով տուն և իմանալով հայոց թագավոր Կոստանդին IV-ի մահը՝ Պիեռ I թագավորը թաքցրեց պապի նամակը հայոց թագի նկատմամբ Լևոնի իրավունքների վերաբերյալ[2]:

Այս բոլոր հաղորդումները գուցե համապատասխանում են իրականությանը, բայց դրանք ստուգել հնարավոր չէ՝ այլ աղբյուրներ չլինելու պատճառով: Հիրավի, Պիեռը 1363 թ. գնացել է Եվրոպա և եղել է ոչ միայն պապի մոտ, այլև՝ Եվրոպայի թագավորների: Այդ ժամանակ նախապատրաստվում էին խաչակրաց արշավանքի համար: Ուրբանոս պապը Պիեռին հնարավորություն տվեց կամավորներ հավաքագրել Ֆրանսիայում, Իտալիայում և այլ երկրներում: Դարդելն ասում է նաև, որ Ուրբանոս V-ը 1365 թ. իբր թե նամակ է գրել Կիլիկիայի իշխաններին ու եպիսկոպոսներին, թե Լևոն Լուսինյանը հայոց գահի օրինական ժառանգորդն է, և որ նա օգնություն

[1] Documents arméniens, t. II, p. 35.

[2] Տե՛ս նույն տեղում:

կատանա պապից ու Եվրոպայից[1]: Կիլիկիայում թագավորական իշխանության էին ձգտում գահի ուրիշ հավակնորդներ ևս, բայց հաջողություն չունեցան[2]:

1365 թ. իշխանության գլուխ անցավ իշխան Կոստանդինը՝ Կոստանդին IV-ի ազգականը: Մինչև Դարդելի «Ժամանակագրության» լույս աշխարհ գալը այս Կոստանդինի մասին ոչինչ հայտնի չէր: Կոստանդին V-ի (1365–1373) օրոք երկրի մեծ մասը գրավել էին եգիպտոսը և թուրքմենները, այսպիսով, նրա տերությունը սահմանափակվում էր Կիլիկիայի լեռնային շրջաններով: Ամբողջ ծովափը, Կիպրոսի կայազորի կողմից գրավված Կորիկոսից բացի, Եգիպտոսի սուլթանության ձևքին էր, որի հետ Եվրոպա կատարած ուղևորությունից վերադարձած Պիեռ I-ը ծովային պատերազմ սկսեց, ինչը կ'ւ ավելի վատթարացրեց Կիլիկիայի հայերի դրությունը:

Դարդելը «Ժամանակագրության» մեջ պնդում է, թե այդ ժամանակ, մամլուքների հարձակումներից երկրի ճգնաժամային վիճակի հետևանքով, Կոստանդին թագավորը իր թե բանակցություններ է վարել Կիպրոսի թագավոր Պիեռ I-ի հետ՝ խնդրելով «բարեհաճել ընդունել իրեն, իր ամբողջ ունեցվածքը և ամբողջ երկիրը Կիպրոսի պետության հովանավորության տակ և հայոց թագավորության հետ վարվել, ինչպես ինքը կկամենա: Իմանալով հայոց թագավոր Կոստանդինի խնդրանքի մասին, Պիեռ I-ը այդ պատճառով էլ թաքցրել է պապի նամակը և ցույց չի տվել Լևոն իշխանին»[3]: Ֆրանսիացի տարեգրի այս պնդումը չի համապատասխանում իրականությանը: Այդ ժամանակ մամլուքներն սպառնում էին Կիլիկյան Հայաստանին: Կոստանդին V-ը հետևում էր եգիպտոսի սուլթանության հետ խաղաղություն պահպանելու քաղաքականությանը, իսկ Կիլիկիայի ֆրանկասերները, կողմնորոշվելով դեպի պապականությունը, հարաբերության մեջ էին Կիպրոսի ու Եվրոպայի հետ: Բացի այդ, ինչպես արդեն նշվել է, Դարդելն առաջ պնդում էր, թե Պիեռ I-ը այն նամակը, որտեղ ճանաչվում էին Լևոն Լուսինյանի ժառանգական իրավունքները, թաքցրել է, երբ իմացել է Կոստանդին IV-ի մահը: Տվյալ դեպքում, ինքն իրեն հակասելով, առաջ է քաշում նամակը թաքցնելու մի այլ պատճառ. Կոստանդին V-ի կողմից Պիեռ I-ին սուվերեն ճանաչելը: Այս ամենը մոդոնված է, որպեսզի ցույց տրվի, որ դեռևս 1363 թ. Ուրբանոս V-ը մատնանշել է Լևոն Լուսինյանին որպես հայոց գահի օրի-

[1] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 35:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 707:

[3] Նույն տեղում, էջ 35:

նական ժառանգորդի, բայց Պիեռ I-ը դա նրանից թաքցրել է, որի հետևանքով նա հայոց գահը զբաղեցրել է միայն տասը տարի անց:

Ջատանալով բավարար ռազմական օգնություն Եվրոպայից՝ Պիեռ I-ը արկածախնդրական հարձակումներ սկսեց Եգիպտոսի և Միջերկրական ծովի արևելյան ափերի վրա: 1365 թ. նա գրավեց Ալեքսանդրիան և կողոպտեց միջերկրածովյան այդ խոշորագույն նավահանգիստը, բայց չուներ բավարար ուժեր, որպեսզի այն իր ձեռքին պահեր: Նա գրավեց նաև Ատտալիան՝ մուսուլման բնակչության կոտորած սարքելով: Հարձակվեց նաև Սիրիայի նավահանգիստների վրա[1]:

Պիեռ I-ը պայմանավորվեց նաև Կոստանդին V-ի հետ, որ համատեղ ջանքերով նետ գրավեն Այաս նավահանգիստը: Հաջողության դեպքում կարելի կլիներ հուսալ, որ կնվաճվեր նաև Դաչտային Կիլիկիան, որը կդառնար հենակետ Եգիպտոսի դեմ ռազմական գործողություններ կատարելու: Պիեռ I-ի և Կոստանդին V-ի այս ծրագրի մասին վկայություն կա Մացյուի մոտ, նրա «Ալեքսանդրիայի առումը» պոեմում: Պայմանավորվածության համաձայն Պիեռի նավատորմը ծովից և Կոստանդին V-ի զորքերը ցամաքից պետք է հարձակվեին Այասի վրա: Պիեռ I-ը 1367 թ. սեպտեմբերին գրավեց Այաս քաղաքը, բայց չկարողացավ տիրել միջնաբերդին: Ութ օր ապարդյուն սպասելով Կոստանդինի զորքերին՝ Պիեռը վերադարձավ Կիպրոս:

Կոստանդինը խուսափեց Այասի պաշարմանը մասնակցելուց, ըստ երևույթին նրա համար, որ չէր ուզում խախտել հաշտության պայմանագիրը Եգիպտոսի սուլթանության հետ կամ կարծում էր, թե Այասի նվաճումը, Պիեռ I-ի հետ դաշնակցած, հղի է անցանկալի հետևանքներով:

«Եկեղեցական աննալներում» (1366 թ.) նշված է, որ Այասից Պիեռի հեռանալուց անմիջապես հետո եգիպտական զորքերը վրեժ լուծելով՝ սկսեցին ամայացնել Կիլիկիան և որ հայերից չատերը փախան Հռոդոս, Հունաստան և Միտիլինի քաղաքը (Լեսբոսում): Միաժամանակ հայ փրանկասեր իշխանները ձգտում էին գահընկեց անել Կոստանդին V-ին և իշխանությունը հանձնել Պիեռին:

Ռազմական անհաջողություններ կրելով՝ Պիեռը 1367 թ. երկրորդ անգամ ուղևորվեց Եվրոպա՝ եգիպտոսի սուլթանության դեմ եվրոպական պետությունների կոալիցիա ստեղծելու համար: 1368 թ. գարնանը նա այցելեց պապին, իսկ աշնանը՝ Վենետիկ, բայց արդյունքի չհասավ: Վենետիկում հանդիպեց հայ դեսպանների, որոնք

[1] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 712:

նրան առաջարկեցին ընդունել հայոց թագը, և նա չտապեց տուն վերադառնալ: Բայց 1369 թ. հունվարին Նիկոզիայում Պիեռ I-ը սպանվեց իր խռովարար բարոնների ձեռքով: Եվրոպացի պատմաբանները Լանգլուայի «Numismatigue de l' Arménie au mouen âge» աշխատության հիման վրա, որտեղ տրված է հայերեն մակագրությամբ արծաթե մի դրամի նկարագրությունը մի երեսին գրված. «Պետրոս, արքա ամենայն Հայոց», իսկ մյուս երեսին՝ «Հատված է Սիս քաղաքում», պնդում են, թե Կիպրոսի Պիեռ I-ը եղել է կամ իրեն համարել է հայոց պետության թագավոր, բայց Սիպիլյանի «Դասաւորութիւն Ռուբինեան դրամոց»[1] աշխատությունից երևում է, որ այդ դրամը կեղծ է: Պիեռ I-ը երբեք չի եղել Կիլիկիայի հայկական պետության թագավոր: Նա դրան ձգտում էր: Կիլիկիայում իր տիրապետության հաստատումը նա, հավանաբար, կապում էր Եգիպտոսի սուլթանության դեմ մղվող պայքարի հաջողության հետ: Պիեռի մահով չքացավ հայ ազնվականության որոշ մասի՝ Կիպրոսի հետ կապված հույսը: Կիլիկիայում ստեղծվեց իշխանների մի ազդեցիկ խումբ, որը ձգտում էր կազմակերպել Կոստանդին IV-ի այրու ամուսնությունը Եվրոպացի իշխաններից մեկի հետ և դրանով եվրոպայի օգնությունը ստանալ: Կոստանդին IV-ի այրի Մարիան՝ Կոռիկոսի կոմս Օչինի ու Ժաննա Անժուացու դուստրը, նամակով դիմեց պապին, Նեապոլին ու Վենետիկին: Մարիայի անունով 1369 թ. հոկտեմբերի 11-ի պատասխան նամակում Վենետիկի դոժը խոստանում էր, որ այն պայմանագրում, որը Վենետիկը Ջենովայի հետ համատեղ մտադիր է կնքել եգիպտոսի սուլթանության հետ, կմտցվի Կիլիկիայի հայկական թագավորության խաղաղությունն ապահովող մի հատուկ կետ: Բայց երկու իտալական հանրապետությունների միջև մրցակցությունը չարունակվում էր, և պայմանագիրը չկնքվեց: Բայց եգիպտոսի սուլթանությունն էլ հաղիվ թե համաձայներ պայմանագրի մեջ այդպիսի կետ մտցնել:

Մինչ Մարիա թագուհին նամակագրություն էր վարում եվրոպայի հետ, եգիպտոսի սուլթանության զորքերը նոր խոշոր հարձակում կատարեցին Լեռնային Կիլիկիայի վրա: Հալեպի էմիր Իչիկ Թիմուրը և Տարսոնի էմիր Մանիչակը հարձակվեցին Սիսի վրա: Ըստ Դարդելի, Կոստանդին V-ը իբր զրևարեց լիակատար անօգնականություն:

Թչնամու դեմ ելավ Լիպարիտը, որը սպարապետի կոչում ուներ և հաճախ էր կռվել մամլուքների դեմ, երբեմն՝ հաջողությամբ, բայց այս անգամ նրա հրամանատարության տակ կար թույլ մի զորք: Նա

[1] **Կ. Սիպիլեան,** Դասաւորութիւն Ռուբինեան դրամոց, Վ., 1892, էջ 69:

ընկավ Թշնամու ղեմ մղված մարտում և Հերոսի փառքի արժանացավ: Նրա սպարանքներն ու մահը երգել է բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցին[1]: Մանիչակի զորքերը ներխուժեցին Սիս և քաղաքը կողոպտեցին ու հրի մատնեցին, բայց չկարողացան միջնաբերդը գրավել: Այդ թալանչիական ներխուժման հետևանքով երկրում սկսվեց սով[2]:

Այսպիսով, Լեռնային Կիլիկիայի բնակչությունը պետք է հատուցեր Կիպրոսի թագավոր Պիեռի կողմից Ալեքսանդրիայի և Եգիպտոսի ու Սիրիայի նավահանգիստների վրա արկածախնդրական հարձակումների համար: Եգիպտոսի սուլթանության զորքերի ներխուժումը հաջորդեց անմիջապես Պիեռ I-ի մահվանը, նույն տարվա վերջում: Մամլուքների այս ներխուժումից հետո Կոստանդին V-ը ձգտում էր խաղաղություն պահպանել եգիպտոսի սուլթանության հետ, բայց Կոստանդին IV-ի այրի Մարիան, որն ազգականներ ուներ Իտալիայում, նրանից թաքուն նորից դիմում է Եվրոպայի օգնությանը: 1371 թ. Մարիա թագուհու դեսպանը այցելում է նրա հորեղբայր Ֆիլիպ Տարենտացուն, իսկ ապա՝ Գրիգոր XI պապին, որը 1374 թ. Ֆիլիպին ուղղված նամակում գրում է. «Մենք տեսնում ենք, որ բոլոր քրիստոնյա ժողովուրդները... ներքաշված են պատերազմի ջրապտույտի մեջ, ուստի և հնարավորություն չկա թագուհուն չտապ օգնություն ցույց տալ»[3]:

Ըստ Դարդելի հաղորդման, ինչը կասկած է հարուցում իրականության ճշմարիտ լուսաբանման առումով, «հայերը տեսնելով, որ Կոստանդին թագավորը երկիրը թողել է բախտի քմահաճույքին, ժողովրդին ճնշում է, նրան աղետների է ենթարկել, չորթումներով գանձեր է կուտակել և ուզում է պետությունը մատնել անհավատներին, գաղտնի դեսպաններ ուղարկեցին Կիպրոս՝ Լևոն Լուսինյանի մոտ, նրան առաջարկելով հայոց թագը, բայց նա հրաժարվեց՝ ասելով, թե չունի բավարար թվով զինված մարդիկ և որ նախ պետք է կանխապես ապահովել պապի ու քրիստոնյա թագավորների օգնությունը»[4]:

Կոստանդինի կառավարման ավարտի մասին Դարդելն ասում է. «Երբ Կոստանդին թագավորը տեսավ, որ դևպի Կիպրոս նավեանցնելն անհնար է, քանզի այլազգիները գրավել էին բոլոր նավահանգիստները, համաձայնության նկավ եգիպտոսի սուլթանի հետ և

[1] Տե՛ս **Ալիշան**, Ազգապատում, էջ 540:

[2] Տե՛ս Documents arméniens, t. I, p. 717:

[3] **Baronius**, An. eccles., t. XXVI, p. 613.

[4] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 41:

խոստացավ նրան հանձնել իր թագավորությունը, երկիրն ու բոլոր քրիստոնյաներին, միայն թե պահպաներ իր կյանքը և ունեցվածքը: Իմանալով թագավորի այդ մտադրության մասին, հայերն սպանեցին նրան 1373 թ. ապրիլին և համընդհանուր համաձայնությամբ իշխանությունը մինչև Լևոնի գալը հանձնեցին նախկին թագուհուն՝ Կոստանդինի կնոջը»[1]: Ուրիշ աղբյուրներ չկան, որպեսզի ստուգենք իրականությունն այն ամենի, ինչ հաղորդում է Դարդելը Կոստանդին V-ի մասին:

Այնուամենայնիվ կասկած չի կարող լինել, որ նա Կոստանդինին հակադրում է Լևոնին: Նրա համակրանքը Լևոնի կողմն է: Նա սևացնում է բոլոր նրանց, ովքեր կանգնած են եղել Լևոն Լուսինյանի հաջողության ճանապարհին: Դարդելն ակնհայտորեն չի ընդունում Կոստանդինին, որն արդեն չէր հավատում Եվրոպայի ռազմական օգնությանը և ձգտում էր խաղաղություն պահպանել եգիպտոսի սուլթանության հետ: Ֆրանսիացի տարեգիրը բացասական բնութագիր է տալիս նրա գործունեությանը, որպեսզի արդարացնի ֆրանկասեր դավադիրների ուղևորությունը Կիպրոս, որպեսզի արդարացնի Կոստանդին V-ի սպանությունը, ինչը նրանք էին կատարել:

Կիլիկիայի հայկական թագավորության անկման պատմության մեջ հիշատակվում է Լևոն Լուսինյանը՝ այդ երկրի վերջին թագավորը: Մի քանի հետազոտողներ, օրինակ՝ Ալիշանը, հաշվելով ոչ թե իշխան Լևոնից, այլ Ռուբինյանների դինաստիայի թագավորից, նրան հաշվում են Լևոն V[2]: Մեզ թվում է, թե ճիշտ կլինի սկսել Լևոն իշխանից (1129–1137) և Լևոն Լուսինյանին համարել Լևոն VI:

Լևոն Լուսինյանը ծնվել է 1342 թ.: Ծնողները եղել են Ամորի Լուսինյանի ու Լևոն III-ի դուստր Իզաբելլայի որդի Ջիվանը և վրաց

[1] Documents arméniens, t. II, p. 41.

[2] Այդպես է վարվում նաև Բասմաջյանը (Journal asianigue, 10-me srerie, t. VII, p. 523) հիմք ունենալով Լևոն Լուսինյանի գերեզմանաքարի վրա փորագրածը. «Cy gist trés noble et exellant prince Levon de Lysigne guint roy tatin de rayaume d' Arménie»... Ստորակետ դնելով «guint» բառից հետո, այլ ոչ թե դրանից առաջ, նա այդ դարձվածքը կարդում է. «Լևոն Լուսինյան V, Հայոց թագավորության լատինացի թագավածքր կարդում է. «Լևոն Լուսինյան V, Հայոց թագավորության լատինացի թագավոր», մինչդեռ ուրիշ հետազոտողներ (Դյուկանժ, Դյուլորիե) այդ դարձվածքը հասկանում են այն իմաստով, որ նա եղել է Կիլիկիայի հայկական թագավորության լատինացի հինգերորդ թագավորը: Շատ հնարավոր է, որ Բասմաջյանը ճիշտ է հասկացել գերեզմանաքարի արձանագրության տեքստը: Ըստ երևույթին Լևոն Լուսինյանին այն ժամանակ հաշվում էին Լևոն հինգերորդ՝ հաշվին սկսելով Լևոն թագավորից:

արքայադուստր Սոլդանան: Նա ծնվել է Կիլիկիայում, բայց երեք տարեկան հասակից ապրել է Կիպրոսում: Լևոն VI-ն իրեն համարել է ֆրանսիացի և, ինչպես Դարդելն է ասում, եղել է «իսկական կաթոլիկ ու նվիրյալ որդին մեր մոր՝ Հռոմեական սուրբ եկեղեցու»[1]: Դրանով են չատ դեպքերում կանխորոշվել նրա արարքները, նրա վերաբերմունքը Եվրոպայի հանդեպ:

Լևոն VI Լուսինյանը (1374–1375) իշխանության գլուխ անցավ այն պահին, երբ Կիլիկիայի հայկական թագավորությունը հոգեվարք էր ապրում և օրերը հաշված էին: Կոստանդին V-ի սպանությունից հետո հայերը, Դարդելի ասելով, «միահամուռ որոշմամբ Կիպրոսի թագավոր Պիեռ II-ի և իշխան Լևոն Լուսինյանի մոտ չորս դեսպան ուղարկեցին, որոնցից երկուսը աղնվական էին, երկուսը՝ քաղաքացի»[2]: Դիմելով նրան՝ դեսպանները խնդրել են, տարեգրի ասելով, որ նա «գա ընդունի ժառանգությունը և օգնության ձեռք մեկնի... այլապես երկիրը կընկնի սարակինոսների լծի տակ»[3]: Այդ հարցում հայ իշխանների «միահամուռության» մասին խոսք չի կարող լինել: Դեսպանություն Կիպրոս ուղարկվել է ֆրանկասերների կողմից, որոնք կազմակերպել էին Կոստանդին V-ի սպանությունը, որովհետև նա ուզում էր խաղաղություն պահպանել եգիպտոսի հետ:

Լևոնը դեսպանների հետ պայմանավորվել է, որ ինքը Կիլիկիա կգա Կիպրոսի թագավորության և Ջենովայի հանրապետության միջև մղվող պատերազմի ավարտից հետո և ցանկացել է, որ մինչև իր գալը երկիրը կառավարի խնամակալական խորհուրդը, որի մեջ պետք է մտնեն. Մարիան՝ Կոստանդին IV-ի այրին, Ֆեման՝ Կոստանդին IV-ի քույրը, եղբոր՝ Գվիդոն-Բոհեմունդի՝ Կոռիկոսի կոմսի այրին, Բարդուղիմեոսը՝ Բոհեմունդի որդին և Վասիլ իշխանը[4]:

1373 թ. Կիպրոս կղզում կոնֆլիկտ առաջացավ վենետիկցիների և Ջենովացիների միջև առևտրի ասպարեզում, իսկ ապա պատերազմ բռնկվեց Կիպրոսի ու Ջենովայի միջև: Ջենովացիները զավթեցին Ֆամագուստան, կողոպտեցին կղզին և կիպրոսցիներին ստիպեցին վճարել 40000 բյուզանտ ռազմատուգանք[5]: Կիպրոսի թագավորությունը Ջենովայից այնպիսի հարված ստացավ, որից հետո այլևս ուշքի չեկավ: Այսպիսով, եգիպտոսի սուլթանության դիրքը է՛լ ավելի ամրապնդվեց:

[1] Documents arméniens, t. I, p. 23.

[2] Նույն տեղում, էջ 43:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս Documents arméniens, p. 47:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 55:

Այս պատերազմի ժամանակ Լևոն Լուսինյանը գերի ընկավ: Նրան մեղադրում էին Պիեռ I-ի սպանությանը մասնակցելու մեջ, բայց նա ապացուցեց իր անմեղությունը: Այնուամենայնիվ նրանից պահանջեցին 9000 դուկատ ռազմատուգանք, որի վճարման համար վաճառեց արծաթեն ամանեղենը և գրավ դրեց իր կնոջ՝ Մարգարիտա Սուասսոնի կալվածքը[1]:

Ռազմատուգանք վճարելով՝ Լուսինյանը խնդրեց, որ թույլ տան վերադառնա Կոռիկոս և այնտեղ ձմեռն անցկացնի և ապա մեկնի Սիս, բայց Պիեռ I-ի այրին՝ Էլեոնորա Արագոնցին նրան իր մոտ կանչեց և, Դարդելի ասելով, ասաց. «Ինձ հայտնի է, որ Կոռիկոսի բերդը պատկանել է Հայոց թագավորությանը և դրա բնակիչների մեծ մասը հայեր են: Դու գնում ես հայերի երկիրը թագադրվելու: Ես կասկածում եմ, թե Կոռիկոս ժամանելով՝ դու այն քո իշխանությանը կենթարկես»[2]: Լևոն Լուսինյանը տարհամոզելով նրան՝ ասաց, որ «Կոռիկոսը Սիսից հեռու է, որ այդ նավահանգիստն իրեն պետք չէ, որ եթե ինքը դրան տիրի, ապա հետո կզիջի Կիպրոսին»[3]: Էլեոնորան նրան թույլ տվեց մնալ, բայց այն պայմանով, որ բնակություն հաստատի ոչ թե Կոռիկոսում, այլ՝ Կոռիկոսի դիմացի կղզու ամրոցում:

1374 թ. ապրիլին հասնելով Կոռիկոս կղզի՝ Լևոնն իմացավ, որ Տարսոն քաղաքը պահպանվում է եգիպտական 300-հոգանոց կայազորի կողմից: Նա դիմեց Ջենովայի ծովակալին, որն օկուպացրել էր Կիպրոսը՝ խնդրելով օգնել գրավելու Կիլիկիայի այդ կարևոր քաղաքը, բայց նա մերժեց, պատճառաբանելով, թե «Ջենովացիներն առևտրական պայմանագիր ունեն սարակինոսների հետ»[4]: Այս մերժումը վկայում է, որ Ջենովան գերադասում էր բարեկամական հարաբերություններ պահպանել եգիպտոսի սուլթանության հետ, որի իշխանության տակ էին ինչպես Տարսոնն ու Այասը, այնպես էլ Սիբիայի նավահանգիստներն ու Ալեքսանդրիան, որպեսզի Արևելքի հետ առևտուր աներ այս նավահանգիստներով, քան թե օգներ Լևոն Լուսինյանին՝ Կիլիկյան Հայաստանի գահի, ավելի ճիշտ՝ Լեռնային Կիլիկիայի իշխանության հավակնորդին, մի երկիր, որն արդեն Ջենովացիների համար հետաքրքրություն չէր ներկայացնում առևտրական տեսակետից: Այնժամ Լևոնն իր մոտ կանչեց Կիպրոսին պատկանող Կոռիկոսի ամրոցի պարետին և նրան հայտնելով Տարսոնի

[1] Տե՛ս Documents arméniens, p. 48:

[2] Նույն տեղում, էջ 52:

[3] Նույն տեղում, էջ 53:

[4] Նույն տեղում:

գրավման իր ծրագիրը՝ խնդրեց իրեն օգնել զորականներով ու նավերով: Կոռիկոսի պետը, Կոստանդին անունով, նրան խոստացավ օգնել[1]:

Լևոն Լուսինյանը միաժամանակ սուրհանդակի միջոցով նամակ ուղարկեց էլեոնորային ու Ջենովայի ծովակալին՝ խնդրելով, որ իրեն դինյալ մարդիկ տան, որպեսզի գնա հասնի Սիս: Նրանք ուղարկեցին 100-հոգանոց մի ջոկատ, որի հրամանատարն էր Սոխլեր Դյուլկարտը: Լևոն Լուսինյանը մարդ ուղարկեց Կոռիկոս՝ խոստացված օգնության համար, բայց բերդի պարետ Կոստանդինը միտքը փոխեց և Տարսոնի էմիրին տեղեկացրեց այդ քաղաքը զավթելու Լևոնի մտադրության մասին: Սակայն Կոռիկոսի մի քանի քաղաքացիների համագործակցությամբ Լևոն Լուսինյանին հաջողվեց Կոստանդինից նավ ստանալ, այն պայմանով, որ ինքը չի հարձակվի Տարսոնի վրա: Կիլիկյան ծովափի բնակավայրերից մեկում ափ իջնելով՝ Լևոն Լուսինյանը վարձկան զինվորների մի փոքր ջոկատի ուղեկցությամբ լեռնային կածաններով բարձրացավ Սիս[2]:

Հայ իշխանները Լևոն Լուսինյանին առաջարկեցին թագադրվել հայկական ծեսով, բայց նա, Դարդելի ասելով, պատասխանեց. «Պարոննե՛ր, դուք գիտեք, որ մենք չրջապատված ենք թշնամիներով... և մեծ հույս ենք կապում քրիստոնյա թագավորների օգնության հետ, մանավանդ Ֆրանսիայի թագավորի»[3], և ապա ավելացրեց, որ ինքը հետևում է կաթոլիկ դավանանքին, որին պետք է հետևեն նաև հայերը: Տեսնելով հայ իշխանների անվստահությունն ու տրտունջը՝ Լևոն Լուսինյանը զիջեց այդ հարցում և թագադրվեց նախ եպիսկոպոս Եփրոնի ձեռքով, կաթոլիկական ծեսով, իսկ ապա Պողոս կաթողիկոսի ձեռքով, հայկական ծեսով[4]:

Այսպիսով, Լևոն VI-ի կառավարումն սկսվեց դավանաբանական հարցերում հակասություններով հայ իշխանների հետ, որոնց մեծ մասը հայոց եկեղեցու նվիրյալ հետևորդներ էին: Այս բախումը ժամանակավորապես հարթվեց խախուտ մի փոխզիջմամբ, որն իր մեջ թաքցնում էր թագավորի և իշխանների միջև ապագա պայքարի հեռանկար, քանի որ Լևոն Լուսինյանը ձգտում էր Կիլիկիայում կաթոլիկություն տարածել և արտաքին քաղաքականության մեջ հենվում էր Եվրոպայի վրա: Լևոն VI-ի այդ քաղաքականությունը չէր

[1] Documents arméniens, p. 55.

[2] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 58:

[3] Նույն տեղում, էջ 65:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 65–66:

կարող աջակցություն գտնել Կիլիկիայի հայ վերնախավի մեծամասնության կողմից:

1374 թ. ամռանը, երբ Լևոն Լուսինյանը իշխանության գլուխ անցավ, Կիլիկիայի հայկական թագավորության տարածքը սահմանափակվում էր Սիսով, Անարզաբայով և Լեռնային Կիլիկիայի մի քանի չրջաններով: Այն չրջապատված էր Կարամանիայի թուրքմենների և եգիպտացի էմիրների տիրույթներով և գտնվում էր նրանց հարձակման սպառնալիքի տակ: Տարսոն քաղաքը ենթարկվում էր Հալեպի էմիր Իլիկ Թիմուրին՝ եգիպտոսի սուլթան Մելիք էլ Աչրաֆ Շաբանի (1363–1377) գործուն օգնականներից մեկին: Թուրքմեն պարագլուխ Դավուդ բեկը և եգիպտոսի էմիր Աբու Բեքրը հաճախ էին հարձակվում Սիսի վրա:

Եգիպտոսի սուլթանության զորքերի ու թուրքմենների կողմից Սիսի պաշարման նախօրյակին երկրի դրության մասին Դարդելը գրում է. «Երբ Լևոն Լուսինյանը գահ բարձրացավ, տեսավ, որ հայերը կորցրել են բազմաթիվ գավառներ ու քաղաքներ և ութ տարի չէին կարողանում վարել-ցանել իրենց դաշտերը, որոնք թուրքերն ամայացրել էին մինչև հենց Սիս քաղաքի դարպասները»[1]:

Լևոն VI-ը բանակցություններ սկսեց Դավուդ բեկի հետ, և երկու կողմերը համաձայնեցին, որ հայոց թագավորը պիտի հարկ վճարի, իսկ թուրքմենների պարագլուխը չպետք է խանգարի Սիսի մատակարարմանը: Բայց Լևոնին թշնամի խմբավորումը քաղաքում դիմեց խարդավանքի: Թագավորին լուր տվեցին, թե Դավուդ բեկը պատրաստվում է հարկն ստանալուց հետո հարձակվել Սիսի վրա, իսկ Դավուդ բեկին լուր տվին, թե թագավորը իր պատրաստվում է հարձակվել նրա վրա[2]: Դավուդ բեկը ձերբակալեց հայ թագավորի դեսպաններին, ճանապարհից ետ դարձրեց այն գումակները, որոնք ուտելիքի պաշարներ էին տանում Սիս և ուղեկալներ դրեց քաղաք տանող ճանապարհներին: Դրա հետևանքով քաղաքում ստեղծված ծանր դրության մասին կարելի է դատել Դարդելի հետևյալ խոսքերից. «Հայերը պաշարներ ձեռք չբերեցին, դրա համար էլ քաղաքին սպառնում էր սովը»[3]:

Լևոն Լուսինյանը տեսնելով, որ քաղաքի պաշարներն սպառվել են, իր զորականներին հրամայեց գիշերով հարձակվել թշնամու վրա և ուտելիք գրավել: Այս ձեռնարկը հաջողությամբ պսակվեց. նրա զո-

[1] Documents arméniens, t. II, p. 66:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 67:

[3] Նույն տեղում, էջ 68:

րականները վերադարձան պաշարներով: Եռամսյա ապարդյուն պաշարումից հետո Դավուդ բեկը համաձայնեց նորոգել պայմանագիրը նախկին պայմաններով: Սակայն Եգիպտոսի սուլթան Մելիք Աշրաֆի հրամանով 1375 թ. հունվարին էմիր Աբու-Բաքրը նորից չրջապատեց Սիսը և հարկ պահանջեց: Քաղաքի գրավումն արագացնելու համար չուտով կահիրեից կարգադրություն եկավ, որ Հալեպի էմիր Իչիկ Թիմուրը նույնպես իր զորքերով գա պաշարված Սիսի վրա գրոհելու, ինչն սկսվեց 1375 թ. փետրվարի 24-ին[1]:

Լևոն Լուսինյանը չկարողացավ քաղաքը ձեռքին պահել: Իր զորականներով փակվեց միջնաբերդում, որը 300-մետրանոց զառիթափ բարձունքի վրա էր, ամուր ու բարձր պարիսպներով ու աշտարակներով: Թեև առաջ էլ, մինչև այս պաշարումը, թշնամիները մի քանի անգամ ճեղքել-մտել էին Սիս, բայց միջնաբերդը միշտ դիմացել էր պաշարմանը: Այս անգամ էլ եգիպտոսի սուլթանության զորքերը Սիսի գրավման փորձ անելիս նաև անհաջողություն կրեցին, թեև մի քանի անգամ վերսկսեցին գրոհը: Գրոհներից մեկի ժամանակ Լևոն Լուսինյանը վիրավորվեց և անկողին ընկավ: Այդ ժամանակ դավադրություն կազմակերպվեց՝ միջնաբերդը թշնամուն հանձնելու նպատակով: Դարղելը պատմում է, թե Կահիրեում հավաքագրված զորականներից մեկը, անունը Մաթևոս դը Շապպ, թագավորի հակառակորդների կողմից կաշառված, դավաճանության ճանապարհը բռնեց: Իր համախոհների գլուխն անցած՝ նա հարձակվեց այն աշտարակի վրա, որտեղ պառկած էր վիրավոր Լևոն Լուսինյանը, որպեսզի ձերբակալեր նրան և ամրությունը հանձներ Հալեպի էմիրին: Սակայն հայ զորականները՝ այդ աշտարակի պաշտպանները, կարողացան թագավորին տեղափոխել մի այլ աշտարակ: Այնուամենայնիվ, դավադիրները գրավեցին առաջին աշտարակը, և մամլուքները մտան այդտեղ: Հայ զորականները մի շարք գրոհներից հետո միջնաբերդի ներսի կողմից նորից գրավեցին աշտարակը՝ կոտորելով դավաճաններին ու մամլուքներին[2]: Այս միջադեպը վկայում է, որ հատկապես հայերն են համառորեն պաշտպանել Սիսի միջնաբերդը, իսկ ֆրանսիացի վարձկանները, ոսկով գայթակղված, դավաճանել են Լևոն Լուսինյանին և փորձել հանձնել ամրոցը: Թեև ֆրանսիացի զորականներին կաշառելու միջոցով միջնաբերդը գրավելու թշնամու փորձը ի չիք դարձավ, այնուամենայնիվ Սիսի վերջին հենարանի պաշտպանությունը անհուսալի էր, քանի որ չուտով միջնաբերդում բոլոր պաշարներն սպառվեցին: Այսպիսի հանգամանքներում, Դարղելի խոսքերով ասած. «միջնաբերդում հայերը կաթողիկոսի մոտ հավաքվեցին խորհրդակցության և ոչ ոք չարտահայտվեց հօգուտ թագավորի»[1]: Ֆրանսիացի տարեգիրը կաթողիկոսին ու մեծամեծներին մեղադրում է, որ նրանք միջնաբերդը հանձնեցին Հալեպի էմիրին, բացառությամբ այն աշտարակի, որի մեջ փակված էր Լևոն Լուսինյանը: Ջկա մի այլ աղբյուր, որպեսզի որոշենք այս հաղորդման իսկությունը: Բայց եթե դա ինչ-որ չափով համապատասխանում էլ է իրականությանը, ապա կաթողիկոսի և վերնախավի այդպիսի արարքը կատարվել է, հավանաբար, գլխավորապես Սիսի հետագա պաշտպանության հաջողության որևէ հնարավորության բացակայությունից: Բացի այդ, Լևոն Լուսինյանը իր ֆրանկասիրական քաղաքականության հետևանքով չէր արժանանում կիլիկեցի հայերի աջակցությանը: Միջնաբերդի հանձնման անմիջական պատճառը եղել է պաշարման ժամանակ առաջացած սովը: Իրադարձություններին ժամանակակից հայ տարեգիրներից մեկը գրում է. «... Թշնամիները Սիսը չրջապատեցին սեպտեմբերից (1374) մինչև ապրիլի 16-ը (1375) և քաղաքը հանձնեցին ուրբաթ օրը ոչ թե որևէ այլ պատճառով, այլ՝ սովի»[2]:

Լևոն Թագավորը Հալեպի էմիրից ստանալով պահպանագիր, որը երաշխավորում էր նրա և նրա ընտանիքի կյանքի անվտանգությունը, գերի հանձնվեց և Պողոս կաթողիկոսի ու շատ իշխանների հետ տարվեց Կահիրե: Սիսի անկումը նշված է արաբական աղբյուրներից մեկում հետևյալ կերպ. «Այդ տարի (Հիջրայի 776 թ.) Սիսը՝ երկրի մայրաքաղաքը, գրավվեց Հալեպի էմիր Իչիկ Թիմուրի կողմից, նամայա պաշարումից հետո և այնտեղի հայ իշխանների տիրապետությունը լիովին տապալվեց... Այս լուրը հասավ սուլթան Մելիք-Աշրաֆին, և նրա սիրտը լցվեց բերկրանքով այս մեծ հաղթանակի առթիվ»[3]:

Հայ գրողները Սիսի և Կիլիկիայի հայկական թագավորության անկումը արդարացիորեն դիտում էին որպես ընդհանրապես հայկական պետականության անկում: Մարտիրոս Ղրիմեցին՝ XVII դարի հայ ժամանակագիրը, Կիլիկիայի հայկական պետության անկման մասին

[1] Documents arméniens, t. II, p. 72.

[2] Նույն տեղում, էջ 76–78:

[1] Documents arméniens, t. II, p. 75.

[2] Նույն տեղում, էջ 79:

[3] Documents arméniens, t. I, p. 719.

գրում է. «Այս դառը բաժակը հայերն ըմպեցին հագարացի դաժան ժողովրդի մեղքով, և այստեղ ավարտվում է հայ թագավորական տների մասին իմ պատմությունը»[1]:

Կիլիկիայի հայկական պետության գոյության վերջին տարիների պատմությունը ցույց է տալիս, որ Կիլիկիայի հայ ավատական վերնախավը անկարող է եղել ապահովել երկրի պաշտպանությունը:

Այդ ժամանակաշրջանում թշնամիների դեմ մղվող մարտերում աչքի են ընկել ժողովրդից ելած շատ զորականներ: Քսան տարի թշնամիների դեմ արիաբար կռվել է զորապետ Լիպարիտը: Նրա մահից հետո քաջաբար կռվում և գյուղացիական ջոկատների պայքարն էր ղեկավարում Հեթումը՝ հասարակ ծագումով մի մարդ: Հեթումից հետո կիլիկեցիներին ղեկավարում էր նրա կին Զարմուհին[2]: Բայց համաժողովրդական պատերազմը կազմակերպված չէր: Առանձին հայրենասերների քաջությունը և սոսկ հայդուկային կռիվները չէին կարող երկիրը փրկել ընդհանուր անկումից: Այնուամենայնիվ պետք է նշել, որ նույնիսկ Սիսի անկումից հետո լեռնային մի քանի շրջանների բնակչությունը, առանձնապես Ուլնիայի (Զեյթուն), չարունակում էր դիմադրությունը:

Այսպիսով, Կիլիկիայի հայկական պետության XIV դարի ներքին և արտաքին պատմության լուսաբանումը ցույց է տալիս, որ նրա անկման ամենակարևոր պատճառներն են եղել՝ իշխանների կենտրոնասույս ձգտումները, մամլուքների ավերիչ ներխուժումները, գյուղացիների սնանկացումն ու աղքատացումը, առևտրի և արհեստների անկումը, Սիրիայի համար Հուլավյանների և մամլուք սուլթանների մրցակցությունը, պապական դիվանագիտության միջամտությունը Կիլիկյան Հայաստանի ու Եգիպտոսի սուլթանության փոխհարաբերություններին, խաչակրաց արշավանքների նախագծերը, որոնցում Կիլիկիային հատկացվում էր պլացդարմի դեր, և հայոց արքունիքի եվրոպական կործանարար կողմնորոշումը:

Լևոն Լուսինյանի հետագա բախտը Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, ընդհուպ մինչև մահը՝ 1393 թիվը (գերությունից ազատագրվելու առիթով նրա հարաբերությունները եվրոպայի հետ Կահիրեում եղած ժամանակ, ուղևորությունը Իսպանիա, Ֆրանսիա և Անգլիա, հանդիպումները և գրույցները այդ երկրների թագավորների հետ), որոշ հետաքրքրություն է ներկայացնում պետության վերականգնման ու Կիլիկիայում եվրոպական այս կամ այն

[1] Documents arméniens, t. I, p. 686.

[2] Տե՛ս **Ալիշան**, Սիսուան, էջ 227:

խոչոր պետության ազդեցության հաստատման կապակցությամբ եվրոպայի վերաբերմունքի տեսակետից: Եվրոպայի մի քանի թագավորների կողմից Լևոն Լուսինյանի նկատմամբ դրսևորված հետաքրքրությունը, անկասկած, քաղաքական-բնույթ ուներ:

Լուսինյանի կյանքի այդ տարիների պատմությունը լուսաբանող գլխավոր աղբյուրը նորից ու դարձյալ Ժան Դարդելն է, որը գործուն մասնակցություն է ունեցել նրա ազատագրմանը և նրան ուղեկցել է եվրոպայի արքունիքներում կատարած ուղևորության ժամանակ: Դարդելի վկայությամբ Սիսը հանձնելուց անմիջապես հետո Հալեպի էմիրը Լևոն VI-ին առաջարկել է կա՛մ բնակվել Կիլիկիայի ամրոցներից մեկում, կա՛մ մեկնել եվրոպա՝ Տարսոնից: Լևոնը խորհուրդ հարցնելու համար դիմել է հայ իշխաններից մի քանիսին: Նրանք խորհուրդ են տվել եվրոպա գնալու ցանկություն չհայտնել, քանի որ դա կարող է եգիպտոսի մեջ կասկածանք հարուցել, թե այդ որոշումը թելադրված է եվրոպայի թագավորներից օգնություն ստանալու ձգտումով և այդ պատճառով էլ նրան կարող են սպանել Տարսոն գնալու ճանապարհին, այլ ավելի լավ է գնալ Կահիրե՝ սուլթանի մոտ[1]: Լևոն VI-ը այդպես էլ վարվել է:

1375 թ. ապրիլի 22-ին Լևոն Լուսինյանը ընտանիքով, Կոստանդին IV-ի այրի Մարիան, Պողոս կաթողիկոսը և մոտ քսան հայ իշխաններ գերեվարվեցին: Մեկ շաբաթ անց գերիները հասան Հալեպ, որտեղ էմիրին հանդիսավոր դիմավորում էր կազմակերպված՝ խոշոր հաղթանակից հետո մեծամեծ գերիներով ու ռազմավարով նրա վերադարձի առթիվ: Հուլիսի 9-ին գերիները ժամանեցին Կահիրե, և երկու շաբաթ անց Լևոն Լուսինյանը կանգնեց սուլթանի առաջ, որն իրը ասաց նրան. «Հրաժարվի՛ր քո հավատից, դարձիր սարակինո՛ս, և մենք քեզ մեծ իշխան կդարձնենք»[2]: Լևոնը խնդրեց հաստատել պահպանագիրը, ինչը արվեց սահմանափակումով: Նրան արգելված էր Եվրոպա մեկնել: Նա պետք է բնակվեր Կահիրեում՝ էմիր Սեյֆ էդ դինի հսկողության տակ: Կահիրեի հայկական գաղութի խնդրանքով ու երաշխավորությամբ նա ազատվեց և ապահովվեց օրական 60 արծաթեի դրահմով[3]:

Լուսինյանին եվրոպա մեկնելն արգելված էր անկասկած նրա համար, որ եգիպտոսի սուլթան Աշրաֆը վախենում էր, որ նա նոր խաչակրաց արշավանքի դեպքում կարող է այնտեղից օգնություն ստանալ հայոց թագավորությունը վերականգնելու համար: Այն, որ այդ

[1] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 81:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 86:

[3] Նույն տեղում:

առումով կասկածանք եղել է, երևում է նրանից, որ երեք ամիս անց Լևոն Լուսինյանը նորից կանչվել է պալատ, որտեղ նրան ստիպել են ստորագրել պարտավորություն, թե ինքը երբեք Կահիրեից չի մեկնի և որ ինքը ցանկանում է առհավետ բնակվել այդ քաղաքում[1]:

Պողոս կաթողիկոսը և հայ իշխանները, տարեգրի ասելով, «սուլթանից թույլտվություն խնդրեցին վերադառնալ Սիս և ապրել նրա իշխանության տակ: Նրանց խնդրանքը բավարարվեց, և նրանք վերադարձան Կիլիկիա»[2]: Դա ցույց է տալիս, որ Կահիրեում չէին կասկածում Կիլիկիայում եգիպտոսի սուլթանության տիրապետության նկատմամբ նրանց լոյալության վրա:

Գնրվելուց անմիջապես հետո Լևոնը նամակ գրեց Կիպրոսի թագավոր Պիեռ II-ին, որպեսզի նա բարեխոսի սուլթանի մոտ իր ազատագրման համար: Կիպրոսից այդ նպատակով դեսպանները ուղարկվեցին Կահիրե, բայց նրանց բռնեցին Դամասկոսում և նետ ուղարկեցին՝ ասելով, թե հայոց թագավորը ցանկություն է հայտնել մշտապես ապրել Կահիրեում:

1377 թ. Երուսաղեմ գնալիս, Կահիրե ժամանեցին ուխտավորներ՝ ազնվականներ, քաղաքացիներ, վանականներ: Վերջիններիս թվում էր և Ժան Դարդելը, ծնունդով էստամպից (Ֆրանսիա): Նա այցելեց Լևոն Լուսինյանին, որը Դարդելին խնդրեց մնալ իր մոտ: Վանականը խոստացավ դա անել ուխտագնացությունից վերադառնալուց հետո և իր խոստումը կատարեց[3]: Ժան Դարդելը խոշոր դեր է կատարել Լևոն Լուսինյանի հետագա ճակատագրում: Նրա եռանդուն և անխոնջ միջնորդությունների շնորհիվ Լևոն VI-ն ստացավ ազատություն և Եվրոպա մեկնելու թույլտվություն: Դարդելն իր «Ժամանակագրություն»-ում բավականին լրիվ նկարագրել է բոլոր այն իրադարձությունները, որոնցում ինքը մասնակցություն է ունեցել: Նա գրել է նաև Կիլիկիայի հայկական թագավորության համառոտ պատմությունը մինչև 1341 թվականը, իսկ սկսած այդ տարվանից մինչև պետության անկումը՝ ավելի մանրամասն, գրի առնելով մեծ մասամբ Լևոն Լուսինյանի բերանից: Դարդելի վկայությամբ Լևոն VI-ը չատ անգամ է նամակ գրել պապին, Բյուզանդիայի կայսրին, Ֆրանսիայի թագավորին և այլ թագավորների՝ նրանց աղերսելով դեսպաններ ուղարկել Կահիրե՝ նվերներով, և սուլթանին խնդրել է իր ազատագրման մասին[4]:

[1] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 88:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 89:

[4] Նույն տեղում, էջ 92:

1377 թ. համարյա միաժամանակ Կահիրե ժամանեցին Նեապոլի թագուհի Ժաննայի և Բյուզանդիայի կայսր Հովհաննես V-ի դեսպանները, Լևոն VI-ի համար սրանց միջնորդությունները հաջողություն չունեցան[1]: Որոշ ժամանակ անց Ֆրանսուա Սակլոդան՝ Արագոնի թագավոր Պեդրո IV-ի դեսպանը, ժամանեց Կահիրե՝ մամլուքների կողմից արագոնցի վաճառականներից խլված ունեցվածքը նետ վերադարձնելու խնդրանքով: Իմանալով Լևոն Լուսինյանի ճակատագրի մասին՝ նա խնդրեց նաև ազատել նրան՝ վկայակոչելով իր թագավորի բանավոր խնդրանքը այդ մասին: Բայց նրան պատասխանեցին. «Թող թագավորը հատուկ դեսպան ուղարկի թագավորի ազատման խնդրանքով»[2]: Լևոն Լուսինյանն իմանալով այդ մասին՝ որոշեց Արագոնի թագավորի մոտ ուղարկել Ժան Դարդելին, հետը դնելով մի նամակ՝ կնքված իր ոսկե կնիքով ու գերբով և հանձնարարելով, որ բացասական պատասխանի դեպքում նա այցելի քրիստոնյա մյուս թագավորներին, խնդրի նրանց համագործակցություն[3]:

Պեդրո IV-ը Դարդելի միջոցով ստանալով Լևոն VI-ի նամակը՝ «երկար ժամանակ զլուխն ազատում էր դատարկ խոստումներով և ութ ամիս հետո նոր միայն նամակ տվեց նրան՝ ուղղված իր թագավորության եպիսկոպոսներին, որպեսզի նրանք եկեղեցական նվամուտների մի մասն առանձնացնեին հայոց թագավորին գերությունից փրկագնելու համար, բայց պրելատները դա մերժեցին»[4]:

Արագոնի թագավորը, ըստ երևույթին, որոշել էր բարեխոսել Լևոն VI-ի ազատագրման համար իր սեփական դեսպանի միջոցով՝ չըրջանցելով Դարդելին: Պահպանվել է Արագոնի թագավորի 1380 թ. սեպտեմբերի 3-ի նամակը՝ ուղղված եգիպտոսի սուլթանին, ի միջի այլոց, Պեդրո IV-ը գրում է, որ ինքը սուլթանի մոտ է ուղարկել Սակլոդա անունով բարսելոնցի մի վաճառականի՝ բարեխոսելու Լևոն թագավորի ու նրա ընտանիքի ազատագրման և այլ հարցերի վերաբերյալ և որ վաճառականին խոստացել են, որ թագավորին կազատեն՝ հանուն նրա նկատմամբ ունեցած սիրո ու հարգանքի, եթե հատուկ դեսպանություն ուղարկվի: Պեդրո IV-ը տեղեկացրել է, որ չուտով կժամանի հատուկ դեսպան Սապերան ու նվերներ կբերի[5]:

[1] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 93:

[2] Տե՛ս Նույն տեղում, էջ 95:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 96:

[4] Նույն տեղում:

[5] Տե՛ս **Կ. Բասմաջյան,** Լևոն Ե. Լուսինյան, էջ 60:

Այն ժամանակ, երբ Դարդելը ապարդյուն բարեխոսում էր Արագոնում, Լևոն VI-ի զինակիր ասպետ Սոխլեր Դյուլկարտը, երուսաղեմից Եվրոպա մեկնելով, դիմել է Կլեմենտ VII-ին, Կառլոս VI-ին և Ռիչարդ II-ին, բայց նա էլ հաջողություն չի ունեցել[1]:

Արագոնում անհաջողություն կրելով՝ Դարդելը մեկնեց Կաստիլիա: Բայց այստեղ էլ Դարդելին մոտ մեկ տարի չէր հաջողվում Խուան I-ից դեսպանություն կազմելու թույլտվություն ստանալ՝ Կահիրե տանելու համար: Թագավորը մե՛րթ զբաղված էր Աստուրիայի կոմսի ապստամբությունը ճնշելով, մե՛րթ Պորտուգալիայի թագավորի դեմ պատերազմելով: Վերջապես Խուան I-ը հրամայեց, որ Եգիպտոսի սուլթանի համար նվերներ պատրաստեն՝ արծաթե ոսկեջրած հիասքանչ մի աման, ոսկե թաս՝ կափարիչով, կարմիր մահուդի չորս կտոր, երեք հազար հատ կուղրի մորթի և չորս բազե[2]:

Խուան I-ի դեսպանները և Ժան Դարդելը մեկնեցին Եգիպտոս հայոց թագավորին ազատագրելու համար միջնորդելու և ճանապարհին ժամանեցին Բարսելոն, որտեղ նրանց միացավ Պեդրո IV-ի դեսպան Բոննանատ Սապերան: 1382 թ. սեպտեմբերին Կահիրե հասած Կաստիլիայի և Արագոնի դեսպանները Լևոն Լուսինյանին գտան միայնակ[3]: Նրա խորհրդով նվերները բաժանեցին երկու մասի. մեկ մասը սուլթան Սալըհ Սալահի համար, մյուսը՝ վեզիր Բարկուկի:

Դեսպաններին ընդունեցին պալատում: Կաստիլիայի թագավորի նամակը և նվերները իրենց ներգործությունն ունեցան: Բարկուկ վեզիրը սուլթանին խորհուրդ տվեց ազատ արձակել հայոց թագավորին: Ազատվելով գերությունից՝ Լևոն Լուսինյանը դեսպանների հետ հասավ Ալեքսանդրիա: Սակայն ազատություն տալով հայոց թագավորին, Կահիրեի պալատում այնուհետև ուչքի գալով՝ մտափոխվեցին, երկյուղելով, որ հայոց թագավորը կարող է Եվրոպայում վնաս հասցնել իրենց: Ալեքսանդրիայի քաղաքապետին հրաման տրվեց ամեն կերպ ձերբակալել նրան, բայց Լևոն Լուսինյանին ու նրա ուղեկիցներին հաջողվեց դուրս գալ նավահանգստից և հասնել Հոդոս: Լևոն Լուսինյանը որոշեց Հոդոսից մեկնել Արևմուտք՝ պապի և քրիստոնյա թագավորների մոտ, որ նրանցից աջակցություն խնդրեր իր իշխանությունը Կիլիկիայում վերականգնելու համար[4]:

[1] Տե՛ս **Կ. Բասմաջյան,** Լևոն Ե. Լուսինյան, էջ 63:

[2] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 99:

[3] Մինչ Դարդելը չարչարվում էր եվրոպայում, թագուհի Մարգարիտան ու դուստր Մարիան մահացան:

[4] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 103:

1382 թ. դեկտեմբերի 12-ին Լևոն Լուսինյանը ժամանեց Վենետիկ: Նա Վենետիկի սենատին խնդրեց, որ իրեն օգնեն Կիպրոսը ջնջովացիներից ետ գրավելու, բայց սենատը մերժեց նրա խնդրանքը: Լևոն Լուսինյանը Վենետիկից, Հռոմ չմտնելով, որտեղ նստած էր անտիպապը, ուղևորվեց դեպի Ավինիոն՝ Կլեմենտ VII պապի մոտ[1]: Պապը Լևոն VI-ին հանդիսավոր ընդունելություն ցույց տվեց: Պապի գումարած ժողովին Ժան Դարդելը մանրամասնորեն պատմեց «այն տանջանքների մասին, որ կրել էր հայոց թագավորը եգիպտական գերության մեջ»[2]: Կլեմենտ VII-ը, Դարդելի վկայությամբ, Լևոնին պարգևատրեց «Ոսկե վարդ»-ով[3]:

Մայիսի սկզբին Լևոն Լուսինյանը մեկնեց Արագոն՝ Արագոնի թագավորի մոտ, որտեղ նրա պատվին լավ ընդունելություն կազմակերպեցին: Այնուհետև հայոց թագավորը ուղևորվեց Կաստիլիա: 1383 թ. օգոստոսին Խուան I-ը Սեգովիայում հրավիրեց ազնվականության ժողով, որտեղ Լևոն Լուսինյանը պատմեց այն ամենը, ինչ եկել էր իր գլխին տասը տարում, այսինքն՝ սկսած Կիպրոսից Կիլիկիա մեկնելուց մինչև եգիպտական գերությունից ազատվելը, և Կաստիլիայի թագավորին խնդրեց օգնության ձեռք մեկնել, որպեսզի կարողանա վերականգնել իր թագավորությունը[4]: Խուան I թագավորը Լևոն Լուսինյանի խնդրանքին պատասխանեց, թե ինքը խաչակրաց արշավանքի կգնար դեպի Արևելք, եթե չրջապատված չլիներ թշնամիներով, և խոստացավ տալ 6 խոշոր թիանավ ու 6 նավ՝ բոլոր անհրաժեշտ բաներով, երբ նա գնալու լինի ետ գրավելու իր թագավորությունը: Կաստիլիայի թագավորը հայոց թագավորին նվիրեց Մադրիդ, Վիլյարեալ և Անդուխար քաղաքները, որոնք բերում էին 100000 արաբական դրահմա եկամուտ[5]: Այս նվիրատվությունների մասին Դարդելի վկայությունը հաստատվում է պաշտոնական փաստաթղթերով: Մադրիդի նվիրմանը վերաբերող և այդ քաղաքի արխիվից

[1] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 104:

[2] Նույն տեղում:

[3] Ընծայման այս փաստը հաստատվում է պաշտոնական փաստաթղթերով: Վատիկանի արձանագրությունների ցուցակում (մատյան 356, փաստաթուղթ 151) կա հետևյալ գրանցումը. «Այսօր փետրվարի 21-ի ծախսերի թվում գրանցված է ոսկերիչ Հովհաննես Բարտոլիին վճարված գումարը Ոսկե Վարդ պատրաստելու համար, որի վրա ծախսված է 1 մարկ 3 ունցիա 19 դրահմ ոսկի՝ 20 կարատի: Կիրակի օրը այս Վարդը հանձնվել է հայոց թագավորին»: Տե՛ս **Բասմաջյան Կ.,** Լևոն Ե. Լուսինյան, էջ 76:

[4] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 105:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 106–107:

Հանված արձանագրությունը հրապարակվել է «Historia de la villa y corte de Madrid»-ում և գետեղված է «Recueil des historiens des croisades. Documents arméniens»-ի առաջին հատորում:

Խուան թագավորի կամքը իրագործելու համար 1383 թ. հոկտեմբերի 12-ին Մադրիդի քաղաքային խորհուրդ է գումարվել, որը լիազորներ է ընտրել: Մադրիդի լիազորները գնացել են Լևոն Լուսինյանի մոտ և քաղաքացիների անունից նրան ճանաչել են որպես իրենց սեփական տեր: Նրանք նաև խնդրել են, որ նա պահպանի քաղաքի ազատությունն ու արտոնությունները[1]:

1384 թ. փետրվարին Լևոն Լուսինյանը Կաստիլիայից ուղևորվեց Նավարա, որտեղ նույնպես նվերներ մատուցեցին ու խոստացան, որ իր երկիրը ևս նվաճելիս նրան օգնության համար 200 զորական տան[2]:

Լավ ընդունելությունը, որ ցույց տվեցին Լևոն Լուսինյանին Իսպանիայում, նվերները և օգնության խոստումները բացատրվում են նրանով, որ Կաստիլիան և Արագոնը չահագրգռված էին Միջերկրական ծովում և Արևելքում քաղաքական ու առևտրական ազդեցության ընդլայնմամբ, իսկ Կիլիկիան այդ գործում կարող էր յուրատեսակ հենակետ լինել:

[1] Մադրիդի բնակիչները դժգոհ այն բանից, որ Խուան I-ը իրենց քաղաքը նվիրել է Լևոն Լուսինյանին և վախենալով, որ կսահմանափակվեն իրենց արտոնություններն ու ազատությունները, հոկտեմբերի 12-ին թագավորի մոտ պատգամավորություն են ուղարկել, որն արտահայտել է թագավորական քաղաքը օտարերկրացուն փոխանցելու անցանկալիությունը: Պահպանվել է Խուան I-ի նամակը Մադրիդի քաղաքացիների անունով, որի մեջ թագավորը գրում է. «Այս քաղաքի պատգամավորները մեզ հաղորդեցին, թե Մադրիդի փոխանցումը հայոց թագավորին վնասակար է քաղաքի համար և հակասում է այն արտոնություններին, որ չնորհված են իմ նախնիների և իմ կողմից, քանզի վերոհիշյալ քաղաքը պատկանել է թագավորական գահին, և խնդրեցին, որ Մադրիդը, ինչպես որ առաջ էր, գահին մնա: Մենք հավանություն ենք տալիս այս խնդրանքին և նշում ենք, որ այս քաղաքը մենք հայոց թագավորին փոխանցել ենք նրա համար, որ նա մեզ է դիմել օգնության խնդրանքով, քանի որ նա կորցրել է իր թագավորությունը՝ պաշտպանելով կաթոլիկական սուրբ հավատը, և մենք Մադրիդ քաղաքն իր եկամուտներով, հարկերով և իրավունքներով տվել ենք նրան, որպեսզի նրան ապահովենք մինչև կյանքի վերջը: Մեր ցանկությունն է, որ Լևոնի իրավունքը Մադրիդ քաղաքի նկատմամբ դադարի նրա մահվամբ: Մենք երդվում ենք, որ այս քաղաքը այնուհետև երբեք չի տրվի մեր երկրի կամ օտար երկրի որևէ մարդու»: (Documents arméniens, t. I, p. 741):

[2] Տե՛ս Documents arméniens, t. II, p. 107:

Այդ դարաշրջանում Արագոնի թագավորությունը, իր կազմում ունենալով Կատալոնիան, պայքարում էր Միջերկրական ծովում տիրապետության հասնելու համար: Պայքարն սկսելով XIII դարի վերջից՝ Արագոնյան տունը 1302 թ. ավելի ամուր հաստատվեց Սիցիլիայում, իսկ մի քիչ ավելի հետո՝ Սարդինիայում: Այդ բանում չահագրգռված էին գլխավորապես կատալոնյան քաղաքները, որոնք գործուն մասնակցություն էին ունենում միջերկրածովյան առևտրում: Ինչպես հայտնի է, կատալոնյան քաղաքները և Սիցիլիան առևտրական կապեր ունեին Կիլիկիայի հայկական թագավորության հետ: Հայտնի է նաև, որ XIV դարում Աթենքը 60 տարի եղել է Կատալոնա-Արագոնական իշխանապետության կենտրոնը: XIII դարի վերջում և XIV դարում իսպանացիները մասնակցում էին Բյուզանդիայի տարածքում մղվող պատերազմներին՝ Բալկանյան թերակղզում և Փոքր Ասիայում[1]:

Միջերկրական ծովում ունեցած նման չահերով կարելի է բացատրել Արագոնի և Կաստիլիայի չահագրգիռ մասնակցությունը Լևոն VI-ի ճակատագրին: Բարենպաստ իրադրության դեպքում այդ պետությունները դեմ չէին լինի մասնակցել դեպի Արևելք կատարվող խաչակրաց արշավանքին, որպեսզի տարածեին իրենց ազդեցությունը Կիլիկիայում: Բայց այդպիսի հնարավորություն չստեղծվեց: Կաստիլիայի թագավորներ Պեդրո Դաժանի (1350–1369), Էնրիկե II-ի (1369–1379), Խուան I-ի (1379–1390) և Արագոնի թագավոր Պեդրո IV-ի (1336–1387) ժամանակներում Կաստիլիան, Արագոնը և Պորտուգալիան համարյա անընդհատ կռվում էին միմյանց դեմ: Երբեմն նրանց պայքարին խառնվում էին Գրանադայի արաբները, ինչպես և անգլիացիներն ու ֆրանսիացիները: Լևոն Լուսինյանի՝ Իսպանիա գալու ժամանակ, ինչպես նախընթաց, այնպես էլ հաջորդ տարիներին այնտեղ խարդավանքներ էին նյութվում և պայքար էր գնում պորտուգալական գահին տիրելու համար: Բացի այդ, սրվել էին թագավորական իշխանության և գրանդների ու քաղաքների հարաբերությունները: Ուստի Արագոնի թագավոր Պեդրո IV-ը և Կաստիլիայի թագավոր Խուան I-ը չէին կարող զբաղվել Արևելքի գործերով և, մասնավորապես, Կիլիկիայի, որը կարող էր նրանց հետաքրքրել արևելյան երկրներ թափանցելու տեսակետից: Բայց և այնպես նրանք չէին հրաժարվում մասնակիորեն օգնել Լևոն Լուսինյանին, ըստ երևույթին, ի նկատի ունենալով հետագայում օգտագործել նրան իրենց նվաճողական ծրագրերի իրագործման համար:

[1] Մանրամասնությունները տե՛ս **Ф. Успенский,** История Византийской империи, с. 670–682. **Альтамира,** История Испании, М., 1951, с. 260:

Իսպանիայից Լևոն Լուսինյանը նորից Ավինիոն եկավ և այստեղից 1384 թ. հունիսի 30-ին մեկնեց Փարիզ[1]: Ի պատիվ Լևոն Լուսինյանի՝ նրա Փարիզ գալուց քիչ անց Լուվրում հանդիսավոր ճաշկերույթ տրվեց, որին մասնակցում էին ֆրանսիական ազնվականության ներկայացուցիչները: Լևոն VI-ի բնակության համար առաջարկվեց Փարիզի մոտերքում մի թագավորական պալատ՝ Սեն-Օուենը: Լևոն Լուսինյանը Փարիզում ապրել է մինչև իր մահը (1393): Պահպանված փաստաթղթերի համաձայն Ֆրանսիայի թագավորը կարգադրել է Լևոն Լուսինյանին տալ տարեկան 6000 ֆրանկ, և նա ինը տարի ստացել է հիշյալ գումարը: Պահպանվել են Լևոն Լուսինյանի կողմից յուրաքանչյուր ամիս ստացված 500 ֆրանկի ստացականները[2]:

Ինչո՞վ է բացատրվում Լևոն Լուսինյանի նկատմամբ այդպիսի ուշադրությունն ու առատաձեռնությունը Ֆրանսիայի թագավորի կողմից: Հայտնի է, որ Ֆրանսիայի թագավորները, մանավանդ Լյուդովիկոս IX-ը և Ֆիլիպ VI-ը, մեծ հետաքրքրություն են ցուցաբերել խաչակրաց արշավանքների, Արևելքի նկատմամբ, իսկ Ֆիլիպ VI-ը՝ մասնավորապես Կիլիկիայի թագավորության նկատմամբ: Այդ հետաքրքրությունը, ինչպես երևում է, լրիվ չմարեց Կառլոս VI-ի ժամանակ, թեև Ֆրանսիայի ներքին զարգացման և Հարյուրամյա պատերազմի պատճառով արդեն փաստորեն պայմաններ չկային դեպի Արևելք կատարելիք նոր արշավանքի համար: Այդ հետաքրքրությամբ, այնուամենայնիվ, կարելի է բացատրել այն վերաբերմունքը Լևոն Լուսինյանի նկատմամբ, որին նա հանդիպեց Փարիզում, որտեղ, ինչպես երևում էր հույս ուներ, թե դեռևս կստեղծվի բարենպաստ իրադրություն Արևելք կատարելիք խաչակրաց արշավանքի համար: Հօգուտ այս դրույթի բերենք Ֆրուասարից հետևյալ քաղվածքը. «Ֆրանսիայի թագավորը, ինչպես և նրա արքունիքի երևելի ավատատերերը, երկար զրույցներ ունեցան Հայաստանի թագավորի հետ, որից հետո Ֆրանսիայի թագավորն ասաց. «Մենք, անկասկած, ցանկանում ենք, որ Հայաստանի թագավորը, որն այդքան հեռվից եկել է

[1] Ըստ Դարդելի «նրան դիմավորելու եկավ Ֆրանսիայի Կառլոս թագավորը՝ արքայազունների, դուքսերի, կոմսերի, բարոնների, ասպետների, կարդինալների, եպիսկոպոսների և բազմաթիվ այլ ազնվականների ու հասարակ ժողովրդի ուղեկցությամբ, եվ ամենքը զարմացան, որ թագավորը մայրաքաղաքից դուրս եկավ հայոց թագավորին դիմավորելու համար» (Documents arméniens, t. II, p. 108): Դա հաստատվում է նաև Սեն-Դենիի տարեգրության մեջ (Chronigue du religieuse de Saint Dengs, publiée par Beluguet, collection des docum. inédits sur l'hist. de France, P., 1839–1890, t. I, p. 324):

[2] Տե՛ս **Կ. Բասմաջյան,** Լևոն Ե. Լուսինյան, էջ 108:

մեզ այցելության... սիրո ու բարյացակամության հանդիպելու հույսով, մեզնից ստանալ անհրաժեշտ օգնություն ու մխիթարություն, որպեսզի նրա երկիրն ազատ լինի և բարեկարգ, ինչպես վայել է նրան, ով թագավոր է, ինչպես որ մենք: Եվ երբ հնարավորություն կստեղծվի, մենք կօգնենք նրան՝ ուղարկելով զինված ուժեր, որպեսզի նա ետ ստանա իր ժառանգությունը: Մենք դա անկեղծորեն ուզում ենք անել, քանզի մենք պարտավոր ենք աջակցություն ցույց տալ քրիստոնեական հավատին»[1]:

Այստեղ տեղին է նկատել, որ հաջորդ դարերում էլ ֆրանսիական դիվանագիտությունը անգլիական դիվանագիտության հետ միասին շատ անգամ են գեղեցիկ խոսքեր ասել Կիլիկիայի և Հայաստանի հայերի հասցեին՝ իբրև թե ի պաշտպանություն նրանց, սակայն դա հայ ժողովրդին միայն մեծագույն վնաս է բերել: Կառլոս VI-ի կողմից Լևոն Լուսինյանի նկատմամբ ցուցաբերված լավ ընդունելությունը բացատրվում է ոչ թե Կիլիկիայի հայերին օգնելու Ֆրանսիայի թագավորի ցանկությամբ, այլ նրանով, որ Լևոնը ֆրանսիական արքունիքի առաջ կանգնած էր որպես Կիլիկյան Հայաստանի թագավոր, որը ծագումով ֆրանսիացի էր, հետևում էր արևմտյան կողմնորոշման և անհրաժեշտության դեպքում կարող էր օգտագործվել Ֆրանսիայի քաղաքական նպատակների համար Արևելքում: Լևոն Լուսինյանը չի եղել և չէր կարող լինել Կիլիկիայի հայ բնակչության շահերի ներկայացուցիչը:

Ըստ ժամանակագիր Սեն-Դենիի հաղորդման, 1385 թ. վերջին Լևոն Լուսինյանը, որպես Ֆրանսիայի թագավոր Կառլոս VI-ի դեսպան, ժամանել է Լոնդոն և ընդունվել Անգլիայի թագավոր Ռիչարդ II-ի կողմից: Լևոն Լուսինյանը վեստմինստերում ճառով հանդես եկել Անգլիայի թագավորի, նրա խորհրդականների ու պալատականների առջև՝ առաջարկելով դադարեցնել Հարյուրամյա պատերազմը և կայուն խաղաղություն հաստատել[2]: Ի պատասխան՝ Ռիչարդ II-ը պահանջել է կատարել այն դաշինքի պայմանները, որ իր հայրն է կնքած եղել: Պահպանվել են փաստաթղթեր, որոնցից երևում է, որ Ռիչարդ II-ը որոշել է Լևոն VI-ին տալ տարեկան հազար ֆունտ, մինչև որ նա վերականգնի իր թագավորությունը:

[1] Ouveres de Froissart, publ, par Kervyn de Lettenhove, Chronigues, t. XI (1383–1886), Br., 1870, p. 248.

[2] Լևոն Լուսինյանն իր ճառում անգլիացիներին հանդիմանել է, որ նրանք փոխանակ դենքն ուղղելու Արևելքի իրենց թշնամիների դեմ, երկպառակտչական և ավերիչ պատերազմ են մղում, և երկու թշնամական կողմերին կոչ է արել հաշտություն կնքել:

XIII–XIV դարերում Կիլիկիայի ու կիլիկեցի հայերի նկատմամբ Անգլիայի ու Ֆրանսիայի վերաբերմունքի մեջ յուրատեսակ սաղմեր ու տարրեր կան XIX–XX դարերում Հայկական հարցի նկատմամբ այդ տերությունների արած քաղաքականության:

* * *

Մի քանի խոսք Կիլիկիայի հայերի հետագա ճակատագրի մասին: Կիլիկիայի Հայկական պետության անկումից հետո Կիլիկիան ընկնում է Թուրքիայի իշխանության տակ: Երկար ժամանակ Կիլիկիան փաստորեն կառավարում էին թուրքական քոչվոր ցեղերի, նահապետական տոհմերի առաջնորդները: Կիլիկիայի հայերը դարերով կրել են թուրքական ավատատերերի ու փաշաների բռնապետության ամբողջ ծանրությունը: Կիլիկիայի, ինչպես և Հայաստանի հայերը, թուրք սուլթանների իշխանության տակ գտնվող սլավոնների և այլ ժողովուրդների նման, թուրք ավատատերերի կողմից ենթարկվել են դաժան չահագործման և թուրքական կառավարչության կողմից՝ քաղաքական ճնշման: Բայց Լեռնային Կիլիկիայի մարզերից մեկը՝ Զեյթունը, Զեռնոգորիայի նման, համարյա միշտ պահպանել է իր անկախությունը կամ կիսանկախությունը:

XIX դարի երկրորդ կեսին թուրքական բռնակալության դեմ մղվող ազգային-ազատագրական պատերազմում Կիլիկիայի հայերն զբաղեցնում էին ոչ վերջին տեղը: Հենց այստեղ՝ Զեյթունում, XIX դարում սկսվեց հայերի ապստամբությունների մի ժամանակաշրջան ընդդեմ թուրքական լծի: Թուրքիան չատ անգամ է փորձել ոչնչացնել Զեյթունի համարյա անկախ վիճակը: Թուրքական զորքերը, որոնք ուղարկվում էին քաջարի զեյթունցիների ապստամբությունը ճնշելու, չատ անգամ են պարտություն կրել, հատկապես խոշոր է եղել զեյթունցի հայերի 1862 թ. ապստամբությունը, երբ նա է մղվել թուրքական զորքի հարձակումը Զեյթունի վրա:

Ֆրանսիան հաճախ էր միջամտում Թուրքիայի դեմ Կիլիկիայի հայերի ազատագրական պայքարին՝ նպատակ ունենալով այդ պայքարն օգտագործել իր քաղաքական ազդեցությունը Կիլիկիայում հաստատելու համար: Անգլիական կառավարությունը սովորաբար թշնամական դիրք էր բռնում կիլիկեցի հայերի ազատագրական պայքարի նկատմամբ:

Հայտնի է, որ Անգլիան ու Ֆրանսիան միչտ քաղաքականորեն հակադիր նպատակներով են մոտեցել Թուրքերի դեմ հայերի ազգային-ազատագրական չարժմանը, չատ են նպաստել դրա անհաջողությանը և մեղավոր են այն կոտորածների համար, որ Թուրքիան արել է XIX դարի 90-ական թվականներին ու Առաջին համաչխարհային պատերազմի ժամանակ, որի զոհն են դարձել հարյուրհազարավոր հայեր:

Առաջին համաչխարհային պատերազմի ժամանակ Թուրքերը ոչնչացրել են տասնյակ-հազարավոր կիլիկեցի հայերի, բայց և այնպես պատերազմից հետո էլ Կիլիկիայում եղել են մոտ 170000 հայեր, որոնք ապարդյուն ձգտում էին հասնել Եվրոպայի կողմից իրենց անկախ գոյության ճանաչմանը: Հակառակ կիլիկեցի հայերի բողոքներին՝ Ֆրանսիան Անկարայի 1921 թ. հոկտեմբերի 20-ի դաչնագրով Կիլիկիան հանձնեց Թուրքիային: Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի իմպերիալիստական քաղաքականության Հետևանքով Առաջին համաչխարհային պատերազմի ժամանակ և հետո Թուրքական կառավարությունը կատարեց նոր արյունոտ ոճրագործություններ Կիլիկիայի հայերի նկատմամբ: Հայերն ստիպված եղան խիղախ պայքարից հետո թողնել Կիլիկիան և տեղափոխվել Սիրիա ու այլ երկրներ:

1946–1948 թթ. արտասահմանի հայերի մի մասը աչխարհի տարբեր երկրներից հնարավորություն ստացավ գալ Հայկական ՍՍՀ: Նրանց հետ հարազատ Հայաստան եկան նաև բազմահազար կիլիկեցի հայեր:

* * *

Վերջում նչենք Կիլիկիայի հայկական թագավորության պատմության նչանակությունն ու կարևոր կողմերը: Այդ պետության պատմությունը կապված է Եվրոպայի և Ասիայի չատ երկրների պատմության հետ, գլխավորապես Միջերկրական և Սև ծովերի ավազանների երկրների, և դրա ուսումնասիրումը քիչ նչանակություն չունի պատմագիտության համար: Կիլիկիայի հայկական պետության պատմությունը հաստատուն տեղ է գրավում համաչխարհային պատմության, ԽՍՀՄ ժողովուրդների պատմության, ամենից առաջ հայ ժողովրդի պատմության մեջ՝ քաղաքական, տնտեսական ու մչակութային փոխադարձ կապերով միահյուսվելով ինչպես հարևան, այնպես էլ հեռավոր երկրների պատմության հետ:

Կիլիկիայի հայկական պետության երեքհարյուրամյա գոյությունը այն ժամանակաշրջանում, երբ իրենց բնիկ հողում հայերը զրկված էին պետականությունից, հայ ժողովրդի քաղաքական անկախության համառ ձգտման և նրա ստեղծարար գործունեության լավագույն ապացույցն է:

Արևելքի և Արևմուտքի նվաճողների դեմ կիլիկեցի հայերի երեքհարյուրամյա պայքարը հանուն գոյության ու իրենց պետության անկախության և այդ ժամանակաշրջանում նրանց կողմից ստեղծված մշակութային արժեքները կրկին անգամ վկայում են հայ ժողովրդի ստեղծագործական ուժերի մասին, որն իր ձեռքին աներեր բռնած է եղել բազմադարյան պայքարի դրոշը՝ ընդդեմ պարթևների, պարսիկների, Հռոմի, Բյուզանդիայի, արաբների, սելջուկների, Իրանի ու Թուրքիայի: Այս առումով Կիլիկիայի հայկական պետության պատմությունը, լինելով հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասը, չատ նմանություններ ունի բուն Հայաստանի պատմության հետ:

Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը հայ ժողովրդի բազմադարյան պատմության կարևոր ու բովանդակալից էջերից մեկն է:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Տարեթվեր	Իրադարձություններ
Մ. թ. ա. XIV դարի վերջից մինչև XIII դարի սկիզբը	Եգիպտոսի փարավոնների և խեթական թագավորների պատերազմները Կիլիկիային և Հյուսիսային Սիրիային տիրելու համար
Առաջին հազարամյակի սկիզբ	Հույների կողմից քաղաքների հիմնադրում Կիլիկիայում (Տարսոն, Մոպսուեստիա)
859–825	Սալամանասարի արշավանքը Կիլիկիա: Այնտեղից ոսկու, արծաթի, անասունների և մայրու անտառանյութի դուրս հանումը
Մ. թ. ա. VII դար	Կիլիկեցիների մասնակցությունը Ասորիքի և Փյունիկիայի քաղաքների պայքարին ասորեստանցի նվաճողների դեմ
547–546	Կիլիկիայի մասնակցությունը Կյուրոսի դեպի Լիդիա կատարած արշավանքին
Մ. թ. ա. V–IV դդ.	Կիլիկիան պարսկական միապետության կազմում
Մ. թ. ա. 333 թ.	Ալեքսանդր Մակեդոնացու հաղթանակը Իսսոսի մոտ
Մ. թ. ա. 321 թ.	Փոքր Հայքի (Անի-Կամախ մայրաքաղաքով) անկախության հռչակումը
Մ. թ. ա. 301 թ.	Կիլիկիան Սելևկյանների պետության կազմում
Մ. թ. ա. III–II դդ.	Կիլիկիայի մասնակցությունը միջազգային առևտրում: Հելլենիստական մշակույթի զարգացումը Կիլիկիայի քաղաքներում
Մ. թ. ա. 102 թ.	Լեռնային Կիլիկիայի գրավումը Հռոմի կողմից
Մ. թ. ա. 83–82 թթ.	Սիրիայի և Դաչտային Կիլիկիայի նվաճումը Տիգրան II-ի կողմից
Մ. թ. ա. 67 թ.	Կիլիկիան հռոմեական պրովինցիա
մինչև մ. թ. 395 թ.	
IV–V դդ.	Հայ բնակչության մեծացումը Փոքր Հայքում
V-ից VIII դ. սկիզբ	Կիլիկիան Բյուզանդիայի իշխանության ներքո
V դարի առաջին քառորդ	Պարսկաստանի պայքարը Բյուզանդիայի դեմ՝ Պաղեստինի, Սիրիայի և Կիլիկիայի համար
VII դարի սկիզբ	Սոցիալական պայքարը և հակաբյուզանդական չարժումը Կիլիկիայի քաղաքներում
611–628	Պատերազմներ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև
648	Արաբների առաջին ներխուժումը Կիլիկիա
712	Դաչտային Կիլիկիայի նվաճումը արաբների կողմից

VII–X դարեր	Պայքար Բյուզանդիայի և արաբների միջև Դաշտային Կիլիկիայի համար
VII–X դարեր	Հայերի արտագաղթը Փոքր Ասիա, Կիլիկիա և Սիրիա
963–975	Բյուզանդիայի կողմից Դաշտային Կիլիկիայի և Հյուսիսային Սիրիայի ետ նվաճումը արաբներից՝ հայերի մասնակցությամբ
974	Բյուզանդիայի կողմից Տարոնի հայկական իշխանապետության զավթումը
975	Անիի թագավոր Աշոտ III-ի մասնակցությունը դեպի Սիրիա Հովհաննես Ձմշկիկի արշավանքին
1000–1001	Դավիթ Կուրապաղատի մահը և Տայքի (Տաո) զավթումը Վասիլ II-ի կողմից
1021–1065	Բյուզանդիայի կողմից Վասպուրականի, Անիի և Կարսի թագավորությունների զավթումը
1048–1071	Սելջուկ-թուրքերի կործանիչ արշավանքները Հայաստան
XI դ.	Հայերի զանգվածային արտագաղթը դեպի Փոքր Ասիա, Միջագետք, Սիրիա և Կիլիկիա
1021–1081	Արծրունիների ու Բագրատունիների հայկական իշխանապետությունները Կապադովկիայում
1042–1080	Ապլղարիպ Արծրունին (որպես բյուզանդական փոխարքա) Դաշտային Կիլիկիայի կառավարիչ
XI դ. 70–80-ական թվականներ	Փիլարտոս Վարաժնունու կողմից Սասունից մինչև Անտիոք (Հյուսիսային Միջագետք, Կոմագենե, Կիլիկիա, Հյուսիսային Սիրիա) առավելապես հայաբնակ տարածքների գրավումը
1080	Կիլիկիայի հայկական իշխանապետության առաջացումը
1097–1117	Խաչակիրների կողմից Միջագետքի ու Սիրիայի հայկական իշխանապետությունների գրավումը
1110–1137	Դաշտային Կիլիկիայի ներառումը Ռուբինյանների տիրույթների սահմաններում
XII դ. սկիզբ	Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» 957–1137 թթ. ժամանակաշրջանի մասին
1037–1143	Հովհան Կոմնենոսի արշավանքները Կիլիկիա
1144	Եդեսիայի իշխանապետության անկումը
1146	Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի ստեղծումը
1145–1169	Թորոս II-ի պայքարը Բյուզանդիայի դեմ: Մանուիլ Կոմնենոսի անհաջող արշավանքը Կիլիկիա ու Սիրիա: Կիլիկիայի հայկական իշխանապետության ուժեղացումը
1149	Հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Հռոմկլա
1165–1179	Բանակցություններ Հայոց և Հունական եկեղեցիների մերձեցման մասին
XII դ.	Հերետիկոսության տարածումը Միջագետքի, Սիրիայի և Կիլիկիայի հայերի մեջ
1173–1182	Բյուզանդիայի ռազմական անհաջողությունները Կիլիկիայում: Բյուզանդացիների կողմից Տարսոնը լքելը
1194	Կիլիկիային տիրելու համար սելջուկների, խաչակիրների, բյուզանդացիների ու հայերի միջև մղվող դարավոր պայքարի ավարտը: Ամբողջ Կիլիկիայի միավորումը Լևոն II Ռուբինյանի իշխանության տակ
X–XIII դդ.	Խոշոր հողատիրության և ավատական հարաբերությունների հետագա զարգացումը Կիլիկիայում
XII–XIII դդ.	Կիլիկիայի և Հայաստանի հայերի սերտ կապերը: Կիլիկիայում հայկական մշակույթի, գրչության ու ղպրության նոր կենտրոնների առաջացումը: Հայ գրականության արժեքավոր երկերի ստեղծումը: Հայ մանրանկարչության ծաղկումը Կիլիկիայում
XII դ. վերջից մինչև XIII դ. սկիզբ	Կիլիկիայի հայկական պետության սահմանների ընդլայնումը
1190	Լևոն II-ի և Ֆրիդրիխ I Շիկամորուսի փոխհարաբերությունները
1198	Լևոն II-ի կողմից թագավորական տիտղոսի ընդունումը
1201–1216	Առևտրական պայմանագրերի կնքումը Վենետիկի և Ջենովայի հետ
1203–1216	Լևոն II-ի պայքարը Բոհեմունդ IV-ի դեմ՝ Անտիոքի իշխանապետությանը տիրելու համար
XII դ. վերջից մինչև XIII դ. սկիզբ	Հայերի ու վրացիների հաջող պայքարը ընդդեմ սելջուկ-թուրքերի և Հայաստանի նշանակալի տարածքի ազատագրումը
XIII դ. սկիզբ	Կիլիկյան Հայաստանի պատերազմները Իկոնյան սուլթանության դեմ
1208	Ամիրապասալար Զաքարեի դեսպանությունը Լևոն II-ի մոտ
XII դ. վերջից մինչև XIII դ. սկիզբը	Ավատական չհաղորդման քննադատությունը Վարդան Այգեկցու երկերում
1226	Հեթումյանների՝ իշխանության գլուխ անցնելը
1230	Հեթումի զորքերի մասնակցությունը Խլաթի ճակատամարտին, որն ավարտվեց Ջելալ էդ դինի պարտությամբ

1235–1243 Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից
Հայերի մասնակի արտագաղթը դեպի Կիլիկիա

1243 Փոքր Ասիայի Սելջուկյանների պետության զորքերի պարտությունը Քյոսադաղի մոտ

1244 Հեթումի ենթարկվելը մոնղոլներին

1245–1250 Կիլիկյան Հայաստանի պատերազմները Ռումի սելջուկների և նրանց դաշնակից Կոստանդին Լամբրոնացու դեմ

1253–1256 Հեթում Թագավորի ուղևորությունը Ղարաղորում՝ Մանգու խանի մոտ, Հայաստանում արված կանգառով

1258 Բաղդադի խալիֆայության կործանումը Հուլավու խանի կողմից

1259–1260 Կիլիկյան Հայաստանի զորքերի մասնակցությունը Հուլավու խանի կողմից Սիրիա կատարվող արշավանքներին

1257–1263 Կիլիկյան Հայաստանի հաջող պատերազմները Ռումի սելջուկների դեմ

1263–1265 Կիլիկյան Հայաստանի և խաչակիրների զորքերի համատեղ պայքարը ընդդեմ Եգիպտոսի սուլթանության

1264 Հեթում I-ի եղբայր պատմիչ Սմբատը կազմեց իր «Դատաստանագիրքը»

1266 Մառիի ճակատամարտը և մամլուքների ներխուժումը Կիլիկիա

1268 Անտիոքի իշխանապետության անկումը: Եգիպտոսի հետ Հեթումի հաշտություն կնքելը

1270 VIII խաչակրաց արշավանքի անհաջողությունը

1275–1276 Բեյբարսի զորքերի ներխուժումը Կիլիկիա

1277 Բեյբարսի արշավանքը Փոքր Ասիա և Կեսարիայի կողոպուտը

1280 Կիլիկյան Հայաստանի զորքերի մասնակցությունը դեպի Սիրիա Աբաղա խանի արշավանքին

1282–1285 Իլխան Ահմեդի բարեկամական հարաբերությունները Եգիպտոսի հետ

1285 Կիլիկյան Հայաստանի հաշտության պայմանագրի կնքումը Եգիպտոսի սուլթանության հետ

1285–1290 Պապության, Անգլիայի ու Ֆրանսիայի հետ Եգիպտոսի սուլթանության դեմ համատեղ գործողություններ կատարելու մասին Արղունի բանակցությունները՝ Սիրիան ու Պաղեստինը գրավելու նպատակով

1291 Ակրայի անկումը

1292 Մամլուքների կողմից Հռոմկլայի գավթումը

XIII դարի երկրորդ կեսից մինչև XIV դարի առաջին կեսը Կիլիկյան Հայաստանի դերի բարձրացումը միջազգային առևտրում

1295 Հեթում II-ի ուղևորությունը Թավրիզ և Ղազան խանի հրամանագիրը քրիստոնյաների հալածանքը դադարեցնելու մասին

1296–1299 Լևոն III-ի որդիների երկպառակտչական պայքարը թագավորական իշխանության համար և մամլուքների ավերիչ ներխուժումները Կիլիկիա

1299–1303 Կիլիկյան Հայաստանի զորքերի մասնակցությունը Ղազան խանի դեպի Սիրիա կատարած արշավանքներին

1305 Եգիպտոսի սուլթանության զորքերի խոշոր պարտությունը Այասի ճակատամարտում

1305–1307 Օլջեյթուի բանակցությունները Ֆրանսիայի և Անգլիայի հետ՝ մոնղոլների ու խաչակիրների միացյալ ուժերով Սիրիայի ու Պաղեստինի նվաճման մասին

1307 Լևոն IV թագավորի, նրա հորեղբայր Հեթումի ու մոտ քառասուն հայ իշխանների սպանությունը Անարզաբայում մոնղոլ զորապետ Բիլարղուի ձեռքով

1316 Ադանայի եկեղեցաժողովը որոշում ընդունեց Հռոմի հետ ունիայի վերաբերյալ

1316 Կիլիկեցի հայերի հուզումներն ու բողոքները թագավորական արքունիքի ու բարձր կղերականության կողմից Ադանայի ժողովի որոշումը կենսագործելու փորձի կապակցությամբ

1321 Եգիպտոսի սուլթանության և Կարամանիայի թուրքմենների զորքերի միաժամանակյա հարձակումը Կիլիկիայի վրա: Երկրի և առանձնապես Այասի նավահանգստի կողոպտումը

1323 Եգիպտոսի սուլթանության հետ հաշտության կնքումը Աբու Սաիդի միջնորդությամբ

1329 Լևոն V-ի կողմից իր խնամակալ ու պետության գահակալ Օշինին մահապատժի ենթարկելը

1332–1341 Պապության հետ Լևոն V-ի բանակցությունները եկեղեցիների միավորման և Կիլիկյան Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու վերաբերյալ

1335–1336 Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ VI-ի կողմից դեպի Արևվելք խաչակրաց արշավանքի նախապատրաստությունը

1335–1336 Եգիպտական զորքերի ներխուժումը Կիլիկիա

1337 Այաս նավահանգստի և մինչև Պիռամոս (Ջեյհան) գետը երկրի տարածքի զիջումը Եգիպտոսի սուլթանությանը: Կիլիկյան Հայաստանի անկման սկիզբը

1342 Հեթումյանների դինաստիայի վախճանը (Լևոն V-ի մահվամբ): Ջիվան (Կոստանդին) Լուսինյանը իշխանության գլուխ

1343–1345 Գվիդոն (Գի) Լուսինյանը (մայրական կողմից՝ Հեթումյան) իշխանության գլուխ: Մամլուքների ու թուրքմենների ներխուժումը Կիլիկիա

1345 Գվիդոն Լուսինյանի սպանությունը և Կոստանդին IV-ի կողմից իշխանության գլուխ անցնելը

1347–1361 Հայոց Եկեղեցին պապական աթոռին ենթարկելու և Կիլիկիայում կաթոլիկություն տարածելու պապության անհաջող փորձերը

1346–1347 Փոփոխական հաջողությամբ պատերազմներ Եգիպտոսի սուլթանության դեմ

1360 Եգիպտական զորքերի կողմից Ադանայի ու Տարսոնի զավթումը և Կոռիկոսը Կիպրոսի թագավորին անցնելը

1361 Սիսի եկեղեցական ժողովը դատապարտեց ունիան և նախորդ ժողովներում կրոնական հարցերում արված զիջումները պապությանը

1359–1369 Կիպրոսի թագավոր Պիեռ I-ի՝ դեպի Արևելք եվրոպական պետությունների խաչակրաց արշավանք կազմակերպելու ծրագրերը: Նրա պատերազմները Եգիպտոսի սուլթանության դեմ և Կիլիկյան Հայաստանի գահին տիրելու ձգտումը

1365 Կոստանդին V-ի գահ բարձրանալը

1369 Կոստանդին IV-ի այրի Մարիայի դեսպանությունը պապի մոտ, Նեապոլ ու Վենետիկ

1369 Հալեպի և Տարսոնի էմիրների հարձակումը Սիսի վրա: Սպարապետ Լիպարիտի հերոսական մահը

1373 Կոստանդին V-ի սպանությունը ֆրանկասեր իշխանների ձեռքով

1374–1375 Լևոն Լուսինյանը իշխանության գլուխ

1375 հունվար–ապրիլ Սիսի պաշարումը Եգիպտոսի սուլթանության զորքերի կողմից

1375 Կիլիկիայի հայկական պետության անկումը

1375–1382 Լևոն Լուսինյանը գերության մեջ, Կահիրեում

1382–1384 Լևոն Լուսինյանի ազատումը գերությունից և նրա ուղևորությունը Ավինիոն, Կաստիլիա, Արագոն և Ֆրանսիա

1383 Կաստիլիայի թագավոր Խուան I-ը Լևոն Լուսինյանին նվիրում է Մադրիդը որպես ցմահ տիրույթ

1385–1386 Լևոն Լուսինյանի ուղևորությունը Լոնդոն որպես Ֆրանսիայի դեսպան՝ խաղաղության բանակցություններ վարելու համար

1393 Լևոն Լուսինյանի մահը Փարիզում

1376–1424 Հայ իշխան Կոստանդինը կառավարում է Լեռնային Կիլիկիան, ըստ երևույթին, որպես Եգիպտոսի սուլթանության վասալ (Սամուել Անեցու «Ժամանակագրությունը»)

1404 Ռամազանի հարձակումը Սիսի վրա և բնակիչների մի մասի արտագաղթը դեպի Կիպրոս

1441 Եկեղեցական կենտրոնի տեղափոխումը Սիսից Էջմիածին: Սիսի կաթողիկոսները մնում են որպես Կիլիկիայի ու հարևան երկրների հայերի հոգևոր առաջնորդներ՝ ենթարկվելով «ամենայն հայոց կաթողիկոսին», որի աթոռանիստը դարձել էր Էջմիածինը

XV դ. Պարսկաստանի, Եգիպտոսի, Կիպրոսի, Վենետիկի ու Տավրոսի քոչվոր ցեղերի առաջնորդների պայքարը Կիլիկիայի մարզերին տիրելու համար: Երկրի մի շարք լեռնային շրջաններում հայ իշխանների տիրույթների պահպանումը, որոնց իշխանությունը Զեյթունում չարունակվում էր համարյա մինչև XIX դարի վերջը

1485–1517 Պայքար Եգիպտոսի սուլթանության ու թուրքմենների միջև Կիլիկիային տիրելու համար

1517–1640 Կիլիկիայում թուրքմեն քոչվոր ցեղերի առաջնորդների տիրապետության ժամանակաշրջանը

1640–1865 Թուրքիայից կախում ունեցող Գոզանյանների տիրապետությունը Լեռնային Կիլիկիայում

XVIII–XIX դդ. Զեյթունի հայերի պայքարը Գոզանյանների ու թուրքական կառավարության դեմ՝ հանուն իրենց անկախության

1862 Զեյթունի ապստամբությունը: Ավիզ փաշայի 30-հազարանոց բանակի պարտությունը Զեյթունում

XIX դ. երկրորդ կես Կիլիկեցի հայերի ազգային-ազատագրական պայքարը Թուրքիայի դեմ

1895–1896 Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ավելի քան 300000 հայերի ոչնչացումը սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառա-

	վարութիյան կողմից
1909	Հայերի կոտորածը Կիլիկիայի քաղաքներում, գլխավորապես Ադանայում («Ադանայի կոտորածը»), որի զոհերը դարձան 30 հազար հայեր
1915–1916	Թուրքական կառավարութիյան կազմակերպած, կայզերական Գերմանիայի կողմից ղեկավարվող հայերի զանգվածային կոտորածները Հայաստանում, Փոքր Ասիայում և Կիլիկիայում, որի հետևանքով ոչնչացվեց մոտ մեկուկես միլիոն հայ և նույնքան էլ ցրիվ եկան աչխարհով մեկ
1916	Հայերի բռնագաղթը Կիլիկիայից: Մի մասը ամրացավ լեռներում
1918–1919	Հայերի վերադարձը Կիլիկիա
1921	Անկարայի պայմանագրի կնքումը, ըստ որի Ֆրանսիան
Հոկտեմբեր	Կիլիկիան հանձնեց Թուրքիային
1921–1922	Ֆրանսիական զորքերի կողմից Կիլիկիան լքելը և կիլիկեցի հայերի կռվով նահանջելը դեպի Սիրիա
1946–1948	Սիրիայից և այլ երկրներից կիլիկեցի հայերի մի մասի ներգաղթը Հայկական ԽՍՀ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

ա) Աղբյուրներ

Вардан Великий, *Всеобщая история, М., 1861.*

Геродот, *История в девяти книгах, пер. Мищенко, М., 1885.*

Марко Поло, *Путешествие, Ленинград, 1910.*

Пахимер Т., *История Михаила и Андроника Палеологов, СПб., 1860.*

Плано Карпини, *История монголов, пер. Малеина, СПб., 1911.*

Рашид-ад-дин, *Сборник летописей, т. III, Ленинград, 1916.*

Рашид-ад-дин, *Труды восточ. отд. археологич. общества, т. XV, СПб.*

Рубрук, *Путешествие в восточные страны, пер. Малеина, СПб., 1911.*

Себеос, *История, Ереван, 1939.*

Степанос Таронский *(Асохик). Весобщая история, М., 1861.*

Страбон, *География, в семнадцати книгах, пер. Мищенко, М., 1879.*

Тизенгаузен В., *Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, т. I, СПб., 1884, т. II, Л., 1940.*

Три еврейских путешественника XI–XII вв., пер. Марголина.

Яхъя Антиохийский *(Записки Ак. наук, т. 44), СПб., 1883.*

բ) Գրականութիյուն

Авдиев В. И., *История древнего Востока, ОГИЗ, 1948.*

Адонц Н., *Армения в эпоху Юстиниана, СПб., 1908.*

Бартольд В. В., *История Туркестана. Ташкент, 1922.*

Бартольд В. В., *Туркестан в эпоху монгольского нашествия, ч. 1–2, СПб., 1898–1900.*

Бейкер Дж., *История географических открытий, М., 1950.*

Брун Ф., *Черноморье, ч. I–II, Одесса, 1879–1880.*

Брюсов В., *Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1940.*

Владимирцев Б. Я., *Общественный строй монголов, Ленинград, 1934.*

Гордлевский Вл., *Государство Сельджукидов Малой Азии, М.-Л., 1941.*

Греков Б. Д. и Якубовский А. Ю., *Золотая Орда и ее падение, М.-Л., 1950.*

Диль Ш., *Основные проблемы византийской истории, М., 1947.*
Дурнова Л. А., *Чашоц 1288 года (Изв. АН Арм. ССР, общ. науки, № 4, 1946).*
История дипломатии, под ред. В. П. Потемкина, т. I, 1941.
Заходер Б. Н., *История восточного средневековья (халифат и Ближний Восток), М., 1944.*
Куник, *Основание Трапезунской империи, Уч. зап. Ак. наук, по II и III отд., т. II, 1852.*
Левченко М. В., *История Византии, Ленинград, 1940.*
Лен-Пуль, Стэнли, *Мусульманские династии, пер. В. В. Бартольда, СПб., 1899.*
Манандян Я. А., *О торговле и городах Армении, Ереван, 1930.*
Манандян Я. А., *Тигран Великий и Рим в новом освещении по первоисточникам, Ереван, 1943.*
Марр Н. Я., *Сборники притч Вардана, ч. I, СПб., 1898.*
Машкин Н. А., *Принципат Августа, М., 1949.*
Мелиоранский П., *Сельджук-намэ как источник для истории Византии XII–XIII вв. (Визант. Времен., т. I, ч. II).*
Мюллер А., *История ислама, тт. 1–2, СПб., 1895.*
Оганесян Л. А., *История медицины, т. II, Ереван, 1946.*
Орбели И. А., *Асан Джалал, Изв. Ак. наук, СПб., 1909.*
Орбели И. А., *Статьи, помещ. в сб. «Памятники эпохи Руставели», Ленинград, 1938.*
Пигулевская Н. В., *Византия и Иран на рубеже VI–VII вв. М.-Л., 1946.*
Пиотровский Б. Б., *История и культура Урарту, Ереван, 1944.*
Петрушевский И. П., *Хамдаллах Казвини как источник истории Восточ. Закавказья (Изв. АН, Отд. общ. наук, 1937, № 4).*
Пти-Дютаи, *Феодальная монархия во Франции и в Англии X–XII вв.*
Ранович А., *Восточные провинции Римской империи в I–III вв., М.-Л., 1919.*
Тураев Б. А., *История древнего Востока, т. I–II, Л., 1936.*
Успенский Ф., *Византийские историки о монголах и египетских мамелюках, Визант. времен., т. XXIV.*
Успенский Ф., *История Византийской империи, т. III, Л.-М., 1918.*
Успенский Ф., *Истории Византийской империи, т. I, СПб., 1913.*
Успенский Ф., *История крестовых походов, СПб., 1901.*
Якубовский А., *Рассказ Ибн-ал-Биби о походе малоазиатских турок на Судак, половцев и русских в начале XIII в. (Визант. Времен., том XXV).*

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

ա) Աղբյուրներ

Գրիգոր Մագիստրոսի *Թղթերը, Կ. Կոստանյան, Ալեքսանդրապոլ, 1910:*
Դիւան Հայոց պատմութեան, հ. X, Թիֆլիս, 1912:
Թովմայի Արծրունւոյ *Պատմութիւն տանն Արծրունեաց: Պետերբուրգ, 1887:*
Ժ-Դ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950:
Լալայան Ե., *Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915:*
Կիրակոսի Գանձակեցւոյ *Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909:*
Հեթում *Պատմիչ թաթարաց, թարգմ. Ավգերյանի, Վենետիկ, 1842:*
Հովհաննու Դարոնեցի *Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891:*
Ղևոնդեայ *Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887:*
Մաղաքիայ Աբեղայի *Պատմութիւն վասն ազգին նեստորաց, Ս. Պետերբուրգ, 1870:*
Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951:
Մատթէոսի Ուռհայեցւոյ *Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:*
Մխիթարայ Այրիվանեցւոյ *Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867:*
Մխիթարայ Գոշի *Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880:*
Ներսիսի Լամբրոնացւոյ *Ատենաբանութիւնք և թուղթք և ճառք, Վենետիկ, 1838:*
Ներսիսի Լամբրոնացւոյ *Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ, ի Վենետիկ, 1847:*
Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865:*
Ներսէս Շնորհալի, *Նամականի, Վենետիկ, 1838:*
Ներսէս Շնորհալի, *Ողբ Եդեսիոյ, Տփղիս, 1829:*
Պատմութիւն **Արիստակեսայ Լաստիվերտցւոյ,** *Թիֆլիս, 1912:*
Սամուէլի Անեցւոյ *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց: Վաղարշապատ, 1893:*
Սարգիսյան Հ., *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա–Բ, 1914–1924:*
Սեբէոս, *Պատմութիւն, Թիֆլիս, 1913:*
Սմբատայ Սպարապետի *Պատմութիւն, Մոսկվա, 1856:*
Ստեփաննոսի Ասողկան *Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:*
Ստեփաննոսի Օրբելեանի *Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861:*
Վահրամայ Բաբունւոյ *Պատմութիւն Ռուբենեանց, Փարիզ, 1859:*

Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, 1861:
Տաչյան, Յուցակ հայերեն ձեռագրաց, Վ., 1896:
Բաղաքային օրէնք Ներսիսի Լամբրոնացւոյ, հրատ. Կ. Բասմաջյան, Փարիզ, 1907:
Դատաստանագիրք Սմբատ իշխանի (գունդստաբլի), ս. Էջմիածին, 1918:
Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1571:

բ) Գրականություն

Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 2-րդ, Երևան, 1946:
Աբեղյան Մ., Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ, Երևան, 1935:
Աբեղյան Մ., Հին գուսանական երգեր, 1937:
Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901:
Ալիշան Ղ., Հայ-Վենետ, Վենետիկ, 1896:
Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885:
Ալպոյաճյան Ա., Պատմություն Հայ Կեսարիոյ, Գահիրե, 1937:
Ամատոյան Հ., Հաոց անձնանունների բառարան, հ. 1–3-րդ:
Բասմաջյան Կ., Լևոն Լուսինյան, Փարիզ, 1808:
Երեմյան Ս. Տ., Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, Երևան, 1947:
Լեո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934:
Խաչիկյան Լ., Ազանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում 12–14-րդ դարերում, Երևան, 1947:
Կղէմես (Գալանոս), Միաբանութիւն Հայոց եկեղեցւոյն... ընդ եկեղեցւոյն Հռոմայ, մաս 1–2-րդ, Հռոմ, 1690:
Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1939:
Զամչյան Մ., Պատմություն Հայոց, հ. Գ:
Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939:
Օրմանյան Մ., Ազգապատում, մաս Ա, Կոստանդնուպոլիս, 1913, մաս Բ, Կոստանդնուպոլիս, 1914:

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

ա) Աղբյուրներ

Abulfaradj sive Bar Hebraei, Chronicon Syriacum, Lipsiae, 1789.
Aboulféda, Géographie, tr. Guyard, P., 1848.
Aboulféda, Resumé de l'hist. des crois., tiré des annales d' Aboulféda (Rec. des hist. des croisades. Historiens orientaux, t. I, p. 1–186).

Alberti Aquensis, Hist. hierosolymitana (Historiens occidentaux, t. IV).
Anna Comnena, Alexiada. Ed. Schopen, Bon, 1839, t. II.
Assises d' Antioche, trad. L. Alishan, Venise, 1876.
Autobiographie d' Ousâma, par Derenburg. Livre intitulé L'instruction par les exemples par Ibn Mounkidh (Revue de l' Orient lat. P., 1894, t. II).
Baronius, Annales ecclesiastici, t. XX–XXV, R., 1867.
Beha-ed-din, Rec. des hist. des croisades. Historiens orientaux, t. I, Biblioth. des crois. par Michaud. Chroniques arabes, trad. par Reinaud, t. IV.
Cedrenus G. Corpus scriptorum historiae bysantinac, B., 1839.
Chronique de Froissart, publ. par Lucé, t. I, P., 1879.
Chronique de Michel le Syrien. Ed. par Chabot, 1899–1905.
Chronique de Saint-Denys, t. I–II, 1839–1890.
Constant Porphyrog, De thematibus et de administrando imperio. B., 1840.
Dardel J. Chronique de l' Arménie (Rec. docum. armén., t. II).
Desimoni, Actes passés en 1271, 1274 et 1279 à Aïas (Archives de l' Orient latin).
Gesta Tancredi Radulfo Cadomens (Recueil,., Hist. occid., t. III).
Guillemus Adae, De modo sarracenos extirandi (Docum. armnén., t. II).
Hayton, La flore des estoires de la terre d' Orient (Documents armnén., t. II).
Historia Willermi Tyrencis. Recueil hist. occid., t. I.
Histoire du patriarche Mar-Jabalaha III et du moine rabban Sauma, tr. du syriaque par Chabot J. (Revue de l' Orient latin. t. I–II, 1893–1894).
Ibn-Alatyr, Extrait de la chronique intitulée Camel Altevarikh. (Recueil des hist. des crois. Hist. orientaux, t. II).
Ibn-el-athir, Histoire des atabecs de Mosul. Recueil des hist. des croisades. Historiens orientaux, t. II.
Ioannes Cinnanius, Epitome rerum ad loanne et Alexio Comnenis gestarum, B., 1836.
Karst J. Sempadscher Kodex, Strassburg, 1905.
Leo Diaconus, Corpus scriptorum byzant., B., 1829.
Langlois V. Le trésor des chartes d' Arménie, Venise, 1863.
Laurent, Pergrinatores medii aevi quatuor, Lipsiae, 1863.
Makrizi, Histoire des sultans Mamelouks d' Egypte par Quatremère, P., 1837.
Nicetas Choniata, Historia, Bon,, 1835.
Oeuvres du Froissart, publ. par Kervyn de Lattenhove, Chroniques, t. VI. Brux. 1848, t. XI, 1870.
Pegolotti F. La pratica della mercatura, ed. by Allan Evans, Mass, 1936.
Raschid-el-dun, Histoire des mongols de la Perse par Quatremèe, Paris, 1826.
Recueil des historiens des croisades. Documents arméniens, t. I–II.
Sanutus M. Liber secretorum fidelium crucis. Hannoviae, 1611.

The Geographical Part of the Nuzhat-al-qulub, composed by Hamd-Allah Mustawfi of Qazwin, ed. by G. Le Strange.
Voyage d'Ibn Batoutah, par Defrèmery, t. I–II, P., 1853.
Wassaf's Geschichte. Hammer-Purgstall, Wien, 1856.

բ) Գրականություն

Adonz N. *L'aïeul des Roubéniens. (Byzantion, t. X, Brux. 1935).*
Basmadjian K. *Les Lusignans de Poitou au trône de la Petite Arménie (Journ. Asiatique, 10-ème série, t. VII).*
Brosset M. *Histoire de la Géorgie, t. I-er, Pet., 1849.*
Browne Edw. *A Literary History of Persia, vol. III, Cambridge, 1928.*
David-Beg. *La question de Cilicie, Paris, 1921.*
Chabot J. *Notes sur les relat. du rol Argoun avec l' Occident. Revue de l' Orient lat., t. II, 1894.*
Chalandon F. *Essai sur la règne d' Alexis I-er Comnène, Paris, 1900.*
Chalandon F. *Les Comnènes, P., 1912.*
D' Ohsson. *Histoire des Mongols, t. I–IV, Amsterdam, 1834.*
Dulauier Ed. *Etude sur l'organisation politique, religieuse et administrative du royaume de la Petite Arménie. Journal Asiatique, 1861. 5-ème série, t. XVII et XVIII.*
Grousset R. *Histoire des croisades et du royaume franc de Jerusalème, v. I–III, Paris, 1936.*
Heyd W. *Histoire du commerce du Levant au moyen âge, t. I–II, L., 1923.*
Howorth. *History of the Mongols, t, III, L., 1888.*
Kiepert. *Lehrbuch alten Géographie, Berlin, 1878.*
Lane-Poole Stanley. *History of Egypt in the Middle Ages, London, 1900.*
Langlois V. *Essai historique et critique sur la constitution sociale et politique de l' Arménie, 1860.*
Langlois V. *Le voyage dans la Cilicie, Paris, 1861.*
Langlois V. *Numismatique de l' Arménie au moyen âge, P., 1855.*
Le Srange G. *The Lands of the Eastern Caliphate, Cambr., 1905.*
Marcel. *Histoire de l' Egypte depuis la conquête arabe, Paris, 1834.*
Morgan J. *Histoire du peuple arménien, P., 1919.*
Ormanian M. *L'église arméniene, P., 1910.*
Rey. *Les colonies franques de Syrie aux XIII-ème siècle, P., 1893.*
Tournebize F. *Histoire politique et religieuse de l' Arménie, Paris, 1900.*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս թագավոր *69*
Աբաղա խան *334, 335, 340, 341, 342, 348, 349, 353, 388, 412, 415, 417, 418, 419, 423, 504*
Աբբասյաններ *40, 412*
Աբղմիկոտ *27*
Աբեղյան Մ. *221, 346*
Աբովյան *4*
Աբու Բաքր *485, 486*
Աբու Մահասին *473*
Աբու Շամաթ *150, 151*
Աբու Սաիդ *447, 451, 453, 459, 460, 490, 505*
Աբուլ Ֆառաջ *296*
Աբուլֆեդա *9, 17, 377, 378, 435, 468*
Աբուսահլ Արծրունի *67, 68*
Ադամ (Ատան) *175, 178, 200*
Ադամ *22*
Ադամ դը Գաստոն *191, 256, 295*
Ադոնց Ն. *8, 88, 89*
Աթանաս մետրոպոլիտ *111*
Աժառոս *255*
Ալ Ադիլ *153*
Ալ Աֆդալ Ալի *153*
Ալա ադ դին *9*
Ալա էդ դին *172, 173, 174, 200*
Ալադին *305, 308*
Ալբերտ Ախենացի *77, 78, 92, 93*
Ալեքսանդր Մակեդոնացի *10, 11, 13, 28, 501*
Ալեքսին (Պեռալեռոժեն) *107*
Ալեքսիոս I *79, 94, 97, 102, 140, 161*
Ալեքսիոս III *158*
Ալթուն Բուղա *463*
Ալինախ *443*
Ալիշան Ղ. *9, 15, 88, 149, 151, 153, 159, 160, 161, 162, 172, 176, 183, 192, 288, 325, 326, 330, 347, 363, 377, 378, 385, 387, 403, 405, 412, 413, 418, 454, 455, 461, 462, 480, 481, 488*
Ալիս *154, 169, 296*
Ալիս, դուստր Օշինի, *452, 461*
Ալպոյաճյան Ա. *50, 84, 85*
Ալտամիրա *495*
Ալփարսլան *63, 64, 66, 67, 69*
Ալֆոնս III *430*
Ակ Սոնկոր *467*
Ահարոն *63*
Ահմեդ (Թողուղար) *418, 419, 420, 424, 428, 504*
Ահմեդ Տուլունյան *42*
Աճառյան Հ. *277*
Ամարիխ *129*
Ամանոս *255*
Ամիր ալ Մումնի (Մախըր Արապիկ) *45*
Ամորի, Երուսաղեմի թագ., *130*
Ամորի Լուզինյան-Լուսինյան *159, 170, 432, 452, 465, 481*
Ամորի, սենեչալ, *170*
Այուբյաններ *127, 149, 154, 164, 329*
Անանիա եպիսկոպոս *203*
Անգելոսներ *136, 143*
Անդրեա Դանդալոն *471*
Անդրեաս *317*
Անդրեաս Սանուտո *383*
Անդրոնիկ Պալեոլոգ *411*
Անդրոնիկոս *128, 138, 141, 145*

Անդրոնիկոս II 433, 434
Անդրոնիկոս III 465
Անդրոնիկոս Կոմնենոս 113, 114, 115
Աննա Կոմնինա 79, 96, 97
Անտոնիոս 33, 151
Անտոնիոս Պիոս 33
Անտուան 466
Աչոտ 254
Աչոտ III Բագրատունի 44, 502
Աշրաֆ 300, 421, 430, 431, 489
Ապաբա 342
Ապլղարիպ, իշխան, 71, 73, 80, 99, 211, 413
Ապլղարիպ 254
Ապլղարիպ Արծրունի 70, 502
Առյուծ, իշխան, 237
Աստեղոս եղբայրներ 148
Ասսարհադոն 27
Ասուրնասիրաբալ 26
Ասցելինոս 317
Ավագ 309
Ավգերյան Մ. 313, 316
Ավզ էդ դին Ինգան (Սեմելմոտ) 341
Ատան (Աղամ) 174
Ատան 254
Ատիկոս 175
Ատանիր 32
Ատոմ Արծրունի 67, 68
Արիոբարզան 29
Արիստակես Լաստիվերտցի 61, 62, 63, 64, 68, 70
Արիստոտել 292
Արծրունիներ 54, 55, 57, 58, 65–69, 83, 89, 210
Արղուն 307, 310, 375, 407, 417, 418, 420, 423–430, 504
Արշակունիներ 30, 245
Աքեմենյաններ 11
Աքքերման 204
Արևգույն 254
Բաբեկ 41, 235
Բազարատ, փոխարքա, 30
Բագրատ 79
Բագրատ, իշխան, 76
Բագրատունիներ 30, 54–57, 65, 66, 69, 78, 82, 83, 89, 245
Բաթու խան 306, 308, 309, 310, 312, 322, 323, 332, 333, 342
Բալախան 332
Բալդուին 76, 77, 92
Բալդուին (խաչակիր) 11
Բալդուին, Գոտֆրիդի եղբայր, 93
Բալդուին, կոմս Եդեսիայի, 78, 80
Բալդուին III 118–119, 120
Բալդուին Բուրժեցի 79, 80, 93, 95, 99, 138
Բալդուին, Հայ իշխան, 222, 261
Բալդուին, մարաջախտ, 463
Բահրիյանները 329
Բայդու 433
Բաչու Նուին խան 298, 301, 302, 303, 305, 309, 312, 317, 322, 323, 436
Բասմաջյան Կ. 481, 492, 493, 496
Բար Սումա 226
Բարղի 358
Բարղուղիմեոս 482
Բարկի 349
Բարկուկ 492
Բարոկ 334
Բարոնի 462
Բարոնիուս 425, 426, 431, 434, 438, 450, 480
Բարսեղ արքեպիսկոպոս 166
Բարսեղ քահանա 312
Բարսեղ, դեսպան, 309
Բարուրան 255
Բարքա 342
Բելա III 131
Բելիար 128
Բելիարոս 37
Բեկթաշ (Բեղր էդ դին) 435, 440
Բեհա էդ դին 149, 150
Բեյքեր Ջ. 370
Բեյբարս 330, 333, 335, 338–342, 344, 349, 353, 361, 380, 407, 408, 411–414, 415, 416, 417, 419, 450
Բենեդիկտոս XII պապ 462, 464, 466
Բենիամին Տուդելացի 9, 14, 22
Բերկա 322
Բերկե 331, 333, 334, 338, 342, 371, 380
Բերոսոս 26
Բերտոլդ Վ. Վ. 333
Բիլարղու 441, 442, 443, 505
Բոկաչչո Ջ. 232
Բոհեմունդ, Անտիոքի կոմս, 79, 92, 94–97, 100, 105, 130, 133, 134
Բոհեմունդ (Լուսինյան) 452, 461, 465, 476, 482
Բոհեմունդ II 102, 103, 125
Բոհեմունդ III 154, 169
Բոհեմունդ IV 167, 168, 169, 170, 257, 503
Բոնիֆացիո Գրիլո 400
Բոնիֆացիոս VIII պապ 434, 438
Բոննանատ Սապերա 492
Բորակ 335, 348, 349, 353
Բրատիանու Գ. 204, 206, 372, 403
Բրոսսե Մ. 428
Բրոուն 429, 430
Բրուն Ֆ. 202
Բուկայ 428, 429, 430
Բունդքդար 341
Բուսկարել 427, 438
Գագիկ Արծրունի 69, 83
Գագիկ (Կարսի) Բագրատունի թագ., 64, 69, 70
Գագիկ II Բագրատունի 60, 61, 65, 68, 69, 71, 73, 83, 84, 87, 88, 97, 98
Գալֆրիդ Գինեզործ 149, 151
Գեղունուս Գ. 209, 210
Գեորգ 255
Գեորգի I, վրաց թագ., 56, 57, 59, 66, 67
Գեղրմչ 74
Գելիոմ դը Ֆարբել 170
Գիյաս էդ դին Քեյ Խոսրով 171, 172, 196, 197, 303
Գյուի դը Իբելի 421
Գյուխակար 147
Գոտֆրիդ Բուլոնացի 92, 93
Գորդևակի Վ. 177, 178
Գվիբերտ Նոժանացի 77
Գվիդոն 452
Գվիդոն (Գի) Լուզինյան–Լուսինյան 446, 465–469, 482, 506
Գրեբոկո 362
Գրեգուար 466
Գրեկով Բ. Դ. 332
Գրիգոր 254
Գրիգոր Ակնեցի 290
Գրիգոր Անավարզեցի 423
Գրիգոր Ապիրատ, կաթողիկոս, 158, 165, 266
Գրիգոր եպիսկոպոս 454
Գրիգոր Երեց 114, 119, 120, 124, 127, 137, 138, 139
Գրիգոր, իշխան, 70
Գրիգոր Տղա, կաթողիկոս, 5, 140, 165, 211, 266, 290, 433, 441
Գրիգոր Մագիստրոս Պահլավունի 60, 63, 69, 70, 72, 115, 149, 150, 151, 161, 238
Գրիգոր VI, կաթողիկոս, 161
Գրիգոր X պապ 411
Գրիգոր XI պապ 480
Գրիգոր Տուտևորդի 141, 165–166
Գրիգոր Քարավեժ, կաթողիկոս, 88
Գրիգորիս կաթողիկոս 23

Գրիմալդի 388
Գրուսսե Պ. 77, 169
Գույուկ 295, 305, 306, 307, 317, 332
Գունդստաբլ 174
Գուրանիո դը Մոնտե Ակուտո 164

Դ' Օհսսոն 330, 332, 335, 337, 339, 437, 438, 440, 444, 447, 453
Դանիլ Թավրիզեցի 466, 467, 468
Դանիչմենդ 79, 95
Դանիչմենդներ 96, 118
Դավիդ-բեգ 17
Դավիթ, վրաց թագ., 352
Դավիթ Արծրունի 66, 67, 68, 69
Դավիթ Բագրատունի 71
Դավիթ կուրապաղատ 19, 47, 55, 502
Դավիթ Նարին 327
Դավիթ Քոբայրեցի 166
Դավուդ բեկ 485, 486
Դարեհ III 13, 27, 28
Դարեհ Մեյմուն 170
Դդուչ 73, 74, 76
Դեոդատ դը Գոզոն 38, 470
Դը Թաֆարո (Մարկո) 369
Դիլ Շ. 51
Դիմիտրի, վրաց թագ., 428
Դիոգենես կայսր 67, 68
Դիոկղետիանոս 34
Դիմիտրիոս Սոլունացի 38
Դիոն Կասիոս 32
Դյուլորիե Ե. 87, 250, 376, 441, 481
Դյուկանժ 481
Դուրնովա Լ. Ա. 246

Եգանենց 397
Ելլեր դը Օսո 387
Եվստաֆիոս Մալեինոս 46, 210
Երեմյան Ս. 63
Եփրոն եպիսկոպոս 484

Զաբել, Հեթումի քույր, 284, 432, 452, 461, 465, 481
Զաբել, Լևոն II-ի դուստր, 295, 306
Զարմուհի 488
Զաքարե Ամիրսպասալար 180, 503
Զաքարե Շահնշահ 309
Զաքարյաններ 180
Զենգի 108, 109, 128
Զենգիյաններ 95, 119, 121, 124, 126, 127, 128, 136, 137, 139, 263
Զենոն կայսր 36
Զիյա ադ դին 414

Էդուարդ I 365, 408, 412, 426, 427, 431, 434, 438, 444
Էդուարդ III 396, 466, 470
Էլ Օմար 322
Էլեոնորա Արագոնցի 483, 484
Էլթինա խաթուն 302
Էլղան Հուլավու 328
Էմիր Նասըր էդ դին Ցահյա, տե՛ս Իբն ալ Բիբի
Էնգելս Ֆ. 159, 234
Էնրիկե II 495
Էվանս 360

Թաթար Մեզան 332
Թաթարո 387
Թամար թագուհի 171, 179
Թեոդոսիոս 266
Թեոդորոս 76
Թեոփանե 433
Թեոփիլոս 41
Թեոֆիլո Մորոզինի 394
Թիմուրտաշ 453, 454, 456, 458, 459
Թողուդար 418
Թողտա 444
Թոռնիկ, իշխան Սասունի, 72
Թովմա Արծրունի 57
Թովմաս Աքվիանցի 292

Թովմաս իշխան 129
Թորոս 254
Թորոս I 100, 211, 341, 344, 348
Թորոս II 9, 78, 79, 80, 85, 96–99, 102, 111, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 124, 125, 127, 128, 129, 139, 140, 144, 163, 211, 212, 247, 502
Թորոս, եղբայր Հեթումի, 432, 433, 441
Թորոս իշխան 130, 131, 195, 442
Թորոս իշխան, տեր Եղեսիո, 76, 77, 78
Թորոս Միքայելենց 466
Թորոս Ռոսլին 292
Թորոս, Թոռ Ռուբենի, 83, 87

Ժակ դը Մորգան 103
Ժան Դարղել 464, 465, 466, 468, 472, 476, 477, 479–487, 489–493, 496
Ժաննա Անժուացի 479
Ժաննա Թագուհի 491
Ժերվե Ժան դը Բրիեն 164
Ժուանվիլ 304, 410
Ժուկովսկի Պ. Մ. 10, 14

Իբն ալ Ասիր 130, 152, 153, 196, 201, 299
Իբն ալ Բիբի 172, 173, 175, 176, 177, 196, 198, 199, 200, 398
Իբն էլ Վարդի 405
Իբն-Հաուկալ 40
Իբրահիմ Կուէյումիչ 62
Իգան 343
Իզաբելլա Թագուհի, տե՛ս Զաբել
Իզաբելլա, տե՛ս Զաբել՝ Լևոն II-ի քույրը
Իզզ էդ դին Քեյ Քավուս 163, 171, 172, 173, 177, 197, 323
Ինոկենտիոս III պապ 143, 167, 168, 179, 317
Իշիկ Թիմուր 479, 485, 486, 487
Իսահակ կայսր 101, 102, 148
Իսահակյան Վ. Կ. 57
Իսմուտ 342
Իվանե զորավար 299, 300

Լալայան Եր. 353
Լանգելե 365
Լանգլուա Վ. 16, 163, 164, 165, 177, 183, 188–192, 249, 250, 256, 257, 259, 281, 284, 367, 369, 373, 376, 377, 378, 382, 383, 384, 385, 386, 387, 389–393, 395, 397, 398, 399, 403, 405, 419, 420, 460, 479
Լաջին 435
Լավրենտ 174
Լեյնալդ 145
Լեո (Առաքել Բաբախանյան) 404
Լեո դը Նեգրի 389
Լեոն դը Կապան 191
Լիխաչով Դ. Ս. 7
Լիպարիտ, զորավար, 261, 470, 479, 488, 506
Լիպարիտ, վրաց իշխան, 63
Լիֆուն, տե՛ս Լևոն II
Լյուբեկ Կոնրադ 159, 160
Լյուդովիկոս IX 298, 304, 317, 318, 347, 348, 349, 408, 496
Լուզինյաններ 461, 465
Լուկուլլոս կայսր 31
Լևոն 254
Լևոն, բյուզ. զորավար, 49
Լևոն, Ալլղարիպի դաշնակից, 413
Լևոն I 9, 82, 99, 138, 139
Լևոն Ռուբինյան, Թոռ Ռուբեն իշխանի, 87
Լևոն, եղբայր Հեթում I-ի, 298
Լևոն, որդի Հեթում I-ի, 302, 341, 344, 348, 349
Լևոն, Կապանի ամրոցի տեր, 256

Լևոն, Հեթում II-ի ազգական, 441
Լևոն Ջիվանի Լուսինյան 476, 477
Լևոն II 9, 88, 134, 135, 143, 144, 145, 148, 149, 150, 153–159, 160, 161, 162, 163, 164, 166–180, 187, 188, 189, 198, 200, 203, 225, 243–254, 256, 258–261, 264, 267, 295, 296, 305, 353, 361, 403, 503
Լևոն III 40, 292, 293, 294, 353, 393, 399, 403, 408, 412, 413, 419, 420, 421, 505
Լևոն IV 260, 383, 441, 442, 443, 446, 505
Լևոն V 358, 369, 384, 385, 386, 395, 396, 397, 446, 451, 452, 453, 461–467, 505, 506
Լևոն VI Լուսինյան 465, 475, 480–487, 489–497, 506, 507
Լևոն Ռուբինյան 79, 85, 96, 97, 99–103, 105, 111, 128, 131, 195, 455

Խաթթուչիլ II 25
Խաչեն 302
Խաչիկ Հայրապետ 53
Խաչիկյան Լ. 221, 463
Խարբանդե, տե՛ս Օլջեյթուն
Խլիճ-Արսլան 127, 128, 132, 144, 150, 153, 154, 155, 171
Խոսավ 255
Խոսրով II Անուշիրվան 37, 38
Խուան I 492, 493, 494, 495, 507
Խուբիլայ 339, 375, 424, 425, 427

Կարա Սոնկոր 440, 447
Կարաման 329, 330
Կամսարականներ 79
Կառլոս Անժույացի 348, 411
Կառլոս VI 492, 496
Կասիոս 33
Կասիոս Դիոն 32
Կարսիլի 471
Կարստ Յոզեֆ 233
Կեղրին 66, 209
Կեռավարդ 255
Կիպերտ 358, 359, 362, 364, 365
Կիտեի արքա 26
Կիր Վարդ 200
Կիրակոս Գանձակեցի 16, 17, 83, 84, 86, 128, 157, 160, 161, 178, 180, 211, 212, 246, 252, 253, 293, 297, 298, 300, 301, 302, 303, 305, 308–312, 322, 323, 324, 327, 332, 343, 350
Կլեմենտ III պապ 158
Կլեմենտ V պապ 313, 440, 441, 448
Կլեմենտ VI պապ 466, 467, 468, 470, 471, 472
Կլեմենտ VII պապ 492, 493
Կլեոպատրա 151
Կղեմես Ալեքսանդրիացի 34
Կղեմես Գալանոս 264
Կյուրոս 27, 501
Կյուրոս Կրտսեր 11
Կոլոմանոս 125
Կոմնենոսներ 94, 104, 110, 122, 136, 211
Կոնղեփրե 77
Կոնրադ Վիտելսբախ 160
Կոստան 255
Կոստանդին 254, 255
Կոստանդին, ազատամարտիկ, 106, 107
Կոստանդին, Գարգարի քաղաքապլուխ, 80, 88
Կոստանդին, պարետ, 484
Կոստանդին Լամբրոնացի 174, 175, 295, 296, 303, 304, 504
Կոստանդին, հայր Հեթում I-ի, 211, 245, 260, 297, 298, 303, 318, 329
Կոստանդին, Հեթումյանների ազգական, 246, 298, 507
Կոստանդին III կաթողիկոս 326, 459, 460
Կոստանդին Կոպրոնիմոս 49
Կոստանդին Մոնոմախ 60, 61, 62, 70
Կոստանդին, Օշինի եղբայր, 452, 461
Կոստանդին, Հեթումի եղբայր, 174, 434, 435, 436
Կոստանդին Ռուբինյան, Ռուբեն I-ի տղան, 9, 85, 86, 87, 89, 90, 91, 92, 93, 94, 96
Կոստանդին Միրանածին 35
Կոստանդին (Նիհրյան) 468
Կոստանդին IV 468–471, 474–477, 479, 480, 489, 506
Կոստանդին V 475, 477, 478, 479, 480, 481, 482, 506
Կոստանդին Քեթուկեցի 423
Կոստանցիա 147, 461
Կոստանցիա, Բոհեմունդի դուստր, 105
Կոստանցիոս, զորավար, 34
Կրասոս 32, 151
Կուբիլայ 321, 353
Կուզլեր Բ. 77, 347
Կուֆլուղ 436, 439
Կուլի 332
Կունիկ, ակադեմիկոս, 202
Կունին Կ. Ի. 370, 379
Կուտուզ 327
Կուրուլտայ 351

Հաղիր 414
Հալեպ էդ դին Սինջարի 435
Հալկամ 255
Հակոբ Բաղուարիոս 189
Հակոբ եպիսկոպոս 450
Հակոբ II 396, 437
Հակոբ կաթողիկոս 466
Հակոբ վարդապետ 309, 312
Հակոբ Թագավոր 430
Հակոբյան Վ. 393
Հակոբոս Տրևիզանո 385
Համղանյաններ 42
Համղալլահ Ղազվինի 311, 320, 362
Հասան Ջալալ Խաչենցի 302, 310
Հասան, սուլթան, 473
Հարուն ալ Ռաշիդ 40
Հեթում I 22, 177, 245, 246, 249, 260, 284, 291, 293, 295, 298, 299–314, 316–320, 322–326, 328, 329, 330, 337–342, 344, 345, 347, 348, 349, 352, 373, 388, 503, 504
Հեթում II 9, 260, 319, 393, 407, 418, 421, 422, 423, 431, 432, 433, 434, 436, 437, 439, 440, 441, 442, 443, 446, 448, 504, 505
Հեթում, պղտոց. պայքարի ղեկավար, 488
Հեթում, Բյուզանդ. վասալ, 97
Հեթում, Լամբրոնի տեր, 115, 133, 175
Հեթում, Կոստանդինի որդի, 296, 297, 298
Հեթում, Ն. Լամբրոնացու եղբայր, 166
Հեթում Մամիկոնյան, իշխան, 211, 252, 253
Հեթում պատմիչ 22, 291, 295, 313, 314, 315, 316, 318, 319, 322, 325, 337, 348, 349, 417, 421, 422, 431, 437, 439, 440
Հեթում, Զելկոնցի տեր, 455
Հեթում, Սինոպի կառավարիչ, 202, 203
Հեթումյաններ 20, 22, 133, 246, 252, 295, 298, 303, 313, 319, 401, 468, 503, 506
Հեյդ Վ. 186, 187, 194, 358–368, 376, 392, 393, 397

Հեյխաթ 365
Հեյխաթուն Աչրաֆ 431, 432
Հենրի 254
Հենրի, Հռոմի կայսր, 161
Հենրի Սևաստոս 255
Հենրիխ II 317, 432, 453
Հենրիխ VI 159, 160
Հենրիխ Շամպանացի 154
Հենրիխ, որդի Ֆ. Շիկամորուսի, 147, 148
Հենրիկո Դանդոլո 189
Հերոդոտոս 5, 7, 11, 27, 28
Հոմերոս 25
Հոնորիոս IV պապ 426
Հովհան Կիննամուս 104, 105, 106, 108, 112, 114, 118, 125, 131, 132, 221
Հովհան Կոմնենոս 12, 82, 99, 101–112, 118, 119, 122, 138, 139, 502
Հովհան Օձնեցի, կաթողիկոս, 50
Հովհաննա, Թագուհի, 452
Հովհաննես Անգելոս 433
Հովհաննես արքեպիսկոպոս 261, 292
Հովհաննես Բարտոլի 493
Հովհաննես եպիսկոպոս 160
Հովհաննես Երզնկացի 292, 294
Հովհաննես Թլկուրանցի 480
Հովհաննես կաթողիկոս 50, 180
Հովհաննես Կանտակուզեն 466
Հովհաննես Զմշկիկ 24, 43, 44, 45, 46, 47, 52, 55, 104, 209, 502
Հովհաննես Պալեոլոգ 466
Հովհաննես XXII պապ 448, 450, 453, 458, 459, 461, 462
Հովհաննես-Սմբատ 59, 60, 67
Հովհաննիսյան Լ. Ա. 291
Հովհաննիսյան Պ. Հ. 4
Հովորտ Գ. 429
Հովսեփ 284
Հոռոմինանք 422
Հուգո III 421, 470, 472
Հուլավյաններ 205, 310, 311, 320, 322, 328, 330, 331, 333, 335, 336, 340, 342, 351, 356, 357, 371, 373, 374, 375, 380, 389, 408, 411, 415, 416, 417, 418, 424, 425, 428, 430, 443, 445, 446, 447, 458, 459, 488
Հուլավու խան 295, 298, 307, 314, 315, 321, 323, 324, 325–335, 337, 338, 339, 340, 342, 351, 352, 371, 380, 428, 504
Հուչյաններ 205
Հուսամ ադ դին Ջուպանի 199
Հուստինիանոս կայսր 6, 8, 29, 34, 37, 39, 110, 122

Ղազան խան 353, 407, 423, 428, 432, 433, 434, 436–440, 443, 453, 505
Ղազվինի, պատմիչ, 357, 364
Ղաթաղան 332
Ղայդու 439

Ճոսլին 255
Ճոֆրի 254

Մաթևոս ղը Շապպ 486
Մալիք (Մուղիս էդ դին Տողրուլշահ) 155
Մալեհիններ 210
Մակրիզի 9, 335, 342, 343, 349, 350, 432
Մահդի 40
Մահրիբի 349
Մաղաքիա, պատմիչ, 291, 305, 307, 332, 344, 345, 347, 350
Մամուն 41
Մամիկոնյանները 70
Մանանդյան Հ. 4, 29, 363, 364, 371, 374
Մանգու խան 295, 305–319, 321, 322, 323, 326, 327, 329, 332, 333, 373, 504

Մանդալ եղբայրներ 69, 97, 98
Մանիչակ 479, 480
Մանկրի 254
Մանուիլ Կոմնենոս կայսր 12, 63, 82, 105, 108–111, 113, 116–128, 131, 132, 133, 139, 140, 141, 145, 247, 502
Մառ Ն. Ցա. 186, 221, 222, 224–231, 233, 241, 242, 243, 277
Մասուդ 101, 116, 127, 128
Մավրիկիոս կայսր 36, 37, 38
Մատթևոս Ուռհայեցի 44, 45, 46, 58, 59, 62, 65, 67, 68, 72–78, 79, 80, 81, 83, 86, 87, 89, 91, 92, 97, 98, 99, 107, 114, 116, 120, 121, 122, 124, 135, 137, 138, 139, 211, 290, 502
Մար Աֆանասիոս III 49
Մար-Յաբալահա 424, 425
Մարգարիտ, Հեթում II-ի կինը, 421
Մարգարիտ, Հեթումի քույր, 433
Մարգարիտ Լուզինյան 441
Մարգարիտա Սուասսոն 483, 492
Մարգոլին 9
Մարիա 479, 480, 482, 506
Մարիա, Մարգարիտայի դուստր, 492
Մարինո Սանուտո 21, 22, 369, 378, 379, 380, 445, 457, 458
Մարկիոնե Բարբարիա 400
Մարկո Պոլո 15, 346, 359, 361, 366, 368, 370, 371, 375, 377, 379
Մարկոս 69
Մարտիրոս Ղրիմեցի 487
Մացյու 478
Մաուդուդ 80
Մարքս Կ. 152, 159, 234
Մելիք ադ Դահեր Ղազի 170
Մելիք Աչրաֆ 485, 486, 487
Մելիք Ղազի Մուհամեդ Դանիշմենդ 96, 99, 100, 101, 105
Մելիք Մանսուր 341
Մելիք Նասըր 439, 442, 444, 452, 453, 458, 459, 460, 463, 464, 471
Մելիքշահ 74, 75, 104
Մեխայլ 255
Մենգու Թիմուր 349, 417, 418
Մեսրոպ կաթողիկոս 474
Միհրդատ 29, 30, 31, 32
Միչկին Մ. Ա. 33
Միչչենկո 25
Միքայել Ասորի 9, 53, 58, 59, 72, 74, 76, 83, 84, 85, 86, 97, 99, 100, 101, 102, 111, 121, 129, 133, 134, 145, 146, 147, 155, 156, 161, 166, 175, 177, 178, 222, 253, 260, 291, 296
Միքայելյան Գ. Գ. 3, 4
Միքայել IX Պալեոլոգ 348, 387, 411, 433, 465
Միքայել Ջուստինիանոս 384
Միքայել IV, կայսր, 67
Մլեհ, զորապետ, 43, 44, 51
Մլեհ, Ռուբենի հորեղբայր, 129
Մլեհ Ռուբինյան 128–133, 137, 152, 163
Մխիթար, դեսպան, 312
Մխիթար Այրիվանեցի 91
Մխիթար Ապարանցի 473
Մխիթար Գոշ 180, 188, 189, 221, 246, 267, 268, 269, 272–276, 278, 281–285, 289, 293
Մխիթար կաթողիկոս 469, 472
Մխիթար Հերացի 291
Մխիթար վարդապետ 309
Մխիթարյանները 350, 351
Մոպս 26
Մոլմո, զորապետ, 341
Մովսես, ավետարանի, 266
Մորգան 299, 300, 449
Մուհամմեդ 314
Մուվատալ 25

Մուրշիդ 100, 195, 440
Մուֆազզալ 440

Յաբալահ 426
Յազման 42
Յակուբովսկի Ա. Ց. 332
Յակուտ 18, 52
Յահյա Անտիոքացի 46, 47, 52, 56
Յարոսլավ Գալիցկի 125
Յոհան Կուրկաս (Հովհաննես Գուրգեն) 43
Յոհան Ծիմիսխիոս, տե՛ս Հովհաննես Ջմշկիկ
Յոսցելլին 95, 103, 108
Յուլ 358, 364, 366, 370

Նալբանդյան Ա. 52, 151, 405, 436, 468
Նասիր Մուհամմեդ 432
Ներսես Բալենց, եպիսկոպոս, 454, 467, 469, 472
Ներսես Լամբրոնացի 157, 158, 159, 161, 162, 165, 166, 167, 169, 185, 219, 220, 247, 265, 266, 267, 291
Ներսես Շնորհալի 115, 139, 140, 141, 142, 185, 214–220, 236, 237, 238, 239, 258, 263, 290, 279, 502
Նիկեփոր Փոկաս 38, 43, 46, 52, 55, 66, 67, 104, 209
Նիկիտաս Խոնիատ (Ակոմինատոս) 102, 104, 106, 107, 108, 109, 110, 113, 114, 117, 118, 126
Նիկողայոս IV պապ 422, 426, 427
Նիկողայոս Սեն-Սիրե 204
Նիկողայոս Ֆալկոնի 313
Նիկոփոր II Փոկաս 24
Նոչին 174
Նովրուզ 428, 433
Նուր աղ ղին 113, 119–125, 127–132, 140, 149, 152

Շալանդոն Ֆ. 100, 113, 121, 123
Շահան (Ջահան) 427
Շահենշահ 255
Շահնշահ Մամիկոնյան 211, 252
Շապուհ I 34
Շապուհ II 34
Շառլ 261
Շիհավ ուդ ղին 453
Շկլովսկի Շ. 379
Շոթա Ռուսթավելի 6, 184, 204, 221, 230

Ջամչյան Մ. 58, 306, 441, 449, 468
Ջարմաղան 298, 300, 301, 302
Ջինգիզ խան 299, 300, 322, 331, 353
Ջուպան 447, 453, 454, 459

Պագանինի, հրատարակիչ, 360
Պալավիչինո 388
Պախիմեր Գ. 411
Պահլավունիներ 60, 66, 78, 140, 219
Պաղտին 255
Պանկրաս 79
Պաոլո Մորոզինի 369
Պատկանյան Հ. Պ. (Պատկանով) 299
Պարթևներ 32
Պեգոլոտտի Ֆրանչեսկո Բալդուչչի 355, 358, 359, 360, 361, 362, 364, 365, 366, 370, 371, 372, 373, 378, 379, 394, 395, 396, 397, 398, 400
Պեդրո Դաժան 495
Պեդրո IV 491, 492, 495
Պեդրո Պորտ 397
Պեդրո Սոլիվերո 437
Պետրոս Բրագադինո 385
Պետրոս կաթողիկոս 59, 60, 61
Պետրոս Կվատրոլինգվա 383
Պետրոս Սալոմոնուս 387
Պետրուշևսկի Ի. Պ. 357, 363, 374, 380
Պիզուլևսկայա 155
Պիեռ I (Պետրոս) 409, 474, 476–480, 482, 483, 490, 506
Պիզիտանի եղբայրներ 362
Պիլարդու 442
Պիոտրովսկի Բ. 26
Պլանո Կարպինի 317
Պլանտագենտներ 295
Պչեմիսլ II 412
Պոլեմոն 33
Պոլո եղբայրներ 371, 375, 379
Պողոս, ավետարանի, 217
Պողոս կաթողիկոս 484, 487, 489, 490
Պողոս Մորոզինի 383
Պոմպեոս 6, 31, 32
Պոռշ իշխան 324
Պտղոմեոս 29
Պտղոմեոսյաններ 28
Պևտինգեր 363, 364

Ջալալ էդ ղին 298, 299, 300
Ջալալի իշխան 302
Ջաղաթայ խան 324, 328, 335, 340, 348, 408, 415, 416, 418, 439
Ջաղաթայներ 331, 334, 423
Ջեբե 299
Ջելալ էդ ղին 172, 503
Ջեմել ուդ ղին 339
Ջիկոմո Մուսո 400
Ջիվան Լուզինյան-Լուսինյան 452, 461, 465, 466, 469, 476, 481, 506
Ջուչյաններ 328, 331–335, 338, 340, 341, 351, 356, 374, 380, 408, 429, 439
Ջուստինիանի 369

Ռադուլֆ 93
Ռամազան 507
Ռամզես II 25
Ռայմոնդ, իշխան, 431
Ռայմունդ Անտիոքացի 109, 113
Ռայմունդ, որդի Բոհեմունդ III-ի, 154, 169
Ռայմունդ Պուատիե 102, 103, 105, 108
Ռայմունդ, կոմս, 125
Ռանովիչ Ա. 26, 33, 34
Ռաշիդ ադ ղին 321, 322, 334, 335, 414, 415, 418, 428, 431, 432, 436, 437, 442
Ռեյ 205, 356
Ռեյնալդ Շատիլիոնցի 116, 117, 118, 119, 122, 145
Ռինդվան 95
Ռիչարդ I 151, 153
Ռիչարդ II 492, 497
Ռոբերտ Մոնախ 94
Ռոժեր, անտիոքցի, 99
Ռոժեր Սիցիլիացի 117
Ռոմանոս Դիոգենես 67, 71, 72
Ռոմանոս Լակապինոս 208
Ռոմանով Բ. Ա. 7
Ռոստոմ 145, 146, 153
Ռուբեն Բագրատունի 82, 83
Ռուբեն III (Ռուբեն-Ռայմունդ) 133, 134, 145, 154, 163, 167, 168, 170, 178, 250, 296
Ռուբեն իշխան, հիմնադիր Ռուբինյանների իշխանապետության 9, 84–90, 98, 100, 128, 135, 145
Ռուբեն, որդի Թորոս II-ի, 129, 212
Ռուբեն-Ռայմունդ (Ռուբեն III-ի որդի) 154, 296
Ռուբինյաններ 19, 20, 66, 79, 82–86, 88–91, 94, 97, 100, 115, 122, 126, 127, 132–136, 140, 187, 210, 211, 247, 248, 251, 257, 261, 263, 298, 401, 474, 481, 502
Ռուբրուկ Վ. (Ռուբրուկվիս) 201, 204, 205, 311, 317, 318, 320, 361, 373, 379, 399

Ռուդոլֆ 95
Ռուդոլֆ Հաբսբուրգ 412
Ռուպերտ 254
Ռուքն էդ դին 203, 330, 338
Ռուքն էդ դին Սուլեյմանչահ II 171

Սալադին Այուբյաններ 143, 145, 147, 149, 150, 151–155, 163, 179
Սալադին Յուսուֆ 170
Սալահադին 134
Սալըհ Սալահ 492
Սալմանասար III 5, 26, 501
Սահակ վարդապետ 224
Սահմադին 427
Սամուել Անեցի 58, 64, 82, 87, 88, 90, 99, 112, 179, 211, 246, 267, 434, 442, 454, 507
Սանդուաըրի 27
Սապերա 491
Սասանյաններ 36
Սարգիս Շնորհալի 213, 214, 220
Սարգիսյան Հ. 350, 351
Սարթախ խան 310, 323, 342
Սարյան Մ. Ս. 3
Սեբեոս եպիսկոպոս 39
Սեթի I 25
Սելդ Նասիր ադ դին 416
Սելևկոս Նիկատոր 15, 18
Սելևկիաններ 28, 29
Սեյֆ ադ Դաուլա 43
Սեյֆ էդ դին Բեյթիմուր Խվարեզմի 473
Սենեքերիմ Արծրունի 26, 56, 57, 58, 66, 67, 70, 85
Սեն-Դենի 496
Սիեննեսիոս 27
Սիմոն 255
Սիմոն 254
Սիմոն, Անտիոքի կոնսետաբլ, 288
Սիպիլյան Կ. 479
Սիվիլլա (Սիբիլլա) 170, 295
Սիրուհի 254
Սմբատ 254, 255
Սմբատ Թոնդրակեցի 238
Սմբատ, կոնսետաբլ, 329
Սմբատ, եղբայր Հեթում II-ի, 433, 434, 435, 436
Սմբատ Սպարապետ 22, 61, 62, 69, 83, 87, 88, 90, 100, 102, 103, 112, 129, 133, 134, 145, 146, 154, 157, 158, 161, 174, 175, 176, 179, 200, 201, 208, 211, 212, 233, 243, 246, 247, 248, 252, 253, 254, 255, 257, 258, 260, 261, 264, 266–290, 292, 295, 296, 297, 299, 303, 304, 305, 306, 308, 316, 317, 337, 346, 413, 442, 450, 455, 456, 461, 504
Սմբատ Օրբելյան 310
Սոլդանա տիկին 476, 481
Սոխլեր Դյուլկարտ 484, 492
Սողոմոն, ավետարանի, 29.
Սոնկոր 349, 417
Ստեփան, եղբայր Թորոսի, 112, 116, 127, 128
Ստեփան, Լևոն I-ի որդի, 138
Ստեփանե Ռուբինյան 155
Ստեփաննոս կաթողիկոս 353, 423, 431
Ստեփաննոս եպիսկոպոս 462
Ստեփաննոս Տարոնացի (Ասողիկ) 44, 47, 49, 53, 55, 56
Ստեփաննոս Օրբելյան 293, 300, 350, 351, 433
Ստեփ 254
Ստեփան Բաղտարու 385
Ստեփան Նեման 124, 131, 148
Ստրաբոն 25, 35
Ստրուև Վ. Վ. 27
Սուբեդե խան 299
Սուլամիչ 436
Սուլեյման 73, 74
Սուլլա, կայսր, 29

Վալիդ 39
Վահրամ, մարշալ, 191, 256
Վահրամ Պահլավունի 60, 70, 129
Վահրամ Րաբունի 87, 172, 176, 261, 291, 292, 345, 346, 413
Վասակ 255
Վասակ Պահլավունի 72, 73
Վասիլ 254
Վասիլ, ավատատեր, 114, 257
Վասիլ I 42, 122
Վասիլ II 19, 46, 47, 52, 53, 55, 56, 57, 66, 67, 85, 208, 209, 210, 502
Վասիլ Գող, իշխան, 78, 79, 80, 84, 85, 97, 98, 99, 482
Վասիլ իշխան 95
Վասիլ Տղա 79, 80, 99
Վասիլ (Քեսունի իշխան) 80
Վասսաֆ, պատմիչ, 332, 420
Վարաժնունիներ 66
Վարդ Սկլերոս 24, 46, 47, 48, 55, 210
Վարդ Փոկաս 24, 46, 47, 48, 66, 210
Վարդան Այգեկցի 185, 186, 195, 220–233, 240, 241, 277, 290, 346, 503
Վարդան Բարձրբերդցի 69, 148, 149, 158, 178, 179, 293, 325, 326, 328, 340, 341, 342, 347, 350, 351, 352, 371
Վեսպանիանոս 33, 35
Վեստ Սարգիս 60, 61, 69
Վիլբրանդտ Օլդենբուրգցի 16, 173
Վիլլան 396, 464
Վիլհելմ 117
Վիլհելմ Տյուրացի 76
Վուրցա 46

Տանկրեդ 11, 79, 92, 93, 95, 96
Տաշյան Հ. 158, 161
Տիգրան 255
Տիգրան 114
Տիգրան II 6, 7, 8, 24, 29, 30, 31, 501
Տիղենհաուզեն 201, 299, 322, 332, 333, 334, 335, 371, 444, 460
Տիրան վարդապետ 224
Տրիպտղոմեոս 25
Տուդերտ 93
Տուդու 414
Տուլանյաններ 42
Տուկու 414
Տուղրիլ բեկ 62, 64
Տուրան Բ. Ա. 25, 26, 27
Տուրնեբիզ Ֆ. 149, 151, 161, 168, 306, 307, 326, 453, 463, 464, 472

Յելեստինոս III պապ 159, 160
Յիցերոն 32, 33

Ուգեդե խան 300
Ուգեդեյ Ղայդու 437
Ուզբեկ խան 460
Ուլու Դավիթ, վրաց թագ., 328
Ուսամա Մունկիդ 97, 100, 195
Ուվեյս 371
Ուրբանոս V պապ 476, 477
Ուսպենսկի Ֆ. 38, 105, 108, 113, 125, 148, 495

Փերվանե 414
Փիլարտոս Յակուբհասան 117
Փիլարտոս Վարաժնունի 54, 71–76, 78, 84, 85, 86, 88, 90, 502
Փիրուզա 94
Փնդխտար 340
Փոկասներ 210

Քամել, արաբ պատմիչ, 170
Քամիլ 300
Քելավուն 341, 343, 399, 417–421, 429, 430
Քեյ Խոսրով II 301, 303, 323
Քեյ Կուբադ Ալա ադ դին 22, 177, 197,

198, 200, 201, 203, 298, 300, 361, 398
Քիթբուղա 327, 328
Քիուք 317
Քսենյա 465, 466
Քսենոփոն 11
Քսերքսես 27
Քուրդ 312

Օգոստոս կայսր 33
Օլջեյթու 442, 443, 444, 447, 505
Օկտավիանոս կայսր 33
Օհերիո դը Պալլո 188, 259
Օմարի, արաբ պատմիչ, 333
Օշին 64, 71, 93, 113, 114, 442
Օշին, եղբայր Հեթումի, 298, 443
Օշին Թագավոր 397, 446, 448–453, 461, 465, 505
Օշին, Լամբրոնի տեր, 90, 92, 115, 140
Օշին, պարոն, 174
Օշին, Կոպիտաս ամրոցի տեր, 88
Օշին, Կոռիկոսի կոմս, 479
Օշինյաններ 20, 71, 140, 210
Օստեր 254
Օրբելի Հ. 6, 184, 203, 204, 221, 223, 302
Օրբելյաններ 310
Օտտո դը Տաբարիա 191, 256
Օտտոն I, կայսր 43
Օրմանյան Մ. 70, 141, 161, 162, 166, 293, 316, 317, 318, 412, 423, 433, 448, 469, 474

Ֆաթիմյաններ 55
Ֆեմա, Կոստանդին IV-ի քույր, 482
Ֆեմա, Հեթում II-ի դուստր, 421
Ֆեմյա, Լևոն II-ի դուստր, 164
Ֆերրարիո 190
Ֆիլիպ, Զապելի ամուսին, 296, 297
Ֆիլիպ Գեղեցիկ 426, 438, 443
Ֆիլիպ IV 427, 430, 431, 434, 444, 457, 458
Ֆիլիպ VI 412, 462, 463, 466, 496, 505
Ֆիլիպ Տարենտացի 480
Ֆիլիպինո Տարտարո 389
Ֆրանցիսկո Դոնալդո 385
Ֆրեդերիկո Պլացալունգ 400
Ֆրիդրիխ I Շիկամորուս 12, 124, 143, 144, 147–152, 158, 179, 395, 503
Ֆրիդրիխ II 126
Ֆրիդրիխ I, Սիցիլիայի Թագ., 461
Ֆրիկ 354
Ֆրուասար, պատմագիր, 462, 496
Ֆուլկ 103

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Արիդոս 47
Արխազիա 388
Աղալիա (Ատտալիա) 9, 108, 172, 196, 198, 478
Ադանա 12, 15, 17, 18, 19, 36, 41, 43, 93, 94, 95, 97, 100, 101, 102, 105, 106, 112, 128, 131, 133, 134, 139, 182, 184, 187, 252, 264, 303, 343, 401, 402, 435, 448, 449, 461, 463, 467, 473, 474, 505, 506
Աղեն 375
Աղիաբեն 30
Աղրիանապոլիս 148
Աթենք 35, 495
Ալ-Մասիս, տե՛ս Մամեստիա
Ալաղաղ 370, 371
Ալայյա, տե՛ս Կալոնորոս նավահանգիստ
Ալայյ ամրոց 200
Ալաչկերտ 363
Ալար 255
Ալբանիա 96
Ալիբստան 15, 155, 172, 344, 414, 415
Ալեքսանդրետ 9, 134
Ալեքսանդրետի լեռնանցք 419, 435
Ալեքսանդրետի ծոց 13, 21, 22, 103, 164
Ալեքսանդրիա 28, 35, 36, 329, 356, 368, 369, 374, 375, 376, 380, 381, 382, 394, 406, 407, 408, 411, 430, 455, 458, 471, 475, 478, 480, 483, 492
Ակկոն 192
Ակներ, վանք, 264
Ակրա 204, 206, 338, 377, 382, 389, 399, 408, 421, 422, 430, 431, 504
Ակրա, ամրոց, 370
Աղոլ 225
Աղվանք 328, 331, 332, 333, 334, 371
Ամանոսի լեռնանցք 12, 147, 440
Ամանոսի լեռներ 9–13, 20, 26, 32, 103, 398, 431, 435, 440
Ամիդ 44, 45, 201
Ամերիկայի Միացյալ Նահանգներ 41
Ամու-Դարյա, գետ, 328
Ամուտ 254
Այաս 18–22, 154, 185, 192, 205, 206, 207, 252, 343, 355, 356, 357, 358, 359, 361, 365–373, 376–383, 386–390, 392, 393, 394, 397, 398, 399, 400, 401, 402, 404–408, 413, 417, 418, 435, 440, 450, 454, 455, 460, 461, 464, 471, 475, 478, 483, 505, 506
Այաս–Էրզրում, ճանապարհ, 371
Այաս–Թավրիզ, մայրուղի, 205–206, 355, 357, 358, 359, 360, 361, 365, 369, 370, 373, 378, 379, 380, 381, 401
Այաս–Կեսարիա, ճանապարհ, 362, 365
Այաս–Կեսարիա–Սվազ–Երզնկա, Էրզրում–Թավրիզ, մայրուղի, 368
Այաս–Սվազ, ճանապարհ, 361
Այասի բերդ 383
Այացցո, տե՛ս Այաս նավահանգիստ

Այնթապ (Այնթափ) 128, 201, 338, 420
Այուբյանների սուլթանություն 301
Անարզաբա 12, 15, 18, 20, 35, 41, 43, 73, 97, 99, 100, 101, 105–107, 112, 116, 118, 209, 252, 441, 443, 485, 505
Անարզաբայի բերդ 442
Անարզաբայի գավառ 98
Անամոռ 255
Անապատ, վտակ, 359
Անգլիա 358, 365, 407, 410, 411, 412, 416, 423, 424, 426, 427–430, 434, 438, 444, 445, 446, 451, 462, 463, 471, 475, 488, 497, 498, 499, 504, 505
Անդրեփրատյան պրովինցիաներ 428
Անդրկովկաս 41, 42, 202, 295, 298, 299, 300, 301, 310, 320, 322, 332, 340, 361, 380
Անդուխար 493
Անդուշծին 255
Աննո 254
Անի 8, 44, 56, 60, 61, 62, 63, 66, 68, 70, 82, 139, 141, 166, 191, 194, 204, 301, 353, 357, 361, 373, 502
Անի–Էրզրում, ճանապարհ, 501
Անի–Կամախ, փանապարհ, 357
Անի Բագրատունիների թագավորություն 44, 48, 54, 56, 59–62, 68, 69, 502
Անկարա 499
Անկուրիա 172
Անտալիա 196, 197, 198
Անտիոք 12, 29, 39, 43, 46, 47, 50, 52, 53, 55, 65, 70, 72–75, 93–97, 99, 102, 103, 105, 108, 109, 112, 113, 114, 118, 125–129, 134, 136, 139, 143, 145, 152, 154, 163, 167, 168, 169, 170, 178, 222, 248, 287, 288, 296, 297, 338, 341, 349, 352, 388, 435, 502
Անտիոքի իշխանապետություն 13, 82, 95, 96, 100, 105, 108, 116, 117, 118–124, 165, 168, 169, 132, 143, 147, 152, 154, 156, 163, 164, 171, 179, 195, 257, 288, 329, 337, 340, 408, 409, 503, 504
Անտիտավրոսի լեռներ 6, 10, 13, 15, 67, 84
Անտոնիոսի երթուղի 12
Աչխարհ Կիլիկիո, տե՛ս **Կիլիկիա**
Աչխարհ Հայոց, տե՛ս **Կիլիկիա**
Ապլսթայն 86
Առաջավոր Ասիա 5, 8, 10, 48, 119, 137, 146, 155, 193, 194, 196, 197, 198, 199, 201, 202, 203, 205, 206, 207, 214, 235, 294, 298, 300, 304, 308, 319, 321–324, 326, 327, 328, 329, 331, 332, 333, 343, 357, 359, 361, 365, 366, 367, 370, 372, 373, 388, 394, 398, 399, 400, 403, 404, 412, 416, 424, 425, 429
Առաջին Կիլիկիա 8, 35
Առաջին Հայք 6, 156
Ասիա 10, 27, 38, 95, 102, 104, 117, 118, 124, 125, 126, 127, 131, 136, 182, 184, 186, 187, 192, 193, 205, 206, 319, 322, 323, 328, 332, 336, 355, 356, 357, 358, 361, 365, 366, 370, 372, 375, 376, 377, 379, 381, 382, 387, 423, 448, 471, 499
Ասիա, պրովինցիա, 29
Ասորա-Կիլիկյան լեռնանցք 11, 13, 194
Ասորեստան 5, 26, 27, 156
Ասորիք 7, 13, 27–33, 37, 39, 40, 49, 50, 70, 111, 501
Աստուրիա 492
Ասֆարագան, տե՛ս **Վասպուրական**

Ավարա 67
Ավարայր 347
Ավարայրի դաշտ 347, 364
Ավինիոն 440, 452, 466, 467, 468, 471, 493, 496, 507
Ատաոոս 255
Ատրպատական 153, 235, 300, 332
Արաբիա 145, 151, 186, 194, 195, 199, 202
Արաբիսուս 12
Արագած 309
Արագոն 396, 412, 430, 437, 491, 492, 493, 494, 507
Արագոնի թագավորություն 437, 495
Արակլի 174
Արայի լեռ 309
Արարատ լեռ 363, 364
Արարատյան գավառ 300
Արաքս գետ 363, 364
Արաքսի Հովիտ 372
Արբելա 29
Արզուֆ 340
Արտազ, գավառ, 364
Արտաշատ–Նոյ–Պարեսակա, ճանապարհ, 364
Արքակաղին 221, 264
Արծն 56, 63, 139, 194
Արծրունիների իշխանապետություն 502
Արծրունիների թագավորություն 53
Արծրունիք (Վասպուրական) 58
Արևելահռոմեական կայսրություն 36
Արևելյան Անդրկովկաս 205
Արևելյան Եվրոպա 388
Արևելյան Հայաստան 56, 60
Արևելյան Տավրոս 12
Արևմտակասպյան մարզեր 357
Արևմտահռոմեական կայսրություն 36
Արևմտյան Եվրոպա 5, 193, 194, 256, 317, 355, 409, 449, 451
Արևմտյան Հայաստան 39, 60, 180, 301, 507
Աֆրիկա 10, 14, 471

Բաբ ալ Ջիհադի դարպաս 41
Բաբելոն–Լիդիա, մայրուղի, 27
Բաբերդ (Բայբուրդ) 372
Բագավան 363, 370, 371
Բագրաս 163, 417
Բագրատունիների իշխանապետություն 502
Բագրատունիների թագավորություն 53
Բալկանյան թերակղզի 42, 124, 147, 449, 495
Բալկաններ 148
Բաղդադ 11, 40, 45, 75, 161, 192, 194, 196, 199, 205, 206, 332, 314, 315, 318, 319, 321, 322, 323, 324, 329, 333, 349, 356, 357, 358, 366, 368, 373, 374, 376, 377, 381, 398, 399, 420, 432, 504
Բաղդադի խալիֆայություն 24, 41–48, 50, 55, 192, 193, 295, 304, 320, 322, 332, 398
Բաղուձոր (Բազենների ձոր) 364
Բայազետ 363, 364
Բասեն 363
Բասենի մարզ 62
Բասենի սարահարթ 62, 63
Բասրա 356, 376
Բարղի 395, 396
Բարձրբերդ 355, 434
Բարձրբերդ, ամրոց, 20
Բարսելոն 492
Բելոռուսիա 450
Բեհեսնի բերդ 349, 432
Բեյրութ 389, 431
Բերդյանսկ 184, 203, 400.

Բերդկա 255
Բերդուս, ամրոց, 13, 20, 98, 127, 172, 254
Բիր, ամրոց, 80, 99, 211, 339, 340, 420
Բյուզանդիա 8, 9, 18, 19, 20, 24, 38–42, 44, 47–50, 53–63, 65–113, 115, 117–127, 129–138, 140, 141, 143, 144, 145, 147, 148, 149, 152, 157, 158, 159, 160, 162, 167, 171, 182, 184, 186, 187, 194, 208, 209, 210, 211, 235, 244, 246–249, 293, 297, 348, 387, 398, 411, 433, 449, 452, 466, 490, 491, 495, 500, 501, 502, 503
Բյուզանդական կայսրություն 8, 12, 36–39, 51, 94, 95, 96, 102, 105, 109, 110, 124, 127, 133, 135, 140, 196, 246
Բոլորապահակ 363
Բոսֆորի նեղուց 388
Բշնի 70
Բրինդիզիոն 117
Բուլղարական թագավորություն 48, 56
Բուլղարիա 42, 47, 124, 148
Բուխարա 356

Գադուե 359, 362
Գաղիայնտեբի 17
Գալաթիա 39, 131
Գալիցիա 400
Գանդոն 359
Գանձակ 71, 301
Գառնի 300
Գաստոն (Գաստիմ), ամրոց, 13, 116, 154, 163, 256, 295
Գավազերա դել Ամիրալիո 359, 360
Գավազերա դել Սոլդանո 360
Գավազերա դը կազա Ջակոմի 359
Գարզար 80
Գերմանիա 43, 158, 159, 162, 234, 411, 412
Գերմանիկոպոլիս, տե՛ս **Երմենեկ**
Գիեննի զավառ 444
Գյուրջիստանի վելայեթ 309
Գոնդուլորո 400
Գրանադա 495
Գրեբոկո 362
Գուզլակ լեռնանցք («Դուռն Կիլիկիո») 11, 183, 360, 361, 367, 368, 373, 378, 392
Գուզլակ, ամրոց, 18, 20, 359, 362
Գուրիա 79
Գուրոս 129

Դալմաթիա 124, 125, 148
Դամասկոս 26, 40, 44, 46, 49, 50, 119, 120, 121, 123, 139, 327, 337, 415, 417, 437, 439, 490
Դամասկոսի խալիֆայություն 39, 40, 145
Դամուրդաչ 454
Դանուբ, գետ, 125
Դաշտային Կիլիկիա 7, 9, 10, 14, 16, 24, 29, 30–34, 39, 40, 42, 51, 91, 93–97, 99–103, 119, 125, 128, 133, 135, 136, 143, 152, 182, 187, 211, 246, 391, 435, 464, 435, 473, 474, 478, 501, 502
Դաուին, զավառ 371
Դարբսակ 9, 20, 163, 341, 349, 417
Դարդանելի նեղուց 148
Դելի Բաբա, կապան, 363
Դեսիմոնի 399
Դլուկ 20
Դերբենդ 204, 205, 310, 373, 417
Դերբենդ էլ-Մաուի, տե՛ս **Ամանոսի լեռնանցք**
Դերբենդի լեռնանցք 204, 205, 299, 331, 361, 372
Դիաղին 363, 371
Դիարբեքիրի մարզ 321
Դմշկ 120
Դնեստր, գետ, 204, 400, 403
Դոն, գետ, 400
Դոնի Ռոստով 3
Դորիլեա 39, 47, 94
Դորուբ, երկիր, 131
Դորուբ, տե՛ս **Տավրոսի լեռներ**
Դվին 56
Դրազարկ, վանք, 99, 221, 252, 264, 289
Դրունք Կիլիկիո, տե՛ս **Պորտելլա**
Դուդրիագա 362
Դուռն (դարպաս) Ասորվոց, տե՛ս **Ասորա–Կիլիկյան լեռնանցք**
Դուրացցիո 96

Եգեհո 455
Եգիպտոս 5, 10, 13, 24, 25, 28, 34, 37, 42, 44, 100, 110, 129, 150, 151, 183, 194, 198, 199, 200, 202, 249, 284, 286, 298, 311, 313, 314, 318, 319, 321, 325, 327, 328, 330, 333–336, 338, 339, 341, 343, 348, 349, 353, 361, 373, 374, 375, 376, 380, 382, 386, 388, 390, 391, 393, 398, 399, 406, 407, 408, 414, 415, 416, 418, 419, 420, 421, 424, 426, 428, 431, 432, 435, 436, 440, 442, 444, 446, 447, 448, 451, 453, 457, 458, 459, 460, 464, 471, 475, 477, 480, 482, 485, 486, 491, 492, 507
Եգիպտոսի սուլթանություն 21, 127, 183, 200, 262, 286, 288, 295, 298, 328, 329, 330, 331, 334, 335, 336, 340, 341, 347, 349, 350, 356, 369, 373, 376, 380, 381, 382, 387, 398, 399, 403, 406, 408, 409, 411, 412, 417–425, 427–432, 434, 435, 436, 438, 440, 442, 443, 445, 446, 447, 449, 451, 452, 453, 456, 457, 458, 459, 461, 464, 465, 466, 467, 470, 471, 473, 474, 475, 477–481, 483, 485, 486, 488, 490, 504, 505, 506, 507
Եղեսիա 29, 65, 72, 73, 76, 77, 78, 79, 80, 86, 103, 113, 128, 139, 141, 325, 326, 327, 338, 339
Եղեսիայի իշխանապետություն 76, 113, 119, 502
Եզդ 370
Եթովպիա 151
Ելչիկատա 318
Երենուպոլիս 36
Եպիֆանիա 36
Եվրոպա 10, 22, 74, 79, 96, 102, 104, 122–127, 159, 160, 167, 168, 182–188, 193, 195, 198, 202, 205, 206, 245, 248, 260, 293, 329, 335, 348, 350, 355–358, 366–370, 375, 376, 379–383, 387, 389, 391, 392, 394, 396, 398, 399, 401, 404, 406, 408–412, 419, 422–428, 430, 431, 432, 437, 438, 439, 443, 448, 449, 452, 461, 462, 463, 466, 468, 469, 471, 475–482, 484, 489, 490, 492, 499
Երզնկա 201, 301, 358, 362, 365, 370, 372, 373, 400
Երզնկա–Էրզրում, ճանապարհ, 358, 362, 365
Երկրորդ Կիլիկիա 35, 97
Երկրորդ Հայք 6, 8
Երմենեկ (Գերմանիկոպոլիս) 12, 20
Երրորդ Հայք 6, 8, 156
Երուսաղեմ 9, 46, 103, 119, 120, 128, 130, 143, 145, 147, 151, 159, 164, 169, 248, 290, 313, 319, 325, 326, 327, 408, 426, 463, 490, 492
Երուսաղեմի թագավորություն 119, 120, 123, 129, 164, 165, 244, 256, 259

Երևան 3, 4, 26, 290
Եփրատ, գետ, 6, 7, 8, 19, 20, 31, 38, 45, 53, 76, 80, 86, 103, 108, 109, 118, 122, 126, 127, 194, 201, 211, 223, 331, 334, 339, 340, 366, 416, 418, 431, 436, 437
Եփրատի կամուրջ 362
Եփրատի մարզ 47, 67

Զեյթուն 13, 19, 87, 488, 498, 507
Զենգի 113, 141
Զննորիա 34
Զնփուրիա 36
Զմուռնիա 472
Զևգմա 29

Էգեյա 36
Էլ-Բիրե, տե՛ս Բիր ամրոց
Էմեսա 418, 419, 436, 437
Էմեսայի իշխանապետություն 338
Էջմիածին 215, 433, 507
Էստաք 490
Էրզրում 8, 49, 196, 201, 301, 357, 358, 363, 365, 370, 372, 373, 400, 417, 454
Էրզրում–Թավրիզ, ճանապարհ, 358, 362, 371
Էրզրում–Խնուս–Մանազկերտ–Արճեշ–Թավրիզ, ճանապարհ, 370

Ընկուզատ 254

Թաբորական լեռ 328
Թաթարստան 310
Թալաս 310, 322, 332, 333
Թայ Ջավարայի դաշտ, տե՛ս Ավարայրի դաշտ
Թանա 374
Թավրիզ 207, 228, 357, 361, 363, 365, 365–372, 375, 376, 384, 388, 399, 400, 415, 436, 444, 505
Թավրիզ–Այաս, մայրուղի, 365, 367, 372, 374, 376, 380
Թավրիզ – Արճեշ – Էրզրում, ճանապարհ, 372
Թավրիզ–Էրզրում, ճանապարհ, 357
Թավրիզ–Էրզրում–Տրապիզոն 371
Թավրիզ – Տրապիզոն, ճանապարհ, 372
Թավրիզ–Խոյ–Արճեշ–Մանազկերտ–Էրզրում – Տրապիզոն, մայրուղի, 365
Թավրիզ–Քեոփրիքյոյ–Էրզրում, ճանապարհ, 372
Թարսուս–չայ, տե՛ս Կյուղնոս գ.
Թբիլիսի (Թիֆլիս) 16, 301
Թեբե 25
Թել-Բաշիր (Տուրբեսել) 76, 77
Թեոդոպոլիս, տե՛ս Էրզրում
Թեոդոսիա, տե՛ս Կաֆա
Թերեք, գետ, 334
Թերմոպիլե 89
Թիլ 134, 297
Թիլ-Համդուն 116, 432, 435, 440
Թիլ-Համդուն, ամրոց, 13, 20
Թլի 254
Թլկուրան 237
Թլպաս 254
Թոդուրգա, գյուղ, 362
Թոնուզ 362
Թոռնիկ 254
Թոքատ 414
Թունիս 349, 350
Թուրքեստան 333
Թուրքիա 10, 14, 473, 498, 499, 500, 507

Ժամնկան 255
Ժեռուտ կիլիկիա (Տրախեյա), սարահարթ, 10, 14

Իզիա, տե՛ս Սիս
Ինեոպ 117
Իկոնիա 11, 12, 23, 123, 126, 150, 173, 198, 200, 204, 205, 295, 302, 303, 322, 330, 331, 346, 347, 358, 361, 367, 368, 393, 399, 414, 450, 456, 457
Իկոնիայի սուլթանություն 11, 20, 96, 127, 143, 155, 163, 175, 193, 197, 198, 199, 200, 202, 203, 204, 295, 298, 300, 304, 305, 322, 324, 328, 329, 337, 346, 367, 398, 414, 415, 453, 503
Իսավրիա 7, 11, 15, 17, 20, 32, 33, 36, 105, 112, 144, 256, 329, 440, 452
Իսավրիո գետ 175
Իսպանիա 396, 412, 475, 495, 496
Իսսիոսի ծոց 13, 28, 501
Իտալիա 36, 43, 92, 93, 95, 96, 110, 115, 117, 122, 124, 126, 147, 159, 183, 187, 348, 369, 391, 404, 410, 411, 476, 480
Իրան 10, 21, 34, 36, 37, 38, 41, 42, 62, 75, 103, 155, 194, 196, 202, 299, 300, 312, 313, 320, 321, 323, 327, 328, 330, 332–336, 340, 347, 348, 356, 357, 361, 364, 365, 367, 368, 369, 372, 374, 375, 376, 380, 399, 407, 408, 415–421, 432, 424, 432, 437, 439, 442, 443, 459, 460, 500
Իրանի մոնղոլական պետություն 205
Իրաք 365, 373, 420

Լազռավեն 255
Լամբրոն 70, 113, 114, 115, 131, 133, 134, 140, 161, 202, 246, 255, 257, 297, 298, 303
Լամբրոնի բերդ 18, 20, 71, 252, 253
Լամբրոնի գավառ 90, 97
Լամոս գետ 16
Լամոս, նավահանգիստ, 16, 255
Լայաս, տե՛ս Այաս
Լայացցո, տե՛ս Այաս
Լաոդիկե 50, 95, 96, 123
Լաոընդա 174
Լասկարիա 172
Լավզադ, ամրոց, 20, 255
Լատինական կայսրություն 171, 192, 377, 382, 387
Լարանդա 9, 12, 20
Լարիսա 67, 69, 88
Լենինգրադ 6, 10, 14, 15, 25, 155, 196, 221, 371, 368, 372, 400
Լեռնային Կիլիկիա 10, 14, 16, 19, 29, 30, 32, 33, 34, 35, 36, 39, 40, 51, 88, 90, 91, 93, 96, 97, 128, 135, 138, 187, 195, 211, 246, 413, 454, 465, 479, 480, 483, 485, 498, 501, 507
Լեսբոս կղզի 478
Լիզուրտի 362
Լիդիա 27, 28, 94, 501
Լիկանդոս 12, 51
Լիկաոնիա 7, 17, 32, 33, 69, 131
Լիկեյի Լաոդիկե 33
Լիոն 411, 412
Լիրնես 25
Լյաս 366
Լոնդոն 395, 409, 427, 466, 497, 507
Լուլուա 175
Լուլվար 255
Լուվր 496

Խաղաղ օվկիանոս 313, 321, 333, 353
Խաղտիքի գավառ 62
Խամատի իշխանապետություն 338
Խամու 436
Խաչեն 302
Խառան 95, 96, 321
Խավարտենք 67, 68, 69, 85
Խարբերդ 71, 201
Խիտա 321

Խլաթ *153, 300, 301, 503*
Խոյ *364, 365*
Խոյ–Թավրիզ, ճանապարհ, *365*
Խոտան *356*
Խորասան *75, 86, 349, 415, 417, 444*
Խորեզմ *300*
Խորեզմի պետություն *300*
Խորձյան, զավառ, *63*

Մամղավ *66, 67, 68, 69*
Մովք *201*
Մոփք *30*

Կազենա *359, 360*
Կազենայի զավառ *360*
Կալատ ար Ռում, *տե՛ս* **Հռոմկլա բերդ**
Կալիկադնոս, գետ, *11, 15, 20, 22, 28, 35, 149*
Կալկա *299*
Կալոնորոս *9, 22, 200*
Կալոնպալատ *61, 68*
Կալուբուրուսի ժայռեր, *տե՛ս* **Կալոնորոս**
Կահիրե *417, 419, 460, 473, 486, 487, 489, 490, 491, 492, 506*
Կամախ *204*
Կամարղելում (Կամարաբերդ) *163*
Կանչի բերդ *19, 173, 254*
Կանչգար *356*
Կապադովկիա *7–10, 12, 13, 15, 19, 20, 27, 29, 30, 31, 33, 39, 41, 46, 49, 52, 53, 54, 56, 58, 59, 61, 62, 64–69, 71, 72, 73, 86, 88, 94, 97, 99, 117, 127, 134, 137, 144, 146, 156, 209, 210, 211, 257, 263, 307, 337, 502*
Կապադովկիայի չրջաններ *209*
Կապան, ամրոց, *12, 18, 19, 174, 175, 197, 256, 359, 360, 469*
Կապանի լեռնանցք *256*
Կապնի *254*
Կապուա *255*
Կասպից ծով *75, 205, 332*
Կաստաբալա *36*
Կաստալոն (Կաստաղոն) *87, 89*
Կաստեղում Նովում (Նոր բերդ) *163*
Կաստիլիա *412, 492, 493, 494, 507*
Կաստոն *20*
Կատալոգա–Արաբական իշխանապետություն *495*
Կատալոնիա *355, 394, 396, 397, 495*
Կատաոնիա *7, 9, 12*
Կարամանիա *453, 485, 505*
Կարաչանակ *321*
Կարաքենդ *364*
Կարին, *տե՛ս* **էրզրում**
Կարինի սարահարթ *62*
Կարմիր գետ *364*
Կարմիր ծով *374, 375, 376, 380*
Կարմիրվանք *289*
Կարս *8, 64, 66, 69, 194, 301, 309, 361*
Կարսի թագավորություն *48, 56, 502*
Կարսի մարզ *69*
Կաֆա *203, 205, 206, 374, 388, 394, 400*
Կենտրոնական Ասիա *205, 321, 326, 372–373*
Կեսարիա *7, 12, 66, 67, 68, 69, 85, 155, 172, 173, 174, 176, 198, 199, 202, 203, 204, 301, 340, 341, 360, 361, 365, 370, 373, 414, 434, 504*
Կեսարիա–Երզնկա–Կարս–Դերբենդ *373*
Կեսարիա–Սվազ, ճանապարհ, *362, 365*
Կիղնոս գետ *12*
Կիզիատրա, ամրոց, *69, 73, 97*
Կիլիկիա *3, 4*
Կիլիկիայի Հայկական թագավորություն *4*
Կիլիկիայի Հայկական պետություն *3*
Կիլիկյան Դարպաս (Դրունք), *տե՛ս* **Պորտելլա**
Կիլիկյան լեռնանցքներ *182, 198*
Կիլիկյան հարթավայր *10, 14, 96, 111, 134, 154, 183, 435*
Կիլիկյան Հայաստան *4*
Կիլիկյան Տավրոս *10, 41, 71*
Կլաուդիա (Կոմագենե) *147*
Կիպրոս *12, 14, 22, 32, 39, 40, 43, 108, 113, 117, 118, 295, 313, 317, 318, 334, 347, 358, 396, 405, 408, 409, 421, 432, 434, 440, 448, 449, 453, 455, 458, 464, 465, 470, 472, 474, 475, 477, 479, 480, 481, 482, 483, 493, 506, 507*
Կիպրոսի թագավորություն *165, 166, 337, 338, 462, 465, 482*
Կյոջե *387*
Կյուդնոս գետ *15, 16, 20, 22*
Կնդրոսկավիս, *տե՛ս* **Կիզիատրա ամրոց**
Կոդիի թագավորություն *25*
Կոզան *17*
Կոլիդարա, *տե՛ս* **Կոպիտաո ամրոց**
Կոլիմոզոլո (Կորոմոզոլ) *87*
Կոլխիդա, դաշտավայր, *14*
Կոկիսոն (Կուկուսիա) *12, 36, 360*
Կոմագենե *7, 8, 30, 33, 502*
Կոմանա *12, 69*
Կոմանե *362*
Կոյա Դիբի, գյուղ, *362*
Կոնիա *172, 197, 373*
Կոպա *388*
Կոպիտաո, բերդ, *87, 88, 89, 255, 359*
Կոռիկոս *14, 18, 19, 22, 36, 184, 205, 255, 256, 311, 352, 388, 389, 392, 398, 450, 455, 475, 479, 483, 506*
Կոռիկոսի ամրոց *191, 256, 298, 474, 483, 484*
Կոստանդնուպոլիս *11, 37, 38, 39, 40, 45, 46, 47, 61, 66, 67, 68, 70, 72, 73, 79, 104, 107, 111, 112, 121, 122, 131, 132, 143, 148, 157, 158, 159, 160, 171, 182, 186, 193, 194, 197, 361, 373, 392, 433, 434, 436, 466*
Կովկաս *388*
Կովկասյան լեռնաշղթա *340*
Կոտրատ *255*
Կորդուենե *30*
Կորսուն *202, 203*
Կորսունի մարզ *203*
Կորֆու, կղզի, *113*
Կրեմոզոր *368*
Կրեսի *470*
Կուկկա, կապան, *255, 303*
Կուտի *254*
Կուրցոլ *393*

Հաբեշստան *10*
Հալեպ *39, 43, 47, 74, 79, 95, 108, 119, 120, 121, 123, 129, 131, 169, 170, 194, 198, 199, 324, 325, 326, 327, 339, 399, 419, 420, 432, 435, 437, 440, 447, 463, 473, 479, 485, 486, 487, 489, 506*
Հալեպի էմիրություն *145, 170*
Հալիս գետ *7, 15*
Հալիսի հովիտ *362*
Հաղպատ *166*
Հաճըն *20*
Համայք (Ցամայք), մարզ, *237*
Համուդ բերդ *112, 164, 165*
Համուս, բերդ, *13, 20, 254*
Հայաստան *3, 8, 11, 14, 17, 19, 21, 27, 31, 32, 34, 41, 44, 48, 49–54, 56, 57, 59, 62, 63, 64, 66, 69, 71, 72, 75, 86, 94, 98, 108, 118, 122, 126, 131, 137, 139, 141, 142, 144, 146, 150, 151, 152, 154, 167, 171, 173, 179–180, 194, 202, 208, 210, 211, 221, 232, 234, 235, 238, 242, 244, 245, 246, 260, 264, 267, 275, 282, 290, 293, 300, 307, 308, 310, 312,*

321, 350–355, 357, 364, 365, 367, 370, 372, 373, 379, 381, 383, 389, 396, 397, 404, 405, 415, 420, 428, 431, 441, 455, 457, 459, 463, 466, 469, 473, 496, 497, 498, 500, 502, 503, 504
Հայկական ՍՍՀ 499
Հայկական Կիլիկիա 4
Հայոց Թագավորություն 314, 337
Հայֆա 340
Հաչտյանք, գավառ, 63
Հաջի Խալիլ 363
Հարավային Ասորիք 30
Հարավային Աֆրիկա 195
Հարավային Ֆրանսիա 194, 197
Հարգա, քաղաք, 20
Հարիմ 125
Հարուն, ամրոց, 13, 20, 254
Հեր (Խոյ) 291
Հերաթ 356
Հերակլեա 9, 20, 330
Հին Արևելք 24, 25, 26, 27
Հին Հայաստան 363
Հինդուստան 321
Հյուսիսային Ասորիք 24, 25, 26
Հյուսիսային Աֆրիկա 348
Հյուսիսային Իրան 57
Հյուսիսային Հայաստան 180, 309
Հյուսիսային Միջագետք 30, 31, 46, 47, 52, 63, 95, 113, 119, 124, 502
Հյուսիսային Սիրիա 9, 51, 163, 501, 502
Հնդկական օվկիանոս 322, 328, 332, 375
Հնդկաստան 103, 195, 202, 205, 321, 323, 336, 356, 357, 358, 365, 367, 368, 369, 374, 375, 381, 383, 388, 394, 399
Հնդկաստան–Կարմիր ծով, ճանապարհ, 381
Հորմուզ 365, 370, 376
Հոռոմոս կղզի 452, 458, 470, 471, 472, 478, 492
Հռոմ 5, 143, 151, 157, 158, 159, 161, 162, 409, 426, 427, 430, 431, 441, 448, 464, 476, 493, 500, 501, 505
Հռոմեական կայսրություն 7, 8, 12, 24, 26, 29–36, 95, 147, 162
Հռոմկլա, բերդ, 20, 78, 129, 139, 140, 149, 263, 264, 290, 293, 327, 416, 431, 432, 440, 503, 505
Հուլավյանների պետություն 205, 320, 334, 357, 380, 419, 423, 425, 428, 429, 432, 451, 459, 460
Հունաստան 5, 27, 28, 36, 92, 75, 478
Հունգարիա 95, 124, 125, 131, 150, 400

Ղազնի 356
Ղաուլի 321
Ղարաղորում 307–310, 313, 319, 320, 322, 504
Ղարաքիլիսա 363
Ղրիմ 10, 182, 196–200, 202, 203, 205, 206, 355, 356, 372, 381, 388, 391, 398, 401, 404, 473
Ղրիմի պետություն 205

Ճանճի բերդ 173, 254
Ճզիրե 455
Ճկեր, ամրոց, 13, 134, 254
Ճկերի չրջան 164

Մադրիդ 260, 493, 494
Մազոտխաչ 254
Մաժակա (Մազակա) 7
Մալաթիա 68, 447
Մակեդոնիա 88, 466
Մակիոնե Բարբարիա 400
Մակու 364
Մաղվա 255
Մամեստիա 12, 15, 18, 19, 22, 25, 28, 36, 41, 43, 73, 94, 95, 97, 100, 102, 112, 114, 115, 131, 139, 140, 150, 182, 184, 185, 187, 189, 190, 192, 193, 252, 360, 390, 391, 401, 413, 435, 463, 501
Մամիստրա, տե՛ս Մամեստիա
Մայաֆարկին (Մուֆարղին) 45
Մայծառ 304
Մայնց 160
Մանազկերտ 44, 55, 66, 70, 71, 72, 201, 467
Մանիոն, ամրոց, 329, 330
Մանովչատ 255
Մաչին 321
Մառիի լեռնանցք 341, 435
Մառիի ճակատամարտ 288, 295, 342, 344, 345, 347, 348, 504
Մասսիա, տե՛ս Մամեստիա
Մավրիտանիա 151
Մատրեգա 388
Մարագու 364
Մարաղա 433
Մարաշ 12, 13, 15, 17, 40, 41, 65, 71, 72, 73, 75, 78, 86, 90, 93, 337, 338, 365, 432
Մարաշի հարթավայր 98
Մարիոկեֆալոս 132
Մարմարա ծով 46, 47, 73, 94, 171, 172, 194, 197, 453
Մարսել 397, 398, 462
Մարտիրոպոլիս տե՛ս Մուֆարղին
Մելիտինե 8, 40, 41, 43, 45, 46, 49, 51, 73, 77, 78, 139, 146, 201
Մելոս 131
Մեծ Հայք 5–8, 10, 16, 50, 53, 54, 58, 70, 138, 165, 235, 236, 249, 259, 267, 293, 294, 306, 307, 309, 310, 312, 370, 401, 459
Մեծ Հայք, վիլայեթ, 310
Մեղեբա 349
Մերձավոր Արևելք 133, 143, 147, 162, 181, 184, 187, 201, 202, 235, 300, 308, 310, 323, 355, 388, 429, 451, 458, 459, 473
Մերձուրալ 184, 204
Միզդոնիա 30
Միղիա 30
Միսանիջ 364
Միջագետք 9, 10, 12, 13, 20, 21, 27, 29, 31, 34, 42, 43, 44, 48, 49, 51, 52, 54, 55, 66, 70–73, 75, 76, 78, 81, 95, 96, 104, 108, 109, 110, 127, 135, 136, 137, 146, 171, 194, 196, 202, 211, 215, 233, 235–238, 263, 290, 298, 308, 312, 318, 321, 322, 324, 325, 326, 328, 336–350, 356, 357, 362, 370, 399, 416, 429, 460, 469, 502, 503
Միջերկրական ծով 6, 10, 13, 15, 16, 19, 26, 28, 31, 32, 37, 41, 50, 54, 64, 65, 66, 72, 73, 74, 75, 94, 103, 104, 109, 110, 123, 134, 136, 156, 171, 172, 173, 182, 184, 187, 193, 194, 196, 197, 198, 207, 212, 249, 313, 321, 322, 323, 324, 328, 329, 335, 336, 353, 355, 356, 361, 365, 366, 372, 374, 376, 380, 381, 387, 393, 405, 411, 421, 447, 458, 478, 494, 495, 499
Միջին Ասիա 16, 41, 299, 300, 322, 336, 356, 358, 365
Միտիլինե 478
Մլտենի 86
Մոլիվոն 255
Մոնղոլիա 205
Մոնղոլական կայսրություն 332, 353, 355, 358, 374
Մոնպելիե 260, 262, 397, 398, 462
Մոպսուեստիա, տե՛ս Մամեստիա

Մոսկվա 10, 14, 22, 25, 33, 155
Մոսուլ 80, 141, 146, 196, 299
Մսըր 321, 327, 328, 340, 342, 344, 455
Մսխա 47, 100, 139, 149, 343, 402
Մուգհիսար 362
Մուդ (Կլավդիոպոլիս) 12
Մուխ 362
Մուղանի տափաստան 371
Մունդաս, ամրոց, 20
Մուշ 55
Մուշ–Մարդին, ճանապարհ, 370
Մուֆարղին (Մարտիրուպոլիս) 8, 324
Մուֆարղինի մարզ 321

Յարքենդ 356
Յաքսարտի (Ջեյհան) գետ 16

Նախիջևան 204, 365, 372, 373, 400
Նահր էլ Քելբե 26
Նանկին 356
Նավարա 494
Նեապոլ 441, 479, 491, 506
Նեղոս գետ 14
Նիզիբին (Մծբին) 29, 45, 146
Նիկեա 73, 74, 94
Նիկեյան կայսրություն 144, 171, 172, 197
Նիկոզիա 159, 479
Նիմ 397, 398
Նիջիմե, ամրոց, 434
Նոր բերդ 255

Շամ, գավառ, 45, 328
Շամախի 204, 373
Շամխոր 299
Շեյդար 100
Շեյզար 47, 52, 108
Շիդար իշխանապետություն 195
Շիրապ 321
Շիրակ 55, 57, 204
Շիրվան 310
Շողական (Շողակն) 174, 254
Շուտլանդիա 410, 412

Ոսկե Հորդա 201, 205, 295, 306, 307, 308, 310, 311, 312, 318, 319, 327, 328, 330–336, 339, 340, 341, 348, 356, 372, 373, 380, 411, 412, 415, 416, 423, 429, 444, 460
Ովկիանոս, տե՛ս **Միջերկրական ծով**

Ջաղաթու 371
Ջեխիա 462
Ջեռնոգորիա 498
Ջինաստան 202, 321, 336, 356, 359, 365, 370, 371, 374, 375, 379, 388, 399, 401, 412, 424
Ջխոնդիդի 261
Ջմշկածագ 201
Ջորան Քեփրի, կամուրջ, 363
Ջորրորդ Հայք 8

Պալլորում (Պայաս) 21
Պաղեստին 28, 30, 38, 45, 94, 104, 110, 119, 129, 143, 152, 153, 159, 160, 187, 209, 318, 407, 408, 409, 411, 424, 425, 426, 427, 440, 445, 457, 461, 472, 501, 505
Պաղր 254
Պաղրաս 20
Պամփիլիա 7, 9, 25, 178, 295
Պանկալիա 46
Պապեռոնի բերդ 20, 70, 471
Պապեռոնի լեռ 303
Պասինսու, գետակ, 363
Պավրայուն 117
Պարսից ծոց 10, 11, 21, 30, 324, 336, 356, 358, 365, 370, 374, 375
Պարսկաստան 8, 27, 28, 39, 74, 152, 300, 370, 373, 420, 429, 501, 507
Պեհեանի 397
Պետերբուրգ 38
Պերգամոնի թագավորություն 29
Պերուցցի (Փիրմա) 395, 396
Պիզա 61, 68
Պիզայի հանրապետություն 126
Պիռամոս (Ջեյհան) գետ 10, 15, 16, 18, 19, 20, 21, 22, 46, 73, 97, 184, 191, 359, 390, 391, 435, 453, 464, 506
Պիռամոսի հովիտ 12, 13, 46, 97
Պիսիդիա 7, 32
Պոդանա 209
Պոմպեոպոլիս 30, 32, 36
Պոնտական Տավրոս 41
Պոնտոս 29
Պոնտոս, երկիր, 31
Պոնտոսի թագավորություն 30
Պոնուրա 117
Պոսոս 36
Պոտանդոն 11
Պորտելլա, լեռնանցք, 11, 18, 88, 116, 154, 190, 193, 256, 366, 367, 392, 399, 492, 495
Պորտուգալիա 492, 495
Պռական, ամրոց, 255, 304
Պտղոմեա, քաղաք, 28, 159, 160
Պտունտոս (եգիպտական) 195

Ջահան (Ջեյհան, Ջայհան), գետ, տե՛ս **Պիռամոս գետ**
Ջեբել էլ-Լուկամի (Տավրոսի) լեռնաշղթա 18
Ջեբել-Բերկետ 17
Ջելկոնց 455
Ջենովա 12, 103, 182, 186, 187, 188, 190, 191, 204, 260, 262, 355, 366, 367, 375, 377, 378, 381, 388, 389, 391, 393, 394, 400, 405, 426, 430, 462, 479, 483, 484, 503
Ջենովայի հանրապետություն 126, 159, 162, 368, 375, 388, 389, 393, 405, 482
Ջիհուն գետ 360
Ջուրջև 321

Ռաբան 73, 78, 84, 85
Ռահբե 420, 447
Ռավենդա (Ռավեննել) 76, 79
Ռաքքա 194
Ռոմանիե 92, 398
Ռուբինյանների հայկական իշխանապետություն 73, 91, 96, 97, 117, 123, 211
Ռումի երկիր 95, 96, 98, 111, 116, 117, 121, 136, 153, 304, 321, 343, 373, 414, 415, 420, 436, 447, 504
Ռումի սուլթանություն 107, 118, 133, 156, 164, 173, 196, 314, 330, 357, 414
Ռուսիա 196, 197, 198, 199, 201, 258, 355

Սալեֆիո, տե՛ս **Սելևկիա**
Սամարղանդ 317, 322, 356
Սամոսատ 41, 51, 77, 80
Սանահինի վանք 165
Սասուն 70, 72, 211, 502
Սավա 370
Սարայ 204, 273
Սարդես 11
Սարդինիա 495
Սարոս (Սեյհուն, Սիհուն, Սեյհան) 11, 15, 16, 20, 97, 184, 360, 390, 391
Սարվանդ 146
Սարվանդքար, ամրոց, 13, 20, 102, 134, 254
Սեավ 153
Սեբաստիա (Սվազ) 8, 12, 36, 57, 58,

65, 67, 85, 95, 196, 198, 202, 203, 204, 206, 301, 358, 360, 361, 362, 365, 370, 372, 373, 400, 493
Սելեֆ գետ, տե՛ս **Կալիկադնոս**
Սելևկիա 12, 15, 20, 22, 28, 35, 105, 128, 134, 163, 200, 252, 329, 330
Սելևկիանների պետություն 30, 501
Սեն-Օուեն 496
Սերբիա 125, 131, 132, 148
Սիբիլա 117
Սիդո 27
Սիդոն 338, 431
Սիլիֆկ 255
Սիկո 225
Սիմանկլա, բերդ, 13
Սինիտ 255
Սինոպ 172, 173, 194, 196–205, 361, 362, 372, 388
Սիս (Սիսավան) 5, 6, 9, 12, 15, 18, 88, 128, 132, 133, 145, 159, 160, 172, 173, 174, 180, 183, 189, 190, 193, 205, 249, 251, 260, 261, 263, 264, 289, 311, 323, 342, 344, 349, 359, 360, 382, 384, 385, 401, 405, 413, 433, 435, 441, 448, 454, 465, 466, 469, 474, 475, 476, 479–488, 490, 506, 507
Սիսի միջնաբերդ 486
Սիրիա 7, 9, 11–15, 19, 20, 21, 42–49, 50–55, 59, 66, 71–76, 80, 81, 84, 86, 89, 92–96, 99, 103, 104, 105, 108–111, 118–124, 126, 127, 133, 135–138, 143, 146, 152, 153, 164, 182, 186, 187, 190, 192–198, 200, 202, 205, 206, 209, 211, 214, 215, 221, 233, 235, 236, 237, 249, 256, 257, 263, 264, 266, 293, 295, 298, 304, 308, 311, 312, 320, 321, 322, 324–331, 333–341, 346, 348, 352, 356, 358, 361, 367, 368, 369, 371, 373, 374, 376, 377, 380, 381, 382, 384, 389, 390, 398, 399, 402, 406–409, 412, 414–417, 419, 421, 424–426, 429–432, 434–440, 443, 445, 447, 451, 453, 457, 460, 461, 464, 469, 471, 473, 478, 480, 483, 488, 499, 501, 502, 503, 504, 505
Սիրիական լեռնանցքներ 182
Սիցիլիա 95, 147, 159, 348, 355, 394, 411, 430, 461, 495
Սիցիլիայի Թագավորություն 95, 113, 395, 462
Սկանդերունի ծոց 379
Սկյութիա 151
Սկևռա վանք 264
Սմանկալի բերդ 254
Սյունիք 293, 310, 312
Սոլղայա 199
Սոլի տե՛ս **Պոմպեոպոլիս**
Սոլոնդայ 321
Սպեր 62
Սվազ, տե՛ս **Սեբաստիա**
Սվազ–Երզնկա, ճանապարհ, 358, 365
Սուդակ 199, 201, 202, 203, 205, 206, 388, 400
Սուզա 11
Սուլթան խան 323
Սուլթանիա – Ջանջան – Արղաբիլ – Ուջան – Սախզաբադ – Մարանդ – Խոյ – Արճեշ – Մալասջիրդ – Խնուս – Արզանարում – Արզանջան – Սվազ – Ռումի Կոնիա, մայրուղի, 364
Սուլթանիե 375, 376, 447, 459
Սուխում 388, 394
Սև լեռ 92
Սև ծով 10, 11, 13, 21, 37, 41, 94, 171, 173, 182, 186, 191, 192, 193, 194, 196, 197, 198, 205, 206, 332, 333, 336, 355, 356, 361, 362, 365, 372, 374, 375, 376, 380, 382, 387, 388, 393, 394, 403
Սևաստ 139
Սևաստոպոլ 388
Սևոտի 75

Վադիմում 12
Վահկա բերդ 18, 20, 87, 90, 92, 105, 106, 112
Վաղարշապատ 82, 137, 219, 269, 442
Վան 8
Վանա լիճ 370
Վաներ 163, 255
Վասպուրական 57, 58, 59, 61, 62, 63, 67, 70, 71, 85, 353, 502
Վասպուրականի Արծրունիների Թագավորություն 44, 48, 54, 56, 57
Վատացա 206, 400
Վատիկան 167, 168, 260, 493
Վարդենիս 309, 310, 312
Վելեգրադ 118
Վենետիկ 6, 16, 103, 147, 182, 186–192, 236, 260, 316, 330, 350, 351, 355, 366, 369, 372, 376, 378, 381, 382, 383, 386, 387, 388, 393, 394, 400, 405, 411, 462, 471, 476, 478, 479, 493, 503, 506, 507
Վենետիկի Հանրապետություն 126, 369, 382, 385, 405
Վեռվիս 255
Վեստմինստեր 497
Վերրեյոս 131
Վիեննա 158
Վիլզորտ 204
Վիլյարեալ 493
Վոլգա գետ 205
Վրանիցլավ 118
Վրաստան 19, 47, 48, 55, 56, 57, 61, 126, 144, 171, 172, 179, 180, 197, 261, 300, 328, 416, 429

Տայք (Տաո) 47, 48, 55, 56, 57, 59, 61, 62, 502
Տանա 205
Տանգուտ 321
Տաչքենդ 333
Տաո, տե՛ս **Տայք**
Տավրոսի լեռներ 9–15, 19, 20, 25, 39, 47, 78, 87, 88, 89, 91, 93, 97, 98, 100, 111, 116, 183, 194, 357, 359, 414, 507
Տարոն 44, 48, 55, 57, 58, 63, 70
Տարոնի հայկական իշխանապետություն 55, 502
Տարսոն 11, 12, 15, 18, 19, 22, 25, 26, 28, 29, 33–36, 39–43, 47, 52, 53, 65, 70, 73, 76, 92, 93, 95, 100, 101, 105, 106, 110, 112, 123, 128, 131, 133, 135, 150, 158, 160, 161, 162, 182, 185, 187, 189, 193, 252, 265, 289, 337, 343, 349, 386, 388, 390, 391, 401, 402, 404, 405, 413, 440, 450, 462, 463, 468, 471, 473, 474, 479, 483, 484, 485, 489, 501, 503, 506
Տարսուս 252, 303, 304
Տիանա 9
Տիանու, ամրոց, 41
Տիբեթ 321
Տիգրանակերտ 7, 30, 31
Տիգրիս գետ 31, 109, 194
Տլուք 65
Տյուրոս 338, 389, 431, 452
Տրապիզոն 56, 57, 59, 60, 104, 172, 194, 196, 202, 205, 309, 356, 357, 361, 368, 369, 372, 374, 376, 392, 394
Տրապիզոնի կայսրություն 144, 171, 172, 197, 203, 391
Տրիպոլի 167, 168, 206, 257, 296, 377, 408, 421, 422, 430

Ուլինա, տե՛ս **Զեյթուն**
Ուխթեաց, տե՛ս **Տայք**
Ուկրաինա 449, 450
Ուչ-Քիլիսա 363, 371
Ուռհա, տե՛ս **Եդեսիա**
Ուրարտու 26
Ուրմիա 467

Փարզման 128
Փարիզ 21, 32, 53, 172, 176, 260, 267, 304, 403, 409, 426, 427, 441, 466, 496, 507
Փլավիա 36
Փյունիկիա 7, 27, 28, 30, 31, 45, 501
Փոքր Ասիա 9, 10, 11, 13, 14, 16, 18, 21, 25, 27, 29, 31, 39, 40, 42, 47–51, 53, 54–55, 65, 72, 73, 75, 85, 86, 89, 94, 95, 96, 98, 102, 110, 118, 122, 124, 126, 127, 133, 136, 138, 143, 144, 148, 149, 152–155, 170, 171, 177, 179, 180, 182, 194–199, 201–204, 206, 209, 264, 295, 298, 301, 303, 320, 323, 328, 335, 336, 338, 362, 367, 370, 379, 398, 399, 400, 402, 412–416, 419, 453, 459, 460, 464, 469, 495, 502, 504
Փոքր Հայք 5, 6, 8, 54, 67, 501
Փոյուգիա 87

Քաբուլ 356
Քադէչ, բերդ, 25
Քաղդեա 151
Քաղկեդոն 50, 141
Քեսուն 20, 73, 78, 80, 84, 86, 99
Քերման 370
Քյոսաղաղ 201, 299, 301, 303, 504
Քյոփրիքյոյ 363
Քրղստան 300, 399
Քուր գետ 30, 342

Օսրոյենե 30
Օրմուզ 356
Օրոնտես գետ 25, 50, 100
Օքսուս գետ, տե՛ս **Սարոս**
Օֆիրոս, երկիր, 195

Ֆաթիմյանների խալիֆայություն 44, 45
Ֆարս 415
Ֆարսիստան 339
Ֆիլադելֆիա 132
Ֆլանդրիա 410
Ֆլորենցիա 355, 358, 394, 395
Ֆռունզ (Ֆռունսոս) բերդ 13, 19, 254
Ֆրանսիա 256, 259, 261, 318, 349, 355, 407, 410, 411, 412, 416, 423, 424, 426, 428–430, 434, 438, 440, 444, 445, 446, 450, 451, 452, 457, 458, 459, 462, 463, 464, 470, 475, 476, 484, 488, 490, 496, 498, 504, 505, 507

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց Կիլիկիայի պատմագիրը (Գրիգոր Գաբրիելի Մկքայելյան)–Պետրոս Հովհաննիսյան 3

ԳԼՈՒԽ I. Կիլիկյան Հայաստանի աշխարհագրական պայմանները . . . 5

ԳԼՈՒԽ II. Կիլիկիան մինչև նրա տարածքում հայկական պետության առաջացումը 24

ԳԼՈՒԽ III. Հայերի արտագաղթը և հայկական իշխանապետությունների առաջացումը Կապադովկիայում, Միջագետքում, Սիրիայում ու Կիլիկիայում 54

ԳԼՈՒԽ IV. Կիլիկիայի հայկական իշխանապետության կազմավորումը և նրա պայքարը անկախության համար XII դարում 82

ԳԼՈՒԽ V. Միջազգային հարաբերությունները և արտաքին քաղաքականությունը XII դարի վերջին և XIII դարի սկզբին 143

ԳԼՈՒԽ VI. Կիլիկյան Հայաստանի քաղաքները, առևտրական ճանապարհները և առևտուրը XII–XIII դարերում 182

ԳԼՈՒԽ VII. Կիլիկյան Հայաստանի հասարակական-քաղաքական կարգը 208

ԳԼՈՒԽ VIII. Ներքին կյանքը և միջազգային հարաբերությունները 1220–1270 թվականներին 295

ԳԼՈՒԽ IX. Կիլիկյան Հայաստանի մասնակցությունն ու դերը միջազգային առևտրում XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի առաջին կեսին 355

ԳԼՈՒԽ X. Կիլիկյան Հայաստանի ներքին դրությունը և միջազգային հարաբերությունները XIII դարի վերջին և XIV դարի սկզբին . . . 407

35–122

ԳԼՈՒԽ XI. Դիվանագիտական հարաբերություններ պապության, Ֆրանսիայի և Անգլիայի հետ: Պատերազմներ Եգիպտոսի սուլթանության հետ 1307–1361 թթ. 446

ԳԼՈՒԽ XII. Կիլիկիայի հայկական պետության անկումը 475

Ժամանակագրական աղյուսակ 501
Աղբյուրներ և գրականություն 509
Անձնանուններ 515
Տեղանուններ 529

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԳԱԲՐԻԵԼԻ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հրատ. խմբագիր՝ **Հ. Բ. Պետրոսյան**
Տեխ. խմբագիր՝ **Վ. Զ. Բդոյան**
Կազմի ձևավորումը՝ **Կ. Հ. Ավագյան**

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ **Թ. Շ. Վարդանյան**

Ստորագրված է տպագրության 31.01.08 թ.:
Չափսը՝ 60×84 1/16: Թուղթը օֆսեթ:
Հրատ. 30.1 մամուլ, տպագր. 34.5 մամուլ = 32.1 պայմ. մամուլի + 1 քարտեզ:
Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 122:

ԵՊՀ-ի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ-ի տպագրատուն, Երևան, Արովյան 52

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ Երևանի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել հետևյալ գրքերը

1. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, 1998:
2. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, 1998:
3. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, 2001: (Բառարանը 2002 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ծեռք բերված նվաճումների համար»):
4. **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.:
5. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.:
6. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայերենի հոլովները, 2000 թ.:
7. Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի, Եր., 2001 թ.:
8. Շարական (ժողովածու) - Աշխարհաբարի վերածեցին **Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը,** 2001 թ.:
9. **Հրաչյա Միրզոյան** - Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, 2001 թ.:
10. **Ռուբեն Ղազարյան** - Միջին գրական հայերենի բառապաշարը, 2001 թ.:
11. **Բաբկեն Հարությունյան** - Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», 2001 թ.:
12. **Վարդան Արևելցի** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.:
13. **Գևորգ Մադոյան** - Գրիգոր Անավարզեցին շարականագիր, 2001 թ.:
14. **Գևորգ Աբգարյան** - Հայ տպագրության նախապատմություն, 2001 թ.:
15. **Փայլակ Անթապյան** - Հովհաննես սարկավագ Իմաստասեր, 2001 թ.:
16. **Յոզեֆ Կարստ** - Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.:
17. **Ռաֆայել Մաթևոսյան** - Կուբան ապագայի որոնումներում. իրադարձություններ և դասեր, 2001 թ.:
18. **Խաչիկ Բադիկյան** - Ուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.:

19. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.:
20. **Էդուարդ Աղայան** - Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.:
21. **Արտակ Մովսիսյան** - Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, 2003 թ.:
22. **Հրաչյա Ածառյան** - Քննություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.:
23. **Պիոն Հակոբյան** - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.:
24. **Աշոտ Սուքիասյան** - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ծեռք բերված նվաճումների համար»), 2003 թ.:
25. **Երջանիկ Գևորգյան** - Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան (Շարժութարան), 2003 թ.:
26. **Հայնրիխ Հյուբշման** - Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն, 2003 թ.:
27. **Հայնրիխ Հյուբշման** - Հայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.:
28. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայոց լեզվի քերականություն (Չևաբանություն) 2004 թ.:
29. **Ռամազ Գորգածե** - Հայերեն-վրացերեն զրուցարան, 2004 թ.:
30. «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն, 2004 թ. (ռուսերեն):
31. **Հրաչյա Ածառյան** - Հայոց պատմություն, հյուսված ընդհանուր պատմության հետ, 2004 թ.:
32. **Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէր** - Լուծմունք «Սահմանաց գրոց», 2004 թ.:
33. **Սանդրո Սարդարյան** - Հայաստանը քաղաքակրթության օրրան, 2004 թ.:
34. **Կարէն Իւզբաշեան** - Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, 2005 թ.:
35. **Հարություն Դելլալյան** - Ժողովածու, 2005 թ.:
36. **Բախտիար Հովակիմյան** - Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.:
37. **Գառնիկ Անանյան** - Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, 2005 թ.:
38. **Վահան Տեր–Ղևոնդյան** – Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145-1226 թթ.), 2005 թ. (ֆրանսերեն):
39. **Գառնիկ Ստեփանյան** – Երզնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը), 2005 թ.:
40. **Հրաչյա Ածառյան** - Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների. Իմաստաբանություն, Բառաքննություն, Շարահյուսություն, 2005 թ.:

41. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 16-րդ հատոր: Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից թարգմանությունները **Արամ Տեր-Ղևոնդյանի**, 2005 թ.:
42. **Սահակ Բագյան** - Խաչատուր Աբովյանը առակախոս-բանաստեղծ և դրամատուրգ, 2005 թ.:
43. **Ռամազ Գորգածե** - Վրացերեն-հայերեն բառարան, 2005 թ.:
44. **Պավել Շարաբխանյան** - Հանգաբանություն, 2005 թ.:
45. **Ռուբէն Ղազարեան** - Գրաբարի հոմանիշների բառարան, 2006 թ.:
46. Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում: Աշխատասիրութեամբ **Ալբերտ Շարուրեանի**, 2006 թ.:
47. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, 2006 թ:
48. **Հ. Պօղոս Գոճանեան** - Ուղեցոյց դասական ուղղագրութեան, 2006 թ.:
49. **Հայկազ Ժամկոչյան** - Հայ ժողովրդի պատմություն, 2006 թ.:
50. Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ: Աշխատությամբ **Ս. Հարությունյանի,** 2006 թ.:
51. **Սաթենիկ Գեջյան** - Անի: Մատենագիտություն, 2006 թ.:
52. **Հարություն Մ. Վենետիկյան, Ջերալդ Ա. Ուորֆիլդ** - Համաշխարհային առևտրի ֆինանսավորում, 2006 թ.:
53. **Շահէ Արքեպիսկոպոս Ածէմեան,** Հայերէն Աստուածաշունչը, 2006 թ.:
54. LA MINIATURE ARMENIENNE - Collection du Matenadaran, 2006 թ., «Նաիրի» հրատարակչության հետ համատեղ
55. Արևելագիտության հարցեր (Հոդվածների ժողովածու, հատոր VI), 2006 թ.:
56. **Հակոբ Սիմոնյան** - Վերին նավեր, գիրք Ա, (1976-1990 թթ. պեղումների արդյունքները), 2006 թ.:
57. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Բ, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, 2006 թ.:
58. **Լիլիթ Զաքարյան** - Աղջոց սուրբ Ստեփանոս, 2007 թ.:
59. **Ալբերտ Խառատյան** - Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), 2007 թ.:
60. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Զ հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
61. Մատենագիրք Հայոց - մատենաշար, է հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
62. Մատենագիրք Հայոց, մատենաշար, Ը հատոր, Շարական, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
63. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (Հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թվականը), հատ. 1, 2007 թ.:
64. **Ռուբեն Ղազարեան, Հենրիկ Ավետիսեան** - Նորայայտ բառեր գրաբարում, 2007 թ.:

65. **Ֆելիքս Հայրապետյան** - Ֆենոլոգիայի հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան, 2007 թ.:
66. **Արմէն Մալխասեան** (կազմող) - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Գ, 2007 թ.:
67. **Դենի դը Ռուժմոն** - Սերը և Արևմուտքը (թարգմ. **Ալ. Թոփչյանի**), 2007 թ.
68. **Սերոբ Ղազարյան** - Հայոց լեզվի պատմություն, 2007 թ.:
69. **Լաւրենտի Յովհաննիսեան** - Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը (V դար), Ազգային Մատենադարան, հ. ՄԽ, 2007 թ.:
70. **Համաստեղ** - Մոռացված էջեր, հատոր Դ, 2007 թ.:
71. **Գրիգոր Միքայելյան** - Կիլիկիայի հայկական պետության պատմություն, 2007 թ.:



Քարտեզի հեղինակ՝ Մ. Հ. Ճեվահիրճյան.
Խմբագրությամբ Ս. Տ. Երեմյանի